

ՆՏ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

**ՆՏ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ
ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆՈՐՄԵՐԻ
ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(1996-2010թթ.)**

ՆՏԴ 342.5(479.25)
ԳՄԴ 67.99 (2 Ն) 01
Ն 247

**Նրապարակվում է ՆՏ սահմանադրական
դափարանի 15-ամյակի առիթով**

**Ն 247 ՆՏ սահմանադրական դափարանի որոշումներն օրենքների և այլ
իրավական ակտերի նորմերի սահմանադրականության վերաբերյալ
(1996-2010) թթ- Եր.: «Նժար», 2011, 996 էջ:**

Սույն ժողովածուն ներառում է ՆՏ սահմանադրական դափարանի շուրջ հազար որոշումներից 99-ը: Դրանք վերաբերում են օրենքների և այլ իրավական ակտերի սահմանադրականությանը: Դրանց ուսումնասիրությունն օգտակար կարող է լինել իրավասպետը՝ գործունեության ընթացքում՝ որպես իրավունքի աղբյուր, ինչպես նաև իրավակիրառողների, իրավունքի հիմնահարցերն ուսումնասիրողների, գիտակրթական ոլորտում աշխատողների, ՆՏ սահմանադրական դափարանի դիմող քաղաքացիների համար:

ՆՏԴ 342.5(479.25)
ԳՄԴ 67.99 (2Ն) 01

ISBN 978 - 99930 - 66 - 55 - 2

© Նժար 2011

«ՆՏ ՄԴ աշխատակազմ» 2011, 996 էջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Որոշումների փարեցույց.....	4
Նախաբան.....	5
1996 - 2000թթ. որոշումներ.....	6
2001 - 2005թթ. որոշումներ.....	36
2006 - 2010թթ. որոշումներ.....	62

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵՑՈՒՅՑ

1996 – 2000 թթ.

1996, [1997](#) (ՄԴՈ-56), [1998](#) (ՄԴՈ-92, 138), [1999](#)(ՄԴՈ-152, 179), 2000

2001 - 2005 թթ.

[2001](#) (ՄԴՈ-278), [2002](#) (ՄԴՈ-389), 2003, 2004, [2005](#) (ՄԴՈ-563)

2006 - 2010 թթ.

[2006](#) (ՄԴՈ-630, 647, 648, 649, 650, 652, 664, 665, 667, 668, 669)

[2007](#) (ՄԴՈ-673, 674, 677, 678, 690, 691, 700, 701, 702, 705, 709, 710, 714, 716, 719, 720, 721, 722)

[2008](#) (ՄԴՈ-723, 731, 733, 735, 741, 747, 751, 752, 753, 754, 758, 765, 766, 767, 780, 782, 786)

[2009](#) (ՄԴՈ-787, 792, 803, 804, 810, 811, 815, 816, 817, 818, 827, 832, 833, 834, 836, 839, 844, 845, 849)

[2010](#) (ՄԴՈ-851, 852, 864, 865, 866, 870, 871, 872, 873, 881, 882, 890, 891, 896, 901, 902, 903, 906, 913, 914, 917, 918, 919, 920, 921, 922, 923, 924, 926, 927, 929, 930, 931)

ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐ

Թթ.	որոշումների քանակը
1996-2000	5
2001-2005	3
2006-2010	91

ՆԱԽԱԲԱՆ

ՏՏ սահմանադրական դատարանը կազմավորվել է 1996թ. փետրվարի 6-ին, իսկ առաջին նիստերը գումարել է նույն թվականի մարտից: Անցած փարիներին դատարանն ընդունել է շուրջ հազար որոշում: Սույն ժողովածուն ներառում է միայն օրենքների եւ այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով դատարանի որոշումները, որոնք կարեւոր դեր են ունեցել թե՛ սուբյեկտիվ եւ թե՛ օբյեկտիվ իրավունքների պաշտպանության հարցում, ինչպես նաեւ նշանակալի դեր են կատարել որպես իրավունքի աղբյուր:

Ներկայացվող որոշումների գերակշիռ մասն ընդունվել է քաղաքացիների դիմումների հիման վրա, երաշխավորել է նրանց սահմանադրական արդարադատության իրավունքի իրացումը, այս ճանապարհով մարդիկ երկրում սահմանադրական զարգացումների ակտիվ մասնակից են դարձել:

Էական է նաեւ այն, որ վերջին հինգ փարիների ընթացքում, երբ արմատավորվեց սահմանադրական գանգափի համակարգը, ներկայացված գործերից գրեթե յուրաքանչյուր երրորդում օրենքի նորմերը ճանաչվել են ՏՏ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր: Նման իրողությունը, մի կողմից, վկայում է մարդկանց սահմանադրական իրավունքների պաշտպանության իրական երաշխիքների մասին, մյուս կողմից՝ ակնհայտ է դառնում գործող օրենսդրության ոչ բարվոք վիճակը:

Այս ժողովածուում ընդգրկված որոշումների կատարման վիճակին ՏՏ սահմանադրական դատարանն անդրադարձել է իր փարեկան հաղորդումներում:

Ժողովածուն կազմվել է ՏՏ սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից:

Շնորհակալություն ենք հայտնում գերմանական GTZ կազմակերպության երեւանյան գրասենյակին ժողովածուի հրատարակմանն աջակցելու համար:

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱԿԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱԿԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍԱՆԻ
ՆԱՆՐԱԿԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 17 ՆՈՂՎԱԾԻ՝ ՆԱՅԱՍԱՆԻ
ՆԱՆՐԱԿԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱՄԱԳԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան,

19 մայիսի 1997թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դափարանը, նախագահությամբ՝ սահմանադրական դափարանի նախագահ Գ. Նարոթյունյանի, կազմով՝ սահմանադրական դափարանի նախագահի փոխակալ Վ. Սյրեփանյանի, սահմանադրական դափարանի անդամներ Ն. Խաչատրյանի, Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի, Վ. Սահակյանի, Մ. Սեյանի,

մասնակցությամբ կողմերը ներկայացնող՝ Նայասարանի Նանրապետության Ազգային ժողովի պարզամավորներ Վ. Դարբինյանի, Ֆ. Խառապյանի, Վ. Սաֆարյանի, Ազգային ժողովի պերսիստական հարցերի մշակական հանձնաժողովի նախագահ Էդ. Եգորյանի եւ Ազգային ժողովի իրավաբանական ծառայության ղեկավարի փոխակալ Ա. Մկրտումյանի,

ղեկավարվելով Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետով եւ 101 հոդվածի 2 կետով, «Սահմանադրական դափարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 5 հոդվածի 1 կետով, 25 հոդվածի 2 կետով եւ 55 հոդվածով,

դռնբաց նիստում քննեց «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՆՆ օրենքի 17 հոդվածի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նայասպանի Նանրապետության Ազգային ժողովի 65 պատգամավորների՝ սահմանադրական դատարան ներկայացրած դիմումը:

Սահմանադրական դատարանը, 1997 թվականի մայիսի 6-ի նիստում քննարկելով Նայասպանի Նանրապետության Ազգային ժողովի 65 պատգամավորների դիմումը, աշխարակարգային որոշում է կայացրել՝ գործն ընդունել քննության: Միաժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 36 հոդվածով սահմանված կարգով գործը քննության նախապարաստելու եւ գործի նյութերը դատական նիստում շարադրելու համար զեկուցողներ են նշանակվել սահմանադրական դատարանի անդամներ Ն. Խաչատրյանը եւ Մ. Սեյանը:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 39, 40 եւ 57 հոդվածներով, սահմանադրական դատարանի որոշմամբ սույն գործով կողմ է ճանաչվել Նայասպանի Նանրապետության Ազգային ժողովը, որը սահմանադրական դատարանում վիճարկվող իրավական ակտն ընդունած մարմինն է:

Լսելով սույն գործով զեկուցող՝ Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանի անդամ Ն. Խաչատրյանի հաղորդումը, ուսումնասիրելով եւ վերլուծելով դիմումը, կից փաստաթղթերը, կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, ՆՃ գլխավոր դատախազի եւ ՆՃ գերագույն դատարանի նախագահի պարզաբանումները, կողմերի լրացուցիչ փաստարկները, եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Դիմող կողմը գտնում է, որ Երեւանի Աջափնյակի համայնքի ղեկավարի 1996 թվականի նոյեմբերի 24-ի ընտրությունների երկրորդ փուլի արդյունքների ամփոփման վերաբերյալ դատարանի վճիռը 1996 թվականի հունիսի 10-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՆՃ օրենքի 17 հոդվածով սահմանված կարգով գանգաւարկվել է ՆՃ գերագույն դատարան, որը սահմանված ժամկետում, կոլեգիալ կարգով կայացրել է վերջնական որոշում: Ուստի այդ որոշումը ՆՃ գլխավոր դատախազի կողմից չէր կարող բողոքարկվել ՆՃ գերագույն դատարանի նախագահություն, որն, իր հերթին, բեկանել է կոլեգիալ կարգով ընդունված որոշումը:

Ըստ դիմող կողմի, նմանափայ փարբեր գործերով ՆՃ դատախազության եւ գերագույն դատարանի կողմից հիշյալ հոդվածի գործադրման հակասական իրավակիրառական պրակտիկան առաջ է բերել «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՆՃ օրենքի 17 հոդվածի սահմանադրականության որոշման հիմնահարց:

Ընդունելով, որ այդ հոդվածը համապատասխանում է ՆՃ Սահմանադրությանը, դիմող կողմը գտնում է, որ օրենքը բացառել է ընտրությունների արդյունքների առնչությամբ ՆՃ գերագույն դատարանի՝ կոլեգիալ կարգով ընդունած որոշման բողոքարկման հնարավորությունը:

2. Նայասփանի Նանրապետության Ազգային ժողովը ներկայացնող կողմը նույնպես գտնում է, որ «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՆՆ օրենքի 17 հոդվածի դրույթները համապատասխանում են ՆՆ Սահմանադրությանը: Միաժամանակ, դրսևորվում է այն մտպեցումը, որ հիշյալ հոդվածի հիման վրա ՆՆ - գերագույն դափարանի՝ կոլեգիալ կարգով ընդունաձ որոշման վերջնական լինելու հանգամանքը վերաբերում է միայն գանգափարկմանը, եւ դափարանների ուժի մեջ մփաձ վճիռների, դափարվճիռների ու որոշումների հսկողական կարգով բողոքարկման՝ դափարախազության սահմանադրական լիազորությունը «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՆՆ օրենքի 17 հոդվաձոլ չի սահմանափակվում:

3. «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՆՆ օրենքի 17 հոդվաձի իրավակիրառական պրակտիկան վկայում է, որ ՆՆ գերագույն դափարանի երեք անդամից կազմվաձ դափարական կոլեգիան 1996 թվականի դեկտեմբերի 16-ից մինչեւ 1997 թվականի մայիսի 12-ը քննության է առել փեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների հեփ կապվաձ 41 դափարական վճիռների ու որոշումների դեմ փրվաձ գանգափներ:

Ի դեպ, Գերագույն դափարանի դափարական կոլեգիայի որոշման վերջնական լինելու, դրա հեփագա գանգափարկման եւ բողոքարկման ենթակա չլինելու մասին դափարական կոլեգիայի նիսփերում նախագահողները հայփարարել են յուրաքանչյուր գորձոլ կայացրաձ որոշում հրապարակելիս:

Նմանափիպ գորձերոլ ՆՆ գերագույն դափարանում կոլեգիալ կարգով ընդունվաձ 41 որոշումներից ՆՆ գլխավոր դափարախազի կողմից դափարական հսկողության կարգով բողոքարկվել է միայն Երեւանի Աջափնյակի համայնքի դեկավարի ընտրությունների առնչությամբ կոլեգիայի կայացրաձ վերոնշյալ որոշումը: Ընդ որում, 1996 թվականի դեկտեմբերի 16-ից մինչեւ 1997 թվականի մայիսի 12-ը ՆՆ դափարախազություն մուփք են եղել դափարաններում քննվաձ այդ բնույթի 11 գորձերի վերաբերյալ գանգափներ, որոնցից երկուսի կապակցությամբ ՆՆ դափարախազության կողմից պափարախան է փրվել, որ «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՆՆ օրենքի 17 հոդվաձի համաձայն ՆՆ գերագույն դափարանի՝ կոլեգիալ կարգով ընդունաձ որոշումը վերջնական է եւ հսկողության կարգով բողոքարկման ենթակա չէ:

4. Սահմանադրական դափարանն արձանագրում է, որ «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՆՆ օրենքի 17 հոդվաձի գորձադրման ընթացքում իրավակիրառողները փարաբնույթ եւ հակասական մուփեցում են դրսևորել այդ հոդվաձում ամրագրվաձ նորմերի եւ ՆՆ Սահմանադրության 5, 93, 103, 110 հոդվաձների, 116 հոդվաձի 7, 12, 13 կեփերի, 1964թ. ընդունվաձ եւ ընտրությունների մասոլ փոփոխության չենթարկվաձ ՆՆ քաղաքացիական դափարավարության օրենագրքի 23, 34, 35, 36 գլուխներում ամրագրվաձ դրույթների առնչությամբ:

Նեփետողական չի եղել մուփեցումն այն հարցին, որ ընտրությունների մասին ՆՆ - Սահմանադրության հիման վրա ընդունվաձ օրենադրությունը կարգավորում է պեփարի-

րավական այնպիսի հարաբերություններ, որի նպատակն է ի կատարումն Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 2, 3, 27, 50, 51, 68, 105, 110 հոդվածների, սահմանված ժամկետներում ձեռավորել Նանրապետության իշխանությունների ընտրովի ինստիտուտները:

Սահմանադրության հիման վրա ՆՆ Նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին ընդունված օրենքներն ունեն միասնական փրամաբանական հենք եւ ընտրությունների արդյունքների ամփոփման վերաբերյալ առաջացած վեճերով առաջին երկու դեպքում՝ ՆՆ - սահմանադրական դատարանի, վերջին դեպքում՝ ՆՆ գերագույն դատարանի՝ կոլեգիալ կարգով ընդունած որոշումները վերջնական են:

ՆՆ դատախազությունը, մինչեւ դատախազության մասին օրենքի ընդունումը, ինչպես սահմանադրորեն ամրագրված է, պետք է գործի ՆՆ Սահմանադրության անցումային դրույթների 116 հոդվածի 12 կետի պահանջներին համապատասխան:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետով, 101 եւ 102 հոդվածներով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 5 հոդվածի 1 կետով, 67 եւ 68 հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 17 հոդվածը ամբողջությամբ համապատասխանում է Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

Նայասպանի Նանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների ամփոփման հետ կապված դատական վեճերով իրավակիրառական պրակտիկան պետք է համապատասխանի «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՆՆ օրենքի 17 հոդվածում ամրագրված՝ գերագույն դատարանի՝ կոլեգիալ կարգով կայացրած որոշումների վերջնական լինելու մասին դրույթին:

2. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է, վերանայման ենթակա չէ, ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՆ Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*19 մայիսի 1997 թվականի
ՄԴՈ - 56*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՅ 1995 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 22 ՆՈՂՎԱԾԻ ԵՐԿՐՈՐԴ, ԵՐՐՈՐԴ, ՉՈՐՐՈՐԴ ԵՎ ՆԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ 8 ՆՈՂՎԱԾԻՆ ԵՎ 28 ՆՈՂՎԱԾԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻՆ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան,

27 փետրվարի 1998 թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դափարանը, նախագահությամբ՝ սահմանադրական դափարանի նախագահ Գ. Նարությունյանի, կազմով՝ սահմանադրական դափարանի նախագահի փոխակալ Վ. Նովիաննիսյանի, սահմանադրական դափարանի անդամներ Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի, Վ. Սահակյանի, Մ. Սեյանի,

մասնակցությամբ՝

Նայասարանի Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Նայասարանի Նանրապետության Նախագահի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ Վ. Գասպարյանի,

գործով որպես պապասխանող կողմ ներգրավված՝ Նայասարանի Նանրապետության Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի իրավաբանական ծառայության ղեկավար Վ. Նազարյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետի եւ 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դափարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 5 հոդվածի 1 կետի, 25 հոդվածի 1 կետի եւ 55 հոդվածի,

դռնբաց նիստում քննեց «Ազգային ժողովի կողմից 1995 թվականի դեկտեմբերի 27-ին ընդունված «Անշարժ գույքի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 22 հոդվածի երկրորդ, երրորդ, չորրորդ եւ հինգերորդ մասերի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 8 հոդվածին եւ 28 հոդվածի երկրորդ մասին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության Նախագահի դիմումն է սահմանադրական դատարան՝ «Անշարժ գույքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նշված դրույթների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ:

Լսելով գործով զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի տեղակալ Վ. Նովիաննիսյանի հաղորդումը, Հայաստանի Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ Վ. Գասպարյանի և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ներկայացուցիչ Վ. Նազարյանի բացատրությունները, հետագոյնով «Անշարժ գույքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. «Անշարժ գույքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1995 թվականի դեկտեմբերի 27-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել է 1996 թվականի հունվարի 22-ին, պաշտոնական հրապարակվել՝ 1996 թվականի հունվարի 25-ին և ուժի մեջ է մտել հրապարակման պահից: Հայաստանի Հանրապետության Նախագահը, Սահմանադրության 55 հոդվածի 2 կետով նախատեսված կարգով, օրենքի վերաբերյալ առարկություններ կամ առաջարկություններ չի ունեցել:

2. Դիմող կողմը, Սահմանադրության 8 հոդվածի և 28 հոդվածի երկրորդ մասի դրույթները հիշատակելով, նշում է, որ Սահմանադրությամբ ուղղակիորեն սահմանադրված են սեփականության իրավունքը դադարեցնելու սկզբունքորեն փարբեր ձեւերը՝ սեփականությունից զրկելը և սեփականության օտարումը: Մինչդեռ, «Անշարժ գույքի մասին» ՏՏ օրենքի 22 հոդվածի երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ մասերով սահմանվում են դրույթներ, որոնց Սահմանադրության 8 հոդվածի և 28 հոդվածի երկրորդ մասի հետ համապատասխանության հարցի վերաբերյալ իրավակիրառական պրակտիկայում գոյություն ունեն իրարամերժ մոտեցումներ:

Հայաստանի Հանրապետության Նախագահի ներկայացուցչի բացատրության համաձայն հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարումը՝ որպես օրինական սեփականափոխության սեփականությունը հարկադիր վերցնելու բացառիկ միջոց, պետք է կատարվի յուրաքանչյուր առանձին դեպքում օրենքով, որով և կիմնավորվի օտարման կոնկրետ դեպքի բացառիկությունը, և կսահմանվեն սեփականության իրական շուկայական արժեքից բխող նախնական համարժեք փոխհատուցման չափը և կարգը, և կսահմանվի օտարման ընթացակարգը:

«Անշարժ գույքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունող մարմնի՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ Վ. Նազարյանը, չբացատրելով «Անշարժ գույքի մասին» ՏՏ օրենքի այլ դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու հանգամանքը, որոնց վերաբերյալ, սակայն, սահմանադրական դատարան դիմում չի ներկայացվել, փաստ

տեղ, որ հիշյալ օրենքի 22 հոդվածի՝ քննության առարկա դրույթները պարունակում են անհստակ եւ ոչ ճիշտ ձեւակերպումներ, սակայն չեն հակասում ՆՆ Սահմանադրությանը:

3. «Անշարժ գույքի մասին» Նայասպահի Նանրապետության օրենքի 22 հոդվածը վերնագրված է՝ «Անշարժ գույքի օտարումը հասարակության եւ պետության կարիքների համար»: Հոդվածի դրույթները նպատակ ունեն օրենսդրական կարգավորման ենթարկել եւ իրավակիրառական փոփոխության նպատակով Սահմանադրության 8 հոդվածով եւ 28 հոդվածի երկրորդ մասով նախատեսված ինչպես անշարժ գույքի օտարման գործընթացը, այնպես էլ սեփականափրոջ իրավունքների պաշտպանությունը:

Օրենքի 22 հոդվածի երկրորդ, երրորդ, չորրորդ եւ հինգերորդ մասերում սավում է. «Հասարակության եւ պետության կարիքների համար անշարժ գույքի համարժեք փոխհատուցման չափը սահմանվում է Նայասպահի Նանրապետության կառավարության որոշմամբ՝ հիմնվելով Նայասպահի Նանրապետության կառավարության եւ օտարման ենթակա անշարժ գույքի սեփականափրոջ միջև բանակցությունների արդյունքի եւ օտարման ենթակա անշարժ գույքի սեփականափրոջ գրավոր համաձայնության վրա:

Եթե անշարժ գույքի սեփականատերը համաձայն չէ Նայասպահի Նանրապետության կառավարության կողմից գույքի օտարման կամ փոխհատուցման չափի հետ, ապա Նայասպահի Նանրապետության կառավարությունը անշարժ գույքի օտարումը կարող է իրականացնել միայն դատական կարգով:

Մինչև դատարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելը հասարակության եւ պետության կարիքների համար օտարման ենթակա անշարժ գույքի սեփականատերը պարտավոր է ձեռնպահ մնալ անշարժ գույքին վնաս հասցնելուց:

Հասարակության եւ պետության կարիքների համար անշարժ գույքի օտարման ընթացակարգը սահմանում է Նայասպահի Նանրապետության կառավարությունը՝ ելնելով սույն հոդվածի դրույթներից»:

4. Նայասպահի Նանրապետության Սահմանադրության 8 հոդվածը՝ որպես սահմանադրական կարգի հիմունքներն ամրագրող հիմնադրույթ, սահմանում է սեփականափրոջ՝ իրեն պարկանող գույքն իր հայեցողությամբ փրկապետելու, օգտագործելու եւ փոխանցելու իրավունքը:

Պետությունը երաշխավորում է սեփականության բոլոր ձեւերի ազատ գարգացումը եւ հավասար իրավական պաշտպանությունը:

Սահմանադրության 28 հոդվածը, որը զեպետված է «Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները» գլխում, պաշտպանում է անձի՝ որպես սեփականափրոջ իրավունքները:

Նշելով, որ Նայասպահի Նանրապետությունում յուրաքանչյուր ոք ունի սեփականության եւ ժառանգման իրավունք, 28 հոդվածում միաժամանակ նախատեսվում են սեփականափրոջ իրավունքների դադարման սահմանադրական հիմքերը:

5. Սահմանադրության 28 հոդվածը նախատեսում է սեփականափրոջ իրավունքի դադարման երկու եղանակ:

Մի դեպքում սեփականափրոջը սեփականությունից կարող է զրկել միայն դատարանը՝ օրենքով նախատեսված դեպքերում: Երկրորդ դեպքում սեփականության օտարումը հասարակության եւ պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում, օրենքի հիման վրա՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ:

Սահմանադրության 28 հոդվածի առաջին մասում նախատեսված սեփականության իրավունքի դադարեցումը՝ դրանից զրկելու ձեռով, իրականացվում է որպես հարկադրական բնույթի գործողություն, որպես պատասխանատվություն:

6. Սահմանադրության 28 հոդվածով նախատեսված՝ հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարումը սեփականության իրավունքի զրկումից փարբերվում է նրանով, որ րեղի է ունենում ոչ թե որպես սեփականագրկում՝ պատասխանատվության ենթարկելու միջոցով, այլ բարեխիղճ սեփականատերը պարտավոր է Սահմանադրությամբ նախատեսված հիմքերի առկայության դեպքում, սահմանված երաշխիքների պահպանմամբ, սեփականության իր իրավունքը զիջել պետությանը:

Սահմանադրությունն ամրագրում է, որ սեփականության օտարումը հասարակության եւ պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում, օրենքի հիման վրա՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ: Այսպիսով, որպես սեփականության օտարման հիմք է ճանաչվում «պետության եւ հասարակության կարիքները», իսկ օտարվող գույքի սեփականափրոջ իրավունքների պաշտպանության երաշխիքներ են համարվում օտարումը՝ «միայն բացառիկ դեպքերում», օտարումը՝ «օրենքի հիման վրա», օտարումը՝ «օտարվող գույքի նախնական համարժեք փոխհատուցմամբ»:

Սահմանադրության 28 հոդվածում րեղ գրամ «պետության եւ հասարակության կարիքներ», «միայն բացառիկ դեպքեր» ձեւակերպումները զնահատման ենթակա հասկացություններ են: Սահմանադրությունը, ելնելով նրանից, որ նշված հասկացություններն անմիջապես առնչվում են մարդու կարեւորագույն սահմանադրական իրավունքներից մեկին՝ սեփականության իրավունքին, սահմանել է, որ նման հիմքերով սեփականության օտարումը կարող է կատարվել օրենքի հիման վրա, դրանով իսկ սպեղծելով անհրաժեշտ օրենսդրական երաշխիքներ:

«Օրենքի հիման վրա» ասելով, պետք է նկատի ունենալ ոչ թե նորմատիվ իրավական ակտ, որը կարգավորում է անձի սեփականության օտարման կազմակերպական եւ իրավական գործընթացն ընդհանրապես, այլ օրենք, որով իրականացվում է սեփականության օտարումը:

Նախնական համարժեք փոխհատուցումը գործադիր մարմնի կողմից համապատասխան ֆինանսատնտեսական հաշվարկով հիմնավորված եւ սեփականափրոջ հեղ համաձայնեցվող գործողություն է, որը ենթակա է դատական վիճարկման:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 5 հոդվածի 1 կետով, 55, 67 եւ 68 հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Անշարժ գույքի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 22 հոդվածի երկրորդ մասը, համաձայն որի «Նասարակության եւ պետության կարիքների համար անշարժ գույքի համարժեք փոխհատուցման չափը սահմանվում է Նայասպանի Նանրապետության կառավարության որոշմամբ՝ հիմնվելով Նայասպանի Նանրապետության կառավարության եւ օտարման ենթակա անշարժ գույքի սեփականատիրոջ միջեւ բանակցությունների արդյունքի եւ օտարման ենթակա անշարժ գույքի սեփականատիրոջ գրավոր համաձայնության վրա», համապատասխանում է Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. «Անշարժ գույքի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 22 հոդվածի երրորդ մասը, համաձայն որի «Եթե անշարժ գույքի սեփականատերը համաձայն չէ Նայասպանի Նանրապետության կառավարության կողմից գույքի օտարման կամ փոխհատուցման չափի հետ, ապա Նայասպանի Նանրապետության կառավարությունը անշարժ գույքի օտարումը կարող է իրականացնել միայն դատական կարգով», չի համապատասխանում Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 8 եւ 28 հոդվածներին:

Անձի սեփականությունը՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 28 հոդվածի երկրորդ մասով նախատեսված հիմքերով կարող է օտարվել, իսկ նրա համաձայնության բացակայության դեպքում՝ պետության կողմից սեփականության իրավունքը դադարեցվել միայն կոնկրետ անշարժ գույքի վերաբերյալ օրենք ընդունելու միջոցով, որում կհիմնավորվի օտարման բացառիկ կարեւորությունն ու նշանակությունը եւ կնշվի, թե օտարվող անշարժ գույքը հասարակության եւ պետության որ կարիքների բավարարմանն է ուղղվելու:

Օրենքը միաժամանակ կառավարությանը կպարտավորեցնի, համապատասխան ֆինանսարհմանական հաշվարկի հիման վրա, շուկայական գների հաշվառմամբ, կառավարության եւ օտարման ենթակա անշարժ գույքի սեփականատիրոջ միջեւ բանակցությունների արդյունքի եւ վերջինիս գրավոր համաձայնության հիման վրա սահմանել փոխհատուցման չափը, որը սեփականատիրոջ կողմից ենթակա է դատական վիճարկման:

3. «Անշարժ գույքի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 22 հոդվածի չորրորդ մասը, համաձայն որի «Մինչեւ դատարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելը հասարակության եւ պետության կարիքների համար օտարման ենթակա անշարժ գույքի սեփականատերը պարտավոր է ձեռնպահ մնալ անշարժ գույքին վնաս հասցնելուց», չի համապատասխանում Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 8, 28 եւ 44 հոդվածներին:

4. «Անշարժ գույքի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 22 հոդվածի հինգերորդ մասը, համաձայն որի «Նասարակության եւ պետության կարիքների համար անշարժ գույքի օտարման ընթացակարգը սահմանում է Նայաստանի Նանրապետության կառավարությունը՝ ելնելով սույն հոդվածի դրույթներից», չի համապատասխանում Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 8 եւ 28 հոդվածներին:

Նայաստանի Նանրապետության կառավարությունը չի կարող հասարակության եւ պետության կարիքների համար անշարժ գույքի օտարման այնպիսի ընթացակարգ սահմանել, որը նրան կլիազորի նման անշարժ գույքի օտարման իրավունք:

5. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է, վերանայման ենթակա չէ, ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏ
Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*27 փետրվարի 1998 թվականի
ՄԴՈ-92*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՅ 1996 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-ԻՆ
ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 71
ՆՈՂՎԱԾԻ 8 - ԲԴ ԿԵՏԻ ԵՎ 93 ՆՈՂՎԱԾԻ 4 - ԲԴ ԿԵՏԻ՝
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
38 ԵՎ 39 ՆՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱՐՅՐ ԸՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան,

13 նոյեմբերի 1998 թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը, նախագահությամբ՝ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Նարոթյունյանի, կազմով՝ սահմանադրական դատարանի նախագահի փոխակալ Վ. Նովհաննիսյանի, սահմանադրական դատարանի անդամներ Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի, Վ. Սահակյանի, Մ. Մելյանի,

մասնակցությամբ՝ Նայասրանի Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Նայասրանի Նանրապետության արդարադատության նախարար Դ. Նարոթյունյանի,

գործով որպես պարասխանող կողմ ներգրավված՝ Նայասրանի Նանրապետության Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Վ. Նազարյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետի եւ 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 5 հոդվածի 1 կետի, 25 հոդվածի 1 կետի եւ 55 հոդվածի,

դռնբաց նիստում քննեց «Ազգային ժողովի կողմից 1996 թվականի ապրիլի 30-ին ընդունված «Բաժնեիրական ընկերությունների մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 71 հոդվածի 8 -րդ կետի եւ 93 հոդվածի 4-րդ կետի՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 38 եւ 39 հոդվածներին համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նայասրանի Նանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Լսելով գործով զեկուցող՝ Նայասպրանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդամ Ֆ. Թոխյանի հաղորդումը, Նայասպրանի Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ Դ. Նարությունյանի եւ Նայասպրանի Հանրապետության Ազգային ժողովի ներկայացուցիչ Վ. Նազարյանի բացաբրությունները, հեղափոխելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Նայասպրանի Հանրապետության օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպրանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Նայասպրանի Հանրապետության օրենքն ընդունվել է 1996 թվականի ապրիլի 30-ին, Նայասպրանի Հանրապետության Նախագահի կողմից սպորազրվել է 1996 թվականի մայիսի 7-ին, պաշտոնական հրապարակվել 1996 թվականի մայիսի 15-ին եւ ուժի մեջ մտել հրապարակման պահից: Նայասպրանի Հանրապետության Նախագահը, Սահմանադրության 55 հոդվածի 2 կետով նախատեսված կարգով, օրենքի վերաբերյալ առարկություններ կամ առաջարկություններ չի ունեցել:

2. Նայասպրանի Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ Դ. Նարությունյանի բացաբրության համաձայն քննության առարկա օրենքի 71 հոդվածի 8-րդ կետը սահմանափակում է մարդու իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը, իսկ 93 հոդվածի 4-րդ կետը՝ նմանապիպ ենթադրության փրդիք է փալիս:

3. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Նայասպրանի Հանրապետության օրենքն ընդունող մարմնի՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ Վ. Նազարյանի կարծիքով օրենքի 71 հոդվածի 8-րդ կետը, խմբագրական հստակեցման անհրաժեշտություն ունենալով հանդերձ, չի հակասում ՆՆ Սահմանադրության 38 եւ 39 հոդվածներին: ՆՆ Սահմանադրության հիշյալ հոդվածներին չի հակասում նաեւ օրենքի 93 հոդվածի 4-րդ կետը:

4. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Նայասպրանի Հանրապետության օրենքի 71 հոդվածը վերնագրված է՝ «Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները»: Նոդվածում ամրագրված են բաժնետերերի ընդհանուր ժողովում ձայնի իրավունքից օգտվող բաժնետերերի շրջանակը, ընդհանուր ժողովում որոշումների ընդունման, այդ որոշումների մասին բաժնետերերին փրդեկությունների հաղորդման կարգը, ինչպես նաեւ բաժնետիրոջ իրավունքը՝ որոշակի սահմանված դեպքերում դատական կարգով գանգափարկելու ընդհանուր ժողովի ընդունած որոշումները:

Օրենքի վիճարկվող 71 հոդվածի 8-րդ կետում մասնավորապես ասվում է, որ՝ «Բաժնետերն իրավունք ունի դատական կարգով գանգափարկել սույն օրենքի, այլ իրավական ակտերի եւ ընկերության կանոնադրության պահանջների խախտմամբ ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումը, եթե նա չի մասնակ-

ցել ժողովին կամ այդ որոշման դեմ է քվեարկել եւ որոշմամբ խախտվել են նրա օրինական շահերը եւ իրավունքները: Դապարսան իրավունք ունի ուժի մեջ թողնել ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումը, եթե բաժնետերերի քվեարկության մասնակցելը չէր կարող ազդել քվեարկության արդյունքների վրա, թույլ տված խախտումները էական չեն եւ որոշումը վնաս չի պատճառել բաժնետիրոջը»:

Օրենքի 93 հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ՝ «Ընկերությունը կամ ընկերության այն բաժնետերերը (բաժնետերերը), որը (որոնք համապետ) փնտրվում է (են) ընկերության փողոցային սովորական բաժնետոմսերի մեկ եւ ավելի փոկոսին, իրավունք ունի (ունեն) ընկերության խորհրդի անդամների, ընկերության գործադիր փոօրենի, ընկերության վարչության անդամների, ինչպես նաեւ կառավարիչ կազմակերպության եւ անհատ կառավարչի դեմ հայցով դիմել դապարսան ընկերությանը պատճառված վնասների փոխհատուցման պահանջով»:

5. Նայասփանի Նանրապետության Սահմանադրության 38 հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները եւ ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք»:

Յուրաքանչյուր ոք ունի Սահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրված իր իրավունքների եւ ազատությունների դափական պաշտպանության իրավունք»:

Նայասփանի Նանրապետության Սահմանադրության 39 հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաեւ իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակա դապարսանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք»:

Մարդու՝ Սահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրված իրավունքների եւ ազատությունների լիակատար եւ համապարփակ պաշտպանության կարեւոր երաշխիք է Նայասփանի Նանրապետության Սահմանադրության 38 հոդվածով նախատեսված դափական պաշտպանության իրավունքը:

Ելնելով միջազգային իրավունքի նորմերից եւ սկզբունքներից, առաջնային համարելով մարդու անօտարելի իրավունքները եւ հաշվի առնելով, որ ՆՆ Սահմանադրության 38 հոդվածի երկրորդ մասը, առանց բացառության, ամրագրում է յուրաքանչյուր մարդու՝ Սահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրված իրավունքների եւ ազատությունների դափական պաշտպանության իրավունքը, ՆՆ Սահմանադրությունն այդ իրավունքի սահմանափակման հնարավորություն է նախատեսել միայն Սահմանադրության 45 հոդվածի հիմքերով:

Նայասփանի Նանրապետության Սահմանադրության 45 հոդվածն ընդհանրապես արգելում է որեւէ կերպ սահմանափակել յուրաքանչյուր անձի՝ Նայասփանի Նանրապետության Սահմանադրության 39 հոդվածում ամրագրված իրավունքը:

6. Օրենքի վիճարկվող 71 հոդվածի 8-րդ կետը, ի հակադրություն Սահմանադրության 38 հոդվածի երկրորդ մասի, 39 եւ 45 հոդվածների, բաժնետերերի դափական

պաշտպանության իրավունքը սահմանափակում է բաժնետերերի ժողովին չմասնակցելու, ժողովի որոշման դեմ քվեարկելու հանգամանքներով:

7. Օրենքի վիճարկվող 93 հոդվածի 4-րդ կետը ընկերության տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի մեկ տոկոսից պակաս բաժնետոմսեր փոխանցող բաժնետիրոջը գրկում է ընկերության խորհրդի անդամների, ընկերության գործադիր տնօրենի, ընկերության վարչության անդամների, ինչպես նաև կառավարիչ կազմակերպության եւ անհար կառավարչի դեմ ոչ թե իրեն՝ որպես ֆիզիկական անձի, այլ ընկերությանը պատճառված վնասների փոխհատուցման պահանջի վերաբերյալ հայցով դատարան դիմելու իրավունքից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 5 հոդվածի 1 կետով, 55, 67 եւ 68 հոդվածներով, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 71 հոդվածի 8-րդ կետի նախապայմաններ սահմանող՝ «... նա չի մասնակցել ժողովին կամ այդ որոշման դեմ է քվեարկել» դրույթը չի համապատասխանում Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 38 եւ 39 հոդվածներին:

2. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 93 հոդվածի 4-րդ կետը համապատասխանում է Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը:

3. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է, վերանայման ենթակա չէ, ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՆ
Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*13 նոյեմբերի 1998 թվականի
ՄԴՈ - 138*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՆԵՌԱՆԱԳՂՈՐԴԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍԱԿՆԻ
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 24 ՆՈՂՎԱԾԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան,

27 հունվարի 1999 թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը, նախագահությամբ՝ սահմանադրական դատարանի նախագահ Գ.Նարությունյանի, կազմով՝ սահմանադրական դատարանի նախագահի տեղակալ Վ. Նովիաննիսյանի, սահմանադրական դատարանի անդամներ Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի, Վ. Սահակյանի, Մ. Մելյանի,

մասնակցությամբ՝

դիմողների՝ Նայասպանի Նանրապետության Ազգային ժողովի 72 պարզամավորների ներկայացուցիչներ Է. Եզորյանի, Ա. Սադոյանի եւ Վ. Խաչատրյանի,

պարասխանող կողմի՝ Նայասպանի Նանրապետության Ազգային ժողովի կողմից որպես ներկայացուցիչներ լիազորված՝ Նայասպանի Նանրապետության արդարադատության նախարար Դ. Նարությունյանի, Նայասպանի Նանրապետության փոստի եւ հեռահաղորդակցության նախարար Ա. Վարդանյանի, Նայասպանի Նանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ Նայասպանի Նանրապետության տնտեսական եւ կառուցվածքային բարեփոխումների նախարար Վ. Ավանեսյանի, գործով որպես մասնագետ ներգրավված՝ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Յու. Սուվարյանի, համաձայն Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետի, 101 հոդվածի 2 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 5 հոդվածի 1 կետի, 25 հոդվածի 2 կետի եւ 55 հոդվածի,

դռնբաց նիստում քննեց «Նեռահաղորդակցության մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 24 հոդվածի՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նայասպրանի Նանրապետության Ազգային ժողովի 72 պարզամավորի դիմումը սահմանադրական դադարան:

Լսելով գործով զեկուցող՝ Նայասպրանի Նանրապետության սահմանադրական դադարանի անդամ Ա. Գյուլումյանի հաղորդումը, կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, մասնագետի եզրակացությունը, հեղափոխությունը քննության առարկա օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, գնահատելով օրենքի փառացի իմաստն ու ձեւավորված իրավակիրառական պրակտիկան, Նայասպրանի Նանրապետության սահմանադրական դադարանը

Պ Ա Ր Զ Ե Յ.

1. «Նեռահաղորդակցության մասին» Նայասպրանի Նանրապետության օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի փետրվարի 17-ին, սպորազրվել, հրատարակվել եւ ուժի մեջ է մտել 1998 թվականի փետրվարի 20-ին:

Սույն օրենքը սահմանում է Նայասպրանի Նանրապետության փարածքում հեռահաղորդակցության բնագավառում գործունեության իրականացման իրավական հիմքերը, դրա մասնակիցների իրավասությունը եւ պարտականությունը, ինչպես նաեւ հեռահաղորդակցության ծառայություններից օգտվողների իրավունքների պաշտպանության նորմերը (հոդվ. 1):

2. Դիմող կողմը գտնում է, որ «Նեռահաղորդակցության մասին» Նայասպրանի Նանրապետության օրենքի 24 հոդվածը չի համապատասխանում Նայասպրանի Նանրապետության Սահմանադրությանը, մասնավորապես՝ Սահմանադրության 8 հոդվածում ամրագրված պետության կողմից երաշխավորվող փոփոխական գործունեության ազատության եւ ազատ փոփոխական մրցակցության մասին դրույթներին:

3. Պարտասխանող կողմը գտնում է, որ օրենքի նշված նորմը չի հակասում Նայասպրանի Նանրապետության Սահմանադրությանը, քանի որ հարցը վերաբերում է բնական մենաշնորհին, եւ ազատ փոփոխական մրցակցության սահմանափակումը հեռահաղորդակցության ոլորտում նպատակ ունի օտարերկրյա ներդրումների միջոցով հանրապետության փարածքում բարելավել կապի վիճակը եւ ապահովել տեխնիկական առաջընթացն այդ բնագավառում:

4. «Նեռահաղորդակցության մասին» Նայասպրանի Նանրապետության օրենքի 24 հոդվածը, որը վերնագրված է «Անցումային դրույթներ», սահմանում է. «Նայասպրանի Նանրապետության հանրային համակցված հեռահաղորդակցության ցանցի օրինական սեփականատեր հանդիսացող «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» («Արմենտել») փակ բաժնետիրական ընկերությանը 15 փարի ժամկետով տրված հեռահաղորդակցության եւ «Արմենտելի» հեռահաղորդակցության ցանցերով բարձր հաճախության փոխափոխանման (այդ թվում՝ մալուխային հեռուստատեսության) ծառայություններ մատուցելու բացառիկ իրավունքները հաստատող՝ մինչեւ սույն օրենքի ընդունումը Նայասպրանի Նանրապե-

տության կապի նախարարության կողմից փրված եւ Նայասփանի Նանրապետության կառավարության 1997 թվականի հունիսի 25-ի թիվ 218 որոշմամբ հաստատված թիվ 60 լիցենզիան ուժի մեջ է սույն օրենքին եւ լիցենզիայի պայմաններին համապատասխան: Նշված լիցենզիայով սահմանված իրավունքների գործողությունը պետք է ապահովվի Նայասփանի Նանրապետության օրենսդրությամբ (այդ թվում՝ հակամենաշնորհային օրենսդրությամբ)»:

Սույն օրենքի 17 հոդվածով ամրագրված է, որ լիցենզիայով չեն կարող նախապետել բացառիկ իրավունքներ, բացառությամբ սույն օրենքի անցումային դրույթներով նախատեսված դեպքի:

Բացի դրանից, օրենքի 2 հոդվածով սահմանվում է նաեւ, որ հետուստիտուտիան ու ռադիոյի բնագավառում հարաբերությունները կարգավորվում են առանձին օրենքով, բացառությամբ սույն օրենքի 24 հոդվածով նախատեսված դեպքի:

5. Կապի նախարարության կողմից փրված եւ կառավարության որոշմամբ հաստատված թիվ 60 լիցենզիան ուժի մեջ թողնելու մասին օրենքի 24 հոդվածի դրույթի իրավական վերլուծությունը վկայում է, որ օրենսդիրը ոչ թե իրավահարաբերություններ կարգավորող համընդհանուր նորմ է սահմանել, այլ, գործադիր իշխանության կողմից կոնկրետ իրավասուբյեկտի համար սահմանված լիցենզիայի պայմանները փաստացի վավերացնելով, դրանց օրենքի ուժ է փոխել:

«Սահմանադրական դատարանի մասին» Նայասփանի Նանրապետության օրենքի 55 հոդվածի պահանջներից ելնելով, «Նեոսահադորդակցության մասին» Նայասփանի Նանրապետության օրենքի 24 հոդվածի դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը պարզելիս՝ սահմանադրական դատարանը պարտավոր է հիմք ընդունել.

- իրավական ակտի ձեւը.
- իրավական ակտն ընդունելու ժամանակը, ստորագրելու, հրատարակելու եւ գործողության մեջ դնելու սահմանված կարգի պահպանումը.
- իրավական ակտի նորմերի բովանդակությունը.
- մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների եւ ազատությունների պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց թույլատրելի սահմանափակման շրջանակները եւ հիմքերը.
- Սահմանադրությամբ նախատեսված՝ իշխանությունների փարանջարման սկզբունքը.
- պետական մարմինների եւ պաշտոնապար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանները.
- Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը:

6. «Նեոսահադորդակցության մասին» Նայասփանի Նանրապետության օրենքի 24 հոդվածում սահմանելով, որ «Նշված լիցենզիայով սահմանված իրավունքների գործո-

ղությունը պետք է ապահովվի Նայասպրանի Նանրապետության օրենսդրությամբ (այդ թվում՝ հակամենաշնորհային օրենսդրությամբ)» (նման օրենսդրությունը սույն օրենքի ընդունման պահին սկզբունքորեն բացակայում էր), օրենսդիրը, փաստորեն, օրենքի նորմին հաղորդելով սահմանադրական նորմի բնորոշ գծեր, կանխորոշում է այս ոլորտը կարգավորող օրենքների բովանդակությունը:

ՆՆ Սահմանադրության 62 հոդվածի երրորդ մասի համաձայն՝ օրենսդիր մարմնի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ, որը ՆՆ Ազգային ժողովին չի օժտել սահմանադրական բնույթի նորմեր պարունակող օրենքներ ընդունելու իրավասությամբ:

Բացի դրանից, ՆՆ Սահմանադրության 5 հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ պետական մարմինները եւ պաշտոնապար անձինք իրավասու են կապարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ: ՆՆ Ազգային ժողովն օրենքի ուժ է հաղորդել մի փաստաթղթի, որը պարունակում է կառավարության կամ վերջինիս կողմից լիազորված մարմնի իրավասությունները վերազանցող նորմեր: Մասնավորապես.

ա) ՆՆ կապի նախարարության կողմից փրված լիցենզիան չի համապատասխանում ՆՆ Նախարարների խորհրդի 1991թվականի մարտի 5-ի «Նայասպրանի Նանրապետության փարածքում փնտեսական գործունեության փեսակներով զբաղվելու կարգի մասին» թիվ 161 որոշմամբ սահմանված պահանջներին,

բ) թիվ 60 վերախմբագրված լիցենզիայի 4-րդ կետում ամրագրված դրույթը, ըստ որի «Սույն լիցենզիայով լիցենզավորվողին վերապահված բացառիկ իրավունքները չպետք է դիտվեն որպես իսխապում Նայասպրանի Նանրապետության հակամենաշնորհային կամ այլ օրենքների նկատմամբ», կառավարության, առավել եւս՝ նախարարության իրավասության հարց չէ: Այն դուրս է նաեւ օրենսդիր մարմնի լիազորությունների շրջանակներից,

գ) գործադիր մարմինն իրավասու չէ պարտավորություններ սպանձնել եւ սահմանափակել քաղաքացիների իրավունքները եւ նրանց չթույլապրել զբաղվելու ազատ փնտեսական գործունեությամբ, եթե դա սահմանված չէ օրենքով եւ չի բխում օրենքի գործադրման պահանջներից: Միակողմանի նման պարտավորություններ է սպանձնվում փրված թիվ 60 լիցենզիայի 4-րդ կետով, ամրագրելով, որ «... լիցենզավորվողին վերապահված բոլոր իրավունքները պաշտպանելու նպատակով Նայասպրանի Նանրապետության կապի նախարարությունը եւ Նայասպրանի Նանրապետության կառավարության կողմից կամ Նայասպրանի Նանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված մարմինները պարտավորվում են ներդնել իրենց պետական իրավական ուժերը՝ չթույլապրելու որեւէ անձի կողմից սույն լիցենզիայում նշված ցանկացած փեսակի ծառայությունների մատուցումը»:

7. Նայասպրանի Նանրապետության Սահմանադրության 8 հոդվածի երրորդ մասի համաձայն՝ պետությունը երաշխավորում է սեփականության բոլոր ձևերի ազատ

զարգացումը եւ հավասար իրավական պաշտպանությունը, փնտրեսական գործունեության ազատությունը, ազատ փնտրեսական մրցակցությունը:

ՆՏ Սահմանադրության 4 հոդվածի համաձայն՝ պետությունն ապահովում է մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության եւ օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Տնտեսական գործունեության ազատությունը բացարձակ ազատություն չէ եւ միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին համապատասխան այն կարող է սահմանափակվել: Ընդ որում, սահմանափակման բնույթը հիմնավորում է օրենսդիրը՝ հաշվի առնելով, որ դա հնարավոր է միայն այլ անձանց իրավունքների եւ ազատությունների պաշտպան ճանաչում ու հարգանք ապահովելու, բարոյականության, հասարակական կարգուկանոնի ու ընդհանուր բարեկեցության արդարացի պահանջները ժողովրդավարական հասարակարգում բավարարելու համար (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 29 հոդվածի երկրորդ մաս, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 12 հոդվածի 3-րդ կետ):

Ազատ փնտրեսական մրցակցության սկզբունքն իր հերթին բխում է փնտրեսական ազատության եւ հավասարության սկզբունքներից եւ նշանակում է շուկայական փնտրեսության ներսում բոլոր փնտրեսավարող սուբյեկտների հավասարություն, պետության կողմից նրանց համար հավասար պայմանների եւ հնարավորությունների ապահովում:

Միաժամանակ, ՆՏ Սահմանադրության դրույթների, սահմանադրականության միջազգային սկզբունքների վերլուծությունը վկայում է, որ ազատ փնտրեսական մրցակցությունը չի բացառում պետության ու հասարակության անվտանգության եւ օրինական շահերի, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության նպատակով պետության կողմից արգելված, պետական լիցենզավորման ենթակա, բնական կամ պետական մենաշնորհի հանդիսացող կամ բացառիկ իրավունքներով կարգավորվող գործունեության փնտրեսակների առկայությունը:

Նման ոլորտների հսկակեցումը, փնտրեսական գործունեության ազատության եւ ազատ փնտրեսական մրցակցության շրջանակների հնարավոր սահմանափակումները, սակայն կանոնակարգվում են Սահմանադրությամբ եւ օրենքներով՝ ապահովելու համար նաեւ հակամենաշնորհային այնպիսի քաղաքականության իրականացում, որը երաշխավորում է բարեխիղճ մրցակցություն եւ փնտրեսական ու սոցիալական առաջընթաց:

Միայն օրենսդիր իշխանությունն է իրավասու որոշել այդ սահմանափակումների շրջանակներն ու բնույթը՝ որպես համընդհանուր պարտադիր վարքագծի կանոններ: Իսկ այն դեպքում, երբ առանձին իրավահարաբերություններ դեռեւս օրենքով կարգավորված չեն, կառավարությունը այն կարող է լրացնել ոչ միայն որպես օրենսդրական նախաձեռնության սուբյեկտ, այլեւ Սահմանադրության 78 հոդվածի հիման վրա կառավարության գործունեության ծրագրի օրենսդրական ապահովման նպատակով Ազգային ժողովը կարող է լիազորել կառավարությանն ընդունել օրենքի ուժ ունեցող որոշումներ, որոնք գործում են Ազգային ժողովի կողմից սահմանված ժամկետում եւ չեն կարող հակասել օրենքներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետով, 102 հոդվածի առաջին եւ երրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 5 հոդվածի 1 կետով, 67 եւ 68 հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Նեռահաղորդակցության մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 24 հոդվածը չի համապատասխանում Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 5 եւ 8 հոդվածների պահանջներին այնքանով, որքանով որ պետական լիցենզավորման ենթակա, պետական կամ բնական մենաշնորհի հանդիսացող գործունեության փեսակների հստակեցումը, այդ ոլորտներում հակամենաշնորհային քաղաքականության իրականացումը եւ պետության ու հասարակության անվտանգության եւ օրինական շահերից, այլոց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության նպատակներից ելնելով փնտեսական գործունեության ազատության եւ ազատ փոխանակման մրցակցության շրջանակների հնարավոր սահմանափակումները, որպես համընդհանուր պարտադիր վարքագծի կանոններ նախապես ոչ թե սահմանվել են օրենքով, այլ գործադիր իշխանության կողմից, իսկ օրենսդիրն անցումային դրույթների ձեռով օրենքի ուժ է հաղորդել կոնկրետ հասցեագրված պայմանների, որոնցում նաեւ փեղ են գրել ՆՏ Սահմանադրությանը չհամապատասխանող ձեւակերպումներ:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ «Նեռահաղորդակցության մասին» ՆՏ օրենքի 24 հոդվածում հիշատակվող թիվ 60 լիցենզիայում նախատեսված եւ ՆՏ Ազգային ժողովի կողմից փաստորեն օրենքի աստիճանի բարձրացված առանձին դրույթներ Նայասպանի Նանրապետության կառավարության կողմից սպանձնված միջազգային պարտավորությունների բնույթ են ստացել եւ որոնց չկատարումը երկրի համար հղի է որոշակի հետեւանքներով, նկատի ունենալով նաեւ, որ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՆՏ օրենքի 7 հոդվածի հիման վրա «Օտարերկրյա ներդրումները կարգավորող` Նայասպանի Նանրապետության օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած 5 փարվա ընթացքում, օտարերկրյա ներդրողի ցանկությամբ, կիրառվում է ներդրումների իրականացման պահին գործող օրենսդրությունը», հաշվի առնելով, որ քննության առարկա 24 հոդվածի իրավաբանական ուժը կորցնելը օտարերկրյա ներդրողին փրված լիցենզիայի գործողության վրա անմիջական ազդեցություն չի կարող ունենալ, գնահատելով ձեւավորված իրավակիրառական պրակտիկան, սահմանադրական դատարանը գտնում է, որ ՆՏ Ազգային ժողովը եւ ՆՏ կառավարությունը պարտավոր են իրենց լիազորությունների շրջանակներում այդ ժամանակահատվածում գտնել օրենսդրական եւ իրավակիրառական այնպիսի լուծումներ, որոնք օրենքի մակարդակով կսահմանեն բնական մենաշնորհի հանդիսացող ոլորտների վերաբերյալ պետության քաղաքականությունը, կապահովեն քննության առարկա հոդվածի դրույթների համապատասխանեցումը ՆՏ Սահմանադրության պահանջներին, ինչպես նաեւ Նայասպանի Նանրապետության կողմից սպանձն-

ված պարտավորությունների՝ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան կարարումը:

2. Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է, վերանայման ենթակա չէ, ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏ
Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*27 հունվարի 1999 թվականի
ՍԴՈ - 152*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՅ 1996 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՒՆԻՍԻ
30-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 3
ՆՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 1999 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5-ԻՆ
ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 2 ՆՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՎ 122
ՆՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԿԵՏԵՐԻ, 1999 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
3-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍՏԱՆԻ
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 18 ՆՈԴՎԱԾԻ 8-ՐԴ ՄԱՍԻ՝
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՎՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան,

16 հոկտեմբերի 1999 թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը, նախագահու-
թյամբ՝ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Նարությունյանի, կազմով՝ սահմա-
նադրական դատարանի նախագահի տեղակալ Վ. Նովիաննիսյանի, սահմանադրական
դատարանի անդամներ Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի,
Վ. Պողոսյանի, Վ. Սահակյանի, Մ. Սեյանի,

մասնակցությամբ՝ Նայաստանի Նանրապետության Նախագահի պաշտոնական
ներկայացուցիչ՝ Նայաստանի Նանրապետության արդարադատության նախարար Դ.
Նարությունյանի, գործով որպես պարասխանող կողմ ներգրավված՝ Նայաստանի Նան-
րապետության Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՆՆ Ազգային ժողովի աշխատակազմի
իրավաբանական վարչության պետ Վ. Նազարյանի, համաձայն Նայաստանի Նանրա-
պետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետի եւ 101 հոդվածի 1 կետի, «Սահմա-
նադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 5 հոդվածի 1
կետի, 25 հոդվածի 1 կետի եւ 55 հոդվածի,

դռնբաց նիստում քննեց «Ազգային ժողովի կողմից 1996 թվականի հունիսի 30-ին
ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» Նայաստանի Նանրապետության օ-

րենքի 3 հոդվածի 2-րդ մասի, 1999 թվականի փետրվարի 5-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 2 հոդվածի 1-ին կետի եւ 122 հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի, 1999 թվականի մարտի 3-ին ընդունված «Փախստականների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 8-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Լսելով գործով զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդամ Ֆ. Թոխյանի հաղորդումը, Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ Դ. Նարությունյանի եւ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ներկայացուցիչ Վ. Նազարյանի բացատրությունները, հեղափոխելով «Տեղական ինքնակառավարման մասին» եւ «Փախստականների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է 1996 թվականի հունիսի 30-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել է 1996 թվականի հուլիսի 22-ին, պաշտոնապես հրատարակվել է, ուժի մեջ է մտել 1996 թվականի նոյեմբերի 10-ից:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքն ընդունվել է 1999 թվականի փետրվարի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել է 1999 թվականի փետրվարի 17-ին, պաշտոնապես հրատարակվել է, ուժի մեջ է մտել 1999 թվականի փետրվարի 28-ից:

«Փախստականների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է 1999 թվականի մարտի 3-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել է 1999 թվականի մարտի 27-ին, պաշտոնապես հրատարակվել է, ուժի մեջ է մտել 1999 թվականի ապրիլի 11-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահը, ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 2-րդ կետով նախատեսված կարգով, նշված օրենքների վերաբերյալ առարկություններ կամ առաջարկություններ չի ունեցել:

2. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վիճարկվող 3 հոդվածի 2-րդ մասում ասվում է, որ՝ «Տեղական ինքնակառավարման մարմիններն ընտրվում են համայնքի անդամների կողմից: Համայնքի անդամ է համարվում Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը մշտապես բնակվում է Կրկյալ համայնքում կամ վերջին 3 տարում անընդմեջ ընդգրկված է համայնքում հարկեր, արեղական փոքրեր եւ վճարներ մուծողների ցուցակում»:

Եթե ընտրական ցուցակներում անճշտությունները վարչական կարգով վիճարկելու հնարավորության սահմանափակումը կարող է իրավաչափ համարվել ընտրությունների պարզաճ կազմակերպման նկատառումներից ելնելով, ապա այդ անճշտությունները դատական կարգով վիճարկելու հնարավորության սահմանափակումն անընդունելի է, քանի որ այն ուղղակիորեն առնչվում է ՏՏ Սահմանադրության 38-րդ հոդվածով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքին: Այդ իրավունքի սահմանափակման հնարավորության մասին ՏՏ սահմանադրական դատարանն իր իրավական դիրքորոշումն արտահայտել է «Բաժնեդիրական ընկերությունների մասին» ՏՏ օրենքի 71-րդ - հոդվածի 8-րդ կետի եւ 93-րդ հոդվածի 4-րդ կետի՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 38 եւ 39-րդ հոդվածներին համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 1998թ. նոյեմբերի 13-ին կայացրած որոշմամբ: Նամաձայն այդ իրավական դիրքորոշման՝ «ելնելով միջազգային իրավունքի նորմերից եւ սկզբունքներից, առաջնային համարելով մարդու անօտարելի իրավունքները եւ հաշվի առնելով, որ ՏՏ Սահմա-

նադրության 38 հոդվածի 2-րդ մասը, առանց բացառության, ամրագրում է յուրաքանչյուր մարդու՝ Սահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրված իրավունքների եւ ազատությունների դափական պաշտպանության իրավունքը, ՆՆ Սահմանադրությունն այդ իրավունքի սահմանափակման հնարավորություն է նախատեսել միայն Սահմանադրության 45 հոդվածի հիմքերով»։ Այս դիրքորոշումը ՆՆ Ազգային ժողովի կողմից՝ վիճարկվող դրույթն ընդունելիս հաշվի չի առնվել։

14. «Սահմանադրական դափարանի մասին» Նայասպանի Հանրապետության օրենքի 67 հոդվածի առաջին մասի հիման վրա ուսումնասիրելով իրավակիրառական պրակտիկան՝ սահմանադրական դափարանն արձանագրում է նաեւ, որ ՆՆ Ազգային ժողովի 1999թ. մայիսի 30-ի ընտրությունների ընթացքում ՆՆ առաջին ասպանի դափարաններում բավարարվել է ընտրողների ցուցակներում անճշտությունների վերաբերյալ 8595 հայց, եւ ընտրողների ցուցակներում ընդգրկվել են դափարան դիմած եւ դրա իրավունքն ունեցող բոլոր քաղաքացիները՝ 22157 ընտրող։ Սահմանադրական դափարանը ՆՆ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով 1999թ. մայիսի 30-ի ընտրությունների արդյունքները վիճարկելու մասին գործով 1999թ. հունիսի 28-ին կայացրած որոշման մեջ ընտրական ցուցակներում անճշտությունները վերացնելու վերաբերյալ արտահայտելով իրավական դիրքորոշում, նշել է, որ «ՆՆ ընտրական օրենսգրքի 14 եւ 40 հոդվածները քաղաքացու ընտրելու սահմանադրական իրավունքի պաշտպանության օրենսդրական երաշխիք են, եւ քաղաքացիներն իրենց իրավունքը վերականգնելու հնարավորություն են ունեցել նաեւ քվեարկության օրը»։ Սահմանադրական դափարանի այս դիրքորոշումը եւս օրենսդրի կողմից հաշվի չի առնվել։

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դափարանի մասին» Նայասպանի Հանրապետության օրենքի 5 հոդվածի 1 կետով, 55, 67 եւ 68 հոդվածներով, Նայասպանի Հանրապետության սահմանադրական դափարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Ազգային ժողովի կողմից 1999 թվականի փետրվարի 5-ին ընդունված՝ Նայասպանի Հանրապետության ընտրական օրենսգրքի (Ազգային ժողովի կողմից 2002թ. հուլիսի 3-ին ընդունված՝ «Նայասպանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Նայասպանի Հանրապետության օրենքի խմբագրությամբ) 14-րդ հոդվածի 3-րդ կետի «այդ թվում՝ դափարանի վճռով» արտահայտությունն այնքանով, որքանով սահմանափակում է խախտված իրավունքի դափական պաշտպանության հնարավորությունը, չի համապատասխանում ՆՆ Սահմանադրության 38 հոդվածի 2-րդ մասին, դրանով իսկ անհամապատասխանություն առաջացնելով նաեւ ՆՆ Սահմանադրության 1,2,3,4 եւ 27-րդ հոդվածների հետ եւ Սահմանադրության 6-րդ - հոդվածի 3-րդ մասի համաձայն իրավաբանական ուժ չունի։

2. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է, վերանայման ենթակա չէ, ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՆ
Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*1 հոկտեմբերի 2002 թվականի
ՍԴՈ - 389*

2005

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՅ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՆՈԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ԸՆԴՈՒՄԵՆՎԱԾ «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 7 ՆՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԴՐՈՒՅԹԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

6 մայիսի 2005թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. սահմանադրական դատարանի նախագահ Գ. Նարությունյանի, սահմանադրական դատարանի նախագահի պեղակալ Վ. Նովհաննիսյանի (զեկուցող), սահմանադրական դատարանի անդամներ Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Նայասպանի Նանրապետության արդարադատության նախարար Դ. Նարությունյանի,

գործով որպես պապասխանող կողմ ներգրավված՝ Նայասպանի Նանրապետության Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի պեղական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ռ. Պեպրոսյանի,

իրավիքով՝ ՏՏ մարդու իրավունքների պաշտպան Լ. Ալավերդյանի,

համաձայն Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետի եւ 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 5 հոդվածի 1 կետի, 25 հոդվածի 1 կետի եւ 55 հոդվածի,

դռնբաց նիստում քննեց «Ազգային ժողովի կողմից 2003 թվականի հոկտեմբերի 21-ին ընդունված՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 7 հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերության երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթի՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Լսելով գործով զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի փեղակալ Վ. Նովիաննիսյանի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ Դ. Նարությունյանի և պարասխանող կողմի ներկայացուցիչ Ռ. Պեպրոսյանի բացատրությունները, հրավիրված Լ.Ալավերդյանի պարզաբանումները, հեղափոխված «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003 թվականի հոկտեմբերի 21-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել է 2003 թվականի նոյեմբերի 15-ին և ուժի մեջ է մտել 2004 թվականի հունվարի 1-ից:

2. Ըստ դիմող կողմի՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 7 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթը, համաձայն որի՝ «...Նա կարող է փեղեկություններ պահանջել դատաքննության մեջ գրավող ցանկացած գործի մասին և առաջարկներ ներկայացնել դատարան երաշխավորելով քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և միջազգային իրավունքի նորմերով նախատեսված դատավարության իրավունքի պաշտպան ի կատար ածումը», հակասում է ՀՀ Սահմանադրության 39 հոդվածին և 97 հոդվածի 1-ին մասին, քանի որ այն խախտում է դատարանի անկախության և դատավարության կողմերի իրավահավասարության սկզբունքը:

Դիմող կողմը, վերլուծելով վիճարկվող դրույթում ամրագրված՝ դատարաններից փեղեկություններ պահանջելու և դատարաններին առաջարկներ ներկայացնելու՝ Պաշտպանի լիազորությունները, գրնում է, որ թեև վիճարկվող դրույթում «փեղեկություն» եզրույթի բովանդակությունը ճշգրտված չէ, այնուամենայնիվ, այդ եզրույթը հարկ է մեկնաբանել օրենքի ընդհանուր պրամաբանությունից ելնելով: Դիմողի կարծիքով, օրենքի համարեքստից պարզ է դառնում, թե ինչ սահմաններ ունի «փեղեկություն» եզրույթը և ինչ նպատակի այն պետք է ծառայի: Ըստ օրենքի պրամաբանության՝ Պաշտպանն իրավունք պետք է ունենա դատարանից պահանջել գործի վիճակի մասին այնպիսի փեղեկություններ, որոնք թույլ կտան, օրինակ, պարզել, թե արդյոք իրեն ներկայացված բողոքի կապակցությամբ ընթանում է դատաքննություն կամ արդյոք դատական ակտը մտնել է օրինական ուժի մեջ: Մինչդեռ, իրավակիրառական պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ «փեղեկություն» եզրույթը փարածական մեկնաբանություն է ստացել վիճարկվող դրույթի գործնական կիրառման ընթացքում:

Դիմող կողմի կարծիքով՝ Պաշտպանի կողմից դափարանին արդարադատություն իրականացնելիս առաջարկ ներկայացնելն ուղղակիորեն խախտում է դափարանի անկախության սկզբունքը, քանի որ րվյալ պաշտոնափար անձը, հանդիսանալով պետական մարմին, իր առաջարկով ուղղակի ներգործում է դափարանի վրա՝ կանխորոշելով դափարանի գնահատականները: Դիմողը նաեւ գտնում է, որ, լսելով դափավարության միայն մեկ կողմին եւ դրա հիման վրա ներկայացնելով առաջարկ դափարանին, Պաշտպանը խախտում է դափաքնության կողմերի իրավահավասարությունը՝ կապված մրցակցային դափավարության սկզբունքի երաշխավորման հետ:

Որպես իր այս եզրակացության հիմնավորում դիմող կողմը սահմանադրական դափարան է ներկայացրել Մարդու իրավունքների պաշտպանի եւ նրա փեղակալի՝ առանձին դափարաններից փեղեկություններ պահանջող եւ առաջարկություններ ներկայացնող գրությունների պատճեններ, ինչպես նաեւ մի շարք երկրներում մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի եւ դափական մարմինների փոխհարաբերության վերաբերյալ օրենսդրական պրակտիկայի վերաբերյալ փեղեկանք:

3. Պափասխանող կողմը, մի շարք երկրների օրենսդրություններից եւ միջազգային իրավունքի նորմերից օրինակներ բերելով ու պնդելով, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՏՏ օրենքը «չի հակասում, այլ ընդհակառակը՝ համապատասխանում է եւ՝ միջազգային իրավունքին, եւ՝ արտասահմանյան շարք երկրների օրենքներին՝ փեղեկություններ սփանալու հարցում», միաժամանակ նշեց հետեւյալը. Նանրապետության Նախագահի ներկայացրած դիմումին կից փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննարկվող հարցը բարձրացնելու համար հիմք են հանդիսացել օրենքի մեկփարյա գործողության ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի կամ նրա փեղակալի կողմից առաջին ապրանքի դափարաններ ուղղված մի քանի գրություններ, որոնցում թեկուզ նշված են, որ Պաշտպանը չի միջամտում դափական գործի ըստ էության լուծմանը, բայց որոնք անվիճելիորեն վկայում են Պաշտպանի կողմից դափական վարույթներին ուղղակի միջամտելու մասին, ցուցումներ են պարունակում դափարանի կողմից քննվող գործի առարկան փոխելու վերաբերյալ, որը մեր օրենսդրությամբ կարող են անել միմիայն գործի կողմերը: Պափասխանող կողմը միաժամանակ գտնում է, որ չնայած իրավակիրառական պրակտիկան սահմանադրական չէ, սակայն օրենքի քննության առարկա դրույթը հակասահմանադրական համարվել չի կարող:

Պափասխանող կողմի կարծիքով՝ քննության առարկա օրենքում կան հայեցակարգային բնույթի հակասություններ, որոնք անհրաժեշտ է շփվել ոչ թե դրա սահմանադրականության հարցը քննարկելով, այլ օրենսդրական փոփոխությունների միջոցով:

4. ՏՏ Սահմանադրության 97 հոդվածն ամրագրում է դափավորների անկախության սահմանադրական սկզբունքը: Նշված հոդվածի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս դափավորն անկախ է եւ ենթարկվում է միայն օրենքին:

ՏՏ Սահմանադրության 39 հոդվածն ամրագրում է յուրաքանչյուրի՝ անկախ եւ անկողմնակալ դափարանի կողմից իր գործի արդար դափաքնության իրավունքը:

Սահմանադրական այս սկզբունքն օրենսդրական ամրապնդումն ստացել է ՆՃ Ազգային ժողովի կողմից 1998թ. հունիսի 17-ին ընդունված՝ «Դափավորի կարգավիճակի մասին» ՆՃ օրենքի 5 եւ 6 հոդվածներում, 1998թ. հունիսի 18-ին ընդունված՝ «Դափարանակազմության մասին» ՆՃ օրենքի 2 հոդվածում, 1998թ. հուլիսի 1-ին ընդունված՝ ՆՃ քրեական դատավարության օրենսգրքի 40 հոդվածում:

«Դափավորի կարգավիճակի մասին» ՆՃ օրենքի 5 հոդվածի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս դափավորը հաշվեգրու չէ որեւէ պետական մարմնի կամ պաշտոնապար անձի առջեւ: Նույն օրենքի 6 հոդվածն արգելում է պետական մարմինների, փեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնապար անձանց, կուսակցությունների, հասարակական միավորումների եւ լրատվության միջոցների ցանկացած միջամտություն դափավորի գործունեությանը:

5. Դափավորների անկախության սկզբունքն ամրագրված է նաեւ մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում: Մասնավորապես, Միավորված ազգերի կազմակերպության 1985թ. Դափական համակարգի անկախության հիմնական սկզբունքներում նշվում է, որ «...Կառավարական եւ այլ հասարակությունների պարզականությունն է հարգել եւ պահպանել դափական մարմինների անկախությունը»:

Նույն սկզբունքն է ամրագրված նաեւ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Դափավորների անկախության, գործունեության արդյունավետության եւ դերի մասին 1994թ. հոկտեմբերի 13-ի թիվ (94) 12 հանձնարարականում: Հանձնարարականի առաջին Սկզբունքի 2-րդ կետի (d) ենթակետում նշվում է, որ «Դափավորները պետք է ունենան անսահմանափակ ազատություն՝ անաչառորեն ընդունելու որոշումներ՝ ղեկավարվելով իրենց խղճով, փաստերի իրենց մեկնաբանությամբ եւ գործող իրավանորմներով: Դափավորները իրենց գործերի էության վերաբերյալ չպետք է փեղեկավարություն փրամադրեն դափական համակարգից դուրս գտնվող որեւէ անձի»:

Մարդու իրավունքների եվրոպական դափարանի ձեւավորած նախադեպային իրավունքի համաձայն՝ դափավորի անկախության բաղադրապարրերից է, *inter alia*, արաքին ազդեցությունը բացառող երաշխիքների առկայությունը:

Սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան նմանապիպ հարցերի առնչությամբ, մասնավորապես վկայում է, որ «անկախ դափական համակարգը սահմանադրորեն պաշտպանված է ընդդեմ ցանկացած արաքին միջամտության, ուստի եւ Օմբրդսմենին դափարաններին վերահսկելու որեւէ գործառայթի վերապահումը անհամապեղելի է իշխանությունների փարանջարման եւ դափարանների անկախության սկզբունքի հետ»: Նման իրավական դիրքորոշում է արաահայրվել Նունգարիայի սահմանադրական դափարանի 29.03.1994թ. որոշման մեջ:

6. Կողմերի իրավահավասարության սկզբունքը հանդիսանում է ՆՃ Սահմանադրության 39 հոդվածով, ինչպես նաեւ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածով երաշխավորված արդար դափաքնության բաղադրապարրերից մեկը: Այս սկզբունքներն իրենց ի-

րացումն են սրացել ՏՏ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսդրության մեջ:

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Դոմբո Բեհիր Բ.Վ.-ն ընդդեմ Նիդեռլանդների գործով 1993թ. սեպտեմբերի 22-ի վճռի 33 կետի՝ «կողմերի իրավահավասարությունը» նշանակում է, որ դատավարության յուրաքանչյուր կողմի պեպք է ընձեռվի պարզաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը, ներառյալ՝ ապացույցները, այնպիսի պայմաններում, որոնք նրա համար մյուս կողմի համեմատաբար չեն ստեղծի անբարենպաստ վիճակ»:

7. Իրավական, ժողովրդավարական պեպության համար միաժամանակ կարելու է մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի դերն իրավունքի գերակայության երաշխավորման, պեպական մարմինների, քրեական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնավար անձանց կողմից խախտված մարդու իրավունքները և հիմնարար ազատություններն ինքնուրույն և անկախաբար պաշտպանելու հարցում: Այս սկզբունքն ամրագրված է նաև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՏՏ օրենքի 2 հոդվածում:

8. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, ըստ դիմող և պապահանող կողմերի, վիճարկվող օրենսդրական դրույթի և օրենքի 10 հոդվածի 1-ին կետի և 12 հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի միջև առկա հակասությունները ոչ միայն քրեիք են քալիս Պաշտպանի իրավասության քարաքնույթ մեկնաքանությանը, այլև չեն կանխորոշում վիճարկվող օրենսդրական դրույթում օգքագործվող «քրեիկություններ» եգրույթի բովանդակությունը: Սակայն վիճարկվող դրույթի և օրենքի 10 հոդվածի 1-ին կետի և 12 հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի համադրված վերլուծությունը հնարավորություն է քալիս հսքակեցնելու և ճգքքելու այդ եգրույթի բովանդակությունը և, հեքքեաքքար, նաև դատարաններից քրեիկություններ պահանջելու՝ Մարդու իրավունքների պաշտպանի իրավասության շքքանակը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՏՏ օրենքի 10 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Պաշտպանը չի քննարկում այն բողոքները, որոնք պեպք է լուծվեն միայն դատական կարգով, ինչպես նաև դադարեցնում է բողոքի քննարկումը, եթե քննարկումն սկսելուց հեքքր շահագրգիռ անձը հայց կամ բողոք է ներկայացքել դատարան»:

Օրենքի 10 հոդվածի 1-ին կետի համաքքեքքում, Պաշտպանը դատարանից իրավասու է պահանջել քրեիկություններ միայն իրեն ուղղված այն բողոքների կապակցությամք, որոնք լուծվում են արքադատական կարգով՝ բողոքում բարձրացված հարցերով շահագրգիռ անձի կողմից դատարաններում հայց կամ բողոք ներկայացված չիինելու պայմաններում:

Օրենքի 12 հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ «Բողոքը քննարկման ընդունելու մասին որոշում կայացնելուց հեքքր Պաշտպանը բողոքում բարձրացված հարցերի ուսումնասիրման նպատակով իրավասու է [...] ծանոթանալ քրեական, քաղաքացիական, վարչական, կարգապահական, քնքքեասական և այլ իրավախախտումների

վերաբերյալ այն գործերին, որոնց վերաբերյալ դափաժնիքները, վճիռները, որոշումներն օրինական ուժի մեջ են մտել, ինչպես նաև այն նյութերին, որոնց կապակցությամբ մերժվել է գործերի հարուցումը»:

Օրենքի 7 հոդվածում ամրագրված վիճարկվող դրույթը կարող է միայն միջոց հանդիսանալ օրենքի 10 հոդվածի 1-ին կետի, 12 հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի եւ 17 հոդվածի 1-ին կետի պահանջների իրացման համար: Օրենքը գործնականում բացառում է Պաշտպանի կողմից դափարաններից այնպիսի տեղեկություններ պահանջելը, որոնք առնչվում են կոնկրետ գործով արդարադատության իրականացմանն ու վերաբերում են դափարանի վարությամբ գտնվող գործի քննության դափավարական կամ նյութական բնույթի հարցերին:

9. Մարդու իրավունքների պաշտպանի՝ դափարաններից տեղեկություններ պահանջելու եւ առաջարկներ ներկայացնելու իրավունքը հարկ է գնահատել նաև այս ինստիտուտի դերի եւ գործառույթի համապետքաբար: Մարդու իրավունքների պաշտպանը, համաձայն «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՏՏ օրենքի 2 հոդվածի՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրության եւ օրենքների, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի համաձայն իրականացնում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց կողմից խախտված մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանությունը:

Ի փարբերություն վարչական մարմինների՝ դափական մարմինների կողմից անձի դափավարական կամ նյութական իրավունքի խախտումը կարող է վերացվել միայն վերաքննիչ դափարանի կամ վճռաբեկ դափարանի կողմից, համապատասխանաբար՝ վերաքննիչ բողոքի կամ վճռաբեկ բողոքի հիման վրա: ՏՏ գործող օրենսդրությամբ վերաքննիչ եւ վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն միայն գործին մասնակցող անձինք:

Համաձայն ՏՏ քրեական եւ քաղաքացիական դափավարական օրենսդրության՝ Մարդու իրավունքների պաշտպանը վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու իրավունքով օժտված սուբյեկտ չէ: Ներկաբար, եթե «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՏՏ օրենքի 7 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության 2-րդ նախադասությամբ նախատեսված Պաշտպանի գործողությունները՝ ուղղված անձի ենթադրյալ խախտված իրավունքների վերականգնմանը, մերժվեն դափարանի կողմից կամ հաշվի չառնվեն, Պաշտպանն իրավասու չէ տվյալ «մերժումը» կամ «հաշվի չառնելը» բողոքարկել վերադաս դափական ապյանում:

10. «Սահմանադրական դափարանի մասին» ՏՏ օրենքի 67 հոդվածի համաձայն՝ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերում նախատեսված հարցերով որոշումն ընդունվում է՝ գնահատելով ինչպես ակտի փառացի իմաստը, այնպես էլ ձեւավորված իրավակիրառական պրակտիկան:

Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի գործունեության վերաբերյալ առկա նյութերի ուսումնասիրությունից պարզվում է, որ Մարդու իրավունքների պաշտպ-

պանը, օրինակ, Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին արյանի դարարանի դարավորին ուղղված թիվ 1-0562 գրության մեջ շարադրել է, որ իր մոտ առկա փեղեկությունների համաձայն քրեական գործով, ըստ մեղադրանքի, վկան ներկայացել է դարական նիստի, Կրկն ցուցմունքներ եւ խնդրել իրեն ճանաչել փոփոխ: Այս կապակցությամբ խնդրում է հայտնել, թե վկային փոփոխ ճանաչելու վերաբերյալ ինչպիսին է դարարանի դիրքորոշումը:

Իսկ Երեւանի Աջափնյակ եւ Դավիթաշեն համայնքների առաջին արյանի դարարանի նախագահին ուղղված 21.01.2005թ. թիվ 1-0584 գրությամբ Պաշտպանն իր գնահատականն է ներկայացրել դարարանի վարությամբ գրավող գործի վերաբերյալ:

11. Սահմանադրական դարարանը, ելնելով վիճարկվող դրույթի կիրառման արդյունքում Նայասարանի Նանրապետությունում ձեւավորված պրակտիկայից, գրում է, որ Մարդու իրավունքների պաշտպանի եւ նրա փեղակալի՝ դարավորներին ուղղված նմանատիպ դիմումները, դրանցով պահանջված փեղեկությունները եւ կարարված առաջարկները պայմանավորված չեն անկախ եւ անկողմնակալ արդարադարության իրականացման անհրաժեշտությամբ, ըստ էության միջամություն են դարական վարությին եւ կարող են անհավասար պայմաններ ստեղծել դարավարության կողմերի համար:

12. Սահմանադրական դարարանը, հաշվի առնելով եվրոպական երկրների մեծ մասի օրենսդրության մեջ ամրագրված Մարդու իրավունքների պաշտպանի՝ պետական մարմիններից փեղեկություններ պահանջելու եւ առաջարկներ ներկայացնելու իրավունքի իրացման պրակտիկայի ուսումնասիրության արդյունքները, արձանագրում է, որ առկա են հետեւյալ ընդհանուր մոտեցումները.

Մարդու իրավունքների պաշտպանը քննության չի առնում այն գործերի հանգամանքները, որոնք դարավարության առարկա են հանդիսանում,

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը կանոնակարգող օրենքներն ուղղակիորեն չեն ամրագրում դարարաններից քննության մեջ գրավող գործի հանգամանքների վերաբերյալ փեղեկություններ ստանալու եւ առաջարկներ ներկայացնելու իրավունք,

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը կանոնակարգող օրենքները՝ ամրագրելով պաշտպանի՝ պետական մարմիններից փեղեկություններ ստանալու իրավունքը, միաժամանակ հստակեցնում են դարարաններից փեղեկություններ պահանջելու սահմանները:

Եվրոպական երկրների համապարասխան օրենսդրության մեջ գոյություն ունեցող այս պրակտիկան իր ամրագրումն է գրել նաեւ Եվրոպական օմբուդսմենի կանոնադրության մեջ: Վերջինս արգելում է Եվրոպական օմբուդսմենին միջամտել դարարաններում քննության առնվող գործերին կամ դարարանի լուծմանը ենթակա հարցերին: Իսկ «Քաղաքացիների իրավունքների ներկայացուցչի մասին» Լեհաստանի օրենքի 13 հոդվածով սահմանվում է, որ դարարաններից փեղեկություններ պահանջելը վերաբերում է միայն «գործի վիճակի» մասին փեղեկավարությանը:

13. Օրենքի վիճարկվող դրույթի փառացի իմաստի եւ ձեւավորված իրավակիրառական պրակտիկայի գնահատման հիման վրա, ինչպես նաեւ հաշվի առնելով միջազգային պրակտիկան, սահմանադրական դատարանը գտնում է, որ.

ա/ հետեւողականություն չի դրսևորվել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՏՏ օրենքի հայեցակարգը մշակելիս, որի արդյունքում փեղ են գրել ներօրենսդրական հակասություններ՝ սրեղծելով նաեւ հակասական իրավակիրառական պրակտիկա: Մասնավորապես դա վերաբերում է, մի կողմից, հիշյալ օրենքի 2 հողվածին, 7 հողվածի 1-ին կեփի երկրորդ պարբերության առաջին նախադասության մեջ ամրագրված դրույթին, 10 հողվածի 1-ին կեփին, 12 հողվածի 1-ին կեփի 3-րդ եւ 5-րդ ենթակետերին, 13 եւ 15 հողվածներին, 17 հողվածի 1-ին կեփին, մյուս կողմից՝ 7 հողվածի 1-ին կեփի երկրորդ պարբերության երկրորդ նախադասության մեջ ամրագրված դրույթներին,

բ/ օրենքի վիճարկվող դրույթը՝ Պաշտպանի՝ դատարաններից փեղեկություններ պահանջելու մասով, կարող է ազդել դատական մարմինների անկախության վրա կամ վրանգել դատավորի անկախությունը՝ այդ գործառույթի այնպիսի կիրառման դեպքում, երբ վիճարկվող դրույթում «փեղեկություններ» եզրույթին փրվում է լայն եւ օրենքի ընդհանուր փրամաբանությունից կրված մեկնաբանություն,

գ/ օրենքի վիճարկվող դրույթը՝ Պաշտպանի կողմից դատարաններին առաջարկներ ներկայացնելու մասով, կարող է ազդել դատական մարմինների անկախության վրա, քանի որ կարող է խոչընդոտել դատավորի եւ դատարանի կողմից միայն գործի փաստերի ու հանգամանքների գնահատման եւ օրենքի սեփական ըմբռնման հիման վրա որոշումներ կայացնելու գործնական հնարավորությունների իրականացմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Տայաստանի Տանրապետության Սահմանադրության 100 հողվածի 1 կեփով, 102 հողվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Տայաստանի Տանրապետության օրենքի 5 հողվածի 1 կեփով, 55, 67 եւ 68 հողվածներով, Տայաստանի Տանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Տայաստանի Տանրապետության օրենքի 7 հողվածի 1-ին կեփի երկրորդ պարբերության երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթը նման խմբագրությամբ՝ Պաշտպանի՝ դատարաններից փեղեկություններ պահանջելու եւ դատարաններին առաջարկներ ներկայացնելու իրավունքի մասով, պայմանավորված չէ անկախ եւ անկողմնակալ արդարադատություն իրականացնելու անհրաժեշտությամբ, սրեղծում է ներօրենսդրական հակասություն, հաշվի առնելով նաեւ իրավակիրառական պրակտիկան՝ միջամտություն է դատական իշխանության գործառույթներին եւ չի համապատասխանում Տայաստանի Տանրապետության Սահմանադրության 39 հողվածին եւ 97 հողվածի 1-ին մասի դրույթներին:

2. Մարդու իրավունքների պաշտպանի՝ դատարաններից փեղեկություններ պահանջելու իրավունքը՝ կապված օրենքի 10 հողվածի 1-ին կեփի, 12 հողվածի 1-ին կեփի 5-

րդ ենթակետի եւ 17 հոդվածի 1-ին կետի դրույթների կիրառելիության ապահովման հետ, ենթակա է բավարարման, եթե դա միջամտություն չէ դատական վարույթին՝ չի առնչվում կոնկրետ գործով արդարադատության իրականացմանը, չի վերաբերում դատարանի վարույթում գլխավոր գործի քննության նյութական եւ դատավարական բնույթի հարցերին:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ դատարաններից փեղեկություններ պահանջելու իրավունքը՝ կապված օրենքի 10 հոդվածի 1-ին կետի, 12 հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի, 17 հոդվածի 1-ին կետի դրույթների կիրառելիության ապահովման հետ, հակասական իրավակիրառական պրակտիկա չառաջացնելու համար անհրաժեշտ է հստակորեն ամրագրել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում:

3. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է, վերանայման ենթակա չէ, ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

6 մայիսի 2005 թվականի
ՍԴՈ - 563

ՆԱԵՆՈՒՄ ԿԱՅԱՍՏԱԿԱՆ ՆԱԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**ԿԱՅԱՍՏԱԿԱՆ ՆԱԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԿԱՅԱՍՏԱԿԱՆ ՆԱԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ
ՕՐԵՆՍՊՐՔԻ 218 ՆՈՂՎԱԾԻ, ԿԱՅԱՍՏԱԿԱՆ ՆԱԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 104, 106 ԵՎ 108 ՆՈՂՎԱԾՆԵՐԻ,
ԿԱՅԱՍՏԱԿԱՆ ՆԱԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՅ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝
«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՅԻՆ ՆԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՆՄԱՆՈՒՄ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ
ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 1151-Ն ՈՐՈՇՄԱՆ՝
ԿԱՅԱՍՏԱԿԱՆ ՆԱԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
31 ՆՈՂՎԱԾԻՆ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅՈՒ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 ապրիլի 2006թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը կազմով. սահմանադրական դատարանի նախագահ Գ. Նարությունյանի, սահմանադրական դատարանի նախագահի փոխակալ Վ. Նովիանիսյանի (զեկուցող), սահմանադրական դատարանի անդամներ Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի, Զ.Ղուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող՝ Նայասպանի Նանրապետության մարդու իրավունքների պաշտպան Ա. Նարությունյանի,

գործով որպես պարասխանող կողմեր ներգրավված՝ Նայասպանի Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Նայասպանի Նանրապետության Նախագահի օգնական Գ. Միերյանի և Նայասպանի Նանրապետության կառավարության պաշտոնական ներկայացուցիչ՝ Նայասպանի Նանրապետության արդարադատության նախարար Դ.Նարությունյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետի եւ 101 հոդվածի 8 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5 հոդվածի 1 կետի,

դռնբաց նիստում քննեց «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 104, 106 եւ 108 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2002 թվականի օգոստոսի 1-ին ընդունված՝ «Երեւանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» թիվ 1151-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31 հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի դիմումն է սահմանադրական դատարան:

Լսելով գործով զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի փեղակալ Վ. Նովիանիսյանի հաղորդումը, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Ա. Հարությունյանի, Հայաստանի Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ Գ. Միերյանի եւ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ Դ. Հարությունյանի բացատրությունները, ուսումնասիրելով գործով որպես մասնագետներ հրավիրված Տ. Բարսեղյանի, Ա. Վաղարշյանի, Ն. Թովմասյանի գրավոր եզրակացությունները, հերազոտելով ՏՏ քաղաքացիական եւ ՏՏ հողային օրենսգրքերը, «Երեւանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» ՏՏ կառավարության թիվ 1151-Ն որոշումը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի մայիսի 5-ին: Հանրապետության Նախագահի կողմից սպորազրվել է 1998թ. հուլիսի 28-ին եւ «ՏՏ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՏՏ օրենքի համաձայն ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից: Օրենսգրքի 218 հոդվածը սահմանում է.

«1. Նողամասը սեփականատիրոջից կարող է վերցվել պետության կամ համայնքի կարիքների համար՝ դրա գինը հատուցելու միջոցով:

Կախված այն բանից, թե ում կարիքների համար է վերցվում հողամասը, դրա գինը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը:

2. Պետության կամ համայնքի կարիքների համար հողամաս վերցնելու մասին որոշում ընդունում է պետական մարմինը:

Պետության կամ համայնքի կարիքների համար հողամասը վերցնելու մասին որոշում ընդունելու լիազորություն ունեցող պետական մարմինը, ինչպես նաեւ այդ որոշման նախապատրաստման եւ ընդունման կարգը սահմանվում են օրենքով:

3. Պետության կամ համայնքի կարիքների համար հողամասը վերցնելու մասին պետական մարմնի որոշումը ենթակա է գրանցման գույքի նկարմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմնում:

4. Հողամասը վերցնելու մասին որոշում ընդունած պետական մարմինը պարտավոր է այդ մասին գրավոր փեղեկացնել հողամասի սեփականատիրոջը»:

2. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքին ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից՝ 2001թ. մայիսի 2-ին: Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել է 2001թ. հունիսի 4-ին եւ ուժի մեջ է մտել 2001թ. հունիսի 15-ից:

Հողային օրենսգրքի 104 հոդվածը սահմանում է.

«1. Պետության եւ համայնքների կարիքների համար քաղաքացիներից եւ իրավաբանական անձանցից հողամասեր վերցնելու վերաբերյալ որոշումներ ընդունելու համար հիմք են հողերի գոփավորման եւ օգտագործման սխեմաները, բնակավայրերի գլխավոր հարակազմերը:

2. Եթե հողամասի կամ դրա մի մասի վերցնելու հետեւանքով հողամասի սեփականատերերը չի կարող այն օգտագործել նախկին նպատակային նշանակությամբ կամ այն փոքր է նվազագույն չափից, վերցվում է ամբողջ հողամասը:

3. Պետության եւ համայնքների կարիքների համար վերցվող հողամասի համար վճարը (գնման գինը), ժամկետները, պայմանները որոշվում են հողամասի սեփականատիրոջ հետ համաձայնությամբ, իսկ անհամաձայնության դեպքում՝ դատական կարգով:

4. Տարածքային կառավարման եւ փեղեկական ինքնակառավարման մարմինները (Երեւանում՝ Երեւանի քաղաքապետը) կառուցապատման համար հողամասեր փրամադրելու մրցույթ կամ աճուրդ կարող են հայտարարել ոչ շուր, քան կհաստատվի եւ անշարժ գույքի պետական միասնական կադաստրում կգրանցվի պետության կամ համայնքի կարիքների համար վերցվող հողամասի եւ այլ անշարժ գույքի օտարման գոփին ու ոչ շուր, քան օտարման գոփում գտնվող անշարժ գույքն օրենքով սահմանված կարգով վերցնելը:

Պետության կամ համայնքների կարիքների համար վերցվող հողամասերի եւ այլ անշարժ գույքի օտարման գոփին պետք է հայտարարվի հողամասերը վերցնելուց առնվազն մեկ փարի առաջ:

5. Մինչեւ մեկ փարին լրանալը հողամասը կարելի է վերցնել միայն դրա սեփականատիրոջ համաձայնությամբ»:

Հողային օրենսգրքի 106 հոդվածը սահմանում է.

«Պետության կամ համայնքների կարիքների ծագման դեպքերում հողամասերի սեփականատերերի, օգտագործողների իրավունքները սահմանափակվում են սույն օրենսգրքով, այլ օրենքներով եւ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում ու կարգով»:

Հողային օրենսգրքի 108 հոդվածը սահմանում է.

«1. Պետության կամ համայնքների կարիքների համար քաղաքացիների եւ իրավաբանական անձանց հողամասերը կարող են վերցվել Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ:

2. Սույն հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով է իրականացվում նաեւ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասեր վերցնելը պետության կարիքների համար:

3. Հողամասերի սեփականատերերը, հողամասը վերցվելուց առնվազն մեկ տարի առաջ, պետք է այդ մասին ծանուցվեն հողամասը վերցնելու որոշում ընդունած մարմնի կողմից: Մինչեւ այդ ժամկետի լրանալը հողամասը վերցնելը թույլատրվում է միայն հողամասի սեփականատիրոջ, օգտագործողի համաձայնությամբ:

4. Հողամասը վերցնելու մասին սեփականատիրոջ, օգտագործողի՝ հողամասի կառուցապարման եւ այլ միջոցառումների անցկացման համար սահմանված կարգով ծանուցելուց հետո գույքի անբաժանելի բարելավումների համար կատարած ծախսերը չեն հատուցվում»:

3. ՏՏ կառավարության թիվ 1151-Ն որոշումն ընդունվել է 2002թ. օգոստոսի 1-ին եւ վավերացվել է ՏՏ Նախագահի կողմից 2002թ. օգոստոսի 14-ին: Նամաձայն այդ որոշման. «Նայասարանի Նանրապետության քաղաքացիական օրենսգրքի 218-րդ ու Նայասարանի Նանրապետության հողային օրենսգրքի 104-րդ հոդվածներին համապատասխան եւ Երեւանում կառուցապարման ծրագրեր իրականացնելու նպատակով Նայասարանի Նանրապետության կառավարությունը որոշում է.

1. Նաստապետ Երեւանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում պետության կարիքների համար վերցվող անշարժ գույքի (հողամասեր, շենքեր եւ շինություններ) օտարման գույքները՝ 345000 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով՝ համաձայն NN 1 եւ 2 հավելվածների:

2. Երեւանի քաղաքապետին՝

ա) երկամսյա ժամկետում ճշտել պետության կարիքների համար վերցվող հողամասերի սահմանները եւ դրանց օտարման գույքները գրանցել Նայասարանի Նանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումում.

բ) Նայասարանի Նանրապետության քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածին համապատասխան՝ սույն որոշման 1-ին կետում նշված օտարման գույքներում գտնվող անշարժ գույքի սեփականատերերին եւ օգտագործողներին սահմանված կարգով հայտարարել պետության կարիքների համար օտարման գույքի եւ նրանց անշարժ գույքը վերցնելու ժամկետների, ֆինանսավորման աղբյուրների եւ կարգի մասին.

գ) օտարման գույքների տարածքներում լիցենզավորված համապատասխան կազմակերպությունների միջոցով կազմակերպել եւ իրականացնել անշարժ գույքի գնահատման աշխատանքները.

դ) Նայասարանի Նանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի «Բնակավայրերի տարածքների գոտեւորման նախագծերի մշակման, փորձաքննությո-

յան, համաձայնեցման, հաստատման եւ փոփոխման կարգը հաստատելու մասին» N 408 որոշմամբ սահմանված կարգով ապահովել նշված փարածքների գոյությունն նախագծերի մշակումն ու հաստատումը՝ կառուցապատման ծրագրերի իրականացման նպատակով հողամասերի փրամադրման համար.

ե) կառուցապատման ծրագրերի իրականացումն ապահովել 2003-2008 թվականների ընթացքում՝ ըստ փուլերի՝ ներգրավված ներդրումների ծավալներին համապատասխան»:

4. ՆՏ Սահմանադրության 31 հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ փրկապետելու, օգտագործելու, փոխանցելու եւ կրակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պարճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության եւ պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Ոչ ոքի չի կարելի գրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

Սեփականության օտարումը հասարակության եւ պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:

Նողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները եւ քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով»:

5. Դիմող կողմը բողոքարկվող իրավական նորմերի հակասահմանադրական լինելու վերաբերյալ իր պնդումը հիմնավորում է հետևյալ հանգամանքներով.

- ՆՏ Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի իմաստից հետևում է, որ սեփականության հարկադիր օտարման վերաբերյալ որոշումը պետական մարմինը կարող է ընդունել միայն բացառիկ դեպքերում եւ այն բանից հետո, երբ սեփականության նման օտարման անհրաժեշտությունը հիմնավորված է հանրային գերակա շահով:

- Վիճարկվող իրավական ակտերից եւ ոչ մեկում բացահայտված չեն «հասարակության եւ պետության կարիք» եւ «բացառիկ՝ գերակա հանրային շահի դեպքերում» հասկացությունները, որոնք միայն կարող էին ընկած լինել սեփականության իրավունքի սահմանափակման հիմքում: Միաժամանակ դրանք չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջին: Իրավական որոշակիությունը բացակայում է նաեւ այն առումով, որ ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածը, ինչպես նաեւ ՆՏ հողային օրենսգրքի 104,106 եւ 108 հոդվածները չեն սահմանում հողամասը «պետական կարիքներ» համար վերցնելու բավարար հստակ ձեւակերպված ընթացակարգ:

- Չկա անշարժ գույքի վերաբերյալ կոնկրետ օրենք, որում սահմանված լինեին օտարման բացառիկ կարեւորությունն ու նշանակությունը եւ նշված լինեք, թե օտարվող անշարժ գույքը հասարակության եւ պետության որ կարիքների բավարարմանն է ուղղվե-

լու: Կառավարության վիճարկվող որոշումն առհասարակ պարկերացում չի փայլա, թե ինչ «պեպրական կարիքներ»-ի մասին է խոսքը եւ որեւէ հիմնավորում չի պարունակում, թե ինչ պարճառական կապ գոյություն ունի «պեպրական կարիքների» եւ վերցվող հողամասի վրա մի շարք առեւտրային կազմակերպությունների կողմից իրականացվող առեւտրային գործունեության միջեւ:

- Դիմող կողմի կարծիքով, պեպր է լիներ առանձին օրենք, որը կկարգավորեր հանրային իրավունքի առարկա հանդիսացող այդ հարցերը: Այս դերը վերապահված է նշված օրենսգրքերի վիճարկվող հոդվածներին: Սակայն դրանք չեն կարող հիմք հանդիսանալ ենթաօրենսդրական ակտի համար, որովհետեւ չեն սահմանում սեփականության օտարման համար բացառիկ՝ գերակա հանրային շահի դեպքերին առնչվող իրավական ռեժիմը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության երաշխիք:

6. Գործով որպես պարասխանող կողմ ներգրավված՝ Նայասփանի Նանրապեպրության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ Գ. Միերյանը վիճարկվող իրավական ակտերի հակասահմանադրական լինելու վերաբերյալ իր առարկությունը ներկայացրեց դրանց բոլոր դրույթների առանձին-առանձին բովանդակային վերլուծության հիման վրա: Նրա կարծիքով, դրանք առանձին վերցրած չեն հակասում ՏՏ Սահմանադրությանը:

Գործով որպես պարասխանող կողմ ներգրավված՝ Նայասփանի Նանրապեպրության կառավարության պաշտոնական ներկայացուցիչ Դ. Նարությունյանը վիճարկվող իրավական ակտերի հակասահմանադրական լինելու վերաբերյալ իր առարկությունը հիմնավորեց հետևյալ պարճառաբանություններով.

- ՏՏ Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասը չի նախատեսում, որ օրենքը պեպր է պարունակի «բացառիկ գերակա հանրային շահերի» դեպքերի հիմնավորումները:

- ՏՏ Սահմանադրության 83.5. հոդվածը, ի փարբերություն նախորդ խմբագրությամբ գործող ՏՏ Սահմանադրության, սահմանեց այն իրավահարաբերությունները, որոնք պեպր է կարգավորվեն բացարճակապես օրենքով, եւ այդ հոդվածը որեւէ կերպ չի սահմանում, որ պեպր է օրենքով սահմանվի «բացառիկ գերակա հանրային շահերի» հիմնավորումը:

- Ըստ ՏՏ օրենսդրության՝ «գերակա հանրային շահի» առկայության վերաբերյալ որոշում կարող են կայացնել թե՛ ՏՏ Ազգային ժողովը եւ թե՛ ՏՏ կառավարությունը: Նանրապեպրության օրենսդրությունը չի արգելում, որ կառավարությունը նման որոշում կայացնի, իսկ գերակա հանրային շահն ընկած է բնակավայրի գլխավոր հափակագծի հիմքում:

- Երաշխիքը, որ ՏՏ Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ կետի հիման վրա սեփականության օտարման դեպքում մարդկանց իրավունքները չեն խախտվի, դա նրանց իրավունքների դափական պաշտպանությունն է, որը կարող են իրականացնել ինչպես ընդհանուր իրավասության դափարաններում, այնպես էլ ՏՏ սահմանադրական դափարանում:

- Պապասխանող կողմերի ներկայացուցիչները պնդեցին, որ ՆՆ քաղաքացիական օրենսգրքի 218 եւ ՆՆ հողային օրենսգրքի 104, 106 եւ 108 հոդվածներն այն իրավական հիմքերն են, որոնք նկատի ունի ՆՆ Սահմանադրության 31 հոդվածի երրորդ պարբերությունը, երբ նշում է, որ սեփականության օտարումը պետք է իրականացվի «օրենքով սահմանված կարգով»:

7. 1998թ. փետրվարի 27-ին ՆՆ սահմանադրական դատարանը քննության առնելով «ՆՆ Ազգային ժողովի կողմից 1995 թվականի դեկտեմբերի 27-ին ընդունված «Անշարժ գույքի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 22 հոդվածի երկրորդ, երրորդ, չորրորդ եւ հինգերորդ մասերի՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 8 հոդվածին եւ 28 հոդվածի երկրորդ մասին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործը», մասնավորապես որոշել է.

- անձի սեփականությունը՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 28 հոդվածի երկրորդ մասով նախատեսված հիմքերով կարող է օտարվել, իսկ նրա համաձայնության բացակայության դեպքում՝ պետության կողմից սեփականության իրավունքը կարող է դադարեցվել միայն կոնկրետ անշարժ գույքի վերաբերյալ օրենք ընդունելու միջոցով, որում կհիմնավորվի օտարման բացառիկ կարեւորությունն ու նշանակությունը եւ կնշվի, թե օտարվող անշարժ գույքը հասարակության եւ պետության որ կարիքների բավարարմանն է ուղղվելու.

- «Անշարժ գույքի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 22 հոդվածի հինգերորդ մասը, համաձայն որի՝ «Նասարակության եւ պետության կարիքների համար անշարժ գույքի օտարման ընթացակարգը սահմանում է Նայաստանի Նանրապետության կառավարությունը՝ ելնելով սույն հոդվածի դրույթներից», չի համապատասխանում Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 8 եւ 28 հոդվածներին: Նայաստանի Նանրապետության կառավարությունը չի կարող հասարակության եւ պետության կարիքների համար անշարժ գույքի օտարման այնպիսի ընթացակարգ սահմանել, որը նրան կլիազորի նման անշարժ գույքի օտարման իրավունք:

Սահմանադրական դատարանի 27.02.98թ. որոշումից հետո «Անշարժ գույքի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի համապատասխան հոդվածներում փոփոխություն կամ լրացում չկատարվեց: Այդ օրենքն ուժը կորցրեց «ՆՆ քաղաքացիական օրենսգրքը գործողության մեջ դնելու մասին» ՆՆ օրենքի համաձայն՝ 1999թ. հունվարի 1-ից:

2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքներով ՆՆ Սահմանադրության 8-րդ հոդվածի առաջին մասը, համաձայն որի՝ «Նայաստանի Նանրապետությունում ճանաչվում եւ պաշտպանվում է սեփականության իրավունքը», մնաց անփոփոխ, իսկ նախկին փոքսի 28 հոդվածի դրույթները՝ նոր խմբագրությամբ, ամրագրվեցին Սահմանադրության 31 հոդվածում:

8. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 55 հոդվածը պահանջում է, որպեսզի օրենքների եւ այլ նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության հարցը որոշելիս սահմանադրական դատարանը, ի թիվս այլ հանգամանքների, հաշվի առնի մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց թույլատրելի սահմանափակումների շրջանակները եւ հիմքերը, Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը:

Համաձայն Սահմանադրության 31 հոդվածի 1-ին մասի՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ փիրապետելու, օգտագործելու, փնօրինելու եւ կրակելու իր սեփականությունը»: Սահմանադրության 43 հոդվածը սեփականության իրավունքը չի դիտարկում որպես այդ հոդվածի հիմքերով սահմանափակվող իրավունք: Առկա է իրավունքների սահմանափակման այն առանձնահատուկ դեպքը, երբ Սահմանադրությունն է որոշում փվյալ իրավունքի սահմանափակման չափանիշն ու սահմանները՝ դա չվերապահելով նույնիսկ օրենսդրի իրավասությանը: Այն կարող է, նախ՝ իրականացվել օրենքով նախատեսված դեպքերում բացառապես դատական կարգով սեփականությունից զրկելու միջոցով՝ որպես պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն: Երկրորդ՝ «սեփականության օտարման» միջոցով, որը «սեփականության զրկումից» էապես փարբեր այլ ինստիտուտ է եւ պետք է իրականացվի Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի հիմքերով:

Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունից հետեւում է, որ.

- Սահմանադրությունը նախատեսում է սեփականատիրոջ սեփականության իրավունքի սահմանափակման եւ սեփականության հարկադիր օտարման հնարավորություն,

- վերջինս կարող է իրականացվել միակ նպատակի համար՝ երբ առկա է հասարակության եւ պետության կարիքը, որը պետք է լինի կոնկրետ եւ հստակորեն արտահայտված որոշակի սեփականության առնչությամբ, եւ որը պետությունը պարտավոր է, իր գործառույթներն իրականացնելիս, հաշվի առնել ու բավարարել,

- սակայն հասարակության եւ պետության ամեն մի կարիք սեփականության օտարման հիմք չի կարող հանդիսանալ, այդ կարիքները պետք է լինեն բացառիկ՝ պայմանավորված գերակա հանրային շահով,

- սեփականության օտարման կարգը պետք է սահմանված լինի օրենքով (նման ձեւակերպումը փեղ է գրել 2005թ. նոյեմբերի 27-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում, ընդ որում, օրենսդրի հայեցողությանն է թողնում, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում որ մարմինն է իրավասու օրենքով սահմանված կարգով որոշում ընդունել սեփականության հարկադիր օտարման մասին),

- սեփականության օտարման դեպքում պետք է երաշխավորված լինի նախնական փոխհատուցումը,

- այդ փոխհատուցումը պետք է լինի համարժեք:

Սահմանադրական այս պահանջների մեջ բացառիկ՝ գերակա հանրային շահի ամրագրումը, մի կողմից սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիք է, քանի որ այլ դեպքերում սեփականության օտարումը կլինի հակասահմանադրական, մյուս կողմից՝ պետության համար սահմանափակում է օտարված սեփականությունն այլ նպատակով օգտագործելու հնարավորությունը:

Պետությունը պարտավոր է օրենքի միջոցով սահմանել հասարակության եւ պետության կարիքների համար սեփականությունը հարկադիր օտարելու կարգը, ինչը պետք է ապահովի սեփականափոխ իրավունքը՝ նախապես իմանալու, թե ինչու է հարկադիր միջամտություն ցուցաբերվում սեփականության իր իրավունքին եւ ինչ կոնկրետ կարիքների համար է սեփականությունն օտարվում: Բոլոր դեպքերում իր գույքից անսարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտությունը ենթադրում է արդարացի հավասարակշռություն հասարակության գերակա շահերի եւ մարդու հիմնարար իրավունքների ապահովման անհրաժեշտության միջև:

Սահմանադրական դափարանը գրնում է, որ եթե հանրային կարիքների համար սեփականության հարկադիր օտարում է Կրեդի ունենում՝ առանց օրենսդրորեն հստակ սահմանելու եւ գործնականում հաշվի առնելու օտարման սահմանափակումների վերաբերյալ սահմանադրական պահանջները, ապա դա կլինի անհամամասն միջամտություն սեփականության իրավունքին:

9. ՏՏ Սահմանադրության 3 հոդվածը բովանդակում է իրավական պետության հիմնարար արժեքները բնութագրող երեք կարեւորագույն դրույթ.

- Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են:

- Պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

- Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Այս դրույթները, իրենց փոխկապվածության մեջ, երաշխավորում են իրավունքի գերակայությունը եւ հստակ բնորոշում մարդու իրավունքների, այդ թվում՝ սեփականության իրավունքի Կրեդն ու դերը սահմանադրաիրավական հարաբերություններում:

Միաժամանակ, Սահմանադրության 6 հոդվածը սահմանում է, որ նորմափիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության եւ օրենքների հիման վրա եւ դրանց իրականացումն ապահովելու նպատակով: Իսկ Սահմանադրության 83.5. հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերը նախատեսում են, որ բացառապես Տայասպանի Տանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու թե՛ պայմանները եւ թե՛ կարգը, ինչպես նաեւ նրանց իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները:

Տայասպանի Տանրապետության Սահմանադրությունն ամրագրել է մի կարեւոր նորմ եւս՝ «Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահ-

մանափակումները չեն կարող գերազանցել Նայասփանի Նանրապեպոթյան միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները» (հոդվ. 43): Այս առնչությամբ ուշադրության արժանի է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի այն դրույթը, համաձայն որի՝ «յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգրվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով»:

Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով մարդու իրավունքների վերաբերյալ սահմանադրական նորմ-սկզբունքների պահանջները, սեփականության իրավունքի պաշտպանության և հանրային կարիքների համար սեփականության հարկադիր օտարման հարցերով սահմանադրական և միջազգային իրավական նշված մոտեցումները, նկատի ունենալով սահմանադրական փոփոխությունների արդյունքում ձեռավորված նոր իրավական պահանջները, գտնում է, որ կառավարությունը չի կարող իր որոշումներով սահմանել պեպոթյան կարիքների համար սեփականության օտարման կարգը, որն ուղղակիորեն առնչվում է սեփականության իրավունքի սահմանափակման հիմնախնդրին և պետք է լինի հանրային շահի ու անհատի սեփականության իրավունքի հավասարակշռության ապահովման երաշխիք:

Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի դրույթներից բխում է, որ Սահմանադրությունը Կրկյալ իրավահարաբերությունների համապեքսպում որպես սեփականության հարկադիր օտարման հիմք է ճանաչում «հասարակության և պեպոթյան կարիքները», իսկ օտարվող գույքի սեփականատիրոջ սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքներ է համարում օտարումը՝ «միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում», օտարումը՝ «օրենքով սահմանված կարգով», օտարումը՝ «օտարվող գույքի նախնական համարժեք փոխհատուցմամբ»:

Սահմանադրությունն ուղղակի պահանջ է առաջադրում, որ հասարակության և պեպոթյան կարիքների համար սեփականության օտարման կարգը սահմանվի օրենքով: Ընդ որում, այդ կարգը չի կարող անպեսել սեփականության իրավունքի պաշտպանության այն բոլոր երաշխիքները, որոնք նախատեսված են 31 հոդվածում:

Նայասփանի Նանրապեպոթյան իրավական ակտերի համակարգային վերլուծությունը վկայում է, որ այդ խնդիրը դեռևս հստակ ու պարզաձև ձևով լուծված չէ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Նայասփանի Նանրապեպոթյունը, Սահմանադրության 3, 5, 8, 31, 43, 83.5 հոդվածների պահանջներից ելնելով, պետք է օրենքով հստակ սահմանի հասարակության և պեպոթյան կարիքների համար սեփականության օտարման իրավական ռեժիմը: Կենտրոնական և Արեւելյան Եվրոպայի մի շարք երկրներում դա իրականացվում է Նասարակության և պեպոթյան կարիքների համար սեփականության օտարման մասին հստակ օրենքով, որով սահմանվում են սեփականության օտարման հիմնական սկզբունքները, ընդհանուր պայմանները, հարկադիր օտարման իրավաչափությունը, իրավունքների պաշտպանության երաշխիքները, գործըն-

թացի կազմակերպման ու իրականացման կարգը եւ այլն: Նման օրենքի ընդունումը մեր երկրում ներդաշնակ կլինի ՏՏ սահմանադրական վերջին զարգացումների փրամաբանությանը եւ սեփականության իրավունքի պաշտպանության կարեւոր նախադրյալ կհանդիսանա:

10. Նասարակության եւ պեւոյության կարիքների համար սեփականության օտարման օրենսդրորեն կարգավորումը պեւոք է պարտադիր կարգով հիմքում ունենա այն ելակերպային դրույթը, որ փվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել կամ դադարել միայն Սահմանադրության 31 հոդվածով նախատեսված դեպքերում՝ երաշխավորելով սահմանադրական հեպեւյալ պահանջների կատարումը.

ա) հասարակության եւ պեւական կարիքների առկայության հիմնավորման պահանջի,

բ) բացառիկ՝ գերակա հանրային շահի առկայության եւ դրա հիմնավորման պահանջի,

գ) գերակա հանրային շահով պայմանավորված՝ հասարակական եւ պեւական կարիքի եւ անհաբի սեփականության իրավունքի պաշտպանության պահանջների միջեւ արդարացի հավասարակշռության ապահովման պահանջի: Վերջինս ենթադրում է նաեւ սեփականության իր իրավունքին միջամբելու վերաբերյալ անձի պատշաճ եւ հիմնավոր քեղեկացվածություն եւ քարբեր շահերի համադրման համաքեքսքում իր իրավունքների արդյունավեք դաքական պաշտպանության հնարավորություն:

Օրենքը պեւք է սահմանի հասարակության եւ պեւոյության կարիքների համար սեփականության օքարման կարգը, որոշակիացնելով.

ա) օքարելու մասին որոշում կայացնող պեւական մարմինը,

բ) օքարվող սեփականության դիմաց նախնական համարժեք (բնեղեն եւ/կամ դրամական) քիսիհաքուցման ապահովման կարգը,

գ) գույքն օքարելու մասին որոշման բողոքարկման, ինչպեա նաեւ հաքուցման գնի, ժամկեքների, այլ համարժեք քիսիհաքուցում քալու եւ դրանց հեք կապված մյուս պայմանների շուրջ համաձայնության չգալու դեպքում գույքի օքարման կարգը,

դ) օքարվող գույքի սեփականաքիքոջ իրավունքները, պարքականությունները, իրավունքի սահմանափակումները,

ե) հարկադիր օքարումից հեքո սեփականության նոր իրավունքի ծագման եւ իրավական ձեակերպման կարգը,

զ) իրավաչափ նպաքակի համար սեփականության քարբեր օքեկքների օքարման առանձնահաքությունները եւ այլն:

Եթե սեփականությունն օքարվում է հասարակության կարիքների համար, անկախ նրանից, թե ինչ սուքեկքի է (պեւոյություն, համայնք, քիգիկական կամ իրավաբանական անձ) հեքագայում օրենքով սահմանված կարգով անցնում գույքը, օրենքը պեւք է սահմանի այնպիսի կարգավորում, որը երաշխավորի քվյալ գույքի օգքագործումը հասարակության այն կարիքների համար, որի հիմնավորմամբ կաքարվել է օքարումը:

Օրենքը միաժամանակ պետք է նախատեսի, որ սեփականատիրոջ եւ պետության (ի դեմս նրա լիազոր մարմնի) միջեւ կնքվում է գերակա հանրային շահով պայմանավորված՝ հասարակության եւ պետության կարիքների համար գույքի օտարման եւ համարժեք փոխհատուցման պայմանագիր, որում պետք է հսկակ շարադրված լինեն վերոհիշյալ պահանջներից բխող երկկողմ պարտավորությունները, ինչպես նաեւ այն պայմանը, որ նման պայմանագրով փրված փոխհատուցումը չի կարող դիտվել որպես հարկվող եկամուտ:

Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարմանը վերաբերող ցանկացած նորմատիվ իրավական ակտ չի կարող շրջանցել սահմանադրական պահանջները (մասնավորապես՝ 3, 5, 8, 31, 43, 83.5. հոդվածներ) եւ անպեսել Սահմանադրության 31 հոդվածի դրույթն այն մասին, որ միայն բացառիկ՝ գերակա հանրային շահի առկայության հիմնավորմամբ ի հայտ եկած հասարակական եւ պետական կարիքի դեպքում կարող է սեփականության հարկադիր օտարման խնդիր առաջադրվել: Նակառակ մոտեցումը կհակասի սեփականության իրավունքի բուն էությանը:

11. ՏՏ Սահմանադրության նորմերի համեմատական վերլուծությունը, ինչպես նշվեց, վկայում է, որ միայն մեկ դեպքում է հնարավոր սեփականության հարկադիր օտարումը՝ երբ առկա է բացառիկ՝ գերակա հանրային շահերով պայմանավորված հասարակական եւ պետական կարիքը: Այս դրույթը ՏՏ գործող օրենսդրության մեջ իր համարժեք իրացումը չի գտել: Ավելին, սույն գործով վեճի առարկա եւ մի շարք այլ իրավական ակտերում այն ներկայացվել է «պետության կամ համայնքի կարիքի (կարիքների) համար գույքը (հողամասը) վերցնել» դրույթով: Սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունների համարեքստում «հասարակության եւ պետության կարիք» եւ «պետության կամ համայնքի կարիք» դրույթների թեկուզ քերականական մեկնաբանությունից եւ «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի 45 հոդվածի 10-րդ կետում սահմանված՝ «եւ» շաղկապի ու «կամ» շաղկապի կիրառման կանոններից հեղուկում է, որ երկրորդ դեպքում «կամ» շաղկապով կապակցված են նախադասության երկու համագոր, սակայն միմյանցից անկախ հասկացություններ, որոնք ենթադրում են սեփականության օտարման երկու ինքնուրույն, միմյանցից անջատ նախադրյալ, երբ «այդ նորմի կիրառման համար բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը»: Այս առումով, ինչպես նաեւ «հասարակություն» եւ «համայնք» հասկացությունների բովանդակային ընդգրկման փարբերություններից ելնելով, այդ երկու դրույթներն ամբողջությամբ նույնական կամ համագոր համարվել չեն կարող:

Բացի դրանից, այդ դրույթների սահմանադրաիրավական մեկնաբանության համար պետք է դրանք ներկայացնել իրենց իրավական բովանդակության ամբողջականության մեջ: Սահմանադրական դրույթի բովանդակությունն է՝ «սեփականության օտարումը հասարակության եւ պետության կարիքների համար»: Գործող օրենքներում եւ կառավարության որոշումներում այն ներկայացվել է «հողամասը (գույքը) պետության կամ համայնքի (համայնքների) կարիքների համար վերցնել» դրույթով:

Սահմանադրական դրույթի իրավական բովանդակությունը հստակ է, եւ խոսքը վերաբերում է իրավաչափ նպատակի համար սեփականության հարկադիր օտարմանը: «Սեփականության օտարում» հասկացությունը, իր հերթին, սահմանադրական փոխադրույթի համարեքսպրից ելնելով, ենթադրում է Սահմանադրությամբ նախատեսված այդ նույն իրավաչափ նպատակի համար կոնկրետ օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակում կամ դադարում՝ պայմանով, որ այդ օբյեկտի դիմաց անձին նախապես փոխվում է համարժեք այլ գույք կամ փոխհատուցում, որն էլ երաշխավորում է սեփականության իրավունքի ապահովման շարունակականությունը:

Փաստորեն Սահմանադրության 31 հոդվածի նշված դրույթն ամբողջականանում է նույն հոդվածի այլ դրույթների հետ օրգանական փոխկապվածության համարեքսպրում: Դա ոչ միայն իր բնույթով իրավունքի սահմանափակման առանձնահատուկ ինստիտուտ է, այլև անխուսափելիորեն նշանակում է, որ առկա է իրավաչափ նպատակի եւ սեփականության իրավունքի համադրման անհրաժեշտություն: Նման համադրման արդյունքում որեւէ կոնկրետ սեփականության օբյեկտի նկատմամբ Սահմանադրությամբ նախատեսված հիմքերով իրավունքը կարող է սահմանափակվել կամ դադարել, եթե այն ծառայում է բացառիկ՝ գերակա հանրային շահի բավարարմանը:

Ակնհայտ է, որ ինչպես նշվեց, օրենքը պետք է սահմանի, թե ինչպես որոշել հասարակական եւ պետական կարիքը, ինչպես է հիմնավորվում, որ դրա՝ համարժեք փոխհատուցմամբ բավարարումը թելադրված է բացառիկ՝ գերակա հանրային շահով, ինչ կարգով այդ հիմնավորման մասին արդարացիորեն սեփականության իրավունքը կրողին, ինչպես վերջինս կարող է Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով նախատեսված իրավունքների շրջանակներում դատական կարգով բողոքարկել ներկայացրած հիմնավորումը, երբ գրնում է, որ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտությունը չի ապահովում «արդարացի հավասարակշռություն» հասարակության շահերի եւ մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության անհրաժեշտության միջոց:

Տվյալ օրենքը պետք է համապատասխանի նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որեւէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձեւակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ փա քաղաքացուն դրա հետ համարելու իր վարքագիծը:

Գործող օրենքներում եւ կառավարության որոշումներում ամրագրված դրույթը՝ դրա իրավակիրառական, այդ թվում՝ դատական պրակտիկայով պայմանավորված բովանդակային ընդգրկմամբ, սեփականության իրավունքի սահմանադրական մտքեցումներին համահունչ չէ, եւ ավելի շուտ վկայում է իրավամբաժողության ինտերգրայի մասին: «Սեփականության օտարում» հասկացության փոխարինումը «վերցնել»՝ սահմանադրաիրավական բովանդակություն չունեցող, ժողովրդախոսակցական բնույթ եւ ավելի շուտ վարչարարություն հիշեցնող արտահայտությամբ, ոչ միայն բարեխիղճ մտքեցում չէ սահմանադրական հասկացությունների միասնական կիրառումն ապահովելու առումով, այլև աղավաղել է գույքի գնման ինստիտուտի բովանդակությունը: Վերջինս, իրավահարաբե-

րությունների սուբյեկտների իրավահավասարության եւ ինքնուրույն կամքի դրսետորման պայմաններում, միանգամայն կարող է հանդես գալ որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների առարկա: Սակայն այդպիսին չեն կարող համարվել այն հարաբերությունները, որպեղ առկա են մեկ կողմի՝ մյուսի վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային հարաբերություններ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՆՏ իրավական համակարգում օրենսդիր եւ գործադիր իշխանությունների կողմից չեն ստեղծվել անհրաժեշտ ու բավարար նորմափվային իրավական նախադրյալներ ՆՏ Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ - մասի պահանջների իրականացման համար՝ այն իրավական բովանդակության ու նշանակության փեսանկյունից, ինչը դրված է սահմանադրական նորմի հիմքում: Պեպությունը կամ համայնքը կարող են կողմերի ազապ կամքի դրսետորման հիման վրա իրենց կարիքների բավարարման համար քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում գնել անհրաժեշտ գույք: Սակայն երբ հարցն առնչվում է հասարակության եւ պեպության կարիքների համար սեփականության օտարմանը, ապա ցանկացած իրավական ակտի եւ համարժեք գործողության հիմքում պեպք է դրվի Սահմանադրության 31 հոդվածի պահանջը եւ նկապի առնվի, որ մարդու սահմանադրական իրավունքները բարձրագույն արժեք են ու անմիջական գործող իրավունք:

12. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ միջազգային պրակտիկայում սեփականության օտարման համար հիմք են պեպության եւ հասարակության այնպիսի կարիքները, ինչպիսիք են ճանապարհների, երկաթուղիների, խողովակաշարերի, օդանավակայանների, հանրային փարաբնույթ նշանակության այլ ենթակառուցվածքների, պաշտպանական նշանակության օբյեկտների շինարարությունը, երկրի սոցիալ-փնտեսական զարգացման, պապամշակութային հուշարձանների պաշտպանության, բնակավայրերի կառուցապապման եւ հասարակական ու պետական կարեւորության փարբեր այլ ծրագրերի իրականացումը: Սակայն բոլոր պարագաներում իրավական խնդիրն այն է, որ օրենքով սահմանված կարգով ամեն մի կոնկրեպ դեպքում հիմնավորվի ծրագրի այդպիսին լինելը եւ այդ մասին ժամանակին ու պապշաճ ձեով փեղեկացվեն շահագրգիռ անձինք՝ սպանալով իրենց իրավունքների արդյունավեպ պաշտպանության հնարավորություն:

Բացի դրանից, միջազգային սահմանադրական պրակտիկայում քնության առարկա իրավահարաբերությունների համապեքսփում չի կիրառվում «գերակա հանրային շահ» հասկացությունը: Ինչպես Նայասփանի Նանրապեպության, այնպես էլ որոշ այլ երկրների սահմանադրություններում շեշտվում է նաեւ բացառիկ դեպքերի հանգամանքը: «Բացառիկ» արփահայությունը ժամանակակից հայերենում բացապրվում է որպես «արփակարգ, արփասովոր, բացառություն կազմող»: «Գերակա» բառը բացապրվում է որպես «ամենից բարձր կանգնած, գերագույն, գերադաս»: Իրավունքի փեսության մեջ գերակայություն հասկացությունը, մասնավորապես, օգտագործվում է սահմանադրության, իրավունքի, օրենքի նկապմամբ: «Բացառիկ՝ գերակա հանրային շահ» սահմանադրական դրույթն իրավական կոնկրեպ բովանդակությունից գուրկ վերացարկում չէ, եւ

այն չի կարող անտեսվել իրավունքի ճյուղային ինստիտուցիաների կողմից: Մահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասում նման դրույթի առկայությունը վկայում է, որ հանրային շահերը համեմատության մեջ կարող են ներկայացվել որպես «գերակա հանրային շահեր» կամ «ոչ գերակա հանրային շահեր»: Բացառիկ են այն դեպքերը, երբ առկա է գերակա հանրային շահ: Իրենց հերթին գերակա բնույթ ունեցող կարող են համարվել հանրային այն շահերը, որոնք փվյալ պարագայում այլ հանրային շահերի համեմատ առաջնայնության որոշակի որակներով են օժտված: Այդ որակները հասարակական և պետական կոնկրետ կարիքների առնչությամբ պետք է հստակեցվեն և հիմնավորվեն փվյալ շահերը ներկայացնող պետական իշխանության մարմնի կողմից՝ օրենքով սահմանված չափանիշներին ու սկզբունքներին համապատասխան:

13. ՆՃ քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածի սահմանադրաիրավական վերլուծությունը՝ իրավակիրառական պրակտիկայով պայմանավորված դրա իրավական բովանդակությամբ հանդերձ, վկայում է.

ա) հոդվածի հենց վերնագիրը՝ «Նողամասը պետության կամ համայնքի կարիքների համար վերցնելը», վկայում է, որ այս հոդվածի խնդիր չի համարվել սեփականության իրավունքի պաշտպանությունը՝ սեփականության հարկադիր օտարման պահանջներին համապատասխան, ուստի չէր կարող Մահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի կիրառման օրենսդրական ապահովման երաշխիք լինել, ինչպիսի դերակատարություն դրան վերապահվել է հողային օրենսգրքով, ենթաօրենսդրական ակտերով և իրավակիրառական, այդ թվում՝ դատական պրակտիկայով,

բ) հոդվածի առանձին կետերի կոնկրետ ձեւակերպումները՝ փառացի իմաստի փեսանկյունից, վկայում են, որ դրանք վերաբերում են նաև գնման գործարք կատարելու քաղաքացիաիրավական հարաբերություններին, որոնք անմիջականորեն չեն առնչվում Մահմանադրության 31 հոդվածի իրավական բովանդակությանը և սահմանադրականության հարց առաջ չեն քաշում,

գ) սակայն երբ գնահատում ենք քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածը նույն օրենսգրքի 219 - 221 հոդվածների և հողային օրենսգրքի 104, 106, 108 հոդվածների համադրությամբ, ինչպես նաև հաշվի ենք առնում դատական պրակտիկան և այն հանգամանքը, որ ՆՃ կառավարությունը փվյալ հարցով հիմնականում իր որոշումների իրավական հիմք է համարել քաղաքացիական օրենսգրքի 218 և հողային օրենսգրքի 104 հոդվածները, սկնհայտ է դառնում առկա են ոչ միայն գույքի գնման քաղաքացիաիրավական հարաբերություններ:

Քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածը՝ իրավակիրառական պրակտիկայով դրան փրված իրավական բովանդակությամբ հանդերձ, չի ապահովում սեփականության իրավունքի պաշտպանության սահմանադրական երաշխիքների լիարժեք կիրառում, և սեփականության հարկադիր օտարման դեպքում իրավական պետության չափանիշներին համարժեք չի երաշխավորում արդարացի հավասարակշռություն անձի շահերի ու սեփականության իրավունքի և հանրային շահերի միջև: Տվյալ հոդվածի դրույթները կարող են կիրառվել կամավոր հիմունքներով գույքի առուվաճառքի քաղաքացիաիրավական

հարաբերությունների կարգավորման համար եւ նման ձեռով ու բովանդակությամբ կիրառելի չեն սեփականության հարկադիր օգտարման դեպքերում:

14. ՆՏ հողային օրենսգրքի 104 հոդվածը վերնագրված է «Պետության եւ համայնքների կարիքների համար հողամասերը վերցնելը»: Այսպեղ գրեթե վերարտադրվել է ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածի վերնագիրը: Սակայն հողային օրենսգրքի 104 հոդվածի իրավական բովանդակության հիմնական առանձնահատկությունն այն է, որ հստակ խոսվում է հողի նկատմամբ սեփականության իրավունքի հարկադիր դադարեցման մասին՝ հիմք ընդունելով հողերի գոյիավորման եւ օգտագործման սխեմաների, բնակավայրերի գլխավոր հատկագծերի առկայությունը:

Նման սխեմաների կամ հատկագծերի առկայությունը հասարակական եւ պետական կարիք առաջանալու հիմք կարող է հանդիսանալ: Սակայն դրանց հղում կատարելը դեռեւս բավարար չէ փաստելու բացառիկ՝ գերակա հանրային շահի առկայությունը, եթե օրենքով սահմանված կարգով դրանք չեն ճանաչվել որպես գերակա հանրային շահերով պայմանավորված հասարակության եւ պետության կարիք:

ՆՏ հողային օրենսգրքի 104 հոդվածով սահմանված՝ պետության եւ համայնքների կարիքների համար հողամասերի օգտարման կարգն ամրագրող դրույթները, նույն օրենսգրքի 106, 108, ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 218-221 հոդվածների համադրությամբ, չեն ապահովում «բացառիկ՝ գերակա հանրային շահերի» հիմնավորումից բխող՝ սեփականության իրավունքի պաշտպանության սահմանադրական երաշխիքների իրացումը:

15. Նողային օրենսգրքի 106 հոդվածը սահմանում է. «Պետության կամ համայնքների կարիքների ծագման դեպքերում հողամասերի սեփականատերերի, օգտագործողների իրավունքները սահմանափակվում են սույն օրենսգրքով, այլ օրենքներով եւ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում ու կարգով»:

Օրենսդիրը՝ ամրագրելով նման օրենսդրական դրույթ, բավարար ուշադրություն չի դարձրել երկու կարեւորագույն հանգամանքների վրա.

ա) հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության իրավունքի սահմանափակման եւ սեփականության օգտարման դեպքերի որոշմանը Մահմանադրությունը միարժեք պատասխան է տվել 31 հոդվածի 3-րդ մասում: Տվյալ հիմքերից բացի, ուրիշ ոչ մի դեպքում եւ ոչ ոք սեփականության իրավունքը սահմանափակել եւ սեփականությունը հարկադիր օտարել չի կարող (դա չի վերաբերում ռազմական կամ արտակարգ դրության պայմաններում իրավունքի ժամանակավոր սահմանափակման հնարավորությանը),

բ) սույն հոդվածը հնարավոր է համարում նաեւ սեփականության իրավունքի սահմանափակումը ոչ միայն օրենքներով, այլեւ նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված դեպքերում ու կարգով՝ տվյալ իրավահարաբերությունում հավասարության նշան դնելով օրենքների եւ այլ նորմատիվ իրավական ակտերի միջեւ: «Սույն օրենսգրքով», «այլ օրենքներով» եւ «նորմատիվ իրավական ակտերով» հասկացություններն

այս նախադասության մեջ հանդես են գալիս որպես հավասարագոր անդամներ (միջոցի պարագաներ) եւ «սահմանված դեպքերում ու կարգով»-ը (սահմանափակման անուղղակի խնդիր) հավասարաչափ վերաբերում է օրենսգրքին, այլ օրենքներին եւ նորմատիվ իրավական ակտերին: Նման մոտեցումը համահունչ չէ Սահմանադրության 31, 43 եւ 83.5. (1-ին եւ 2-րդ կետեր) հոդվածների պահանջներին:

16. Նոդային օրենսգրքի 108 հոդվածը վերնագրված է «Նողամասերը պետության կամ համայնքների կարիքների համար վերցնելիս դրանց սեփականատերերի, օգտագործողների իրավունքների երաշխիքները»: Այս վերնագրին հետեւում է առաջին կետը, համաձայն որի՝ «Պետության կամ համայնքների կարիքների համար քաղաքացիների եւ իրավաբանական անձանց հողամասերը կարող են վերցվել Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ»: Թե ինչ կարգ է սահմանել քաղաքացիական օրենսգիրքը, արդեն ներկայացվեց: Նոդվածի վերնագիրը եւ բուն բովանդակությունը համարժեք չեն: Այս հոդվածում օրենսդիրը պետք է հստակ փարբերակում դներ «սեփականությունից գրկել» եւ «սեփականության օտարում» սահմանադրական հասկացությունների միջեւ: Նոդվածի բոլոր դրույթների համալիր վերլուծությունը վկայում է, որ դրանք չեն ապահովում սեփականության օտարման ժամանակ իրավունքների պաշտպանության այն երաշխիքները, որոնք հստակ ամրագրված են ՆՆ - Սահմանադրության 3, 31 եւ 43 հոդվածներում:

17. ՆՆ կառավարության քննության առարկա որոշումն իր բովանդակությամբ նպատակների հայտարարագրում է որոշակի գործողություններ իրականացնելու համար: Խնդիրն այդ նպատակների բնույթի եւ իրավական բովանդակության գնահատումը չէ: Նարցն այն է, թե ի՞նչ իրավական հիմքերով է ընդունվել այդ որոշումը: Որոշման նախաբանում ասվում է. «Նայաստանի Նանրապետության քաղաքացիական օրենսգրքի 218-րդ ու Նայաստանի Նանրապետության հողային օրենսգրքի 104-րդ հոդվածներին համապատասխան եւ Երեսնում կառուցապատման ծրագրեր իրականացնելու նպատակով Նայաստանի Նանրապետության կառավարությունը որոշում է...»: Այլ հիմնավորումներ չկան: ՆՆ կառավարության որոշումը վկայակոչում է այնպիսի օրենսդրական դրույթներ, որոնք բավարար հիմք չեն կարող հանդիսանալ սեփականության հարկադիր օտարման համար: Կարեւոր է նաեւ այն հանգամանքը, որ ՆՆ քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածի 2-րդ կետում սահմանվում է, որ «Պետության կամ համայնքի կարիքների համար հողամասը վերցնելու մասին որոշում ընդունելու լիազորություն ունեցող պետական մարմինը, ինչպես նաեւ այդ որոշման նախապատրաստման եւ ընդունման կարգը սահմանվում են օրենքով»: Օրենսգրքում նման դրույթի առկայությունը վկայում է այդ հարցերի օրենքի մակարդակով կարգավորման անհրաժեշտության մասին: Իսկ դա անհրաժեշտ է սեփականության իրավունքի պաշտպանության օրենսդրական երաշխիքներ ապահովելու համար: Սակայն գործի քննությունը վկայեց, որ ՆՆ իրավական ակտերի համակարգում դեռեւս նման օրենք չի ընդունվել:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 5 հոդվածի 1 կետով, 55, 67 եւ 68 հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածը՝ հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունների կանոնակարգման առումով չի համապատասխանում ՆՏ Սահմանադրության 3, 8 (1-ին մաս), 31 (3-րդ մաս), 43 հոդվածների պահանջներին:

2. ՆՏ հողային օրենսգրքի՝

ա) 104 հոդվածը՝ հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունների կանոնակարգման առումով չի համապատասխանում ՆՏ Սահմանադրության 8 (1-ին մաս), 31 (3-րդ մաս), 43 հոդվածների պահանջներին,

բ) 106 հոդվածը չի համապատասխանում ՆՏ Սահմանադրության 31 (3-րդ մաս), 43 եւ 83.5. (1-ին եւ 2-րդ կետեր) հոդվածների պահանջներին,

գ) 108 հոդվածը չի համապատասխանում ՆՏ Սահմանադրության 3, 31 (3-րդ մաս) եւ 43 հոդվածների պահանջներին:

3. ՆՏ կառավարության 1 օգոստոսի 2002թ. թիվ 1151-Ն որոշումը՝ «Երեւանի կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին», հիմքում ունենալով ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 218 եւ ՆՏ հողային օրենսգրքի 104 հոդվածների դրույթները, հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունների ենթաօրենսդրական կարգավորման առումով չի համապատասխանում ՆՏ - Սահմանադրության 3 , 8 (1-ին մաս), 31 (3-րդ մաս), 43, 83.5. (1-ին եւ 2-րդ կետեր), 85 (2-րդ մաս) հոդվածների պահանջներին:

4. Առաջնորդվելով ՆՏ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի դրույթներով եւ հաշվի առնելով, որ ՆՏ Ազգային ժողովը եւ ՆՏ կառավարությունը պարտավոր են հնարավոր սեղմ ժամկետներում քննության առարկա հիմնախնդրին առնչվող բազմաթիվ իրավական ակտեր ՆՏ Սահմանադրության եւ սահմանադրական դատարանի որոշման պահանջներին համապատասխանեցնել եւ օրենքով հստակ կանոնակարգել բացառիկ՝ գերակա հանրային շահերով պայմանավորված հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման իրավական ռեժիմը, սույն որոշման մեջ ՆՏ Սահմանադրությանը չհամապատասխանող ճանաչված իրավական նորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել օրենքի հիման վրա նման իրավական ռեժիմի ուժի մեջ մտնելու պահը, բայց ոչ ուշ, քան 2006թ. հոկտեմբերի 1-ը:

5. Նայասփրանի Նանրապեփության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

18 ապրիլի 2006 թվականի
ՄԴՈ-630

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԴԱՏԱՎՈՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍՏԱՆԻ
ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ 1-ԻՆ ՆՈԴՎԱԾԻ (18 ՆՈԴՎԱԾԻ ՆՈՐ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ) ԴՐՈՒՅԹՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ
ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱՄԱԳԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅՈՒ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

20 սեպտեմբերի 2006թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարությունյանի /նախագահող/, Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Նովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի /զեկուցող/, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող՝ Երևան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին արյանի դատարանի դատավոր Է. Ավետիսյանի եւ պապասխանող կողմի ներկայացուցիչ՝ ՆՆ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ռ. Պետրոսյանի,

համաձայն Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 25 եւ 71 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց Ազգային ժողովի կողմից 2004թ. մարտի 31-ին ընդունված՝ ««Դատավորի կարգավիճակի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 1-ին հոդվածի (18 հոդվածի նոր խմբագրություն) դրույթների՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Երևան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին արյանի դատարանի (դատավոր Է. Ավետիսյան) դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի զեկուցագիրը, կողմերի գրավոր բացատրությունները, հերազոտելով գործում առկա մյուս փաստաթղթերը, միջնորդությունների հիման վրա լսելով կողմերի լրացուցիչ բացատրությունները, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. «Դատավորի կարգավիճակի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքը Նայասարանի Նանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականին: Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից այն ստորագրվել է 1998 թվականի հուլիսի 14-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Նշված օրենքի 18 հոդվածը, մինչեւ դրանում փոփոխություն կատարելը, սահմանում էր. «Դատավորն իրավունք ունի ստանալ աշխատանքային կենսաթոշակ դատավորի՝ իր վերջին զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի 75 փոկոսի չափով: Նշված իրավունքից չեն օգտվում այն անձինք, ովքեր դատավորի պաշտոնում աշխատել են 3 տարուց պակաս, կամ, որոնց լիազորությունները դադարեցվել են Նանրապետության Նախագահի կողմից սույն օրենքի 30 հոդվածի առաջին մասի 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ եւ 11-րդ կետերով նախատեսված հիմքերով»:

2. «Դատավորի կարգավիճակի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՏՏ օրենքը Նայասարանի Նանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի մարտի 31-ին: Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից այն ստորագրվել է 2004 թվականի ապրիլի 22-ին եւ ուժի մեջ է մտել 2004 թվականի հուլիսի 1-ից:

Վիճարկվող օրենքի 1-ին հոդվածով ներկայացվող՝ «Դատավորի կարգավիճակի մասին» ՏՏ օրենքի 18 հոդվածը՝ նոր խմբագրությամբ, սահմանում է.

«Նոդված 18. Դատավորի պաշտոնում աշխատած անձանց կենսաթոշակի իրավունքը

Դատավորն ունի «Պետական կենսաթոշակների մասին» Նայասարանի Նանրապետության օրենքով սահմանված կենսաթոշակի իրավունք:

Դատավորի պաշտոնում 10 եւ ավելի տարի աշխատած եւ սույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 4-րդ կետերով նախատեսված հիմքերով պաշտոնից ազատված քաղաքացու կենսաթոշակի նկատմամբ սահմանվում է ամենամսյա հավելավճար նրա, որպես դատավոր, զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի 75 փոկոսի եւ պետական կենսաթոշակի փարբերության չափով, որը վճարվում է Նայասարանի Նանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հավելավճարի իրավունքից օգտվում են նաեւ դատավորի պաշտոնից կենսաթոշակի անցած նախկին զերագույն դատարանի անդամ դատավորները, նախկին պետական արբիտրաժի պետական արբիտրները եւ նախկին ժողովրդական դատավորները:

Նախկին գերագույն դատարանի անդամ դատավորների կենսաթոշակները հաշվարկելիս հիմք են ընդունվում Նայասարանի Նանրապետության վճռաբեկ դատարանի դատավորների համար գործող պաշտոնային դրույքաչափերը:

Նախկին պետական արբիտրաժի պետական արբիտրաների կենսաթոշակները հաշվարկելիս հիմք են ընդունվում Նայասարանի Նանրապետության փոփոխական դատարանի դատավորների համար գործող պաշտոնային դրույքաչափերը:

Նախկին ժողովրդական դատավորների կենսաթոշակները հաշվարկելիս հիմք են ընդունվում Նայասարանի Նանրապետության առաջին աստիճանի դատարանի դատավորների համար գործող պաշտոնային դրույքաչափերը:

Սույն հոդվածով սահմանված հավելավճարի հաշվարկման, նշանակման եւ վճարման կարգը սահմանում է Նայասարանի Նանրապետության կառավարությունը»:

3. Սահմանադրական դատարան ներկայացված դիմումում, ըստ էության, վիճարկվում են «Դատավորի կարգավիճակի մասին» ՆՏ օրենքի 18 հոդվածի ոչ թե բոլոր փոփոխությունները, այլ դրա երկրորդ մասի այն դրույթը, համաձայն որի՝ կենսաթոշակի անցած դատավորի համար կենսաթոշակի նկատմամբ ամենամսյա հավելավճար սահմանվում է «...նրա, որպես դատավոր, զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի 75 փոկոսի եւ պետական կենսաթոշակի փարբեության չափով, . . . »:

4. Երեւան քաղաքի բնակիչ Ս. Մանուկյանը 2005թ. ապրիլին դիմել է Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին աստիճանի դատարան՝ ՆՏ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի պաշտոնավար անձի գործողությունները վիճարկելու պահանջով:

Դիմումում Ս. Մանուկյանը հայտնել է, որ ինքը 1974-2005թթ. աշխատել է Նայասարանի Նանրապետության փարբեր աստիճանների դատարանների դատավոր: ՆՏ Նախագահի 26.02.2005թ. հրամանագրով ՆՏ Սահմանադրության 55 հոդվածի 11-րդ կետի եւ 96 հոդվածի հիմքերով դադարեցվել են իր՝ որպես դատավորի, լիազորությունները՝ պաշտոնավարման փարբեր լրանալու կապակցությամբ:

2005թ. մարտի 5-ին Ս. Մանուկյանը դիմել է ՆՏ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի Երեւանի Արաբկիրի փարածքային կենտրոն՝ կենսաթոշակ նշանակելու խնդրանքով: 2005թ. ապրիլի 4-ին վերը նշված կենտրոնից փողեկացրել են, որ ՆՏ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նախագահի փողակալ Ա. Նարությունյանի գրավոր ցուցումով իրեն օրենսդրությամբ սահմանված կարգով կենսաթոշակի ամենամսյա հավելավճար պետք է նշանակվի առաջին աստիճանի դատարանի դատավորի պաշտոնային դրույքաչափի 75 փոկոսի չափով:

Ս. Մանուկյանը խնդրել է պաշտոնավար անձի վերը նշված ցուցումը /գործողությունը/ ճանաչել անհիմն եւ պարտավորեցնել ՆՏ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին իր ամենամսյա կենսաթոշակի չափը սահմանել ոչ թե դատավորի պաշտոնային դրույքաչափի, այլ ամսական ամբողջ աշխատավարձի

/հավելավճարներով հանդերձ/ 75 փոկոսի չափով՝ բերելով հիմնավորումներ, որոնք ընկած են նաեւ սահմանադրական դատարան ներկայացված դիմումի հիմքում: Նա միաժամանակ նշել է, որ 1992-2005թթ. դատավոր աշխատած ժամանակ ամենամյա պարտադիր սոցիալական ապահովության վճարումները կատարել է ոչ թե դատավորին վճարվող պաշտոնային դրույքաչափի գումարից, այլ ամբողջ աշխատավարձի գումարից:

5. Երեսան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ապրանի դատարանը 2005թ. ապրիլի 12-ին որոշում է կայացրել Տ. Մանուկյանի դիմումը վարույթ ընդունելու մասին:

Քննարկելով գործի նյութերը, դատարանը «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 71 հոդվածի պահանջներից ելնելով կասեցրել է գործի վարույթը եւ վիճարկում է «Դատավորի կարգավիճակի մասին» 17.06.98թ. ՆՃ օրենքի 18 հոդվածի՝ ՆՃ ԱԺ կողմից 2004թ. մարտի 31-ին ընդունված փոփոխության համապատասխանությունը ՆՃ Սահմանադրությանը:

Դիմումատու, մասնավորապես, մարնանշում է, որ.

- ՆՃ Սահմանադրության 37 հոդվածն ամրագրելով անձի սոցիալական ապահովության իրավունքը, նշում է, որ դրա ծավալն ու ձեւերը սահմանվում են օրենքով: Աշխատանքային կենսաթոշակի իրավունքը, որպես մարդու սոցիալական ապահովության կարեւոր իրավունք, կարգավորվում է ինչպես «Պետական կենսաթոշակների մասին» ՆՃ օրենքով, այնպես էլ առանձին օրենքների դրույթներով, ինչպիսին է ԿՎԿՅ պարագայում «Դատավորի կարգավիճակի մասին» 17.06.1998թ. օրենքը: Նկատի ունենալով, որ օրենքներն անձանց իրավունքները կարող են ոչ միայն պաշտպանել, այլեւ խախտել, ՆՃ Սահմանադրությունն ամրագրել է, որ «Անձի իրավական վիճակը վարթարացնող օրենքները եւ այլ իրավական ակտեր հետադարձ ուժ չունեն» (42 հոդված): Դիմումատուն եզրակացնում է, որ վիճարկվող օրենսդրական դրույթը Տ. Մանուկյանի աշխատանքային կենսաթոշակի հարցը լուծում է՝ վարթարացնելով նրա սոցիալական վիճակը:

- ՆՃ Սահմանադրության 3 հոդվածում նշվում է, որ «...Պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան...»: Այդ առումով հարկանշական է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1985թ. նոյեմբերի 29-ի եւ դեկտեմբերի 13-ի համապատասխանաբար 40/32 եւ 40/146 բանաձեւերով հավանության արժանացած «Դատական իշխանության անկախության վերաբերյալ սկզբունքներ»-ի 11-րդ կետը, որում ասված է. «Դատավորների լիազորությունների փետողությունը, նրանց անկախությունը, անվտանգությունը, համապատասխան վարձատրությունը, ծառայության, թոշակի եւ թոշակի գնալու պայմանները պետք է պարզաճ ձեւով երաշխավորվեն»: Նշված դրույթը կոչված է պետությունների ուշադրությունն առավել մեծ չափով սեւեռել դատավորների նյութական եւ ոչ նյութական պաշտպանվածությունն ուժեղացնելու վրա:

- Դատավորների սոցիալական ապահովության, այդ թվում կենսաթոշակի իրավունքի հարցին են վերաբերում նաեւ 1998թ. հունիսի 8-10-ը Սպրատրուրգում ընդունված՝ «Դատավորների կարգավիճակի մասին» եվրոպական խարտիայի եւ դրան կից մեկնա-

բանությունների հուշագրի 6.3 և 6.4 կետերի դրույթները, որոնցում ամրագրված է, որ իր պաշտոնական պարպականությունները կապարող դափավորի համար պետք է նախաբեափ սոցիալական պաշտպանվաժություն: Խարփիան հարուկ ընդգժում է, որ դափավորի ժերության կենսաթոշակի չափը պետք է հնարավորինս մոփ լինի դափական համակարգում նրա գրաղեցրաժ վերջին պաշտոնում սրացաժ աշխարավարժին:

- Օրենքի փվյալ փոփոխությունը թուլացնում է դափավորի անկախության երաշխիքները:

Ելնելով վերոնշալից եւ սահմանադրական դափարանում միջնորդությունների հիման վրա փրվաժ լրացուցիչ բացարրությունների արդյունքներից, դիմումարուն գրնում է, որ դափավորի կենսաթոշակի նշանակման կարգի փոփոխությունը, դրա սահմանումը ոչ թե դափավորի՝ իր վերջին գրաղեցրաժ պաշտոնի համար նախաբեափաժ աշխարավարժի 75 փոկոսի չափով, ալլ ամենամայա հավելավժարի նշանակումը նրա՝ որպես դափավոր գրաղեցրաժ վերջին պաշտոնի համար սահմանվաժ պաշտոնային դրույքաչափի 75 փոկոսի եւ պետական կենսաթոշակի փարբերության չափով, չի համարարասխանում ՄՄ Սահմանադրության 3 հողվաժի 2-րդ, 6 հողվաժի 2-րդ, 37 հողվաժի, 42 հողվաժի 3-րդ մասերի եւ 94 հողվաժի 1-ին մասի դրույթներին:

6. Պարասխանող կողմը գրնում է, որ ՄՄ Սահմանադրության 3 հողվաժի 2-րդ, 6 հողվաժի 2-րդ մասերի, 37 հողվաժի մարնանշումները փվյալ գորժով անհարկի են, քանի որ «Պետական կենսաթոշակների մասին» ՄՄ օրենքի ընդունմամբ (2002թ.) պետությունը, միջազգային իրավունքի սկզբունքներին եւ նորմերին համարարասխան, իրոք ապահովել է ժերության դեպքում քաղաքացու սոցիալական ապահովության /կենսաթոշակ սրանալու/ իրավունքը, այն ամրագրել է 2004թ. մարփի 31-ին ընդունվաժ՝ «Դափավորի կարգավիժակի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքում փոփոխություն կարարելու մասին» ՄՄ օրենքում:

ՄՄ Ազգային ժողովը միաժամանակ գրնում է, որ միանգամայն անհարկի է նաեւ Սահմանադրության 42 հողվաժի 3-րդ մասի վկայակոչմամբ՝ «Դափավորի կարգավիժակի մասին» օրենքում կարարվաժ փոփոխության սահմանադրականության հարց առաջադրելը: Սահմանադրության 42 հողվաժի փվյալ դրույթը, համաժայն որի՝ «Անժի իրավական վիժակը վարթարացնող օրենքները եւ ալլ իրավական ակտեր հեփարաժ ուժ չունեն», սահմանադրական դափարանի վարույթում գրնվող կոնկրետ գորժին չի վերաբերում, որովհետրեւ նախկին դափավոր Տ. Մանուկյանը փարիքը լրանալու կապակցությամբ կենսաթոշակի իրավունք է ժեռք բերել միայն 2005թ. փետրվարի 26-ից, մինչդեռ արդեն գորժողության մեջ է եղել 2004թ. մարփի 31-ի խմբագրությամբ /փոփոխությամբ/ օրենքը, որով եւ իրավացիորեն ղեկավարվել է ՄՄ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի Արաբկիրի փարաժքային կենրորը: Դա հասրարվաժ է «Իրավական ակտերի մասին» ՄՄ օրենքի 78 հողվաժի 3-րդ մասով, որարեղ ամրագրվաժ է. «իրավական ակտում կարարվաժ փոփոխությունների կամ լրացումների ... գորժողությունը փարաժվում է դրա ուժի մեջ մրնելուց հետո ժագաժ հարաբերությունների վրա, եթե սույն

օրենքով, այլ օրենքներով, ինչպես նաև փոփոխություններ կամ լրացումներ նախապեսող իրավական ակտով այլ բան նախապեսված չէ»:

Ըստ պարասխանող կողմի՝ Տ. Մանուկյանի եւ սոցիալական ապահովագրության պետական մարմնի միջև կենսաթոշակին առնչվող իրավահարաբերությունները ծագել են հենց վիճարկվող օրենքը գործողության մեջ դնելուց հետո, որը եւ կիրառվել է առանց օրենքին հերադարձ ուժ հաղորդելու:

Պարասխանող կողմը գտնում է նաև, որ համաձայն միջազգային իրավական ակտերի, որոնք մարմնանշում է դիմող կողմը, դատավորի կենսաթոշակի չափը պետք է մոտ լինի նրա աշխատավարձին այնքանով, որքանով դա հնարավոր է, եւ թույլ է տալիս յուրաքանչյուր պետության կենսաթոշակի չափը որոշել իր հնարավորությունների սահմաններում: Միաժամանակ, Նայասարանի Նանրապետությունում 2003թ. զգալիորեն բարձրացվել են դատավորների աշխատավարձի պաշտոնային դրույքաչափերը, որի արդյունքում փաստորեն ավելացել են նաև կենսաթոշակների բացարձակ մեծությունները, եւ դատավորի անկախության սոցիալական երաշխիքները, վերջին հաշվով, չեն թուլացել:

Պարասխանող կողմի կարծիքով, թե՛ դիմող կողմի բերած հիմնավորումները եւ թե՛ իրավակիրառական պրակտիկային կատարվող հղումները բավարար հիմք չեն ՆՏ Ազգային ժողովի կողմից 2004թ. մարտի 31-ին ընդունված՝ «Դատավորի կարգավիճակի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 1-ին հոդվածի (18 հոդվածի նոր խմբագրություն) դրույթները Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 3 հոդվածի 2-րդ - մասին, 6 հոդվածի 2-րդ մասին, 37 հոդվածին, 42 հոդվածի 3-րդ մասին եւ 94 հոդվածին հակասող ճանաչելու համար:

7. Վիճարկվող օրենքի եւ «Դատավորի կարգավիճակի մասին» ՆՏ օրենքի համեմատական վերլուծությունից բխում է, որ օրենքը դատավորի կենսաթոշակի ամենամսյա հավելումի հաշվարկման համար է հիմք սահմանում դատավորի պաշտոնային դրույքաչափը, իսկ «Դատավորի կարգավիճակի մասին» ՆՏ օրենքի 18 հոդվածը, մինչև նրանում փոփոխություն կատարելը, դատավորի կենսաթոշակի հաշվարկման համար էր հիմք ընդունում դատավորի աշխատավարձի 75 փոկոսը, որը ներառում է ոչ միայն պաշտոնային դրույքաչափը, այլ նաև հավելավճարները: Ընդ որում, «Աշխատանքի վարձապրության մասին» ՆՏ օրենքի 7 հոդվածի համաձայն՝ աշխատանքի վարձապրության փարբերն են՝ 1) պաշտոնային դրույքաչափը, 2) պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հաշվարկվող հավելումները եւ պարգեւավճարները, 3) փոխհատուցումները:

ՆՏ աշխատանքային օրենսգրքի 188 հոդվածի համաձայն՝ աշխատավարձը ներառում է հիմնական աշխատավարձը եւ գործատուի կողմից աշխատողին իր կատարած աշխատանքի դիմաց ցանկացած եղանակով փոխված լրացուցիչ վարձապրությունը:

ՆՏ օրենսդրության մեջ «աշխատավարձ» եւ «աշխատանքի վարձապրություն» եզրույթներն օգտագործվում են որպես հոմանիշներ: Այդ մասին է վկայում նաև ՆՏ աշխատանքային օրենսգրքի մի շարք հոդվածներում ամրագրված նորմերի վերլուծությունը:

(178, 179, 180, 181 եւ մի շարք այլ հոդվածներ): Բոլոր դեպքերում աշխատավարձը կամ աշխատանքի վարձապրոթյունն ուղղված է աշխատողի նյութական ապահովմանը:

Բացի դրանից, Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից ընդունված՝ «Աշխատավարձի պաշտպանության մասին» թիվ 95 կոնվենցիայի (Նայաստանի Նանրապետության կողմից վավերացվել է 25.10.2004թ.) 1-ին հոդվածը սահմանում է, որ աշխատավարձ նշանակում է, անկախ անվանումից եւ հաշվարկման մեթոդներից, բոլոր տեսակի վարձապրոթյունները կամ վաստակները, որոնք կարող են հաշվարկվել դրամով եւ հաստատվել փոխադարձ համաձայնությամբ կամ ազգային օրենսդրի կողմից, որը գործարարն պետք է վճարի աշխատողին աշխատանքի համար:

8. Վիճարկվող օրենքի 1-ին հոդվածով ներկայացվող՝ «Դատավորի կարգավիճակի մասին» ՏՏ օրենքի 18 հոդվածի փոփոխված տեքստի 1-ին մասը սահմանում է. «Դատավորն ունի «Պետական կենսաթոշակների մասին» Նայաստանի Նանրապետության օրենքով սահմանված կենսաթոշակի իրավունք», իսկ 7-րդ մասը սահմանում է. «Մույն հոդվածով սահմանված հավելավճարի հաշվարկման, նշանակման եւ վճարման կարգը սահմանում է Նայաստանի Նանրապետության կառավարությունը»:

«Պետական կենսաթոշակների մասին» օրենքի վերլուծությունից բխում է, որ դատավորին փրվում է փարիքային կենսաթոշակ, իսկ, ի կարարումն «Պետական կենսաթոշակների մասին» ՏՏ օրենքի 17 եւ 18 հոդվածների, ՏՏ կառավարության կողմից 2003 թվականի հունիսի 13-ին ընդունված թիվ 707-Ն որոշման 2-րդ կետով հիմնական կենսաթոշակի չափը սահմանվել է 4250 դրամ, ապահովագրական սրածի մեկ փարվա արժեքը՝ 180 դրամ:

«Դատավորի կենսաթոշակի նկատմամբ սահմանվող հավելավճարի հաշվարկման, նշանակման եւ վճարման կարգը սահմանելու մասին» Նայաստանի Նանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 1574-Ն որոշման հավելվածի 2-7-րդ կետերի համաձայն՝

Ամենամսյա հավելավճարը փրվում է այն դատավորներին, ովքեր դատավորի պաշտոնում աշխատել են առնվազն 10 փարի եւ այդ պաշտոնից ազատվել են 65 փարեկան դառնալու (պաշտոնավարման փարիքը լրանալու) կամ ժամանակավոր անաշխատունակության հետեւանքով ավելի քան 4 ամիս անընդմեջ աշխատանքի չներկայանալու պարճառով (2-րդ կետի առաջին պարբերություն):

Նախկին գերագույն դատարանի անդամ դատավորի, նախկին պետական արբիտրաճի պետական արբիտրի կամ նախկին ժողովրդական դատավորի կենսաթոշակի նկատմամբ սահմանվում է ամենամսյա հավելավճար, եթե նա դատավորի պաշտոնից ազատվել է կենսաթոշակի անցնելու կապակցությամբ (2-րդ կետի երկրորդ պարբերություն):

Այդ հավելավճարը սահմանված կարգով հաշվարկում, նշանակում եւ վճարում է ՏՏ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի կենսաթոշակ նշանակող ստորաբաճանումը՝ քաղաքացու գրավոր դիմումի եւ աշխատանքային գրքույկի, իսկ սույն կարգի 2-րդ կետով սահմանված հիմքերով աշխատանքից ազատվելու մասին աշխա-

տանքային գրքույկում անհրաժեշտ գրառում չլինելու դեպքում՝ դրա մասին համապատասխան մարմնի տրամադրությամբ փոփոխվում է վրա (3-րդ կետ):

Ամենամսյա հավելավճարի չափը հաշվարկվում է այդ կարգի 5-րդ կետում նշված համապատասխան պաշտոնային դրույթաչափի 75 տոկոսի եւ օրենքով նշանակված կենսաթոշակի տարբերության չափով (4-րդ կետ):

Ամենամսյա հավելավճարի չափի հաշվարկման համար հիմք են ընդունվում հետևյալ պաշտոնային դրույթաչափերը՝

ա) վճարելի դատարանի, վերաքննիչ դատարանի դատավորի, Կոնստանտնուպոլիսի դատարանի դատավորի, առաջին աստիճանի դատարանի դատավորի համար՝ դատավորի պաշտոնից ազատվելու պահին օրենքով սահմանված համապատասխան պաշտոնային դրույթաչափերը,

բ) նախկին գերագույն դատարանի անդամ դատավորի համար՝ 264.000 դրամ,

գ) նախկին պետական արբիտրաժի պետական արբիտրի համար՝ 242.000 դրամ,

դ) նախկին ժողովրդական դատավորի համար՝ 220.000 դրամ (5-րդ կետ):

Դատավորի պաշտոնում աշխատած անձին օրենքով նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու (չափը փոփոխելու) դեպքում վերահաշվարկվում (փոփոխվում) է նաև ամենամսյա հավելավճարը՝ առանց կենսաթոշակառուի գրավոր դիմումի (6-րդ կետ):

Ամենամսյա հավելավճարը յուրաքանչյուր ամիս վճարվում է կենսաթոշակի հետ միասին՝ ընդհանուր գումարով (7-րդ կետ):

Այսպիսով, վիճարկվող օրենքի համաձայն՝ դատավորի կենսաթոշակը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը կազմված է 4250 դրամից, որին ավելացվում է ապահովագրական ստաժի յուրաքանչյուր մեկ տարվա համար 180 դրամ, իսկ երկրորդ մասը կազմված է հավելավճարից՝ դատավորի զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույթաչափի 75 տոկոսի եւ պետական կենսաթոշակի տարբերության չափով, մինչդեռ «Դատավորի կարգավիճակի մասին» ՏՏ օրենքի նախկին խմբագրությամբ՝ 18 հոդվածի ուժով դատավորի կենսաթոշակը հաշվարկվում էր աշխատավարձի՝ ներառյալ հավելավճարի 75 տոկոսի չափով: Այնուամենայնիվ, վիճարկվող օրենքի եւ դատավորի սոցիալական ապահովության իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները կարգավորող ՏՏ օրենսդրության համեմատական վերլուծությունից բխում է, որ վիճարկվող օրենքը, ի տարբերություն «Դատավորի կարգավիճակի մասին» ՏՏ օրենքի նախկին խմբագրությամբ 18 հոդվածի, նվազեցնում է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կենսաթոշակի անցնող դատավորի սոցիալական պաշտպանության երաշխիքները, քանի որ խախտվում է դատավորի՝ իր զբաղեցրած վերջին պաշտոնում ստացած աշխատավարձին՝ կենսաթոշակի չափը հնարավորինս մոտ սահմանելու միջազգայնորեն ընդունված սկզբունքը, մեծանում է դրանց միջև խզումը:

9. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ դիմումատերն չի հստակեցրել իր դիրքորոշումները վիճարկվող հոդվածի բոլոր դրույթների առնչությամբ, քննության առարկա չի դարձնում դրանց սահմանադրականության հարցը, ուստի, ելնելով գործի քննության ընթացքում կողմերի դիրքորոշումներից, սահմանադրական դատարանը

րանը կոնկրետ գործով դափաքննությամբ վեճի առարկա է համարում միայն դափավորի պաշտոնում 10 եւ ավելի փարի աշխատած եւ «Դափավորի կարգավիճակի մասին» ՆՃ օրենքի 30 հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 4-րդ կետերով նախատեսված հիմքերով պաշտոնից սզափված դափավորի կենսաթոշակի ամենամայա հավելավճարի սահմանման համար դափավորի պաշտոնային դրույքաչափի, թե՛ ամբողջ աշխատավարձի 75 փոկոսը հիմք ընդունելու հարցը:

10. Սահմանադրական դափարանը գտնում է, որ վեճի առարկան անմիջականորեն չի առնչվում ՆՃ Սահմանադրության 3, 6, 37 հոդվածների դրույթներին: Բացի դրանից, հիմնավոր չէ դիմումափուի դիրքորոշումն առ այն, թե քաղաքացու նկատմամբ պետք է կիրառվեր «Դափավորի կարգավիճակի մասին» ՆՃ օրենքի՝ նախկին խմբագրությամբ 18 հոդվածը, երբ սահմանված կարգով ուժի մեջ է մտել ու գործել այդ հոդվածի փոփոխության մասին նոր օրենքը, որի սահմանադրականության հարցը փվյալ պահին Սահմանադրությամբ նախատեսված կարգով վեճի առարկա չի եղել:

11. Մույն որոշման 8-րդ կետում հսփակեցված վեճի առարկայի փեսանկյունից անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ՆՃ Սահմանադրության 94 հոդվածի 1-ին մասի իրավական բովանդակությանը: Այդ դրույթը սահմանում է. «Դափարանների անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ եւ օրենքներով»: Վերջինս ենթադրում է, որ Սահմանադրությամբ եւ օրենքներով անհրաժեշտ սահմանադրաիրավական երաշխիքներ պետք է ստեղծվեն դափարանների անկախության սպահովման համար: Իր հերթին, դափարանների անկախությունը վերացական հասկացություն չէ: Այն ենթադրում է գործառնական, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախության այնպիսի նախադրյալներ, որոնք անհրաժեշտ ու բավարար են դափարանների ու ողջ դափական իշխանության անկախությունը երաշխավորելու համար:

ՆՃ Սահմանադրության 5, 91, 94, 97 հոդվածների դրույթները հիմնարար սահմանադրական սկզբունքներ են, որոնք ամրագրում են դափարանների՝ որպես միասնական պետական իշխանության ինքնուրույն թեւի՝ դափական իշխանության, եւ դափավորների՝ որպես դափական իշխանության միակ կրողների, սահմանադրական կարգավիճակը՝ սահմանադրորեն երաշխավորելով նրանց անկախությունը: Օրենքները կոչված են իրավական լրացուցիչ երաշխիքներ ստեղծելու այդ անկախության ամրապնդման համար: Այս առումով, դափավորների համար բարձր կենսաթոշակի սահմանումը ոչ թե նրանց փրվող արփոնություն է, այլ հանրային եւ, առաջին հերթին՝ արդարադափության շահերի պաշտպանության միջոց, նրանց անկախության սոցիալական երաշխիք:

Սահմանադրական դափարանը միաժամանակ արձանագրում է, որ 2000թ. հունիսի 28-ին Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովում ներկայացված՝ Եվրոպայի խորհրդին անդամակցության ՆՃ պարփավորությունների մեջ դափաիրավական համակարգի համալիր բարեփոխումների խնդիր դրվեց, որի առաջնահերթ նպատակը նույնպես դափական համակարգի անկախության երաշխավորումն էր:

2002թ. սեպտեմբերի 26-ին անդրադառնալով Նայաստանի կողմից ստանձնված պարտավորությունների կատարմանը՝ Վեհաժողովը, ի թիվս այլ հարցերի, հարույ կարեւորեց դատարարական բարեփոխումներին հեղինակաբար լինելու անհրաժեշտությունը, մասնավորապես շեշտելով՝ «...երաշխավորել դատավորների լիակատար անկախությունը՝ Եվրոպայի խորհրդի չափանիշների համաձայն»:

Այս հիմնահարցն առանձնապես կարեւորվում է նաև 2004թ. հունվարի 7-ին ընդունված ԵՆԽՎ 1361 բանաձևում եւ հետագայում ընդունված մի շարք այլ փաստաթղթերում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկայի տեսանկյունից կարեւոր է միջազգային պրակտիկայի կողմից ճանաչված եւ 1998թ. ընդունված՝ «Դատավորների կարգավիճակի մասին» եվրոպական խարտիայում հարույ կարեւորված՝ դատավորի անկախության սոցիալական երաշխիքների ապահովման մասին 6.4. կետում ամրագրված դրույթը, համաձայն որի՝ «Կարգավիճակը, մասնավորապես, դատավորներին ապահովում է . . . ծերության թոշակով, որի չափը պետք է հնարավորինս մտք լինի դատական համակարգում ստացած նրա վերջին աշխատավարձին»: Նշված պահանջին լիովին համահունչ էր «Դատավորի կարգավիճակի մասին» 1998թ. հունիսի 6-ին ընդունված ՏՏ օրենքի 18 հոդվածի դրույթը, համաձայն որի՝ դատավորն իրավունք ուներ ստանալ աշխատանքային կենսաթոշակ «...իր վերջին զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի 75 փոկոսի չափով»: 2004թ. մարտի 31-ին ընդունված՝ «Դատավորի կարգավիճակի մասին» ՏՏ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՏՏ օրենքի 1-ին հոդվածով նախատեսված փոփոխությունը, համաձայն որի կենսաթոշակի նկատմամբ ամենամսյա հավելավճարի որոշման համար հիմք է հանդիսանում ոչ թե ամբողջ աշխատավարձի, այլ պաշտոնային դրույթաչափի 75 փոկոսը, չի բխում Նայաստանի Նանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների էությունից եւ չի նպաստում դատավորի անկախության երաշխիքների ամրապնդմանը:

Պետությունը, թերեւս, կարող է իր հնարավորությունների սահմանափակման որոշակի իրավիճակների պայմաններում նման քայլ կատարել, երբ պետության մեջ հարույ իրավիճակ է ծագում կամ անհրաժեշտ է պաշտպանել այլ սահմանադրական արժեքներ: Սակայն 2004 թվականին եւ հետագայում Նայաստանը շարունակել է երկնիշ թվերով փոփոխական աճ արձանագրել, հարաճուն մեծացել է երկրի պետական բյուջեն եւ օբյեկտիվ նախադրյալներ չեն եղել դատավորի աշխատավարձի ու կենսաթոշակի միջեւ խզումը մեծացնելու համար:

Դատավորի անկախության սոցիալական երաշխիքների թուլացման հիմք չէր կարող հանդիսանալ նաև 2002թ. դեկտեմբերի 26-ին ընդունված՝ «Նայաստանի Նանրապետության օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույթաչափերի մասին» ՏՏ օրենքով դատավորների աշխատավարձի բարձրացման հանգամանքը, քանի որ Նայաստանի Նանրապետությունը միջազգային պարտավորություն է ստանձնել ոչ թե դատավորի եւ դատարանների անկախության երաշխիքների եղած հավասարակշռությունը պահպանելու, այլ այն ամրապնդելու առումով: Միաժամանակ աշխատավարձի փվյալ բարձրացումը ներառել է պետա-

կան իշխանության ամբողջ համակարգը եւ չի վերաբերել միայն դատավորներին: Այն դեպքում, երբ դատավորի աշխատավարձը եւ աշխատանքային կենսաթոշակը, բացի նրա համար որոշակի կենսապայմաններ ապահովելու գործառնությունից, նաեւ, ինչպես նշվեց, դատավորի կողմից անկախ արդարադատություն իրականացնելու համար անհրաժեշտ նախապայման սպեղծելու հատուկ գործառնությո՞ւն ունեն: Դրա համար էլ, մասնավորապէս, «Դատավորի կարգավիճակի մասին» ՏՏ օրենքի 18 հոդվածով նախատեսվում է, բացի պետական ընդհանուր կենսաթոշակից, պետական բյուջեի միջոցների հաշվին դատավորի կենսաթոշակին հավելավճար սահմանել:

«Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 63 հոդվածի 1-ին մասի պահանջներից ելնելով, գնահատելով նաեւ քննության առնվող հարցի առնչությամբ ձեւավորված իրավակիրառական պրակտիկան, ՏՏ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՏՏ սահմանադրական բարեփոխումների կարեւոր ուղղություններից մեկը նույնպէս եղել է դատական իշխանության անկախության երաշխավորումը: Նայաստանի Նանրապետությունը ներկայումս որոշակի քայլեր կատարում է այդ ուղղությամբ, մասնավորապէս, օրենսդրորեն նախատեսելով նաեւ դատավորների սոցիալական անկախության ամրապնդմանն ուղղված որոշակի քայլեր, որոնք առավել համահունչ են «Դատավորի կարգավիճակի մասին» 1998թ. հունիսի 6-ին ընդունված ՏՏ օրենքի 18 հոդվածի դրույթներին եւ ուղղված են հաղթահարելու նշված հոդվածի 2004 թվականին կատարված փոփոխությամբ սրեղծված իրավիճակը:

Այդ ճանապարհով է ընթացել նաեւ դատական պրակտիկան, որի մասին վկայում են Երեսանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին արյանի դատարանի՝ 2003թ. դեկտեմբերի 15-ի եւ 2004թ. հունիսի 11-ի վճիռները՝ սահմանադրական դատարանի անդամի եւ դատավորի կենսաթոշակի չափի որոշման հետ կապված հայցերի առնչությամբ:

Ակնհայտ է, որ նման պայմաններում «Դատավորի կարգավիճակի մասին» ՏՏ օրենքի 18 հոդվածի՝ սույն գործով վիճարկվող շրջանակներում կատարված փոփոխությունը, թե՛ ՏՏ միջազգային պարտավորությունների, թե՛ ՏՏ սահմանադրական ու օրենսդրական զարգացումների եւ թե՛ ձեւավորված դատական պրակտիկայի փեսանկյունից դատավորի սոցիալական անկախության երաշխիքների հետագա ամրապնդում չի ապահովում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. 2004 թվականի մարտի 31-ին ընդունված՝ «Դատավորի կարգավիճակի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՏՏ օրենքի 1-ին հոդվածով (18 հոդվածի նոր խմբագրություն) նախատեսված դրույթը, համաձայն որի՝ կենսաթոշակի ամենամսյա հավելավճարի որոշման համար հիմք է ընդուն-

վում դարավորի զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի, այլ ոչ թե աշխատավարձի, 75 փոկոսը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 94 հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

20 սեպտեմբերի 2006 թվականի
ՄԴՈ-647

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՅ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-ԻՆ
ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 470 ՆՈՂՎԱԾԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

26 սեպտեմբերի 2006թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. սահմանադրական դատարանի նախագահ Գ. Նարոյունյանի (նախագահող), Կ. Բալասյանի, Ն. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Վ. Նովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի,

մասնակցությամբ՝ դիմող՝ քաղ. Ա. Մարտիրոսյանի, նրա լիազոր ներկայացուցիչ Է. Խաչիկյանի և պարասխանող կողմի ներկայացուցիչ՝ ՆՆ Ազգային ժողովի օրենսդրության վերլուծության և զարգացման վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 25 և 69 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արամ Մարտիրոսյանի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին ընդունված՝ Նայասպանի Նանրապետության քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Արամ Մարտիրոսյանի դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործի նյութերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. ՆՃ քաղաքացիական օրենսգիրքը ՆՃ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին: Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից այն ստորագրվել է 1998թ. հուլիսի 28-ին եւ, «Նայասարանի Նանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՆՃ օրենքի համաձայն, ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

ՆՃ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածը բաղկացած է 5 կետից եւ սահմանում է.

«1. Առուվաճառքի պայմանագրով կողմերից մեկը (վաճառողը) պարտավորվում է մյուս կողմին (գնորդին) որպես սեփականություն հանձնել (գույք) ապրանք, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը եւ դրա համար վճարել որոշակի գումար (գինը):

2. Սույն պարագրաֆով նախատեսված դրույթները կիրառվում են արժեթղթերի եւ արժույթային արժեքների առուվաճառքի նկատմամբ, եթե դրանց առուվաճառքի համար հատուկ կանոններ սահմանված չեն օրենքով:

3. Սույն օրենսգրքով կամ այլ օրենքով նախատեսված դեպքերում առանձին տեսակների ապրանքներ գնելու ու վաճառելու առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով եւ այլ իրավական ակտերով:

4. Սույն պարագրաֆում նախատեսված դրույթները կիրառվում են գույքային իրավունքների վաճառքի նկատմամբ, եթե այլ բան չի բխում այդ իրավունքների բովանդակությունից կամ բնույթից:

5. Սույն պարագրաֆում նախատեսված դրույթները կիրառվում են առուվաճառքի պայմանագրի առանձին տեսակների (մանրածախ առուվաճառք, ապրանքների մատակարարում, ապրանքների մատակարարում պետական կարիքների համար, էներգամատակարարում, անշարժ գույքի վաճառք) նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրի այդ տեսակների նկատմամբ սույն օրենսգրքի կանոններով»:

2. Ըստ գործում առկա դատական ակտերի՝ Երեւան քաղաքի բնակիչ Ա. Մարտիրոսյանը 2003թ. հունվարին չգրանցված ամուսնական հարաբերությունների մեջ է մտել Մ. Վեյլանի հետ, համարել կյանքի ընթացքում երեխա չեն ունեցել: Ընտանեկան հարաբերություններն ամրապնդելու նպատակով Մ. Վեյլանի մայրը՝ Լ. Ալեքսանյանը, որոշել է դատերը, որպես օժիպ նվիրել ԳԱԶ-31029 մակնիշի ավտոմեքենա: Այդ կապակցությամբ նա 2800 ԱՄՆ դոլար գումարով Բ. եւ Ն. Գրիգորյաններից գնել է վերոհիշյալ ավտոմեքենան եւ, որպեսզի իրենց ընտանիքին մշտապես օգնություն ցույց տալու հարազատները չիմանան այդ մասին եւ ինքը չզրկվի նրանց օգնությունից, շինծու գործարքով որպես ավտոմեքենայի գնորդ է ներկայացրել Ա. Մարտիրոսյանին: Ներագայում Ա. Մարտիրոսյանը լքել է կնոջը եւ իր հետ փարել ավտոմեքենան, ուստի Լ. Ալեքսանյանը դիմել է Շենգավիթ համայնքի առաջին արյանի դատարան՝ խնդրելով անվավեր ճանաչել Ա. Մարտիրոսյանի եւ Բ. ու Ն. Գրիգորյանների միջեւ 16.06.2003թ. կնքված ավտոմեքենայի առուվաճառքի գործարքը, քանի որ ավտոմեքենայի իրական գնորդը եղել է ինքը:

Նակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ա. Մարտիրոսյանը խնդրել է բռնագանձել Լ. Ալեքսանյանից 231.000 ՆՏ դրամ՝ պարճառաբանելով, որ վիճելի ավտոմեքենայով աշխատել է «Երվանդ Թագվորյան» ՄՊԸ-ում որպես վարորդ, սակայն ավտոմեքենան արգելանքի վերցնելու հետեանքով դադարեցվել է աշխատանքային պայմանագիրը, որի արդյունքում ինքը կրել է նյութական վնաս՝ վերը նշված գումարի չափով:

Շենգավիթ համայնքի առաջին սպյանի դատարանի 28.06.05թ. վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՆՏ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 14.11.05թ. վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

Դիմելով ՆՏ վճռաբեկ դատարան՝ Ա. Մարտիրոսյանը խնդրել է բեկանել ՆՏ - քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 14.11.05թ. վճիռը եւ գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության: ՆՏ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ քննարկական գործերով պալատը որոշել է ՆՏ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 14.11.05թ. վճիռը թողնել անփոփոխ, իսկ վճռաբեկ բողոքը՝ առանց բավարարման:

3. Քաղաքացի Ա. Մարտիրոսյանը 25.07.06թ. դիմել է ՆՏ սահմանադրական դատարան՝ ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի՝ ՆՏ Սահմանադրության 3 հոդվածին, 8 հոդվածի 1-ին մասին եւ 31 հոդվածի 2-րդ մասին համապատասխանության հարցը որոշելու համար:

ՆՏ սահմանադրական դատարան ներկայացված դիմումում, ըստ էության, վիճարկվում են քաղաքացու նկատմամբ կիրառված՝ ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի 1-ին կետի դրույթները:

Ըստ դիմողի՝ ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի 1-ին կետը չի ապահովում ՆՏ Սահմանադրության 3 հոդվածի պահանջները, իրավական որոշակիության բացակայության պայմաններում չի համապատասխանում ՆՏ Սահմանադրության 8 հոդվածի 1-ին մասի եւ 31 հոդվածի 2-րդ մասի դրույթներին:

Դիմողը գտնում է, որ ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածին դատարանների կողմից տրվել է կամայական մեկնաբանություն, այն է՝ իբր մեքենայի համար պայմանագրով նախատեսված գումարն իր կողմից չի վճարվել:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը վկայակոչում է նաեւ ՆՏ սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի թիվ 630 որոշման 11-րդ կետի 6-րդ պարբերությունում տրված՝ սահմանադրական դատարանի դիրքորոշումը, համաձայն որի՝ որեւէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին:

Դիմողը գտնում է, որ ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի դրույթները, որոնք նախատեսում են պայմանագրի առարկան փոխանցելու, պայմանագրով նախատեսված գումարը վճարելու դեպքերը, չեն կարող ՆՏ Սահմանադրության 31 հոդվածի 2-րդ մասի իմաստով դիտարկվել որպես օրենք, ուստի հակասում են ՆՏ Սահմանադրության 3 հոդվածին, 8 հոդվածի 1-ին մասին եւ 31 հոդվածի 2-րդ մասին:

4. Պատրասխանողը գտնում է, որ դիմողի փաստարկները հիմնավոր չեն, եւ դիմումը ենթակա է մերժման՝ հետեւյալ նկատառումներով.

Առուվաճառքի պայմանագիրը երկկողմ հարուցելի պայմանագիր է, որի շրջանակներում պայմանագրի կողմերը պարտավոր էին կատարել համապատասխանաբար երկու գործողություն՝ գույքի հանձնում եւ դրա դիմաց վճարում: Միայն դրանց ավարտից հետո խոսք կարող է լինել գնորդի մոտ սեփականության իրավունքի ծագման եւ ՏՏ Սահմանադրության 8 հոդվածի 1-ին մասի իմաստով պետության կողմից դրա ճանաչման ու պաշտպանման, ինչպէս նաեւ 3 հոդվածով սահմանված մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության մասին:

Մինչդեռ, ինչպէս երեւում է գործի նյութերից, վաճառողի հետ առուվաճառքի մասին բանակցությունները վարվել են եւ գումարը վճարվել է ոչ դիմողի կողմից:

Ինչ վերաբերում է ՏՏ Սահմանադրության 31 հոդվածի 2-րդ մասին, ապա, ըստ պատրասխանողի՝ այսպէս կիրառվել են ոչ թե սեփականության իրավունքից զրկման ինստիտուտը, այլ՝ շինծու գործարքի կանոնները, այսինքն՝ դատական կարգով ապացուցվել է, որ դիմողը վիճարկվող գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք չի բերել:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի 1-ին կէտը սահմանում է առուվաճառքի պայմանագրի հասկացությունը եւ կողմերի հիմնական պարտականությունները, սակայն դրանց կատարման պայմաններն առավել մանրամասնորեն կարգավորված են 470 հոդվածի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՏՏ քաղաքացիական օրենսգրքի այլ հոդվածներով (օրինակ՝ 472-474 հոդվածները նվիրված են պայմանագրի առարկան փոխանցելուն, 501-505 հոդվածները կարգավորում են պայմանագրով նախատեսված գումարը վճարելու հետ կապված հարաբերությունները եւ այլն): Մասնավորապէս, 501 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Գնորդը պարտավոր է ապրանքի համար վճարել առուվաճառքի պայմանագրով նախատեսված գինը ...», իսկ համաձայն 502 հոդվածի՝ «Գնորդը պարտավոր է վճարել ապրանքի համար այն վաճառողից ստանալուց անմիջապէս առաջ կամ հետո, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով, այլ օրենքներով, իրավական ակտերով կամ առուվաճառքի պայմանագրով եւ չի բխում պարտավորության էությունից»: Ուստի ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի դրույթներն անհրաժեշտ է մեկնաբանել դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված այլ հոդվածների համադրությամբ: Այս պարագայում, վիճարկվող հոդվածի 1-ին կէտի դրույթները հստակ իրավական բովանդակություն են ստանում՝ սահմանելով առուվաճառքի պայմանագրի առարկան եւ կողմերի իրավական վիճակը:

Այս համապետքստում հստակ է նաեւ «գնորդ» հասկացության իրավական բովանդակությունը: Օրենսգրքի 470 հոդվածի 1-ին կէտի դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրն այդ իմաստով գնորդ է համարում քաղաքացիական իրավունքի այն սուբյեկտին, որը միաժամանակ ապահովում է հետեւյալ պայմանները.

- ա) առուվաճառքի պայմանագրում նշված է որպէս գնորդ,
- բ) պարտավորվում է ընդունել պայմանագրով նախատեսված գույքը,

գ) պարտավորվում է վճարել պայմանագրով նախատեսված գույքի համար:

Գնորդի նման պարտականությունը սահմանված է նաև օրենսգրքի 500-502 հոդվածներով:

Միաժամանակ, 1980թ. ապրիլի 11-ին Վիեննայում ստորագրված՝ «Ապրանքների միջազգային առուվաճառքի պայմանագրերի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի (Նայասպրանի Նանրապետությունը վավերացրել է 2005թ. դեկտեմբերի 8-ին) 53 հոդվածի համաձայն՝ «Գնորդը պարտավոր է վճարել ապրանքի գինը և ընդունել ապրանքը...», իսկ 54 հոդվածի համաձայն՝ «Գինը վճարելու գնորդի պարտավորությունը ներառում է այնպիսի միջոցների ձեռնարկումը և այնպիսի ձեռականությունների պահպանումը, որոնք կարող են պահանջվել, պայմանագրի կամ օրենքների ու ցուցումների համաձայն, վճարման իրականացումը հնարավոր դարձնելու համար»:

6. ՆՆ սահմանադրական դափարանն արձանագրում է, որ ՆՆ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի դրույթներին համապատասխան իրականացված գործարքի արդյունքում «գնորդը» օրինական կարգով կարող է սեփականության իրավունք ձեռք բերել, և փվյալ պարագայում օրենսգրքի վիճարկվող հոդվածի և Սահմանադրության 3, 8 և 31 հոդվածների դրույթների միջև որևէ հակասություն չի կարող առաջանալ: Քննության առարկա գործի նյութերի ուսումնասիրությունից, սակայն բխում է, որ ընդհանուր իրավասության դափարանների կողմից դիմողի՝ սեփականության իրավունքի ձեռքբերման գործարքն է ճանաչվել շինծու և անվավեր: Այս հանգամանքները, ինչպես նաև դիմումատուի այն պնդումը, համաձայն որի՝ ինքն է վճարել վիճելի ավտոմեքենայի գինը, այլ ոչ թե Լ. Ալեքսանյանը, ընդհանուր իրավասության դափարանների իրավագործության խնդիր են և դուրս են սահմանադրական դափարանում գործի քննության առարկայի շրջանակներից:

7. ՆՆ սահմանադրական դափարանը գտնում է, որ ՆՆ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի 1-ին կետի դրույթները ձեռակերպված են հսպակ, որևէ իրավական անորոշություն չեն առաջացնում և միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին, ինչպես նաև ՆՆ սահմանադրական դափարանի 2006թ. ապրիլի 18-ի թիվ 630 որոշմամբ արտահայտված դիրքորոշմանը համահունչ ապահովում են ՆՆ Սահմանադրության 8 հոդվածի 1-ին մասի դրույթների իրացումը, սահմանելով օրինական կարգով սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերից մեկի՝ առուվաճառքի պայմանագրի բովանդակությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Նայասպրանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դափարանի մասին» Նայասպրանի Նանրապետության օրենքի 63, 64 և 69 հոդվածներով, Նայասպրանի Նանրապետության սահմանադրական դափարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Նայաստանի Նանրապետության քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածը համապարասխանում է Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 3 հոդվածին, 8 հոդվածի 1-ին մասին եւ 31 հոդվածի 2-րդ մասին:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

26 սեպտեմբերի 2006 թվականի
ՄԴՈ-648

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂ. Մ. ՔՈՉԱՐՅԱՆԻ ԵՎ ՔԱՂ. Ն. ԴԱՎԹՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՏՈՎՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 11 ՆՈԴՎԱԾԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

4 հոկտեմբերի 2006թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Նով-
հաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի (զեկուցող), Վ. Պողոսյա-
նի,

մասնակցությամբ՝ դիմող քաղաքացիներ Մ. Քոչարյանի եւ Ն. Դավթյանի, դիմող-
ների ներկայացուցիչներ Գ. Մանուկյանի եւ Ա. Պապիկյանի, պարասխանող՝ ՆՆ Ազգա-
յին ժողովի ներկայացուցիչ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական
հանձնաժողովի նախագահ Ռ. Պետրոսյանի, գործով հրավիրվածներ՝ Նայասարանի Նան-
րապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Ա. Վարդանյանի, Նա-
յասարանի Նանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրա-
մի նախագահ Վ. Խաչիկյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1
կետի, 101 հոդվածի 6 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի
Նանրապետության օրենքի 25 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Քաղ. Մ. Քոչարյանի եւ
քաղ. Ն. Դավթյանի դիմումների հիման վրա՝ «Սոցիալական ապահովության քարտերի
մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 11 հոդվածի՝ Նայասարանի Նանրապե-
տության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ»
գործը:

Գործի քննության առիթ են հանդիսացել քաղաքացիներ Մանուշակ Քոչարյանի
եւ Նրանուշ Դավթյանի դիմումները սահմանադրական դատարան, որոնց հիման վրա

սահմանադրական դատարանի որոշմամբ գործերը միավորվել են եւ քննվել դատարանի նույն նիստում:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, կողմերի եւ վկայի բացատրությունները, հրավիրվածների պարզաբանումները, հեղափոխելով «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՏՏ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության Սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

I. «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՏՏ օրենքն ընդունվել է 2003թ. սեպտեմբերի 24-ին, ստորագրվել է ՏՏ Նախագահի կողմից 2003թ. հոկտեմբերի 8-ին: Վիճարկվող 11-րդ հոդվածը, համաձայն նշված օրենքի անցումային դրույթների (հ. 17), ուժի մեջ է մտել 2004թ. հուլիսի 1-ից:

Օրենքի 11 հոդվածը սահմանում է.

«1. Սոցիալական քարտի համարը կիրառվում է քաղաքացիների անհատական փյալները մշակելիս՝

1) քաղաքացուն աշխատավարձ եւ դրան հավասարեցված եկամուտ վճարելու, սոցիալական ապահովության եւ ապահովագրության պետական ու ոչ պետական ծրագրերով նախատեսված կենսաթոշակ, նպաստ, հատուցում նշանակելու եւ վճարելու ժամանակ.

2) հարկեր, փուրքեր, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ, ինչպես նաեւ պարտադիր այլ վճարներ վճարելու ժամանակ.

3) կազմակերպությունների կողմից այն տեղեկատվական բազաները վարելու ժամանակ, որտեղից սույն հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված գործառնություններն իրականացնելու համար օրենքով սահմանված դեպքերում տեղեկատվություն է տրամադրվում պետական կառավարման մարմիններին.

4) քաղաքացու կողմից բանկային հաշիվ բացելու ժամանակ.

5) պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական եւ համայնքային ենթակայության կազմակերպությունների թղթային ու ինքնաշխատ տեղեկատվական բազաները վարելու ժամանակ:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործառնությունների հաշվառման ու հաշվեփոխական փաստաթղթերը՝ սոցիալական քարտ չունեցող անձանց մասով, համարվում են անվավեր, եթե դրանցում նշված չեն սոցիալական քարտերի համարները:

3. Սոցիալական քարտի եւ սոցիալական քարտի համարի կիրառման կանոնները սահմանում է Նայասպանի Նանրապետության կառավարությունը»:

2006թ. մայիսի 23-ին ՏՏ Ազգային ժողովն օրենք է ընդունել ««Սոցիալական ապահովության քարտերի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին», որի հոդված 2-ով «Սոցիալական քարտերի մասին» ՏՏ օրենքի 11 հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով. «4.

Սոցիալական քարտը հոգեւոր խնդիրներին չի առնչվում եւ մարդու խղճի ու կրոնական համոզմունքների դեմ չի կարող օգտագործվել»:

II. Սահմանադրական դատարան դիմող քաղաքացիները կենսաթոշակառու են, չեն սրացել սոցիալական քարտ, քանի որ գտնուում են, որ սոցիալական քարտ ստանալը հակասում է իրենց կրոնական համոզմունքներին: Սոցիալական քարտ չունենալու պատճառով ՆՏ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի Շենգավիթի փարածքային կենտրոնի կողմից կասեցվել է նրանց կենսաթոշակի վճարումը: Դիմողները քաղաքացիական հայց են ներկայացրել դատարան՝ իրենց կենսաթոշակի վճարումն ապահովելու համար: Նրանց հայցը 12.01.2006թ. Երեւան քաղաքի Շենգավիթի առաջին աստիճանի դատարանը բավարարել է: 2006թ. մարտի 22-ին ՆՏ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը վճռել է «Մ. Քոչարյանի եւ Ն. Դավթյանի հայցն ընդդեմ ՆՏ - սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի Շենգավիթի փարածքային կենտրոնի՝ կենսաթոշակի վճարման պահանջի մասին, մերժել»: ՆՏ վճռաբեկ դատարանը 2006թ. մայիսի 19-ին որոշել է ՆՏ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 22.03.2006թ. վճիռը թողնել անփոփոխ: Վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանները, մասնավորապես, իրենց մտպեցումները հիմնավորելիս հիմք են ընդունել «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՆՏ օրենքի 11 հոդվածի պահանջները:

Ըստ դիմողների՝ օրենքի 11 հոդվածը հակասում է ՆՏ Սահմանադրության 3 հոդվածին, 5 հոդվածի 2-րդ մասին, 6 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերին, քանի որ խախտում է դրանցում ամրագրված սահմանադրական կարգի հիմունքները, ինչպես նաեւ Սահմանադրության 26 հոդվածի 1-ին մասին, 27 հոդվածի 1-ին մասին, 37 եւ 42 հոդվածներին, քանի որ խախտում է դրանցում ամրագրված իրավունքները:

Վիճարկելով օրենքի 11 հոդվածի սահմանադրականության հարցը, իրականում դիմող կողմն իր եզրափակիչ խոսքում առաջ քաշեց օրենքի 11 հոդվածի 2-րդ եւ 4-րդ մասերի սահմանադրականության խնդիրը: Ընդ որում, օրենքի 11 հոդվածի 4-րդ մասի դրույթները դիմողների նկատմամբ չեն կիրառվել ընդհանուր իրավասության դատարանների վերջնական դատական ակտով, քանի որ այդ նորմը լրացվել է վերջնական դատական ակտն ընդունելուց հետո:

III. Պատասխանող կողմը գտնում է, որ սոցիալական ապահովության քարտերի համակարգի նպատակը ոչ թե մարդու խղճին եւ կրոնական համոզմունքներին «դեմ գնալն է», այլ մարդու նույնականացումը, նրան վերաբերող փվյալները մեկ փեղում կենտրոնացնելը՝ նպատակ, որը, իր կարծիքով, չի կարող դիմել հակասահմանադրական: Ներքելով օրենքի 11 հոդվածի առնչությունը Սահմանադրության 3, 5, 6, 27 եւ 42 հոդվածների հետ, պատասխանող կողմը գտնում է, որ այն առնչվում է Սահմանադրության 26 հոդվածին, որով ամրագրվում է մտքի, խղճի եւ կրոնի ազատությունը, 31 հոդվածին, որով պաշտպանվում է սեփականության իրավունքը եւ 37 հոդվածին, որն ամրագրում է սոցիալական ապահովության իրավունքը՝ այն կախման մեջ չդնելով սոցիալական քարտից կամ որեւէ այլ փաստաթղթից: Ըստ պատասխանողի՝ այն հանգամանքը, որ կրոնական

համոզմունքների պարճառով սոցիալական քարտեզագրության շարքում քաղաքացիները չեն ստանում աշխատավարձ, կենսաթոշակ եւ նպաստ, հուշում է, որ օրենքում առկա է սահմանադրականության խնդիր: Ավելին, ըստ պարասխառնող կողմի ներկայացուցչի՝ իրենք նույնպես հանգել են այն եզրակացությանը, որ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասը եւ 4-րդ մասը հակասում են Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 26, 31 եւ 37 հոդվածներին, քանի որ ուրնահարվել են մարդկանց սահմանադրական իրավունքները, սոցիալական քարտեզի համակարգի արմատավորման խնդիրը չի կարող լուծվել հարկադրանքի միջոցով: Պարասխառնող կողմը փաստեց նաեւ, որ օրենքում կան որոշ ներքին հակասություններ:

IV. Գործում առկա նյութերի վերլուծությունը վկայում է, որ սոցիալական ապահովության քարտեզագրության համար տարբեր քաղաքացիներ ազատվել են աշխատանքից, նրանց չեն վճարվել նպաստ, աշխատավարձ, միանվագ դրամական օգնություն, գրկվել են ԽՍՀՄ խնայբանկի ՆԽՍ հանրապետական բանկում իրենց ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքից, արգելափակվել է նրանց կողմից բանկային գործարքների կատարումը: Իսկ 2006թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ, համաձայն ՆՍ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի վրլայների, միայն հիմնադրամի համակարգում հաշվառված 530246 կենսաթոշակառուներից կասեցվել է 1317-ին կենսաթոշակի վճարումը՝ սոցիալական քարտեզի չունենալու պարճառով:

V. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՍ օրենքի 69 հոդվածի 11-րդ մասի եւ 68 հոդվածի 7-րդ մասի պահանջներից ելնելով՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ համարեց քննության առնել «Սոցիալական ապահովության քարտեզի մասին» ՆՍ օրենքի 11 հոդվածի սահմանադրականությունը՝ Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքները» գլխում ամրագրված հիմնարար սկզբունքների, ինչպես նաեւ այնպիսի սահմանադրական իրավունքների երաշխավորման համարեքստում, որպիսիք են սեփականության (հ. 8, 31), աշխատանքի եւ վարձատրման (հ. 32, մասեր 1-ին եւ 2-րդ), սոցիալական ապահովության (հ. 37), օրենքով չսահմանված պարտականությունից ազատ լինելու (հ. 42) իրավունքները: Դրանք այն իրավունքներն են, որոնց առնչվում է քննության առարկա խնդիրը, եւ որոնք չեն կարող սահմանափակվել ոչ վրլյալ հոդվածով եւ ոչ էլ Սահմանադրության 43 հոդվածով նախատեսված հիմքերով: Սահմանադրության 44 հոդվածը թույլ է տալիս թվարկված իրավունքների (բացի Սահմանադրության 42 հոդվածում ամրագրվածից) սահմանափակումը միայն ժամանակավորապես՝ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ «արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում»:

Միաժամանակ, այն հանգամանքը, որ օրենքի կիրառման ընթացքում դիմող քաղաքացիների խնդիրն առաջացել է իրենց կրոնական համոզմունքների հետեւանքով, անհրաժեշտ է դարձնում դիտարկել օրենքի վիճարկվող նորմերի առնչությունները

Սահմանադրության 14.1. հոդվածի (խորականության արգելք՝ նաև հայացքների ու կրոնի հիմքով), 26 հոդվածի (մարքի, խղճի եւ կրոնի ազատություն), 27 հոդվածի (համոզմունքը փոխելու հարկադրանքի արգելք) նորմերի հետ:

VI. Պարզելու համար, թե որքանո՞վ է օրենքի վիճարկվող հոդվածն ապահովում մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված հիշյալ իրավունքները, անհրաժեշտ է դիտարկել օրենքի իրավակարգավորման առարկան՝ իր ամբողջության մեջ: Տվյալ օրենքով Նայասպանի Նանրապետությունում ստեղծվում է տեղեկատվական համակարգերում անհատական տվյալների մշակման ընթացքում քաղաքացու նույնականացման նոր համակարգ: Նպատակ է դրվում օրենսդրությամբ սահմանված կարգով կանոնակարգել ու բարելավել տեղեկատվության փոխանակման գործընթացները, ապահովել քաղաքացու անհատական տվյալների գաղտնիությունը: Գլխավոր խնդիրը տվյալ պարագայում այն է, թե որքանո՞վ է օրենքում հաշվի առնված, մի կողմից՝ պետության ու հանրային շահերի, մյուս կողմից՝ մարդու եւ քաղաքացու իրավունքների եւ օրինական շահերի հավասարակշռությունը՝ չստեղծելով իրավական անհատակություն կամ օրենսդրական ներքին հակասություններ:

Գործի քննությունը նախ վկայեց, որ օրենքը գերծ չէ որոշ ներքին հակասություններից, որոնց առկայությունը հավաստեց նաև պարասխանող կողմը: Վեճի առարկայի տեսանկյունից էական է «իրավունք» եւ «պարտականություն» հասկացությունների ներքին շփոթի բացառումը, որն առկա է օրենքի 11 հոդվածի հետ համակարգային առումով փոխկապակցված 13 հոդվածում: Վերջինիս 1-ին մասում նշված է, որ «քաղաքացին **իրավունք ունի**

1) ստանալ սոցիալական քարտ», իսկ 2-րդ մասի 2-րդ կետում՝ որ «քաղաքացին **պարտավոր է** [...] իր սոցիալական քարտը ներկայացնել այն մարմիններին, որոնց դա անհրաժեշտ է սույն օրենքի 11-րդ հոդվածի պահանջները կատարելու համար»: Օրենքի 11 հոդվածի 1-ին մասում թվարկվում են ոլորտները, որոնցում օգտագործվելու են քարտերը: 13 հոդվածի 1-ին մասի համապետքստում դա նշանակում է, որ նշված ոլորտներում քարտն օգտագործվելու է միայն այն քաղաքացիների մասով, որոնք օգտվել են սույն օրենքով իրենց ընձեռված իրավունքից եւ ստացել են սոցիալական քարտ: Մինչդեռ նույն 11 հոդվածի 2-րդ մասի ուժով քարտի կիրառումը 1-ին մասով թվարկված ոլորտներում դառնում է համընդհանուր պարտադրանք, անկախ նրանից՝ օգտվել է քաղաքացին 1-ին մասով սահմանված իր իրավունքից, թե՛ ոչ:

Երկրորդ՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից օրենքի 11 հոդվածի դրույթներին փրված մեկնաբանություններով հանդերձ, հակասություն է առաջացել «Սոցիալական քարտերի մասին» ՏՏ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի եւ «Պետական կենսաթոշակների մասին» ՏՏ օրենքի 60 հոդվածի միջեւ, քանի որ վերջինս սպառիչ սահմանել է կենսաթոշակի վճարումը կատեգորիա միայն երկու հիմք՝ «կենսաթոշակառուի կողմից վեց ամիս անընդմեջ անձամբ կենսաթոշակ չստանալու դեպքում» եւ «հաշմանդամության ժամկետը լրանալու դեպքում»: Ընդ որում, «Պետական կենսաթոշակների մասին» ՏՏ օրենքն ավելի վաղ է ուժի մեջ մտել (10.04.2003թ.): «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի (ուժի մեջ է մտել 31.05.2002թ.) 24 հոդվածի 3-րդ մասի պահանջն է, որ «Միեւնույն մարմնի

ընդունած հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտի նորմերը»: Միաժամանակ, նույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված է, որ «Նավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կամ նույն իրավական ակտի տարբեր մասերի միջև հակասության դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ հարաբերություններում պետք է կիրառեն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը»: Մինչդեռ իրավակիրառական, այդ թվում՝ դատական, պրակտիկան անտեսել է այս նորմերի պահանջները:

VII. 1. Սոցիալական քարտի առկայությունը դարձնելով պարտադիր պայման օրենքի 11 հոդվածում թվարկված բոլոր գործառույթներում, ներառյալ կենսապահովման այնպիսի միջոցներ, որպիսիք են աշխատավարձը, կենսաթոշակը, նպաստը, հատուցումը, դրամական փոխանցման սպացումը, օրենքը մի շարք քաղաքացիների դրել է երկրնարանքի առջև. կամ գրկվել իրենց սոցիալական իրավունքների իրականացումից, կամ համոզմունք ունենալու և դրան հավատարիմ մնալու իրավունքից: Երկու դեպքում էլ դա առնչվում է մարդու արժանապատվությանը:

Վավերացնելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը՝ Նայասրանի Նանրապետությունը ճանաչել է դրա Նախաբանի այն հիմնարար դրույթը, ըստ որի՝ «մարդու իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից»: Սահմանադրության 3 հոդվածի 1-ին մասում նշված է. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են»: «Բարձրագույն արժեք» հասկացությունն այսպեղ վերացական չէ և ունի որոշակի իրավական բովանդակություն: «Բարձրագույն արժեք» նշանակում է, որ որեւէ այլ արժեք, այդ թվում է՝ պետական, ե՛ր հանրային խնդիրների լուծմանը կոչված որեւէ համակարգ, չի կարող ավելի բարձր դասվել: Սրանից էլ բխում է Սահմանադրության նույն հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմը. «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Ներուաբար, քննության առարկա օրենքի 11-րդ հոդվածից բխող իրավիճակը, որով քաղաքացիների որոշ կապեգորիաներ գրկվում են Սահմանադրությամբ չսահմանափակվող ճանաչված իրենց առանձին հիմնարար իրավունքների իրականացման հնարավորությունից, չի սպահովում արդարացի հավասարակշռություն հանրության ընդհանուր շահի և անձի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև և չի բխում Սահմանադրության 3 հոդվածի պահանջներից:

2. Օրենքի 11 հոդվածի 2-րդ մասով սոցիալական քարտի բացակայությունը հիմք է դառնում, մասնավորապես, սահմանափակելու Սահմանադրության 37 հոդվածով ամրագրված սոցիալական ապահովության իրավունքի, ինչպես նաև Սահմանադրության 32 հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ աշխատանքի վարձատրության իրավունքի իրականացումը: Կենսաթոշակը, ինչպես նաև աշխատավարձը՝ քաղաքացու վաստակած մի-

ջոցներ են եւ նրա սեփականությունը: Մասնավորապէս, դիմողները կենսաթոշակի են անցել 1991 եւ 1994 թվականներին եւ մինչեւ 2005թ. հունվար սրացել են իրենց կենսաթոշակը, որից հետո դրանց վճարումը կասեցվել է:

Կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականաւորողը փոխանցելու միջոց է: Կենսաթոշակը սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության ձեւ է՝ նաեւ ըստ Եվրոպական դափարանի նախադեպային իրավունքի (տես՝ Բուրդովն ընդդէմ Ռուսաստանի գործը): Ներելաբար, անհրաժեշտություն է ծագում դիտարկել օրենքի վիճարկվող դրույթները նաեւ Սահմանադրության 8 եւ 31 հոդվածների պահանջներից ելնելով, որոնցից առաջինը հռչակում է սեփականության իրավունքի ճանաչումն ու պաշտպանությունը, իսկ երկրորդն ամրագրում է. «Ոչ ոքի չի կարելի գրկել սեփականությունից, բացառությամբ դափարական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի»։ ՆՕ օրենքներում չկա որեւէ նորմ, որով նախատեսված լինի սոցիալական քարտերի բացակայությունը, որպէս սեփականությունից գրկելու հիմք: Մասնավորապէս, այն բացակայում է «Պետական կենսաթոշակների մասին» ՆՕ օրենքի 60 հոդվածի 1-ին մասում, որտեղ, ինչպէս նշվեց, սահմանվում են կենսաթոշակ վճարելը կասեցնելու հիմքերը, ինչպէս նաեւ 2-րդ մասում, որը վերաբերում է կենսաթոշակի վճարումը դադարեցնելու հիմքերին:

Բացի դրանից, «Սոցիալական ապահովության քարտերի մասին» օրենքով սահմանելով սոցիալական քարտի պարտադիր լինելը՝ հատուցում նշանակելու եւ վճարելու ժամանակ, օրենքը հնարավորություն է ստեղծում, օրինակ, հասարակության եւ պետության կարիքների համար սեփականությունն օտարելիս խուսափել քաղաքացուն փոխհատուցման վճարումից, որը, ըստ Սահմանադրության 31 հոդվածի՝ պարտադիր է եւ պէտք է լինի «նախնական եւ համարժեք»։ Ներելաբար, «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՆՕ օրենքի 11 հոդվածի դրույթները վեճի առարկայի շրջանակներում չեն ապահովում Սահմանադրության 8 եւ 31 հոդվածների պահանջների իրագործումը:

3. Ըստ դիմողների՝ օրենքի 11 հոդվածը հակասում է նաեւ Սահմանադրության 42 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի պահանջներին: Սահմանադրության այս հոդվածի 1-ին մասը շեշտում է Սահմանադրությամբ չարձանագրված այլ իրավունքների առկայությունը: Սահմանադրական դափարանն արձանագրում է, որ օրենքի վիճարկվող հոդվածը որեւէ առնչություն չունի Սահմանադրության 42 հոդվածի 1-ին մասի հետ, բայց անմիջականորեն առնչվում է 2-րդ մասին, որն արգելում է քաղաքացուն վերագրել օրենքով չնախատեսված որեւէ պարտականություն:

Սահմանադրության 42 հոդվածի հետ օրենքը համադրելիս՝ կարելու է նաեւ այդ հոդվածի 3-րդ մասը, ըստ որի՝ «Անձի իրավական վիճակը վարթարացնող օրենքները եւ այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն»։ Կարարված աշխարանքի վարձարությունից գրկելը, նախկինում սոցիալական ապահովության պարտադիր վճարների կատարմամբ վաստակած կենսաթոշակի վճարման կասեցումը, ինչպէս նաեւ մինչ օրենքի ընդունումը կայացած աշխարանքային պայմանագրերով չնախատեսված նոր պայման ավելացնելու պարտադրանքը նշանակում է՝ հակառակ սահմանադրական այս պահանջին, հետադարձ ուժ փակ օրենքին: Օրենքի հետադարձ գործողությունն առավել

ցայտուն է այն բազմաթիվ դեպքերում, երբ աշխատավարձի կամ թոշակի վճարումների ուշացման հետևանքով քաղաքացին գրկվել է օրենքի ուժի մեջ մտնելուն նախորդող տարվա կենսաթոշակից կամ աշխատավարձից:

4. Նկատի ունենալով, որ օրենքի 11 հոդվածի հասկալի 2-րդ մասի գործողության հետևանքով նյութական դժվարին վիճակում հայտնվածների զգալի մասը թոշակառուներ են, այդ նորմերը խոչընդոտում են Սահմանադրության 48 հոդվածի 12-րդ կետի պահանջի կատարումը, որով սոցիալական պետության հիմնական խնդիրներից է հռչակվել փարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակի ապահովումը:

VIII. Քանի որ օրենքի 11 հոդվածն անդրադառնում է նաև նպաստի ինստիտուտին, որի ձեռքից մեկն է երեխայի համար նախատեսված նպաստը, իսկ օրենքի 7 հոդվածը նախատեսում է սոցիալական քարտի անհրաժեշտությունը նաև այս դեպքում, 11 հոդվածի հետ համակարգային կապի մեջ պետք է դիտել նաև օրենքի 7 հոդվածը: Այսպես թվարկվում են փվյալներն ու փաստաթղթերը, որոնք ներկայացվելու են քարտ ստանալու համար: Ի թիվս դրանց, 7 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը նախատեսում է ծննդյան վկայականներ՝ 16 տարին չբացած քաղաքացիների համար: Երեխան ո՛չ աշխատանքային հարաբերությունների սուբյեկտ է (համենայնդեպս, մինչև որոշակի տարիքը), ո՛չ թոշակառու, ո՛չ հարկատու: Օրենքի այս դրույթի եւ 11 հոդվածի 2-րդ մասի ուժով, ծնողի համոզմունքի հետևանքով իրեն հասանելիք նպաստից գրկվում է երեխան:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, որին մասնակից է նաև Նայաստանի Նանրապետությունը, 3 հոդվածում նշում է. «1. Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր իմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի շահերի լավագույն ապահովմանը: 2. Մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ եւ հոգատարությամբ՝ նկատի ունենալով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, եւ այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները»:

Երեխաների նպաստին անմիջապես վերաբերող դրույթ ՆՏ Սահմանադրությունը չի պարունակում, եւ այդ իրավունքը պետք է դիտարկել Սահմանադրության 37 հոդվածի համարեքսպում, որում նշված է ընդհանրապես սոցիալական ապահովության իրավունքը՝ բացի հոդվածում թվարկվածից, նաև «օրենքով նախատեսված այլ դեպքերում», որոնց շրջանակում էլ գրնվում է երեխայի նպաստի իրավունքը: Այն պետք է դիտարկել նաև Սահմանադրության 34 հոդվածի համարեքսպում, որում նշված է, որ «Յուրաքանչյուր ոք ունի իր եւ իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի [...] իրավունք», ինչպես նաև Սահմանադրության 48 հոդվածի 1-ին կետի առնչությամբ, որով պետության հիմնական խնդիր են հռչակվում ընտանիքի, մայրության եւ մանկության պաշտպանությունն ու հովանավորումը:

Երեխայի նպաստը դնելով սոցիալական քարտի հետ կախման մեջ, օրենքի 11 հոդվածի վիճարկվող դրույթները՝ երեխաների նպաստի մասով, խոչընդոտում են Սահմանադրության նշյալ հոդվածներով ամրագրված իրավունքների իրականացումը, իսկ չհամապատասխանելով միջազգային իրավունքի նշված նորմերին եւ Նայաստանի Նանրապետության սրանձնած պարտավորություններին՝ անպետում են նաեւ Սահմանադրության 3 հոդվածի պահանջը:

IX. Բոլոր նշված սահմանադրական խնդիրներն իրավակիրառական պրակտիկայում հիմնականում ծագել են քաղաքացիների կրոնական համոզմունքների հետեւանքով: Սահմանադրական դատարանի խնդիրը չէ պարզել այդ համոզմունքների դավանաբանական էությունը, սակայն օրենքի կիրառման առաջին իսկ պահից ծագած այս խնդիրները մղել են եւ օրենսդրին, եւ գործադիր իշխանությանը փոխադրելով անձանց համար գրանցելու այլընտրանքային լուծումներ: Մասնավորապես, օրենսդիրը 2006թ. ընդունել է «Սոցիալական ապահովության քարտերի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» ՆՆ օրենքը, որում օրենքի 11-րդ հոդվածը լրացվել է 4-րդ մասով. «Սոցիալական քարտը հոգեւոր խնդիրներին չի առնչվում եւ մարդու խղճի ու կրոնական համոզմունքների դեմ չի կարող օգտագործվել»: Այն փաստորեն պարունակում է երկու դրույթ: Առաջինը՝ որ օրենքը հոգեւոր խնդիրներին չի առնչվում: Նման նորմը գործնականում զուրկ է իրավական բովանդակությունից: Երկրորդ դրույթը՝ «կրոնական համոզմունքների դեմ» քարտի օգտագործման արգելքը, վերացական բնույթ է կրում եւ չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՆՆ օրենքի 45 հոդվածի 3-րդ մասի այն պահանջին, որ «Նորմատիվ իրավական ակտերում չպետք է կիրառվեն նորմեր, որոնց կատարումն անհնար է կամ անընդունելի, կամ որոնց չկատարման համար իրավական հետեւանքներ նախատեսված չեն»: Օրենքի 11 հոդվածի նման լրացումը գործնականում փոխադրված գոյություն ունեցող նորմերի իրավական բնույթի ու բովանդակության վրա որեւէ ազդեցություն չի ունեցել:

Կառավարությունն իր հերթին 2005թ. հուլիսի 14-ի N 990-Ն որոշմամբ սահմանել է. «Կրոնական խնդիրներ ունեցող քաղաքացիներին իրենց դիմումների հիման վրա հարկացվում են առանց գծիկավոր պայմանանշանի ու առանց Նայաստանի Նանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության խորհրդանիշի սոցիալական քարտեր»: Այս որոշումը նույնպես չի նպաստել հիմնախնդրի վերջնական կարգավորմանը:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել նաեւ, որ օրենքի 11 հոդվածի վիճարկվող դրույթները, մասնավորապես՝ 2-րդ մասը, վերաբերում են ոչ միայն սոցիալական քարտից կրոնական դրոշմապարճառներով հրաժարվածներին, այլ իրավունքների իրականացման սահմանափակումներ են նախատեսում բոլոր անձանց համար, ովքեր, անկախ դրոշմապարճառից, սոցիալական քարտ չունեն: Այս առումով խնդիրը չպետք է դիտարկվի զուրկ կրոնական եւ այլ համոզմունքների փաստակցությունից, այլ՝ անխաբիր բոլոր մարդկանց իրավունքների սահմանափակման սահմանադրորեն թույլատրելի սահմանների փաստակցությունից:

X. Քննության առարկայի առնչությամբ իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը, դափաքնության ընթացքում բերված առանձին փաստարկներն ու պարզաբանումները վկայեցին, որ անհրաժեշտ ըմբռնում գոյություն չունի սահմանադրական այնպիսի առանցքային նորմ-սկզբունքների առնչությամբ, ինչպիսիք են «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք» (հ. 3, մաս 3-րդ) կամ «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն» (հ. 6, մաս 1-ին): Բացի դրանից, ցանկացած նորմափիվ իրավական ակտ պետք է ապահովի և երաշխավորի Սահմանադրության 3 հոդվածի պահանջն առ այն, որ «Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան», ինչպես նաև 43 հոդվածի երկրորդ մասի պահանջը, համաձայն որի՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Նայաստանի Նանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

Քննության առարկայի շրջանակներում սահմանադրական դափաքանն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ հիշյալ նորմերի պահանջները երաշխավորելու համար անհրաժեշտ է նկատվում ունենալ սահմանադրորեն փարբեր իրավունքների սահմանափակման առանձնահատկություններն ու բնույթը: Որքան էլ որ այլոց իրավունքների երաշխավորումն է դառնում անհատի հասարակական վարքագծի կանոնակարգման սահմանը, միեւնույն է, Սահմանադրությունը, ինչպես նշվեց, չի նախատեսում որոշակի իրավունքների սահմանափակում: Իսկ այդ իրավունքների ապահովման կարգը չի կարող դրանց իրականացման արգելանք դառնալ, այլ պետք է երաշխավորի այն: Սահմանադրորեն նախատեսված սահմանափակման ենթակա իրավունքների առնչությամբ, համաձայն մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մարդու իրավունքի սահմանափակումը կարող է իրականացվել միայն օրենքով՝ երաշխավորելով համաչափությունը, չաղավաղելով իրավունքի էությունը (սահմանափակման հետեւանքով իրավունքը չգրկվի իր բովանդակությունից, չվտանգվի դրա գոյությունը):

«Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՏՏ օրենքի 11 հոդվածի 2-րդ - մասի դրույթների՝ այս փեսանկյունից վերլուծությունը վկայում է, որ իրավակիրառական պրակտիկայում իրականում առկա է ոչ թե իրավունքների համաչափ սահմանափակման, այլ սահմանադրորեն սահմանափակման ոչ ենթակա (խոսքը չի վերաբերում ռազմական կամ արտակարգ իրավիճակներին) առանձին իրավունքների արգելափակման իրողությունը: Նման վիճակն առաջացել է, թերեւս, նաև օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի անստիճանական ձեւակերպումից: Այն սահմանում է, որ «Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործառնությունների հաշվառման ու հաշվեքվական փաստաթղթերը՝ սոցիալական քարտ չունեցող անձանց մասով, համարվում են անվավեր, եթե դրանցում նշված չեն սոցիալական քարտերի համարները»: Խնդիրը լուծված չէ այն դեպքում, երբ անձն ունի սոցիալական քարտ, սակայն համարը նշված չէ: Օրենքի 11 հոդվածի 2-րդ մասում «սոցիալական

քարտ չունեցող անձանց մասով» դրույթի առկայությունը վկայում է, որ ի սկզբանե այս նորմը ոչ թե համապարտադիր իրավակարգավորիչ բնույթ ունի, այլ վերաբերել է անձանց որոշակի խմբի՝ նախապես ելով նրանց առանձին իրավունքների իրականացման արգելափակում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՇ օրենքի 61 հոդվածի 1-ին մասով, 63 եւ 69 հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՆՇ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի դրույթները՝ ՆՇ Սահմանադրության 31, 32 (2-րդ մաս) եւ 37 հոդվածներով ամրագրված իրավունքների իրականացման արգելափակման առումով ճանաչել Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին, 2-րդ մասեր), 42, 43 եւ 48 (կետ 12) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՇ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասի պահանջներին համապատասխան՝ անվավեր ճանաչված դրույթների կատարումն ապահոված այլ նորմափիվ ակտերը կամ դրանց համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՇ օրենքի 69 հոդվածի 11-րդ մասի եւ 68 հոդվածի 12-րդ մասի համաձայն սույն որոշումը փարածել դրա ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա:

4. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ**

*4 հոկտեմբերի 2006 թվականի
ՄԴՈ-649*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻ ՍԱՐԳՅՈՒԼ ՆԱԿՈՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱՎ ՆՏ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 280 ՆՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ ՆՏ ՆՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 100 ՆՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅՆ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

10 հոկտեմբերի 2006թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Նովհաննիսյանի, Զ. Դուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող՝ քաղ. Ս. Նակոբյանի եւ պատասխանող կողմի ներկայացուցիչ՝ ՆՏ Ազգային ժողովի օրենսդրության վերլուծության եւ զարգացման վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետի, 101 հոդվածի 6 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 25 եւ 69 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Սարգյուլ Նակոբյանի դիմումի հիման վրա՝ ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի 1-ին մասի եւ ՆՏ հողային օրենսգրքի 100 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ս. Նակոբյանի դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործի նյութերը, սույն գործով զեկուցողի հաղորդումը եւ կողմերի բացատրությունները, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. ՆՏ քաղաքացիական օրենսգիրքն (ՔՕ) ընդունվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի մայիսի 5-ին: Նայաստանի Նանրապետության Նախագահի կողմից այն ստորագրվել է 1998թ. հուլիսի 28-ին եւ «ՆՏ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՆՏ օրենքի համաձայն ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

ՆՏ հողային օրենսգիրքն (ՆՕ) ընդունվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից՝ 2001 թվականի մայիսի 5-ին: Նայաստանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել է 2001 թվականի հունիսի 4-ին եւ ուժի մեջ է մտել 2001 թվականի հունիսի 15-ից:

ՔՕ 280 հոդվածը վերնագրված է՝ «Սեփականության իրավունքից հրաժարվելը»: ՔՕ 280 հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի փոխապետումից, օգտագործումից եւ փոփոխումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որեւէ իրավունք պահպանելու մտադրության»:

ՆՕ 100 հոդվածը վերնագրված է՝ «Նողամասերի նկատմամբ քաղաքացիների եւ իրավաբանական անձանց իրավունքների դադարման հիմքերը»: ՆՕ 100 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է. «Նողամասերի նկատմամբ քաղաքացիների եւ իրավաբանական անձանց սեփականության իրավունքները դադարում են.

ա) հողամասից կամովին հրաժարվելու դեպքում [...]»:

2. Վիճարկելով ՔՕ 280 հոդվածի 1-ին մասի եւ ՆՕ 100 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սահմանադրականությունը, դիմողը գտնում է, որ «...դրանք հակասում են ՆՏ Սահմանադրության 3 հոդվածին, 8 հոդվածի 1-ին պարբերությանը, 31 հոդվածի 2-րդ պարբերությանը» եւ իր դիրքորոշումները հիմնավորում է հետեւյալով.

ա/ ՔՕ եւ ՆՕ վիճարկվող դրույթները չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին, քանի որ չեն սահմանում գույքի նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու եւ այդ հիմքով գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման բավարար հստակ ձեւակերպված ընթացակարգ,

բ/ ՔՕ եւ ՆՕ վիճարկվող դրույթները չեն հստակեցնում գույքի նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու մասին գրավոր հայտարարության, գույքի նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու մասին ակնհայտորեն վկայող գործողությունների, գույքից կամովին հրաժարվելու բովանդակությունը, չեն սահմանում գույքի նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու դեպքերում սեփականության իրավունքի դադարման հստակ ձեւակերպված ընթացակարգ, ինչպիսի պարագայում դատական մարմինները վիճարկվող դրույթներին փոխել են կամայական մեկնաբանություն՝ գույքից հրաժարվելու մասին գրավոր հայտարարություն կամ գույքից հրաժարվելու մասին ակնհայտորեն վկայող գործողություններ, կամ գույքից կամովին հրաժարում դիտարկելով չիազդրված անձի կողմից սեփականափոխ ձեռնարկ, նրա անփոփոխության պայմաններում օրենքի խախտմամբ գրված, անստորագիր հայտարարությունը,

զ/ ՔՕ եւ ՆՕ վիճարկվող դրույթները չեն ապահովում սեփականության իրավունքի ճանաչման եւ պաշտպանության արդյունավետ երաշխիքներ:

Դիմողն իր դիրքորոշումների հիմնավորման համար վկայակոչում է նաեւ ՆՆ - սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի թիվ 630 որոշման 11-րդ կետի 6-րդ - պարբերության դրույթները, որոնց համաձայն՝ «...օրենքը պետք է համապատասխանի ... Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որեւէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձեւակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համարելու իր վարքագիծը»:

Սահմանադրական դատարանի նշված դիրքորոշման հիման վրա դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթները, «...որոնք նախատեսել են սեփականությունից զրկելու դեպքեր...», չեն կարող ՆՆ Սահմանադրության 31 հոդվածի 2-րդ պարբերության իմաստով դիտարկվել որպես օրենք:

3. Պատասխանող կողմը, առարկելով դիմող կողմի փաստարկների դեմ, նշում է, որ գույքից հրաժարվելու մասին գրավոր հայտարարությանը վերաբերող հստակ ընթացակարգ գոյություն է ունեցել ինչպես 1997թ. գործող, այնպես էլ ներկայումս գործող օրենսդրությամբ: Այսպես, «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ գանգապները քննարկելու կարգի մասին» 1990թ. դեկտեմբերի 4-ի ՆՆ օրենքի 2-րդ կետը սահմանում է. «Քաղաքացու գրավոր դիմումը պետք է ստորագրված լինի, նշելով ազգանունը, անունը, հայրանունը եւ առաջարկության, դիմումի կամ գանգապի էության շարադրանքից բացի, նաեւ փվյալներ բովանդակի նրա բնակության կամ աշխատանքի կամ ուսման վայրի մասին»: Նայարարությունը նույնպես դիմում է, հետեւաբար, դրա վրա նույնպես փարածվում են վերոհիշյալ օրենքով սահմանված պահանջները, եւ այդ պահանջների՝ ՆՆ քաղաքացիական եւ հողային օրենսգրքերում առանձին ամրագրումն ավելորդություն է:

Ըստ պատասխանող կողմի՝ ներկայումս գործող «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՆ օրենքի 31 հոդվածը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները, իսկ բուն օրենքը, մասնավորապես՝ դրա 28 եւ 29 հոդվածները հանգամանորեն կարգավորում են վարչական վարույթի իրականացման մեխանիզմը: Նույնից հրաժարվելու դիմումի առթիվ նույնպես հարուցվում է վարչական վարույթ, հետեւաբար՝ օրենքով այդ հարաբերությունները հստակ կարգավորված են եւ իրավական որոշակիության առումով որեւէ հակասություն գոյություն չունի:

Պատասխանող կողմն անընդունելի է համարում դիմողի այն պնդումը, որ օրենքը «պետք է կոնկրետ թվարկեր գույքից հրաժարվելն ակնհայտորեն վկայող գործողությունները, որպեսզի դատարաններն այդ գործողությունների առկայությունը հաստատելով՝ որոշում կայացնեն»: Ըստ պատասխանողի՝ օրենքով հնարավոր չէ թվարկել բոլոր հնարավոր գործողությունները: Դրանք կարող են հանդես գալ ինչպես գործողության՝ հրաժարվելու մասին հայտարարության, այնպես էլ անգործության՝ հարկերը չմուծելու, հողամասը չմշակելու եւ այլնի ձեւով:

Ըստ պապասխանողի՝ գործի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հենց դիմողի կողմից մի քանի այդպիսի գործողություններ են կատարվել: Բացի դիմումից եւ սրացականից, գործում առկա են եղել նաեւ գյուղապետարանի կողմից փրված փեղեկանքն այն մասին, որ դիմողը հողամաս չունի 2000թ. փետրվարի 1-ի դրությամբ, եւ նա այդ փեղեկանքի շնորհիվ ընդգրկվել է սոցիալական ապահովության «Փարոս» համակարգում, որի մասին փեղեկանքը նույնպես առկա է քաղաքացիական գործում: Թեեւ դիմողն իր բացատրությունում նշում է, որ մինչեւ օրս էլ ինքը հարկային մարմիններից ծանուցումներ է սրանում հողի հարկի վճարումների վերաբերյալ, սակայն գործում առկա է հարկային մարմնի գրությունն այն մասին, որ դիմողը մինչեւ 1999թ. վճարել է հողի հարկը, իսկ 2000-2003թթ. համար չի ներկայացվել որպես հողի սեփականատեր: Պապասխանողի կարծիքով, սա նույնպես կարելի է դիտել որպես սեփականության իրավունքից հրաժարվելու ձև:

Ըստ պապասխանող կողմի՝ դիմողի բերած հիմնավորումներն ու եզրահանգումները բավարար հիմք չեն ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի 1-ին մասում եւ ՆՏ հողային օրենսգրքի 100 հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված դրույթները «ՆՏ Սահմանադրության 3 հոդվածին, 8 հոդվածի 1-ին պարբերությանը, 31 հոդվածի 2-րդ պարբերությանը հակասող ճանաչելու համար»:

4. Դիմումին կից ներկայացված նյութերի եւ դատական ակտերի հիման վրա ուսումնասիրելով գործի հանգամանքները եւ վիճարկվող դրույթների իրացմանն ուղղված՝ փարբեր դատական ապրանքների դիրքորոշումները, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, մի դեպքում, մասնավորապես՝ ՆՏ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի մայիսի 19-ի թիվ 05-490 գործով կայացված վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը մերժվել՝ հիմք ընդունելով, որ.

ա) Սարգյուլ Նակոբյանը հակընդդեմ հայցի մասով ոչ պապշաճ պապասխանող է,

բ) համայնքի ղեկավարի կողմից որոշում չի կայացվել վիճելի հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու վերաբերյալ, եւ այն օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցում չի սրացել,

գ) ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48 հոդվածին համապատասխան արժանահավար ապացույցներ չեն ներկայացվել վիճելի հողամասը 240 ԱՄՆ դոլարով վաճառելու վերաբերյալ,

դ) հողից հրաժարվելու վերաբերյալ դիմումն սպորազրված չէ:

Դիմումին կից ներկայացված մյուս դատական ակտերով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարվել՝ հիմք ընդունելով.

ա) ՆՏ Արագածոտնի մարզի Արագածավանի գյուղապետարանում կազմված՝ «Նողից հրաժարվածների ցուցակը»,

բ) 01.02.2002թ. ՆՏ Արագածոտնի մարզի Արագածավանի գյուղապետարանի կողմից փրված փեղեկանքն այն մասին, որ Սարգյուլ Նակոբյանը հողամաս չունի,

գ) վիճելի հողամասը 240 ԱՄՆ դոլարով վաճառելու վերաբերյալ սրացականը:

Դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների համաձայն.

ա) Արագածավանի հողային բարեփոխումների եւ սեփականաշնորհման հանձնաժողովի 17.04.1991թ. թիվ 5 որոշմամբ դիմողին հատկացվել է 1,65 հեկտար գյուղատնտեսական նշանակության հող՝ գրանցված 207,008 ժամկետային ներքո,

բ) նշված որոշման հիման վրա դիմողը 2003թ. մարտի 12-ին ստացել է սեփականության իրավունքի վկայական,

գ) հողից հրաժարվելու վերաբերյալ դիմումն ստորագրված չէ,

դ) առկա չէ դիմողի սեփականության իրավունքի դադարման մասին համապատասխան որոշումը,

ե) վիճելի հողամասը 240 ԱՄՆ դոլարով վաճառելու վերաբերյալ ստացականը պարունակում է դիմողի անձնագրային փոփոխությունների հետ չհամընկնող անձնագրային փոփոխություն (ստացականի բովանդակությունը մեջբերված է ՆՇ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 30.11.2005թ. վճռում):

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ այս հանգամանքների գնահատումն ընդհանուր իրավասության դատարանների խնդիրն է: Նշված փաստաթղթերի եւ դրանց առնչվող գործողությունների օրինականության հարցը կարող էր նաեւ քննության առարկա դառնալ քրեափրավական հարաբերությունների համապետքստում: Այդ առումով, սահմանադրական դատարանը նպատակահարմար է գտնում գործի նյութերը փրամադրել ՆՇ գլխավոր դատախազությանը:

5. Սահմանադրական դատարանը դիմումի առարկայի շրջանակներում գնահատելով դիմող կողմի փաստարկներն իրավական նորմերի սահմանադրականության առնչությամբ, գտնում է, որ նշված նորմերի սահմանադրականության հարցը քննության առարկա կարող է հանդիսանալ այլ նորմերի հետ համակարգային փոխկապվածության համապետքստում: Այդ փաստակցությունից առանձնահատուկ կարեւորություն ունեն նախ՝ ԲՕ 280 հոդվածի 2-րդ մասի դրույթները, համաձայն որոնց՝ «Սեփականության իրավունքից հրաժարվելը հիմք չէ գույքի նկատմամբ սեփականափոխ իրավունքները եւ պարտականությունները դադարելու համար, մինչեւ այլ անձի կողմից այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելը»: Երկրորդ՝ հողի նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու կարգը սահմանված է ՆՕ 101 հոդվածում:

Միաժամանակ, ճիշտ չէ դիմողի պնդումն առ այն, որ ՆՇ քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի 1-ին մասի եւ ՆՇ հողային օրենսգրքի 100 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթները «...նախատեսել են սեփականությունից զրկելու դեպքեր»: Նշված իրավական նորմերը կարգավորում են սեփականության իրավունքի դադարման իրավահարաբերությունները՝ սեփականափոխ կամովին հրաժարման պայմաններում:

Սեփականության իրավունքի օրենսդրական ապահովման միջազգային փորձի եւ ՆՇ օրենսդրության համեմատական վերլուծությունը վկայում է, որ դատաքննության առարկայի փաստակցությունից հիմնական եւ ընդհանրական մոտեցումն այն է, որ.

1) սեփականության իրավունքից հրաժարվելը մարդու և քաղաքացու իրավունք է, որով անձը հրաժարվում է կոնկրետ գույքի նկատմամբ փիրապետման, փնտրիման և օգտագործման իր իրավունքից,

2) սեփականության իրավունքի պաշտպանվածության երաշխիքների առումով, ինչպես նաև նկատի ունենալով, որ սեփականության իրավունքից հրաժարումը կարող է շոշափել այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, հրաժարումը պետք է օրենսդրորեն հստակ կանոնակարգված լինի,

3) հրաժարումը քաղաքացու կողմից պետք է օրենքով սահմանված կարգով հայտարարվի կամ այնպիսի գործողությունների հետևանք լինի, որոնք ակնհայտորեն վկայում են նման մտադրության մասին,

4) սեփականության իրավունքից հրաժարվելը հիմք չէ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները և պարտականությունները դադարելու համար՝ մինչև այլ անձի կողմից այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելը:

Այս ընդհանուր պայմաններն անհրաժեշտ ու բավարար են սեփականության իրավունքից հրաժարվելու՝ մարդու և քաղաքացու իրավունքը երաշխավորելու համար:

Որքանով են փարբեր երկրների օրենսդրությամբ ամրագրված այս սուբյեկտներն առկա մեր օրենսդրության մեջ: Այդ հարցի սպառիչ պատասխանը, դիմումի առարկայի շրջանակներում, կարող ենք ստանալ ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, ՏՏ հողային օրենսգրքի 100 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 101 հոդվածի, «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և գանգադները քննարկելու կարգի մասին» 04.12.1990թ. օրենքի 2-րդ կետի, «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» 24.11.1999թ. օրենքի հոդված 2-ի, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 31 հոդվածի և 50 հոդվածի 1-ին մասի ա) կետի համեմատական վերլուծության արդյունքում: Նշված իրավական նորմերի համադրումը վկայում է, որ ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածը սահմանել է սեփականության իրավունքից հրաժարվելու ընդհանուր իրավական հիմքը, իսկ ՏՏ հողային օրենսգրքի 100 և 101 հոդվածները՝ հողամասի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների դադարման համարեքստում, հստակ ու որոշակի կանոնակարգել են հողամասից հրաժարվելու հիմքերը, մասնավորապես՝ հաշվի առնելով նաև ՏՏ Սահմանադրության 3, 8 և 31 հոդվածների պահանջները: Մասնավորապես, ՏՏ հողային օրենսգրքի 101 հոդվածով սահմանվում է.

1. Հողամասի նկատմամբ իրավունքները դադարում են նման իրավունքներ ունեցող քաղաքացու կամ իրավաբանական անձի՝ հողամասից կամովին հրաժարվելու մասին դիմումի հիման վրա:

2. Հողամասից կամովին հրաժարվելու դեպքում քաղաքացիները կամ իրավաբանական անձինք այդ մասին դիմում են ներկայացնում համայնքի վարչական սահմաններում համայնքի ղեկավարին (Երեւան քաղաքում՝ Երեւանի քաղաքապետին), համայնքի վարչական սահմաններից դուրս՝ մարզպետին:

3. Դիմումն սրանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, համայնքի ղեկավարը կայացնում է որոշում համապատասխան հողամասը համայնքային սեփականություն, իսկ Երեւանի քաղաքապետը կամ մարզպետը՝ պետական սեփականություն ճանաչելու վերաբերյալ: Ընդ որում, համայնքի ղեկավարի, մարզպետի, Երեւանի քաղաքապետի որոշումը ենթակա է պետական գրանցման՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Խնդիրը փվյալ պարագայում ոչ թե իրավական նորմի անհստակությունն է, այլ այն, թե ինչպես է այն կիրառվել դատական պրակտիկայում:

6. ՏՃ քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի 1-ին մասի այն դրույթի առնչությամբ, համաձայն որի սեփականության իրավունքից հրաժարվելը նախատեսվում է նաև «...այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի փրկապետումից, օգտագործումից եւ փնտրումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որեւէ իրավունք պահպանելու մտադրության», ապա.

1) քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի խնդիրը չէ բոլոր հնարավոր դեպքերի թվարկումը: Այդ հոդվածի առարկան է սեփականության իրավունքից հրաժարվելու երկու փարբեր իրավական հիմքերի ամրագրումը՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ ակնհայտ գործողությամբ,

2) որպես սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիք է հանդես գալիս փվյալ հոդվածի 2-րդ մասը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Նայասրանի Նանրապետության քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի 1-ին մասի եւ Նայասրանի Նանրապետության հողային օրենսգրքի 100 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթները համապատասխանում են Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ**

*10 հոկտեմբերի 2006 թվականի
ՄԴՈ-650*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻ ՆԵՆՐԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱՆ ՆՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 290 ՆՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

18 հոկտեմբերի 2006թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարոթյունյանի /Նախագահող/, Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Նով-
հաննիսյանի, Զ. Ղուկասյանի /գեկուցող/, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի,

մասնակցությամբ՝ դիմող՝ քաղ. Ն. Դանիելյանի և պարասխանող կողմի ներկա-
յացուցիչ՝ ՆՏ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի
1 կետի, 101 հոդվածի 6 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 25 և
69 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Նեն-
րիկ Դանիելյանի դիմումի հիման վրա՝ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 290
հոդվածի 3-րդ մասի՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը համապա-
պասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ն. Դանիելյանի դիմումն է սահմանադրա-
կան դատարան:

Ուսումնասիրելով գործի նյութերը, սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը
և կողմերի գրավոր բացատրությունները, հեղափոխելով գործում առկա մյուս փաս-
տաթղթերը, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Նայաստանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգիրքն
ընդունվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից 1998թ. հուլիսի 1-ին: Նայաստանի Նանրա-
պետության Նախագահի կողմից այն ստորագրվել է 1998թ. սեպտեմբերի 1-ին և համա-
ձայն նշված օրենսգրքի 500 հոդվածի՝ այն ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 12-ից:

ՆՇ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածը վերնագրված է՝ «Ներառնության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների բողոքարկումը դատարան»:

Նշված հոդվածի 1-ին, 2-րդ և 3 -րդ մասերում ամրագրված է.

«1. Ներառնության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, փոփոխի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

3. Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գրնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պարասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում»:

2. Դիմող կողմը գրնում է, որ ՆՇ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասը հակասում է ՆՇ Սահմանադրության 3, 8, 19 և 31 հոդվածներին, քանի որ դատարաններում իր նկատմամբ կիրառելով այդ նորմը՝ պարճառաբանել են, որ ինքը մեկ ամսվա ընթացքում չի դիմել դատարան՝ դրանով բաց թողնելով բողոքարկման համար օրենքով սահմանված ժամկետը: Տվյալ նորմը սահմանադրական չէ, քանի որ դրանում նշված չէ, որ պարասխանողը դիմողին պետք է տեղյակ պահի ժամկետային սահմանափակման մասին: Նման նշում չլինելու և իր անտեղյակության պարճառով փաստորեն սահմանափակվել է դատարան դիմելու իր իրավունքը, ինքը գրկվել է իր սեփականության դատական պաշտպանության իրավունքից, ինչպես նաև իր սեփականությունն իր հայեցողությամբ փիրապետելու, օգտագործելու և փնօրինելու հնարավորությունից:

Դիմող կողմը գրնում է, որ նման վիճակ առաջացել է նաև քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում իրեն չտրամադրելու պարճառով:

3. Պարասխանող կողմն առարկելով դիմողի փաստարկների դեմ, գրնում է, որ ՆՇ քր. դատ. օր.-ի 290 հոդվածը նախատեսելով անձի՝ վարույթն իրականացնող մարմնի գործողություններն ու որոշումները բողոքարկելու իրավունքը, միաժամանակ նախատեսում է դրա իրականացման երկու պայման, որ նախ՝ բողոքը պետք է ներկայացվի վարույթն իրականացնող մարմնի գրնվելու վայրի դատարան, և երկրորդ՝ բողոքը պետք

է ներկայացվի այն մերժելու մասին փեղեկություն ստանալու, կամ, եթե դրա վերաբերյալ փեղեկություն չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում:

Դատական պաշտպանության հստակ ժամկետի սահմանումը, պատասխանող կողմի կարծիքով, նշված իրավունքի խախտում չի կարող դիտարկվել: Մ. քր. դատ. օր.-ը, մանրամասն կարգավորման ենթարկելով քրեական գործերի քննության եւ լուծման կարգը, կանոնակարգել է նաեւ դատավարական գործողությունների կատարման եւ որոշումների ընդունման ժամկետները: Մ. քր. դատ. օր.-ը նաեւ ժամկետներ է սահմանել ինչպես հետաքննության մարմնի, քննիչի եւ դատախազի որոշումների, այնպես էլ դատավճռի բողոքարկման համար: Մասնավորապես, Մ. քր. դատ. օր.-ի 379 հոդվածը սահմանում է վերաքննիչ բողոք բերելու 15-օրյա ժամկետ, որը չի կարելի դիտարկել որպես Սահմանադրության 20 հոդվածով նախատեսված՝ յուրաքանչյուրի՝ իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունքի սահմանափակում: Նույն նկատառումներով չի կարելի պնդել, որ Մ. քր. դատ. օր.-ի 290 հոդվածի երրորդ մասը հակասում է Մ. Սահմանադրության 19 հոդվածին:

Մ. քր. դատ. օր.-ի 290 հոդվածի 3-րդ մասը, ըստ պատասխանողի, չի հակասում նաեւ Մ. Սահմանադրության 3 հոդվածին, քանի որ, ի փոքրամասնությամբ նախկին Մ. քր. դատ. օր.-ի, Մ. քր. դատ. օր.-ը երաշխավորում է մարդու իրավունքները եւ ազատությունները, այդ թվում նաեւ՝ դրանց դատական պաշտպանության իրավունքը, սահմանում է դրա իրականացման հստակ մեխանիզմներ:

Պատասխանող կողմը գտնում է նաեւ, որ Մ. քր. դատ. օր.-ի 290 հոդվածի 3-րդ մասը սեփականության իրավունքի պաշտպանության հետ ուղղակի առնչություն չունի:

4. Գործի հանգամանքների պարզումը վկայում է, որ Ն. Դանիելյանը 27.09.04թ. եւ 15.10.04թ. դիմել է Մ. գլխավոր դատախազին՝ հայտնելով, որ 1983թ. օրինական կարգով ամուսնացել է քաղ. Ու. Սարգսյանի հետ: 1996թ. ինքը վաճառել է իր երկուսենյականոց բնակարանը եւ գնել մեկսենյականոց բնակարան, որը ձեւակերպել է կնոջ՝ Ու. Սարգսյանի անվամբ: Վերջինս մահացել է 24.08.2003 թվականին: Նրա մահից հետո դիմողին հայտնի է դարձել, որ այդ մեկսենյականոց բնակարանը 27.06.2003թ. իբր կրակվել է իր կնոջ քրոջը՝ Մ. Սարգսյանին: Նա գտնում է, որ այդ գործարքը կեղծ է՝ կնոջ հարազատները նույնիսկ միջոցով ցանկացել են խարդախությամբ փրկանալ իր կողմից գնված վերը նշված բնակարանին, եւ խնդրել է նրանց ենթարկել քրեական պատասխանատվության՝ վկայակոչելով նաեւ, որ «Նույնիսկ մահից հետո» Մ. քր. դատ. օր.-ի 8-րդ հոդվածի 5 կետի համաձայն նույնիսկ նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցել միայն Մ. գլխավոր դատախազը»:

Ն. Դանիելյանի դիմումն ուղարկվել է Արաբկիր եւ Զանաքեռ-Զեյթուն համայնքների դատախազին, որն էլ իր հերթին հանձնարարել է Արաբկիրի ոստիկանությանը հետաքննություն իրականացնել: Վերջինիս նախապարաստված նյութերով 20.12.2004թ.

որոշում է կայացվել մերժել քրեական գործի հարուցումը՝ հանցակազմի բացակայության պատճառով:

ՆՏ գլխավոր դատախազի հանձնարարությամբ ստուգվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունը եւ քննչական վարչության դատախազը 2005թ. փետրվարի 2-ին Ն. Դանիելյանին պատրասխանել է, որ վարչությունում ուսումնասիրել են Արաբկիրի ոստիկանության նախապարաստած նյութերը եւ գտնում են, որ ոստիկանության կողմից նյութերի ընթացքը լուծվել է օբյեկտիվորեն, այն վերացնելու հիմքեր չկան, հարցը կրում է քաղաքացիաիրավական բնույթ եւ այն պետք է լուծվի դատական կարգով: Դրանից հետո Ն. Դանիելյանը 21.02.06թ. կրկին դիմել է գլխավոր դատախազին՝ խնդրելով քրեական գործ հարուցել իր բնակարանին առնչվող գործողությունների հետ կապված կամ իրեն փրամադրել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու որոշում, որպեսզի ինքը հնարավորություն ունենա այն բողոքարկել դատարան: Սակայն պատրասխան չի ստացել:

Ն. Դանիելյանը գտել է, որ ինքն իրավունք ունի դատախազության գործողությունները բողոքարկել դատարան՝ 03.04.2006թ. դիմելով Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ապյանի դատարանին՝ խնդրելով ՆՏ քրեական դատարանության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ կետի համաձայն պարտավորեցնել ՆՏ գլխավոր դատախազությանը քրեական գործ հարուցել իր բնակարանը «խարդախությամբ փրանալու փորձ անող անձանց նկատմամբ»:

Վերը նշված դատարանը 05.04.06թ. որոշմամբ բողոքը թողել է առանց քննության, պատճառաբանելով, որ ՆՏ դատախազությունից պատրասխան ստանալուց հետո Ն. Դանիելյանը ՆՏ քր. դատ. օր.-ի 290 հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում՝ մեկ ամսվա ընթացքում, չի դիմել դատարան:

Առաջին ապյանի դատարանի որոշումը Ն. Դանիելյանը բողոքարկել է վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանը 04.05.2006թ., չմարմանշելով ՆՏ քր. դատ. օր.-ի որեւէ նորմ, Ն. Դանիելյանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ հետեւյալ պատճառաբանությամբ. «Նկատի ունենալով, որ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի եւ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների եւ գործողությունների բողոքարկման արդյունքում, վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի առաջին ապյանի դատարանի որոշումները վերջնական են եւ բողոքարկման ենթակա չեն»:

Վերը նշված որոշման դեմ Ն. Դանիելյանը բողոք է ներկայացրել ՆՏ վճռաբեկ դատարան: Վերջինս բողոքը թողել է առանց քննության՝ պատճառաբանելով, որ ՆՏ - Սահմանադրության 92 հոդվածի համաձայն վճռաբեկ դատարանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, հանդիսանում է ՆՏ բարձրագույն դատական արյանը եւ կոչված է ապահովելու օրենքի միապետակ կիրառությունը: Այդ պայմաններում օրինական ուժի մեջ չմտնող մինչդատական վարույթի, այդ թվում քրեական գործի հարուցումը մերժելու հետ կապված հարցերի բողոքարկումը բարձրագույն դատական արյան, չի բխում վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակից: Բացառիկ դեպքերում նման բողոքները վճռաբեկ դատարանի քննարկման առարկա կարող են դառնալ, ե-

թե այդ հարցն ունի սկզբունքային նշանակություն դադարակապի համար: Սույն գործով բողոքարկվող որոշումը չունի նախադեպային նշանակություն: Վերը նշված պայմաններում վճռաբեկ բողոք է բերվել այնպիսի որոշման դեմ, որը վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա չէ, հետևաբար, ՏՏ քր. դատ. օր.-ի 407 հ. 3-րդ մասի ուժով այն պեպք է թողնել առանց քննության:

5. Գործի նյութերի վերլուծությունը վկայում է, որ.

Նախ. ըստ այդ նյութերի եւ դիմող կողմի գրավոր հայտարարության՝ նա չի սպա-ցել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որեւէ որոշում, այդ թվում հետաքննու-թյան մարմնի որոշումը, որը կայացրել է ՏՏ ոսպիկանության Արաբկիրի բաժնի պետը 20.12.2004 թվականին, եւ որում նշված է, որ այն կարող է բողոքարկվել վերադաս **դա-տախազին կամ վերաքննիչ դատարան**՝ առանց ժամկետային որեւէ սահմանափակ-ման: Փաստորեն, հետաքննության մարմինը հիմք է ընդունել ՏՏ քրեական դատավա-րության օրենսգրքի 185 հոդվածի 3-րդ մասը, որը բողոքարկման ժամկետային սահմա-նափակում չի բովանդակում: Սակայն դիմող կողմին քրեական գործի հարուցումը մերժե-լու մասին որոշումն օրենքով սահմանված կարգով չարամադրելը նրան գրկել է իր իրա-վունքների արդյունավետ պաշտպանության հնարավորությունից:

Երկրորդ. Երեսանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին արյանի դատարանը քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման քննության իրավասություն չի ունեցել, քանի որ փվյալ պահին գործող ՏՏ քրեական դա-տավարության օրենսգրքի 185 հոդվածի 3-րդ մասի համաձայն (հոդվածը կոչվում է «Քրեական գործի հարուցումը մերժելը») «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին ո-րոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատախազին **կամ վերաքննիչ դատարան**» (25.05.06 ՏՕ-91-Ն օրենքով օրենսգրքի 185 հոդվածի 3-րդ մասը փոխվել եւ շարադրվել է հետեւյալ խմբագրությամբ. «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով»): Դատարանը, քննության առ-նելով դիմումը, ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասի հիմ-քով 05.04.2006թ. որոշել է Ն. Դանիելյանի բողոքը թողնել առանց քննության:

Երրորդ. 17.04.06թ. ՏՏ քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատա-րան ներկայացրած իր վերաքննիչ բողոքում դիմող կողմը խնդրում է՝ «ՏՏ քրեական դա-տավարության օրենսգրքի 185 եւ 394 հոդվածների համաձայն վերացնել Երեսանի Կենտր-ոն եւ Նորք-Մարաշ համայնքների 1-ին արյանի դատարանի 05.04.06թ. որոշումը, որ-պեսզի քր. գործ հարուցվի իմ բնակարանին խարդախությամբ փիրացած անձանց նկատ-մամբ»: Վերաքննիչ դատարանը՝ չպարզելով քրեական գործի հարուցումը մերժելու, նման որոշում դիմողին փրամադրելու, այդ որոշումը բողոքարկելու վերաբերյալ նրա իրավունք-ները պարզաբանելու հանգամանքները, հիմք չընդունելով հիշյալ 185 հոդվածի պահանջը եւ բողոքը չքննելով ըստ էության՝ վարույթն իրականացնող մարմնի գրավելու վայրի ա-ռաջին արյանի դատարանի որոշումներն իր 04.05.2006թ. որոշմամբ համարելով վերջնա-կան եւ բողոքարկման ոչ ենթակա, Ն. Դանիելյանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության եւ վերադարձրել է: Դա նաեւ այն դեպքում, երբ առաջին արյանի դատարանի

որոշման եզրափակիչ մասում շեշտվում է, որ «Որոշումը կարող է բողոքարկվել ՆՏ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանին 15 օրվա ժամկետում»:

Չորրորդ. ՆՏ վճռաբեկ դատարանն իր 16.06.2006թ. որոշմամբ յուրովի մեկնաբանելով ՆՏ Սահմանադրությունը, հիմք չընդունելով ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի՝ փյվյալ պահին գործող 414 հոդվածի պահանջները, վճռաբեկ բողոքը թողել է առանց քննության, քանի որ, ինչպես նշվեց, ըստ վճռաբեկ դատարանի եզրակացության՝ նման հարցերի քննությունը «...չի բխում վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակից» և «սույն գործով բողոքարկվող որոշումը չունի նախադեպային նշանակություն»:

Գործի հանգամանքների պարզման արդյունքում արձանագրելով այս իրողությունները, սահմանադրական դատարանը, այնուամենայնիվ, Սահմանադրությամբ լիազորված չէ գնահատել հեղաքննության մարմնի, դատախազի կամ ընդհանուր իրավասության դատարանների որոշումների ու վճիռների սահմանադրականությունը: Միաժամանակ, ՆՏ Սահմանադրության 93 հոդվածը նախատեսում է, որ Նայաստանի Նանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը: Սահմանադրական դատարանին է Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքով իրավասություն վերապահված Սահմանադրության դրույթների վերաբերյալ վերջնական իրավական դիրքորոշում ներկայացնել՝ նորմափիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս: Այդ իրավական դիրքորոշումների բովանդակությունը սահմանադրական նորմի պաշտոնական մեկնաբանությունն է: Իր հերթին, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 1-ին հոդվածը պարզավորեցնում է սահմանադրական դատարանին՝ ապահովել ՆՏ իրավակարգում Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը: Դա իրականացնելու համար սահմանադրական դատավարության հիմնական սկզբունքներից մեկն է համարվում գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքը: Բացի դրանից, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասում ամրագրված է, որ նորմափիվ ակտերի սահմանադրականության հարցերով իր որոշումներն ընդունելիս, ի թիվս այլ հանգամանքների, սահմանադրական դատարանը պետք է հաշվի առնի նաև մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության, ինչպես նաև Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը: Այս տեսանկյունից սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ըստ քննության առարկա գործի հանգամանքների՝ գործնականում չի ապահովվել ու պաշտպանվել քաղաքացու՝ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով ամրագրված իրավունքները:

6. Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասի դրույթների առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ հոդվածի դրույթները՝ իրենց իրավակարգավորման առարկայի շրջանակներում, պետության կողմից օրենքով սահմանված ժամկետային սահմանափակումների առումով համահունչ են ՆՏ -

Սահմանադրության 19 հոդվածով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածով երաշխավորված դատական քննության մատչելիության և արդար դատաքննության իրավունքներին: Ժամկետային սահմանափակման նպատակն է պահպանել իրավական որոշակիությունը և ապահովել, որպեսզի գործերը վերանայվեն ողջամիտ ժամկետներում: Օրենսգիրքը պարտավորեցնում է քրեական վարույթ իրականացնող մարմիններին հանցագործությունը և այն կատարած անձանց բացահայտել սեղմ ժամկետներում, ինչպես նաև նախատեսվում է այդ ուղղությամբ իրականացված գործողությունների և ընդունված որոշումների բողոքարկման սեղմ ժամկետներ: Իրավաչափ նպատակով արդարացված սահմանափակումներն ունեն նաև միջազգային իրավական հիմնավորում՝ որպես պետություններում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է այս հարցին և նշել, որ Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետով երաշխավորված «Դատաքննության իրավունքը, որի մասնավոր փայր է հանդիսանում մատչելիության իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ այն իր էությանը պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել՝ կախված ժամանակից և տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջմունքներին և միջոցներին համապատասխան: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությունը, և դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետին, եթե ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների և դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն» (*Golder v. United Kingdom*, 21 feb. 1975, *Fayed v. United Kingdom*, 25 aug. 1994, *Ashingdane v. United Kingdom*, 28 may 1985, *Garcia Manibardo v. Spain* (15 feb. 2000), 29.06.2000, *Bellet v. France*, 20 nov. 1995, *Philis v. Greece*, 27 aug. 1991, *Tolstoy Miloslavsky v. United Kingdom*, 23 jun. 1995): Մեկ այլ գործով Եվրոպական դատարանը շեշտում է, որ. «Բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետների կարգավորումը, անկասկած, նպատակ ունի ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը, հատկապես իրավական որոշակիության սկզբունքը: Շահագրգռված անձինք պետք է հաշվի առնեն, որ այդ կանոնները պետք է կիրառվեն» (*Perez de Rada Cavanilles v. Spain*, 28 oct. 1998, *Societe anonyme "Sotiris et Nikos Kouras ATTEE" v. Greece* (16 nov. 2000), 16 feb. 2001): Միաժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներում առանձնահատուկ կարեւորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Ինչ վերաբերում է այդ սահմանափակման մասին իրազեկման խնդրին, ապա արվյալ հոդվածում խոսքը վերաբերում է հեղաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններ-

րի անօրինական եւ անհիմն որոշումների եւ գործողությունների՝ դադարան բողոքարկմանը: Ակնհայտ է, որ նշված իրավասու անձանց կամ մարմինների որոշումների բողոքարկման արդյունքում միայն դրանք կարող են ճանաչվել անօրինական կամ անհիմն: Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասում նշված անձանց՝ իրենց իրավունքների եւ պարտականությունների պարզաբանումը, դրանց իրականացման հնարավորության ապահովումն այդ որոշումների կայացման փուլում պետք է երաշխավորվի, եւ դա նման որոշումներ կայացնող մարմինների ու անձանց պարտականությունն է, եւ օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասում իրավունքների պարզաբանման լրացուցիչ դրույթի ամրագրման պահանջը հիմնավոր չէ: Այս հարցը, մասնավորապես, կանոնակարգված է օրենսգրքի 101 հոդվածով: Այդ հոդվածի 2-րդ մասի դրույթը սահմանում է, որ «Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձի պարզաբանել նրա իրավունքները եւ պարտականությունները, ապահովել սույն օրենսգրքով սահմանված կարգով դրանց իրականացման հնարավորությունը»: Ընդ որում, ՏՊ քրեական դատավարության օրենսգրքի 6 հոդվածի 30-րդ կետի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմին է համարվում դատարանը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթում՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը: Նույն հոդվածի 31-րդ կետը սահմանում է, որ դատավարության մասնակիցներն են դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը, ինչպես նաեւ քրոնիկը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները եւ ներկայացուցիչները, կասկածյալը, մեղադրյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը եւ նրա ներկայացուցիչը: Բացի դրանից, օրենսգրքի 6 հոդվածի 33-րդ կետով սահմանվում է նաեւ «դիմող» հասկացությունը, համաձայն որի՝ դիմող է համարվում յուրաքանչյուր անձ, որը դիմել է դատարան, քրեական հետապնդման մարմնին՝ քրեական դատավարության կարգով խախտված իրավունքների պաշտպանության համար: Միաժամանակ, համաձայն ՏՊ քր. դատ. օր.-ի 98, 103, 177, 185, 198, 263, 290 եւ մի շարք այլ հոդվածների, 290 հոդվածի 1-ին մասում վկայակոչվող «այլ անձինք»՝ ԿՎԿ պաշտպանը դիմողը, փաստացի ընդգրկվում են քրեադատավարական իրավահարաբերությունների ոլորտ, օրենսգիրքը ճանաչում է նրանց որոշակի իրավունքներն ու պարտականությունները, եւ նրանք այդ կարգավիճակում պետք է օգտվեն իրենց իրավունքների եւ պարտականությունների պարզաբանման ու դրանց իրականացման հնարավորության ապահովման երաշխիքներից՝ որպես իրենց իրավունքների արդյունավետ իրականացման էական պայման:

Մինչդեռ, սահմանադրական դատարանը փաստում է, որ այդպիսի երաշխիքներ (իրավասու մարմնի, պաշտոնապար անձի կողմից դիմողին՝ իր դատավարական իրավունքները բացառելով) դիմողի կարգավիճակով հանդես եկող անձի մասով օրենսգրքի որեւէ նորմով հստակ նախատեսված չէ: Քրեական դատավարության օրենսգրքում նման դրույթի ոչ հստակ ձեւակերպված լինելը կարող է նաեւ այդ անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության առումով ոչ համաչափ իրավիճակի առաջացման պատճառ դառնալ: Այս խնդիրն օրենսդրական կանոնակարգման անհրաժեշտություն ունի եւ ՏՊ Ազգային ժողովի իրավասության հարցն է:

Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ քաղաքացու սահմանադրական իրավունքի չապահովման պատճառով ոչ թե ՆՏ քրեական օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասի սահմանադրականության խնդրով է պայմանավորված, այլ օրենսդրական նորմերի անհստակության եւ իրավակիրառական պրակտիկայի արդյունք է, ուստի նպատակահարմար է համարում սույն գործով իր որոշման պատճառաբանական մասի վրա հրավիրել ՆՏ գլխավոր դատախազության եւ ՆՏ դատարանների նախագահների խորհրդի ուշադրությունը՝ դիմող կողմի սահմանադրական իրավունքի օրենքով սահմանված կարգով իրացումն ապահովելու նպատակով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայասպանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Նայասպանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասի դրույթները համապատասխանում են Նայասպանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասպանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

18 հոկտեմբերի 2006 թվականի
ՍԴՈ-652

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՄԵԿ ՆԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 35 ՆՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ 3-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԴՐՈՒՅԹԻ, 4-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԻ, 36 ՆՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

7 նոյեմբերի 2006թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դափարանը՝ կազմով.

Գ. Նարոյթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (գեկուցող), Վ. Նովիանիսյանի, Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող կողմի ներկայացուցիչներ Ը. Քոչարյանի և Ն. Թովմասյանի, պապարսխանող՝ ՆՆ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետի, 101 հոդվածի 3 կետի, «Սահմանադրական դափարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25 և 68 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Նայասարանի Նանրապետության Ազգային ժողովի պապագամավորների մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ Նայասարանի Նանրապետության ընտրական օրենսգրքի 35 հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի երկրորդ նախադասությունում ամրագրված դրույթի, 4-րդ ենթակետի, 36 հոդվածի 1-ին կետի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նայասարանի Նանրապետության Ազգային ժողովի 27 պապագամավորների դիմումը սահմանադրական դափարան:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, կողմերի բացատրությունները, հե-
րագուրելով ՏՏ ընտրական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայաս-
պանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

I. ՏՏ ընտրական օրենսգիրքն ընդունվել է Նայասպանի Նանրապետության Ազ-
գային ժողովի կողմից 1999 թվականի փետրվարի 5-ին: Նայասպանի Նանրապետության
Նախագահի կողմից ստորագրվել է 1999 թվականի փետրվարի 17-ին եւ ուժի մեջ է մտել
1999 թվականի փետրվարի 28-ին: Վիճարկվող դրույթները օրենսգրքում փոփոխություններ եւ լրա-
ցումներ կատարելու մասին» ՏՏ օրենքով, որն ընդունվել է 2005 թվականի մայիսի 19-ին
եւ ուժի մեջ է մտել 2005 թվականի հունիսի 1-ից (համաձայն նշված օրենքի 87 հոդվածի):

ՏՏ ընտրական օրենսգրքի 35 հոդվածը սահմանում է.

«1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմավորվում է՝

...

3) գործող Ազգային ժողովի առաջին նստաշրջանի դրությամբ հայտարարված
պարզամավորական խմբի որոշմամբ նշանակված մեկ անդամից: Սույն օրենքի ընդուն-
մանը հաջորդող Ազգային ժողովի ընտրությունից հետո, ինչպես նաեւ Ազգային ժողովում
գործող պարզամավորական խմբի լուծարման դեպքում սույն ենթակետով կենտրոնա-
կան ընտրական հանձնաժողովի անդամ նշանակելու լիազորությունը անցնում է Նայաս-
պանի Նանրապետության դատարանների նախագահների խորհրդին՝ Նայասպանի
Նանրապետության ընդհանուր իրավասության դատարանների դատավորների կազմից.

4) վճռաբեկ դատարանի նշանակված վճռաբեկ դատարանի մեկ դատավորից»:

ՏՏ ընտրական օրենսգրքի 36 հոդվածի 1-ին կետը սահմանում է.

«1. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամները նշանակվում
են կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների կողմից՝ կենտրոնական ընտ-
րական հանձնաժողովի մեկ անդամ՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի
մեկ անդամ սկզբունքով՝ մասնագիտական դասընթացներին մասնակցած եւ համապա-
րասխան որակավորում ստացած անձանցից, բացառությամբ կենտրոնական ընտրական
հանձնաժողովում վճռաբեկ դատարանի եւ Նայասպանի Նանրապետության դատարան-
ների նախագահների խորհրդի նշանակված ներկայացուցիչների, որոնք ընտրատարած-
քային ընտրական հանձնաժողովներում անդամներ նշանակվում են ընդհանուր իրավա-
սության դատարանների դատավորների կազմից»:

II. Դիմողները, վիճարկելով ՏՏ ընտրական օրենսգրքի 35 հոդվածի 1-ին կետի 3-
րդ ենթակետի երկրորդ նախադասությունում ամրագրված դրույթը, 4-րդ ենթակետը, 36
հոդվածի 1-ին կետը, գտնում են, որ դրանք հակասում են ՏՏ Սահմանադրության 5 հոդ-
վածի առաջին մասին, 19 հոդվածի առաջին մասին, 98 հոդվածի առաջին մասին:

ՏՏ Սահմանադրության 5 հոդվածի համաձայն՝ «Պերական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման հիման վրա:

Պերական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

Սահմանադրության 19 հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաեւ իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

Սահմանադրության 98 հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Դատավորը եւ սահմանադրական դատարանի անդամը չեն կարող զբաղվել ձեռնարկափրական գործունեությամբ, զբաղեցնել իրենց պարտականությունների հետ չկապված պաշտոն պերական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, պաշտոն առեւտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական եւ սրբեղծագործական աշխատանքից»:

Դիմողները, մասնավորապես, նշում են, որ վիճարկվող դրույթները հակասում են ՏՏ Սահմանադրության 5 հոդվածի 1-ին մասին հետեւյալ հիմնավորումներով. իշխանությունների բաժանման սկզբունքը նախ եւ առաջ ենթադրում է պերական իշխանության իրականացում օրենսդիր, գործադիր եւ դատական մարմինների միջոցով: Իշխանությունների փարանջապման տեսությունը, ըստ էության, բացառում է ֆունկցիոնալ առումով իշխանության ճյուղերից մեկին պարկանող լիազորությունների իրականացումն իշխանության մյուս ճյուղի կամ նրա ներկայացուցիչների կողմից: Վիճարկվող դրույթներով դատական իշխանությունն ստանում է վերջինիս ոչ բնորոշ լիազորություններ, այն է՝ մասնակցել ընտրությունների կազմակերպման աշխատանքներին՝ իրականացնելով գործադիր իշխանությանը բնորոշ լիազորություն:

Դիմողները, հիմնավորելով վիճարկվող դրույթների՝ ՏՏ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասին հակասելու պարագան, նշում են, որ ՏՏ Սահմանադրության 19 հոդվածը երաշխավորում է քաղաքացու իրավունքը, որպեսզի իր գործը քննվի անկողմնակալ դատարանի կողմից: Նշելով, որ ՏՏ ընտրական օրենսգրքի 32 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընտրական հանձնաժողովներն ապահովում են քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացումն ու պաշտպանությունը, եւ ընտրական իրավունքի իրականացման ընթացքում ծագած վեճերը եւս ենթակա են դատարանում վիճարկման, ըստ դիմողների՝ արդյունքում ստացվում է, որ եթե քաղաքացին դատարանում բողոքարկում է կենտրոնական կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների ակտերը, ապա բողոքը քննում է իշխանության այն մարմինը, որի ներկայացուցիչները մասնակցել են բողոքարկվող ակտի ընդունմանը: Սակայն դատարանը կարող է լինել անկախ, անկողմնա-

կալ, եթե դուրս է վիճարկվող ակտն ընդունած մարմնից, չի մասնակցել այդ որոշման ընդունմանը:

Նիմնավորելով վիճարկվող դրույթների՝ Սահմանադրության 98 հոդվածի առաջին մասին հակասելու պարագան, դիմողները, մասնավորապես, նշում են, որ Սահմանադրության 98 հոդվածից բխում է, որ դատավորն իր լիազորությունները կատարում է մասնագիտական սկզբունքի հիման վրա՝ որպես հիմնական աշխատանք, որն անհամապեղելի է իր պարտականությունների հետ չկապված որեւէ այլ աշխատանքի, գործունեության հետ: Դատավորների համար անհամապեղելիության նման պահանջները նպատակ են հետապնդում ապահովելու դատավորի ամբողջ ներուժի օգտագործումը դատավորի լիազորություններն իրականացնելիս, երաշխավորել դատավորների անկախությունն ու անկողմնակալությունը, ինչպես նաեւ ապահովել ու պաշտպանել դատական իշխանության բարձր հեղինակությունը:

III. Պատասխանող կողմը գտնում է, որ ՆՏ ընտրական օրենսգրքի վիճարկվող նորմերը չեն հակասում Սահմանադրության 5 հոդվածի 1-ին մասին, որովհետեւ, լինելով անկախ մարմին՝ ընտրական հանձնաժողովներն ընդգրկված չեն իշխանության ճյուղերից որեւէ մեկում՝ ինստիտուցիոնալ - կազմավորման առումով այն չի մտնում իշխանության ճյուղերի մեջ: Կառուցվածքային - ֆունկցիոնալ չափանիշի փեսանկյունից ընտրական հանձնաժողովը չի իրականացնում ո՛չ բացառապես գործադիր, ո՛չ օրենսդիր եւ ո՛չ էլ դատական իշխանությանը բնորոշ գործառույթ: Անհատական - կազմակերպական չափանիշի առումով ընտրական հանձնաժողովները՝ որպես կոլեգիալ մարմիններ, ձեւավորվում են քարքեր մարմինների կողմից, սակայն ձեւավորման պահից հաշվեկրո չեն իշխանության թեւերից որեւէ մեկին:

Պատասխանող կողմի կարծիքով՝ հակասություն չկա նաեւ ՆՏ ընտրական օրենսգրքի վիճարկվող դրույթների եւ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասի միջեւ, գտնելով, որ նման պնդումն արդարացի կարող էր լինել բացառապես այն դեպքերում, երբ գործը քննում է ընտրական հանձնաժողովի անդամ համարվող դատավորը:

Միաժամանակ, պատասխանող կողմի կարծիքով՝ ՆՏ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելուց հետո Սահմանադրության 98 հոդվածի 1-ին մասի խմբագրությունը փոխվել է եւ այդ հիմքով վիճարկվող հոդվածները դարձել են ՆՏ Սահմանադրության 98 հոդվածի 1-ին մասին հակասող:

Պատասխանող կողմը նշում է նաեւ, որ ՆՏ Սահմանադրության 117 հոդվածի համաձայն՝ «Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) Ազգային ժողովը երկու փուլով ընթացքում համապատասխանեցնում է գործող օրենքները Սահմանադրության փոփոխություններին»: Այդ հիմքով առկա է ՆՏ ընտրական օրենսգրքում համապատասխան փոփոխություն կատարելու անհրաժեշտություն, այդ թվում՝ նաեւ այնպիսի խնդրահարույց հարցերի կապակցությամբ, ինչպիսիք են ընտրական հանձնաժողովի կարգավիճակը սահմանող դրույթների միջեւ հակասությունները:

IV. ՏՏ ընտրական օրենսգրքի 31 հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ «Ընտրությունների կազմակերպման եւ անցկացման նպատակով Նախապետությունում կազմավորվում է ընտրական հանձնաժողովների եռասփիճան համակարգ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, ընտրապարաձքային ընտրական հանձնաժողով եւ փեղամասային ընտրական հանձնաժողով», իսկ 32 հոդվածի 1-ին մասով սահմանվում է. «Ընտրական հանձնաժողովներն ապահովում են քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացումը եւ պաշտպանությունը: Ընտրական հանձնաժողովներն իրենց լիազորություններն իրականացնելիս անկախ են պետական եւ փեղական ինքնակառավարման մարմիններից»: Տվյալ նորմերը հստակեցնում են ընտրական հանձնաժողովների սպեղծման նպատակը եւ փարանջապումը պետական ու փեղական ինքնակառավարման բոլոր մարմիններից՝ անկախ որոշակի գործառույթ իրականացնելու համար: Վերջինիս բովանդակությունը ներկայացուցչական ժողովրդավարության ինստիտուտների ձեւավորման ապահովումն է քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման եւ պաշտպանության միջոցով: Ուստի այս գործառույթը, իր հերթին, չի կարող անմիջականորեն դասվել իշխանության այլ մարմինների գործառույթների շարքին: Այս առումով ընտրական հանձնաժողովների ձեւավորմանը պետական իշխանության բոլոր թեւերի մասնակցությունն արդարացվում է, որի պարագայում այդ հանձնաժողովների անկախության երաշխիքներն առավել ամուր կարող են լինել: Սակայն դա չի նշանակում, որ առանձին-առանձին այդ իշխանության մարմինները կարող են օժտվել այնպիսի լիազորություններով, որոնք կվրանգեն իրենց գործառույթների արդյունավետ ու անկողմնակալ իրականացումը կամ կվրանգեն զսպումների ու հակակշիռների սահմանադրական հաշվեկշիռը:

V. Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ ընտրական հանձնաժողովներն իրենց պետաիրավական կարգավիճակով ակնհայտորեն պետական մարմիններ են, որոնք ապահովում են Սահմանադրությամբ եւ միջազգային պայմանագրերով նախատեսված՝ պետության պարտավորությունների իրականացումը քաղաքացիների ընտրական իրավունքի երաշխավորման եւ անկախ ու անկողմնակալ մարմնի միջոցով ընտրությունների կազմակերպման հարցերում: Մասնավորապես, ՏՏ ընտրական օրենսգրքի 41 հոդվածի համաձայն՝ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընտրությունները կազմակերպող եւ ընտրությունների օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական մարմին է, որը գործում է մշտական հիմունքներով՝ իր ընդունած կանոնակարգի համաձայն»: Օրենսգրքի 42 հոդվածը սահմանում է, որ «Ընտրապարաձքային ընտրական հանձնաժողովը, կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընդունած կանոնակարգի համաձայն, մշտական հիմունքներով գործող պետական մարմին է...»: Չնայած այն բանին, որ օրենսգրքի 33 հոդվածը նախատեսում է, որ ընտրական հանձնաժողովների կազմում ընդհանուր իրավասության դատարանների դատավորները գործում են հասարակական հիմունքներով, այդուամենայնիվ, պետական մարմնում նրանք իրենց գործառույթների բնույթով զբաղեցնում են պետական պաշտոն: Ի դեպ, նույն 33 հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը, նախագահի փեղակալը, քարտուղարը եւ անդամներն աշխա-

տում են մշտական հիմունքներով եւ իրավունք չունեն կապարելու վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական եւ սրբեղծագործական աշխատանքից»։ Նման պահանջները ոչ միայն շեշտում են փվյալ պաշտոնի առանձնահատուկ բնույթը, այլեւ կարելու են հանձնաժողովի անդամների հավասար կարգավիճակի երաշխավորման պետակերպից։

VI. ՏՏ Սահմանադրության 98 հոդվածի 1-ին մասը, ինչպես նշվեց, սահմանում է. «Դատավորը եւ սահմանադրական դատարանի անդամը չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել իրենց պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, պաշտոն առեւտրային կազմակերպություններում, կապարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական եւ սրբեղծագործական աշխատանքից»։ Անհամատեղելիության նման պահանջները նպատակ ունեն երաշխիքներ սրբեղծել՝ արդարադատություն իրականացնող սուբյեկտների ներուժն ամբողջական, արդյունավետ, անկողմնակալ եւ անկախ ձեռով ծառայեցնելու արդարադատության շահերին, բացառել փարաբնույթ շահերի բախումները, դատավորներին զերծ պահել հնարավոր ներագրեցություններից։ Մասնավորապես, այն դրույթը, համաձայն որի՝ «Դատավորը եւ սահմանադրական դատարանի անդամը չեն կարող [...] զբաղեցնել իրենց պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում...», ենթադրում է, որ Սահմանադրությունը դատավորի մասնագիտական զբաղվածության հստակ սահման է դրել՝ այն սահմանափակելով նրա պաշտոնական պարտականությունների շրջանակներում։ Դատավորի կարգավիճակի եւ կարողությունների օգտագործման նպատակահարմարությամբ թելադրված ցանկացած քայլ ու օրենսդրական լուծում կարող են իրականացվել միայն այս սահմանափակումը նկատի առնելով, եւ օրենքը չի կարող ընդլայնել սահմանադրորեն նախատեսված սահմանափակման շրջանակները։ Նմանապիպ մոտեցում տեղ է գրել նաեւ ՄԱԿ-ի փոքրասական եւ սոցիալական խորհրդի 1989/60, ընդունված 24.05.1989թ., արձանագրության մեջ, որով հաստատվել են դատական մարմինների անկախության հիմնական սկզբունքների իրականացման արդյունավետ ընթացակարգերը, որոնց համապատասխան՝ մասնավորապես, ոչ մի դատավորից չի կարելի պահանջել այնպիսի գործառնությունների կատարում, որոնք անհամատեղելի են նրա կարգավիճակի հետ։ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, իր հերթին, մի շարք վճիռներում վերահաստատել է այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ Կոնվենցիայի 6.1. հոդվածը պահանջում է, որպեսզի դատարանն անկախ լինի ինչպես գործադիր իշխանության մարմիններից, այնպես էլ դատավարության մասնակիցներից եւ օրենսդիր իշխանության մարմիններից, այսինքն՝ Խորհրդարանից։ Սակայն դատարանի անդամների նշանակման փաստը Խորհրդարանի կողմից չի կարող կասկած հարուցել փվյալ դատարանի անկախության եւ անաչառության վերաբերմամբ։

Նայաստանի Նանրապետությունում, ի փարբերություն շատ երկրների, ընտրական իրավունքի դատական պաշտպանությունն իրականացվում է ինչպես ընդհանուր իրավասության դատարանների, այնպես էլ սահմանադրական դատարանի կողմից։ Ընդ

որում, եթե Սահմանադրությամբ սահմանադրական դատարանին է իրավասություն վերապահված լուծել Վանրապետության Նախագահի եւ պապգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը, ապա ընդհանուր իրավասության դատարանները, մասնավորապես, ՎՏ ընտրական օրենսգրքի 14, 17.1., 18, 20, 25, 26, 40, 75, 79, 102, 108 հոդվածներով նախատեսված դեպքերում, քննության են առնում ընտրությունների նախապարաստման եւ անցկացման ընթացքում տեղ գրած, ինչպես նաեւ ընտրական օրենսգրքի 139 հոդվածով նախատեսված բոլոր փյալի ընտրախախտումները, եւ դրանց վերաբերյալ ընդունում են վերջնական որոշում: Իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրական իրավունքի դատական պաշտպանության իրավասությամբ օժտված են միայն ընդհանուր իրավասության դատարանները: Նման պայմաններում դատավորի՝ արդարադատություն իրականացնելու գործառույթն անհամարելելի է դառնում ընտրությունների կազմակերպման եւ իրականացման գործառույթի հետ: Դա առավել եւս տեղի կունենա այն դեպքերում, երբ դատավորներն ընտրվեն ընտրական հանձնաժողովների նախագահներ, նախագահի տեղակալներ կամ քարտուղարներ, ինչն ընտրական օրենսգիրքը չի բացառում:

VII. Քննության առարկա հարցի շրջանակներում միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ հարկապես եվրոպական ընտրական ժառանգության հիմքում դրվում են մի շարք հիմնարար սկզբունքներ ու մոտեցումներ, որոնք կարելու են նաեւ եվրասիացիների ուղին ընտրած երկրների համար: Մասնավորապես, ընտրությունների կազմակերպման հարցերի առնչությամբ Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի կողմից 2002թ. հոկտեմբերի 18-19-ին ընդունված՝ «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք. ցուցումներ եւ բացատրական զեկույց» փաստաթուղթը հատուկ կարելու է անկախ ու անկողմնակալ ընտրական համակարգի անհրաժեշտությունը: Այդ փաստաթղթի երկրորդ բաժնի 3.1. կետը վերնագրված է «Ընտրությունների կազմակերպման անկողմնակալ մարմնի կողմից»: Այս կետում նաեւ նախատեսվում է, որ. «ա). Ընտրական օրենքը պետք է կիրառվի անկողմնակալ մարմնի կողմից: բ). Այն պետություններում, որտեղ վարչական իշխանությունները քաղաքական իշխանություններից անկախ լինելու երկարատեւ ավանդույթ չունեն, բոլոր մակարդակներում պետք է ստեղծել անկախ, անկողմնակալ ընտրական հանձնաժողովներ՝ ազգային մակարդակից մինչեւ ընտրական տեղամասի մակարդակ: գ). Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պետք է մշտական բնույթ կրի»: Միաժամանակ, դ). կետով նախատեսվում է, որ, ի թիվս այլ անդամների, կենտրոնական ընտրական հանձնաժողովը պետք է ներառի դատական մարմինների առնվազն մեկ անդամ: Նույն փաստաթղթի 82-րդ կետը սահմանում է, որ «Տարածաշրջանային կամ ընտրապետամասերի մակարդակում աշխատող մյուս ընտրական հանձնաժողովները պետք է ունենան կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմին նման կազմ»:

Նույն փաստաթղթի 85-րդ կետերում մանրամասն ներկայացվում են անկախ ու անկողմնակալ գործունեություն երաշխավորող ընտրական հանձնաժողովների կազմավորմանը ներկայացվող պահանջները: Մասնավորապես, 69-րդ կետում ասվում է.

«Այն պետություններում, որտեղ վարչական իշխանություններն ունեն քաղաքական իշխանություններից անկախ լինելու երկարատև ավանդույթ, քաղաքացիական ծառայությունները կիրառում են ընտրական օրենքն առանց քաղաքական ճնշումների ենթարկվելու: Ուստի, թե՛ բնականոն եւ թե՛ ընդունելի է, որ ընտրությունները կազմակերպվեն վարչական իշխանությունների կողմից եւ վերահսկվեն Ներքին գործերի նախարարության կողմից»: Իսկ 70-րդ կետում շեշտվում է. «Սակայն այն պետություններում, որոնք բազմակարծ ընտրությունների կազմակերպման քիչ փորձ ունեն, չսպից մեծ է այն ռիսկը, որ իշխանությունները վարչական իշխանություններին կհարկադրեն անել այն, ինչ իրենք են ուզում: Սա վերաբերում է թե՛ կենտրոնական եւ թե՛ տեղական կառավարման մարմիններին, նույնիսկ եթե վերջինները վերահսկվում են ազգային ընդդիմության կողմից»: Այս նկատառումներից ելնելով է, որ անհրաժեշտ է համարվում ընտրական հանձնաժողովներում «դատական մարմինների ներկայացուցչի» ընդգրկման դրույթը, որը բացառությունների բաժնի 75-րդ կետում մեկնաբանվում է հետևյալ կերպ. որպես ընդհանուր կանոն հանձնաժողովը պետք է, ի թիվս այլ անդամների, ներառի «Դատավոր **կամ իրավաբան**՝ երբ դատաիրավական մարմինը պարասխանաբար է ընտրությունների վարչարարության համար, նրա անկախությունը պետք է ապահովվի թափանցիկ գործունեությամբ: Դատական ներկայացուցիչները չպետք է ենթակա լինեն իշխանություններին»:

Այս պարզաբանումից հետեւում է, որ «դատավոր կամ իրավաբան» անդամի առկայությունը միայն մեկ նպատակ է հետապնդում՝ հնարավորինս երաշխավորել հանձնաժողովի անկախությունն ու անկողմնակալությունը: Միաժամանակ, չի շեշտվում միայն դատավորի պարագան՝ «կամ» շաղկապի առկայությունը ենթադրում է, որ հավասարության նշան է դրվում անկախ ու անկողմնակալ դատավորի կամ իրավաբանի մասնակցության միջեւ: Այս սկզբունքի հիման վրա է, որ Եվրախորհրդի անդամ մի շարք երկրներում ընտրական հանձնաժողովների կազմում ընդգրկվում են նաեւ դատավորներ: Սակայն այն պարագայում, երբ համաձայն ՆՇ ընտրական օրենսգրքի 35 հոդվածի 1-ին մասի 3-րդ եւ 4-րդ կետերի, 36 հոդվածի 1-ին մասի եւ 95 հոդվածի, ինչպես նաեւ «Դատարանակազմության մասին» ՆՇ օրենքի 14, 15, 18 եւ 21 հոդվածների՝ ՆՇ ընդհանուր իրավասության դատարանների դատավորների կեսից ավելին կարող է դառնալ ընտրական հանձնաժողովների անդամ, իսկ կեսից պակասը՝ դատաքննության առարկա դարձնի իրենց գործընկերների մասնակցությամբ ընդունված որոշումները, ակնհայտ է, որ հարվածի փակ կորվի արդարադատության ողջ համակարգը: «Դատարանակազմության մասին» ՆՇ օրենքի 14, 15, 18, 20.1. եւ 21 հոդվածներին համապատասխան Նայաստանում կան ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանների 101 դատավոր եւ դատարանի 17 նախագահ, վերաքննիչ դատարանի 24 դատավոր եւ 2 նախագահ, վճռաբեկ դատարանի 1 նախագահ, պալատների 2 նախագահ եւ 10 դատավոր: Բացի նշվածներից, գործում է նաեւ մասնագիտացված փնտեսական դատարանը, որն ունի նախագահ եւ 21 դատավոր: Բոլորը միասին կազմում են 179 մարդ, իսկ առանց փնտեսական դատարանի՝ 157 մարդ, որոնցից 84-ը (կամ 57.9 տոկոսը՝ առանց դատարանների նախագահների) միաժամանակ կարող է դառնալ կենտրոնական եւ ընտրապարաձեպային ընտրական հանձնաժողովների անդամ: Նման պայմաններում իրավիճակն էապես չի փոխում նաեւ

ընտրական օրենսգրքի 40 հոդվածի 14-րդ կետի նորմը, համաձայն որի՝ «Սույն օրենսգրքով սահմանված կարգով ընտրական հանձնաժողովների անդամ նշանակված դատավորներն իրավունք չունեն քննելու այն դիմումները, որոնք կապված են համապարասխան ընտրական հանձնաժողովների գործողությունների (անգործության) հետ»: Ավելին, ընտրական օրենսգրքի 35 և 36 հոդվածներն ու այդ հոդվածների՝ քննության առարկա դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ օրենսգրքի 38 հոդվածի 3.1. մասի 1-ին կետի և 2-րդ կետի դրույթները, որոնք նախատեսում են կենտրոնական և ընտրապարաժբային ընտրական հանձնաժողովների թափուր փեղերի համալրում դատավորների թվից, չեն բացառել ընդհուպ այնպիսի իրավիճակը, երբ ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելիք դատավորների թիվը կարող է ավելին լինել, քան Նայասարանի Նանրապետության ընդհանուր իրավասության դատարանների դատավորների ամբողջ թիվն է:

Նկատի ունենալով Նայասարանում դատավորների սահմանափակ թվաքանակը, ընտրական հանձնաժողովներում ընդգրկվող և չընդգրկվող դատավորների հարաբերակցության՝ ընտրական օրենսգրքով նախատեսվող փարբեր իրավիճակները, ընտրական վեճերի լուծման առանձնահատկություններն ու ժամկետային սահմանափակումները, ակնհայտ է դառնում, որ անխուսափելի է հակադրությունը, մի կողմից՝ անկախ ընտրական հանձնաժողովների ձեւավորման և, մյուս կողմից՝ արդյունավետ ու անկողմնակալ արդարադատության իրականացման շահերի միջեւ: Այս առումով է, որ վերանգվում է նաեւ Սահմանադրության 19 հոդվածով ամրագրված իրավունքների ապահովումը:

Չափազանց կարեւորելով անկախ ու անկողմնակալ ընտրական հանձնաժողովների դերը, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ անցումային երկրներում նույնքան կարեւոր է նաեւ անկախ դատական իշխանության կայացումը, որի շահերից ելնելով է, որ Մահմանադրության 98 հոդվածն անթույլատրելի է համարում դատավորի կողմից իր պարականությունների հետ չկապված որեւէ պաշտոն զբաղեցնելը: Դատավորներին՝ Մ ընտրական օրենսգրքով նախատեսված կարգով ու ծավալով ընտրական հանձնաժողովներում ընդգրկելը չի բխում դատական իշխանության անկախության ապահովման և արդարադատության իրականացման շահերից, մեծանում է արդարադատության և այլ շահերի բախման հնարավորությունը, վրանգվում է դատարանների և դատավորների անաշտությունն ընտրական վեճեր լուծելիս:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետով, «Սահմանադրական դատարանի մասին» Մ օրենքի 61 հոդվածի 1-ին մասով, 63 և 68 հոդվածներով, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Մ ընտրական օրենսգրքի 35 հոդվածի 1-ին կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի և 36 հոդվածի 1-ին կետի դրույթները՝ այն մասով, որով նախատեսվում է կենտրոնական և ընտրապարաժբային ընտրական հանձնաժողովների կազմում նշանակել դատավոր-

ների, ճանաչել ՏՏ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասին եւ 98 հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիման վրա ՏՏ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասին եւ 98 հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր ճանաչել նաեւ ՏՏ ընտրական օրենսգրքի 35 հոդվածի 2-րդ կետի եւ 38 հոդվածի 3.1. կետի 1-ին եւ 2-րդ ենթակետերի այն դրույթները, որոնցով նախատեսվում է կենտրոնական եւ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների թափուր փեղերը լրացնել դատավորների թվից:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասի պահանջներին համապատասխան՝ անվավեր ճանաչված դրույթների կատարումն ապահոված այլ նորմատիվ ակտերը կամ դրանց համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

4. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրատարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

7 նոյեմբերի 2006 թվականի
ՍԴՈ-664

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻՆՆԵՐ ՍՈՖԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԵՎ ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 160 ՆՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱԳԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

16 նոյեմբերի 2006թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Նովհաննիսյանի (զեկուցող), Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող Ս. Գասպարյանի լիազոր ներկայացուցիչներ Ն. Նարությունյանի և Ն. Թովմասյանի, դիմող Ա. Զեյնալյանի, պարասխանող կողմի ներկայացուցիչ՝ ՆՆ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետի, 101 հոդվածի 6 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 25, 39 և 69 հոդվածների,

դռնբաց դատական նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Սոֆիկ Գասպարյանի և Արտակ Զեյնալյանի դիմումների հիման վրա՝ Նայասարանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160 հոդվածի 1-ին կետի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Սահմանադրական դատարանն իր՝ 04.08.2006թ. ՄԴԱՌ-43 աշխարակարգային որոշմամբ, հաշվի առնելով, որ «Քաղ. Ս. Գասպարյանի դիմումի հիման վրա՝ ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160 հոդվածի 1-ին կետի՝ ՆՆ Սահմանադրության 31 հոդվածին համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» և «Քաղ. Ա. Զեյնալյանի դիմումի հիման վրա՝ ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160 հոդվածի 1-ին կետի՝ ՆՆ Սահմանադրության 1-ին և 18 հոդվածներին համապարասխա-

նության հարցը որոշելու վերաբերյալ» գործերը վերաբերում են նույն հարցին, որոշել է նշված գործերը միավորել եւ քննել դատարանի նույն նիստում:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Ս. Գասպարյանի եւ Ա. Զեյնալյանի դիմումներն են սահմանադրական դատարան:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, կողմերի բացատրությունները, ուսումնասիրելով գործի նյութերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Յ.

1. Մ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը Մ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998թ. հունիսի 17-ին, Մ Նախագահի կողմից ստորագրվել է 1998թ. օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

2. Քաղ. Ս. Գասպարյանը դիմել է Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին արյանի դատարան՝ ընդդեմ Մ կապի նախարարության, Մ կառավարության, «Արմենպրեյ» Մ ՓԲԸ-ի՝ բնակարանի առուվաճառքը չեղյալ համարելու, գումարը փոխհատուցելու եւ սեփականաշնորհման օրինական իրավունքը վերադարձնելու պահանջներով:

Դատարանը որոշել է, որ «Մ քաղ. դատ. օր.-ի 91 հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով հայցադիմումի ընդունումը պետք է մերժել՝ դատարանի քննությանը ենթակա չլինելու պատճառով, քանի որ հայցվորը վիճարկում է Մ Կառավարության 1997թ. որոշումը, որով իբր իրենց բնակարանը վաճառվել է «Արմենպրեյ» Մ ՓԲԸ-ին, իսկ Մ քաղ. դատ. օր.-ի 160 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության համաձայն՝ դատարանի քննությանը ենթակա չեն այն ակտերն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումները, որոնց Նայասպանի Նանրապետության Սահմանադրության համապատասխանության հարցի որոշելը, սահմանադրական դատարանի բացառիկ իրավունքն է»:

Մ վճռաբեկ դատարանը 21.04.2006թ. Ս. Գասպարյանի դիմումի վերաբերյալ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին արյանի դատարանի որոշումը թողել է անփոփոխ, իսկ վճռաբեկ բողոքը՝ առանց բավարարման:

Մ քաղ. դատ. օր.-ի 160 հոդվածի 1-ին կետը սահմանում է. «1. Պեպական մարմինների, պեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու մասին դիմումը, գործերի ենթակայությանը համապատասխան, փրվում է քաղաքացիական գործեր քննող դատարան կամ փնտեսական դատարան:

Դատարանի քննությանը ենթակա չեն այն ակտերն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումները, որոնց՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշելը, սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է»:

Քաղ. Ս. Գասպարյանը գրնում է, որ Մ քաղ. դատ. օր.-ի 160 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունը հակասում է Մ Սահմանադրության 1 (1-ին մաս), 3, 5 (1-ին մաս), 6 (1-ին, 2-րդ, 6-րդ մասեր), 18, 19, 43 եւ 44 հոդվածների պահանջներին, քանի որ

Երկրորդ՝ քննության առարկա օրենքի նորմերի վերլուծությունը, ըստ պարասխանողի, վկայում է, որ գործադուլը՝ որպես աշխատողների կամ աշխատողների խմբի աշխատանքի ժամանակավոր դադարեցման ծայրահեղ գործողություն, իր իրավական կարգավորումն է ստացել լոկաուտի՝ իբրև գործադուլի կողմից համարժեք քայլի բացակայության պարագայում: Այդ իմաստով, որպեսզի նվազեցվեն գործադուլի վնասարար հետևանքները, հավասարակշռվեն գործադուլի եւ կոլեկտիվի շահերը, ինչպես նաև սահմանվեն դրա սոցիալական հիմնավորվածության չափանիշները, անհրաժեշտ է ներդաշնակեցնել աշխատողների, գործադուլի, պետության եւ երրորդ անձանց (հասարակության) շահերը:

Երրորդ՝ պարասխանող կողմը գրնում է, որ գործադուլի իրավունքը չի հանդիսանում բացարձակ իրավունք: Այն իր էությանը պահանջում է պետության կողմից կարգավորում եւ, բնականաբար, կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հարկապես այլ անձանց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների պաշտպանության առնչությամբ: Միաժամանակ, ՏՏ աշխատանքային օրենսգրքի 73 հոդվածով ամրագրված դեֆինիտիվ նորմն օժտված է ոչ նյութական բնույթով, բովանդակում է կազմակերպչական ու ընթացակարգային դրույթներ, որոնց օգնությամբ պետք է իրականացվի մասնագիտական կամ կոլեկտիվ շահերի (գործադուլի միջոցով) պաշտպանության եւ հասարակական շահերի պահպանման միջև անհրաժեշտ համաձայնության ապահովումը: Այս տրամաբանությամբ է օրենսդիրը կանոնակարգել գործադուլի իրավունքը միայն կոլեկտիվ պայմանագրի կնքման հետ կապված կոլեկտիվ վեճերը չլուծվելու պարագայում, ինչպես նաև արգելել է կոլեկտիվ պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում գործադուլ հայտարարելը (ՏՏ աշխատանքային օրենսգրքի 75 հոդված):

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՏՏ Սահմանադրությունն ամրագրելով գործադուլի իրավունքը, դրա իրականացման մի շարք երաշխիքներ է նախատեսել: Նախ՝ Սահմանադրության 32 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ աշխատողներն իրենց փնտեսական, սոցիալական եւ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք, որի իրականացման կարգը եւ սահմանափակումները սահմանվում են օրենքով:

Երկրորդ՝ Սահմանադրության 43 հոդվածի համաձայն՝ «Մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1 հոդվածներով, 32 հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները եւ ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պարվի եւ բարի համբավի պաշտպանության համար»: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումների դեմ լրացուցիչ եւ կարեւոր երաշխիք. այդ սահ-

մանավակումները չեն կարող գերազանցել Նայասպանի Նանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները:

Սահմանադրության 43 հոդվածի 1-ին մասում նաեւ անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարեւորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանավակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին եւ պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար:

6. Մի շարք միջազգային պայմանագրերով, մասնավորապես՝ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայով (6 հոդվածի 4-րդ կետ) եւ Տնփեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով (8 հոդված), Նայասպանի Նանրապետությունն սպանձնել է պարտավորություններ՝ երաշխավորելու մարդկանց գործադուլի իրավունքը եւ այդ իրավունքի հնարավոր սահմանավակումների հիմքում դնել միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը:

Սահմանադրական դապարանն արձանագրում է, որ գործադուլի իրավունքը, որպես կոլեկտիվ աշխատանքային վեճերի լուծման միջոց, որպես իրավական ինստիտուտ, ունի հանրային-իրավական բնույթ, քանի որ առնչվում է ոչ միայն «աշխատողներ - գործարու» իրավահարաբերություններին, այլև «աշխատողներ - երրորդ անձինք (հասարակություն)», «աշխատողներ - պետական մարմիններ», «գործարու - պետական մարմիններ» փոխհարաբերություններին: Միջազգային իրավական փաստաթղթերով այդ իրավունքի երաշխավորումն անմիջականորեն պայմանավորվում է աշխատավորական կոլեկտիվների ընդհանուր շահերի իրացումով: Մասնավորապես, Տնփեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի (16.12.1966թ.) 8 հոդվածում գործադուլի իրավունքի իրականացումը կապվում է արհեստակցական միությունների կազմավորման ու գործունեության երաշխավորման հետ: Նայասպանի Նանրապետության համար 2004թ. մարտի 1-ից ուժի մեջ մտած՝ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 2-րդ մասի 6 հոդվածը, որը վերնագրված է «Կոլեկտիվ գործարքների կնքման իրավունքը», սահմանում է, որ Կողմերը, կոլեկտիվ գործարքների կնքման իրավունքի արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով, շահերի բախման դեպքում ճանաչում են **աշխատողների եւ գործարուների համապեղ գործողությունների անցկացման իրավունքը՝ ներառյալ գործադուլների իրավունքը:** Միաժամանակ, նույն հոդվածում շեշտվում է, որ այդ իրավունքը ճանաչվում է այնպիսի պայմանով, երբ կողմերը կենթարկվեն նախօրոք կնքված կոլեկտիվ համաձայնագրերից բխող պարտավորություններին:

Նայասպանի Նանրապետությունն սպանձնելով նման պարտավորություն եւ նկատի ունենալով Խարտիայի հավելվածում Կոլեկտիվ գործադուլի վերաբերյալ արված պարզաբանումը, հիմք ընդունելով ՏՏ Սահմանադրության 43 հոդվածի 2-րդ մասի պահանջը,

գործադուլի իրավունքի ապահովման օրենսդրական կարգավորման ժամանակ հաշվի պեպք է առնի, որ.

ա) գործադուլի իրավունքի իրականացումը դիտարկվում է աշխատողների եւ գործատուների համապեղ գործողությունների անցկացման իրավունքի շրջանակներում եւ անմիջականորեն առնչվում է կոլեկտիվ աշխատանքային վեճերի առաջացման եւ դրանք կոլեկտիվ պայմանագրերի միջոցով լուծելու անհնարինության խնդրին,

բ) գործադուլի իրավունքը ճանաչվում է «...այն **պարտավորություններին ենթարկվելու պայմանով**, որոնք կարող են ծագել նախօրոք կնքված կոլեկտիվ համաձայնագրերից»,

գ) բացի բ) կետում նշված պայմանից եւ օրենքով նախատեսված այնպիսի սահմանափակումներից, որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում այլոց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության եւ հասարակական շահերի, ազգային անվտանգության, հասարակության առողջության եւ բարոյականության պաշտպանության համար (Խարտիայի 5-րդ մաս, հոդված «Է»), գործադուլի իրավունքի այլ սահմանափակումներ չեն կարող լինել, առավել եւս, եթե դրանք անհնարին են դարձնում նման պայմանի ու սահմանափակումների պայմաններում գործադուլի իրավունքի իրականացումը:

Այս տեսանկյունից, ՏՏ աշխատանքային օրենսգրքի 73 հոդվածը ոչ թե բացահայտում է գործադուլի հասկացության իրավական բովանդակությունը՝ այն կապելով գործադուլի սահմանադրական իրավունքի ապահովման հետ, այլ առաջին պլան է մղում եւ շեշտադրում կոլեկտիվ պայմանագրի կնքման հետ կապված կոլեկտիվ վեճը չլուծվելու հանգամանքը: Օրենսգրքի 73 հոդվածի փրամաբանությամբ՝ գործադուլը կարող է օրինական համարվել միայն կոլեկտիվ պայմանագրի կնքման հետ կապված կոլեկտիվ վեճը չլուծվելու, այսինքն՝ նախապայմանագրային վեճը չլուծվելու դեպքում: Իսկ կոլեկտիվ պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում գործադուլն արգելվում է, եթե նույնիսկ նոր վեճի առարկան դուրս է արդեն իսկ կնքված կոլեկտիվ պայմանագրի շրջանակներից: Նման ձեւակերպումն է, որ հիմք է հանդիսացել օրենսգրքի 60 հոդվածի 2-րդ մասով եւ 75 հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ գործադուլի իրավունքի սահմանափակումների համար:

7. ՏՏ աշխատանքային օրենսգրքի 60 եւ 75 հոդվածների բովանդակությունն այն է, որ կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամանակամիջոցում գործադուլ հայտարարելն արգելվում է: Դրան հակառակ, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 2-րդ մասի 6 հոդվածով Նայասպանի Նանրապետությունը պարտավորություն է սրանձնել շահերի բախման դեպքում առանց վերապահության ճանաչել գործադուլի իրավունքը՝ «...այն պարտավորություններին ենթարկվելու պայմանով, որոնք կարող են ծագել նախօրոք կնքված կոլեկտիվ համաձայնագրերից»: Այս առումով սահմանադրականության խնդիր է առաջանում օրենսգրքի 60 հոդվածի 2-րդ մասի վերջին պարբերության՝ «...իսկ գործադուլ կազմակերպելն արգելվում է» դրույթի եւ 75 հոդվածի 3-րդ մասի առնչությամբ: Այդ նորմերը չեն կարող արգելափակել գործադուլի իրավունքը, եթե նախօ-

րոք կնքված կոլեկտիվ պայմանագրի պարտավորությունները հարգվում են, իսկ վեճն առաջացել է ՏՏ աշխատանքային օրենսգրքով նախատեսված կոլեկտիվ պայմանագրի կարգավորման առարկայի շրջանակներում, սակայն այդ մասով այն նախապես երկկողմ համաձայնությամբ չի կարգավորվել: Նման պարագայում իրավակիրառական պրակտիկան պետք է հենվի ՏՏ Սահմանադրության 6 հոդվածի այն դրույթին, համաձայն որի՝ «... Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը»: Մյուս կողմից, ՏՏ Սահմանադրության միանշանակ պահանջն է, որ «Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Նայասպրանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները» (հոդվ. 43, մաս 2):

Ինչ վերաբերում է դիմող կողմի հարցադրումներին՝ կապված ՏՏ աշխատանքային օրենսգրքի 74 հոդվածի 1-ին մասի հետ, ապա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման մեխանիզմն անմիջական սահմանադրականության խնդիր չառաջացնելով հանդերձ, իրավակիրառական պրակտիկայում կարող է դժվարություններ առաջացնել գործադուլի իրավունքի իրացման առումով, եւ օրենսդրական բարելավման կարիք ունի:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպրանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպրանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68 հոդվածներով, Նայասպրանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Նայասպրանի Հանրապետության Սահմանադրության 32 հոդվածի 3-րդ մասին եւ 43 հոդվածին հակասող եւ անվավեր ճանաչել ՏՏ աշխատանքային օրենսգրքի 73 հոդվածում եւ 75 հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթները՝ այնքանով, որքանով գործադուլի իրավունքը պայմանավորում են միայն կոլեկտիվ պայմանագրի կնքման հետ կապված կոլեկտիվ վեճը չլուծվելու հանգամանքով եւ արգելափակում են գործադուլի իրավունքը նոր հանգամանքներում՝ նաեւ «...այն պարտավորություններին ենթարկվելու պայմանով, որոնք կարող են ծագել նախօրոք կնքված կոլեկտիվ համաձայնագրերից»:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով Նայասպրանի Հանրապետության Սահմանադրության 32 հոդվածի 3-րդ մասին եւ 43 հոդվածին հակասող եւ անվավեր ճանաչել նաեւ ՏՏ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված փյալ սկզբի 60 հոդվածի 2-րդ մասի վերջին պարբերության՝ «...իսկ գործադուլ կազմակերպելն արգելվում է» դրույթը:

3. Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

7 փետրվարի 2007 թվականի
ՍԴՈ-677

ՎԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՆԱՅԱՍՏԱՆԻ
ՎԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 35 ՆՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ
ԿԵՏԵՐԻ ՎԵՐՋԻՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, 49 ՆՈՂՎԱԾԻ
«Ե» ԿԵՏԻ, 112 ՆՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ԿԵՏԻ, 4-ՐԴ ԿԵՏԻ ՎԵՐՋԻՆ
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ 5-ՐԴ ԿԵՏԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ՝
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՎԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

16 փետրվարի 2007թ.

Նայաստանի Վանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարոյթունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Նովիաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող կողմի՝ Վանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Ն. Նախագահի օգնական Գ. Միերյանի, գործով որպես պապասխանող կողմ ներգրավված՝ Ն. Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ Ն. Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Նայաստանի Վանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Վանրապետության օրենքի 25, 38 եւ 68 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Ազգային ժողովի կանոնակարգ» Նայաստանի Վանրապետության օրենքի 35 հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի վերջին նախադասությունների, 49 հոդվածի «ե» կետի, 112 հոդվածի 2-րդ կետի, 4-րդ կետի վերջին նախադասության եւ 5-րդ կետի դրույթների՝ Ն. Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Վանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի բացատրությունները, հեղափոխելով օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքը ՆՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002 թվականի փետրվարի 20-ին, ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 12-ին, փոփոխվել եւ լրացվել է 2002թ. հուլիսի 3-ին, 2004թ. դեկտեմբերի 24-ին եւ 2006թ. դեկտեմբերի 25-ին:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքի 35 հոդվածի 3-րդ կետը սահմանում է. «Չորսօրյա նիստերի յուրաքանչյուր երեքշաբթի օրը՝ ժամը 17-ից, պատգամավորները, ըստ հերթագրման հաջորդականության, կարող են հանդես գալ մինչեւ 3 րոպե տեսողությամբ հայտարարություններով: Անհրաժեշտության դեպքում նիստը վարողը կարող է նիստը երկարաձգել մինչեւ 30 րոպեով: Նիստի տեսագրությունը հաջորդ օրը՝ ժամը 21.30-ին, ամբողջությամբ ցուցադրվում է Նանրային հեռուստարձևկերությամբ»: Օրենքի 35 հոդվածի 4-րդ կետը սահմանում է. «Ներթական նստաշրջանի չորսօրյա նիստերի յուրաքանչյուր չորեքշաբթի օրվա վերջին նիստում վարչապետը եւ Կառավարության անդամները, սույն օրենքի 105-րդ հոդվածով սահմանված կարգով, պատասխանում են պատգամավորների հարցերին: Նիստի տեսագրությունն ամբողջությամբ ցուցադրվում է Նանրային հեռուստարձևկերությամբ նույն օրը՝ պատգամավորների հայտարարությունների հետարձակումից անմիջապես հետո»:

Օրենքի 49 հոդվածը վերնագրված է «Ազգային ժողովի գործունեության կազմակերպման վերաբերյալ որոշումները»: Տվյալ հոդվածի «ե» կետի համաձայն Ազգային ժողովն իր գործունեության կազմակերպման հարցերի շրջանակներում կարող է որոշում ընդունել նաեւ՝ «Նանրային հեռուստառադիոընկերությամբ Ազգային ժողովի նիստի՝ ուղիղ եթերով կամ տեսագրությամբ (ձայնագրությամբ) հեռարձակելու մասին»:

Օրենքի 112 հոդվածի 2-րդ կետը սահմանում է. «Ազգային ժողովի դռնբաց նիստերը հեռարձակվում են Նանրային ռադիոընկերության ուղիղ եթերով, եթե Ազգային ժողովն այլ որոշում չի ընդունում»: Նույն հոդվածի 4-րդ կետի վերջին նախադասությամբ ամրագրված է. ««Խորհրդարանական շաբաթ» հեռուստահաղորդաշարը հեռարձակվում է Նանրային հեռուստատեսությամբ՝ կիրակի օրը՝ ժամը 21-ին»: Միաժամանակ, նույն հոդվածի 5-րդ կետով նախատեսվում է. «Սույն օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված նիստերի տեսագրությունների, ինչպես նաեւ Ազգային ժողովի նիստերի ուղիղ հեռարձակումների եւ Ազգային ժողովի որոշմամբ սահմանված դեպքերում Ազգային ժողովի նիստերի տեսագրությունների (ձայնագրությունների) արտադրությունն իրականացնում է Նանրային հեռուստառադիոընկերությունը»:

Վիճարկվող դրույթներից միայն օրենքի 112 հոդվածի 4-րդ կետն է ամբողջությամբ շարադրվել նոր խմբագրությամբ՝ 2004թ. դեկտեմբերի 24-ին ընդունված՝ ««Ազգա-

յին ժողովի կանոնակարգ» ՆՆ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՆ օրենքի 39 հոդվածի հիման վրա:

ՆՆ Սահմանադրության 27 հոդվածը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, սրանալու, փարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրագրամիջոցների եւ տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է:

Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի եւ հեռուստատեսության առկայությունը եւ գործունեությունը»:

Հոդվածի վերջին երկու մասերը ՆՆ Սահմանադրության մեջ ամրագրվեցին 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում:

Սահմանադրության 62 հոդվածը սահմանում է. «Նայասպանի Նանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը: Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ եւ 14-րդ կետերով, 57, 59-րդ հոդվածներով, սույն հոդվածի երկրորդ մասով, 66, 67, 69, 73, 74, 74.1, 75, 77, 79-րդ հոդվածներով, 80-րդ հոդվածի երկրորդ մասով, 81, 83, 83.1, 83.2, 83.3, 83.4, 84, 94.1-րդ հոդվածներով, 101-րդ հոդվածի 2-րդ կետով, 103, 111-րդ եւ 112-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում, ինչպես նաեւ իր գործունեության կազմակերպման հարցերով Ազգային ժողովն ընդունում է որոշումներ, որոնք ստորագրում եւ հրապարակում է Ազգային ժողովի նախագահը:

Ազգային ժողովն իր կանոնակարգ օրենքով նախատեսված կարգով կարող է ընդունել ուղերձներ եւ հայտարարություններ:

Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ:

Ազգային ժողովի գործունեության, նրա մարմինների ձեւավորման եւ գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ եւ Ազգային ժողովի կանոնակարգով»:

2. Դիմող կողմը գտնում է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՆ օրենքի 35 հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի վերջին նախադասությունների, 49 հոդվածի «ե» կետի, 112 հոդվածի 2-րդ կետի, 4-րդ կետի վերջին նախադասության եւ 5-րդ կետի դրույթները հակասում են ՆՆ Սահմանադրության 27 եւ 62 հոդվածներին՝ այն պարճառաբանությամբ, որ, նախ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՆ օրենքի 35, 49 եւ 112 հոդվածներով սահմանվող պարտականությունների պայմաններում չի երաշխավորվում Նանրային հեռուստառադիոընկերության՝ ՆՆ Սահմանադրությամբ ամրագրված լիարժեք անկախությունը: Ընդ որում, ՆՆ Սահմանադրությունը հստակեցնում է այն ոլորտները, որոնցում ռադիոյի եւ հեռուստատեսության անկախությունը եւ գործունեության ապահովումը պետության

կողմից երաշխավորված պեպք է լինի, դա վերաբերում է փեղեկարվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովմանը:

Երկրորդ՝ ՆՏ Սահմանադրության 62 հոդվածի համաձայն՝ ՆՏ Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են բացառապես Սահմանադրությամբ: Այդ իսկ պարճառով, Կանոնակարգի 49 հոդվածի «ե» կետով չի կարող նախադրվել ՆՏ Ազգային ժողովի լիազորություն՝ կայացնելու որոշում՝ պարտավորեցնելով Նանրային հեռուստառադիոընկերությանն ուղիղ եթերով կամ փոխադրությամբ հեռարձակելու ՆՏ Ազգային ժողովի նիստը: Նման որոշումը չի կարող պարտադիր բնույթ ունենալ, քանի որ ՆՏ Ազգային ժողովին՝ Նանրային հեռուստառադիոընկերության վերաբերյալ որեւէ որոշում կայացնելու իրավասություն ՆՏ Սահմանադրությունը չի նախատեսում: Բացի դրանից, ըստ դիմող կողմի՝ ՆՏ Սահմանադրության 62 հոդվածով հստակ սահմանված է կանոնակարգով կարգավորման ենթակա հարցերի շրջանակը: Մասնավորապես, կանոնակարգով կարող է սահմանվել ՆՏ Ազգային ժողովի գործունեության, նրա մարմինների ձեւավորման եւ գործունեության կարգը, որեւէ այլ հարաբերություն կանոնակարգով չի կարող կարգավորվել:

Երրորդ՝ դիմող կողմը փաստում է, որ գործադիր իշխանության մարմինների իրավական ակտերով եւս չեն նախադրվում պարտականություններ Նանրային հեռուստառադիոընկերության համար: Մասնավորապես, ՆՏ Նախագահի 2002թ. մարտի 13-ի «ՆՏ կառավարության գործունեության կարգը սահմանելու մասին» ՆՏ-1064 հրամանագրում որեւէ դրույթ չկա Նանրային հեռուստառադիոընկերության մասին: Կանոնակարգով նախադրված Նանրային հեռուստառադիոընկերության վերաբերյալ դրույթներն անհավասար պայմաններ են ստեղծում օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների համար:

Չորրորդ՝ ըստ դիմողի, Կանոնակարգի 35 հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի վերջին նախադրությունները չեն բխում ՆՏ Ազգային ժողովին ՆՏ Սահմանադրության 62 հոդվածով վերապահված լիազորություններից, բացի դրանից, օրենքով սահմանվում են վարքագծի համապարտադիր բնույթի կանոններ, իսկ Կանոնակարգի նշված հոդվածով սահմանվել է Նանրային հեռուստառադիոընկերության համար պարտավորություն, որը փոխադարձ համաձայնությունների շրջանակում կարգավորման ենթակա հարց է:

Չինգերորդ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքով Նանրային հեռուստառադիոընկերության համար պարտականություններ սահմանելը չի բխում նաեւ միջազգային իրավական փաստաթղթերի՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին 1966թ. միջազգային դաշնագրի պահանջներից:

Ըստ դիմող կողմի՝ Նանրային հեռուստառադիոընկերության անկախության կարեւորագույն փարրերից է խմբագրական անկախությունը, այն է՝ հեռուստառադիոընկերության ծրագրային քաղաքականության, հաղորդագանկի կազմման, հաղորդումների ուղղվածության որոշման գործընթացներում ինքնուրույնությունն ու ազատությունը, ինչպես նաեւ այդ գործընթացների վրա պեպական եւ քաղաքական իշխանությունների ազդեցության բացառումը: Նանրային հեռուստառադիոընկերությունների անկախության

հիշյալ կարեւորագոյն սկզբունքները երաշխավորված են միջազգային այնպիսի իրավական փաստաթղթերով, ինչպիսիք են՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան (10-րդ հոդված), Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1982թ. ապրիլի 29-ի՝ Արքայապալելու եւ փրկելու կարվարքի ազատության հռչակագիրը, Նախարարների կոմիտեի՝ Նանրային հեռարձակման անկախության երաշխիքների վերաբերյալ թիվ R (96) 10 հանձնարարականը, ԵԽՏՎ-ի 1641 (2004) 1 հանձնարարականը:

3. Պատասխանող կողմը գտնում է, որ, նախ՝ ՆՏ սահմանադրական փոփոխությունները փվյալ ոլորտում իրոք օրենսդրական փոփոխությունների խնդիր են առաջացրել: ՆՏ Ազգային ժողովում աշխատանքներ են փարվում «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքի դրույթները եւ հանրային հեռահաղորդակցության ոլորտի իրավական կարգավորման հարցերը սահմանադրական փոփոխություններին եւ ՆՏ միջազգային պարավորություններին համապատասխանեցնելու համար:

Երկրորդ՝ պատասխանող կողմը գտնում է, որ Ազգային ժողովի գործունեության լայն հրապարակայնության ապահովումը ժողովրդավարական ձեռքբերում է եւ այդ ավանդույթից պէտք չէ հրաժարվել: Խնդրո առարկա հարցերի առնչությամբ կարարված ուսումնասիրությունները վկայում են, որ Եվրոպական խորհրդարանի եւ մի շարք պետությունների խորհրդարանների աշխատանքները լուսաբանվում կամ հեռարձակվում են հավարարմագրված գանգվածային լրարվության միջոցների կողմից կամ խորհրդարաններն ունեն սեփական հեռուստառադիոալիքներ կամ ինտերնետ կայքեր, որոնց միջոցով հեռարձակումը կարող է լինել ուղիղ կամ փեսագրված:

Երրորդ՝ պատասխանող կողմն ընդգծում է նաեւ, որ հիմնականում պետությունների խորհրդարաններն օրենսդրոբեն չեն սահմանում իրենց նիստերի հեռարձակման կոնկրետ օրն ու ժամը, սակայն կարող են որոշում ընդունել նիստերը հեռարձակելու ժամանակի եւ ծավալի վերաբերյալ: Այնուամենայնիվ, շար պետություններում խորհրդարանի աշխատանքների հեռարձակման միտումը պայմանավորված է նրանով, որ խորհրդարանը, լինելով ներկայացուցչական մարմին, ձեւավորում է պետության իրավական դաշտը, հետեւաբար, նրա գործունեությունը պէտք է լինի առավել հրապարակային եւ թափանցիկ: Իսկ հանրության հետ ամենագործուն կապը հեռուստափեսությունն է:

Չորրորդ՝ ՆՏ Սահմանադրության 27 հոդվածի 3-րդ մասով երաշխավորված է լրարվամիջոցների եւ փրկելակարվական այլ միջոցների ազատությունը, որը հանդիսանում է իրավական պետության եւ քաղաքացիական հասարակության կարեւոր փարրերից մեկը: Բնականաբար, այն կոչված է մեծապես նպաստելու հասարակության եւ անհարի՝ հարկապես պետական իշխանության մարմինների գործունեության լուսաբանման մասով, փրկելակարված լինելուն: Ըստ պատասխանողի՝ այսփրեղ խոսքը չի կարող վերաբերել փվյալ լրարվամիջոցի կամ սուբյեկտի բացարձակ ազատությանը, հակառակ պարագայում այն կբախվի այլ անձանց նույնարովանդակ անսահմանափակ ազատություններին, ինչը կհանգեցնի փարրեր սուբյեկտների միջեւ շահերի բախման եւ կոնֆլիկտային իրավիճակի անխուսափելիության: Խնդրո առարկա լրարվամիջոցի ազատությունը ենթադրում

է, որ պետությունը պարտավոր է ապահովել օպտիմալ հարաբերակցություն թույլագրելի վարքագծի եւ հնարավոր վարքագծի սահմանների միջեւ:

Տինգերորդ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի վիճարկվող դրույթները բովանդակում են Նանրային հեռուստառադիոընկերության օգնությամբ հանրության՝ պեղեկություններ եւ գաղափարներ սրանալու իրավունքը, ինչը նույնպես չի հանդիսանում բացարձակ իրավունք: Եվ այն նույնպես կարող է ենթարկվել սահմանափակումների Սահմանադրության 43 հոդվածում ամրագրված նպատակների իրագործման կապակցությամբ: Պապասխանող կողմի կարծիքով, Սահմանադրության 27 հոդվածի 3-րդ մասով երաշխավորված լրատվամիջոցների եւ պեղեկավարական այլ միջոցների ազատության իրավունքի օրենքով սահմանափակումն առավելապես զուգակցվում է խորհրդարանական աշխատանքների լուսաբանման մասին պաշտոնական պեղեկավարություն սրանալու յուրաքանչյուր անձի իրավունքի իրականացման հետ:

Վեցերորդ՝ պապասխանող կողմը գրնում է, որ չնայած այն հանգամանքին, որ Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 1996 թվականի սեպտեմբերի 11-ին ընդունված՝ Նանրային հեռարձակման անկախության երաշխիքների վերաբերյալ R (96) 10 հանձնարարականով նշվել է, որ հանրային հեռահաղորդակցության կազմակերպությունների խմբագրական անկախության երաշխավորման համար մասնակից պետությունները պետք է ստեղծեն հստակ պայմաններ, այնուամենայնիվ, նույն հանձնարարականի առանձին դրույթների բովանդակությունից հետեւում է, որ օրենքով սահմանված դեպքերի համար չի բացառվում հանրային հեռարձակողների ծրագրային գործառնությունների փոփոխում, այդ թվում՝ նաեւ պետական մարմինների հսկողության ներքո (հանձնարարականի հավելվածի I բաժին): Դեռ ավելին, հանձնարարականի հավելվածի VI բաժնով նախատեսվում է այնպիսի իրավիճակի գոյությունը, «... երբ հանրային հեռարձակող կազմակերպությունները կարող են պարտավորված լինել եթեր հեռարձակել պաշտոնական լուրեր, հայտարարություններ կամ հաղորդումներ, կամ լուսաբանել հանրային իշխանությունների գործողությունները կամ որոշումները, կամ փրամադրել եթերաժամ այդ մարմիններին...»: Վերջապահ հանձնարարականով առաջարկվում է, որ նման դեպքերը պետք է սահմանափակվեն բացառիկ հանգամանքներով, լինեն որոշակիորեն սահմանված օրենքով կամ այլ իրավական ակտերով:

Յոթերորդ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՎՍ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի վերջին նախադասություններով ամրագրված դրույթների սահմանադրականության հարցի կապակցությամբ ներկայացված իրավական դիրքորոշման առնչությամբ, ըստ պապասխանողի, ՎՍ Սահմանադրության վկայակոչված 62 հոդվածը չի պարունակում իրավանորմ, որը բացառում է կանոնակարգ օրենքով ՎՍ Ազգային ժողովի լիազորությունների իրականացմանն առնչվող այլ հարաբերությունների կարգավորման հնարավորություն, դեռ ավելին, նույն ՎՍ Սահմանադրության 67 եւ 76 հոդվածները նույնպես նախատեսում են իրավահարաբերություններ, որոնց մանրամասն կարգավորումը պարտվիրակվում է կանոնակարգ օրենքին:

4. Քննության առնվող հարցի առնչությամբ սահմանադրական դատարանը փաստում է, որ ՎՍ Սահմանադրության 27 հոդվածը, մի կողմից, երաշխավորում է յուրա-

քանցյուրի համար կարծիքի ազատ արտահայտման, խոսքի ազատության (ներառյալ տեղեկատվության ցանկացած միջոցով տեղեկություններ և գաղափարներ փոխադրելու, սրանալու, փարսածելու ազատության) իրավունքը, մյուս կողմից՝ կարելու է լրավամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը՝ որպես հիշյալ իրավունքների ապահովման երաշխիք: Այս ենթատեքստում առանձնակի շեշտվում է, որ «Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը»:

Չանգվածային լրավամիջոցի անկախությունը, մասնավորապես, ենթադրում է ծրագրային քաղաքականության, հաղորդագրանկի կազմման, հաղորդումների ուղղվածության որոշման գործընթացներում ինքնուրույնություն ու ազատություն, այդ գործընթացների վրա իշխանությունների որևէ ազդեցության բացառում: Այդ նկատառումներից ելնելով էր նաև, որ ՏՏ սահմանադրական փոփոխություններով հեռարձակվող լրավամիջոցների գործունեության կարգավորումը ՏՏ միջազգային պարավորությունների շրջանակներում ճանաչվեց որպես սահմանադրաիրավական գործառույթ և Սահմանադրության 83.2. հոդվածով նախատեսվեց. «Նեռարձակվող լրավայության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովման նպատակներից ելնելով՝ օրենքով ստեղծվում է անկախ կարգավորող մարմին...»:

Ինչպես ՏՏ Սահմանադրության 27 հոդվածի դրույթները, այնպես էլ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Հանրային հեռարձակման անկախության երաշխիքների վերաբերյալ թիվ R (96) 10 հանձնարարականը տեղեկատվության ազատության և հանրային հեռարձակման անկախության ապահովման խնդիրների լուծումը տեսնում են օրգանական կապի մեջ: Եվրախորհրդի Նախարարների կոմիտեն հիշյալ փաստաթղթում, մասնավորապես, շեշտելով մամուլի ազատության հիմնարար սկզբունքի կարևորությունը ժողովրդավարական հասարակությունում, առաջարկում է Եվրախորհրդի անդամ երկրներին օրենսդրությամբ երաշխավորել հանրային հեռարձակումների անկախությունը, որը ենթադրում է ծրագրային, խմբագրական ու կառուցակարգային ինքնուրույնություն: Միաժամանակ, Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R (96) 10 հանձնարարականի բացատրական հուշագրի նախաբանի 3-րդ մասում շեշտվում է, որ հանրային հեռարձակման կազմակերպումը փարբերվում է պետական նախափայերից հենց նրանով, որ այն իրականացվում է անկախ և առանց իշխանության մարմինների որևէ միջամտության: Այդ հաղորդումները կազմակերպող մարմինների անկախության երաշխավորումը դիտարկվում է որպես հիմնարար սկզբունք: Շեշտվում է նաև, որ նույնիսկ պետական ֆինանսավորումը չի կարող միջոց դառնալ այդ մարմինների խմբագրական անկախության կամ կառուցակարգային ինքնուրույնության վրա ուղղակի կամ անուղղակի ճնշում գործադրելու համար (Հանձնարարականի 5-րդ մաս): Հանրային հեռարձակման անկախությունը նշված Հանձնարարականով ճանաչելով որպես հիմնարար սկզբունք, պահանջ է առաջադրվում, որ այն պետք է գերծ լինի տնտեսական, քաղաքական կամ վարչական ներազդեցությունից և ծառայի ողջ հանրությանը:

Տվյալ ոլորտի իրավական կանոնակարգման համար սկզբունքային նշանակություն ունի Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 1641 (2004) 1 հանձնարարականում ամրագրված այն դիրքորոշումը, համաձայն որի՝ հանրային լրատվության հեռարձակումը պետք է փարբերել առեւտրային կամ քաղաքական նպատակներ հեփապնդող լրատվության հեռարձակումից, քանի որ հանրային լրատվության գլխավոր նպատակը գաղափարներ եւ րեղեկություններ փնտրելու, սրանալու եւ րարաժելու ազատության անկողմնակալ ապահովումն է ողջ հանրության համար, որով եւ պայմանավորվաժ է նման լրատվության անկախության անհրաժեշտությունը:

Նայասրանի Նանրապետությունը, 2000թ. դեկտեմբերին վավերացնելով Եվրախորհրդի կանոնադրությունը, պարտավորվել է առաջնորդվել վերջինիս դրույթներով, հաշվի առնել Նախարարների կոմիտեի եւ Խորհրդարանական վեհաժողովի հանձնարարականները եւ անհրաժեշտ նախադրյալներ սրեղժել դրանց իրականացման համար:

5. Նայասրանի Նանրապետությունում հանրային հեռուստարտության իրավական կարգավիճակը սահմանվաժ է «Նեռուստարտության եւ ռաղիոյ մասին» ՆՆ օրենքի 28 հոդվաժով, որում, մասնավորապես, ամրագրվաժ է, որ «Նանրային հեռուստառաղիոնկերությունը հափուկ կարգավիճակ ունեցող պետական հիմնարկ է, որի իրավական վիճակի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով: Նանրային հեռուստառաղիոնկերությունն սրեղժում է պետությունը՝ ապահովելու համար մարդու սահմանադրական իրավունքը, այսինքն՝ ազատորեն սրանալ քաղաքական, րնտեսական, կրթական, մշակութային, մանկապարանեկան, գիտալուսավորչական, հայոց լեզվի եւ պատմության, մարզական, զվարճալի եւ հանրության համար կարեւոր ու նշանակալից այլ րեղեկատվություն, եւ գորժում է սույն օրենքին, իր կանոնակարգին եւ Նայասրանի Նանրապետության օրենսդրությանը համապատասխան»: Միանշանակ է, որ որպես հիմնական նպատակ է դիտվում մարդու՝ ազատորեն րեղեկատվություն սրանալու իրավունքը, իսկ միջոցը՝ հափուկ կարգավիճակ ունեցող հեռուստառաղիոնկերության առկայությունն է: Այսուհանդերժ, րվյալ օրենքն ընդունվել է 2000թ. հոկտեմբերի 9-ին եւ դրա դրույթները դեռեւս ՆՆ Ազգային ժողովի կողմից չեն համապատասխանեցվել ՆՆ սահմանադրական փոփոխությունների նոր պահանջներին: Այդ պահանջներին չեն համապատասխանեցվել նաեւ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՆ օրենքի 35 հոդվաժի 3-րդ եւ 4-րդ կետերի վերջին նախադասություններով, 49 հոդվաժի «ե» կետով, 112 հոդվաժի 2-րդ - կետով, 4-րդ կետի վերջին նախադասությամբ եւ 5-րդ կետով նախարեւավաժ դրույթները, որոնցով չեն երաշխավորվում սահմանադրաիրավական անկախ կարգավիճակ սրացաժ մարմնի՝ Նանրային հեռուստառաղիոնկերության, գորժառնական անկախությունը եւ կառուցակարգային ինքնուրույնությունը: Ազգային ժողովը ցանկացաժ որոշում կարող է ընդունել իր նիստերի կամ առանձին հարցերի քննարկման հեռարձակման անհրաժեշտության մասին: Սակայն վիճարկվող դրույթների սահմանադրականության խնդիրը կապվաժ է ոչ թե իրավակարգավորման առարկայի հանրային նշանակության կամ հեռարձակման նպատակահարմարության հարցի հետ, որի կարեւորությունը չի վիճարկվում, այլ րարբեր սուրյեկրների միջեւ իրավահարաբերությունների կանոնակարգման իրավաչափության հետ: Փաստորեն, օրենքի վիճարկվող դրույթները, մասնավորապես, օ-

րենքի 49 հոդվածի «ե» կետի իրավական բովանդակության շրջանակներում, ՆՏ Ազգային ժողովի գործունեության կազմակերպման առարկա են դարձրել նաև այլ մարմինների հետ փոխհարաբերությունների միակողմանի իրավակարգավորման հարցը կամ ստեղծում են դրանց գործունեությանը միջամտելու հնարավորություն, որը չի բխում ՆՏ Սահմանադրության 27 եւ 62 հոդվածների պահանջներից: Ելակետն այն է, որ փվյալ դեպքում օրենսդիրն օրենքի նորմի միջոցով մեկնաբանել է Սահմանադրության 62 հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ «իր գործունեության կազմակերպման հարցերով» հասկացության բովանդակությունը: Դիտարկելով այս մեկնաբանությունը Սահմանադրության 5 հոդվածի, 6 հոդվածի 2-րդ մասի, 62 հոդվածի ողջ բովանդակության իմաստով, հարկ է նկատել, որ մեկնաբանությունը ոչ իրավաչափ է, քանի որ այլ մարմինների հետ իրավահարաբերությունների շրջանակներում Ազգային ժողովի՝ որոշումներ ընդունելու լիազորությունն սպառիչ կերպով սահմանված է Սահմանադրությամբ: «Իր գործունեության կազմակերպման հարցերով» բառակապակցությունը փվյալ դեպքում չի կարող եւ պետք չէ ներառի Նանրային հեռուստառադիոընկերության համար պարտականություն սահմանելու հնարավորություն (Կանոնակարգի 49 հոդվածի «ե» կետ) կամ Նանրային ռադիոընկերությանն օրենքով սահմանված պարտականությունից ազատելու հնարավորություն (Կանոնակարգի 112 հոդվածի 2-րդ կետ):

6. Քննության առարկա հարցի շրջանակներում ՆՏ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ օրենսդիր մարմինն առանձնահատուկ դեր ունի յուրաքանչյուր երկրի ժողովրդավարական զարգացման համար: Պառլամենտարիզմի մշակույթը քաղաքակիրթ բազմակարծության եւ երկխոսության մշակույթ է: Այն առաջին հերթին դրսևորվում է ժողովրդի կողմից իր իշխանությունը ներկայացուցչական մարմինների միջոցով իրականացնելիս: Նասարակական հարաբերությունների կանոնակարգման նկատմամբ դրսևորվող մտպեցումները եւ օրենսդիր մարմնի վերահսկողական լիազորությունների թափանցիկ ու հրապարակային իրականացումը քաղաքացիական հասարակության ձեւավորման կարևորագույն երաշխիքներից են: Մյուս կողմից՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր փարբեր վճիռներում բազմիցս ընդգծել է այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ ժողովրդավարական համակարգերում իշխանությունների գործունեությունը պետք է ենթարկվի նաև հասարակական կարծիքի ուշադիր վերահսկողությանը: Նայասփանի Նանրապետությունում վերջին 15 փարիների ընթացքում ձեւավորվել է նաև այնպիսի կայուն ավանդույթ, որ օրենսդիր մարմնի գործունեությունը եղել է առավել թափանցիկ ու հասու հանրության բոլոր շերտերին: Իր հերթին, Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R (96) 10 հանձնարարականը կարևորելով հանրային հեռարձակման անկախությունը, միաժամանակ բացափրական հուշագրի թիվ 21 ուղղորդիչ ցուցումով նախատեսում է, որ հանրային հեռարձակման խնդիրն է նաև ապահովել քաղաքական բազմակարծությունը՝ խորհրդարանական փոքրամասնությանը, փարբեր քաղաքական ուժերին իրենց փեսակետը ներկայացնելու համար փրամադրելով եթերաժամ:

ՆՏ Ազգային ժողովի, նրա մարմինների ու առանձին պարգամավորների գործունեության լայն հրապարակայնության երաշխավորումը, այդ թվում ներկայումս գոյություն ունեցող եւ ավանդույթ դարձած ձեւերի շրջանակներում, բխում է իրավական, ժողովրդա-

վարական պետության սահմանադրական սկզբունքներից եւ պետք է ապահովված լինի օրենսդրական ու կազմակերպչական անհրաժեշտ հիմքերով: Միաժամանակ, այդ հիմքերը պետք է լինեն իրավաչափ, բխեն իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սահմանադրական սկզբունքի պահանջներից, չխախտեն սահմանադրական ինստիտուտների գործառնական ու կառուցակարգային անկախության պահանջները: Այդ հարցի առնչությամբ ՏՏ սահմանադրական դատարանն իր իրավական դիրքորոշումն արտահայտել է 11.01.2001թ. ՄԴՌ-278 որոշմամբ: Դրա հետք մեկտեղ, ՏՏ սահմանադրական փոփոխությունները նոր պահանջներ առաջադրեցին լրարվամիջոցների ազատության ու անկախ գործունեության երաշխավորման համար: Վերջինիս ապահովումը ՏՏ Ազգային ժողովի առջեւ, մասնավորապես, խնդիր է դնում փոխկապվածության մեջ վերանայել եւ Սահմանադրության պահանջներին համապատասխանեցնել 2000թ. հոկտեմբերի 9-ին ընդունված՝ «Նեռուսարտետության եւ ռադիոյի մասին», 2003թ. դեկտեմբերի 13-ին ընդունված՝ «Զանգվածային լրարվության մասին» օրենքների, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՏՏ օրենքի, ինչպես նաեւ փյալ խնդրին առնչվող այլ օրենքների համապատասխան դրույթները: Վիշյալ օրենքների դրույթների համեմատական վերլուծությունը վկայում է, որ ՏՏ միջազգային պարտավորություններին համապատասխան Նանրային հեռուստառադիոընկերություն ստեղծելու իրավական երաշխիքները դեռեւս լիարժեք ու ամբողջական չեն: Խնդիրը շտապ համակարգային լուծում է պահանջում, եւ հիմնախնդրին առնչվող որեւէ օրենքի այս կամ այն դրույթի սահմանադրականության գնահատմամբ հարցն ամբողջությամբ չի սպառվում: Մասնավորապես, քննության առարկայի առնչությամբ միջազգային պրակտիկան վկայում է, որ հարցի սկզբունքային լուծման բանաձեւն օրենսդիր մարմնի գործունեության առավելագույն հրապարակայնության ապահովումն է՝ լրարվամիջոցների, այդ թվում հանրային, գործառնական ու կառուցակարգային անկախության երաշխավորման պայմաններում: Ինչ վերաբերում է իրավաչափ ձեւի ընտրությանը, ապա դա օրենսդիր մարմնի խնդիրն է: Բոլոր դեպքերում, միջազգային պրակտիկայում առկա ցանկացած ձեւի ընտրության պարագայում, պետք է իրավական երաշխիքներ ստեղծվեն, որպեսզի հանրային հեռարձակման պրակտիկայում օրենսդիր մարմնի գործունեության լայն հրապարակայնության եւ քաղաքական բազմակարծության ապահովումը չվրանգվեն: Տվյալ խնդրի լուծման ժամանակ, ելնելով նաեւ ՏՏ միջազգային պարտավորություններից, ՏՏ Ազգային ժողովն առաջին հերթին պետք է առաջնորդվի ՏՏ Սահմանադրության 27, 83.2 հոդվածների, ինչպես նաեւ Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R (96) 10 հանձնարարականի, դրա բացատրական հուշագրի, Խորհրդարանական վեհաժողովի՝ Նանրային հեռարձակում թիվ 1641 (2004) 1 հանձնարարականի դրույթներով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 68 հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՆՏ Սահմանադրության 27 հոդվածի 3-րդ և 4-րդ մասերին հակասող և անվավեր ճանաչել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքի 35 հոդվածի 3-րդ և 4-րդ - կետերի վերջին նախադասություններում, 112 հոդվածի 2-րդ կետով, 4-րդ կետի վերջին նախադասությամբ և 5-րդ կետով նախադասված դրույթները:

2. ՆՏ Սահմանադրության 62 հոդվածին հակասող և անվավեր ճանաչել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքի 49 հոդվածի «ե» կետով նախադասված դրույթը:

3. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳ-ԱՆՈՂ**Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ***16 փետրվարի 2007 թվականի**ՍԴՈ-678*

ՆԱԼՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԼՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԼՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՆԱԿՈՒԲ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ, ՎԱԶԱԳԱՆ
ԽԱԶԱՏՐՅԱՆԻ, ԼԵՆԱ ՆԱԽՆԱԶԱՐՅԱՆԻ, ԹԱՄԱՐԱ
ՄԿՐՏՉՅԱՆԻ, «ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ» ԱԶ-Ի, ԱՐՏԱԿ ԲԱԴԱԼՅԱՆԻ,
ՄԱՐԻԵՏԱ ՆԱԽՎԵՐԴՅԱՆԻ ԵՎ ՍԱՄՎԵԼ ՂԱՐԻԲՅԱՆԻ, ՄԱՅԻՍ
ՎԱՆՐԱԴՅԱՆԻ, ՄՊԱՐՏԱԿ ԶԱՔԱՐՅԱՆԻ, ՌՈԶԱ ՄԻՆԱՍՅԱՆԻ,
ԲՈՐԻՍ ՎԱՆՅԱՆԻ, ՎԵՐՍԱՆԴԻԿ ՆԱԿՈՒԲՅԱՆԻ ԵՎ ՆԵՂԻՆԵ
ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻ, ՇԱՄԻՐ ՄԱՐԴԱՆՅԱՆԻ, «ՎԱՐԴԱՆ ՍԵՐԳՈ»
ՍՊԸ-Ի, ՇՈՂԻԿ ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆԻ, ԳԵՂԵՑԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ,
ՄԻՍԱԿ ՊՈՂԻԿՅԱՆԻ, ԽԱԶԻԿ ՆԱԶՅԱՆԻ, ՍՈՒՍԱՆՆԱ ՂԱՐԱՄ-
ՅԱՆԻ, ԺԵՆՅԱ ՆԱՄԱԲԱՐՉՈՒՄՅԱՆԻ, ԱՐՈՒՍՅԱԿ ՓԱՅՏՅԱՆԻ,
ԲԱԼԳԻԶԱՐ ՄԱՆՄԵԴՈՎԱՅԻ, ՄԱՆՎԵԼ ԵՎ ՍՎԵՏԼԱՆԱ
ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆՆԵՐԻ, ԴԱՎԻԹ, ՆՈՐԱՅՐ, ԿԱՐԻՆԵ ԵՎ
ԱՐԹՈՒՐ ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆՆԵՐԻ, ՄԱՅՐԱՆՈՒՇ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ,
ԱՐՏՈ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ ՆՃ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 230
ՆՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ, 231.1., 231.2. ՆՈԴՎԱԾՆԵՐԻ
ԴՐՈՒՅԹՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԼՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

9 ապրիլի 2007թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դապարանը՝ կազմով.
Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Նով-
հաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապայանի, Վ. Պողոսյա-
նի,

մասնակցությամբ՝

դիմողների եւ նրանց ներկայացուցիչներ Վ. Մաֆարյանի, Վ. Խաչատրյանի, Լ. Նախնազարյանի, Ռ. Տեր-Վարդանյանի, Ժ. Նարոթյունյանի, Կ. Գրիգորյանի, Ս. Վահրադյանի, Ս. Զաքարյանի, Ռ. Մինասյանի, Բ. Վանյանի, Ա. Զոհրաբյանի, Կ. Մեժլումյանի, Շ. Մարդանյանի, Ն. Գալյանի, Շ. Նովհաննիսյանի, Ս. Մաֆարյանի, Բ. Մահմեդովայի,

գործով որպէս պարասխանող կողմ ներգրավված՝ ՆՃ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՃ արդարադատության նախարարի պաշտոնակատար Դ. Նարոթյունյանի,

«Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 46 հոդվածի համաձայն՝ սահմանադրական դատարանում ՆՃ վճռաբեկ դատարանի եւ ՆՃ գլխավոր դատախազի ներկայացուցիչներ Ա. Մկրտչյանի, Վ. Ռշտունու եւ Ն. Ենգոյանի,

համաձայն ՆՃ Սահմանադրության 100 հոդվածի 1 կէտի եւ 101 հոդվածի 6 կէտի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Նակոբ Դանիելյանի, Վաչագան Խաչատրյանի, Լենա Նախնազարյանի, Թամարա Մկրտչյանի, «Կարեն Ղազարյան» ԱԶ-ի, Արփակ Բաղալյանի, Մարիեպա Նախվերդյանի եւ Սամվել Ղարիբջանի, Մայիս Վահրադյանի, Սպարտակ Զաքարյանի, Ռոզա Մինասյանի, Բորիս Վանյանի, Վերսանդիկ Նակոբյանի եւ Նեղինե Ամիրխանյանի, Շամիր Մարդանյանի, «Վարդան Սերգո» ՄՊԸ-ի, Շողիկ Նովհաննիսյանի, Գեղեցիկ Առաքելյանի, Միսակ Պողիկյանի, Խաչիկ Նաջյանի, Սուսաննա Ղարամյանի, Ժենյա Նամբարձումյանի, Արուսյակ Փայրյանի, Բալգիզար Մահմեդովայի, Մանվել եւ Սվետլանա Նովհաննիսյանների, Դավիթ, Նորայր, Կարինե եւ Արթուր Նովհաննիսյանների, Մայրանուշ Սրեփանյանի, Արփո Ալավերդյանի դիմումների հիման վրա՝ ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կէտի, 231.1., 231.2. հոդվածների դրույթների՝ ՆՃ Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը վերոհիշյալ քաղաքացիների դիմումներն են սահմանադրական դատարան, որոնց հիման վրա, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 39 հոդվածով, մինչեւ դատաքննությունն սկսվելը գործերը միավորվել են դատարանի նույն նիստում քննվելու համար:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պարասխանող կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, սահմանադրական դատարանում ՆՃ վճռաբեկ դատարանի ներկայացուցիչ Ա. Մկրտչյանի պարզաբանումները, հեղազոտելով ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՆՃ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, Նայասարանի Նանրապետության Նախա-

գահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքը կոչված է կարգավորելու ՏՏ դատարաններում քաղաքացիական գործերով դատավարության կարգը եւ երաշխավորելու ՏՏ Սահմանադրությամբ, օրենքներով եւ իրավական այլ ակտերով նախատեսված՝ անձանց իրավունքների, ազատությունների եւ օրինական շահերի դատական պաշտպանությունը:

ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի վիճարկվող դրույթները փոփոխվել, իսկ 231.1. եւ 231.2. հոդվածները, որպես օրենսգրքի լրացումներ, ընդունվել են ՏՏ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի հուլիսի 7-ին՝ ՏՕ-153-Ն օրենքով:

Դիմողները սահմանադրական դատարան են ներկայացրել ՏՏ վճռաբեկ դատարանի՝ վերջնական դատական ակտեր հանդիսացող որոշումներ, որոնցով սույն գործով դիմողների նկատմամբ կիրառվել են ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230, 231.1. եւ 231.2. հոդվածների դրույթները, եւ վիճարկում են այդ դրույթների սահմանադրականությունը:

Սույն գործը սահմանադրական դատարանում քննության ընդունելուց հետո, ՏՏ - քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. եւ 231.2. հոդվածները փոփոխվել եւ լրացվել են ՏՏ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի փետրվարի 21-ին ընդունված ՏՕ-98-Ն օրենքով: Նկատի ունենալով, որ օրենսգրքի հիշյալ հոդվածների փոփոխված եւ լրացված նորմերը վեճի առարկա նորմերի իրավական բովանդակությունը չեն փոխել, եւ այդ փոփոխությունների սահմանադրականությունը սույն գործով վեճի առարկա չէ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 26, 63 եւ 69 հոդվածների պահանջները, սահմանադրական դատարանը փոփոխությունների սահմանադրականության խնդրին չի անդրադարձել:

2. ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածը (2006թ. հուլիսի 7-ի փոփոխություններով) սահմանում է.

«Նոդված 230. Վճռաբեկ բողոքի բովանդակությունը

1. Վճռաբեկ բողոքում պետք է նշվեն՝

1) դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը.

2) բողոք բերող անձի անունը (անվանումը).

3) վճիռ կայացրած դատարանի անվանումը, գործի համարը, վճռի կայացման փարին, ամիսը, ամսաթիվը, գործին մասնակցող անձանց անունները (անվանումները), վեճի առարկան.

4) բողոք բերած անձի պահանջը՝ օրենքների, այլ իրավական ակտերի վկայակոչմամբ եւ նշում այն մասին, թե նյութական կամ դատավարական իրավունքի որ նորմերն են խախտվել կամ սխալ կիրառվել, կամ որոնք են նոր երեսան եկած հանգամանքների հետեւանքով գործի վերանայման հիմքերը.

4.1) սույն օրենսգրքի 231.2 հոդվածի առաջին կետի որեւէ ենթակետի հիմնավորումները.

5) բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

2. Վճռաբեկ բողոքն սպորազրույմ է բողոք բերած անձը:

3. Բողոքին կցվում են սահմանված կարգով եւ չափով պետական փութքի վճարած լիները հավասարող փաստաթուղթը եւ բողոքի պատճենը՝ գործը քննող դատարան եւ գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցները»:

Դիմող կողմը գրնում է, որ վերոհիշյալ 230 հոդվածի 1-ին կետի դրույթները չեն համապատասխանում ՆՏ Սահմանադրության 3, 5, 6, 8, 18, 19, 31, 47 եւ 92 հոդվածներին:

ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածը (2006թ. հունիսի 7-ի խմբագրությամբ) սահմանում է.

«Նոդված 231.1. Վճռաբեկ բողոքը վերադարձնելը

1. Վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 230 հոդվածի եւ 231.2 հոդվածի առաջին կետի պահանջներին կամ բողոքը բերել է այն անձը, որի իրավունքը չի խախտվել:

2. Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում բողոքը սրանալու պահից 10 օրվա ընթացքում:

3. Վճռաբեկ դատարանը բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ կարող է սահմանել ժամկետ՝ թերությունները վերացնելու եւ վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար»:

Դիմող կողմը գրնում է, որ վերոհիշյալ 231.1. հոդվածի դրույթները չեն համապատասխանում ՆՏ Սահմանադրության 3, 6, 18, 19 եւ 47 հոդվածներին:

ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածը (2006թ. հունիսի 7-ի խմբագրությամբ) սահմանում է.

«Նոդված 231.2. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը

1. Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե՝

1) վճռաբեկ դատարանի կողմից փյույվ գործով կայացվող դատական ակտը կարող է եսկան նշանակություն ունենալ օրենքի միարեսակ կիրառության համար, կամ

2) վերանայվող դատական ակտը հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված դատական ակտին, կամ

3) սպորադաս դատարանի կողմից դատավարական կամ նյութական իրավունքի խախտման արդյունքում հնարավոր դատական սխալը կարող է առաջացնել ծանր հետեւանքներ, կամ

4) առկա են նոր երեսան եկամ հանգամանքներ:

2. Վճռաբեկ դատարանին ներկայացված վճռաբեկ բողոքների՝ սույն օրենսգրքի 230 հոդվածի եւ սույն հոդվածի առաջին կետի պահանջներին դրանց համապատասխան-

նությունը պարզելու եւ քննության ընդունելու հարցը լուծում է վճռաբեկ դատարանը՝ վճռաբեկ դատարանի նախագահի եւ պալատի դատավորների կազմով:

3. Վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվում, եթե վարույթ ընդունելու օգտին քվեարկել են վճռաբեկ դատարանի դատավորներից առնվազն երեքը: Վճռաբեկ դատարանի այդ որոշումը բողոքարկման ենթակա չէ:

4. Վճռաբեկ բողոքի լրացում չի թույլատրվում, բացառությամբ սույն օրենսգրքի 231.3 հոդվածով նախատեսված դեպքի:

5. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելուց հետո վճռաբեկ դատարանը որոշմամբ կարող է կասեցնել դատական ակտի կատարումը:

6. Վճռաբեկ դատարանի որոշումները պատշաճ ձևով ուղարկվում են բողոք բերող անձին եւ գործին մասնակցող անձանց»:

Դիմող կողմը գտնում է, որ վերոհիշյալ 231.2. հոդվածի դրույթները չեն համապատասխանում ՏՏ Սահմանադրության 3, 6, 8, 14, 18, 19, 31 եւ 47 հոդվածներին:

3. Դիմողներն իրենց դիրքորոշումը հիմնականում պարճառաբանում են հետևյալ փաստարկներով.

ա/ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները եւ ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու, պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի, հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: Մինչդեռ, ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները ձեւակերպված չինելով որոշակի, միարեսակ մարչելի ու բավարար ճշտությամբ, չբխելով քաղաքացիական դատավարության մասին օրենսդրության ընդհանուր փրամաբանությունից, հնարավորություն չեն տալիս անձին դրանց համապատասխանեցնել իր վարքագիծը եւ դատական կարգով արդյունավետ պաշտպանել իր սահմանադրական իրավունքները: Ըստ դիմող կողմի՝ օրենսգրքի վիճարկվող դրույթները չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջին նաեւ այն առումով, որ դրանցով չի սահմանվել վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարանի կողմից վարույթ ընդունելու բավարար հարակ ձեւակերպված ընթացակարգ,

բ/ ՏՏ վճռաբեկ դատարանը լինելով եռաստիճան դատական համակարգի բարձրագույն դատական պայանը, կոչված է ապահովելու օրենքի միարեսակ կիրառությունը, ճիշտ մեկնաբանումը եւ իրավունքի զարգացումը, ինչպես նաեւ ուղղելու սպորադաս դատարանների թույլ տված սխալները: Մինչդեռ, ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերը, ըստ դիմողների, ՏՏ վճռաբեկ դատարանին հնարավորություն են տալիս ձեւավորել այնպիսի դատական պրակտիկա, համաձայն որի՝ բողոքները վերադարձվում են առանց քննության (գործը վարույթ ընդունելու), անձանց բողոքներում առկա թերությունները մաքնանշելու եւ դրանք վերացնելու ժամկետ սահմանելու, ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետում նախատեսված հիմքերը պարզաբանելու: Օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի, 231.1. եւ 231.2. հոդվածների դրույթների ձեւակերպումները, ըստ դիմողների, վճռաբեկ դատարանին օժտել են

անկանխապեսելի հայեցողությամբ: Մասնավորապես, վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումներում անհասկանալի է օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետում նախապեսված հիմքերի առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հստակ դիրքորոշումը, գործերի ընդունման կամ մերժման հարցերում դրսևորվող մոտեցման արդյունքում անհնարին է դառնում վճռաբեկ դատարանի իրավասությունների շրջանակներում անձանց՝ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով նախապեսված իրավունքների պաշտպանությունը,

զ/ դիմող կողմի կարծիքով, օրենսգրքի վիճարկվող նորմերը պետք է ձեւակերպված լինեն այնպիսի որոշակիությամբ ու հստակությամբ, որ վճռաբեկ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծելիս սպուզվեն ներկայացված փաստաթղթերի սուկ ձեւին եւ բովանդակությանն առաջադրված պահանջների պահպանված լինելու հետ կապված հարցերը: Վեճի վերաբերյալ նյութաիրավական բնույթի հարցերին, մասնավորապես՝ բողոքը բերած անձի իրավունքների խախտված լինելու կամ չլինելու հարցին, դատարանը պետք է անդրադառնա միայն գործի արդարադատական ընթացակարգով, ըստ էության, քննության ժամանակ, որի արդյունքում է միայն հնարավոր պարզել դատական պաշտպանության դիմած անձի իրավունքների խախտված լինելու կամ չլինելու հանգամանքը,

դ/ դիմող կողմը գտնում է նաեւ, որ ՏՏ քաղաքացիական դատարանության օրենսգրքի վերոհիշյալ նորմերն ընդունելիս օրենսդիրն անպեսել է ՏՏ Սահմանադրության 3, 6, 18, 19 հոդվածների եւ, մասնավորապես՝ 47 հոդվածի պահանջը, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը եւ օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները եւ արժանապատվությունը»:

4. Առարկելով դիմող կողմի պնդումների դեմ՝ պատասխանող կողմը գտնում է, որ վեճի առարկա նորմերը համապատասխանում են ՏՏ Սահմանադրությանը: Ըստ պատասխանող կողմի՝ եվրոպական երկրներում դատական համակարգի զարգացման հիմնական միտումն այն է, որ գնալով ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարանների եռաստիճան համակարգում բարձրագույն ապյանի հիմնական գործառնայթը դառնում է օրենքի միապեսակ կիրառության ապահովումը: Դրան համապատասխան՝ փոխվում է նաեւ դատական այդ ապյանի դերը բողոքների ընդունման եւ քննության հարցերում:

Միաժամանակ, պատասխանող կողմը մանրամասն անդրադառնալով դատական համակարգի զարգացման բնագավառում Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականներին, արեց այն հիմնական հետետությունը, որ քարբեր մոտեցում է ցուցաբերվում դատական քարբեր ապյանների իրավասությունների սահմանմանն ու դրանց իրականացման կարգերին, ընդ որում, երրորդ ապյանի դատարան բողոքներ պետք է բերվեն առաջին հերթին այնպիսի գործերով, որոնք կարող են նպաստել իրավունքի զարգացմանը կամ կարող են նպաստել օրենքի միանման մեկնաբանմանը: Այդ շրջանակը կարող է նաեւ նեղացվել այն գործերի վերաբերյալ բողոքներով, որոնք առնչ-

վում են իրավունքի այնպիսի հարցերի, որպիսիք ողջ հասարակության համար կարեւորություն են ներկայացնում:

Պատասխանող կողմը գտնում է, որ այս մտպեցումները բխում են նաև ՆՏ Սահմանադրության 92 հոդվածի դրույթներից, եւ հենց այդ մտպեցումներից ելնելով է, որ օրենսդիրը քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարել է համապատասխան փոփոխություններ: Այդ փոփոխությունները ոչ թե վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու հարցում վճռաբեկ դատարանին օժտում են անսահմանափակ ազատությամբ, այլ նրան դատական փյույթ ապրանքի սահմանադրական կարգավիճակից բխող հայեցողական լիազորություն են վերապահում՝ գնահատելու վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի առկայությունը: Վիճարկվող նորմերը որոշակի են ու հստակ, բխում են դատական համակարգի բարեփոխումների հայեցակարգային մտպեցումներից, համարժեք են արդարադատական համակարգի եվրոպական զարգացումներին:

Պատասխանող կողմը միաժամանակ եզրակացնում է, որ վճռաբեկ դատարանի մակարդակում «...հիմնական կանոնը վճռաբեկ բողոքը չընդունելն է, իսկ բացառությունը՝ այն ընդունելը: Սա է Եվրոպայի, փաստորեն, այսօր որդեգրած քաղաքականությունը: Իսկ դա նշանակում է, որ երբ բացառությունը գործադրվում է, պետք է պարճառաբանվի հենց այն, թե ինչու բողոքն ընդունվեց, ոչ թե ինչու բողոքը չընդունվեց»:

Պատասխանող կողմի կարծիքով, անցումային առանձնահատկություններից ելնելով օրենսդիրը կարող է նպատակահարմար համարել նախատեսելու վճռաբեկ բողոքը պարճառաբանված մերժելու նորմատիվ պահանջ, սակայն դա սահմանադրականության խնդրին չի առնչվում:

5. Մույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասի պահանջները, անհրաժեշտ է համարում պարզել եւ գնահատել.

նախ՝ ՆՏ դատական իշխանության համակարգում վճռաբեկ դատարանի՝ ՆՏ - Սահմանադրությամբ նախատեսված գործառնական պեղը եւ դերը,

երկրորդ՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթի բովանդակությունը եւ դրա իրացման երաշխավորումը ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ինչպես վիճարկվող, այնպես էլ դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված նորմերում եւ այդ նորմերի կատարումն ապահովող իրավական այլ ակտերում,

երրորդ՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման օրենսդրական երաշխավորվածությունը քաղաքացիական գործերով դատական ակտերի բողոքարկման գործող կարգում,

չորրորդ՝ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերում ՆՏ Սահմանադրության 18, 19 հոդվածներով, ինչպես նաև Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածում նախատեսված՝ անձի իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ միջոցի, հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների

պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում հրապարակային քննության իրավունքների, այդ առնչությամբ սահմանադրական այլ նորմերի պահանջների երաշխավորումը,

հինգերորդ՝ դատական բողոքարկման հարաբերությունների կարգավորման բնագավառում արդարադատության արդյունավետության եւ անձի իրավունքների դատական պաշտպանության երաշխավորումը 2006թ. հուլիսի 7-ի օրենսդրական փոփոխություններում,

վեցերորդ՝ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերի կիրառման դատական պրակտիկան՝ այնքանով, որքանով առնչվում է դրանց՝ սույն գործով քննվող սահմանադրականության խնդրին,

յոթերորդ՝ ՏՏ Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը:

6. Պետական, այդ թվում՝ նաեւ դատական իշխանության մարմինների համակարգում ՏՏ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը որոշված է ՏՏ Սահմանադրության 92 հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ «Նայասպանի Նանրապետության բարձրագույն դատական ապյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ եւ օրենքով»: Նույն հոդվածի առաջին մասն ամրագրել է, որ «Նայասպանի Նանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ապյանի, վերաքննիչ դատարանները եւ վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաեւ մասնագիտացված դատարաններ»: Միաժամանակ, ՏՏ Սահմանադրության 5, 91, 93, 94, 96 եւ 97 հոդվածներում ամրագրված են դատական իշխանության կազմակերպման ու գործունեության (արդարադատության իրականացման) հիմնարար դրույթները:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմերի ընդհանուր բովանդակությունից հետեւում է.

ա/ ՏՏ Սահմանադրությամբ ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատական գործառնությունները փարանջարված են սահմանադրական արդարադատական գործառնությունից, դրանց իրացումը նախատեսում է կառուցակարգային փարբեր լուծումներ եւ համարժեք լիազորություններ,

բ/ ընդհանուր իրավասության առաջին ապյանի, վերաքննիչ դատարանները, վճռաբեկ դատարանը, ինչպես նաեւ մասնագիտացված դատարանները՝ դատական իշխանության շրջանակներում կազմում են գործառնական համակարգային ամբողջություն: Այդ համակարգը կառուցված է գործառնական ասփիճանակարգման եւ արդարադատական գործառնությունների ներհամակարգային փարանջարման սկզբունքներով, ներքեւից վերեւ, ընդ որում, այդ ասփիճանակարգում բարձրագույն դատական ապյանը ՏՏ վճռաբեկ դատարանն է, որն սփորադաս դատարանների դատական ակտերը վերանայող դատարան է,

գ/ ընթացիկ օրենսդրության խնդիրն է նյութական և ընթացակարգային նորմերի միջոցով սահմանել ու մանրամասնել ինչպես ՏՏ վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակից բխող, այնպես էլ ընդհանուր իրավասության և մասնագիտացված ստորադաս դատարանների լիազորությունների շրջանակը, իրականացման կարգն ու պայմանները,

դ/ ՏՏ վճռաբեկ դատարանի արդարադատական գործառույթը վճռաբեկության կարգով օրենքի միարեսակ կիրառությունն ապահովելն է, այսինքն.

- այն պեպք է առաջին հերթին իրականացվի օրենքների և դրանց կատարումն ապահովող նորմատիվ այլ այնպիսի ակտերի իրավական բովանդակության մեկնաբանմամբ, որոնք ստորադաս դատարանների կողմից կիրառվել են (կամ չեն կիրառվել) դրանց փարաբնույթ իրավաընկալման արդյունքում,

- վճռաբեկության կարգով սահմանադրական իր վերահսկողական գործառույթի իրականացմամբ, ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելիս և դատական սխալներն ուղղելիս վճռաբեկ դատարանը բացառապես պեպք է լուծի իրավունքի իրացման հարցեր,

- որպես սահմանադրորեն նախատեսված շրջանակներում բարձրագույն դատական ապյան՝ վճռաբեկ դատարանը, իր լիազորություններին համապատասխան, կոչված է երաշխավորելու ընդհանուր իրավասության և մասնագիտացված բոլոր դատարաններում մարդու իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցների, արդարության, հավասարության պայմաններում և ողջամիտ ժամկետում դատաքննության՝ անձի սահմանադրական իրավունքների անմիջական գործադրումը,

- վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթից է անմիջականորեն բխում ոչ միայն ընդհանուր և մասնագիտացված ստորադաս դատարանների թույլ տրված դատական սխալներն իր իրավասության շրջանակներում ուղղելը, այլև այդ դատարանների կողմից կիրառված նորմատիվ ակտերի (դրանց դրույթների) միասնական ընկալման վերաբերյալ իրավական դիրքորոշում արտահայտելը:

7. Ելնելով վերոհիշյալ հերետություններից և գործի հանգամանքներից, սահմանադրական դատարանը կարեւորում է, թե կառուցակարգային ինչպիսի երաշխիքներ և ընթացակարգեր են նախատեսված գործող օրենսդրության ակտերում ապահովելու համար վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթի իրականացումը, բացահայտել քննության առարկայի շրջանակներում դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման երաշխավորվածությունը քաղաքացիական գործերով դատական ակտերի բողոքարկման գործող օրենսդրական կարգում:

«Դատարանակազմության մասին» ՏՏ օրենքի 21 հոդվածի համաձայն (13.06.2000թ. ՏՕ-72, 11.09.2001թ. ՏՕ-213 և 07.07.2006թ. ՏՕ-156-Ն փոփոխություններով) վճռաբեկ դատարանի գործունեության նպատակն է ապահովել օրենքի միարեսակ կիրառությունը, ճիշտ մեկնաբանությունը և նպաստել իրավունքի զարգացմանը: Վճռաբեկ դատարանն իր իրավասության սահմաններում և դատավարական օրենսդրությամբ

սահմանված կարգով վերանայում է ստորադաս դպարանների դպրական ակտերը: Միաժամանակ, նույն հոդվածով սահմանված են վճռաբեկ դպարանի կառուցվածքը և կազմը:

Վերոհիշյալ իրավանորմի բովանդակությունից հետևում է, որ ՎՃՌՎԵԿ դպարանի գործունեության՝ օրենքով նախանշված նպատակները պայմանավորված են այդ մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակով: Օրենքի միաբեկ կիրառությունը, ճիշտ մեկնաբանությունն ապահովելը՝ որպես նաև իրավունքի զարգացմանը նպաստելու միջոցներ, կառուցակարգային փոխկապակցված գործառնություններ են, հետապնդում են իրավաչափ նպատակներ և երաշխիք են վճռաբեկ դպարանի կողմից ստորադաս դպարանների դպրական ակտերը վերանայելու ընթացակարգային լիազորությունների իրականացման համար: Այդպիսի երաշխիք է նաև դպրական ակտերի բողոքարկման ինստիտուտը՝ նյութական և ընթացակարգային օրենսդրական այնպիսի կարգավորմամբ, որն ապահովի անձի իրավունքների ու ազատությունների դպրական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացում:

ՎՃՌՎԵԿ սահմանադրական դպարանն իր 2006թ. հոկտեմբերի 18-ի ՄԳՌ-652 և մի շարք այլ որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մարզելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՎՃՌՎԵԿ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրություններով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դպարանի նախադեպային պրակտիկան, կարելորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմափիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հարկապես միջազգային այն պարավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Միաժամանակ, կարելորել է այդ պարավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մարզելիության և, հարկապես՝ դպրական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:

Սահմանադրական դպարանը սույն գործի շրջանակներում վիճարկվող իրավանորմների սահմանադրականությունը որոշելիս անհրաժեշտ է համարում նաև ուշադրություն հրավիրել հարկապես դպրական բողոքարկման հիմնախնդիրների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականների վրա: Այդ Կոմիտեի 1995 թվականի փետրվարի 7-ի թիվ R (95) 5 հանձնարարականում Եվրոպայի - խորհրդի անդամ պետությունների առջև, մասնավորապես, դրված են հետևյալ պահանջները.

նախ՝ դպրական վեճի հարցերն սկզբունքորեն պետք է լուծվեն առաջին արյանի դպարանում, իսկ օրենքը պետք է պարավորեցնի փվյալ դպարանին այնպիսի հստակությամբ և ամբողջական հիմնավորումներով կայացնել որոշում, որ կողմերի հա-

մար ակնհայտ լինի հեփազա բողոքարկման իրենց իրավունքից օգտվելու նպատակահարմարությունը,

երկրորդ՝ հստակ պահանջ պետք է առաջադրվի բողոքի հիմքերի եւ իրավական պաշտպանության միջոցների հիմնավորման հարցում, երկրորդ ապյանի դատարանին վերապահելով լիազորություն՝ պատճառաբանված մերժելու ակնհայտ անհիմն բողոքների քննության ընդունումը,

երրորդ՝ երկրորդ ապյանի դատարանում շեշտը պետք է դնել հիմնականում բողոքի առարկայի շրջանակներում դատաքննության վրա,

չորրորդ՝ երրորդ ապյանի դատարանում բողոքները պետք է վերաբերեն այնպիսի գործերի, որոնք բխում են այդ դատական ապյանի դերից, օրինակ, այնպիսի գործեր, որոնք «...կարող են նպաստել իրավունքի զարգացմանը կամ կարող են նպաստել օրենքի միատեսակ մեկնաբանմանը: Այդ շրջանակը կարող է սահմանափակվել այնպիսի գործերով բողոքարկումներով, որոնք առնչվում են ամբողջ հասարակության համար նշանակություն ունեցող իրավունքի հարցերին» (հոդվ. 7): Դիմողից պետք է պահանջվի հիմնավորել, թե ինչով է իր գործը նպաստելու հասնել այդ նպատակներին:

Միջազգային պրակտիկան վկայում է նաեւ, որ այդ նախապայմանների խստացումը չպետք է փրկի ունենա անհամաչափ՝ անձանց համար ստեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդոտներ: Բացի դրանից, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախատեսված, հստակ, եւ անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք եւ պարտականություն:

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական ակտի բողոքարկման օրենսդրական ընթացակարգով պետք է լիարժեք պաշտպանելի լինեն անձի՝ առանց բացառության բոլոր, այդ թվում՝ նաեւ քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները, որը, ըստ դիմող կողմի՝ բավարար երաշխավորված չէ ՎՃ քաղաքացիական դատարարության օրենսգրքի վիճարկվող նորմերում:

Վերոհիշյալ խնդրին անդրադառնալով՝ սահմանադրական դատարանը նաեւ կարեւորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը եւ կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը, որն անհրաժեշտ է դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությունը նաեւ վճռաբեկ վարույթում գնահատելու առումով: ՎՃ Սահմանադրության փոփոխություններով, ինչպես նաեւ արդարադատության արդյունավետության, անձի իրավունքների դատական պաշտպանության լիարժեք երաշխավորման իրավաչափ նպատակներով պայմանավորված 2006 թվականի հուլիսի 7-ի (ՌՕ-153-Ն) օրենսդրական փոփոխությունները՝ կապված ՎՃ քաղաքացիական դատարարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող նորմերով նախատեսված դատական բողոքարկման կարգի հետ, իրականացվել են միայն վճռաբեկ դատարանի գործառնությունների շրջանակում, վերաքննիչ դատարանի գործող կարգավիճակի

պայմաններում, առանց համապատասխան անցումային դրույթների: Դրա արդյունքում առանձին անձինք գործնականում զրկվել են դատական ակտերի բողոքարկման՝ օրենքով նախատեսված նախկին կարգով սկսված եւ դեռեւս չավարտված գործընթացի պայմաններում իրենց սահմանադրական իրավունքներն արդյունավետ պաշտպանելու լիարժեք հնարավորությունից: Ինչպես բխում է Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի 1995 թվականի փետրվարի 7-ի թիվ R (95) 5 հանձնարարականից, դատական համակարգի առաջին, երկրորդ եւ երրորդ աստիճաններում ոչ միայն գործառնական լիազորությունները, այլև դրանց իրականացման կարգը, մասնավորապես՝ բողոքարկման արդյունավետ ինստիտուտի արմատավորումը, դիտարկվում են միասնական օրգանական կապի մեջ:

9. Անդրադառնալով ՏՏ վճռաբեկ դատարանի կարգավիճակով պայմանավորված օրենսդրական լիազորությունների եւ դրանց իրացման ընթացակարգերի սահմանադրաիրավական գնահատմանը, սահմանադրական դատարանը կարելու է սույն գործով վիճարկվող նորմերում ՏՏ Սահմանադրության 18, 19 հոդվածներով նախատեսված դատական պաշտպանության իրավունքի եւ դրա արդյունավետ իրացումն ապահովող ու, մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով կարելու դժուր հարցերի, մարչելիության եւ արդյունավետ միջոցների իրավական չափորոշիչների երաշխավորվածության հարցը, որով է նաեւ դիմող կողմը պայմանավորում վճռաբեկ վարույթում իր իրավունքների պաշտպանության արդյունավետությունը:

Սահմանադրական դատարանը ելնում է նաեւ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2004 թվականի մայիսի 12-ի R (2004) 6 հանձնարարականում ազգային դատական համակարգերի արդյունավետության խնդիրների վերաբերյալ հանձնարարականի հետեւյալ դրույթներից, համաձայն որոնց.

- անդամ երկրները պետք է արդյունավետ ընթացակարգեր նախատեսեն, ըստ էության, քննության առնելու եւ լուծում փալու մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտումների վերաբերյալ դատական բողոքների,

- բողոքների ընդունման եւ քննության ընթացակարգերը պետք է դիտարկվեն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների ապահովման համապետքաբար,

- ներպետական համակարգերում դատական բողոքները պետք է հանգամանալից ու հիմնավոր քննության առարկա դառնան,

- Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով նախատեսված իրավունքների պաշտպանությունն ազգային իրավական համակարգում պետք է արդյունավետ ձեռով երաշխավորված լինի,

- իրավական պաշտպանության արդյունավետ միջոցները պետք է ներառեն նաեւ խելամիտ ժամկետներում դատաքննության ապահովումը:

Նաշվի առնելով նաեւ վերոհիշյալ մոտեցումները, ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230, 231.1. եւ 231.2. հոդվածների նորմերի սահմանադրականությունը գնահատելիս սահմանադրական դատարանը ելնում է ՏՏ վճռաբեկ դատարանում իրավասու անձանց վճռաբեկ բողոքների քննության ընթացակարգային կանոնների օ-

րենսդրական այնպիսի կանոնակարգման անհրաժեշտությունից, որոնք, օրինական նպատակ հետապնդելով հանդերձ, լինեն միակերպ ընկալելի եւ մտաբերելի՝ ապահովելու համար այդ նպատակի եւ կիրառվող միջոցների միջեւ արդար հավասարակշռությունը: Միաժամանակ, վճռաբեկ բողոքների քննության ընթացակարգային կանոններն արդարացիորեն կարող են պարունակել միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք պայմանավորված են ՏՎ վճռաբեկ դատարանի արդարադատական գործառույթի բովանդակությամբ, կապված ոչ թե մասնավոր, այլ՝ «...ամբողջ հասարակության համար նշանակություն ունեցող իրավունքի հարցերի», «...օրենքի միատեսակ մեկնաբանման», դատական գործերով փաստական առանձնահատուկ հանգամանքների, դրանց գնահատման խնդրի, նյութական եւ ընթացակարգային իրավանորմների ճիշտ կիրառումն ապահովելու հետ:

10. Ելնելով վերոշարադրյալ իրավական դիրքորոշումներից, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՏՎ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230, 231.1., 231.2. հոդվածների վիճարկվող նորմերը կոչված են կարգավորելու վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց եւ ՏՎ վճռաբեկ դատարանի միջեւ ծագող իրավահարաբերությունները՝ կապված վճռաբեկ բողոքի բովանդակության, այդ բողոքն ընդունելու կամ վերադարձնելու հետ: Նշյալ նորմերը բնույթով դատավարական նորմեր են եւ իրենց ընդհանուր բովանդակությամբ պայմանավորված են ՏՎ վճռաբեկ դատարանի՝ սահմանադրաիրավական կարգավիճակով եւ անձի իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի երաշխավորման անհրաժեշտությամբ: Դրանցից էլ բխում է ՏՎ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224 հոդվածին համապատասխան՝ ստորադաս դատարանների վճիռների դեմ բերված վճռաբեկ բողոքներով գործերը քննելու եւ օրենսգրքի 226, 227 հոդվածներում նախանշված նյութական եւ դատավարական իրավունքի նորմերի խախտումների արդյունքում դատական սխալն ուղղելու՝ վճռաբեկ դատարանի իրավասությունը:

ՏՎ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածը սահմանում է վճռաբեկ բողոքում պարտադիր բովանդակելի տեղեկությունները եւ կցվող փաստաթղթերը, ինչպես նաեւ օրենսգրքի 231.2. հոդվածի առաջին կետի ենթակետերով նախատեսված որեւէ հիմնավորման անհրաժեշտությունը: Փաստորեն, 230 հոդվածի նորմերով վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց առջեւ դրված են հետևյալ պարտականությունները.

- բողոքում նշել իրավաբանական նշանակություն ունեցող պարտադիր տեղեկություններ եւ կցել փաստաթղթեր,

- ներկայացնել հիմնավորումներ.

ա/ օրենքի միատեսակ կիրառման համար գործով կայացվող դատական ակտի էական նշանակության մասին,

բ/ վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված դատական ակտին վերանայվող դատական ակտի հակասող լինելու մասին,

գ/ դատական սխալի արդյունքում ծանր հետեւանքների առաջացման հնարավորության մասին,

դ/ գործով նոր երեսան եկած հանգամանքների առկայության մասին:

Այսպիսով, օրենսդրորեն հստակացված են իրավական այն պայմանները, որոնց առկայության դեպքում է միայն իրավասու սուբյեկտի (այդ թվում՝ քաղաքացու) դիմումը (վճռաբեկ բողոքը) ճանաչվում իրավաչափ, եւ այն սահմանված կարգով ներկայացվելու ձեռով դրսևտրված կամաարտահայտման արդյունքում է միայն ՏՏ վճռաբեկ դատարանն իրավասու գործադրել սահմանադրաիրավական կարգավիճակից բխող օրենսդրական իր լիազորությունները:

ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի վերոհիշյալ նորմարիվ պայմանները սահմանադրական դատարանի գնահատմամբ նպարակ ունեն ոչ թե անձանց ծանրաբեռնել ձեւական պահանջներով, այլ պայմանավորված են վճռաբեկ դատարանի՝ օրենքի միարեսակ կիրառությունն ապահովելու գործառայթով:

Ինչպես նշվեց, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1995 թվականի փետրվարի 7-ի թիվ R (95) 5 հանձնարարականում հարուկ շեշտվում է, որ վճռաբեկ վարություն բողոքները պետք է վերաբերեն այնպիսի գործերի, որոնք, բխելով դատական արվյալ արյանի կարգավիճակից, կարող են նպասրել իրավունքի զարգացմանը կամ կարող են նպասրել օրենքի միարեսակ մեկնաբանմանը: Այդ բողոքարկումները կարող են սահմանափակվել նաեւ այնպիսի գործերով, որոնք առնչվում են ամբողջ հասարակության համար նշանակություն ունեցող իրավունքի հարցերին, ուսրի դիմողից պետք է պահանջվի հիմնավորել, թե իր գործն ինչով է նպասրելու հասնել այդ նպարակին:

Սահմանադրական դատարանը գրնում է, որ ՏՏ վճռաբեկ դատարանի խնդիրը չէ քննության ընդունել ցանկացած բողոք, այլ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կերի պահանջներին համապարասխան պարզել ու գնահարել բողոքարու անձանց փասարարկների բնույթը, իրավական նշանակությունը եւ կայացնել պարճառաբանված որոշում: Վճռաբեկ վարություն բողոքարու անձանց առջեւ ՏՏ վճռաբեկ դատարանի կարգավիճակով պայմանավորված իրավական պահանջների առաջարդումը՝ կապված բողոքի բովանդակության, դրա հիմնավորման եւ ներկայացման կարգի հետ, իրենց հիմնական բովանդակությամբ արբերվում են վերաքննիչ վարություն գործող կարգից: Այդ պահանջներն առնչվում են իրավունքի, դրա մեկնաբանման ու իրացման, այլ ոչ թե փասրերի ձեռքբերման, նախնական հետազորման ու գնահարման հետ: Ուսրի վճռաբեկ դատարանի կողմից «էական նշանակություն», «ձանր հետեւանք» եւ «վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած դատական ակր» արրահարությունների՝ դատական գործերի հանգամանքներից բխող բովանդակային հսրակեցումը, մեկնաբանումը, պարճառաբանումը պայման է ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կերի 4.1. ենթակերում եւ 231.2. հոդվածի 1-ին կերում նախանշված հիմքերին համապարասխան՝ վճռաբեկ վարություն անձանց իրավունքների պաշրպանության հնարավորությունը կանխարեսելի դարճնելու համար:

11. ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. եւ 231.2. հոդվածների վիճարկվող նորմերով, ինչպես նշվեց, սահմանված են վճռաբեկ բողոքը վերադարճնելու, վարույթ ընդունելու հետ կապված կանոնները, մասնավորապես՝ բողոքն ընդունե-

լու, վերադարձնելու եւ լրացնելու, այդ մասին վճռաբեկ դատարանի որոշում կայացնելու դեպքերը, կարգը, եւ այդպիսի որոշումների ծանուցման, ինչպես նաեւ վիճարկվող դատարանի ակտի կասեցման կարգը եւ պայմանները: Այդ նորմերով ՏՏ վճռաբեկ դատարանն օժտված է ինչպես պարպադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններով, մասնավորապես.

- պարպավոր է վերադարձնել վճռաբեկ բողոքը, եթե այն չի համապատասխանում օրենսգրքի 230 հոդվածում նախանշված բովանդակային պահանջներին կամ չի պարունակում 231.2. հոդվածի առաջին կետի որեւէ հիմնավորում,

- պարպավոր է բողոքն ընդունել վարույթ, եթե այն բովանդակում է օրենսգրքի 231.2. հոդվածի առաջին կետի որեւէ հիմնավորում,

- պարպավոր է վճռաբեկ բողոքը վերադարձնելու կամ վարույթ ընդունելու մասին կայացնել որոշում եւ պատշաճ ձեւով ուղարկել այն բողոք բերող անձին եւ գործին մասնակցող անձանց,

- կարող է բողոքը վերադարձնելու մասին իր որոշմամբ սահմանել ժամկետ՝ թերությունները վերացնելու եւ վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար,

- կարող է կասեցնել վիճարկվող դատարանի ակտի կատարումը:

Միաժամանակ, օրենսդիրը ՏՏ վճռաբեկ դատարանի հայեցողությանն է վերապահել ամեն մի կոնկրետ դեպքում օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետում նախատեսված հիմքերի առկայության գնահատումը:

ՏՏ վճռաբեկ դատարանի վերոհիշյալ լիազորությունների պարպադիր եւ հայեցողական բնույթի առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, այդ թվում՝ նաեւ ՏՏ վճռաբեկ դատարանին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարպադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված ՏՏ Սահմանադրության 5 հոդվածի երկրորդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ: Տվյալ դեպքում ՏՏ վճռաբեկ դատարանը, քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի պահանջները կատարելու, վճռաբեկ բողոքի թերությունները վերացնելու առնչությամբ ժամկետ սահմանելու կամ վիճարկվող դատարանի ակտի կատարումը կասեցնելու հետ կապված իր հայեցողական լիազորություններով պարպադրված է ընտրելու օրենքով առաջադրված հնարավոր իրավաչափ լուծումներից որեւէ մեկը: Ընդ որում, ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230, 231.1. եւ 231.2. հոդվածների վերլուծությունը վկայում է, որ օրենսդիր բողոքների ընդունման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորելիս առաջնորդվել է ՏՏ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի օրենսդրական ապահովման ու այդ դատարանի արդարադատական, այդ թվում՝ նաեւ հայեցողական լիազորությունների իրացման երաշխավորման անհրաժեշտությամբ:

Այսուհանդերձ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ համակարգային բարեփոխումների ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ նաեւ անցումային համակարգերին բնորոշ այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են իրավագիտականության դեռեւս ցածր մակարդակը, հասարակական հարաբերությունների սահմանադ-

րականացման անբավարար աստիճանը, համակարգային անկարգությունները, կոռուպցիոն ռիսկը եւ այլն: Ներեւաբար, իրավակարգավորման առանցքային խնդիրներից են, մասնավորապես, Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված ժողովրդավարական, իրավական պետության կայացման նախադրյալների ապահովումը, սահմանադրական ժողովրդավարության ամրապնդումը, Սահմանադրության հիմնարար արժեքների ու սկզբունքների իրացման օրենսդրական ու կառուցակարգային երաշխիքների ստեղծումը, դատական իշխանության անկախության ու անկողմնակալության նկարմամբ հասարակության անդամների վստահության ամրապնդումը եւ այլն: Պատահական չէ, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասով սահմանադրական դատարանից պահանջվում է, որպեսզի նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս հաշվի առնվի նաեւ մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման եւ պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը, Սահմանադրությամբ նախատեսված իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման ապահովվածությունը, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանները, Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը եւ այլն: Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրորեն նախատեսված պետաիշխանական ցանկացած բնույթի լիազորություն (այդ թվում՝ հայեցողական) անհրաժեշտ նպատակ հետապնդելու հետ մեկտեղ, պետք է ուղեկցվի վերջինիս հասնելու հասարակական հարաբերությունների կոնկրետ առանձնահատկություններով պայմանավորված իրավական, չափավոր միջոցներով, փյույս դեպքում՝ պարտադիր հաշվի առնելով նաեւ ՏՏ Սահմանադրության 3 հոդվածում, 47 հոդվածի առաջին մասում ամրագրված հիմնարար սկզբունքների անխախտելիությունը: Մասնավորապես, վճռաբեկ վարույթում բողոքարկման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը պետք է լինի ոչ միայն վճռաբեկ բողոքի բովանդակության վերաբերյալ պարտադիր պայմաններ սահմանելը, այլեւ բողոքը վերադարձնելու պարճառաբանման նորմատիվ պահանջի սահմանումը: Դրա բացակայության հետեւանք է, որ գործով ուսումնասիրված՝ վճռաբեկ դատարանի թե՛ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու եւ թե՛ վերադարձնելու մասին որոշումներում, ըստ էության, չեն փորձում պարճառաբանություններ:

Միաժամանակ, ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի վիճարկվող 3-րդ կետում կիրառված «թերություններ» արտահայտության հստակ ըմբռնելի բովանդակությունը սահմանելը, բողոքատու անձանց կողմից վճռաբեկ բողոքն օրենսգրքի 230 հոդվածի պահանջներին ըստ ձեռի համապատասխանեցնելու պայմանները, կարգը եւ ժամկետն օրենսդրորեն հստակեցնելը կմեծացնի վստահությունն արդարադատության նկատմամբ, մարդկանց հնարավորություն կտա վճռաբեկ վարույթում առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետի դրույթը՝ 10-օրյա ժամկետում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման վերաբերյալ, չնայած հետապնդվող անհրաժեշտ նպատակին, առանց այդպիսի որոշման պատճառաբանման նորմատիվ պահանջի չի կարող բավարարել արդարացի հավասարակշռության, որոշակիության, իրավահավասարության եւ իրավունքի գերակայության իրավական սկզբունքների պայմանները: Սահմանադրական դատարանի գնահատմամբ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջը կարելու էր աշխիք է ինչպես արդարադատության մարզելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար: Ներկաբար, ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետի դրույթները հստակ չնախատեսելով վճռաբեկ բողոքը վերադարձնելու պատճառաբանման պահանջ, չեն կարող երաշխավորել անձի՝ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով նախատեսված դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից, նկատի ունենալով Նայասպանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2007 թվականի փետրվարի 21-ին ընդունված ՏՏ դատական օրենսգրքով դատական ակտերի բողոքարկման կարգի հայեցակարգային փոփոխությունը եւ այդ օրենսգրքի դրույթների ուժի մեջ մտնելու՝ օրենքով նախատեսված քարաժամկետ պայմանները, ՏՏ դատական օրենսգրքի ուժի մեջ մտնելու պահից դատական բողոքարկման հետ կապված իրավահարաբերություններ կարգավորող օրենսդրության որոշ ակտեր ուժը կորցրած ճանաչելու, դատավարական նոր օրենսգրքեր ընդունելու՝ օրենքով նախատեսված պայմանները, ինչպես նաեւ ՏՏ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի փետրվարի 21-ին ընդունված օրենքով ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. եւ 231.2. հոդվածների փոփոխություններն ու լրացումները, ղեկավարվելով Նայասպանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68 հոդվածներով, Նայասպանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Նայասպանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի դրույթները համապատասխանում են Նայասպանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասպանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերի դրույթները (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) համապատասխանում են Նայասպանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետը (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ).

ա) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացնելու ժամկետ սահմանելու առումով, համապարասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը,

բ) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պարճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու, հետևաբար, նաեւ՝ արդարադատության արդյունավետության, բավարար մատչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին եւ 2-րդ մասեր), 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի դրույթները համապարասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ**

*9 ապրիլի 2007 թվականի
ՄԴՈ-690*

ՆԱԼՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՆՏ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻ, ՔԱՂԱՔԱՅԻ Տ. ՍԱՆԱԿՅԱՆԻ
ԵՎ ՆՏ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍԱԿՆԻ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ
ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
414.1. ՆՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 414.2. ՆՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ
ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ՝ ՆՏ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

11 ապրիլի 2007թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի, Վ. Նովհաննիսյանի (զեկուցող), Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող կողմի ներկայացուցիչներ Ա. Ղամբարյանի, Լ. Թադևոսյանի, Ա. Կարախանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՆՏ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

«Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 46 հոդվածի համաձայն՝ սահմանադրական դատարանում ՆՏ վճռաբեկ դատարանի ներկայացուցիչներ Ա. Մկրտչյանի եւ Վ. Ռշտունու,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետի, 101 հոդվածի 6 եւ 7 կետերի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 71 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՆՏ գլխավոր դատախազի, քաղաքացի Տ. Սահակյանի եւ ՆՏ փարածքային կառավարման նախարարության Նայասարանի փրկարար ծառայության դիմումների հիման վրա՝ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 414.1. հոդվածի 2-րդ մասի, 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետեր-

րի դրույթների՝ ՏՏ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը վերոհիշյալ իրավասուբյեկտների դիմումներն են սահմանադրական դատարան, որոնց հիման վրա, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 39 հոդվածով, մինչև դատաքննությունն սկսելը գործերը միավորվել են դատարանի նույն նիստում քննելու համար:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հեփազոտելով ՏՏ քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 32 եւ 60 հոդվածների հիման վրա ՏՏ փարածքային կառավարման նախարարության Նայաստանի փրկարար ծառայության դիմումի մասով գործի վարույթը ենթակա է կարճման, հաշվի առնելով, որ «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՏՏ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի եւ ՏՏ կառավարության 2005թ. թիվ 634-Ն որոշման համաձայն րվյալ կազմակերպության աշխատակազմը պետական կառավարչական հիմնարկ է եւ չունի իրավաբանական անձի կարգավիճակ:

2. Նայաստանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը ՏՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՏՏ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998թ. սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 414.1. եւ 414.2. հոդվածների վիճարկվող դրույթները, որպես օրենսգրքի լրացումներ, ընդունվել են ՏՏ Ազգային ժողովի կողմից 2006թ. հուլիսի 7-ին՝ ՎՕ-152-Ն օրենքով:

Դիմողները սահմանադրական դատարան են ներկայացրել ՏՏ վճռաբեկ դատարանի՝ վերջնական դատական ակտեր հանդիսացող որոշումներ, որոնցով իրենց կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի վերադարձման առնչությամբ կիրառվել են ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 414.1. հոդվածի 2-րդ մասի եւ 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի դրույթները, եւ վիճարկում են այդ դրույթների սահմանադրականությունը:

Օրենսգրքի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» վերփառությամբ 414.1. հոդվածի 2-րդ մասով սահմանված է՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ բողոքը սրանալու պահից 10 օրվա ընթացքում»: Իսկ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը» վերփառությամբ 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշվում է՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե՝ «վճռաբեկ դատարանի կողմից րվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միապեսակ կիրառության համար», իսկ 3-րդ կետում ասվում է,

որ «սպորադաս դապարանի կողմից դափավարական կամ նյութական իրավունքի խախտման արդյունքում հնարավոր դափական սխալը կարող է առաջացնել ծանր հետեւանքներ»:

Սույն գործը սահմանադրական դափարանում քննության ընդունելուց հետո, ՏՏ քրեական դափավարության օրենսգրքի 414.1. հոդվածում 21.02.2007թ. կափարվել է փոփոխություն, որի արդյունքով հոդվածի երկրորդ մասի «բողոք սրանալու» բառերը փոխարինվել են «գործը վճռաբեկ դափարանում սրանալու» բառերով: Նոդվածը նաեւ լրացվել է հետեւյալ բովանդակությամբ 4-րդ մասով. «4. Առանց ժամկետի սահմանման վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման կայացման դեպքում բողոք բերող անձը չի կարող կրկին վճռաբեկ բողոք ներկայացնել»:

ՏՏ քրեական դափավարության օրենսգրքի 414.2. հոդվածում 21.02.2007թ. կափարվել է լրացում: Նոդվածի 5-րդ մասը «անձին» բառից հետո լրացվել է «, իսկ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումները՝ դափավարության մասնակիցներին (բացառությամբ քննիչի եւ հետաքննության մարմնի)» բառերով:

Նկատի ունենալով, որ օրենսգրքի նշված հոդվածների փոփոխված եւ լրացված նորմերը վեճի առարկա նորմերի իրավական բովանդակությունը չեն փոխել, եւ այդ փոփոխությունների սահմանադրականությունը սույն գործով վեճի առարկա չէ, հիմք ընդունելով «Սահմանադրական դափարանի մասին» ՏՏ օրենքի 26, 63, 69 եւ 71 հոդվածների պահանջները, սահմանադրական դափարանը փոփոխված եւ լրացված դրույթների սահմանադրականության հարցին չի անդրադարձել:

3. Դիմող կողմը գտնում է, որ ՏՏ քրեական դափավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերը հակասում են ՏՏ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածների 1-ին մասերին, ՏՏ քրեական դափավարության օրենսգրքի 414.1. հոդվածի 2-րդ մասը հակասում է ՏՏ Սահմանադրության 1-ին հոդվածին եւ 92 հոդվածի 2-րդ մասին՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

ա) ՏՏ քրեական դափավարության օրենսգրքի 07.07.2006թ. փոփոխություններով եւ լրացումներով սահմանվեց վերաքննիչ դափարանի օրինական ուժի մեջ մտնելու պայմանների դեմ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու նոր ինստիտուտ: ՏՏ Սահմանադրությունը նախատեսում է, որ յուրաքանչյուր ոք իր իրավունքների եւ ազատությունների դափական պաշտպանության իրավունք ունի: Իրավունք ունի նաեւ իր խախտված իրավունքները եւ ազատությունները վերականգնել դափական կարգով: ՏՏ Սահմանադրությունը, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. կոնվենցիան, ինչպես նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դափարանի՝ այս հարցի հետ կապված դիրքորոշումը պահանջում են, որպեսզի դափական պաշտպանությունը լինի մատչելի եւ արդյունավետ: Ընդ որում, նշված փաստաթղթերը եւ Մարդու իրավունքների եվրոպական դափարանի այս պահանջը վերաբերում են բոլոր տեսակի դափարաններին եւ դափական բոլոր ապրանքներին,

բ) ելնելով մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության եւ արդարադափության մատչելիության սահմանադրական սկզբունքներից, պահանջվում է, որպես-

զի ՏՏ դատարաններում, այդ թվում՝ նաև վճռաբեկ ապյանում դատական պաշտպանության իրավունքի իրականացման այնպիսի կարգ սահմանվի, որը կբավարարի իրավական որոշակիության եւ կանխարեսելիության պահանջները: ՏՏ վճռաբեկ դատարանի մարզելիության եւ այդ ապյանում դատական պաշտպանության արդյունավետությունը պայմանավորված է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու այնպիսի հիմքերի սահմանմամբ, որոնք կհամարվեն իրավական առումով որոշակի եւ կանխարեսելի: Այս պարագայում վճռաբեկ դատարանի մարզելիությունը եւ դատական պաշտպանության արդյունավետությունն ուղղակիորեն կախված են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ օրենքով նախատեսված հիմքերի իրավական կարգավորումից,

զ) վճռաբեկ դատարանը բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ պետք է հերքի բողոքում ներկայացված այն բոլոր փաստարկները, որոնք, բողոք ներկայացնող սուբյեկտի կարծիքով, բավարարում են բողոքը վարույթ ընդունելու հիմքերը: Մինչդեռ, ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 414.1. հոդվածի 2-րդ մասը բողոքը վերադարձնելու մասին որոշումը պարտադրանքաբանելու պարտականություն չի նախատեսում, որից ելնելով՝ վճռաբեկ դատարանն իր իրավակիրառ պրակտիկայում դրանք չի պարտադրաբանում,

դ) վիճարկվող՝ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի առաջին մասի 1-ին եւ 3-րդ կետերում նշվում են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը: Թվում է՝ այդ հիմքերի ընտրությունը եւ ձեւակերպումները պետք է ուղղված լինեին արդարադատության արդյունավետ իրականացմանը: Իրականում դրանք անորոշ են, ձեւակերպված են ոչ հստակ, հնարավորություն են տալիս երկիմաստ եւ հայեցողական մեկնաբանությունների, ինչի հետեւանքով ՏՏ վճռաբեկ դատարանի կողմից բողոքները՝ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերով նախատեսված պայմանները չբավարարելու հիմքով վերադարձնելիս խախտվում են անձի՝ դատական արդյունավետ պաշտպանության եւ արդարադատության մարզելիության սահմանադրական իրավունքները եւ իրավական որոշակիության սկզբունքը:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերում ամրագրված հիմքերի անորոշությունը, ոչ հստակ ձեւակերպումը ՏՏ վճռաբեկ դատարանին տալիս են անսահմանափակ, որեւէ իրավաչափ նպատակ չհետապնդող հայեցողական լիազորություն՝ գնահատելու ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերում ամրագրված հիմքերը:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի վեճի առարկա դրույթները չեն հակասում ՏՏ Սահմանադրությանը, եւ դիմող կողմի պնդումների դեմ իր առարկությունները հիմնավորում է հետեւյալ պարտադրանքային պայմաններով:

ա) «ՏՏ վճռաբեկ դատարանի սահմանադրական նոր կարգավիճակով էր պայմանավորված 2006 թվականին ՏՏ վճռաբեկ դատարանի դատավարական կարգավիճակի եւ դատավարական լիազորությունների փոփոխությունը»: Սահմանադրության 92 հոդվածում ամրագրված է վճռաբեկ դատարանի «կարգավիճակը եւ սահմանադրաիրա-

վական առաքելությունը» եւ սահմանվել է, որ ՏՏ բարձրագույն դպրական ապրանք, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միապետական կիրառությունը,

բ) ՏՏ Սահմանադրությամբ վճռաբեկ դատարանին փոխել է այնպիսի կարգավիճակ, որ այն ներկայումս չի համարվում «դասական իմաստով» վճռաբեկ դատարան, հետեւապես, ճյուղային օրենսդրությամբ նախատեսված են վճռաբեկ վարույթը կանոնակարգող այնպիսի նորմեր, որոնք բխում են վճռաբեկ դատարանի հենց սահմանադրական կարգավիճակից: Վճռաբեկ դատարանը դասական իմաստով գործը վերանայող դպրական երրորդ ապրանք չի համարվում, հետեւաբար՝ պայմանավորված այս հանգամանքով, թերեւս, ոչ բավարար հիմնավոր է այն մոտեցումը, թե սահմանափակվում է անձի՝ բողոք բերելու սահմանադրական իրավունքը: ՏՏ դատավարական օրենսգրքերով պահպանվել է անձի՝ բողոք բերելու իրավունքը, քանզի այդ նորմերով անձինք ցանկացած գործով կարող են ներկայացնել վճռաբեկ բողոք: ՏՏ դատավարական օրենսգրքերով սահմանվել են վճռաբեկ դատարանի իրավասությունը՝ ընտրելու այն գործերը, «որոնք կարելու են իր սահմանադրական առաքելության իրականացման գործում»: Նման հիմնավորումից ելնելով՝ պարասխանող կողմը գտնում է, որ «ՏՏ վճռաբեկ դատարանն արդարադատություն է իրականացնում ոչ թե ընդհանրապես՝ համարվելով դասական իմաստով երրորդ դպրական ապրանք, այլ հատուկ դեպքերում՝ Սահմանադրությամբ եւ օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում»,

գ) ՏՏ Սահմանադրության մեջ եւ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքում «օրենքի միապետական կիրառությունը» գործառույթը դպրական իշխանության ինքնուրույն դրսևորումներից է, ուստի այն հատուկ շեշտելու նպատակն օրենսդրի ցանկությունն է՝ հստակորեն ներկայացնել ոչ միայն վճռաբեկ դատարանի հիմնական խնդիրը, այլև այդ գործում վճռաբեկ դատարանի հատուկ դերը: Իսկ, ըստ պարասխանող կողմի, «արդարադատություն իրականացնելը դատարանի խնդիրը չէ, այլ իշխանական գործառույթ է՝ գործունեության հիմնական ուղղություն, այն կոչումը, ինչի համար սրելով էլ է դատարանը: Միևնույն ժամանակ կարելու է նշել, որ օրենքի միապետական կիրառումը սերտորեն կապված է վճռաբեկ դատարանի կողմից իրականացվող արդարադատության հետ, քանի որ նախ այդ հիմքով վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ՝ արդարադատություն իրականացնելու նպատակով, եւ երկրորդ՝ այդ նույն հիմքով արդարադատություն իրականացնելիս դատարանը միաժամանակ իրականացնում է նաև իր՝ օրենքների միապետական կիրառման ապահովման խնդիրը: Այսպեղից էլ կարելի է եզրակացնել, որ արդարադատությունը՝ որպես ծավալուն հասկացություն, փոխգործակցում է օրենքի միապետական կիրառման ապահովման հետ, այսինքն՝ այս երկու իրավական հասկացությունը փոխադարձ լրացնում են միմյանց»,

դ) գործում հիշատակվող՝ ՏՏ վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշման առնչությամբ պարասխանող կողմը նշում է, որ, այդ, ստորադաս դատարանները ղեկավարվում են Սահմանադրությամբ եւ օրենքներով, սակայն նրանց համար միաժամանակ պարտադիր է բարձրագույն դպրական ապրանքի իրավական դիրքորոշումը՝ օրենքի կիրառման առումով: Իսկ վճռաբեկ դատարանն իր իրավական դիրքորոշումն արտահայ-

տում է օրենքի կոնկրետ նորմերի վերաբերյալ արված իր եզրահանգումներում: Մակայն դրա պարտադիր լինելը չի ենթադրում այնպիսի իմպերատիվություն, որից շեղումն անթույլատրելի է: Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով շեղումները կոնկրետ դեպքերում կարող են հանգեցնել ոչ թե նախադեպի խախտման, այլ օրենքի խախտման, քանի որ վճռաբեկ դատարանը նախադեպային նշանակություն ունեցող իր որոշումներում կիրառելով մեկնաբանության փարբեր մեթոդներ, դատարաններին, կողմերին և ընդհանրապես փոխյալ նորմը կիրառող մարմիններին և անձանց բացատրում է, թե օրենքն ինչպես պետք է հասկանալ, հետևապես՝ եւ կիրառել: Այսպեղ կարեւորվում է արդարադատության կանխարեսելիությունը:

Ելնելով հայեցակարգային նման մոտեցումներից, պարասխանող կողմը նաեւ եզրակացնում է, որ «...ինչ վերաբերում է վճռաբեկ դատարանի կողմից ընդունելու կամ վերադարձնելու վերաբերյալ որոշումները պարճառաբանելուն, ապա այսպեղ պետք է նկատել, որ բարճրագոյն դատական ապյանները նման որոշումները չեն պարճառաբանում այնպես, ինչպես հիմնական ակտերը: Դրանք ունեն մասնակի պարճառաբանություններ, քանի որ դրանք գորճնականում ընթացակարգային որոշումներ են»:

5. ՏՏ սահմանադրական դատարանը մի շարք քաղաքացիների դիմումների հիման վրա ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ վճռաբեկ բողոք բերելու իրավունքի հետ կապված առանճին հողվաճների սահմանադրականությունը գնահատելու վերաբերյալ իր 09.04.2007թ. ՄԴՈ-690 որոշման մեջ հսարակ իրավական դիրքորոշում է արտահայտել նաեւ սույն գորճին անմիջականորեն առնչվող այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են.

նախ՝ դատական իշխանության համակարգում վճռաբեկ դատարանի՝ ՏՏ Սահմանադրությամբ նախարեսվաճ գորճառնական րեղը եւ դերը,

երկրորդ, օրենքի միարեսակ կիրառությունն ապահովելու վճռաբեկ դատարանի սահմանադրական գորճառույթի բովանդակությունը եւ դրա իրացման երաշխավորումը դատավարության օրենսգրքում եւ այլ իրավական ակտերում,

երրորդ, դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման օրենսդրական երաշխավորվաճությունը դատական ակտերի բողոքարկման գորճող կարգում,

չորրորդ, դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերում ՏՏ Սահմանադրության 18, 19 հողվաճներով, ինչպես նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6 հողվաճում նախարեսվաճ՝ անճի իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ միջոցի, հավասարության պայմաններում, արդարության բողոք պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում հրապարակային քննության իրավունքների, այդ առնչությամբ սահմանադրական այլ նորմերի պահանջների երաշխավորումը, ինչպես նաեւ իրավական ակտի «որոշակիության», «մարչելիության» իրավական չափորոշիչների նորմարիվ բովանդակության ապահովումը՝ որպես իրավական ակտի

միասնական ըմբռնման, հեղեւաբար՝ հասարակական հարաբերությունների արդյունավետ կարգավորման առաջնահերթ երաշխիք,

հինգերորդ, դափական բողոքարկման հարաբերությունների կարգավորման բնագավառում արդարադատության արդյունավետության եւ անձի իրավունքների դափական պաշտպանության երաշխավորումը 2006թ. հուլիսի 7-ի օրենսդրական փոփոխություններում,

վեցերորդ, ՄՄ քաղաքացիական դափավարության օրենսգրքի վիճարկվող նորմերի կիրառման դափական պրակտիկան՝ այնքանով, որքանով առնչվում է դրանց՝ սույն գործով քննվող սահմանադրականության խնդրին:

Սույն գործի շրջանակներում սահմանադրական դափարանը հենվում է նշված ուղղմամբ արտահայտած իր իրավական դիրքորոշումների վրա:

6. Սույն գործով վիճարկվող օրենքի նորմերը ներառված են ՄՄ քրեական դափավարության օրենսգրքի 11-րդ բաժնում: Բաժինը վերնագրված է՝ «Վարույթը վճռաբեկ դափարանում»: Դրանում նախատեսված են վճռաբեկության կարգով դափավճիռների ու որոշումների վերանայման դեպքերը, նշված է վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, սահմանված են վճռաբեկ բողոք բերելու հիմքերը, վճռաբեկ բողոքի բովանդակությունը եւ մնացած այն բոլոր հարցերը, որոնք կազմում են վճռաբեկ դափարանի վարույթի բովանդակությունը: Նշված բաժնում Կրեղ գրած նորմերը եւ դրույթները փոխկապակցված են եւ լրացնում են միմյանց:

ՄՄ Սահմանադրությունը եւ օրենքները նախատեսում են դափական ակտերի օրինականությունը եւ հիմնավորվածությունն ստուգելու այնպիսի արդյունավետ միջոց, ինչպիսին է դրանց բողոքարկումը վերադաս դափական ափյան: Տաշվի առնելով այն խնդրի առանձնահատկությունը, որի լուծման համար է կոչված վճռաբեկ դափարանը, օրենսդիրը սահմանել է ինչպես այդ մարմնին դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների ցանկը, այնպես էլ այն հիմքերը, որոնց առկայության պարագայում միայն բողոքը կրնա դունվի վարույթ:

ՄՄ վճռաբեկ դափարանին բողոք ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների ցանկը եւ դրանց իրավունքները նշված են ՄՄ քրեական դափավարության օրենսգրքի 404 հոդվածում:

ՄՄ դափախազության լիազորությունները, այդ թվում՝ նաեւ դափարանների վճիռները, դափավճիռները եւ որոշումները բողոքարկելու մասով, սմրագրված են ՄՄ - Սահմանադրության 103 հոդվածում:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2000թ. հոկտեմբերի 6-ին ընդունված՝ «Քրեական արդարադատության համակարգում դափախազության դերի վերաբերյալ» թիվ R(2000)19 հանձնարարականում դափախազի կողմից դափարանի որոշման բողոքարկման առնչությամբ նշվում է, որ «... դափարանի որոշման բողոքարկման իրավունքը սերտորեն կապված է դափախազների ընդհանուր առաքելության հետ, որովհետեւ դա հանդիսանում է իրավունքի կիրառումն ապահովող միջոցներից մեկը, միաժամանակ

դրանով նպաստելով համակարգի արդյունավետության բարձրացմանը, մասնավորապես դասական որոշումների համաձայնեցվածության վերաբերյալ իրավունքի՝ լայն իմաստով իրացմանը: Այս տեսանկյունից, Կոմիտեն կցանկանար, որպեսզի դասախազները բողոքարկելու համար օժտված լինեին նշանակալի հնարավորություններով, որը Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի որոշ երկրների իրավական համակարգի շրջանակներում ոչ միշտ տեղ ունի»:

Սահմանադրական դատարանն այս կապակցությամբ նշում է, որ չնայած արդարադատության իրականացման հարցում դասախազության կարեւոր դերակատարությանը, այդուհանդերձ, ելնելով կողմերի իրավահավասարության եւ մրցակցության սկզբունքների պահանջից, ՏՏ քրեական դատավարության օրենսգիրքը վճռաբեկ դատարանին ուրեւէ կերպ չի պարտավորեցնում փարբերակում դնել քաղաքացիներից եւ դասախազությունից ստացված վճռաբեկ բողոքների գնահատման հարցում: Օրենսգրքի 407, 414.1. եւ 414.2. հոդվածները վճռաբեկ բողոք բերելու հիմքերի, վճռաբեկ բողոքը վերադարձնելու եւ այն վարույթ ընդունելու համար բոլոր դիմող սուբյեկտների համար նախատեսում են միեւնույն պայմանները: Իսկ դասախազությունն իր սահմանադրական իրավասությունը պետք է իրականացնի, ինչպես նշված է ՏՏ Սահմանադրության 103 հոդվածում, «...օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով»:

7. ՏՏ սահմանադրական դատարանում վիճարկվող ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 414.1. հոդվածի 2-րդ մասում նշվում է, որ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից 10 օրվա ընթացքում»: Այս դրույթը վճռաբեկ դատարանին ուրեւէ կերպ չի պարտավորեցնում բողոքի վերաբերյալ որոշում կայացնելիս ապացուցել դրա հիմնավորված կամ ոչ հիմնավորված լինելը: Այսպիսի մոտեցումը բխում է պատասխանող կողմի հայեցակարգային այն դիրքորոշումից, որն արդեն ներկայացվեց:

Այդ հայեցակարգային մոտեցմամբ են պայմանավորված նաեւ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 422 հոդվածում 2006թ. մայիսի 25-ին եւ հուլիսի 7-ին կատարված փոփոխությունները, որոնցով, նույնիսկ օրենսգրքի 103 հոդվածի 10-րդ կետի առկայության պայմաններում, վճռաբեկ դատարանի որոշումներին ներկայացվող պահանջները վերապահվեցին միայն գործի քննության արդյունքներով կայացված որոշմանը, իսկ այդ հոդվածի 3-րդ մասում ամրագրվեց. «Վճռաբեկ դատարանի որոշումը պետք է լինի պարճառաբանված, ապահովի օրենքի ճիշտ մեկնաբանությունը, նպաստի իրավունքի զարգացմանը»:

Միաժամանակ, քրեական դատավարության օրենսգիրքը, ինչպես նշվեց, դարձյալ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակից ելնելով, 07.07.2006թ. լրացվեց նոր՝ 414.1. հոդվածով՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին: Սակայն փվյալ հոդվածում վճռաբեկ բողոքը վերադարձնելու որոշման պարճառաբանման պահանջ չդրվեց:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության վերաբերյալ

09.04.2007թ. ՄԴՈ-690 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները հավասարապես վերաբերում են նաև քրեական դատավարության օրենսգրքի 414.1. հոդվածի 2-րդ մասին:

Սահմանադրական դատարանն ընդունում է, որ վճռաբեկ դատարանի խնդիրը չէ քննության ընդունել ցանկացած բողոք: Սակայն օրենքը պետք է հաշվի առնի, որ ելնելով վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառնությունից, նա իր լիազորություններն առավել ամբողջական կկատարի, եթե վճռաբեկ բողոքը վերադարձնելու պարտադրանքն ունի օրենսդրական պահանջ ներկայացվի: Նման մոտեցումը ոչ միայն լուրջ ներդրում կլինի դատական փյուռի ապրանքի կողմից առավել ամբողջական նախադեպի ձևավորման հարցում, այլ նաև էապես կնվազեցնի չհիմնավորված բողոքների քանակը և կբարձրացնի արդարադատության արդյունավետությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 և 71 հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՏՄ փորձաքային կառավարման նախարարության Նայասպանի փրկարար ծառայության դիմումի մասով գործի վարույթը կարճել:

2. Նայասպանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 414.1. հոդվածի 2-րդ մասը (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ).

ա) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացնելու ժամկետ սահմանելու առումով, համապատասխանում է Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը,

բ) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պարտադրանքն ունի պարտադիր պայման չնախատեսելու, հետեւաբար, նաև՝ արդարադատության արդյունավետության, բավարար մարզելիության իրավական երաշխիքներ չսպասելու առումով, ճանաչել Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին և 2-րդ մասեր), 18 (1-ին մաս), 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

3. Նայասպանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի դրույթները (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) համապատասխանում են Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

4. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

11 ապրիլի 2007 թվականի

ՄԴՈ-691

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻ ՌՈՒԲԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆՇ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 24 ԳԼԽԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

8 մայիսի 2007թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարոյությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Վ. Նովիաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող Ռ. Թորոսյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՆՇ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՇ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետի, 101 հոդվածի 6 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՇ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Ռ. Թորոսյանի դիմումի հիման վրա՝ ՆՇ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի դրույթների՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ռ. Թորոսյանի՝ 09.04.2007թ. դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմողի գրավոր փաստարկները, պատասխանող կողմի գրավոր բացատրությունները, հեփազտելով ՆՇ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունվել է Նայասարանի Նանրապետության Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հունիսի 17-ին: Նանրապետության Նախագահի կողմից այն ստորագրվել է 1998թ. օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ին:

2002թ. փետրվարի 6-ին ՆՏ Ազգային ժողովն օրենք է ընդունել «ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին», ըստ որի՝ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի վերնագիրը վերաշարադրվել է. «Ընտրություններին, հանրաքվեներին մասնակցող քաղաքացիների եւ կուսակցությունների (կուսակցությունների միավորումների) ընտրական իրավունքների պաշտպանության եւ տեղական հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճերի վերաբերյալ դիմումների քննության վարույթ»:

Նույն օրենքին համապատասխան ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի վերաշարադրված 153 հոդվածը սահմանում է.

«Քաղաքացին, կուսակցությունը (կուսակցությունների միավորումը)՝ գտնելով, որ պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի, դրանց պաշտոնապարանձանց կամ ընտրական հանձնաժողովի որոշմամբ, գործողությամբ (անգործությամբ) խախտվել է ընտրելու կամ ընտրվելու իր իրավունքը, կարող է դիմել քաղաքացիական գործեր քննող դատարան:

Տեղական հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճով քաղաքացիական գործեր քննող դատարան կարող են դիմել տեղական հանրաքվեի նախաձեռնող խումբը եւ տեղական ինքնակառավարման մարմինը: Որպես պատասխանող կողմ կարող է հանդես գալ տեղական հանրաքվեի արդյունքներն ամփոփող պետական մարմինը»:

Վերաշարադրված 154 հոդվածը սահմանում է.

«1. Մույն օրենքի 153 հոդվածի առաջին մասում նշված դիմումը պետք է քննվի այն սրանալու օրվանից հնգօրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան ընտրությունների օրը, իսկ ընտրությունների օրն սրացված դիմումը՝ անհապաղ:

Տեղական հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճի մասին դիմումը պետք է քննվի սրանալու օրվանից տասնօրյա ժամկետում:

2. Դատարանը դիմումը քննում է դիմողի եւ համապատասխան ընտրական հանձնաժողովի, պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցչի մասնակցությամբ: Դատական նիստի ժամանակի եւ վայրի մասին պաշտոնապետական կարգով անձանց չներկայանալն արգելք չէ գործի քննության եւ լուծման համար»:

155 հոդվածը սահմանում է.

«1. Դատարանի վճիռը, որով հաստատվել է քաղաքացու կամ կուսակցության (կուսակցությունների միավորման) ընտրական իրավունքի խախտումը, հիմք է ընտրողների ցուցակում ուղղումներ կատարելու, թեկնածուին գրանցելու կամ կուսակցությանը (կուսակցությունների միավորմանը) ընտրություններին կամ հանրաքվեին մասնակցող կազ-

մակերպությունների թվում ներառելու, ինչպես նաև ընտրելու և ընտրվելու իրավունքի այլ խախտումները վերացնելու համար:

2. Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

3. Դատարանի վճիռը պատշաճ ձևով ուղարկվում է համապատասխան պետական մարմին, փեդական ինքնակառավարման մարմին կամ ընտրական հանձնաժողով»:

2. Ըստ վերջնական դատական ակտի՝ 04.02.2007թ. «Արմենիա» հեռուստաընկերությունը ընդարձակ հարցազրույց է կազմակերպել ՄԱԿ-ի պաշտպանության նախարարի հետ: Դիմող կողմը գտնելով, որ այդ հարցազրույցում «Նեոստապետության և ռադիոյի մասին» ՄԱԿ-ի 11 հոդվածի պահանջների ուղղակի և կոպիտ խախտում է, այն է՝ «ընտրությունների քարոզչությանը նախորդող ժամանակահատվածում արգելվում է ՄԱԿ-ների կողմից հեռարձակվել քաղաքական և այլ քարոզչական նյութ...», և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նեոստապետության և ռադիոյի ազգային հանձնաժողովը, ըստ դիմողի, խախտելով ՄԱԿ-ի ընտրական օրենսգրքի 20 հոդվածի 9-րդ կետի, «Նեոստապետության և ռադիոյի մասին» ՄԱԿ-ի 58 հոդվածի և «Նեոստապետության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՄԱԿ-ի 71 և 72 հոդվածների պահանջները, միջոցներ չի ձեռնարկել այդ իրավախախտման հետևանքների վերացման ուղղությամբ, որի արդյունքում խախտվել է ՄԱԿ-ի Սահմանադրության 30 և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 3 հոդվածներով սահմանված՝ ազատ ընտրություններին մասնակցելու իր իրավունքը, ղեկավարվելով ՄԱԿ-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի պահանջներով, 05.02.2007թ. դիմել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին արյանի դատարան՝ պահանջելով Նեոստապետության և ռադիոյի ազգային հանձնաժողովի անգործությունը ճանաչել անվավեր և պարտադրել նրան միջոցներ ձեռնարկել «Նեոստապետության և ռադիոյի մասին» ՄԱԿ-ի 58-րդ հոդվածի պահանջների խախտման հետևանքների վերացման ուղղությամբ:

Դատարանը 07.02.2007թ. որոշում է ընդունել «Դիմումի ընդունումը մերժելու մասին», գտնելով, որ ՄԱԿ-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխով սահմանված կարգով չի կարող քննության առնվել դիմող կողմի պահանջը:

Դիմելով ՄԱԿ-ի վճիռն արդարան, դիմող կողմը խնդրել է վերացնել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին արյանի դատարանի 07.02.2007թ. որոշումը՝ «Դիմումի ընդունումը մերժելու մասին»:

ՄԱԿ-ի վճիռն արդարանի քաղաքացիական և փնտեսական գործերով պալատին իր՝ 02.03.2007թ. որոշմամբ բավարարել է բողոքը՝ վերացնելով առաջին արյանի դատարանի վիճարկվող որոշումը:

Ըստ էության քննության առնելով դիմումը, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին արյանի դատարանի իր՝ 27.03.2007թ. վճիռով մերժել է պահանջը, պարճառաբանելով, որ որևէ ապացույց չի ներկայացվել, թե ինչու է կայանում դիմող կողմի ընտրելու իրավունքի խախտումը, իսկ «...միայն այդ մասին դիմումում նշելը չի կա-

րող բավարար հիմք հանդիսանալ դիմողի ընտրելու իրավունքը խախտված լինելու փաստը հաստատված համարելու եւ այդ հիմքով այն բավարարելու համար»: Մերժելով դիմումը, դատարանը միաժամանակ հիմք ընդունելով ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 155 հոդվածը՝ նշել է, որ «... վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից եւ ենթակա չէ բողոքարկման»:

3. Դիմող կողմը գտնում է, որ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխով սահմանված դրույթները հակասում են ՏՏ Սահմանադրության 19 եւ 30 հոդվածների՝ համապատասխանաբար «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու ... արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ... իր գործի հրապարակային քննության իրավունք» եւ «... կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը ... մասնակցելու իրավունք» դրույթներին, եւ դրանք անհրաժեշտ է անվավեր ճանաչել: Դիմողի կարծիքով, իրավակիրառական պրակտիկայում խառնաշփոթի եւ կամայական դրսեւորումների պատճառ են դառնում ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխով սահմանված՝ «...քաղաքացիների եւ կուսակցությունների ընտրական իրավունքի պաշտպանություն» եւ «գտնելով, որ ... խախտվել է ընտրելու կամ ընտրվելու իր իրավունքը...» արտահայտությունները, որոնք, ըստ դիմումատուի, հավանաբար, շփոթեցնում են դատավորներին եւ ըստ նրա՝ իրավացիորեն բացակայում են ՏՏ ընտրական օրենսգրքի 40 հոդվածի 8-րդ կետում: Դիմող կողմը գտնում է նաեւ, որ օրենսգրքի վեճի առարկա դրույթները հնարավորություն չեն տալիս հստակորեն երաշխավորել ընտրական գործընթացի հետ առնչվող բոլոր փյափ վեճերի դատական քննությունը:

4. Պատասխանող կողմը, չընդունելով դիմողի փաստարկները, գտնում է, որ ՏՏ - Սահմանադրության 19 եւ 30 հոդվածներով հստակ երաշխավորված են դատական պաշտպանության եւ ընտրական իրավունքների իրականացման հիմքերը: Եվ եթե ՏՏ - Սահմանադրության 19 հոդվածին համապատասխան, յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները դատարանի կողմից վերականգնելու իրավունք, ապա ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի դրույթներն ապահովում են այդ գործընթացը եւ սահմանում դրա կարգը: Ինչ վերաբերում է ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի դրույթների՝ ՏՏ Սահմանադրության 30 հոդվածին հակասությանը, ապա փոքրեր հարաբերություններ կարգավորող հիշյալ դրույթների միջեւ այդպիսի անհամապատասխանության մասին խոսք ընդհանրապես չի կարող լինել:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի կողմից վիճարկվող ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի դրույթները կարգավորում են ընտրություններին, հանրաքվեներին մասնակցող քաղաքացիների եւ կուսակցությունների (կուսակցությունների միավորումների) ընտրական իրավունքների պաշտպանության եւ փեդական հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճերի վերաբերյալ դի-

մումների քննության վարույթը: Նկատի ունենալով, որ ընկերությունները ժամկետային գործընթաց են, օրենսդիրը սահմանել է այդ բնույթի դիմումների քննության հնարավոր կրճատ ժամկետներ: Մասնավորապես, օրենսգրքի 154 հոդվածը դատարանին պարտավորեցնում է ընտրական վեճերի վերաբերյալ գործերը քննության առնել դիմումն ստանալու օրվանից հնգօրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան ընկերությունների օրը, իսկ ընկերությունների օրն ստացված դիմումը՝ անհապաղ: Միաժամանակ, ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի 155 հոդվածն ամրագրում է, որ ընտրական իրավունքի պաշտպանության վեճերով դատարանի վճիռը վերջնական է, ենթակա չէ բողոքարկման եւ օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: Օրենքի այս պահանջը նպատակ է հետապնդում վերացնել ընտրական իրավունքի խախտումները մինչև ընկերությունների ավարտը, այլապես խախտված իրավունքի վերականգնման վերաբերյալ դատարանի վճիռը կկորցնի իր իմաստը՝ դիմողը չի կարող մասնակցել ընկերություններին, ընտրել կամ ընտրվել: Նենց այս առանձնահատկությունը նկատի առնելով է, որ օրենսդիրն օրենսգրքի վիճարկվող գլուխը գեղեղել է «Առանձին փեսակի գործերով վարույթների առանձնահատկությունները» բաժնի «Նախուկ հայցային վարույթներ» ենթաբաժնում:

ՏՏ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասը յուրաքանչյուր անձի ընձեռում է իր խախտված իրավունքները վերականգնելու համար դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող գլխի կանոնները, սահմանելով նման բնույթի գործերի քննության սեղմ ժամկետներ եւ բացառելով վճռի բողոքարկումը, դատարանին հնարավորություն են տալիս ողջամիտ ժամկետում վերականգնել յուրաքանչյուր քաղաքացու, կուսակցության (կուսակցությունների միավորումների) ընտրական խախտված իրավունքները:

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի (հոդվ. հոդվ. 153-155) դրույթները մեծ կարեւորություն ունեն ընտրական իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության եւ Սահմանադրության 4 հոդվածում ամրագրված հիմնարար սկզբունքների ու 30 հոդվածում ամրագրված իրավունքների երաշխավորման համար: Ընտրական իրավունքի պաշտպանության առումով այդ դրույթները հավասարապես վերաբերում են ինչպես պասիվ, այնպես էլ ակտիվ ընտրական իրավունքին: Նյութական իրավունքի ապահովումը երաշխավորող դատավարական այս նորմերն իրենց բնույթով ու առկա խմբագրությամբ չեն խոչընդոտում հաջորդական վարույթի կարգով ընտրական իրավունքի արդյունավետ դատական պաշտպանությանը՝ ընտրական գործընթացի ցանկացած փուլում:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 24 գլուխը միայն ընդհանուր գծերով է կարգավորում փվյալ իրավահարաբերությունները՝ առանց հստակեցնելու հաջորդական վարույթի ընթացակարգով ընտրական վեճերի լուծման կոնկրետ առանձնահատկությունները: Դրա հետեւանքով իրավակիրառական պրակտիկայում փեղ են գրել փարաբնույթ մոտեցումներ, թե՛ դիմումի քննության ենթա-

կայության եւ թե՛ դպրական ակփի բողոքարկման կարգի առնչությամբ: Առկա է նաեւ անհամապարասխանություն ՏՏ ընկերական եւ քաղաքացիական դատավարության օրենսգրքերի դրույթների (մասնավորապէս՝ համապարասխանաբար՝ 40 եւ 153 հոդվածներ) միջեւ, որը դժվարություններ է առաջացնում ընկերական իրավունքի դպրական պաշտպանության՝ ընկերական օրենսգրքով նախատեսված կարգի իրացման հարցում: Ման իրավիճակը կարող է հաղթահարվել օրենսդրական հստակեցումներ կատարելու, իսկ մինչ այդ՝ ՏՏ վճռաբեկ դատարանի իրավասության շրջանակներում ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի նորմերի մեկնաբանման եւ միասնական իրավակիրառական պրակտիկա ապահովելու ճանապարհով՝ երաշխավորելու համար ընկերական իրավունքի արդյունավետ դատական պաշտպանությունը: Ինչ վերաբերում է վեճի առարկա դրույթների սահմանադրաիրավական բնույթին, ապա այդ դրույթները դիմումատուի հարցադրումների շրջանակներում՝ իրենց իրավական բովանդակության եւ իրավակարգավորման առարկայի առումով, սահմանադրականության խնդիր չեն առաջացնում եւ դրանց բացակայությունը կամ կասեցումը, ընդհակառակը, կվտանգի ընկերական իրավունքի արդյունավետ դատական պաշտպանությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Նայասպանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխով սահմանված դրույթները համապարասխանում են Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ**

*8 մայիսի 2007 թվականի
ՄԴՈ-700*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՅԻ ԻՐԻՆԱ ԵԴԻԳԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ
«ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՆՏ ՕՐԵՆՔԻ 68
ՆՈՂՎԱԾԻ 15-ՐԴ ՄԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՆՏ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 230
ՆՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ 4.1. ԵՆԹԱԿԵՏԻ ԵՎ 231.2. ՆՈՂՎԱԾԻ 1-ԻՆ
ԿԵՏԻ 1-3 ԵՆԹԱԿԵՏԵՐԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

11 մայիսի 2007թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Նովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ դիմող Ի. Եդիգարյանի, նրա ներկայացուցիչ Ա. Զոհրաբյանի, պատասխանող կողմի ներկայացուցիչ՝ ՆՏ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 25, 32, 60 եւ 69 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Ի. Եդիգարյանի դիմումի հիման վրա՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերության եւ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի 4.1. ենթակետի եւ 231.2. հոդվածի 1-ին կետի 1-3 ենթակետերի՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ի. Եդիգարյանի՝ 31.01.2007թ. դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմողի լիազոր ներկայացուցչի եւ պատասխանող կողմի գրավոր բացատրությունները, գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՆՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, ՆՏ Նախագահն այն սպորագրել է 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

2. ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի, 231.1. եւ 231.2. հոդվածների՝ ՆՏ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՆՏ սահմանադրական դատարանը 2007 թվականի ապրիլի 9-ին կայացրել է ՄԴՈ- 690 որոշումը:

Նկատի ունենալով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32 հոդվածի 3-րդ մասը, 60 հոդվածի 1-ին մասը եւ հիմք ընդունելով ՄԴՈ- 690 որոշումը, ինչպես նաեւ դիմող կողմի ներկայացուցչի՝ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող հոդվածների մասով հարցը քննարկման առարկա չդարձնելու գրավոր խնդրանքը, «Քաղաքացի Ի. Եղիզարյանի դիմումի հիման վրա՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերության եւ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի 4.1. ենթակետի եւ 231.2. հոդվածի 1-ին կետի 1-3 ենթակետերի՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը՝ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի 4.1. ենթակետի եւ 231.2. հոդվածի 1-ին կետի 1-3 ենթակետերի մասով ենթակա է Կ Ա Ր Ճ Մ Ա Ն :

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքն ընդունել է ՆՏ Ազգային ժողովը՝ 2006 թվականի հունիսի 1-ին, Նանրապետության Նախագահն այն սպորագրել է 2006թ. հունիսի 14-ին եւ ուժի մեջ է մտել 2006թ. հուլիսի 1-ից:

4. Քաղաքացի Ի. Եղիզարյանը, հիմք ընդունելով իր դիմումի հիման վրա նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վերաբերյալ ՆՏ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի՝ 08.08.2006թ. վճիռը, ինչպես նաեւ ՆՏ վճռաբեկ դատարանի 09.11.2006թ. որոշումը, վիճարկում է իր նկատմամբ կիրառված՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերության սահմանադրականությունը:

ՆՏ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը 08.08.2006թ. քննելով Ի. Եղիզարյանի հայցադիմումը՝ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վերաբերյալ, վճռել է ՆՏ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 07.09.2004թ. վճիռը թողնել ուժի մեջ եւ նոր հանգամանքներով վճիռը վերանայելու մասին դիմումը՝ առանց բավարարման:

Դիմումը մերժելիս վերաքննիչ դատարանը կիրառել է «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերությունը:

ՆՏ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 08.08.2006թ. վճռի դեմ 19.10.2006թ. ներկայացվել է վճռաբեկ բողոք, որի հիման վրա ՆՏ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը 09.11.2006թ. կայացրել է վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում:

Դիմող կողմը գտնում է, որ համաձայն ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241.1., 241.2., 241.3. հոդվածների, սահմանադրական դատարանի ուժի մեջ մտնող որոշումը հիմք է խախտված իրավունքների դատական պաշտպանության իրավունքի իրագործման համար՝ վերանայման համար նոր հանգամանքներն առաջանալու օրվանից եռամսյա ժամկետում:

Ըստ դիմողի, վերաքննիչ դատարանի՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերությունը կիրառելու հետեւանքով ինքը գրկվել է իր խախտված իրավունքները պաշտպանելու հնարավորությունից, քանի որ վերաքննիչ դատարանը չի անդրադարձել քաղաքացիական գործին, այլ մերժել է՝ պարզառաքանելով միայն, որ նորմատիվ ակտերը, որոնք սահմանադրական դատարանի որոշմամբ հակասահմանադրական են ճանաչվել, դեռևս ուժը չեն կորցրել եւ համարվում են Սահմանադրությանը համապատասխանող:

Վիճարկելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի՝ քննության առարկա դրույթը, դիմողը գտնում է, որ դրա գործողության պարագայում ինքն ուղղակի գրկվել է ՆՏ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով երաշխավորված՝ խախտված իրավունքները վերականգնելու հնարավորությունից:

Դիմողի կարծիքով, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասում վկայակոչված Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասն օրենսդրին իրավունք չի տվել սահմանելու «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի վիճարկվող դրույթը, ըստ էության, բացառելով սահմանադրական դատարանի որոշման «պարպադիրությունը եւ ճանաչելիությունը», քանի որ Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սահմանադրական դատարանի որոշումները եւ եզրակացությունները վերջնական են եւ ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

Դիմողը գտնում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասին համապատասխան՝ սահմանադրականության հարցերով որոշումներ ընդունելիս սահմանադրական դատարանը պետք է հաշվի առնի նաեւ մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների եւ ազատությունների պահովումը եւ պաշտպանությունը: Այս տեսանկյունից «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերությունը հակասում է նաեւ Սահմանադրության 3-րդ հոդվածին:

Ըստ դիմողի՝ այդպիսի իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեք հռչակելն ինքնանպատակ չէ եւ սահմանափակում է պետության ցանկացած գործողություն, ներառյալ՝ օրինաստեղծ, գործադիր եւ դատական իշխանության մարմինների գործողությունները:

5. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ քննության առարկա դրույթը համապատասխանում է ՏՏ Սահմանադրության` դիմող կողմի հիշատակած հոդվածներին: Ըստ պատասխանող կողմի` «... ՏՏ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասով ՏՏ սահմանադրական դատարանին վերապահված իրավասությունը չի կարող փարաձվել այն դեպքերի վրա, երբ հնարավոր է մարդու և քաղաքացու` Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների ապահովման և պաշտպանության բացառումը»: Պատասխանող կողմը բավարար հիմք չի տեսնում քննության առարկա դրույթը` ՏՏ Սահմանադրության հիշյալ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչելու համար, քանի որ դիմող կողմն իր սահմանադրական իրավունքների պաշտպանության նոր հնարավորություն ստանում է (նոր հանգամանքներով վճիռների և որոշումների վերանայման հիմքով) իրավական ակտի կամ դրա որեւէ դրույթի Սահմանադրությանը հակասող ճանաչելու վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի դրույթները, համակարգային առումով փոխկապակցված լինելով նույն հոդվածի 16-րդ և 17-րդ մասերի դրույթների հետ, երաշխավորում են Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի պահանջների կատարումը: Սահմանադրությունը լիազորում է սահմանադրական դատարանին Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ սահմանել: Այս դրույթի` թեկուզ դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների փառաջի նշանակությամբ մեկնաբանությունից բխում է, որ եթե սահմանվել է ավելի ուշ ժամկետ, ապա սահմանադրական դատարանի որոշման ընդունման և հրապարակման պահից Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ ակտը (դրույթը) իրավական ուժը չի կորցնում: Նակառակ պարագայում, ինչպես ցույց է տալիս նաև միջազգային պրակտիկան, սահմանադրական դատարանի նման լիազորությունը կիմաստագրվել: Սահմանադրորեն կարեւորելով սահմանադրական դատարանի որոշման հետեւանքով առաջացող հնարավոր իրավիճակների սահմանադրականությունը, նկատի ունենալով, որ հասարակական հարաբերությունների դինամիկ գործընթացում իրավակարգավորման կարուկ փոփոխությունները կարող են առաջացնել փարաբնույթ հակասահմանադրական իրավիճակներ, դրանք հաղթահարելու համար նախատեսելով սահմանադրական դատարանի որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմատիվ ակտի կամ դրա մի մասի ուժը կորցնելու փարաժամկետման հնարավորություն, միաժամանակ օրենսդիրը խստորեն սահմանափակել է սահմանադրական դատարանի հայեցողական մոտեցման շրջանակները: Սահմանադրության 100 հոդվածում հստակ ամրագրելով, որ սահմանադրական դատարանն իր լիազորություններն իրականացնում է օրենքով սահմանված կարգով, օրենսդիրը «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասում ամրագրել է, որ. «Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, եթե սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կամ դրա որեւէ

դրույթի՝ սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետեւանքներ հանրության եւ պետության համար, որոնք կխաթարեն այդ պահին փոխյալ նորմափիլ ակտի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ապա սահմանադրական դատարանը կարող է, փոխյալ ակտը ճանաչելով Սահմանադրությանը հակասող, իր որոշման մեջ հետաձգել այդ ակտի իրավաբանական ուժը կորցնելը:

Այդ դեպքում մինչեւ ակտի իրավաբանական ուժը կորցնելն ակտը համարվում է Սահմանադրությանը համապատասխանող»:

Միաժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» ՏՃ օրենքի 68 հոդվածի 16-րդ մասը նախատեսում է, որ. «Նորմափիլ իրավական ակտի ուժը կորցնելու հետաձգումը պետք է համարժեք լինի այն ժամանակահատվածին, որի ընթացքում հնարավոր է անհրաժեշտ է ձեռնարկել սույն հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերությունում նշված հետեւանքները կանխելու ուղղված միջոցառումները»: Բացի դրանից, նույն հոդվածի 17-րդ մասի համաձայն՝ «Ներաձգման մասին որոշումը պետք է ընդունվի այն հաշվարկով, որպեսզի դրանով իրապես կանխվեն անխուսափելի եւ ծանր հետեւանքները հանրության եւ պետության համար, եւ ավելի էական վնաս չպատճառվի մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներին եւ ազատություններին»:

Այս համարեքստում, հակասահմանադրական ճանաչված իրավական ակտը կամ դրա դրույթը շարունակում է գործել սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության 102 հոդվածի հիմքով դրանց գործողությունը հիմնավորված կերպով փարաժամկետելու շնորհիվ: Ուստի, վիճարկվող դրույթի իրավական բովանդակությունն աճանցյալ է եւ անհրաժեշտաբար բխում է Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՃ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերության դրույթներից: Ներառաբար, «Սահմանադրական դատարանի մասին» ՏՃ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերության դրույթի ձեւակերպումն իրավակիրառական պրակտիկայում պետք է մեկնաբանվի Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի համարեքստում, որ Սահմանադրությունը հնարավոր է դարձնում սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը չհամապատասխանող նորմի ժամանակավորապես կիրառումը: Ինչ վերաբերում է նոր հանգամանքներով քաղաքացու իրավունքների պաշտպանության հնարավորությանը, ապա այն առաջ է գալիս սահմանադրական դատարանի որոշմամբ իրավական ակտի կամ դրա որեւէ դրույթի իրավական ուժը կորցնելու, այսինքն՝ հետաձգման ժամկետը լրանալու պահից՝ օրենքով սահմանված կարգով:

Այսուհանդերձ, ինչպես վկայում են նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՃ օրենքի 68 հոդվածի 16-րդ եւ 17-րդ մասերի պահանջները, հակասահմանադրական ճանաչված նորմի հետագա գործողությունը միայն այն նպատակն է հետապնդում, որպեսզի դրանով կանխվեն իրավական անվտանգության սպառնալիքները, չառաջանան անխուսափելի եւ ծանր հետեւանքներ հանրության եւ պետության համար, ավելի էական վնաս չպատճառվի մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներին եւ ազատություններին: Ընդ որում, եթե Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի, ինչպես

նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերության դրույթները սահմանադրական դատարանի համար հիմք են իրավական ակտի կամ դրա առանձին հակասահմանադրական դրույթի ուժը կորցնելու փարաժամկետման համար, ապա պետական իշխանության ու Կրեմլի հինգնակառավարման մարմինները (հատկապես իրավաստեղծ) պարտավոր են այդ ժամանակահատվածում այնպիսի հնարավոր եւ անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել, որոնցով կկանխվեն «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերությունում նշված հետեւանքները: Ներառաբար, հակասահմանադրական ճանաչված եւ փարաժամկետված իրավական նորմերի հետագա կիրառմանը չպետք է մեխանիկական մոտեցում ցուցաբերվի, այլ այն պետք է իրականացվի՝ հաշվի առնելով փարաժամկետման հիմքում ընկած եւ օրենքով նախատեսված վերոհիշյալ գերակայություններից ու սահմանադրական հիմնարար սկզբունքներից բխող՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, բացառելով նաեւ հակասահմանադրական ճանաչված դրույթների վերաբարդրությունը ցանկացած իրավական ակտում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասփանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասփանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայասփանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Քաղաքացի Ի. Եղիգարյանի դիմումի հիման վրա՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերության եւ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի 4.1. ենթակետի, 231.2. հոդվածի 1-ին կետի 1-3 ենթակետերի՝ Նայասփանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը՝ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի 4.1. ենթակետի, 231.2. հոդվածի 1-ին կետի 1-3 ենթակետերի մասով՝ կարճել:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերությունը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից ներկայացրած իրավական դիրքորոշման շրջանակներում:

3. Նայասփանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

*11 մայիսի 2007 թվականի
ՄԴՈ-701*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐԱՅԻԿ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԵՎ ՆԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԿՈՒՅՄԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆՏ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊԻՔԻ 231.2. ՆՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ 3-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԻ, ՆՏ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍՊԻՔԻ 300 ՆՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

15 մայիսի 2007թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Զ. Աուկայանի, Ն. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմողների, դիմող Ա. Սաֆարյանի ներկայացուցիչ՝ Ռ. Սաֆարյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՏ ԱԺ աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա.Խաչատրյանի,

համաձայն ՆՏ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ - կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Ա. Սաֆարյանի եւ Ն. Նակոբյանի դիմումի հիման վրա՝ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի, ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Ա. Սաֆարյանի եւ Ն. Նակոբյանի՝ 05.03.2007թ. դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի ներկայացուցիչների գրավոր բացատրությունները, հետազոտելով վիճարկվող նորմերը, ինչպես նաեւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Դիմելով ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի սահմանադրականության հարցով, դիմողները սահմանադրական դատարան են ներկայացրել Երևանի Աջափնյակ եւ Դավթաշեն համայնքների առաջին արյանի դատարանի 2006թ. մարտի 24-ի, ՆՏ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2006թ. մայիսի 3-ի վճիռները, ինչպես նաեւ ՆՏ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 2007թ. հունվարի 31-ի՝ վերջնական դատական ակտեր հանդիսացող որոշումները: Քաղաքացիներ Երանիկ Նակոբյանի եւ Արայիկ Սաֆարյանի միջեւ 23.10.2003թ. կնքված գործարքը վավեր ճանաչելու մասին հայցն Աջափնյակ եւ Դավթաշեն համայնքների առաջին արյանի դատարանի վճռով մերժվելուց հետո, վերաքննիչ բողոքի հիման վրա՝ ՆՏ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանն այդ գործարքն որակելով որպես առուվաճառքի պայմանագիր, հեղեուբար, նաեւ նոտարական վավերացման ենթակա (ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 562 հոդված), կիրառելով ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի կանոնը, այն վավեր է ճանաչել: Արդյունքում, միաժամանակ ճանաչվել է Ե. Նակոբյանի սեփականության իրավունքը Երևան քաղաքի Բաշինջաղյան փողոցի թիվ 184 շենքի հարեանությամբ գտնվող, սույն գործով դիմողների սեփականությունը հանդիսացող առևտրի սրահի համապատասխան մասի նկատմամբ: ՆՏ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատն իր՝ 31.01.2007թ. որոշումներով վերադարձրել է ՆՏ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի վերոհիշյալ վճռի դեմ բերված վճռաբեկ բողոքները:

2. Դիմողները միաժամանակ վիճարկում են ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի դրույթների սահմանադրականությունը:

Նկատելով, որ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի սահմանադրականության վերաբերյալ առկա է ՆՏ սահմանադրական դատարանի 2007 թվականի ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշումը, ուստի հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32 հոդվածի 3-րդ մասի եւ 60 հոդվածի 1-ին մասի դրույթները, սույն գործի վարույթը՝ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի սահմանադրականության մասով՝ ենթակա է կարճման:

3. ՆՏ քաղաքացիական օրենսգրքը ՆՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից սպորազրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածը սահմանում է.

«Հոդված 300. Գործարքի նոտարական ձեւը չպահպանելու հետեւանքները

1. Գործարքի նոտարական ձեւը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առջինն է:

2. Եթե կողմերից մեկը լրիվ կամ մասնակի կապարել է նոտարական վավերացում պահանջող գործարքը, իսկ մյուս կողմը խուսափում է գործարքի նոտարական վավերացումից, դապարանն իրավունք ունի գործարքը կապարած կողմի պահանջով այն վավեր ճանաչել: Այդ դեպքում գործարքի հեպագա նոտարական վավերացում չի պահանջվում:

3. Գործարքի նոտարական վավերացումից անհիմն խուսափող կողմը պեպք է մյուս կողմին հապուրցի գործարքը կնքելու ուշացման հեպ կապված վնասները»:

Դիմող կողմը գպնում է, որ ՆՆ քաղաքացիական օրենսգրքի վերոհիշյալ հողվածի 2-րդ կեպի դրույթները չեն համապապասխանում ՆՆ Սահմանադրության 3 հողվածին, 8 հողվածի 1-ին մասին, 31 հողվածի 1-ին եւ 2-րդ մասերին:

Դիմող Ա. Սաֆարյանի ներկայացուցիչ Ռ. Սաֆարյանը, մինչեւ սույն գործով դապաքնությունն սկսվելը, «Սահմանադրական դապարանի մասին» ՆՆ օրենքի 47 հողվածի համաձայն միջնորդել է նաեւ քննել ՆՆ քաղաքացիական օրենսգրքի 300 հողվածի 2-րդ կեպի հեպ համակարգային առումով փոխկապակցված՝ ՆՆ քաղաքացիական օրենսգրքի 289 հողվածի սահմանադրականության հարցը:

Այդ հողվածը սահմանում է.

«հողված 289. Գործարքի հասկացությունը

Գործարքները քաղաքացիների եւ իրավաքանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ եւ պարպականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն»:

Դիմողը գպնում է, որ անորոշ ձեակերպման հեպեանքով վերոհիշյալ հողվածի դրույթները չեն համապապասխանում ՆՆ Սահմանադրության 31 հողվածի 2-րդ մասին:

Դիմողներն իրենց դիրքորոշումը պապճառաքանում են հեպելյալ փաստարկներով.

ա/ քաղաքացիական իրավունքի ընդհանուր սկզբունքներից են հանդիսանում կողմերի իրավահավասարությունը եւ քաղաքացիական գործարք կնքելու կամավորությունը: Գործարքն ունի կապարման մի շարք փուլեր: Նոտարական վավերացում պահանջող գործարքի կապարման փուլերից մեկն էլ հանդիսանում է նոտարական գործողությունների կապարմանը մասնակցելը: Գործարք կնքելու կամավորության սկզբունքից բխում է նաեւ գործարքի կնքումից հեպագայում ցանկացած պապճառով հրաժարվելը, այդ թվում՝ նոտարական գործողությունների կապարմանը չմասնակցելը: Նման պայմաններում օրենքը հնարավորություն է փալիս դապարանին գործարքը ճանաչել վավեր, ինչը չի բխում իրավահավասարության եւ կամավորության՝ ՆՆ քաղաքացիական օրենսգրքով սահմանված սկզբունքներից, որոնք գերակայություն ունեն օրենսգրքի մյուս սկզբունքների նկապմամբ: Այդ պայմաններում գործարքը վավեր ճանաչելը կարող է մյուս կողմին հարկադրաքար սեփականությունից գրկելու (այդ թվում նաեւ՝ համասեփականափորոջը) հեպեանք առաջացնել,

բ/ ՆՆ Սահմանադրության 43 հողվածը սեփականության իրավունքը չի դիպարկում որպես այդ հողվածի հիմքերով սահմանափակվող իրավունք, առկա է իրավունքների սահմանափակման այն առանձնահապուկ դեպքը, երբ Սահմանադրությունն է որոշում

տվյալ իրավունքի սահմանափակման չափանիշն ու սահմանները՝ չվերապահելով այն նույնիսկ օրենսդրի իրավասությանը: Այդպիսի սահմանափակում կարող է փռելի ունենալ օրենքով նախատեսված դեպքերում՝ բացառապես դատական կարգով սեփականությունից զրկելու միջոցով՝ որպես պարասխանավությունից բխող հարկադիր գործողություն: Մինչդեռ, ՆՏ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող դրույթներն իրավախախտման կամ պայմանագրային պարտավորության չկատարման դեպքերի բացակայության պայմաններում անհիմն կերպով հնարավորություն են ընձեռում դիտարկելու անձին սեփականությունից զրկելը նաև որպես պարասխանավությունից չբխող հարկադիր գործողություն: Իրավական անորոշության հեղուկացումը չի երաշխավորվում գույքի նկատմամբ համասեփականատերերի իրավունքի պաշտպանությունը, հնարավորություն ընձեռելով դատական կարգով անձի վրա դնելու՝ Սահմանադրությամբ չսահմանված պարտականություններ:

4. Առարկելով դիմող կողմի պնդումների դեմ, պարասխանող կողմը գտնում է, որ վիճարկվող նորմը համապարասխանում է ՆՏ Սահմանադրությանը: Ըստ պարասխանողի՝ օրենսդիրը նուրբական վավերացումը չի ճանաչում որպես գործարքի կատարման, պայմանագրի կնքման փուլերից մեկը: Նուրբական այդ գործողությամբ սուկ վավերացվում է պայմանագիրն ստորագրողների ինքնությունը, պայմանագրի՝ ՆՏ օրենսդրությամբ սահմանված վավերապայմաններին համապարասխանությունը: Օրենսդիրը պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարում թույլատրում է միայն օրենքով կամ տվյալ պայմանագրով այդպիսի իրավունք նախատեսվելու դեպքում: Պարասխանող կողմը գտնում է, որ ՆՏ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող դրույթի շրջանակում պայմանագիրը դիմողը կնքել է ինքնուրույն, առանց որեւէ հարկադրանքի, հեղուրբար, դրանով իսկ իրացրել իր՝ որպես սեփականատիրոջ իրավագորությունն իր հայեցողությամբ փիրապելելու, օգտագործելու, փնօրինելու եւ կրակելու իր սեփականությունը, ուստի սեփականության իրավունքից զրկման մասին խոսք լինել չի կարող: Ընդունելի չէ նաև դիմողի բերած պարճառբանությունը համասեփականատիրոջ համաճայնության պարտադիր լինելու վերաբերյալ:

Ըստ պարասխանող կողմի՝ ՆՏ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող նորմի վերլուծությունը՝ ՆՏ Սահմանադրության 18, 19, 91 եւ 94 հոդվածների համապեքստում վկայում է, որ օրենսդիրը դատարանին ընճեռել է որոշում կայացնելու դիսպոզիտիվ հնարավորություն, ինչը պայմանավորված է վիճարկվող նորմի բնույթով, այսինքն՝ դատարանը յուրաքանչյուր գործով պեքք է գնահատի գործի բուրբ հանգամանքները, համադրելով ինչպես օրենսգրքի նորմերի պահանջները, այնպես էլ քաղաքացիական իրավունքի ընդհանուր սկզբունքները:

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը հիմք ընդունելով նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 7-րդ եւ 9-րդ մասերի պահանջները, անհրաժեշտ է համարում պարզել եւ գնահատել:

ա/ քաղաքացիական իրավունքների եւ պարտականությունների սահմանման, փոփոխման եւ դադարման հարաբերությունները կարգավորող իրավական ակտի պահանջվող տեսակը,

բ/ ՏՃ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող նորմում, ինչպես նաեւ գրավոր գործարքների նույնպիսի վավերացման գործող կարգում, մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների (այդ թվում՝ սեփականության) ու ազատությունների ապահովման եւ պաշտպանության, ազատ իրականացման երաշխավորվածությունը, այդ իրավունքների ու ազատությունների սահմանափակումների թույլատրելիությունը,

գ/ վիճարկվող նորմի հետ համակարգային առումով փոխկապակցված ՏՃ քաղաքացիական օրենսգրքի այլ նորմերի դրույթների սահմանադրականությունը,

դ/ վիճարկվող նորմում դատարանին վերապահված լիազորության համապատասխանությունն արդարադատության իրականացման՝ Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքային պահանջներին,

ե/ վիճարկվող նորմի մեկնաբանման եւ կիրառման վերաբերյալ դատական պրակտիկան:

6. ՏՃ Սահմանադրության 3, 8, 14, 14.1., 18, 19, 31 եւ բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների եւ ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարփադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաեւ՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՏՃ Սահմանադրության 83.5. հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն՝ բացառապես Նայաստանի Նանրապետության օրենքներով են սահմանվում.

- ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները եւ կարգը,

- ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաեւ պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը:

ՏՃ Սահմանադրության վերոհիշյալ նորմի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՏՃ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի եւ այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային եւ այլ պարտավորությունների ծագման, փոփոխման եւ դադարման հիմքերը եւ կարգը:

Քաղաքացիական իրավունքներ եւ պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն ուղղված՝ քաղաքացիների եւ իրավաբանական անձանց գործողություններն անմիջականորեն կարգավորվում են ՏՃ քաղաքացիական օ-

րենսգրքի հինգերորդ բաժնի 18-րդ գլխում ներառված նորմերով, այդ թվում նաև՝ սույն գործով վիճարկվող նորմեր պարունակող 289 և 300 հոդվածներով:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10 հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11, 12, 14, 16 հոդվածներ), գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ընդհանուր կարգը (135 հոդված), սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների պաշտպանության և այդ իրավունքների դադարման կարգը (273-288 հոդվածներ), պարտավորության հասկացությունը, կողմերի պարտավորությունների կատարումը (345-367 հոդվածներ), ինչպես նաև պարտավորությունների կատարման ապահովման և դրանց խախտման դեպքում՝ պարտախանապվության կարգը, դեպքերը (24-րդ և 26-րդ գլուխներ):

Սույն գործով վիճարկվող նորմի սահմանադրականությունը գնահատելիս սահմանադրական դատարանը ելնում է այդ նորմը պարունակող հոդվածի և ՏՃ քաղաքացիական օրենսգրքի վերոհիշյալ մյուս հոդվածների (նորմերի) իրավական բովանդակության համադրումից:

7. ՏՃ քաղաքացիական օրենսգրքի 10 և 289 հոդվածների համաձայն՝ քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք են օրենքով նախատեսված պայմանագրերը և այլ գործարքներ կամ այն գործողությունները, որոնք ուղղված են այդպիսի իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն: Օրենսդիրը հստակեցրել է քաղաքացիական իրավունքների ազատ իրացման շրջանակը (թույլատրելի սահմանները), համաձայն որի՝ անձինք իրենց պարտականող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ, պայմանով, որ այդ իրավունքների իրականացումը չպետք է վնաս պարճառի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներին ու օրինական շահերին:

Վերոհիշյալ նորմերի բովանդակությունից հետևում է, որ քաղաքացիական հարաբերություններում անձի հայեցողական այդպիսի ազատ գործողությունների արդյունքում են ծագում, փոփոխվում և դադարում քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ, ինչը, քննության առարկայի շրջանակներում բխում է ՏՃ Սահմանադրության 31 հոդվածի 1-ին մասի և 42 հոդվածի 2-րդ մասի դրույթներից, հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով ՏՃ քաղաքացիական օրենսգրքի 289 հոդվածի սահմանադրականության վիճարկումը հիմնավոր չէ:

8. Քաղաքացիաիրավական հարաբերություններում անձի հայեցողական ազատության և դրա՝ օրենքով նախանշված շրջանակներում իրականացնելու սկզբունքից է անմիջականորեն բխում պայմանագրերի և այլ գործարքների (բովանդակության, ձևի) նկատմամբ ՏՃ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ինչպես ընդհանուր (289-

317, 436-469 հողվածներ), այնպես էլ հատուկ կանոնները, որոնցից է գրավոր ձեռով կնքվող գործարքների նոտարական վավերացումը (234, 263, 562, 572, 595, 610, 620, 678, 686, 959, 1203-1208, 1245 հողվածներ): Մ քաղաքացիական օրենսգրքի 296 և 299 հողվածների համաձայն՝ գործարքների նոտարական վավերացումն ըստ ձեռի կատարվում է գործարքի բովանդակությունն արտահայտող և գործարք կնքող անձանց (կամ նրանց լիազոր ներկայացուցիչների) ստորագրությունները պարունակող փաստաթղթի վրա նոտարի կամ նոտարական գործողության կատարման իրավունք ունեցող պաշտոնատար անձի կողմից վավերացնող մակագրությամբ: Ընդ որում, Մ քաղաքացիական օրենսգրքի 299 հողվածի 3-րդ կետի համաձայն՝ գործարքների նոտարական վավերացումը պարտադիր է Մ քաղաքացիական օրենսգրքում նշված դեպքերում կամ կողմերից որեւէ մեկի պահանջով, իսկ օրենսգրքի 300 հողվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքի նոտարական ձեռը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության և առջինն է:

Մ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան նորմերի վերլուծությունը վկայում է, որ պարտադիր նոտարական վավերացման են ենթակա հիմնականում երկկողմ և բազմակողմ այն գրավոր գործարքները (պայմանագրերը), որոնք ուղղակիորեն առնչվում են անշարժ գույքի օտարման և այդ գույքի հավաքարձագրային կառավարման հետ կապված իրավահարաբերությունների կարգավորմանը, իսկ այդ գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման (Մ քաղ. օր.-ի 301 հողվածի 1-ին կետ), որպիսի պահանջը չպահպանելն օրենսգրքի 302 հողվածի 2-րդ կետի համաձայն առաջացնում է օրենսգրքի 300 հողվածի 2-րդ կետում նախատեսված իրավակարգավորման միեւնույն միջոցների գործադրման հիմքեր և նույնպիսի իրավական հետևանքներ:

Փաստորեն, գործարքի նոտարական վավերացման նախապայմանը վերաբերում է այն դեպքերին, երբ անհրաժեշտ են իրավական լրացուցիչ միջոցներ՝ պետական գրանցման ձեռով նախապես երաշխավորելու, հատկապես՝ Մ Սահմանադրության 31 հողվածով նախատեսված սեփականության իրավունքի պաշտպանված իրականացումը (Մ - քաղ. օր.-ի 135, 301 հողվածներ), ինչպես նաև պետության շահերի պաշտպանությունը:

Միաժամանակ, «Նոտարիատի մասին» Մ օրենքի 3 հողվածի համաձայն՝ վավերացնելով փաստաթուղթը, նոտարը հաստատում է դրա օրինականությունը և հավաստում փաստաթղթի լիարժեք ապացուցողական ուժը, որն ունի օրենքով նախատեսված հանրային հեղինակություն:

Փաստորեն, գրավոր գործարքի նոտարական վավերացմամբ, «Նոտարիատի մասին» Մ օրենքով սահմանված ընթացակարգի շրջանակներում նախապես անվիճելի են ճանաչվում իրավաբանական նշանակություն ունեցող այնպիսի փաստեր, ինչպիսիք են.

ա/ գրավոր ձեռով գործարքի կնքումը և դրա՝ օրենքով նախատեսված կարգի պահպանումը,

բ/ պայմանագրի կողմերի ինքնության հաստատումը, նրանց իրավագործությունը և ազատ կամարտահայտությունը,

գ/ գործարքի պայմանների համապատասխանությունը ՏՏ օրենսդրության պահանջներին եւ միջազգային պայմանագրերի դրույթներին, ինչպես նաեւ կողմերի իրական մտադրությանը:

Այսպիսով, գրավոր որոշ գործարքների նոտարական պարտադիր վավերացման ինստիտուտը եւ այդպիսի գործարքներից ծագող, փոփոխվող եւ դադարող իրավունքների պետական գրանցման օրենսդրական պահանջը՝ ելնելով նաեւ անձի իրավունքների եւ դրանց երաշխավորված իրացման վերաբերյալ սահմանադրական սկզբունքային դրույթների բովանդակությունից, քաղաքացիական իրավունքների իրականացման ազատության որոշակի սահմանափակում նախատեսելով հանդերձ, կարեւոր երաշխիք է ինչպես անձանց իրավունքների (ներառյալ սեփականության իրավունքի) արդյունավետ իրացումն ու պաշտպանությունն ապահովելու, այնպես էլ պայմանագրի կողմերի սպանձնած պարտավորությունների բարեխիղճ կատարման, հետեւաբար, նաեւ քաղաքացիական (գույքային) շրջանառության երաշխավորված կայունությունն ապահովելու համար:

Սահմանադրական դատարանը, միաժամանակ արձանագրում է, որ գործի նյութերի համաձայն կողմերի միջեւ կնքվել է ոչ թե առուվաճառքի, այլ՝ փոխառության պայմանագիր, որը պայմանագրային հարաբերությունների այլ ինստիտուտ է եւ կարգավորվում է քաղաքացիական օրենսգրքի 46 գլխի նորմերով:

9. ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածում պարունակվող բառերի եւ ստորահայտությունների փառացի նշանակությամբ մեկնաբանությունից բխում է, որ գրավոր գործարքով պայմանավորված անձանց քաղաքացիական իրավունքների ազատ իրականացման եւ սահմանադրորեն ամրագրված սկզբունքներով դրանց պաշտպանությունը երաշխավորելու համար, օրենսդիրն անհրաժեշտ է համարել հասարակագրել որոշակի փաստերի իրավաբանական նշանակությունը եւ դրանց առկայությամբ պայմանավորված իրավակարգավորման համապատասխան միջոցներ ու կառուցակարգային լուծումներ: Այդպիսիք են.

- գործարքի նոտարական ձեւը չպահպանելը եւ դրա իրավական հետեւանքը,
- նոտարական վավերացում պահանջող գործարքը կողմերից մեկի կողմից մասնակի կամ լրիվ կատարելը եւ նոտարական վավերացումից մյուսի խուսափելը, այդ դեպքում քաղաքացիական իրավունքների պաշտպանության միջոցը,
- դատարանի լիազորությունը՝ գործարքը կատարած կողմի պահանջի դեպքում,
- գործարքը դատական կարգով վավեր ճանաչելը եւ դրա իրավական հետեւանքը,
- գործարքի նոտարական վավերացումից խուսափող կողմի պատասխանատվությունը (պարտավորությունները) մյուս կողմի առջեւ՝ կապված գործարքի կնքման ուշացման հետ:

Սահմանելով գրավոր որոշ գործարքների նոտարական վավերացման պարտադիր պայման, օրենսդիրը միաժամանակ հստակեցրել է այդ պայմանի խախտման իրավական հետեւանքները, ինչպես նաեւ խախտված քաղաքացիական իրավունքների պաշտպանության համապատասխան միջոցը: Տվյալ դեպքում, ՏՏ քաղաքացիական օ-

րենսգրքի 300 հոդվածի համաձայն գրավոր գործարքի նոտարական վավերացման օրենսդրական պահանջի կատարումից կողմի խուսափելն այն դեպքում, երբ մյուս կողմը լրիվ կամ մասնակի կատարել է այդ գործարքի պայմանները, վերջինիս համար հիմք են խախտված իրավունքները դատական կարգով պաշտպանելու սահմանադրական իր իրավունքն իրացնելու, իսկ դատարանին՝ իր հայեցողական լիազորության շրջանակներում վավեր ճանաչելու գործարքը, որի արդյունքում գործարքի հեղափոխական նոտարական վավերացում չի պահանջվում:

Փաստորեն, խոսքը վերաբերում է ոչ թե պայմանագրային պարտավորության կատարումից կողմի՝ օրենքով նախատեսված կարգով հրաժարվելու ինստիտուտին, այլ՝ սահմանված կարգով իրավաչափ գործողություն կատարելուց խուսափելուն:

10. Սույն գործով դիմումի առարկայի շրջանակներում քաղաքացիական իրավունքների եւ պարտականությունների ծագման, դրանց իրականացման, գործարքների (պայմանագրերի) կնքման, կատարման ու խախտված իրավունքների պաշտպանության, դրա հետ կապված վեճերով դատական հայեցողական լիազորության իրավաչափ շրջանակների, ՆՏ քաղաքացիական օրենսգրքի նորմերի, ինչպես նաեւ ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի դատական մեկնաբանման, ինչպես նաեւ միջազգային իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունից հետեւում է, որ լուծելով նոտարական վավերացում պահանջող գործարքը վավեր ճանաչելու վերաբերյալ վեճ, յուրաքանչյուր դեպքում դատարանի խնդիրն է պարզել.

- գործարքի օրինականությունը (իրավաչափությունը), գրավոր ձեւի պահպանման փաստը,
- գործարքի նոտարական ձեւը չպահպանելը եւ մեղավոր կողմին,
- գործարքի նոտարական վավերացումից կողմի խուսափելը (գործողությամբ կամ անգործությամբ) եւ դրա հիմքերը,
- նոտարական վավերացում պահանջող գործարքը կողմերից մեկի լրիվ կամ մասնակի կատարելու փաստը եւ դրա օրինականությունը (իրավաչափությունը): Ընդ որում, գրավոր գործարքի փաստացի (մասնակի) կատարման հանգամանքի իրավական նշանակությունը դատարանների կողմից համանման քաղաքացիաիրավական վեճեր լուծելիս, կարեւորված է նաեւ ՆՏ դատարանների նախագահների խորհրդի՝ 2001թ. սեպտեմբերի 26-ի թիվ 43 որոշմամբ:

Ինչպես վկայում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավակիրառական պրակտիկան՝ կապված անձանց գույքային իրավունքների իրականացման բնագավառում պետության միջամտության թույլատրելիության շրջանակների հետ, սպա այդպիսին իրավաչափ է գնահատվում, եթե.

- իրականացվում է օրենքին համապատասխան,
- պայմանավորված է հանրային շահերով,
- ապահովում է մասնավոր եւ հանրային շահերի հավասարակշռություն:

Սույն գործի շրջանակներում գնահատելով ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի սահմանադրականությունը, սահմանադրական դատարանն արձա-

նագրում է, որ ցանկացած բնույթի՝ ներառյալ նոտարական վավերացում պահանջող գործարքների հետ կապված քաղաքացիաիրավական վեճեր քննելիս, դատարանը՝ որպես պետական մարմին պարտադրված է, առաջնորդվելով ՏՏ Սահմանադրությամբ, այդ վեճերը լուծել օրենքին համապատասխան, միաժամանակ անխուսափելիորեն պաշտպանելով ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային ու պետական շահերը:

Այսպիսով, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետն իր բովանդակությամբ, կիրառման պրակտիկայով եւ օրենսգրքի այլ նորմերի հետ ունեցած համակարգային փոխկապակցվածությամբ, երաշխավորում է նոտարական վավերացման ենթակա գործարքների կնքման ու կատարման հետ կապված հարաբերությունների (այդ թվում՝ սեփականության իրավունքի) կարգավորման իրավազափ միջոցների գործադրման, ինչպես նաև ՏՏ Սահմանադրության 3, 8, 14, 14.1., 18, 19, 31 եւ այլ հոդվածներով նախատեսված ու միջազգային իրավակիրառական պրակտիկայում հաստատված սկզբունքներով՝ անձի խախտված իրավունքների դատական պաշտպանության հնարավորություն:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Քաղաքացիներ Ա. Սաֆարյանի եւ Վ. Հակոբյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի մասով կարճել:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 289 հոդվածի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

15 մայիսի 2007 թվականի

ՍԴՈ-702

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՆԱԿՈՒՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆՏ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 313 ՆՈՂՎԱԾԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

3 հուլիսի 2007թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի (զեկուցող), Վ. Նով-
հաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,
մասնակցությամբ՝

դիմող՝ քաղաքացի Ա. Նակոբյանի,

գործով որպես պապասխանող կողմ ներգրավված ՆՏ Ազգային ժողովի պաշտո-
նական ներկայացուցիչ՝ ՆՏ ԱԺ աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչույթ-
յան պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն ՆՏ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ -
կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արշալույս Նա-
կոբյանի դիմումի հիման վրա՝ ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի՝ Նայասպա-
նի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու
վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղ. Ա. Նակոբյանի 05.03.2007թ. դիմումն է սահմա-
նադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող Ա. Նակոբյանի եւ պա-
պասխանող կողմի՝ ՆՏ Ազգային ժողովի բացապրությունները, հերպագրելով ՆՏ քաղա-
քացիական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրա-
պետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Չ Ե Ց .

1. ՆՏ քաղաքացիական օրենսգիրքն ընդունվել է Նայասպանի Նանրապետույթ-
յան Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի մայիսի 5-ին, Նանրապետության Նախա-

գահի կողմից այն ստորագրվել է 1998թ. հուլիսի 28-ին եւ «Նայասպրանի Նանրապեպոթյան քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՆՆ օրենքի համաձայն ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

ՆՆ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածը սահմանում է.

«1. Խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, մեկ կողմի ներկայացուցչի մյուս կողմի հեպ չարամիտ համաձայնությամբ կնքված գործարքը, ինչպես նաև այն գործարքը, որն անձն ստիպված է եղել կնքելու ծանր հանգամանքների բերումով իր համար ծայրահեղ ոչ ձեռնարկ պայմաններով, որից օգրվել է մյուս կողմը (ստրկացուցիչ գործարք), փութողի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր:

2. Եթե գործարքն անվավեր է ճանաչվել սույն հոդվածի 1-ին կետում նշված հիմքերից մեկով, ապա մյուս կողմը փութողին վերադարձնում է գործարքով իր ամբողջ սպասածը, իսկ բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում դրա արժեքը հատուցում է դրամով: Գործարքով մյուս կողմից փութողի սպասած գույքը, ինչպես նաև մյուս կողմից նրան հասանելիքը բռնագանձվում է հօգուտ Նայասպրանի Նանրապեպոթյան: Գույքը բնեղենով պեպոթյանը հանձնելու անհնարինության դեպքում դրա արժեքը բռնագանձվում է դրամով: Բացի դրանից, մյուս կողմը փութողին հատուցում է նրան պարճառած իրական վնասը»:

2. Ըստ վերջնական դատական ակտի՝ Ա. Վահրադյանը եւ Ա. Թումայանը դիմողից 2002 թվականի սեպտեմբեր - նոյեմբեր ամիսներին վերցրել են 4900 ԱՄՆ դոլար գումար, որը չի վերադարձվել, եւ վերջինս կրել է վնասներ: Ա. Վահրադյանի մայրը՝ Ա. Ումրոյանը պարտավորվել է վերադարձնել պարտքի մի մասը, բայց հեպագայում հրաժարվել է: Ուստի դիմողը հայց է ներկայացրել Երևան քաղաքի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին արյանի դատարան՝ 4.414.850 դրամ գումարի բռնագանձման պահանջի մասին: Նակընդդեմ հայցով Ա. Ումրոյանը պահանջել է անվավեր ճանաչել պարտավորագիրը: Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին արյանի դատարանի 2006 թվականի ապրիլի 10-ի վճռով հայցը բավարարվել է մասնակի, իսկ հակընդդեմ հայցը մերժվել: ՆՆ քաղաքացիական գործերով վերաբնիչ դատարանի 2006 թվականի հուլիսի 4-ի վճռով եւս հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել: Ա. Ումրոյանը դիմել է ՆՆ վճռաբեկ դատարան, որն իր 26.10.2006թ. որոշմամբ, ՆՆ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի 1-ին մասի հիմքով, Ա. Ումրոյանի պարտավորագիրն անվավեր է ճանաչել:

3. Քաղ. Ա. Նակոբյանը 05.03.2007թ. դիմել է ՆՆ սահմանադրական դատարան, գրնելով, որ ՆՆ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի դրույթները հակասում են ՆՆ - Սահմանադրության 14 հոդվածի, 31 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, 42 հոդվածի 2-րդ - մասի եւ 47 հոդվածի 1-ին մասի պահանջներին, եւ դրանք անհրաժեշտ է անվավեր ճանաչել:

Դիմող կողմը մասնավորապես մատնանշում է, որ վիճարկվող իրավական ակտի՝ 313 հոդվածում բացահայտված չեն «չարամիտ համաձայնությամբ կնքված գոր-

ծարք» եւ «ծանր հանգամանքների բերումով իր համար ծայրահեղ ոչ ձեռնարու պայմաններ» հասկացությունները: Ըստ դիմող կողմի՝ «... նորմից դժվար է կռահել, թե ինչ չափանիշներով են որոշվելու ծանր հանգամանքներն ու ծայրահեղ ոչ ձեռնարու պայմանները, ինչ չափի եւ բնույթի պեպք է դրանք համապատասխանեն, որպեսզի որակվեն «ծանր հանգամանքների բերում» եւ «ծայրահեղ ոչ ձեռնարու պայմաններ»»: Դիմող կողմը գտնում է, որ այս նորմն ընդունելիս օրենսդիրը դրան իրավական որոշակիություն չի հաղորդել, եւ դրանք չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին, իրավական որոշակիությունը բացակայում է նաեւ փուժողի հայցով դատարանի կողմից գործարքն անվավեր ճանաչելու ձեւակերպման մեջ:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը վկայակոչում է նաեւ ՆՏ սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի թիվ 630 որոշման 11-րդ կետի 6-րդ պարբերությունում փրված սահմանադրական դատարանի դիրքորոշումը, ըստ որի՝ «Տվյալ օրենքը պեպք է համապատասխանի նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որեւէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձեւակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ փա քաղաքացուն դրա հետ համարեղելու իր վարքագիծը»: Սահմանադրական դատարանի նշված իրավական դիրքորոշման հիման վրա դիմողը գտնում է, որ իր նկատմամբ կիրառված ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի դրույթները չեն կարող ՆՏ Սահմանադրության 31 հոդվածի 1-ին մասի իմաստով դիտարկվել որպես օրենք, ուստի այն հակասում է նաեւ ՆՏ Սահմանադրության 3 հոդվածին եւ 8 հոդվածի 1-ին մասին:

Ըստ դիմողի՝ ՆՏ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքը սահմանափակվում է ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի բովանդակությամբ, քանի որ սեփականատերը նախապես չգիտի իր դրամական միջոցներն այլ անձի հանձնելիս ինչ ծանր հանգամանքների եւ ծայրահեղ ոչ ձեռնարու ինչ պայմանների ամկայության դեպքում նա կգրկվի իր սեփականությունը հետ ստանալու իրավունքից, այսինքն՝ ապօրինի կերպով սահմանափակվում է նրա սեփականության իրավունքը:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ դիմողի փաստարկները հիմնավոր չեն, եւ դիմումը ենթակա է մերժման հետեւյալ նկատառումներով:

Նայատարանի Նանրապետությունը համարվելով ժամանագերմանական իրավական համակարգին հարող իրավական ավանդույթներ ունեցող երկիր, որտեղ դատարաններն առաջնորդվում են բացառապես օրենքներով, ենթադրվում է, որ օրենքները պեպք է լինեն որոշակի եւ հնարավորինս կանխատեսելի: Բայց դա չի նշանակում, որ օրենքները պեպք է կարգավորեն բոլոր մանրամասնությունները, իսկ դատարանները՝ մեխանիկորեն կատարեն դրանց հանձնարարականները:

Ըստ պատասխանողի՝ «Նասարակական հարաբերությունների դինամիկ զարգացման պայմաններում օրենսդրի համար բավականին դժվար է սքեղծել այնպիսի իրավական նորմեր, որոնք կգործեն երկարատեւ ժամանակահատվածում եւ համապարփակ

կկարգավորեն բոլոր հասարակական հարաբերությունները՝ բացարձակ որոշակիությամբ: ...

Ներեաբար, ոչ մի օրենք չի կարող հաշվի առնել իրավական կարգավորման ենթակա հասարակական հարաբերությունների բազմազանությունը եւ հստակ կանոնակարգել քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների այս կամ այն վարքագիծը»:

Պատասխանող կողմը փաստում է նաեւ, որ այս առումով Մարդու իրավունքների եվրոպական դափարանը նշել է. «Որքան էլ նորմը հստակ ձեւակերպվի իրավունքի ցանկացած համակարգում ... դատական մեկնաբանման փարրն անխուսափելի է: Միշտ գոյություն կունենա խրթին դրվագների պարզաբանման եւ փոփոխվող հանգամանքներին հարմարվելու անհրաժեշտություն»: Նիշյալ առումով պատասխանող կողմը գրում է, որ միանգամայն իրավացիորեն օրենսդիրը դափարանին ընձեռել է որոշում կայացնելու դիսպոզիտիվ հնարավորություն, ինչը պայմանավորված է վիճարկվող դրույթի կազուիստիկ (դիվադաբանական) բնույթով:

5. ՆՏ սահմանադրական դափարանն արձանագրում է, որ ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի 1-ին մասը սահմանում է գործարքի անվավերության այնպիսի հիմքեր, ինչպիսիք են խաբեությունը, բռնությունը, սպառնալիքը, մեկ կողմի ներկայացուցչի մյուս կողմի հեփ չարամիփ համաձայնությունը կամ ծանր հանգամանքների բերումով անձի համար ծայրահեղ ոչ ձեռնփու պայմանները:

Գործարքները քաղաքացիների կամ իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ եւ պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դաղարեցմանը: Քաղաքացիական օրենսդրության կարեւոր սկզբունքներից մեկն իրավահարաբերության մասնակիցների կամքի ազափ իրականացման սկզբունքն է: ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 3 հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ քաղաքացիները եւ իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքներ ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով եւ ի շահ իրենց: Նրանք ազափ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները եւ պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման: Քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների խախտված իրավունքների վերականգնումն ապահովելը, դրանց դափական պաշտպանությունը եւս օրենսդիրը դիփում է իբրեւ հիմնարար սկզբունք: Նենց այդ սկզբունքների իրագործմանն են նպատակաուղղված ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 5-րդ բաժնի 18-րդ գլխի «Գործարքների անվավերությունը» վերտառությամբ 2-րդ պարագրաֆի 303-317 հոդվածներում պարունակվող իրավանորմները:

ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի 1-ին մասում հստակ շարադրված են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում դափարանը փուժողի հայցով կարող է անվավեր ճանաչել գործարքը: Դիմողի այն փաստարկը, որ վիճարկվող նորմը գուրկ է իրավական որոշակիությունից, քանի որ դրանում բացահայտված չեն «ծանր հանգամանքների բերումով իր համար ծայրահեղ ոչ ձեռնփու պայմաններ» հասկացությունը, հիմնավոր

չէ: Նույնիսկ մեծ ցանկության դեպքում էլ, օրենսդրական փեխնիկայի առումով, անհնարին է նկարագրել բազմաթիվ ու բազմաբովանդակ բոլոր այն դեպքերը, երբ անձն, իր կամքին հակառակ, ստիպված է լինում կնքել իր համար ծայրահեղ ոչ ձեռնարկ պայմաններով գործարք: Եվ ամենեւին էլ պարտադրական չէ, որ օրենսդիրը ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածում նշված հիմքերով գործարքների անվավերության հարցի լուծումը նախատեսում է միայն դատական կարգով: Այսինքն՝ յուրաքանչյուր դեպքում, ելնելով գործի հանգամանքներից, դատարանն է որոշում՝ արդյոք կնքված գործարքն ստրկացուցիչ է, թե՛ ոչ: Մասնավորապես, դատարանը գործի քննությամբ ձեռք բերված ապացույցներով գնահատում է, թե փեխի ունեցել է խաբեություն, բռնություն, սպառնալիք, կողմի ներկայացուցչի մյուս կողմի հետ չարամիտ համաձայնություն, ինչ հանգամանքներում է կնքվել գործարքը, այդ հանգամանքները ծանր են եղել, թե՛ ոչ, գործարքի պայմանները հայցվորի համար ծայրահեղ ոչ ձեռնարկ են եղել, թե՛ ոչ: Այս հարցերը պարզելուց հետո միայն դատարանը կարող է հանգել եզրակացության՝ խախտվել է, արդյոք, կամքի ազատ արտահայտության եւ ի շահ իրեն իրավունքներ եւ պարտականություններ ձեռք բերելուն ուղղված գործողություններ կատարելու՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքը:

Ինչ վերաբերում է դիմող կողմի այն պնդմանը, թե ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի դրույթները հակասում են ՆՏ Սահմանադրության 14 հոդվածի, 31 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, 42 հոդվածի 2-րդ մասի եւ 47 հոդվածի 1-ին մասի պահանջներին, ապա պետք է նկատել, որ վիճարկվող հոդվածը ոչ միայն չի հակասում ՆՏ Սահմանադրության վերը նշված հոդվածներին, այլև կոչված է սահմանադրական այդ դրույթների իրական ապահովմանն այն առումով, որպեսզի քաղաքացիական իրավահարաբերություններում բացառվեն խաբեությունը, բռնությունը, սպառնալիքը, չարամիտ համաձայնությունը, ինչպես նաև ծանր հանգամանքներից օգտվելով՝ կողմի համար ծայրահեղ ոչ ձեռնարկ պայմաններով գործարքների կնքումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածում սահմանված դրույթները համապատասխանում են Նայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Նայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ
 3 հունիսի 2007 թվականի
 ՄԴՈ-705

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻ ՌՈՒԶԱՆՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 407 ՆՈՂՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 414.2. ՆՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ԿԵՏԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ՝ ՆՏ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

20 հուլիսի 2007թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով
Գ.Նարոթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Վ. Նովիանիսյանի
(զեկուցող), Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,
մասնակցությամբ՝

դիմող կողմ Ռ. Մանուկյանի, նրա ներկայացուցիչ՝ փաստաբան Բ. Մինասյանի,
գործով որպես պարասխանող կողմ ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի
ներկայացուցիչ՝ ՆՏ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի
1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաս-
արանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Ռուզաննա
Մանուկյանի դիմումի հիման վրա՝ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 407
հոդվածի 4-րդ մասի եւ 414.2. հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 4-րդ կետերի դրույթների՝ ՆՏ
Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Ռ. Մանուկյանի՝ 31.05.2007թ. դիմումն է սահմա-
նադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պա-
րասխանող կողմերի բացատրությունները, հերազոտելով ՆՏ քրեական դատավարու-
թյան օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետու-
թյան սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Նայասարանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը ՆԱ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՆԱ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998թ. սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՆԱ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի վիճարկվող դրույթները, որպես օրենսգրքի լրացումներ, ընդունվել են ՆԱ Ազգային ժողովի կողմից 2006թ. հուլիսի 7-ին՝ ՆՕ-152-Ն օրենքով:

2. Դիմողի կողմից վիճարկվում է ՆԱ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի դրույթների սահմանադրականությունը:

Նկատելով, որ ՆԱ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի դրույթների սահմանադրականության վերաբերյալ առկա է ՆԱ սահմանադրական դատարանի 2007 թվականի ապրիլի 11-ի ՍԴՈ-691 որոշումը, ուստի, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆԱ օրենքի 32 հոդվածի 3-րդ կետի դրույթները, սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմն իր 2007թ. հունիսի 18-ի որոշմամբ մերժել է Ռ. Մանուկյանի դիմումի քննության ընդունումը՝ ՆԱ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի մասով:

Դիմողը սահմանադրական դատարան է ներկայացրել ՆԱ վճռաբեկ դատարանի վերջնական դատական ակտի հանդիսացող երկու որոշում: Առաջինով՝ 2006թ. նոյեմբերի 13-ին վճռաբեկ դատարանը որոշել է (ՎԲ-301/06) վերադարձնել ներկայացված վճռաբեկ բողոքը՝ կիրառելով ՆԱ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 4-րդ կետերի դրույթները: Երկրորդով՝ 2007թ. հունվարի 22-ին վճռաբեկ դատարանը որոշել է (ՎԲ-11/07) բողոքը թողնել առանց քննության՝ կիրառելով ՆԱ քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի 4-րդ մասի պահանջը:

Դիմողը վիճարկում է ՆԱ քրեական դատավարության օրենսգրքի նշված դրույթների սահմանադրականությունը:

ՆԱ քրեական դատավարության օրենսգրքի «Վճռաբեկ բողոք» վերաբերյալ 407 հոդվածի 4-րդ մասում սահմանված է՝ «Բողոքը թողնվում է առանց քննության նաեւ այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանն այդ բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ որոշում է կայացրել»:

3. Դիմող կողմը գտնում է, որ ՆԱ քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի 4-րդ մասը հակասում է ՆԱ Սահմանադրության 3 (2-րդ մաս), 6 (2-րդ մաս), 18 (1-ին եւ 2-րդ մասեր), 19 (1-ին մաս) հոդվածներին՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

ա) վճռաբեկ դատարանը 2006թ. նոյեմբերի 13-ի իր որոշման մեջ նշել է, որ ՆԱ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի պահանջներից ելնելով՝ վճռաբեկ բողոքում հիմքեր չկան այն բավարարելու համար, իսկ 2007թ. հունվարի 22-ի որոշմամբ երկրորդ վճռաբեկ բողոքն անհիմն կերպով թողել է առանց քննության՝ պատճառաբանե-

լով, որ վճռաբեկ դատարանն այդ հարցին արդեն անդրադարձել է եւ 13.11.2006թ. իր որոշմամբ դրան փակել է լուծում: Որպես վերջին որոշման հիմնավորում նաեւ նշվել է, որ ՏՏ քրեական դատարանության օրենսգրքի 407 հոդվածի 4-րդ մասի համաձայն բողոքը թողնվում է առանց քննության այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանն այդ բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ որոշում է կայացրել,

բ) ՏՏ քրեական դատարանության օրենսգրքի 422 հոդվածի 3-րդ մասի համաձայն վճռաբեկ դատարանի որոշումը պետք է լինի պարճառաբանված, ապահովի օրենքի ճիշտ մեկնաբանությունը, նպաստի իրավունքի զարգացմանը: Իսկ 423 հոդվածի 2-րդ մասի պահանջով «որոշումը պետք է կայացվի հանուն Նայաստանի Նանրապետության»: 423 հոդվածի 6-րդ մասի պահանջով «որոշումը պետք է հրապարակվի դատական նիստում»: Չնայած օրենսգրքի նման պահանջներին, «վճռաբեկ դատարանը քրեական գործը չի ուսումնասիրել, դատական նիստ չի նշանակել, գործին մասնակցող անձանց չի կանչել, չի լսել իմ առարկություններն ու փաստարկները, որոշումը կայացրել է կաբինետային պայմաններում, որոշումը չի հրապարակել հանուն Նայաստանի Նանրապետության»:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ ՏՏ քրեական դատարանության օրենսգրքի՝ վիճարկվող 407 հոդվածի 4-րդ մասը վերաբերում է բողոքն առանց քննության թողնելու դեպքերից մեկին, երբ վճռաբեկ դատարանն այդ բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ որոշում է կայացրել: Բողոքն առանց քննության թողնելու նման հիմքի նախատեսումը կոչված է բացառելու վճռաբեկ դատարանի անհիմն ծանրաբեռնումը՝ կրկին անգամ անդրադառնալու այնպիսի հարցերի քննությանը, որոնց կապակցությամբ արդեն իսկ արքահայրել է իր իրավական դիրքորոշումը: Նշված դրույթը չի հակասում ՏՏ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներին, քանի որ վճռաբեկ դատարանը բողոքն առանց քննության է թողնում այն դեպքում, երբ, նույնիսկ հաշվի առնելով դատական համակարգում վճռաբեկ դատարանի դերն ու նշանակությունը, անձն արդեն իրացրել է վճռաբեկ բողոք բերելու իր իրավունքը եւ բողոքում ներկայացված հարցերի առնչությամբ վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:

Պատասխանող կողմը նաեւ գտնում է, որ ՏՏ քրեական դատարանության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի վիճարկվող դրույթները ոչ միայն չեն հակասում Սահմանադրությանը, այլ կոչված են ՏՏ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացմանը: Այս կետում նշված պայմանը, համաձայն որի՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե վերանայվող դատական ակտը հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշմանը, ուղղակիորեն պայմանավորված է օրենքի միապետակ կիրառումն ապահովելու՝ վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառնության իրականացման անհրաժեշտությամբ եւ հնարավորություն է փախս վճռաբեկ դատարանին հետետողական լինել սպորտդաս դատարանների կողմից իր կայացրած որոշումների կատարման նկատմամբ, դրանով իսկ որոշակիորեն ապահովելով իրավական կանխարեւելիության եւ անձի իրավունքների պաշտպանության սկզբունքները:

ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշվում է, որ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե առկա են նոր երեւան եկած հանգամանքներ: Ըստ պատասխանող կողմի՝ նոր երեւան եկած հանգամանքների հետեւանքով գործերի նորոգումը դատավճռի օրինականության եւ հիմնավորվածության ստուգման, դատական սխալների ուղղման ու քրեական գործով ճշմարտության բացահայտմանն ուղղված կարեւոր ընթացակարգ է: Նոր երեւան եկած հանգամանքներով գործի նորոգման ընթացակարգի նախապետումը ոչ միայն չի կարող հակասել դատական պաշտպանության սահմանադրական իրավունքին, այլ, ընդհակառակն, նշված իրավունքի իրացման լրացուցիչ միջոց է այն անձանց համար, ում օրինական շահերը շոշափող դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք կասկածի փակ են դնում կայացված դատավճռի օրինականությունն ու հիմնավորվածությունը:

5. Սույն գործով վիճարկվող օրենսգրքի նորմերը ներառված են ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ բաժնում: Բաժինը վերնագրված է՝ «Վարույթը վճռաբեկ դատարանում»: Դրանում նախապեսված են վճռաբեկության կարգով դատավճիռների ու որոշումների վերանայման դեպքերը, նշված է վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, սահմանված են վճռաբեկ բողոք բերելու հիմքերը, վճռաբեկ բողոքի բովանդակությունը եւ մնացած այն բոլոր հարցերը, որոնք կազմում են վճռաբեկ դատարանի վարույթի բովանդակությունը: Նշված բաժնում քննվում են նորմերը եւ դրույթները փոխկապակցված են եւ լրացնում են միմյանց: ՏՏ սահմանադրական դատարանը ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի՝ վճռաբեկ բողոք բերելու իրավունքի հետ կապված առանձին հոդվածների սահմանադրականությունը գնահատելու վերաբերյալ արտահայտել է իր իրավական դիրքորոշումները 11.04.2007թ. ՄԴՌ-691 որոշման մեջ:

6. ՏՏ սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի՝ վիճարկվող 4-րդ մասում քննվող գրքով դրույթը, համաձայն որի՝ բողոքը թողնվում է առանց քննության, եթե վճռաբեկ դատարանն այդ բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ որոշում է կայացրել, իրավագոր պահանջ է, քանզի բողոքն առանց քննության թողնելու նման հիմքի նախապետումը կոչված է բացառելու կրկին անդրադառնալ այնպիսի հարցերի քննությանը, որոնց կապակցությամբ արդեն իսկ վճռաբեկ դատարանն արտահայտել է իր իրավական դիրքորոշումը, երբ ի հայտ չեն եկել նոր հանգամանքներ:

ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի 4-րդ մասում օգտագործվող՝ «բողոքում նշված հիմքով» եւ «նույն գործով» ձեւակերպումները ենթադրում են, որ նույնաբնույթ է համարվում կրկին ներկայացված այն բողոքը, որում նույն դիմողը միեւնույն առարկայի վերաբերյալ նույն պարզառարանություններով ներկայացված բողոքի հիման վրա ձգվում է հասնել նպաստավոր որոշման:

Միջազգային իրավունքում հայտնի սկզբունքը՝ «Դատարանը կրկին չի որոշի արդեն որոշված գործը» (res judicata), ամրագրված է ինչպես միջազգային դատական

մարմինների հիմնադիր փաստաթղթերում, այնպես էլ պետությունների՝ քրեական և քաղաքացիական արդարադատության վերաբերյալ օրենսդրության մեջ: Այս սկզբունքը ենթադրում է, որ դատական գործով ընդունված վերջնական որոշումը որպես իրավական որոշակիության արդյունք ենթակա է հարգանքի: Մ քրեական դատավարության օրենսգրքի ոչ միայն 407 հոդվածի 4-րդ մասում, այլ նաև այլ բնույթի իրավահարաբերություններին առնչվող հոդվածներում նախատեսված է իրավունքի սուբյեկտի բողոքը կամ միջնորդությունն առանց քննության թողնելու իրավունքը (102 հոդվ. 2-րդ մաս, 103 հոդվ. 6-րդ մաս, 155 հոդվ. 3-րդ մաս, 381 հոդվ. 2-րդ մաս, 375.4 հոդվ. և այլն):

Մ քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի 4-րդ մասում վճռաբեկ դատարանի կողմից բողոքն առանց քննության թողնելու հիմքի նախատեսումը չի հակասում Մ Սահմանադրության 18 և 19 հոդվածներին, քանի որ վճռաբեկ դատարանը բողոքն առանց քննության պեղք է թողնի այն դեպքում, երբ արդեն իրացվել է վճռաբեկ բողոք բերելու անձի իրավունքը, և բողոքում ներկայացված հարցերի առնչությամբ վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:

7. Մ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշվում է, որ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե՝ «վերանայվող դատական ակտը հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշմանը»: Այս դրույթը վճռաբեկ դատարանի կողմից օրենքների միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառույթի իրականացման գործուն միջոցներից է: Այն հնարավորություն է տալիս վճռաբեկ դատարանին հետետողական լինել սպորադաս դատարանների կողմից իր կայացրած որոշումների կատարման նկատմամբ: Վճռաբեկ դատարանի նշված լիազորությունը կոչված է նաև որոշակիորեն ապահովելու արդարադատության ոլորտում իրավական կանխատեսելիության և անձի իրավունքների պաշտպանության սկզբունքները:

Մ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշվում է, որ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե առկա են նոր երեսան եկած հանգամանքներ: Նամաձայն Մ քրեական դատավարության օրենսգրքի 408 հոդվածի՝ նոր երեսան եկած հանգամանքների հետեանքով գործերի նորոգման խնդիր սովորաբար առաջանում է, եթե՝

- օրինական ուժի մեջ մտած դատավճռով կամ որոշմամբ հաստատված է վկայի, փոժողի ցուցմունքների, թարգմանչի կատարած թարգմանության ակնհայտ սխալ կամ փորձագետի եզրակացության ակնհայտ կեղծ լինելը, ինչպես նաև իրեղեն ապացույցների, քննչական ու դատական գործողությունների արձանագրությունների և այլ փաստաթղթերի կեղծված լինելը, որոնք հանգեցրել են չհիմնավորված կամ անօրինական դատավճիռ կայացնելուն.

- օրինական ուժի մեջ մտած դատավճռով կամ որոշմամբ հաստատված են դատավորների հանցավոր գործողությունները, որոնք նրանք թույլ են տվել տվյալ գործը քննելիս.

- դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով կամ որոշմամբ հաստատված են գործի քննությունը կատարող անձանց այնպիսի հանցավոր գործողություններ, որոնք

հանգեցրել են դափարանի չհիմնավորված եւ անօրինական դափավճիռ կամ գործը կարճելու վերաբերյալ որոշում կայացնելուն.

- ի հայտ են եկել դափավճիռ կամ որոշում կայացնելիս դափարանին անհայտ մնացած այլ հանգամանքներ, որոնք ինքնին կամ մինչեւ այդ պարզված հանգամանքների հետ ապացուցում են դափապարպյալի անմեղությունը կամ նրա կափարած հանցանքի նվազ ծանր կամ ավելի ծանր լինելը, քան այն, որի համար նա դափապարպվել է, ինչպես նաեւ ապացուցում են արդարացվածի կամ այն անձի մեղավորությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է կամ գործով վարույթը կարճվել է:

Նոր երեսան եկած հանգամանքների ցանկն սպառիչ չէ: Մ քրեական դափավարության օրենսգիրքը թույլ է փալիս նոր ի հայտ եկած հանգամանքների հիմքով նորոգել գործը նաեւ այլ դեպքերում (հոդվ. 408, մաս 1-ին, կեր 4):

Մ սահմանադրական դափարանը գրնում է, որ քրեական դափավարության օրենսգրքի 406, 407 եւ 408 հոդվածների համապեքսփում նոր ի հայտ եկած հանգամանքների հիմքով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին դրույթը լուրջ երաշխիք է դափարանի դափավճի օրինականությունը եւ հիմնավորվածությունն սփուզելու, դափական սխալն ուղղելու եւ քրեական գործով ճշմարտությունը բացահայտելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Մայասփանի Մանրապեքության Մահմանադրության 100 հոդվածի 1-ին կերով, 102 հոդվածով, «Մահմանադրական դափարանի մասին» Մայասփանի Մանրապեքության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Մայասփանի Մանրապեքության սահմանադրական դափարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Մայասփանի Մանրապեքության քրեական դափավարության օրենսգրքի 407 հոդվածի 4-րդ մասի եւ 414.2. հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 4-րդ կերերի դրույթները համապարասխանում են Մայասփանի Մանրապեքության Մահմանադրությանը:

2. Մայասփանի Մանրապեքության Մահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաճայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մփնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՄԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ**

**20 հուլիսի 2007թվականի
ՄԴՈ-709**

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻ ԳԵՎՈՐԳ ԳԶՐԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ ՆՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 311 ՆՈՂՎԱԾԻ 2- ՐԴ ԿԵՏԻ, 414.2. ՆՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԵՐԻ՝ ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

24 հուլիսի 2007թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարությունյանի /նախագահող/, Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի (զեկուցող), Վ. Նով-
հաննիսյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող կողմի ներկայացուցիչ Ն. Բաղդասարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված ՆՏ Ազգային ժողովի ներկա-
յացուցիչ ՆՏ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչույթ-
յան պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի
1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրեն-
քի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Գե-
տորգ Գրարյանի դիմումի հիման վրա՝ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 311
հոդվածի 2-րդ կետի, 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի՝ Նայասարանի Նան-
րապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերա-
բերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Գ. Գրարյանի՝ 26.01.2007թ. դիմումն է
սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող Գ. Գրարյանի, նրա
ներկայացուցիչ փաստաբան Ն. Բաղդասարյանի եւ պատասխանող կողմի գրավոր բա-
ցարկությունները, հեղափոխելով գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի
Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Նայասարանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը ՆՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998թ. հուլիսի 1-ին, ՆՏ Նախագահի կողմից այն ստորագրվել է 1998թ. սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 12-ից:

ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածը վերնագրված է. «Քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելը»: Նշված հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ դատարանը գործն ուղարկում է լրացուցիչ նախաքննության՝ «... 2) մեղադրողի միջնորդությամբ՝ երբ առկա են մեղադրանքը ավելի ծանր կամ փաստական հանգամանքներով սկզբնականից փարբերվող մեղադրանքով փոխելու հիմքեր»:

ՆՏ քրեական դատավարության օրենսգիրքը 2006թ. հուլիսի 7-ին լրացվել է 414.2. հոդվածով, որը վերնագրված է. «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը»: Ըստ այդ հոդվածի՝ «Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե՝ 1) վճռաբեկ դատարանի կողմից արվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միարեսակ կիրառության համար, կամ... 3) ստորադաս դատարանի կողմից դատավարական կամ նյութական իրավունքի խախտման արդյունքում հնարավոր դատական սխալը կարող է առաջացնել ծանր հետեւանքներ...»:

2. Զաղ. Գ. Գգրարյանի բողոքի էությունը կայանում է նրանում, որ Գեղարքունիքի մարզի դատախազությունն իր նկատմամբ ՆՏ քր. օր-ի 179 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցված քրեական գործը՝ մեղադրական եզրակացությամբ ուղարկել է Գեղարքունիքի մարզի առաջին ասյանի դատարան: Նշված դատարանը 13.06.2006թ., ղեկավարվելով ՆՏ քր.դատ.օր.-ի 311 հոդվածի 2-րդ կետով, բավարարել է մեղադրողի միջնորդությունը եւ գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

26.07.2006թ. ՆՏ քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարանը, քննության առնելով պաշտպանի վերաքննիչ բողոքը, որոշում է կայացրել՝ Գ. Ֆ. Գգրարյանի վերաբերյալ քրեական գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու մասին Գեղարքունիքի մարզի առաջին ասյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքն առանց բավարարման թողնելու մասին՝ հետեւյալ պատճառաբանությամբ. «Քննության առնելով պաշտպանի վերաքննիչ բողոքը եւ հիմնավորումները, մեղադրողի առարկությունը եւ միջնորդությունը գործը լրացուցիչ քննության վերադարձնելու մասին, ուսումնասիրելով գործի նյութերը եւ կայացված որոշման պատճառաբանությունները, վերաքննիչ դատարանը եկավ հետեւության, որ գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու մասին մեղադրողի միջնորդությունը եւ դատարանի կայացրած որոշումը հիմնավորված են եւ պատճառաբանված... հետեւաբար պաշտպանի բերած վերաքննիչ բողոքը պետք է թողնել առանց բավարարման»:

20.09.2006թ. վճռաբեկ դատարանը, քննության առնելով պաշտպանի վճռաբեկ բողոքը, որոշում է կայացրել վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին՝ պատճառաբանելով հետեւյալը. «Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ներկայացված բողոքում չկան հիմքեր եզրահանգելու, որ ստորադաս դատարանի կողմից դատավարական

կամ նյութական իրավունքի խախտման արդյունքում թույլ է փրվել դատական սխալ, որը կարող է առաջացնել ծանր հետեանք, եւ որ վճռաբեկ դատարանի կողմից կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Ներկայացրեք, բերված բողոքում ՆՏ քրեական դատարանի օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերով նախատեսված հիմքերը բացակայում են»:

3. Ըստ դիմողի՝ իր նկատմամբ կիրառված՝ ՆՏ քրեական դատարանի օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ կետի նորմերը հակասում են ՆՏ Սահմանադրության 18 հոդվածի 2-րդ մասին, 19 հոդվածի 1-ին մասին եւ 20 հոդվածի 3-րդ մասին, իսկ ՆՏ քրեական դատարանի օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի նորմերը հակասում են ՆՏ Սահմանադրության 18 հոդվածի 2-րդ մասին, 19 հոդվածի 1-ին մասին եւ 21 հոդվածին:

Դիմողը գտնում է, որ համաձայն ՆՏ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, իսկ ՆՏ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաեւ իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: Նույն պահանջն է նախատեսված նաեւ Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին մասում, ինչպես նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում:

Ըստ դիմողի՝ ՆՏ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասում ամրագրված մրցակցության սկզբունքը նշանակում է, որ քրեական հետապնդումը, պաշտպանությունը եւ գործի լուծումը փարանալիզացված են, դրանք իրականացնում են փարբեր մարմիններ եւ անձինք: Դատարանը չի կարող հանդես գալ մեղադրանքի կամ պաշտպանության կողմում: Մրցակցության սկզբունքը բոլոր դեպքերում ենթադրում է, որ անձի հանցանքը հիմնավորելու համար անհրաժեշտ քննչական գործողություններ կատարելը եւ դատարանում մեղադրանքը պաշտպանելը հանդիսանում են մեղադրանքի կողմի գործառնություններ: Ներկայացրեք, ՆՏ քրեական դատարանի օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ կետի հիմքով քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով եւ նախաքննության մարմնին լրացուցիչ քննչական գործողություններ կատարելու հանձնարարություն փայլով՝ դատարանն իրականացնում է մեղադրանքի կողմի գործառնություններ, ինչը հակասում է ՆՏ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Քաղ. Գ. Գզարյանի կարծիքով, դատարանը քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով՝ քրեական հետապնդման մարմնին հնարավորություն է ընձեռում երկարացնելու նախաքննության եւ մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջո-

ցի ժամկետները: Բացի դրանից, ըստ վերաքննիչ դատարանի որոշման՝ քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ կետն իրավունք է վերապահում դատարանին քրեական գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության՝ երբ առկա են ամբաստանյալի նկատմամբ առաջադրված մեղադրանքն ավելի ծանր կամ փաստական հանգամանքներով սկզբնականից փարբերվող մեղադրանքով փոխելու հիմքեր, քանի որ մեկ այլ անձի գործողություններում նույնպես կարող են առկա լինել հանցագործության հատկանիշներ, դրանով կասկածանքի փակ է դրվում նաև դատի չարված անձի անմեղության հարցը, որի հետևանքով խախտվում է ՏՏ Սահմանադրության 21 հոդվածով ամրագրված նաև այդ անձի անմեղության կանխավարկածի իրավունքը:

4. ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՏՏ Գլխավոր դատախազի, քաղաքացի Ս. Սահակյանի և ՏՏ փարածքային կառավարման նախարարության Նախստանի փրկարար ծառայության դիմումների հիման վրա՝ ՏՏ քր.դատ.օր.-ի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի՝ ՏՏ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով առկա է ՏՏ սահմանադրական դատարանի 2007թ. ապրիլի 11-ի ՄԴՈ-691 որոշումը:

Նաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 32 հոդվածի 1-ին և 3-րդ կետերով, ՏՏ սահմանադրական դատարանի կանոնակարգի 43 հոդվածի 1-ին և 4-րդ կետերով, սահմանադրական դատարանը գտնում է, որ ՏՏ քր.դատ.օր.-ի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով գործի վարույթը պետք է կարճել:

5. Պատասխանողը գտնում է, որ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ կետի բովանդակությունից հետևում է, որ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելը դատարանը կարարում է միայն և բացառապես մեղադրանքի կողմի միջնորդության հիման վրա: Բնականաբար, այսպեղ խոսքը չի կարող վերաբերել դատարանի նախաձեռնությամբ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելուն: Ընդ որում, եթե մեղադրողը միջնորդում է մեղադրանքն ավելի ծանր կամ փաստական հանգամանքներով սկզբնականից փարբերվող մեղադրանքով փոխելու հիմքերով գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու վերաբերյալ, ապա այդ միջնորդությունն ինքնին դատարանի համար չի կարող պարտադիր լինել: Ցանկացած միջնորդություն կողմի կամ դիմողի խնդրանք է դատարանին, որը քննության է առնվում և լուծվում պարտադիր կարգով (ՏՏ քր.դատ.օր.-ի 6 և 102 հոդվածներ):

Պատասխանողի կարծիքով, ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 23 հոդվածի 4-րդ մասին համապատասխան դատարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով, այդ թվում քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին դատախազի միջնորդությամբ, և իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել քրեական գործով ճշմարտությունը բացահայտելու համար: ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 23 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Դատարանը

հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում եւ արտահայտում է միայն իրավունքի շահերը»: Այդ առումով դատարանը դատախազի միջնորդությամբ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ժամանակ մեղադրանքի գործառույթ չի կարող իրականացնել:

Պատասխանողը գտնում է, որ ՏՏ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում լրացուցիչ նախաքննության ուղարկելու այնպիսի հիմք, ինչպիսին է նախաքննության բացերը լրացնելը: Այս պարագայում որեւէ հիմք չկա պնդելու, որ լրացուցիչ նախաքննության ինստիտուտը հակասում է մրցակցային դատավարության այն մոդելին, որը որդեգրել է Նայասպանի Նանրապետությունը:

Պատասխանողի կարծիքով՝ իր կողմից մաքնանշված հիմքերից պարզ է դառնում, որ դատարանը խնդրո առարկա գործով իրականացրել է ոչ թե մեղադրանքի կողմի գործառույթ, ինչպես նշել է դիմողը, այլ, ղեկավարվելով օրենքով իրեն վերապահված իրավունքով, հարգել է մեղադրող կողմի միջնորդությունը եւ կայացրել որոշում քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին: Նշված պարճառաբանությամբ էլ պատասխանողը գտնում է, որ դիմող կողմի բերած հիմնավորումները եւ եզրահանգումը բավարար հիմք չեն ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ կետը ՏՏ Սահմանադրության 18 հոդվածի 2-րդ մասին, 19 հոդվածի 1-ին մասին եւ 20 հոդվածի 3-րդ մասին հակասող ճանաչելու համար:

6. Ինչպես վերը նշվեց, դիմողը վիճարկում է ՏՏ քր.դատ.օր.-ի 311 հոդվածի 2-րդ կետի սահմանադրականությունը: Մինչդեռ քրեական գործը դատարանի կողմից լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտը կարգավորվում է ոչ միայն վիճարկվող հոդվածի 2-րդ կետով, այլև ամբողջ հոդվածով, ինչպես նաև ՏՏ քր.դատ.օր.-ի 292 հոդվածի 5-րդ կետով, 297 հոդվածով, 363 հոդվածի 2-րդ մասով, 394 հոդվածի 5-րդ մասով, 398 հոդվածի 6-րդ մասով, 419 հոդվածի 2-րդ կետով, 421 հոդվածի 3-րդ մասով: Ուստի, «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքով, սահմանադրական դատարանը պարտավոր է պարզել նաև վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված արվյալ ակտի վերոհիշյալ դրույթների սահմանադրականությունը:

ՏՏ քր.դատ.օր.-ը դատարանի կողմից քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու նորմեր է նախատեսում սկսած առաջին արյանի դատարանում գործը դատական քննության նախապարաստելու փուլից մինչև վերաքննիչ եւ վճռաբեկ վարույթները: ՏՏ քր.դատ.օր.-ի 297 հոդվածը սահմանում է, որ գործը դատական քննության նախապարաստելիս անհրաժեշտ դատավարական գործողություններ կատարելու համար քրեական գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու մասին որոշում դատավորը կայացնում է այն դեպքում, երբ հետաքննության եւ նախաքննության մարմինների կողմից թույլ են արվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք չեն կարող վերացվել դատական քննության ընթացքում: Նույն հիմքով քրեական գործը դատական քննության փուլից լրացուցիչ նախաքննության ուղարկելու դրույթ է պարունակում ՏՏ քր.դատ.օր.-ի 311 հոդվածի 1-ին կետը:

Այսպիսով, ՏՏ քր.դատ.օր.-ը դափաքնության որեւէ փուլում դատական փարբեր ապյանների դատարանների կողմից քրեական գործը լրացուցիչ նախաքնության ուղարկելու երկու հիմք է նախատեսում: Դրանք են.

- երբ հեփաքնության կամ նախաքնության մարմինների կողմից թույլ են փրվել քրեադատարական օրենքի էական խախտումներ, որոնք չեն կարող վերացվել դատաքնության ընթացքում,

- մեղադրողի միջնորդությամբ՝ երբ առկա են մեղադրանքը ավելի ծանր կամ փաստական հանգամանքներով սկզբնականից փարբերվող մեղադրանքով փոխելու հիմքեր:

Առաջին դեպքում՝ «Քրեադատարական օրենքի էական խախտումներ են դատական քնության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների եւ այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոփել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հեփազոփմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա» (ՏՏ քր.դատ.օր.-ի 398 հոդված), եւ որոնք չեն կարող վերացվել դատաքնության ընթացքում:

Նշված հիմքով դատարանը քրեական գործը վերադարձնում է լրացուցիչ նախաքնության ինչպես կողմերի (կողմի) միջնորդությամբ, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ: Այսինքն՝ դատարանը հայտնաբերելով, որ գործով ապացույցները ձեռք են բերվել քրեադատարական օրենքի էական խախտումներով, փոխանակ ՏՏ քր.դատ.օր.-ի 105 հոդվածի հիմքով, որը համահունչ է ՏՏ Սահմանադրության 22 հոդվածին, որպես ապացույց չօգտագործել դրանք եւ մյուս ապացույցների գնահատմամբ լուծել գործի ելքը, գործը վերադարձնում է լրացուցիչ նախաքնության: Դրանով իսկ դատարանը նախաքնության մարմինն հնարավորություն է փալիս «վերակենդանացնել» ձախողված մեղադրանքը:

Մյուս դեպքում, երբ առկա են մեղադրանքն ավելի ծանր կամ փաստական հանգամանքներով սկզբնականից փարբերվող մեղադրանքով փոխելու հիմքեր, դատարանը գործը վերադարձնում է լրացուցիչ նախաքնության՝ մեղադրողի միջնորդությամբ: Ավելի ծանր մեղադրանք ասելով՝ պետք է հասկանալ, որ առաջադրվելիք մեղադրանքի համար ավելի խիստ պատիժ է նախատեսվում, քան առաջադրվածի համար: Փաստական հանգամանքներով սկզբնականից փարբերվող մեղադրանքը ենթադրում է քրեական օրենքի նույն դրույթով մեղադրանքը, սակայն բովանդակային նոր ձեւակերպմամբ (նոր փաստական հանգամանքները հերքելու ընթացակարգային հնարավորություն պետք է փրվի մեղադրյալին, այլապես կդիփվի նրա պաշտպանության իրավունքի խախտում):

Նման որոշման կայացման հնարավորությունը պայմանավորելով միայն մեղադրողի միջնորդության առկայությամբ՝ օրենսդիրը փորձ է արել դատարանին ձեռքազատել մեղադրական թեքումից, սակայն, այնուամենայնիվ, խախտվել է քրեական դատարարության կարեւոր սկզբունքը, ըստ որի՝ դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում եւ արտահայտում է միայն իրավունքի շահերը (ՏՏ քր.դատ.օր.-ի 23 հոդված), սկզբունք, որը նպատակաուղղված է ՏՏ Սահմանադրության

19 հողվածով նախապես սահմանված՝ դափարանի անկախության եւ անկողմնակալության պահովմանը: Ընդ որում, դափարավճիռ կայացնելիս դափարանի լուծման ենթակա հարցերը հստակ սահմանված են ՏՏ քր.դատ.օր.-ի 360 հոդվածում:

7. ՏՏ Սահմանադրության 19 հոդվածի պահանջն է, ի թիվս արդար դափարանության այլ երաշխիքների, դափարանության իրականացումը կողմերի հավասարության պայմաններում եւ անկողմնակալ դափարանի կողմից: ՏՏ քր.դատ.օր.-ով նախապես սահմանված կարգով գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով՝ դափարանը դուրս է գալիս դափարվարությունում անկողմնակալ իր դերի շրջանակներից եւ ուղղորդում է լրացուցիչ նախաքննության ընթացքը՝ իրականացնելով արդարադատության գործառույթի հետ անհամապետելի գործողություններ: Դափարանը նաեւ կողմերի միջեւ հավասարության նժարը խախտում է ի շահ մեղադրանքի կողմի, դրանով իսկ խախտելով ՏՏ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ անձի դափարական եւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

Քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտի նման ձեռով կիրառումը պարունակում է նաեւ արդար դափարանության փարբերից մեկի՝ դափարանությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու պահանջի խախտման վրանգ:

Քրեական գործի լուծման ձգձգումն ընդհանրապես բացասաբար է անդրադառնում մեղադրյալի, ինչպես նաեւ փոժողի վրա: Սակայն մարդու իրավունքների պաշտպանության վրեսանկյունից ավելի վրանգավոր է գործի քննության ողջամիտ ժամկետի խախտումն այն դեպքում, երբ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը: ՏՏ քր.դատ.օր.-ի 138 հոդվածը սահմանում է, որ քրեական գործով մինչդատարական վարություն մեղադրյալին կալանքի փակ պահելու ժամկետը չի կարող գերազանցել մեկ փարին: Նույն հոդվածն ամրագրում է նաեւ, որ քրեական գործով մինչդատարական վարություն կալանքի փակ պահելու ժամկետի ընթացքը կասեցվում է այն օրը, երբ դափարխազը քրեական գործն ուղարկում է դափարան: Այսինքն, գործը դափարանում գրնվելու ժամանակամիջոցում անձի՝ կալանքի փակ գրնվելու ժամկետը չի հաշվվում մինչդատարական վարություն օրենքով սահմանված առավելագույն ժամկետի՝ մեկ փարվա մեջ: Սփացվում է, որ դափարանի որոշմամբ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու հետեանքով անձն անազատության մեջ կարող է պահվել մեկ փարուց շար ավելի երկար ժամանակ:

8. ՏՏ Սահմանադրության 21 հոդվածում ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքի կարետր բաղադրափարբերից է չփարափված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու պահանջը: Նշված պահանջի կարարումը եւ քրեական գործը դափարանի որոշմամբ լրացուցիչ նախաքննության ուղարկելը գործնականում անհամապետելի են միմյանց հետ: Քրեական գործը նման կարգով լրացուցիչ նախաքննության ուղարկելու դեպքում, ըստ էության, շրջանցվում է նշված հոդվածում ամրագրված չփարափված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու սահմանադրական պահանջը:

9. Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ քրեական գործը դափարանի որոշմամբ լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտն ավելի շարքերորոշ է եղել խորհրդային իրավակարգին, եւ փաստամյակներ շարունակ նման ձեռով այն կիրառած երկրներում առկա է դրանից հրաժարվելու միտում: Նշված կարգի մերժման անհրաժեշտությունը հիմնականում բացատրվում է քրեական դատավարության այնպիսի կարեւորագույն սկզբունքների հետ անհամարեղելիությամբ, ինչպիսիք են դատարանի անկողմնակալությունը, դատավարության կողմերի հավասարությունն ու մրցակցությունը:

Օրինակ, Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանը 1999 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ անդրադառնալով դատարանի կողմից քրեական գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու հարցին, հակասահմանադրական է ճանաչել այդ ինստիտուտի գոյությունը: 2002 թվականի հուլիսի 1-ից Ռուսաստանի Դաշնությունում գործող նոր քր.դատ.օր.-ն այլեւս չի նախատեսում դատարանի որոշմամբ քրեական գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելը: Նոր օրենսգրքի 237 հոդվածը պահպանում է գործը դատախազին վերադարձնելու ինստիտուտը, սակայն միայն գործը դատական քննության նախապարաստելու փուլում՝ վերանայելու համար այն հանգամանքները, որոնք խոչընդոտում են գործով դատական քննությունն սկսելուն (օրինակ, մեղադրական եզրակացությունը չի ստորագրվել համապատասխան դատախազի կողմից): Ի դեպ, նման նորմ պարունակում է նաեւ ՏՊ քր.դատ.օր.-ի 296 հոդվածը, ըստ որի 1-ին մասի՝ «Գործը մեղադրողին վերադարձնելու մասին որոշում դատավորը կայացնում է այն դեպքում, երբ մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին»: Ընդ որում, նման որոշման մեջ նշվում է նաեւ այն ժամկետը, որի ընթացքում դատախազը պետք է վերացնի մեղադրական եզրակացության թերությունները: Եթե մեղադրյալը գրավում է կալանքի փակ, նշված ժամկետը չպետք է գերազանցի 3, իսկ մնացած դեպքերում՝ 7 օրը:

10. Սահմանադրական դատարանը գտնում է նաեւ, որ դատարանի որոշմամբ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելն անհամարեղելի է Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի այնպիսի փորձերի հետ, ինչպիսիք են դատաքննությունն անկողմնակալ դատարանի կողմից եւ այն հավասարության ու մրցակցության սկզբունքների հիման վրա իրականացնելու պահանջները: Չնայած նրան, որ դատաքննության հավասարության եւ մրցակցության սկզբունքները հստակ ամրագրված չեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից՝ 6-րդ հոդվածում նշված «արդարացի լուծումներ» հասկացության մեկնաբանությունների արդյունքում ձեւավորվել է հստակ նախադեպ, համաձայն որի՝ լուծումների արդարացիության փորձերից են դատավարության կողմերի հավասարությունը եւ մրցակցային դատավարությունը, որոնք սերտորեն կապված են միմյանց հետ: Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջը համարելով դատավարության մրցակցության եւ հավասարության սկզբունքներ, միաժամա-

նակ հեղինակներն իր վճիռներում բացահայտել է այդ սկզբունքների բովանդակությունը, որոնց համաձայն՝ «կողմերի հավասարությունը» նշանակում է, որ դափարվարության յուրաքանչյուր կողմին պետք է ընձեռվի պարզաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը, ներառյալ՝ ապացույցները, այնպիսի պայմաններում, որոնք նրա համար մյուս կողմի համեմատությամբ չեն սպեղծի անբարենպաստ վիճակ:

11. Գործը դափարանից լրացուցիչ նախաքննության վերադարձնելու՝ գործող քրեադափարավարական օրենսդրությամբ նախատեսված կարգն անհամարեղելի է նաև մեր երկրում սահմանադրական փոփոխությունների արդյունքում կարարվող դափարավարական բարեփոխումների արամբարանության հետ, բարեփոխումներ, որոնք ուղղված են դափարանի անկախության եւ անկողմնակալության ապահովմանը, մեղադրական թեքումից նրա վերջնական ձերբազարմանը: Մասնավորապես, «Դափարազության մասին» ՏՏ նոր օրենքը ՏՏ ԱԺ կողմից ընդունվել է 2007թ. փետրվարի 22-ին, որում քննության առարկա խնդրի առնչությամբ հայեցակարգային նոր մոտեցում է որդեգրվել: Այդ օրենքի 26 հոդվածի 4-րդ մասում ամբարգրված է. «Եթե առաջին ափյանի դափարանում մեղադրողը գրնում է, որ մեղադրանքը ենթակա է մեղմացման կամ խարացման, քանի որ դափարական քննության ժամանակ ի հայր են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայրնի չէին մինչդարական վարություն, դափարազան իրավունք ունի միջնորդություն ներկայացնելու դափարան՝ արարքը վերադրակելու նպարակով դափարական նիստը հեարածգելու վերաբերյալ: Դափարանը դափարազաի միջնորդությամբ հեարածգում է նիստը՝ անիրաժեշտ քննչական գործողություններ կարարելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար...»: Փաստորեն, օրենքի այս նոր դրույթը բացառում է դափարանի կողմից գործը լրացուցիչ քննության ուղարկելու գործող կարգը, եւ այս արամբարանությունը կարող է դրվել նաև ՏՏ քր.դափ.օր.-ի բարեփոխման հիմքում: Բոլոր դեպքերում, եթե գործն ընդունվել է դափարանի վարույթ, ապա այն պետք է հանգուցարուծվի դափարական նիստում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Տայասարանի Տանրապետության Մահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Մահմանադրական դափարանի մասին» Տայասարանի Տանրապետության օրենքի 60, 63, 64 եւ 69 հոդվածներով, Տայասարանի Տանրապետության սահմանադրական դափարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Տայասարանի Տանրապետության քրեական դափարվարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի վերաբերյալ Գ. Գարարյանի դիմումի մասով գործի վարույթը կարճել:

2. Տայասարանի Տանրապետության քրեական դափարվարության օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ կետի դրույթները ճանաչել Տայասարանի Տանրապետության Մահմանադրության 19 հոդվածին (1-ին մաս) հակասող եւ անվավեր:

3. «Մահմանադրական դափարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով ՏՏ Մահմանադրության 19 հոդվածին (1-ին մաս) հակասող եւ անվավեր ճա-

նաչել նաև Նայասպանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև 292 հոդվածի 5-րդ կետի, 297 հոդվածի, 363 հոդվածի 2-րդ մասի, 394 հոդվածի 5-րդ մասի, 398 հոդվածի 6-րդ մասի, 421 հոդվածի 3-րդ մասի դրույթները և 419 հոդվածի 2-րդ կետի լրացուցիչ նախաքննություն նախատեսող դրույթը:

4. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

24 հուլիսի 2007 թվականի
ՄԳՈ-710

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԽԱՐԻՍԽ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ ՆՃ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 17.12.1997Թ. ԸՆԴՈՒՆՎԱԾ՝
«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՅՄԱՆ
(ՄԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՆՄԱՆ) ՄԱՍԻՆ» ՆՃ ՕՐԵՆՔԻ 13
ՆՈՂՎԱԾԻ՝ ՆՃ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

11 սեպտեմբերի 2007թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Վ. Նովիանի-
նիսյանի, Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 42.1. հոդվածի, 101
հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի
Նանրապետության օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Խարիսխ գրուպ» ՍՊԸ-ի
դիմումի հիման վրա՝ «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման)
մասին» ՆՃ օրենքի 13 հոդվածի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը
համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել «Խարիսխ գրուպ» ՍՊԸ-ի դիմումը
սահմանադրական դատարան՝ մուտքագրված 08.06.2007թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, պատասխանող կողմի՝
ՆՃ Ազգային ժողովի գրավոր բացաբությունները, հեղադրելով դիմումը եւ գործում
առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական
դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Դիմող՝ «Խարիսխ գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս Ա. Մարտիրոսյանի, վիճարկում է
«Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՆՃ օրենքի 13
հոդվածի համապատասխանությունը ՆՃ Սահմանադրության 5 հոդվածին:

2. «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՏՏ օրենքն ընդունվել է ՏՏ ԱԺ կողմից 17.12.1997 թվականին, ՏՏ Նախագահի կողմից ստորագրվել է 13.01.1998 թվականին, ուժի մեջ է մտել 10.02.1998 թվականից:

«Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՏՏ օրենքի վիճարկվող 13 հոդվածը փոփոխվել է ՏՏ ԱԺ կողմից 08.10.2002թ. ընդունված՝ «Պետական գույքի մասնավորեցման /սեփականաշնորհման/ մասին» ՏՏ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՏՏ-423-Ն օրենքով: Դիմողի նկատմամբ արտեսական դատարանի կողմից կիրառվել է եւ նրա կողմից վիճարկվում է վերոհիշյալ օրենքի 13 հոդվածը՝ 08.10.2002թ. խմբագրությամբ, որը սահմանում է մասնավորեցում իրականացնող պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունները:

Իսկ ՏՏ Սահմանադրության 5 հոդվածը (2-րդ մաս) ամրագրում է, որ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնապար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

3. Դիմողը վիճարկելով հիշյալ օրենքի 13 հոդվածը՝ իր իրավունքների խախտման հիմնական պարճառ է համարում օրենքում մասնավորեցում իրականացնող պետական կառավարման լիազորված մարմնի՝ ՏՏ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության, լիազորությունների սպառիչ թվարկումը, ինչը, ըստ դիմողի, խոչընդոտում է Պետական գույքի կառավարման վարչությանը դիմողի հետ մտնելու հոդվածում չհիշատակված քաղաքացիաիրավական բնույթի հարաբերությունների մեջ:

4. Դիմողը վկայակոչում է ՏՏ քաղ. օր.-ի 128 եւ 129 հոդվածները՝ նշելով, որ ՏՏ - կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը (որպես ՏՏ անունից հանդես եկող եւ ՏՏ անունից մասնավորեցման պայմանագիր կնքող) իրավունք պետք է ունենա նաեւ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու պայմանագրում, ինչպես նաեւ լուծելու պայմանագիրը: Ըստ դիմողի՝ «Գնի նվազեցումն ըստ էության հանդիսանում է պայմանագրի փոփոխություն եւ լրացում...»:

5. Պատասխանող կողմը դիմողի կողմից վիճարկվող օրենքի վերաբերյալ նշում է. «Պետական գույքի մասնավորեցման 2001-2003թթ. ծրագրի մասին» ՏՏ օրենքի 7-րդ - հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթը, որը կիրառվել է հաշտության համաձայնագրում, ունեցել է գործողության հստակ ժամկետ՝ մինչեւ 2004 թվականի դեկտեմբերի 31-ը: Այսինքն՝ հաշտության համաձայնագրի ստորագրման պահին արդեն իսկ այդ դրույթը չի գործել, քանի որ «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի 79 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտի գործողության ժամկետն անսահմանափակ է, եթե արվյալ իրավական ակտում կամ դրա գործողության մեջ դնելու մասին իրավական ակտում ուղղակի ժամկետ նախատեսված չէ»: Մինչդեռ օրենսդիրն այս դեպքում իրավա-

կան ակտի գործողության համար սահմանել է հստակ ժամկետ, որի ավարտից հետո այն չէր կարող գործադրվել:

Քանի որ Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ կարող են կատարվել միայն օրենքների փոփոխությամբ՝ դրանք ընդունված մարմնի կողմից, հետևաբար, ՏՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունն օրենքի գործողության ժամկետը երկարաձգելու համապատասխան իրավասություն չէր կարող ունենալ:

Պատասխանող կողմը համաձայն չէ դիմողի այն եզրահանգմանը, որ պայմանագրի գործողության դեպքում պայմանագրի կողմերը կարող են ցանկացած պահի փոփոխել, լրացնել կամ լուծել պայմանագիրը, այդ թվում՝ նվազեցնել պայմանագրով սահմանված գինը: Մասնավորապես, շեշտվում է, որ ՏՀ քաղաքացիական օրենսգրքի 437 հոդվածի 4-րդ կետով եւ 438 հոդվածի 1-ին կետով առկա են սահմանափակումներ, համաձայն որոնց՝ պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր պայմաններին:

Պատասխանող կողմը վկայակոչելով նաեւ ՏՀ քաղաքացիական օրենսգրքի 440 հոդվածի 2-րդ մասը՝ նշում է, որ պայմանագրի կնքումից հետո դրա գինը թույլատրվում է փոփոխել պայմանագրով կամ օրենքով նախատեսված դեպքերում եւ պայմաններով: Իսկ պետական գույքի սեփականաշնորհման մասին պայմանագրով դրա գինը փոփոխելու իրավունք կողմերին չի վերապահվել:

Ըստ պատասխանող կողմի՝ դիմող կողմի բերած հիմնավորումները եւ եզրահանգումները բավարար հիմք չեն «Պետական գույքի մասնավորեցման /սեփականաշնորհման/ մասին» ՏՀ օրենքի 13 հոդվածը ՏՀ Սահմանադրության 5 հոդվածին հակասող ճանաչելու համար:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը հանդիսանալով իշխանական լիազորություններով օժտված հանրային իրավունքի սուբյեկտ՝ այլ սուբյեկտներին համահավասար իրավասություններով մասնակցում է մասնավոր իրավական հարաբերություններին: Պետությունը քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցում է անմիջականորեն, այսինքն՝ որպես մեկ միասնական ամբողջություն, բայց որպես այդպիսին /որպես պետական կառույցների ամբողջություն/ այն ի վիճակի չէ անմիջական գործողություններով ձեռք բերել եւ իրականացնել քաղաքացիական իրավունքներ, ինչպես նաեւ ստեղծել եւ կատարել պարտականություններ: Նրա լիազորությամբ գործում են իրավաբանական անձ հանդիսացող կամ այդպիսիք չհանդիսացող կազմակերպությունները:

Իսկ այն դեպքերում, երբ պետական մարմինը հանդես է գալիս ՏՀ անունից, այդ մարմնի ներկայացմամբ իրավահարաբերություններին մասնակցում է Հայաստանի Հանրապետությունը, եւ իրավունքներ ու պարտականություններ են առաջանում ոչ թե փյույակ մարմնի համար, այլ պետության համար:

Փաստորեն, դիմողի այն պնդումը, որ Պեղական գույքի կառավարման վարչությունը հանդես գալով ՆՏ անունից՝ ունի քաղաքացիական իրավունքի այլ սուբյեկտների հետ համահավասար իրավունքներ եւ պարտականություններ, հիմնավոր է: Սա համահունչ է նաեւ ՆՏ Սահմանադրության 89 հոդվածի այն դրույթին, համաձայն որի՝ ՆՏ կառավարությունն է կառավարում պեղական սեփականությունը: Սակայն դիմողը հաշվի չի առնում այն հանգամանքը, որ ՆՏ քաղաքացիական օրենսդրությունը որոշակի ինպերսոնալ բնույթի սահմանափակումներ է նախատեսում քաղաքացիական իրավունքի բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ նաեւ պեղական մարմինների համար:

Այսպես, ՆՏ քաղ. օր.-ի 438 հոդվածի համաձայն՝ պայմանագիրը պեպք է համապարասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին: Քաղ. օր.-ի 440 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ. «1. Պայմանագրի կատարումը վճարվում է կողմերի համաձայնությամբ սահմանված գնով:

Օրենքով նախատեսված դեպքերում կիրառվում են լիազորված պեղական մարմինների կողմից սահմանված կամ կարգավորված գները...»:

«Պեղական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՆՏ օրենքի 24.1. հոդվածի համաձայն՝ պեղական գույքի մասնավորեցման մասին որոշումն ընդունում է ՆՏ կառավարությունը, իսկ նույն օրենքի 12 հոդվածի համաձայն, ի թիվս այլոց, հաստատում է «փոքր» օբյեկտների փարածքի մեկ քառակուսի մետրի արժեքը, նրա հաշվարկման ուղղիչ գործակիցների նվազագույն եւ առավելագույն չափերը: Իսկ Պեղական գույքի կառավարման վարչությանը գնային քաղաքականության ոլորտում վերապահված է միայն «փոքր» օբյեկտների փարածքի արժեքի հաշվարկման ուղղիչ գործակիցների հաստատման լիազորությունը՝ ելնելով ՆՏ կառավարության հաստատված մեկ քառակուսի մետրի արժեքից եւ այդ գործակիցների նվազագույն եւ առավելագույն չափերից:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այս ոլորտում պայմանագրի գնի որոշման հարցը կարգավորվում է ՆՏ քաղ. օր.-ի 440 հոդվածի 1-ին մասի 2-րդ - պարբերությամբ սահմանված կանոններով:

Իսկ պայմանագրի կնքումից հետո դրա գինը թույլատրվում է փոփոխել պայմանագրով կամ օրենքով նախատեսված դեպքերում եւ պայմաններով (համաձայն քաղ. օր.-ի 440 հոդվածի 2-րդ մասի), եւ եթե ՆՏ քաղ. օր.-ով կամ որեւէ այլ իրավական ակտով կողմերին հնարավորություն չեն տրվել կամ նվազեցնել պայմանագրի գինը, ապա կողմերն այդ հնարավորությունից կարող էին օգտվել մինչեւ դատական ակտի ընդունումը՝ հաշվի առնելով ՆՏ քաղ. դատ. օր.-ի «Նարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշվարկման հիման վրա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտնող վճարային վարույթը» վերաբերությամբ 36 գլխի 204 հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ «դատարանը վերանայում է միայն կայացրած վճարի այն մասը, որը վերաբերում է կողմերի հաշվարկման համաձայնությամբ սահմանված կատարման եղանակին, ժամկետին եւ կարգին»:

«Պեղական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՆՏ օրենքի 13 հոդվածը բովանդակում է մասնավորեցում իրականացնող պեղական կառավարման լիազորված մարմնի հիմնական իրավասությունների ցանկը, որոնք իրենց բովանդակությամբ

յամբ չեն բացառում կամ սահմանափակում ՏՏ Սահմանադրությամբ կամ այլ օրենքներով սահմանված այլ լիազորությունների իրականացման հնարավորությունը, չեն հակասում Սահմանադրությամբ նախատեսված իշխանությունների բաժանման, ինչպես նաև պերական մարմինների եւ պաշտոնապար անձանց լիազորությունները միայն Սահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրելու սկզբունքներին, չեն առաջացնում օրենսդրական բաց, եւ այդ լիազորություններն ամրագրված են ՏՏ Սահմանադրության 5 հոդվածով սահմանված նորմատիվ իրավական ակտով՝ օրենքով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպահի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածի առաջին մասով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպահի Նանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Նայասպահի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՏՏ Ազգային ժողովի կողմից 17.12.1997թ. ընդունված՝ «Պերական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՏՏ օրենքի 13 հոդվածի դրույթները համապատասխանում են Նայասպահի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասպահի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ**

*11 սեպտեմբերի 2007 թվականի
ՍԳՈ-714*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻ ԱԼԲԵՐՏ ՄՈՎՍԵՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՆՏ ՕՐԵՆՔԻ 57 ՆՈՂՎԱԾԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

23 հոկտեմբերի 2007թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Վ. Նովիաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի (զեկուցող),
Ֆ. Թոխյանի, Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի,
մասնակցությամբ՝

դիմող՝ քաղ. Ա. Մովսեսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՏ ԱԺ աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն ՆՏ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ - կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Ալբերտ Մովսեսյանի դիմումի հիման վրա՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՆՏ օրենքի 57 հոդվածի՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղ. Ա. Մովսեսյանի՝ 19.04.2007թ. դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմողի՝ Ա. Մովսեսյանի եւ պատասխանողի՝ ՆՏ Ազգային ժողովի բացաբարությունները, հեղափոխելով «Պետական կենսաթոշակների մասին» ՆՏ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. «Պեպական կենսաթոշակների մասին» ՆՏ օրենքն ընդունվել է Նայասարանի Նանրապետության Ազգային ժողովի կողմից 2002 թվականի նոյեմբերի 19-ին եւ ուժի մեջ մտել 2003թ. ապրիլի 10-ից:

«Պեպական կենսաթոշակների մասին» ՆՏ օրենքի 57 հոդվածը սահմանում է.

«Զստացված կենսաթոշակի գումարները վճարվում են անցած ժամանակահատվածի համար, սակայն կենսաթոշակ վճարելու համար դիմելու ամսվան նախորդող երեք տարուց ոչ ավելի:

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման մեղքով չվճարված կենսաթոշակի գումարները վճարվում են առանց ժամկետի սահմանափակման:

Նշված դեպքերում չստացված կենսաթոշակի գումարը վճարվում է միանվագ»:

2. Քաղաքացի Ա. Մովսեսյանը 1972-1985թթ. աշխատել է Երեւանի թիվ 73 դպրոցում՝ որպէս կերպարվեստի ուսուցիչ, միաժամանակ համալսարանի կարգով նույն մասնագիտությամբ աշխատել է նաեւ Երեւանի թիվ 49 դպրոցում: Նա 2006թ. օգոստոսի 4-ին դիմել է ՆՏ սոցիալական ապահովագրության պեպական հիմնադրամի (ՍԱՊՆ) Էրեբունու փարածքային կենտրոն՝ աշխատանքի հատուկ պայմաններում աշխատելու եւ երկարամյա ծառայության համար փրվող մասնակի կենսաթոշակ նշանակելու, ինչպէս նաեւ նշանակմանը նախորդող երեք տարիների համար չվճարված կենսաթոշակի գումարը միանվագ վճարելու խնդրանքով: ՆՏ ՍԱՊՆ Էրեբունու փարածքային կենտրոնը մերժել է Ա. Մովսեսյանին, եւ վերջինս դիմել է Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների առաջին ադյանի դատարան՝ խնդրելով նշված կենտրոնին պարտավորեցնել իրեն մասնակի կենսաթոշակ նշանակել, ինչպէս նաեւ նշանակմանը նախորդող երեք տարիների համար չվճարված կենսաթոշակի գումարը միանվագ վճարել: Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների առաջին ադյանի դատարանի 2006թ. դեկտեմբերի 4-ի վճռով հայցը բավարարվել է: ՆՏ ՍԱՊՆ Էրեբունու փարածքային կենտրոնի վերաքննիչ բողոքի հիման վրա ՆՏ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 23-ի վճռով Ա. Մովսեսյանի հայցը բավարարվել է մասնակիորեն: Ա. Մովսեսյանը դիմել է ՆՏ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ, որն իր 29.03.2007թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

3. Ա. Մովսեսյանը 19.04.2007թ. դիմել է ՆՏ սահմանադրական դատարան՝ գտնելով, որ «Պեպական կենսաթոշակների մասին» ՆՏ օրենքի 57 հոդվածը հակասում է ՆՏ Սահմանադրության 37 հոդվածի պահանջներին, եւ այն անհրաժեշտ է անվավեր ճանաչել:

Դիմողը մասնավորապէս մատնանշում է, որ վիճարկվող իրավական ակտի 57 հոդվածն առաջացնում է իրավական անորոշություն եւ իրավակիրառական պրակտիկայում մեկնաբանվում է փարբեր կերպ:

Դիմողի կարծիքով, «Պեպական կենսաթոշակների մասին» ՆՏ օրենքի 57 հոդվածով սահմանված դրույթը ոչ հստակ է ձեւակերպված եւ հնարավորություն չի տալիս

միանշանակ հեղուկություն անել այն մասին, որ այն վերաբերում է թե կենսաթոշակ նշանակելու համար դիմում փախուց հեղուկ չստացված կենսաթոշակի գումարը վճարելուն (ինչպես մեկնաբանել է վերաքննիչ դատարանը), թե Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված սոցիալական ապահովության իրավունք ձեռք բերելու համար անհրաժեշտ պայմանները վրա հասնելու եւ կենսաթոշակ նշանակելու համար դիմում ներկայացնելու միջև ընկած ժամանակահատվածում չստացված կենսաթոշակի գումարը վճարելուն (ինչպես մեկնաբանել է Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների առաջին ապյանի դատարանը):

Դիմողի կարծիքով, իր, ինչպես նաեւ Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների առաջին ապյանի դատարանի եւ Լեզվի պետական փեսայության մեկնաբանությամբ ու համոզմամբ, նշված օրենքի 57 հոդվածը չի վերաբերում արդեն իսկ նշանակված կենսաթոշակին, նման պահանջ չի դնում:

Ելնելով վերոհիշյալից, դիմողը գտնում է, որ նշված օրենքի 57 հոդվածի իրավական անորոշության հեղուկացումը խախտվում է իր կենսաթոշակի իրավունքը:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ դիմողի փաստարկները հիմնավոր չեն, եւ դիմումը ենթակա է մերժման հեղուկացումը նկատարումներով:

«Իրավական ակտերի մասին» ՆՃ օրենքի 86 հոդվածի 1-ին մասի համաձայն. «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի եւ արտահայտությունների փառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը»:

Նույն «Իրավական ակտերի մասին» ՆՃ օրենքի 37 հոդվածի 6-րդ մասի համաձայն. «Իրավական ակտի կառուցվածքը պետք է լինի կոմ՝ փրամաբանորեն միասնական, հաջորդական ու համակարգված»: Մինչդեռ, ըստ պատասխանողի՝ դիմողը «Պետական կենսաթոշակների մասին» ՆՃ օրենքի 57 հոդվածը վերլուծում է՝ չառաջնորդվելով նույն օրենքի միասնական փրամաբանությամբ: Օրենքի այլ հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ խոսքն այսպեղ իրականում վերաբերում է նշանակված, բայց չստացված կենսաթոշակներին: Վիճարկվող օրենքի 50 հոդվածի համաձայն՝ կենսաթոշակ նշանակելու համար դիմելու օր է համարվում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման կողմից բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով դիմումն ընդունելու օրը, իսկ 51 հոդվածի համաձայն՝ կենսաթոշակը նշանակվում է դիմելու օրվանից: Որեւէ բացառություն վերոհիշյալ հոդվածներում սահմանված չէ: Բացի դրանից, օրենքի 57 հոդվածում օգտագործվում են «չստացված կենսաթոշակ» եւ «կենսաթոշակ վճարելու համար դիմելու» բառակապակցությունները:

Ըստ պատասխանողի, եթե այդ բառակապակցությունները մեկնաբանվում են փառացի, ապա «չստացված» բառը չի ներառում «չնշանակված» իմաստը, իսկ «կենսաթոշակ վճարելու համար դիմելը» իմաստային առումով փարբերվում է «կենսաթոշակ նշանակելու համար դիմելուց»: Այսպիսով, կենսաթոշակ կարող է ստացվել միայն դրա նշանակվելուց հեղուկ, ինչպես եւ կենսաթոշակ վճարելու մասին դիմում կարելի է գրել

միայն արդեն իսկ նշանակված, սակայն զանազան պարզառոտներով չստացված կենսաթոշակի համար:

Ելնելով վերոգրյալից, պարասխանողը գտնում է, որ դիմողի բերած հիմնավորումներն ու եզրահանգումը բավարար հիմք չեն «Պերական կենսաթոշակների մասին» ՆՏ օրենքի 57 հոդվածը ՆՏ Սահմանադրության 37 հոդվածի պահանջներին հակասող ճանաչելու համար:

5. Քննությամբ պարզվեց, որ ըստ էության դիմողի կողմից վիճարկվում է ոչ թե «Պերական կենսաթոշակների մասին» ՆՏ օրենքի 57 հոդվածը՝ ամբողջությամբ, այլ հոդվածի 1-ին մասի դրույթը:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Նայասպանի Նանրապետությունը, հռչակելով իրեն որպես սոցիալական պետություն, ՆՏ Սահմանադրության 37 հոդվածով նախատեսում է երաշխավորում է յուրաքանչյուր անձի սոցիալական ապահովության իրավունքը, որն իր բովանդակության մեջ ընդգրկում է նաև կենսաթոշակ ստանալու իրավունքը՝ օրենքով սահմանված ձեերով ու ծավալով: Սահմանադրության 37 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության եւ օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձեերը սահմանվում են օրենքով»:

Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայով (12 հոդված) եւ Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով (9 հոդված) Նայասպանի Նանրապետությունն ստանձնել է պարտավորություններ՝ երաշխավորելու մարդկանց սոցիալական ապահովության, ներառյալ սոցիալական ապահովագրության իրավունքը:

7. ՆՏ Սահմանադրությամբ եւ ՆՏ միջազգային պայմանագրերով նախատեսված պահանջները «Պերական կենսաթոշակների մասին» ՆՏ օրենքում իրացվել են հետևյալ կարգով: Օրենքի 11 հոդվածով սահմանվում են կենսաթոշակի հետևյալ տեսակները՝ ապահովագրական եւ սոցիալական: Դրանցից առաջինը նշանակվում է անձի աշխատանքային գործունեության եւ դրա ընթացքում արված պարտադիր սոցիալական ապահովության վճարների հիման վրա, իսկ երկրորդը՝ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում:

Օրենքի 50 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը նախատեսում են. «Կենսաթոշակը քաղաքացու գրավոր դիմումի հիման վրա նշանակում է կենսաթոշակային սոցիալական ապահովագրություն իրականացնող լիազոր մարմնի ստորաբաժանումը... ըստ Նայասպանի Նանրապետությունում նրա հաշվառման վայրի, իսկ հաշվառման վայր չունեցող անձին կենսաթոշակ նշանակվում է ըստ նրա փաստացի բնակության վայրի»:

Կենսաթոշակ նշանակելու համար դիմելու օր է համարվում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման կողմից բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով դիմումն ընդունելու օրը»:

Այսինքն՝ ընդհանրապես կենսաթոշակի հետ կապված՝ անձի եւ իրավասու մարմնի միջեւ իրավահարաբերություններ առաջանալու համար որպես իրավաբանական փաստ օրենսդիրը դիտում է, ՆՏ կառավարության կողմից 29.05.2003թ. թիվ 793 որոշմամբ սահմանված կարգով, դիմում ներկայացնելը եւ այդ դիմումի հիման վրա կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ ընդունված անհատական իրավակիրառական ակտը:

Օրենքի 51 հոդվածի համաձայն կենսաթոշակը նշանակվում է՝

1) դիմելու օրվանից,

2) բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչվելու օրվանից, եթե կենսաթոշակի նշանակման դիմումը արվել է այդ օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում,

3) կերակրողի մահվան օրվանից, եթե կենսաթոշակի նշանակման դիմումը արվել է այդ օրվանից հետո՝ վեցամսյա ժամկետում:

Նշված հոդվածի եւ 57 հոդվածի վիճարկվող դրույթի վերլուծությունը ցույց է ցույց տալիս, որ անձին կենսաթոշակ նշանակվում է դիմելու օրվանից՝ բացառությամբ 51 հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով նախատեսված դեպքերի: Սակայն այս դեպքերում եւս օրենսդիրը սահմանում է որոշակի ժամկետ (եռամսյա եւ վեցամսյա ժամկետ): Իսկ մնացած դեպքերում, անկախ նրանից, թե կենսաթոշակի իրավունքը ծագելուց հետո որքան ժամանակ է անցել, կենսաթոշակը նշանակվում է դիմելու օրվանից, եւ 57 հոդվածի վիճարկվող դրույթում «Չստացված կենսաթոշակի գումարները» արտահայտությունը վերաբերում է կենսաթոշակ նշանակելուց հետո որոշակի հանգամանքների բերումով չստացված կենսաթոշակի համար դիմում ներկայացնելուն եւ կենսաթոշակը վճարելուն:

8. ՆՏ Սահմանադրության 37 հոդվածի 2-րդ նախադասության համաձայն. «Մոցիալական ապահովության ծավալն ու ձեւերը սահմանվում են օրենքով»: «Պետական կենսաթոշակների մասին» ՆՏ օրենքի համաձայն՝ կենսաթոշակ կարող է ստացվել միայն դրա նշանակվելուց հետո, ինչպես եւ կենսաթոշակ վճարելու մասին դիմում կարելի է գրել միայն արդեն իսկ նշանակված, սակայն զանազան պարզառոտներով չստացված կենսաթոշակի համար: Ընդ որում, «Պետական կենսաթոշակների մասին» ՆՏ օրենքի 57 հոդվածը չի սահմանափակում անձի՝ ՆՏ Սահմանադրության 37 հոդվածով նախատեսված իրավունքի լրիվ ծավալով իրացումը, հետեւաբար, դիմողի փաստարկները հիմք չեն հանդիսանում «Պետական կենսաթոշակների մասին» ՆՏ օրենքի 57 հոդվածը ՆՏ Սահմանադրության 37 հոդվածի պահանջներին հակասող ճանաչելու համար:

Ելելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՆՏ օրենքի 57 հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայաստանի Նանրապետության Մահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ
Վ. ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆ

23 հոկտեմբերի 2007 թվականի
ՍԴՈ-716

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ`
ՆՏ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
26-ՐԴ ԳԼԽԻ` ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

28 նոյեմբերի 2007թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարոյթունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (զեկու-
 ցող), Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,
 մասնակցությամբ՝

դիմող՝ քաղաքացի Ա. Զեյնալյանի,

գործով որպես պարասխանող կողմ ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի պաշ-
 տոնական ներկայացուցիչ՝ ՆՏ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյա-
 նի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի
 1-ին կետի եւ 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաս-
 արանի Նանրապետության օրենքի 25 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արտակ Զեյ-
 նալյանի դիմումի հիման վրա՝ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ
 գլխի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության
 հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղ. Ա. Զեյնալյանի՝ սահմանադրական դատարա-
 նում 17.08.2007թ. մուտքագրված դիմումն է:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմողի եւ պարասխանող կողմի ներկա-
 յացուցի բացարրությունները, հետազոտելով ՆՏ քաղաքացիական դատավարության օ-
 րենսգիրքը, ՆՏ դատական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայաս-
 արանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Մ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն (այսուհետ՝ քաղ. դատ. օր.) ընդունվել է Նայասարանի Նանրապետության Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի 17-ին, Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել է 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից՝ հետագայում ենթարկվելով մի շարք փոփոխությունների:

Մ քաղ. դատ. օր.-ի 26-րդ գլուխը, որն ընդգրկված է օրենսգրքի երրորդ բաժնի («Առանձին Կրթական գործերով վարույթների առանձնահատկությունները») առաջին ենթաբաժնում («Նախարկ հայցային վարույթներ») և վերնագրված է «Պետական մարմինների, Կրթական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու կամ նրանց գործողությունները (անգործությունը) վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը», բաղկացած է հինգ հոդվածից (159-163 հոդվածներ) և նախատեսում է պետական մարմինների, Կրթական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերը դատական կարգով անվավեր ճանաչելու կամ նրանց գործողությունը (անգործությունը) վիճարկելու հիմքերը (հոդվ. 159), պետական մարմինների, Կրթական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու մասին դիմումի էությունը (հոդվ. 160), դիմումին առաջադրվող պահանջները (հոդվ. 161), դատարանի կողմից դիմումի քննության կարգը (հոդվ. 162), դատարանի վճռին ներկայացվող պահանջները (հոդվ. 163):

2. Դիմող կողմը սահմանադրական դատարան ներկայացնելով Երեսնի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին արյանի դատարանի 22.01.2007թ. որոշումը, Երեսնի քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին արյանի դատարանի 01.11.2006թ. և 29.03.2007թ. որոշումները, Մ վերաքննիչ դատարանի 27.06.2007թ. վճիռը, Մ վճռաբեկ դատարանի 16.06.2006թ., 06.02.2007թ., 13.03.2007թ., 10.04.2007թ. և 16.04.2007թ. որոշումները, գրնում է, որ ընդհանուր իրավասության դատարանները մերժել են դատարանների (դատավորների) գործողությունները (անգործությունը) վիճարկելու վերաբերյալ իր դիմումները՝ պարճառաբանելով, որ Մ քաղ. դատ. օր.-ի 26-րդ գլխում նախատեսված նորմերը չեն վերաբերում դատարանների (դատավորների) գործողությունները (անգործությունը) վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթին, և որ քաղ. դատ. օր.-ի հիշյալ գլխի նորմերը՝ ընդհանրապես, և 160 հոդվածը՝ մասնավորապես, դատական իշխանություն իրականացնող մարմինների վրա չեն տարածվում, հետևաբար՝ այդօրինակ դիմումները ենթակա չեն դատական քննության: Միաժամանակ, Մ վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին իր 16.04.2007թ. որոշման մեջ արճանագրել է, որ բողոքի ընդունելիության հիմքերը բացակայում են, քանի որ «վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով կայացվելիք դատական ակտն օրենքի միատեսակ կիրառության համար էական նշանակություն չի կարող ունենալ»:

Դիմող կողմը հարցի սահմանադրականությանն առնչվող փաստարկների շրջանակներում գրնում է, որ ընդհանուր իրավասության դատարանների ակտերով գրկվել է

ՏՏ Սահմանադրության 18 հոդվածով ամրագրված դատական պաշտպանության իրավունքից:

Դիմողի պնդմամբ՝ «Կոնկրետ գործով դատարան ստեղծվում, ձեւավորվում է պաշտոնապար անձի կամ անձանց՝ «Նայցադիմումը (դիմումը, բողոքը) վարույթ ընդունելու մասին» որոշմամբ: Ներեւաբար, մինչեւ գործը վարույթ ընդունելու մասին որոշման կայացումը (կամ մերժումը) դեռ չկա «օրենքի հիման վրա ստեղծված դատարան», եւ գործ ունենք պաշտոնապար անձի (անձանց) հետ, որը (որոնք) կարող է(են) ...անգործություն ցուցաբերել»: Այդ անգործության պատճառով իրեն փութած համարող անձը պետք է իրավունք եւ իրական հնարավորություն ունենա օրենսդրությամբ նախատեսված եղանակներով պաշտպանելու իր իրավունքները նման խախտումներից:

Ըստ դիմողի՝ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխում դատավորի անգործության բողոքարկման վերաբերյալ դրույթի բացակայության արդյունքում սրացվում է այնպես, որ եթե դատարանը չընդունի հայցը, դիմումը կամ բողոքը՝ ոչ թե վարույթ չընդունելու վերաբերյալ որոշում կայացնելու միջոցով, այլ պարզապես անգործությամբ, ապա ոչինչ անել հնարավոր չէ, քանի որ չկա այն «պոզիտիվ» դատական ակտը, որը կարող էր բողոքարկվել վերադաս ապյանում, եւ դատարանները մերժում են նման հայցը (դիմումը կամ բողոքը)՝ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում դատավորի անգործությունը բողոքարկելու դրույթի բացակայության պատճառաբանությամբ: Դիմողը գտնում է, որ այս իրավական դիրքորոշումը նենգափոխում է դատական պաշտպանության եւ արդարադատության մարզելիության իրավունքների էությունը՝ «գրոյացնելով» դրանց բովանդակությունը:

Դիմող կողմն այն պնդակներն ունի, որ սույն դեպքում ոչ թե գործ ունենք օրենքի՝ դատական պրակտիկայի միջոցով հաղթահարելի բացի հետ, այլ այնպիսի բացի, որն առաջացնում է դատարաններին ուղղված դիմումների անպետման, խախտված իրավունքների վերականգնման իրավական պաշտպանության որեւէ միջոցի իսպառ բացաման հակասահմանադրական իրավիճակ:

Դիմողը կարծում է, որ դատարանների վերը շարադրված իրավական դիրքորոշումը խախտում է իշխանությունների հավասարակշռումը, լուրջ բաց առաջացնելով իրավական ակտերի դատական վերահսկողության առումով եւ վրանգելով ՏՏ Սահմանադրության 18 հոդվածով նախատեսված՝ անձի իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրականացումը:

3. Պատասխանող կողմն առարկելով դիմողի փաստարկները, գտնում է, որ ՏՏ օրենսդրությամբ, մասնավորապես, ՏՏ քաղ. դատ. օր.-ի 26-րդ գլխի դրույթներով երաշխավորվում է անձի՝ Սահմանադրության 18 հոդվածով ամրագրված իրավունքի պաշտպանությունը: Ըստ պատասխանող կողմի՝ «ՏՏ քաղ. դատ. օր.-ի 159 հոդվածն ուղղակիորեն սահմանում է, որ պետական մարմինների, պեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնապար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու կամ նրանց գործողությունը (անգործությունը) վիճարկելու համար հիմք են նշված ակտն

օրենքին հակասելը եւ դիմողի՝ ՆՏ Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված իրավունքի եւ (կամ) ազատության խախտման փաստի առկայությունը»: Կողմը գտնում է նաեւ, որ «...օրենքն օգտագործում է «պետական մարմին» եւ «պաշտոնապար անձ» հասկացությունները՝ դրանով իսկ յուրաքանչյուրին իրավունք վերապահելով վիճարկել ցանկացած պետական մարմնի կամ պաշտոնապար անձի գործողությունը կամ անգործությունը»: Պարասխանող կողմը գտնում է նաեւ, որ օրենսգրքի վիճարկվող գլխում «...դատավորի գործողություններն ու անգործությունը վիճարկելու իրավունքի առանձնացումը ոչնչով արդարացված չէր լինի եւ այդ դեպքում նույնիսկ կարող էր այն թյուր կարծիքը ստեղծվել, որ դատարանը պետական մարմին, իսկ դատավորը՝ պաշտոնապար անձ չէ»:

Պարասխանող կողմը գտնում է նաեւ, որ չի կարելի դատարանի եւ դատավորի գործողությունների ու անգործության յուրաքանչյուր դեպքի բողոքարկումն իրականացնել ՆՏ քաղ. դատ. օր.-ի 26-րդ գլխի դրույթների հիման վրա: Մասնավորապես, ՆՏ քաղ. դատ. օր.-ի 26-րդ գլխով սահմանված կարգով բողոքարկման ենթակա չեն.

- դատավորի այն ակտերն ու գործողությունները, որոնց բողոքարկման համար օրենսդրությամբ սահմանված է հատուկ դատավարական կարգ,

- դատարանի միջանկյալ ակտերը, որոնք ընդունվում են գործն ըստ էության քննելու ընթացքում եւ կարող են բողոքարկվել միայն վերաքննության կամ վճռաբեկության կարգով,

- այն ակտերը, որոնց բողոքարկումը կհանգեցնի «...դատական արյանների միջեւ ֆունկցիոնալ կապի վերացմանը, աղճատմանը, դատական ակտերի կայունության կորստի»:

Պարասխանող կողմը գտնում է նաեւ, որ ՆՏ քաղ. դատ. օր.-ի 26-րդ գլխի՝ հակասահմանադրական ճանաչվելու դեպքում անձինք կզրկվեն պետական այլ մարմինների եւ պաշտոնապար անձանց ակտերն ու գործողությունները (անգործությունը) վիճարկելու, եւ, հետեւաբար՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքից:

Պարասխանող կողմը միաժամանակ փաստեց, որ իրավակիրառական պրակտիկայում փեղ է գտել դիմողի իրավունքների խախտում, ինչպես նաեւ առկա է օրենսդրական բաց, որի հաղթահարման ուղղությամբ գործնական քայլեր են արվում:

4. ՆՏ քաղ. դատ. օր.-ի 15 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ «Քաղաքացիական գործեր քննող դատարանը ... քննում է ... քաղաքացու իրավունքները, ազատությունները եւ օրինական շահերը խախտող պետական մարմնի, փեղական ինքնակառավարման մարմնի եւ դրանց պաշտոնապար անձանց՝ օրենքին հակասող ակտերն ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու վերաբերյալ գործերը»:

ՆՏ քաղ. դատ. օր.-ի 163 հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 3-րդ կետերի համաձայն՝ պետական մարմնի, փեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնապար անձի ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ գործով դատարանի վճռի եզրափակիչ մասը պեղք է պարունակի նշում՝ ակտն ամբողջովին կամ մասամբ անվավեր ճանաչելու կամ պահանջի բավարարումն ամբողջովին կամ մասամբ մերժելու մասին, ինչպես նաեւ նշում՝ անվավերության հետեւանքների մասին...:

Պետական մարմնի կամ դրա պաշտոնապար անձի ակտի անվավերության հիմքերն ամրագրված են նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՏՏ օրենքի 63 հոդվածում (ըստ նշված օրենքի՝ վարչական վեճերն ըստ էության լուծվում են արտադարական կարգով): Իսկ նույն օրենքի 64 հոդվածում նշված են ակտի անվավեր ճանաչելու հետևանքները: Նշված հոդվածները վերաբերում են բացառապես վարչական մարմինների կողմից ընդունված ակտերին:

ՏՏ քաղ. դատ. օր.-ի վերոնշյալ դրույթներում «ակտն ամբողջովին կամ մասամբ անվավեր ճանաչելու» և «նշում՝ անվավերության հետևանքների մասին» բառակապակցություններից, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՏՏ օրենքի նորմերից բխում է, որ քաղ. դատ. օր.-ի 163 հոդվածը, հետևաբար՝ քաղ. դատ. օր.-ի ամբողջ 26-րդ գլուխը, նվիրված է միայն *ոչ արդարադատական* գործառույթներ իրականացնող մարմինների և դրանց պաշտոնապար անձանց գործունեության օրինականության նկատմամբ դատական վերահսկողությանը:

Բացի դրանից, քաղ. դատ. օր.-ի 163 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Այն դեպքում, երբ քաղաքացու կամ իրավաբանական անձի խախտված իրավունքը չի կարող վերականգնվել միայն պետական մարմնի, փեդական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնապար անձի՝ օրենքին հակասող ակտն անվավեր ճանաչելու միջոցով, դատարանն իրավունք ունի իր վճռով պարտադրել համապատասխան մարմնին կամ պաշտոնապար անձին՝ ընդունելու քաղաքացու՝ օրենքով երաշխավորվող իրավունքները և (կամ) ազատությունները վերականգնող ակտ»: Այնուհայր է, որ նման կարգավորումը կարող է վերաբերել միայն վարչական, այլ ոչ թե դատական ակտերին:

ՏՏ դատավարական օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ **գործն ըստ էության լուծող** դատական ակտերը ենթակա են դատական վերահսկողության դատավարական օրենսդրությամբ սահմանված հատուկ կարգով, կոնկրետ դեպքում՝ քաղ. դատ. օր.-ի չորրորդ («Վարույթը վերաքննիչ դատարանում») և հինգերորդ («Վարույթը վճռաբեկ դատարանում») բաժինների կանոններով:

Ինչ վերաբերում է միջանկյալ դատական ակտերին, ապա օրենսդիրը հստակեցրել է այն ակտերի շրջանակը, որոնք ենթակա են բողոքարկման: Այսպես, ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերլուծությունը ցույց է տալիս, որ բողոքարկման ենթակա են միայն հետևյալ՝ **գործն ըստ էության չլուծող (միջանկյալ)** դատական ակտերը՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը (քաղ. դատ. օր.-ի 91 հոդված), հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը (քաղ. դատ. օր.-ի 92 հոդված), հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու մասին որոշումը (քաղ. դատ. օր.-ի 104 հոդված), գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը (քաղ. դատ. օր.-ի 108 հոդված), դատական սանկցիա կիրառելու մասին որոշումը (քաղ. դատ. օր.-ի 115 հոդված), լրացուցիչ վճռի կայացումը մերժելու մասին որոշումը (քաղ. դատ. օր.-ի 142 հոդված), վճիռը պարզաբանելու կամ վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին որոշումը (քաղ. դատ. օր.-ի 143 հոդված), վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը (քաղ. դատ. օր.-ի 212 հոդված (այս որոշման բողոքարկելիությունը սահմանվել է ՏՏ Ազգային ժողովի կողմից 18.02.2004թ. ընդունված՝ ՏՏ քաղաքացիական դա-

տրավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքով): Դատարանների կողմից կայացվող մյուս՝ միջանկյալ դատական ակտերը (գործը դռնփակ նիստում քննության առնելու, բացարկի կամ ինքնաբացարկի ընդունման կամ մերժման, վկային հարկադիր բերման ենթարկելու, ապացույցներ պահանջելու եւ ապահովելու, փորձաքննություն եւ փորձագետ նշանակելու, դատական հանձնարարության, բաց թողնված ժամկետը վերականգնելու կամ չվերականգնելու, գործն այլ դատարանի քննության փոխանցելու, գործերը միացնելու կամ առանձնացնելու, գույքի հեփախուզում հայտարարելու, հայցի ապահովման միջոց կիրառելու կամ այն վերացնելու, արագացված դատաքննություն կիրառելու, նիստը հեփաձգելու, արձանագրության վերաբերյալ դիտողություններն ընդունելու կամ մերժելու մասին որոշումները) բողոքարկման ենթակա չեն:

Նարկ է նշել նաեւ քաղ. դատ. օր.-ի այն դրույթները, որոնց համաձայն՝ առաջին ապյանի դատարանի որոշումները կարող են բողոքարկվել վերաքննիչ կարգով միայն ՏՏ քաղ. դատ. օր.-ով եւ այլ օրենքներով նախատեսված դեպքերում (քաղ. դատ. օր.-ի 221 հոդվածի 1-ին մաս) եւ առաջին ապյանի դատարանների եւ փնտեսական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտնելու եւ վերաքննիչ, փնտեսական դատարանների՝ օրինական ուժի մեջ չմտնելու որոշումները կարող են բողոքարկվել վճռաբեկության կարգով միայն քաղ. դատ. օր.-ով եւ այլ օրենքներով նախատեսված դեպքերում (քաղ. դատ. օր.-ի 222 հոդվածի 2-րդ մաս):

Դատարանի վերոհիշյալ՝ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի բնույթի վերլուծությունից հետեւում է, որ օրենսդիրը հիմնականում բողոքարկելի է համարում այն բոլոր ակտերը, որոնք կարող են կասեցնել կամ խոչընդոտել դատարանի մարտնչության իրավունքի իրացման ընթացքը, այն է՝ հայցադիմումի ընդունումը մերժելու, հայցադիմումը վերադարձնելու, հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու, գործի վարույթը կասեցնելու մասին որոշումները: Բողոքարկման ոչ ենթակա վերոհիշյալ ակտերն իրենց բնույթով այնպիսին են, որ չեն կասեցնում գործի քննության հնարավորությունը եւ վերաբերում են գործի քննությունը կազմակերպելու՝ դատավորի հայեցողությանը:

Օրենսդրի կողմից առանձին դատական ակտերի բողոքարկման հնարավորության բացառումը բխում է դատավարությունն անհարկի ձգձգումներից զերծ պահելու անհրաժեշտությունից, քանի որ դատարաններում քաղաքացիական դատավարության կարգով գործերի քննության համար օրենքը սահմանում է հստակ ժամկետներ: Փաստորեն, օրենսդիրը, յուրաքանչյուր կոնկրետ դատական ակտի կապակցությամբ, առաջնորդվելով արդարադատության շահերից բխող որոշակի նպատակներով եւ խնդիրներով, սահմանում է այս կամ այն դատական ակտի բողոքարկելիությունը: Ուստի ՏՏ քաղ. դատ. օր.-ի 26-րդ գլխի նորմերի գործողության մեխանիկական փարածումը դատական ակտերի վրա՝ կարող է հանգեցնել արդարադատության շահերին հակասող իրավիճակների առաջացման, ինչը կհակասի քաղաքացիական դատավարության օրենսդրության ողջ փրամաբանությանը:

Դափական ակտերի, դափարանների եւ դրանց պաշտոնափար անձանց գործողությունների (անգործության) նկատմամբ բողոքարկման այն նույն կարգի կիրառումը, որը գործում է այլ պեփական մարմինների կամ պաշտոնափար անձանց ակտերը վիճարկելու համար, կղանդաղեցնի դափական քննության գործընթացը՝ դրանով սփեղծելով դափաքննությունը ողջամիփ ժամկեփում կազմակերպելու՝ արդարադափության իրականացման երաշխիքի խախտման վրանգ: Դափական իշխանության ներսում դափարանների եւ դրանց պաշտոնափար անձանց ակտերի բողոքարկումը պեփք է իրականացվի հափուկ դափավարական կարգով՝ այն հաշվով, որ վերջինս չխոչընդոփի դափաքննության բնականոն ընթացքը, չվրանգի դրա արդյունավեփությունը:

Նաշվի առնելով պեփական իշխանության համակարգում գործադիր եւ դափական մարմինների դերը եւ նշանակությունը, արդարադափության եւ կառավարման գործառույթների էությունը, դրանց առանձնահատկությունները, չի կարող իրավակարգավորման միեւնույն ձեւը կիրառվել դափական իշխանության կողմից ներհամակարգային վերահսկողության եւ գործադիր մարմինների գործունեության դափական վերահսկողության պարագաներում:

5. Բողոքարկման ինսփիփուփի ողջ փրամաբանությունը՝ ընդհանրապես, եւ արդարադափության համակարգի ներսում՝ մասնավորապես, հանգում է նրան, որ մի օղակի ապօրինի վարքագծի վիճարկումը հասցեագրված լինի բացառապես վերադաս ափյանին: Այս փրամաբանությամբ է կառուցված Մ արդարադափական համակարգի ներսում բողոքարկման ողջ մեխանիզմը: Գործն ըսփ էության լուծող դափական ակտերը բողոքարկվում են վերաքննության եւ վճարեկության կարգով՝ քաղ. դափ. օր.-ի 4-րդ եւ 5-րդ - բաժինների կանոնների հիման վրա: Ինչ վերաբերում է գործն ըսփ էության չլուծող (միջանկյալ) դափական ակտերին, ապա Մ քաղաքացիական դափավարության օրենսգրքում դափական ակտերի բողոքարկման կարգի կապակցությամբ կափարված փոփոխությունները եւս ելնում են նշված փրամաբանությունից եւ միփված են նրան, որ ապահովի դափարանների եւ դրանց պաշտոնափար անձանց ակտերի դեմ բերված բողոքների կոլեգիալ կարգով քննությունը, ինչը կափեղծի արդյունավեփության եւ օյեկփիվության լրացուցիչ երաշխիք: Այսպես, Մ Ազգային ժողովի կողմից 18.02.2004թ. ընդունված՝ Մ քաղաքացիական դափավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կափարելու մասին օրենքը սահմանում է վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման բողոքարկելիությունը՝ ամրագրելով, որ այդ որոշումը ենթակա է բողոքարկման վճարեկության կարգով: 21.02.2007թ. Մ Ազգային ժողովի կողմից ընդունված եւ 07.04.2007թ. ուժի մեջ մփած՝ «Մ քաղաքացիական դափավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կափարելու մասին» Մ օրենքով սահմանվում է դափարանների առանձին որոշումների բողոքարկման նոր կարգ, որի համաձայն՝ մասնավորապես, փնփեսական դափարանի որոշումների դեմ բերված բողոքները փնփեսական դափարանում պեփք է քննվեն կոլեգիալ՝ երեք դափավորի կազմով, հայցադիմումի ընդունումը մերժելու, հայցադիմումը վերադարձնելու, հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու, գործի վարույթը կասեցնելու մասին առաջին ափյանի դափարանի որոշումները են-

թակա են բողոքարկման վերաբերյալ դատարան: Նույն փորձաքննությունն է արվա-
հայրված նաեւ ՏՏ դատական օրենսգրքում:

ՏՏ քաղ. դատ. օր.-ի 26-րդ գլխի դրույթների ամբողջական փարսածումը դատա-
րանների եւ դրանց պաշտոնատար անձանց ակտերի վիճարկման վրա՝ կխախտի վերո-
հիշյալ փորձաքննությունը, ինչի արդյունքում կստեղծվի առաջին արյանի դատարանի
դատավորի կողմից, այսինքն՝ հավասար կամ ցածր պեդագոգիկական մակարդակի վրա
գտնվող դատավորի կողմից նույն դատարանի նախագահի կամ վերադաս արյանի դա-
տարանների դատավորների գործողությունների (անգործության) վիճարկման վերաբեր-
յալ դիմումները քննության առնելու հնարավորություն: Ընդ որում, նման մոտեցման դեպ-
քում հնարավոր է դառնում մի իրավիճակ, երբ կոլեգիալ կազմով կայացված դատական
ակտը կարող է միանձնյա դատական քննության առարկա դառնալ: Մինչդեռ քաղաքա-
ցիական դատավարական օրենսդրության զարգացումներն ընթանում են այն ուղղու-
թյամբ, որ ապահովեն դատական ակտերի դեմ բերված բողոքների կոլեգիալ քննությու-
նը:

Ոստի դատարանների եւ դրանց պաշտոնատար անձանց ակտերի բողոքարկու-
մը կարող է փեղի ունենալ միայն օրենսդրությամբ սահմանված հատուկ դատավարական
կարգով:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ հայցը կամ դիմումը
դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրա-
վունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆի-
զիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների փարսածույթ
խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես
էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոլորտային իշխանության, այնպես
ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Նայասարանի
Նանրապեդությունում, ինչպես եւ բոլոր այլ իրավական պեդություններում, ունի սահմա-
նադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՏՏ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին
մաս):

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում
է պեդության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմատիվ, թե՛ իրա-
վակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդ-
րի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն եւ մե-
խանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականություն-
նը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց
ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց ի-
րավունքների ենթադրյալ խախտումներից:

Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին,
քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապար-
փակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բո-

լոր այլ մարմիններից եւ պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պարտականող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ուրնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ:

Մյուս կողմից, դատական իշխանությունը միակ իշխանությունն է, որն ինքն է ունակ եւ պարտավոր վերահսկելու իրեն, այսինքն՝ վերադաս ապյանների դատարանները պարտավոր են վերացնել ավելի սպորին ապյանների թույլ փված դատական սխալները: Սակայն իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մարչելի: Նման իրավիճակն անհամարելելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հեփ:

Դատարանի՝ արդարադատության գործառույթ իրականացնելու միակ հիմքը օրենքով սահմանված կարգով իրեն ուղղված դատական պաշտպանության պահանջ պարունակող դիմումների քննությունն է: Առաջին ապյանի դատարանը որեւէ հայեցողություն չունի օրենքին համապարասխանող դիմումին ընթացք փալու կամ չփալու հարցում՝ այն պեփք է ընդունվի վարույթ եւ քննվի անվերապահորեն եւ առանց որեւէ բացառության: Օրենքին չհամապարասխանող դիմումները վարույթ չեն ընդունվում, սակայն, եթե դրանք ժամանակին շրկվում են, ապա կարող են վերսփին ներկայացվել: Այլ է իրավիճակը վերադաս դատական ապյաններում, որոնցում դիմումի թույլափրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ապյաններում եւս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն:

Օրենսդիր մարմնի խնդիրն է ազգային դատավարական իրավունքում ամրագրելու անգործության հաղթահարման արդյունավեփ մեխանիզմներ: Վարցը վերաբերում է դատական պաշտպանության արդյունավեփ միջոցների երաշխավորմանը՝ հենց անգործության դեմ գործուն իրավական երաշխիքներ ձեռնարկելու եղանակով, ապահովելու եւ երաշխավորելու մարդու արդյունավեփ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը:

7. Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում նաեւ այն փաստի վրա, որ մինչեւ ՎՊ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին 18.02.2004թ. ՎՊ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքի ուժի մեջ մտնելը ՎՊ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (ոչ 26-րդ գլխում) նախատեսում էր այնպիսի կարգավորում, որով փորձ էր արվել բացառել դատարանի (դատավորի) անգործության հեփետանքով հայցադիմումը չընդունելը: Այդ կարգավորումը, մասնավորապես, կայանում էր հեփետայում. ՎՊ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ նախկին խմբագրությամբ 91 հոդվածի 2-րդ կեփի համաձայն՝ եռօրյա ժամկետում հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշում չկայացվելու դեպքում **հայցադիմումը համարվում էր ընդունված**: Այսինքն՝ եթե դատավորը, անգործություն

դրսետրելով, օրենքով սահմանված եռօրյա ժամկետում չէր կայացնում ո՛չ հայցադիմումն ընդունելու, ո՛չ հայցադիմումը վերադարձնելու եւ ո՛չ էլ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշում, ապա օրենքի ուժով հայցադիմումը համարվում էր ընդունված:

Վերոհիշյալ կարգավորումը սակայն փոփոխության է ենթարկվել ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին 18.02.2004թ. ՆՃ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքով, որի 6-րդ հոդվածով ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ 91 հոդվածի 2-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Դատարանը, սույն օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով, հայցադիմումի ընդունումը մերժելու մասին կայացնում է որոշում՝ հայցադիմումն սրանալու օրվանից եռօրյա ժամկետում որոշումը, հայցադիմումը եւ դրան կից փաստաթղթերը պարզաճանաչում ուղարկելով հայցվորին»: Ներկայիս խմբագրությամբ գործող ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքում բացակայում է վերոհիշյալ այն կարգավորումը, որը բացառում էր դատարանի մարչելիության իրավունքի խախտումն այն դեպքերում, երբ դատավորն օրենքով սահմանված ժամկետում չէր կայացնի հայցադիմումն ընդունելու, ընդունումը մերժելու կամ վերադարձնելու մասին որոշում: Սակայն այդպիսի իրավական կարգավորումը նույնպես խնդրի վերջնական լուծում չէր, քանի որ կարող էր անգործություն ի հայտ գալ նաեւ հայցադիմումը քննության ընդունելուց հետո: Այսուհանդերձ, վերոհիշյալ փոփոխությունից հետո ձեւավորվել է այնպիսի իրավակիրառական պրակտիկա, որը, ըստ գործի նյութերի եւ կողմերի դիրքորոշումների, վկայում է քաղաքացու սահմանադրական իրավունքի փաստացի խախտման, ինչպես նաեւ պարճառված վնասի փոխհատուցման արդյունավետ մեխանիզմների բացակայության մասին:

ՆՃ սահմանադրական դատարանն իր 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 եւ մի շարք այլ որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մարչելիության եւ արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՆՃ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 եւ այլ հոդվածներով, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաեւ ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարեւորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը հատկապես միջազգային այն պարավորությունների շրջանակներում, որպիսիք Նայասարանի Նանրապետությունն սրանձնել է Եվրոպայի խորհրդի առջեւ: Միաժամանակ, կարեւորվել է այդ պարավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մարչելիության եւ, հարկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:

Նկատի ունենալով, որ դատական իշխանության համակարգում արդարադատական գործընթացի բոլոր փուլերն օրենքով կանոնակարգված են, որոշակիացված են բողո-

քարկման ընթացակարգերը, նախապեսված են դատական իշխանության բնականոն գործունեության որոշակի երաշխիքներ, այսուհանդերձ, սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական իշխանության պաշտոնապար անձանց անգործության վերացման արդյունավետ ձեերի հարցն օրենսդրական լրացուցիչ կանոնակարգման խնդիր ունի:

Ն դատական օրենսգրքի 89, 90 հոդվածներով սահմանված են դատավորի պաշտոն զբաղեցնող անձանց պարտադիր վարքագծի կանոնները: Նույն օրենսգրքի մի շարք այլ հոդվածների համաձայն ընդհանուր իրավասության, քաղաքացիական, քրեական, վարչական, վերաքննիչ դատարանների նախագահների, Ն վճռաբեկ դատարանի նախագահի անմիջական պարտականությունն այդ դատարանների բնականոն գործունեությունն ապահովելը եւ դատավորի կողմից նրա անմիջական պարտականությունների կատարմանը հետեւելն է (25, 30, 34, 38, 49 եւ 61 հոդվածներ), ընդ որում, դատարանների նախագահների այդ պարտականության ոչ պարզաձե իրականացումը նույն օրենսգրքի 165 հոդվածի 1-ին մասի համաձայն նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրական վերջին զարգացումները մասնակիորեն են լուծում քննության առարկա խնդիրը (հանձին նաեւ կարգապահական վարույթի ինստիտուտի (համաձայն Ն դատական օրենսգրքի 155 հոդվածի)): Բացի դրանից, դատարանի բնականոն գործունեության ապահովման տեսակետից օրենքը որոշակի պարտավորություններ է դնում նաեւ դատարանների նախագահների խորհրդի վրա (մասնավորապես, Ն դատական օրենսգրք, հոդվ. 72): Այսուհանդերձ, հաշվի առնելով նաեւ ձեւավորված իրավակիրառական պրակտիկան, ելնելով Ն քաղ. դատ. օր.-ի 91 հոդվածի 2-րդ կետի իմպերատիվ պահանջից՝ հայցադիմումն ստանալու պահից դրա մերժման վերաբերյալ եռօրյա ժամկետում որոշում կայացնելու վերաբերյալ, ինչպես նաեւ նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատական իշխանության մարմիններում անգործության պարագան անձի արդարադատության մարչելիության իրավունքի սահմանափակման պարճառ է դառնում, սահմանադրական դատարանը գտնում է, որ, նախ. Ն վճռաբեկ դատարանը կարող էր, օրենսդրության տարակերպ ընկալման ու մեկնաբանման պայմաններում, երաշխավորել մարդու արդարադատության մարչելիության իրավունքը՝ օրենքի միատեսակ կիրառումն ապահովելու միջոցով: Սակայն խնդիրը միայն օրենքի մեկնաբանման ճանապարհով արդյունավետ չի կարող լուծվել: Ն Ազգային ժողովն առավել հստակ պետք է սահմանի դատարանների, նրանց պաշտոնապար անձանց անգործության հետեւանքով անձի խախտված իրավունքները դատավարական ողջամիտ ժամկետում վերականգնելու եւ պարճառված վնասը փոխհատուցելու արդյունավետ ընթացակարգեր, որոնց բացակայության պայմաններում լիարժեք չի կարող երաշխավորվել նաեւ արդարադատության մարչելիության՝ անձի իրավունքն այն բովանդակությամբ, որն անմիջականորեն բխում է ինչպես Ն Սահմանադրության 18, 19 հոդվածների, այնպես էլ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի իմաստից: Իսկ այդ խնդիրը դուրս է Ն քաղ. դատ. օր.-ի 26-րդ գլխի գործող նորմերի իրավակարգավորման շրջանակներից:

8. Ինչ վերաբերում է վնասի փոխհատուցման վերաբերյալ դիմողի պահանջին, ապա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ հարցի լուծումը դուրս է սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակներից և վերապահված է ՏՏ Սահմանադրության 92 հոդվածի 1-ին մասով նախատեսված դատարաններին: ՏՏ - Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակարդ, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակարդ իր նկատմամբ կիրառված **օրենքի դրույթի սահմանադրականությունը**: Դրանով սահմանափակված է անհատական դիմումների շրջանակը: Իսկ ՏՏ Սահմանադրության 5 հոդվածի պահանջն է, որ «Պետական և փեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնապար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»: Միաժամանակ, սահմանադրական դատարանն օրենքի սահմանադրականության հարցը, ըստ Սահմանադրության 100 հոդվածի, լուծում է օրենքով սահմանված կարգով: Իսկ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 8-րդ մասի համաձայն սահմանադրական դատարանն օրենքի սահմանադրականության հարցի քննության արդյունքով կարող է ընդունել հետեւյալ որոշումներից մեկը.

1) վիճարկվող ակարդ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին.

2) վիճարկվող ակարդ ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին:

Այլ որոշում սահմանադրական դատարանն իրավասու չէ ընդունելու:

Ելնելով գործի քննության արդյունքներից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլուխը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳ-ԱՏՈՂ

Գ.ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

28 նոյեմբերի 2007 թվականի

ՄԴՈ-719

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻ ԷՄՄԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆՃՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 419 ՆՈՂՎԱԾԻ 6-ՐԴ ԿԵՏԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

11 դեկտեմբերի 2007թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարոթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Վ. Նովիանիսյանի, Զ. Ղուկասյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝

դիմող՝ քաղ. Է. Կարապետյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՆՃ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՃ ԱՄ նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

«Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 46 հոդվածի համաձայն՝ սահմանադրական դատարանում ՆՃ կառավարության ներկայացուցիչ Ա. Մարգարյանի,

համաձայն ՆՃ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ - կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Էմմա Կարապետյանի դիմումի հիման վրա՝ ՆՃ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 6-րդ կետի՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղ. Է. Կարապետյանի՝ 29.08.2007թ. դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, կողմերի գրավոր բացատրությունները, հեղափոխելով ՆՃ քրեական դատավարության օրենսգրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. ՆՏ քրեական դատավարության օրենսգրքին ընդունվել է Նայասպանի Նանրապետության Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, ՆՏ Նախագահի կողմից ստորագրվել 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 12-ից:

ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող 419 հոդվածը փոփոխվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի հուլիսի 7-ին ընդունված՝ «Նայասպանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՏ օրենքով:

ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածը վերնագրված է «Բողոքը քննող դատարանի որոշումները», որը 2006 թվականի հուլիսի 7-ի խմբագրությամբ սահմանում է.

«Դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը՝

1) մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, սակայն դատարանների կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտերը թերի պատճառաբանված, սխալ պատճառաբանված կամ չպատճառաբանված են, ապա վճռաբեկ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը.

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է լրացուցիչ նախաքննության կամ համապատասխան ստորադաս դատարան՝ այլ կազմով նոր քննության: Չբեկանված մասով դատական ակտը մտնում է օրինական ուժի մեջ.

3) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը եւ հաստատում կողմերի հաշվարկության համաձայնությունը.

4) բեկանում եւ փոփոխում է ստորադաս դատարանի դատական ակտը, եթե ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս նման փոփոխության, եւ դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից.

5) կարճում է գործի վարույթը եւ դադարեցնում քրեական հետապնդումն ամբողջությամբ կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում քաղաքացիական հայցն ամբողջությամբ կամ դրա մի մասը, եթե գործի վարույթը կարճելու կամ քաղաքացիական հայցն առանց քննության թողնելու հիմքերն ի հայտ են եկել ստորադաս դատարանում գործի քննության ժամանակ.

6) վերաքննիչ դատարանի դատական ակտը վերանայելիս օրինական ուժ է տալիս առաջին ասյանի կամ վերաքննիչ դատարանի դատական ակտերից որեւէ մեկին»:

2. Դիմողը դիմումին կից ՆՏ սահմանադրական դատարան է ներկայացրել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ասյանի դատարանի

26.03.2007թ., ՆՏ քրեական վերաքննիչ դափարանի 14.05.2007թ. եւ ՆՏ վճռաբեկ դափարանի քրեական պալատի 13.07.2007թ. որոշումները:

Վերոհիշյալ դափարական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին արյանի դափարանն իր 26.03.2007թ. որոշմամբ մերժել է քաղ. Է. Կարապետյանի՝ ՆՏ գլխավոր դափախագության անգործության դեմ բերված բողոքը, իսկ որոշման եզրափակիչ մասում ամրագրել է, որ փվյալ որոշումը ենթակա չէ բողոքարկման: ՆՏ քրեական վերաքննիչ դափարանը, քննության առնելով քաղ. Է. Կարապետյանի վերաքննիչ բողոքը, իր 14.05.2007թ. որոշմամբ բավարարել է այն եւ բեկանել Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին արյանի դափարանի 26.03.2007թ. որոշումը: ՆՏ վճռաբեկ դափարանի քրեական պալատը, քննելով ՆՏ գլխավոր դափախագի փեղակալի կողմից բերված վճռաբեկ բողոքը, իր 13.07.2007թ. որոշմամբ անհիմն համարելով բողոքափոփ այն փաստարկը, որ ՆՏ քր. դափ. օր.-ի 278 հոդվածով նախատեսված՝ հեփաքնության մարմինների, քննիչի, դափախագի եւ օպերատիվ-հեփախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումները չեն կարող բողոքարկվել վերաքննիչ դափարան, բայցեայնպես, հիմնավոր համարելով առաջին արյանի դափարանի կողմից կայացված որոշումը, կիրառելով ՆՏ քր. դափ. օր.-ի 419 հոդվածի 6-րդ կետը՝ բեկանել է ՆՏ քրեական վերաքննիչ դափարանի 14.05.2007թ. որոշումը եւ օրինական ուժ է փվել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին արյանի դափարանի որոշմանը:

Դիմողը գրնում է, որ ՆՏ վճռաբեկ դափարանն իր գործով կիրառելով ՆՏ քրեական դափավարության օրենսգրքի 419 հոդվածի 6-րդ կետը՝ իրեն գրկել է ՆՏ Սահմանադրության 19 հոդվածի հիմքերով իր խախտված իրավունքները դափական կարգով վերականգնելու հնարավորությունից, խախտել է Սահմանադրության 19 հոդվածով նախատեսված իր սահմանադրական իրավունքը, ոստի ՆՏ քրեական դափավարության օրենսգրքի 419 հոդվածի 6-րդ կետով սահմանված դրույթն անհրաժեշտ է ճանաչել ՆՏ Սահմանադրության 19 հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր:

3. Պափախանողը գրնում է, որ ՆՏ Սահմանադրության 19 հոդվածով երաշխավորված՝ յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքները վերականգնելու համար հավասարության պայմաններում անկախ եւ անկողմնակալ դափարանի կողմից ողջամիփ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքը ենթադրում է յուրաքանչյուր գործով դափարանի կողմից համապափասխան դափավարական փաստաթղթում իր դիրքորոշման արփահայտում: ՆՏ քրեական դափավարության օրենսգրքով վճռաբեկ դափարանի կողմից կայացվող որոշումների փեսակների սահմանումը պայմանավորված է ՆՏ վճռաբեկ դափարանի սահմանադրաիրավական կարգավիճակով, ներհամակարգային գործառության փարանջարման սկզբունքի վրա հիմնված դափական համակարգում վճռաբեկ դափարանի դերով եւ նշանակությամբ, իր կարգավիճակից բխող լիագորությունների առանձնահատկությամբ:

Ըստ պափախանող կողմի՝ ՆՏ քրեական դափավարության օրենսգրքի 419 հոդվածի 6-րդ կետում եւ ՆՏ դափական օրենսգրքի 60 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում

ամրագրված՝ վճռաբեկ դատարանի եզրափակիչ որոշման նոր փեսակը ոչ միայն չի հակասում ՏՏ Սահմանադրության 19 հոդվածին, այլ, ընդհակառակը, այն կարելի է դիտել որպես նշված հոդվածում ամրագրված իրավունքի իրականացման գործուն երաշխիք: Մասնավորապես, ՏՏ վճռաբեկ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով վերաքննիչ դատարանի դատական ակտը, օրինական ուժ է փալխ առաջին ապյանի դատարանի՝ իր կարծիքով արդարացի դատական ակտին: Օրինական ուժ փալով առաջին ապյանի դատարանի դատական ակտին՝ վճռաբեկ դատարանը դրանով իսկ հաստատում է, որ առաջին ապյանի դատարանում գործի քննությունն իրականացվել է հավասարության եւ հրապարակայնության պայմաններում, ողջամիտ ժամկետներում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից:

Վճռաբեկ դատարանի եզրափակիչ որոշման նոր փեսակը նպաստում է նաեւ դատական ակտերի շրջապարույրի կանխմանը՝ ապահովելով դատավարական խնայողության եւ ՏՏ Սահմանադրության 19 հոդվածով երաշխավորված՝ «դատավարության ողջամիտ փետողության» սկզբունքների իրացումը:

Պատասխանողը գտնում է, որ դիմողի փաստարկները հիմնավոր չեն, ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 6-րդ կետով սահմանված դրույթը չի հակասում ՏՏ Սահմանադրության 19 հոդվածի պահանջներին եւ դիմումը ենթակա է մերժման:

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը, հռչակելով իրեն որպես իրավական պետություն, ՏՏ Սահմանադրության 19 հոդվածով հստակ նախատեսում է երաշխավորում է յուրաքանչյուր անձի՝ իր խախտված իրավունքները դատական կարգով պաշտպանելու իրավունքը՝ օրենքով սահմանված ձեւերով ու ծավալով: Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաեւ իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

Մի շարք միջազգային պայմանագրերով, մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով (10 հոդված), Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով (6 հոդված), Զաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով (14 հոդված) եւ այլ իրավական ակտերով Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է պարտավորություններ՝ երաշխավորելու անձանց՝ իրենց խախտված իրավունքները վերականգնելու եւ անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իրենց գործի հրապարակային քննության իրավունքը:

5. ՏՏ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակով եւ դատական համակարգում նրա դերով են պայմանավորված դատական բողոքարկման հարաբերությունների կարգավորման բնագավառում 2006 թվականի հուլիսի 7-ի օրենսդրական փոփոխությունները, որի արդյունքում վճռաբեկ դատարանին, ի լրումն այլ լիազորությունների, իրավունք է վերապահվում օրինական ուժ փալ ստորադաս դատարանների դատական ակտերից մեկին, որը հիմնավոր կհամարվի՝ դրանով իսկ եզրափակելով փյվյալ գործով քննությունն ընդհանուր իրավասության դատարաններում:

ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի նախորդ խմբագրությունը հանգեցնում էր նրան, որ երբեմն պրակտիկայում հնարավոր չէր լինում խուսափել այնպիսի դեպքերից, երբ գործի քննությունն ընկնում էր շրջապարտյաի մեջ եւ դատական քաշքշուկի պարճառով ստեղծվում էր ՏՏ Սահմանադրության 19 հոդվածով, Եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածով եւ մի շարք այլ իրավական ակտերով երաշխավորված՝ ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքի խախտման վրանգ:

ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 3, 4 եւ 6 կետերով նախատեսված լիազորությունների համադրված վերլուծությունը վկայում է, որ ՏՏ վճռաբեկ դատարանին նման լիազորություններ վերապահելը նպատակ է հեղապնդել կանխելու այն դատական շրջապարտյալը, որը գոյություն է ունեցել մինչ այդ: Այդ լիազորությունների միջոցով դատական շրջապարտյաի կանխումն իր հերթին հնարավորություն է ընճեռում երաշխավորել դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու սահմանադրաիրավական պահանջի իրացումը, ինչպես նաեւ սպահովել իրավական որոշակիության սկզբունքի իրացումը:

6. Նարցն էլ ավելի է կարեւորվում, երբ խոսքը վերաբերում է քրեական դատավարությանը, երբ գործի քննության անհարկի ճգճգումների պայմաններում, օրինակ, անճը շարունակում է գրնվել անազարտյան մեջ: Այս հարցի առնչությամբ ՏՏ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումն արտահայտված է ՄԴՈ-710 որոշման մեջ:

Նամաճայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշման՝ ճանաչվում է քրեական գործով հեղապնդվող յուրաքանչյուր անճի՝ ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքը: Կոնկրետ քրեական դատավարության ճգճգումների առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պարտավորեցնում է պետություններին ստեղծել այնպիսի իրավական դաշտ եւ դատական համակարգ, որի պայմաններում կաշաշրպանվեն մեղադրյալների՝ Եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածով երաշխավորված իրավունքները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներում բազմիցս բացասական դիրքորոշում է արտահայտել հսկողական վարույթի շրջանակներում օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի վերաբերյալ: Ըստ եվրոպական դատարանի՝ նման դատավարական ընթացակարգի կիրառման արդյունքում խախտվում են դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու կոնվենցիոն պահանջը, ինչպես նաեւ իրավական որոշակիության սկզբունքը, որը, ի թիվս այլ

խնդիրների, պահանջում է, որ դատարանների ուժի մեջ մտնող որոշումները կրկին չդառնան քննության առարկա:

7. Սահմանադրական դատարանը միաժամանակ ընդգծում է, որ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 6-րդ կետով նախատեսված լիազորությունը ՏՏ վճռաբեկ դատարանը կարող է կիրառել բոլոր այն դեպքերում, երբ գործի փաստական հանգամանքները չեն փոխվում եւ՝ առաջին աստիճանի դատարանի, եւ՝ վերաքննիչ դատարանի դատաքննության արդյունքում, եւ դատավճիռներով հաստատված միեւնույն փաստը փարբեր դատարանների կողմից փարբեր քրեաիրավական գնահատականի է արժանանում: Նման գործը վճռաբեկության կարգով վերանայելիս ՏՏ վճռաբեկ դատարանը կարող է ուժի մեջ թողնել իրար հակասող դատական ակտերից մեկը: Այդպիսի որոշման հիմք կարող է հանդիսանալ միայն որեւէ աստիճանի դատարանի կողմից քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումը:

Նման գործերի քննության ժամանակ պետք է հաշվի առնվեն նաեւ ՏՏ քր. դատ. օր.-ի 397 հոդվածով նախատեսված դատավարության սկզբունքները:

ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 6-րդ կետը սահմանադրականության խնդիր չի առաջացնում եւ վճռաբեկ դատարանին վերապահված լիազորությունները համահունչ են ՏՏ Սահմանադրությանը, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով երաշխավորված՝ ողջամիտ ժամկետներում դատական քննության իրավունքին: Նիշյալ լիազորությունների բացակայությունը, ընդհակառակը, կարող է վրանգել դատական պաշտպանության, արդար դատաքննության, ողջամիտ ժամկետներում դատաքննության իրավունքները: Այնուամենայնիվ, փարբերույթ մեկնաբանություններից խուսափելու, իրավական որոշակիությունն ապահովելու առումով ճիշտ կլինե՞ր օրենքում հնարավորինս հստակեցնել այն հիմքերը, որոնք դատարանին հնարավորություն են տալիս կիրառել նշված լիազորությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 6-րդ կետը համապատասխանում է Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

11 դեկտեմբերի 2007 թվականի

ՄԴՈ-720

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻՆՆԵՐ ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՅԻ, ԽԱՉԻԿ ՇԱՆԲԱԶՅԱՆԻ, ԿԱՐԻՆԵ ԱՅՎԱԶՅԱՆԻ, ՍԵՎԱԿ ԴԵՐՉՅԱՆԻ, ՎՈԼՈՂՅԱ ԱԲԱԶՅԱՆԻ ԵՎ ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ «ՏԵՂԱԿԱՆ ՆԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 5 ՆՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

18 դեկտեմբերի 2007թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝

դիմող՝ քաղ. Ա. Սաքունցի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՆՆ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ Ա. Խաչատրյանի,

«Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 46 հոդվածի համաձայն՝ սահմանադրական դատարանում ՆՆ դատախազության ներկայացուցիչ Ն. Ենգոյանի, համաձայն ՆՆ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի եւ 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Արթուր Սաքունցի, Խաչիկ Շահբազյանի, Կարինե Այվազյանի, Սեւակ Դերձյանի, Վոլոդյա Աբազյանի եւ Էդգար Խաչատրյանի դիմումի հիման վրա՝ «Տեղական հանրաքվեի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 5 հոդվածի 2-րդ կետի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Արթուր Սաքունցի, Խաչիկ Շահբազյանի, Կարինե Այվազյանի, Սեւակ Դերձյանի, Վոլոդյա Աբազյանի եւ Էդգար Խաչատրյանի դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի ներկայացուցիչների գրավոր բացատրությունները, հետագոյնով օրենքի վիճարկվող նորմերը, ինչպէս նաեւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Վիճարկելով «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետի սահմանադրականությունը, դիմողները սահմանադրական դատարան են ներկայացրել ՀՀ Լոռու մարզի առաջին արյանի դատարանի 2007թ. ապրիլի 13-ի վճիռը, համաձայն որի՝ «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի կիրառմամբ դատարանը մերժել է անվավեր ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու հարցով քեղական հանրաքվեի նախաձեռնող խմբի գրանցումը մերժելու մասին թիվ 30 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2007թ. ապրիլի 3-ի թիվ 8-Ա որոշումը, ինչպէս նաեւ քեղական հանրաքվեի նախաձեռնող խումբը գրանցելու մասին այդ հանձնաժողովի կողմից որոշում ընդունելուն պարտադրելու պահանջի մասին դիմումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 155 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ Լոռու մարզի առաջին արյանի դատարանի վերոհիշյալ վճիռը, որպէս վերջնական դատական ակտ, ուժի մեջ է մտել հրապարակման պահից:

2. Դիմողները միաժամանակ վիճարկում են «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի՝ ոչ միայն դատական ակտով կիրառված 5 հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, այլեւ՝ այդ հոդվածի 2-րդ կետի դրույթների սահմանադրականությունը:

Նկատելով որ ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, ինչպէս նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ - մասի պահանջները, սույն գործով ենթակա է գնահատման ինչպէս դատական վերջնական ակտով կիրառված օրենքի դրույթի, այնպէս էլ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված նույն օրենքի այլ դրույթների սահմանադրականությունը:

3. «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002 թվականի փետրվարի 6-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2002 թվականի մարտի 7-ին եւ ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 1-ին:

«Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածը սահմանում է.

«Հոդված 5. Տեղական հանրաքվեի դրվող հարցերը

1. Տեղական հանրաքվեի կարող են դրվել Սահմանադրությամբ նախատեսված եւ օրենքով քեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը վերապահված, ինչպէս նաեւ օրենքով նախատեսված հարցերը:

2. Տեղական հանրաքվեի չեն կարող դրվել՝

ա/ Սահմանադրությամբ կամ օրենքով փեղական ինքնակառավարման մարմինների բացառիկ իրավասությանն ուղղակիորեն վերապահված հարցերը.

բ/ մարդու և քաղաքացու իրավունքներին, ազատություններին ու պարտականություններին, դրանց իրականացումն ապահովող սահմանադրական երաշխիքների վերացմանը կամ սահմանափակմանը վերաբերող հարցերը.

գ/ պետական մարմինների կողմից փեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորություններին առնչվող հարցերը.

դ/ համայնքի ղեկավարի աշխատակազմի ձեւավորմանը վերաբերող հարցերը.

ե/ համայնքի բյուջեի ընդունման կամ փոփոխման, ինչպես նաև համայնքի ֆինանսական պարավորությունների կատարման կամ փոփոխման մասին հարցերը.

զ/ համայնքի սեփականության օտարման մասին հարցերը.

է/ բնակչության առողջությունն ու անվտանգությունն ապահովող արտակարգ և շտապ միջոցառումներ ձեռնարկելու մասին հարցերը.

ը/ պատմության, մշակույթի, բնության հուշարձաններին և արգելանոցներին վնաս հասցնող հարցերը:

3. Տեղական հանրաքվեի դրվող հարցը պետք է ձեւակերպվի այնպես, որ հնարավոր լինի դրան փալ միանշանակ պատասխան»:

4. Դիմող կողմը գտնում է, որ «Տեղական հանրաքվեի մասին» ՏՃ օրենքի վերոհիշյալ հոդվածի 2-րդ կետի դրույթները չեն համապատասխանում ՏՃ Սահմանադրության 2 և 107 հոդվածներին:

Դիմողներն իրենց դիրքորոշումը պարճառաբանում են հետևյալ փաստարկներով.

ա/ ՏՃ Սահմանադրության 2 հոդվածը ՏՃ յուրաքանչյուր քաղաքացու հնարավորություն է տալիս երկրի պետական և (կամ) փեղական ինքնակառավարմանը մասնակցել ընտրությունների և հանրաքվեների միջոցով, մինչդեռ «Տեղական հանրաքվեի մասին» ՏՃ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետը սահմանափակում է փեղական հանրաքվե անցկացնելու՝ համայնքի բնակիչների հնարավորությունը, հանրաքվեի միջոցով իշխանություն իրականացնելու վերաբերյալ ՏՃ Սահմանադրությամբ սահմանափակումներ նախատեսված չեն և հանրաքվեի իրավունքը սահմանափակող օրենք ընդունելու հնարավորություն օրենսդիր իշխանությանն ընձեռված չէ,

բ/ ՏՃ Սահմանադրության 107 հոդվածի չորրորդ մասի համաձայն՝ համայնքի անդամները կարող են ուղղակիորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հարցերը փեղական հանրաքվեով լուծելու միջոցով:... «Տեղական հանրաքվեի մասին» ՏՃ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետում նշված փեղական հանրաքվեի համար նախատեսված բոլոր սահմանափակումները (բացառությամբ վերոհիշյալ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետի «բ» և «ը» ենթակետերի) վերաբերում են համայնքի գործերի կառավարմանը մասնակցելուն, հետևաբար՝ օրենքի այդ նորմը սահմանափակում է համայնքի գործերի կառավարմանը մասնակցելու՝ համայնքի բնակիչների իրավունքը, իսկ նույն օրենքի 5 հոդվածի 2-րդ կետի «բ» և «ը» ենթակետերի դրույթները հա-

կասահմանադրական են, քանի որ վերոհիշյալ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փեղական հանրաքվեի կարող են դրվել Սահմանադրությամբ նախատեսված եւ օրենքով փեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը վերապահված եւ օրենքով նախատեսված հարցերը, մինչդեռ օրենքի այդ հոդվածի 2-րդ կետի «բ» եւ «ը» ենթակետերով նախատեսված են համայնքի ղեկավարին կամ ավագանուն չպատկանող լիազորություններ:

Դիմող կողմը գտնում է նաեւ, որ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 4 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փեղական ինքնակառավարման մարմինները, օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում, օգտվում են սեփական նախաձեռնությունների իրականացման լիակատար ազատությունից, որոնք այլ մարմինների վերապահված չեն, այդ լիազորությունները պետք է լինեն «լրիվ եւ բացառիկ» եւ կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված շրջանակներում, որը միանշանակ հիմք է փալիս պնդելու, որ «Տեղական հանրաքվեի մասին» ՏՃ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետում նշված լիազորությունները բացառիկ են եւ ենթադրում են այլ մարմինների կողմից դրանք կրկնելու անթույլատրելիությունը՝ բացառությամբ հանրաքվեի, քանի որ այն հանդիսանում է անմիջական ժողովրդավարության ինստիտուտներից մեկը՝ ուղղված փեղական կամ համագային նշանակության հարցերի լուծմանը: Ըստ դիմող կողմի՝ լիազորությունների բացառիկությունը վերաբերում է դրանց՝ այլ պետական մարմինների հետ հարաբերություններում անկրկնելիությանը, մինչդեռ համայնքային նշանակության հարցերի լուծման դեպքում՝ ՏՃ Սահմանադրությամբ նախատեսված հնարավորությունը (ՏՃ Սահմանադրության 107 հոդվածի 4-րդ մաս) միանշանակ փարսաժվում է նաեւ փեղական հանրաքվեի ինստիտուտի վրա:

5. Պարասխանող կողմը գտնում է, որ դիմող կողմի բերած հիմնավորումներն ու եզրահանգումը բավարար հիմք չեն «Տեղական հանրաքվեի մասին» ՏՃ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետը ՏՃ Սահմանադրության 2 եւ 107 հոդվածներին հակասող ճանաչելու համար: Մասնավորապես.

ա/ միջազգային փորձը միանշանակ չէ ժողովրդական նախաձեռնության իրավական կարգավորման հարցում եւ այդ նախաձեռնության իրագործման նպատակով առավել հաճախ նախատեսվում են սահմանափակումներ՝ կապված նախաձեռնության իրավական կարգավորման առարկայի, ընտրողների նվազագույն թվի, ինչպես նաեւ այդպիսի նախաձեռնության իրավունքի սուբյեկտների հետ: Ներքաբար, փեղական հանրաքվեների առարկային վերաբերող սահմանափակումները չեն կարող դիֆարկվել որպես ժողովրդի կողմից իշխանության իրականացման իրավունքի սահմանափակում, հանրաքվեներին վերաբերող հարցերի բնույթի սահմանափակումները չեն կարող համարվել ժողովրդի կողմից իշխանության իրականացման իրավունքի խախտում, քանի որ ժողովուրդն իր իշխանությունը կարող է իրականացնել որեւէ ձևով, այն է՝ ընտրությունների կամ պետական եւ փեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով, եւ ցանկացած հարց հանրաքվեի դնելը կհանգեցնի պետական իշխանության թուլացման,

բ/ «Տեղական հանրաքվեի մասին» ՆՏ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետում թվարկված սահմանափակումները, ըստ էության, որել առնչություն չունեն համայնքային նշանակության հարցերի լուծման հետ, մինչդեռ ՆՏ Սահմանադրության 107 հոդվածի 4-րդ - մասում խոսքը վերաբերում է համայնքային նշանակության հարցերը փեղական հանրաքվեով լուծելուն:

Պատասխանող կողմը նաև կարծիք է հայտնում, որ համայնքի ղեկավարին անվարահոյություն հայտնելու իրավունքի հիմնախնդրի հետ ուղղակի առնչություն ունի պատգամավորի հետկանչի ինստիտուտը, որը վերացվեց եվրոպական երկրների առաջավոր փորձի ուսումնասիրման արդյունքում, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ ունենալով առաջնային մանդատ, համապատասխան պաշտոնատար անձը պետք է ունենա իրական եւ անկաշկանդ հնարավորություն՝ իրականացնելու Սահմանադրությամբ եւ օրենքներով իրեն վերապահված լիազորություններն ամբողջ ծավալով:

6. ՆՏ Սահմանադրության 1, 2, 3, 5, 11.2., 30, 43, 104, 107 եւ այլ հոդվածներում ամրագրված են ժողովրդաիշխանության եւ դրա իրականացման երաշխավորման, անձանց՝ որպես այդ իշխանության անմիջական կրողների, իրավունքների եւ ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում՝ նաև փեղական (համայնքային) նշանակության հարցեր լուծելու հետ կապված հարաբերությունների կարգավորման բնագավառում:

Որպես ժողովրդաիշխանության իրականացման ձեւ՝ փեղական հանրաքվեների կազմակերպման ու անցկացման սկզբունքային խնդիրները նախատեսված են ՆՏ Սահմանադրությամբ: ՆՏ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ ժողովրդաիշխանությունն իրականացվում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև պետական եւ փեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Տեղական հանրաքվեն, ՆՏ Սահմանադրության 107 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ օրենքով սահմանված կարգով համայնքի գործերի կառավարմանը համայնքի անդամների ուղղակի մասնակցության ձեւն է, որը կոչված է լուծելու համայնքային նշանակության հարցերը:

ՆՏ Սահմանադրության 83.5. հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ բացառապես Նախարանի Նանրապետության օրենքներով է սահմանվում հանրաքվեների կարգը:

ՆՏ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի վերլուծությունը վկայում է, որ փեղական հանրաքվեների եւ դրանց կազմակերպման ու անցկացման հետ կապված հարաբերությունների կարգավորումը վերապահված է օրենքին: Մասնավորապես, հարաբերությունների կարգավորմանն են կոչված «Տեղական հանրաքվեի մասին» եւ «Տեղական ինքնակառավարման մասին» ՆՏ օրենքները:

7. Ելնելով դիմող կողմի հարցադրումներից՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում հիմք ընդունելով ՆՏ Սահմանադրության 104 հոդվածի 2-րդ մասի,

105 հողվածի 1-ին եւ 2-րդ մասերի, 107 հողվածի 4-րդ մասի բովանդակությունը, անդրադառնալ նախ՝ «համայնքային նշանակության հարցեր» արտահայտության իրավավերլուծական խնդրին՝ այնքանով, որքանով այն առնչվում է տեղական հանրաքվեի ենթակա հարցերի շրջանակին:

Սահմանադրության վերոհիշյալ հողվածների եւ «Տեղական հանրաքվեի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՏՏ օրենքների համապատասխան նորմերից հետեւում է, որ տեղական հանրաքվեի կարող են դրվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՏՏ օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը ենթակա հարցեր՝ այն բացառություններով, որոնք նախատեսված են «Տեղական հանրաքվեի մասին» ՏՏ օրենքի 5 հոդվածի վիճարկվող նորմերում: Ընդ որում, եթե օրենքի այդ հոդվածի 2-րդ կետի «գ», «է» եւ «ը» ենթակետերով նախատեսված հարցերը դուրս են տեղական ինքնակառավարման մարմինների լիարժեք իրավասության շրջանակներից, ապա «բ» ենթակետից բխող՝ մարդու իրավունքների եւ ազատությունների ապահովման երաշխիքների հնարավոր փոփոխությունը՝ համաժողովրդական քննարկման (հանրաքվեի) խնդիր է: Ուստի դրանով է նաեւ պայմանավորված տեղական հանրաքվեի դրվող հարցերի՝ օրենքով նախատեսված թույլատրելի շրջանակը:

Տեղական հանրաքվեի չեն կարող դրվել նաեւ այնպիսի հարցեր, որոնց լուծումը Սահմանադրությամբ եւ օրենքով վերապահված է տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց կողմից ձեւավորվող մասնագիտացված մարմինների **բացառիկ** իրավասությանը (ՏՏ Սահմանադրության 107 հոդվածի 2-րդ մաս), ինչն արտացոլված է նաեւ «Տեղական հանրաքվեի մասին» ՏՏ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետի «ա», «դ», «ե» եւ «զ» ենթակետերում: Այլ կերպ, այդպիսի հարցերի լուծման իրավունքը համայնքի բնակիչների կողմից՝ ՏՏ Սահմանադրության եւ օրենքի հիման վրա պարզվիրակված է ընտրությամբ ձեւավորվող տեղական ինքնակառավարման մարմիններին, իսկ վերջիններիս պարզվիրակված լիազորությունների կրկնօրինակումը (փոփոխությունը) տեղական հանրաքվե նախաձեռնելու միջոցով՝ իրավազատի չէ եւ չի բխում Սահմանադրության վերոհիշյալ նորմերից:

8. Անդրադառնալով տեղական հանրաքվեներում քննարկման ենթակա հարցերի շրջանակին եւ դրանց բովանդակությանը, ելնելով «Տեղական հանրաքվեի մասին» ՏՏ օրենքի ընդհանուր նորմերից, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում կարեւորել օրենքի 1-ին հոդվածի բնորոշումն այն մասին, որ «տեղական հանրաքվեն փվյալ համայնքի բնակիչների համայնքային նշանակության **կարեւոր** հարցերով քվեարկությունն է», այսինքն՝ համայնքներում քվեարկության ենթակա տեղական նշանակության հարցերի առարկայական շրջանակը սահմանափակ է: Մյուս կողմից, օրենքի վերոհիշյալ նորմը զարգացվել է 5 հոդվածի 1-ին կետում, համաձայն որի՝ տեղական հանրաքվեի կարող են դրվել հարցեր, որոնք նախատեսված են.

ա/ Սահմանադրությամբ,

բ/ օրենքով,

գ/ վերապահված են Կրեդիտային ինքնակառավարման մարմինների իրավասությանը:

ՆՏ Սահմանադրության 107 հոդվածի 4-րդ մասում նախատեսված է համայնքային (Կրեդիտային) նշանակության հարցերը Կրեդիտային հանրաքվեով եւ օրենքով սահմանված կարգով լուծելու իրավունք, իսկ 110 հոդվածում նախատեսված է Կրեդիտային հանրաքվեի անցկացումը համայնքները միմյանց միացնելու կամ առանձնացնելու նպատակներով: Տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքի ղեկավար, ավագանի) իրավասությանը ենթակա հարցերը նախատեսված են «Տեղական ինքնակառավարման մասին» ՆՏ օրենքով, իսկ «Տեղական հանրաքվեի մասին» ՆՏ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետում թվարկված բացառություններով փաստորեն սահմանափակվում է Կրեդիտային հանրաքվեի դրվող հարցերի շրջանակը:

Այսպիսով, համայնքային (Կրեդիտային) նշանակության հարցերի, հավասարապես՝ նաեւ Կրեդիտային հանրաքվեի դրվող հարցերի, առարկայական շրջանակը սահմանադրորեն չկանխորոշելու, եւ Կրեդիտային հանրաքվեների, դրանց կազմակերպման, անցկացման եւ արդյունքների ամփոփման օրենսդրական պարտադիր կանոնակարգումը որպէս սահմանադրական սկզբունք հաստատագրելու պայմաններում (ՆՏ Սահմանադրության 83.5. հոդվածի 7-րդ կետ), Կրեդիտային հանրաքվեի դրվող հարցերի **սահմանափակումն** իրավաչափ է եւ բխում է ինչպէս ՆՏ Սահմանադրության վերոհիշյալ նորմերից, այնպէս էլ ՆՏ-ում սահմանադրական կարգի հաստատագրված այն սկզբունքից, համաձայն որի՝ հանրաքվեն, ազատ ընտրությունները եւ ընտրովի մարմինների միջոցով Կրեդիտային ինքնակառավարումը ժողովրդաիշխանության իրականացման ինքնուրույն ձեւեր են (ՆՏ Սահմանադրության 2 հոդված):

Սահմանադրական դապարանը գրնում է, որ լինելով ժողովրդաիշխանության իրականացման (Կրեդիտային բնակչության կամքի արտահայտման) սահմանադրորեն որոշված ինքնուրույն ձեւ, հանրաքվեն չի կարող փոխարինել այդպիսի իշխանության այլ ձեւերին այնպէս, ինչպէս վերջիններս՝ հանրաքվեին: Տեղական հանրաքվեն եւ Կրեդիտային ինքնակառավարման մարմինների ընտրությունները համայնքի բնակիչների ազատ կամքի արտահայտման (ինքնակառավարման իրավունքի իրականացման) բարձրագույն ձեւեր են եւ անփոխարինելի՝ լուծվող խնդիրների շրջանակներով, իրավական կարգավորմամբ: Եթէ առաջինի դեպքում քվեարկության են դրվում համայնքային նշանակության կարեւոր հարցեր, ապա երկրորդի դեպքում կազմավորվում են Կրեդիտային ինքնակառավարման մարմիններ (համայնքի ղեկավար եւ ավագանի), որոնց միջոցով (համայնքի անդամների անուղղակի մասնակցությամբ), օրենքով սահմանված կարգով ու շրջանակներում («Տեղական ինքնակառավարման մասին» ՆՏ օրենք) նույնպէս լուծվում են համայնքային (Կրեդիտային) նշանակության հարցեր: Միաժամանակ, ՆՏ Սահմանադրության 107 հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերի բովանդակությունից միանշանակ հետեւում է, որ Կրեդիտային հանրաքվեն համայնքի անդամների կողմից համայնքի գործերի կառավարման անմիջական մասնակցելու ձեւ է:

Սահմանադրական դապարանը միաժամանակ արձանագրում է, որ ՆՏ Սահմանադրությունը նախատեսում է ինչպէս պարտադիր իրավական հետեւանքներ առաջաց-

նող, այնպես էլ նման հեղափոխություններ չառաջացնող հանրաքվեի ինստիտուտ (մասնավորապես, ՏՏ Սահմանադրության 110 հոդվածի 1-ին մաս): Օրենսդրական ճանապարհով համայնքային նշանակության հարցերի լուծման ժամանակ պարտադիր հեղափոխություններ չառաջացնող հանրաքվեների ինստիտուտի ավելի լայն արմատավորումը մեծապես կարող էր նպաստել Կապիտալի ինքնակառավարման մակարդակում ժողովրդավարական գործընթացների զարգացմանը, որը կբխեր նաև ԵՖՏ Խորհրդարանական վեհաժողովի թիվ 1121 (1997) բանաձեռի դրույթներից:

9. Անդրադառնալով Կապիտալի ինքնակառավարման ու անցկացման հետ կապված հարցերի իրավական կարգավորման եվրոպական պրակտիկային՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում կարեւորել Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի թիվ 1121 (1997) բանաձեռի (ընդունված 1997թ. ապրիլի 22-ին) մի շարք դրույթներ, որոնք նվիրված են քաղաքական կյանքին քաղաքացիների ուղղակի մասնակցության ընդլայնման անհրաժեշտությանը, հանրաքվեի դիտարկում է որպես օժանդակ միջոց, ընդ որում, ընդգծվում է, որ քաղաքացիների եւ նրանց խմբերի առավել հակասական եւ չհամընկնող պահանջների՝ ընդհանուր շահերով թելադրված ներդաշնակեցումը կարող է դառնալ միայն խորհրդարանական գործունեության արդյունք (այսինքն՝ օրենսդրական կարգավորման առարկա) (6-րդ կետ):

Խորհրդարանական վեհաժողովը միաժամանակ կոչ է արել անդամ պետություններին ցանկացած հարց դիտարկել որպես հանրաքվեի առարկա, բացառությամբ այն հարցերի, որոնք կապվածի փակ են դնում համընդհանուր եւ անօրարելի արժեքները, ինչպիսիք են մարդու իրավունքներն ու ներկայացուցչական հիմնարար սկզբունքները:

Վեհաժողովը նաև նախագուշացրել է կոչ է արել՝ սահմանել ներպետական նորմեր եւ ղեկավար սկզբունքներ հանրաքվեների անբարեխիղճ օգտագործումը կանխելու նպատակով (բանաձեռի 15-րդ կետի 8-րդ ենթակետ):

«Տեղական մակարդակում հանրաքվեների եւ հասարակական նախաձեռնությունների մասին» R(96)2 (1996) հանձնարարականում կարեւորելով Կապիտալի ինքնակառավարման հանրաքվեների դերն ու նշանակությունը, ԵՖՏ Նախարարների կոմիտեն դրանք համարում է որպես Կապիտալի ներկայացուցչական մարմնի որոշումները կամ ծրագրերը Կապիտալի բնակչության բննարկմանը ներկայացնելու միջոց:

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների իրավակիրառական պրակտիկայի ընդհանուր վերլուծությունը վկայում է, որ չնայած Կապիտալի նշանակության հանրաքվեներում դրվող հարցերը փարաբնույթ են, այնուամենայնիվ, նախապեսված են սահմանափակումներ՝ պայմանավորված հարցերի բնույթով, քվեարկության դրվող իրավական ակտերի փոսակներով եւ այլն:

10. Սույն գործի շրջանակներում «Տեղական հանրաքվեի մասին» ՏՏ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետի նորմերի սահմանադրականության վիճարկման հիմքը ոչ միայն հանրաքվեի դրվող հարցերի սահմանափակ բնույթն է, այլև համայնքի ընտրվող գործա-

դիր մարմնի՝ համայնքի ղեկավարի լիազորությունները փեղական հանրաքվեի միջոցով վաղաժամկետ դադարեցնելու իրավական անհնարինությունը:

Նամայնքի ղեկավարը սահմանադրաիրավական մարմին է, որի ձևավորման եւ գործունեության սկզբունքները որոշված են սահմանադրորեն, համաձայն որի՝ համայնքի ղեկավարն ընտրվում է օրենքով սահմանված կարգով՝ չորս փարի ժամկետով, եւ համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման կարգը սահմանվում է օրենքով (ՏՏ Սահմանադրության 107 հոդված): Ներկայումս, համայնքի ղեկավարի գործունեության վաղաժամկետ դադարեցումը (սահմանադրական դափարանի եզրակացության հիման վրա պաշտոնանկ անելը) ոչ թե համայնքային նշանակության գործերի կառավարման խնդիր է, ինչպես կարծում է դիմող կողմը, այլ՝ հանրային-իրավական (սահմանադրաիրավական): «Տեղական ինքնակառավարման մասին» ՏՏ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի ա) ենթակետը վերաբերում է ոչ միայն օրենքով, այլեւ Սահմանադրությամբ փեղական ինքնակառավարման մարմինների բացառիկ իրավասությանը վերապահված հարցերին: Նամայնքային նշանակության գործերի կառավարումն ուղղված է բացառապես համայնքային նշանակության հարցերի լուծմանը՝ փեղական ինքնակառավարման մարմինների այն լիազորությունների շրջանակներում, որպիսիք նախատեսված են «Տեղական ինքնակառավարման մասին» ՏՏ օրենքով:

Սահմանադրական դափարանը նաեւ գրնում է, որ համայնքի բնակչության անմիջական նախաձեռնությամբ (հանրաքվեով) համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման (հեփկանչման) ինսփիփոփի բացակայությամբ ամենեւին չի սահմանափակվում մարդու եւ քաղաքացու (համայնքի անդամների)՝ համայնքի գործերի կառավարմանը մասնակցելու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքը: Բացի դրանից, անմիջական ժողովրդավարության դրսետրման ձեերից բացի, գործող օրենսդրությամբ նախատեսված է համայնքի ղեկավարի գործունեության երաշխավորված վերահսկման (համայնքի գործերի կառավարմանը բնակչության մասնակցության) այլ միջոցներ, մասնավորապես՝ համայնքի ներկայացուցչական մարմնի՝ ավագանու միջոցով («Տեղական ինքնակառավարման մասին» ՏՏ օրենքի 11, 16, 17, 19, 20 եւ այլ հոդվածներ), ընդհուպ նաեւ ավագանու միջոցով համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու առաջարկության նախաձեռնումը՝ ՏՏ կառավարման համապարասխան մարմնի (մարզպետի, Երեւանի քաղաքապետի) առջեւ:

Ուսփի փեղական հանրաքվեն օրենքով թույլափրելի քննարկման հարցերի շրջանակով, եւ որպես համայնքային նշանակության հարցերի լուծման միջոց, փեղական ինքնակառավարման գործունեության վերահսկման ապահովման նույնքան կարետր երաշխիք է, որքան պետական եւ հասարակական վերահսկողության՝ օրենքով նախատեսված մյուս ձեերը, որոնք ամբողջությամբ կոչված են համայնքներում ապահովելու մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների եւ ազափությունների անխափափելիությունը: Բացի դրանից, ՏՏ սահմանադրական փոփոխություններով պայմանավորված (ՏՏ Սահմ. 108.1. հոդված)՝ օրենքով հափակեցվել են՝ փեղական ինքնակառավարման մարմինների նկափմամբ իրավական (վարչական) հսկողություն իրականացնելու, ինչպես նաեւ այդ մարմինների գործողությունները (անգործությունը) դափական կարգով բողո-

քարկելու կարգն ու ձևերը («Տեղական ինքնակառավարման մասին» ՆՏ օրենքի 7.1 գլուխ), իսկ ՆՏ Սահմանադրության 100 հոդվածի 8-րդ կետի, 101 հոդվածի 4-րդ կետի շրջանակներում՝ նաև սահմանադրական վերահսկողության իրականացման երաշխիքները: Ոստի իրավական կարգավորման հիմնական խնդիրն է ելնել համայնքի արդյունավետ կառավարման նպատակով պետական և հասարակական վերահսկողության բոլոր ձևերի ու միջոցների ներդաշնակ և ամբողջական գործադրման անհրաժեշտությունից, որը համահունչ է ինչպես ՆՏ Սահմանադրության 1, 2, 3 և 5 հոդվածներում ամրագրված սահմանադրական կարգի սկզբունքներին և Նայասպանի Նանրապետությունում ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության հետագա զարգացման նպատակներին, այնպես էլ Եվրոպայի խորհրդի շրջանակներում հաստատված իրավակիրառական պրակտիկային:

Ելնելով գործի քննության արդյունքներից, ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 և 68 հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Տեղական հանրաքվեի մասին» ՆՏ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետի դրույթները համապատասխանում են Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

18 դեկտեմբերի 2007 թվականի
ՄԴՈ-721

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻ ՌՈՒԲԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 40.1. ՆՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ՝ «ԴԻՄՈՒՄԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԴԻՄՈՂԻ ԿՈՂՄԻՅ» ԴՐՈՒՅԹԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

21 դեկտեմբերի 2007թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ.-Նարոթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՆՆ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ Դ.Մելքոնյանի,

համաձայն ՆՆ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի եւ 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Ռուբեն Թորոսյանի դիմումի հիման վրա՝ ՆՆ ընտրական օրենսգրքի 40.1. հոդվածի 3-րդ կետի՝ «Դիմումը պետք է լինի ստորագրված դիմողի կողմից» դրույթի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ռ.Թորոսյանի՝ սահմանադրական դատարանում 03.12.2007թ. մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմողի եւ պատասխանող կողմի ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հեղափոխելով վիճարկվող նորմը, ինչպես նաեւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Վիճարկելով ՏՏ ընտրական օրենսգրքի 40.1. հոդվածի 3-րդ կետի՝ «Դիմումը պետք է լինի սպորագրված դիմողի կողմից» դրույթի սահմանադրականությունը, դիմողը սահմանադրական դատարան է ներկայացրել Երևանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ապյանի դատարանի 2007թ. նոյեմբերի 26-ի վճիռը, որով մերժվել է ՏՏ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անգործության վիճարկման վերաբերյալ քաղ. Ռ. Թորոսյանի դիմումը, համաձայն որի՝ ՏՏ կենտրոնական ընտրական հանձնաժողովը, խախտելով ՏՏ ընտրական օրենսգրքի 40 հոդվածի 7-րդ կետով սահմանված ժամկետը, չի արձագանքել էլեկտրոնային փոստով հանձնաժողովին հասցեագրած դիմողի առաջարկությանը:

ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 155 հոդվածի համաձայն՝ Երևանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ապյանի դատարանի վերոհիշյալ վճիռը, որպես վերջնական դատական ակտ, ուժի մեջ է մտել հրապարակման պահից:

2. ՏՏ ընտրական օրենսգիրքը ՏՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1999 թվականի փետրվարի 5-ին, Նայասպանի Նանրապետության Նախագահի կողմից սպորագրվել՝ 1999 թվականի փետրվարի 17-ին եւ ուժի մեջ է մտել նույն թվականի փետրվարի 28-ին:

ՏՏ ընտրական օրենսգիրքը մի շարք օրենքներով փոփոխվել է:

ՏՏ ընտրական օրենսգրքի 40.1. հոդվածի՝ սույն գործով վիճարկվող դրույթը պարունակող նորմը (3-րդ կետի առաջին պարբերությունը) ներկայիս խմբագրությամբ սահմանում է. «Դիմումը պետք է լինի սպորագրված դիմողի կողմից, պարունակի նրա անունը, ազգանունը, բնակության հասցեն, փրման ամսաթիվը, ամիսը եւ փարթիթիվը: Դիմումատու պետք է հստակ սահմանի իր պահանջը, բերի հիմնավորումներ, իսկ հնարավոր ապացույցները կցի դիմումին: Դիմումատուի վերաբերյալ փյվյալներ չպարունակող կամ կեղծ փյվյալներ պարունակող դիմումները չեն քննարկվում»:

3. Դիմող կողմը գտնում է, որ ՏՏ ընտրական օրենսգրքի վերոհիշյալ հոդվածի 3-րդ կետի՝ «Դիմումը պետք է լինի սպորագրված դիմողի կողմից» դրույթը չի համապատասխանում ՏՏ Սահմանադրության 27.1. հոդվածին, քանի որ անձը գրկվում է պետական մարմնին դիմելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքից:

Դիմողի կարծիքով՝ ՏՏ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կանոնակարգում (գործավարության կարգում) «Էլեկտրոնային փաստաթղթի եւ էլեկտրոնային թվային սպորագրության մասին» ՏՏ օրենքից բխող նորմերի բացակայությունը հնարավորություն է ընձեռում ՏՏ կենտրոնական ընտրական հանձնաժողովին չքննարկել ընտրախախտումների վերաբերյալ էլեկտրոնային փոստով սրացված դիմումները, ինչպես նաեւ խոչընդոտում է դիմողին պահպանել ՏՏ ընտրական օրենսգրքի 40 հոդվածի 5-րդ կետով սահմանված երկօրյա ժամկետը:

Դիմողը գտնում է նաև, որ «հիմք ընդունելով ՏՏ քաղ.օր. 9-րդ հոդվածի պահանջները, ղեկավարվել ԸՕ 40-րդ հոդվածի 7 եւ 8-րդ կետերի պահանջներով եւ սույն դիմումը քննել ընկերությունների ժամանակահատվածի համար սահմանված ժամկետում»:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ ՏՏ Սահմանադրության 27.1. հոդվածում ամրագրված անձի իրավունքը բացարձակ չէ, քանի որ, ինչպես ցանկացած իրավունք, այդ թվում իրավասու մարմիններին եւ պաշտոնապար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիպ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքը ենթադրում է իրականացման կանոնակարգեր:

Դիմումատուի կողմից դիմումի ստորագրումը դրա արժանահավաստությունն ապահովող կարեւորագույն պայման է, նպատակ ունի անձին նույնացնելու, պաշտպանելու փաստաթուղթը կեղծիքներից եւ աղավաղումներից: Ըստ պատասխանող կողմի՝ էլեկտրոնային ստորագրություններով փաստաթղթեր ուղարկելու կամ դրանք ընդունելու հնարավորության բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ դիմումն ստորագրված լինելու՝ ՏՏ ընկերական օրենսգրքով ներկայացվող պահանջը ՏՏ Սահմանադրությանը չհամապատասխանող ճանաչելու համար, քանի որ յուրաքանչյուր դեպքում անձը պահպանում է ձեռագիր ստորագրությամբ համապատասխան փաստաթղթերն իրավասու մարմին ներկայացնելու հնարավորությունը:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անհարակալան դիմումների հիման վրա անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության գնահատման կարգը եւ առանձնահատկությունները սահմանված են «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքով: Իր հերթին, ՏՏ Սահմանադրության 94 հոդվածը սահմանում է, որ «Սահմանադրական դատարանի լիազորություններն ու կազմավորման կարգը սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով»: Ուստի անընդունելի է դիմող կողմի առաջարկությունը գործի քննության ժամկետների վերաբերյալ:

6. ՏՏ Սահմանադրության 27.1. հոդվածում ամրագրված՝ անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ փեդական ինքնակառավարման մարմիններին (հանրային իշխանության մարմիններին) ու պաշտոնապար անձանց դիմումներ, առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիպ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու անձի իրավունքը ժողովրդավարության դրսեւորումներից մեկն է եւ կարեւոր նախապայման՝ անձի հիմնական իրավունքների եւ ազատությունների արդյունավետ պաշտպանության, ինչպես նաև ՏՏ Սահմանադրության 1, 2, 3 եւ մի շարք այլ հոդվածներում ամրագրված սահմանադրական կարգի հիմնական սկզբունքների անխախտելիությունը երաշխավորելու համար:

ՏՏ Սահմանադրության 83.5. հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձանց իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները եւ կարգը սահմանվում են օրենքներով: Սահմանադրական այդ նորմի բովանդակությունից հետեւում է, որ անձի

ցանկացած, այդ թվում հանրային իշխանության մարմիններին դիմելու նրա իրավունքի իրացման խնդիրը ենթակա է օրենքով կարգավորման:

ՆՆ Սահմանադրության 27.1. հոդվածի դրույթների իրացումը՝ կապված անձանց եւ հանրային իշխանության մարմինների, պաշտոնապար անձանց միջև ծագած հարաբերությունների հետ, կարգավորվում են մի շարք օրենքներով եւ ենթաօրենսդրական ակտերով, որոնց վերլուծությունը վկայում է, որ.

ա/ անձնական, պեղական եւ հասարակական կյանքի բնագավառներին վերաբերող փեղեկափոխություն պարունակող (իսկ անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան լուծում պահանջող) անձանց դիմումները պեղք է հասցեագրվեն հանրային իշխանության իրավասու մարմիններին (պաշտոնապար անձանց),

բ/ անձանց դիմումները պեղք է համապատասխանեն իրավական ակտով նախատեսված ձեակական պահանջներին (գրավոր ձեակ, հասցեագրված մարմնի անվանում, փեղեկություններ դիմողի վերաբեղյալ, անձնական (էլեկտրոնային) ստորագրություն, դիմումի բովանդակության շարադրանք եւ այլն),

գ/ հանրային իշխանության իրավասու մարմինը (պաշտոնապար անձը) դիմումում բարձրացված հարցի առնչությամբ պեղք է ձեռնարկի այն գործողությունները (սահմանված ժամկեփում ու կարգով), որպիսիք նախատեսված են նորմափիվ իրավական համապատասխան ակտում:

Այլ կերպ, դիմումներին ներկայացված ձեակական պահանջները նպատակ ունեն ոչ թե անձանց ձանրաբեռնել պարփականություններով, այլ նույնականացնել դիմումատարուն, սպահովել դիմումների բովանդակության իսկությունը, հարցադրումների առարկայացումը, որպիսիք դիմումներում առաջադրված խնդիրների արագ, օբյեկտիվ եւ արդյունավեղ լուծման երաշխիք են:

Այսպիսով, անձանց եւ հանրային իշխանության մարմինների միջև ՆՆ Սահմանադրության 27.1. հոդվածի դրույթներից բխող հարաբերությունների օրենսդրական կարգավորման հիմքում ՆՆ սահմանադրական դատարանը կարեւորում է սուբյեկտիվ իրավունքների եւ պարփականությունների փոխադարձության եւ դրանց ներդաշնակեցման միասնական իրավական սկզբունքի կիրառման առկայությունը՝ որպես սահմանադրական վերոհիշյալ նորմերի արդյունավեղ իրացման նախապայման: ՆՆ սահմանադրական դատարանը միաժամանակ գփնում է, որ հանրային իրավական (սահմանադրափրավական) հարաբերություններում այդ սկզբունքի արդյունավեղ գործադրման գրավականը ոչ միայն սուբյեկտիվ իրավունքների իրականացման պայմանների իրավական կարգավորումն է, այլեւ իրավունքի նորմերին համապատասխան սուբյեկտիվ վարքագիծ դրսեւորել:

7. Անդրադառնալով ՆՆ ընփրական օրենսգրքի 40.1. հոդվածի՝ սույն գործով վիճարկվող նորմի սահմանադրականության խնդրին, ելնելով նաեւ հասարակական համասեռ հարաբերությունների իրավական կարգավորման վերը փատարված միասնական սկզբունքի բովանդակությունից, սահմանադրական դատարանը գփնում է, որ ինչպես հանրային իշխանության մյուս մարմիններին, այնպես էլ ընփրական հանձնաժողովներին

եւ, մասնավորապես՝ ՏՏ կենտրոնական ընտրական հանձնաժողովին հասցեագրված՝ անձանց դիմումների նկատմամբ անհրաժեշտաբար պետք է ներկայացվեն ձեռական միասնական պահանջներ (այդ թվում՝ անձի ստորագրություն, նրան առնչվող անհրաժեշտ փողոցային տեղեկությունների վերաբերյալ)՝ ապահովելու համար ընտրական գործընթացներով պայմանավորված անձանց դիմումների արագ եւ արդյունավետ քննարկումը, որը նաեւ կարեւոր երաշխիք է այնուհետեւ արդար եւ արդյունավետ դատաքննության իրականացման համար:

Ներման ինսքիքուրի կիրառման հեք կապվաձ իրալահարաքերոթյունների օրենսդրական կարգավորման ուտունասիրոթյունը վկայում է, որ ներում հայցելու իրավունքի իրացման համար որել է նախապայման սահմանվաձ չէ, ներում կարող է հայցել յուրաքանչյուր դարապարքյալ, ներումը կարող է շնորհվել յուրաքանչյուր դարապարքյալի՝ անկախ կարարվաձ հանցագործոթյան բնոյթից, ձանրոթյունից ու այլ հանգամանքներից (մասնավորապես, պարձաչալից, պարձի կրաձ մասից): Ներում շնորհելու համար որել է պարքադիր չալանիշ նախարեսվաձ չէ, այն ամբողջոթյամբ թողնվաձ է ՏՏ Նախագահի հայցեղոթյանը. Նախագահի՝ ներում շնորհելու իրավունքը սահմանալակվաձ չէ ո՛չ դարապարքյալների շրջանակոլ, ո՛չ հանցագործոթյունների բնոյթոլ, ո՛չ պարձարեսակներոլ ու պարձաչալերոլ:

Ներման ինսքիքուրի օրենսդրական կարգավորումը վկայում է այն մասին, որ ներման խնդրանքի իրավունքի իրացման համար որել է սահմանալակում նախարեսվաձ չէ, հեքեսաքար, ՏՏ Սահմանադրոթյան 20 հոդվաձի 4-րդ մասի դրոյթին համահունչ, **ներում հայցելու իրավունքից կարող է օգրվել յուրաքանչյուր դարապարքյալ, եւ ՏՏ Նախագահը ներում կարող է շնորհել յուրաքանչյուր դարապարքյալի:**

5. Մարդասիրոթյան սկգբունքի դրսևտրման ձեւերից է նաեւ դարապարքյալին **պարձից ազարելու քրեաիրալական ինսքիքուր:** Այդ ինսքիքուրի էոթյունը կայանում է նրանում, որ հանցագործոթյան համար դարապարքվաձ անձը, **քրեական օրենքոլ նախարեսվաձ հիմքերոլ,** կարող է դարարանի կողմից փասարաքիորեն ազարվել պարձի հեքազա կրումից: Պարձից ազարելու համար նյոթական հիմք է հանդիսանում պարիձը կրելու աննպարակահարմարոթյունը կամ անհնարինոթյունը, հաշվի առնելոլ քրվյալ դարապարքյալի՝ հանրորեն վրանգալոր լինելու հանգամանքի վերացումը, դարապարքյալի առողջական վիձակի վարթարացման փասար կամ քրեական իրավունքի փոփոխոթյունը: Պարձից ազարելու ինսքիքուրի նշանակոթյունը կայանում է նրանում, որ թոյլ քարոլ անքեսել քրեական հարկադրանքի միջոցները, իթանում է դարապարքյալի վերադասքիարակումը, նպասարում է նրա ընքելացմանն իրավակարգի պահանջներին, սոցիալական վարքագձի կանոններին, ինչպես նաեւ բացառում

Է պարօժի կիրառումն այն դեպքերում, երբ պարօժի կիրառման նպարակներին հասնելը դառնում է ոչ իրական:

Այս ինսպիպուրի դրսետորման՝ ՄՄ քրեական օրենսդրոթյամբ նախարետված ձեւերն են՝ պարօժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազարելը (ՄՄ ՔՕ 76 հողված), պարօժի չկրած մասն ալվելի մեղմ պարժարետակով փոխարինելը (ՄՄ ՔՕ 77 հողված), հղի կանանց կամ մինչեւ երեք արետեկան երեխա ունեցող անձանց պարօժը կրելը հեարածգելը կամ պարօժից ազարելը (ՄՄ ՔՕ 78 հողված), պարօժից ազարելը ծանր հիվանդության հեարեանքով (ՄՄ ՔՕ 79 հողված), պարօժից ազարելն արարակարգ հանգամանքների հեարեանքով (ՄՄ ՔՕ 80 հողված), ինչպես նաեւ պարօժից ազարելը մեղարական դարավճռի վաղեմության ժամկետն անցնելու հեարեանքով (ՄՄ ՔՕ 81 հողված): Նշված ձեւերից յուրաքանչյուրի կիրառման դեպքում դարապարպյալը պետք է բավարարի քրեական օրենսդրոթյամբ սահմանված որոշակի պայմաններ ու հիմքեր, որով սահմանափակվում է այն անձանց շրջանակը, ում նկարմամբ դրանք կարող են կիրառվել: Այսպես. ՄՄ քրեական օրենսգրքի 76 հողվածի համաձայն՝ պայմանական վաղաժամկետ ազարումը հնարավոր է միայն այնպիսի պարժարետակների դեպքում, ինչպիսիք են ազարազրկումը եւ կարգապահական գումարակում պահելը: Պայմանական վաղաժամկետ ազարումը հնարավոր է, եթե դարապարպյալը փասարցի կրել է դարարանի կողմից սահմանված պարժի որոշակի մար: Ելնելով հանցագործության ծանրությունից՝ պայմանական վաղաժամկետ ազարման համար ՄՄ քրեական օրենսգիրքը նախարետել է արբեր ժամկետներ: Պարժից ազարելու այս ձեւը կիրառվում է, եթե դարարանը գրնում է, որ դարապարպյալն ուղղվելու համար նշանակված պարժի մնացած մարը կրելու կարիք չունի: Պարօժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազարում կիրառելիս դարարանը հաշվի է առնում նաեւ դարապարպվածի կողմից արժողին պարճառված վնարը հարթելու հանգամանքը:

ՄՄ ՔՕ 77, 80 հողվածներում նախարետված՝ պարժից ազարելու ձեւերը կիրառելի են միայն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար ազարազրկված դարապարպյալների նկարմամբ:

Պարժից պայմանական վաղաժամկետ ազարելու ինսպիպուրի առանձնահարկությունը կայանում է նրանում, որ, ի արբերություն պարժից ազարելու մնացած ձեւերի, պարժից ազարելու խնդրո առարկա ձեւն իր բնույթով հանդիսանում է **պայմանական**, քանի որ պարժից ազարվող դարապարպյալը գրնվում է վերահսկողության ներքո, նրա վրա դրվում են որոշակի պարարականություններ, որոնք չկարարելու դեպքում դարարանը կարող է որոշում կայացնել պայմանական վաղաժամկետ ազարումը վերացնելու եւ պարժի չկրած մասն ի կարար աճելու մասին:

Պարժից ազարելու պայմանական բնույթը պայմանավորում է մեկ այլ առանձնահարկություն եւս (այս առանձնահարկությունը վերաբերում է նաեւ ՔՕ 78 հողվածով նախարետված՝ պարժից ազարելու ձեւին), այն է՝ եթե պարժից ազարելու մյուս ձեւերի կիրառման արդյունքում վերացվում են կարարված հանցագործության բոլոր հեարեանքները, ապա պարժից պայմանական վաղաժամկետ ազարված դարապարպյալը մինչեւ դարարանի կողմից նշանակված պարժաժամկետի ավարպը շարունակում է համարվել

դարավածություն ունեցող, ինչը հաշվի է առնվում փորձաշրջանում հանցագործություն կատարելու դեպքում պատիժ նշանակելիս (պատիժ նշանակվում է դատավճիռների համակցությամբ (ՔՕ հոդված 67)):

6. Ներման ինստիտուտի եւ պատժից ազատելու քրեաիրավական ինստիտուտի, այդ թվում՝ նաեւ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակության վերլուծությունը վկայում է, որ այդ երկու ինստիտուտների միջեւ հիմնական բովանդակային սկզբունքային փարբերությունը կայանում է նրանում, որ, ի փարբերություն ներման ինստիտուտի, պատժից ազատելու ինստիտուտի դրսեւորման բոլոր ձեւերի, այդ թվում՝ նաեւ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կիրառման համար նախատեսված են որոշակի պայմաններ եւ հիմքեր, որոնք սահմանափակում են այդ ձեւերից օգտվելու հնարավորություն ունեցող դատապարտյալների շրջանակը, ինչի արդյունքում նման հնարավորությունը չի փարածվում **յուրաքանչյուր դատապարտյալի** վրա: Մինչդեռ ներում հայցելու իրավունքի իրացումը որեւէ նախապայմանով պայմանավորված չէ, ինչի արդյունքում որեւէ կերպ չի սահմանափակվում ներում հայցելու իրավունք ունեցող դատապարտյալների շրջանակը՝ անկախ պատիժը կրելու ժամկետից, եւ, հետեւաբար, **այդ իրավունքից կարող է օգտվել յուրաքանչյուր դատապարտյալ:**

Ելնելով վերոշարադրյալից, սահմանադրական դատարանը գտնում է, որ ՏՏ - Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասում կիրառված՝ «նշանակված պատիժը մեղմացնել» եզրույթի այնպիսի մեկնաբանությունը, որի դեպքում այդ եզրույթը ներառում է նաեւ պատժից ազատելու ինստիտուտը, անհամարեղելի է այդ դրույթի բովանդակության հետ եւ դուրս է այդ դրույթի փրամաբանության շրջանակներից: Պատժից ազատելու ինստիտուտի ողջ փրամաբանությունը հանգում է նրան, որ այն գործում է միայն որոշակի պայմանների եւ հիմքերի առկայության դեպքում, հետեւաբար՝ նաեւ դատապարտյալների որոշակի շրջանակի համար: Ուստի պատժից ազատելու ինստիտուտի եւ դրա առանձին դրսեւորումների փրամաբանությունն անհամարեղելի է ՏՏ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասում ամրագրված դրույթի հետ, որպեղ «նշանակված պատիժը մեղմացնել» եզրույթն օգտագործված է եւ ենթակա է ընկալման **մասնակի (պատիժը մեղմացնող) ներում իմաստով**, ինչպես այն ներկայացված է ՏՏ քրեական օրենսգրքի 83 հոդվածում:

Ավելին, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում օրենքը նախատեսում է նաեւ այն վերացնելու հնարավորություն: Պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունքը ենթադրում է, որ այդ խնդրանքի բավարարումը պետք է լինի վերացման ոչ ենթակա: Ուստի պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտն այս առումով եւս անհամարեղելի է ՏՏ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասի փրամաբանության հետ:

Նաշվի առնելով ներման եւ պատժից ազատելու ինստիտուտների, դրանց բովանդակության, էության, սոցիալական նշանակության եւ նպատակների միջեւ առկա սկզբունքային եւ անհամարեղելի առանձնահատկություններն ու փարբերությունները,

սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՏՏ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասում խոսքը վերաբերում է ոչ թե ներման եւ պարփոցից ազատելու փարաբնույթ երկու առանձին ինստիտուտներին, այլ ներման ինստիտուտի գործադրման երկու փարաբնույթներին՝ **ներման լրիվ եւ մասնակի ձեւերին**:

Ինչպես հստակ նշվում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2003թ. սեպտեմբերի 24-ին ընդունած թիվ (2003) 22 հանձնարարականում, պայմանական վաղաժամկետ ազատումը չի ներառում համաներումը կամ ներումը: Այն ենթադրում է դատապարտված բանտարկյալներին ժամկետից շուտ ազատելը՝ ազատվելուց հետո ընկած ժամանակահատվածի անհատականացված պայմանների ներքո (հանձնարարականի հավելված, մաս առաջին, կետ 1-ին): Նույն հանձնարարականում որպես ընդհանուր սկզբունքներ են դիտարկվում, որ պայմանական վաղաժամկետ ազատման նպատակն է օգնել բանտարկյալներին «անցում կատարել բանտի կյանքից դեպի համայնքի օրինապահ կյանք»՝ միաժամանակ ապահովելով հանրության անվտանգությունը: Ընդ որում, եթե ներման կամ համաներման դեպքում խոսքը վերաբերում է ներմանը կամ նշանակված պարփոց մեղմացնելուն, ապա այս դեպքում գործ ունենք «**պայմանական** ազատման» ինստիտուտի հետ: Վերջինս ենթադրում է, նախ. օրենսդրությամբ նախատեսվող պայմաններ ու համապատասխան վերահսկողություն, ապա, այդ պայմանները չպահպանելու դեպքում՝ համապատասխան իրավական հետեւանքներ:

7. ՏՏ գործող օրենսդրության, մասնավորապես, ՏՏ քրեական օրենսգրքի 70 եւ 76 հոդվածների, ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 434 հոդվածի դրույթների վերլուծությունը վկայում է, որ

ա) պայմանական վաղաժամկետ ազատման եւ համապատասխան վերահսկողական պայմանների սահմանման իրավասությունը վերապահված է դատարանին՝ պարփոցի կիրառումն իրականացնող մարմնի միջնորդության դեպքում,

բ) այն իրականացվում է օրենքով նախատեսված որոշակի պայմանների առկայության դեպքում եւ պայմանավորված չէ դատապարտյալների դիմումով կամ խնդրանքով, այլ վերաբերում է բոլոր այն բանտարկյալներին, որոնք համապատասխանում են օրինապահ քաղաքացիներ դառնալու նվազագույն երաշխիքներին,

գ) օրենքը փարբերակված մոտեցում է ցուցաբերում փարբեր հանցագործությունների համար դատապարտված անձանց նկատմամբ,

դ) նախատեսվում են ներգործուն միջոցներ՝ վաղաժամկետ ազատման պայմանները խախտելու համար,

ե) վաղաժամկետ ազատման նպատակը բոլոր դատապարտյալների համար նախապես հայրնի խրախուսելի հնարավորություն է՝ հանրային ազատ կյանքին սահուն անցում կատարելու համար, առանց վրանգելու հասարակական կարգն ու այլոց իրավունքներն ու ազատությունները,

զ) Նայսարանի Նանրապետությունը վաղաժամկետ ազատելու հարցը որոշելու համար որդեգրել է, այսպես կոչված, հայեցողական ազատման համակարգը, որն առկա է նաեւ եվրոպական շատ երկրներում: Այդ համակարգի բնորոշ առանձնահատկություն-

ներից ելնելով է, որ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 434, 437, 438 հոդվածներով, ՏՏ քրեակադարողական օրենսգրքի 114, 115 եւ 115¹ հոդվածներով, ՏՏ կառավարության 2006թ. օգոստոսի 24-ի թիվ 1304-Ն որոշմամբ, ինչպես նաեւ ՏՏ Նախագահի 2006թ. հուլիսի 31-ի թիվ ՆՏ-163-Ն հրամանագրով սահմանվել են պարփոխ կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պարփի չկրած մասն ավելի մեղմ պարփադատականով փոխարինելու ընթացակարգերը:

8. Պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի վերոհիշյալ հանձնարարականը պարունակում է մի շարք սկզբունքային դրույթներ, որոնք էական նշանակություն ունեն իրավական պետությունում պայմանական վաղաժամկետ ազատման այս կամ այն մոդելի ընտրության հարցում: Նկատի ունենալով, որ Տայաստանի Տանրապետությունը, ի թիվս բազմաթիվ այլ երկրների, որդեգրել է «հայեցողական ազատման» համակարգը, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ համաձայն վերոհիշյալ Տանձնարարականի՝ հայեցողական ազատման համակարգի դեպքում.

ա) նվազագույն ժամկետը, որը բանարկյալները պետք է կրեն պայմանական վաղաժամկետ ազատվելուն ենթակա լինելու համար, պետք է սահմանված լինի օրենքով,

բ) պետք է ձգվել որոշումը կայացնել բանարկյալի կողմից նվազագույն ժամկետը կրելուց հետո որքան հնարավոր է շուտ,

գ) պայմանական վաղաժամկետ ազատելու համար պահանջվող չափանիշները պետք է լինեն պարզորոշ եւ հստակ: Դրանք պետք է լինեն նաեւ իրական՝ այն իմաստով, որ պետք է հաշվի առնեն բանարկյալների անձը, սոցիալական եւ Կրեւսական հանգամանքները, ինչպես նաեւ վերաբնակեցման ծրագրերի առկայությունը,

դ) պայմանական վաղաժամկետ ազատելուց հետո աշխատանքի հնարավորությունների բացակայությունը կամ մշտական ապրելավայր ունենալու բացակայության հանգամանքը չպետք է հիմք հանդիսանան այն մերժելու կամ հետաձգելու համար,

ե) պայմանական վաղաժամկետ ազատելու չափանիշները պետք է կիրառվեն այնպես, որպեսզի ազատման թույլտվություն Կրվի բոլոր այն բանարկյալներին, որոնք համապատասխանում են օրինապահ քաղաքացիներ դառնալու նվազագույն երաշխիքներին: Միաժամանակ, իշխանությունները պարտավոր են ցույց Կրալ, որ բանարկյալը չի համապատասխանում այդ չափանիշներին,

զ) եթե որոշում կայացնող մարմինը որոշում է մերժել պայմանական վաղաժամկետ ազատելը, այն պետք է սահմանի հարցը վերանայելու օր: Բոլոր դեպքերում, բանարկյալները պետք է հնարավորություն ունենան կրկին դիմել որոշում կայացնող մարմնին՝ այն պահից, երբ իրենց իրավիճակն էականորեն փոխվել է հօգուտ իրենց:

ՏՏ գործող օրենսդրության համեմատական վերլուծությունը վկայում է, որ, մասնավորապես, պարզորոշ ու հստակ սահմանված չեն պայմանական վաղաժամկետ ազատելու համար պահանջվող չափանիշները: ՏՏ քրեական օրենսգրքի դրույթների, քրեական դատավարության օրենսգրքի ու քրեակադարողական օրենսգրքի՝ քննության առարկա դրույթների ու դրանց փոփոխությունների, համապատասխան ենթաօրենսդրա-

կան ակտերի համեմատական վերլուծությունը վկայում է, որ իրավաչափ կլիներ, որպեսզի պարփի պայմանական վաղաժամկետ ազատման ողջ գործընթացը (այդ թվում՝ ժամկետները, չափանիշները, պետական մարմինների գործունեության կարգը եւ հայեցական լիազորությունների շրջանակը)՝ ՏՏ կողմից որդեգրված կոնկրետ կարգի շրջանակներում, առավել հստակ սահմանվեր օրենսդրությամբ:

9. Դիմողի այն պնդումը, որ դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցով անմիջականորեն դատարան դիմելու հնարավորությունից զրկելը հակասում է ՏՏ Սահմանադրության 18 հոդվածի պահանջներին, հիմնավոր չէ: Նշված հարցով անմիջական դատարան դիմելու հնարավորությունը չի առնչվում դատական պաշտպանության իրավունքին: ՏՏ Սահմանադրության 18 հոդվածը երաշխավորում է դատական պաշտպանության իրավունքը, երբ առկա է **խախտված իրավունքների պաշտպանության խնդիր**: Մինչդեռ պարփից պայմանական վաղաժամկետ ազատման քրեաիրավական ինստիտուտի բովանդակությունը կազմում է պետության կողմից հումանիզմի դրսևորում հանդիսացող դատապարտյալին փոփոխ **իրավական հնարավորություն**, այլ ոչ թե դատապարտյալի՝ պարփից պայմանական վաղաժամկետ ազատվելու **իրավունք**: Այդ մասին է վկայում այդ ինստիտուտի կիրառման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորումը. մասնավորապես, դատապարտյալն ինքը կամ նրա ներկայացուցիչը պարփից վաղաժամկետ ազատելու ներկայացման գործընթացի նախաձեռնությանը մասնակցություն չի ունենում. ներկայացման հարցն օրենքի ուժով, համապատասխան ժամկետը լրանալուց հետո, առանց դատապարտյալի խնդրանքի կամ դիմումի (սակայն նրա համաձայնությամբ), պարտադիր կարգով քննության է առնում քրեակարարողական հիմնարկի վարչական հանձնաժողովը: Ներկայացման, այս դեպքում չի կարող խոսքը վերաբերել խախտված իրավունքին, հետևաբար՝ նաև դրա դատական պաշտպանությանը: Նման հարց կարող է առաջանալ միայն այն դեպքում, երբ խախտվել է պայմանական վաղաժամկետ ազատման՝ օրենքով սահմանված կարգը:

Ինչ վերաբերում է դիմողի այն պնդմանը, որ դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցով անմիջականորեն դատարան դիմելու հնարավորությունից զրկելը հակասում է ՏՏ Սահմանադրության 19 հոդվածի պահանջներին՝ խախտելով դատարանի մարչելիության իրավունքը, ապա հարկ է նշել, որ նշված հարցով դատարան դիմելու ոչ անմիջական հնարավորությունը չի առնչվում դատարանի մարչելիության իրավունքին: ՏՏ Սահմանադրության 19 հոդվածը երաշխավորում է դատարանի մարչելիության իրավունքը, երբ առկա է կամ **խախտված իրավունքները վերականգնելու, կամ ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու** անհրաժեշտություն: Մինչդեռ պարփից պայմանական վաղաժամկետ ազատելու համար դիմելու դեպքում հարցը չի առնչվում ո՛չ խախտված իրավունքների վերականգնմանը, ո՛չ էլ ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու անհրաժեշտությանը: Նման անհրաժեշտություն կարող է առաջանալ օրենքով նախատեսված կարգի խախտման, ինչպես նաև պայմանական վաղաժամկետ ազատման հարցում օրենքով սահման-

ված կարգով որոշակի լիազորություն իրականացնող հանձնաժողովների գործողությունների կամ անգործության բողոքարկման առնչությամբ, որի բողոքարկման կարգը նույնպես սահմանվում է օրենքով:

10. Դիմող կողմը վիճարկում է նաև ՏՏ քրեակադարողական օրենսգրքի 115 հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությամբ ամրագրված այն դրույթը, որի համաձայն՝ հանձնաժողովի որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ այն դեպքերի, երբ որոշումները կայացվել են Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված կարգի խախտմամբ:

Այս կապակցությամբ, հարկ է նախ անդրադառնալ հանձնաժողովների կարգավիճակին ու գործունեության բովանդակությանը:

Հանձնաժողովներն իրենց բնույթով անկախ են եւ ընդգրկում են ինչպես պետական կառույցների՝ համապատասխան գերապեսչությունների, այնպես էլ հասարակայնության ներկայացուցիչներ: Հանձնաժողովների նախագահների եւ անդամների լիազորությունների ժամկետը երեք տարի է: Հանձնաժողովի աշխատակարգային որոշմամբ ստեղծվում են հանձնաժողովի առնվազն երկու անդամներից կազմված ենթահանձնաժողովներ, որոնց անդամները պետք է փոխվեն ռոտացիոն կարգով, որպեսզի նույն անձը նույն քրեակադարողական հիմնարկի հետ կապված հարցերի նախապատրաստմանը մասնակցի ոչ ավելի, քան երեք ամիս անընդմեջ:

Անկախ հանձնաժողովի գործունեության կարգը սահմանող՝ ՏՏ Նախագահի հրամանագիրը (31.07.2006թ. թիվ ՆՆ-163-Ն) կարող է բողոքարկման առարկա լինել՝ դրա թե՛ օրենքին եւ թե՛ Սահմանադրությանը համապատասխան լինելու տեսանկյունից: Այդ հանձնաժողովը որևէ հարց չի կարող քննության առարկա դարձնել, եթե չկա պարիժը կատարող հիմնարկի վարչական հանձնաժողովի որոշումը (այն ստեղծվում է ՏՏ քրեակադարողական օրենսգրքի 114 հոդվածի 2-րդ մասի հիման վրա՝ ՏՏ կառավարության որոշմամբ): Վարչական հանձնաժողովի որոշումները դատական կարգով կարող են բողոքարկվել՝ ըստ ՏՏ քրեակադարողական օրենսգրքի 115 հոդվածի 4-րդ մասի: Փաստորեն, ՏՏ քրեակադարողական օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մասի հիման վրա ստեղծված անկախ հանձնաժողովը (այդ նորմի սահմանադրականությունը դիմող կողմը չի վիճարկել) իրականացնում է բացառապես վարչական հանձնաժողովի նկատմամբ վերահսկողական լիազորություն: Վերջինիս անհրաժեշտությունը պայմանավորվել է նաև իրավակիրառական պրակտիկայով, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման խնդրով, օրենքով նախատեսված պարզամիջոցների իրավական նշանակությունը չիմաստագրելու անհրաժեշտությամբ, երբ պայմանական վաղաժամկետ ազատումը դառնում է ձեռական ու համարարած՝ առանց դրա իրավական նշանակության ու նպատակի հստակ երաշխավորման: Իսկ վերջինս անմիջականորեն առնչվում է նաև հասարակության անվտանգության եւ այլոց իրավունքների ու ազատությունների հարգման ու պաշտպանության խնդրին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 2006թ. ընդունած՝ Լեզերն ընդդեմ Ֆրանսիայի վճռում, անդրադառնալով, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում առկա է պայմանական վաղաժամկետ ազատման երեք հիմնական մոդել, այն է՝

հայեցողական համակարգ, պարպադիր ազգաման համակարգ եւ խառը համակարգ, նշում է, որ հայեցողական համակարգը կիրառելի է անդամ պեպությունների մեծամասնությունում: Այս համակարգն ուղղակիորեն կապված է անհապականացման սկզբունքի հետ, քանի որ թույլ չի փալիս ավտոմատ ազգատունը:

Նման համակարգի կիրառման դեպքում հիմնական խնդիրներից է, որ փարբեր մարմինների որոշումների հնարավոր անհամապատասխանության հարցը լուծում ունենա: Տվյալ հարցին առնչվող ՆՆ օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ հնարավոր անհամաչափելիության խնդիրը կարող է միայն դափական կարգով իր լուծումն ստանալ, եթե նախապես օրենսդրորեն հստակեցված են այս հարցում փարբեր մարմինների լիազորություններն ու հայեցողության շրջանակները:

Ինչ վերաբերում է հիշափակված գործին, ապա Եվրոպական դափարանը մերժել է դիմողի պահանջը՝ արտահայտելով այն իրավական դիրքորոշումը, որ «հասարակությանը հարմարվելու ջանքերի»՝ դիմողի կողմից մարմանը չված չափանիշի կիրառումը ներպեփական իշխանությունների կողմից ներպեփական օրենսդրության դրույթների մեկնաբանման իրավասության շրջանակներում է:

Սահմանադրական դափարանը գրնում է, որ ՆՆ քրեակափարողական օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մասի հիման վրա ստեղծված հանձնաժողովին առնչվող հարց քննելիս՝ դափական վերահսկողության խնդիրը ոչ թե այդ մարմնի՝ օրենսդրությամբ սահմանված բացառիկ գործառույթների կրկնօրինակումը պեփք է լինի, այլ նրա որոշումների՝ օրենսդրությանը համապատասխանելը վերահսկելը: ՆՆ Սահմանադրության 6 հոդվածի իմպեռափիվ պահանջն է, որ «Օրենքները պեփք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պեփք է համապատասխանեն Սահմանադրությանը եւ օրենքներին»: Միայն դափարանը կարող է որոշել իրավական ակտը համապատասխանում է օրենքին, թե՛ ոչ: Սակայն դափարանը չի կարող իրացնել օրենքով անկախ հանձնաժողովին վերապահված լիազորությունը: Տվյալ պարագայում պեփք է գործի ՆՆ վարչական դափավարության օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մասի օրենսդրական կարգավորման այն փրամաբանությունը, որ երբ անկախ հանձնաժողովն իրավասու է եղել գործել իր հայեցողությամբ, եւ դափարանը հանգում է այն հետետությանը, որ հանձնաժողովի հայեցողական լիազորություններն իրականացվել են օրենսդրությանը ոչ համապատասխան, ապա դափարանի վճռի եգրափակիչ մասը պեփք է սահմանի հանձնաժողովի պատասխանափությունը՝ իր որոշումն ընդունել կամ կափարել գործողություն՝ հիմք ունենալով դափարանի իրավական դիրքորոշումը եւ ապահովել կայացվող որոշման իրավաչափությունը՝ այն համապատասխանեցնելով օրենքի պահանջներին:

ՆՆ քրեակափարողական օրենսգրքի վիճարկվող հոդվածում ամրագրված այն դրույթը, որը նախատեսում է պատիժը կրող հիմնարկի վարչակազմի որոշումները դափական կարգով բողոքարկելու հնարավորություն, իսկ անկախ հանձնաժողովի որոշումների դափական բողոքարկման հնարավորություն նախատեսում է միայն այն դեպքերում, երբ այդ որոշումը կայացվել է ՆՆ Նախագահի հրամանագրով սահմանված կարգի խախտմամբ եւ բացառում է նաեւ այդ որոշման դափական կարգով բողոքարկումը, եթե այն հակասում է օրենքին, ոչ հետետողական լուծում է եւ չի երաշխավորում միջազգայնո-

րեն ընդունված եւ ՏՏ Սահմանադրության պահանջներին համապատասխան՝ պարփից պայմանական վաղաժամկետ ազատման կարգի արմատավորում ՏՏ իրավական համակարգում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՏՏ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի հունիսի 13-ին ընդունված՝ «ՏՏ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՏՏ օրենքի 5 հոդվածը համապատասխանում է Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. ՏՏ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերը համապատասխանում են Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

3. ՏՏ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածի 4-րդ մասը՝ անկախ հանձնաժողովի որոշումն օրենքին հակասելու դեպքում դատական կարգով բողոքարկելը սահմանափակելու մասով ճանաչել Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 6, 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածներին հակասող եւ անվավեր:

4. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ**

*5 փետրվարի 2008 թվականի
ՄԴՈ-733*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**«ԱՆԻՎ» ՆԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ՈՍԿԵ ՏԱԿԱՌ-ԱԼԿՈ» ՍՊԸ-Ի
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՄԱՆՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 3-ՐԴ ՆՈՂՎԱԾԻ 2-
ՐԴ ՄԱՍԻ՝ «... ՆՈՒՅՆԻՍԿ ԵԹԵ ՊԱՐՏԱՊԱՆՆ ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿ
ՉԷ» ԲԱՌԱԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ, ԵՎ 3-ՐԴ ՆՈՂՎԱԾԻ 2-ՐԴ
ՄԱՍԻ «Բ» ԿԵՏԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

25 փետրվարի 2008թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Նովիանինյանի, Զ. Դուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմողներ՝ «Անիվ» հիմնադրամի գործադիր փոօրեն Ն. Մի-նասյանի, նրա ներկայացուցիչներ Ա. Գրիգորյանի և Է. Գալստյանի, «Ոսկե Տակառ-Ալ-կո» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ն. Ճարոյանի, պատասխանող կողմի՝ ՆՆ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՆ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրեն-քի 25, 39 և 69 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Անիվ» հիմնադրամի և «Ոսկե Տակառ-Ալկո» ՍՊԸ-ի դիմումների հիման վրա՝ «Մասնկության մասին» Նայաս-տանի Նանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «...նույնիսկ եթե պարտա-պանն անվճարունակ չէ» բառակապակցության մասով, և 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործը:

Սահմանադրական դատարանն իր՝ 11.12.2007թ. ՍԴԱՌ-117 աշխատակարգա-յին որոշմամբ որոշել է նշված գործերը միավորել և քննել դատարանի նույն նիստում:

Գործի քննության առիթը «Անիվ» հիմնադրամի եւ «Ոսկե Տակառ-Ալկո» ՍՊԸ-ի դիմումներն են սահմանադրական դատարան:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, կողմերի բացատրությունները, ուսումնասիրելով գործի նյութերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Յ.

1. «Սնանկության մասին» ՆՏ օրենքն ընդունվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից 2006թ. դեկտեմբերի 25-ին, Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007թ. հունվարի 22-ին եւ ուժի մեջ է մտել 2007թ. փետրվարի 10-ին: Օրենքն ուժի մեջ մտնելու պահից վերջինիս 107 հոդվածի 4-րդ մասի ուժով ուժը կորցրած է ճանաչվել «Անվճարունակության (սնանկության) մասին» Նայասարանի Նանրապետության 2003թ. դեկտեմբերի 17-ի ՆՕ-17-Ն օրենքը:

2. ՆՏ փնտեսական դատարանը, ՆՏ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի դիմումի հիման վրա, քննելով «Անիվ» հիմնադրամին սնանկ ճանաչելու պահանջի վերաբերյալ քաղաքացիական գործը, իր 2007թ. հուլիսի 17-ի վճռով բավարարել է դիմողի պահանջը եւ սնանկ ճանաչել պարտասխանող «Անիվ» հիմնադրամին: Նշված քաղաքացիական գործի վարույթի շրջանակներում ՆՏ փնտեսական դատարանը քննության առարկա է դարձրել նաեւ պարտապանի պարտավորության հետ կապված նյութաիրավական վեճը:

Դիմող «Ոսկե Տակառ-Ալկո» ՍՊԸ-ն սնանկ է ճանաչվել ՆՏ փնտեսական դատարանի 2007թ. օգոստոսի 28-ի վճռով: Տնտեսական դատարանը «Ոսկե Տակառ-Ալկո» ՍՊԸ-ի վերաբերյալ գործով սնանկության հարցը քննելիս չի անդրադարձել պարտապանի պարտավորության հետ կապված նյութաիրավական վեճին, քանի որ այն արդեն իսկ լուծվել էր Արարաբի մարզի առաջին արյանի դատարանի 22.05.2007 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով:

3. Դիմող «Անիվ» հիմնադրամի պնդմամբ՝ «Սնանկության մասին» ՆՏ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «...նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցության մասով, եւ 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի դրույթները հակասում են ՆՏ Սահմանադրության 3-րդ հոդվածին, 18-րդ եւ 19-րդ հոդվածների 1-ին մասերին:

Դիմող «Ոսկե Տակառ-Ալկո» ՍՊԸ-ի պնդմամբ՝ «Սնանկության մասին» ՆՏ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «...նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցության մասով, հակասում է ՆՏ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերին, 31-րդ հոդվածի 1-ին մասին եւ 33.1. հոդվածին: Ըստ երկու դիմողների էլ՝ իրենց իրավունքների խախտման հիմնական պարճառն օրենքում «...նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցության ամրագրումն է, ինչը հնարավորություն է ընձեռում սնանկ ճանաչելու վճարունակ պարտապանին:

Դիմող «Անիվ» հիմնադրամը՝ վիճարկելով նաև «Սնանկության մասին» ՏՏ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի դրույթների համապատասխանությունը ՏՏ Սահմանադրության 3-րդ հոդվածին, 18-րդ և 19-րդ հոդվածների 1-ին մասերին, գտնում է, որ այն ձեւակերպված է բավականին անորոշ, ինչի հետեւանքով գույքային պարտավորության վերաբերյալ նյութաիրավական վեճը փեղափոխվում է սնանկության գործերով դատավարական վարույթ և բացառվում է նույն անձանց միջև նույն առարկայի վերաբերյալ նյութաիրավական վեճը դատական կարգով լուծելու հնարավորությունը, խախտվում է արդար դատաբնության իրավունքը: Միեւնույն ժամանակ, դիմողն իր փաստարկները հիմնավորում է նրանով, որ թիվ 3-2475 (ՏՂ) գործով ՏՏ վճռաբեկ դատարանն իր 2006 թվականի դեկտեմբերի 21-ին կայացրած որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշմամբ անթույլատրելի է համարել պարտավորության վիճելիության դեպքում սնանկության վարույթում նյութաիրավական վեճին ըստ էության անդրադառնալը՝ չսահմանափակելու համար այդ վեճի քննության համար հեղափոխում դատարան դիմելու անձի իրավունքը: Ըստ դիմող «Անիվ» հիմնադրամի՝ վիճարկվող դրույթի ընդունումը նպատակ է հետապնդել ձախողելու թիվ 3-2475 (ՏՂ) գործով վճռաբեկ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 21-ի նախադեպային որոշմամբ փրված իրավական դիրքորոշումների հեղափոխ կիրառումը և հանդիսանում է միջամտություն արդարադատության իրականացման գործընթացին:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողներին, գտնում է, որ վեճի առարկա հոդվածի դրույթների վերլուծությունից հետեւում է, որ «Սնանկության մասին» ՏՏ օրենքի 3-րդ հոդվածի 1-3-րդ մասերում ամրագրված դրույթները համակարգային առումով փոխկապակցված են միմյանց հետ, և ելակերպային դրույթն այն է, որ **սնանկ կարող է ճանաչվել միայն անվճարունակ պարտապանը:**

Միեւնույն ժամանակ պարտապանի անվճարունակությանը վերաբերող հարցերն իրենց կարգավորումն են ստացել նույն հոդվածի 3-րդ մասում: Ընդ որում, դրանում ամրագրված դրույթների վերլուծությունը վկայում է սնանկության երկու հետեւյալ հիմքերի առկայության մասին՝ ա) հաշվեկշռային անվճարունակությունը, որը բնութագրվում է այնպիսի իրավիճակով, երբ պարտապանի պարտավորությունները գերազանցում են իր ակտիվների արժեքը, բ) փաստացի անվճարունակությունը, երբ պարտապանն ի վիճակի չէ կատարելու իր ժամկետանց դրամական պարտավորությունները: Պարտապանին անվճարունակ ճանաչելու համար օրենսդիրը նախատեսել է հիշյալ հիմքերից առնվազն մեկի առկայության պայմանը:

Պատասխանողը գտնում է, որ «չնայած այն հանգամանքին, որ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը բացառում է դատարանի կողմից պարտապանին սնանկ ճանաչելու այլ պայման, քան պարտապանի անվճարունակ լինելը, իսկ 2-րդ մասը սահմանում է վճարունակ պարտապանին սնանկ ճանաչելու հնարավորությունը (օրենքում ձեւակերպված է «նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ»), այնուամենայնիվ, հիշատակված մասերի միջև առկա ներքին հակասությունը՝ ձեւական փրամաբանության և դատողությունների համադրման փեսանկյունից չի նշանակում, որ վճարունակ պարտապանը կա-

րող է սնանկ ճանաչվել, եթե կապարում է իր անվիճելի վճարային պարտավորությունը և նրանով ապացուցում է իր վճարունակ լինելը»:

Ըստ պարասխանողի՝ դա նշանակում է, որ քննության առարկա օրենքի 3-րդ - հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ» արտահայտությունը որեւէ իրավական հետեւանք չի առաջացնում, քանի որ միայն դատարանը դատաքննության ընթացքում կարող է պարզել և գնահատել պարտապանի անվճարունակությունը՝ վերջինիս նկատմամբ սնանկության վարույթ իրականացնելու նպատակով: Իսկ անվճարունակության հանգամանքը կարող է հիմնավորված լինել, եթե պարտապանը թույլ է տվել անվիճելի վճարային պարտավորությունների 30-օրյա և ավելի ժամկետով կեդանգ:

Պարասխանողն ընդունելի չի համարում նաեւ դիմողի այն եզրահանգումը, համաձայն որի՝ «վերը նշված անորոշ նորմերի կիրառման արդյունքում, անձը ի վերջո գրկվում է ՆՏ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և 19-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված դատարանում գործի արդար քննության իրավունքն իրականացնելու հնարավորությունից...»:

Ըստ պարասխանողի՝ սնանկության վարույթը՝ հանդիսանալով նույնպիսի դատական վարույթ, չի գրկում որեւէ անձի արդար դատաքննության իր իրավունքից:

Ինչ վերաբերում է «Սնանկության մասին» ՆՏ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի վերաբերյալ դիմողի փաստարկներին, ապա պարասխանողի կարծիքով ոչ մի օրենք չի կարող հաշվի առնել իրավական կարգավորման ենթակա հասարակական հարաբերությունների բազմազանությունը և հստակ կանոնակարգել այդ հարաբերությունների մասնակիցների այս կամ այն վարքագիծը: Օրենսդիրն սպառիչ կերպով չի բացահայտում «... և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը)» իրավանորմի բովանդակությունը՝ բնութագրելով և համարելով այն որպես իրադրային, այսինքն՝ ենթակա գնահատման յուրաքանչյուր գործի հանգամանքներից ելնելով:

Պարասխանող կողմը գտնում է, որ «Սնանկության մասին» ՆՏ օրենքի 3-րդ - հոդվածի 2-րդ մասի «...նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցությունը և նույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը չեն հակասում ՆՏ Սահմանադրության 3-րդ և 8-րդ հոդվածներին, 18-րդ և 19-րդ հոդվածների 1-ին մասերին, 31-րդ և 31.1. հոդվածներին:

5. «Սնանկության մասին» ՆՏ օրենքի՝ «Պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերն ու անվճարունակության հարկանիշները» վերաբառությամբ 3-րդ հոդվածը սահմանում է.

«1. Պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտապիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է:

2. Պարտապանը կարող է հարկադրված սնանկության դիմումի հիման վրա սնանկ ճանաչվել, եթե նա թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավար-

ձի հինգհարյուրապարհիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 30-օրյա կամ ավելի ժամկետով կտրանց, եւ վճռի կայացման պահին նշված կտրանցը շարունակվում է, **նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ**: Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ կամ եթե նա առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտնելով կամ դադարավճռով, եւ բացակայում է հաշվանցի հնարավորությունը.

բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, եւ պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը).

գ) պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, փուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, եւ պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը).

դ) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապարհիկը»:

6. Սնանկության հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորումը յուրաքանչյուր պետության փոփոխության կայունության ապահովման երաշխիքներից է: Նաշվի առնելով սնանկ ճանաչելու եւ սնանկության վարույթն իրականացնելու օրենսդրական հիմքերի միջազգային ներկա զարգացումները, Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային առեփարային իրավունքի հանձնաժողովն ընդունել է «Անվճարունակության մասին օրենսդրության հարցերով օրենսդիր մարմինների ուղեցույց» (Ուղեցույց, 2005թ.), որում ամրագրված սկզբունքներն իրենց արտացոլումն են գտել փարբեր պետությունների անվճարունակության մասին օրենսդրական ակտերում:

Նամաձայն այդ Ուղեցույցի՝ անվճարունակության մասին օրենսդրության առանցքը կազմում է սնանկության վարույթն իրականացնելու չափորոշիչների սահմանումը: Այդ հիմքերի պահպանմամբ է հնարավոր դառնում սնանկության գործերով վարույթի իրականացումը, որն էլ հնարավորություն է ընձեռում սահմանել այն պարտապաններին, որոնց վրա կարող է փարածվել օրենսդրության պաշտպանական եւ ընթացակարգային կառուցակարգերի գործողությունը, ինչպես նաեւ այն կողմերին (պարտապան, պարտապեր կամ այլ կողմեր), որոնք կարող են սնանկության մասին գործի վարույթը հարուցել:

7. «Սնանկության մասին» ՆՆ օրենքի առանձին դրույթների վերլուծությունը վկայում է այն մասին, որ դրանք խարսխվում են այն փրամաբանության վրա, համաձայն որի՝ սնանկության հիմքն անվճարունակությունն է: Այդ մասին է, մասնավորապես, վկայում օրենքի 3-րդ հոդվածի առաջին մասում ամրագրված դրույթը, որը ե՛ր կամավոր սնանկության, ե՛ր հարկադրված սնանկության դեպքում որպես սնանկության հիմք ամրագրում է պարտապանի անվճարունակության փաստը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի վիճարկվող դրույթի սահմանադրաիրավական գնահատականը պալու համար առանցքային նշանակություն ունի «անվճարունակություն» հասկացության ամբողջական եւ ճշգրիտ բովանդակության բացահայտումը:

«Անվճարունակությունը» ըստ վերոհիշյալ Ուղեցույցի՝ մի վիճակ է, երբ պարտապանն ընդհանուր առմամբ անկարող է վճարելու իր պարտքերը՝ պարտավորությունները կատարելու համար նախատեսված ժամկետներում կամ երբ պարտապանի պարտավորությունների ընդհանուր գումարը գերազանցում է նրա ակտիվների արժեքը: Այսինքն՝ փարբերակվում է **անվճարունակության երկու ձեւ՝ փաստացի եւ հաշվեկշռային**: Անվճարունակությունը նշանակում է վճարելու կարողության բացակայություն:

«Մնանկության մասին» ՏՏ օրենքի վերլուծությունը վկայում է, որ օրենքը եւս փարբերակում է անվճարունակության երկու ձեւ՝ հաշվեկշռային (բացասական հաշվեկշռի դեպքում) եւ փաստացի, այն է՝ այնպիսի վիճակ, երբ պարտապանն ի վիճակի չէ պարտավորների օրինական պահանջներն ամբողջովին բավարարել: Մասնավորապես, նման եզրահանգման համար հիմք է հանդիսանում օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասը: Օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետում օրենսդիրը որպես պարտապանի անվճարունակության հիմք սահմանում է պարտապանի պարտավորությունների՝ պարտապանի ակտիվները գերազանցելու հանգամանքը, իսկ 3-րդ մասի «բ» կետում՝ այն հանգամանքը, որ պարտապանն ի վիճակի չէ կատարելու իր ժամկետանց **դրամական պարտավորությունները (փաստացի անվճարունակություն)**: Անվճարունակության այս երկու տարատեսակները միմյանցից փարանջափված են, եւ պարտապանին սնանկ ճանաչելու համար օրենքը չի առաջադրում անվճարունակության այդ երկու տարատեսակների գույսահեռ միաժամանակյա առկայության պահանջ:

ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 28 եւ 71 հոդվածների 1-ին մասերի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՏՏ օրենքի 70 հոդվածի 1-ին մասի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրն այս դեպքում որպես պարտապանի անվճարունակության ընդհանուր հիմք է դիտարկում **պարտապանի կողմից վճարում կատարելու փաստացի անկարողությունը**, այն է՝ միայն փաստացի անվճարունակությունը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը որպես փաստացի անվճարունակության հիմք նախատեսում է նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապարիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 30-օրյա կեփանցը, ինչը թույլ է տալիս պարտափորոջը նախաձեռնելու սնանկության վարույթ: Այսինքն՝ օրենքը հիմնվում է անվճարունակության կանխավարկածի վրա, այն է՝ եթե պարտապանն ի վիճակի չէ կատարելու ժամկետանց վճարային պարտավորությունները, ապա ի սկզբանե ենթադրվում է, որ նա փաստացիորեն անվճարունակ է, եւ այդ ենթադրությունը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ ժամկետանց պարտավորությունը չի կատարվել կամ վիճարկվել ու հերքվել: Այս փարամաբանությունն է արտահայտված, մասնավորապես, օրենքի 17-րդ հոդվածում, որը կանոնակարգում է պարտափորոջ դիմումի հիման վրա սնանկ ճանաչելու կարգը: Այդ հոդվածի համաձայն՝ դատարանը մերժում է սնանկ ճանաչելու մասին դիմումն այն դեպքում, երբ պարտքի լրիվ կամ մասնակի մարման հեփեսանքով պարտապանը դադարում է անվճարունակ լինելուց կամ վերանում են օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված

հիմքերը: Ընդ որում, «անվճարունակության կանխավարկածն» իր հերթին հիմնվում է պարտապանի «բարեխղճության եւ պարտաճանաչության կանխավարկածի» վրա, այսինքն՝ եթե պարտապանը չի կատարում իր պարտավորությունները, ապա ի սկզբանե պարտավորության չկատարումը բացարձակում է ոչ թե նրա անբարեխղճությամբ, այլ վճարում կատարելու կարողության բացակայությամբ:

8. Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասում վիճարկվող բառակապակցությունը հարկ է դիտարկել ողջ օրենքի եւ նույն հոդվածի համապեքստում: Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանը կարող է հարկադրված սնանկության դիմումի հիման վրա սնանկ ճանաչվել, եթե նա թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 30-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, եւ վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է: Սակայն էական է այն, որ խոսքը վերաբերում է «անվիճելի վճարային պարտավորություններին»: Եթե առկա է վճարային պարտավորությունների վերաբերյալ վեճ, ապա պարտապանը պետք է հնարավորություն ունենա այդ վեճը լիարժեք դատական քննության առարկա դարձնել, որից հետո միայն կարող է հարց դրվել նրա անվիճելի վճարային պարտավորությունների կատարման մասին: Նախառակ պարագայում կտրուսհարվի անձի՝ Սահմանադրության 31 հոդվածով ամրագրված սեփականության իրավունքը:

Անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել նաեւ «Սնանկության մասին» ՆՇ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի այն պահանջին, որ վճարային պարտավորությունը ճանաչված է համարվում օրինական ուժի մեջ մրած վճռով կամ դատավճռով: Ուստի հատուկ վարույթի կարգով սնանկության գործի քննությունն օրենսդրորեն առավել հստակ պետք է սահմանազարկված լինի նյութաիրավական վեճի քննությունից:

Սնանկության ինստիտուտի նպատակն է հնարավորություն տալ բարեխիղճ եւ պարտաճանաչ պարտապանին վերականգնել իր բնականոն գործունեությունը, հաղթահարել ֆինանսական դժվարությունները, ինչպես նաեւ ապահովել անվճարունակ կազմակերպությունների վերակառուցումը եւ ֆինանսական վերակազմակերպումը, վերականգնել նրա կենսունակությունը եւ **միեւնույն ժամանակ ապահովել պարտապերերի շահերի պաշտպանությունը:**

9. Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասում «... եթե նույնիսկ պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցության այնպիսի ընկալման դեպքում, երբ վճարունակությունը բացառապես վերաբերում է հաշվեկշռային վճարունակությանը, օրենքի ողջ իրավակարգավորման համապեքստում այդ բառակապակցությունը դառնում է ավելորդ, եւ այն, ըստ էության, սնանկության ինստիտուտի ընդհանուր իրավակարգավորման մեջ որեւէ դերակատարություն չունի: Այդ բառակապակցության առկայությունը կամ բացակայությունը որեւէ իրավական հետեւանք չի առաջացնում:

Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավակիրառական պրակտիկայում օրենքի վիճարկվող դրույթը կարող է փարաբնույթ մեկնաբանություններ առա-

ջացնել, սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ վիճարկվող դրույթի՝ վերոհիշյալից փարբերվող որեւէ այլ մեկնաբանության դեպքում, երբ այն կարող է կիրառվել **վիճելի վճարային պարտավորությունների առկայության դեպքում**, այդ դրույթը ներքին հակասության մեջ կմտնի ինչպես օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, այնպես էլ ողջ օրենքի եւ սնանկության ինստիտուտը կարգավորող այլ նորմատիվ ակտերի, ինչպես նաեւ ՏՏ Սահմանադրության 31-րդ հոդվածի դրույթների հետ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավակիրառական պրակտիկայում վիճարկվող դրույթի որեւէ այլ մեկնաբանություն ոչ միայն վեր կհանի վերոհիշյալ հակասությունները, այլ նաեւ կստեղծի սնանկ ճանաչված պարտապանի սեփականության իրավունքի խախտման իրական վրանգ: Նման պարագայում Կոնսենս չարդարացված եւ չհիմնավորված միջամտություն պարտապանի սեփականության իրավունքին, պարտապանի համար կառաջանան այնպիսի բացասական եւ ծանր հետեւանքներ, որոնք արդարացված չեն որեւէ իրավաչափ նպատակով:

10. Ըստ դիմող «Անիվ» հիմնադրամի՝ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետում ամրագրված դրույթը խոչընդոտում է պարտապանի՝ վիճելի պարտավորության կապակցությամբ նյութաիրավական վեճն ընդհանուր հայցային վարույթի կարգով դատաքննության առարկա դարձնելու հնարավորությանը, ինչի արդյունքում, ինքը, ի խախտումն ՏՏ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածների 1-ին մասերի, գրկվել է իր իրավունքների դատական պաշտպանության իրականացման հնարավորությունից:

Վիճարկվող դրույթի վերլուծությունը վկայում է, որ այն չի ենթադրում, որ պարտապանի վիճելի պարտավորության կապակցությամբ նյութաիրավական վեճը լուծվում է սնանկության վարույթի շրջանակներում եւ, հետեւաբար, այս դրույթը չի խոչընդոտում նաեւ նշված նյութաիրավական վեճի քննությանն ընդհանուր հայցային վարույթի շրջանակներում: Այդ մասին է, մասնավորապես, վկայում ձեւավորված իրավակիրառական պրակտիկան: Այսպես. «Անիվ» հիմնադրամի պարագայում Տնտեսական դատարանը սնանկության գործը քննելիս միաժամանակ քննության առարկա է դարձրել նաեւ նյութաիրավական վեճը, այն է՝ պարտապանի՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապարսիկը գերազանցող վիճելի վճարային պարտավորությունների 30-օրյա կամ ավելի ժամկետով կտրանցի հարցը: Մինչդեռ «Ոսկե Տակառ-Ալկո» ՄՊԸ-ի դեպքում նյութաիրավական վեճը քննության առարկա է դարձվել ընդհանուր հայցային վարույթի շրջանակներում՝ Արարարի մարզի առաջին ասյանի դատարանում:

Բացի դրանից, վիճարկվող դրույթում «...պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր» ձեւակերպումը ենթադրում է, որ խոսքը վերաբերում է ոչ թե պարտապանի պարտավորության կամ կտրանցի բացակայության փաստն ապացուցող հիմքերին, այլ **նյութաիրավական վեճի առկայությանը, այն է՝ պարտավորության վիճելիությունը հավաստող հիմքերին**: Դա բխում է օրենքի վիճարկվող նույն 3-րդ հոդվածի 2-րդ մասի փրամաբանությունից, որը սնանկ ճանաչելու հիմք է դիտարկում ոչ թե ընդհանրապես վճարային պարտավորությունը, այլ **անվիճելի** վճարային պարտավորությունը: Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «ա», «բ», «գ», «դ» կետերը վերաբերում են **վճարային պար-**

տրավորության անվիճելիությանը, այլ ոչ թե **սնանկության հիմքերին**, եւ նպատակ չեն հետապնդում սնանկության գործը քննող դատարանին ներքաշելու նյութաիրավական վեճի լուծման գործընթացի մեջ:

11. Դիմող «Անիվ» հիմնադրամը մատնանշում է նաեւ, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի ընդունումը ՀՀ Ազգային ժողովի կողմից միպում է հետապնդել խոչընդոտել Վճռաբեկ դատարանի նախադեպային նշանակության որոշման (3-2475 (ՏԴ) գործով 21.12.2006թ.) դրույթների կիրառման միջոցով արդարադատության իրականացմանը: Դիմողն այդ կապակցությամբ հղում է կատարում Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին: Դիմումում, մասնավորապես, նշված է. «...օրենսդրի կողմից որեւէ օրենքի ընդունումը արդարադատության իրականացման գործընթացի վրա ազդելու նպատակով անհամարեղելի է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների հետ եւ առաջացնում է պետության պատասխանատվություն այդ հոդվածի շրջանակներում»: Մատնանշված վճիռներից, մասնավորապես, ZIELINSKI AND PRADAL AND GONZALEZ AND OTHERS v. FRANCE գործով վճռի ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ օրենսդրի կողմից խնդրո առարկա հարցի կարգավորման առնչությամբ օրենքի ընդունումը Եվրոպական դատարանի կողմից որակվել է միջամտություն հետեւյալ հանգամանքներում.

- օրենսդիրը հետադարձ ուժ է տվել իր սահմանած նորմերին՝ դրանք փարածելով այն վեճերի վրա, որոնց կապակցությամբ արդեն իսկ գործ է հարուցված դատարաններում եւ դրանք գրնվում են դատարաններում քննության ընթացքում, այդ թվում նաեւ՝ այն վեճերի վրա, որոնց կապակցությամբ ստորին աստիճանի դատարանները կայացրել են դատական ակտեր, սակայն, որոնք դեռեւս վերջնական ուժ չեն ստացել (նման կարգավորման արդյունքում դիմումատուների օգտին կայացված վճիռները նոր օրենսդրական կարգավորման հիման վրա բեկանվել էին Վճռաբեկ դատարանի կողմից),

- օրենսդրական նման կարգավորումն իր բնույթով եղել է այնպիսին, որ կանխորոշել է դատարանների կողմից վեճի լուծումը, դատաքննության ելքը,

- փվյալ վեճի մի կողմում հանդես է եկել պետությունը, եւ նման օրենսդրական կարգավորման արդյունքում կողմերի միջեւ հավասարությունը խախտվել է հօգուտ պետության, քանի որ վեճի ելքը կանխորոշել է ի շահ այդ կողմի:

Տվյալ դեպքում օրենսդրի կողմից վիճարկվող նորմի ընդունումը չի կարող որակվել որպես միջամտություն արդարադատության իրականացմանը, քանզի նոր կարգավորումն իր բնույթով այնպիսին չէ, որ կարողանա կանխորոշել արդարադատության իրականացման արդյունքը, վճռել դատական գործի ելքը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «...նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցության մասով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31 հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր:

2. «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը համապարասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳ-ԱՆՈՂ**Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ***25 փետրվարի 2008 թվականի**ՍԴՈ- 735*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՑԻՆՆԵՐ ՆԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ ՎԻԿՏՈՐԻԱ
ՍԱՐԳՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԿՈՂՄԻՑ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 2-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
76 ՆՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 մարտի 2008թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դափարանը՝ կազմով.

Վ. Նովիաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի,

մասնակցությամբ՝ գործով որպես պափասխանող կողմ ներգրավված՝ ՆՆ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՆՆ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի եւ 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դափարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Նայկ Գրիգորյանի եւ Վիկտորիա Սարգսյանի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից 2001 թվականի մայիսի 2-ին ընդունված՝ Նայասարանի Նանրապետության հողային օրենսգրքի 76 հոդվածի 2-րդ մասի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Ն. Գրիգորյանի եւ Վ. Սարգսյանի դիմումն է սահմանադրական դափարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմողների գրավոր փաստարկները, պափասխանող կողմի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՆՆ հողային օրենսգրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դափարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. ՆՏ հողային օրենսգիրքն ընդունվել է Նայասարանի Նանրապետության Ազգային ժողովի կողմից 2001 թվականի մայիսի 2-ին, ՆՏ Նախագահի կողմից սպորազրվել՝ 2001 թվականի հունիսի 4-ին և ուժի մեջ է մտել 2001 թվականի հունիսի 15-ից:

2. ՆՏ հողային օրենսգրքի 76 հոդվածի 2-րդ մասի վիճարկվող առաջին պարբերությունը սահմանում է. «Նամայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության կամ կառուցապարման իրավունքով են փրամադրում համայնքների ղեկավարները /Երեւանում՝ Երեւանի քաղաքապետը/»:

3. Ըստ վերջնական դատական ակտի՝ Ն. Գրիգորյանի և Վ. Սարգսյանի հայցն ընդդեմ Երեւանի քաղաքապետարանի, ՆՏ կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիրի փարածքային սպորաբաժանման, Արմեն Միկոյանի, Պարույր Տեր-Ոսկանյանի և Սամվել Կոստանյանի՝ պետական մարմինների ակտերն անվավեր ճանաչելու, ժառանգության վկայագրով սեփականության իրավունքը գրանցել պարավորեցնելու և ուրիշի ապօրինի փիրապետումից գույքն ազատելու պահանջների մասին, Երեւանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին արյանի դատարանը 21.03.2007թ. վճռով մերժել է: ՆՏ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանն իր 03.07.2007թ. վճռով հայցը բավարարել է: ՆՏ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը 05.09.2007թ. որոշմամբ, կիրառելով ՆՏ հողային օրենսգրքի 76 հոդվածը, բեկանել է ՆՏ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 03.07.2007թ. վճիռը և օրինական ուժ է տվել Երեւանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին արյանի դատարանի 21.03.2007թ. վճռին:

4. Դիմողները գտնում են, որ ՆՏ հողային օրենսգրքի 76 հոդվածի 2-րդ մասը հակասում է ՆՏ Սահմանադրության 31 հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, և խնդրում են այն անվավեր ճանաչել: Նրանք մասնավորապես նշում են, որ վիճարկվող հոդվածը գուրկ է որոշակիությունից, թերի է կարգավորում պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի /տվյալ դեպքում՝ հողամասի/ փնօրինման իրավահարաբերությունները: Պետական մարմինը՝ չիրականացնելով գույքի օգտագործման և փիրապետման գործառույթները, որոնք սեփականության իրավունքի պատկանելության անհրաժեշտ փարբերն են, իրականացրել է գույքի փնօրինման գործառույթ: Եվ չպարզված հանգամանքներում պետությունը հռչակել է իր սեփականությունը քաղաքացու ժառանգական զանգվածի նկատմամբ և այն վարձակալության է փրամադրել այլ քաղաքացիների՝ սահմանափակելով դիմողների սեփականության իրավունքի իրացումը:

5. Պատրասխանողը գտնում է, որ դիմումը ենթակա է մերժման հեփետյալ նկատարումներով՝ վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցի նկատմամբ անհրաժեշտ է համակարգային մոփեցում դրսետրել ոչ միայն ՆՏ Սահմանադրության 31 հոդվա-

ծին, այլև ՏՏ Սահմանադրության 42.1., 105 եւ 107 հոդվածներին համապատասխանության փաստանկյունից: Ըստ պատասխանողի՝ սեփականության իրավունքի իրականացման /հոդված 31/, իրավաբանական անձանց իրավունքների կիրառելիության /հոդված 42.1./, համայնքի սեփական եւ պարզվիրակված լիազորությունների իրականացման /հոդված 105/, փողական ինքնակառավարման իրավունքի իրականացման /հոդված 107/ վերաբերյալ սահմանադրական նորմերի եւ քաղաքացիական իրավահարաբերություններում պետությանը եւ համայնքներին քաղաքացիների եւ իրավաբանական անձանց հետ հավասար հնարավորություն ընձեռելու մասին դրույթի /ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 128 հոդված/ համադրական վերլուծությունից բխում է հետևյալը.

ա) սեփականության իրավունքը ճանաչելու եւ սեփականափոխող կողմից սեփականությունն իր հայեցողությամբ փոխապետելու, օգտագործելու, փնտրիներու իրավունքը հավասար չափով վերապահվել է ինչպես քաղաքացիներին եւ իրավաբանական անձանց, այնպես էլ՝ պետությանը եւ համայնքներին,

բ) որեւէ օրենսդրական ակտով արգելված չէ պետության կամ համայնքների սեփականությունը հանդիսացող հողամասերը վարձակալության հանձնելը կամ վարձակալության հանձնելու իրավունքը համայնքի ղեկավարին փոխանցելը,

գ) պետությունը կամ համայնքներն իրենց սեփականությունը հանդիսացող գույքը կարող են փնտրիներ իրենց հայեցողությամբ՝ հաշվի առնելով Սահմանադրությամբ եւ օրենքներով նախատեսված սահմանափակումները,

դ) համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով հանձնելը համայնքի սեփական լիազորությունն է ,

ե) պետական սեփականությունը հանդիսացող հողամասերը վարձակալության հանձնելու համայնքի ղեկավարի իրավունքը՝ վերջինիս պարզվիրակված լիազորությունն է:

Նման պարագայում ակնհայտ է, որ ՏՏ հողային օրենսգրքի 76 հոդվածում ամրագրված՝ համայնքի ղեկավարի եւ Երեւանի քաղաքապետի /մարզպետի/ պետության եւ համայնքների սեփականությանը պարկանող հողամասերը վարձակալության փրամադրելու իրավունքը բխում է ՏՏ Սահմանադրության վերոնշյալ հոդվածների բովանդակությունից եւ թղթակցվում է ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 128 հոդվածի եւ «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՏՏ օրենքով ամրագրված համայնքի ղեկավարի լիազորությունների մասին դրույթների հետ: Պատասխանող կողմը գտնում է, որ վերը թվարկված դրույթների վերլուծությունը թույլ է տալիս պնդելու, որ օրենսդրությամբ համապարփակ կարգավորված է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օտարման կամ վարձակալության փրամադրման գործընթացը, մասնավորապես՝ նշված հողամասերը վարձակալության փրամադրելու իրավունքը, ինչն ուղղակիորեն բխում է ՏՏ Սահմանադրության 31, 42.1., 105 եւ 107 հոդվածներից:

6. Սահմանադրական դատարանը փաստում է, որ չնայած դիմող կողմը խնդրում է որոշել ՏՏ հողային օրենսգրքի 76 հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը, սակայն իրականում նրանց գործով կիրառվել է 76 հոդվածի 2-րդ մասի առաջին պարբե-

րությունը, հեղուաբար՝ սահմանադրական դատարանը քննության է առնում միայն առաջին պարբերության սահմանադրականությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՆՏ Սահմանադրության 8 հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Նայաստանի Նանրապետությունում ճանաչվում է պաշտպանվում է սեփականության իրավունքը»: Սահմանադրական այս դրույթի իրացումը երաշխավորվում է ինչպես Սահմանադրության այլ հոդվածներով /31, 42.1., 43, 44 հոդվածներ, 83.5. հոդվածի 1-ին և 2-րդ կետեր, 89 հոդվածի 3-րդ կետ, 105 և 105.1. հոդվածներ/, այնպես էլ Նայաստանի Նանրապետության մի շարք այլ իրավական ակտերով, որոնք կարգավորում են սեփականության իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները, սահմանելով սեփականության իրավունքի սուբյեկտներին, սեփականության իրավունքի բովանդակությունը, սեփականության իրավունքի սահմանափակումների թույլատրելի շրջանակները, սեփականության իրավունքն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը, գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող այլ անձանց շահերի պաշտպանության մեխանիզմները:

ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 163 և 166 հոդվածների ուժով ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքների հետ մեկտեղ սեփականության իրավունքի սուբյեկտ է հանդիսանում նաև Նայաստանի Նանրապետությունը, որը սեփականության իրավունքի մյուս սուբյեկտների հետ հավասար կարող է իր հայեցողությամբ փիրապետել, օգտագործել և տնօրինել իրեն պատկանող գույքը: Ընդ որում, ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 129 և 168 հոդվածների ուժով Նայաստանի Նանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը պետական սեփականություն է, և Նայաստանի Նանրապետության անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները: «Տեղական ինքնակառավարման մասին» ՆՏ օրենքի 47 հոդվածի համաձայն՝ «Նամայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն համարվող հողերը Նայաստանի Նանրապետության հողային օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում սեփականության իրավունքով անհատույց փոխանցվում են համայնքներին:

Նամայնքն իր սեփականություն համարվող հողերը կարող է տնօրինել, փիրապետել և օգտագործել օրենքով սահմանված կարգով»:

ՆՏ օրենսդրության վերոհիշյալ վերլուծության հիման վրա կարելի է արձանագրել, որ գույքը, որովայն դեպքում՝ համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը, վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելը ՆՏ Սահմանադրության 8 հոդվածին համահունչ հանդիսանում է պետության և համայնքների սեփականության իրավունքի իրացման ձևերից մեկը, որի իրացմանն էլ ուղղված է ՆՏ հողային օրենսգրքի 76 հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերության վիճարկվող դրույթը:

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողների իրավունքների հնարավոր խախտումը պայմանավորված չէ վիճարկվող նորմով: Վիճարկվող նորմին համապատասխան վիճելի հողամասը Երեսանի քաղաքապետարանի կողմից վարձակալությամբ

յան է փրվել հիմնվելով այն փաստի վրա, որ այդ հողամասը հանդիսացել է պետության սեփականությունը: Այս փաստը քաղաքացիաիրավական վեճի շրջանակներում հաստատվել է դատարանի օրինական ուժի մեջ մտնող վճռով:

8. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ՏՏ Սահմանադրության 31 հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքի պաշտպանությունը փրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՏՏ հողային օրենսգրքի 76 հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը համապատասխանում է Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ
Վ. ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆ**

*18 մարտի 2008 թվականի
ՍԳՈ- 741*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՅԻ ՆԻՆԱ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԵՎ ԱՅԼՈՅ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ
ՎՐԱ ՆՏ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 2-
ՐԴ ՆՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 159-ՐԴ ՆՈԴՎԱԾԻ, «ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՅՎԱԾ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ
ԶԲԱՂԵՅՎԱԾ ՆՈՂԱՄԱՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ
ՄԱՍԻՆ» ՆՏ ՕՐԵՆՔԻ 8-ՐԴ ՆՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ ՆՏ
ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 94-ՐԴ ՆՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝
«ԱՎԱՆԴԱՏՈՒ» ԲԱՌԻՅ ՆԵՏՈ՝ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ, ԵՎ
3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

4 սպրիլի 2008թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Նով-
հաննիսյանի (գեկուցող), Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ.
Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողների ներկայացուցիչ Կ. Մեժլումյանի,

գործով որպես պապասխանող կողմ ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի պաշտո-
նական ներկայացուցիչ՝ ՆՏ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծու-
թյան վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի
1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ
օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Նինա
Ղազարյանի եւ այլոց դիմումի հիման վրա՝ ՆՏ քաղաքացիական դատավարության
օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի, 159-րդ հոդվածի, «Ինքնակամ կառուցված շենքերի,
շինությունների եւ ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի

մասին» ՏՏ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, ՏՏ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «ավանդաբու» բառից հետո՝ ամբողջությամբ, եւ 3-րդ մասի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Ն. Ղազարյանի, Խ. Ղովհաննիսյանի, Ա. Նարությունյանի եւ Ա. Ղովհաննիսյանի՝ 19.11.2007թ. դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմողների գրավոր փաստարկները, պատասխանող կողմի գրավոր բացատրությունները, հեղափոխելով ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՏՏ օրենքը, ՏՏ դատական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՏՏ Ազգային ժողովի կողմից 1998թ. հունիսի 17-ին, Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998թ. օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

«Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՏՏ օրենքը ՏՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002թ. դեկտեմբերի 26-ին, Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003թ. հունվարի 31-ին եւ ուժի մեջ է մտել 2003թ. փետրվարի 22-ից: Օրենքի 11-րդ հոդվածին համապատասխան այն ուժը կորցրել է 2005թ. փետրվարի 22-ին:

ՏՏ դատական օրենսգիրքը ՏՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007թ. փետրվարի 21-ին, Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007թ. ապրիլի 7-ին եւ ուժի մեջ է մտել 2007թ. մայիսի 18-ից:

2. Դիմողները գտնում են, որ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասը եւ 159-րդ հոդվածը, իրավակիրառական պրակտիկայի կողմից դրանց արված բովանդակությամբ, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՏՏ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը, ՏՏ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «ավանդաբու» բառից հետո՝ ամբողջությամբ, եւ 3-րդ մասը հակասում են ՏՏ Սահմանադրության 1-ին, 3, 5, 6, 18, 19, 83.5., 91, 97 եւ 98-րդ հոդվածներին:

Մասնավորապես, ըստ դիմողների՝ Երեւանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին արյանի դատարանի եւ ՏՏ վճռաբեկ դատարանի գնահատմամբ իրենք համապատասխան դատական վարչություն չեն դիմել որպես շահագրգիռ անձ, ինչի արդյունքում խախտվել են ՏՏ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով երաշխավորված իրենց իրավունքները:

Ինչ վերաբերում է «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՆՏ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասին, ապա դիմողները գտնում են, որ այն, իրավակիրառական պրակտիկայի կողմից փրկված մեկնաբանությամբ, հակասում է ՆՏ Սահմանադրության 18-րդ հոդվածին՝ այնքանով, որքանով անձը գրկվում է պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքն իրականացնելու հնարավորությունից:

Ըստ դիմողների՝ ՆՏ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի վիճարկվող դրույթները խախտում են դատավորների անկախության սահմանադրական սկզբունքը:

3. Պատասխանող կողմը նկատի ունենալով, որ «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՆՏ օրենքն ուժը կորցրել է 2005 թվականին, ուստի հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 47 և 60-րդ հոդվածները, միջնորդում է սույն գործի վարույթը՝ «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՆՏ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության մասով՝ կարճել:

Նաշվի առնելով այն հանգամանքը, որ 2008 թվականի հունվարի 1-ից ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածն ուժը կորցրած է ճանաչվել, և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 47 և 60-րդ հոդվածները, պատասխանող կողմը միջնորդում է սույն գործի վարույթը՝ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի սահմանադրականության մասով՝ կարճել: Պատասխանող կողմը նաև գտնում է, որ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի և ՆՏ Սահմանադրության 3-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածներում ամրագրված դրույթների միջև հակասություն չկա:

Պատասխանող կողմի կարծիքով, ՆՏ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասում կետերով ամրագրված սահմանափակումների թույլատրելիության աստիճանը պետք է վերլուծվի 2-րդ մասի սկզբնամասում ձեռակերպված դրույթի և թվարկված կետերի ամբողջության համարեքստում, քանզի, իր կարծիքով, սահմանափակումների թույլատրելիության այդպիսի աստիճանը ՆՏ Սահմանադրության հետ հակասության չի հանգեցնում, այլ, ընդհակառակը, ամրագրելով բուն ձեռնարկարկական գործունեությանը զբաղվելու արգելքը՝ միաժամանակ թույլատրելի է համարվում բնականոն գույքային շրջանառությանը մասնակցելը՝ առանց ձեռնարկարկական գործունեությանը զբաղվելու իրավունքի (օրինակ՝ բաժնեպատմաների ձեռքբերում): Ընդ որում, այդպիսի մասնակցությունն էլ իր հերթին կրում է սահմանափակ բնույթ՝ այդ թվում ՆՏ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով:

4. Դիմումում վիճարկվող ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածն ուժը կորցրել է ՆՏ Ազգային ժողովի կողմից 28.11.2007թ. ընդունված ՆՏ ՆՕ-277-Ն օրենքով: Բացի դրանից, վիճարկվող 159-րդ հոդվածը զեպտեղված էր ՆՏ

քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխում, որը ՄՍՍՍ սահմանադրական դատարանն իր 28 նոյեմբերի 2007թ. ՄԴՈ-719 որոշմամբ ՄՍՍՍ սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել: «Սահմանադրական դատարանի մասին» ՄՍՍՍ օրենքի 60-րդ հոդվածին և 32-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան սահմանադրական դատարանի կողմից գործի վարույթը ենթակա է կարճման, եթե դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի որոշումը:

5. Սահմանադրական դատարանը գործի ուսումնասիրության արդյունքներով գտնում է, որ ՄՍՍՍ դատական օրենսգրքի վիճարկվող 94-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «ավանդապուր» բառից հետո՝ ամբողջությամբ, և 3-րդ մասի նորմերը ՄՍՍՍ ընդհանուր իրավասության դատարանների կողմից դիմողների նկատմամբ չեն կիրառվել:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՄՍՍՍ սահմանադրության 101-րդ - հոդվածի 6-րդ մասի՝ «...իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի...», ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՄՍՍՍ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասում պարունակվող «...և չի կիրառվել» բառակապակցություններում «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետևանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման փաստակցության չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»:

ՄՍՍՍ սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասին և «Սահմանադրական դատարանի մասին» ՄՍՍՍ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան անհատական դիմում կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններում դատավարության կողմ հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որևէ օրենքի դրույթ, որն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, և որը գտնում է, որ փվյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը: «Սահմանադրական դատարանի մասին» ՄՍՍՍ օրենքի 60 և 32-րդ հոդվածներին համապատասխան՝ գործի քննությունը ենթակա է կարճման, եթե դիմումը չի համապատասխանում նշված պահանջներին:

6. Դիմողների կողմից վիճարկվող՝ «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՄՍՍՍ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «... քաղաքացիները կամ իրավաբանական անձինք ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի նկատմամբ իրավունքների ճանաչման նպատակով, ըստ դրանց գտնվելու վայրի, պետք է դիմեն անշարժ գույքի կադաստր վարող պետական մարմնի փարաժային սպորաբաժանումներ»:

ՏՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետը եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասն անձին իրավունք են փալիս դիմել սահմանադրական դատարան ոչ թե ցանկացած օրենքի, այլ միայն իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցով:

Ինչ վերաբերում է վիճարկվող դրույթների սահմանադրականության հարցին՝ իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, ապա դիմողներն այս կապակցությամբ ըստ էության բարձրացնում են ոչ թե իրավակիրառական պրակտիկայում սրացած բովանդակությանը համապատասխան նշված դրույթների սահմանադրականությունը որոշելու հարց, այլ այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց:

7. Նամաձայն ՏՏ Սահմանադրության 19 հոդվածի՝ անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման անհրաժեշտություն ծագում է այն դեպքում, երբ նա խնդիր ունի վերականգնելու իր ենթադրյալ խախտված իրավունքները: Սահմանադրական այս դրույթի հիմքում ընկած է այն փրամաբանությունը, որ յուրաքանչյուր դեպքում անձն իր՝ դատարան դիմելու իրավունքը կարող է իրացնել միայն այն դեպքում, երբ փվյալ գործի առնչությամբ ունի իրավական շահագրգռվածություն: Սահմանադրական այս դրույթին համահունչ՝ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 2-րդ հոդվածի 1-ին մասը դատարան դիմելու իրավունքը վերապահել է շահագրգիռ անձին, այն է՝ անձին, ում իրավունքները ենթադրաբար խախտվել են:

Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, եւ յուրաքանչյուր կոնկրետ գործով, ելնելով փվյալ գործի կոնկրետ հանգամանքներից, գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս հասկացությունը եւ պարզելու, թե արդյո՞ք փվյալ անձը գործի ելքում ունի իրավական շահագրգռվածություն:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմումում շարադրված փաստարկները, ինչպես նաեւ դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում են, որ խնդիրը վերաբերում է ոչ թե վկայակոչվող նորմերի սահմանադրականությանը, այլ դատական կարգով բողոքարկման առարկա դարձած առանձին ենթաօրենսդրական ակտերի (մասնավորապես, Երեւանի քաղաքապետի 2005թ. հոկտեմբերի 14-ի թիվ 2191-Ա որոշման, դրա հիման վրա կնքված առուվաճառքի պայմանագրի) օրինականությանն ու օրենքների ճիշտ կիրառմանը, որոնց գնահատման եւ դրանց առնչությամբ որոշում կայացնելու լիազորություն սահմանադրական դատարանը չունի:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի, ՆՏ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «ավանդաբու» բառից հետո՝ ամբողջությամբ, եւ 3-րդ մասի, ինչպէս նաեւ «Ինքնական կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՆՏ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով գործի վարույթը կարճել՝ հիմնվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32 հոդվածի 3-րդ մասի, 60 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի եւ 69 հոդվածի 1-ին եւ 7-րդ մասերի վրա:

2. ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը:

3. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

4 սպրիլի 2008 թվականի
ՍԳ-Ո- 747

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՅԻՆՆԵՐ ԱՐՄԵՆ ՆԱՄԱՄՋՅԱՆԻ, ԱԻԴԱ ՔՈՉԱՐՅԱՆԻ,
ԻՐԻՆԱ ՕԳԱՆԵԶՈՎԱՅԻ, ԱՆՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԵՎ
ԱԳՆԵՍԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՆՏ ՕՐԵՆՔԻ 68
ՆՈՂՎԱԾԻ 10-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ 12-ՐԴ
ՄԱՍԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

15 ապրիլի 2008թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի (զեկուցող), Վ. Նով-
հաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,
մասնակցությամբ՝

դիմողներ՝ քաղ. Աիդա Քոչարյանի և Իրինա Օգանեզովայի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի պաշտո-
նական ներկայացուցիչ՝ ՆՏ ԱԺ աշխատակազմի օրենսդրության վերլուծության
վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն ՆՏ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ
կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 25, 38 և 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Արմեն
Նամանջյանի, Աիդա Քոչարյանի, Իրինա Օգանեզովայի, Աննա Բաղդասարյանի և
Ազնեսա Բաղդասարյանի դիմումների հիման վրա՝ «Սահմանադրական դատարանի
մասին ՆՏ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության և 12-րդ մասի՝ Նայաս-
տանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որո-
շելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Արմեն Նամանջյանի, Աիդա
Քոչարյանի, Իրինա Օգանեզովայի, Աննա և Ազնեսա Բաղդասարյանների դիմումներն
են սահմանադրական դատարան, որոնց հիման վրա, ղեկավարվելով «Սահմանադրա-

կան դափարանի մասին» ՆՇ օրենքի 39 հոդվածով, մինչև դափարանությունն սկսվելը գործերը միավորվել են դափարանի նույն նիստում քննելու համար:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, կողմերի գրավոր բացատրությունները, լսելով պալատախանոդ կողմի լրացուցիչ պարզաբանումները, հեղափոխելով «Սահմանադրական դափարանի մասին» ՆՇ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերությունը եւ 12-րդ մասը ու գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դափարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. «Սահմանադրական դափարանի մասին» ՆՇ օրենքն ընդունվել է Նայասպանի Նանրապետության Ազգային ժողովի կողմից 2006 թվականի հունիսի 1-ին, ՆՇ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2006 թվականի հունիսի 14-ին եւ ուժի մեջ է մտել 2006 թվականի հուլիսի 1-ից:

«Սահմանադրական դափարանի մասին» ՆՇ օրենքի 68 հոդվածը վերնագրված է «Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործերի քննությունը Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին, 3, 4 եւ 8-րդ կետերում նշված մարմինների եւ անձանց դիմումների հիման վրա (իրավական նորմերի սահմանադրականության վերացական վերահսկողություն)», որի 10-րդ մասը սահմանում է. «Վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում այն իրավաբանական ուժը կորցնում է սահմանադրական դափարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից, բացառությամբ սույն հոդվածի 12-րդ եւ 13-րդ մասերով սահմանված դեպքերի:

Այդ ակտերի վրա հիմնված սահմանադրական դափարանի որոշման ընդունմանը նախորդող ժամանակահատվածում ընդունված եւ կատարված վարչական կամ դատական ակտերը վերանայման ենթակա չեն:

Չկատարված վարչական եւ դատական ակտերի կատարումը սահմանադրական դափարանի որոշումը հրապարակելուց հետո անհապաղ դադարեցվում է իրավասու վարչական մարմնի կամ դափարանի որոշմամբ»:

Իսկ 68 հոդվածի 12-րդ մասը սահմանում է. «Սույն հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետում նշված որոշումը սահմանադրական դափարանն իրավասու է փարածելու նաեւ այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա, եթե այդպիսի որոշում չընդունելը կարող է հանրության կամ պետության համար առաջացնել ծանր հետեւանքներ:

Սույն մասի առաջին պարբերությունում նշված որոշմամբ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված նորմատիվ ակտի, ինչպես նաեւ այդ ակտի կատարումն ապահոված այլ նորմատիվ ակտերի վրա հիմնված՝ սահմանադրական դափարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող երեք փարիների ընթացքում ընդունված եւ կատարված վարչական կամ դատական ակտերը ենթակա են վերանայման վարչական կամ դատական ակտն ընդունված մարմնի կողմից՝ օրենքով սահմանված կարգով»:

2. Դիմողները սահմանադրական դափարան են ներկայացրել ՏՏ վճռաբեկ դափարանի՝ վերջնական դափարական ակտեր հանդիսացող որոշումներ, որոնցով սույն գործով դիմողների նկատմամբ կիրառվել են «Սահմանադրական դափարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության եւ 12-րդ մասի դրույթները, եւ վիճարկում են այդ դրույթների սահմանադրականությունը:

Ըստ վերջնական դափարական ակտերի՝ ՏՏ վճռաբեկ դափարանը, քննելով Ա. Նամանջյանի վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դափարանի 13.02.2007թ. որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու մասին դիմումը, ինչպես նաեւ Ա. Քոչարյանի, Ի. Օզանեզովայի, Աննա եւ Ազնեսա Բաղդասարյանների վճռաբեկ բողոքները վերադարձնելու մասին վճռաբեկ դափարանի 05.02.2007թ. եւ 07.02.2007թ. որոշումները նոր հանգամանքի հիմքով վերանայելու դիմումները, իր 02.08.2007թ. եւ 18.06.2007թ. որոշումներով դրանք մերժել է:

Վճռաբեկ դափարանը մերժումը պարճառաբանել է նրանով, որ ՏՏ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 241.1 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նոր հանգամանքներով վճիռների եւ որոշումների վերանայման համար հիմք է ՏՏ սահմանադրական դափարանի՝ ուժի մեջ մտած որոշումը, որով ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր է ճանաչվել այն օրենքը կամ իրավական ակտը, որը կիրառել է դափարանը (տվյալ դեպքում՝ ՏՏ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետը, որը սահմանադրական դափարանի 09.04.2007թ. որոշմամբ հակասահմանադրական է ճանաչվել):

Վճռաբեկ դափարանն իր որոշումներով պարճառաբանել է, որ սահմանադրական դափարանի՝ դիմողների կողմից վկայակոչված 09.04.2007թ. որոշումն ուժի մեջ է մտել կայացման պահից, իսկ սահմանադրական դափարանն այն չի փարածել դրա ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա, հեպեաբար՝ այն տվյալ քաղաքացիական գործերով որպես նոր հանգամանք չի կարող հանդիսանալ:

Մասնավորապես, Ա. Նամանջյանը 12.11.2007թ. դիմել է սահմանադրական դափարան, գտնելով, որ «Սահմանադրական դափարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության՝ իր նկատմամբ կիրառված դրույթը հակասում է ՏՏ Սահմանադրության 3 եւ 6 հոդվածների 1-ին եւ 2-րդ մասերի, 18 եւ 19 հոդվածների 1-ին մասերի պահանջներին, ուստի խնդրում է այն անվավեր ճանաչել:

Դիմողն իր դիրքորոշումը հիմնավորում է նրանով, որ դրանից առաջ դիմել էր սահմանադրական դափարան՝ խնդրելով անվավեր ճանաչել ՏՏ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետը, սակայն դիմումը քննության չէր ընդունվել այն պարճառաբանությամբ, որ սահմանադրական դափարանի 09.04.2007թ. որոշմամբ արդեն իսկ քննվել էր սույն հոդվածի սահմանադրականության հարցը:

Դիմողներ Ա. Քոչարյանը, Ի. Օզանեզովան, Աննա եւ Ազնեսա Բաղդասարյանները 19.12. 2007թ. դիմել են սահմանադրական դափարան՝ գտնելով, որ «Սահմանադրական դափարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 12-րդ մասի՝ իրենց նկատմամբ կիրառված դրույթը հակասում է ՏՏ Սահմանադրության 3, 14.1., 18 եւ 19 հոդվածների պահանջներին, ուստի խնդրում են այն անվավեր ճանաչել:

Դիմողներն իրենց դիրքորոշումը հիմնավորում են նրանով, որ դրանից առաջ իրենք նախապես են դիմել սահմանադրական դատարան՝ ՆՏ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետին անվավեր ճանաչելու խնդրանքով, սակայն սահմանադրական դատարանի 09.04.2007թ. որոշմամբ արդեն իսկ լուծվել էր նշված հոդվածի սահմանադրականության հարցը, ուստի դրա հնարավորությունը բացառվեց, քանի որ առկա է «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32 հոդվածով նախապեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքը:

Դիմողները գտնում են, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության եւ 12-րդ մասի դրույթները գրկել են իրենց Սահմանադրության 18 եւ 19 հոդվածների 1-ին մասերի համաձայն իրենց խախտված իրավունքները դատական կարգով վերականգնելու հնարավորությունից:

3. Պատասխանողը գտնում է, որ դիմողների կողմից բերված հիմնավորումներն անհիմն են եւ դիմումները ենթակա են մերժման հետեւյալ պատճառաբանությամբ.

1) «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի դրույթները, համակարգային առումով փոխկապակցված լինելով նույն հոդվածի 12-րդ - մասի դրույթների հետ, երաշխավորում են Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարումը: Սահմանադրական վերահսկողության այս ձեւի կիրառումը, որը հիմնվում է իրավական ակտի հակասահմանադրականության մասին որոշման ընդունումից հետո ծագող իրավահարաբերությունների վրա փարածելու պայմանի վրա, բխում է Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասում ամրագրված նորմի բովանդակությունից, քանի որ ըստ ժամանակի մեջ գործողության հիմքի՝ սահմանադրական դատարանի որոշումները ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Այս մոտեցումը բխում է նաև Սահմանադրության 42 հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերի պահանջներից, քանի որ իրավական ակտի հակասահմանադրական ճանաչելու մասին սահմանադրական դատարանի որոշումը, ըստ էության, հանդիսանում է անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտի եւ, հետեւաբար, այն կարող է հետադարձ ուժ ունենալ, եթե միայն դա նախապեսված է այդ ակտերով:

2) Ըստ պատասխանող կողմի՝ կարելի էր սահմանադրական դատարանի որոշման հետեւանքով առաջացող հնարավոր իրավիճակների սահմանադրականության խնդիրը, օրենսդիրը, միաժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 10-րդ եւ 12-րդ մասերի ուժով սահմանադրական դատարանին օժտել է դատական ակտին հետադարձ ուժ փախու հայեցողական իրավագործությամբ: Բնականաբար, նման որոշումների առկայությունը ենթադրում է վերականգնել մինչև որոշման ընդունման պահն առկա հարաբերությունները, բայց ակնհայտ է, որ՝ առանց բացառող պայմանների, սահմանադրական դատարանի ակտին հետադարձ ուժով օժտելը գործնական առումով կարող է հանգեցնել երկրում իրավական անվտանգության խաթարմանն ու անլուծելի իրավիճակների առաջացմանը: Եվ այս փրամաբանությամբ օրենսդիրը «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 12-րդ մասի ուժով սահմանափակել է սահմանադրական դատարանի հայեցողական մոտեցումների շրջանակները,

որը նպատակ է հետապնդում ապահովել հանրության եւ պետության օրինական շահերի պաշտպանությունը՝ չպարճառելով էական վնասներ մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներին ու ազատություններին:

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այս կամ այն վիճարկվող ակտը կամ դրա դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ իր որոշման իրավական հետեւանքները կապվում են ոչ միայն փոխյալ ակտի, այլ նաեւ դրա հիման վրա կայացված դատական կամ վարչական ակտերի իրավական հետեւանքների, այդ ակտերի հիման վրա մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների եւ ազատությունների ապահովման ու պաշտպանության հետ՝ որպես անմիջական գործող իրավունք: Ներեւաբար, «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերությունում եւ 12-րդ ու 13-րդ մասերում ամրագրված դրույթներով կանոնակարգվել են սահմանադրական դատարանի՝ նման որոշումների իրավական հետեւանքներն այն դատական եւ վարչական ակտերի համար, որոնք կայացվել են մինչեւ սահմանադրական դատարանի համապատասխան որոշման ընդունումը: Ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության՝ սահմանադրական դատարանի որոշումները, որպես ընդհանուր կանոն, չունեն հետադարձ ուժ եւ չեն փարաձվում մինչ սահմանադրական դատարանի որոշման ընդունումը ծագած եւ դատական կամ վարչական ակտերով կարգավորված իրավահարաբերությունների վրա: Ընդ որում, եթե կատարված դատական կամ վարչական ակտերը վերանայման ենթակա չեն, ապա չկատարված վարչական կամ դատական ակտերը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 3-րդ պարբերության՝ ենթակա չեն կատարման եւ դրանց կատարումն անհավաղ դադարեցվում է իրավասու վարչական մարմնի կամ դատարանի որոշմամբ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 12-րդ եւ 13-րդ մասերը նախատեսում են վերոհիշյալ ընդհանուր կանոնից բացառություններ՝ փարբերակված մոտեցում դրսևորելով քաղաքացիաիրավական եւ քրեաիրավական հարաբերություններին: Օրենքի 68 հոդվածի 12-րդ մասով նախատեսված բացառության համաձայն՝ սահմանադրական դատարանի հայեցողությանն է թողնված իր որոշումներին հետադարձ ուժ փալու հարցը: Նույն մասը որոշակի սահմաններ է նախատեսում սահմանադրական դատարանի այդ հայեցողության իրացման համար, այն է՝ սահմանադրական դատարանը կարող է իր այս հայեցողությունից օգտվել այն դեպքում, երբ իր որոշմանը հետադարձ ուժ չտալը հանրության կամ պետության համար կարող է առաջացնել ծանր հետեւանքներ: Ինչպես նաեւ սահմանադրական դատարանի նման որոշման հիման վրա վերանայման ենթակա են այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող միայն երեք փարիների ընթացքում ընդունված եւ կատարված վարչական կամ դատական ակտերը:

Նույն հոդվածի 13-րդ մասով նախատեսված բացառությունը վերաբերում է սահմանադրական դատարանի այն որոշումների հետադարձ ուժին, որոնք Սահմանադրությանը հակասող եւ անվավեր են ճանաչում քրեական օրենսգրքի կամ վարչական պա-

տասխանաբերության վերաբերյալ օրենքի վիճարկվող դրույթը: Այս բացառությունը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ քրեական եւ վարչական պատասխանաբերություն նախատեսող դատական ակտերն անձի փաստացի վիճակի վրա ազդեցության առումով ունեն առանձնակի նշանակություն: Մասնավորապես, այս դեպքում հաշվի է առնվել անձի նկատմամբ քրեական օրենսգրքով կամ վարչական պատասխանաբերության վերաբերյալ օրենքով հարկադրանքի միջոց կիրառելու եւ դրանից բխող հետեւանքների առկայությունը եւ դրանց վերացման իրական հնարավորությունը:

Ինչպես վիճարկվող դրույթում ամրագրված ընդհանուր կանոնի, այնպես էլ վերոհիշյալ բացառությունների հիմքում ընկած է հետեւյալ տրամաբանությունը. սահմանադրական դատարանի որոշումներին հեղադարձ ուժ կարող է տրվել այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է որոշակի կենսական շահերի պաշտպանության նպատակով, եւ երբ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դատարանը, քննության առնելով այդ կենսական շահերի պաշտպանության անհրաժեշտության հարցը, հիմնավորված եւ պարճառաբանված որոշում է կայացնում իր որոշմանը հեղադարձ ուժ տալու մասին:

5. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածն ունի այն բնորոշ առանձնահատկությունը, որ դրանով կանոնակարգվում են իրավական նորմերի վերացական սահմանադրական վերահսկողությանն առնչվող իրավահարաբերությունները: Անհատական դիմումների քննությանը կամ կոնկրետ սահմանադրական վերահսկողությանն առնչվող իրավահարաբերությունները կանոնակարգվում են օրենքի 69 հոդվածով: Սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ 69 հոդվածի 11-րդ մասի հղումն օրենքի 68 հոդվածի 6-17-րդ մասերին խորությամբ հաշվի չի առել վերացական ու կոնկրետ սահմանադրական վերահսկողության նպատակն ու առանձնահատկությունները: Մասնավորապես, դա վերաբերում է սահմանադրական դատարանի որոշման հեղադրձության ինստիտուտի առանձնահատկություններին՝ վերացական ու կոնկրետ սահմանադրական վերահսկողության պարագաներում: Եթե նախնական եւ հետագա վերացական սահմանադրական վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում Սահմանադրության գերակայության երաշխավորումը՝ իրավական համակարգում օրենքների եւ այլ նորմատիվ ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունն ապահովելու ճանապարհով, ապա անհատական դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ վերահսկողության նպատակը Սահմանադրության դրույթների անմիջական գործողության երաշխավորումն է, մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների ապահովումն ու պաշտպանությունը: Ներքառաբար, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածի պահանջները հաշվի առնելով, սահմանադրական դատարանը քննության առարկա հարցի վերաբերյալ հստակ իրավական դիրքորոշում կարող է արտահայտել միայն անձի նյութական եւ դատավարական իրավունքների պաշտպանության փաստակցունից վիճարկվող դրույթները «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 11 եւ 12-րդ մասերի, ինչպես նաեւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3² բաժնի (մասնավորապես՝ 204²⁰ հոդվածի) դրույթների հետ համադրության մեջ դիտարկելով միայն:

6. Սահմանադրական դատարանի կողմից իրականացվող կոնկրետ վերահսկողությանը, մասնավորապես, բնորոշ է իրավական ակտի սահմանադրականության մասին որոշման փարածույնը փվյալ գործին առնչվող իրավահարաբերությունների վրա: Կոնկրետ վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում նաև անհատական շահերի պաշտպանության խնդիրը: Այս բնորոշ գծերին համահունչ՝ ՏՏ ներպետական օրենսդրությունը նախատեսել է շահագրգիռ անձի անհատական դիմումի հիման վրա ընդունված՝ սահմանադրական դատարանի որոշման արդյունքում փվյալ դիմողի առնչությամբ կայացված դատական ակտի վերանայման հնարավորությունը, ինչը լիարժեքություն է արդյունավետություն է հաղորդում սահմանադրական դատարանում անհատական դիմումի հիման վրա անձի սահմանադրական իրավունքների՝ որպես անմիջականորեն գործող իրավունքների, պաշտպանությանը: Մասնավորապես, օրենքի 69 հոդվածի 12-րդ - մասը նախատեսում է դիմողի կողմից փճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող է անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունվելու դեպքում դիմողի նկատմամբ կիրառված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով վերանայելու հնարավորությունը: ՏՏ քաղաքացիական դատավարության է քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան հոդվածներով սահմանված է սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա դատական ակտերի վերանայման կարգը:

Օրենսդրական նման կարգավորումը հնարավորություն է փալիս սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացրած անձին լիարժեքորեն իրացնելու իր իրավունքները է ատպահովում է սահմանադրական դատարանում անձի սահմանադրական իրավունքների պաշտպանության արդյունավետությունը:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ ՏՏ դատարանների կողմից ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախկին 241¹ հոդվածի (որն ընդունվել էր ըստ 21.02.07թ. «ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն է լրացումներ կատարելու մասին» ՏՏ օրենքի է ուժը կորցրել ըստ 28.11.07թ. «ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն է լրացումներ կատարելու մասին» ՏՏ օրենքի) է «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի կիրառման առնչությամբ ձեւավորվել էր իրավակիրառական պրակտիկա, որը հիմնվում էր վերոհիշյալ 241¹ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքով նախատեսված դեպքերում» դրույթի մեկնաբանության վրա: Ըստ որոշ մեկնաբանությունների՝ այդ նախադասությունը հիմք էր փալիս եզրակացնելու, որ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի հիման վրա դատական ակտի վերանայումը էս հնարավոր է միայն այն դեպքում, էր սահմանադրական դատարանն օրենքի 68 հոդվածի 12-րդ մասի ուժով հետադարձ ուժ է փվել իր որոշմանը՝ այն փարածելով այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա: Մինչդեռ այս մեկնաբանությունը ոչ միայն անընդունելի է, այլ նաև անիմաստ է դարձնում սահմանադրական դատարանի միջոցով անձի խախտված իրավունքների պաշտպանության զաղափարը, քանզի օրենսգրքի 241¹ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի վերոհիշյալ նախադասության մեջ ամրագրված «դեպք» բառը ներառում էր ոչ միայն օ-

րենքի 68 հոդվածի 12-րդ մասով նախատեսված դեպքը, այլ նաև օրենքի 69 հոդվածի 12-րդ մասով նախատեսված դեպքը:

7. Վերացական եւ կոնկրետ սահմանադրական վերահսկողության առանձնահատկություններով է պայմանավորված նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ եւ 69 հոդվածի 12-րդ մասերի միջև եղած «անհամապատասխանությունը»: Մասնավորապես, օրենքի 68 հոդվածի 10-րդ մասը սահմանում է ընդհանուր կանոն, որից բացառություն է անում նույն հոդվածի 12-րդ եւ 13-րդ մասերով նախատեսված դեպքերում միայն, այդ ցանկում չներառելով օրենքի 69 հոդվածի 12-րդ - մասը: Մինչդեռ օրենքի 69 հոդվածի նշված մասն ամրագրում է, որ օրենքի՝ դիմողի կողմից վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունվելու դեպքում դիմողի նկատմամբ կիրառված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման: Այսինքն՝ այս նորմը եւս բացառություն է օրենքի 68 հոդվածի 10-րդ մասով սահմանված ընդհանուր կանոնից, բնորոշ է կոնկրետ վերահսկողությանը, որի մասին, բնականաբար, հիշատակում չէր կարող լինել 68 հոդվածում, որն էլ իր հերթին քարաբնույթ մեկնաբանությունների հնարավորություն է փակիս: Եվ եթե ձեռավորված իրավակիրառական պրակտիկայի արդյունքում ընդհանուր իրավասության դատարանների կողմից շարունակվի նախապարվությունը փակ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասին՝ անդրադառնալով 69 հոդվածի 12-րդ մասի պահանջը, ապա ընդհանրապես անիմաստ կդառնա սահմանադրական դատարան անհատական դիմումներ ներկայացնելը:

8. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ օրենքի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը պարզում է նաև այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված փոխապատասխան այլ դրույթների սահմանադրականությունը: Սահմանադրական դատարանը, այդ հոդվածին համապատասխան, հարկ է համարում անդրադառնալ վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի սահմանադրականության հարցին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ այս դրույթի հիման վրա դատարանների կողմից վերանայվում են միայն այն անձանց առնչությամբ կայացված դատական ակտերը, որոնց դիմումի հիման վրա սահմանադրական դատարանն ընդունել է օրենքի կիրառված դրույթի՝ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում:

Նշված իրավակիրառական պրակտիկայի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի, ինչպես նաև 32 հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասերի համադրված վերլուծությունը վկայում է, որ այն անձինք, որոնց համար դեռևս չի լրացել սահմանադրական դատարան դիմելու համար օրենքով սահմանված վեցամսյա

ժամկետը, գրկվում են սահմանադրական դատարան դիմելու միջոցով իրենց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանությունն իրականացնելու հնարավորությունից:

Վերոհիշյալ իրավակիրառական պրակտիկան արդյունք է նաեւ նրա, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասում օգտագործված «դիմող» եզրույթի բովանդակությանը քրվել է սահմանափակ մեկնաբանություն:

«Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի՝ «Սահմանադրական դատավարության մասնակիցները» վերբառությամբ 44 հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ «Սահմանադրական դատավարության մասնակիցներն են դատավարության կողմերը՝ դիմողը՝ սույն օրենքի 25-րդ հոդվածին համապատասխան՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող մարմինները եւ անձինք»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 25 հոդվածի համաձայն՝ «Սահմանադրությամբ եւ սույն օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են դիմել Սահմանադրության 101-րդ հոդվածով նախատեսված մարմինները եւ անձինք, ընդ որում, Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետում նշված դեպքում սահմանադրական դատարան կարող են դիմել նաեւ իրավաբանական անձինք՝ Սահմանադրության 42.1-րդ հոդվածին համապատասխան»:

Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակարդ, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակարդ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը:

Սահմանադրության եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի վերոհիշյալ դրույթներից բխում է, որ այն ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ովքեր Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով կոնկրետ գործով իրավասու են վիճարկել այդ ակարդ իրենց նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը, համարվում են սահմանադրական դատարան դիմելու իրավունքի սուբյեկտներ: Տվյալ դեպքում «դիմող» հասկացությունը պետք է մեկնաբանվի լայն իմաստով եւ անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրացումը պետք է օրենսդրորեն երաշխավորված լինի:

9. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետը երաշխավորում է անձի՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, օրենքով այդ իրավունքն իրացնելու համար սահմանվում է վեցամսյա ժամկետ, սակայն, գործնականում սրեղծվում է մի այնպիսի իրավիճակ, երբ մեկ այլ անձի կողմից իր իրավունքների պաշտպանության նպատակով սահմանադրական դատարան դիմելը խոչընդոտում է անձին իրացնելու իր՝ սահմանադրական դատարան դիմելու սահմանադրական իրավունքը: Այսինքն՝ մի անձի իրավունքի իրացումը կանխվում է մեկ այլ

անձի կողմից իր իրավունքի իրացման փաստով, ինչի արդյունքում նրանց միջև սպեղծվում է նաեւ անհավասար վիճակ:

Սահմանադրական իրավունքների պաշտպանության նպատակով սահմանադրական դատարանն ղիմելու՝ սահմանադրական արդարադատության իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտությունը պահանջում է, որպեսզի այդ իրավունքի իրացումը կախվածության մեջ չդրվի փոխյալ անձի կամքից անկախ առաջացած որեւէ հանգամանքից: Ներելաբար, յուրաքանչյուր անձ պետք է հնարավորություն ունենա օրենքով սահմանված վեցամսյա ժամկետում օգտվելու սահմանադրական դատարանի միջոցով քրամադրվող իրավական պաշտպանությունից: Նման հնարավորությունը կարող է ապահովվել միայն այն դեպքում, երբ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերանայվեն նաեւ այն անձանց առնչությամբ կայացված դատական ակտերը, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման եւ փոխյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցով սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջև ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետով երաշխավորված՝ սահմանադրական դատարանն ղիմելու անձի իրավունքի արդյունավետ իրացումը պահանջում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի լիարժեք օրենսդրական կարգավորում, որը հնարավորություն կտա անձին վերականգնելու սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմատիվ ակտի կիրառման արդյունքում խախտված իր սահմանադրական իրավունքը: Դա նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասի պահանջն է, քանի որ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս պետք է հաշվի առնվեն նաեւ մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման եւ պաշտպանության ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը, Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը: Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքների հիման վրա դատական ակտի վերանայման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը պետք է լինի ինչպես արդարադատության մարչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետության ապահովումը, որոնց օրենսդրորեն հստակեցնելը կմեծացնի վստահությունն արդարադատության նկատմամբ, մարդկանց հնարավորություն կտա առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

Ներելաբար, օրենսդիրը պարտավոր է ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3² բաժնում սահմանել նոր հանգամանքների հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի հստակ իրավակարգավորում, որը կերաշխավորի անձի՝ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետով ամրագրված՝ սահմանադրական դատարանն ղիմե-

լու իրավունքի, ինչպես նաև Սահմանադրության 19 հոդվածում ամրագրված իրավունքների արդյունավետ իրացման հնարավորությունը: Անհրաժեշտ է հստակ ամրագրել նաև այն անձանց վերաբերյալ դատական ակտերը վերանայելու օրենսդրական պահանջ, որոնք թեև սահմանադրական դատարանում չեն հանդիսացել դատավարության կողմ, սակայն սահմանադրական դատարանում իրենց գործի քննության հնարավորությունից զրկված են եղել «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 32 հոդվածի 3-րդ - կամ 5-րդ մասերի ուժով: Այլապես, սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, ինչպես նաև խախտված իրավունքների՝ սահմանադրական դատարանի միջոցով դատական պաշտպանության իրավունքը կդառնան անիրական եւ երեսութական՝ գուրկ լինելով արդյունավետ իրացման հնարավորությունից:

10. Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ համաձայն 28.11.07թ. ընդունված եւ 01.01.08թ. ուժի մեջ մտնող «ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՏՏ օրենքի, նախկին 241¹ հոդվածը փոխարինվել է 204²⁰ հոդվածով, որի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է.

«1. Նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման համար հիմք են՝

1) Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանի՝ ուժի մեջ մտնող որոշումը, որով ամբողջությամբ կամ մի մասով հակասահմանադրական է ճանաչվել այն օրենքը կամ այլ իրավական ակտը, որը կիրառել է դատարանը...»:

Փաստորեն, ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը դիտարկում է սահմանադրական դատարանի համապատասխան որոշումները որպես դատական ակտերի վերանայման հիմք՝ **անկախ որևէ հանգամանքից եւ առանց որևէ բացառության կամ վերապահման:** Մյուս կողմից, շարունակում է գործել այն իրավակիրառական պրակտիկան, երբ քաղաքացիների նկատմամբ «նոր հանգամանքներով վճիռների եւ որոշումների վերանայման» ինստիտուտը չի կիրառվում բոլոր այն դեպքերում, երբ սահմանադրական դատարանը հետադարձություն չի արվել իր որոշմանը՝ անկախ այն բանից, թե վերացական կամ կոնկրետ սահմանադրական վերահսկողություն է իրականացվել:

Վիճարկվող դրույթների եւ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3² բաժնի (մասնավորապես՝ 204²⁰ հոդվածի) դրույթների համակարգային վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն անձի՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքի իրացման արդյունավետության փաստակցությունից կարելու է ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքով՝ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի կարգի սահմանումը, որը, նախ՝ չի խաթարի երկրի իրավական անվտանգությունն ու քաղաքացիական շրջանառության կայունությունը, ինչպես նաև լիարժեք հնարավորություն կտա անձին սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերականգնելու հակասահմանադրական նորմի կիրառման արդյունքում խախտված իր իրավունքը: Բացի վերոշարադրյալից, խնդիրը վերաբերում է նաև այն բանին, որ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հա-

մապարտասխան բաժնի նոր խմբագրությամբ (204²² հոդված) սահմանադրական դատարանի որոշման հիմքով փաստորեն վերանայման ենթակա են բոլոր այն դատական ակտերը, որոնք օրինական ուժի մեջ են մտել 20 տարուց ոչ վաղ: Այսինքն՝ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանադրական դատարանի որոշման ուժը պարաժուս է 20-ամյա վաղեմությամբ իրավահարաբերությունների վրա: Ակնհայտ է, որ նշված նորմը հակասում է «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասին, իսկ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՆՏ օրենքի 3 հոդվածի 2-րդ կետի՝ «2. Իրավական ակտը չպետք է հակասի հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին»: Ըստ «Իրավական ակտերի մասին» ՆՏ օրենքի 9 հոդվածի 6-րդ կետի՝ «6. Օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Նայաստանի Նանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին» (տվյալ դեպքում «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի դրույթները պետք է համապատասխանեն ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթներին, չնայած այն բանին, որ ՆՏ Ազգային ժողովը 2007թ. փետրվարի 21-ին փոփոխություն կատարելով ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241¹ հոդվածի 1-ին մասում, շեշտել էր, որ նոր հանգամանքների ինստիտուտը կիրառվում է «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքով նախատեսված դեպքերում: 2007թ. նոյեմբերի 28-ի փոփոխությունների արդյունքում օրենսգրքից այս նորմը նույնպես հանվեց):

Սույն կանոնն ամրագրված է նաև ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1 հոդվածի 1-ին մասում. «1. Նայաստանի Նանրապետության դատարաններում... քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Նայաստանի Նանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենսգրքով եւ դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով:

Այլ օրենքներում... պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին, իսկ հակասության դեպքում կիրառվում են սույն օրենսգրքի նորմերը»:

Նաջորդ խնդիրը կայանում է հետևյալում: ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204²⁰ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթը, որի համաձայն՝ «նոր հանգամանքներով վերանայման ենթակա են **առաջին ափյանի դատարանների դատական ակտերը**», կարող է խոչընդոտներ ստեղծել անձի խախտված իրավունքները սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերականգնելու համար, քանզի առանձին դեպքերում անձի խախտված իրավունքների՝ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերականգնումը կարող է պահանջել վերաքննիչ դատարանի կամ վճռաբեկ դատարանի որոշումների վերանայում: Նաշվի առնելով վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների լիազորությունները՝ հնարավոր են իրավիճակներ, երբ խախտված իրավունքների՝ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերականգնման համար ընդհանրապես չպահանջվի առաջին ափյանի դատարանի դատական ակտի վերանայում, եւ խախտված իրավունքը հնարավոր չլինի վերականգնել առանց վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանի ընդունած դատական ակտի վերանայման:

Ոստի սահմանադրական դափարանը գտնում է, որ օրենսդիրը ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3² բաժնում համապատասխան փոփոխությունների միջոցով պարտավոր է կարգավորել նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման գործող կարգը՝ այն հաշվով, որպեսզի չխաթարվի իրավական անվտանգությունը, եւ քաղաքացիները լիարժեքորեն կարողանան վերականգնել հակասահմանադրական նորմի կիրառման հետեւանքով խախտված իրենց իրավունքները:

Սահմանադրական դափարանը նման օրենսդրական փոփոխության անհրաժեշտությունը կարելու է նաեւ այն պեսանկյունից, որ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204²⁰ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթն իրավակիրառական պրակտիկայում կարող է լուրջ խոչընդոտներ հարուցել ոչ միայն սահմանադրական դափարանի որոշումների հիման վրա անձանց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների վերականգնման կամ պաշտպանության համար, այլ նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դափարանի վճիռների հիման վրա անձանց կոնվենցիոն իրավունքների վերականգնման եւ պաշտպանության, հետեւաբար՝ նաեւ Եվրոպական դափարանի վճիռները կատարելու՝ Նայասպանի Նանրապետության սրանձնած պարտավորության բարեխիղճ կատարման համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից, նկատի ունենալով Նայասպանի Նանրապետության Ազգային ժողովի կողմից 2007 թվականի փետրվարի 21-ին եւ նոյեմբերի 28-ին ընդունված օրենքներով ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների փոփոխություններն ու լրացումները, ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դափարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դափարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Սահմանադրական դափարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության եւ 12-րդ մասի դրույթները համապատասխանում են Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

Դիմողը, մասնավորապես, մատնանշում է, որ Նայասարանի Նանրապետությունը, իրեն հռչակելով որպես իրավական պետություն, Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով հստակ նախատեսում է երաշխավորում է յուրաքանչյուր անձի՝ իր խախտված իրավունքները դատական կարգով պաշտպանելու իրավունքը՝ օրենքով սահմանված կարգով ու ծավալով:

Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթում թերությունները վերացնելու եւ վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար վճռաբեկ դափարանի կողմից ժամկետների սահմանումը պետք է հետապնդի դատական պաշտպանության իրավունքի իրականացման ապահովման, այլ ոչ թե այդ իրավունքի սահմանափակման նպատակ: Ժամկետը չսահմանելը չի կարող բացառել օրենքով, իսկ սահմանված ժամկետում թերությունները վերացնելու եւ վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու իրավունքը (առնվազն մեկ անգամ՝ բարեխղճորեն օգտվելով դատավարական իրավունքներից): Վճռաբեկ դափարանը չի կարող իրագործել թերությունները վերացնելու եւ վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար ժամկետ սահմանելու կամ չսահմանելու իրավունքը՝ առանց պարզառաբանություններ նշելու:

Դիմողի պնդմամբ՝ վիճարկվող դրույթի եւ ՏՃ Սահմանադրության նշված հոդվածների միջեւ հակասությունը կայանում է նրանում, որ վիճարկվող դրույթը պարունակում է վճռաբեկ բողոք ներկայացնելու համար օրենքով նախատեսված սովորական ժամկետներում ընդհանուր կարգով վճռաբեկ բողոք ներկայացնելու սահմանափակում:

4. Առարկելով դիմողի պնդումների դեմ՝ պապասխանող կողմը գտնում է, որ վեճի առարկա նորմը համապատասխանում է ՏՏ Սահմանադրությանը:

Պապասխանողի կարծիքով, վճռաբեկ բողոքը քննության ընդունելուն վերաբերող դատավարական կանոնները նպատակ են հեփապնդում ապահովել ՏՏ Սահմանադրությամբ ամրագրված՝ վճռաբեկ դատարանի գործունեության նպատակի՝ օրենքի միատեսակ կիրառությունը: Վաշվի առնելով, որ վճռաբեկ բողոքը քննության ընդունելու կամ չընդունելու որոշումը կարող է էական նշանակություն ունենալ անձի սահմանադրական իրավունքների իրականացման համար, եւ այն, որ վճռաբեկ բողոքը քննության չընդունելու մասին որոշումը վերջնական դատական ակտ է, օրենսդիրը ՏՏ դատական օրենսգրքի 53 հոդվածի 1-ին մասում սահմանել է բողոքը քննության ընդունելու կամ չընդունելու համար հատուկ ընթացակարգ, ինչը պայմանավորված է անձի իրավունքների դատական պաշտպանության երաշխավորման անհրաժեշտությամբ, եւ իրենից ներկայացնում է բողոքարկողի համար լրացուցիչ դատավարական երաշխիք:

Ըստ պապասխանողի՝ ՏՏ վճռաբեկ դատարանին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով վերապահվել են ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված ՏՏ Սահմանադրության 5 հոդվածի երկրորդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ: Տվյալ դեպքում ՏՏ վճռաբեկ դատարանին, ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 3-րդ մասի համաձայն, վերապահվել է հայեցողական լիազորություն:

Պապասխանողը գտնում է, որ այս մոտեցումները բխում են նաեւ ՏՏ Սահմանադրության 92 հոդվածի դրույթներից, եւ հենց այդ մոտեցումներից ելնելով է, որ օրենսդիրը ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կարարել է համապատասխան փոփոխություններ: Վիճարկվող նորմերը որոշակի են ու հստակ, բխում են դատական համակարգի բարեփոխումների հայեցակարգային մոտեցումներից, համարժեք են արդարադատական համակարգի եվրոպական զարգացումներին:

Միաժամանակ, պապասխանողը՝ անդրադառնալով դատական համակարգի զարգացման բնագավառում Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականներին, արել է այն հիմնական հեփետությունը, որ փարբեր մոտեցումներ են ցուցաբերվում դատական փարբեր ափյանների իրավասությունների սահմանման ու դրանց իրականացման կարգերի նկատմամբ, ընդ որում, երրորդ ափյանի դատարան բողոքներ պեփք է բերվեն առաջին հերթին այնպիսի գործերով, որոնք կարող են նպաստել իրավունքի զարգացմանը կամ կարող են նպաստել օրենքի միանման մեկնաբանմանը: Այդ շրջանակը կարող է նաեւ նեղացվել այն գործերի վերաբերյալ բողոքներով, որոնք առնչվում են իրավունքի այնպիսի հարցերի, որպիսիք ողջ հասարակության համար կարեւորություն չեն ներկայացնում:

5. Դիմողի փաստարկները հիմնականում առնչվում են ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ վճռաբեկ բողոքի թերությունները վերացնելու համար վճռաբեկ դատարանի կողմից ժամկետ սահմա-

ներու հայեցողական լիազորության վերաբերյալ դրույթին, որի սահմանադրականության հարցն արդեն իսկ բնության առարկա է դարձել ՆՏ սահմանադրական դատարանում:

Սահմանադրական դատարանը իր՝ 2007թ. ապրիլի 9-ի ՄԴՈ-690 որոշմամբ առանձնակիորեն կարեւորել է այն իրավական երաշխիքներն օրենսդրորեն ամրագրելու անհրաժեշտությունը, որոնք կոչված են ապահովելու վճռաբեկ դատարանի կողմից՝ նշված հայեցողական լիազորության իրավաչափ եւ ոչ կամայական իրականացումը: Մասնավորապես, սահմանադրական դատարանն իր որոշման 11-րդ կետում շեշտել է, որ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 3-րդ կետում կիրառված «թերություններ» արգահայտության հսկակ ըմբռնելի բովանդակությունը սահմանելը, բողոքաբար անձանց կողմից վճռաբեկ բողոքն օրենսգրքի 230 հոդվածի պահանջներին ըստ ձեռի համապատասխանեցնելու պայմանները, կարգը եւ ժամկետն օրենսդրորեն հսկակեցնելը կմեծացնի վստահությունն արդարադատության նկատմամբ, մարդկանց հնարավորություն կրա վճռաբեկ վարույթում առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

Սահմանադրական դատարանն իր նշված որոշման եզրափակիչ մասի 3-րդ կետում ամրագրել է. «Նայաստանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետը (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) ... վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման **պարճառաբանման պարտադիր պայման չնախարեսելու**, հետեւաբար, նաեւ՝ արդարադատության արդյունավետության, բավարար մարջելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով, ճանաչել Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին եւ 2-րդ մասեր), 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր»: Այսինքն՝ վճռաբեկ դատարանի կողմից՝ նշված հայեցողական լիազորության իրավաչափ եւ ոչ կամայական իրականացումն ապահովող կարեւոր իրավական երաշխիք պետք է հանդիսանար նաեւ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պարճառաբանման պարտադիր պայմանն օրենքով հսկակ սահմանելը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սահմանադրական դատարանի նշված որոշման ընդունումից ի վեր ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների եւ լրացումների արդյունքում վերոհիշյալ իրավական երաշխիքները լիարժեքորեն չեն ապահովվել:

Այսպես՝ «ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2007թ. նոյեմբերի 28-ի օրենքի 75 հոդվածի համաձայն՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» վերառությամբ 233 հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետեւյալ խմբագրությամբ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատը կայացնում է որոշում գործը վճռաբեկ դատարանում սրանալու պահից 10 օրվա ընթացքում: Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պարճառաբանված, բացառությամբ սույն օրենսգրքի 234 հոդվածի 1 կետի 1-ին ենթակետի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքերի»: Նույնաբովանդակ դրույթ է ըստ էության ամրագրված նաեւ ՆՏ դատական օրենսգրքի 50 հոդվածի 4-րդ մասում.

վերջինս եւս վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանման պահանջը չի փարսածում այն որոշումների վրա, որոնցում վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքն այն է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը չի կարող էական նշանակություն ունենալ օրենքի միապետակ կիրառության համար:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը՝ նման բացառություն սահմանելով, լիարժեքորեն չի ապահովել սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման կատարումը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ օրենսդիրը դեռեւս չի սահմանել նաեւ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 3-րդ մասում (գործող օրենսգրքի 233 հոդվածի 3-րդ մաս) կիրառված «թերություններ» արժանաւարտության հստակ ըմբռնելի բովանդակությունը:

Վճռաբեկ բողոքի թերությունները վերացնելու համար վճռաբեկ դատարանի կողմից ժամկետ սահմանելու հայեցողական լիազորության իրավաչափ եւ ոչ կամայական իրականացման ապահովմանը միջնորդական անհրաժեշտ իրավական երաշխիքներն օրենսդրորեն ոչ լիարժեքորեն ամրագրելու պայմաններում «ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 21.02.2007թ. ՌՕ-98-Ն օրենքով ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածը (07.07.2006թ. խմբագրությամբ) լրացվել է վիճարկվող դրույթով:

Փաստորեն, մի կողմից՝ չեն սպեղծվել վերոհիշյալ հայեցողական լիազորության իրավաչափ իրականացումն ապահովող իրավական երաշխիքներ, մյուս կողմից՝ վիճարկվող դրույթով բացառվել է կրկին վճռաբեկ բողոք ներկայացնելու հնարավորությունն այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանը չի սահմանում բողոքի թերությունները շփոթելու համար ժամկետ: Այսինքն՝ բացակայում են ինչպես հայեցողական լիազորության կամայական իրականացումը կանխելու երաշխիքները, այնպես էլ այդ հայեցողական լիազորության ոչ իրավաչափ իրականացումը հաղթահարելու միջոցը:

6. ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ՏՏ վարչական դատավարության օրենսգրքով, ինչպես նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքով համապատասխանաբար հայցադիմումը, դիմումը, վերաքննիչ բողոքը, անհատական դիմումը վերադարձնելու հետ կապված հարաբերությունների իրավակարգավորման ուսումնասիրությունը վկայում է, որ համաձայն այդ իրավակարգավորման հիմքում ընկած փրամաբանության՝ հայցադիմումի, դիմումի, վերաքննիչ բողոքի, անհատական դիմումի թերությունները չեն կարող խոչընդոտել դրանց քննության ընդունման հարցի դրական լուծմանը եւ կանխել դատարանի դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը: Նշված փրամաբանությունն էլ իր հերթին բխում է դատարանի մաքսելիտությունն ապահովելու անհրաժեշտությունից:

Այսպես, ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92 հոդվածի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե դրանում առկա են այդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների խախտումներ: Նայցադիմումում թույլ տրված

խախտումները, նույնն է, թե թերությունները վերացվելու և եռօրյա ժամկետում դադարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումն ընդունված է համարվում սկզբնական ներկայացնելու օրը: Ընդ որում, հայցադիմումը վերադարձնելու մասին առաջին ադյանի դադարանի որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դադարան:

Նույն օրենսգրքի 213 հոդվածի համաձայն՝ վերաքննիչ դադարանը գործն սպանալուց հետո եռօրյա ժամկետում կայացնում է որոշում վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին, եթե բողոքում թույլ են արվել նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների խախտումներ: Համապատասխան խախտումները վերացվելու և որոշումն սպանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, կրկին ներկայացվելու դեպքում բողոքը համարվում է դադարանում ընդունված: Այս դեպքում ես, վերադարձնելու որոշումը ենթակա է բողոքարկման. այն բողոքարկվում է վճռաբեկության կարգով:

Համաձայն ՏՏ վարչական դատավարության օրենսգրքի 78 հոդվածի՝ վարչական դադարանը հայցադիմումը վերադարձնելու մասին կայացնում է որոշում: Վարչական դադարանը հայցադիմումը վերադարձնում է պարզաձև հիմնավորմամբ՝ նշելով բոլոր առերեսույթ թերությունները: Հայցադիմումում թույլ արված խախտումները վերացվելու և որոշումն սպանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, դադարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը դադարանում ընդունված է համարվում սկզբնական ներկայացվելու օրը: Հարկ է նկատել, որ այս հոդվածում հայցադիմումի «թերություններ» և «խախտումներ» հասկացությունները նույնացված են:

«Մահմանադրական դադարանի մասին» ՏՏ օրենքի 29 հոդվածի համաձայն՝ դիմողը դիմումը վերադարձնելը կարող է եռօրյա ժամկետում բողոքարկել սահմանադրական դադարանի նախագահին, որն այդ հարցով ոչ ուշ, քան բողոքը ներկայացվելուց մեկ օր հետո ընդունում է վերջնական որոշում:

Վերոհիշյալ իրավակարգավորումը վկայում է, որ սպեղծված են այնպիսի իրավական երաշխիքներ, որոնք գործնականում կբացառեն թերությունների կամ օրենքի համապատասխան պահանջների խախտումների պարճառաբանությամբ հայցադիմումի, դիմումի, վերաքննիչ բողոքի կամ անհատական դիմումի քննության ընդունման հարցի դրական լուծումը: Նախ և առաջ՝ անձը դադարանի մասնանշած թերությունները շփոթելուց հետո ըստ էության ազատ է շրկված փաստաթուղթը կրկին ներկայացնելու հարցում. կրկին ներկայացնելու հնարավորությունը կախվածության մեջ չէ իրավասու դադարանի հայեցողությունից, և, երկրորդ՝ անձն ունի արդյունավետ պաշտպանության միջոց ընդդեմ հայցադիմումը, դիմումը, վերաքննիչ բողոքը կամ անհատական դիմումը վերադարձնելու մասին իրավասու դադարանի որոշման. օրենսդրությունն ամրագրում է նման որոշումը բողոքարկելու հնարավորություն:

Մինչդեռ վճռաբեկ բողոքի պարագայում՝ վճռաբեկ բողոքի թերությունները շփոթելու հնարավորության օգտագործումը կախվածության մեջ է դրված վճռաբեկ դադարանի հայեցողությունից, և այդ հայեցողության կամայական դրսեւորման դեմ բացակայում է արդյունավետ պաշտպանության որեւէ միջոց: Նման պայմաններում, ի խախտումն վերոհիշյալ իրավակարգավորման հիմքում ընկած փրամաբանության, վիճարկվող դրույթի կիրառումը թույլ է փախ այնպիսի վիճակի առաջացման հնարավորություն, երբ

բողոքի թերությունները կարող են խոչընդոտել անձին իրացնելու դատական ակտը բողոքարկելու իր իրավունքը եւ, հետեւաբար՝ նաեւ դատարանի մապզելիության իրավունքը:

7. Իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ վճռաբեկ դատարանի կողմից իր՝ խնդրո առարկա հայեցողական լիազորության իրականացումն առանձին դեպքերում կրում է ոչ իրավաչափ եւ կամայական բնույթ: Մասնավորապես, վճռաբեկ դատարանի 28 հունիսի 2007թ. որոշման մեջ որպես վճռաբեկ բողոքի թերություն մատնանշվել է այն հանգամանքը, որ նշված չէ. «...թե վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով կայացվելիք դատական ակտը որ օրենքի միապետակ կիրառության համար կարող է էական նշանակություն ունենալ»: Վճռաբեկ դատարանն իր այս որոշմամբ թերությունները շփոթելու համար ժամկետ չի սահմանել: Մինչդեռ մեկ այլ՝ 15 նոյեմբերի 2007թ. որոշմամբ վճռաբեկ դատարանը, վերադարձնելով վճռաբեկ բողոքը, նշել է. «Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքում նշված ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը բացակայում են, քանի որ բողոք բերած անձի հիմնավորումները, թե որ օրենքների միապետակ կիրառության համար վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով կայացվելիք դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ, թերի են, այսինքն՝ սույն վճռաբեկ բողոքի սահմաններում վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով կայացվելիք դատական ակտը օրենքի միապետակ կիրառության համար էական նշանակություն չի կարող ունենալ»: Չնայած նրան, որ այս դեպքում եւս թերությունն, ըստ էության, նույնաբնույթ է, այս որոշմամբ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել սահմանել ժամկետ թերությունը շփոթելու համար: Վճռաբեկ դատարանն իր մեկ այլ՝ 2007թ. փետրվարի 22-ի որոշմամբ սույն գործով դիմողի վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ թերությունը վերացնելու համար ժամկետ չսահմանելով, այն պարճառաբանությամբ, որ բողոքաբերող բողոքին չի կցել բողոքի պարճները գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցները: Այսինքն՝ նման ձեւական բնույթի թերությունը հիմք է հանդիսացել անձի՝ վճռաբեկ դատարանի կողմից իր գործի քննության հնարավորությունը բացառելու համար:

Իրավակիրառական պրակտիկայի նման դրսևորումների պայմաններում, հաշվի առնելով, որ ի կարարումն սահմանադրական դատարանի ՄԴՌ-690 որոշման՝ չեն ստեղծվել վճռաբեկ դատարանի խնդրո առարկա հայեցողական լիազորության իրավաչափ եւ ոչ կամայական իրականացումն ապահովող օրենսդրական լիարժեք երաշխիքներ, ինչպես նաեւ նկատի ունենալով, որ բացակայում է որեւէ արդյունավետ պաշտպանության միջոց ընդդեմ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման, սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթն իրավական արգելք է հանդիսանում վճռաբեկ դատարանի միջոցով իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման համար:

8. ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 231.1. հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմը հանդիսանում է մասնավոր նորմ նույն օրենսգրքի 224

հողվածի 3-րդ մասում ամրագրված այն ընդհանուր նորմի առնչությամբ, որի համաձայն՝ նույն անձը նույն դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերել միայն մեկ անգամ: Վիճարկվող նորմի եւ 224 հողվածի 3-րդ մասում ամրագրված նորմի նման առնչության պայմաններում, իրավական դաշտում վիճարկվող դրույթի բացակայության դեպքում եւս, հնարավոր կլինի 224 հողվածի 3-րդ մասում ամրագրված ընդհանուր նորմի ուժով անձին արգելել կրկին ներկայացնել շրկված վճռաբեկ բողոքը, եթե վճռաբեկ դատարանը թերությունները շրկելու համար ժամկետ չի սահմանել: Այսինքն՝ մասնավոր նորմի վերացման դեպքում կգործի ընդհանուր նորմը՝ իրավակիրառական պրակտիկայում բողոք ներկայացրած անձի համար առաջացնելով միեւնույն բացասական իրավական հետեւանքները, ինչ վիճարկվող դրույթը: Նաշվի առնելով նշված դրույթների նման համակարգային փոխկապակցվածությունը՝ սահմանադրական դատարանը, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՇ օրենքի 68 հողվածի 9-րդ մասին համապատասխան, հարկ է համարում անդրադառնալ նաեւ ՆՇ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224 հողվածի 3-րդ մասի սահմանադրականության հարցին:

9. Միջազգային իրավունքում հայտնի սկզբունքը՝ «Դատարանը կրկին չի որոշի արդեն որոշված գործը» (res judicata), ամրագրված է ինչպես միջազգային դատական մարմինների հիմնադիր փաստաթղթերում, այնպես էլ մի շարք պետությունների՝ քրեական եւ քաղաքացիական արդարադատության վերաբերյալ օրենսդրության մեջ: Այս սկզբունքը ենթադրում է, որ դատական գործով ընդունված վերջնական որոշումը, որպես իրավական որոշակիության արդյունք, ենթակա է հարգանքի: Նշված սկզբունքն իր ամբողջական եւ փրամաբանական դրսեւորումն է գտել ՆՇ քրեական դատավարության օրենսգրքի 407 հողվածի 4-րդ մասում, որի համաձայն՝ բողոքը թողնվում է առանց քննության այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանն այդ բողոքում **նշված հիմքով նույն գործով** արդեն իսկ որոշում է կայացրել: Սահմանադրական դատարանն իր 2007թ. հուլիսի 20-ի ՄԴՌ-709 որոշման մեջ նշված դրույթը գնահատել է որպես իրավագոր պահանջ, «... քանզի բողոքն առանց քննության թողնելու նման հիմքի նախատեսումը կոչված է բացառելու կրկին անդրադառնալ այնպիսի հարցերի քննությանը, որոնց կապակցությամբ արդեն իսկ վճռաբեկ դատարանն արդարահայտել է իր իրավական դիրքորոշումը, երբ ի հայտ չեն եկել նոր հանգամանքներ»: Սահմանադրական դատարանն արձանագրել է նաեւ, որ նշված դրույթում օգտագործվող՝ «բողոքում նշված հիմքով» եւ «նույն գործով» ձեւակերպումները ենթադրում են, որ նույնաբնույթ է համարվում կրկին ներկայացված այն բողոքը, որում նույն դիմողը միեւնույն առարկայի վերաբերյալ նույն պատճառաբանություններով ներկայացված բողոքի հիման վրա ձգտում է հասնել նպատավոր որոշման:

Միջազգային իրավունքում հայտնի վերոհիշյալ սկզբունքը, սակայն, աղավաղված եւ այդ սկզբունքի նպատակին ոչ համահունչ դրսեւորում է ստացել ՆՇ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224 հողվածի 3-րդ մասում: Այդ մասում ամրագրված դրույթն իր ձեւակերպումներով միտված է ոչ թե նրան, որպեսզի բացառվի այնպիսի հարցերի քննությանը կրկին անդրադառնալը, որոնց կապակցությամբ արդեն իսկ վճռաբեկ

դափարանն արգահայտել է իր իրավական դիրքորոշումը, այլ խոչընդոտում է անձի՝ վճռաբեկ բողոք բերելու իրավունքի լիարժեք եւ արդյունավետ իրացմանը:

Այսպես, ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226 հոդվածը սահմանում է վճռաբեկ բողոք բերելու երկու հիմք, դրանք են՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումները, որոնք կարող էին ազդել գործի ելքի վրա: Այն դեպքում, երբ նշված հիմքերից մեկով ներկայացված վճռաբեկ բողոքը չի ընդունվում քննության կամ մերժվում է, օրենսգրքի 224 հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթը թույլ չի տալիս անձին նույն դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք ներկայացնել նաեւ մյուս հիմքով:

Նշված դրույթը ոչ միայն խոչընդոտում է անձին լիարժեք կերպով իրացնելու օրենքով նախատեսված հիմքերով վճռաբեկ բողոք բերելու իր իրավունքը, այլ նաեւ բացառում է վիճարկվող դատական ակտի օրինականության եւ հիմնավորվածության ստուգումը վճռաբեկության կարգով լրիվ ծավալով իրականացնելու հնարավորությունը, քանզի օրենսգրքի 239 հոդվածի ուժով վճռաբեկ դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերով եւ հիմնավորումներով:

Բացի դրանից, վիճարկվող դրույթը վերացնելու դեպքում օրենսգրքի 224 հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթը կշարունակի իրավական խոչընդոտի հանդիսանալ վճռաբեկ բողոքի թերությունները շարկելու եւ վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետում կրկին ներկայացնելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից, նկատի ունենալով Նայաստրանի Նանրապետության Ազգային ժողովի կողմից 2007 թվականի փետրվարի 21-ին եւ նոյեմբերի 28-ին ընդունված օրենքներով ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների փոփոխություններն ու լրացումները եւ հաշվի առնելով, որ վեճի առարկա 231.1. հոդվածի 4-րդ մասը բովանդակային փոփոխության չի ենթարկվել, այլ վերաձեռակերպվել է որպես 233 հոդվածի 4-րդ մաս, ղեկավարվելով Նայաստրանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստրանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայաստրանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Նայաստրանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 4-րդ մասը (նոր խմբագրությամբ 233 հոդվածի 4-րդ մասը)՝ առանց ժամկետի սահմանման վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքում կրկին բողոք ներկայացնելու իրավունքի սահմանափակման առումով ճանաչել Նայաստրանի Նանրապետության Սահմանադրության 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Նայաստրանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 4-րդ մասի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Նայաստրանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224 հոդվածի 3-րդ մասի դրույթը՝ նույն անձի կողմից նույն դատական ակտի դեմ մեկից ավել-

լի անգամ վճռաբեկ բողոք բերելու արգելքի մասով ճանաչել Նայասփանի Նանրապետության Սահմանադրության 18 (1-ին մաս) հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր:

3. Նայասփանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ
Վ. ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆ**

*27 մայիսի 2008 թվականի
ՍԳՈ- 754*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՅԻ ՍԵՐԻՆԵ ՖԼՋՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՆՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 80 ՆՈՂՎԱԾԻ 1-ԻՆ,
4-ՐԴ ԵՎ 5-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

9 սեպտեմբերի 2008թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող՝ քաղաքացի Ս. Ֆլջյանի ներկայացուցիչ Կ. Մեժլումյանի, պապասխանող կողմի՝ ՆՆ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՆ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածներին,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Սերինե Ֆլջյանի դիմումի հիման վրա՝ «ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 80 հոդվածի 1-ին, 4-րդ եւ 5-րդ մասերի՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ս. Ֆլջյանի՝ 14.05.2008թ. դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պապասխանող կողմերի գրավոր բացաբությունները, հեղափոխելով վեճի առարկա օրենքը, ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՆՃ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի 17-ին, Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել է 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

«ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՆՃ օրենքը, որը վիճարկում է դիմողը, ընդունվել է ՆՃ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի նոյեմբերի 28-ին, ՆՃ Նախագահի կողմից ստորագրվել է 2007 թվականի դեկտեմբերի 20-ին և ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից:

«ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՆՃ օրենքի 72 հոդվածով ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը լրացվել է 3.2 (վճիռների և որոշումների վերանայումը նոր հանգամանքներով) բաժնով: Միաժամանակ, նշված օրենքի 76 հոդվածով ուժը կորցրած է ճանաչվել ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5.1 (վճիռների և որոշումների վերանայումը նոր հանգամանքներով) բաժինը: Նշված 3.2 բաժնի հոդվածները սահմանում են նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու իրավասու դատարանը, դատական ակտի վերանայման հիմքերը, վերանայման ենթակա դատական ակտերի շրջանակը, վերանայման խնդրանք ներկայացնելու կարգը:

2. Քննության առարկա գործի քաղաքացիական հայցի շրջանակներում դատավարական նախապարտությունը հանգում է նրան, որ դիմողը 29.12.2007թ. հավապարմագրված փաստաբանի միջոցով դիմել է ՆՃ վճռաբեկ դատարան՝ խնդրելով ՆՃ սահմանադրական դատարանի 09.04.2007թ. ՍԴՈ-690 որոշման հիման վրա վերանայել վճռաբեկ դատարանի 30.11.2007թ. որոշումը: Վճռաբեկ դատարանը 22.01.2008թ. թիվ 3-95/ՎԴ/2008թ. որոշմամբ՝ կիրառելով «ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 80 հոդվածը, անհրաժեշտ է համարել՝ «ՆՃ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.09.2006թ. վճռի դեմ Սերիկնե Ֆլյանի վճռաբեկ բողոքը փոխանցել Երեւանի քաղաքացիական դատարան»:

Երեւանի քաղաքացիական դատարանը, կիրառելով «ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 80 հոդվածը, ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասը, 204.20 հոդվածի 2-րդ մասը, 204.25 հոդվածը, որոշել է Սերիկնե Ֆլյանի դիմումի հիման վրա նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթի հարուցումը մերժել՝ այն պատճառաբանությամբ, որ դիմող Սերիկնե Ֆլյանը խնդրել է նոր հանգամանքներով վերանայել ոչ թե առաջին աստիճանի դատարանի դատական ակտը, այլ ՆՃ վճռաբեկ դատարանի որոշումը, այն դեպքում, երբ, ըստ Երեւանի քաղաքացիական դատարանի՝ նոր հանգամանքներով վերանայման ենթակա են առաջին աստիճանի դատարանների դատական ակտերը:

3. Վիճարկելով «ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՏՏ օրենքի 80 հոդվածի 1-ին, 4-րդ եւ 5-րդ մասերի, ինչպես նաեւ վերջիններիս հետ համակարգային առումով փոխկապակցված եւ նույն օրենքի 72 հոդվածում ներառված ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 2-րդ մասի, 204.26 եւ 204.29 հոդվածների, ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի դրույթների սահմանադրականությունը, դիմողը գրնում է, որ այդ նորմերը հակասում են ՏՏ Սահմանադրության 6, 18, 19 եւ 42 հոդվածներին:

Ըստ դիմողի՝ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթների եւ ՏՏ Սահմանադրության 18, 19 հոդվածների միջեւ հակասությունը դրսևորվում է նրանում, որ այդ դրույթները բացառում են նոր երեսան եկած կամ նոր հանգամանքների հիմքով վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների դատական ակտերի վերանայման հնարավորությունը եւ ըստ այդմ՝ անձի խախտված իրավունքների վերականգնման հնարավորությունը: Ավելին, «ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՏՏ օրենքի 80 հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերը հակասում են նաեւ ՏՏ Սահմանադրության 42 հոդվածի պահանջներին, քանի որ դրանք հետադարձ ուժ են հաղորդել անձի վիճակը վարթարացնող իրավակարգավորմանը: Նույն հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը վիճարկվում է այն հիմքով, որ այն ընդունվել է ի խախտումն «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի պահանջների:

Ըստ դիմողի՝ թեեւ սահմանադրական դատարանն իր որոշումներում արձանագրել է, որ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխությունները պետք է կատարվեն այնպես, որ արդյունքում անձինք չզրկվեն օրենքով նախատեսված նախկին կարգով սկսված եւ դեռեւս չավարտված իրավակարգավորման գործընթացի պայմաններում իրենց սահմանադրական իրավունքներն արդյունավետ պաշտպանելու լիարժեք հնարավորությունից, սակայն, ըստ դիմողի՝ պատասխանող ՏՏ Ազգային ժողովը շարունակում է ընդունել ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի փոփոխություններ, որոնց արդյունքում, փաստորեն, անձինք զրկվում են այդ իրավունքները պաշտպանելու հնարավորությունից:

4. Պատասխանողի ներկայացուցչի պնդմամբ՝ ՏՏ դատական օրենսգրքի 26, 47 հոդվածներում եւ 50 հոդվածի 7-րդ մասում ամրագրված դրույթների, ինչպես նաեւ այդ դրույթների հետ թղթակցող ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219 եւ 239 հոդվածների համադրական վերլուծությունից բխում է, որ անձը չի զրկվել նոր հանգամանքներով կամ նոր երեսան եկած հանգամանքներով գործը վերանայելու համար դիմումը ներկայացնելու իրավունքից կամ չի սահմանափակվել նրա այդ իրավունքը, այսինքն՝ անձը չի զրկվել իր խախտված իրավունքները վերականգնելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի իրապարակային քննության իրավունքից (ՏՏ Սահմանադրության 19 հոդված), ինչպես նաեւ չի զրկվել իր

իրավունքների եւ ազատությունների դափսկան պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքից (ՆՏ Սահմանադրության 18 հոդված):

Ըստ պափասխանող կողմի՝ դափսկան պաշտպանության արդյունավետության գնահատման բաղկացուցիչ մաս կարող է դիտվել նաեւ այն գործոնը, որի համաձայն՝ նոր հանգամանքներով կամ նոր երեւան եկած հանգամանքներով գործը քննվում է ըստ էության, քանի որ այդ հանգամանքների ուժով կարող է, ըստ էության, փոփոխվել նախկինում կայացված դափսկան ակտը: Միեւնույն ժամանակ, անձի իրավական վիճակը չի վաթարացել, այլ ապահովվել է «սկզբից մինչեւ վերջ» սկզբունքով դափսկան պաշտպանության արդյունավետ միջոցների կիրառման կառուցակարգ:

Պափասխանող կողմի կարծիքով՝ «ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՏ օրենքի վիճարկվող 80 հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերով կարգավորվել են օրենքով նախատեսված նախկին կարգով սկսված եւ դեռեւս չավարտված գործընթացի պայմաններում անձանց սահմանադրական իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները, հեփեւաբար, նորմափիվ այդ դրույթները նպատակ ունեն ոչ թե սահմանափակել քաղաքացիադատավարական հարաբերությունների ընթացքում անձանց իրավունքները, այլ կարգավորել դրանք իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները, ինչը չի նշանակում, որ սահմանափակվել է անձանց սահմանադրական իրավունքը:

5. «ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՏ օրենքի 80 հոդվածը սահմանում է.

«Նոդված 80. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունվարի 1-ից:

2. Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը բողոքարկված դափսկան ակտերի նկատմամբ սույն օրենքով նախատեսված կանոնները կիրառելի չեն:

3. Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործին մասնակից չդարձված անձանց ներկայացված բողոքները դատարանի որոշմամբ փոխանցվում են վերաքննիչ քաղաքացիական դատարան:

4. Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը նոր երեւան եկած հանգամանքներով ներկայացված վճռաբեկ բողոքները դատարանի որոշմամբ փոխանցվում են համապատասխան դափսկան ակտը կայացրած առաջին աստիճանի դատարան:

5. Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը նոր հանգամանքներով ներկայացված վճռաբեկ բողոքները դատարանի որոշմամբ փոխանցվում են համապատասխան դափսկան ակտը կայացրած առաջին աստիճանի դատարան:

6. Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելն առաջին աստիճանի եւ Կրկնաստիճանի դատարանում առկա հայցադիմումները եւ հարուցված դափսկան գործերը դատարանի որոշմամբ փոխանցվում են համապատասխան դատարան՝ սույն օրենքով սահմանված փարաձքային եւ առարկայական ընդդատության պահանջներին համապատասխան»:

ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Նոր հանգամանքներով վերանայման ենթակա են առաջին աստիճանի դատարանների դատական ակտերը»:

ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.26 հոդվածը սահմանում է. «Նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու իրավասություն ունի համապատասխան դատական ակտը կայացրած առաջին աստիճանի դատարանը»:

6. ՆՃ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմի 23.05.2008թ. որոշմամբ դիմումը քննության է ընդունվել «ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՃ օրենքի 80 հոդվածի 1-ին, 4-րդ եւ 5-րդ մասերի կապակցությամբ, իսկ դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված վերոհիշյալ դրույթների սահմանադրականությունը պարզելու անհրաժեշտության հարցի լուծումը թողնվել է գործի դատաքննության փուլին:

Դիմումի քննության արդյունքներով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՆՃ վճռաբեկ դատարանի 2008թ. հունվարի 22-ի որոշման մեջ հիշատակվում է «ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՃ օրենքի 80 հոդվածի՝ **նոր երեւան եկած հանգամանքներով** ներկայացված վճռաբեկ բողոքներին վերաբերող 4-րդ մասը (նույն որոշման մեջ ոչ ճիշտ վկայակոչելով նաեւ ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 80 հոդվածը, որը դիմումի առարկային չի առնչվում եւ վերաբերում է գործի վարույթի ժամանակ գործին մասնակցող անձանց հասցեները փոխվելուն): Սակայն գործի հանգամանքները, մասնավորապես նաեւ Երեւանի քաղաքացիական դատարանի 19.03.2008թ.՝ **նոր հանգամանքներով** դատական ակտի վերանայման վարույթ հարուցելը մերժելու մասին որոշումը, վկայում են, որ խոսքը վերաբերում է նույն հոդվածի՝ **նոր հանգամանքներով ներկայացված վճռաբեկ բողոքներին վերաբերող 5-րդ մասին**, քանզի դիմողը վճռաբեկ դատարան է դիմել վերջինիս որոշումը վերանայելու պահանջով՝ **ոչ թե նոր երեւան եկած հանգամանքով, այլ նոր հանգամանքով**, որպիսին հանդիսանում է ՆՃ սահմանադրական դատարանի 09.04.2007թ. ՍԴՈ-690 որոշումը: Ներելաբար, Կրկնակի գործի շրջանակներում ՆՃ սահմանադրական դատարանի քննության առարկան, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 69 հոդվածին համապատասխան որպես դիմողի նկատմամբ կիրառված օրենքի դրույթ, «ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՃ օրենքի 80 հոդվածի 5-րդ մասն է:

Սահմանադրական դատարանը, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասին համապատասխան, հարկ է համարում պարզել նաեւ «ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՃ օրենքի 80 հոդվածի վիճարկվող դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված եւ վեճի առարկա օրենքի հիման վրա ընդունված ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 2-րդ մասի եւ 204.26 հոդվածի դրույթների սահմանադրականությունը, քանզի այդ դրույթները, վիճարկվող

դրույթների հետ համակցության մեջ, կազմում են նոր հանգամանքների հիմքով դափական ակտերի վերանայման իրավակարգավորման բաղկացուցիչ փարրերը:

Ավելին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումն առնչվում է **նոր հանգամանքների** հիմքով դափական ակտերի վերանայման ինստիտուտի առանձին փարրերի սահմանադրականությանը, սահմանադրական դափարանը հարկ է համարում անդրադառնալ այդ ինստիտուտի իրավակարգավորման բոլոր փարրերի, Մ քաղաքացիական դափավարության օրենսգրքի 3.2 բաժնի դրույթների սահմանադրականությանը իրենց համակարգային ամբողջականության մեջ: Ներուաբար, սահմանադրական դափարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաեւ 2007թ. նոյեմբերի 28-ին ընդունված «Մ քաղաքացիական դափավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Մ օրենքի 76 հոդվածի սահմանադրականության հարցին, որով ուժը կորցրած է ճանաչվել Մ քաղաքացիական դափավարության օրենսգրքի 5.1 բաժինը, ինչպես նաեւ 72 հոդվածի սահմանադրականության հարցին, որով Մ քաղաքացիական դափավարության օրենսգիրքը լրացվել է 3.2 բաժնով:

7. Նոր հանգամանքների հիմքով դափական ակտերի վերանայման ինստիտուտն, ըստ էության, Մ քաղաքացիական դափավարության օրենսգրքում իր ամրագրումն ստացավ «Մ քաղաքացիական դափավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 18.02.04թ. ՄՕ-39-Ն Մ օրենքով: Վերջինս Մ քաղաքացիական դափավարության օրենսգիրքը լրացրեց նոր՝ «Վճիռների եւ որոշումների վերանայումը նոր հանգամանքներով» վերաառությամբ 5.1 բաժնով, որով սահմանվեց նոր հանգամանքների հիմքով դափական ակտերի վերանայման ընթացակարգը: 2007թ. փետրվարի 21-ին Մ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Մ քաղաքացիական դափավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Մ օրենքով լրացում է կատարվել նոր հանգամանքներով վճիռների եւ որոշումների վերանայման հիմքերը սահմանող 241.1 հոդվածում: Նշված օրենքի 22 հոդվածը, մասնավորապես, սահմանում էր. «Օրենսգրքի 241.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը «Նայասարանի Նանրապետության» բառերից առաջ լրացնել «Սահմանադրական դափարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքով նախատեսված դեպքերում» բառերով»:

Մ քաղաքացիական դափավարության օրենսգրքի 5.1 բաժինն ուժը կորցրած է ճանաչվել վերոհիշյալ՝ «Մ քաղաքացիական դափավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 28.11.07. ՄՕ-277-Ն Մ օրենքի 76 հոդվածով:

8. Վիճարկվող եւ դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված Մ քաղաքացիական դափավարության օրենսգրքի դրույթների վերլուծությունը, ինչպես նաեւ դրանց իրավակիրառական պրակտիկական վկայում են, որ նոր հանգամանքների հիմքով դափական ակտերի վերանայման օրենսդրական ներկա կարգավորման հիմնական փարրերը հետեւյալներն են.

- նոր հանգամանքներով վերանայման ենթակա են միայն առաջին ափյանի դափարանների դափական ակտերը,

- նոր հանգամանքներով դափական ակտը վերանայելու իրավասություն ունի միայն համապատասխան դափական ակտը կայացրած առաջին ապյանի դափարանը,

- վերաքննիչ եւ վճռաբեկ դափարանների դափական ակտերը նշված հիմքերով վերանայման ենթակա չեն,

-վերաքննիչ եւ վճռաբեկ դափարանները նշված հիմքերով դափական ակտերի վերանայման իրավասությամբ օժտված չեն,

- նոր հանգամանքների հիմքով վերանայման ենթակա են ոչ միայն առաջին ապյանի դափարանի՝ գործն, ըստ էության, լուծող դափական ակտերը, այն է՝ վճիռները, այլ նաեւ առաջին ապյանի դափարանի միջանկյալ դափական ակտերը:

Նշված իրավակարգավորման արդյունքում ձեւավորված իրավակիրառական պրակտիկայի մասին է վկայում գործում առկա՝ Երեւանի քաղաքացիական դափարանի՝ Նոր հանգամանքներով դափական ակտի վերանայման վարույթ հարուցելը մերժելու մասին 19.03.2008թ. որոշումը: Այս որոշմամբ դափարանը մերժել է ՏՏ սահմանադրական դափարանի 09.04.2007թ. ՄԴ-Ո-690 որոշման հիման վրա վճռաբեկ դափարանի թիվ 3-1882/ՎԴ-/ քաղաքացիական գործով 30.11.2007թ. որոշումը վերանայելու խնդրանքը՝ պարճառաբանելով, որ ՏՏ քաղաքացիական դափարավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նոր հանգամանքներով վերանայման ենթակա են միայն առաջին ապյանի դափական ակտերը:

9. Նոր հանգամանքների հիմքով դափական ակտերի վերանայման ներկա իրավակարգավորման հիմքում թերեւս ընկած է ՏՏ դափական օրենսգրքի այն փրամաբանությունը, որի համաձայն՝ Նայասարանի Նանրապետությունում գործող դափարաններից ընդհանուր իրավասության դափարաններ են հանդիսանում միայն առաջին ապյանի դափարանները, եւ քաղաքացիական դափարավարության շրջանակներում վեճն, ըստ էության, լուծող դափական ակտ է համարվում առաջին ապյանի դափարանի վճիռը:

Դա իր հերթին բխում է դափական օրենսգրքի՝ դափարանակազմությանը վերաբերող դրույթների հիմքում ընկած այն փրամաբանությունից, որ ընդհանուր կանոնը մասնագիտացված դափարաններն են, իսկ ընդհանուր իրավասության դափարանները, փաստորեն, բացառություն են այդ ընդհանուր կանոնից: Մինչդեռ ՏՏ Սահմանադրության 92 հոդվածում ամրագրված է հակառակ փրամաբանությունը:

Սույն գործի շրջանակներում իրավասու չլինելով անդրադառնալու ՏՏ դափական օրենսգրքի՝ նշված փրամաբանության վրա հիմնված դրույթների սահմանադրականությանը, այնուամենայնիվ, սահմանադրական դափարանը նման մոտեցումը խնդրահարույց է համարում ՏՏ Սահմանադրության 92 հոդվածի փեսանկյունից: ՏՏ Սահմանադրության 92 հոդվածի 1-ին մասն ամրագրում է Նայասարանի Նանրապետության դափարանակազմության հիմքում ընկած հետեւյալ ընդհանուր կանոնը. «Նայասարանի Նանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ապյանի, վերաքննիչ դափարանները եւ վճռաբեկ դափարանը...»: Սահմանելով այն ընդհանուր նորմը, ըստ որի՝ Նայասարանի Նանրապետության դափական համակարգի հիմնական քաղաղրիչն ընդհանուր իրավասության դափարաններն են՝ միաժամանակ նույն դրույթով Սահմանա-

դրությունն ամրագրել է ընդհանուր իրավասության դափարանների եռասփիճան համակարգը, որը ներկայացված է առաջին ապյանի դափարանների, վերաքննիչ դափարանների եւ վճռաբեկ դափարանի միջոցով: Սահմանադրական այս դրույթին համահունչ՝ ընդհանուր իրավասության դափարաններին ընդդադրյա գործերի առնչությամբ քաղաքացիների համար գործում է դափական պաշտպանության եռասփիճան համակարգը. ընդհանուր իրավասության դափարանների բոլոր ակտերը ենթակա են բողոքարկման քաղաքացիական եւ քրեական վերաքննիչ դափարաններ, իսկ այդ ակտերի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դափարանների ընդունած որոշումները ենթակա են բողոքարկման վճռաբեկ դափարան:

ՆՆ Սահմանադրության 92 հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթի երկրորդ հափվածը սահմանում է նույն դրույթի 1-ին հափվածում ամրագրված վերոհիշյալ ընդհանուր կանոնից հեփելյալ բացառությունը. «...իսկ օրենքով նախափեսված դեալքերում՝ նաեւ մասնագիփացված դափարաններ»: ՆՆ Սահմանադրությունը, նշված նորմն ամրագրելով որպես վերոհիշյալ ընդհանուր կանոնից բացառություն, չի մանրամասնում մասնագիփացված դափարանների ո՛չ փեսակները, ո՛չ ափյանները՝ դրանց սահմանումը թողնելով օրենսդրի հալեցողությանը: Ուսփի օրենսդիրն ազափ է մասնագիփացված դափարանների պարազալում սահմանելու վերաքննիչ ափյան:

Սահմանադրական դափարանը գփնում է, որ ՆՆ Սահմանադրության 92 հոդվածը նախափեսում է ընդհանուր իրավասության դափարանների՝ սփորադասության վրա հիմնված եռասփիճան համակարգ, որում հափակեցված է նաեւ վճռաբեկ դափարանի ֆունկցիոնալ դերը՝ օրենքի միափեսակ կիրառությունն ապահովելու առումով: Այդ համակարգին բնորոշ է փարբեր ափյանի դափարանների միջեւ եղած գործառնական կապը: Տարբեր ափյանների միջեւ եղած կապը նպափակ է հեփապնդում ապահովել դափարանների կողմից կալացվող դափական ակտերի օրինականությունը եւ հիմնավորվածությունը, վերացնել օրենքի խախտումները եւ վերականգնել դափավարության մասնակիցների խախտված իրավունքները:

Տարբեր ափյանների դափարանները միմյանցից փարբերվում են իրենց իրավասությունների շրջանակով: Տվյալ դափական ափյանի իրավասությունների շրջանակով են պալյմանավորված այդ դափարանի կողմից ընդունվող դափական ակտերի բնույթն ու բովանդակությունը. յուրաքանչյուր դափական ափյանի կողմից ընդունվող ակտը հանդիսանում է փվյալ դափական ափյանի իրավասությունների եւ գործառույթների կրողը: Նեփելափար, հաշվի առնելով, որ յուրաքանչյուր դափական ափյանի գործառույթի իրացման արդյունքում անձի իրավունքների դափական պաշտպանությունը նոր որակ է սփանում, յուրաքանչյուր դափական ափյանի կողմից իր գործառույթների իրականացման արդյունքում ընդունված դափական ակտն իր ինքնուրույն դերակափարությունն ունի դափական պաշտպանության իրավունքի իրացման ողջ գործընթացում:

Ալյապես, վերաքննիչ եւ վճռաբեկ դափարանների լիազորությունների ուսումնասիրությունը վկալում է, որ, ընդհանուր առմամբ, վերաքննիչ եւ վճռաբեկ դափարաններն իրենց լիազորությունների շրջանակներում արդարադափություն իրականացնելիս.

- մերժում են վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ. ընդ որում, այն դեպքում, երբ բողոքարկվող ակտը պատճառաբանված է թերի կամ սխալ, կամ ընդհանրապես պատճառաբանված չէ, վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանը պատճառաբանում է ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը,

- բեկանում են դատական ակտը եւ գործն ուղարկում համապատասխան ստորադաս դատարան,

- բեկանում եւ փոփոխում են ստորադաս դատարանի դատական ակտը:

Վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների լիազորությունների բնույթից բխում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը վերանայելիս, հասկապես այն դեպքում, երբ վերադաս դատական ապյանը փոփոխում է ստորադաս դատական ապյանի ակտը, վերադաս դատական ապյանների դատական ակտերը հանդես են գալիս որպես դատական պաշտպանության իրավունքի իրացման նոր եւ ինքնուրույն արդյունք՝ ըստ էության ազդելով ստորադաս դատարանի դատական ակտի բովանդակության վրա եւ դատավարության կողմերի համար առաջացնելով նոր իրավական հետեւանքներ:

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման իրավակարգավորումը շեղվել է վերոհիշյալ փորձաքննությունից՝ աղճատելով ստորադասության վրա հիմնված դատական եռաստիճան համակարգի էությունն ու բովանդակությունը, դատական երեք ապյանների միջեւ ֆունկցիոնալ կապը՝ հաշվի չառնելով դատական երեք ապյանների գործառնությունների առանձնահատկությունները:

10. Սահմանադրական դատարանը նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի՝ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5.1 նախկին բաժնով եւ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.2 բաժնով սահմանված ներկա իրավակարգավորման համեմատական վերլուծության արդյունքում արձանագրում է, որ դրանց միջեւ առկա են էական սկզբունքային փոքրերություններ, որոնք, մասնավորապես, դրսևորվում են նրանում, որ նախկին կարգավորմամբ.

- նոր հանգամանքներով վերանայման ենթակա էին ինչպես առաջին ապյանի դատարանի, այնպես էլ վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների դատական ակտերը,

- վերանայման ենթակա էին վերոհիշյալ դատարանների՝ ինչպես գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այնպես էլ նրանց կայացրած միջանկյալ ակտերը,

- վճիռները եւ որոշումները վերանայելու իրավասություն ունեին.

1) առաջին ապյանի դատարանը՝ իր օրինական ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը վերանայելու կապակցությամբ,

2) վերաքննիչ դատարանը՝ իր օրինական ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը վերանայելու կապակցությամբ,

3) վճռաբեկ դատարանը՝ իր ուժի մեջ մտած որոշումը վերանայելու կապակցությամբ, որը կայացվել է առաջին ապյանի դատարանի, վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ կամ որոշման վերաբերյալ:

Ի փարբերություն նախկին կարգավորման, ինչպես նշվեց, ներկա իրավակարգավորման հիմնական առանձնահատկությունն այն է, որ նոր հանգամանքների հիմքով հնարավոր է միայն առաջին աստիճանի դատարանների դատական ակտերի վերանայումը նույն աստիճանի դատարանի կողմից:

Բացի դրանից, եթե ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախկին 5.1 բաժնում օգտագործվում էր միայն «վճիռ եւ որոշում» հասկացությունը՝ պարզորոշ կերպով մատնացույց անելով, որ վերանայման ենթակա են ինչպես գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այնպես էլ՝ միջանկյալ դատական ակտերը: Մինչդեռ օրենսգրքի գործող 3.2 բաժնում օգտագործվում է «դատական ակտ» հասկացությունը, եւ ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթների բովանդակային մեկնաբանությունն է միայն հնարավորություն փախ պարզելու, որ խոսքը վերաբերում է ոչ միայն գործն ըստ էության լուծող դատական ակտին, այլ նաեւ միջանկյալ դատական ակտին:

Սահմանադրական դատարանը վերոհիշյալ համեմատական վերլուծության արդյունքում նշում է, որ նախկին իրավակարգավորումն ուներ հստակ, լիարժեք եւ ողջամիտ փաստաբանություն՝ քաղաքացիների իրավունքների վերականգնումն ապահովելու հնարավորության փեսանկյունից՝ երաշխավորելով նոր երեսն եկամ կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման ընթացակարգ՝ դատական բոլոր աստիճաններում: Ներկաբար, հաշվի առնելով նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 68 հոդվածի 17-րդ մասի պահանջները, սահմանադրական դատարանը գտնում է, որ մինչև ՆՃ Ազգային ժողովի կողմից ՆՃ սահմանադրական դատարանի սույն որոշմամբ արձանագրված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ հարցի հետագա կանոնակարգումը, կարող է գործել նշված ինստիտուտի այն իրավակարգավորումը, որը սահմանվել էր 18.02.2004թ. ՆՃ-39-Ն օրենքով:

11. Նամաձայն ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ դատական ակտի վերանայման համար նոր հանգամանք է հանդիսանում Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանի՝ ուժի մեջ մտնող որոշումը, որով ամբողջությամբ կամ մի մասով հակասահմանադրական է ճանաչվել այն օրենքը կամ այլ իրավական ակտ, որը կիրառել է դատարանը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտի վերանայման միջոցով անձի խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է բացառապես վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների ակտերի վերանայում: Այսպես, ՆՃ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ անհատական դիմումի շրջանակներում սահմանադրական դատարանում կարող են վիճարկվել **դատարանի վերջնական ակտով** կիրառված օրենքի դրույթները: Որպես վերջնական դատական ակտ առանձին դեպքերում կարող են հանդես գալ փարբեր աստիճանի աստիճանի, վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանի դատական ակտերը: Առավել հաճախ վերջնական դատական ակտը վճռաբեկ դատարանի ակտն է, որը կայացվել է ի սպառումն

պաշտպանության բոլոր միջոցների: Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ սահմանադրական նշված դրույթը որպես անհավական դիմումի ընդունելիության պայման ամրագրում է վիճարկվող օրենքի դրույթի **վերջնական դատական ակտով կիրառված լինելու պահանջը**, ինչը չի նշանակում, որ վերջնական դատական ակտով կիրառված դրույթը պետք է պարտադիր կերպով կիրառված լինի նաև առաջին ապյանի եւ վերաքննիչ դատարաններում. օրենքի դրույթի սահմանադրականությունը սահմանադրական դատարանում վիճարկելու համար բավական է միայն այդ դրույթի կիրառումը վերջնական դատական ակտով: Այսինքն՝ ՏՏ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետը հնարավոր է համարում սահմանադրական դատարանում այնպիսի օրենքի դրույթի սահմանադրականության վիճարկում, որը կիրառվել է որպես վերջնական դատական ակտ հանդիսացող վճռաբեկ դատարանի կամ վերաքննիչ դատարանի ակտով, սակայն չի կիրառվել առաջին ապյանի դատարանի ակտով: Նման իրավիճակում, այս կամ այն օրենքի դրույթը սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու դեպքում սահմանադրական դատարանի համապատասխան որոշման հիման վրա անձի խախտված իրավունքների վերականգնման փեսանկյունից առաջին ապյանի դատարանի դատական ակտի վերանայումը դառնում է անհիմաստ եւ անհնարին. սահմանադրական դատարանի որոշման հիման վրա անձի խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է միայն վերջնական դատական ակտի վերանայում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ անհավական դիմումների քննության ընդունման առնչությամբ սահմանադրական դատարանում արդեն ձեւավորված է ՏՏ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի վերոհիշյալ մեկնաբանությանը համապատասխան իրավակիրառական պրակտիկա:

Բացի դրանից, սահմանադրական դատարանում կարող են վիճարկման առարկա դառնալ նաև այն դատավարական նորմերը, որոնք կանոնակարգում են վարույթի կոնկրետ ձեւերը, այն է՝ վարույթն առաջին ապյանի դատարանում, վերաքննիչ դատարանում կամ վճռաբեկ դատարանում: Նման նորմերը կիրառելի են միայն փոխադրական ապյանի դատական ակտով:

Ավելին, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ եւ՝ վերաքննիչ դատարանը, եւ՝ վճռաբեկ դատարանն ստորադաս դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, պարտառաքանում է այդ ակտը, եթե գտնում է, որ այն թերի է պարտառաքանված, սխալ է պարտառաքանված կամ պարտառաքանված չէ: Այս դեպքում վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանը կարող են կիրառել օրենքի դրույթներ, որոնք ստորին ապյանի դատարանի կողմից չեն կիրառվել:

Միաժամանակ, նոր հանգամանքների հիման վրա վերանայման են ենթակա ոչ միայն գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այլ նաև միջանկյալ դատական ակտերը: Իսկ միջանկյալ ակտերի բողոքարկման արդյունքում վերաքննիչ եւ վճռաբեկ դատարաններն իրավասու են կայացնելու նոր դատական ակտեր, որոնք օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Այս դեպքում ավելի քան սկնհայտ է, որ միայն առաջին ապյանի դատարանի միջանկյալ ակտի՝ նոր հանգամանքների հիմքով վերանայման հնարավորությունը բացառում է վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների կողմից մի-

ջանկյալ դատական ակտերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս կայացված նոր դատական ակտերի վերանայման հնարավորությունը:

Սահմանադրական դատարանը գրնում է, որ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման առկա իրավակարգավորման պայմաններում չի ապահովվում սահմանադրական դատարանի որոշումների լիարժեք կատարումը՝ անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրացումը դարձնելով ինքնանպաստակ եւ ոչ արդյունավետ:

12. Նամաձայն ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ դատական ակտի վերանայման համար նոր հանգամանք է հանդիսանում նաև Նայաստանի Նանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը, որով հիմնավորվել է անձի՝ Նայաստանի Նանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման հանգամանքը: Այս կապակցությամբ ՆՏ սահմանադրական դատարանն իր ՄԳՌ-751 որոշման մեջ մտահոգություն է հայտնել առ այն, որ «ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթն իրավակիրառական պրակտիկայում կարող է լուրջ խոչընդոտներ հարուցել ոչ միայն սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա անձանց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների վերականգնման կամ պաշտպանության համար, այլ նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա անձանց կոնվենցիոն իրավունքների վերականգնման եւ պաշտպանության, հետեւաբար՝ նաև Եվրոպական դատարանի վճիռները կատարելու՝ Նայաստանի Նանրապետության ստանձնած պարտավորության բարեխիղճ կատարման համար»:

Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 46 հոդվածն ամրագրում է պայմանավորվող կողմերի՝ Եվրոպական դատարանի վճիռները կատարելու պարտավորությունը: Ի կատարումն Եվրոպական դատարանի վճիռների՝ պայմանավորվող պետություններից, այդ թվում՝ Նայաստանի Նանրապետությունից, պահանջվում է, ի թիվս այլոց, ձեռնարկել անհատական բնույթի միջոցառումներ: Վերջիններիս խնդիրն է վերացնել ժամանակի մեջ շարունակվող իրավախախտումը եւ այդ իրավախախտման հետեւանքները՝ մինչեւ կոնվենցիոն իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակը հնարավորինս վերականգնելու նպատակով (*restitutio in integrum*): Անհատական բնույթի միջոցառումները, որպես կանոն, ներառում են Եվրոպական դատարանի վճիռի հիման վրա ներպետական դատական ակտերի վերանայումը: Ի կատարումն Եվրոպական դատարանի վճիռի՝ նման անհատական բնույթի միջոցառումն անխուսափելի է լինում բոլոր այն դեպքերում, երբ կոնվենցիոն իրավունքի խախտման պատճառը ներպետական դատական վարույթի ընթացքում դատավարական նորմերի խախտումն է: Նարկ է նկատել, որ դատավարական նորմերի խախտումը կարող է տեղի ունեցած լինել ներպետական ցանկացած դատական ապյանում: Ներեւաբար, ի կատարումն Եվրոպական դատարանի վճիռի՝ անհրաժեշտ է վերանայել այն դատական ապյանի ակտը, որի կողմից թույլ է տրվել դատավարական նորմի սխալը. եթե

առաջին ապյանի դատարանը գործի քննությունն իրականացրել է Կոնվենցիայի 6-րդ - հոդվածում ամրագրված՝ արդար դատաքննության կոնվենցիոն երաշխիքների պահպանմամբ, սպա առաջին ապյանի դատարանի դատական ակտի վերանայման խնդիր չի կարող ծագել:

Սահմանադրական դատարանն այս կապակցությամբ հարկ է համարում վկայակոչել նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 19.01.2000թ. Նախարարների ներկայացուցիչների 694 նստաշրջանում ընդունված «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների հիման վրա ներպետական մակարդակով գործերի վերանայման եւ վարույթի նորոգման մասին» N R (2000) 2 հանձնարարականը: Վերջինս, մասնավորապես, ամրագրում է. «Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն ... նկատի ունենալով, որ Դատարանի վճիռների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելուն ուղղված Նախարարների կոմիտեի պրակտիկան ցույց է տալիս, որ որոշակի հանգամանքներում գործերի վերանայումը կամ վարույթի նորոգումը հանդիսանում է ամենաարդյունավետ, եթե ոչ միակ միջոցը *restitutio in integrum*-ի հասնելու համար.

1. Առաջարկում է Պայմանավորվող պետություններին համոզվել, որ ներպետական մակարդակում գոյություն ունեն համարժեք հնարավորություններ *restitutio in integrum*-ի հասնելու համար...»:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ Եվրոպական դատարանի վճռի հիման վրա ներպետական դատական ակտի վերանայման առկա իրավակարգավորումն առանձին դեպքերում ոչ միայն հնարավորություն չի տա վերականգնելու անձի խախտված իրավունքը, այլ նաև կխոչընդոտի Նայասպանի Նանրապետության կողմից Եվրոպական դատարանի վճիռները կատարելու՝ Կոնվենցիայով սպանձնաձև պարտավորության լիարժեք կատարմանը:

Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ Եվրոպական դատարանի պրակտիկայում հետետողականորեն զարգանում է, այսպես կոչված՝ «ուղենիշ (դեկավար) վճիռների» ինստիտուտը: Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ Եվրոպական դատարանը փոխալ պայմանավորվող պետության դեմ ուղղված մի շարք միանման գանգարներից ընտրում է մեկ առավել փիպային օրինակ եւ ըստ էության քննում եւ վճիռ է կայացնում միայն այդ գանգարի կապակցությամբ. մնացած գանգարների հեղինակների իրավունքների վերականգնումը կատարվում է ներպետական մակարդակում՝ այդ «ուղենիշ վճռի» հիման վրա: Նաշվի առնելով Եվրոպական դատարանի պրակտիկայում առկա այդ զարգացումները եւ ելնելով «ուղենիշ վճիռների» հիման վրա ներպետական մակարդակում Եվրոպական դատարան դիմած քաղաքացիների իրավունքների վերականգնման հնարավորությունն ապահովելու անհրաժեշտությունից, ներպետական օրենսդրությունը պետք է այս հանգամանքը նույնպես հստակ ամրագրի:

13. Ն քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.28 հոդվածը սահմանում է վերանայման արդյունքում դատարանի լիազորությունները: Վերջիններս, ի թիվս այլոց, ներառում են նաև նախորդ դատական ակտն ուժի մեջ թողնելը: Եթե Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի հիման վրա ներպետական դատական ակ-

տի վերանայման արդյունքում հնարավոր է այդ դատական ակտն ուժի մեջ թողնելը, ապա այն դեպքում, երբ դատական ակտի համար որպես նոր հանգամանք հիմք է հանդիսանում սահմանադրական դատարանի՝ համապատասխան օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին որոշումը, ապա գործնականում վերանայված ակտի ուժի մեջ մնալն անհնարին է, որովհետեւ արդարադատության հիմքում դրվել է ու կշարունակի ուժի մեջ մնալ հակասահմանադրական նորմը:

14. Նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման՝ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ներկայումս սահմանված իրավակարգավորման արդյունք կարող է հանդիսանալ այն, որ անհնարին կդառնա վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների դատական ակտերը նոր հանգամանքներով վերանայելը: Նման իրավիճակում գործնականում դատական ակտի վերանայման ինստիտուտը դադարում է գործել ընդհանրապես՝ հնարավորություն չգալով վերականգնել անձի խախտված իրավունքը՝ ինչն առկա է սույն գործով դիմողի առնչությամբ:

Սահմանադրական դատարանը դեռեւս 2008թ. ապրիլի 15-ի իր ՄԴՌ-751 որոշման մեջ անձի՝ սահմանադրական դատարանի դիմելու իրավունքի իրացման արդյունավետության տեսանկյունից կարեւորել է «ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքով՝ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի կարգի սահմանումը, որը, նախ՝ չի խաթարի երկրի իրավական անվտանգությունն ու քաղաքացիական շրջանառության կայունությունը, ինչպես նաեւ լիարժեք հնարավորություն կտա անձին սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերականգնելու հակասահմանադրական նորմի կիրառման արդյունքում խախտված իր իրավունքը»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթներն անձին գրկում են նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման միջոցով իր խախտված իրավունքների լիարժեք վերականգնման հնարավորությունից՝ խաթարելով երկրի իրավական անվտանգությունն ու քաղաքացիական շրջանառության կայունությունը, մեծացնելով կոռուպցիոն ռիսկը, թույլ չգալով Ղայասարանի Նանրապետությանը լիարժեք եւ բարեխղճորեն կարարելու ՏՏ մասնակցությամբ միջազգային պայմանագրերով սրանձնած պարտավորությունները:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման համակարգն արդյունավետ կարող է գործել միայն այն դեպքում, երբ կապահովվի նոր հանգամանքների հիմքով դատական բոլոր ապրանքների ակտերի վերանայման հնարավորությունը, բացառելով ստորադաս ապրանքի դատարանի կողմից վերադաս դատարանի ակտի վերանայումը:

15. Ընչ վերաբերում է դիմողի այն պնդմանը, որ «ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կարարելու մասին» ՏՏ օրենքի 80 հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերով, ի խախտումն ՏՏ Սահմանադրության 42 հոդվածի, անձի իրավական վիճակը վատթարացնող իրավակարգավորմանը տրվել է հեղադարձ

ուժ, ապա այս կապակցությամբ սահմանադրական դատարանը, ելնելով խնդրո առարկա ինստիտուտի նախկին եւ ներկա իրավակարգավորման վերոհիշյալ համեմատական վերլուծության արդյունքներից եւ նախկին իրավակարգավորմանը տված իր վերոհիշյալ գնահատականից, գտնում է, որ իրոք նոր իրավակարգավորմամբ ստեղծվել է անձի համար ավելի անբարենպաստ վիճակ, քանի որ անձը զրկվել է նոր հանգամանքի հիմքով վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների ակտերը վերանայելու հնարավորությունից: Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ նշյալ դրույթները, որոնց բովանդակությունը հանգում է վճռաբեկ բողոքները համապատասխան դատական ակտերը կայացրած առաջին արյանի դատարան փոխանցելուն, ինքնին չի ենթադրում, որ վերջինս պետք է մինչև օրենքի ուժի մեջ մտնելը ներկայացված բողոքների առնչությամբ հետադարձ ուժով կիրառի անձի համար վաթսրացնող հետևանք ունեցող նոր իրավակարգավորումը՝ նրան զրկելով դատական ակտի վերանայման հնարավորությունից: Սակայն, եթե նույնիսկ համապատասխան դատական ակտերը կայացրած առաջին արյանի դատարանը, որին վիճարկվող դրույթի հիման վրա փոխանցվել է վճռաբեկ բողոքը, փորձի կիրառել նախկին իրավակարգավորումը, ապա այն կհանգեցնի մեկ այլ անընդունելի իրավիճակի, երբ վերադաս դատական ակտերը կվերանայվի ստորադաս դատարանի կողմից:

Իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ վիճարկվող դրույթներն ստացել են այնպիսի մեկնաբանություն, որ այդ դրույթների հիման վրա վճռաբեկ բողոքն ստացած համապատասխան առաջին արյանի դատարանը կիրառում է նոր իրավակարգավորումը՝ մերժելով վերադաս արյանների դատական ակտերը վերանայելու խնդրանքը՝ դրանով իսկ, ի խախտումն ՎՍՍՀ Սահմանադրության 42 հոդվածի, հետադարձ ուժ տալով անձի վիճակը վաթսրացնող օրենքին:

16. Դիմողի պնդմամբ՝ «ՎՍՍՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՎՍՍՀ օրենքի 80 հոդվածի 1-ին մասը, ըստ որի՝ նշված օրենքն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունվարի 1-ից, խախտում է ՎՍՍՀ Սահմանադրության 6 հոդվածի 2-րդ պարբերության պահանջը, համաձայն որի՝ օրենքներն ուժի մեջ են մտնում Նայաստանի Նանրապետության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո: Նշված խախտումը, ըստ դիմողի՝ դրսևորվել է նրանում, որ «Իրավական ակտերի մասին» ՎՍՍՀ օրենքի 46 հոդվածի պահանջներին համապատասխան նշված օրենքը պետք է ուժի մեջ մտներ պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող փասնետրոդ օրը, սակայն պաշտոնական տեղեկագրում հրապարակվելով 26.12.2007թ.՝ ուժի մեջ է մտել օրենքով սահմանված փասնետրոյա ժամկետից շուտ, այն է՝ 2008թ. հունվարի 1-ից:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը նման ժամկետ սահմանել է՝ ելնելով օրենքի ուժի մեջ մտնելու համար օրենսդրությամբ սահմանված համապատասխան ընթացակարգի տարբեր փուլերի համար սահմանված եւ անհրաժեշտ ժամկետների ողջամիտ հաշվարկից:

«Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքը նկատի է ունեցել նաև այն պարագան, որ քարտեզ փոխանակական հանգամանքների բերումով իրավական ակտը կարող է պաշտոնապես հրապարակվել նաև ավելի ուշ, քան փոխառ իրավական ակտով սահմանված՝ դրա ուժի մեջ մտնելու օրը: Մասնավորապես, 62 հոդվածի 6-րդ մասում ամրագրված է, որ «Եթե նորմատիվ իրավական ակտը չի հրապարակվել այնպեղ նշված իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ, ապա իրավական ակտն ուժի մեջ մտնելու օր է համարվում դրա հրապարակմանը հաջորդող օրը, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ բոլոր կոնկրետ դեպքերում իրավակիրատ սուբյեկտներն օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետի առնչությամբ պետք է առաջնորդվեն «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի պահանջներով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 80 հոդվածի 4-րդ մասի առնչությամբ գործի վարույթը կարճել:

2. «ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 80 հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

3. «ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 80 հոդվածի 5-րդ մասը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան փոխված բովանդակությամբ հանդերձ, ճանաչել Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 18, 19 եւ 42 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

4. «ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Նայասպանի Նանրապետության օրենքով նախատեսված՝ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.2 բաժնի 204.20 հոդվածի 2-րդ մասը եւ 204.26 հոդվածը ճանաչել Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 18, 19 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

5. Վերոհիշյալ նորմերի՝ ՏՏ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու արդյունքում օրենսդրական բացը բացառելու անհրաժեշտությունից ելնելով, նկատի ունենալով սույն որոշման 10-րդ կետում սահմանադրական դատարանի արքայապարս իրավական դիրքորոշումը, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասով, ՏՏ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչել նաև «ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ

լրացումներ կատարելու մասին» 28.11.2007թ. ՎՕ-277-Ն ՆՏ օրենքի՝ սույն որոշման 3-րդ և 4-րդ կետերով ՆՏ Մահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավադրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված 72 և 76 հոդվածները:

6. Նայասարանի Նանրապետության Մահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

9 սեպտեմբերի 2008 թվականի
ՍԳՈ- 758

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ՆՈՎՆԱՆՆԵՍ ՌՈՒՇԱՆՅԱՆԻ, ԳԵՎՈՐԳ
ԳՅՈԶԱԼՅԱՆԻ, ԽԱԶԱՏՈՒՐ ՇԱՏԻՆՅԱՆԻ, ՌՈՒԲԵՆ
ՄԱՆՈՒԿՅԱՆԻ, ՆՐԱԶ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, ՄԻՔԱՅԵԼ, ՄԱՐԻԵՏՏԱ
ԵՎ ՄԱԴՒԵՆԱ ԲԱԲԱԼՅԱՆՆԵՐԻ, ՆԱԿՈՒՐ ՌԵՏՅԱՆԻ, ՆԱՅԿ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ԵՎ ՍԱՄՎԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ
ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆՏ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 223 ՆՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ, 231
ՆՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 233 ՆՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-6-ՐԴ
ԿԵՏԵՐԻ, 2-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ՄԱՍԵՐԻ, «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ» ՆՏ ՕՐԵՆՔԻ 29.1. ՆՈՂՎԱԾԻ, ՆՏ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 404 ՆՈՂՎԱԾԻ 1-ԻՆ
ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԻ (28.11.2007թ. ԽՄԲԱ-
ԳՐՈՒԹՅԱՄԲ՝ 404 ՆՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ) ԵՎ ՆՏ
ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 13 ՆՈՂՎԱԾԻ 6-ՐԴ ԿԵՏԻ՝
ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

8 հոկտեմբերի 2008թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դապարանը՝ կազմով.
Գ. Նարոթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Նով-
հաննիսյանի (գեկուցող), Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի (գեկուցող), Վ. Պողոսյանի,
մասնակցությամբ՝

դիմողներից՝ Ն. Ռուշանյանի, Գ. Գյոզալյանի, Խ. Շահինյանի, Ն. Վարդանյանի,
Ն. Ռաֆյանի, ինչպես նաև դիմողներ Միքայել, Մարիետրա եւ Մադլենա
Բաբայանների ներկայացուցիչ Ռ. Տեր-Վարդանյանի,

գործով որպես պապասխանող կողմ ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի պաշ-
տոնական ներկայացուցիչ՝ ՆՏ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության
վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն ՆՏ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի եւ 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց դատական նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Նովիաննես Ռուշանյանի, Գեորգ Գյոզալյանի, Խաչատուր Շահինյանի, Ռուբեն Մանուկյանի, Նրաչ Վարդանյանի, Միքայել, Մարիեպոա եւ Մադլենա Բաբայանների, Նակոբ Ռաֆյանի, Նայկ Միքայելյանի եւ Սամվել Միքայելյանի դիմումների հիման վրա՝ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 231 հոդվածի 2-րդ մասի, 233 հոդվածի 1-ին մասի 3-6-րդ կետերի, 2-րդ եւ 4-րդ մասերի, «Փաստաբանության մասին» ՆՏ օրենքի 29.1. հոդվածի, ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի եւ 3-րդ կետի (28.11.2007թ. խմբագրությամբ՝ 404 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի) եւ ՆՏ դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետի՝ ՆՏ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը վերոհիշյալ քաղաքացիների դիմումներն են սահմանադրական դատարան, որոնց հիման վրա, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 39 հոդվածով, սինչեւ դատաքննությունն սկսվելը գործերը միավորվել են դատարանի նույն նիստում քննելու համար:

Լսելով գործով զեկուցողների հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, հերազոտելով ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ՆՏ քրեական դատավարության օրենսգիրքը, ՆՏ դատական օրենսգիրքը, «Փաստաբանության մասին» ՆՏ օրենքը եւ գործում առկա այլուս փաստաթղթերը, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՆՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, Նայաստանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Նայաստանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը ՆՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, Նայաստանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՆՏ դատական օրենսգիրքը ՆՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի փետրվարի 21-ին, Նայաստանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի ապրիլի 7-ին եւ «Նայաստանի Նանրապետության դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՆՏ օրենքի 1-ին հոդվածին համապատասխան ուժի մեջ է մտել 2007 թվականի մայիսի 18-ին:

«Փաստաբանության մասին» ՆՏ օրենքը ՆՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին, Նայաստանի Նանրապետության Նախագահի կողմից:

մից ստորագրվել՝ 2005 թվականի հունվարի 13-ին և ուժի մեջ է մտել 2005 թվականի հունվարի 22-ին:

ՆՆ քաղաքացիական դատավարության և ՆՆ քրեական դատավարության օրենսգրքերը կոչված են կարգավորելու ՆՆ դատարաններում քաղաքացիական և քրեական գործերով դատավարության կարգը և երաշխավորելու ՆՆ Սահմանադրությամբ, օրենքներով և իրավական այլ ակտերով նախատեսված՝ անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի դատական պաշտպանությունը:

2. ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223 հոդվածը սահմանում է.

«Նոդված 223. Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք

1. Ստորադաս դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտը վճռաբեկ դատարանում բողոքարկելու իրավունք ունեն՝

1) գործին մասնակցող անձինք՝ վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանների միջոցով.

2) գլխավոր դատախազը և նրա տեղակալները՝ օրենքով նախատեսված դեպքերում:

2. Վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը և վերաքննիչ դատարան բողոքարկված միջանկյալ դատական ակտերի կապակցությամբ վերաքննիչ դատարանի ընդունած որոշումները բողոքարկելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք»:

Դիմող Գ. Գյոզալյանը գտնում է, որ օրենսգրքի վերոհիշյալ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթը՝ հավաքարմագրված փաստաբանների մասով, չի համապատասխանում ՆՆ Սահմանադրության 14.1. և 18 հոդվածներին:

ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231 հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«Նոդված 231. Վճռաբեկ բողոքի բովանդակությունը

2. Վճռաբեկ բողոքն ստորագրում է հավաքարմագրված փաստաբանը, գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը: Նավաքարմագրված փաստաբանը բողոքին կցում է հասարակ գրավոր լիազորագիրը»:

Դիմող Գ. Գյոզալյանը գտնում է, որ վերոհիշյալ 231 հոդվածի 2-րդ մասի դրույթը՝ հավաքարմագրված փաստաբանների մասով, չի համապատասխանում ՆՆ Սահմանադրության 14.1. և 18 հոդվածներին: Նշված դրույթը վիճարկվել է նաև դիմող Խ. Շահինյանի կողմից, որը գտնում է, որ այն չի համապատասխանում ՆՆ Սահմանադրության 3, 5, 6, 18, 19, 35, 39 հոդվածներին, 48 հոդվածի 1-ին և 2-րդ կետերին, 91 և 92 հոդվածներին: Նույնաբովանդակ հիմնավորումներով 231 հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը վիճարկել են նաև դիմողներ Ն. Միքայելյանը և Ս. Միքայելյանը:

ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածը սահմանում է.

«Նոդված 233. Վճռաբեկ բողոքը վերադարձնելը

1. Վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե՝

1) վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 231 հոդվածի և 234 հոդվածի 1-ին կետի պահանջներին, կամ

- 2) բողոքը բերել է այն անձը, որի իրավունքը չի խախտվել, կամ
 - 3) վճռաբեկ բողոքը ներկայացրել է այն անձը, ով վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունք չունի, կամ
 - 4) վճռաբեկ բողոք ներկայացվել է օրենքով նախատեսված կամ վճռաբեկ դատարանի սահմանած ժամկետից ուշ, եւ բացակայում է այն վերականգնելու մասին միջնորդությունը կամ նման միջնորդությունը մերժվել է.
 - 5) բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման վճռաբեկության կարգով, կամ
 - 6) առկա է սույն հոդվածի 4-րդ կետով սահմանված հիմքը:
2. Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատը կայացնում է որոշում գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից 10 օրվա ընթացքում: Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պարճառաբանված, բացառությամբ սույն օրենսգրքի 234 հոդվածի 1 կետի 1-ին ենթակետի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքերի:
3. Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատը բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ կարող է սահմանել ժամկետ՝ թերությունները վերացնելու եւ վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:
4. Առանց ժամկետի սահմանման վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման կայացման դեպքում բողոք բերող անձը չի կարող կրկին վճռաբեկ բողոք ներկայացնել»:

Դիմողներ Ն. Ռուշանյանը, Նայկ Միքայելյանը եւ Սամվել Միքայելյանը գրում են, որ վերոհիշյալ 233 հոդվածի 1-ին մասի 3-6-րդ կետերի, 2-րդ եւ 4-րդ մասերի դրույթները չեն համապատասխանում ՏՏ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներին: Նշված դրույթները վիճարկվել են նաեւ դիմողներ Ն. Ռաֆյանի եւ Խ. Շահինյանի կողմից: Վերջիններս գրում են, որ դրանք չեն համապատասխանում ՏՏ Սահմանադրության 3, 5, 6, 18, 19, 35, 39 հոդվածներին, 48 հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերին, 91 եւ 92 հոդվածներին, քանի որ խախտում են դատական պաշտպանության իրավունքն անձամբ իրացնելու հնարավորությունը եւ արդարադատության իրականացումը պայմանավորում անձի ֆինանսական հնարավորություններով ու փաստաբանի հավակնությամբ:

ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 1-ին մասը (28.11.2007թ. խմբագրությամբ) սահմանում է.

«Հոդված 404. Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք

1. Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող եւ գործն ըստ էության չլուծող դատական ակտերը, ինչպես նաեւ վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները վճռաբեկ դատարան բողոքարկելու իրավունք ունեն՝

1) դատավարության մասնակիցները, բացառությամբ քրեական հետապնդման մարմինների, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաեւ դիմողները՝ վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանների միջոցով.

2) գլխավոր դափախազը եւ նրա փեղակալները՝ օրենքով նախատեսված դեպքերում»:

Դիմողներ Ն. Վարդանյանը, Միքայել, Մարիեփարա եւ Մաղլենա Բաբայանները գտնուում են, որ վերոհիշյալ 404 հոդվածի 1-ին մասի դրույթները չեն համապատասխանում ՆՏ Սահմանադրության 1, 2, 3, 5, 6, 14-21, 22, 91, 92, 93, 94 եւ 103 հոդվածներին:

Դիմող Ռ. Մանուկյանն իր՝ 21.04.2008թ. դիմումում նշել է. «... Վիճարկում եմ՝ Ն.Ն. վճռաբեկ դատարանի՝ 28.02.08թ. որոշման համար՝ հիմք ընդունված՝ Ն.Ն. քր. դատ. օր-ի 404-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետը եւ 407-րդ հոդվածի՝ 3-րդ մասի. – Կիրառված հոդվածների դրույթների սահմանադրականությունը՝ ըստ. Ն.Ն. Սահմանադրության. 3; 14; 14.1; 18; 19; 20; 22-րդ, րդ հոդվածների պահանջների»։ Վիճարկում է նաեւ. «Ն.Ն. վճռաբեկ դատարանի կողմից. համաձայն Ն.Ն. դատական օրենսգրքի՝ 50-րդ հոդվածի, 60-րդ - հոդվածի 2-րդ մասի եւ Ն.Ն. քր. դատ. օր-ի 66-րդ հոդվածի. -Կիրառվելիք դրույթները՝ չկիրառելու սահմանադրականությունը՝ ըստ. Ն.Ն. Սահմանադրության. հոդված 11.3, հոդված 14, հոդված 14.1, հոդված 20 պահանջների»։ Իր՝ 21.04.2008թ. դիմումում դիմող Ռ. Մանուկյանը սահմանադրական դատարանին խնդրել է. «... քննեք. իմ կողմից վիճարկվող դրույթների օրինականությունները, կայացնելով օրինական, ողջամիտ որոշում: - Որով հնարավոր կլինի վերականգնելու. իմ՝ իրավունքները եւ գործարար համբավը.՝ ըստ. Ն.Ն. Սահմանադրության. հոդվածներ՝ 3; 14; 14.1; 18; 19; 20; 21; 23; 32; 37; 48 (1-ին մասի, 12-րդ կետի, 2-րդ մասի) պահանջներով:...»:

3. ՆՏ դատական օրենսգիրքը եւ «Փաստաբանության մասին» ՆՏ օրենքը կոչված են կարգավորելու համապատասխանաբար՝ Նայաստանի Նանրապետությունում դատական իշխանության (բացառությամբ ՆՏ սահմանադրական դատարանի), ինչպես նաեւ փաստաբանության կազմակերպման եւ գործունեության հետ կապված իրավահարաբերությունները, ուղղված են ՆՏ Սահմանադրությամբ, օրենքներով եւ իրավական այլ ակտերով նախատեսված՝ անձանց իրավունքների, ազատությունների եւ օրինական շահերի դատական պաշտպանության եւ անձանց՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի երաշխավորմանը:

ՆՏ դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետը սահմանում է.

«Նոդված 13. Դատավորի անձեռնմխելիությունը

6. Դատավորի կողմից շահադիպական կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու փաստի առթիվ քրեական հետապնդում չի կարող հարուցվել, եթե այդ ակտը վերադաս դատարանի կողմից բեկանված չէ»:

Դիմողներ Միքայել, Մարիեփարա եւ Մաղլենա Բաբայանները գտնուում են, որ վերոհիշյալ 13 հոդվածի 6-րդ կետի դրույթը չի համապատասխանում ՆՏ Սահմանադրության 1, 2, 3, 5, 6, 8, 14, 14.1. հոդվածներին, 16 հոդվածի 7-րդ կետին, 18 հոդվածին, 19 հոդվածի 1-ին պարբերությանը, 22 հոդվածին, 43 հոդվածի 2-րդ պարբերությանը, 91 հոդվածի 1-ին պարբերությանը, 92 հոդվածի 2-րդ պարբերությանը, 97 հոդվածի 1-ին պարբերությանը:

«Փաստաբանության մասին» ՆՏ օրենքի 29.1. հոդվածը սահմանում է.

«Նոդված 29.1. Նայասպանի Նանրապետության վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանը

1. Նավարարմագիրը փաստաբանին քրամադրվում է օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով՝ Նայասպանի Նանրապետության վճռաբեկ դատարանում փաստաբանական գործունեություն իրականացնելու համար:

2. Նավարարմագիր ստանալու համար փաստաբանը յուրաքանչյուր տարի՝ նոյեմբերի 20-ից 30-ը ընկած ժամանակահատվածում, գրավոր դիմում է ներկայացնում Նայասպանի Նանրապետության վճռաբեկ դատարանի նախագահին:

3. Դիմումի հետ միասին ներկայացվում են հավաքարմագիր քրամադրելու վերաբերյալ Պալատի տասը այլ փաստաբանների գրավոր համաձայնությունները:

Յուրաքանչյուր փաստաբան օրացուցային տարվա ընթացքում իրավունք ունի միայն մեկ փաստաբանի հավաքարմագիր քրամադրելու համար համաձայնություն տալու: Եթե միեւնույն փաստաբանը տվել է մեկից ավելի փաստաբանի հավաքարմագրման համաձայնություն, ապա նախապատվությունը տրվում է վճռաբեկ դատարան ավելի վաղ ներկայացված համաձայնությանը:

4. Դիմումը եւ դրան կից փաստաթղթերը հանձնվում են Նայասպանի Նանրապետության վճռաբեկ դատարանի գրասենյակ: Դիմումը եւ դրան կից փաստաթղթերն ընդունելիս դրանց վրա նշվում են հանձնման օրը եւ ժամը:

5. Նավարարմագրերը քրամադրվում են Նայասպանի Նանրապետության վճռաբեկ դատարանի նախագահի կողմից՝ տվյալ փաստաբանին հավաքարմագրելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում:

6. Նայասպանի Նանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը, ստանալով փաստաբանի դիմումը եւ դրան կից փաստաթղթերը, ստուգում է դրանց համապատասխանությունն օրենքով նախատեսված պահանջներին եւ հավաքարմագրում է փաստաբանին դեկտեմբերի 1-ից 10-ը ընկած ժամանակահատվածում:

Նավարարմագիրը քրամադրվում է տասներեք ամիս գործողության ժամկետով:

7. Նավարարմագրի գործողությունը դադարեցված է ճանաչվում, եթե՝

ա) լրացել է հավաքարմագրի ժամկետը.

բ) դադարեցվել է արտոնագրի գործողությունը.

գ) փաստաբանը գրավոր դիմել է հավաքարմագրի գործողությունը դադարեցնելու համար:

8. Եթե վճռաբեկ բողոք բերած փաստաբանի հավաքարմագրի գործողությունը դադարեցված է ճանաչվում բողոքը ներկայացնելուց հետո, սակայն մինչեւ վճռաբեկ դատարանում բողոքի քննության պահը, ապա բերված բողոքը ենթակա է քննության:

9. Փաստաբանական պալատի նախագահը փաստաբանների արտոնագրերի գործողությունը դադարեցված ճանաչելու դեպքում եռօրյա ժամկետում այդ մասին տեղեկացնում է Նայասպանի Նանրապետության վճռաբեկ դատարանի նախագահին:

10. Փաստաբանին պրամադրված փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագրի գործողության կասեցումը հանգեցնում է պրամադրված հավաքարմագրի գործողության կասեցման»:

Դիմող Գ. Գյոզալյանը գրնում է, որ վերոհիշյալ 29.1. հոդվածը չի համապատասխանում ՆՏ Սահմանադրության 14.1. և 18 հոդվածներին:

4. Դիմումների ուսումնասիրությունը վկայում է, որ միմյանց հեպ համակարգային առումով փոխկապակցված դրույթների սահմանադրականությունը վիճարկելու միջոցով դիմողները հիմնականում բարձրացնում են **վճարեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանների ինստիտուտի կազմավորման, ինչպես նաև վճարեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանների միջոցով** վճարեկ բողոք բերելու պարտադիր պահանջ նախատեսելու սահմանադրականության հարցերը:

Քաղաքացիական դատավարության բնագավառում վճարեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանների ինստիտուտի առկայությամբ դիմողներն իրենց դիրքորոշումները հիմնականում պարճառաբանում են հետեյալ փաստարկներով.

ա/ Սահմանադրության 14.1. հոդվածի երկրորդ պարբերության և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի ուժով խտրականությունը, կախված, ի թիվս այլոց, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է: Մինչդեռ օրենսդիրը, «Փաստաբանության մասին» ՆՏ օրենքի 29.1. հոդվածով կիրառելով խտրականություն փաստաբանների միջեւ, այդուհանդերճ, չի բացահայտել բուն հարցի էությունը, այն է՝

- ո՞րն է կիրառվող խտրականության մոտիվացիան,
- արդյո՞ք կիրառվող խտրականությունն օբյեկտիվ է և ողջամիտ,
- կիրառվող միջոցների և հետապնդվող նպատակի միջեւ արդյո՞ք առկա է ողջամիտ հարաբերակցություն,

բ/ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու, պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի, հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: Դիմողներից քաղաքացի Գ. Գյոզալյանը հղում կատարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Բելգիայի ոստիկանության ազգային արհմիությունն ընդդեմ Բելգիայի գործով 27.10.1975թ. վճռի 44-46-րդ կետերին՝ գրնում է, որ Սահմանադրության 14.1. հոդվածով սահմանված խտրականության ինստիտուտը չունի ինքնուրույն բնույթ, այն ավելի շատ հանդես է գալիս որպես աճանցյալ նորմ և լրացնում է Սահմանադրության այլ հոդվածները՝ կազմելով ինտեգրացված մասը Սահմանադրության յուրաքանչյուր հոդվածի, որոնք սահմանում են իրավունքներ և ազատություններ՝ անկախ իրենց բնույթից: Մինչդեռ վերը նշված հիմնավորման լույսի ներքո «Փաստաբանության մասին» ՆՏ օրենքի 29.1. հոդվածով կիրառված խտրականությունը հնարավորություն է ստեղծում մարդու սահմանադրական այլ իրավունքների, մասնավորապես՝ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտման համար,

գ/ համաձայն ՆՇ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 231 հոդվածի 2-րդ մասի, 233 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ վճռաբեկ բողոք կարող է բերել միայն վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանը, իսկ քանի որ այդ բողոքը չի բխում վերջինիս շահերից, նման բողոք բերելու հնարավորությունը հավասարեցվում է գրոյի, եւ անձը, ձեռականորեն գրկված չլինելով հավաքարմագրված փաստաբանի միջոցով դատական ակտը բողոքարկելու հնարավորությունից, գործնականում գրկվում է այդպիսի հնարավորությունից, խախտվում է Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով նախատեսված իրավունքների պաշտպանությունը:

Քրեական դատավարության բնագավառում վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանների ինստիտուտի առնչությամբ դիմողներն իրենց դիրքորոշումները հիմնականում պարճառաբանում են նրանով, որ քրեական դատավարության բնագավառում հավաքարմագրված փաստաբանի ինստիտուտը կարգավորող օրենսդրական դրույթները սահմանափակում են դատարանում գործերն անձամբ վարելու իրենց դատավարական իրավունքը՝ խախտելով Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով նախատեսված իրավունքների պաշտպանությունը:

ՆՇ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 4-6-րդ կետերի, 2-րդ եւ 4-րդ մասերի առնչությամբ դիմող Ն. Ռուշանյանն իր դիրքորոշումը հիմնականում պարճառաբանում է նրանով, որ ՆՇ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 4-6-րդ կետերի, 2-րդ եւ 4-րդ մասերի դրույթներն իրենց բնույթով այնպիսին են, որ առաջացնում են կոռուպցիոն ռիսկ՝ սահմանափակելով Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով երաշխավորված իրավունքների պաշտպանությունը: Իսկ դիմող Ն. Ռաֆյանն օրենսգրքի 233 հոդվածի վերոհիշյալ դրույթների սահմանադրականության առնչությամբ պնդում է, որ ՆՇ վճռաբեկ դատարան դիմելու իրավունքի իրացումն ամբողջովին պայմանավորված լինելով միայն հավաքարմագրված փաստաբանի ցանկությամբ, սահմանափակում է դատական մարզելիության իրավունքը եւ դրանով հակասում Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի դրույթներին:

ՆՇ դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետի առնչությամբ դիմողներ Միքայել, Մարիետրա եւ Մադլենա Բաբայանների ներկայացուցիչ Ռ. Տեր-Վարդանյանն իր դիրքորոշումը հիմնականում պարճառաբանում է նրանով, որ դատավորի կողմից շահադիպական կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու փաստի առթիվ քրեական հետապնդման հարուցումը **դատական ակտը վերադաս դատարանի կողմից բեկանված լինելու հանգամանքով պայմանավորելը** հարիր չէ իրավական պետությանը, սրբեղծում է ակնհայտ անարդար դատական ակտերի կայացման շարունակական գործընթացի հնարավորություն: Բացի դրանից, ըստ դիմողների ներկայացուցչի՝ դատավորի կողմից շահադիպական կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու փաստի առթիվ քրեական հետապնդման հարուցումը **դատական ակտը վերադաս դատարանի կողմից բեկանված լինելու հանգամանքով պայմա-**

նավորելը գրկում է ՆՇ վճռաբեկ դատարանի կողմից ակնհայտ անարդար դատական ակտ կայացնելու փաստի առթիվ քրեական հետապնդում հարուցելու հնարավորությունից:

5. Առարկելով դիմողների փաստարկների դեմ՝ պատասխանող կողմը գտնում է, որ դիմումներում նշված վիճարկվող դրույթները կարելի է պայմանականորեն բաժանել հետևյալ խմբերի՝

ա) վճռաբեկ դատարանում քրեական եւ քաղաքացիական գործերով հանդես գալու համար սահմանված հավաքարմագրված փաստաբանի ինստիտուտի սահմանադրականության հարցը,

բ) վճռաբեկ բողոքի ընդունելիության ընթացակարգերի հարցը,

գ) դատավորի անձեռնմխելիության բարձր աստիճանը՝ կապված դատական ակտերի կայացման հետ:

Անդրադառնալով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին՝ պատասխանողը նշում է, որ այդ դատարանի վճիռներում մասնավորապես շեշտվում է, որ դատարան դիմելու իրավունքը բացարձակ իրավունք չէ, եւ որ այն կարող է որոշակիորեն սահմանափակվել, հարկապես բողոքի ընդունելիության հարցում, քանի որ դատարան դիմելու դեպքում պետք է հաշվի առնվեն եւ կոնկրետ պետության դատական համակարգը, եւ առանձնահատկություններն ու օրենսդրական կարգավորումները, մասնավորապես՝ վերաքննիչ, վճռաբեկ արյանների նշանակությունը, որպեսզի վճռաբեկ բողոքի ընդունելիության համար կարող են նախատեսվել ավելի խիստ պայմաններ:

Ելնելով միջազգային իրավական մոտեցումներից եւ փորձից՝ պատասխանողը նաեւ կարեւորեց, որ ներկայացուցիչների միջոցով դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը չի կարող անհնարին դարձնել արդարադատության մատչելիության իրավունքի իրացումը յուրաքանչյուր անձի համար:

Պատասխանող կողմը գտնում է, որ ՆՇ վճռաբեկ դատարանում դատավարությունն ամբողջովին գրավոր է, ուստի գործի նյութերի հետազոտմանն անձնական մասնակցության անհրաժեշտություն չի առաջանում: Բացի դրանից, ապացույցներ չեն հետազոտվում: Անհրաժեշտ է, սակայն, որ վճռաբեկ բողոքը համապատասխանի օրենքի պահանջներին եւ ներկայացվի այն ներկայացնելու լիազորություն ունեցող անձի միջոցով: Նայապանի Նանրապետությունում սահմանափակումը վերաբերում է ՆՇ վճռաբեկ դատարան վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտներին, ընդ որում, այդ սուբյեկտներից հավաքարմագրված փաստաբանները հավաքարմագրվում են փաստաբանների որոշմամբ՝ կամքի ազատ արտահայտմամբ, որը չի խաթարում փաստաբանական գործունեության անկախության սկզբունքը:

Ըստ պատասխանողի՝ ՆՇ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը «...թեեւ շարադրված է իրավունքի տեսքով, սակայն իրականում սահմանափակում է սպորտադաս դատարանի՝ օրինական ուժի մեջ մտնելու գործնական էության լուծող դատական ակտը վճռաբեկ դատարանում բողոքարկելու իրավունք

ունեցող սուբյեկտների այդ իրավունքը անձամբ իրականացնելու հնարավորությունը եւ սահմանում է ընթացակարգային արգելք, այն է՝ այդ իրավունքից հնարավոր է օգտվել բացառապես վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանների միջոցով»: Նիշյալ հարցում կիրառվել է օրենսդրական քննիչի կայի այն կանոնը, որ ընդհանրական սահմանափակումը փոխարինվում է հստակ ձեւակերպված իրավունքով ու դրա իրականացման մեխանիզմով: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ թե վճռաբեկ դատարանի դիմելու իրավունքի սահմանափակմանը, այլ այդ իրավունքի իրականացման մեխանիզմի հստակ սահմանմանը:

Միաժամանակ, պատասխանող կողմը գտնում է, որ ՏՏ սահմանադրական դատարանի վարույթում գրվող թե քրեական եւ թե քաղաքացիական գործերով այդ ինստիտուտի Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ մի շարք գործերի առկայությունը, թերևս, ահագանգում է պրակտիկայում վճռաբեկ բողոքների ընդունելիությանն առնչվող խնդիրների մասին, ինչը ենթադրում է օրենսդրության կատարելագործման անհրաժեշտության մասին:

Վեճի առարկա այլ հոդվածների առնչությամբ պատասխանող կողմը գտնում է, որ եթե ընդունվում է, որ վճռաբեկ դատարանի հավաքարմագրված փաստաբանի միջոցով ներկայանալու ինստիտուտը համապատասխանում է ՏՏ Սահմանադրությանը, ապա ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը նույնպես չի հակասում ՏՏ Սահմանադրությանը, քանի որ ծառայում է վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանի միջոցով ներկայանալու ինստիտուտի իրականացմանը: ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը նույնպես չի հակասում ՏՏ Սահմանադրությանը, քանի որ ամրագրելով վճռաբեկ դատարանի դիմելու համար օրենքով կամ վճռաբեկ դատարանի կողմից սահմանված ժամկետներում բողոք բերելու իրավունքը եւ այդ իրավունքն իրականացնելու համար ժամկետներով սահմանափակված պարտականությունը՝ պարտադրում է գործի մասնակիցներին, հավաքարմագրված փաստաբաններին եւ դատարանին օրենքով վերապահված լիազորություններն իրականացնել ժամկետային որոշակի շրջանակում, ինչն իր հերթին նպաստում է արդյունավետ արդարադատության իրականացմանը:

Պատասխանող կողմը գտնում է, որ ՏՏ դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետի՝ ՏՏ Սահմանադրությանը անհամապատասխանության վերաբերյալ ներկայացված հիմնավորումներն անհիմն են եւ դիմումը ենթակա է մերժման: Ըստ պատասխանողի՝ դատական ակտն արդար է այնքան ժամանակ, քանի դեռ չի բեկանվել օրենքով սահմանված կարգով: Դատական ակտի արդար կամ անարդար, կամ ակնհայտ անարդար լինելու մասին գնահատականը տրվում է բացառապես այն դատական արյանի կողմից, որն իրավասու է բեկանել այն կամ թողնել օրինական ուժի մեջ: Եթե դատական ակտն անարդար կամ ակնհայտ անարդար է, այն կարող է վերանայվել օրենքով սահմանված կարգով եւ հիմքերով:

6. Բոլոր դիմողներն էլ ինչպես ՏՏ քաղաքացիական դատավարության եւ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքերի առանձին դրույթների, այնպես էլ «Փաստաբա-

նության մասին» ՆՏ օրենքի 29.1. հոդվածի սահմանադրականությունը վիճարկելու միջոցով վիճարկում են մի ամբողջ դատավարական ինստիտուտի՝ ՆՏ վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանի ինստիտուտի սահմանադրականության հարցը: Ուստի սահմանադրական դատարանը, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասին համապատասխան, հարկ է համարում անդրադառնալ այդ ինստիտուտի իրավակարգավորման բոլոր փորձերի, մասնավորապես, ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթների հետ համակարգային փոխկապակցվածության մեջ գտնվող՝ օրենսգրքի 426.2 հոդվածի սահմանադրականությանը՝ այն մասով, որը վերաբերում է նոր երեսան եկած հանգամանքներով դատական ակտերը վերանայելու կապակցությամբ դիմում ներկայացնելու՝ հավաքարմագրված փաստաբանի իրավունքին, 426.5 հոդվածի սահմանադրականությանը՝ այն մասով, որ նոր երեսան եկած հանգամանքների մասին հայտարարությունները եւ հաղորդումներն ուղարկվում են հավաքարմագրված փաստաբանին, 426.6 հոդվածի սահմանադրականությանը՝ հավաքարմագրված փաստաբանների գործողություններին վերաբերող մասով, ինչպես նաեւ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40 հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությանը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հավաքարմագրված փաստաբանի ինստիտուտն իր կարգավորումն է գտել նաեւ ՆՏ դատական օրենսգրքում (56 հոդված) եւ ՆՏ վարչական դատավարության օրենսգրքում (19 հոդվածի 3-րդ մաս):

7. ՆՏ վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանների ինստիտուտի նախապիպն է հանդիսանում հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանների ինստիտուտը: Վերջինս նախադեպում էր ՆՏ Սահմանադրության 1995թ. հուլիսի 5-ի խմբագրությամբ փետրվարի 93 հոդվածով, որի համաձայն՝ «Օրինական ուժի մեջ մտնող վճիռները, դատավճիռները եւ որոշումները վճռաբեկ դատարանում վերանայվում են գլխավոր դատախազի, նրա փեղակալների կամ հատուկ արտոնագիր ունեցող եւ վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանների բողոքների հիման վրա»: Այսինքն՝ հատուկ արտոնագիր ունեցող եւ վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանի ինստիտուտն ուներ սահմանադրաիրավական կարգավորում:

Մինչեւ 21.02.2007թ. «ՆՏ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՏ-93-Ն եւ «ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՏ-98-Ն օրենքներով կատարված օրենսդրական փոփոխությունները նախադեպում էր քրեական եւ քաղաքացիական գործերով վճռաբեկ բողոք բերելու երկու կարգ՝ անմիջականորեն վճռաբեկ բողոք ներկայացնելու կարգ եւ միջնորդավորված կարգ: Միջնորդավորված կարգը, ՆՏ Սահմանադրության՝ մինչեւ 2005թ. փոփոխությունները փետրվարի 93 հոդվածին համահունչ, իրացվում էր ոչ միայն ՆՏ գլխավոր դատախազի եւ նրա փեղակալների միջոցով, այլեւ հատուկ արտոնագիր ունեցող եւ վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանների ինստիտուտի միջոցով: 2005թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում, նպատակ ունենալով բարձրացնել արդարադատության արդյունավետությունն ու

մաքսելիությունը, հատուկ արտոնագիր ունեցող եւ վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանի ինստիտուտի վերաբերյալ դրույթը ՆՏ Սահմանադրությունից վերացվեց: Սակայն մինչեւ ՆՏ քաղաքացիական եւ քրեական դատավարության օրենսգրքերում 2006թ. հունիսի 1-ին կատարված բարեփոխումները, այն պահպանվեց ընթացիկ օրենսդրության մեջ: Արդյունքում, որոշ ժամանակահատվածում վճռաբեկ բողոք բերելու միջնորդավորված կարգը պահպանվեց միայն ՆՏ գլխավոր դատախազի եւ նրա տեղակալների առնչությամբ, քանի որ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի հունիսի 1-ին ընդունված «ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՕ-107-Ն եւ «ՆՏ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՕ-108-Ն օրենքներով (ուժի մեջ են մտել 16.07.06թ.) հատուկ արտոնագիր ունեցող եւ վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանների ինստիտուտը վերացվեց նաեւ ընթացիկ օրենսդրության մեջ: Ընդ որում, ի տարբերություն քրեական դատավարության, քաղաքացիական դատավարությունում չնայած նույնպես վերացվեց հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պահանջը, այնուամենայնիվ, ամրագրվեց փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու պահանջը:

Անմիջականորեն վճռաբեկ բողոք ներկայացնելու կարգն ի սկզբանե վերաբերում էր միայն վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի դեմ բերվող վճռաբեկ բողոքներին, իսկ միջնորդավորված կարգը՝ առաջին աստիճանի եւ վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ բերվող վճռաբեկ բողոքներին: Նշված երկու կարգերի զուգահեռաբար գործելու իմաստը կայանում էր նրանում, որ բարձրագույն դատավարության մասնակիցների դատավարական կարգապահությունը, երաշխավորվեք գործի քննության ողջամիպ ժամկետների պահպանումը, ինչպես նաեւ, որպեսզի վճռաբեկ դատարանը գերծ մնար անհիմն վճռաբեկ բողոքներ ներկայացվելու հետեւանքով ավելորդ ծանրաբեռնվածությունից:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում հիշատակել «Անձանց ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 404 եւ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223 հոդվածներով նախատեսված դատական պաշտպանության իրավունքի իրագործումն ապահովելու մասին» ՆՏ դատարանների նախագահների խորհրդի 2006թ. հունիսի 13-ի որոշումը, որն ընդունվել է մինչեւ 01.06.06թ. ՆՕ-107-Ն եւ ՆՕ-108-Ն օրենքների ուժի մեջ մտնելը եւ ըստ էության հանդիսացել է Սահմանադրության տեքստից (մինչեւ 2005թ. փոփոխությունները) հատուկ արտոնագիր ունեցող եւ վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանի ինստիտուտի վերաբերյալ դրույթը վերացնելու իրավական արձագանք: Նախագահների խորհուրդը, մասնավորապես, հաշվի է առել, որ «ՆՏ Սահմանադրության (2005թ. խմբագրությամբ) դատական իշխանությանը նվիրված 6-րդ գլխում հատուկ արտոնագիր ունեցող եւ վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանի ինստիտուտը նախատեսված չէ: Բացի դրանից, լրացել է նաեւ նշված փաստաբանների հատուկ արտոնագրերի՝ օրենքով սահմանված ժամկետը: Իսկ հատուկ արտոնագրեր օրենքով սահմանված կարգով այլ փաստաբանի տրված չեն»... Նկատի ունենալով, որ ՆՏ Սահմանադրության (2005թ. խմբագրությամբ) 6-րդ հոդվածի համաձայն «Սահմանա-

դրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ է՝ նրա նորմերը գործում են անմիջականորեն», **հիմք ընդունելով Նայաստրանի Նանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով եւ ՆՏ Սահմանադրությամբ ամրագրված դափական պաշտպանության իրավունքի սահմանափակման անթույլատրելիությունը**, մասնավորապես, որոշվել է, որ 1. Վճռաբեկ դափարանի կողմից քննության են ենթակա՝ 1.1. Օրինական ուժի մեջ մտած դափական ակտերի դեմ **գործին մասնակցող անձանց, գործին մասնակից չդարձած անձանց, վճռաբեկ բողոքները**, որոնց իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ կայացվել է դափական ակտ:

01.06.2006թ. ՆՕ-107-Ն եւ ՆՕ-108-Ն օրենքներով հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք ներկայացնելու պահանջը վերացնելուն հետեւեցին 07.07.2006թ. ՆՕ-152-Ն եւ ՆՕ-153-Ն օրենքներով կարարված փոփոխությունները, որոնցով, ի թիվս այլոց, սահմանվեց վերաքննիչ դափարանի դափական ակտի օրինական ուժի մեջ մտնելու նոր կարգ: Նամաձայն այդ փոփոխությունների՝ վերաքննիչ դափարանի ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

01.06.2006թ. ՆՕ-107-Ն եւ ՆՕ-108-Ն օրենքներով եւ 07.07.2006թ. ՆՕ-153-Ն եւ ՆՕ-152-Ն օրենքներով կարարված փոփոխությունների արդյունքում, փաստորեն, ՆՏ - Սահմանադրության 2005թ. խմբագրությամբ փոփոխված համահունչ, վերացվեց վճռաբեկ դափարան դիմելու միջնորդավորված կարգը (բացառությամբ՝ դափախազի եւ նրա փեղակալների մասով), իսկ անմիջական կարգը, վերաքննիչ դափարանի ակտերի ուժի մեջ մտնելու նոր կարգի սահմանման հետեւանքով, պահպանվեց միայն առաջին ապրանի եւ վերաքննիչ դափարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռների, դափավճիռների եւ որոշումների բողոքարկման առնչությամբ: Օրենսդրական նման կարգավորումը շարունակվեց մինչեւ 21.02.2007թ. ՆՕ-98-Ն եւ ՆՕ-93-Ն օրենքների ընդունումը, որոնցով վերացվեց վճռաբեկ դափարան դիմելու անմիջական կարգը եւ սահմանվեց բացառապես հավաքարմագրված փաստաբանների ինստիտուտի միջոցով գործող միջնորդավորված կարգը: Նշված օրենքներով կարարված փոփոխությունների արդյունքում վճռաբեկության կարգով բողոքարկման էին ենթակա առաջին ապրանի եւ վերաքննիչ դափարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռները, դափավճիռներն ու որոշումները, այն էլ միայն հավաքարմագրված փաստաբանների միջոցով:

21.02.2007թ. ՆՕ-98-Ն եւ ՆՕ-93-Ն օրենքներին զուգահեռ ՆՏ Ազգային ժողովի կողմից 21.02.07թ. ընդունված եւ 07.04.2007թ. ուժի մեջ մտած՝ «Փաստաբանության մասին» ՆՏ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՕ-95-Ն օրենքով «Փաստաբանության մասին» ՆՏ օրենքը լրացվել է ՆՏ վճռաբեկ դափարանում հավաքարմագրված փաստաբանների ինստիտուտին նվիրված 29.1. հոդվածով, որով սահմանվել է հավաքարմագրի փրամադրման կարգը:

28.11.2007թ. «ՆՏ քրեական դափավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՕ-270-Ն եւ «ՆՏ քաղաքացիական դափավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՕ-277-Ն ՆՏ օրենքներով փոփոխության ենթարկվեց նաեւ վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա

դասական ակտերի շրջանակը, ինչն արդյունք էր 18.05.2007թ. ուժի մեջ մտած ՆՏ դասական օրենսգրքի 22 և 50 հոդվածների պահանջների:

Փաստորեն, վերջին օրենսդրական փոփոխությունների արդյունքում գործում է վճռաբեկ դատարան դիմելու միայն միջնորդավորված կարգը և միայն վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դասական ակտերի առնչությամբ:

8. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասի պահանջները, անհրաժեշտ է համարում պարզել.

- բխու՞մ է, արդյոք, **փաստաբանների հավաքարմագրման** ինստիտուտը փաստաբանության վերաբերյալ միջազգային իրավական, ինչպես նաև «Փաստաբանության մասին» ՆՏ օրենքով հաստատված իրավակարգավորման ընդհանուր սկզբունքներից (մասնավորապես՝ ինքնակառավարման և իրավահավասարության սկզբունքներ),

- ապահովվա՞ծ են, արդյոք, վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանների ՆՏ վճռաբեկ դատարանից անկախությունն ու ինքնուրույնությունը,

- ապահովվա՞ծ են, արդյոք, վիճարկվող ինստիտուտի ներկա իրավակարգավորման պայմաններում անձի իրավունքների դասական պաշտպանության մատչելիության և դասական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքները:

9. Փաստաբանության ինստիտուտի կարգավիճակը սահմանված է «Փաստաբանության մասին» ՆՏ օրենքով: Ըստ այդ օրենքի՝ փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, դուրս է պեղական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգից (օրենքի հոդված 3-ի 1-ին պարբերություն): Փաստաբանությունը գործում է **անկախության, օրինապահության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա:**

Իր հերթին, փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած օրինական շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով: Որպես կանոն, փաստաբանական գործունեությունը կրում է ձեռնարկատիրական բնույթ:

Նամաձայն ՆՏ փաստաբանների պալատի տրամադրած տեղեկությունների՝ 2008թ. հունիսի 11-ի դրությամբ փաստաբանական գործունեության արտոնագիր ունի 715 փաստաբան: 43 փաստաբանի փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը կասեցված է: Պալատի գրանցման օրվանից ի վեր (2005թ. հոկտեմբերի 28) դադարեցվել է թվով 30 փաստաբանի փաստաբանական գործունեության արտոնագրի գործողություն:

Նամաձայն ՆՏ դասական դեպարտամենտի տրամադրած տեղեկավորության՝ ՆՏ վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանների ինստիտուտի ներ-

դրումից ի վեր՝ փաստաբանների կողմից հավաքարմագիր ստանալու համար ՏՏ վճռաբեկ դատարանի գրասենյակ է ներկայացվել 62 դիմում, որից 59-ը բավարարվել է եւ, համապատասխանաբար, փրվել է 59 հավաքարմագիր, 3-ը մերժվել է «Փաստաբանության մասին» ՏՏ օրենքի 29.1. հոդվածի 3-րդ մասի պահանջների խախտմամբ կազմված լինելու հիմքով:

10. ՏՏ վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանի ինստիտուտի նախափախը հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանի ինստիտուտն էր: ՏՏ վճռաբեկ դատարանում փաստաբանների հավաքարմագրման կարգի եւ վճռաբեկ դատարանում փաստաբանական գործունեության համար հատուկ արտոնագիր փրամադրելու կարգի համեմատական վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է այդ երկու ինստիտուտների ձեւավորման կարգերի միջեւ հեպտայա առանցքային եւ հավաքարմագրված փաստաբանների ինստիտուտի անկախության ու ինքնուրույնության ապահովման տեսանկյունից առանցքային նշանակություն ունեցող տարբերությունները.

ա/ հատուկ արտոնագիր փրամադրելու գործընթացն սկսվում եւ ավարտվում էր փաստաբանների պալատի շրջանակներում, վճռաբեկ դատարանի նախագահն այդ գործընթացին որեւէ մասնակցություն չուներ. հատուկ արտոնագիրը փրամադրում էր փաստաբանների պալատի նախագահը եւ այն էլ կոլեգիալ մարմնի՝ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի փակ գաղտնի քվեարկության արդյունքներով ընդունված որոշման հիման վրա: Մինչդեռ հավաքարմագրված փաստաբանների դեպքում հավաքարմագիրը փրամադրում է ՏՏ վճռաբեկ դատարանի նախագահը, ՏՏ փաստաբանների պալատի մարմիններն ըստ էության այդ գործընթացում որեւէ դերակատարում չունեն,

բ/ հատուկ արտոնագրի փրամադրման հիմքում ընկած էր փաստաբանական գործունեության արտոնագիր ունեցող փաստաբանների եւ հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանների տարբերակման ծանրակշիռ չափանիշ, այն է՝ մասնագիտական պարաստավածության աստիճանը եւ մասնագիտական գիտելիքների որակը: Եթե փաստաբանական գործունեություն իրականացնելու համար արտոնագիրը փրամադրվում էր որակավորման քննության արդյունքներով, ապա հատուկ արտոնագիրը փրվում էր հատուկ ծրագրով հանձնված որակավորման քննության արդյունքներով: Ընդ որում, հատուկ ծրագրով որակավորման քննություն հանձնած փաստաբաններից հատուկ արտոնագիր փրամադրվում էր այն թվով յոթ փաստաբաններին, ովքեր փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի փակ գաղտնի քվեարկության արդյունքներով ստացել են առավելագույն ձայներ: Մինչդեռ, հավաքարմագրի փրամադրման հիմքում դրվեցին այլ պայմաններ: Եթե հատուկ արտոնագրի փրամադրումը պայմանավորված էր այնպիսի գործոնով, ինչպիսին փրվյալ փաստաբանի մասնագիտական պարաստավածությունն է, ապա հավաքարմագրի փրամադրումը հիմնականում պայմանավոր-

ված է այնպիսի սուբյեկտիվ գործոնով, ինչպիսին փաստ փաստաբանների համաձայնությունն է,

զ/ հատուկ արտոնագիր փրամադրելու կարգն այնպիսին էր, որ առաջին փրարում երաշխավորվում էր թվով 7 հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանների առկայությունը, իսկ հինգերորդ փարում՝ նույնիսկ թվով 35 հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանների առկայությունը (արտոնագիրը փրվում էր հինգ փարի ժամկետով, եւ փվյալ փարվա ընթացքում կարող էր փրվել առավելագույնը 7 հատուկ արտոնագիր): Մինչդեռ հավաքարմագիր փրամադրելու կարգն այնպիսին է, որ չի բացառվում այնպիսի իրավիճակ, երբ հավաքարմագիր ունեցող փաստաբանների թիվը լինի նվազ, քան նույնիսկ 7-ը, քանզի հնարավոր է, որ փվյալ փարում փաստ փաստաբանների համաձայնություն կարողանան ապահովել 7-ից պակաս թվով փաստաբան, որոնց գործունեության ժամկետն էլ ընդամենը 13 ամիս է: Իսկ հավաքարմագիր ունեցող փաստաբանների նվազ թվաքանակը սահմանափակում է վճարել դատարան դիմող՝ դատավարության կողմների ընտրության հնարավորությունը, ինչը կարող է լրացուցիչ գործոն հանդիսանալ վճարել դատարանի մատչելիությունը սահմանափակելու հարցում:

11. Նավաքարմագրված փաստաբանների՝ անկախության, փաստաբանական ծառայության մատուցման ինքնակառավարման եւ իրավահավասարության սկզբունքների իրացման խնդրի համարեքսպում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաեւ «Փաստաբանության մասին» ՆՃ օրենքի 29.1. հոդվածի իրավակիրառական պրակտիկային: Այսպես, ՆՃ վճարել դատարանի նախագահը, ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՆՃ օրենքի 29.1. հոդվածի 5-րդ մասով եւ «Դատարանակազմության մասին» ՆՃ օրենքի (ուժը կորցրել է 18.05.2007թ.) 23 հոդվածի 3-րդ մասի 4.1. կետով՝ իր 05.04.2007թ. N-12Ա հրամանով հավաքարմագրել է թվով 55 փաստաբանի: Հիմք ընդունված դրույթը սահմանում էր. «ՆՃ վճարել դատարանի նախագահը ... օրենքով սահմանված կարգով հավաքարմագրում է Նայասպանի Նանրապետության վճարել դատարանում հավաքարմագրման հայտ ներկայացրած փաստաբաններին կամ մերժում նրանց հավաքարմագրումը, ինչպես նաեւ դադարեցված է ճանաչում հավաքարմագրի գործողությունը» (այս դրույթն ավելացվել էր 21.02.2007թ. ընդունված եւ 07.04.2007թ. ուժի մեջ մտած «Դատարանակազմության մասին» ՆՃ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՕ-94-Ն օրենքով): Նշված հրամանն ուժի մեջ է մտել 07.04.2007թ., այն է՝ փաստաբանների հավաքարմագրման կարգը սահմանող՝ «Փաստաբանության մասին» ՆՃ օրենքում լրացում կատարելու մասին» 21.02.2007թ. օրենքի եւ հավաքարմագրված փաստաբանի միջոցով վճարել դատարան դիմելու պարտադիր պայմանը սահմանող՝ ՆՃ քրեական դատավարության եւ ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին 21.02.2007թ. օրենքների ուժի մեջ մտնելու օրը: Հրամանն ընդունելիս՝ վճարել դատարանի նախագահը ղեկավարվել է «Դատարանակազմության մասին» օրենքի 23 հոդվածի 3-րդ մասի 4.1. կետով, որը, սակայն, ուժի մեջ է մտել միայն 07.04.2007թ.:

Բացի դրանից, «Դատարանակազմության մասին» ՆՏ օրենքի նշված դրույթը սահմանում էր, որ հավաքարմագրումը կատարվում է **օրենքով սահմանված կարգով**: Այդ կարգը սահմանվել է միայն հրամանի ընդունման օրվանից երկու օր հետո ուժի մեջ մտնող «Փաստաբանության մասին» ՆՏ օրենքում լրացում կատարելու մասին» 21.02.2007թ. օրենքով: Ավելին, ըստ նշված կարգի՝ հավաքարմագրման նպատակով վճռաբեկ դատարան փաստաբանները դիմում են **յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 20-ից 30-ը**:

Ներագայում, «Փաստաբանության մասին» ՆՏ օրենքի 29.1. հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այլ փաստաբաններ, օրենքով սահմանված կարգով, 2007թ. նոյեմբերի 20-ից 30-ը դիմել են ՆՏ վճռաբեկ դատարանի նախագահին եւ հավաքարմագրվել: Այդ փաստաբանները թվով 4-ն են:

2007թ. դեկտեմբերի 10-ին ՆՏ վճռաբեկ դատարանի նախագահը՝ հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» ՆՏ օրենքի 29.1. հոդվածի դրույթները, կայացրել է N-79Ա հրամանը, որով որոշվել է 2007թ. ապրիլի 7-ին ՆՏ վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանների հավաքարմագրերի գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2009թ. հունվարի 10-ը: Վճռաբեկ դատարանի նախագահի այս հրամանի օրինականությունը վիճարկվել է ՆՏ վարչական դատարանում: Վերջինս 07.04.2008թ. իր վճռով մերժել է նշված հրամանն առջին և ճանաչելու վերաբերյալ պահանջը: Վճռի պարճառաբանությունը հիմնականում հանգում է նրան, որ «Դատարանը ... հիմք ընդունելով, որ «Փաստաբանության մասին» ՆՏ օրենքի 29.1. հոդվածի համաձայն՝ փաստաբաններին հավաքարմագիր տրամադրելը ՆՏ վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունն է, գտնում է, որ հավաքարմագրերի տրամադրումը որոշակի ժամկետով չի բացառում դրա գործողության ժամկետի երկարաձգումը ՆՏ վճռաբեկ դատարանի նախագահի կողմից»: Դատարանի նշված իրավական դիրքորոշումը վկայում է այն մասին, որ իրավակիրառական պրակտիկայում ՆՏ վճռաբեկ դատարանի նախագահի՝ փաստաբաններին հավաքարմագրեր տրամադրելու լիազորությունը մեկնաբանվել է կիրառվել է որպես հայեցողական լիազորություն: Վարչական դատարանի այս վճիռը, որի դեմ վճռաբեկ բողոքի քննության ընդունումը մերժվել է, իրավական հիմք է ստեղծում հետագայում եւս վճռաբեկ դատարանի նախագահի կողմից հավաքարմագրերի գործողության ժամկետն իր հայեցողությամբ եւ ցանկացած ժամկետով երկարաձգելու համար: Նման մոտեցման արդյունքում, սահմանադրական դատարանը գտնում է, որ խախտվում են փաստաբանի ինստիտուտի գործունեության հիմքում ընկած այնպիսի կարեւորագույն սկզբունքներ, ինչպիսիք են փաստաբանի անկախության, ինքնակառավարման եւ փաստաբանների իրավահավասարության սկզբունքները:

12. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հստակ ձեւավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում եւս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով

նախարհաված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ նաև քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարանի մատչելիությունը:

Այն հանգամանքը, թե 6-րդ հոդվածը որքանով է կիրառելի վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների առնչությամբ, կախված է այդ դատարաններում վարույթի առանձնահատկություններից, դիտարկվելով իր ամբողջության մեջ՝ հաշվի առնելով վճռաբեկ դատարանի առանձնահատուկ կարգավիճակը (տես՝ Սիալկովսկան ընդդեմ Լեհաստանի գործով (Sialkowska v. Poland) 2007թ. մարտի 22-ի վճիռը):

ՆՏ Սահմանադրության 92 հոդվածի համաձայն՝ Նայաստանի Նանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին աստիճանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը: Նույն հոդվածի համաձայն՝ ՆՏ վճռաբեկ դատարանը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: ՆՏ Սահմանադրության 18 և 19 հոդվածներն ամրագրում են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները, այդ թվում՝ նաև արդարադատության մատչելիության իրավունքը: Նշված սահմանադրական դրույթների համադրված մեկնաբանությունը՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո, թույլ է տալիս արձանագրել, որ ՆՏ Սահմանադրությամբ երաշխավորվող դատական պաշտպանության իրավունքը ներառում է նաև վճռաբեկ դատարանում անձի իրավունքների պաշտպանության իրավունքը, որն իր հերթին ներառում է վճռաբեկ աստիճանի մատչելիության իրավունքը, որը պետք է ապահովվի՝ հաշվի առնելով վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը և վճռաբեկ դատարանում վարույթի առանձնահատկությունները:

ՆՏ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը և վճռաբեկ դատարանում վարույթի առանձնահատկությունները մանրամասնված են սահմանադրական դատարանի 2007թ. ապրիլի 9-ի ՄԴՈ-690 որոշման մեջ:

Սահմանադրական դատարանն իրավական պետության սկզբունքների և արդարադատության մատչելիության իրավունքի համատեքստում առանձնակիորեն կարևորում է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը, քանի որ վերջինիս որոշումները՝ պայմանավորված այդ դատարանի սահմանադրական գործառնություններով, կարևորվում են ոչ միայն դատավարության կողմերի շահերի տեսանկյունից, այլ նաև ողջ հանրության շահերի տեսանկյունից:

13. ՆՏ վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանների ինստիտուտի և վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի սահմանադրաիրավական բնույթը սահմանադրական դատարանը, նախ և առաջ հարկ է համարում գնահատել քրեադատավարական և քաղաքացիադատավարական օրենսդրության զարգացումների համատեքստում:

Այսպես, մինչև վերջին օրենսդրական փոփոխությունները վճռաբեկության կարգով կարող էին բողոքարկվել եւ՝ առաջին ապյանի դատարանի, եւ՝ վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտնող դատական ակտերը: Ընդ որում, ուժի մեջ մտնող ակտերի բողոքարկման առնչությամբ գործում էր միջնորդավորված կարգը, իսկ անմիջականորեն կարող էին բողոքարկվել վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտնող դատական ակտերը: Քրեադատավարական եւ քաղաքացիադատավարական օրենսդրության զարգացումն ընթացավ այն ճանապարհով, որ ոչ միայն վերացվեց վճռաբեկ դատարան անմիջական դիմելու կարգը, այլ նաեւ վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա ակտերի շրջանակն ըստ էության սահմանափակվեց միայն վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտնող դատական ակտերով: Ավելին, ՄՊ քրեական եւ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին 28.11.2007թ. ՄՊ օրենքներով սահմանվեցին այնպիսի դրույթներ, որոնք ոչ միայն լուրջ խոչընդոտներ ստեղծեցին վճռաբեկ դատարան դիմելու խնդրում՝ Էականորեն սահմանափակելով այդ դատարանի մատչելիությունը, այլ նաեւ սահմանափակեցին եռաստիճան դատական համակարգում իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորությունները: Մասնավորապես, «ՄՊ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 28.11.2007թ. օրենքի 66 հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվեց ՄՊ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածը, որի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերն անձը չի կարող բողոքարկել վճռաբեկ դատարան, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում: Բացի դրանից, այնպիսի պայմաններում, երբ առաջին ապյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտնող դատական ակտերն այլեւս չեն կարող բողոքարկվել վճռաբեկության կարգով, խստացվել են նաեւ այդ դատական ակտերը վերաքննության կարգով բողոքարկելուն ներկայացվող պահանջները: ՄՊ քրեական դատավարության օրենսգրքի 376.1. հոդվածի համաձայն՝ առաջին ապյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտնող դատական ակտերը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը:

Փաստորեն, քրեադատավարական եւ քաղաքացիադատավարական օրենսդրության համապատասխան փոփոխությունների արդյունքում ոչ միայն դատավարության մասնակիցը զրկվել է առաջին ապյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտնող դատավճիռները թեկուզ միջնորդավորված կարգով, վճռաբեկ դատարանում բողոքարկելու հնարավորությունից, այլ նաեւ վերացվել է այն միակ ուղին, որով ապահովվում էր դատավարության մասնակիցների անմիջական մուտքը վճռաբեկ դատարան (վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտնող դատական ակտերն անմիջականորեն վճռաբեկության կարգով բողոքարկելու հնարավորությունը), ինչի արդյունքում վճռաբեկ դատարանի մատչելիությունը դատավարության մասնակիցների համար հասցվել է նվազագույնի:

Օրենսդրական զարգացումների համապեքսում ՆՏ վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանների ինստիտուտի գոյության ազդեցությունը վճռաբեկ դատարանի մարչելիության իրավունքի վրա գնահատելիս՝ հարկ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ՆՏ քրեական եւ քաղաքացիական դատարարության օրենսգրքերով սահմանված վճռաբեկ բողոք բերելու հիմքերը, ինչպես նաև բողոքը քննության ընդունելու պայմաններն օրենսդրական փոփոխությունների արդյունքում բավականին սեղմվել են: Իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ նույնիսկ հավաքարմագրված փաստաբանների կողմից կազմված վճռաբեկ բողոքների գերակշիռ մեծամասնությունը, չբավարարելով վճռաբեկ բողոքը քննության ընդունելու բավականին սեղմ պայմանները, վերադարձվում է, ինչի արդյունքում հավաքարմագրված փաստաբանի ծառայությունից օգտվելն ինքնին իմաստագրկվում է:

14. Նավաքարմագրված փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պարտադիր պահանջի ազդեցությունը վճռաբեկ դատարանի մարչելիության իրավունքի վրա գնահատելիս սահմանադրական դատարանը կարելոքում է նաև այն խնդիրը, թե արդյո՞ք գործող օրենսդրությունն ապահովում է վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանների կողմից անվճար հիմունքներով իրավաբանական օգնության քրամադրման իրավական հնարավորությունը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ո՛չ «Փաստաբանության մասին» ՆՏ օրենքը, ո՛չ էլ ՆՏ քրեական եւ քաղաքացիական դատարարության օրենսգրքերը չեն նախատեսում վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանների կողմից անվճար հիմունքներով իրավաբանական օգնության քրամադրում, այն է՝ վճռաբեկ բողոք կազմելու իրավական հնարավորություն:

ՆՏ փաստաբանների պալատի ներկայացրած փեղեկավարության համաձայն՝ Նանրային պաշտպանի գրասենյակի 4 հավաքարմագիր ունեցող հանրային պաշտպաններից երկուսի կողմից 16 դեպքում վճռաբեկ բողոքը կազմվել է անվճար հիմունքներով: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՆՏ դատարաններում քննվող քրեական եւ քաղաքացիական բազմաթիվ գործերի պայմաններում խիստ աննշան է հավաքարմագրված փաստաբանի կողմից անվճար իրավաբանական օգնություն քրամադրելու երաշխավորումը՝ այդպիսի կարգի եւ դեպքերի օրենսդրական հստակ ամրագրման բացակայության պայմաններում, եւ կախված է պարզապես հանրային պաշտպանի գրասենյակի «բարի կամքի» դրսելոքումից:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանների կողմից անվճար հիմունքներով իրավաբանական օգնության քրամադրման կարգ եւ վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանների կողմից անվճար հիմունքներով երաշխավորված իրավաբանական օգնության քրամադրման որել մեխանիզմ չնախատեսելու պայմաններում հավաքարմագրված փաստաբանների գոյությունն անհամաչափորեն սահմանափակում է վճռաբեկ դատարանի մարչելիության իրավունքը՝ այդ դատարանում իրավունքների

պաշտպանությունից օգտվելու դափարության մասնակցի հնարավորությունը գործնականում պայմանավորելով նրա ֆինանսական հնարավորություններով:

Սահմանադրական դափարանը հարկ է համարում ընդգծել, որ ՏՏ Սահմանադրության 20 հոդվածի 1-ին մասի ընկալմամբ՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ներառում է, նախ՝ որակյալ իրավաբանական ծառայություն ստանալու հնարավորությունը, երկրորդ՝ պեպուսյան պարտավորությունը՝ որակյալ իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն ապահովելու բոլոր նրանց համար, ովքեր ի վիճակի չեն ինքնուրույն ստանալ այդպիսի օգնություն: Պեպուսյան նշված պարտավորությունը ենթադրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ անհրաժեշտ է փաստաբանի պարտադիր ներկայացուցչություն կամ այն բխում է դափարության շահերից, յուրաքանչյուր կարիքավոր պեպք է իրավունք ունենա ստանալու իրավաբանական որակյալ օգնություն: Դա բխում է արդարադատության իրականացման բնագավառում իրավաբանական ծառայության մատուցման եվրոպական փորձից, ինչպես նաև իրավաբանների և իրավաբանական ծառայության մատուցչության վերաբերյալ ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված սկզբունքներից:

15. Սահմանադրական դափարանը գտնում է նաև, որ վճարելի դափարանի մատուցչության իրավունքը սահմանափակող գործոն է նաև վճարելի դափարանում փաստաբանների հավաքարմագրման գործող կարգը: Մասնավորապես, վերջինս այնպիսին է, որ չի բացառվում այնպիսի իրավիճակը, երբ մի փաստաբանը չկարողանա հավաքել համապատասխան թվով ձայներ, ինչի արդյունքում վճարելի դափարանում հավաքարմագրված փաստաբանների թիվը կարող է սեղմ լինել՝ կրճատելով եւ՝ անձի ընտրության հնարավորությունը, եւ՝ ընդհանրապես վճարելի դափարանի պաշտպանությունից օգտվելու հնարավորությունը: Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ 2007թ. «Փաստաբանության մասին» ՏՏ օրենքի 29.1. հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետում ՏՏ վճարելի դափարան է դիմել եւ հավաքարմագրվել ընդամենը 4 փաստաբան: Բացի դրանից, հարկ է հաշվի առնել, որ հավաքարմագրված փաստաբանն իրականացնելով ձեռնարկատիրական գործունեություն, ըստ էության ազատ է հրաժարվելու այս կամ այն գործով վճարելի բողոք կազմելուց, ինչի արդյունքում դափարության մասնակցի՝ վճարելի բողոք բերելու հնարավորությունն էլ՝ ավելի է նվազում սահմանափակելով վճարելի դափարանի մատուցչությունը: Նման իրավիճակում, փաստորեն, դափարանի մատուցչության իրավունքի իրացումը պայմանավորվում է որոշակի նախապայմանով, այն է՝ փաստաբանի համաձայնությամբ, ինչի արդյունքում հնարավոր է մարդու իրավունքների եւ ազատությունների ազատ իրացման սահմանափակում:

16. Սահմանադրական դափարանը՝ հաշվի առնելով, որ հավաքարմագրված փաստաբանների եւ մյուս փաստաբանների միջեւ մասնագիտական պարտապարտաճանաչության եւ փորձառության հարցում չկա որեւէ տարբերություն, որ օրենսդրությունը վճարելի դափարան դիմելիս հստակորեն չի երաշխավորում անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու հնարավորությունը, որ նույնիսկ հավաքարմագրված փաստաբանների կողմից կազմված բողոքների գերակշիռ մեծամասնությունը քննության չի ընդունվում

վճռաբեկ դատարանում, ինչպես նաև նկատի ունենալով հավաքարմագրված փաստաբանների սեղմ թվաքանակն ու նրանց գործունեության ձեռնարկափրական բնույթով պայմանավորված վճռաբեկ բողոք կազմելուց հրաժարվելու ազատությունը, գտնում է, որ արդարացի հավասարակշռությունը ՏՏ վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանների միջոցով վճռաբեկ դատարան ներկայացնելու պահանջի եւ դրանով հետապնդվող նպատակի միջեւ, այն է՝ ապահովել որակյալ վճռաբեկ բողոքների կազմումը, խախտված է այնքան, որ խաթարվել է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի եւությունը:

Վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պարտադիր պահանջով վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը համաչափ չէ իր նպատակին, քանի որ նման սահմանափակումը թույլ չի տալիս արդյունավետորեն եւ անարգել իրացնել անձի արդար դատաքննության իրավունքը:

17. ՏՏ վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանների ինստիտուտը հարկ է դիտարկել նաև ՏՏ Սահմանադրության՝ օրենքի առջև բոլորի հավասարության եւ խտրականությունն արգելելու սկզբունքներն ամրագրող 14.1. հոդվածի համարեքստում: Ընդ որում, այս սկզբունքներին խնդրո առարկան առնչվում է երկու տեսանկյունից՝ եւ փաստաբանների շահերի տեսանկյունից, եւ դատավարության մասնակիցների տեսանկյունից:

Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ վերաբերմունքի արբերությունը խտրականություն է, եթե առկա չէ օբյեկտիվ եւ պարճառաբանված արդարացում: Նաշվի առնելով այն հանգամանքը, որ վճռաբեկ դատարանում հավաքարմագրման համար օրենսդրությունը որպես չափանիշ է սահմանել ընդամենը 10 այլ փաստաբանների կողմից հավակնորդին քրված գրավոր համաձայնությունները, որ արտոնագիր ունեցող փաստաբանների եւ ՏՏ վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանների միջեւ առկա չէ մասնագիտական ունակություններով եւ փորձառությամբ պայմանավորված որեւէ օբյեկտիվ եւ իրավաչափ արբերություն, սահմանադրական դատարանը գտնում է, որ հավաքարմագիր չունեցող փաստաբաններին վճռաբեկ բողոք կազմելու հնարավորությունից զրկելը հանդիսանում է խտրական վերաբերմունք նրանց նկատմամբ:

Ինչ վերաբերում է դատավարության մասնակիցների համար օրենքի առջև հավասարության սկզբունքի նկատմամբ հարգանքն ապահովելուն, ապա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՏՏ օրենսդրությունը վճռաբեկ բողոք կազմելու առնչությամբ չի երաշխավորում անվճար իրավաբանական օգնության քրամադրում, ինչպես նաև հիմք ընդունելով այն վիճակագրությունը, որ վճռաբեկ դատարան դիմելու միջնորդավորված կարգ սահմանելուց ի վեր կրկնակի կրճատվել է վճռաբեկ բողոքների քանակը, սահմանադրական դատարանը գտնում է, որ հավաքարմագրված փաստաբանների ինստիտուտի առկայությամբ խախտվում է նաև հավասարությունը դատավարության մասնակիցների միջեւ՝ պայմանավորված նրանց գույքային վիճակով:

18. Սահմանադրական դատարանը գտնում է, որ վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանի եւ հավաքարմագիր չունեցող փաստաբանի միջեւ մասնագիտական ունակություններով եւ փորձառությամբ պայմանավորված իրավաչափ փարբերության բացակայության հանգամանքը, վճռաբեկ դատարանում փաստաբանի հավաքարմագրման կարգը, հավաքարմագրված փաստաբանի կողմից իրականացվող փաստաբանական գործունեության խիստ սահմանափակ լինելու հանգամանքը, հավաքարմագրված փաստաբանի եւ վճռաբեկ դատարանի փոխգործակցության բնույթը միանգամայն ավելորդ են դարձնում վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանի ինստիտուտի գոյությունը: Ավելին, հաշվի առնելով նշված ինստիտուտի գործունեության ձեռնարկափրական, մենաշնորհային բնույթը, դրա վրա հիմնված՝ հավաքարմագրված փաստաբանների կողմից ընդամենը վճռաբեկ բողոք կազմելու համար պահանջվող համեմատաբար բարձր վճարները, սահմանադրական դատարան, ինչպես նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու համար պաշտպանության միջոցներն սպառելու պարտադիր պահանջը, կարելի է փաստել, որ վճռաբեկ դատարանում հավաքարմագրված փաստաբանների ինստիտուտն իր գոյությամբ սահմանափակում է ոչ միայն վճռաբեկ դատարանի, այլ նաեւ սահմանադրական դատարանի եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մարտչելիության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները, ըստ էության նպաստավոր պայմաններ է ստեղծում խտրական վերաբերմունքի ցուցաբերման հնարավոր դեպքերի համար՝ պայմանավորված անձի գույքային դրության հիմքով:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պայմանավորված վճռաբեկ դատարանի գործառնական առանձնահատկություններով՝ **փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պահանջը կարող է իրավաչափ համարվել**, եթե բխում է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց շահերից՝ ներկայացուցչությունն իրականացնելով արհեստավարժ եւ փորձառու մասնագետների միջոցով:

Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում ընդգծել, որ փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու ինստիտուտը՝ որպես այլընտրանքային փարբերակ, իրավաչափ կարող է համարվել միայն այն դեպքում, երբ օրենսդրությունը փաստաբանի ծառայությունից օգտվելու հնարավորությունը երաշխավորի յուրաքանչյուրի համար՝ անկախ փվյակ անձի ֆինանսական հնարավորություններից:

19. Դիմող Ն. Ռուշանյանը, ի թիվս այլոց, վիճարկում է նաեւ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի սահմանադրականությունը, որի համաձայն՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե՝ ...4) վճռաբեկ բողոք ներկայացվել է օրենքով նախատեսված կամ վճռաբեկ դատարանի սահմանած ժամկետից ուշ, եւ բացակայում է այն վերականգնելու մասին միջնորդությունը կամ նման միջնորդությունը մերժվել է»:

Այս դրույթը հարկ է դիտարկել ՆՏ սահմանադրական դատարանի 2008թ. մայիսի 27-ի ՄԴՌ-754 որոշման լույսի ներքո, որով Նայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ

անվավեր է ճանաչվել ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 4-րդ մասը (նոր խմբագրությամբ 233 հոդվածի 4-րդ մասը)՝ առանց ժամկետի սահմանման վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքում կրկին բողոք ներկայացնելու իրավունքի սահմանափակման առումով:

Սահմանադրական դատարանի նշված որոշման հիմքում ընկած է այն ընդհանուր իրավական դիրքորոշումը, որի համաձայն՝ քանի դեռ չի լրացել օրենքով վճռաբեկ դատարանի դիմելու համար սահմանված եռամսյա ժամկետը, անձը կարող է, անկախ թերությունները շփոթելու համար վճռաբեկ դատարանի կողմից ժամկետ մաքսանշելու փաստից, կրկին վճռաբեկ բողոք ներկայացնել: Այսինքն՝ սահմանադրական դատարանի նշված որոշման իրավական հետեւանքն այն է, որ եթե վճռաբեկ դատարանը թերությունների պատճառաբանությամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելիս դրանք շփոթելու համար համապատասխան ժամկետ չի սահմանում, ապա անձը կարող է մինչեւ եռամսյա ժամկետի լրանալը կրկին վճռաբեկ բողոք ներկայացնել: Մինչդեռ, վիճարկվող դրույթի ուժով, բոլոր այն դեպքերում, երբ վճռաբեկ դատարանը սահմանում է վճռաբեկ բողոքը ներկայացնելու ժամկետ, որն ավելի սեղմ է, քան օրենքով սահմանված եռամսյա ժամկետը, արվյալ անձն անհավասար վիճակում է հայտնվում այն անձանց համեմատությամբ, որոնց բողոքը կրկին ներկայացնելու համար ժամկետ չի սահմանվել. վիճարկվող հոդվածի 4-րդ մասի անվավերության պայմաններում հնարավոր է դառնում մի իրավիճակ, երբ վճռաբեկ դատարանի կողմից ժամկետ չսահմանելու դեպքում անձը կարող է լիարժեք օգտվել եռամսյա ժամկետից, իսկ ժամկետ սահմանելու դեպքում՝ ոչ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վճռաբեկ դատարանի կողմից սահմանված ժամկետի խախտումը չպետք է խոչընդոտի լինի վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելուն, եթե, այնուամենայնիվ, այն ներկայացվում է օրենքով սահմանված եռամսյա ժամկետում:

Ինչ վերաբերում է ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 3-րդ եւ 5-րդ կետերին, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ կետերում ամրագրված դրույթներն արդյունավետ վճռաբեկ վարույթ իրականացնելու անհրաժեշտ պայմաններ են:

20. ՏՏ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-690 որոշման եզրափակիչ մասի 3-րդ կետի բ) ենթակետում անդրադառնալով ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետի (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) սահմանադրականությանը, ամրագրել է. վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու, հետեւաբար, նաեւ՝ արդարադատության արդյունավետության, բավարար մարչելիության իրավական երաշխիքներ չսպաստվելու առումով, ճանաչել այն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին եւ 2-րդ մասեր), 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանված լինելու անհրաժեշտությանը սահմանադրական դատարանն անդրադարձել է իր որոշման պար-

ճառաբանական մասում, մասնավորապես, որոշման 10-րդ կետում նշված է. «Ուստի վճռաբեկ դատարանի կողմից «Էական նշանակություն», «ծանր հետեւանք» եւ «վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած դատական ակտ» արտահայտությունների՝ դատական գործերի հանգամանքներից բխող բովանդակային հստակեցումը, մեկնաբանումը, պարճառաբանումը պայման է ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի 4.1. ենթակետում եւ 231.2. հոդվածի 1-ին կետում նախանշված հիմքերին համապատասխան՝ վճռաբեկ վարույթում անձանց իրավունքների պաշտպանության հնարավորությունը կանխարեսելի դարձնելու համար»:

«Էական նշանակություն», «ծանր հետեւանք» եւ «վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած դատական ակտ» արտահայտությունները վերաբերում են վճռաբեկ բողոքն ընդունելու երեք հիմքերին, որոնք ներկայումս ամրագրված են ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նոր խմբագրությամբ 234 հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերում:

Բացի դրանից, խնդրո առարկայի վերաբերյալ ՆՏ սահմանադրական դատարանն իր վերաբերմունքն է արտահայտել նաեւ 2008թ. մայիսի 27-ի ՍԴՈ-754 որոշման 5-րդ կետում, որտեղ, մասնավորապես, ամրագրվել է. «Սահմանադրական դատարանն իր նշված որոշման եզրափակիչ մասի 3-րդ կետում ամրագրել է. «Նայաստանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետը (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) ... վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պարճառաբանման պարտադիր պայմանն չնախարեսելու, հետեւաբար, նաեւ՝ արդարադատության արդյունավետության, բավարար մարչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով, ճանաչել Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին եւ 2-րդ մասեր), 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր»: Այսինքն՝ վճռաբեկ դատարանի կողմից՝ նշված հայեցողական լիազորության իրավաչափ եւ ոչ կամայական իրականացումն ապահովող կարեւոր իրավական երաշխիք պետք է հանդիսանար նաեւ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պարճառաբանման պարտադիր պայմանն օրենքով հստակ սահմանելը:

Սահմանադրական դատարանն արճանագրում է, որ սահմանադրական դատարանի նշված որոշման ընդունումից ի վեր ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսդրության մեջ կարարված փոփոխությունների եւ լրացումների արդյունքում վերոհիշյալ իրավական երաշխիքները լիարճեքորեն չեն ապահովվել:

Այսպես՝ «ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կարարելու մասին» 2007թ. նոյեմբերի 28-ի օրենքի 75 հոդվածի համաճայն՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» վերարառությամբ 233 հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետեւյալ խմբագրությամբ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատը կայացնում է որոշում գործը վճռաբեկ դատարանում սրանալու պահից 10 օրվա ընթացքում: Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պարճառաբանված, բացառությամբ սույն օրենսգրքի 234 հոդվածի 1 կետի 1-ին ենթակետի բացակայության հիմնավորմամբ վճռա-

բեկ բողոքը վերադարձնելու դեպքերի»։ Նույնաբովանդակ դրույթ է, ըստ էության, ամրագրված նաև ՏՏ դատական օրենսգրքի 50 հոդվածի 4-րդ մասում. վերջինս եւս վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պարճառաբանման պահանջը չի փարածում այն որոշումների վրա, որոնցում վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքն այն է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը չի կարող էական նշանակություն ունենալ օրենքի միապետակ կիրառության համար:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը՝ նման բացառություն սահմանելով, լիարժեքորեն չի ապահովել սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման կարարումը՝ խախտելով նաև «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Իր ՄԴՈ-690 որոշման մեջ սահմանադրական դատարանը պարճառաբանվածության պարփադիր պահանջը կապում է ոչ թե վճռաբեկ բողոքի ընդունելիության այս կամ այն կոնկրետ հիմքի հետ, այլ՝ բացառապես բոլոր հիմքերի հետ: Նման պահանջն ինքնանպատակ չէ, եւ դրա նպատակն է ապահովել վճռաբեկ բողոքը վերադարձնելիս դատարանի հայեցողական լիազորության իրավաչափ եւ օրինական իրականացումը, ինչպես նաև դատական ակտի նկատմամբ անձի վստահության ապահովումը:

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը գրնում է, որ սահմանադրական դատարանի նման որոշման առկայության պայմաններում ՏՏ Ազգային ժողովն օժտված չէ վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքերից որեւէ մեկը «արփոնյալ» վիճակում դնելու հայեցողությամբ, եւ չի կարող սահմանել, որ այդ հիմքի վկայակոչումն «ինքնաբավ է» ու դրա առկայության հիմնավորման կարիք չկա: Ուսփի, անկախ նրանից, թե օրենսդիրը վճռաբեկ բողոքի ընդունելիության ինչ հիմքեր կսահմանի, դրանցից բոլորը եւ յուրաքանչյուրը ենթակա են պարճառաբանման:

21. Անդրադառնալով դիմողներ Բարալյանների կողմից վիճարկվող՝ ՏՏ դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետի դրույթների սահմանադրականության խնդրին, սահմանադրական դատարանը նշում է, որ օրենսգրքի «Դատավորի անձեռնմխելիությունը» վերփառությամբ 13 հոդվածում կարեւոր երաշխիքներ են նախապետված ապահովելու համար ինչպես դատավորի անկախությունը, այնպես էլ արդարադատության արդյունավետությունը: Տամանման երաշխիքներ են նախապետված դատավորների անկախությունն ու անձեռնմխելիությունը կանոնակարգող ՏՏ օրենսդրության՝ այլ, ինչպես նաև միջազգային իրավական նորմերում: Որպես այդպիսի երաշխիք՝ օրենսգրքի վերոհիշյալ 6-րդ կետը նախապետում է **վերադասության կարգով դատական ակտի նախապես բեկանման պարփադիր սկզբունք**՝ շահադիփական կամ անձնական այլ դրդումներով այդպիսի ակտ դատավորի կողմից կայացնելու փասփի առթիվ քրեական հետապնդում հարուցելու համար:

Սահմանադրական դատարանը հափուկ կարեւորում է **վերադասության կարգով դատական ակտերի օրինականության վերահսկման սկզբունքի** անխախտելիության ապահովումն ինչպես ՏՏ դատական օրենսգրքի 13 հոդվածի վիճարկվող նոր-

մում, այնպես էլ օրենսդրության՝ այլ, այդ թվում նաև քրեաիրավական նորմերում, դիտարկելով այն որպես ՆՏ Սահմանադրության 5, 94 և 97 հոդվածներում ամրագրված **դատական իշխանության անկախության սկզբունքի** իրականացման կարեւոր երաշխիք: Դատական ակտի իրավական գնահատականը կարող է փրվել միմիայն արդարադատական ընթացակարգով այն քննության առարկա դարձնելու արդյունքում:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ սկզբունքը չի ենթադրում, որ դատավորը ենթակա չէ պարասխանաբարության, այդ թվում քրեորեն պարտելի արարքի համար: Այդ իրավահարաբերություններն օրենսդրորեն պետք է կանոնակարգվեն ՆՏ Սահմանադրության 97 հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթների շրջանակներում: Դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետն իրավակիրառական պրակտիկայում չի կարող մեկնաբանվել այն բովանդակությամբ, որ նոր երեւան եկած հանգամանքների հիմքով անհնարին դարձվի դատական ակտերի բողոքարկումը դատախազության կողմից՝ ՆՏ Սահմանադրության 103 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով վերապահված լիազորության շրջանակներում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարանի անկախության եւ օրենքի առջև դատավորի պարասխանաբարության միջև խելամիտ հավասարակշռությունը խախտվել է մասնավորապես նաև ՆՏ քրեական դատավարության օրենսգրքում 2007թ. նոյեմբերի 28-ի ՌՕ-270-Ն օրենքով կատարված փոփոխությունների 426.1. հոդվածով նախատեսված իրավակարգավորման արդյունքում: ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համանման նորմերի առնչությամբ իր իրավական դիրքորոշումները սահմանադրական դատարանն արտահայտել է 2008թ. սեպտեմբերի 9-ի ՄԴՈ-758 որոշման մեջ: Այդ դիրքորոշումներն օրենսդրի կողմից հաշվի պետք է առնվեն նշված հավասարակշռությունը երաշխավորելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 63, 64 և 69 հոդվածներով, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 60 հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի եւ 233 հոդվածի 4-րդ մասի առնչությամբ գործի վարույթը կարճել, քանի որ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի 2008թ. մայիսի 27-ի ՄԴՈ-754 որոշումը, իսկ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն իրավական որոշակիություն է ձեռք բերում միայն օրենսգրքի 233 հոդվածի 4-րդ մասի հետ համակցության մեջ:

2. ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40 հոդվածի 2-րդ մասը, 223 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 231 հոդվածի 2-րդ մասը՝ հավաքարմագրված փաստաբանի ինստիտուտին առնչվող մասով, 233 հոդվածի 2-րդ մասը՝ «բացառությամբ

սույն օրենսգրքի 234 հոդվածի 1 կետի 1-ին ենթակետի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքերի» բառակապակցության մասով, ճանաչել Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 18 և 19 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

3. ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ 28.11.2007թ. խմբագրությամբ, հավաքարմագրված փաստաբանի միջոցով բողոք բերելու մասով, 426.2 հոդվածը՝ այն մասով, որը վերաբերում է նոր երեւան եկած հանգամանքներով դատական ակտերը վերանայելու կապակցությամբ դիմում ներկայացնելու՝ հավաքարմագրված փաստաբանի իրավունքին, 426.5 հոդվածը՝ այն մասով, որը վերաբերում է նոր երեւան եկած հանգամանքների մասին հայտարարությունները եւ հաղորդումները հավաքարմագրված փաստաբանին ուղարկելուն (1-ին մաս), ինչպես նաեւ նոր երեւան եկած հանգամանքներով վարույթ հարուցելու եւ ուսումնասիրություններ կատարելու խնդրում հավաքարմագրված փաստաբանի իրավունքի մասով (4-րդ մաս), 426.6 հոդվածը՝ հավաքարմագրված փաստաբանների գործողություններին վերաբերող մասով (2-րդ եւ 3-րդ մասեր), ճանաչել Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 18 և 19 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

4. «Փաստաբանության մասին» ՆՏ օրենքի 29.1. հոդվածը ճանաչել Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 14.1., 18 և 19 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

5. ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ եւ 5-րդ կետերը համապատասխանում են Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը՝ ՆՏ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների շրջանակներում:

6. ՆՏ դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետը համապատասխանում է Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ՆՏ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

7. Նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմների վերացումը կարող է առաջացնել իրավական բաց՝ խաթարելով այդ նորմերի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ՆՏ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթների համաձայն սույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերով ՆՏ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավանորմների ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2008 թվականի դեկտեմբերի 31-ը՝ ՆՏ Ազգային ժողովին հնարավորություն տալով օրենսդրական կարգավորումները համալիր ձեւով համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

8. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

8 հոկտեմբերի 2008 թվականի
ՍԴՈ-765

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ՎԱՐԴԱՆ ՄԱԼԽԱՍՅԱԿՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝
ՆՏ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 301 ՆՈՂՎԱԾԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

14 հոկտեմբերի 2008թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարոթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Վ. Նովիաննիսյանի, Զ. Ղուկասյանի (զեկուցող), Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող կողմի ներկայացուցիչ՝ փաստաբան Մ. Շուշանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՆՏ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Վարդան Մալխասյանի դիմումի հիման վրա՝ ՆՏ քրեական օրենսգրքի 301 հոդվածի՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Վ. Մալխասյանի՝ 26.05.2008թ. սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործի նյութերը, սույն գործով զեկուցողների գրավոր հաղորդումը եւ կողմերի գրավոր բացատրությունները, հեղափոխելով գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Նայասպանի Նանրապետության քրեական օրենսգիրքն ընդունվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից 2003թ. ապրիլի 18-ին, Նայասպանի Նանրապետության Նախագահի կողմից այն ստորագրվել է 2003թ. ապրիլի 29-ին և համաձայն «Նայասպանի Նանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՆՏ օրենքի 1-ին հոդվածի՝ ուժի մեջ է մտել 2003թ. օգոստոսի 1-ից:

ՆՏ քրեական օրենսգրքի 301 հոդվածը վերնագրված է «Նայասպանի Նանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը»: Նոդվածը սահմանում է. «Պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն, Նայասպանի Նանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը՝

պարտվում են րուզանքով՝ նվազագույն աշխարավարձի երեքհարյուրապարհկից հինգհարյուրապարհկի չափով կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

2. Ըստ գործում առկա դատական ակտերի՝ քաղ. Վ. Մալխասյանը, 2006թ. դեկտեմբերի 2-ին մասնակցելով «Ազատագրված փարածքների պաշտպանություն» հասարակական նախաձեռնության համակարգող, «Արաքս-Քուռ» վերաբնակեցման և զարգացման հիմնադրամի հոգաբարձու խորհրդի նախագահ Ժ. Սեֆիլյանի նախաձեռնությամբ Երեւանի պարաօլեպի պետական քոլեջի դահլիճում կայացած «Նայ կամավորականների համախմբման» անդրանիկ հավաքին, ներկա գրնվող շուրջ 150 անձանց ներկայությամբ կատարել է ՆՏ պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված հրապարակային կոչեր:

Երեւանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին սպյանի դատարանի 2007թ. օգոստոսի 6-ի դատավճռով դիմողը մեղավոր է ճանաչվել ՆՏ քրեական օրենսգրքի 301 հոդվածով և դատապարտվել ազատազրկման երկու տարի ժամկետով:

ՆՏ քրեական գործերով վերաքննիչ դատարանն իր 25.09.2007թ. որոշմամբ Երեւանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին սպյանի դատարանի 2007թ. օգոստոսի 6-ի դատավճիռը դիմողի մասով թողել է անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:

ՆՏ վճռաբեկ դատարանն իր 04.05.2008թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

3. Դիմող կողմը գրնում է, որ ՆՏ քրեական օրենսգրքի 301 հոդվածի դիսպոզիցիայի՝ «Պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված հրապարակային կոչերը» և «Նայասպանի Նանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը» բառակապակցություններն առաջացնում են իրավական անորոշություն, և այդ հիմքով հակասում են ՆՏ Սահմանադրության 1, 2, 3, 5, 14.1, 16, 27 և 43-րդ հոդվածներին: Մասնավորապես, ըստ դիմող կողմի՝ ՆՏ քրեական օրենսգրքի վիճարկվող հոդվածում «Պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն

ուղղված հրապարակային կոչերը» և «Նայասպրանի Նանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը» բառակապակցությունների իրավական անորոշության պարզառով իրավակիրառ մարմինները ճիշդ չեն մեկնաբանել հողվածի դրույթները, ինչի հետևանքով դիմողի արքահայրած կարծիքը դիտարկվել է որպես ՆՇ քրեական օրենսգրքի 301 հոդվածով նախատեսված արարք, դրա արդյունքում, ի թիվս այլոց, սահմանափակվել է դիմողի՝ Սահմանադրության 27 հոդվածով սահմանված՝ կարծիք հայտնելու ազատության իրավունքը:

Իրավական անորոշության առնչությամբ իր փաստարկները դիմող կողմը հիմնականում հիմնավորում է նրանով, որ իշխանությունը ոչ նյութական երեւոյթ է, և, հետևաբար, այն հնարավոր չէ ենթարկել նյութական երեւոյթների ազդեցությանը, ինչպիսին, ի թիվս այլոց, բռնությամբ գավթելն է: Ըստ դիմողի՝ իշխանության ընկալումը որպես նյութական երեւոյթ, ինչպես նաև «պետական իշխանություն» և «պետական իշխանություն իրականացնող պաշտոնատար անձ» հասկացությունների նույնականացումն ընդունված էր խորհրդային ամբողջափրական հասարակությունում, իսկ ՆՇ քրեական օրենսգրքի վիճարկվող հոդվածը՝ նման բովանդակությամբ, խորհրդային կարծրափայ է, ինչն ընդունելի չէ ժողովրդավարական հասարակությունում:

Բացի վիճարկվող դրույթներում իրավական անորոշության առկայության հարցից, դիմող կողմը բարձրացնում է նաև իրավակարգավորման և օբյեկտիվ իրականության միջև անհամապատասխանության հարցը՝ հիմնվելով «Պետական իշխանությունը բռնությամբ գավթելուն ուղղված հրապարակային կոչերը» և «Նայասպրանի Նանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը» բառակապակցությունների բովանդակության մեկնաբանության սեփական տարբերակների վրա: Մասնավորապես, փաստարկելով, որ «պետական իշխանություն» և «ժողովրդի իշխանություն» հասկացությունները նույնանշանակ են, իսկ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է որպես պետական իշխանություն և տեղական ինքնակառավարում, ինչպես նաև նկատի ունենալով, որ ՆՇ Սահմանադրության 104 հոդվածի համաձայն տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է, դիմող կողմն ընդհանրացնում է, որ «պետական իշխանություն» հասկացությունը նշանակում է «պետական նշանակության հարցերը սեփական պատասխանատվությամբ լուծելու Նայ ժողովրդի իրավունք ու կարողություն»: Այս ձեւակերպումից, ինչպես նաև իշխանության բնույթի և էության վերաբերյալ իր փաստարկներից ելնելով՝ դիմող կողմը գտնում է, որ օբյեկտիվ իրականության մեջ հնարավոր չէ գավթել ժողովրդի իրավունքը և կարողությունը, և այդ կապակցությամբ վիճարկվող դրույթների ուղիղ, սովորական, քառացի մեկնաբանության դեպքում կարելի է հանգել անհեթեթության: Դիմողը գտնում է, որ «...իրականության մեջ անհնար՝ «պետական իշխանությունը բռնությամբ գավթելուն» կամ «սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն» ուղղված «հրապարակային կոչերը» հանրության համար վրանգավոր «արարքներ» չեն և չեն կարող լինել, դրանց արգելքը «պաշտպանություն» է գոյություն չունեցող, երեսակայական վրանգից, ապահովում է ոչ թե իրավական որոշակիությունը, մարջելիությունը և կանխատեսելիությունը, ... այլ ընդհակառակը, «ապահովում է» իրավական անորոշություն, կամայա-

կանություն եւ խորականություն, ուստի հակասում է Սահմանադրությանը եւ Կոնվենցիային»:

Վերլուծելով ՆՏ քրեական օրենսգրքի 301 հոդվածի վիճարկվող դրույթների, ինչպես նաեւ 300 հոդվածի եւ ՆՏ Սահմանադրության հարկապես 2, 3 եւ 5 հոդվածների փոխառնչությունները, դիմող կողմն ընդհանուր հեղեղություն է անում, որ վեճի առարկա դրույթների ու ընդհանրապես օրենսգրքի 11-րդ բաժնի բովանդակությունը՝ իմաստի, էության, բնույթի, ներքին պրամաբանության, արժեքային համակարգի եւ նպատակային նշանակության առումով, ՆՏ քրեական օրենսգրքը պահում են խորհրդային անցյալի քաղաքակրթական ճգնաժամի հարթությունում:

4. Պատասխանող կողմն առարկելով դիմողի փաստարկների դեմ՝ գտնում է, որ ՆՏ քրեական օրենսգրքի 301 հոդվածը դիմողի հարցադրումների շրջանակում սահմանադրականության խնդիր չի առաջացնում, եւ բավարար հիմք չի տեսնում այն ՆՏ Սահմանադրության 1, 2, 3, 5, 27 եւ 43 հոդվածներին հակասող եւ անվավեր ճանաչելու համար:

Պատասխանող կողմը շեշտում է, որ ՆՏ Սահմանադրության 2 հոդվածն ամրագրում է, որ իշխանության յուրացումը որեւէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է: Ընդ որում, «յուրացումը» կարող է կատարվել փարբեր եղանակներով՝ ինչպես բռնի, այնպես էլ ոչ բռնի: ՆՏ քրեական օրենսգրքի 301 հոդվածում օգտագործված «զավթում» եզրույթը միանշանակ ենթադրում է բռնություն կամ բռնության սպառնալիք:

Պատասխանող կողմը գտնում է, որ ՆՏ քրեական օրենսգրքի 301 հոդվածով նախատեսված հանցագործության անմիջական օբյեկտը կազմում են սահմանադրորեն ձեւակերպված ՆՏ սահմանադրական կարգի այն հիմունքները, որոնցում ամրագրված են պետական իշխանության ձեւավորման եւ գործունեության սկզբունքները: Այդ հոդվածով քրեորեն հետապնդելի են պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն եւ Նայաստրանի Նանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը՝ ՆՏ Սահմանադրության 47 հոդվածի 2-րդ մասի ուժով, ՆՏ Սահմանադրության 43 հոդվածի 1-ին մասում ամրագրված հիմքերով եւ կարգով, նույն հոդվածի 2-րդ մասում, ինչպես նաեւ միջազգային իրավունքում ամրագրված՝ իրավունքը սահմանափակելու թույլատրելի սահմաններում:

Պատասխանող կողմը գտնում է նաեւ, որ սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելու կոչը՝ ՆՏ քրեական օրենսգրքի 301 հոդվածի իմաստով, նշանակում է «...այնպիսի բանավոր, գրավոր կամ պատկերավոր այլ ներգործություն մարդկանց գիտակցության, կամքի կամ վարքագծի վրա, որը նպատակ ունի նրանց մտք ձեւավորելու հակասահմանադրական եղանակով սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելու հակում»:

Ուստի բռնության կոչը՝ ՆՏ քրեական օրենսգրքի 301 հոդվածի իմաստով, նշանակում է քաղաքական պայքարի հակասահմանադրական զինված ձեւեր, ավերիչ ուղղվածությամբ զանգվածային գործողություններ, իշխանական իմսպիտույնների բռնի վերացում կամ փոփոխում եւ այլն: Ընդ որում, կոչում հնչած բռնության բնույթը կոչի բովանդա-

կությունում պեքք է արտահայտված լինի որոշակիորեն, ընդհուպ մինչև բռնության եղանակի ուղղակի նշումը:

Պատասխանող կողմը մատնանշում է նաև, որ պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն, «սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչ» արտահայտությունը գործածվում է նաև այլ պետությունների, մասնավորապես՝ Շվեյցարիայի, Լիբիայի, Լատվիայի, Բուլղարիայի եւ մի շարք այլ պետությունների քրեական օրենսգրքերում: Պատասխանող կողմը հղում է կատարում նաև Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 2007թ. դեկտեմբերի 17-ին փրված թիվ 542/2007 եզրակացությանը՝ ՆՄ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա ՆՄ քրեական օրենսգրքի 301 հոդվածի՝ եվրոպական չափանիշներին, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10 հոդվածին համապատասխանության հարցի վերաբերյալ:

Պատասխանողի կարծիքով՝ իրավական որոշակիության իմաստով ՆՄ քրեական օրենսգրքի 301 հոդվածում նախատեսված՝ պետական իշխանության ճյուղերից ցանկացածը բռնությամբ զավթելու հրապարակային կոչն ուղղված է պետական իշխանության դեմ: Տվյալ դեպքում իրավական որոշակիությունը, մատչելիությունը եւ կանխատեսելիությունն ապահովված են:

5. Նաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողն իր իրավունքների խախտումը հիմնականում պայմանավորում է ՆՄ քրեական օրենսգրքի վիճարկվող դրույթներում իրավական անորոշության առկայությամբ եւ դրա հետեւանքով իրավակիրառ պրակտիկայում այդ դրույթներին փրված, իր կարծիքով, սխալ մեկնաբանությամբ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՄ օրենքի 63 հոդվածի 1-ին մասի եւ 68 հոդվածի 7-րդ մասի պահանջները, սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարեւորում է ՆՄ քրեական օրենսգրքի 301 հոդվածի դրույթների սահմանադրաիրավական իմաստի բացահայտման, ինչպես նաև կիրառման պրակտիկայում դրսեւորված մոտեցումների գնահատման անհրաժեշտությունը:

Միեւնույն ժամանակ, սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել, թե արդյո՞ք ՆՄ քրեական օրենսգրքի 301 հոդվածի դիսպոզիցիան սահմանադրական նորմերի ու սկզբունքների արեսակյունից հետապնդում է իրավաչափ նպատակ, եւ արդյո՞ք «բռնության գործադրմանն ուղղված հրապարակային կոչ» եւ «կարծիքի ազատ արտահայտում» հասկացությունների միջեւ առկա է ողջամիտ փոխանցարվածություն:

6. ՆՄ քրեական օրենսգրքի 301 հոդվածում «Պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված հրապարակային կոչերը» եւ «Նայաստանի Նանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը» բառակապակցությունները համադրված գնահատման ենթակա արտահայտություններ են: Երկրի սահմանադրական կարգն իրենից ներկայացնում է հասարակության հիմնա-

րար հարաբերությունների կանոնակարգման, պետական իշխանության կազմակերպման, անհատ-պետություն փոխհարաբերությունների սահմանադրորեն ամրագրված համակարգը: Վերջինիս հիմքում դրվող արժեքների եւ սկզբունքների ամբողջականությունն առանձնացվում է որպես երկրի սահմանադրական կարգի հիմունքներ: Նասարակության հիմնարար հարաբերությունների կանոնակարգման, պետական իշխանության կազմակերպման եւ անհատ-պետություն փոխհարաբերությունների կարգը չի կարող սահմանվել կամ փոփոխության ենթարկվել այլ կերպ ու այլ ձեւերով եւ մեթոդներով, քան նախապես վաճ է Սահմանադրությամբ: Ներքին, վեճի առարկա դրույթների փոխհարաբերակցությունը պետք է դիտարկել այս տեսանկյունից:

Սահմանադրական իրավունքի տեսանկյունից իշխանությունը կամքը պարտադրելու իրավունք եւ կարողություն է: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետական իշխանությունը, որպես ժողովրդի կամքը միջնորդավորված կերպով պարտադրելու իրավունք եւ կարողություն, պետության գործառնական կարեւոր բաղադրարարներից է, որն արտահայտվում է պետության կողմից իր առաքելությունը հրապարակային եւ ինքնիշխան ձեւով իրականացնելու կարողունակությամբ՝ համապարտադիր վարքագծի կանոններ սահմանելու եւ դրանց կիրառումն ապահովելու միջոցով:

Սահմանադրական մակարդակում հսկայական փոփոխություններ են «ժողովրդի իշխանություն» եւ «պետական իշխանություն» հասկացությունները: Ժողովրդավարական երկրներում իշխանությունը պարկանում է ժողովրդին, որը հանդիսանում է այդ իշխանության միակ կրողը եւ աղբյուրը: Ընդ որում, ՏՄ Սահմանադրության 2 հոդվածը սահմանում է, որ «Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաեւ Սահմանադրությամբ նախապեսված պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով»: ՏՄ Սահմանադրության 1, 2, 3, 5 հոդվածների համալիր վերլուծությունից բխում է, որ **պետական իշխանությունը հանդես է գալիս որպես պետականորեն կազմակերպված ժողովրդի հանրային իշխանության ձեւ, որն իրականացվում է Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման հիման վրա:** Այդ բաժանումն իրականացվում է իշխանության գործառնական բնույթից ելնելով, որին համապատասխան ձեւավորվում են անհրաժեշտ կառուցակարգեր՝ իշխանության մարմիններ, որոնք սահմանադրորեն օժտվում են համարժեք լիազորություններով եւ իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Պետական իշխանությունն իրականացվում է գործառույթ - ինստիտուտ - իրավասություն եռամիասնական սահմանադրական ներդաշնակության հիման վրա՝ մարդու իրավունքների եւ ազատությունների սահմանադրորեն նախապեսված սահմանափակումների շրջանակներում: Այդ եռամիասնության մեջ ինստիտուտն ու իրավասությունը միջոց են գործառույթն իրականացնելու համար, որը ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքների հիման վրա տեղի է ունենում Սահմանադրությամբ եւ օրենքներով նախապեսված կառուցակարգերի, կոնկրետ լիազորությունների, ձեւերի ու մեթոդների

շրջանակներում, որոնց արդյունքում երաշխավորվում է պեպուրյան ողջ փարածքում հասարակական հարաբերությունների կանոնակարգումը (համապարփադիր վարքագծի կանոնների սահմանումը) եւ դրանց իրացման ապահովումը: Դրանցից դուրս իրականացվող գործողությունները ճանաչվում են որպես հակաիրավական: Նման հակաիրավական գործողությունների թվին են դասվում նաեւ Սահմանադրությամբ կամ օրենքով սահմանադրական ինստիտուտին վերապահված պեպուրյան հանրային գործառնություն եւ դրա իրականացման միջոցներին բռնությամբ փրանալը, իրեն ենթարկելը կամ այլ կերպ՝ զավթելը: ՆՏ Սահմանադրության 47 հոդվածը միանշանակ պահանջ է առաջադրում, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը, ինչպես նաեւ նույն հոդվածն արգելում է իրավունքների եւ ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի փայտելու, ազգային, ռասայական, կրոնական պայտություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով: Այս համարեքսքում սահմանադրական կարգը բռնի փայտելու նպատակով իրավունքների եւ ազատությունների օգտագործման արգելումն ունի այն սահմանադրաիրավական իմաստը, որ իրավունքների չարաշահման արգելք է նախապեսվում այնպիսի գործողությունների համար, որոնք ուղղված են սահմանադրորեն նախապեսված իրավակարգավորումը բռնության գործադրմամբ ձախողելուն (կործանելուն, քայքայելուն, ավերելուն եւ այլն), անիրագործելի դարձնելուն:

Իրավունքների չարաշահման արգելքը նախապեսված է նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 17 հոդվածով:

Պեպուրյունը պարտավոր է իրավական երաշխիքներ ստեղծել սահմանադրական այդ պահանջն իրականացնելու եւ երկրի սահմանադրական կարգի կայունությունն ապահովելու ուղղությամբ:

Վերոշարադրյալ մոտեցումները հաշվի առնելով՝ «պեպուրյան իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված հրապարակային կոչեր» եւ «Նայաստանի Նանրապեպուրյան սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչեր» հասկացությունները ՆՏ քրեական օրենագրքի 301 հոդվածի սահմանադրաիրավական իմաստով պեպք է հասկանալ **օրենսդիր, գործադիր կամ դատական իշխանության մարմինների պեպուրյան հանրային գործառնություններին Նայաստանի Նանրապեպուրյան Սահմանադրությամբ սահմանված կարգի խախտմամբ՝ բռնությամբ կամ դրա գործադրման անմիջական եւ իրական սպառնալիքով փրանալու համար գործողություն պլանավորելու, կազմակերպելու, նախապատրաստելու կամ իրականացնելու նպատակով այլ անձանց մասնակից դարձնելու դիմում կամ հրավեր:** Իրավակիրառական պրակտիկան եւ ցանկացած գործի փաստական հանգամանքների գնահատումը պեպք է ելնի փվյալ հասկացությունների սահմանադրաիրավական այդ բովանդակությունից, **առաջին հերթին նկատի ունենալով հակաիրավական (բռնի) գործողությունների միջոցով պեպուրյան հանրային գործառնության նկատմամբ ուրնագություն իրականացնելու նշված հանգամանքը:** Բռնության կոչերի նպատակը մեկն է՝ համախմբել մարդկանց, ուղղություն փայ նրանց բռնի գործողություն-

ներին: Քննարկվող հանցակազմի իմաստով բռնության կոչեր չեն կարող համարվել իշխանության քննադատությունը, իշխանությունների հրաժարականի անհրաժեշտության հիմնավորումը, հրաժարականի պահանջը, ցույցեր, երթեր, հանրահավաքներ անցկացնելու կոչը կամ կազմակերպումը, փոխաբերական իմաստով արված արտահայտությունները:

Նանրային իշխանության մարմինները եւ պաշտոնապար անձինք պարտավոր են հանդուրժել իրենց հասցեին արված ավելի սուր քննադատություն, քան այն, որը թույլարբելի է մասնավոր անձանց հասցեին: Մյուս կողմից, այդ քննադատությունը չի կարող վերածվել բռնության կոչերի, որն անհամարեղելի է խոսքի ազատության իրավունքի հետ: Նանցակազմի առկայության համար էական է, որ բռնության կոչերը հրապարակային բնույթ կրեն, այսինքն՝ լինեն բացահայտ եւ ընկալելի, ուղղված մարդկանց լայն շրջանակի՝ նրանց դրդելով բռնության կիրառման:

Վերոշարադրյալ մեկնաբանությունից բխում է նաեւ, որ ՆՏ քրեական օրենսգրքի 301 հոդվածի իմաստով՝ «պետական իշխանություն» հասկացությունը չի կարող նույնականացվել «պաշտոնապար անձ» հասկացության հետ, եւ դա չի կարող արվել նաեւ իրավակիրառական պրակտիկայում:

Վեճի առարկա դրույթների համարեքսպում իրավունքի ամեն մի չարաշահում պետք է գնահատվի միայն ու միայն վերոշարադրյալ իմաստով սահմանադրական կարգը բռնությամբ փրակալելու իրական սպառնալիքի եւ դրա կանխման անհրաժեշտության փեսանկյունից: Այս շրջանակներում միայն ՆՏ քրեական օրենսգրքի 301 հոդվածի դիսպոզիցիան սահմանադրական նորմերի ու սկզբունքների փեսանկյունից կարող է ունենալ իրավաչափ բնույթ:

7. ՆՏ Սահմանադրության 27 հոդվածի համաձայն.

«Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ փեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, սփռնալու, փարածելու ազատությունը, փեղեկավարության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրավամիջոցների եւ փեղեկավարական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է:

Պետությունը երաշխավորում է փեղեկավարական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի եւ հեռուստափեսության առկայությունը եւ գործունեությունը»:

Սահմանադրության 27 հոդվածի վերլուծությունից բխում է, որ անհատին անմիջականորեն վերաբերում են հոդվածի առաջին եւ երկրորդ մասերով սահմանված իրավունքները: Նոդվածի երրորդ եւ չորրորդ մասերով սահմանված դրույթները վերաբերում են լրավամիջոցներին, երաշխավորում են համապարասխան ինստիտուցիոնալ եւ կազմակերպչական միջոցների առկայությունը՝ ապահովելու համար Սահմանադրության 27 հոդվածի առաջին եւ երկրորդ մասերով սահմանված իրավունքների արդյունավետ իրա-

ցումը: Այդ կապակցությամբ ՏՏ քրեական օրենսգրքի 301 հոդվածը հարկ է գնահատել ՏՏ Սահմանադրության 27 հոդվածի առաջին և երկրորդ մասերով սահմանված իրավունքների և դրանց սահմանափակումների տեսանկյունից:

Սահմանադրության 27 հոդվածի առաջին և երկրորդ մասերում ամրագրված՝ կարծիքն ազատ արտահայտելու և խոսքի ազատության իրավունքները կարող են սահմանափակվել ՏՏ Սահմանադրության 43 հոդվածում ամրագրված հիմքերով:

Սահմանադրության 43 հոդվածի համաձայն.

«Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պեղական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պապվի և բարի համբավի պաշտպանության համար:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Նայաստանի Նանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

ՏՏ քրեական օրենսգրքի 301 հոդվածի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ հոդվածի դրույթները՝ իրենց իրավակարգավորման շրջանակներում, ՏՏ Սահմանադրության 27 հոդվածով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10 հոդվածով երաշխավորված՝ կարծիքն ազատ արտահայտելու և խոսքի ազատության իրավունքները սահմանափակելու առումով համահունչ են ՏՏ Սահմանադրության 43 հոդվածով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10 հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմաններին, ինչպես նաև իրավունքների չարաշահման արգելմանն ուղղված՝ ՏՏ Սահմանադրության 47 և Կոնվենցիայի 17 հոդվածների պահանջներին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես իր վճիռներում բազմիցս անդրադարձել է այս հարցին և նշել, որ ինչպես սահմանում է Կոնվենցիայի 10 հոդվածը, այդ ազատությունը ենթարկվում է բացառությունների, որոնք, սակայն, պետք է մեկնաբանվեն խիստ, և ցանկացած միջամտության անհրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով սահմանված լինի: Միաժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից բխում է, որ բռնությամբ իշխանությունը զավթելու կամ պետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելու կոչերը կարող են արգելվել համաձայն այն բացառությունների, որոնք նախատեսված են Կոնվենցիայի 10 հոդվածի 2-րդ կետում: Այդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ «հրապարակային կոչ» արտահայտությունը սահմանադրական դատարանի արտահայտված իրավական դիրքորոշումների իմաստով անորոշ չէ և այն, անձանց մասնավոր հաղորդակցությունից դուրս, փարբեր ձևերով ուղղված է հանրության անդամներին: Անորոշ չեն նաև «պեղական իշխանությունը բռնությամբ զավթել» և «սահմանադրական կարգը բռնությամբ փո-

փոխել» արտահայտությունները, որոնք չեն ներառում օրինական կարգով իրականացվող գործողություններ:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել նաև, որ ՏՏ քրեական օրենսգրքի 301 հոդվածի, ՏՏ Սահմանադրության 27 հոդվածի և Կոնվենցիայի 10 հոդվածի դրույթների փոխառնչությունները պետք է դիտարկել ոչ միայն Սահմանադրության 47 և Կոնվենցիայի 17, այլ նաև Սահմանադրության 29 և Կոնվենցիայի 11 հոդվածների փոխհարաբերակցում: Բանն այն է, որ վերջին երկու հոդվածներում ամրագրված իրավունքները սահմանադրաիրավական առումով ճանաչվում են այդպիսին, եթե խաղաղ են ու առանց զենքի: Իսկ Կոնվենցիայի 10 հոդվածի 2-րդ մասը, նկատի ունենալով, որ արտահայտվելու իրավունքի իրականացումը կապված է նաև պարտավորությունների ու պատասխանատվության հետ, նախատեսում է ոչ միայն օրենքով սահմանափակումների, այլև պարտավորությունների կիրառման հնարավորություն՝ իրավունքի չարաշահումը բացառելու և ժողովրդավարական հասարակությունում նույն այդ 10 հոդվածով թվարկված իրավաչափ նպատակներին հասնելու համար:

Նշված հոդվածների համալիր վերլուծությունից հետևում է, որ «բնության գործադրմանն ուղղված հրապարակային կոչ» և «կարծիքի ազատ արտահայտում» հասկացությունների միջև առկա է ողջամիտ փոխհարաբերակցություն:

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա գործի շրջանակներում առաջնային խնդիրը վեճի առարկա նորմի պարզաճ հրավական մեկնաբանման և կիրառման երաշխավորումն է: Դրա ապահովման իրավական պարտավորությունը, ՏՏ Սահմանադրությանը համապատասխան, կրում է ՏՏ վճռաբեկ դատարանը: Ի փոխարեն բազմաթիվ երկրների, ՏՏ Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքով ՏՏ սահմանադրական դատարանն իրավասու չէ սահմանադրականության փաստագրից քննության առարկա դարձնել դատական ակտերը: Սահմանադրական դատարանն իրավասու չէ նաև գնահատելու դատարանների կողմից քրեական պարտազատի կիրառման համաչափությունը, քանի որ չի կարող գնահատել կոնկրետ քրեական գործերի փաստական հանգամանքները, որոնք առիթ են ստեղծում կիրառելու այս կամ այն պարտազատի: Այսուհանդերձ, ՏՏ սահմանադրական դատարանը, «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 19 հոդվածով նախատեսված դրույթների, ինչպես նաև իր՝ 09.04.2007թ. ՄԳՌ-690 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում արձանագրում է, որ սույն գործին առնչվող հարցով ՏՏ վճռաբեկ դատարանն իր՝ 04.05.2008թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ պարզապես նշելով, որ «Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ չկան հիմքեր եզրակացնելու, որ բողոքներում բարձրացված հարցերի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միաբնույթ կիրառության համար...»: Մինչդեռ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները վկայում են, որ փվյալ գործի շրջանակներում ՏՏ Սահմանադրության 92 հոդվածի և ՏՏ դատական օրենսգրքի 50 հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան՝ ՏՏ քրեական օրենսգրքի 301 հոդվածի պաշտոնական մեկնաբանումը ՏՏ վճռաբեկ

դափարանի կողմից էական նշանակություն կարող էր ունենալ օրենքի միապետակ կիրառության համար: Առավել ես, երբ ՆՆ վերաքննիչ քրեական դափարանի 2007թ. սեպտեմբերի 25-ի դափավճոմ ՆՆ քրեական օրենսգրքի 301 հոդվածի իրավական բովանդակության որևէ մեկնաբանում չի փրվել, իսկ դափական պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ Նայասփանի Նանրապետության անկախացումից ի վեր փվյալ նորմի կիրառման պրակտիկա փաստորեն չի ձեւավորվել:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասփանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դափարանի մասին» Նայասփանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայասփանի Նանրապետության սահմանադրական դափարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Նայասփանի Նանրապետության քրեական օրենսգրքի 301 հոդվածի դրույթները համապատասխանում են Նայասփանի Նանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ՆՆ սահմանադրական դափարանի արփահայփած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Նայասփանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մփնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ**

*14 հոկտեմբերի 2008 թվականի
ՄԳՈ- 766*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻ ՄԻՇԱ ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 426.1 ՆՈՂՎԱԾԻ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅՈՒՆ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

21 հոկտեմբերի 2008թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող՝ քաղաքացի Մ. Նարությունյանի ներկայացուցիչ Ն. Ալունյանի, պարասխանող կողմի՝ ՆՆ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՆ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Միշա Նարությունյանի դիմումի հիման վրա՝ Նայասպանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.1 հոդվածի՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Մ. Նարությունյանի՝ 24.07.2008թ. ՆՆ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պարասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հերազոտելով ՆՆ քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. ՆՏ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

«ՆՏ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 14.12.04թ. ՆՕ-57-Ն ՆՏ օրենքի 2 և 3 հոդվածներով ՆՏ քրեական դատավարության օրենսգիրքը լրացվել էր համապատասխանաբար 408.1 և 410.1 հոդվածներով, որոնք սահմանում էին նոր հանգամանքների հետեանքով գործերի նորոգման հիմքերը և վարույթ հարուցելու կարգը: Միաժամանակ, «ՆՏ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 25.05.06թ. ՆՕ-91-Ն ՆՏ օրենքով որպես վճռաբեկ բողոք բերելու հիմք, ի թիվս այլոց, ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 406 հոդվածում ամրագրվել էին նաև նոր հանգամանքները: «ՆՏ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 28.11.07թ. ՆՕ-270-Ն ՆՏ օրենքի 70 հոդվածով ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի նշված 408.1 և 410.1 հոդվածները, ի թիվս այլոց, ուժը կորցրած են ճանաչվել, և նշված օրենքի 81 հոդվածով օրենսգիրքը լրացվել է «Դատական ակտերի վերանայումը նոր երեսան եկած կամ նոր հանգամանքներով» վերաառությանը բաժին 12.1-ով՝ սահմանելով նոր հանգամանքների և նոր երեսան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման նոր իրավակարգավորում: Նույն օրենքով նաև փոփոխություն է կատարվել քրեական դատավարության օրենսգրքի 406 հոդվածում, որի արդյունքում նոր հանգամանքները դադարել են որպես վճռաբեկ բողոքի հիմք հանդիսանալուց:

2. Զննության առարկա գործի դատավարական նախապարմությունը հանգում է նրան, որ դիմողը Մյունխի մարզի առաջին ապյանի դատարանի կողմից 19.06.2002թ. կայացված դատավճռով մեղավոր է ճանաչվել ՆՏ նախկին քրեական օրենսգրքի 99 հոդվածի 2-րդ կետով և դատապարտվել ազատազրկման 10 օրվա ժամկետով: Դատավճիռը բողոքարկվել է ՆՏ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան: Վերջինս 01.04.2003թ. դատավճռով առաջին ապյանի դատարանի դատավճիռը թողել է անփոփոխ: Դիմողի վճռաբեկ բողոքի քննության արդյունքում ՆՏ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատն իր՝ 08.05.2003թ. որոշմամբ վերաքննիչ դատարանի դատավճիռը թողել է անփոփոխ, իսկ վճռաբեկ բողոքը՝ առանց բավարարման:

Ներպետական պաշտպանության միջոցներն սպառելուց հետո դիմողն իր իրավունքների պաշտպանությամբ դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան. վերջինս իր՝ 28.06.2007թ. վճռով ճանաչել է, որ դիմողի նկատմամբ քրեական գործի քննության ընթացքում Նայասարանի Նանրապետությունը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը: 25.12.2007թ. դիմողը դիմել է ՆՏ վճռաբեկ դատարան, խնդրելով նոր հանգամանքի՝ Եվրոպական դատարանի վճռի հիման վրա հարուցել վերա-

նայման վարույթ, վերանայել ՏՏ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 08.05.2003թ. որոշումը, բեկանել Սյունիքի մարզի առաջին սպյանի դատարանի 19.06.2002թ. դատավճիռը, ՏՏ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 01.04.2003թ. դատավճիռը: Վճռաբեկ դատարանն իր՝ 21.01.2008թ. որոշմամբ, ղեկավարվելով ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 426.1 հոդվածով, ՏՏ վճռաբեկ դատարանի 08.05.2003թ. որոշումը նոր հանգամանքներով վերանայելու վերաբերյալ դիմողի դիմումը փոխանցել է Նարավային քրեական դատարան: Վերջինս 28.02.2008թ. որոշում է կայացրել նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին, իսկ քրեական գործը դատական քննության նշանակելու մասին 05.03.2008թ. որոշմամբ որոշել է «Դատական ակտը նոր հանգամանքներով վերանայման վարույթ հարուցելու՝ Միշա Էդիկի Նարությունյանի վերաբերյալ ՏՏ քր. օր. 104 հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով քրեական գործով նշանակել դատական քննություն...»:

2008թ. մարտի 14-ին Կրեդի ունեցած դատական նիստի ժամանակ նախագահող դատավորը, պարզաբանելով կողմերի իրավունքները, հայտարարել է, որ վերաքննիչ դատարանի կողմից Մ. Նարությունյանի նկատմամբ 01.04.2003թ. դատավճիռը, ինչպես նաև՝ այդ դատավճիռի դեմ բերված վճռաբեկ բողոքները մերժելու և դատավճիռն անփոփոխ թողնելու մասին վճռաբեկ դատարանի 08.05.2003թ. որոշումը գրվում են ուժի մեջ: Դատարանը պարզաբանել է նաև, որ Մ. Նարությունյանն ունի ամբաստանյալի կարգավիճակ, և Նարավային քրեական դատարանը քննում է քրեական գործն ըստ մեղադրանքի Մ. Նարությունյանի՝ ՏՏ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով:

3. Վիճարկելով ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 426.1 հոդվածի, 426.8 հոդվածի 1-ին մասի և 426.9 հոդվածի դրույթների սահմանադրականությունը, դիմողը գտնում է, որ այդ նորմերը հակասում են ՏՏ Սահմանադրության 3 հոդվածի 2-րդ - մասին, 6 հոդվածի 4-րդ մասին, 18 հոդվածի 1-ին և 4-րդ մասերին, 19 հոդվածի 1-ին մասին:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող հոդվածներում ամրագրված դրույթները հնարավորություն չեն տալիս անձին վերականգնելու իր խախտված իրավունքներն ու ազատությունները՝ միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան: Ըստ նրա՝ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայմանը վերաբերող նորմերը պետք է նախատեսեն դատական ակտերի վերանայման այնպիսի ընթացակարգ, որը հնարավորություն կընձեռեր լիարժեքորեն վերականգնել խախտված իրավունքները և ազատությունները: Տվյալ դեպքում, Եվրոպական դատարանի կայացրած վճռի հիման վրա իր խախտված իրավունքը լիարժեքորեն վերականգնելու միջոցը դիմողը համարում է իր նկատմամբ կայացված դատական ակտերի՝ առաջին սպյանի դատարանի մեղադրական դատավճռի, վերաքննիչ դատարանի մեղադրական դատավճռի և այդ դատավճիռներն անփոփոխ թողնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման վերանայումը:

Մինչդեռ, ըստ վիճարկվող դրույթների, ինքը զրկված է վճռաբեկ դատարանում վերջինիս որոշման վերանայմանը և առաջին սպյանի դատարանի ու վերաքննիչ քրեական դատարանի մեղադրական դատավճիռների բեկանմանը հասնելու հնարավոր

րութունից: Նույնիսկ այն դեպքում, երբ Նարավային քրեական դատարանը վերանայի Մյունխիքի մարզի առաջին ապյանի դատարանի մեղադրական դատավճիռը, միեւնույն է, իր խախտված իրավունքը չի վերականգնվի, քանի որ օրինական ուժի մեջ կմնան վերաքննիչ դատարանի դատավճիռն ու վճռաբեկ դատարանի որոշումը: Վերջիններս Նարավային քրեական դատարանի կողմից բոլոր դեպքերում վերանայվել չեն կարող: Ուստի, դիմողը եզրակացնում է, որ վիճարկվող հողվածներով նախատեսված՝ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման ընթացակարգն անձի խախտված իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց չէ:

Դիմողը գտնում է նաև, որ առաջին ապյանի դատարանի կողմից դատական ակտի վերանայումն այնպիսի պայմաններում, երբ շարունակում են ուժի մեջ մնալ վերաքննիչ քրեական դատարանի մեղադրական դատավճիռը եւ վճռաբեկ դատարանի որոշումը, խախտում է նաև կողմերի հավասարության սկզբունքը:

4. Պատասխանողի ներկայացուցչի պնդմամբ՝ նոր եւ նոր երեւան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման նորովի կարգավորումը, վճռաբեկ դատարանին նոր եւ նոր երեւան եկած հանգամանքներով գործի նորոգման գործառնության ազատելը պայմանավորված է ՆՏ վճռաբեկ դատարանի նոր սահմանադրաիրավական կարգավիճակով, որը պահանջում է այդ դատարանին վերապահել այնպիսի լիազորություններ, որոնք ուղղակիորեն կբխեն նրա կարգավիճակից եւ ուղղված կլինեն վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի կենսագործմանը:

Ըստ պատասխանողի՝ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթը որևէ կերպ չի կարելի դիտարկել որպես նոր եւ նոր երեւան եկած հանգամանքներով գործը վերանայելու իրավունքի, արդար դատաքննության իրավունքի սահմանափակում: Ավելին, գործող դատական համակարգի պայմաններում այս իրավունքների սահմանափակում կդիտվեր նոր եւ նոր երեւան եկած հանգամանքներով քննության վերապահումը վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանին, քանի որ գործող վերաքննության կամ վճռաբեկության պայմաններում չէր կարելի գործի ամբողջ ծավալով և, ըստ էության, քննություն ակնկալել: Մինչդեռ առկա կարգավորման պայմաններում ողջ ծավալով ապահովվում է նաև դատական ակտերի վերանայման իրավունքը:

Պատասխանողը միաժամանակ ընդունում է, որ նոր եւ նոր երեւան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը դրա կարարելագործմանն ուղղված հեփազա լրամշակում է պահանջում, որի արդյունքում այն կվերածվի մարդու իրավունքների պաշտպանության գործուն մեխանիզմի: Պատասխանողը վկայակոչելով ՆՏ սահմանադրական դատարանի 09.09.2008թ. ՄԳ-Ո- 758 որոշումը՝ նշում է, որ օրենսդրական առկա կարգավորման պայմաններում ի հայտ եկած հակասությունների, իրավական բացերի, անհամապատասխանությունների շրկումն անհրաժեշտ է իրականացնել ամբողջ դատական համակարգի կազմակերպման եւ գործունեության համապրեքստում՝ հաշվի առնելով ինչպես դատական կոնկրետ ապյանի դերն ու լիազորությունները, այնպես էլ մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքները:

Ըստ պարասխանողի՝ «Նշված անհամապարասխանություններով հանդերձ, սակայն, ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթը չի խախտում ՏՏ Սահմանադրությամբ երաշխավորված՝ մարդու իրավունքներն ու ազատությունները»:

5. ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող՝ 426.1 հոդվածը սահմանում է.

«Դատական ակտը նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով վերանայում է դատական ակտ կայացրած այն առաջին արյանի դատարանը, որը քննել է համապարասխան գործը կամ նյութը»:

Օրենսգրքի 426.8 հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Դատական ակտը նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով համապարասխան առաջին արյանի դատարանը վերանայում է վերանայման վարույթ հարուցելու մասին որոշման հիման վրա»:

Օրենսգրքի 426.9 հոդվածը սահմանում է.

«1. Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատարանը գործի քննության արդյունքում կայացնում է դատական ակտ՝ սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով:

2. Առաջին արյանի դատարանի դատական ակտն օրենքով սահմանված ընդհանուր կարգով կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան, իսկ վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ համապարասխանաբար վճռաբեկ դատարան»:

6. ՏՏ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմի՝ 30.07.2008թ. որոշմամբ դիմումը քննության է ընդունվել միայն ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 426.1 հոդվածի կապակցությամբ:

Դիմումի քննության արդյունքներով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև վիճարկվող դրույթում համապարասխան իրավակարգավորումը վերաբերում է զուգահեռաբար եւ՝ նոր երեւան եկած, եւ՝ նոր հանգամանքներին, այնուամենայնիվ, քննությունը պետք է վերաբերի դրա սահմանադրականությանը միայն այն մասով, որով դա վերաբերում է **նոր հանգամանքներով** դատական ակտերի վերանայմանը, քանզի դիմողի նկատմամբ այդ դրույթները կիրառվել են միայն այդ մասով, եւ դիմողը նշված հոդվածների սահմանադրականությունը վիճարկում է միայն նոր հանգամանքների հիմքով դատական ակտերը վերանայելու առնչությամբ, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 63 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սահմանադրական դատարանը որոշումներ ընդունում է միայն դիմումում նշված առարկայի վերաբերյալ:

Սահմանադրական դատարանը, «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասին համապարասխան, հարկ է համարում պարզել նաեւ վիճարկվող դրույթի հետ համակարգային փոխկապակցվածության մեջ գտնվող՝ օրենսգրքի 426.8 հոդվածի սահմանադրականության հարցը:

7. Նաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանադրական դատարանն իր՝ 2008թ. սեպտեմբերի 9-ի ՄԴՈ-758 որոշմամբ լուծել է ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման իրավակարգավորումը սահմանող համապատասխան հոդվածների սահմանադրականության հարցը, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում համեմատական վերլուծություն կատարել ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ սահմանադրական դատարանի նշված որոշմամբ ՆՏ Սահմանադրությանը հակասող ճանաչված այդ հոդվածների եւ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի՝ նոր հանգամանքների հիման վրա դատական ակտերի վերանայման իրավակարգավորումը սահմանող՝ խնդրո առարկա դրույթների միջեւ:

Նամեմատական վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատավարական երկու օրենսգրքերում նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման իրավակարգավորման մեջ ընդհանրությունները հանգում են հետեւյալին.

- ինչպես քաղաքացիական դատավարության, այնպես էլ քրեական դատավարության շրջանակներում նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու իրավասություն ունի միայն համապատասխան դատական ակտը կայացրած առաջին արյանի դատարանը,

- վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանները նշված հիմքերով դատական ակտերի վերանայման իրավասությամբ օժտված չեն,

- ինչպես քաղաքացիական դատավարության, այնպես էլ քրեական դատավարության շրջանակներում նոր հանգամանքներով վերանայման ենթակա են միայն առաջին արյանի դատարանների դատական ակտերը,

- վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների դատական ակտերը նշված հիմքերով վերանայման ենթակա չեն:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ եթե ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթների բովանդակային մեկնաբանությունը հնարավորություն էր տալիս պարզելու, որ նոր հանգամանքներով վերանայման ենթակա են ոչ միայն գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այլ նաեւ միջանկյալ դատական ակտերը, ապա ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի պարագայում նման մեկնաբանության հնարավորությունը բացակայում է:

8. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 63 հոդվածի համաձայն՝ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը գնահատում է ինչպես այդ ակտը, այնպես էլ ձեւավորված իրավակիրառական պրակտիկան: Ելնելով նշված հոդվածի պահանջից՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վիճարկվող դրույթի կիրառման պրակտիկային:

Այսպես, դիմող Մ. Նարությունյանը դիմել է ՆՏ վճռաբեկ դատարան՝ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 410.1 հոդվածի հիման վրա նոր հանգամանքի հետե-

ւանքով ՆՆ վճռաբեկ դատարանի 08.05.2003թ. որոշումը վերանայելու համար: Ի պատասխան այդ դիմումի՝ ՆՆ վճռաբեկ դատարանը 2008թ. հունվարի 21-ին կայացրել է **վճռաբեկ բողոքը Նարավային քրեական դատարան փոխանցելու մասին որոշում:** Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ ինչպես ՆՆ Սահմանադրության, այնպես էլ ՆՆ-դատական և դատավարական օրենսգրքերի համաձայն՝ առաջին ասյանի դատարանները, ինչպիսին հանդիսանում է Նարավային քրեական դատարանը, վճռաբեկ գործառույթով օժտված չեն, հետևաբար, չունեն նաև վճռաբեկ բողոքի քննության իրավասություն: Չնայած նշված հանգամանքին՝ վճռաբեկ դատարանի 2008թ. հունվարի 21-ի որոշմանը հետեւել է Նարավային քրեական դատարանի 2008թ. փետրվարի 28-ի որոշումը, որով վարույթ է ընդունվել քրեական գործն ըստ մեղադրանքի Մ. Նարությունյանի՝ ՆՆ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով: 2008թ. մարտի 5-ին Նարավային քրեական դատարանը կայացրել է քրեական գործը դատական քննության նշանակելու մասին որոշում: Դատարանը որոշել է. «Դատական ակտը նոր հանգամանքներով վերանայման վարույթ հարուցելու՝ Միշա Էդիկի Նարությունյանի վերաբերյալ ՆՆ քր. օր. 104 հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով քրեական գործով նշանակել դատական քննություն...»:

Դիմողը սահմանադրական դատարան ներկայացված իր դիմումում, ինչպես նշվեց, մասնավորապես նշում է. «14.03.2008թ. փետի ունեցած դատական նիստի ժամանակ նախագահող դատավորը, պարզաբանելով կողմերի իրավունքները, հայտարարել է, որ վերաքննիչ դատարանի կողմից Միշա Նարությունյանի նկատմամբ 01.04.2003թ. դատավճիռը, ինչպես նաև՝ այդ դատավճռի դեմ բերված վճռաբեկ բողոքները մերժելու և դատավճիռն անփոփոխ թողնելու մասին վճռաբեկ դատարանի 08.05.2003թ. որոշումը գրանվում են ուժի մեջ»:

Վերոհիշյալից բխում է, որ դիմողի դիմումի հիման վրա Նարավային քրեական դատարանում հարուցված վարույթի շրջանակներում վերանայվում է ոչ թե վճռաբեկ դատարանի որոշումը, այլ առաջին ասյանի դատարանի դատավճիռը, քանզի վճռաբեկ դատարանի որոշումը վերանայելու իրավասությամբ առաջին ասյանի դատարանն օժտված չէ. այլապես կառաջանար մեկ այլ անընդունելի իրավիճակ, երբ ստորին ասյանի դատարանը վերանայում է վերադաս դատարանի ակտը:

Ավելին, գործի հանգամանքները, մասնավորապես, Նարավային քրեական դատարանի 2008թ. փետրվարի 28-ի որոշումը, 2008թ. մարտի 5-ի որոշումը, դիմումում նշված՝ Նարավային քրեական դատարանում դիմողի գործով 14.03.2008թ. նիստում նախագահող դատավորի վերոհիշյալ հայտարարությունը, վկայում են, որ Նարավային քրեական դատարանն առաջին ասյանի դատարանի դատավճիռը վերանայում է քրեական գործն ըստ մեղադրանքի Մ. Նարությունյանի՝ ՆՆ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով, կրկին քննության առնելու միջոցով: Հարկ է նկատել նաև, որ այդ վարույթում դիմողը դատարանում հանդես է գալիս ամբաստանյալի կարգավիճակով: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման մտրեցման դեպքում խախտվում է քրեական դատավարության իրավունքի այնպիսի կարեւորագույն սահմա-

նադրական սկզբունք, ինչպիսին է *ne bis in idem* (միեւնույն արարքի համար կրկնակի պատասխանատվության մերժում) սկզբունքը:

Թեեւ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքը չի նախատեսում դրույթ, որն ուղղակիորեն կբացատրեր նոր հանգամանքներով վերաքննիչ եւ վճարելի դատարանների ակտերի վերանայման հնարավորությունը, այնուամենայնիվ, հաշվի առնելով առկա դատական պրակտիկան, այն հանգամանքը, որ առաջին ապյանի դատարաններն օժտված չեն վերադաս դատարանի ակտը վերանայելու իրավասությամբ, ինչպես նաեւ ՆՏ սահմանադրական դատարանի 2008թ. սեպտեմբերի 9-ի ՄԴՈ-758 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումն առ այն, որ առաջին ապյանի դատարանի կողմից վերադաս դատարանի դատական ակտի վերանայումն անթույլատրելի է՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի խնդրո առարկա հոդվածներով՝ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման իրավակարգավորման առանձնահատկությունները (ինչպես քաղաքացիական դատավարության դեպքում) հանգում են նրան, որ փաստորեն **վերանայման ենթակա է միայն առաջին ապյանի դատարանի ակտը եւ միայն առաջին ապյանի դատարանի կողմից:**

9. Նաշվի առնելով վերոհիշյալ համեմատական վերլուծության եւ համապատասխան դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքները՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, ըստ էության, ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթներով սահմանված՝ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման իրավակարգավորումն իր հիմնական փրամաբանությամբ, առանձնահատկություններով եւ մոտեցումներով համարժեք է այն իրավակարգավորմանը, որը սահմանված էր ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթներով: Ուստի սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը հենվում է ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման իրավակարգավորումը սահմանող համապատասխան հոդվածների սահմանադրականության վերաբերյալ սահմանադրական դատարանի՝ 09.09.2008թ. ՄԴՈ-758 որոշմամբ արտահայտված իր իրավական դիրքորոշումների վրա եւ գտնում է, որ այդ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները հավասարապես վերաբերում են նաեւ քրեական դատավարության օրենսգրքի 426.1 եւ 426.8 հոդվածներին:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, մարտնչել ՄԴՈ-758 որոշման մեջ արտահայտված այն սկզբունքային նշանակության իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման համակարգն արդյունավետ կարող է գործել միայն այն դեպքում, երբ կապահովվի նոր հանգամանքների հիմքով դատական բոլոր ապյանների ակտերի վերանայման հնարավորությունը, բացառելով սպորադաս ապյանի դատարանի կողմից վերադաս դատարանի ակտի վերանայումը:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում հավելել, որ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման լիարժեք եւ արդյունավետ համակարգի

առկայությունն էլ ավելի է կարեւորվում քրեական դատավարության շրջանակներում, քանզի քրեական պատասխանատվություն նախատեսող դատական ակտերն անձի փաստացի վիճակի վրա ազդեցության առումով ունեն առանձնակի նշանակություն, մասնավորապես՝ հաշվի առնելով անձի նկատմամբ հարկադրանքի միջոց կիրառելու եւ դրանից բխող հետեւանքների առկայության հանգամանքը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքներն առավել ապահովված կլինեն այն դեպքում, երբ նոր հանգամանքով դատական ակտը վերանայելու վարույթը հարուցում է այն դատարանը, որը վերջնական դատական ակտ է կայացրել Կոլյալ քրեական գործով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՆՆ քրեական դատավարության օրենսգրքի 426.1 հոդվածը եւ 426.8 հոդվածի 1-ին մասը ճանաչել Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 18, 19 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր՝ այնքանով, որքանով դրանք վերաբերում են նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման իրավասությունը միայն առաջին ապյանի դատարաններին վերապահելուն եւ առնչվում են միայն վերջիններիս կողմից կայացրած դատական ակտերին:

2. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ**

*21 հոկտեմբերի 2008 թվականի
ՄԴՈ-767*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐԱՄ ՇՄԱՎՈՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ ՆՃ
ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 2-ՐԴ ՆՈԴՎԱԾԻ, «ՆԱՐԿԵՐԻ
ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 26-ՐԴ
ՆՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ, «ԱՎԵԼԱՅՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՆԱՐԿԻ ՄԱՍԻՆ»
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 2-ՐԴ ՆՈԴՎԱԾԻ
2-ՐԴ ՄԱՍԻ, ՆՃ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
115-ՐԴ ՆՈԴՎԱԾԻ ԵՎ 118-ՐԴ ՆՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

25 նոյեմբերի 2008թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Նովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ դիմող՝ քաղաքացի Ա. Շնավոնյանի ներկայացուցիչ Գ. Դավթյանի, պարասխանող կողմի՝ ՆՃ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՃ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արամ Շնավոնյանի դիմումի հիման վրա՝ ՆՃ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի, «Նարկերի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Ավելացված արժեքի հարկի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի, ՆՃ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի եւ 118-րդ հոդվածի 1-ին մասի՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ա. Շմավոնյանի՝ 19.05.2008թ. դիմումն է սահմանադրական դատարան: Գործի դատաքննությունը երկու անգամ հետաձգվել է՝ մի դեպքում լրացուցիչ նյութեր ուսումնասիրելու նպատակով (16.09.2008թ.), մյուս դեպքում՝ պատասխանող կողմի միջնորդության հիման վրա (18.11.2008թ.):

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի բացատրությունները, հետազոտելով վեճի առարկա օրենսգրքերն ու օրենքները և գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Յ.

1. Նայասրանի Նանրապետության քաղաքացիական օրենսգիրքը ՆՆ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին, ՆՆ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998թ. հուլիսի 28-ին և ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

«Նարկերի մասին» ՆՆ օրենքը ՆՆ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1997թ. ապրիլի 14-ին, ՆՆ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1997թ. մայիսի 12-ին և ուժի մեջ է մտել 1997թ. մայիսի 30-ից:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՆՆ օրենքը ՆՆ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1997թ. մայիսի 14-ին, ՆՆ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1997թ. հունիսի 16-ին և ուժի մեջ է մտել 1997թ. հուլիսի 1-ից:

ՆՆ վարչական դատավարության օրենսգիրքը ՆՆ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007թ. նոյեմբերի 28-ին, ՆՆ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007թ. դեկտեմբերի 10-ին և ուժի մեջ է մտել 2008թ. հունվարի 1-ից:

2. Ըստ գործի դատավարական նախապարմության՝ ՆՆ հարկային մարմինները դիմողին փուզանել են՝ առանց պետական գրանցման և համապատասխան լիցենզիայի ձեռնարկափրական գործունեություն իրականացնելու համար: Տուգանք նշանակված՝ հարկային մարմնի համապատասխան ակտը դիմողի կողմից վիճարկվել է ՆՆ վարչական դատարանում: Վարչական դատարանն իր՝ 2008թ. մարտի 6-ի վճռով մերժել է ՆՆ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Արտաշարի փարածքային հարկային տեսչության՝ ՆՆ ԿԱ ՆՊԾ Արտաշարի ՏՏՏ-ի՝ 11.09.2007թ. ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին դիմողի հայցը: Վերջինս վարչական դատարանի վճիռը բողոքարկել է ՆՆ վճռաբեկ դատարան, որը, ղեկավարվելով ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231, 233 և 234-րդ հոդվածներով, իր՝ 2008թ. ապրիլի 7-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

3. Դիմողն ի սկզբանե վիճարկել է ՆՆ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի, «Նարկերի մասին» ՆՆ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՆՆ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի, ՆՆ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ կետերի, 4-րդ կետի 3-րդ ենթակետի, ՆՆ վարչական դատավարության օրենսգրքի 115 և 118-րդ հոդվածների սահմանադրականությունը:

ՆՆ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմն իր՝ 03.06.2008թ. որոշմամբ դիմումը քննության է ընդունել ՆՆ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի, «Նարկերի մասին» ՆՆ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՆՆ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի, ՆՆ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի եւ 118-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ:

4. ՆՆ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածը սահմանում է. «Ձեռնարկափրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է»:

«Նարկերի մասին» ՆՆ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասը նախատեսում է. «Նարկային օրենսդրության կիրառման առումով ձեռնարկափրական գործունեություն չի համարվում քաղաքացիների անձնական գույքի (ներառյալ նաեւ անշարժ) եւ իրերի օտարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՆՆ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ձեռնարկափրական գործունեություն է համարվում շահույթ (եկամույր) ստանալու նպատակով պարբերաբար իրականացվող ԿՆԿՆԿՆԿՆԿՆ գործունեությունը: Տնտեսական գործունեություն է համարվում ցանկացած գործունեություն, որն իրականացվում է որեւէ ձեռով կատարվող հատուցման դիմաց»:

ՆՆ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, եթե այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու այլ ժամկետ նախատեսված չէ սույն օրենսգրքով»:

ՆՆ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Վարչական դատարանի դատական ակտերի բողոքարկման կարգի, հիմքերի եւ գործերի վարույթը վճռաբեկ դատարանում իրականացնելու վրա (mutatis mutandis) տարածվում են Նայաստանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը»:

5. Դիմողը, վիճարկելով ՆՆ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի, «Նարկերի մասին» ՆՆ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՆՆ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը ՆՆ Սահմանադրության 31 հոդվածի 1-ին, 2-րդ, 33.1. հոդվածի 1-ին մասերին, 34 հոդվածին, 42 հոդվածի 2-րդ մասին, 45 հոդվածին, 8 հոդվածին եւ 98 հոդվածի 1-ին մասին, գտնում է, որ վիճարկվող դրույթներում ձեռնարկափրական գործունեության սահմանումը, դրանում օգտագործվող առանձին հասկացությունների անորոշությունը տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք են տալիս, քանի որ չեն բացառում ցանկացած անձի գործունեությունն ինչպես ձեռնարկափրական, այնպես էլ ոչ ձեռնարկափրական համարելը:

ՆՆ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի՝ ՆՆ Սահմանադրությանը հակասության առնչությամբ դիմողը փաստարկում է, որ, ի տարբերություն

ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված մյուս՝ քաղաքացիական եւ քրեական դատարանների, վարչական դատարանների ակտերն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից եւ բողոքարկման են ենթակա միայն վճռաբեկության կարգով, ինչի արդյունքում, ի խախտումն ՆՏ Սահմանադրության 14.1. հոդվածի, խարսկան վերաբերմունք է դրսևորվում անձանց միջև: Դիմողը փաստարկում է նաեւ, որ առկա է հակասություն նաեւ վարչական դատավարության օրենսգրքի 115 եւ 118-րդ հոդվածների ու ՆՏ Սահմանադրության 92-րդ հոդվածի միջև: Այս կապակցությամբ դիմողը, մասնավորապես, պնդում է, որ. «Եթէ վարչական դատարանը համարվում է առաջին աստիճանի դատարան, ապա ելնելով ՆՏ Սահմանադրության 92-րդ հոդվածից, այն պետք է լինի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան...»:

6. Պատասխանող կողմն ընդունելով, որ ձեռնարկափրակյան գործունեության վերաբերյալ՝ ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածով քրված օրինադրոյթը բովանդակում է քրվյալ գործունեոյթոյնը բնութագրող սահմանափակ հափկանիչներ, ինչի արդյունքում դրա մեկնաբանոյթոյնը չի կարող ամբողջոյթամբ բացահայտել «ձեռնարկափրակյան գործունեոյթոյն» եզրոյթի էոյթոյնը, միաժամանակ գտնում է, որ ձեռնարկափրակյան գործունեոյթոյն մասին դրոյթը համակարգային առումով անհրաժեշտ է վերլուծել նաեւ հարկային հարաբերոյթոյնները կարգավորող օրենադրոյթամբ արտացոլված դրոյթների շրջանակում: Մասնավորապես, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՆՏ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասից եւ «Նարկերի մասին» ՆՏ օրենքի 26-րդ հոդվածից հետեւում է, որ անձի կողմից իրականացվող գործունեոյթոյն բնոյթը որոշելիս օրենադիրը հափկեցրել է ձեռնարկափրակյան գործունեոյթոյն եւ քրնտեսական գործունեոյթոյն հարաբերակցոյթոյն սահմանները, ինչպես նաեւ սահմանել է քրնտեսական գործունեոյթոյնը բնութագրող պարափրակի հափկանիչները, որոնց առկայոյթոյնը բավարար հիմք կարող է համարվել հարկ վճարողին հարկային պարափրակոյթոյններ առաջադրելու համար:

Ինչ վերաբերում է «անձնական գոյթ» հասկացոյթոյն բովանդակոյթոյնը, ապա այս կապակցոյթամբ ըստ պատասխանողի ներկայացոյցի՝ «սեփականոյթոյն իրավունքով պարկանող» կամ «սեփական» գոյթից «անձնական գոյթի» քրրբերակումը կարող է դրսևորվել անձի կողմից անձնական կարիքների համար քրվյալ գոյթի անմիջականորեն եւ անհարապես օգտագործման միջոցով, ինչը բխում է ՆՏ Սահմանադրոյթոյն 8-րդ, 31-րդ, 42-րդ եւ 45-րդ հոդվածների պահանջներից:

Վարչական դատավարոյթոյն օրենսգրքի՝ դիմողի կողմից վիճարկվող դրոյթների կապակցոյթամբ պատասխանողի ներկայացոյցիչը նշում է, որ խարկանոյթոյն դրսևորում առկա չէ, քանզի ինչպես նախկին, այնպես էլ գործող օրենադրոյթոյն մեջ կան նախադեպեր, երբ ընդհանուր իրավասոյթոյն առաջին աստիճանի դատարանի գործն ըստ էոյթոյն լուծող դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ քրվյալ գործի շրջանակներում էական է, նախ՝ «ձեռնարկափրակյան գործունեոյթոյն» հասկացոյթոյն սահմանադրափ-

բավական բովանդակության բացահայտումը: ՆՏ Սահմանադրության 33.1. հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկափրակյան գործունեությամբ զբաղվելու իրավունք»: Այս ձեռնարկափրակյան գործունեությամբ զբաղվելն անձի սահմանադրական իրավունքն է, եւ որ այդ գործունեության բովանդակությունը (հարկանիշները), իրականացման կարգն ու պայմանները ենթակա են օրենսդրական կարգավորման: Միաժամանակ, ՆՏ Սահմանադրության 8 հոդվածի համաձայն երաշխավորվում է **յրնպրեսական գործունեության** ազատությունը, սակայն այդպիսի գործունեության հասկացության նորմափիվ-իրավական բնորոշումը (հարկանիշները) ընթացիկ օրենսդրությամբ լիարժեք չի հստակեցված: Տնտեսական գործունեություն է համարվում ցանկացած գործունեություն, որն իրականացվում է որեւէ ձեռով կապարվող հատուցման դիմաց («Ավելացված արժեքի հարկի մասին» ՆՏ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մաս): Ձեռնարկափրակյան գործունեության, որպես րնպրեսական առանձին գործունեության, բովանդակության իրավական բնորոշումից բխում է, որ այն անձի՝ ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունն է, որի հիմնական նպատակը գույքի օգտագործումից, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է (ՆՏ քաղ. օրենսգրքի 2-րդ հոդված):

ՆՏ օրենսդրության վերլուծությունը միաժամանակ վկայում է, որ «ձեռնարկափրակյան գործունեություն» հասկացության բովանդակությունը բացահայտված է նաեւ «Նարկերի մասին» ՆՏ օրենքում (26-րդ հոդված):

Նշված օրենքներում «ձեռնարկափրակյան գործունեություն» հասկացության վերաբերյալ դրույթների համադրված վերլուծությունից բխում է, որ այդ հասկացությունն ունի հետևյալ հարկանիշները.

- հանդիսանում է րնպրեսական գործունեություն,
- հետապնդում է շահույթ (եկամուտ) ստանալու նպատակ,
- իրականացվում է ինքնուրույն եւ իր ռիսկով,
- իրականացվում է որեւէ ձեռով կապարվող հատուցման դիմաց,
- ենթակա է պետական գրանցման (առանձին դեպքերում՝ նաեւ լիցենզավորման),
- չի ներառում քաղաքացիների անձնական գույքի (ներառյալ նաեւ անշարժ) եւ իրերի օտարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,
- իրականացվում է պարբերաբար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը հնարավորինս ամրագրել է «ձեռնարկափրակյան գործունեությունը» բնութագրող նվազագույն հարկանիշները՝ չբացառելով լրացուցիչ հարկանիշների ներառումը: ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Իրավական ակտերի մասին» ՆՏ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ - մասի դրույթներից է բխում ՆՏ քաղաքացիական օրենսգրքում «ձեռնարկափրակյան գործունեություն» հասկացության հիմնական բնորոշման եւ այլ օրենքներում այդպիսի գործունեության առանձնահատկությունների բացահայտման իրողությունը: Սակայն նույնպիսի մոտեցում «րնպրեսական գործունեություն» հասկացության բնորոշման առնչությամբ չի դրսևորված:

Միաժամանակ, օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է «ձեռնարկափրակյան գործունեություն» հասկացության եւ դրան բնորոշ հատկանիշների բովանդակության բացահայտմանը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՆՆ վճռաբեկ դատարանը, գործելով ՆՆ Սահմանադրության 92 հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված իր սահմանադրափրակական գործառույթի, այն է՝ **օրենքի միաբեկ կիրառությունն ապահովելու** գործառույթի եւ այդ գործառույթն իրականացնելիս՝ **իրավունքի զարգացմանը նպաստելու** իրավասության շրջանակներում, իր թիվ 3-1161 (ՏԴ) որոշման մեջ մեկնաբանել է խնդրո առարկա հասկացության օրենսդրական բովանդակությունը՝ ըստ էության որոշակիացնելով դրա հատկանիշների շրջանակը: ՆՆ վճռաբեկ դատարանի նշված որոշման միջոցով ՆՆ օրենսդրության մեջ, մասնավորապես, դիմողի կողմից վիճարկվող օրենքների համապատասխան դրույթներում, «ձեռնարկափրակյան գործունեություն» հասկացությունը միաբեկ կիրառման առումով ավելի ամբողջական եւ լիարժեք բնույթ է ստացել՝ հնարավորություն տալով համապատասխան փոփոխված սուբյեկտներին կանխապես իրենց վարքագծի իրավական հետեւանքները:

Ընդ որում, ՆՆ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն. «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի ... դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ ...»:

ՆՆ դատական օրենսգրքի նշված դրույթին համահունչ՝ դիմողի նկատմամբ կայացված՝ ՆՆ վարչական դատարանի 2008թ. մարտի 6-ի վճռում վարչական դատարանը դիմողի գործունեությունը որպես ձեռնարկափրակյան գործունեություն գնահատելիս առաջնորդվել է ոչ միայն վիճարկվող օրենքների դրույթներով, այլ նաև վճռաբեկ դատարանի կողմից վերոհիշյալ որոշմամբ ձեռնարկափրակյան գործունեության հասկացության մեկնաբանմամբ:

Ինչ վերաբերում է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՆՆ օրենքի 2-րդ հոդվածում «պարբերաբար» բառի իրավական անորոշությանը, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ այս բառի բովանդակությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից: Բացի դրանից, «գործունեություն» հասկացությունն ինքնին ենթադրում է գործողությունների շարունակական իրականացում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «ձեռնարկափրակյան գործունեություն» հասկացության իմաստով պարբերականությունն առանձին երկրների օրենսդրական պրակտիկայում նկարագրվում է նաև թվային չափանիշների միջոցով: Սակայն նման մոտեցումն ունի նաև իր բարդությունները: ՆՆ օրենսդրության մեջ «ձեռնարկափրակյան գործունեություն» հասկացության իմաստով պարբերականությունը թվային

չափանիշների միջոցով արտահայտելը կսպեղծի մի իրավիճակ, երբ, կախված գործի առանձնահատկություններից ու կոնկրետ հանգամանքներից, միեւնոյն թվաքանակով իրականացված գործարքները մի դեպքում կարող են համարվել ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում կատարված, մյուս դեպքում՝ ոչ:

Վիճարկվող օրենսդրական դրույթների եւ դրանց իրավակիրառական պրակտիկայի համադրված վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանց բովանդակությունն այնպիսին է, որ հիմնականում չի առաջացնում իրավական անորոշություն, եւ դրանք իրենց ամբողջության մեջ հնարավորություն են տալիս իրավասութեւկախ կանխապեսելու իր վարքագծի իրավական հետեւանքները: Այսուհանդերձ, ՆՏ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՆՏ Ազգային ժողովը, հաշվի առնելով նաեւ «Իրավական ակտերի մասին» ՆՏ օրենքի պահանջները, պէտք է դատական պրակտիկան հաշվի առնելով առավել հստակություն մտնի «ձեռնարկատիրական գործունեության» եւ «տնտեսական գործունեության» հասկացությունների՝ հարկապես ՆՏ - քաղաքացիական օրենսգրքում առավել ամբողջական եւ միասնական օրենսդրական ձեւակերպման հարցում, հնարավորինս բացառելով տարաբնույթ մեկնաբանություններն ու կոռուպցիոն ռիսկը:

8. ՆՏ Սահմանադրության 33.1. հոդվածն ամրագրում է յուրաքանչյուրի՝ օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը: Այդ իրավունքը ներառում է բոլոր իրավական հնարավորությունները, որոնք անհատի համար նախապայմաններ են ստեղծում ինքնուրույնաբար որոշումներ ընդունելու իր տնտեսական գործունեությանն առնչվող հարցերով: Այդ իրավունքը ենթադրում է արդարացի մրցակցության ազատություն, առանց սահմանափակումների տնտեսական կազմակերպություններ ձեւավորելու, իր գործունեության բնույթն ու ձեւը փոխելու, գոյություն ունեցող տնտեսական կազմակերպությունները լուծարելու, պայմանագրեր կնքելու հնարավորություններ: Ձեռնարկատիրական գործունեության իրավունքի անբաժանելի բաղադրարարքն է կազմում նաեւ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ցանկություն ունեցող անձի՝ առանց արհեստական խոչընդոտների շուկա մտնելու եւ, ցանկության դեպքում, այդ շուկայից դուրս գալու հնարավորությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթները՝ իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ՝ հաշվի առնելով ՆՏ Սահմանադրության 8-րդ հոդվածի պահանջները, որեւէ կերպ չեն կարող խոչընդոտել ձեռնարկատիրական գործունեության սահմանադրական իրավունքի իրացմանը:

9. ՆՏ դատական օրենսգրքի հիման վրա վարչական դատարանի ստեղծմամբ եւ ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի ընդունմամբ Նայաստանի Նանրապետությունում 2008թ. հունվարի 1-ից ներդրվեց մասնագիտացված վարչական արդարադատության ինստիտուտը: Նամաձայն ՆՏ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի՝ վարչական դատարանը հանդիսանում է մասնագիտացված առաջին աստիճանի դատարան, որն ըստ էության քննում է ՆՏ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչա-

կան գործերը: Ի փարբերություն ՏՏ դափական օրենսգրքով սրեղծված մյուս, այսպես կոչված, մասնագիտացված՝ քրեական եւ քաղաքացիական առաջին աստիճանի դատարանների, վարչական դատարանի ակտերի բողոքարկման վերաքննիչ աստիճանի նախատեսված չէ. վարչական դատարանի ակտերը կարող են բողոքարկվել միայն վճռաբեկության կարգով:

Վարչական դատարանում վարչական գործերով դատավարության կարգը սահմանվում է ՏՏ վարչական դատավարության օրենսգրքով եւ ՏՏ դափական օրենսգրքով: ՏՏ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ վարչական գործերով դատավարության կարգը վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում սահմանվում է նաեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով՝ **այնքանով, որքանով դրա նորմերը իրենց էությունը կիրառելի են ("mutatis mutandis") վարչական դատավարության նկատմամբ** եւ չեն հակասում վարչական դատավարության օրենսգրքին եւ **վարչական դատավարության էությունը:**

Վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում է վարչական դատավարության սկզբունքները: Առանձին սկզբունքներ էականորեն փարբերվում են քաղաքացիական դատավարության սկզբունքներից, մասնավորապես, օրենսգրքի 6-րդ հոդվածն ամրագրում է գործի փաստերն ի պաշտոնն պարզելու սկզբունքը, որը վարչական դատավարությանը բնորոշ կարեւորագույն սկզբունքներից մեկն է:

ՏՏ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Գործի քննությունը եւ լուծումը վարչական դատարանում» վերաբառությամբ 2-րդ բաժնի 11-19-րդ գլուխներում կանոնակարգվում է վարչական դատարանում գործի քննության կարգը. նշված գլուխներում ՏՏ - քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգավորումներին հղում է կատարվում միայն 88, 89, 98, 112 եւ 117-րդ հոդվածներում, որոնք համապատասխանաբար վերաբերում են հայցի ապահովման միջոցների կիրառմանը, գործի վարույթը վերսկսելուն, գործի քննությունը հեղաձգելուն, դափական ակտի կայացմանը, դափական նիստի արձանագրմանը: Մինչդեռ ՏՏ վճռաբեկ դատարանում վարչական գործերի վարույթին վերաբերում է միայն 20-րդ գլուխը՝ բաղկացած միայն 118-րդ հոդվածից, որը վարչական դատարանի դափական ակտերի եւ՝ բողոքարկման կարգի, եւ՝ հիմքերի, եւ՝ գործերի վարույթը վճռաբեկ դատարանում իրականացնելու առնչությամբ հղում է կատարում ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ վճռաբեկ վարույթը կանոնակարգող նորմերին: Ընդ որում, հարկ է նկատել, որ նշված գլուխը ներառված է «Գործի քննությունը եւ լուծումը վարչական դատարանում» վերաբառությամբ 2-րդ բաժնում: Փաստորեն, լուրջ վերապահությամբ պետք է մտպենալ ՏՏ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածով նախատեսված նպատակի իրացմանը, համաձայն որի՝ «Սույն օրենսգիրքը սահմանում է վարչական դատարանում եւ վճռաբեկ դատարանում պետական եւ փողկական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնապար անձանց վարչական եւ նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դափական պաշտպանության իրավունքի իրականաց-

ման կարգը, ինչպես նաև ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների եւ պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը»:

Իրականում ՏՏ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող 118-րդ - հոդվածի 1-ին մասում ամրագրված նորմի իրավական բովանդակությունն ու էությունը կայանում են նրանում, որ այդ նորմն ուղղակիորեն վարչական արդարադատության ոլորտի նկատմամբ տարածում է վճռաբեկ վարույթի այն բոլոր կանոնները, որոնք կիրառվում են քաղաքացիական արդարադատության եռաստիճան համակարգում: Այսինքն՝ վճռաբեկ վարույթը կարգավորող՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը նույնակերպ վերարտադրվում են վարչական դատավարության օրենսգրքում: Ինչ վերաբերում է այդ նորմում «mutatis mutandis» վերապահման կիրառմանը, ապա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ վերապահումը որեւէ կերպ չի փոփոխում վարչական դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք բերելու հիմքերի կամ պայմանների, վճռաբեկ դատարանում վարչական դատարանի դատական ակտի դեմ բերված վճռաբեկ բողոքի քննության կարգը եւ այդ կապակցությամբ վճռաբեկ դատարանի իրավասության շրջանակը:

10. ՏՏ վարչական դատավարության օրենսգրքի՝ դիմողի կողմից վիճարկվող հոդվածների, ինչպես նաև 9, 119, 120, 121 եւ 122-րդ հոդվածների, ՏՏ դատական օրենսգրքի 35, 36 եւ 39-րդ հոդվածների համակարգային վերլուծության արդյունքները վկայում են, որ վարչական դատարանի ակտերի բողոքարկման իրավակարգավորմանը բնորոշ հիմնական պարրերն են.

- վարչական դատարանի ակտերն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից եւ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չեն,
- վարչական դատարանի ակտերը ենթակա են բողոքարկման միայն վճռաբեկության կարգով,
- վարչական դատարանի ակտերը, վերաքննության կարգով բողոքարկման հնարավորության բացակայության պայմաններում, վճռաբեկության կարգով կարող են բողոքարկվել այն նույն հիմքերով, որոնցով բողոքարկման են ենթակա նաև քաղաքացիական վերաքննիչ դատարանի դատական ակտերը,
- վարչական դատարանի ակտի դեմ ուղղված վճռաբեկ բողոքը քննության ընդունելու պայմանները նույնն են, ինչ քաղաքացիական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների ընդունելիության պայմանները,
- վճռաբեկ դատարանը վարչական դատարանի ակտի դեմ բերված վճռաբեկ բողոքը քննում է նույն սահմաններում եւ այդ կապակցությամբ իրացնում է նույն լիազորությունները, ինչ քաղաքացիական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ բերված բողոքների պարագայում,
- վճռաբեկ դատարանի կողմից վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը բեկանելու եւ գործը նոր քննության վերադարձնելու դեպքում վար-

չական դափարանը հարուցում է գործի նոր քննության վարույթ՝ այդ մասին կայացնելով միջանկյալ ակտ:

11. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դափարանը, հաշվի առնելով «Սահմանադրական դափարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասի պահանջները, անհրաժեշտ է համարել պարզել.

- արդյո՞ք վարչական դափարանի ակտերի բողոքարկման ներկա իրավակարգավորումն ունակ է ապահովելու վարչական արդարադատության ոլորտում անձի իրավունքների դափական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը,

- արդյո՞ք վճռաբեկ դափարանում վարույթի առնչությամբ ընդհանուր հղումը ՀՀ քաղաքացիական դափավարության օրենսգրքի չորոշակիացված նորմերին՝ անգամ «mutatis mutandis» վերապահումով, համապատասխանում է օրենքի որոշակիության սկզբունքին,

- արդյո՞ք օրենսդրի փարբերակված մոտեցումն առաջին ափյանի փարբեր մասնագիտացված դափարանների հանդեպ իր հիմքում ունի որոշակի օբյեկտիվ արդարացում:

12. ՀՀ սահմանադրական դափարանն իր 2008թ. սեպտեմբերի 9-ի ՍԴՈ-758 որոշման մեջ, անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 92 հոդվածին, մասնավորապես նշել է, որ օրենսդիրն ազատ է մասնագիտացված դափարանների պարագայում սահմանելու վերաբերմանից ափյան: Սահմանադրական դափարանը սույն գործի շրջանակներում հարկ է համարում Սահմանադրության 92 հոդվածի նշված մեկնաբանությունը դիտարկել ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներում ամրագրված դափական պաշտպանության եւ արդար դափաքնության իրավունքների համապեքսքսում: Այս սահմանադրական դրույթների համադրված վերլուծության արդյունքում սահմանադրական դափարանն արձանագրում է, որ թեեւ օրենսդրի հայեցողությանն է թողնված վարչական արդարադատության շրջանակներում վերաբերմանից ափյանի սրեղծման հարցի լուծումը, այնուամենայնիվ, օրենսդիրն իր այս հայեցողությունն իրացնելիս պեպք է առաջնորդվի մարդու եւ քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ամրագրված իրավունքների եւ ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, փվյալ դեպքում՝ դափական պաշտպանության իրավունքի արդյունավետ պաշտպանության եւ այդ իրավունքի կարեւոր բաղադրիչներից մեկի՝ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ:

Մարդու իրավունքների եվրոպական դափարանի նախադեպային իրավունքում հեպեուդականորեն արքահայքվում է այն սկզբունքային իրավական դիրքորոշումը, որի համաձայն՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան Պայմանավորվող պեպություններին չի պարքադրում սրեղծել վերաբերմանից կամ վճռաբեկ դափարաններ, այնուամենայնիվ, եթե սրեղծել են, պեպք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դափարաններում եւս օգքվեն 6-րդ հոդվածով նախաքեքսված եքաշիքներից: Սահմանադրական դափարանը հարկ է համարում ընդգծել նաեւ, որ Եվրոպական դափարանի կողմից կիրառվող՝ Կոնվենցիայի մեկ-

նաբանության կարեւորագոյն սկզբունքներից մեկը՝ Կոնվենցիայի արդյունավետ մեկնաբանության սկզբունքն իր հերթին պահանջում է, որ յուրաքանչյուր իրավունք մեկնաբանվի եւ կիրառվի այնպես, որ դրանք լինեն ոչ թե փեսական կամ երեսակայական, այլ գործնական եւ արդյունավետ իրավունքներ: Այս սկզբունքային դիրքորոշումն ուղղակիորեն կամ անուղղակիորեն արտահայտված է Եվրոպական դատարանի բազմաթիվ վճիռներում:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, իր հերթին, մեծապես կարևորելով վարչական ակտերի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողությունը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության էական փարք, 2004թ. դեկտեմբերի 15-ին ընդունել է Վարչական ակտերի դատական վերահսկողության վերաբերյալ (2004) 20 հանձնարարականը: Վերջինս իր 4-րդ (i) կետում ամրագրում է. «Վարչական ակտը վերանայող դատարանի որոշումը պետք է, գոնե կարևոր գործերում, ենթակա լինի բողոքարկման վերադաս ապյան, բացառությամբ այն դեպքերի, երբ գործը, ներպետական օրենսդրությանը համապատասխան, ուղղակիորեն փրվում է վերադաս ապյանին»: Նանձնարարականը նաեւ ամրագրում է.

- Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի իրենց երկրի դատարանակազմությունը եւ դատական ընթացակարգերը համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջներին, որպեսզի երաշխավորվի վարչական ակտերի նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը,
- դատական ակտը բողոքարկելու իրավունքը պետք է ճանաչվի յուրաքանչյուր անդամ պետությունում:

Նանձնարարականի բացատրական հուշագրում մասնավորապես նշված է, որ ներպետական օրենսդրությունը պետք է սահմանի բողոքարկման պայմանները եւ բողոքարկման մարմնի իրավագործությունը, **որոնք պետք է համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին**: Վարչական վարույթում վերադաս դատական ապյանի ներգրավումն էական նշանակություն ունի վարչական նախադեպային իրավունքի հետեղականությունն ապահովելու հարցում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեեւ նշված հանձնարարականը չի ճշգրտում երկաստիճան վարույթի բաղկացուցիչ փարքերը՝ վերաքննիչ կամ վճռաբեկ ապյանների միջեւ ընտրության հարցի լուծումը թողնելով անդամ պետությունների հայեցողությանը, այնուամենայնիվ, ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից հետեղականորեն կիրառվող՝ իրավունքների արդյունավետ մեկնաբանության սկզբունքը, այնպես էլ հանձնարարականի նպատակն ու առարկան ուղղված են նրան, որ վարչական արդարադատության ոլորտում դատական երկաստիճան համակարգը լինի այնքան կենսունակ եւ արդյունավետ, որ կարողանա ապահովել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը եւ նվազագույնի հասցնի դատական սխալների հավանականությունը:

13. Նաշվի առնելով Եվրոպայի խորհրդի վերոհիշյալ իրավական չափորոշիչները՝ քննության առարկա գործի շրջանակներում սահմանադրական դատարանը գտնում է, որ

վարչական արդարադատության ոլորտում անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունն առաջին հերթին պայմանավորված է ՏՏ վարչական արդարադատության երկաստիճան համակարգի մարչելիությամբ եւ դրա արդյունավետությամբ, մասնավորապես, վարչական դատարանի դատական ակտերի բողոքարկման միակ ապրանքի՝ վճռաբեկ ապրանքի մարչելիությամբ եւ արդյունավետությամբ:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում վարչական արդարադատության ոլորտում վճռաբեկ դատարանի՝ որպես բողոքարկման միակ ապրանքի մարչելիությունն ու արդյունավետությունն առաջին հերթին գնահատել վարչական դատարանի ակտերի դեմ վճռաբեկ բողոք բերելու հիմքերի եւ վճռաբեկ բողոքը քննության ընդունելու պայմանների համարեքստում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական արդարադատության երկաստիճան համակարգի պարագայում, երբ վերաքննիչ վարույթը բացակայում է, այս գործոնն էլ ավելի որոշիչ եւ էական դերակատարում է ձեռք բերում ոչ միայն վճռաբեկ դատարանի մարչելիության իրավունքի, այլ նաեւ մասնագիտացված վարչական արդարադատության երկաստիճան համակարգի մարչելիության եւ արդյունավետության ապահովման քեսանկյունից:

ՏՏ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող 118-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդիրը, հաշվի չառնելով վարչական արդարադատության, հանրային-իրավական վեճերի լուծման առանձնահատկությունները, քաղաքացիական դատավարության եռաստիճան համակարգում կիրառվող՝ վճռաբեկության ինստիտուտի իրավակարգավորման բոլոր քարերը, այդ թվում՝ նաեւ վճռաբեկ բողոքի հիմքերն ու ընդունելիության պայմանները, ինչպես նշվեց, քարածել է վարչական դատարանի ակտերի բողոքարկման վրա: Եթե վճռաբեկ բողոք բերելու՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված հիմքերն ու բողոքի ընդունելիության պայմանները, պայմանավորված վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական գործառույթներով, եռաստիճան համակարգում իրավաչափ են ու ողջամիտ, ինչպես դա ընդունել է սահմանադրական դատարանն իր 2007թ. ապրիլի 9-ի ՄԴՆ-690 որոշման մեջ, ապա երկաստիճան համակարգի պարագայում նշված գործոնները բողոքարկման միակ՝ վճռաբեկ ապրանքի մարչելիությունը եւ արդյունավետությունը սահմանափակում են այնքան, որ խաթարվում է դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը՝ բացասաբար անդրադառնալով նաեւ վարչական արդարադատության համակարգի կենսունակ գործունեության վրա:

Սահմանադրական դատարանն իրավաչափ չի համարում վերաքննիչ վարույթի բացակայության պայմաններում վարչական դատարանի ակտերի դեմ վճռաբեկ բողոքի առնչությամբ այն նույն հիմքերի եւ ընդունելիության պայմանների սահմանումը, որոնք կիրառվում են քաղաքացիական արդարադատության եռաստիճան համակարգում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական դատավարության մասնակիցների կողմից վարչական դատարանի ակտը վճռաբեկ դատարան բողոքարկելու կարգը, ներառյալ՝ վճռաբեկ բողոքի թույլաբերելիության հիմքերը, ինչպես նաեւ վճռաբեկ վարույթի կարգն այդ գործերով, պետք է սահմանվեն վարչական դատավարության օրենսգրքով՝

հղումներ պարունակելով այլ օրենքներին միայն այն դեպքերում, երբ դրանք դուրս չեն գալիս դատական համակարգի ընդհանուր սահմանադրական սկզբունքների շրջանակներից: Նման մոտեցումը բխում է նաև ՏՏ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի եւ 2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՏՏ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող 118-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթը ոչ միայն սահմանափակում է վճռաբեկ դատարանի մարզելիության իրավունքը, այլ նաև չի բավարարում իրավական օրենքին ներկայացվող հստակության, ճշգրտության եւ կանխատեսելիության որակները:

Միաժամանակ, ընդունելով, որ ՏՏ դատական օրենսգրքով սպեղծված փարբեր մասնագիտացված առաջին աստիճանի դատարանների միջև՝ վարչական դատարանի ակտերի վերաքննության կարգով բողոքարկման հնարավորություն չնախատեսելու առումով փարբերակված մոտեցումն իր հիմքում ունի որոշակի օբյեկտիվ արդարացում, այն է՝ վարչական դատարանի քննությանը ենթակա գործերի բնույթը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման փարբերակված մոտեցումը պահանջում է նաև փարբերակված մոտեցում վարչական ակտերի վճռաբեկության կարգով բողոքարկման իրավակարգավորումը սահմանելիս:

14. Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ վարչական արդարադատության առկա երկաստիճան համակարգի անարդյունավետությունը պայմանավորող գործոն է հանդիսանում նաև ՏՏ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող 115-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված այն դրույթը, որի համաձայն՝ վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Դատական ակտի ուժի մեջ մտնելու հանգամանքն իրավական հիմք է հանդիսանում այդ ակտի կատարման, այդ թվում հարկադիր կատարման գործընթաց նախաձեռնելու համար: Դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՏՏ օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ կատարողական թերթ փրվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ դիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում: Վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտնող ակտերի դեմ վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված է եռամսյա ժամկետ: Այսինքն՝ գործնականում հնարավոր է, որ մինչև վճռաբեկ բողոք բերելը վարչական դատարանի ակտն արդեն կատարված լինի: Նման պայմաններում վճռաբեկության կարգով բողոքարկումը կարող է դառնալ իմաստազուրկ եւ բացառել բողոքարկող կողմի համար անդառնալի բացասական հետեւանքները կանխելու հնարավորությունը՝ դրանով իսկ պայմանավորելով վճռաբեկ դատարանի՝ որպես բողոքարկման միակ աստիճանի, անարդյունավետությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ իրավունքի գերակայության բաղադրապարբերից է իրավական որոշակիության սկզբունքը, որն իր հերթին ենթադրում է *res judicata* սկզբունքի հարգում: Վերջինս էլ նշանակում է, որ որեւէ կողմ իրավասու չէ պահանջել վերջնական եւ կատարման ենթակա վճռի վերանայում պարզապես գործը կրկին քննելու եւ վեճը նորից

լուծելու նպատակով: Գործը վերանայելու՝ վերադաս դասարանի իրավասությունը պետք է իրականացվի դասական սխալները եւ արդարադատության իրականացման արդյունքում Կրեմլ գրամ թերությունները շփոթելու, այլ ոչ թե նոր քննություն սկսելու նպատակով: Վերջնական եւ կատարման ենթակա դասական ակտի վիճարկումը թույլատրելի է միայն էական եւ անհեղափոխ հանգամանքների դեպքում (տես, մասնավորապես, Ռյաբիխ ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով 2003թ. հուլիսի 24-ի վճիռը):

Նշված իրավական դիրքորոշմանը համահունչ կարգավորում է նախատեսված ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածում, որի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանների եւ քաղաքացիական դատարանի՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտնող ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը կարող է ընդունվել քննության այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական դատարանի ակտերի բողոքարկումը վճռաբեկ դատարան այնպիսի պայմաններում, երբ վարչական դատարանի ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, ոչ միայն վճռաբեկ դատարանում իրավունքի պաշտպանությունը դարձնում է անարդյունավետ, այլ նաեւ խախտում է իրավական որոշակիության եւ անվտանգության սկզբունքները, որոնք հանդիսանում են ՏՏ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված՝ իրավական պետության հիմնարար սկզբունքի բաղադրիչները:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ իրավական պետությունում, որպես կանոն, անթույլատրելի է ցանկացած դատական սխալի առկայության հիմքով օրինական ուժի մեջ մտնող դատական ակտի վերանայումը: Դրանով իմաստագրվում է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու գաղափարը, որի էությունն այդ ակտերին հնարավոր կայունություն հաղորդելու եւ դրանց անփոփոխելիության հանդեպ դատավարության կողմերի վստահությունը պաշտպանելու մեջ է:

Սահմանադրական դատարանը որպես վարչական արդարադատության երկաստիճան համակարգի մասը՝ իր իրավասության եւ արդյունավետության վրա ազդող գործոն է դիտարկում նաեւ այն հանգամանքը, որ ի տարբերություն վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին վերաքննիչ դատարանի որոշման, վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու որոշումը բողոքարկելու հնարավորություն օրենսդրությամբ նախատեսված չէ: Այսինքն՝ այն դեպքում, երբ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, անձը գրկված լինելով այն բողոքարկելու հնարավորությունից, ըստ էության ոչ միայն գրկվում է նման որոշման դեմ պաշտպանության միջոցից, այլ նաեւ նրա գործի քննությունը փաստացիորեն սահմանափակվում է միայն առաջին աստիճանի դատարանի շրջանակներում:

15. Չնայած այն հանգամանքին, որ ՏՏ սահմանադրական դատարանն իր 2008թ. հոկտեմբերի 8-ի ՍԴՌ-765 որոշմամբ ՏՏ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներին հակասող է ճանաչել ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի այն դրույթ-

ները, որոնք թույլ էին տալիս վճռաբեկ բողոք ներկայացնել միայն վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների միջոցով, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ նշված որոշման եզրափակիչ մասի 7-րդ կետի ուժով այդ դրույթները ժամանակավորապես պահպանում են իրենց ուժը, սահմանադրական դատարանը որպես վարչական գործերով վճռաբեկ ապյանի մարզելիությունը պայմանավորող գործոն է համարում նաև վարչական արդարադատության երկաստիճան համակարգում բողոքարկման միակ ապյան դիմելու համար հավատարմագրված փաստաբանի ծառայությունից օգտվելու պարտադիր պահանջը: Նման պահանջի առկայությունը երկաստիճան դատական համակարգում էլ ավելի է խաթարում դատական պաշտպանության արդյունավետ իրավունքի էությունը, քանզի, եթե եռաստիճան համակարգում անձը վերաքննիչ ապյանում օգտվում է անմիջական բողոքարկման հնարավորությունից, ապա վարչական արդարադատության ոլորտում անմիջական բողոքարկման հնարավորությունն ամբողջովին բացակայում է:

16. Մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության, ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլոց, նպատակ է հետապնդում առաջին հերթին դատավորների մասնագիտացման միջոցով ապահովել փոխյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ: Մասնագիտացված դատարանների ստեղծումը բխում է հասարակական կյանքի առանձին ոլորտներում առաջացող հարաբերությունների կապակցությամբ պարզաճ արդարադատություն իրականացնելու պահանջից: Դատավորները մասնագիտանում են որոշակի կարգադրիայի գործերով արդարադատության իրականացման մեջ, և այս դեպքում դատական սխալի հավանականությունն ավելի փոքր է: Ներկայումս, այդ ինստիտուտի բնականոն և լիարժեք կենսագործունեությունը պահանջում է, որպեսզի մասնագիտացման գործունը հարակ արտահայտված լինի փոխյալ տեսակի գործերի քննության իրավասությամբ օժտված բոլոր դատական ապյաններում:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վարչական մասնագիտացված արդարադատության ոլորտում անձի իրավունքների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն բողոքարկման միակ ապյանի՝ վճռաբեկ դատարանի մարզելիությամբ և արդյունավետությամբ, այլ այդ իրավունքի արդյունավետությունը պայմանավորող կարևոր հանգամանք է նաև վճռաբեկ դատարանում մասնագիտացման գործունի լիարժեք դրսետրումը: Մասնագիտացման գործունը վճռաբեկ դատարանում կարող է ունենալ երկու հիմնական դրսետրում, այն է՝ գործերի քննությունը մասնագիտացված առանձին միավորի կողմից, և երկրորդ՝ գործերի քննության կազմակերպումը վարչական արդարադատության առանձնահատկություններին համապատասխան: Մինչդեռ վճռաբեկ դատարանում վարչական գործերի քննության կապակցությամբ մասնագիտացման գործունի նշված երկու դրսետրումներն էլ որեւէ կերպ արտահայտված չեն:

Այսպես, ՏՏ Մահմանադրության 95-րդ հոդվածը, մարնանշելով ՏՏ վճռաբեկ դատարանի պալատները և ընդհանուր գծերով սահմանելով ՏՏ վճռաբեկ դատարանի

ներքին կառուցվածքը, կապարել է ոչ միայն կառուցվածքային, այլ նաև գործառնության փարանչարում: Վճռաբեկ դարարանի ներքին կառուցվածքի կանխորոշումը սահմանադրի կողմից՝ այդ դարարանի պալատների առանձնացումը, նշանակում է այդ պալատներից յուրաքանչյուրին արդարադարություն իրականացնելու հարուկ լիագորության փրամադրում: Մինչդեռ ՏՏ դարական օրենսգիրքը (հողվածներ 18 եւ 53), հաշվի չառնելով այդ հանգամանքը, վճռաբեկ դարարանի պալատների լիագորություններն ու գործառնությունը սահմանափակել է միայն վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցի լուծմամբ: Վճռաբեկ դարարանը բողոքի կապակցությամբ ըստ էության որոշում է կայացնում լիագումար կազմով, որտեղ պալատը հանդես չի գալիս որպես մասնագիտացված միավոր. վարչական դարարանի ակտերի դեմ բերված բողոքների առնչությամբ ըստ էության որոշումներն ընդունվում են քրեական պալատի եւ քաղաքացիական ու վարչական պալատների դարավորների մասնակցությամբ: Նման պայմաններում, վճռաբեկ դարարանում վարչական գործերով արդարադարությունը գրկվում է իր առարկայական բնույթից:

Սահմանադրական դարարանը գրնում է, որ մասնագիտացված վարչական դարարանի ակտերը չեն կարող վերանայվել մի դարարանի կողմից, որը չունի մասնագիտացված համապարասխան դարական կազմ: Սահմանադրության մեջ վճռաբեկ դարարանի պալատների գոյության երաշխիքի ամրագրումը կիմաստավորվի միայն այն դեպքում, երբ վճռաբեկ դարարանն ունենա լիարժեք, այն է՝ գործն ըստ էության քննող եւ լուծող մասնագիտացված համապարասխան պալատ: Մասնագիտացման գործողը վճռաբեկ վարություն բացակայելու արդյունքում վճռաբեկ դարարանում անձի իրավունքների պաշտպանության իրավունքը, հետեաբար նաեւ՝ վարչական արդարադարության ոլորտում անձի դարական պաշտպանության իրավունքն իր ամբողջության մեջ իսթարվում է եւ գրկվում արդյունավետությունից:

17. Սահմանադրական դարարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ մասնագիտացված վարչական արդարադարության ինստիտուտի անկարարությունը կայանում է ոչ միայն նրանում, որ մասնագիտացման գործողը որեւէ դրսետրում չի ունեցել վարչական դարարանի ակտերի բողոքարկման ապանում: Տամակարգային անկարարությունը դրսետրվում է նաեւ օրենսգրքի 135-րդ հողվածում:

ՏՏ Սահմանադրությունը փարբերակում է սահմանադրական եւ ընդհանուր արդարադարության գործառնությունը՝ սահմանադրական արդարադարության գործառնությունը 93-րդ հողվածով ուղղակիորեն վերապահելով սահմանադրական դարարանին: Սահմանադրությամբ նախանշված նման փարանչարումը սահմանադրական եւ ընդհանուր արդարադարության գործառնությունների միջեւ ապահովում է արդարադարության ողջ համակարգի գործառնական դինամիկ հավասարակշռությունը: Ընդ որում, սահմանադրական դարարանին է իրավասություն վերապահված սահմանադրական արդարադարության միջոցով ապահովել ՏՏ իրավակարգում Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը: Իր հերթին, վարչական արդարադարության մասնագիտացված մարմինը կոչված է ապահովելու վարչական մարմինների գործունեության օրինականությունը՝ պետական եւ փեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց

պաշտոնապար անձանց վարչական եւ նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման, ինչպես նաեւ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների եւ պաշտոնապար անձանց հայցադիմումների քննության միջոցով:

ՆՎ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի եւ 2, 9, 19, 118, 119, 122, 123, 125, 128, 141 եւ 156-րդ հոդվածների փոխկապակցված համադրումից, ինչպես նաեւ իրավակարգավորման առարկայի առնչությամբ 1-ին, 128 եւ 135-րդ հոդվածների համադրումից ակնհայտ է դառնում, որ ոչ միայն խնդիրներ են առաջացել վարչական արդարադատության վերահսկելի եւ մարդու իրավունքների պաշտպանության փասանկյունից արդյունավետ ընթացակարգ սահմանելու առումով, այլեւ, հաշվի չառնելով ՆՎ Սահմանադրության 93-րդ հոդվածի միանշանակ պահանջը, ՆՎ վարչական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին կետով վարչական արդարադատության ոլորտ է ներառվել սահմանադրական արդարադատության առարկան:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական եւ սահմանադրական արդարադատության առկա շփոթն իրավակիրառական պրակտիկայում կարող է ստեղծել սահմանադրական նորմերի մեկնաբանման փարակերպ մոտեցումներ, որը լուրջ վրանգ է ներկայացնում երկրում Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության ապահովման եւ հասարակական հարաբերությունների սահմանադրականացման միասնական քաղաքականության իրականացման համար: Սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա իրավակարգավորումը չի բխում նաեւ ՆՎ Սահմանադրության 1, 3, 5, 6, 92 եւ 94-րդ հոդվածների պահանջներից եւ երկրի իրավական անվտանգության սպառնալիք է իր մեջ պարունակում:

Սահմանադրական դատարանը՝ նկատի ունենալով, որ այս պարագայում կիրառելի չէ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՎ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասը, ուստի կարեւոր է համարում, որպեսզի ՆՎ Ազգային ժողովն ուշադրություն դարձնի այս հիմնախնդրին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասփանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասփանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայասփանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՆՎ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածը համապատասխանում է Նայասփանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. «Նարկերի մասին» ՆՎ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Նայասփանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՆՎ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Նայասփանի Հանրապետության Սահմանադրությանը:

4. ՆՆ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասը եւ 118-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող եւ անվավեր:

5. Առաջնորդվելով ՆՆ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթներով, նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմերի վերացումը կարող է առաջացնել իրավական բաց՝ խաթարելով այդ նորմերի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, սույն որոշման եզրափակիչ մասի 4-րդ կետով ՆՆ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2009թ. մարտի 31-ը՝ ՆՆ Ազգային ժողովին հնարավորություն քալով օրենսդրական կարգավորումները համալիր ձեռով համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

6. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳ-ԱՏՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

25 նոյեմբերի 2008 թվականի

ՄԴՈ-780

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱԿՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱԿՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՅԻԿ ԶԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆՃ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐԲԻ 14 ՆՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱԿՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱԿԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

2 դեկտեմբերի 2008թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարոյթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող՝ քաղաքացի Ա. Զայանի ներկայացուցիչ Ն. Ալունյանի, պարասխանող կողմի՝ ՆՃ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՃ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՆՃ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արայիկ Զայանի դիմումի հիման վրա՝ ՆՃ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ա. Զայանի՝ 21.08.2008թ. ՆՃ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պարասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՆՃ դատական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. ՆՃ դատական օրենսգիրքն ընդունվել է ՆՃ Ազգային ժողովի կողմից 2007թ. փետրվարի 21-ին, Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի ապրիլի 7-ին եւ ուժի մեջ է մտել 2007 թվականի մայիսի 18-ին:

ՏՏ դափական օրենսգրքի 14 հոդվածը վերնագրված է «Դափավորի անփոփոխելիությունը»: Նոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Այն դեպքում, երբ ԿՎԿԿ դափարանում գործը չի կարող քննվել դափավորների ինքնաբացարկները բավարարելու կամ այլ պարճառներով առաջացած դափավորների թվի անբավարարության հետևանքով, վճռաբեկ դափարանի նախագահի որոշմամբ նույն ապրանքի դափավորը կարող է մինչև 6 ամիս ժամկետով գործուղվել այդ դափարան կամ վճռաբեկ դափարանի այլ պալատ՝ իր հիմնական լիազորությունների իրականացման կասեցմամբ կամ առանց դրա: Նշված ժամկետը կարող է երկարաճգվել միայն այն դեպքում, երբ դափավորի վարոյթում գտնվող գործի քննությունը չի ավարտվել մինչև համապարասխան գործի քննության ավարտը: Նույն դափավորը չի կարող կրկին գործուղվել նախորդ գործուղման ավարտից հետո՝ մեկ փարվա ընթացքում»:

2. Ըստ գործում առկա դափական ակտերի՝ քրեական գործն ըստ մեղադրանքի Ռագմիկ Թորգոմի Սարգսյանի՝ ՏՏ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 5-րդ եւ 7-րդ կետերով, Մուսա Արփաշի Սերոբյանի՝ ՏՏ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 5-րդ եւ 7-րդ կետերով եւ Արայիկ Միքայելի Զալյանի՝ ՏՏ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 5-րդ եւ 7-րդ կետերով 12.06.2008թ. որոշմամբ ՏՏ Նյուսիսային քրեական դափարանի կողմից (նախագահությամբ՝ դափավոր Ն. Մովսեսյանի) ընդունվել է վարոյթ: ՏՏ վճռաբեկ դափարանի նախագահի՝ 12.06.2008թ. թիվ 57Ա հրամանով ՏՏ դափական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասի հիմքով թիվ ՆՅՔԸԴ-1/0046/01/08/ քրեական գործը քննելու համար Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դափարանի դափավորներ Մարտին Սարոյանը եւ Արմեն Խաչատրյանը գործուղվել են ՏՏ Նյուսիսային քրեական դափարան՝ մինչև վերոհիշյալ գործի դափաքննության ավարտը՝ առանց Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դափարանի դափավորի լիազորությունների կասեցման:

Նշված քրեական գործի դափաքննության ընթացքում ամբաստանյալներ Ռագմիկ Սարգսյանի, Մուսա Սերոբյանի եւ Արայիկ Զալյանի պաշտպան, փաստաբան Նայկ Ալունյանը դափավորներ Մարտին Սարոյանին եւ Արմեն Խաչատրյանին է ներկայացրել ինքնաբացարկի մասին միջնորդություն՝ պարճառաբանելով, որ «ԿՎԿԿ գործով դափարանի կազմի մեջ ընդգրկված երեք դափավորներից երկուսը՝ Մ. Սարոյանը եւ Ա. Խաչատրյանը ՏՏ Նյուսիսային քրեական դափարանի դափավորներ չեն հանդիսանում, եւ նրանց մասնակցությամբ դափարանը չի կարող համարվել օրենքի հիման վրա ստեղծված, մինչդեռ Եվրոպական կոնվենցիայի 6 (1) հոդվածով երաշխավորվում է, որ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքը, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ եւ անաչառ դափարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի եւ հրապարակային դափաքննության իրավունք: Դափարանը, որի կազմում են գտնվում այդ դափարանի դափավորներ չհանդիսացող անձինք, չի կարող համարվել օրենքի հիման վրա ստեղծված դափարան»:

Դափավորներ Մարտին Սարոյանը եւ Արմեն Խաչատրյանը ներկայացված ինքնաբացարկի մասին միջնորդությունը մերժել են համապատասխանաբար՝ «Պաշտպանի կողմից ներկայացված ինքնաբացարկի միջնորդության վերաբերյալ» եւ «Ինքնաբացարկ հայտնելու միջնորդությունը մերժելու մասին» 18.07.2008թ. որոշումներով:

Ընդ որում, դափավոր Մ. Սարոյանը, մերժելով ինքնաբացարկ հայտնելու միջնորդությունը, այն պարճառաբանել է հետեւյալ կերպ. «Ո՛ր Սահմանադրության 55 հոդվածի 11 կետի համաձայն օրենքով սահմանված կարգով փարիներ առաջ նշանակվել են առաջին աստիճանի դափարանի դափավոր»: Անդրադառնալով միջնորդության այն հարվածին, համաձայն որի՝ ՆՏ վճռաբեկ դափարանի նախագահի 2008թ. հունիսի 12-ի թիվ 57Ա հրամանը հակասում է Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի պահանջներին, դափավոր Մ. Սարոյանը պարճառաբանել է նաեւ, որ. «Ո՛ր բարձրացված հարցը ինքնաբացարկի միջնորդության հետ որեւէ կապ չունի, քանի որ ՆՏ քրեական դափավարության օրենսգրքի 90 հոդվածում թվարկված ինքնաբացարկի հիմքերը կոնկրետ իմ նկատմամբ բացակայում է»:

Դափավոր Ա. Խաչատրյանը՝ մերժելով ինքնաբացարկ հայտնելու միջնորդությունը, այն պարճառաբանել է հետեւյալ կերպ. «ՆՏ քրեական դափավարության օրենսգրքի 90 հոդվածի 1-ին մասում նշված են դափավորի կողմից ինքնաբացարկ հայտնելու համար նախադրված հիմքերը, որոնցում բացակայում են սույն քրեական գործով պաշտպանի կողմից նշված հիմքերը: Սույն քրեական գործը քննելու համար ՆՏ Նյուսիսային քրեական դափարան եւ գործուղվել են ՆՏ Վճռաբեկ դափարանի նախագահի որոշմամբ՝ 12.06.2008թ. թիվ 57Ա հրամանով, ինչը բխում է օրենքից՝ ՆՏ դափական օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից եւ փվյալ նորմով է սահմանված, որ ՆՏ Վճռաբեկ դափարանի նախագահի որոշմամբ նույն աստիճանի դափավորը կարող է մինչեւ 6 ամիս ժամկետով գործուղվել այլ՝ նույն աստիճանի դափարան: Այսինքն՝ ինձ ՆՏ Նյուսիսային քրեական դափարան գործուղելը եւ փվյալ գործով դափարանի կազմում ընդգրկվելը կափարվել է օրենքի հիման վրա ու չի հակասում Եվրոպական կոնվենցիայի 6 (1) հոդվածի պահանջին, եւ իմ կողմից ինքնաբացարկ հայտնելու հիմքեր չկան»:

Ըստ վերը նշված դափական ակտերի՝ նշված որոշումները բողոքարկման ենթակա չեն:

3. Վիճարկելով ՆՏ դափական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասի դրույթի սահմանադրականությունը, դիմող կողմը գտնում է, որ այն առաջացնում է իրավական անորոշություն, դրա հետեւանքով՝ ՆՏ վճռաբեկ դափարանի նախագահի 2008թ. հունիսի 12-ի թիվ 57Ա հրամանի եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 (1) հոդվածում՝ «օրենքի հիման վրա ստեղծված դափարան» բառակապակցության միջեւ հակասություն, եւ այդ հիմքերով հակասում է ՆՏ Սահմանադրության 1-ին հոդվածին, 3-րդ հոդվածի 2-րդ մասին, 55-րդ հոդվածի 11-րդ կետին, 92-րդ հոդվածի 3-րդ մասին, 94-րդ հոդվածի 2-րդ մասին: Մասնավորապես, ըստ դիմող կողմի՝ «...օրենքից չի հետեւում, թե ի՞նչ հանգամանքներ պետք է

հաշվի առնվեն վճռաբեկ դատարանի նախագահի կողմից՝ որոշելու համար, թե դատավորներից ո՞ր մեկը պետք է գործուղվի այս կամ այն դատարան, որքա՞ն ժամանակով, արդյո՞ք գործուղվելու մասին որոշում կայացնելուց հաշվի են առնվում դատավորների մասնագիտացումը, փարիքը, նախասիրությունները, կոնկրետ գործի վերաբերյալ դիրքորոշումը կամ որեւէ այլ հատկանիշներ: Արդյո՞ք գործուղումը կատարվում է մրցույթի արդյունքների կամ այլ ընտրության հիման վրա, թե որեւէ այլ չափանիշներից ելնելով, արդյո՞ք հաշվի է առնվում այդ ժամանակ դատավորի ցանկությունը: Արդյունքում օրենքը վճռաբեկ դատարանի նախագահին հնարավորություն է տալիս ՆՏ Նյութաային քրեական դատարանը ամբողջությամբ ձեւավորելու, օրինակ, վարչական դատարանի դատավորներից, կամ՝ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներին ամբողջ կազմով փոխարինել Նարավային քրեական դատարան, իսկ Նարավային քրեական դատարանի դատավորներին՝ վարչական դատարան եւ այլն: Օրենքի նման անորոշությունը կամայական որոշումների հնարավորություն է տալիս»:

Ըստ դիմող կողմի՝ վիճարկվող դրույթի իրավական անորոշության հետեւանքով ՆՏ վճռաբեկ դատարանի նախագահի 2008թ. հունիսի 12-ի թիվ 57Վ հրամանի եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 (1) հոդվածում՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» բառակապակցության միջև առաջանում է անհամապատասխանություն: Մասնավորապես, ըստ դիմող կողմի՝ վճռաբեկ դատարանի նախագահը, որոշում կայացնելով որոշակի քրեական գործ քննելու համար մեկ այլ դատարանից կոնկրետ դատավորներ գործուղելու մասին, ստեղծում է դատարան, որը պետք է քննի փյույթ գործը: Դատարան ստեղծելու իրավունք վճռաբեկ դատարանի նախագահին տալիս է վիճարկվող օրենքը: Սակայն այդ օրենքը, փաստորեն, թույլ տալով վճռաբեկ դատարանի նախագահին ստեղծելու դատարաններ, չի սահմանում դրանց ստեղծման կարգը եւ չափանիշները, որի արդյունքում վճռաբեկ դատարանի նախագահը հնարավորություն է ստացել իր բացարձակ հայեցողությամբ, կամայականորեն ստեղծելու դատարան՝ այս կամ այն գործը քննելու համար:

Նույն ափյանի դատարանի դատավորի՝ նույն ափյանի դատարան կամ վճռաբեկ դատարանի այլ պալատ գործուղվելը դիտարկելով որպես դատարանի ստեղծում, պնդելով իր այն փեսակետը, որ «Դատարան ստեղծելու իրավունք վճռաբեկ դատարանի նախագահին տալիս է վիճարկվող օրենքը», հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եւ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներն այն մասին, որ իրավական որոշակիության պահանջներին չհամապատասխանող օրենքը չի կարող համարվել օրենք, դիմող կողմը գտնում է, որ **օրենքի վիճարկվող դրույթի հիման վրա** ստեղծված դատարանը չի համապատասխանում Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 (1) հոդվածում՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» բառակապակցության բովանդակությանը, քանի որ օրենքի վիճարկվող դրույթը չի համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին, ուստի եւ չի կարող համարվել օրենք:

Վերլուծելով վիճարկվող դրույթի, ինչպես նաեւ ՆՏ Սահմանադրության 55 հոդվածի 11-րդ կետի եւ 92 հոդվածի երրորդ մասի դրույթների փոխառնչությունները, հիմն-

վելով «արտակարգ դատարան» հասկացության բովանդակության մեկնաբանության սեփական փարբերակի վրա, դիմող կողմն ընդհանուր հեղեղություն է անում, որ **վիճարկվող դրույթի հիման վրա դատարանի ստեղծումը** չի համապատասխանում ՏՏ Սահմանադրության 55 հոդվածի 11-րդ կետին համապատասխան դատարանների ստեղծման կարգին, եւ վիճարկվող դրույթով սահմանված կարգով ստեղծված դատարանն արտակարգ դատարան է, որի ստեղծումն արգելված է ՏՏ Սահմանադրության 92 հոդվածի երրորդ մասով:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ ՏՏ դատական օրենսգրքի վիճարկվող դրույթը սահմանադրականության խնդիր չի առաջացնում:

Պատասխանող կողմը, ՏՏ դատական օրենսգրքի վիճարկվող դրույթը հիմնականում վերլուծելով «օրենքի հիման վրա ստեղծված, անկախ եւ անկողմնակալ դատարանի»՝ Կոնվենցիայի չափանիշներին համապատասխանության փեսանկյունից, հղում կատարելով *Coeme and others v. Belgium* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2000թ. հունիսի 22-ի վճռում արտահայտված իրավական դիրքորոշմանը, գտնում է, որ նշված իրավական դիրքորոշման մեջ արտահայտված ձեական պահանջը ՏՏ օրենսդրությամբ լիովին պահպանված է, քանի որ «...դատական համակարգի կազմակերպման կանոնները սահմանված են բացառապես օրենքներով: Օրենքով է սահմանված նաեւ դատավորին մեկ այլ դատարան գործուղելու՝ վճռաբեկ դատարանի նախագահի իրավունքը եւ գործուղման ընթացակարգը»: Պատասխանող կողմը շեշտում է նաեւ այն հանգամանքը, որ թիվ 63486/00 գանգափի հիման վրա հարուցված՝ «Պոստիտվն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գանգափի քննության ընթացքում չի անդրադարձել ժողովրդական արեւակալների նշանակման դատավարական կարգին, քանի որ միայն այն հանգամանքը, որ նշանակումն իրականացվում է օրենքի հիման վրա, դատարանը բավարար է համարել արեւակալների մասնակցությամբ դատարանը «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» դիտելու համար:

Պատասխանող կողմը գտնում է, որ ՏՏ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասում հստակ սահմանված են դատավորներ գործուղելու մասին որոշում կայացնելու անհրաժեշտ իրավական չափանիշները, որոնք առավել հստակ ու մանրամասն են շարադրված, քան եվրոպական երկրների օրենսդրությամբ դատավորի գործուղման ընթացակարգի կանոնակարգումն է: Նիմնավոր չհամարելով դիմողի առաջարկությունն այն մասին, որ գործուղման մասին որոշում կայացնելիս պետք է հաշվի առնել **դատավորների մասնագիտացումը**, փարիքը, նախասիրությունները, կոնկրետ գործի վերաբերյալ դիրքորոշումը կամ որեւէ այլ հատկանիշ՝ պատասխանող կողմը գտնում է, որ փարիքը եւ նախասիրությունները կազմակերպական բնույթի են, եւ վճռաբեկ դատարանի նախագահի կողմից կարող են հաշվի առնվել գործուղման մասին որոշում կայացնելիս, իսկ կոնկրետ գործի վերաբերյալ դիրքորոշումը դատավարական բնույթի է, եւ օրենքով նա-

խաբեւած են դրան հակադէլու համապարասխան դաբաւարական մեխանիզմներ, ինչպիսին, ի թիվս այլոց, դաբաւորին բացարկ հայրներու՝ մեղադրյալի իրաւունքն է:

Նիմնւելով «արտակարգ դաբարան» հասկացոյթյան բովանդակոյթյան մեկնաբանոյթյան սեւիական արբերակի վրա՝ պարասխանող կողմը հիմնաւոր չի համարում վիճարկվող դրոյթներով արտակարգ դաբարան սբեղծելու հնարաւորոյթյան մասին դիմող կողմի րեսակեպը եւ ընդհանուր հեբեուոյթյուն է անում, որ «ՆՆ դաբարական համակարգի կազմակերպման եւ գործունեոյթյան կարգը նախաբեւած է ՆՆ Սահմանադրոյթյամբ եւ օրենքներով: Օրենքով են նախաբեւած նաեւ դաբաւորներին գործուդելու մասին որոշում կայացնելու՝ վճռաբեկ դաբարանի նախագահի իրաւունքը եւ գործուդման պայմանները: Վճռաբեկ դաբարանի նախագահը գործուդման մասին որոշում կարող է կայացնել միայն օրենքով նախաբեւած հիմքերի առկայոյթյան պայմաններում: ՆՆ դաբարական օրենսգրքի 14-րդ հողվածի 3-րդ կեբով սահմանված կարգով գործուդվում են միայն օրենքով սահմանված կարգով նշանակված դաբաւորները, գործուդումն իրականացվում է բացառապես օրենքով նշված հիմքերի առկայոյթյան պայմաններում եւ կարգով, գործուդված դաբաւորներն արդարադաբոյթյուն իրականացնում են օրենքի հիման վրա՝ ապահովելով Սահմանադրոյթյամբ եւ օրենքներով ամբարգրված սկզբունքների կենսագործումը»:

Պարասխանող կողմը մաբաննշում է նաեւ, որ դաբաւորի գործուդման ինսպիբուրը նախաբեւած է նաեւ այլ պեբոյթյունների, մասնաւորապես՝ Բուղարիայի, Լիբվայի, Լաբվիայի, Սերբիայի, Խորվաթիայի, Էսբոնիայի, Գերմանիայի դաբարանակազմական օրենադրոյթյամբ:

Պարասխանող կողմն ընդունում է, որ, այնուամենայնիվ, դաբաւորների գործուդման ինսպիբուրի կանոնակարգումը պեբը է համապարասխանի ամբողջ դաբարական համակարգի կազմակերպման եւ գործունեոյթյան րբամաբանոյթյանը, ինչի արդյունքում այն կդիբվի ոչ թե որպես օրինաչափոյթյուն, այլ դաբարական համակարգի բնականոն գործունեոյթյունն ապահովող բացառիկ միջոց:

5. Նաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողն իր իրաւունքների խախտումը հիմնականում պայմանաւորում է ՆՆ դաբարական օրենսգրքի վիճարկվող դրոյթում, իր կարծիքով, իրաւական անորոշոյթյան առկայոյթյամբ, դրա հեբեուանքով՝ ՆՆ վճռաբեկ դաբարանի նախագահի 2008թ. հունիսի 12-ի թիվ 57Ա հրամանի եւ Մարդու իրաւունքների եւ հիմնարար ազաբոյթյունների պաշտպանոյթյան մասին եվրոպական կոնվենցիայի 6 (1) հողվածում՝ «օրենքի հիման վրա սբեղծված դաբարան» բառակապակցոյթյան միջեւ հակասոյթյամբ, հիմք ընդունելով «Սահմանադրական դաբարանի մասին» ՆՆ օրենքի 63 հողվածի 1-ին մասի եւ 68 հողվածի 7-րդ մասի պահանջները, սույն գործի շրջանակներում սահմանադրական դաբարանը կարեուրում է ՆՆ դաբարական օրենսգրքի 14 հողվածի 3-րդ մասի դրոյթի սահմանադրաիրաւական իմասպի բացախայբման, դրա կիրառման արակաբիկայում դրսեուրված մոբեցումների գնահաբման, օրենքի վիճարկվող դրոյթի իրաւակարգաւորման ուղղվածոյթյան, խնդիրների եւ նպաբակների բացախայբման անհրաժեշտոյթյունը:

6. ՆՏ դափական օրենսգրքի 14 հոդվածի վիճարկվող դրույթի իրավակարգավորումն ունի երկու բաղադրիչ.

ա/ դափավորի գործողման իրավակարգավորումը փարսծվում է նույն աքյանի դափավորի «այդ դափարան կամ վճռաբեկ դափարանի այլ պալափ՝ իր հիմնական լիագորոթյունների իրականացման կասեցմամբ կամ առանց դրա» գործողելու նկափամամբ,

բ/ նույն դափավորը չի կարող կրկին գործողվել նախորդ գործողման ալարափից հեփո՝ մեկ փարվա ընթացքում:

Վերը նշված իրավակարգավորման վերլուծոթյան արդյունքում սահմանադրական դափարանն արճանագրում է, որ գործողման իրավակարգավորման խնդիրը մի դափավորին մեկ այլ դափավորով ժամանակալորապես փոխարինելն է կամ դափական ճանրաբեռնվածոթյան հաղթահարումը՝ ողջամիփ ժամկեփում գործերի քննոթյան համար, ինչը, իր հերթին, նպափակաողղված է դափական պաշտպանոթյան եւ դափական պաշտպանոթյան արդյունալեփ միջոցի իրալունքների իրացման ապահովմանը, **որով հեփապնդվում է իրալաչափ նպափակ:**

Միաժամանակ, սահմանադրական դափարանը գրնում է, որ ՆՏ Սահմանադրոթյան 55 հոդվածի 11-րդ կեփը վերաբերում է դափարանների՝ որպես **պեփական իշխանոթյան մարմինների** կազմալորմանը: Մինչդեռ վիճարկվող դրույթը վերաբերում է բացառիկ դեպքերում, իրալաչափ նպափակով պայմանալորված **օրենքի հիման վրա սփեղծված դափարանում այլ դափարանի դափավորի (դափավորների) ընդգրկմամբ դափական կազմի ճեալորմանը:** Նեփեաբար՝ նման լուծումները չեն կարող հանգեցնել դափարանի՝ որպես առանճին **պեփական իշխանոթյան մարմնի** սփեղծման: Տվյալ դեպքում գործողվող դափավորի լիագորոթյունները դադարեցվել կամ դադարել չեն կարող, առկա չէ փլյալ դափարանի դափավորների՝ օրենքով սահմանված թվակազմի նվազում, **առկա չէ դափավորի թափուր պաշտոն, հեփեաբար՝ դափարանի կազմալորման կարգով դափական կազմ ճեալորելու պահանջ:** Փոխարինվող դափավորը՝ ՆՏ Նախագահի կողմից նշանակված լինելով փլյալ դափարանի դափավոր, պարփավոր է շարունակել մնալ այդպիսին, ընդգրկված մնալ փլյալ դափարանի դափավորների՝ օրենքով սահմանված թվակազմում՝ իր լիագորոթյունների ողջ ճալալով, գործողման ժամանակ գործողված դափավորի լիագորոթյունների որեւէ ճեալով դադարեցում փեղի չի կարող ունենալ: Նեփեաբար, գործողման հիման վրա ճեալորված դափական կազմերի միջոցով գործի քննոթյունը միանգամայն իրալաչափ է եւ իրականացվել է դափավարական պափշած ընթացակարգով:

Տիմնական խնդիրն այն է, որ վեճի առարկա դրույթում «իր հիմնական լիագորոթյունների իրականացման կասեցմամբ կամ առանց դրա» արփահալորոթյունը որոշակի շփոթ է առաչացրել: Անորոշ է մնացել, թե փլյալ իրավակարգավորման շրջանակներում որո՞նք են հիմնական եւ ոչ հիմնական լիագորոթյունները: Ի՞նչ փարքերակում է դրված «լիագորոթյունների իրականացման կասեցում» եւ «լիագորոթյունների կասեցում» հասկացոթյունների միջեւ: Առկա իրավակարգավորումը կարող է ենթադրել նաեւ, որ փաստորեն վճռաբեկ դափարանի նախագահը նոր, ժամանակալոր նշանակում է կա-

տարում՝ կասեցնելով ընդհանուր իրավասության առաջին արյանի դափարանի դափարավորի լիազորությունները, նրան ժամանակավորապես նշանակելով մասնագիտացված դափարանի դափավոր: Այնինչ, ՏՏ Սահմանադրության 55 հոդվածի 11-րդ կետը եւ 95 հոդվածը դափավորների նշանակման եւ լիազորությունների դադարեցման միանգամայն այլ ընթացակարգեր են սահմանել, եւ որեւէ բացառություն նախատեսված չէ:

ՏՏ Սահմանադրության 55 հոդվածի 11-րդ կետի եւ 95 հոդվածի պահանջները հաշվի առնելով, նկատի ունենալով, որ դափավորը ՏՏ արդարադատության խորհրդի առաջարկությամբ ՏՏ Նախագահի կողմից նշանակվում է որպես **կոնկրետ դափարանի դափավոր**, ԿՎԿՅ դափարանում նրա լիազորությունների ժամանակավոր կասեցմամբ այլ դափարան բացառիկ անհրաժեշտությունից ելնելով գործուղման խնդիրը կարող էր լուծվել միմիայն դափավորի պաշտոնում նշանակման գործընթացի փրամաբանության սահմաններում: Օրենքը չի կարող վճռաբեկ դափարանի նախագահին լիազորել կասեցնել ՏՏ Նախագահի հրամանագրի գործողությունը՝ թեկուզ ժամանակավորապես: Օրենքով նրան վերապահված նման լիազորությունը չի բխում ՏՏ Սահմանադրության 1-ին, 6, 49, 55 եւ 95 հոդվածների դրույթներից: Իրականում նման մոտեցում արտահայտված է ՏՏ դափարակա օրենսգրքի 14 հոդվածի՝ վեճի առարկա 3-րդ մասում եւ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված նույն հոդվածի 5-րդ մասում: Վերջինս նախատեսում է, որ «Այն դեպքում, երբ ԿՎԿՅ դափարանում քննվող գործերի ծավալը փոքր է ԿՎԿՅ դափարանում աշխատող դափավորների թվի համեմատ, այդ դափարանի դափավորը կարող է վճռաբեկ դափարանի նախագահի որոշմամբ մինչեւ 6 ամիս ժամկետով գործուղվել այլ դափարան՝ իր հիմնական լիազորությունների իրականացման կասեցմամբ: Նշված ժամկետը կարող է երկարաձգվել միայն այն դեպքում, երբ դափավորի վարույթում գրավոր գործի քննությունը չի ավարտվել մինչեւ համապատասխան գործի քննության ավարտը: Նույն դափավորը չի կարող կրկին գործուղվել նախորդ գործուղման ավարտից հետո՝ մեկ տարվա ընթացքում»:

7. Սահմանադրական դափարանն անհրաժեշտ է համարում դափավորի գործուղման վերաբերյալ վիճարկվող իրավակարգավորումը դիփարկել նաեւ ՏՏ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով սահմանված՝ դափարակա պաշտպանության եւ դափարակա պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների փեսանկյունից:

ՏՏ Սահմանադրության 18 հոդվածի առաջին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դափարակա, ինչպես նաեւ պեղական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

ՏՏ Սահմանադրության 19 հոդվածի առաջին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաեւ իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դափարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»: Դափարակա պաշտպանության եւ դափարակա պաշտպանության արդյունավետ միջոցի իրա-

վունքները նախապես ստանալու են նաև Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 եւ 13 հոդվածներով:

Պեքությունը պարտավոր է համապատասխան իրավական, կազմակերպական, ինստիտուցիոնալ երաշխիքներ ստեղծել սահմանադրական այդ իրավունքներն իրականացնելու ուղղությամբ:

Նման իրավական երաշխիք է փոխադրարանում դատավորների թվի անբավարարության հետեւանքով գործի քննության անհնարինության դեպքում նույն ապյանի դատարանի դատավորին նույն ապյանի դատարան կամ վճռաբեկ դատարանի այլ պալատ գործուղելու իրավական հնարավորությունը՝ նախապես ստանալով ՎՍՊ հոդվածի 14 հոդվածով:

Անդրադառնալով դատավորի գործուղման իրավազափոխանը նրա կարգավիճակից բխող գործունեության անթույլատրելիության փաստակցումից՝ սահմանադրական դատարանը, սույն որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշումների շրջանակներում, հիմք ընդունելով նաև ՎՍՊ Սահմանադրության 97 հոդվածի առաջին մասը եւ ՎՍՊ - դատական օրենսգրքի 4 հոդվածի 2-րդ մասը, որոնց համաձայն դատավորն օժտված է արդարադատություն իրականացնելու իրավասությամբ, գտնում է, որ ՎՍՊ դատական օրենսգրքում՝ վիճարկվող դրույթի եւ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՎՍՊ դատական օրենսգրքի 14 հոդվածի այլ դրույթներով սահմանված **գործուղման հնարավորության նախապես ստանալու ինքնին իրավազափոխ է, պայմանավորված է բացառիկ դեպքերում, իրավականորեն արդարացված՝ փոխադրարանում դատավորների թվի օբյեկտիվորեն առաջացած անբավարարության հետեւանքով գործի քննության անհնարինության հետեւանքների հաղթահարման անհրաժեշտությամբ:**

Այս ինստիտուտի անհրաժեշտությունը թելադրված է անձի դատական պաշտպանության եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների ապահովմամբ եւ հիմնավորված է նաև Դատավորի կարգավիճակի մասին եվրոպական խարտիայում:

Այլ խնդիր է, թե որքանով են գործուղման փաստացի իրավակարգավորումներն ու դրանից բխող իրավակիրառական պրակտիկական ապահովել արդարադատության իրականացման սահմանադրական պահանջները, այդ ոլորտում մեր երկրի ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը, դատական պաշտպանության արդյունավետությունը:

8. Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում անհրաժեշտ է համարում նշված խնդիրը դիտարկել նաև «նույն ապյան» հասկացության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման, ինչպես նաև դատավորների գործունեության գործընթացի իրավակարգավորման լիարժեքության փաստակցումներից:

ՎՍՊ Սահմանադրությունը, սահմանելով ՎՍՊ դատական համակարգի կառուցվածքը, միեւնույն ժամանակ հնարավոր է համարել այնպիսի իրավիճակի ձեւավորում, որտեղ հասարակական հարաբերությունների զարգացման, ինչպես նաև դրանց առավել բարդ

իրավական կարգավորվածության պայմաններում արդյունավետ արդարադատություն իրականացնելու համար կպահանջվի առավել խոր մասնագիտական մոտեցում եւ լուծումներ: ՏՏ Սահմանադրությունը, նման իրավիճակի գնահատման լիազորությունը վերապահելով օրենսդրին, նախատեսում է նաեւ օրենքով մասնագիտացված դատարաններ ստեղծելու հնարավորություն: Սահմանադրական նորմի բովանդակության նորմատիվ տարրն է կազմում այն պահանջը, համաձայն որի՝ նման դատարանը պետք է իրականացնի արդարադատություն որոշակի իրավագործության շրջանակներում. դա այդ մարմնի բացառիկ իրավասությունն է, այլ դատարան իրավասու չէ քննել նման գործեր, ինչպես նաեւ մասնագիտացված դատարանն իրավասու չէ քննել այլ դատարանի իրավասությանը վերապահված գործեր: Նույն կերպ, մասնագիտացված դատարանի դատավորը, որն օժտված է արդարադատություն իրականացնելու իրավասությամբ, որպես մասնագիտացված դատարանում դատավորի պաշտոն զբաղեցնող անձ կոչված է իրականացնելու արդարադատություն՝ բացառապես իրավունքի այդ կոնկրետ բնագավառում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը ՏՏ դատական օրենսգրքով այս խնդիրը կանոնակարգելիս հետետողականություն չի դրսևորել ՏՏ Սահմանադրության 92 հոդվածի պահանջները լիարժեք հաշվի առնելու հարցում: Այդ մասին սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել նաեւ 2008թ. սեպտեմբերի 9-ի ՄԴՈ-758 որոշման մեջ:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ մասնագիտացված դատարան ստեղծելու՝ սահմանադրական նորմի տրված հնարավորության իմաստը ոչ թե գործերի մեխանիկական բաժանումն է փարբեր դատարանների միջեւ, այլ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովող համակարգի ստեղծումն է, որպեսզի գործերի բաշխումը փարբեր իրավասությամբ օժտված դատարանների միջեւ կիրականացվի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման փեսանկյունից արդարացված չափանիշներով, որի պայմաններում իրավասու դատարաններն իրենց մասնագիտական որակավորմամբ ի վիճակի կլինեն իրականացնել արդյունավետ մասնագիտական արդարադատություն:

Այդ պահանջից ելնելով է, որ գործող օրենսդրությունը որոշակի փարբերակում է դրել ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարանների միջեւ: Մասնավորապես, դա վերաբերում է թե՛ այդ դատարանների քննությանը ենթակա գործերի բնույթին ու շրջանակներին եւ թե՛ դատավորների նշանակման ու առաջխաղացման կարգերին: Օրինակ, ՏՏ դատական օրենսգրքի 22 հոդվածը սահմանել է, որ «Ընդհանուր իրավասության դատարանին են ենթակա բոլոր գործերը, **բացառությամբ քաղաքացիական, քրեական եւ վարչական դատարանների ենթակայությանը վերապահված գործերի**»: Միարժեքորեն օրենսդիրը ՏՏ դատական օրենսգրքի 22, 27, 31 եւ 35 հոդվածների 1-ին մասերով փարբերակել է ՏՏ դատական օրենսգրքով ձեւավորված մասնագիտացված դատարաններին եւ ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա գործերի շրջանակները: Դրանով իսկ այդ դատարանները գործառությանի առումով չեն կարող դիտվել որպես նույն ապյանի համասեռ դատարաններ: Բացի դրանից, ՏՏ դատական օրենսգրքի 122, 123, 126 եւ 127 հոդվածները սահմանում են ընդհանուր իրավասության

դաբարանների դաբարավորի թափուր Գեղի համար թեկնածու առաջարկելու, դրանց կողմից առաջարկն ընդունելու կարգի եւ չընդունելու հեբեւանքների, թափուր պաշտոնում դաբարավոր նշանակելու, դաբարավորների պաշտոնների փոխանակման այնպիսի կարգեր, որոնք նույնական չեն նույն օրենսգրքի 128, 129, 130, 131, 133 եւ 134 հոդվածներով առաջին աբյանի մասնագիբարացված դաբարանների դաբարավորների առնչությամբ նախաբեւաված կարգերի հեբ: Ավելին, նույն օրենսգրքի 135 հոդվածը, սահմանելով դաբարավորների ծառայողական առաջխաղացման ցուցակի կազմման, դաբարանի նախագահի, **առաջին աբյանի մասնագիբարացված**, վերաքննիչ դաբարանի դաբարավորի, վճռաբեկ դաբարանի պալաբի դաբարավորի եւ նախագահի նշանակման հեբ կապված՝ քվեաթերթիկներով քվեարկության ժամանակ հաշվի առնվող հարկանիշները, այս ցանկում բնականորեն չի ներառում ընդհանուր իրավասության առաջին աբյանի դաբարանների դաբարավորներին:

Դաբական օրենսգրքի նշված եւ մի շարք այլ հոդվածների (մասնավորապես՝ 3-6-րդ գլուխների եւ 136 ու 137 հոդվածների) համալիր վերլուծությունից հեբեւում է, որ իրավակարգավորման Գարբեր մոբեցումներ են դրսեւորվում ընդհանուր իրավասության առաջին աբյանի եւ մասնագիբարացված դաբարանների հանդեբ:

Նկաբի պեբք է ունենալ նաեւ, որ ԵԽ Նախարարների կոմիբեի՝ անդամ պեբություններին դաբարավորների անկախության, արդյունավեբության եւ դերի մասին No. R (94) 12 հանձնարարականի՝ «Դաբարավորների անկախության ընդհանուր սկզբունքները» մասի 2-րդ կեբի c. ենթակեբի համաձայն՝ դաբարավորների պրոֆեսիոնալ մասնագիբարացմանը վերաբերող բոլոր որոշումները պեբք է հիմնված լինեն օբյեկտիվ չափանիշների վրա, դաբարավորների ընբրությունը եւ մասնագիբարացումը պեբք է հիմնված լինի այն հարկանիշի վրա, որը կապված է որակավորման, ազնվության, ունակության եւ արդյունավեբության հեբ:

Սահմանադրական դաբարանը գբնում է, որ ՆՆ դաբական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասում «**նույն աբյան» բառակապակցությունը Գվյալ օրենքով նախաբեւաված իրավակարգավորման շրջանակներում կիրառելի է միայն կառուցակարգային եւ գործառնական նույնաբնույթ կարգավիճակ ունեցող դաբարանների առնչությամբ:** Դա չի կարող մեկնաբանվել այնպես, որ նույն հարթության վրա դրվեն գործառնական Գարբեր իրավասություն ունեցող ընդհանուր իրավասության եւ մասնագիբարացված դաբարանները: Այսպեղ նույնպես հիմնական խնդիրը վերաբերում է առաջին աբյանում դաբարանների նման մասնագիբարացման հիմնավորվածությանը, եւ կասկած չի կարող առաջանալ օրենքի հիման վրա սբեղծված դաբարանի կողմից իրականացված արդարադաբության իրավաչափության առումով:

9. Սահմանադրական դաբարանը գբնում է, որ բացառված չեն այնպիսի իրավիճակները, եբք անհրաժեշտություն առաջանա կառուցակարգային եւ գործառնական նույնաբնույթ որեւէ աբյանի դաբարանի դաբարավորի գործուղումը նույն աբյանի մեկ այլ դաբարան՝ ողջամիբ ժամկեբներում եւ արդյունավեբ արդարադաբություն իրականացնելու նաբարակով: Ինչպես նշվեց, գործուղման ինսպիբուբի գոյությունն ինքնին ի-

րավաչափ է: Սակայն, մյուս կողմից, այդպիսի գործուղումները պետք է լինեն բացառությամբ եւ ոչ թե դառնան ընդհանուր կանոն կամ իրականացվեն գործառնական փարբեր իրավագործություն ունեցող դատարանների միջեւ:

ՆՏ իրավակիրառական պրակտիկայի վերլուծությունից հետեւում է, որ միայն 2008թ. փետրվար-սեպտեմբեր ամիսներին Նարավային քրեական դատարան են գործուղվել ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանների՝ 5, իսկ Նյուսիասային քրեական դատարան՝ 14 դատավոր: Վերջիններիս թիվն ավելի քան չորս անգամ գերազանցում է Նյուսիասային քրեական դատարանի դատավորների թիվը: Որպես կանոն, գործուղվել է երկուական դատավոր, եւ մասնագիտացված դատարանի մեկ դատավորի հետ ձեւավորվել է դատարան՝ դրան վերապահելով առանձնապես ծանր քրեական գործի քննության իրավասություն:

Սահմանադրական դատարանը գրնում է, որ նման վիճակի պատճառը նաեւ ոչ հիմնավոր մոտեցումն է Նյուսիասային եւ Նարավային քրեական դատարանների կազմավորմանը: Մի դեպքում՝ նախագահի եւ երեք դատավորի, մյուս դեպքում նախագահի եւ երկու դատավորի կազմով սրեղծված դատարանները փաստորեն ի սկզբանե ձեւական բնույթ են կրել: Օրինակ, Նարավային քրեական դատարանը՝ նախագահի եւ երկու դատավորի կազմով, միայն դատավորների օրինական արձակուրդի դեպքում գրեթե չորս ամիս չէր կարող դատական կազմ ձեւավորել՝ ՆՏ դատական օրենսգրքի 18 հոդվածի 3-րդ - մասի հիմքով գործ քննելու համար: Իսկ այն դեպքում, երբ անհրաժեշտ է երեք դատավորի կազմով գործ քննել, ապա 4-5 ամիս անհնարին կլինի որեւէ այլ գործ քննել: Դա այն դեպքում, երբ 2008 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին այդ դատարանում մոտաքազրվել է 202 գործ, իսկ 2007 թվականի նույն ժամանակահատվածում այդ դատարանի սպասարկման դատական փարածքում մոտաքազրված է եղել 227 գործ:

Դատարանակազմական ոչ հիմնավոր լուծումների արդյունքում սրեղծվել է մի իրավիճակ, երբ ամեն մի կոնկրետ գործի համար վճռաբեկ դատարանի նախագահը ձեւավորել է մասնագիտացված քրեական դատարան, որի կազմում մեծամասնություն են կազմել ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավորները՝ բացառապես հայեցողական ընտրության արդյունքում: Սահմանադրական դատարանը գրնում է, որ նման իրավիճակը չի բխում իրավական պետության հիմնարար սկզբունքներից, իրավաչափ չէ ու նաեւ կոռուպցիոն ռիսկ է պարունակում:

10. Անդրադառնալով դատավորի գործուղման առկա իրավակարգավորումների շրջանակներում դատական պաշտպանության արդյունավետության ապահովվածությանը՝ դատավորների գործուղման գործընթացի իրավակարգավորման լիարժեքության փեսանկյունից, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ դատավորների գործուղման եւ դատարանների ձեւավորման իրավակարգավորումների խնդրին:

ՆՏ դատական օրենսգրքի 14 հոդվածն ամրագրել է դատավորների երկու կարգ-գործի, որոնք կարող են գործուղվել այլ դատարան: Դրանք են.

ա/ գործող դատավորը (14 հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասեր),

բ/ ռեզերվային դափավորը (14 հոդվածի 4-րդ մաս՝ 7-րդ մասի համադրությամբ):
 Կրճատված դափավորի վերաբերյալ ՏՏ դափական օրենսգրքի 14 հոդվածի 6-րդ մասով նախատեսված է դրույթ, սակայն նախատեսված չէ նրա գործուղման հնարավորությունը:

ՏՏ դափական օրենսգրքի 14, 18, 24, 122, 129 հոդվածների համեմատական վերլուծության արդյունքներով սահմանադրական դափարանն արձանագրում է, որ.

ա/ արդարադատության արդյունավետ իրականացման առումով հիմնավոր չէ քրեական դափարանների նման կազմերով ձեւավորումը,

բ/ ՏՏ դափական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասերով սահմանված իրավակարգավորումը **լիարժեք չէ** այն իմաստով, որ.

- « ...նույն ապյանի դափավորը կարող է մինչեւ 6 ամիս ժամկետով գործուղվել այդ դափարան...» բառակապակցության մեջ հստակեցված չէ գործառնական առանձնահատկությանը վերաբերող պահանջը, որի հետեւանքով փեղ է գրել վերը ներկայացված իրավակիրառական պրակտիկան,

- չի նախատեսում որեւէ սահմանափակում, որպեսզի դա համապարած բնույթ չկրի,

- հստակ չէ «...իր հիմնական լիազորությունների իրականացման կատեգորիայում...» արտահայտությունը:

Վերջինս, փաստորեն, ենթադրում է դափավորի լիազորությունների ժամանակավոր դադարեցում, որը ՄԱԿ-ի 1985թ. Դափական մարմինների անկախության հիմնարար սկզբունքների համաձայն թույլատրելի է միայն իր գործունեության շարունակման անհնարինության կոնկրետ հիմքերի դեպքում:

11. ՏՏ դափական օրենսգրքի 61 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն. «Վճռաբեկ դափարանի նախագահը ապահովում է վճռաբեկ դափարանի բնականոն գործունեությունը»: Նույն հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի համաձայն. «Վճռաբեկ դափարանի նախագահը իրականացնում է օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ»: Նշված երկու նորմերի համադրված վերլուծության արդյունքներով սահմանադրական դափարանը գտնում է, որ ՏՏ դափական օրենսգրքի 61 հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի ուժով օրենքով վճռաբեկ դափարանի նախագահին կարող են վերապահվել այնպիսի լիազորություններ, որոնք իրենց բնույթով չեն հակասում օրենքով եւ, մասնավորապես, ՏՏ դափական օրենսգրքի 61 հոդվածի 3-րդ մասով վճռաբեկ դափարանի նախագահին վերապահված մյուս լիազորություններին:

Սահմանադրական դափարանը գտնում է, որ ՏՏ դափական օրենսգրքի 14 հոդվածով վճռաբեկ դափարանի նախագահին վերապահված՝ դափավորներին գործուղելու վերաբերյալ լիազորությունը չի բխում նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջներից:

Բացի դրանից, ՏՏ դափական օրենսգրքի 70 հոդվածի համաձայն՝ Տայասպանի Տանրապետության դափավորների ընդհանուր ժողովը եւ Դափարանների նախագահների խորհուրդը հանդիսանում են դափական իշխանության ինքնակառավարման մարմին-

ներ, որոնք ՆՏ դափական օրենսգրքի համապատասխանաբար՝ 71 և 72 հոդվածների 3-րդ մասերի 1-ին կետերով վերապահված է նաև դափական իշխանության բնականոն գործունեության ապահովմանն առնչվող ցանկացած հարցի քննարկման իրավասություն: Դրանով հանդերձ, սահմանադրական դափարանը գտնում է, որ նշված նորմերում նույնպես «դափական իշխանության բնականոն գործունեության ապահովմանն առնչվող ցանկացած հարցի քննարկում» բառակապակցությունը չի կարող ենթադրել «ցանկացած հարցի լուծում», առավել եւս՝ այնպիսի հարցերի, որոնք ՆՏ Սահմանադրությամբ վերապահված են պետաիշխանական լիազորություններով օժտված այլ մարմինների իրավասությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 101 հոդվածի 6-րդ կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դափարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1, 63, 64 և 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դափարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Հայաստանի Հանրապետության դափական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան փրված բովանդակության շրջանակներում, ճանաչել ՆՏ Սահմանադրության 3 հոդվածի 2-րդ մասի, 18 հոդվածի 1-ին մասի, 55 հոդվածի 11-րդ մասի եւ 95 հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր:

2. «Սահմանադրական դափարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով ՆՏ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչել նաև ՆՏ դափական օրենսգրքի 14 հոդվածի 5-րդ մասը:

3. Առաջնորդվելով ՆՏ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դափարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթներով, նկատի ունենալով, որ դափական համակարգի հետագա բարեփոխումների հայեցակարգային մոտեցումների շրջանակներում նաև վեճի առարկա հիմնահարցերի վերաբերյալ նախապարաստվում են օրենսդրական բարեփոխումներ, հաշվի առնելով, որ սահմանադրական դափարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմերի վերացումը կարող է առաջացնել իրավական բաց, սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին եւ 2-րդ կետերով ՆՏ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2009թ. մարտի 1-ը:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

2 ղեկպնտման 2008 թվականի

ՄԴՈ- 782

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՆՏ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆՏ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 14 ՆՈՂՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

23 դեկտեմբերի 2008թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Նովհաննիսյանի (զեկուցող), Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմողի՝ ՆՏ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչ Գ. Կուրոյանի, պապասխանող կողմի՝ ՆՏ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՏ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի եւ 101 հոդվածի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 68 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՆՏ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՆՏ դատական օրենսգրքի 14 հոդվածի 4-րդ մասի՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Նայասպանի Նանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ սահմանադրական դատարանում 21.11.2008թ. մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պապասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հեղափոխելով ՆՏ դատական օրենսգրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. ՆՆ դատական օրենսգիրքն ընդունվել է ՆՆ Ազգային ժողովի կողմից 2007թ. փետրվարի 21-ին, Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից սպորտագրվել՝ 2007 թվականի ապրիլի 7-ին եւ ուժի մեջ է մտել 2007 թվականի մայիսի 18-ին:

ՆՆ դատական օրենսգրքի 14 հոդվածը վերնագրված է. «Դատավորի անփոփոխելիությունը»: Հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Այն դեպքում, երբ Կոլլեգիա դատարանում գործը չի կարող քննվել դատավորների ինքնաբացարկները բավարարելու կամ այլ պարճառներով առաջացած դատավորների թվի անբավարարության հետեւանքով, վճռաբեկ դատարանի նախագահի որոշմամբ սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված դատավորը (նույն կամ վերադաս աբյանի) կարող է գործուղվել այդ դատարան», իսկ համապարասխանաբար 7-րդ մասը սահմանում է. «Եթե օրենքով նախատեսվում է դատարանի կամ վճռաբեկ դատարանի պալատի վերացում, ապա համապարասխան դատավորները համարվում են ռեզերվային, իսկ նրանց կարգավիճակը, այդ թվում՝ աշխատավարձը եւ հավելավճարներ ստանալու իրավունքը, ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու կամ ընդգրկված մնալու իրավունքը պահպանվում են մինչեւ Սահմանադրությամբ սահմանված՝ դատավորի պաշտոնավարման Կարիքը լրանալը, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ»:

2. Սկզբնապես ՆՆ մարդու իրավունքների պաշտպանի կողմից վիճարկվել է ՆՆ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ, 4-րդ եւ 5-րդ մասերի սահմանադրականությունը:

ՆՆ սահմանադրական դատարանն իր՝ 2008թ. դեկտեմբերի 2-ի աշխատակարգային որոշմամբ, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 32 հոդվածի 3-րդ կետի, մերժել է ՆՆ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասերի սահմանադրականությունը վիճարկելու մասով գործի քննության ընդունումը՝ նկատի ունենալով այդ նորմերի սահմանադրականության հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման առկայությունը: ՆՆ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա գործը քննության է ընդունվել ՆՆ դատական օրենսգրքի 14 հոդվածի 4-րդ մասի՝ ՆՆ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասին համապարասխանության հարցը որոշելու մասով:

3. Վիճարկելով ՆՆ դատական օրենսգրքի 14 հոդվածի 4-րդ մասի սահմանադրականությունը՝ դիմող կողմը գտնում է, որ վիճարկվող դրույթը չի համապարասխանում ՆՆ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասին՝ հետեւյալ պարճառաբանությամբ: ՆՆ - Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Վճռաբեկ դատարանի նախագահի որոշմամբ դատավորին նույն աբյանի կամ վերադաս աբյանի դատարան գործուղելու արդյունքում սրեղծված դատարանը չի կարող համարվել դատական մարմին, քանի որ ՆՆ Սահմանադրության 94 հոդվածի 2-րդ մասի համաձայն դա-

պարանների լիազորությունները, կազմավորման ու գործունեության կարգը սահմանվում են Սահմանադրությամբ եւ օրենքներով: Մինչդեռ վճռաբեկ դատարանի նախագահի որոշման արդյունքում ձեւավորված դատարանը չի համապատասխանում «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» հասկացությանը: Բացի դրանից, վիճարկվող դրույթը, ըստ դիմողի, չի համապատասխանում Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքը, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիպ ժամկետում արդարացի եւ իրապարակային դատաքննության իրավունք:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ ՏՏ դատական օրենսգրքի վիճարկվող դրույթը սահմանադրականության խնդիր չի առաջացնում: Ըստ պատասխանողի՝ ռեզերվային դատավորին գործուղելու վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը չի վերաբերում դատարանի կազմավորման կարգով նոր դատական կազմ ձեւավորելու կամ ուղղակի դատական մարմին ստեղծելու պահանջին: Վիճարկվող դրույթը վերաբերում է ՏՏ Սահմանադրության 55 հոդվածի 11-րդ կետի եւ 95 հոդվածի պահանջներին համապատասխան օրենքի հիման վրա ստեղծված դատարանում ռեզերվային դատավորի ընդգրկմամբ դատական նոր կազմի ձեւավորմանը:

ՏՏ դատական օրենսգրքը, սահմանելով վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունները, միեւնոյն ժամանակ նախատեսում է նրա կողմից վճռաբեկ դատարանի բնականոն գործունեության ապահովման եւ օրենքով իրեն վերապահված այլ լիազորությունների իրականացման հնարավորություն: Իսկ նույն օրենսգրքի 14 հոդվածի 4-րդ մասը՝ 7-րդ մասի համադրությամբ, նախատեսում է ռեզերվային դատավորին գործուղելու մասին որոշում կայացնելու՝ վճռաբեկ դատարանի նախագահի իրավունքը: Ըստ պատասխանողի՝ դա նշանակում է, որ վճռաբեկ դատարանի նախագահը կարող է կայացնել այդպիսի որոշում միայն օրենքով նախատեսված հիմքերի եւ պայմանների առկայության պարագայում:

Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին՝ վիճարկվող դրույթի՝ դիմողի մատնանշած հակասության առնչությամբ պատասխանողը նշում է, որ սահմանադրական դատարանն իր 2008թ. դեկտեմբերի 2-ի ՍԴՈ-782 որոշմամբ արդարացիորեն իրավաչափ է համարել գործուղման հիման վրա ձեւավորված դատական կազմի միջոցով գործի քննությունը՝ դատավորի գործուղման ինստիտուտի առկայությունը պայմանավորելով հենց անձի դատական պաշտպանության եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների ապահովման անհրաժեշտությամբ:

5. ՏՏ դատական օրենսգրքի 14 հոդվածն ամրագրել է դատավորների երկու կարգերի, որոնք կարող են վճռաբեկ դատարանի նախագահի կողմից գործուղվել այլ դատարան: Դրանք են.

ա/ գործող դափավորը (14 հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասեր),

բ/ ռեզերվային դափավորը (14 հոդվածի 4-րդ մաս՝ 7-րդ մասի համադրությամբ):

Սահմանադրական դափարանը գործող դափավորների գործուղման իրավակարգավորումը սահմանող՝ ՏՏ դափական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը լուծել է սահմանադրական դափարանի 2008թ. դեկտեմբերի 2-ի ՍԴՌ-782 որոշմամբ՝ այդ դրույթները ճանաչելով ՏՏ Սահմանադրության 3 հոդվածի 2-րդ մասին, 18 հոդվածի 1-ին մասին, 55 հոդվածի 11-րդ մասին եւ 95 հոդվածին հակասող եւ անվավեր: Այդ որոշման մեջ, անդրադառնալով դափավորի գործուղման իրավաչափությանը՝ սահմանադրական դափարանը գրել է, որ ՏՏ դափական օրենսգրքի 14 հոդվածով սահմանված՝ դափավորի գործուղման իրավակարգավորումը հեփապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ դափական ծանրաբեռնվածության հաղթահարումը՝ ողջամիփ ժամկետում գործերի քննության համար, ինչը, իր հերթին, նպատակաուղղված է դափական պաշտպանության եւ դափական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների արդյունավետ իրացման ապահովմանը: **Դափավորի գործուղման հնարավորության նախարեսումն ինքնին իրավաչափ է, պայմանավորված է բացառիկ դեպքերում, իրավականորեն արդարացված՝ տվյալ դափարանում դափավորների թվի օրյեկտիվորեն առաջացած անբավարարության հեփուանքով գործի քննության անհնարինության հեփուանքների հաղթահարման անհրաժեշտությամբ:**

Նշված որոշման մեջ սահմանադրական դափարանը միաժամանակ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ դափավորների գործուղումները պետք է լինեն բացառություն եւ ոչ թե դառնան ընդհանուր կանոն: Ըստ դիմողի՝ դրանք նաեւ պետք է իրականացվեն այն կարգով, որ բացառվի սահմանված կարգից դուրս՝ բացառիկ բնույթ ունեցող դափարան ձեւավորելը:

Սահմանադրական դափարանն իր նշված որոշման մեջ նաեւ նշել է, որ ՏՏ դափական օրենսգրքի 61 հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի ուժով օրենքով վճռաբեկ դափարանի նախագահին կարող են վերապահվել այնպիսի լիազորություններ, որոնք իրենց բնույթով չեն հակասում օրենքով եւ, մասնավորապես, օրենսգրքի 61 հոդվածի 3-րդ մասով վճռաբեկ դափարանի նախագահին վերապահված մյուս լիազորություններին: Սահմանադրական դափարանը գրել է նաեւ, որ ՏՏ դափական օրենսգրքի 14 հոդվածով վճռաբեկ դափարանի նախագահին վերապահված՝ դափավորներին գործուղելու վերաբերյալ լիազորությունը չի բխում նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջներից:

6. Դափական օրենսգրքի 14 հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ռեզերվային դափավորների ինսփիտուրը ձեւավորվում է դափարանների կամ վճռաբեկ դափարանի պալատների վերացման արդյունքում: Ռեզերվային դափավորների կարգավիճակը պահպանվում է մինչեւ Սահմանադրությամբ սահմանված՝ դափավորի պաշտոնավարման փարիքը լրանալը: Նման իրավակարգավորումը բխում է ՏՏ Սահմանադրության 96 հոդվածում ամրագրված՝ դափավորների անփոփոխելիության սկզբունքից եւ իրավական երաշխիք է այդ սկզբունքի իրացումն ապահովելու համար:

Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում նշել, որ ՏՏ - դատական օրենսգրքի 14 հոդվածի 6-րդ մասով նախատեսված կրճատված դատավորները, թեև ունեն նույն կարգավիճակը, ինչ դատարանի կամ պալատի վերացման արդյունքում ձեռավորված ռեզերվային դատավորները, սակայն, ըստ նույն հոդվածի 7-րդ մասի՝ ռեզերվային դատավորներ չեն համարվում, ենթակա չեն գործուղման եւ հետեւաբար՝ ստեղծված չեն արդարադատության իրականացմանը նրանց մասնակցությունն ապահովող մեխանիզմներ:

Դատական օրենսգրքի 14 հոդվածի վիճարկվող դրույթը՝ սահմանելով ռեզերվային դատավորին գործուղելու դեպքերը, միաժամանակ որպես ռեզերվային դատավորների գործուղման միակ չափանիշ սահմանում է գործուղվող դատավորի՝ նույն ապրանի կամ վերադաս ապրանի դատավոր լինելու պահանջը: Նման պահանջն առաջին հերթին հնարավորություն է ընձեռում գործուղման դեպքում ապահովել գործի քննությունը համապատասխան ապրանի դատավորի որակավորում ունեցող դատավորի կողմից:

7. Տիմք ընդունելով այն եզրահանգումը, որ ինչպես գործուղման հնարավորության սահմանումը՝ ընդհանրապես, այնպես էլ ռեզերվային դատավորների գործուղման հնարավորության սահմանումը՝ մասնավորապես, ինքնին իրավաչափ են, միաժամանակ հաշվի առնելով, որ ռեզերվային դատավորների գործուղման կապակցությամբ իրավակիրառական պրակտիկա դեռևս ձեռավորված չէ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ռեզերվային դատավորների գործուղման իրավաչափությունն իրավակիրառական պրակտիկայում կարող է ապահովվել միայն այն դեպքում, երբ գործուղման գործընթացն իրականացվի ինչպես վերոհիշյալ, այնպես էլ սահմանադրական դատարանի ՍԴՈ-782 որոշման մեջ նշված իրավական դիրքորոշումներին համապատասխան:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 68 հոդվածներով, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Նայաստանի Նանրապետության դատական օրենսգրքի 14 հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը:
2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳ-ԱՏՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

23 դեկտեմբերի 2008 թվականի

ՍԴՈ- 786

2009**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ****ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ****ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՒՄԱՆՆԱ ՆՈՎՍԵՓՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ
ՆԻՄԱՆ ՎՐԱ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 8 ՆՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝
ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

3 փետրվարի 2009թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝

դիմող՝ քաղաքացի Սուսաննա Նովսեփյանի ներկայացուցիչներ Ա. Կիվիրյանի, Դ. Գրիգորյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՆՆ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՆՆ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի եւ 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Սուսաննա Նովսեփյանի դիմումի հիման վրա՝ Նայասպանի Նանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 8 հոդվածի 1-ին մասի՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Սուսաննա Նովսեփյանի՝ ՆՆ սահմանադրական դատարանում 26.11.2008թ. մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմողի գրավոր փաստարկները, պատասխանող կողմի գրավոր բացատրությունները, հեղափոխելով ՆՆ վարչական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա այլու փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. ՆՏ վարչական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի նոյեմբերի 28-ին, ՆՏ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 10-ին և ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից:

ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածը ներառված է օրենսգրքի «Գործերի ընդդատությունը» վերաբերող 3-րդ գլխում և վերնագրված է «Գործերի առարկայական ընդդատությունը»: Նոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, այդ թվում՝

1) հանրային կամ այլընտրանքային ծառայությանն անցնելու կամ իրականացնելու հետ կապված վեճերը.

2) վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադատության կարգով.

3) հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, այդ թվում՝ արհեստակցական միությունների, գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը.

4) վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ այն գործերը, որոնք բխում են հանրային իրավահարաբերություններից»:

2. Ըստ գործում առկա դատական ակտերի՝ դիմողը, նախ՝ 23.06.2008թ. դիմել է ՆՏ Երևանի քաղաքացիական դատարան՝ ներկայացնելով չորս հայցապահանջ.

- Երևանի քաղաքապետի՝ հողամասն աճուրդով վաճառելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու մասին,

- Երևանի քաղաքապետի և Դ. Ավագյանի միջև 30.12.2005թ. կնքված Ն 874/5-ԱԳ հողամասի առուվաճառքի պայմանագիրը մասնակի անվավեր ճանաչելու մասին,

- Երևանի քաղաքապետին վիճելի հողատարածքն ուղղակի վաճառքի ձեռով Ս. Նովսելիյանին օտարելուն պարտավորեցնելու մասին,

- 30.12.2005թ. կնքված Ն 874/5-ԱԳ հողամասի առուվաճառքի պայմանագրի հիման վրա ՆՏ ԿԱ ԱԳԿ ՊԿ Նոր Նորքի փարածքային ստորաբաժանման կողմից Դ. Ավագյանի սեփականության իրավունքի՝ 25.01.2006թ. կատարված գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու մասին:

Երևանի քաղաքացիական դատարանն իր՝ 25.06.2008թ. որոշմամբ հայցադիմումը վերադարձրել է ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92 հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի հիմքով, այն պարճառաբանությամբ, որ 1-ին, 3-րդ և 4-րդ հայցապահանջներն ընդդատյա են ՆՏ վարչական դատարանին: Այդ որոշմամբ դատարանը չի անդրադարձել հայցվորի 2-րդ հայցապահանջին, նշված հայցապահանջի վերաբերյալ որոշում չի կայացրել և չի պարզել այն հանգամանքը, թե որ դատարանին է ընդդատյա նշված հայցապահանջը:

Այնուհետև Ս. Նովսելիյանը 28.06.2008թ. դիմել է ՆՏ վարչական դատարան՝ ներկայացնելով վերոնշյալ չորս հայցապահանջները: Վարչական դատարանն իր՝

03.07.2008թ. որոշմամբ, ի փարբերություն Երեւանի քաղաքացիական դատարանի, անդրադարձել է հայցվորի բոլոր չորս հայցապահանջներին եւ ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի հիմքով, դրանցից երեքի մասով հայցադիմումն ընդունել է վարույթ՝ գտնելով, որ նշված հայցապահանջների հիման վրա գործը ծագում է հանրային իրավահարաբերություններից: Ինչ վերաբերում է վերոնշյալ 2-րդ հայցապահանջին, ապա ՆՏ վարչական դատարանի վերոհիշյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն նշված հայցապահանջն «ընդդատյա է Երեւանի քաղաքացիական դատարանին»: Վարչական դատարանն իր նշված որոշման դեմ դիմողի կողմից բերված բողոքի քննության արդյունքում իր՝ 18.07.2008թ. որոշման մեջ, անդրադառնալով առարկայական ընդդատյության հարցին, արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «Առուվաճառքի պայմանագրերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական իրավունքի նորմերով, հետեւաբար դրանք քաղաքացիաիրավական հարաբերություններ են եւ չեն կարող դիվարել որպէս հանրային իրավահարաբերություններից ծագող հարաբերություններ: Նշված իրավահարաբերություններում վարչական մարմնի հանդէս գալը չի նշանակում, որ դրանք ստանում են հանրային-իրավական բնույթ, քանի որ Նայաստանի Նանրապետության քաղաքացիական օրենսգիրքը Նայաստանի Նանրապետությանը եւ համայնքներին իրավունք է վերապահում քաղաքացիների եւ իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով մտնել քաղաքացիական իրավունքի նորմերով կարգավորվող հարաբերությունների մեջ: Իսկ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, Նայաստանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում են ընդհանուր իրավասության դատարանները, բացառությամբ քաղաքացիական դատարանների քննությանը ընդդատյա գործերի»:

Վարչական դատարանը նույն որոշման մեջ, անդրադառնալով իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի խախտման հարցին, հիմք ընդունելով ՆՏ Սահմանադրության 94 եւ ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 8 հոդվածների դրույթները, արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «Վարչական դատարանի կողմից քաղաքացիաիրավական կամ այլ իրավահարաբերություններից ծագող գործերի վարույթ ընդունելու դեպքում կխախտվի գործերի առարկայական ընդդատյության սկզբունքը եւ այդպիսով դատարանը կզերազանցի իր լիազորությունները, հետեւաբար, անկախ գործերի միմյանց հետ փոխկապակցված լինելու հանգամանքից, վարչական դատարանը լիազորված չէ իրեն ոչ ընդդատյա գործը ընդունել վարույթ: վարչական դատարանին ընդդատյա չլինելու մասով հայցադիմումի ընդունումը մերժելը չի խախտում հայցվորի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, քանի որ հայցվորին Նայաստանի Նանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով իրավունք է տրված իր խախտված իրավունքները վերականգնել քաղաքացիական դատավարության կարգով»:

Դիմողն այնուհետեւ դիմել է ՆՏ վճռաբեկ դատարան, որն իր՝ 25.09.2008թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է, գտնելով, որ գործը վարույթ ընդունելու հիմքերը բացակայում են:

3. Դիմողը 26.11.2008թ. դիմել է ՆՏ սահմանադրական դատարան՝ գրնելով, որ ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 8 հոդվածի 1-ին մասի դրույթները հակասում են ՆՏ Սահմանադրության 3 հոդվածին, 18 և 19 հոդվածների 1-ին մասերին, քանի որ փարբեր դատարաններին ընդդատյա, սակայն միմյանց հետ փոխկապակցված գործերի՝ փարբեր դատարաններում քննության ժամանակ չի ապահովվում ՆՏ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 13 հոդվածով սահմանված՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, ՆՏ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետով սահմանված՝ գործի քննության ողջամիտ ժամկետի սկզբունքի պահպանումը և դրանց համակցությամբ՝ խախտվում են ՆՏ Սահմանադրության 3 հոդվածով սահմանված սկզբունքները, ինչպես նաև նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան ապահովելու՝ պետության պարտականության վերաբերյալ սահմանադրական դրույթը:

4. Պատասխանողը գրնում է, որ ներկայացված անհատական դիմումն ակնհայտ անհիմն է՝ այն պարճառաբանությամբ, որ քաղաքացու կողմից, ըստ էության, վիճարկվում են ոչ թե ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածի դրույթները, այլ որոշակի կոնկրետ դրույթի բացակայությունը, որը հնարավորություն կտար վարչական դատարանին վարույթ ընդունել փարբեր դատարաններին ընդդատյա և միմյանց հետ կապված մի քանի պահանջներով հայցադիմում: Սահմանադրական դատարան քաղաքացու դիմում ներկայացնելու իրավունքը կայանում է նրանում, որպեսզի վերջինս պաշտպանի իր՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքները, մինչդեռ ըստ պատասխանողի՝ վարչական դատարանում գործերի առարկայական ընդդատյությունը սահմանող՝ ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասն ուղղակիորեն կապված չէ դիմողի կողմից ներկայացված պահանջի հետ, դիմողն իր դիմումում բառ անգամ չի ասում վիճարկվող նորմի բովանդակության հակասահմանադրականության մասին: Ավելին, անգամ վիճարկվող հոդվածը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում դիմողն իր պահանջի բավարարում չի ստանա:

Պատասխանողը գրնում է, որ դիմողի կողմից սխալ է ձեռակերպված նաև պահանջի առարկան: Մասնավորապես, միմյանց հետ կապված մի քանի պահանջների առարկայական ընդդատյությունը սահմանող իրավադրույթը չէր կարող ամրագրված լինել Վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասում: Վիճարկվող դրույթը սահմանում է վարչական դատարանի առարկայական ընդդատյության ընդհանուր կանոնը, մինչդեռ դրանից բացառությունները և մասնավոր դրսետրումները, այդ թվում՝ միմյանց հետ կապված մի քանի պահանջների առարկայական ընդդատյությունը, պետք է սահմանվի միեւնույն հոդվածի մեկ այլ մասով կամ նոր հոդվածով: Նարցն այդ

կերպ է կարգավորված, օրինակ՝ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում (ՆՏ քաղ. դատ. օր., Գլուխ 2):

5. Նիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմողը բարձրացնում է փարբեր բնույթ ունեցող, սակայն միմյանց հետ փոխկապակցված հարաբերություններից ծագող վեճերի դեպքում փարբեր դատավարական օրենսգրքերի համաժամանակյա գործողության համարեքսպում դատական պաշտպանության միջոցի արդյունավետության հարցը, սահմանադրական դատարանը կարեւորում է փարբեր դատավարական օրենսգրքերի համադրված վերլուծության անհրաժեշտությունը: ՆՏ վարչական դատարանն իր՝ 18.07.2008թ. «Բողոքը մերժելու մասին» որոշման մեջ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի համարեքսպում անդրադառնալով գործի քննության արագության սկզբունքների խախտման, ինչպես նաև անհարկի ձգձգումներ եւ քաշքշուկներ առաջանալու հարցին, հիմք ընդունելով ՆՏ Սահմանադրության 94 եւ ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 8 հոդվածների դրույթները, գրել է, որ «Վարչական դատարանին ընդդատյա չլինելու մասով հայցադիմումի ընդունումը մերժելը չի խախտում հայցվորի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, քանի որ հայցվորին Նայաստանի Նանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով իրավունք է տրված իր խախտված իրավունքները վերականգնել քաղաքացիական դատավարության կարգով»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է հանդիսանում անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդատությանն օրենքով հանձնված է տվյալ գործը: Ինչպես ՆՏ քաղաքացիական եւ քրեական դատավարության օրենսգրքերը, այնպես էլ ՆՏ վարչական դատավարության օրենսգրքը սահմանում են գործերի առարկայական ընդատության իրենց կանոնները: Վարչական դատավարության օրենսգրքի 8 հոդվածով օրենսդիրը սահմանում է վարչական դատարանին գործերի առարկայական ընդատության ընդհանուր շրջանակը:

Վիճարկվող հոդվածի 2-րդ մասը վարչական դատարանին ընդատյա գործերի շրջանակից բացառում է այն գործերը, որոնք ընդատյա են այլ դատարանների:

Սահմանադրական դատարանը՝ գտնելով, որ վարչական գործերի առարկայական ընդատության՝ ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 8 հոդվածով սահմանված կանոնները՝ իրենց իրավակարգավորման շրջանակներում, ինքնին իրավաչափ են եւ համահունչ մասնագիտացված վարչական արդարադատության ինստիտուտի բովանդակությանը, միաժամանակ, հաշվի առնելով դիմողի կողմից բարձրացված իրավական հիմնախնդիրը, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասին համապատասխան հարկ է համարում անդրադառնալ օրենքի հնարավոր բացի եւ ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Գործերի ընդատությունը» վերտառությամբ 3-րդ գլխով (կազմված է մեկ՝ 8 հոդվածից) սահմանված իրավակարգավորման սահմանադրականության հարցին:

6. ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախկին խմբագրությամբ 15 հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի վերլուծությունից բխում է, որ վարչաիրավական և քաղաքացիաիրավական բնույթ ունեցող փորձեր, սակայն միմյանց հեթ փոխկապակցված իրավահարաբերություններից ծագող գործերն օրենսդիրը դիտարկում էր որպես մեկ գործ, որը ենթակա էր քննության միեւնույն դատարանի կողմից, և որի ընթացքում դատարանին դատավարական հնարավորություն էր ընձեռվում հիմնական հայցապահանջը բավարարելիս, այն է՝ վարչաիրավական կամ քաղաքացիաիրավական հարաբերությունից ծագող վեճը հայցվորի օգտին լուծելիս անդրադառնալ նաև հիմնական հայցապահանջի իրավական հետեւանքները վերացնելու հարցին, այսինքն՝ վարչաիրավական հարաբերության հեթ փոխկապակցված քաղաքացիաիրավական հարաբերությունից կամ ընդհակառակն, քաղաքացիաիրավական հարաբերության հեթ փոխկապակցված վարչաիրավական հարաբերությունից ծագող վեճի ողջամիտ ժամկետում ամբողջական լուծմանը: Այդպիսին է եղել նաև դատական պրակտիկան:

Նաշվի առնելով այն հանգամանքը, որ ո՛չ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ո՛չ էլ ՏՏ վարչական դատավարության օրենսգիրքը չեն սահմանում փորձեր, մասնավորապես, վարչաիրավական և քաղաքացիաիրավական բնույթ ունեցող, սակայն միմյանց հեթ փոխկապակցված հարաբերությունների ընդդատության կանոնները, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՏՏ վարչական դատավարության օրենսգրքի ընդունմամբ առաջացել է մի իրավիճակ, երբ դատական պաշտպանության իրավունքն իրականացվում է միաժամանակ փորձեր դատական մարմիններում և որի ընթացքում գործում են երկու փորձեր դատավարական օրենսգրքեր: Այսինքն, ի փորձերություն նախորդ իրավակարգավորումների, ներկա իրավակարգավորումների պարագայում վարչաիրավական և քաղաքացիաիրավական բնույթ ունեցող, սակայն միմյանց հեթ փոխկապակցված հարաբերություններից ծագող գործն օրենսդիրն արդեն դիտարկում է որպես առնվազն երկու գործ, որոնք ենթակա են քննության փորձեր դատարանների կողմից, և որի ընթացքում համապատասխան դատարաններին այլևս դատավարական հնարավորություն չի ընձեռվում հայցապահանջը բավարարելիս, այն է՝ վարչաիրավական կամ քաղաքացիաիրավական հարաբերությունից ծագող վեճը հայցվորի օգտին լուծելիս անդրադառնալ նաև փոխալ հայցապահանջի իրավական հետեւանքների վերացման հարցին, այսինքն՝ վարչաիրավական հարաբերության հեթ փոխկապակցված քաղաքացիաիրավական հարաբերությունից կամ ընդհակառակն, քաղաքացիաիրավական հարաբերության հեթ փոխկապակցված վարչաիրավական հարաբերությունից ծագող վեճի լուծմանը:

7. Ինչպես նշվեց, ՏՏ վարչական դատավարության օրենսգիրքն (ինչպես նաև ՏՏ դատավարական մյուս օրենսգրքերը) ունի գործերի առարկայական ընդդատության իր կանոնները: Սակայն միմյանց հեթ փոխկապակցված հարաբերությունների առկայության հնարավորությունը հաշվի չառնելը և նշված իրավահարաբերություններից ծագող գործերը մեկ դատարանում քննելու հանգամանքի բացակայությունը գործնականում բացասաբար են անդրադառնում իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության

վրա: Նշված իրավիճակը հնարավոր է շարկել ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 8 հոդվածում կամ 3-րդ գլխում համապատասխան փոփոխություններ կատարելով, որը կնախատեսի հանրային-իրավական եւ քաղաքացիաիրավական բնույթ ունեցող, սակայն միմյանց հետ փոխկապակցված հարաբերություններից ծագող գործերը մեկ դատարանում քննելու հնարավորությունը՝ հիմնական իրավահարաբերությունից ծագող պահանջի ընդդատության սկզբունքի գերակայության ապահովմամբ:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ վարչաիրավական եւ քաղաքացիաիրավական բնույթ ունեցող, սակայն միմյանց հետ փոխկապակցված հարաբերությունների առկայության հնարավորությունը հաշվի չառնելու համարեքսպում այդ թերությունն առկա է նաեւ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում, որի սահմանադրականության հարցի լուծումը սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանի իրավասությունը չէ, ուստի անհրաժեշտ է Ազգային ժողովի ուշադրությունը հրավիրել օրենսգրքի նշված, բացի լրացման անհրաժեշտության վրա:

8. ՆՏ Սահմանադրության 19 հոդվածը, ինչպես նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածը սահմանում են անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության ապահովման երաշխիքներն ու չափորոշիչները: Վերջիններս իրենց ամբողջության մեջ կոչված են ապահովելու անձի խախտված իրավունքների լիարժեք ու ամբողջական վերականգնումը:

Խնդրո առարկա իրավակարգավորումը՝ անձի դատական պաշտպանության արդյունավետության ապահովման եւ դատավարական սահմանադրական ու օրենսդրական երաշխիքների պահպանման փեսանկյունից գնահատելու նպատակով սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել ՆՏ Սահմանադրության 19 հոդվածում «... իր խախտված իրավունքները վերականգնելու համար ... իր գործի ... քննության իրավունք» ձեակերպման սահմանադրաիրավական բովանդակությունը:

Նշված սահմանադրական դրույթում «իր խախտված իրավունքները վերականգնելու» եւ «իր գործի» ձեակերպումների համադրված վերլուծությունը վկայում է, որ «իր գործի քննություն» հասկացությունը ներառում է բոլոր այն փոխկապակցված հայցապահանջների համակցված քննությունը, որոնք նպատակաուղղված են մեկ ընդհանուր խնդրի լուծմանը, այն է՝ այդ գործի շրջանակներում անձի խախտված իրավունքի վերականգնմանը:

Վերոնշյալը նշանակում է, որ ինչպես ՆՏ Սահմանադրության 19 հոդվածով, այնպես էլ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածով եւ ներպետական դատավարական օրենսդրությամբ սահմանված երաշխիքները պետք է ապահովվեն ոչ միայն այս կամ այն կոնկրետ հայցապահանջի քննության շրջանակում եւ համարեքսպում, այլ նաեւ փոխյալ խախտված իրավունքի վերականգնմանը միտված՝ փարաբնույթ փոխկապակցված հայցապահանջների քննության շրջանակում եւ համարեքսպում, քանզի այդ հայցապա-

հանջների վերջնական նպատակը մեկն է միեւնույն խախտված իրավունքի ամբողջական վերականգնումը: Ներուաբար, անձի միեւնույն խախտված իրավունքի վերականգնմանն ուղղված փոխկապակցված հայցապահանջների դիտարկումը որպես միմյանցից փառանջարված առանձին եւ ինքնուրույն գործերի հարուցման հիմքեր, կարող է հանգեցնել անձի գործի արդյունավետ, ամբողջական եւ բազմակողմանի քննության ապահովման դատավարական երաշխիքների խախտման:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ խախտված իրավունքները վերականգնելու նպատակով ածանցյալ իրավահարաբերությունից ծագող, այսինքն՝ հիմնական իրավահարաբերության իրավական հետեւանքների վերացմանն ուղղված պահանջը դատարանն առանձին ներկայացնելու դեպքում դատարանը գործնականում զրկվում է փոխյալ գործի վերաբերյալ արդարացի որոշում կայացնելու հնարավորությունից, խախտվում է անձի արդար դատաքննության իրավունքը, քանի որ արդար որոշում կայացնելու համար դատարանն ստիպված է իրականացնել գործի հանգամանքների լիարժեք, օբյեկտիվ եւ բազմակողմանի ուսումնասիրություն, իսկ այդպիսի ուսումնասիրության համար դատարանը պետք է անդրադառնա հիմնական իրավահարաբերությանը, սակայն գործող իրավակարգավորումը դա թույլ չի տալիս, քանի որ փոխյալ իրավահարաբերությունից ծագող գործն ընդդատյա է ոչ թե փոխյալ դատարանին, այլ մեկ այլ դատարանի: Սահմանադրական դատարանը նման իրավակարգավորումը համարում է ՏՏ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածների 1-ին մասերով նախատեսված՝ դատարանի կողմից գործի քննության ողջամիտ ժամկետի խախտման հիմք եւ դատական պաշտպանության ոչ արդյունավետ միջոց:

9. ՏՏ վարչական դատավարության օրենսգրքի 6 հոդվածն ամրագրում է վարչական դատարանի կողմից գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքը: Վերջինիս փրամաբանությունը կայանում է նրանում, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ վարչաիրավական հարաբերություններից ծագող վեճում քաղաքացին հանդես է գալիս ընդդեմ վարչական մարմնի, քաղաքացու համար պետք է ստեղծվի որոշակի բարենպաստ վիճակ: Վերջինս ենթադրում է, որ վարչաիրավահարաբերություններից ծագող վեճի կարգավորման գործընթացում քաղաքացին չպետք է ծանրաբեռնվի անհամաչափ պարտավորություններով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ խնդրո առարկա իրավակարգավորումը ոչ միայն թույլ չի տալիս ապահովել արդյունավետ դատական պաշտպանության իրացումը, այլ նաեւ հայցվորին ծանրաբեռնում է անհամաչափ պարտավորությամբ: Վերջինս դրսեւորվում է նրանում, որ բացառելով վարչաիրավական հարաբերություններից ածանցվող քաղաքացիաիրավական վեճի լուծումը մեկ գործի սահմաններում, ներկա իրավակարգավորումը պարտավորեցնում է, որպեսզի քաղաքացին, իր հիմնական պահանջին վերաբերող դատական ակտի առկայության պարագայում, որը կանխորոշում է հետեւանք ներկայացնող պահանջների լուծումը, պարտադրված ձեռով դիմի փարբեր դատարաններ, ինչը դժվարացնում է նրա իրավունքների պաշտպանության գործընթացը:

Բացի դրանից, նման իրավակարգավորումը կարող է ավելորդ ծանրաբեռնվածություն ստեղծել նաև դատարանների համար:

10. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քննության առարկա հարցի առնչությամբ Կրեմլի և Գրեյ Կոլեջի հակասական իրավակիրառական պրակտիկա: Մասնավորապես, ՆՏ դատարանների նախագահների խորհրդի 2008թ. փետրվարի 11-ի թիվ 113 որոշման 5-րդ կետով ամրագրվել է, որ «այն դեպքերում, երբ դատարան ներկայացված հայցադիմումն իր մեջ պարունակում է քաղաքացիական, ընդհանուր իրավասության եւ վարչական դատարանների առարկայական ընդդատության ենթակա մի քանի պահանջներ, ապա քաղաքացիական գործեր քննող դատարանը հիմք ընդունելով ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (գործն ընդդատյա չէ Կրեմլի դատարանին) որոշում է կայացնում հայցադիմումը վերադարձնելու մասին, որում պարզաբանում է, թե պահանջի որ մասն է իրեն ընդդատյա եւ որը՝ ոչ:

Վարչական դատարանում քաղաքացիական եւ վարչական դատարանների առարկայական ընդդատության ենթակա մի քանի պահանջներ պարունակող հայցադիմում սրանալու դեպքում դատարանը հայցադիմումն ընդունում է միայն վարչական դատարանին ընդդատյա մասով: Մնացած մասով հայցադիմումի ընդունումը մերժվում է՝ հիմք ընդունելով Վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը: Նայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման մեջ դատարանը պարզաբանում է, թե պահանջը որ դատարանին է ընդդատյա»:

Ներկայումս գործում է այլ պրակտիկա: ՆՏ դատարանների նախագահների խորհուրդը, ի փոփոխումն 2008թ. փետրվարի 11-ի թիվ 113 որոշման, 2008թ. դեկտեմբերի 22-ին ընդունել է թիվ 123 որոշումը, որում մասնավորապես նախատեսված է, որ. «այն դեպքերում, երբ դատարան է ներկայացվել հայցադիմում, որը վերաբերում է փարբեր դատարաններին ընդդատյա (քաղաքացիական, ընդհանուր իրավասության եւ վարչական դատարանների առարկայական ընդդատություն) միմյանց հետ կապված մի քանի պահանջներով վեճին, ապա գործը քննում է այն դատարանը, որին ընդդատյա է հիմնական պահանջը:

Նիմնական է համարվում այն պահանջը, որի լուծման արդյունքում կայացված դատական ակտը կանխորոշում է հետեւանք ներկայացնող պահանջների լուծման ելքը»:

Ելնելով գործի քննության արդյունքներից, ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Նայաստանի Նանրապետության վարչական դապրավարության օրենսգրքի 3-րդ գլուխը, այնքանով, որքանով բացառում է վարչաիրավական հարաբերություններից ածանցվող քաղաքացիաիրավական վեճի լուծումը մեկ գործի սահմաններում, ճանաչել Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

3 փետրվարի 2009 թվականի
ՄԳՈ- 787

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱԾ ՆԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ԸՆԴՆԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Գ.
ԿԱՐԱԽԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ ՆՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 113 ՆՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 9-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 114
ՆՈՂՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ 5-ՐԴ ԿԵՏԻ՝ ՆԱՅԱՍԱՆՆԻ
ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱՄԱԳԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

24 փետրվարի 2009թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Նովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ գործով որպես պապասխանող կողմ ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՏ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն ՆՏ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 25 եւ 71 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Երևանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Կարախանյանի դիմումի հիման վրա՝ ՆՏ աշխատանքային օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի եւ 114 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Երևանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Կարախանյանի՝ 09.12.2008թ. սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պապասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՆՏ աշխատանքային օրենսգրքը

եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, ուսումնասիրելով նաեւ վեճի առարկա հարցի շրջանակներում ՆՏ միջազգային պարտավորությունները, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. ՆՏ աշխատանքային օրենսգրքին ընդունվել է Նայասպանի Նանրապետության Ազգային ժողովի կողմից՝ 2004 թվականի նոյեմբերի 9-ին, ՆՏ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2004 թվականի դեկտեմբերի 14-ին եւ ուժի մեջ է մտել 2005 թվականի հունիսի 21-ին:

ՆՏ աշխատանքային օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող հոդվածների նորմերը սահմանում են.

«Նոդված 113. Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ

1. Գործատուն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաեւ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝

...

9) աշխատողի կենսաթոշակային փարիքը լրանալու պատճառով.»:

«Նոդված 114. Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելքը

4. Աշխատանքային պայմանագրի լուծման օրինական պատճառ չի կարող համարվել՝

...

5) փարիքը, բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատողը ձեռք է բերել ծերության կենսաթոշակ ստանալու իրավունք կամ ստանում է այդ կենսաթոշակը»:

2. Քաղ. Սարգիս Ղանթարջյանը 2003 թվականի մարտ ամսից մրցույթի արդյունքում զբաղեցրել է Երեւանի պետական համալսարանի փնտեսագիտության ֆակուլտետի «Կառավարման եւ գործարարության» ամբիոնի վարիչի պաշտոնը, նրա հետ կնքվել է աշխատանքային պայմանագիր՝ 5 փարի ժամկետով: Ժամկետը լրանալու պատճառով, 20.03.2008թ. նույն ֆակուլտետի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար անցկացված մրցույթում Ս. Ղանթարջյանը կրկին ճանաչվել է հաղթող եւ «ԵՊՆ ամբիոնների վարիչների ընտրությունների ընթացակարգով» սահմանված կարգի համաձայն ԵՊՆ ռեկտորի եւ նրա միջեւ կնքվել է աշխատանքային պայմանագիր, որով աշխատանքային պայմանագրի ժամկետը երկարացվել է 5 փարով՝ մինչեւ 20.03.2013թ.: Հիմք ընդունելով ՆՏ աշխատանքային օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ ԵՊՆ ռեկտորն իր՝ 28.08.2008թ. հրամանով Ս. Ղանթարջյանին ազատել է զբաղեցրած պաշտոնից:

Քաղ. Սարգիս Ղանթարջյանը 26.09.2008թ. դիմել է Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան 28.08.2008թ. կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին ԵՊՆ ռեկտորի հրամանը վերացնելու, աշխա-

փանքում վերականգնվելու եւ հարկադիր պարապորդի ողջ ժամանակահատվածի համար վնասի հատուցում ստանալու պահանջով: Իր պահանջը հիմնավորելու համար Ս. Ղանթարջյանը վկայակոչել է ՏՏ աշխատանքային օրենսգրքի 114 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը, «Պեղական կենսաթոշակների մասին» ՏՏ օրենքի 11 եւ 31 հոդվածները, ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 347 հոդվածը:

Գտնելով, որ վեճը լուծելու համար կիրառման ենթակա օրենքի դրույթները՝ ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի դեպքում, ինչպես նաեւ 114 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի՝ «բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատողը ձեռք է բերել ծերության կենսաթոշակ ստանալու իրավունք կամ ստանում է այդ կենսաթոշակը» բառերը հակասում են ՏՏ Սահմանադրության 14.1. հոդվածի դրույթներին, Երեսնի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Կարախանյանը՝ կասեցնելով գործի վարույթը, դիմել է սահմանադրական դատարան:

3. Դիմող կողմն իր դիրքորոշումը հիմնավորում է հետևյալ փաստարկներով. ՏՏ Սահմանադրության 14.1. հոդվածի համաձայն բոլորը հավասար են օրենքի առջև: Խտրականությունը՝ անկախ քարիքից կամ անձնական, սոցիալական կամ այլ բնույթի հանգամանքներից, արգելվում է: Աշխատանքային օրենսգրքի վիճարկվող հոդվածներից հետևում է, որ գործատուն իրավունք ունի լուծելու աշխատողի հետ կնքված ցանկացած աշխատանքային պայմանագիր (թե՛ անորոշ եւ թե՛ որոշակի ժամկետով կնքված)՝ հիմք ընդունելով այն փաստը, որ աշխատողն ունի կենսաթոշակ ստանալու իրավունք կամ այն ստանում է, այսինքն՝ լրացել է վերջինիս 65 տարին՝ առանց գնահատման առարկա դարձնելու նրա մասնագիտական ունակությունները: Նման մոտեցումը հակասում է ոչ միայն ՏՏ Սահմանադրությամբ երաշխավորված նշված սկզբունքին, այլ նաեւ ՏՏ կողմից վավերացված Եվրոպական սոցիալական խարտիային, որի 24 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ աշխատանքից ազատվելու դեպքերում աշխատողների պաշտպանվածության իրավունքի արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով կողմերը պարտավորվում են ճանաչել աշխատանքից միայն այնպիսի հիմնավոր պատճառներով աշխատողի ազատվելու իրավունքը, որոնք կապված են նրա ընդունակությունների կամ վարքի հետ կամ հիմնված են ձեռնարկության, հաստատության կամ ծառայության գործնական պահանջների վրա: Վերոնշյալից հետևում է, որ միջազգային պրակտիկայում ընդունված սկզբունք է աշխատանքային հարաբերություններում քարիքային խտրականության վերացումը: Եվ հարկ է արձանագրել նման քարիքային սահմանափակման ծայրահեղ անթույլատրելիությունը, հարկապես այն դեպքերի համար, երբ աշխատողի հետ կնքվում է ժամկետային աշխատանքային պայմանագիր, քանի որ գործատուն որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու պահին արդեն իսկ գիտակցում է աշխատողի՝ կենսաթոշակային քարիքը լրացած լինելու կամ պայմանագրի գործողության ընթացքում դրա լրանալու ենթակա լինելու մասին: Այսինքն՝ աշխատանքային պայմանագիր կնքելու պահին գործատուն գնահատում է կենսաթոշակային քարիքը լրացած աշխատողի ունակությունները, եւ դրանք համարելով իր համար ընդունելի՝ կնքում է համապատասխան

աշխատանքային պայմանագիր, որպիսի դեպքերում դրա լուծումը փարիքի պատճառով անթույլատրելի է:

4. Պատասխանողը գտնում է, որ 2005 թվականին սահմանադրական բարեփոխումների արդյունքում ամրագրված փարիքային խտրականության արգելման սկզբունքը վերաբերում է նաև քաղաքացու կենսաթոշակային փարիքին՝ աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իրացման տեսանկյունից: Դա նշանակում է, որ պետությունը պարտավոր է օգտագործել իրավական միջոցներ՝ աշխատանքի եւ զբաղվածության ոլորտում փարեց ու երիտասարդ անձանց միջև իրավական հավասար հնարավորություններ ստեղծելու եւ խրախուսելու ուղղությամբ, եւ, մասնավորապես՝ փարեց անձանց հետ աշխատանքային պայմանագրերը լուծելու գործընթացներում:

Գործատուն իր նախաձեռնությամբ կարող է լուծել աշխատանքային պայմանագիրն օրինական փարքեր հիմքերով, օրինակ, աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կարարած աշխատանքին չհամապատասխանելը (ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113 հոդված, 1-ին մաս, 4-րդ կետ), աշխատողի կողմից իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը (ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113 հոդված, 1-ին մաս, 6-րդ կետ), աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելը (ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113 հոդված, 1-ին մաս, 7-րդ կետ) եւ այլն: Մինչդեռ, եթե կենսաթոշակային փարիքի հասած անձը կարարում է աշխատանքային իր պարտականություններն ամբողջ ծավալով, համապատասխանում է իր զբաղեցրած պաշտոնին եւ չի կորցրել գործատուի վստահությունը, ապա կենսաթոշակային փարիքը լրանալու պատճառով գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելը խնդրահարույց է հարկապես ՏՏ Սահմանադրությամբ երաշխավորված փարիքային խտրականության արգելման սկզբունքի իրացման տեսանկյունից եւ գործատուին ընձեռում է ժամկետային աշխատանքային պայմանագիրը լուծելու աննախադեպ լայն հայեցողություն եւ կամայականության բարձր աստիճան դրսևորելու հնարավորություն: Այսպիսով, առկա է անհամապատասխանություն գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման ինստիտուտի խնդիրների եւ իրավակարգավորման միջև:

Պատասխանողը գտնում է, որ օրենսդրական ընդհանուր ընթացակարգերով հիշյալ դրույթները վերանայելը եւ կատարելագործելը կարող են նպաստել իրավակիրառական պրակտիկայի իրավաչափ զարգացմանը, ինչն արդեն իրականացվում է օրենսդրական նախաձեռնության իրավունքի սուբյեկտների կողմից:

5. ՏՏ Սահմանադրության 1, 3 եւ 14.1. հոդվածների համաձայն Նայաստանի Նանրապետությունը սոցիալական պետություն է, մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են, պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև, խտրականության ամեն մի դրսևորում, այդ թվում՝ կախված հաշմանդամությունից, փարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Սահմանադրաիրավական այդ դրույթներում առկա է անհափի եւ պեպության փոխադարձ պատասխանատվության սկզբունքը եւ առաջին հերթին՝ պեպության պարպականությունը՝ կյանքի բոլոր բնագավառներում անձի ազատ եւ արժանավայել զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծման խնդրում: Այն երաշխավորված է նաեւ աշխատանքի բնագավառում, մասնավորապես՝ ՆՏ Սահմանադրության 32 հոդվածում (1-ին մաս), համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն: Միաժամանակ, ՆՏ Սահմանադրության 48 հոդվածում որպես պեպության հիմնական խնդիրներ են նախատեսված բնակչության զբաղվածությանը նպաստելը (2-րդ կետ), քարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակ ապահովելը:

Աշխատանքի բնագավառում անհափի սահմանադրական իրավունքների ու ազատությունների անմիջական իրականացման եւ պաշտպանության խնդիրների կարգավորմանն է կոչված ՆՏ աշխատանքային օրենսդրությունը, որի նպատակն է սահմանել անձանց աշխատանքային իրավունքների եւ ազատությունների պեպական երաշխիքները, պաշտպանել աշխատողների եւ գործատուների իրավունքներն ու շահերը (ՆՏ աշխ. օր.-ի 2 հոդված), եւ որպես աշխատանքային հարաբերությունների կարգավորման սկզբունք է նախատեսված կողմերի իրավահավասարությունը՝ անկախ քարիքից, աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից (ՆՏ աշխ. օր.-ի 3 հոդվածի 3-րդ կետ):

Աշխատանքի իրավունքն իրացվում է աշխատանքային հարաբերությունների միջոցով, որոնք ծագում, փոփոխվում եւ դադարում են ՆՏ աշխատանքային օրենսգրքի 14, 60, 85, 86, 91, 100, 101, 105, 106, 109-114 եւ 120 հոդվածներով սահմանված ընդհանուր կարգով: Օրենսգրքի 6 հոդվածը նախատեսում է աշխատանքային հարաբերությունների իրավակարգավորման այնպիսի կարեւոր սկզբունք, ինչպիսին դրանց կարգավորմանն է պայմանագրերի հիման վրա, որոնք չեն կարող բովանդակել այնպիսի պայմաններ, որոնք աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված աշխատանքային պայմանների համեմատ վարթարացնում են աշխատողի դրությունը:

ՆՏ աշխատանքային օրենսգրքի 83, 84 հոդվածներում սահմանված են աշխատանքային պայմանագրի ընդհանուր հասկացությունն ու բովանդակությունը (պայմանները):

Աշխատանքային պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով, եթե պայմանագրի գործողության ժամկետը նշված չէ, եւ որոշակի ժամկետով, եթե այն նշված է (ՆՏ աշխ. օր.-ի 94 հոդված), իսկ օրենսգրքի 95 հոդվածի 2-րդ մասի համաձայն ընտրովի պաշտոններում աշխատողների հետ աշխատանքային պայմանագիրը կնքվում է ընտրված ժամանակահատվածով: Այդպիսի նորմատիվ դրույթներ են պարունակում նաեւ «Բարձրագույն եւ հեթուհական մասնագիտական կրթության մասին» ՆՏ օրենքի 6 եւ 15 հոդվածները:

Աշխատանքային պայմանագրի լուծման (հետեւաբար՝ նաեւ աշխատանքային հարաբերությունների դադարման) հիմքերը նախատեսված են ՆՏ աշխատանքային օրենսգրքի 109 հոդվածում, այդ թվում՝ նաեւ գործատուի նախաձեռնությամբ (4-րդ կետ):

Վերջինիս իրականացման կարգն ու պայմանները սահմանված են օրենսգրքի 113 հոդվածում, որի 1-ին մասը նախատեսում է անորոշ եւ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետը լրանալը լուծելու՝ գործարարի իրավունքի իրացման դեպքերը, այդ թվում՝ նաև աշխատողի կենսաթոշակային փոխհատուցումը լրանալու հիմքով (9-րդ կետ)։ Միաժամանակ, օրենսգրքի 114 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետն աշխատանքային պայմանագրի լուծման օրինական պատճառ չդիտարկելով աշխատողի փոխհատուցումը, նախատեսում է բացառություն՝ կապված անձի սոցիալական ապահովության իրավունքի իրացման հետ, մասնավորապես, երբ աշխատողը ձեռք է բերել ծերության կենսաթոշակ ստանալու իրավունք կամ սրանում է այդ կենսաթոշակը։ Ծերության (սոցիալական) կենսաթոշակի չստանալու ու նշանակման պայմանները սահմանված են «Պետական կենսաթոշակների մասին» ՏՏ օրենքի 31-32 հոդվածներով։

6. Սույն գործի քննության շրջանակներում ՏՏ սահմանադրական դատարանը՝ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 7-րդ - մասի 3-րդ կետի պահանջներով, կարեւորում է վիճարկվող եւ դրանց հետ փոխկապակցված վերոհիշյալ նորմերում մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման եւ պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, այդ իրավունքների սահմանափակումների թույլատրելիությունը՝ որպես այդ նորմերի սահմանադրականության գնահատման մեկնակետ։ Այդ նորմերի համադրված վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 32 հոդվածում երաշխավորված աշխատանքի ընտրության ազատությունը յուրաքանչյուր անհատի համար ապահովում է առանց խտրականության աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելու եւ իր մասնագիտական ու այլ ընդունակություններն ազատ դրսևորելու հավասար հնարավորություն։ Այն չի խոչընդոտում օրենսդրին աշխատանքային հարաբերություններն իրավական կարգավորման ենթարկելիս սահմանել անձանց իրավական փոքր կարգավիճակներ՝ կապված աշխատանքային պայմանների, անձանց անմիջական պայմանագրային պարտականությունների, գործունեության բնագավառի հետ, եւ նույնիսկ նախատեսել առանձին պաշտոններ զբաղեցնելու եւ պաշտոններից ազատելու առանձնահատուկ դեպքեր, եթե դրանք օբյեկտիվորեն արդարացված են եւ ունեն սահմանադրաիրավական համապատասխան հիմնավորում։

Սահմանադրական դատարանը գտնում է, որ աշխատանքային հարաբերությունների հաստատման (պահպանման) խնդրում օրենքով կամ աշխատանքային պայմանագրով առանձին աշխատողների առկայությամբ սահմանային փոքր նախատեսելի արդարացված է, եթե այն հետապնդում է իրավաչափ նպատակներ, մասնավորապես պայմանավորված է կարարվող աշխատանքի բնույթով կամ առանձնահատկությամբ։ Այս առումով, սահմանադրական դատարանն արդարացի է համարում հանրային (պետական եւ համայնքային) ծառայության բնագավառը կարգավորող օրենսդրության ակտերով ծառայողի պաշտոնավարման սահմանային փոքր նախատեսելի գույքնթաց գործարարի եւ կենսաթոշակային փոքրի հասած ու աշխատանքային նորմափիլ պահանջները

բավարարող աշխատողի միջև երկկողմ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու իրավական հնարավորության նախադեսումը եւ դրա հիման վրա աշխատանքային հարաբերությունների կայունությունն ապահովելը:

Աշխատանքի ընտրության ազատությունը պայմանավորված է, նախ՝ աշխատանքային հարաբերությունների հաստատման ու դադարման երկկողմ ազատ կամահայրնության ապահովման օրենսդրական հստակ երաշխիքների առկայությամբ, որոնք նաեւ անհրաժեշտ են ՏՏ Սահմանադրության ինչպես 32 հոդվածում (1-ին մաս) նախատեսված անձի իրավունքի իրացման, այնպես էլ 8 հոդվածում (2-րդ մաս) ամրագրված սկզբունքին համապատասխան փնտեսավարման շուկայական հարաբերությունների ազատ ու բազմակողմ զարգացման համար:

Սահմանադրական դադարանը գրկում է, որ ՏՏ Սահմանադրության 14.1. եւ 32 հոդվածների դրույթներին համապատասխան աշխատանքի իրավունքի ազատ եւ անխորական իրացումն անհրաժեշտաբար պետք է երաշխավորելի լինի աշխատանքային հարաբերությունների բոլոր բնագավառներում:

7. Աշխատանքային պայմանագրի, որպես երկկողմ իրավունքներով ու պարտականություններով պայմանավորված համաձայնության (ՏՏ աշխ. օր.-ի 83 հոդված), բովանդակությունից է անմիջականորեն բխում ինչպես աշխատողի, այնպես էլ գործատուի նախաձեռնությամբ այն լուծելու իրավական հնարավորությունը (ՏՏ աշխ. օր.-ի 109 հոդվածի 3-րդ, 4-րդ կետեր): Աշխատանքային պայմանագիրը կնքվում է ազատ կամահայրնությամբ, հետեւաբար, կողմերը պետք է ազատ լինեն այն լուծելու ցանկություն դրսևորելու հարցում: Աշխատանքով պայմանավորված հարաբերությունների կարգավորման պայմանագրային բնույթը միաժամանակ պահանջում է ոչ միայն իրավունքի իրացման, այլև պարտականության կատարման անհրաժեշտություն, եւ կողմերի, փոխադրված գործատուի՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու իրավունքի իրացումը չպետք է պայմանավորված լինի նպատակահարմարությամբ կամ սուբյեկտիվ բնույթի այլ գործոնով, այլ հետապնդի արդար, իրավաբանորեն ամրագրված որոշակի նպատակ՝ աշխատանքի իրավունքի իրացման սահմանադրորեն կանխորոշված սկզբունքներին համապատասխան:

ՏՏ աշխատանքային օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 113 հոդվածում սահմանված են գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման դեպքերը՝ կապված իրավաբանական այնպիսի փաստերի հետ (կազմակերպության լուծարում, գործատուի սնանկ ճանաչվելը, աշխատողների թվաքանակի կրճատում, զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելը եւ այլն), որոնց առկայությամբ օբյեկտիվորեն անհնարին է աշխատանքային հարաբերությունների շարունակումը կամ դրանք բացահայտ անարդյունավետ են: Այդ փաստերի հիմքում օրենսդիրը նախատեսել է կոնկրետ գնահատելի չափանիշներ: Մինչդեռ օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով գործարտուն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կամ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, եթե լրացել է աշխատողի կենսաթոշակային փարիքը, ընդ որում, նույն հոդվածի 3-

րդ մասի համաձայն, որոշ այլ դեպքերում (1-ին մասի 3-րդ եւ 4-րդ կետեր), գործապում օժտված չէ աշխատանքային պայմանագիրը լուծելու բացառիկ լիազորությամբ եւ կամ ընկերաբար կարող է այն լուծել, եթե « ... իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում» աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պարաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից, եւ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում է պայմանագիրը լուծվում՝ առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու: Փաստորեն, կենսաթոշակային փարիքի հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման հարցում օրենսդիրը դրսեւորել է ինկլուզիվ (հրամայական) մոտեցում: Միաժամանակ, նույն օրենսգրքի 114 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի համաձայն արգելված է գործապումի նախաձեռնությամբ լուծել աշխատանքային պայմանագիրը՝ պատճառ համարելով փարիքը, բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատողը ձեռք է բերել ծերության կենսաթոշակ ստանալու իրավունք կամ ստանում է այդպիսին:

8. Վերլուծելով ՏՏ աշխատանքային օրենսգրքի վերոհիշյալ դրույթների բովանդակությունը, համադրելով դրանք անձի՝ աշխատանքի ազատ եւ անխտրական ընտրության սահմանադրական իրավունքի երաշխավորված իրականացման վերաբերյալ սույն որոշմամբ արտահայտած իր իրավական դիրքորոշումների հետ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

ա/ օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝

գործապումի լիազորում է աշխատողի կենսաթոշակային փարիքը լրանալու փաստի ուժով աշխատանքային պայմանագիրը միակողմ լուծելու հայեցողական իրավունքով՝ բացառելով անձի աշխատունակության (աշխատանքային պիտանիության) գնահատման որեւէ գործոնի կիրառման հնարավորություն, հետեւաբար՝ խտրական է եւ սահմանափակում է անձի՝ աշխատանքի ընտրության ազատությունը,

բ/ օրենսգրքի 114 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը, մի կողմից՝

- գործապումի արգելում է աշխատանքային պայմանագիրը միակողմ լուծել՝ հիմք ընդունելով աշխատողի փարիքը, այդպիսով բացառելով աշխատանքային հարաբերություններում փարիքային խտրականության եւ այդ հիմքով աշխատանքի ազատ ընտրության սահմանափակման որեւէ հնարավորություն, հետեւաբար՝ հետապնդում է ՏՏ - Սահմանադրության 14.1., 32 հոդվածների պահանջներին համապատասխանող նպատակներ,

- մյուս կողմից՝ «բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատողը ձեռք է բերել ծերության կենսաթոշակ ստանալու իրավունք կամ ստանում է այդ կենսաթոշակը» դրույթի մասով պարունակում է ՏՏ Սահմանադրության 14.1., 32 եւ 37 հոդվածներով երաշխավորված՝ աշխատանքի ազատ եւ անխտրական ընտրության ու սոցիալական ապահովության անձի իրավունքների միտքով իրացմանը խոչընդոտող, ինչպես նաեւ աշխատանքի իրավունքի իրացումն անձի սոցիալական իրավունքի իրացման փաստով պայմանավորող ոչ իրավաչափ նորմեր՝ այդպիսով իմաստագրելով Սահմանադրության

32 եւ 37 հոդվածներով երաշխավորված անձի իրավունքների բովանդակությունն ու սահմանափակելով նրա հիմնական իրավունքները եւ ազատությունները:

9. ՏՏ Սահմանադրության 3 հոդվածի 2-րդ մասի համաձայն պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Անդրադառնալով աշխարհաբանի ազատ, անխտիրական ընկրության եւ այդ իրավունքի իրացման միջազգային փորձին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ներպետական իրավակիրառական պրակտիկայում աշխարհաբանի նկատմամբ որեւէ (այդ թվում՝ փարիքային) խտրականությունը, զբաղվածության ազատության ոչ իրավաչափ սահմանափակումները համարելի է չեն իրավական, ժողովրդավարական, սոցիալական պետության հիմնարար սկզբունքների հետ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 68 հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Նայասպանի Նանրապետության աշխարհաբանի օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ այնքանով, որքանով չի երաշխավորում հավասար եւ ոչ խտրական իրավապայմանագրային հարաբերություններ աշխատողի եւ գործատուի միջեւ, ճանաչել Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 14.1. եւ 32 հոդվածներին հակասող եւ անվավեր:

1. Նայասպանի Նանրապետության աշխարհաբանի օրենսգրքի 114 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը՝ «բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատողը ձեռք է բերել ծերության կենսաթոշակ ստանալու իրավունք կամ ստանում է այդ կենսաթոշակը» բառակապակցության մասով ճանաչել Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 14.1. եւ 32 հոդվածներին հակասող եւ անվավեր:

2. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ**

*24 փետրվարի 2009 թվականի
ՄԳՈ- 792*

ՆԱԼՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԼՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԼՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՆԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ» ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ ՆՏ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 10 ՆՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԼՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

8 մայիսի 2009թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարոյթունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Նով-
հաննիսյանի (գեկուցող), Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոս-
յանի,

մասնակցությամբ՝ դիմող եւ պարասխանող կողմերի ներկայացուցիչների,
համաձայն ՆՏ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ
կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,
դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց ««Նայ ազգային կոնգրես»
նախընտրական դաշինքի դիմումի հիման վրա՝ ՆՏ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-
րդ մասի 1-ին պարբերության՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը
համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Նայ ազգային կոնգրես» նախընտրական դաշինքի՝
16.04.2009թ. ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի հաղորդումը, դիմող եւ պարասխանող կող-
մերի գրավոր բացաբարությունները, հեղադրելով ՆՏ ընտրական օրենսգրքը եւ գործում
առկա մյուս փաստաթղթերը, այդ թվում՝ դիմող կողմի միջնորդություններն ու
հարցադրումները, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. ՆՏ ընտրական օրենսգրքն ընդունվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից 1999թ.
փետրվարի 5-ին, Նայասպանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝
1999թ. փետրվարի 17-ին եւ ուժի մեջ է մտել 1999թ. փետրվարի 28-ից:

ՆՏ ընտրական օրենսգրքի 10 հոդվածը վերնագրված է «Քաղաքացիներին ընտրողների ցուցակում ընդգրկելը»: Նշված հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերությունը սահմանում է. «Նամայնքի ընտրողների ցուցակում ընդգրկվում են սույն օրենսգրքի 2 հոդվածի համաձայն ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք, ինչպես նաև այդ համայնքում բնակվող եւ որեւէ համայնքում հաշվառում չունեցող, իսկ սույն կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքում՝ նաև այլ համայնքում հաշվառված քաղաքացիները: Ընտրելու իրավունք ունեցող եւ հաշվառում չունեցող քաղաքացիները քվեարկության օրվանից մինչև 21 օր առաջ իրենց համայնքի ղեկավարին, իսկ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան մինչև 15 օր առաջ՝ նաև լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարին կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով ներկայացնում են ընտրողների ցուցակում ընդգրկվելու վերաբերյալ հայտ: Նաշվառում չունեցող քաղաքացիներն ընտրողների ցուցակում ընդգրկվում են բնակության վայրի մասին տեղեկանքի հիման վրա»:

1999թ. փետրվարի 5-ին ՆՏ Ազգային ժողովի կողմից ՆՏ ընտրական օրենսգրքն ընդունվելուց ի վեր օրենսգրքի 10 հոդվածը փոփոխվել է վեց անգամ (13.10.1999թ. ՆՕ-2, 05.04.2000թ. ՆՕ-47, 03.07.2002թ. ՆՕ-406-Ն, 19.05.2005թ. ՆՕ-101-Ն, 22.12.2006թ. ՆՕ-1-Ն, 16.11.2007թ. ՆՕ-219-Ն օրենքներ):

2. Գործի դատավարական նախապայմությունը հանգում է հետևյալին: Դիմողը 03.04.09թ. ՆՏ վարչական դատարան հայցադիմում է ներկայացրել ՆՏ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 26.02.09թ. «Երեսնի ավագանու 2009թ. մայիսի 31-ի ընտրությունների նախապայրաստման եւ անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 12-Ա որոշման հավելվածի 10-րդ կետն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտին հակասելու եւ անվավեր ճանաչելու պահանջի մասին: Որոշման հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ հաշվառում չունեցող քաղաքացիներն ընտրողների ցուցակներում ընդգրկվելու վերաբերյալ հայտ կարող են ներկայացնել համայնքի ղեկավարին՝ քվեարկության օրվանից մինչև 21 օր առաջ, լիազոր մարմնի կամ նրա տարածքային ստորաբաժանում՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 15 օր առաջ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հաշվառում չունեցող քաղաքացիներին ընտրողների ցուցակներում ընդգրկելու միջոցառման ժամանակացույցը սահմանելիս որպես իրավական հիմք է ընդունել ՆՏ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասի առաջին պարբերության մեջ ամրագրված վիճարկվող դրույթը:

Վարչական դատարան ներկայացված հայցադիմումում դիմողի փաստարկները հանգել են նրան, որ ՆՏ ընտրական օրենսգրքի 2 հոդվածը թույլ չի տալիս տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակից դարձնել նաև օրվայ համայնքում չհաշվառված, սակայն բնակվող անձանց, քանզի այդ նորմի վերլուծությունից «...ակնհայտ է դառնում, որ տեղական ինքնակառավարման մարմնի ընտրություններին մասնակցելու իրավունք ունենալու համար, ընտրողը կարող է կամ լինել, կամ չլինել Նախարանի Նախապետության քաղաքացի, սակայն պարտավոր է լինել 18 տարեկան եւ բարձր, հաշվառված լինել եւ փաստացի բնակվել, օրվայ դեպքում, Երեսն քաղաքում,

առնվազն 1 փարվա ընթացքում»։ Ըստ հայցադիմումում դիմողի արտահայտած դիրքորոշման՝ ՏՆ ընտրական օրենսգրքի՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակների կազմման վերաբերյալ 10 հոդվածի 4-րդ մասի առկայության պայմաններում անհասկանալի է անտրամաբանական է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների առնչությամբ օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասի կիրառումը, որը, ըստ դիմողի, վերաբերում է համապետական ընտրություններին։

Վարչական դատարանն իր՝ 09.04.2009թ. թիվ ՎԴ/1641/05/09 գործով կայացրած վճռով մերժել է «Նայ ազգային կոնգրես» նախընտրական դաշինքի հայցը՝ կիրառելով ՏՆ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերությամբ սահմանված դրույթները և իրավաչափ համարելով տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ համայնքի ընտրողների ցուցակում՝ հաշվառում չունեցող, սակայն փվյալ համայնքում բնակվող քաղաքացիների ընդգրկումը։

3. Դիմողի պնդմամբ՝ ՏՆ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասի առաջին պարբերության մեջ ամրագրված դրույթը հակասում է ՏՆ Սահմանադրության 2, 4, 11.1., 30, 105 հոդվածների պահանջներին։

Ըստ դիմողի՝ վարչական դատարանի կողմից իր հայցադիմումի մերժման պարճառն այն է, որ ՏՆ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության դրույթները դատարանի կողմից ընկալվել են որպես տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակների կազմմանը վերաբերող իրավական նորմեր, ինչն էլ, իր հերթին, բերում է նաև այլ իրավական նորմերի հակասահմանադրական մեկնաբանման։

Դիմողի կարծիքով, վարչական դատարանի մեկնաբանությունը և դրա վրա հիմնված իրավական ակտերի կիրառումը հնարավորություն չեն տալիս կատարելու ՏՆ Սահմանադրության 2, 4, 11.1., 30, 105 հոդվածների պահանջները և խառնաշփոթ են ստեղծում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրական օրենսդրությունում։

Ըստ դիմողի՝ վիճարկվող նորմը ձեւակերպված է այնքան անորոշ, ոչ միանշանակ, ոչ հստակ, որ կենտրոնական ընտրական հանձնաժողովը և վարչական դատարանն այն ընկալում, մեկնաբանում և կիրառում են ՏՆ Սահմանադրության նշված հոդվածների նորմերին ոչ համահունչ։ Ուստի՝ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերությունն անորոշ, ոչ միանշանակ, ոչ հստակ ձեւակերպված լինելու առումով «...անհամարելի է իրավական պետության հարկանիշներից իրավական որոշակիության սկզբունքի հետ՝ ամրագրված Սահմանադրության 1-ին հոդվածում»։

4. Ըստ պարասխանողի՝ վիճարկվող հոդվածը շարադրված է բավարար հստակությամբ, որով թույլ է տալիս տեսնելու օրենսդրի կամքը՝ ակտիվ ընտրական իրավունքի իրականացման, ինչպես նաև այդ իրավունքի իրականացման համար սահմանափակումներ չհարուցելու մասով։

Պատասխանող կողմը գտնում է, որ ՆՆ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերությունում նշված՝ «համայնքում բնակվող և որեւէ համայնքում հաշվառում չունեցող քաղաքացիները» համապատասխան համայնքում բնակվող, սակայն բնակչության պետական ռեգիստրում հաշվառում չունեցող Նայաստանի Նանրապետության քաղաքացիներն են: Այս առումով, եթե ՆՆ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասի դրույթները վերաբերում են ինչպես համապետական, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, ապա «յուրաքանչյուր ոք» եզրույթը՝ վիճարկվող հոդվածի շրջանակում, կիրառվում է միայն այն դեպքում, երբ կանոնակարգումը վերաբերում է բացառապես տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին:

Ըստ պատասխանողի՝ ՆՆ ընտրական օրենսգրքի 10 հոդվածը ներառված է օրենսգրքի ընդհանուր դրույթների բաժնում, որտեղ գեպեղված դրույթները փարածվում են բոլոր ընտրությունների վրա, եթե այդ ընտրություններին վերաբերող կոնկրետ բաժիններում այլ բան սահմանված չէ:

Պատասխանողը, միաժամանակ, «համայնքում բնակվող և որեւէ համայնքում հաշվառում չունեցող» ՆՆ քաղաքացիների ընտրական իրավունքի իրացումն ինքնին իրավաչափ է համարում, ինչը պայմանավորված է բացառիկ դեպքերում՝ «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՆՆ օրենքի փրամաբանության շրջանակում բնակչի պարտադիր հաշվառվելու պարտականության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքների հաղթահարման անհրաժեշտությամբ:

Ներքելով վիճարկվող դրույթի՝ ՆՆ Սահմանադրության 2, 4, 11.1., 30 և 105 հոդվածներին հակասության վերաբերյալ դիմողի պնդումները՝ պատասխանող կողմը նշում է, որ վիճարկվող նորմը ոչ միայն չի հակասում ՆՆ Սահմանադրության 2, 4 և 30 հոդվածների իրավանորմերին, այլև, ընդհակառակն՝ ապահովում է նշված հոդվածներով սահմանված իշխանության իրականացման մեխանիզմի առավել արդյունավետ կատարմանը: Ի հիմնավորումն իր այդ եզրահանգմանը՝ պատասխանողը, մասնավորապես, նշում է, որ ՆՆ Սահմանադրության 30 հոդվածն սպառիչ կերպով սահմանում է այն քաղաքացիների շրջանակը, ում ընտրելու և ընտրվելու իրավունքը կարող է սահմանափակվել: Սահմանադրական այդ իրավունքը կարող է սահմանափակվել միայն ՆՆ Սահմանադրության 43 հոդվածում նշված դեպքերում և հիմքերով: ՆՆ ընտրական օրենսգրքի 55 և 56 հոդվածներից բխում է, որ քվեարկությանը մասնակցել կարող են միայն ընտրողների ցուցակներում ընդգրկված քաղաքացիները: Ներուաբար, ընտրողների ցուցակներում ընդգրկվելու՝ քաղաքացու բացարձակ իրավունքի ճանաչումը՝ առանց որեւէ ցենզի առկայության, ինքնին ունի սահմանադրական նշանակություն, քանի որ անհրաժեշտ է ազատ ընտրությունների միջոցով ժողովրդաիշխանության իրականացման, ընդհանուր ընտրությունների անցկացման և ընտրական իրավունքի իրացման համար: Պատասխանող կողմը գտնում է, որ անհիմն նստակեցության ցենզի հիմքով քաղաքացու ընտրելու իրավունքի իրացմանը խոչընդոտելը և այդ կարգով ակտիվ ընտրական իրավունքը սահմանափակելն անհամարելի կլինեն ՆՆ Սահմանադրության 2, 3, 4 և 30 հոդվածների հետ: Պատասխանող

ղի պնդմամբ՝ իրավակիրառ մարմինները ճիշտ մեկնաբանություն են փոխում իրավական նորմին, որը համահունչ է նաև ՏՏ Սահմանադրությանը:

5. Սույն գործի շրջանակներում ՏՏ սահմանադրական դատարանը կարելի է համարում անդրադարձը փեդական ինքնակառավարման մակարդակում անձանց ընտրական իրավունքի իրացման հիմնախնդրին առնչվող մի շարք հիմնարար հասկացությունների սահմանադրաիրավական բովանդակությանը: Դրանք են, մասնավորապես, «ընտրական իրավունք», «փեդական ինքնակառավարում», «համայնք», «քաղաքացի», «յուրաքանչյուր ոք», «համայնքի բնակիչ», «բնակիչների հաշվառում», «մշտական բնակության վայր», «համայնքի ընտրողների ցուցակ», «համապետական ընտրությունների ժամանակ կազմվող ընտրողների ցուցակ», «փեդական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ կազմվող ընտրողների ցուցակ» հասկացությունները, որոնց վերաբերյալ ՏՏ օրենսդրության մեջ առկա են որոշակի հասկացությային հստակեցումներ:

6. ՏՏ Սահմանադրության 30 հոդվածը սահմանում է երկու սկզբունքային դրույթ: Նախ. «Նայաստանի Նանրապետության՝ փասնույթ փարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու եւ հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն եւ կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը եւ փեդական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք»: Երկրորդ՝ «Օրենքով կարող է սահմանվել Նայաստանի Նանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ փեդական ինքնակառավարման մարմինների ընտրություններին եւ փեդական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը»:

Այնպես է, որ Սահմանադրությունը ճանաչում է ինչպես ՏՏ քաղաքացիների ընտրական իրավունքը, այնպես էլ փեդական ինքնակառավարման մակարդակում ՏՏ - քաղաքացիություն չունեցող անձանց համար օրենքով նման իրավունքի նախատեսման հնարավորությունը:

Սահմանադրորեն նախատեսված այդ հնարավորությունից ելնելով ՏՏ ընտրական օրենսգիրքը (հոդվ. 2) սահմանել է նման իրավունք ՏՏ քաղաքացիություն չունեցող այն անձանց համար, ովքեր համապատասխան համայնքում առնվազն մեկ փարվա հաշվառում ունեն եւ փաստացի բնակվում են այդփեդ:

ՏՏ Սահմանադրությունը սահմանում է նաև, որ. «Տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքներում» (հոդվ. 104): Ընդ որում, **փեդական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է** սեփական պատասխանատվությամբ բնակիչների բարօրության նպատակով Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան լուծելու փեդական նշանակության հարցերը:

Սահմանադրության 104.1. հոդվածի համաձայն՝ **համայնքը** մեկ կամ մի քանի բնակավայրերի **բնակչության հանրությունն է**: Նամայնքի սեփականությունը կառավարելու եւ փնտրիներու, համայնքային նշանակության հարցեր լուծելու եւ համայնքի պա-

հանջմունքների բավարարմանն ուղղված այլ լիազորությունները համայնքն իրականացնում է որպես սեփական լիազորություններ (հոդվ. 105):

Այսպիսով, «տեղական ինքնակառավարում» եւ «համայնք» հասկացությունները փոխադրանքավորված են: Նամայնքը նույն բնակավայրում ապրող բնակչության հանրություն է: Ներեւաբար, **նույն բնակավայրում ապրող բնակչության կողմից** իր սեփականությունը կառավարելը եւ փնտրիները, համայնքային նշանակության, ինչպես նաեւ իրենց պահանջմունքների բավարարմանն ուղղված այլ հարցերի լուծումը կազմում է տեղական ինքնակառավարման բովանդակությունը:

Տեղական ինքնակառավարման մակարդակում ընտրական իրավունքն ինքնակառավարման իրականացմանը մասնակցելու համայնքի բնակչի իրավունքն ու հնարավորությունն է, ինչը կոչված է նրան մասնակից դարձնելու համայնքի սեփականության կառավարմանը եւ փնտրիները, համայնքային նշանակության հարցերի լուծմանը եւ համայնքի պահանջմունքների բավարարմանն ուղղված այլ լիազորությունների իրականացմանը:

Սահմանադրության «Տեղական ինքնակառավարումը» գլխում շեշտվում են «բնակիչ» (հոդվ. 104, 104.1.) եւ «համայնքի անդամ» (հոդվ. 107) հասկացությունները: Ընդ որում, Սահմանադրության 107 հոդվածի առաջին մասի համաձայն՝ **տեղական ինքնակառավարման իրավունքը պատկանում է համայնքին**, այսինքն՝ **տվյալ բնակավայրի բնակչության հանրությանը**:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում բնակչության մասնակցությունը ժողովրդավարության ինքնուրույն ու առանձնահատուկ այն ձեւն է, երբ մարդիկ ընդհանուր շահերից ելնելով համատեղ են լուծում իրենց կյանքին առնչվող տեղական խնդիրները: Դրան մասնակցելու իրավունքը ձեռք է բերվում **տվյալ բնակավայրի բնակիչ լինելու հանգամանքով**: Տեղական ինքնակառավարման եվրոպական պրակտիկան նույնպես վկայում է այդ հանգամանքի կարեւորության մասին: Նման մոտեցումը հաշվի է առնում նաեւ այն հանգամանքը, որ համայնքի բնակիչն է մուծում տեղական հարկեր ու փոսթեր, մասնակցում է համայնքային սեփականության ձեւավորմանը:

7. «Տեղական ինքնակառավարման մասին» ՆՃ օրենքի (ընդունվել է ՆՃ Ազգային ժողովի կողմից 2002թ. մայիսի 7-ին) 3 հոդվածը նույնպես սահմանում է, որ «Տեղական ինքնակառավարումը բնակչության բարեկեցության բարելավման նպատակով սեփական պատասխանատվությամբ եւ օրենքի շրջանակներում ինքնուրույն գործող տեղական ինքնակառավարման մարմինների համայնքային խնդիրները լուծելու եւ համայնքի սեփականությունը փնտրիները՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությամբ եւ սույն օրենքով երաշխավորված իրավունքը եւ համայնքի կարողությունն է»:

Նույն օրենքի 4 հոդվածի համաձայն՝ «**Նամայնքը պետական համակարգի ժողովրդավարական հիմքն է**: Նամայնքը **բնակիչների հանրությունն** եւ վարչապարաձայնին միավոր է, որի սահմաններում **համայնքի բնակիչներն** ուղղակիորեն կամ օրենքով սահմանված ընտրովի մարմինների միջոցով իրականացնում են տեղական ինքնակառավարում»: Իսկ 2008թ. դեկտեմբերի 26-ին ՆՃ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Երե-

ւանում փեղական ինքնակառավարման մասին» ՄՃ օրենքի 2 հոդվածի 1-ին մասում ամրագրված է, որ «Երեւանը համայնք է՝ **Երեւանի բնակչության հանրություն**»:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՄՃ օրենքի 5 հոդվածի համաձայն՝ **«Համայնքի բնակիչ է այն անձը, որը հաշվառված է փվյալ համայնքում**»: Ընդ որում, նույն հոդվածը նախատեսում է նաև, որ **«Համայնքի բնակիչների մասնակցությունը** փեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին սահմանվում է Նայասփանի Նանրապետության ընտրական օրենսգրքով»:

ՄՃ ընտրական օրենսգրքի 9 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Նայասփանի Նանրապետության ընտրողների ցուցակը կազմում է վարում է քաղաքացիների՝ **ըստ բնակության վայրի հաշվառումն իրականացնող** Նայասփանի Նանրապետության կառավարությանն առընթեր Նայասփանի Նանրապետության ոստիկանությունը (այսուհետ՝ լիազոր մարմին)»: Այնուհանդերձ, որ ընտրական իրավահարաբերությունների շրջանակներում **բնակչի հաշվառումն իրականացվում է ըստ նրա բնակության վայրի**: Նույն օրենսգրքի 10 հոդվածի 2-րդ մասի պահանջն է, որ «Նույն անձը կարող է ընդգրկվել **միայն մեկ համայնքի ընտրողների ցուցակում** եւ **միայն մեկ անգամ**»:

Միաժամանակ, «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՄՃ օրենքի (ընդունվել է 2002թ. սեպտեմբերի 24-ին) 3 հոդվածը սահմանում է, որ «Ռեգիստրը բնակչության վերաբերյալ օրենքով սահմանված անհատական հաշվառման փվյալների փեղեկավարական համակարգ է, որն ստեղծվում է **Նայասփանի Նանրապետությունում բնակվող անձանց (անկախ քաղաքացիությունից)**, ինչպես նաև օտարերկրյա պետություններում բնակվող Նայասփանի Նանրապետության քաղաքացիների (այսուհետ՝ բնակիչների)՝ **ըստ բնակության վայրի հաշվառման նպատակով**»: Նույն օրենքի 7 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Ռեգիստրում ընդգրկվելու համար Նայասփանի Նանրապետության **բնակիչը** պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում համապատասխան փեղական ռեգիստրին տրամադրել իր **մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն**, ինչպես նաև սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անհատական փվյալները: **Մշտական բնակության վայր (կացարան) է համարվում այն տարածքը, որտեղ բնակիչն ունի բնակվելու իրավունք, որը նա համարում էւ հայտարարում է որպես իր կացարան**: Մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելիս անձը պարտավոր է յոթնօրյա ժամկետում գրավոր փեղեկացնել այն համայնքի փեղական ռեգիստրին, որտեղ գտնվում է նրա նոր կացարանը: **Բնակիչը կարող է հաշվառվել միայն մեկ կացարանում**»: Այս դրույթներից նույնպես հետեւում է, որ բնակիչը փեղական ռեգիստրում հաշվառվելու համար կարող է ունենալ միայն մշտական բնակության վայրի (կացարանի) մեկ հասցե եւ **պարտավոր է այդ հասցեում օրենքով սահմանված ժամկետում հաշվառվել**: Օրենքի 12 հոդվածի 3-րդ մասը սահմանել է, որ Նայասփանի Նանրապետությունում բնակվող այն անձինք, ովքեր հաշվառված չեն, **պարտավոր են** մինչեւ 2006թ. հուլիսի մեկը հաշվառվել համապատասխան փեղական ռեգիստրներում: Ընդ որում, նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն բնակչության պետական ռեգիստրը գործում է 2006թ. հուլիսի 1-ից:

Օրենքը ՆՆ կառավարությանն է լիազորել սահմանելու բնակչության հաշվառման կարգը: ՆՆ կառավարությունը 2005թ. հուլիսի 14-ին ընդունել է թիվ 1231-Ն որոշումը «Նայասպահանի Նանրապետությունում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին»: Այդ որոշմամբ ՆՆ կառավարությունը կանոնակարգել է բնակչության բոլոր խավերի, այդ թվում՝ բնակչության վայր չունեցող անձի, հաշվառման, ինչպես նաև սահմանված ժամկետներում չհաշվառվելու դեպքում պարասխանապատվության կարգը եւ պարտավորեցրել է պետական կառավարման լիազոր մարմնին իրականացնել այն:

Օրենսդրության վերլուծությունը վկայում է, որ քաղաքացիներին՝ ըստ բնակության վայրի հաշվառման համակարգի ներդրմամբ միաժամանակ սահմանվել է հաշվառման այնպիսի ընթացակարգ, որն ապահովում է Նայասպահանի Նանրապետությունում բնակվող յուրաքանչյուր անձի հաշվառումը՝ միտում ունենալով բացառել հաշվառում չունեցող անձանց առկայությունը Նայասպահանի Նանրապետությունում: Չհաշվառված անձի առկայությունը գործնականում հնարավոր է միայն փվյալ անձի կողմից՝ նշված օրենքով սահմանված իր պարտավորությունը չկատարելու դեպքում:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ իրավակիրառական պրակտիկայում փարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու համար, մասնավորապես, կարևոր է փարբեր օրենսդրական ակտերով «բնակչության հաշվառում» հասկացության առնչությամբ միասնական մոտեցման ապահովումը, ինչպես նաև օրենսդրական փոփոխությունների համակարգված իրականացումը:

8. ՆՆ օրենսդրության վերոհիշյալ դրույթների համադրված վերլուծությունից հետևում է, որ **համայնքի ընտրողների ցուցակում** կարող են ընդգրկվել միայն փվյալ համայնքի՝ 18 փարին լրացած **ընտրական իրավունք ունեցող բնակիչները**, այսինքն՝ այն անձինք, որոնց մշտական բնակության վայրը փվյալ համայնքն է, եւ որոնք օրենքով նախատեսված ու ՆՆ կառավարության կողմից սահմանված կարգով հաշվառված են այդ համայնքում: Նամապետական ընտրությունների ժամանակ այդ ցուցակներում կարող են ընդգրկվել նաև ՆՆ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասում նախատեսված ընտրական իրավունք ունեցող՝ փվյալ համայնքում չհաշվառված քաղաքացիները: Պարտահական չէ, որ հիշյալ 10 հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության մեջ չհաշվառված անձանց առումով խոսքը վերաբերում է ոչ թե «յուրաքանչյուր ոք»-ին, այլ «**քաղաքացիներ**»-ին, որոնք համապետական ընտրությունների ժամանակ ընտրական իրավահարաբերությունների միակ սուբյեկտն են: Իսկ Նայասպահանի Նանրապետության **քաղաքացի** են «Նայասպահանի Նանրապետության քաղաքացիության մասին» ՆՆ օրենքին համապարասխան Նայասպահանի Նանրապետության քաղաքացիություն ձեռք բերած անձինք:

Այս փրամաբանությունից է բխում նաև ՆՆ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 4-րդ մասի իրավական բովանդակությունը, համաձայն որի՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ կազմվող ընտրողների ցուցակներում ընդհանուր հիմունքներով ընդգրկվում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ **ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք**»:

9. ՏՏ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասի առաջին պարբերությունը, ինչպես նշվեց, սահմանում է, որ «**Նամայնքի ընտրողների ցուցակում** ընդգրկվում են սույն օրենսգրքի 2 հոդվածի համաձայն ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք, ինչպես նաև այդ համայնքում բնակվող և որեւէ համայնքում հաշվառում չունեցող, իսկ սույն կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքում՝ նաև այլ համայնքում հաշվառված **քաղաքացիները**: Ընտրելու իրավունք ունեցող և հաշվառում չունեցող քաղաքացիները քվեարկության օրվանից մինչև 21 օր առաջ իրենց համայնքի ղեկավարին, իսկ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան մինչև 15 օր առաջ՝ նաև լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարին կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով ներկայացնում են ընտրողների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ հայտ: Հաշվառում չունեցող քաղաքացիներն ընտրողների ցուցակում ընդգրկվում են բնակության վայրի մասին տեղեկանքի հիման վրա»:

Այս պարբերության մեջ «... իսկ սույն կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքում՝ նաև այլ համայնքում հաշվառված քաղաքացիները» արտահայտությունն ակնհայտորեն վերաբերում է համապետական ընտրություններին, ուստի քննարկվող հարցի համապետական դատարանը դրան չի անդրադառնում: Միաժամանակ, ՏՏ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասի վերոհիշյալ պարբերությունը պարունակում է դրույթ, որը դուրս է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների իրավակարգավորման ընդհանուր փրամաբանությունից: Նամայնքի ընտրողների ցուցակում ընդգրկվում են նաև «...այդ համայնքում բնակվող և որեւէ համայնքում հաշվառում չունեցող... քաղաքացիները»: Ինչպես նշվեց, ՏՏ Սահմանադրությունը համայնք է դիտարկում մեկ կամ մի քանի բնակավայրերի **բնակչության** հանրությունը (հոդվ. 104.1.): Իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» ՏՏ օրենքի 5 հոդվածի համաձայն՝ «**Նամայնքի բնակիչ է այն անձը, որը հաշվառված է տվյալ համայնքում**»: Սահմանադրական դատարանը գտնում է, որ «այդ համայնքում բնակվող և որեւէ համայնքում հաշվառում չունեցող» քաղաքացուն համայնքի ընտրողների ցուցակում ընդգրկելու դրույթը, ինչպես նաև այլ համայնքում հաշվառված և մեկ այլ համայնքի (քվեարկության օրը գտնվելու վայրի) ընտրողների ցուցակում ընդգրկելու իրավակարգավորումը հավասարապես վերաբերում են **համապետական ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակների** կազմմանը, որը նույնպես իրականացվում է ըստ համայնքների, և այդ պարճառով ՏՏ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 2-րդ մասը սահմանում է ընդհանուր դրույթ, որ «Նույն անձը կարող է ընդգրկվել միայն մեկ համայնքի ընտրողների ցուցակում և միայն մեկ անգամ»: Ընդ որում, հաշվառման կարգի սահմանման իրավասությունը, ինչպես նշվեց, օրենքով վերապահված է ՏՏ կառավարությանը, որը 2005թ. հուլիսի 14-ի թիվ 1231-Ն որոշմամբ սահմանել է բնակչության հաշվառման փրաբերակված կարգ, ինչը և պետք է դրվի բնակչության հաշվառման գործի կազմակերպման ու հաշվառման փաստի հավաստման հիմքում:

ՏՏ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 4-րդ մասի իրավական բովանդակությունը («Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ կազմվող ընտրողների ցուցակներում ընդհանուր հիմունքներով ընդգրկվում է տեղա-

կան ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք») հստակ է ու որոշակի, քանի որ Կրեդական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ, ըստ վերոշարադրյալ իրավադրույթների, իրենց ընտրական իրավունքը կարող են իրացնել միայն Կրեդականի **բնակիչները** կամ, ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի՝ **այն անձինք, ովքեր հաշվառված են Կրեդականի համայնքում եւ ունեն ընտրական իրավունք:**

Ներկայումս, դիմողների այն հարցադրումը, որ ընդհանրապես հաշվառում չունեցող անձը չի կարող ընդգրկվել Կրեդական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ կազմվող ընտրողների ցուցակներում, հիմնավոր է:

10. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի օրենսդրական կարգավորման փոփոխությունների ընդհանուր պրահանությունների վերլուծությանը: Ինչպես նշվեց, 1999թ. փետրվարի 5-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ ընտրական օրենսգրքին ընդունվելուց հետո դրա 10-րդ հոդվածը փոփոխվել է վեց անգամ (13.10.1999թ. ՀՕ-2, 05.04.2000թ. ՀՕ-47, 03.07.2002թ. ՀՕ-406-Ն, 19.05.2005թ. ՀՕ-101-Ն, 22.12.2006թ. ՀՕ-1-Ն, 16.11.2007թ. ՀՕ-219-Ն օրենքներ): Մինչև 2000 թվականի ապրիլի 5-ի փոփոխությունները Կրեդականի հոդվածում առանձին դրույթ նախատեսված չի եղել Կրեդական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակներ կազմելու առանձնահատկության վերաբերյալ:

ՀՀ սահմանադրական դատարանի 16 հոկտեմբերի 1999թ. ՍԴՈ-179 որոշման պահանջներից ելնելով ՀՀ Ազգային ժողովի կողմից 2000թ. ապրիլի 5-ին ընդունված՝ «ՀՀ ընտրական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքով սահմանվեց, որ.

«ՀՈԴ-ՎԱԾ 1. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 2 հոդվածի առաջին կետում "քաղաքացիները" բառից հետո լրացնել հետևյալ բառերը.", իսկ Կրեդական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ նաև Հայաստանի Հանրապետությունում **փախստականի կարգավիճակ ունեցող կամ սահմանված կարգով տրված փախստականի ընտրանիքի վկայականում նշված՝ 18 օրին լրացած յուրաքանչյուր անձ:**

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ սույն օրենսգրքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար նախատեսված իրավունքներն ու պարտականությունները տարածվում են նաև փախստականի կարգավիճակ ունեցող կամ սահմանված կարգով տրված փախստականի ընտրանիքի վկայականում նշված՝ ընտրական իրավունքով օժտված անձանց վրա:"

ՀՈԴ-ՎԱԾ 2. Օրենսգրքի 10 հոդվածի առաջին կետի 2-րդ մասում "ընդհանուր հիմունքներով ընդգրկվում են նաև" բառերից հետո լրացնել **"Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող կամ սահմանված կարգով տրված փախստականի ընտրանիքի վկայականում նշված, Կրեդականի համայնքում առնվազն վերջին մեկ տարում բնակվող՝ 18 օրին լրացած անձինք"** բառերը»:

2002թ. հուլիսի 3-ի օրենսդրական փոփոխության արդյունքում 10 հոդվածի 1-ին կետի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակներում ընդհանուր հիմունքներով ընդգրկվում է Կրեդական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք»:

2005թ. մայիսի 19-ի ՎՕ-101-Ն օրենքով կարարված փոփոխությունների ժամանակ է, որ ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածում Կրեդական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակների կազմման վերաբերյալ առանձնացվում է 4-րդ մաս, որը հետագայում փոփոխության չի ենթարկվել: Իսկ 2006թ. դեկտեմբերի 22-ի ՎՕ-1-Ն օրենքով կարարված փոփոխությունների արդյունքում է օրենսգրքի 2 հոդվածի 1-ին մասին փոփոխություններ կատարվել են երկայնիս ձևակերպումը:

Այսպիսով, ՎՍ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի բոլոր փոփոխությունների համադրված վերլուծությունը նույնպես վկայում է, որ 10 հոդվածի 3-րդ մասի դրույթներն ըստ էության բովանդակում են ընդհանուր դրույթներ եւ կանոնակարգում են համապետական ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակների կազմման հետ կապված իրավահարաբերությունները:

11. ՎՍ ընտրական օրենսգրքի 2 հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Նայասպարանի Նանրապետությունում ընտրելու իրավունք ունեն 18 փարին լրացած Նայասպարանի Նանրապետության քաղաքացիները, իսկ Կրեդական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ նաեւ համապատասխան համայնքում առնվազն մեկ փարվա հաշվառում ունեցող եւ փաստացի բնակվող յուրաքանչյուր ոք»:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ սույն օրենսգրքով Նայասպարանի Նանրապետության քաղաքացիների համար նախատեսված իրավունքներն ու պարտականությունները փարածվում են նաեւ Նայասպարանի Նանրապետության քաղաքացիություն չունեցող ընտրական իրավունքով օժտված անձանց վրա»:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ՎՍ Մահմանադրության մեջ, ինչպես նաեւ օրենսդրական ակտերում «**յուրաքանչյուր ոք**» եզրույթը չի նշանակում «**քաղաքացիություն չունեցող անձ**»: Այն միաժամանակ ենթադրում է թե՛ քաղաքացիներին եւ թե՛ քաղաքացիություն չունեցող անձանց: Ուստի, մի կողմից՝ ընտրական օրենսգրքի 2 հոդվածի 1-ին մասի առաջին դրույթը չի կարելի մեկնաբանել այնպես, որ դրա առաջին մասը վերաբերում է ՎՍ քաղաքացիներին, իսկ երկրորդ մասը՝ ոչ քաղաքացիներին: Սակայն, մյուս կողմից, օգտագործվում է «նաեւ» եզրույթը, որը փոխառված է համապետական ենթադրում է. «բացի սահմանվածից՝ մյուսը»: Եթե դա համադրում ենք հոդվածի նույն մասի երկրորդ նախադասության մեջ օգտագործված «քաղաքացիություն չունեցող ընտրական իրավունքով օժտված...» արտահայտության հետ, ապա ակնհայտ է դառնում, որ փոխառված հոդվածում նկատի է առնվում, այսպես կոչված, «յուրաքանչյուր այլ ոք» հասկացությունը: Այս հարցում փարակարծիք մեկնաբանություններից խուսափելու համար ելակետ պետք է ընդունել ընտրական իրավունքի եւ դրա սահմանափակման վերաբերյալ սահմանադրական մոտեցումները:

ՏՏ Սահմանադրությունը ճանաչելով 18 փարին լրացած ՏՏ քաղաքացիների **ընտրական իրավունքը** (հոդվ. 30), միաժամանակ, ինչպես նշել ենք, նախապես է, որ «Օրենքով կարող է սահմանվել Նայասարանի Նանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ փեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և փեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը»: Օրենսդիրը, Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորության շրջանակներում, նախապես է, որ բացի 18 փարին լրացած ՏՏ քաղաքացիներից՝ «...փեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ նման իրավունք ունի նաև համապատասխան համայնքում առնվազն մեկ փարվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող յուրաքանչյուր ոք» (ՏՏ ընտրական օրենսգրքի 2 հոդվածի 1-ին մաս):

Այս համադրումից հետևում է, որ փեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրական իրավունք ունեն 18 փարին լրացած, փվյալ համայնքում հաշվառված ՏՏ **քաղաքացի հանդիսացող բնակիչները**, ինչպես նաև փվյալ համայնքում առնվազն մեկ փարվա հաշվառում ունեցող և **փաստացի բնակվող**, սակայն ՏՏ քաղաքացիություն չունեցող անձինք: Նման իրավակարգավորումը բխում է նաև ՏՏ սահմանադրական դատարանի 16 հոկտեմբերի 1999թ. ՄԴՈ-179 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների փրամաբանությունից, որում, մասնավորապես, շեշտվեց, որ օրենսդրին վերապահելով «ընտրության կարգը» սահմանելու իրավասությունը, Սահմանադրության ընդհանուր պահանջը նաև այն է, որ այն իրականացվի ՏՏ սահմանադրական կարգի հիմունքներին, միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան, և ՏՏ Ազգային ժողովի իրավասությունն է սահմանելու այդ իրավունքի իրացման կարգն ու պայմանները, մասնավորապես՝ հստակեցնելով մոտեցումը բնակչության ցենզի վերաբերյալ:

Սահմանադրական դատարանի այդ որոշման հիման վրա փոփոխություններ կատարվեցին ՏՏ օրենսդրության մեջ և ընտրակարգում՝ թույլատրելով առնվազն մեկ փարի փվյալ համայնքում հաշվառված և բնակվող, սակայն ՏՏ քաղաքացիություն չունեցող անձանց մասնակցելու փեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին:

2005թ. սահմանադրական փոփոխություններն այս հարցում ամրագրել են այնպիսի մոտեցում, որը սահմանադրաիրավական բովանդակության փեսանկյունից համահունչ է սահմանադրական դատարանի՝ փվյալ հարցի վերաբերյալ վերոհիշյալ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին:

12. Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառական պրակտիկայում ՏՏ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերությանը փրվել է այնպիսի մեկնաբանություն, համաձայն որի՝ փեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ կազմվող ընտրողների ցուցակներում կարող են ընդգրկվել նաև փվյալ համայնքի բնակիչ չհանդիսացող անձինք: Սա չի բխում փեղական ինքնակառավարման սահմանադրաիրավական բովանդակությունից: Տիշյալ նորմը կիրառելի է միայն համապետական ընտրությունների ժամանակ ըստ համայնքների ընտրողների

ցուցակներ կազմելիս, եւ վերջինիս առումով սահմանադրականության որեւէ խնդիր չի առաջացնում:

ՏՏ քաղաքացու, հավասարապես նաեւ ՏՏ-ում կեցության այլ կարգավիճակ ունեցող անձանց ընտրական իրավունքի օրինաչափ իրացման կարելու ազդեցությունը նախապայմաններից է «մեկ ընտրող՝ մեկ ձայն» սկզբունքը, որից հետեւում է նաեւ անձանց՝ **տեղամասային միայն մեկ ցուցակում ընդգրկվելու միակ հնարավորությունը** (ՏՏ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 2-րդ մաս), որը որպէս իրավաբանորեն ամրագրված պարտականություն հստակ եւ հետեւողականորեն պետք է երաշխավորվի ինչպէս ՏՏ ընտրական օրենսգրքում, այնպէս էլ՝ իրավակիրառական արակարգիկայում, որպէսզի մեկ անձն ընտրողների մեկից ավելի ցուցակներում չընդգրկվի: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ երաշխիքի առկայությամբ է նաեւ մեծապէս պայմանավորված ՏՏ-ում ընտրությունների (այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների) եւ հանրաքվեների հետագա ժողովրդավարացումը: Իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում համայնքների ընտրողների ցուցակների կազմման (վարման) գլխավոր խնդիրը փոխառ համայնքի ընտրական իրավունք ունեցող բնակիչների ընտրական իրավունքի իրացման երաշխավորումն է: Այդ խնդրի արդյունավետ լուծմանը կարող էր նպաստել ոչ միայն իրավասու պետական մարմինների կողմից «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՏՏ օրենքի, ՏՏ կառավարության 2005թ. հուլիսի 14-ի թիվ 1231-Ն որոշման պահանջների հստակ կատարումը, այլեւ համայնքների բնակիչների հաշվառման ու ընտրացուցակների կազմման առանձնահատկությունների հետ կապված իրավակարգավորման մանրամասները ՏՏ ընտրական օրենսգրքում նախատեսելը՝ ելնելով այդ օրենսգրքի կառուցվածքային ընդհանուր սահմանադրականության հետ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայասպանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Նայասպանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության դրույթները համապատասխանում են Նայասպանի Հանրապետության Սահմանադրությանը սույն որոշման մեջ ՏՏ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Նայասպանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*8 մայիսի 2009 թվականի
ՍԴՈ- 803*

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ՍԱՄՎԵԼ ՇՈՒՇԱԿՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱՎ
«ԲԱԶՄԱՔՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՆՏ
ՕՐԵՆՔԻ 10 ՆՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

26 մայիսի 2009թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարոյությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի,

համաձայն ՆՏ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 25, 38 և 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Սամվել Շուշանյանի դիմումի հիման վրա՝ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՆՏ օրենքի 10 հոդվածի 3-րդ կետի՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ս. Շուշանյանի՝ 24.03.2009թ. ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հեղափոխելով օրենքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՆՏ օրենքն ընդունվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից 2002 թվականի մայիսի 7-ին, Նայասպանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2002 թվականի հունիսի 4-ին և ուժի մեջ է մտել 2002 թվականի հունիսի 20-ից:

Օրենքի 10 հոդվածի 3-րդ կետը սահմանում է. «Շինության բոլոր սեփականատերերը պարտավոր են, շինության սեփականատերերի ժողովի կողմից սույն օրենքով

սահմանված կարգով հաստատված նորմերից ելնելով, կատարել համապատասխան վճարումներ կամ իրենց ուժերով ու միջոցներով իրականացնել պարտադիր նորմերի պահանջները»:

2. Գործի դատավարական նախապայմությունը հանգում է հետևյալին: Երեսուցի Կենտրոն համայնքի «Կենտրոն» համապիրությունը 11.07.2007թ. առաջին արյանի դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ դիմողի՝ պարտադիր նորմերի կատարման համար նախատեսված գումարի բռնագանձման պահանջի մասին: Պահանջվող գումարի չափը հաշվարկված էր Կենտրոն համայնքի «Կենտրոն» համապիրության արտահերթ ընդհանուր ժողովի՝ պարտադիր նորմերի վճարների չափերի վերաբերյալ 28.08.03թ. 2/2 որոշման հիման վրա: Դատարանն իր՝ 2007թ. նոյեմբերի 27-ի վճռով հայցը մասնակիորեն բավարարել է՝ կիրառելով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՏՏ օրենքի 10 հոդվածի 3-րդ կետը: Նշված վճիռը դիմողի կողմից բողոքարկվել է ՏՏ վերաքննիչ քաղաքացիական դատարան: Վերջինս իր՝ 18.04.2008թ. որոշմամբ օրինական ուժի մեջ է թողել առաջին արյանի դատարանի վճիռը: Դիմողի վճռաբեկ բողոքը ՏՏ վճռաբեկ դատարանի 25.09.2008թ. որոշմամբ վերադարձվել է:

3. Ըստ դիմողի՝ օրենքի վիճարկվող դրույթում առկա է օրենսդրական բաց, ինչի արդյունքում առաջացել է իրավական անորոշություն եւ իրավակիրառ պրակտիկայում դրա կիրառման հակասահմանադրական պրակտիկա:

Նշված օրենսդրական բացը, ըստ դիմողի, նախ կայանում է նրանում, որ խնդրո առարկա վճարը հանդիսանում է քաղաքացիաիրավական հարաբերությունների փարք, ինչը նշանակում է, որ դրա գանձման համար իրավական հիմք կարող է հանդիսանալ համապատասխան քաղաքացիաիրավական պայմանագիրը: Մինչդեռ վիճարկվող դրույթը չի նախատեսում նման պայմանագրի կնքման հնարավորություն: Ավելին, այդ վճարը գանձվում է ոչ թե արդեն կատարված աշխատանքների դիմաց վճարելու նպատակով, այլ մինչև համապատասխան աշխատանքների կատարումը:

Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթում բացակայում է «շինության սեփականատերերի ժողովի կողմից սույն օրենքով սահմանված կարգով հաստատված նորմերից» բառակապակցության կիրառման իրավական մեխանիզմը, քանզի նույն օրենքի 11 հոդվածը, սպառիչ կերպով թվարկելով շինության սեփականատերերի ժողովի լիազորությունները՝ չի լիազորում ժողովին հաստատելու այդ նորմերը:

Դիմողը պնդում է նաեւ, որ վիճարկվող դրույթի անորոշությունն իրավակիրառողին թույլ է տվել նաեւ վիճարկվող դրույթում վերոհիշյալ բառակապակցությունն ընկալել որպես «պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարի չափ»: Մինչդեռ սեփականատերերի ժողովի լիազորություններն սպառիչ կերպով սահմանող՝ օրենքի 11 հոդվածն այդ ժողովին չի լիազորել սահմանելու վճարի չափը:

Ըստ դիմողի՝ հակասական իրավակարգավորման եւ իրավակիրառական պրակտիկայի պայմաններում, երբ սեփականատերերի համար որոշակիացված չէ ո՛չ վճարի չափ սահմանող մարմինը, ո՛չ այդպիսի վճարի գանձման ընթացակարգը,

ձեռավորվում է իրավական անորոշության եւ անկանխապեսելիության մի վիճակ, որը կասկածի է ենթարկում պարտադիր նորմերի կարարմանն ուղղված վճարի գանձման իրավաչափությունը՝ հիմքեր սրեղծելով օրենքով նախապեսված պարտականությունը չկարարելու համար:

4. Պատասխանողը վերլուծելով գործի հանգամանքները՝ գտնում է, որ վիճարկվող դրույթի պարագայում խոսք չի կարող լինել իրավական անորոշության մասին: Ըստ պատասխանողի՝ այդ դրույթը բխում է ինչպես ՏՏ Սահմանադրության 31 հոդվածի 1-ին մասում ամրագրված նորմի բովանդակությունից, այնպես էլ ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 194 հոդվածի 1-ին մասում ամրագրված նորմի պարամաբանությունից: Բազմաբնակարան շենքի բնակարանի սեփականատերը հիշյալ հոդվածների ուժով արդեն իսկ պարտավոր էր մասնակցել ընդհանուր գույքի պահպանման եւ շահագործման ծախսերին, իսկ վիճարկվող հոդվածն ապահովում է դրա ավելի մանրակրկիտ կարգավորումը: Պատասխանողն ընդգծում է, որ օրենքը սեփականատիրոջը հնարավորություն է տալիս պարտադիր նորմերի պահանջներն իրականացնել իր ուժերով եւ միջոցներով:

Ըստ պատասխանողի՝ օրենսդրությամբ հստակորեն սահմանված են այն դեպքերը, թե ընդհանուր բաժնային սեփականության գույքի սեփականատերերից ինչ նպատակներով կարող են գանձվել վճարներ: Միաժամանակ, նույն օրենքով սահմանված է կարգ, համաձայն որի՝ սեփականատերը կարող է իր ուժերով եւ միջոցներով կարարել ընդհանուր գույքի պահպանման եւ շահագործման համար ծախսեր՝ հերազայում համապատասխան չափով հատուցում պահանջելով այլ սեփականատերերից:

Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթում «շինության սեփականատերերի կողմից սույն օրենքով սահմանված կարգով նորմերից» բառակապակցության մեջ խոսքը շինության սեփականատերերի ժողովի կողմից ոչ թե պարտադիր նորմերի սահմանման, այլ վճարների հաստատման մասին է, իսկ «սույն օրենքով սահմանված կարգով հաստատված նորմերից ելնելով» բառակապակցությունը վերաբերում է այն հանգամանքին, որ նույն օրենքի 10 հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասության համաձայն՝ պարտադիր նորմերը սահմանում է ՏՏ կառավարությունը: Ներուարար, օրենսդիրը հստակորեն սահմանել է, որ պարտադիր նորմերի ընդունման իրավասությունը վերապահված է ՏՏ կառավարությանը, ինչն արդարացի մոտեցում է: Շինության սեփականատերերի կողմից պարտադիր նորմերի կարարման նպատակով վճարների կարգը եւ ժամկետները հաստատելու լիազորությունը նույնպես հանդիսանում է օրենքի կարգավորման առարկա:

Պատասխանողը եզրահանգում է, որ իրավական որոշակիության փասանկյունից վիճարկվող դրույթը սահմանադրականության խնդիր չի առաջացնում, քանի որ օրենսդիրը հստակ սահմանել է ընդհանուր բաժնային գույքի շահագործմանը մասնակցելու՝ սեփականատիրոջ պարտավորությունը, պարտադիր նորմերի սահմանման իրավասությունը վերապահված է ՏՏ կառավարությանը, պարտադիր նորմերի համար գանձվող վճարների կարգի եւ ժամկետների հաստատումը սեփականատերերի ընդհանուր ժողովի լիազորությունն է:

5. Վիճարկվող դրույթի սահմանադրականությունը գնահատելու նպատակով սահմանադրական դատարանը նախ հարկ է համարում բացահայտել պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարի իրավական բնույթն ու բովանդակությունը, ինչն իր հերթին պայմանավորված է «պարտադիր նորմ» հասկացության բովանդակությամբ:

«Պարտադիր նորմ» հասկացության իրավական բովանդակությունը բացահայտված է «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՏՏ օրենքի 10 հոդվածի 1-ին կետում, ըստ որի՝ պարտադիր նորմերը սեփականության պահպանման այն պահանջները եւ պարտադիր միջոցառումներն ու աշխատանքներն են, որոնց չիրականացումը կարող է ուղղակի վրանգ ներկայացնել ընդհանուր բաժնային սեփականությանը, շինությունների սեփականատերերի կամ այլ մարդկանց կյանքին, առողջությանը, անձանց գույքին, շրջակա միջավայրին: Ընդ որում, 10 հոդվածն ամբողջությամբ վերաբերում է ընդհանուր բաժնային սեփականության պահպանմանը: Այդ նպատակին ծառայող պարտադիր նորմերի մեջ, ըստ նույն հոդվածի 2-րդ կետի, ներառվում են հակահրդեհային, սանիտարական, քաղաքաշինական, կոմունալ սպասարկման եւ այլ միջոցառումներ: Նամաձայն նույն կետի՝ պարտադիր նորմերը սահմանում է Նայասարանի Նանրապետության կառավարությունը:

Ի կատարումն օրենքի նշված դրույթի՝ ՏՏ կառավարությունն ընդունել է 04.10.2007թ. «Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին» թիվ 1161-Ն որոշումը: Վերջինիս համաձայն՝ պարտադիր նորմերը ներառում են այնպիսի նվազագույն ծավալի պարտադիր իրականացման ենթակա կազմակերպական եւ փոխհիշակական համայնի միջոցառումներ ու աշխատանքներ, որոնց ժամանակին չիրականացումը կարող է ուղղակի վրանգ ներկայացնել շինությունների սեփականատերերի կամ այլ մարդկանց կյանքին, առողջությանը, անձանց գույքին, շրջակա միջավայրին: Կառավարության որոշմամբ սպառիչ կերպով սահմանված են բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը, բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի պահպանմանը ներկայացվող պահանջները եւ դրանց ապահովմանն ուղղված վերանորոգման աշխատանքների եւ կանխարգելիչ միջոցառումների իրականացման առավելագույն ժամկետները:

Կառավարությունն իր այս որոշմամբ հանձնարարել է նաեւ ՏՏ քաղաքաշինության նախարարին եռամսյա ժամկետում մշակել եւ հաստատել այդ որոշմամբ բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման սահմանված նորմերի շրջանակներում պարտադիր իրականացման ենթակա միջոցառումների եւ աշխատանքների համար անհրաժեշտ խոշորացված ծախսերի հաշվարկման մեթոդական ցուցումներ: Ի պատասխան սահմանադրական դատարանի պահանջած փեղեկավարության՝ ՏՏ քաղաքաշինության նախարարը 15.05.09թ. գրությամբ հայտնել է, որ նշված ցուցումների մշակման աշխատանքները նախատեսվում էր իրականացնել ՏՏ 2008թ. պետական բյուջեի «Նորմատիվափոխիչի կազմակերպության փաստաթղթերի մշակում» ծախսային ծրագրով նախարարությանը հասկացված միջոցների սահմաններում: Նաշվի առնելով, որ 2008-2009թթ. պետական բյուջեներով այդ ուղղությամբ միջոցներ չեն նախատեսվել,

նշված մեթոդական ցուցումները դեռեւս չեն մշակվել: Ըստ քաղաքաշինության նախարարի՝ մեթոդական ցուցումների բացակայությունը, սակայն, չի խոչընդոտում շենքի կառավարման մարմնի՝ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՏՏ օրենքի 22 հոդվածի 1-ին կետով սահմանված՝ պարտադիր նորմերի կապարման համար նախատեսված աշխատանքների նախահաշիվ կազմելու բացառիկ լիազորության իրականացմանը, եւ այդ նախահաշիվները կարող են ուղեցույց հանդիսանալ բազմաբնակարան շենքի պահպանման համար պարտադիր իրականացման ենթակա միջոցառումների եւ աշխատանքների համար անհրաժեշտ խոշորացված ծախսերի հաշվարկման ժամանակ, ցուցումները չեն պարունակելու պարտադիր իրականացման հանձնարարականներ:

6. Խնդրո առարկա վճարի բնույթն ու բովանդակությունը պայմանավորող գործոն են նաեւ հիշյալ վճարների սահմանման եւ գանձման ընթացակարգը, ինչպես նաեւ գանձման նպատակը:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՏՏ օրենքի 9 հոդվածն ամրագրում է ընդհանուր բաժնային սեփականության յուրաքանչյուր սեփականատիրոջ պարտականությունը՝ սեփականության իր բաժնին համաչափորեն մասնակցելու պարտադիր նորմերի պահանջների, այն է՝ ՏՏ կառավարության կողմից սահմանված պարտադիր իրականացման ենթակա միջոցառումների եւ աշխատանքների կապարմանը: Օրենքի 10 հոդվածի 3-րդ կետում ամրագրված՝ վիճարկվող դրույթը սահմանում է սեփականատերերի նշված պարտականության կապարման ձեւերը, այն է՝ համապարասխան վճարումների կապարում կամ պարտադիր նորմերի պահանջների իրականացում իրենց ուժերով ու միջոցներով: Նույն հոդվածի 4-րդ կետով սահմանված է հստակ չափանիշ այդ վճարի չափը որոշելու համար. վճարի չափը յուրաքանչյուր սեփականատիրոջ համար սահմանվում է ելնելով շենքի բաժնային սեփականության մեջ նրա բաժնի չափից:

Ելնելով «պարտադիր նորմ» հասկացության բովանդակությունից եւ խնդրո առարկա վճարների գանձման նպատակաուղղվածությունից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ վճարը բազմաբնակարան շենքի **ընդհանուր բաժնային սեփականության պահպանման համար անհրաժեշտ միջոցառումներին եւ աշխատանքներին սեփականատերերի համաչափ մասնակցության ձեւ է:** Ընդ որում, սեփականատերն ազատ է մասնակցության ձեւերի միջեւ ընտրություն կատարելու հարցում: Վճարն այն այլընտրանքային ձեւն է, որը փոխարինում է անհրաժեշտ աշխատանքները սեփական ծախսերով եւ միջոցներով կատարելուն:

7. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՏՏ օրենքի 11 հոդվածը, որն սպառիչ կերպով սահմանում է բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բարձրագույն մարմնի, այն է՝ բազմաբնակարան շենքի սեփականատերերի ժողովի լիազորությունները, ի թիվս այլոց, ժողովին լիազորում է ընտրել բազմաբնակարան շենքի կառավարման ձեւը եւ կառավարման մարմինը: Վյա լիազորությանը համապարասխան՝ օրենքի 17 հոդվածը սահմանում է, որ **պարտադիր նորմերի պահպանման հարցերում** ընդհանուր բաժնային գույքի կառավարման համար բազ-

մաքնակարան շենքի սեփականատերերը կարող են ընկերել շենքի կառավարման մարմին: Շինությունների սեփականատերերն իրավունք ունեն ինքնուրույն ընկերել ընդհանուր բաժնային սեփականության կառավարման մարմնի ձևը: Ընդ որում, մինչև 4 սեփականատեր ունեցող շենքերում պարտադիր նորմերի ապահովումը կարող է իրականացվել նաև ժողովի միջոցով: Նամաձայն օրենքի 17 հոդվածի 3-րդ կետի՝ բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարումը կարող է իրականացվել կամ շինության սեփականատերերի կողմից ստեղծված իրավաբանական անձի՝ համապիրության միջոցով կամ լիազորագրային կառավարչի (ներկայացուցչության) միջոցով կամ հավաքարմագրային կառավարչի միջոցով: Բազմաբնակարան շենքի կառավարումը կարող է իրականացվել նաև համայնքի ղեկավարի կողմից, քանզի բոլոր այն դեպքերում, երբ օրենքի անցումային դրույթների համաձայն՝ օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից 6-ամսյա ժամկետում շենքի կառավարման մարմին չի ձևավորվում, շենքի կառավարման մարմնի համապարասխան լիազորություններն անցնում են համայնքի ղեկավարին:

Օրենքի 18 հոդվածի 3-րդ կետի պահանջն է, որ համապիրության ստեղծման մասին որոշման մեջ արտացոլվի պարտադիր նորմերի կապարման համար նախատեսված աշխատանքների ցանկը: Նույն պահանջը վերաբերում է նաև լիազորագրային կառավարչին փրվող լիազորագրին կամ նրա հետ կնքվող պայմանագրին, ինչպես նաև հավաքարմագրային կառավարչի հետ կնքվող պայմանագրին: Ինչպես լիազորագրային կառավարչին շենքի սեփականատերերի կողմից փրվող լիազորագրում կամ նրանց միջև կնքված պայմանագրում, այնպես էլ հավաքարմագրային կառավարչի եւ սեփականատերերի միջև կնքված պայմանագրում **պետք է արտացոլվի պարտադիր նորմերի կապարման համար նախատեսված աշխատանքների ցանկը** (հոդված 19, 3-րդ կետ, հոդված 20, 3-րդ կետ):

Շենքի սեփականատերերի՝ կառավարման մարմին ընկերելու լիազորության, բազմաբնակարան շենքերում պարտադիր նորմերի ապահովման հիմնական նպատակով ստեղծվող կառավարման մարմնի ձևավորման համար իրավական հիմք հանդիսացող փաստաթղթում **պարտադիր նորմերի կապարման համար նախատեսված աշխատանքների ցանկը ներառելու պարտադիր պահանջի** համադրված վերլուծությունը վկայում է, որ շենքի սեփականատերերը կառավարման մարմին ձևավորելիս դրա ձևավորման համար հիմք հանդիսացող համապարասխան փաստաթղթում պարտադիր նորմերի կապարման համար նախատեսված աշխատանքների ցանկը ներառելով՝ այդպիսով, ըստ էության, հաստատում են փրվյալ բազմաբնակարան շենքի համար անհրաժեշտ պարտադիր նորմերի կապարմանն ուղղված աշխատանքների ցանկը: Օրենքի 10 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտադիր նորմերը սահմանում է Մ կառավարությունը, մինչդեռ յուրաքանչյուր բազմաբնակարան շենքի սեփականատերերը, հաշվի առնելով փրվյալ շենքի առանձնահատկություններն ու կարիքները, որոշում են այն կոնկրետ աշխատանքները, որոնք ենթակա են իրականացման կառավարության կողմից սահմանված՝ բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի շրջանակներում՝ բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի պահպանմանը ներկայացվող պահանջները բավարարելու նպատակով:

8. Ինչպես պնդում է դիմողը, վիճարկվող դրույթում իրավական անորոշությունը դրսևտրվում է նաև նրանում, որ պարզ չէ, թե որ սուբյեկտն է իրավասու որոշելու խնդրո առարկա վճարների չափը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ վճարների բնույթն ու բովանդակությունը որոշակիորեն պայմանավորում են պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարների որոշման եւ սահմանման առանձնահատկությունները:

Նաշվի առնելով, որ խնդրո առարկա վճարն ընդհանուր բաժնային սեփականության պահպանման համար անհրաժեշտ միջոցառումներին եւ աշխատանքներին սեփականատերերի համաչափ մասնակցության ձեւ է՝ յուրաքանչյուր սեփականատիրոջ կողմից վճարվող վճարի չափը փոխադրվում է միջոցառման կամ աշխատանքի արժեքի այն հատվածն է, որը համաչափ է բաժնային սեփականության մեջ փոխադրվող սեփականատիրոջ ունեցած բաժնեմասին: Ներկայացրած, վճարի չափը պայմանավորված է փոխադրվող միջոցառման կամ աշխատանքի ընդհանուր արժեքով:

Ըստ համապատասխան իրավակարգավորման՝ պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարների չափը ձեւավորվում է հետևյալ գործընթացի եւ հետևյալ նորմերի գործողության արդյունքում: «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետի համաձայն՝ **շենքի կառավարման մարմինը կազմում է շինության սեփականատերերի քննարկմանն է ներկայացնում պարտադիր նորմերի կատարման համար նախատեսված աշխատանքների նախահաշիվ:**

«Նամատիրության մասին» ՀՀ օրենքի 14 հոդվածի 4-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ համատիրության ընդհանուր ժողովը հաստատում է համատիրության փարեկան հաշվեկշիռը: Նույն օրենքի 27 հոդվածի համաձայն՝ համատիրության փարեկան հաշվեկշիռը եւ բազմաբնակարան շենքի փարեկան բյուջեն հաստատվում է ընդհանուր ժողովում մեկ փարավա համար՝ հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը, եւ կարող է փարավա ընթացքում փոխվել միայն ընդհանուր ժողովի որոշմամբ: Բազմաբնակարան շենքի փարեկան բյուջեն կազմելիս եւ հաստատելիս հաշվի են առնվում շենքի ընդհանուր սեփականության շահագործման, սպասարկման, պահպանման եւ նորոգման անհրաժեշտությունը, ինչպես նաև համատիրության գործունեության ապահովման խնդիրները:

Նշված նորմերի գործողության արդյունքում ձեւավորվել է հետևյալ իրավակիրառական պրակտիկան: Մինչ պարտադիր նորմերի կատարմանն ուղղված աշխատանքներ կատարելը բազմաբնակարան շենքի կառավարման մարմինը կազմում է ընթացիկ փարում շենքում կատարվող աշխատանքների վերաբերյալ ակտ, այնուհետև՝ նախահաշիվ, եւ նախահաշվային գումարն ընդգրկվում է շենքի փարեկան բյուջեի մեջ: Այն քննարկվում եւ հաստատվում է ընդհանուր ժողովում: Բյուջեի հաստատումից հետո, դրա ծախսային մասը բաժանվում է սեփականատերերի վրա՝ ըստ ընդհանուր բաժնային սեփականության մեջ նրանց բաժնեմասի չափի: Այս փաստն արձանագրվում է համատիրության ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշմամբ, որում սահմանվում է պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարների չափը:

Ինչպես վերոհիշյալ իրավակարգավորումը, այնպես էլ դրա հիման վրա ձեւավորված իրավակիրառական պրակտիկան վկայում է, որ շենքի կառավարման մարմինը ոչ թե վերացականորեն որոշում է սահմանում է պարպաղիր նորմերի կարարմանն ուղղված վճարների չափը, այլ որոշակի օբյեկտիվ նախադրյալներից, մասնավորապես, արդեն կանխորոշված աշխատանքների նախահաշվից ելնելով՝ այդ աշխատանքների արժեքն օրենքով սահմանված սկզբունքին համապատասխան բաշխում է սեփականատերերի միջև:

Նկատի ունենալով, որ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՏՏ օրենքի 10 հոդվածի 4-րդ կետը սահմանում է վճարի չափը հաշվարկելու ելակետային սկզբունքը, որ պարպաղիր նորմերի կարարման համար նախատեսված յուրաքանչյուր կոնկրետ աշխատանքի համար կազմվում է նախահաշիվ, եւ առանձին աշխատանքների նախահաշվային գումարներն ընդգրկվում են համարիտության ընդհանուր ժողովի կողմից հաստատվող՝ շենքի տարեկան բյուջեի մեջ, ինչպես նաեւ հաշվի առնելով այդ միջոցառումների ու աշխատանքների իրականացման ապահովմանն ուղղված վճարի բնույթն ու բովանդակությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված գործոնների համադրությամբ արդեն իսկ կանխորոշվում է խնդրո առարկա վճարի չափը: Այսինքն՝ մի կողմից առկա է կառավարության կողմից սահմանված պարպաղիր նորմերի ընդհանուր շրջանակ եւ այդ շրջանակից կոնկրետ բազմաբնակարան շենքի սեփականատերերը հաստատում են նրանք, որոնք համապատասխանում են իրենց շենքի առանձնահատկություններին եւ կարիքներին, մյուս կողմից՝ պարպաղիր նորմերի կարարման համար նախատեսված յուրաքանչյուր կոնկրետ աշխատանքի համար կազմվում է սեփականատերերի քննարկմանն է ներկայացվում նախահաշիվ, նախահաշվային գումարներն ընդգրկվում են շենքի տարեկան բյուջեում, եւ միաժամանակ հստակեցված է այդ միջոցառումներին եւ աշխատանքներին սեփականատերերի մասնակցության չափը հաշվարկելու ելակետային սկզբունքը: Նշված գործոններն իրենց համադրության մեջ արդեն իսկ ենթադրում են խնդրո առարկա վճարի չափը:

Պարպաղիր նորմերի կարարմանն ուղղված վճարների բնույթով պայմանավորված՝ այդ վճարների չափը չի կարող սահմանվել վերացականորեն: Այդ չափը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է որոշվի կոնկրետ բազմաբնակարան շենքի համար կոնկրետ աշխատանքների նախահաշվից ելնելով: Այս փրամաբանությունից շեղումը կհակասի պարպաղիր նորմերի կարարմանն ուղղված՝ սեփականատերերի կողմից վճարվող վճարների՝ որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների փարրի, բնույթին եւ բովանդակությանը:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել նաեւ, որ սեփականատերերի կամքը եւ համաձայնությունը դրսեւորվում է պարպաղիր նորմերի կարարման ապահովման ողջ գործընթացում: Սեփականատերերն են ընտրում շենքի կառավարման մարմինը, նրանք են որոշում այն միջոցառումների եւ աշխատանքների շրջանակը, որոնք ենթակա են պարպաղիր կարարման, սեփականատերերն են որոշում վճարների վճարման կարգն ու ժամկետները, և, վերջապես, սեփականատերերն ազատ են որոշելու պարպաղիր նորմերի պահպանմանն իրենց մասնակցության ձեւը կամ վճարելով համա-

պարասխան վճարը կամ համապարասխան աշխատանքներն անձամբ կատարելով: Իսկ սեփականատերերի ընդհանուր ժողովին է պարկանում բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բնագավառում **ցանկացած հարցի լուծման իրավունքը**, բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով համարվում են կառավարման մարմնի բացառիկ լիազորությունը (հոդվ. 11., կեր 1):

Օրենքի դրույթի որոշակիության եւ կանխարեսելիության գնահատականը կարող է բրվել միայն րվյալ դրույթը ողջ իրավակարգավորման համարեքսսրում դիարարկելու դեպքում: Մահմանադրական դարարանը վիճարկվող դրույթը դիարարկելով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՏՏ օրենքի ողջ իրավակարգավորման համարեքսսրում՝ գսնում է, որ այն բավարարում է օրենքի որոշակիությանը եւ կանխարեսելիությանը ներկայացվող պահանջները: Միաժամանակ, վիճարկվող 10 հոդվածի 3-րդ - մասում ներառված միջանկյալ դարձվածքը՝ «Որ շինության սեփականատերերի ժողովի կողմից սույն օրենքով սահմանված կարգով հասարաված նորմերից ելնելով,», խմբագրական հսրակեցման անհրաժեշտություն ունի:

9. Միաժամանակ, սահմանադրական դարարանն արձանագրում է, որ օրենսդրության մեջ հեերետոականություն չի դրսետորվել «պարարադիր վճարներ» եւ «պարարադիր նորմերի կարարմանն ուղղված վճարներ» հասկացությունների օգրագործման հարցում մի դեպքում միեւնույն վճարը հիշարակելով որպես պարարադիր վճար, մեկ այլ դեպքում՝ որպես պարարադիր նորմերի կարարմանն ուղղված վճար: Այսպես, օրենքի 9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընդհանուր բաժնային սեփականության յուրաքանչյուր սեփականատեր պարարավոր է իր բաժնին համաչափորեն մասնակցել պարարադիր նորմերի պահանջների կարարմանն ուղղված ծախսերին, հարկերին, րուրքերին եւ մյուս վճարներին, ինչպես նաեւ գույքի պահպանման եւ շահագործման այլ ծախսերին: Օրենքի 10 հոդվածի 3-րդ մասում ամրագրված է. «Շինության բոլոր սեփականատերերը պարարավոր են, շինության սեփականատերերի ժողովի կողմից սույն օրենքով սահմանված կարգով հասարաված նորմերից ելնելով, կարարել համապարասխան վճարումներ կամ իրենց ուժերով ու միջոցներով իրականացնել պարարադիր նորմերի պահանջները»: Օրենքի 11 հոդվածի 7-րդ մասի ժդ) եւ ժե) կերերում որպես շինությունների սեփականատերերի ընդհանուր ժողովի լիազորություններ մարանշված են պարարադիր նորմերի գծով շինությունների սեփականատերերից գանձվող պարարադիր վճարների վճարման կարգի եւ ժամկերների սահմանումը եւ պարարադիր վճարներից դուրս շինությունների սեփականատերերից գանձվող վճարների չափի, վճարման կարգի եւ ժամկերների սահմանումը: Օրենքի 15 հոդվածի 2-րդ մասի ա) կերի համաձայն՝ շինության սեփականատերերը պարարավոր են կարարել սահմանված պարարադիր վճարները, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով հասարաված այլ վճարները: «Տամարիրության մասին» ՏՏ օրենքի 24 հոդվածի համաձայն՝ համարիրության անդամները պարարավոր են օրենքով եւ համարիրության կանոնադրությամբ սահմանված կարգով կարարել պարարադիր նորմերի կարարմանն ուղղված վճարներ եւ այլ վճարներ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասփանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 101 հոդվածի 6-րդ կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասփանի Նանրապետության օրենքի 1, 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայասփանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՆՏ օրենքի 10 հոդվածի 3-րդ կետը սույն որոշման մեջ ՆՏ սահմանադրական դատարանի արքահայրած իրավական դիրքորոշումների շրջանակներում համապատասխանում է Նայասփանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասփանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

26 մայիսի 2009 թվականի
ՍԴՈ- 804

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ
«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՆԱՅԱՍՏԱՆԻ
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 12 ԵՎ 14 ՆՈՂՎԱԾՆԵՐԻ՝
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

30 հունիսի 2009թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարոթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (գեկուցող), Վ. Նովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պոդոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող կողմի ներկայացուցիչ՝ ՆՏ Ազգային ժողովի պարզամավոր, ՆՏ Ազգային ժողովի փարածքային կառավարման եւ փեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ն. Մարգարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՏ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն ՆՏ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի եւ 101 հոդվածի 3-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 25 եւ 68 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Ազգային ժողովի կանոնակարգ» Նայաստանի Նանրապետության օրենքի 12 եւ 14 հոդվածների՝ ՆՏ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի թվով 35 պարզամավորների՝ 11.03.2009թ. սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով գործով գեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի ներկայացուցիչների բացաբությունները, հեփազոտելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, այդ թվում՝ դիմողի կողմից

ներկայացված միջնորդագիրը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Յ.

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՆ օրենքը ՆՆ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002 թվականի փետրվարի 20-ին, Նայասպանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2002 թվականի մարտի 21-ին եւ ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 12-ին:

2. Օրենքի 12 հոդվածը սահմանում է պարզամավորի լիազորությունների դադարման հիմքերը: Նամաձայն նշված հոդվածի 1-ին մասի՝ «Պարզամավորի լիազորությունները դադարում են, եթե՝

ա) ավարտվել է Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը.

բ) արձակվել է Ազգային ժողովը.

գ) նա խախտել է Սահմանադրության 65-րդ հոդվածի առաջին մասի պահանջը.

դ) նա կորցրել է Նայասպանի Նանրապետության քաղաքացիությունը.

ե) մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից նրա բացակայելը, սույն օրենքի 99-րդ հոդվածով սահմանված կարգով, համարվել է անհարգելի.

զ) նա դատապարտվել է ազատազրկման.

է) օրինական ուժի մեջ է մտել նրան անգործունակ ճանաչելու մասին դատարանի որոշումը.

ը) ուժի մեջ է մտել նրա ընտրության գրանցումը չեղյալ հայտարարելու մասին սահմանադրական դատարանի որոշումը.

թ) նա Կրկին է հրաժարական՝ սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով.

ժ) նա մահացել է»:

Օրենքի 14 հոդվածը սահմանում է խմբակցությունների սպեղծման, խմբակցությունից պարզամավորի դուրս գալու, խմբակցության գործունեության դադարման եւ վերականգնման կարգը: Նոդվածի 3-րդ մասով, մասնավորապես, սահմանվում է. «Պարզամավորը կարող է դուրս գալ խմբակցությունից՝ այդ մասին գրավոր փեղյակ պահելով համապատասխան խմբակցության ղեկավարին»:

3. Ըստ դիմող կողմի՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՆ օրենքի վիճարկվող 12 հոդվածը չի պարունակում որեւէ նորմ, ըստ որի համամասնական ընտրակարգով ընտրված պարզամավորի լիազորությունների դադարման հիմք կարող է հանդիսանալ նաեւ պարզամավորի դուրս գալը եւ/կամ հեռացումը համապատասխան կուսակցությունից ու խմբակցությունից: Մինչդեռ համամասնական ընտրակարգն ունի իր առանձնահատկությունները, որոնք հիմնականում դրսեւորվում են նրանում, որ այս ընտրակարգի դեպքում ժողովուրդը կոնկրետ քվեարկում է քաղաքական միավորի՝ կուսակցության կամ

դաշինքի օգտին՝ հավանություն փայլով վերջիններիս նախընտրական ծրագրին եւ գաղափարական ուղեգծին՝ արդյունքում հնարավորություն ստանալով իրականացնելու իր իշխանությունը փվյալ քաղաքական միավորի կողմից ձեւավորված խմբակցության միջոցով: Նամամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքում ժողովուրդը, ՏՏ - Սահմանադրության 2 հոդվածին համապատասխան, իր իշխանությունը պատվիրակում է ոչ թե այս կամ այն թեկնածուին, այլ կոնկրետ քաղաքական ուժին, միավորին, կուսակցությանը՝ որոշակի ծրագրեր իրականացնելու նպատակով: Ներկայումս, համամասնական ընտրակարգով ընտրված պարզամավորի՝ փվյալ խմբակցությունից դուրս գալու հանգամանքը վերջինիս գրկում է ժողովրդի կողմից պատվիրված ծրագրերն ամբողջական ծավալով իրականացնելու հնարավորությունից: Ըստ այդմ՝ համամասնական ընտրակարգով ընտրված պարզամավորի՝ խմբակցությունից դուրս գալը, որի հնարավորությունն ամրագրված է օրենքի 14 հոդվածում, պետք է հիմք հանդիսանա նրա լիազորությունների դադարման համար:

Դիմող կողմը վկայակոչում է, որ մինչև 1997թ. մայիս ամիսը «Ազգային ժողովի կանոնակարգ» ՏՏ օրենքը՝ որպես համամասնական ընտրակարգով ընտրված պարզամավորի լիազորությունների դադարման հիմք, ի թիվս այլոց, նախատեսում էր փվյալ խմբակցությունից պարզամավորի դուրս գալու հանգամանքը: Ներկայումս, ըստ դիմողի, երբ ընտրված է համամասնական ընտրակարգով ընտրվող պարզամավորների թվաքանակն ավելացնելու քաղաքական ուղեգիծ, առաջանում է նման հիմքի վերականգնման օբյեկտիվ անհրաժեշտություն, որպեսզի հնարավոր լինի փվյալ խմբակցության գոյության ապահովումը: Նման հիմքի առկայությունը պահանջվում է նաև քաղաքական համակարգի կայացումն ապահովելու, փարսբնույթ ներագդեցությունների արդյունքում խորհրդարանական քաղաքական ուժերի հարաբերակցության կամայական փոփոխությունը կանխարգելելու անհրաժեշտությունից ելնելով:

Դիմողի պնդմամբ՝ ՏՏ Սահմանադրության 67 հոդվածի դրույթն առ այն, որ պարզամավորի լիազորությունները դադարում են նրա հրաժարականի դեպքում, նույնպես ենթադրում է, որ համամասնական ընտրակարգով ընտրված պարզամավորն իր խմբակցությունից դուրս գալու դիմումի հետ մեկտեղ պետք է ներկայացնի հրաժարականի դիմումը:

Դիմողի կարծիքով, չնայած նրան, որ ՏՏ Սահմանադրության 66 հոդվածը մերժում է հրամայական մանդատի ինստիտուտը, այդուամենայնիվ, այն դեպքում, երբ խախտվում է ՏՏ Սահմանադրության անփոփոխելի 2 հոդվածում ամրագրված ժողովրդի կողմից իր ընտրյալների միջոցով իշխանության իրականացման համաժողովրդական սկզբունքը, օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում օրենսդրությամբ՝ որպես պարզամավորի լիազորությունների դադարման հիմք ամրագրել խմբակցությունից փվյալ պարզամավորի դուրս գալու հանգամանքը:

Ըստ դիմող կողմի՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՏՏ օրենքի 12 եւ 14 հոդվածները հակասում են ՏՏ Սահմանադրության 2-րդ, 7-րդ, 30-րդ եւ 67-րդ հոդվածների պահանջներին:

4. Պատասխանողը նշում է, որ ՆՏ Սահմանադրության 67 հոդվածի 1-ին մասում սահմանվել են այն դեպքերը, որոնց պարագայում դադարում են Ազգային ժողովի պարզամավորի լիազորությունները: Միաժամանակ, ի թիվս Սահմանադրության հիշյալ հոդվածով ամրագրված դեպքերի, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքի 12 հոդվածով սահմանվել են Ազգային ժողովի պարզամավորի լիազորությունների դադարման լրացուցիչ հետերյալ դեպքերը՝ եթե ուժի մեջ է մտել պարզամավորի ընտրության գրանցումը չեղյալ հայարարելու մասին սահմանադրական դատարանի որոշումը կամ եթե պարզամավորը մահացել է: Իսկ նույն օրենքի 14 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պարզամավորը կարող է դուրս գալ խմբակցությունից՝ այդ թվում գրավոր տեղյակ պահելով համապատասխան խմբակցության ղեկավարին:

Պատասխանողի պնդմամբ՝ ՆՏ Սահմանադրության եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքի հիշարակված հոդվածներում ամրագրված նորմերի բովանդակությունից բխում է, որ պարզամավորական խմբակցությունից պարզամավորի դուրս գալը կամ կուսակցությունից ու պարզամավորական խմբակցությունից պարզամավորին հեռացնելը չեն կարող դիտարկվել որպես հիմք պարզամավորի լիազորությունների դադարման համար:

Պատասխանող կողմը վկայակոչում է նաեւ այն հանգամանքը, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքի 12 եւ 14 հոդվածների սահմանադրականության խնդիրը դիմող կողմը պայմանավորում է օրենքի բացի առկայության հանգամանքով: Փաստորեն, դիմողն իրականում վիճարկում է ոչ թե «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքի 12 եւ 14 հոդվածների սահմանադրականության հարցը, այլ մտաբանում է վիճարկվող հոդվածների լրացման անհրաժեշտությունը: Ընդ որում, սահմանադրականության նշված հարցի ներկայացումը նպատակ է հետապնդում **«սպեղծել կոնկրետ իրավական հիմքեր, կուսակցության նախընտրական ծրագրերին եւ քաղաքական գծին հակառակ դիրքորոշում դրսևորող համամասնական ընտրակարգով ընտրված ԱԺ պարզամավորներին կուսակցությունից եւ խմբակցությունից հեռացնելու համար»:**

Վերոգրյալի հիման վրա պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթները չեն հակասում ՆՏ Սահմանադրությանը եւ առաջարկում է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքի 12 եւ 14 հոդվածները ճանաչել ՆՏ Սահմանադրությանը համապատասխանող:

5. Վերլուծելով հիմնահարցի վերաբերյալ միջազգային սահմանադրական պրակտիկան եւ եվրոպական սահմանադրական զարգացումների հիմնական միտումները՝ ՆՏ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հրամայական մանդատն անհարիր է ժողովրդավարական իրավական համակարգերին: Այն խորք լինելով Եվրոպական ժողովրդավարություններին՝ արգելվում է մի շարք երկրների սահմանադրական նորմերով (Անդորրա, հոդվ. 53, Բուլղարիա, հոդվ. 67, Գերմանիա, հոդվ. 38, Իսպանիա, հոդվ. 67, Իրալիա, հոդվ. 67, Լիտվա, հոդվ. 59, Խորվաթիա, հոդվ. 74, Նայաստան, հոդվ. 66, Մոլդովա, հոդվ. 68, Չեխիա, հոդվ. 26, Ռումինիա, հոդվ. 66 եւ այլն):

Ներկայացուցչական ազատ մանդատի անհրաժեշտության գաղափարն ազատական ժողովրդավարական իրավական համակարգերում արմատավորվեց աստիճանաբար եւ դարձավ կարեւոր երաշխիք երկրում սահմանադրական ժողովրդավարություն հաստատելու համար, որտեղ իշխանության լեգիտիմության աղբյուրը ժողովուրդն է: **Ներկայացուցչական ազատ մանդատի էությունն այն է, որ պարզամտները ներկայացնում են ոչ թե ու ոչ միայն իրենց ընտրողներին, այլ ընդհանրական սուբյեկտ՝ ժողովրդին, ում կամքը գերակա է տեղական ընտրագանգվածի կամքի նկատմամբ:**

Միաժամանակ, միջազգային պրակտիկայում առկա է մեկ այլ ինստիտուտ, որը՝ առնչվելով հրամայական մանդատի ինստիտուտին, այնուամենայնիվ, փարբեր իրավական բովանդակություն ունի: **Դա մանդատի գործողության դադարեցումն է կուսակցական պարկանելության փոփոխության հերեւանքով:** Այս ինստիտուտը վերաբերում է համամասնական ընտրական համակարգին եւ փարբեր դրսետորմներ ունի՝ կապված բուն ընտրական համակարգի առանձնահատկությունների հետ: Այն երկրներում, որտեղ գործում է մեծամասնական-համամասնական խառն ընտրական համակարգ ու որոնցում առկա է կայուն եւ զարգացած քաղաքական կառուցակարգ, ազատ մանդատի սկզբունքը փարածվում է բոլոր պարզամտների վրա եւ կուսակցական պարկանելության փոփոխությունը նման խնդիր չի հարուցում: Խնդիրն առկա է այն պարագայում, երբ պարզամտության թեկնածուն ընտրական քվեաթերթիկում ներկայացված չէ, եւ ընտրողը նրա վերաբերյալ որեւէ դիրքորոշում չի արտահայտել:

6. Միջազգային սահմանադրաիրավական պրակտիկան վկայում է, որ ընտրական օրենսդրությամբ նախատեսված համամասնական ընտրակարգը կարող է լինել նաեւ այնպիսին, որ ընտրողը ձայնը փայխս է որեւէ քաղաքական ուժի՝ նրա քաղաքական կողմնորոշումների ու հանրությանը ներկայացրած ծրագրային մտքեցումների հիման վրա՝ առանձին դիրքորոշում չարտահայտելով կուսակցության համամասնական ընտրական ցուցակներում ներկայացված անձանց վերաբերյալ: **Նման պարագայում քաղաքական ուժն է ժողովրդի կողմից պարվիրակված քաղաքական իշխանության կրողը՝ առանձին կամ քաղաքական կոալիցիա կազմելու ճանապարհով: Նման ընտրակարգում ժողովրդի վստահությունը ոչ թե անձի, այլ քաղաքական ուժի ու նրա կողմից ներկայացված ծրագրային մտքեցումների նկատմամբ է: Այդ վստահությամբ է պայմանավորված նաեւ ընտրությունների ու դրա արդյունքում ձեւավորվող իշխանության լեգիտիմությունը: Քաղաքական մշակույթն այն մակարդակին պետք է լինի, որ ընտրողը կարողանա կողմնորոշվել հենց նման ծրագրային մտքեցումներով: Նման ընտրակարգի պայմաններում համամասնական կարգով թեկնածու են գրանցվում կուսակցությունները կամ նրանց դաշինքները, որոնք նախընտրական քարոզչությունը վարում են այնպիսի ծրագրային մտքեցումների հիման վրա, որոնք ընտրողին պետք է կողմնորոշեն օրենսդիր պետաիշխանական գործառնջող փվյալ կուսակցությանը վստահելու կամ չվստահելու հարցում: Դրանով է նաեւ որոշվում քաղաքական ուժի իրական տեղն ու դերն օրենսդիր իշխանության համակարգում:**

Այսպիսի ընտրակարգ է գործում նաև Նայասպանի Նանրապետությունում: Նամաձայն ՆՆ ընտրական օրենսգրքի (հոդվ. 7)՝ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունները համարվում են համապետական ընտրություններ: Ընդ որում, 90 պատգամավոր ընտրվում է համամասնական ընտրակարգով, հանրապետության ամբողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամանդապ ընտրատարածքից՝ կուսակցությունների ընտրական ցուցակներով առաջադրված պատգամավորության թեկնածուների թվից (հոդվ. 95, մաս 2): Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեն կուսակցությունները եւ կուսակցությունների դաշինքները (հոդվ. 99, մաս 1): Կուսակցություններն Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցելու հայրը ներկայացնում են կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ իրենց մշտապես գործող մարմնի որոշմամբ: Կուսակցությունների դաշինքներն Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցելու հայրը ներկայացնում են Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ դաշինքի անդամ կուսակցությունների մշտապես գործող մարմինների վավերացրած որոշմամբ (հոդվ. 100, մաս 1):

Օրենսգիրքը նաև ուղղակի դրույթ է պարունակում, որ **համամասնական ընտրակարգով Ազգային ժողովում մանդատներ ստանում են կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) (հոդվ. 100, կետ 8)**: Միաժամանակ, օրենսգրքի 115 հոդվածը նախատեսում է, որ Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգի համար նախատեսված մանդատները բաշխվում են այն կուսակցությունների եւ կուսակցությունների դաշինքների **ընտրական ցուցակների միջև**, որոնք ստացել են վավեր քվեաթերթիկների ընդհանուր թվի եւ անճշտությունների թվի գումարի համապատասխանաբար առնվազն՝ կուսակցության դեպքում՝ 5, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ 7 փոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ:

Ընտրական օրենսգիրքը նախատեսում է նաև (հոդվածներ 99, 100), որ կուսակցություններն են կազմում ու ներկայացնում իրենց պատգամավորության թեկնածուների ցուցակները՝ **որոշելով այդ ցուցակում յուրաքանչյուրի փողը**: Ընտրողն այս հարցում որևէ մասնակցություն չունի: Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների քվեաթերթիկում նշվում են կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) անվանումները՝ այբբենական հերթականությամբ, ինչպես նաև ընտրական ցուցակի առաջին երեք թեկնածուների ազգանունները, անունները եւ հայրանունները (հոդվ. 114, մաս 2):

7. Միջազգային պրակտիկայի վերլուծությունը վկայում է նաև, որ այնպիսի ընտրական համակարգերի պարագայում, ինչպիսին առկա է Նայասպանում, համամասնական ընտրակարգով մանդատն ստանալուց հետո իրենց կուսակցությունները լքելու կամ կուսակցական պարկանելությունը փոխելու հանգամանքը **պառլամենտական կայունության եւ ընտրողների կատարած ընտրությանը հավատարիմ մնալու փեսանկյունից** դառնում է ժամանակակից ժողովրդավարությունների առջև ծառայած լուրջ հիմնախնդիր: Նման պրակտիկան հանգեցնում է նրան, որ **ընտրողների կայաց-**

րած որոշումը հաճախ գանգվածաբար փոփոխության է ենթարկվում: Այդ խնդրի լուծման եղանակների ընտրությունը, բնականաբար, մեծապես պայմանավորված է ընտրական համակարգերի առանձնահատկություններով:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տարբեր երկրներ տարբեր միջոցներ են գտել տվյալ հիմնախնդիրը լուծելու համար: Եթե Իսպանիայում դա արվում է կուսակցությունների փոխհամաձայնությամբ ստորագրված դաշնագրի հիման վրա, ապա մի շարք այլ երկրներում փորձ է արվում հարցի լուծումը գտնել օրենսդրական կարգավորումների մակարդակով: ՆՏ սահմանադրական դատարանը գտնում է, որ այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք հանգամանքներ:

նախ. պատշաճ գնահատել կուսակցությունների տեղն ու դերը երկրի քաղաքական համակարգում.

մասնավորապես, ազգային խորհրդարաններում կուսակցությունների դերի կարեւորությունը հիմնականում հանգում է նրան, որ դրանք ապահովում են պետության եւ հասարակության փոխազդեցությունը եւ ընտրողների շահերը լիարժեքորեն արտահայտում են միայն այն դեպքում, երբ խորհրդարանում պատշաճ կերպով ներկայացված են հասարակության մեջ իրենց ունեցած ազդեցությանը համապատասխան:

Կուսակցությունների մասին ցանկացած դասական սահմանում ելնում է այն ակնհայտ ճշմարտությունից, որ տվյալ միավորման գործունեության նպատակը հասարակության եւ պետության քաղաքական կյանքին մասնակցելն է, քաղաքական իշխանության մաս կազմելը, քաղաքական պատասխանատվություն ստանձնելն ու այն իրականացնելը: Անառարկելի է, որ չի կարող լինել ժողովրդավարական պետական համակարգ՝ առանց անհրաժեշտ քաղաքական կառուցակարգերի: Չի կարող լինել նաեւ հասարակական կայունություն՝ առանց **կարողունակ քաղաքական ուժերի կողմից** երկրի այսօրվա ու վաղվա համար ժողովրդավարական եղանակներով քաղաքական պատասխանատվություն ստանձնելու: **Կուսակցությունն իր հանրային առաքելությունը կարող է իրականացնել միայն այն դեպքում, երբ ոչ միայն ծրագրային ցանկություն, այլեւ անհրաժեշտ ու բավարար կարողունակություն ունի քաղաքական պատասխանատվություն ստանձնելու համար, եւ դա տեսանելի ու գնահատելի է ընտրողի կողմից:** Նամամասնական ընտրակարգով իրականացվող ընտրությունները կոչված են ոչ միայն ձեւավորելու կայուն ու գործունակ օրենսդիր իշխանություն, այլեւ վճռորոշ դեր ունենալու երկրի քաղաքական կառուցակարգի կայացման ու ամրապնդման գործում:

Միջազգային պրակտիկան վկայում է, որ ընտրական օրենսդրությամբ նախատեսված, այսպես կոչված, «մաքուր» համամասնական ընտրակարգն այնպիսին է, որ ընտրողը ձայնը տալիս է որեւէ քաղաքական ուժի՝ նրա քաղաքական կողմնորոշումների ու հանրությանը ներկայացրած ծրագրային մոտեցումների հիման վրա:

Երկրորդ՝ հաշվի առնել մեծամասնական եւ համամասնական ընտրակարգերի ոչ միայն տեխնոլոգիական (տեխնիկականազմակերպական) առանձնահատկությունները, այլեւ դրանց դերը քաղաքական իշխանության ձեւավորման եւ քաղաքական պատասխանատվություն ստանձնելու եւ իրացնելու գործում.

համամասնական ընդհանուր հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն ապահովում է քաղաքական շահերի և նախապատվությունների առավել լիարժեք ներկայացուցչություն՝ արտացոլելով հասարակության քաղաքական կամքը, հանդիսանալով որպես հասարակության ժողովրդավարացման կարեւորագույն ինստիտուտներից մեկի՝ բազմակուսակցականության կայացման և զարգացման հզոր խթան:

Միաժամանակ, Նայաստանում արմատավորված համամասնական ընդհանուր գով ընդհանուրությունների դեպքում ընդհանուր ոչ թե մանդատը փախի է կոնկրետ ներկայացուցչին, այլ արտահայտում է իր քաղաքական նախապատվությունը, ընդհանուր է այն քաղաքական ուժին, որին ինքը նախընտրում է: Ներկայացուցչություններում ընդհանուր կամքի արտահայտության արդյունքը պետք է հանդիսանա այն քաղաքական ուժի առկայությունը խորհրդարանում, որին ընդհանուր փոխ է իր քաղաքական նախապատվությունը, և հետագայում այդ կամքի արտահայտման արդյունքը պահպանելու միջոց կարող է հանդիսանալ խմբակցությունից կամավոր դուրս գալու հիմքով մանդատը վայր դնելը (երբ կուսակցության ցուցակի ձեւավորման վրա ընդհանուր որեւէ ազդեցություն չունի կամ թեկնածուներ կայացված չի եղել քվեաթերթիկում), քանզի նման գործընթացի լայնամասշտաբ ծավալների դեպքում ընդհանուր կամքն այլևս արտահայտված չի լինի քաղաքական ուժերի խորհրդարանական հարաբերակցությունում, ավելին՝ փոքրի կունենա ընդհանուր կամքի աղավաղում և խեղաթյուրում:

Երրորդ՝ պետության զարգացման քաղաքական ուղենիշները ճշգրտելու և դրանց վերաբերյալ ընդհանուրների դիրքորոշումը հստակեցնելու հարցում կուսակցությունների և քաղաքական գործիչների ծրագրային մոտեցումների անհրաժեշտությունը և դերը պետության զարգացման ծրագրային մոտեցումների մշակման և ապահովման գործում:

Ժողովուրդը՝ ընդհանուրությունների միջոցով որոշելով, թե խորհրդարանը քաղաքական ուժերի ինչպիսի հարաբերակցությամբ պետք է աշխատի, դրանով իսկ օրենսդիր մարմնին պատվիրակում է իրականացնել օրենսդրական գործունեություն՝ իր իսկ նախընտրած քաղաքական կողմնորոշումներին համապատասխան: Որեւէ կոնկրետ կուսակցության օգտին քվեարկելիս ժողովուրդն ակնկալում է որոշակի ուղղվածություն ունեցող քաղաքականության կյանքի կոչում: Իսկ ընդհանուրությունների պարբերականությունը նպատակ է հետապնդում հնարավորություն փոխ ժողովրդին որոշակի ժամանակահատված հետո գնահատել քաղաքական ուժերի գործունեությունը՝ եղածին հավանություն փոխում կամ նախապատվությունը այլ քաղաքական ուժի փոխում համար:

Չորրորդ՝ ընդհանուրների կողմից իրենց պետաիշխանական իրավունքի պարզաբանման ժամանակ այն սուբյեկտի ճիշտ ընդհանուրությունը, որին պարզաբանվում է այդ իրավունքի իրացումը:

այն, որ ինչպես մեծամասնական ընդհանուրագույն ընդհանուրությունների, այնպես էլ համամասնական ընդհանուրագույն ընդհանուրությունների դեպքում մանդատի աղբյուրը ժողովուրդն է, անվիճելի է: Սակայն հիմնախնդրի բուն էությունը և դրա իրավազափոխությունը բացահայտելու համար հարկ է դրան մոտենալ ոչ միայն այն փաստակցությունից, թե ո՞րն է

մանդափի աղբյուրը, այլ նաև՝ թե այդ աղբյուրը՝ ժողովուրդը, ու՛մ է պատվիրակել պեֆախիշխանական իր իրավունքի իրացումը եւ ի՛նչ նպատակով է պատվիրակել: Պատգամավորների լիազորությունների դադարեցման խնդրո առարկա հիմքի իրավաչափությունը կարող է գնահատվել միայն վերոնշյալ երեք հարցերի պատասխանների եռամիասնության շրջանակներում: Այդ հարցերի պատասխանների արդյունքում պարզ կդառնա, որ պատգամավորի մանդափի գործողության դադարեցման խնդրո առարկա հիմքը պատգամավորի՝ ոչ թե կուսակցությանը հաշվետու լինելու, այլ հենց իր մանդափի աղբյուրին՝ ժողովրդին հաշվետու լինելու դրսևորում է: Նման միջոցով ապահովվում է այն պատգամավորի քաղաքական պատասխանատվությունը ժողովրդի առջև, ով շեղվել է այն քաղաքական ուղեգծից, որի իրացման համար ժողովուրդը պատվիրակել էր նրան պեֆախիշխանական իր իրավունքի իրացումը: Կուսակցության կողմից ծրագրային ուղեգծից շեղվելու հանգամանքի վերաբերյալ ժողովուրդն իր դիրքորոշումն արտահայտում է հերթական ընտրությունների ժամանակ: Այս առումով սկզբունքային նշանակություն ունի նաև ընտրությունների պարբերականության ժամկետային սահմանների ճիշտ որոշումը:

Տինգերոդը՝ հարկապես անցումային երկրներում ժողովրդի քաղաքական կամքի ազատ դրսևորման արդյունքում ձևավորված պառլամենտական քաղաքական հարաբերակցության վրա իշխանական ազդեցության հեֆազա բացառումը եւ իշխանությանը հանո արտաընտրական նոր հարաբերակցության կանխումը.

ՏՏ սահմանադրական դատարանը ելնում է այն սկզբունքային դիրքորոշումից, որ ամեն դեպքում ընտրողների կամքի արտահայտումը չպետք է խաթարվի: Սահմանադրական դատարանը գտնում է, որ խորհրդարանական խմբակցությունը լքելն արգելող նորմերը միտված են հենց նման հնարավորության կանխարգելմանը եւ ապահովում են այդ խնդրի լուծումը:

Անհրաժեշտ է համամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորների փեղը թափուր մնալու ընթացակարգը եւ խմբակցությունը լքելուն վերաբերող նորմերը դիփարկել համակարգային փոխկապակցվածության մեջ: Տամամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորների փեղը թափուր մնալու դեպքում այն լրացվում է նույն ցուցակի հաջորդ թեկնածուի կողմից: Ինչպես պատգամավորի թափուր փեղը լրացնելու այս կարգը, այնպես էլ կուսակցական պատկանելությունը փոխելու հիմքով մանդափի գործողության դադարեցումն այն հիմնական իրավական միջոցներն են, որոնք ապահովում են մինչևի հաջորդ խորհրդարանական ընտրությունները խորհրդարանում քաղաքական այն հարաբերակցության պահպանումը, որն սկզբնապես ձևավորվել է ընտրություններում ժողովրդի կամքի արտահայտման արդյունքում: Խորհրդարանում քաղաքական այն հարաբերակցությունը, որը սահմանվում է ըստ ժողովրդի կամսարտահայտության, չի կարող փոփոխություն կրել փվյալ գումարման խորհրդարանի գործունեության ընթացքում: **Տերեարար, պատգամավորի լիազորությունների դադարեցման խնդրո առարկա հիմքն իրավաչափ միջոց է այդ նպատակն ապահովելու համար:** Այլապես նման հիմքի բացակայության պայմաններում կստացվի, որ քաղաքական կուսակցությո-

յունների գոյությունը, որպես ժողովրդի քաղաքական կամքի ձեւավորման եւ արտահայտման միջոց, միանգամայն շինծու երեւոյթ է, քանի որ հենց ընտրություններից հետո կարող են տեղի ունենալ պարզամտական խմբերի ու խմբակցությունների այնպիսի վերադասավորումներ, որ ընտրությունների արդյունքում ձեւավորված օրենսդիր մարմինը չարտահայտի ժողովրդի կամքը: Այսինքն՝ ժողովրդի կամքի արտահայտությունը լինի որոշակի խորհրդարանական քաղաքական հարաբերակցություն, որը, սակայն, հակառակ ժողովրդի կամքի, վերածվի մեկ այլ հարաբերակցության, ինչի արդյունքում ձեւավորվի օրենսդիր մարմին, որը չի արտացոլի ընտրությունների իրական արդյունքները: Մինչդեռ ընտրական համակարգի գլխավոր առաքելություններից մեկն այն է, որ կարողանա ապահովել ընտրովի մարմիններում քաղաքական ուժերի հարաբերակցությունը՝ ընտրողների իրական աջակցությանը համամասնորեն:

Վեցերորդ՝ կուսակցական պարկանելությունը փոխելու հիմքով մանդատի գործողության դադարեցման ինստիտուտի էության եւ բովանդակության պարամական զարգացումը.

միջազգային պրակտիկան վկայում է, որ, այսպես կոչված, կուսակցությունների դասալքումը բավականին փարածված եւ խնդրահարույց պրոբլեմ է: Օրինակ, ըստ Եվրախորհրդի Վեներիկի հանձնաժողովի փորձագետների վերլուծության, Իտալիայում 1996-2001թթ. պարզամտորների 10 փոխում փոխել են իրենց կուսակցությունը: Ռուսաստանի Պեքական դումայում 1993-1995թթ. այդ թիվն հասել է 31 փոխումի, Չեխիայի պառլամենտում 1992-1996թթ. այն կազմել է 40 փոխում: Նեդերլանդներում 1967-73թթ. 2700 պարզամտոր է փոխել կուսակցությունը, որոնցից 212-ը նոր կուսակցությունում դարձել են նախարարներ: Ուկրաինայում 1998-2006թթ. պարզամտորների 60 փոխումն առնվազն մեկ անգամ փոխել է կուսակցությունը, իսկ առանձին պարզամտորներ փոխել են իրենց խմբակցությունը մինչեւ 10 անգամ:

Նայաստանում մինչեւ 1997թ. մայիս ամիսը ՏՏ Ազգային ժողովի կանոնակարգը նախատեսում էր նորմ, համաձայն որի պարզամտորը կարող էր դուրս գալ խմբակցությունից, եթե նա կամովին հրաժարվում է պարզամտորական լիազորություններից (հոդվ. 29): 1997թ. մայիսի 27-ի օրենսդրական փոփոխության արդյունքում այդ նորմը փոխարինվեց հետևյալ դրույթով. «Պարզամտորը կարող է դուրս գալ խմբակցությունից՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով համապարասխան խմբակցությանը եւ Ազգային ժողովի նախագահին, որն այդ մասին հայտարարություն է անում Ազգային ժողովի առաջիկա նիստում»: Նման փոփոխությունն սկիզբ դրեց մամուլում լայն արձագանք ստացած, այսպես կոչված, «առնետրավազքին»: 1997-2007թթ. ընթացքում Նայաստանի Ազգային ժողովի թվով 85 պարզամտոր փոխել է պարզամտորական խմբակցությունը:

Նման երեւոյթը, որպես հասարակական կայունությանն սպառնացող լուրջ վտանգ, միջազգային պրակտիկայում, ինչպես նշվեց, կանխման փորքեր կառուցակարգային ձեւեր է գտել: Նարկ է նկատել, որ ձեւավորվելով փաստիներորդ դարում՝ այս ինստիտուտն իր պարամական զարգացման ընթացքում փոխել է իր էությունը, բովանդակությունը եւ նպատակը: Եթե իր սկզբնական իմաստով այն գործում էր որպես

խորհրդարանում կուսակցական կարգապահության խախտումների համար կուսակցության կողմից իր կուսակից պարզամավորի նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոց, ապա ներկայումս այն կիրառվում է հիմնականում որպես պարզամավորների դասալքությունը կանխելու միջոց: Օրինակ, Պորպուգալիայի Սահմանադրության 160 հոդվածի c) կետն առանց երկիմաստության սահմանում է, որ պարզամավորը կորցնում է իր մանդատը, երբ դառնում է այլ կուսակցության անդամ, որի կողմից նա չի առաջադրվել ընտրությունների ժամանակ: Այդ խնդրին, ինչպես նշվեց, առավել մեղմ լուծում են տվել Իսպանիայում՝ կուսակցությունների կողմից դասալքության դեմ ստորագրած դաշնագրի միջոցով: Ռուսաստանի Դաշնությունում «Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի անդամի եւ Պետական դումայի պարզամավորի կարգավիճակի մասին» դաշնային օրենքում 2005թ. հուլիսին կատարված փոփոխության համաձայն 4-րդ հոդվածի 3-րդ մասում դրույթ ավելացվեց, համաձայն որի՝ Պետական դումայի պարզամավորը մանդատը կորցնում է նաեւ այն դեպքում, երբ իր դիմումի համաձայն դուրս է եկել այն խմբակցությունից, որի կուսակցական ցուցակներով նրան թույլատրվել է մասնակցել պարզամավորական մանդատների բաշխմանը:

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ԲԶՆԻ» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի եւ «Կոմուննախագիծ» ՓԲԸ-ի դիմումների հիման վրա՝ «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 7 եւ 19 հոդվածների, «Նարկերի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 22 հոդվածի 2-րդ մասի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Սահմանադրական դատարանը, նկատի ունենալով, որ ««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի եւ «Կոմուննախագիծ» ՓԲԸ-ի դիմումների հիման վրա քննության ընդունված գործերը վերաբերում են նույն հարցին, իր՝ 19.06.2009թ. աշխատակարգային որոշմամբ որոշել է դրանք միավորել եւ քննել դատարանի նույն նիստում:

Գործի քննության առիթը ««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի՝ 10.03.2009թ. եւ «Կոմուննախագիծ» ՓԲԸ-ի՝ 02.06.2009թ. դիմումներն են սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հեղափոխելով «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին», «Նարկերի մասին» ՆՃ օրենքները եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» ՆՃ օրենքն ընդունվել է Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի կողմից 1998 թվականի դեկտեմբերի 28-ին, ՆՃ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի դեկտեմբերի 30-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ին (ՆՕ-270):

«Նարկերի մասին» ՆՃ օրենքն ընդունվել է Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի կողմից 1997 թվականի ապրիլի 14-ին, ՆՃ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1997 թվականի մայիսի 12-ին եւ ուժի մեջ է մտել 1997 թվականի մայիսի 30-ին (ՆՕ-107):

«Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» ՆՃ օրենքի՝ «Վճարների դրույքաչափերը» վերաբառությամբ 7 հոդվածը սահմանում է. «Բնապահպանական վճարների դրույքաչափերը սահմանվում են օրենքով, իսկ բնօգտագործման վճարներինը՝ Նայաստանի Նանրապետության կառավարության կողմից»:

«Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» ՆՃ օրենքի՝ «Վճարների հաշվարկման եւ վճարման նկատմամբ վերահսկողությունը» վերաբառությամբ 19 հոդվածը սահմանում է. «Վճարների հաշվարկման եւ վճարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Նայաստանի Նանրապետության կառավարության սահմանած կարգով»:

«Նարկերի մասին» ՆՃ օրենքի 22 հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Եթե հարկ վճարողը չի ներկայացնում հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման (հարկային օրենսդրությամբ կամ Նայաստանի Նանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաեւ այլ հաշվառման եւ (կամ) գրանցումների վերաբերող) սահմանված փաստաթղթերը կամ դրանք վարում է սահմանված կարգի կուպիտ խախտումներով կամ ակնհայտ կեղծ տվյալներ է մտցնում հարկային տեսչություն ներկայացրած հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում եւ այլ փաստաթղթերում, որի հետեւանքով անհնար է դառնում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը, ապա հարկվող օբյեկտները եւ հարկային պարտավորությունները հաշվարկում է հարկային

յրեսչությունը՝ Նայասփանի Նանրապետության կառավարության սահմանած կարգով, մասնավորապես, հիմնվելով՝

հարկ վճարողի ակտիվների,

հարկ վճարողի իրացման շրջանառության ծավալների,

հարկ վճարողի արտադրության եւ շրջանառության ծախսերի,

գույքագրման եւ չափագրման փյույակների,

օրենքով սահմանված կարգով երրորդ անձից սրացված փողերի, համանման պայմաններում գործող այլ սուբյեկտների միջեւ կիրառված գների եւ այլ ցուցանիշների, հասույթի հաշվարկային 25 փոկոս վերադիրի, օրենքով իրականացված հսկիչ գնումների վրա»:

2. Մ կառավարությունը, «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» Մ օրենքի 7 հոդվածի կիրարկումն ապահովելու նպատակով 30.12.1998 թվականին ընդունել է «Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին» թիվ 864 որոշումը, որով սահմանվել են հանքային ջրերի պաշարների արդյունահանման, այդ թվում՝ ածխաթթու գազ սրանալու դիմաց բնօգտագործման վճարի դրույքաչափերը:

Մ կառավարությունը, «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» Մ օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով 17.10.2001 թվականին ընդունել է ««Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» Նայասփանի Նանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 986 որոշումը, որով հաստատվել է «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների հաշվարկման ու վճարման կարգը»: Նշված կարգի 2-րդ կետի համաձայն. «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների հաշվարկման ու վճարման (այդ թվում՝ հաշվարկված վճարները Նայասփանի Նանրապետության պետական բյուջե փոխանցման) կարգի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է հարկային մարմինը»:

«Նարկերի մասին» Մ օրենքի 22 հոդվածի կիրարկումն ապահովելու նպատակով Մ կառավարությունը 18.09.1998 թվականին ընդունել է ««Նարկերի մասին» Նայասփանի Նանրապետության օրենքի 22 հոդվածով նախատեսված դեպքերում Նայասփանի Նանրապետության հարկային մարմնի կողմից հարկվող օբյեկտների եւ հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) կարգը հաստատվելու եւ Նայասփանի Նանրապետության հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շուկայական (սովորաբար կիրառվող) գները որոշելու մասին» թիվ 580 որոշումը:

3. ««Բջին» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի դիմումի առնչությամբ քննության առարկա գործի դատավարական նախապարտությունը հանգում է նրան, որ համաձայն Մ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի՝ 24.10.2007թ. թիվ 1031148 հանձնարարագրի եւ 05.11.2007թ. «Նանձնարարագրով ստուգում իրականացնող պաշտոնավար անձանց կազմում լրացում կատարելու մասին» թիվ 1-07/876-Ա հրամանի՝ Մ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության օպերատիվ-հետախուզության վարչության եւ հանքարտադրողների ոլորտային

հարկային փեսչության աշխատակիցների կողմից 05.11.2007 թվականից մինչև 16.01.2008 թվականը ««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ում կատարվել է բյուջեի հեփ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից **վերահսկվող** օրենսդրության առանձին պահանջների ճշգրտության **սպուգում**: Սպուգման արդյունքներով 16.01.2008 թվականին կազմվել է թիվ 1031148 ակտը, որով արձանագրվել են ՆՄ օրենսդրության խախտումներ և ընկերությանն առաջադրվել են ավելացված արժեքի հարկի, բնապահպանական և բնօգտագործման վճարների և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով չկատարված պարտավորություններ:

Նշված ակտի վերաբերյալ իր` 23.01.2008թ. թիվ 11 գրությամբ ««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ն առարկություններ է ներկայացրել Գանգապարկման հանձնաժողով, որն իր` 22.02.2008թ. թիվ 4/1 որոշմամբ նշված ակտը թողել է անփոփոխ: Գանգապարկման հանձնաժողովն իր` 22.02.2008թ. թիվ 4/1 որոշմամբ, հղում կատարելով ՆՄ Ընդերքի մասին օրենսգրքի 4, 5 և 6 հոդվածներին, արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «... բնօգտագործման վճարները ընդերքը օգտագործման փրամադրելու համար օգտագործողների կողմից վճարվող ընդերքօգտագործման վճարներ են, այլ ոչ թե պարտադիր վճարներ, ինչից հետևում է, որ դրանց դրույքաչափերի սահմանումը ՆՄ կառավարության կողմից չի հակասում ՆՄ Սահմանադրությանը»:

Միաժամանակ, 31.01.2008 թվականին ««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ն ՆՄ վարչական դատարան է ներկայացրել պետական մարմնի ակտը մասամբ վերացնելու պահանջի մասին վիճարկման հայցադիմում, որով խնդրել է անվավեր ճանաչել 16.01.2008 թվականին կազմված թիվ 1031148 ակտը` 4-րդ կետի (ավելացված արժեքի հարկ) և 9-րդ կետի (բնապահպանական և բնօգտագործման վճարներ) մասերով: ՆՄ - վարչական դատարանի 24.09.2008թ. որոշմամբ հայցվորի 09.06.2008 թվականի միջնորդությունը` ՆՄ սահմանադրական դատարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին, մերժվել է: ՆՄ վարչական դատարանի 01.10.2008 թվականի վճռով հայցը մերժվել է: Նայցվորը երկու անգամ վճռաբեկ բողոք է ներկայացրել ՆՄ վճռաբեկ դատարան, որոնք ՆՄ վճռաբեկ դատարանի համապատասխանաբար` 03.12.2008թ. և 16.02.2009թ. որոշումներով վերադարձվել են:

«Կոմունախազիժ» ՓԲԸ-ի դիմումի առնչությամբ քննության առարկա գործի դատավարական նախապարմությունը հանգում է նրան, որ համաձայն ՆՄ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի` 25.04.2007թ. թիվ 1025265 հանձնարարագրի` «Սպանդարյանի 1 հարկային փեսչության աշխատակիցների կողմից «Կոմունախազիժ» ՓԲԸ-ում կատարվել է բյուջեի հեփ փոխհարաբերությունների ճշգրտության և հարկային մարմնի կողմից **վերահսկվող** օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշգրտության **սպուգում...**»: Սպուգման արդյունքներով 20.08.2007 թվականին կազմվել է թիվ 1025265 սպուգման ակտը, որով ընկերությանն առաջադրվել են շահութահարկի, ավելացված արժեքի հարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով չկատարված պարտավորություններ:

«Կոմունախազիժ» ՓԲԸ-ն դիմել է ՆՄ փնտեսական դատարան ընդդեմ ՆՄ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Սպանդարյանի 1

հարկային փեսչության՝ հարկային փեսչության 20.08.2007 թվականի թիվ 1025265 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջով:

Տնտեսական դատարանի 28.11.2007թ. վճռով հայցը բավարարվել է:

Վճռաբեկ դատարանի 27.03.2008թ. թիվ 3-30 (ՏԴ) որոշմամբ վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել ՆՎ վարչական դատարան՝ նոր քննության:

Վարչական դատարանի 01.08.2008թ. թիվ ՎԴ/3112/05/08 վճռով «Կոմուննախագիծ» ՓԲԸ-ի հայցը բավարարվել է մասնակիորեն՝ անվավեր է ճանաչվել ՆՎ կառավարությանն առընթեր ՆՊԾ-ի 20.08.2007թ. թիվ 1025265 ստուգման ակտի 1-ին (շահութահարկ) և 4-րդ (ավելացված արժեքի հարկ) կետերը:

ՆՎ գլխավոր դադարախաղի փեղակալի ներկայացրած վճռաբեկ բողոքի հիման վրա ՆՎ վճռաբեկ դատարանի 13.02.2009թ. թիվ ՎԴ/3112/05/08 որոշմամբ ՆՎ վարչական դատարանի 01.08.2008թ. թիվ ՎԴ/3112/05/08 վճիռը՝ հայցը բավարարելու մասով բեկանվել է և փոփոխվել՝ «Կոմուննախագիծ» ՓԲԸ-ի հայցը մերժվել է:

4. Դիմողներից ««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ն սահմանադրական դատարանում վիճարկում է «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՆՎ օրենքի 7 հոդվածը, 19 հոդվածը և «Նարկերի մասին» ՆՎ օրենքի 22 հոդվածի 2-րդ մասը: Ըստ դիմողի՝ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՆՎ օրենքի 7 հոդվածը հակասում է ՆՎ Սահմանադրության 83.5. հոդվածի 2-րդ կետին, 19 հոդվածը՝ ՆՎ Սահմանադրության 5 հոդվածին և 83.5. հոդվածի 3-րդ կետին, իսկ «Նարկերի մասին» ՆՎ օրենքի 22 հոդվածի 2-րդ մասը՝ ՆՎ Սահմանադրության 3 և 42 հոդվածներին, 83.5. հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերին:

Դիմող «Կոմուննախագիծ» ՓԲԸ-ն սահմանադրական դատարանում վիճարկում է «Նարկերի մասին» ՆՎ օրենքի 22 հոդվածի 2-րդ մասը, գրնելով, որ այդ նորմը հակասում է ՆՎ Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ կետի պահանջներին:

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՆՎ օրենքի 7 հոդվածի առնչությամբ դիմող՝ ««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ն, հղում կատարելով ՆՎ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի՝ 25.07.2003թ. թիվ 03/20-Ն հրամանին, գրնում է, որ բնօգտագործման վճարը պարտադիր վճար է, և դրա չափը պետք է սահմանվի օրենքով, այլ ոչ թե կառավարության որոշմամբ:

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՆՎ օրենքի 19 հոդվածի առնչությամբ դիմողը գրնում է, որ հարկային մարմինների կողմից բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկման և վճարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու՝ ՆՎ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության լիազորության միակ հիմքը ««Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» ՆՎ կառավարության 17.10.2001թ. թիվ 986 որոշումն է, մինչդեռ, ըստ դիմողի՝ ՆՎ Սահմանադրության 5 հոդվածի երկրորդ պարբերության ուժով նշված լիազորության իրավական հիմքը կարող է լինել Սահմանադրությունը կամ օրենքը:

«Նարկերի մասին» ՆՏ օրենքի 22 հոդվածի 2-րդ մասի առնչությամբ դիմողներ՝ ««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ն և «Կոմուննախագիծ» ՓԲԸ-ն ներկայացրել են նույնաբովանդակ փաստարկներ, և գտնում են, որ հարկային մարմնի կողմից հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկումը, գնահատումը և վերագնահատումը ներառվում է «վերահսկողություն» հասկացության բովանդակային ծավալում, և, քանի որ վերահսկողությունն առնչվում է անձի իրավունքների սահմանափակմանը, ապա դրանց իրականացման կարգը ՆՏ Սահմանադրության 83.5. հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի ուժով («Կոմուննախագիծ» ՓԲԸ-ն հղում է կատարում միայն ՆՏ - Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ կետին) պետք է սահմանվեր օրենքով, այլ ոչ թե ՆՏ կառավարության 18.09.1998թ. թիվ 580 որոշմամբ:

5. Պատասխանողը՝ առարկելով դիմողների փաստարկների դեմ, գտնում է, որ բնօգտագործման վճարը, հանդիսանալով պետական սեփականություն համարվող բնական պաշարների օգտագործման դիմաց գանձվող վճար, իրենից ներկայացնում է քաղաքացիաիրավական հարաբերությունների փոխանցում: Դրա գանձման համար իրավական հիմք է հանդիսանում ՆՏ Ընդերքի մասին օրենսգրքի 11 հոդվածով սահմանված՝ պետության լիազոր մարմնի և ընդերքօգտագործողի միջև կնքված պայմանագիրը: Բնօգտագործման վճարը մի դեպքում կրում է փոխհատուցման բնույթ, քանի որ վճարվում է բնական պաշարների օգտագործման դիմաց, մյուս դեպքում այն կազմում է բնապահպանական հաշվեկշիռի վերականգնմանն ուղղված ֆինանսավորման աղբյուր:

Պատասխանողը նաև գտնում է, որ պետությունը՝ հանդիսանալով սեփականության իրավունքի սուբյեկտ և որպես սեփականատեր ունենալով իր գույքը փիրապետելու, փնտրիներու և օգտագործելու լիազորություններ, ավելին, հանդիսանալով ընդերքի բացառիկ սեփականատերը, կարող է իրեն պարկանող գույքը, փյույթ դեպքում՝ ընդերքը, հանձնել օգտագործման, և դա պետք է դիտարկվի ոչ թե որպես հանրային իրավական, այլ քաղաքացիաիրավական հարաբերություն:

Պատասխանողը գտնում է, որ բնօգտագործման վճարը չի կարող դիտարկվել որպես պարտադիր վճար, հետևաբար, կառավարությունը լիովին իրավասու է սահմանելու բնօգտագործման վճարների դրույքաչափերը և այդ վճարների նկատմամբ վերահսկողության կարգը. նման կարգի սահմանումը բխում է ՆՏ Սահմանադրության 5 և 89 հոդվածներից:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՆՏ օրենքի 19 հոդվածը հակասու՞մ է, արդյոք, ՆՏ Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ կետին, պատասխանողը գտնում է, որ խոսքն այսպետ ոչ թե նոր պարտականությունների սահմանման, այլ դրանց իրականացումը կանոնակարգող կարգի մասին է:

Նույնը վերաբերում է նաև ««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի և «Կոմուննախագիծ» ՓԲԸ-ի կողմից վիճարկվող «Նարկերի մասին» ՆՏ օրենքի 22 հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության հարցին: Պատասխանողի կարծիքով, ՆՏ կառավարության 17.10.2001թ. թիվ 986 որոշմամբ ոչ թե սահմանվում են նոր հարկային

պարտավորություններ կամ դրանց հաշվարկման կարգը, այլ փոփոխություններ սուբյեկտների համար կոնկրետացվում են առավել կանխատեսելի են դառնում հարկային մարմինների կողմից հարկային պարտավորությունների հաշվարկման գործընթացը:

6. «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» ՆՏ օրենքի 7 հոդվածի սահմանադրականության առնչությամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել օրենքի վիճարկվող դրույթում օգտագործված «բնապահպանական վճարներ» եւ «բնօգտագործման վճարներ» հասկացությունների բովանդակությունն ու էությունը: «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» ՆՏ օրենքի 2 հոդվածի 1-ին մասի համաձայն բնապահպանական վճարը բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ համայնքի բյուջե վճարվող **պարտադիր** վճարն է: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բնօգտագործման վճարը սահմանված է որպես՝ «... պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ, համալիր օգտագործման, ինչպես նաեւ փարբեր որակի բնական պաշարներ օգտագործողների համար փոփոխական հավասար պայմաններ ստեղծելու նպատակով այդ պաշարների օգտագործման դիմաց սույն օրենքին համապատասխան պետական բյուջե վճարվող վճար»: Փաստորեն, վերոհիշյալ օրենքի 2 հոդվածում կանխորոշված է այդ վճարների առանձնահատուկ իրավական բնույթը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2008 թվականի մայիսի 13-ի ՄԴՈ-753 որոշմամբ, անդրադառնալով ՆՏ Սահմանադրության 45 հոդվածում մատնանշված «պարտադիր վճար» հասկացության բովանդակությանը, առանձնացրել է այդ հասկացությանը բնորոշ հատկանիշները, այն է՝ դա կրում է հանրային բնույթ եւ նախատեսված է պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվելու համար, ինչպես նաեւ որոշակի դիրքորոշումներ է արտահայտել պետության սեփականությունը հանդիսացող սահմանափակ ռեսուրսի օգտագործման դիմաց գանձվող վճարի բովանդակության վերաբերյալ: Ինչպես հետեւում է վերոհիշյալ օրենքի 2-րդ հոդվածի ձեւակերպումներից, ի փարբերություն բնօգտագործման վճարի, պետության կողմից բնապահպանական վճարի հավաքագրումը նպատակաուղղված է բնապահպանական միջոցառումների իրականացմանը, որում էլ դրսեւորվում է վճարի այդ ձեւի հանրային, այսինքն՝ պարտադիր բնույթը: Վերջինս իր հերթին բխում է ինչպես ՆՏ Սահմանադրության 10 հոդվածում ամրագրված՝ պետության, այնպես էլ՝ 89 հոդվածի 5-րդ կետում ամրագրված՝ ՆՏ կառավարության պարտականությունների բովանդակությունից:

Նաշվի առնելով 2008 թվականի մայիսի 13-ի ՄԴՈ-753 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները եւ «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» ՆՏ օրենքի 2 հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ իրավակարգավորման համապետքսրում բնօգտագործման վճարը, հանդիսանալով գույքի օգտագործման դիմաց գանձվող վճար, իրենից ներկայացնում է քաղաքացիաիրավական հարաբերությունների փարբ, եւ որպես այդպիսին նման գումարի գանձման համար իրավական հիմք է հանդի-

ասնում ընդերքի սեփականափորոջ, այն է՝ պեպոթյան, որն այդ իրավահարաբերություններում գործում է լիագորված մարմնի միջոցով, եւ ընդերքն օգտագործողի միջեւ կնքված համապատասխան քաղաքացիաիրավական պայմանագիրը: Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ 21.02.2005 թվականին ՆՏ բնապահպանության նախարարության կողմից ««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ին տրվել է «Ստորերկրյա ջրերի հանքարդյունահանման» թիվ 32 հատուկ լիցենզիան, որի հիման վրա էլ ՆՏ բնապահպանության նախարարության եւ ««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի միջեւ 19.04.2005 թ. կնքվել է թիվ 003 լիցենզային պայմանագիրը:

Սահմանադրական դատարանը՝ հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաեւ իր 2008 թվականի մայիսի 13-ի ՄԴՈ-753 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները, արձանագրում է նաեւ, որ «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» ՆՏ օրենքում բնապահպանական եւ բնօգտագործման վճարների տարանջատումը, եւ, ըստ այդմ էլ, տարբեր վճարատեսակների դրույթաչափերի սահմանումը երկու տարբեր սուբյեկտներին (օրենսդիր մարմնին եւ ՆՏ կառավարությանը) վերապահելն ինքնանպատակ չէ: Օրենսդիրը բնօգտագործման վճար սահմանելիս՝ այն դիտարկել է որպես պեպոթյան սեփականությունը հանդիսացող սահմանափակ ռեսուրսի՝ ընդերքի օգտագործման դիմաց տրվող վարձավճար, եւ վերջինիս վճարման հետ կապված իրավահարաբերություններին տրվել է քաղաքացիաիրավական հարաբերություններին բնորոշ իրավակարգավորում, որտեղ խնդրո առարկա վճարը դիտարկել է որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների տարր: Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի վիճարկվող հոդվածում նշված բնօգտագործման վճարները չեն հանդիսանում պարտադիր վճարներ եւ, հետեւաբար, ՆՏ Սահմանադրության 83.5. հոդվածում ամրագրված՝ պարտադիր վճարների տեսակները, չափը եւ վճարման կարգը միայն օրենքով սահմանելու պահանջը չի կարող վերագրվել բնօգտագործման վճարներին:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ բնօգտագործման վճարի իրավական բովանդակությունը վերոհիշյալից էականորեն տարբերվող ընկալում է սրացել տարբեր մարմինների ու դրանց ստորաբաժանումների կողմից:

Մասնավորապես, ՆՏ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի՝ 25.07.2003թ. թիվ 03/20-Ն հրամանի ուսումնասիրությունը վկայում է, որ գործադիր իշխանությունը «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» Նայաստանի Նանրապետության օրենքով նախատեսված բնօգտագործման վճարը դիտարկել է որպես պարտադիր վճար: Մյուս կողմից, ՆՏ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության գանգապարկման հանձնաժողովն իր՝ 22.02.2008թ. թիվ 4/1 որոշմամբ, հղում կատարելով ՆՏ Ընդերքի մասին օրենսգրքի 4, 5 եւ 6 հոդվածներին՝ իրավամբ բնօգտագործման վճարը դիտարկել է որպես ընդերքն օգտագործման տրամադրելու համար օգտագործողների կողմից վճարվող ընդերքօգտագործման վճար:

Միաժամանակ, հարկ է նշել, որ ՆՏ Ընդերքի մասին օրենսգրքի՝ «Ընդերքօգտագործման վճարների որոշումը եւ վճարման կարգը» վերաառությամբ 46 հոդվածը սահմա-

նում է, որ այդ օրենսգրքի 44 հոդվածով նախատեսված վճարները սահմանվում են ՏՏ օրենքով, իսկ 44 հոդվածը ընդերքն օգտագործելիս կատարվող վճար է համարում ընդերքի օգտագործման (բնավճար, ռոյալթի) վճարը: Մինչդեռ ՏՏ Ընդերքի մասին օրենսգրքի 6 հոդվածի 12-րդ կետը նախատեսում է, որ ընդերքի օգտագործման եւ պահպանության բնագավառում ՏՏ կառավարության իրավասություններն են՝ 12) իր իրավասության սահմանում ընդերքօգտագործման վճարների դրույթաչափերի սահմանումը:

Թերեւս, նման հակասական մոտեցումների համար կարող էր հիմք հանդիսանալ այն հանգամանքը, որ օրենսդիրը եւս փարբեր օրենքներում հետետողականություն չի դրսեւորել բնօգտագործման վճարի բնույթը հստակ արտահայտելու հարցում: Չնայած նրան, որ «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» ՏՏ օրենքում այդ վճարի իրավական բովանդակությունը հստակ է, սակայն 2000 թվականի մայիսի 17-ին ընդունված եւ 2000 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած՝ «Նայասարանի Նանրապեփությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՏՏ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ «Թեմափիկ եւ հարկային, մաքսային, պարփադիր սոցիալական ապահովության, **բնօգտագործման**, բնապահպանական եւ օրենքով սահմանված այլ պարփադիր վճարների հաշվարկման ու վճարման ճշփությունը պարզելուն ուղղված ստուգումները Ը»: Միաժամանակ, «ՏՏ բյուջեփային համակարգի մասին» ՏՏ օրենքի 17 հոդվածի 2-րդ կետի «թ» ենթակետը բնօգտագործման վճարը դիփում է որպես **հարկային եկամուտ**: Նման իրավիճակի բացառման եւ օրենսդրական հստակ կանոնակարգման խնդիրը պետք է լուծվի ՏՏ Ազգային ժողովի օրենսդրական քաղաքականության շրջանակներում:

8. ՏՏ Սահմանադրության 5 հոդվածի 1-ին պարբերության դրույթների իրացմանն են ուղղված, մասնավորապես, ՏՏ Սահմանադրության 83.5. եւ 89 հոդվածները, որոնցով փարանջարված են օրենսդիր եւ գործադիր մարմինների գործառույթները: Մասնավորապես, ՏՏ Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ կետի համաձայն. «Բացառապես Նայասարանի Նանրապեփության օրենքներով են սահմանվում ... իրավաբանական անձանց, ձեռնարկափիրական գործունեությանը զբաղվող ֆիզիկական անձանց գործունեության նկարմամբ հսկողություն ու վերահսկողություն (այդ թվում՝ ստուգում, ուսումնասիրություն, փեսչական ստուգում) իրականացնելու դեպքերը, պայմանները եւ կարգը»: ՏՏ Սահմանադրության 89 հոդվածի 4-րդ կետի համաձայն. «Կառավարությունը Ը իրականացնում է ֆինանսափրեսական, վարկային եւ հարկային միասնական պետական քաղաքականությունը»:

Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ կետում «ձեռնարկափիրական գործունեությանը» բառակապակցության առկայությունից բխում է, որ հոդվածում ամրագրված «գործունեության» բառը վերաբերում է նաեւ փրեսաավարող սուբյեկտների **ձեռնարկափիրական գործունեությանը**: Ինչ վերաբերում է «ձեռնարկափիրական գործունեություն» հասկացության բովանդակությանը, ապա այն մեկնաբանվել է սահմանադրական դարարանի 2008 թվականի նոյեմբերի 25-ի ՄԴՈ-780 որոշմամբ:

Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ կետի եւ հարկային օրենսդրության համադրված վերլուծությունից բխում է, որ Սահմանադրությունը «հսկողություն» եւ «վերահսկողություն» հասկացությունների բովանդակային ծավալը չի սահմանափակում միայն սպուզմամբ, ուսումնասիրությամբ եւ Կրթական սպուզմամբ: ՆՃ օրենքներով «հսկողություն» եւ «վերահսկողություն» հասկացությունների բովանդակային ծավալում կարող են ներառվել նաեւ այլ գործողություններ, որոնք անհրաժեշտ են հսկողության եւ վերահսկողության իրականացման համար եւ կազմում են հսկողական եւ վերահսկողական գործառնությունների իրականացման գործընթացի փուլեր: «Նայասպանի Նանրապետությունում սպուզումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՃ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ - կետի 12-րդ պարբերության, նույն օրենքի 2-րդ հավելվածով սահմանված կարգի 1.1. կետի, նույն օրենքի 4-րդ հավելվածով սահմանված կարգի 1-ին կետի, 9-րդ կետի 2-րդ - պարբերության, «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» ՆՃ օրենքի 18 հոդվածի 2-րդ կետի 2-րդ պարբերության, 14 հոդվածի «ա» կետի, «Նարկերի մասին» ՆՃ օրենքի 22 հոդվածի 2-րդ մասի, «Նարկերի մասին» ՆՃ օրենքի 22.1 հոդվածի 3-րդ - պարբերության, 25 հոդվածի 2-րդ պարբերության, «Նարկային ծառայության մասին» ՆՃ օրենքի 11 հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի ուսումնասիրությունից բխում է, որ այդպիսի գործողություններ են վերսպուզումը, չափագրումը, հսկիչ գնումը, հարկվող օբյեկտների հաշվարկը եւ վերահաշվարկը (գնահատումը եւ վերագնահատումը), հարկային պարտավորությունների հաշվարկը եւ վերահաշվարկը (գնահատումը եւ վերագնահատումը), հարկային հաշվարկների ճշգրտումը, հարկային պարտավորությունների ճշգրտումը:

ՆՃ Սահմանադրության 89 հոդվածի 4-րդ կետի դրույթներից բխում է, որ կառավարությունը ֆինանսաբարենական, վարկային եւ հարկային միասնական պետական քաղաքականության իրեն վերապահված գործառնություն իրականացնելիս կարող է՝ բացառապես Սահմանադրությամբ եւ օրենքներով նախատեսված կառուցակարգերի, կոնկրետ լիազորությունների, ձեռքի ու մեթոդների շրջանակներում, սահմանել իրավակարգավորման ընթացակարգեր: Բնապահպանության եւ բնօգտագործման բնագավառում ՆՃ կառավարության, ինչպես նաեւ պետական կառավարման մյուս մարմինների (այդ թվում՝ հարկային) ընդհանուր լիազորությունները սահմանված են ՆՃ Ընդերքի մասին օրենսգրքի 5-6 հոդվածներում՝ այնքանով, որքանով այդ օրենսգրքով են սահմանվում ՆՃ փարածքում ընդերքից օգտվելու **սկզբունքները**, կարգը, ընդերքօգտագործման հետ կապված հարաբերությունները:

«Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» ՆՃ օրենքի վիճարկվող 19 հոդվածը վերաբերում է բնապահպանական եւ բնօգտագործման վճարներ վճարողի կողմից բնապահպանական եւ բնօգտագործման վճարների **հաշվարկման եւ վճարման** նկատմամբ վերահսկողությանը: Ընդ որում, «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» ՆՃ օրենքի 8 հոդվածի ուժով բնապահպանական եւ բնօգտագործման վճարների գումարները հաշվարկելու եւ վճարելու պարտականությունը դրված է բնապահպանական եւ բնօգտագործման վճարներ վճարողների վրա:

Նաշվի առնելով ՏՏ Սահմանադրության 5 հոդվածի 1-ին պարբերության, 83.5. հոդվածի 3-րդ կետի, 89 հոդվածի 4-րդ կետի դրույթների բովանդակությունը, ինչպես նաև սահմանադրական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 25-ի ՍԴՈ-780 որոշմամբ արքայազնի իրավական դիրքորոշումները, սահմանադրական դատարանը գտնում է, որ բնապահպանական և բնօգտագործման վճարներ վճարողների կողմից բնապահպանական և բնօգտագործման վճարների գումարները հաշվարկելու նույնիսկ գործունեություն իրենից ներկայացնում է **սեփականափիրոջ՝ պետության առջև փնտրեսավարող սուբյեկտի պայմանագրային պարտավորությունների կատարումն ապահովող գործունեություն**, որը չի ներառվում փնտրեսավարող սուբյեկտի «ձեռնարկափրական գործունեություն» հասկացության բովանդակային ծավալներում: Ներելաբար, բնապահպանական և բնօգտագործման վճար վճարողների կողմից վճարների հաշվարկման և վճարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս հարկային մարմինը վերահսկում է ոչ թե փնտրեսավարող սուբյեկտի ձեռնարկափրական գործունեությունը, այն է՝ գույքի օգտագործման, ապրանքների վաճառքի, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ընթացքը և դրա համապատասխանությունն օրենսդրության պահանջներին, այլ վերջինիս կողմից սեփականափիրոջ առջև սրանձնված **պայմանագրային պարտավորությունների կատարումը**: Ըստ այդմ էլ, Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ կետը չի պարտադրում, որ պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության և դրանց իրականացման համար անհրաժեշտ մյուս գործողությունների իրականացման կարգերը սահմանվեն օրենքով: Դրանք կարող են սահմանվել նաև կառավարության որոշմամբ:

Ինքնանպատակ չէ այն, որ ի վարբերություն հսկողական և վերահսկողական գործառնությունների իրականացման գործընթացի փուլեր հանդիսացող վերստուգման, չափագրման, հսկիչ գնման, հարկվող օբյեկտների հաշվարկի և վերահաշվարկի (գնահատման և վերագնահատման) կարգերի, որոնք անմիջականորեն առնչվում են փնտրեսավարող սուբյեկտի ձեռնարկափրական գործունեությանը և սահմանված են օրենքով, հսկողական և վերահսկողական գործառնությունների իրականացման գործընթացի փուլեր հանդիսացող **հարկային պարտավորությունների** հաշվարկի և վերահաշվարկի (գնահատման և վերագնահատման), հարկային հաշվարկների ճշգրտման և հարկային պարտավորությունների ճշգրտման կարգերը, որոնք անմիջականորեն առնչվում են փնտրեսավարող սուբյեկտի ֆինանսարկարեսական գործունեության արդյունքում պարտավորությունների կատարմանը, օրենքի հիման վրա սահմանված են կառավարության որոշմամբ:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ փնտրեսավարող սուբյեկտների գործունեության նկատմամբ պետական մարմինների (պաշտոնաբար անձանց) հսկողության (վերահսկողության) և դրանով պայմանավորված՝ անձի իրավունքների և ազատությունների իրացման հնարավոր շրջանակների օրենսդրական կարգավորման խնդրին:

ՏՏ Սահմանադրության 1, 2, 3, 5, 6, 8, 14, 14.1., 18, 19, 42, 42.1. և «պետություն - անձ» սահմանադրափրավական հարաբերություններ կարգավորող այլ հոդվածների, ինչպես նաև սույն գործով վիճարկվող, դրանց հետ փոխկապակցված օրենսդրության այլ

ակերի, այդ թվում՝ «Նայասպանի Նանրապետությունում սպուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՏ օրենքի դրույթների համալիր վերլուծությունը վկայում է, որ հսկողությունը (վերահսկողությունը) պետության (վերջինիս անունից հանդես եկող մարմինների, պաշտոնապար անձանց) կարեւորագույն գործառույթներից է, որի նպատակը պետք է լինի հասարակական կյանքի բոլոր բնագավառներում (այդ թվում՝ փոստա-վարման) օրինականության ապահովումը: Դա հավասարապես պետք է վերաբերի ինչպես ձեռնարկատիրական (փոստապահական) գործունեության իրականացմանը, այնպես էլ այդ գործունեության արդյունքում իրավահարաբերությունների փարբեր սուբյեկտների պայմանագրային պարտավորությունների կատարմանը: Նասարակական հարաբերությունների այդ բնագավառները կարգավորող օրենսդրության խնդիրը՝ կապված ՆՏ Սահմանադրության վերոհիշյալ նորմերում ամրագրված սկզբունքների ու պահանջների իրացման հետ, փոստաավարման բնագավառում վարքագծի միասնական կանոնների կատարումն ապահովելն է, որը ժողովրդավարական, իրավական եւ սոցիալական պետության սահմանադրական պարտականությունն է:

9. «Նարկերի մասին» ՆՏ օրենքի վիճարկվող 22 հոդվածի 2-րդ մասը վերաբերում է մասնավորապես հարկային մարմնի կողմից իրականացվող վերահսկողության շրջանակներում **հարկվող օբյեկտների** հաշվարկմանը, որի իրականացման կարգը Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ կետի ուժով ենթակա է սահմանման բացառապես օրենքով:

«Նարկերի մասին» ՆՏ օրենքի 22 հոդվածի 2-րդ մասի ուսումնասիրությունից բխում է, որ օրենքի 22 հոդվածի վիճարկվող մասը հարկվող օբյեկտների հաշվարկման կարգի սահմանման իրավասությունը ՆՏ կառավարությանը վերապահելով՝ իր 1-7-րդ - պարբերություններում սահմանել է հիշատակված կարգի բովանդակային մաս կազմող մի շարք չափանիշներ, որոնցից պետք է ելնի ՆՏ կառավարությունը հարկվող օբյեկտների հաշվարկման կարգը սահմանելիս: Այդ չափանիշներն են՝ հարկ վճարողի ակտիվները, հարկ վճարողի իրացման շրջանառության ծավալները, հարկ վճարողի արտադրության եւ շրջանառության ծախսերը, գույքագրման եւ չափագրման փվյալները, օրենքով սահմանված կարգով երրորդ անձից ստացված փողերիությունները, համանման պայմաններում գործող այլ սուբյեկտների միջեւ կիրառված գները եւ այլ ցուցանիշները, հասույթի հաշվարկային 25 փոկոս վերադիրի կիրառումը եւ օրենքով իրականացված հսկիչ գնումների արդյունքները: Նշված չափանիշներն այն անհրաժեշտ միջոցներն են, որոնք ապահովում են հսկողության եւ վերահսկողության կարգի՝ **միայն օրենքով սահմանված լինելու սահմանադրական պահանջը՝** բացառելով գործադիր իշխանության կողմից հսկողության եւ վերահսկողության իրականացման ընթացքում սուբյեկտիվ մոտեցման հնարավորությունը: Նշված չափանիշների՝ **օրենքով ամրագրված լինելը** վկայում է այն մասին, որ «Նարկերի մասին» ՆՏ օրենքի 22 հոդվածի 2-րդ մասը, ըստ էության, սահմանել է հարկվող օբյեկտների **հաշվարկման հիմնական բաղադրարարները՝ ըստ էության որոշակիացնելով իրավակարգավորման առարկան ու բնույթը:**

Ինչ վերաբերում է «Նարկերի մասին» ՆՏ օրենքի 22 հոդվածի 2-րդ մասով ՆՏ կառավարությանը հարկվող օբյեկտների հաշվարկման կարգ սահմանելու իրավասություն

վերապահելուն՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Նարկերի մասին» ՏՏ օրենքի 22 հոդվածի 2-րդ մասն արդեն իսկ ամրագրել է վերահսկողության շրջանակները, ըստ էության սահմանելով հարկվող օբյեկտների հաշվարկման կարգը, իսկ ՏՏ կառավարության կողմից 18.09.1998 թվականին ընդունված թիվ 580 որոշմամբ սահմանված կարգն ըստ էության ոչ թե նոր կարգի սահմանում է, այլ օրենքով արդեն իսկ սահմանված կարգի կենսագործմանն ուղղված իրավակարգավորում, որում առավել կոնկրետացվում են օրենքի 22 հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգի դրույթները: Այսինքն՝ ՏՏ կառավարության 18.09.1998թ. թիվ 580 որոշումը հանդես է գալիս որպես «Նարկերի մասին» ՏՏ օրենքի 22 հոդվածի 2-րդ մասի կիրարկումն ապահովող իրավական ակտ, նշված որոշմամբ սահմանված կարգն ըստ էության հանդես է գալիս որպես «Նարկերի մասին» ՏՏ օրենքի 22 հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգի կիրարկման կարգ, եւ իրավակիրառողը պետք է ելնի այդ սկզբունքներից: Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ «Նարկերի մասին» ՏՏ օրենքի 22 հոդվածի 2-րդ մասի հիման վրա ՏՏ կառավարության 18.09.1998թ. թիվ 580 որոշմամբ սահմանված կարգի սահմանադրականությունը սույն գործի շրջանակներում չի վիճարկվում, իսկ կառավարության որոշումների՝ օրենքին համապատասխանության հարցի վիճարկման համար ՏՏ օրենսդրությամբ նախատեսված է այլ մարմին եւ ընթացակարգ:

Միեւնույն ժամանակ, ՏՏ օրենսդրության վերլուծության արդյունքների հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ «հարկվող օբյեկտ» եւ «հարկային պարտավորություն» հասկացությունները վերաբերում են բացառապես հարկերին եւ պարտադիր այլ վճարներին: Այս առնչությամբ գնահատելով իրավակիրառական պրակտիկան եւ հաշվի առնելով սահմանադրական դատարանի 2008 թվականի մայիսի 13-ի ՄԴՈ-753 եւ սույն որոշումներով պարտադիր վճարների վերաբերյալ արքայապարսի իրավական դիրքորոշումները, ինչպես նաեւ ելնելով հարկվող օբյեկտի, հարկային պարտավորության բնույթից, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Նարկերի մասին» ՏՏ օրենքի 22 հոդվածը կիրառելի չէ բնօգտագործման վճարների նկատմամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» ՏՏ օրենքի 7 հոդվածը համապատասխանում է ՏՏ Սահմանադրությանը:

2. «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» ՏՏ օրենքի 19 հոդվածը՝ ՄԴՈ-753 եւ սույն որոշումների մեջ սահմանադրական դատարանի կողմից արքայապարսի իրավական դիրքորոշումների շրջանակներում համապատասխանում է ՏՏ Սահմանադրությանը:

3. «Նարկերի մասին» ՆՆ օրենքի 22 հոդվածի 2-րդ մասը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում համապատասխանում է ՆՆ Սահմանադրությանը:

4. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳ-ԱՆՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

18 հունիսի 2009 թվականի

ՍԴՈ -816

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**«ԳԵՂԵՑԻԿ ՔՆԱՐ» ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԴԻՄՈՒՄԻ
ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆՏ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 233 ՆՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ «ՎՃՈՒԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ
ՎԵՐԱԴԱՐՉՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ
ՊԱՏՃԱՌԱԲԱՆՎԱԾ» ԴՐՈՒՅԹԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒ-
ԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԲՅՈՒՆ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ
ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղ. Երևան

21 հուլիսի 2009թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Նովիանիսյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝ դիմող կողմի ներկայացուցիչ Կ. Մեժումյանի եւ պապասխանող կողմի՝ ՆՏ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՏ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն ՆՏ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ - կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 19, 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Գեղեցիկ քնար» արտադրական կոոպերատիվի դիմումի հիման վրա՝ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 2-րդ մասի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պարճառաբանված» դրույթի՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Գեղեցիկ քնար» արտադրական կոոպերատիվի՝ ՆՏ - սահմանադրական դատարանում 02.04.2009թ. մուրբագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմողի ներկայացրած նյութերը եւ պապասխանող կողմի գրավոր բացատրությունը, հեղափոխելով ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. ՆՏ սահմանադրական դատարանը 2009 թվականի ապրիլի 21-ի ՍԴԱՌ-35 աշխատակարգային որոշմամբ «Գեղեցիկ քնար» ԱԿ-ի՝ ՆՏ սահմանադրական դատարանում 02.04.2009թ. մուտքագրված դիմումն ընդունել է քննության:

2. ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքը ՆՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի դրույթները փոփոխվել են ՆՏ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի հուլիսի 7-ին, 2007 թվականի նոյեմբերի 28-ին եւ 2008 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված՝ համապատասխանաբար՝ ՆՏ-153-Ն, ՆՏ-277-Ն, ՆՏ-233-Ն օրենքներով:

Քննության առարկա դիմումով վիճարկվում է ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ 2007 թվականի նոյեմբերի 28-ի խմբագրությամբ 233 հոդվածի 2-րդ մասի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պարճառաբանված» դրույթը:

3. Ըստ դիմողի՝ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 2-րդ մասի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պարճառաբանված» դրույթը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան փրված մեկնաբանությամբ, հակասում է ՆՏ Սահմանադրության 18, 19 եւ 92 հոդվածների պահանջներին:

Որպես հակասական իրավակիրառական պրակտիկայի առկայության ապացույց՝ դիմողը սահմանադրական դատարան է ներկայացրել նմանապիպ գործով նույն փաստաբանի կողմից կազմված եւ նույն օրը վճռաբեկ դատարան ներկայացված նույնաբովանդակ վճռաբեկ բողոքի եւ դրա վերաբերյալ վճռաբեկ դատարանի 29.09.2008թ. եւ 26.12.2008թ. որոշումների պատճենները:

Դիմողը՝ վկայակոչելով վճռաբեկ դատարանի վերոհիշյալ 29.09.2008թ. եւ 26.12.2008թ. որոշումները, հղում կատարելով սահմանադրական դատարանի 09.04.2007թ. ՍԴՌ-690 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին, գրնում է, որ հակասական իրավակիրառական պրակտիկան ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթի իրավական անորոշության արդյունք է, որը դրսևտրվում է նրանում, որ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթը չի սահմանել վճռաբեկ դատարանի որոշման պարճառաբանվածության չափանիշները: Ըստ դիմողի՝ որպես վճռաբեկ դատարանի որոշման պարճառաբանվածության չափանիշներ պետք է հանդես գան վճռաբեկ դատարանի պարտականություններին ուղղված այնպիսի օրենսդրական պահանջներ, ինչպիսիք են՝ ա) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ այն նյութական եւ դատավարական նորմերի նշումը, որոնց խախտման հիմքով բերվել է վճռաբեկ բողոքը, բ) առերևույթ դատական սխալի բացակայության հիմնավորումը, գ) ծանր հետևանքի բացակայության հիմնավորումը, դ) բողոքում

բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշման՝ օրենքի միապետակ կիրառության համար էական նշանակություն չունենալու հիմնավորումը, ե) վերանայվող դատական ակտն առերևույթ (*prima facie*) վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին չհակասելու հիմնավորումը, գ) «թերություններ», «էական նշանակություն», «ծանր հետեւանք» եւ «վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած դատական ակտ» հասկացությունների հստակեցումը:

4. Պատասխանող կողմը վկայակոչելով սահմանադրական դատարանի՝ իր 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՌ-690 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ նշում է, որ նշված որոշման մեջ Կրեմլի գրած իրավական երաշխիքները, ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսդրության մեջ հեղափոխում կատարված փոփոխությունների եւ լրացումների արդյունքում, լիարժեքորեն իրենց ամրագրումն են ստացել:

Ըստ պատասխանողի՝ ինչպես սահմանադրական դատարանի վերոհիշյալ ՍԴՌ-690 որոշման, այնպես էլ 2008թ. հոկտեմբերի 8-ի ՍԴՌ-765 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակում՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պարճառաբանված լինելու անհրաժեշտության վերաբերյալ նորմի առկայությունը ոչ թե հակասում է ՆՏ Սահմանադրությանը, այլ կառուցված է վճռաբեկ դատարանի կողմից սահմանադրական առաքելությունն իրականացնելու դրական կանխավարկածի վրա, այն է՝ ՆՏ վճռաբեկ դատարանը չի կարող շրջանցել այն հարցերը, որոնք կարող են ունենալ էական նշանակություն օրենքի միապետակ կիրառության համար:

Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթը սահմանադրականության խնդիր չի առաջացնում հետեւյալ հիմնավորմամբ. «ա) օրենսդիրը վճռաբեկ բողոքների վերաբերյալ որոշումների ընդունման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորելիս առաջնորդվել է Վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի օրենսդրական ապահովման եւ նրա հայեցողական լիազորությունների իրացման երաշխավորման անհրաժեշտությամբ, բ) օրենսդիրը հստակորեն սահմանել է այն պայմանը, այն է՝ որոշման պարճառաբանված լինելը, որի պարագայում Վճռաբեկ դատարանը կարող է միայն վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացնել, գ) վիճարկվող դրույթի բովանդակությունից բխում է, որ պարճառաբանված որոշումը պարտավորեցնում է Վճռաբեկ դատարանին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, ապահովելու վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման ընդունման հայեցողական լիազորության իրավաչափ իրականացումը»:

5. ՆՏ սահմանադրական դատարանն իր՝ 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՌ-690 որոշմամբ, ի թիվս այլոց, լուծել է ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» վերաբերող 231.1. հոդվածի (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) սահմանադրականության հարցը՝ նշված հոդվածի 2-րդ կետը վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պարճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու, հետեւաբար, նաեւ՝ արդարադատության արդյունավետության, բավարար մարչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով ճանաչելով Նայաստանի

Նանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին և 2-րդ մասեր), 18 (1-ին մաս) և 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» վերփառությամբ 231.1. հոդվածը «ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2007թ. նոյեմբերի 28-ի օրենքի հիման վրա նոր խմբագրությամբ շարադրվել է օրենսգրքի 233 հոդվածում: Օրենսգրքի 233 հոդվածի 2-րդ կետում նշված օրենքով կատարված փոփոխությունների արդյունքում ամրագրվեց. «... Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պարճառաբանված, բացառությամբ սույն օրենսգրքի 234 հոդվածի 1 կետի 1-ին ենթակետի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքերի»: Սահմանադրական դատարանը, նշված դրույթի՝ 2007թ. նոյեմբերի 28-ի խմբագրությամբ փոփոխության սահմանադրականության հարցին անդրադառնալով 2008թ. հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-765 որոշմամբ, 233 հոդվածի 2-րդ մասը՝ «բացառությամբ սույն օրենսգրքի 234 հոդվածի 1 կետի 1-ին ենթակետի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքերի» բառակապակցության մասով, ճանաչել է Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 18 և 19 հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ի կատարումն սահմանադրական դատարանի նշված որոշման և հաշվի առնելով այդ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ «ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2008թ. դեկտեմբերի 26-ի օրենքի 17 հոդվածի համաձայն օրենսգրքի 233 հոդվածի 2-րդ մասում խնդրո առարկա դրույթը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պարճառաբանված»: Այսինքն՝ ՆՏ սահմանադրական դատարանի ՍԴՈ-690 և ՍԴՈ-765 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ օրենսդրորեն ամրագրվել է վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը՝ առանց որևէ բացառության, պարճառաբանելու պահանջը՝ որպես դատարանի մատչելիության իրավունքի ապահովման երաշխիք:

6. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին որոշում է ընդունում, եթե օրենքի 68-75-րդ և 77-րդ հոդվածներում նշված գործերով ներկայացված որևէ դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի որոշումը: «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 60 հոդվածի 1-ին կետի համաձայն. «Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը ... գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված գործի քննությունը մերժելու հիմքեր»: Այս դրույթի առնչությամբ սահմանադրական դատարանն իր՝ 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշման մեջ ամրագրել է, որ «Այս դրույթը վկայում է, որ հնարավոր են այդպիսի դեպքեր, և սահմանադրական դատարանը կարող է փվյալ հարցին անդրա-

դառնալ գործի քննության ցանկացած փուլում՝ հաշվի առնելով գրավոր ընթացակարգով գործի քննության առանձնահատկությունները»:

ՆՏ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սահմանադրական դատարան ներկայացված դիմումում անձը կարող է վիճարկել միայն կոնկրետ գործով իր նկատմամբ կիրառված օրենքի սահմանադրականությունը: Նշված իրավակարգավորմանը համապատասխան դիմողը կարող է վիճարկել արվյալ օրինադրույթի տեքստն այն խմբագրությամբ, որն առկա է եղել իր նկատմամբ կիրառվելու պահին: Տվյալ դեպքում, նշված պահանջին համապատասխան դիմողը վիճարկում է ՆՏ քաղաքացիական դատարության օրենսգրքի 233 հոդվածի 2-րդ մասի՝ 2007թ. նոյեմբերի 28-ի խմբագրությամբ տեքստի սահմանադրականությունը:

Հաշվի առնելով, որ սահմանադրական դատարանն իր 2008թ. հոկտեմբերի 8-ի ՄԴՈ-765 որոշմամբ քննության է առել եւ լուծել վիճարկվող նորմի միեւնույն, 2007թ. նոյեմբերի 28-ի խմբագրությամբ տեքստի սահմանադրականության հարցը, սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմումում բարձրացված հարցի վերաբերյալ արդեն իսկ առկա է սահմանադրական դատարանի ՄԴՈ-765 որոշումը:

7. Սահմանադրական դատարանը դիմումի ուսումնասիրության արդյունքներով արձանագրում է նաեւ, որ դիմողի հիմնական փաստարկները կապված են ոչ թե վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցի հետ, այլ վերաբերում են պարզապես այդ օրինադրույթի կիրառման իրավաչափության հարցին: Մասնավորապես, այդ մասին են վկայում դիմողի հետեւյալ փաստարկները. «Երկու նույնական փաստական հիմքերով եւ իրավական հիմնավորումներով վճիռների դեմ նույն փաստաբանի կողմից բառացիորեն նույն տեքստով կազմված վճռաբեկ բողոքներից մեկն ընդունվում է վարույթ, պատճառաբանությամբ, որ վճռաբեկ բողոքը համապատասխանում է ՆՏ քաղ. դատ. օր-ի 231 եւ 234 հոդվածների պահանջներին, ինչպես նաեւ բողոքը բավարարվում է, ... իսկ մյուսը վերադարձվում է: ...վիճարկվող դրույթի պրակտիկայում կիրառմամբ գործ ունենք նաեւ ՆՏ - Սահմանադրության 14.1 հոդվածով երաշխավորված՝ օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքի, ինչպես նաեւ օրենքի միապետակ կիրառությունն ապահովելու վճռաբեկ դատարանի ֆունկցիայի խախտման հետք»: Բացի դրանից, դիմողն իրավամբ ընդունելով, որ վիճարկվող դրույթում վճռաբեկ բողոքը պատճառաբանված որոշմամբ վերադարձնելու օրենսդրական պահանջի ամրագրումը սահմանադրական դատարանի ՄԴՈ-690 որոշման արդյունք է, միաժամանակ նշում է, որ «վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին ՆՏ վճռաբեկ դատարանի որոշումները բովանդակային առումով չեն տարբերվում ՆՏ սահմանադրական դատարանի կողմից 09.04.2007 թվականի ՄԴՈ-690 որոշման ընդունման ժամանակ հետագուրված որոշումներից»:

Վերոհիշյալի արդյունքում, սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողը սահմանադրական դատարանին ներկայացնելով վիճարկվող դրույթը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան արված մեկնաբանությամբ, Սահմանադրությանը հակասող

ճանաչելու խնդրանք՝ միայն ձեռականորեն է բարձրացնում օրենքի սահմանադրականության հարց՝ ըստ էության բարձրացնելով այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում վկայակոչել իր՝ 2009թ. մարտի 17-ի ՄԴԱՌ-21 որոշման մեջ ամրագրված այն իրավական դիրքորոշումը, որ «...բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեռականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց..., սպա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով ՏՏ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 19 հոդվածի, 32 հոդվածի 1-ին, 3-րդ եւ 6-րդ կետերի, 60 հոդվածի 1-ին կետի, 69 հոդվածի 1-ին մասի պահանջներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Գեղեցիկ քնար» արտադրական կոոպերատիվի դիմումի հիման վրա՝ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 2-րդ մասի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պարճառաբանված» դրույթի՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել՝ դիմողին փրամադրելով սահմանադրական դատարանի 2008թ. հոկտեմբերի 8-ի ՄԴՌ-765 որոշումը:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 61 հոդվածի 4-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ.ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ**

*21 հուլիսի 2009 թվականի
ՄԴՌ-817*

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ՍԻԼՎԱ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ
ՎՐԱ՝ ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 414.1
ՆՈԴՎԱԾԻ 2.1-ՐԴ ՄԱՍԻ՝ ՆԱՅԱՍԱՆՆԻ
ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 հուլիսի 2009թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դափարանը՝ կազմով.

Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեկուցող), Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուդյանի, Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն ՆՏ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դափարանի մասին» ՆՏ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Սիլվա Ասատրյանի դիմումի հիման վրա՝ Նայասարանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 414.1 հոդվածի 2.1-րդ մասի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ս. Ասատրյանի՝ 14.04.2009թ. ՆՏ սահմանադրական դափարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դափարանը

Պ Ա Ր Զ Ե Յ .

1. ՆՏ քրեական դատավարության օրենսգիրքը ՆՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից սպորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» վերաբառությամբ 414.1 հոդվածը, որպես օրենսգրքի լրացում, ընդունվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից 2006թ. հուլիսի 7-ին՝ ՆՕ-152-Ն օրենքով: Նշված հոդվածի դրույթները փոփոխվել են ՆՏ Ազգային ժողովի կողմից 2007թ. փետրվարի 21-ին, 2007 թվականի նոյեմբերի 28-ին և 2008 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված՝ համապատասխանաբար՝ ՆՕ-93-Ն, ՆՕ-270-Ն, ՆՕ-237-Ն օրենքներով:

Սահմանադրական դատարանն իր՝ 2007թ. ապրիլի 11-ի ՍԴՈ-691 որոշմամբ, քննության առնելով օրենսգրքի 414.1. հոդվածի (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) սահմանադրականության հարցը, նշված հոդվածի 2-րդ մասը՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պարճառաբանման պարպադիր պայման չնախատեսելու, հետևաբար, նաեւ՝ արդարադատության արդյունավետության, բավարար մատչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով, ճանաչել է Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին և 2-րդ մասեր), 18 (1-ին մաս), 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Ազգային ժողովի կողմից 28.11.2007թ. ընդունված՝ «ՆՏ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՆՏ օրենքի 72 հոդվածով, սահմանադրական դատարանի նշված որոշման արդյունքում, օրենսգրքի 414.1 հոդվածը լրացվել է 2.1-րդ մասով, որը սահմանում է. «Սույն օրենսգրքի 414.2 հոդվածի առաջին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հիմքերի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշումը պետք է լինի պարճառաբանված»:

Դիմողը սահմանադրական դատարանում վիճարկում է օրենսգրքի 414.1 հոդվածի (2007թ. նոյեմբերի 28-ի լրացումներով) 2.1-րդ մասի սահմանադրականությունը:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ Ս. Ասարյանը մեղավոր է ճանաչվել Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ապրյանի դատարանի 12.10.2007թ. դատավճռով: Վերջինս բողոքարկվել է ՆՏ վերաքննիչ քրեական դատարան: ՆՏ վերաքննիչ քրեական դատարանի 18.06.2008թ. դատավճռով Ս. Ասարյանի վերաբերյալ դատավճիռը թողնվել է անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման: Նշված դատավճռի դեմ 21.11.2008թ. դիմողի կողմից բերվել է վճռաբեկ բողոք՝ նյութական և դատավարական իրավունքի խախտման հիմքով: ՆՏ վճռաբեկ դատարանի 15.12.2008թ. թիվ ՎԲ-82/08 որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է այն պարճառաբանությամբ, որ չկան հիմքեր եզրակացնելու, որ բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միարեսակ կիրառության համար, և որ վերաքննիչ դատարանի կողմից թույլ է արվել առերեսույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ, ինչպես նաեւ վերանայվող դատական ակտն առերեսույթ հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին:

3. Դիմողը վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցը բարձրացնում է երկու հիմնական առումներով: **Նախ**, նշված դրույթը, չնայած սահմանադրական դատարանի 2007թ. ապրիլի 9-ի ՄԴՈ-690 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին, թույլ է փախա օրենսգրքի 414.2 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնել առանց պարճառաբանության, ինչն «արդեն իսկ հակասում է սահմանադրական դատարանի ՄԴՈ-690 և ՄԴՈ-691 որոշումներին, Սահմանադրության 18 (1-ին մաս) և 19 (1-ին մաս) հոդվածներին, ինչպես նաև 6 հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, այդ թվում «Իրավական ակտերի մասին» ՆՆ օրենքի 9 հոդվածի 2-րդ մասի համադրմամբ, դրանցով էլ Սահմանադրության 3 հոդվածին»:

Երկրորդ, վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու որոշումները պարճառաբանելու պահանջի կատարման առնչությամբ ձեռավորված հակասական իրավակիրառական պրակտիկան վիճարկվող դրույթի իրավական անորոշության արդյունք է, ինչը դրսևորվում է նրանում, որ օրենսգրքի վիճարկվող դրույթը չի սահմանել վճռաբեկ դատարանի որոշման պարճառաբանվածության չափանիշները: Ըստ դիմողի՝ որպես վճռաբեկ դատարանի որոշման պարճառաբանվածության չափանիշներ պեպք է հանդես գան վճռաբեկ դատարանի պարտականություններին ուղղված այնպիսի օրենսդրական պահանջներ, ինչպիսիք են՝ ա) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ այն նյութական և դատավարական նորմերի նշումը, որոնց խախտման հիմքով բերվել է վճռաբեկ բողոքը, բ) առերևույթ դատական սխալի բացակայության հիմնավորումը, գ) ծանր հեփեանքի բացակայության հիմնավորումը, դ) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշման՝ օրենքի միափեսակ կիրառության համար էական նշանակություն չունենալու հիմնավորումը, ե) վերանայվող դատական ակտն առերևույթ (*prima facie*) վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին չհակասելու հիմնավորումը, զ) «Էական նշանակություն», «Ծանր հեփեանք» և «վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած դատական ակտ» հասկացությունների հստակեցումը:

Դիմողը խնդրում է օրենսգրքի 414.1 հոդվածի 2.1-րդ մասում ամրագրված դրույթը՝ իրավակիրառ պրակտիկայում դրան փրված մեկնաբանությամբ, ճանաչել ՆՆ Սահմանադրության 3, 6, 18 և 19 հոդվածների պահանջներին հակասող և անվավեր «...այնքանով, որքանով նշված դրույթը վճռաբեկ դատարանին չի պարտավորեցնում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ պարճառաբանելու, թե ինչու առկա չէ ծանր հեփեանքը, կամ ինչու բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը չի կարող էական նշանակություն ունենալ օրենքի միափեսակ կիրառության համար կամ ինչու վերանայվող դատական ակտն առերևույթ (*prima facie*) չի հակասում վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին, ինչպես նաև այնքանով, որքանով վիճարկվող դրույթը՝ օրենսգրքի 414.2 հոդվածի առաջին մասի 1-ին կետերով նախատեսված հիմքի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը պարճառաբանված որոշմամբ վերադարձնելու պահանջ չի սահմանում»:

4. Պատասխանողի պնդմամբ՝ ՆՏ քրեական դատավարության օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում վճարել բողոքը վերադարձնելու մասին վճարել դատարանի որոշման պարճառաբանման պարտադիր պայմանը լիարժեքորեն երաշխավորվել է: Պատասխանող կողմը մատնանշում է «ՆՏ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2007թ. նոյեմբերի 28-ի ՆՏ օրենքի 72 հոդվածով օրենսգրքի 414.1 հոդվածի լրացումը 2.1-րդ մասով, որը սահմանում է. «Սույն օրենսգրքի 414.2 հոդվածի առաջին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հիմքերի բացակայության հիմնավորմամբ վճարել բողոքը վերադարձնելու մասին վճարել դատարանի որոշումը պետք է լինի պարճառաբանված»:

Միաժամանակ, պատասխանող կողմը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՆՏ սահմանադրական դատարանն անդրադառնալով ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության խնդրին՝ ՍԳՈ-765 որոշմամբ ՆՏ Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչել վիճարկվող հոդվածի 2-րդ մասը՝ «բացառությամբ սույն օրենսգրքի 234 հոդվածի 1 կետի 1-ին ենթակետի բացակայության հիմնավորմամբ վճարել բողոքը վերադարձնելու դեպքերի» բառակապակցության մասով, գտնում է, որ հիշյալ որոշումը հավասարապես փարածվում է նաև քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված համանման հարաբերությունների նկատմամբ:

Պատասխանող կողմը հետևություն է անում, որ «ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 414.1 հոդվածի 2.1-րդ մասով ամրագրված՝ վճարել բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պարճառաբանված, դրույթը սահմանադրականության խնդրի չի առաջացնում հետևյալ հիմնավորմամբ՝ ա) օրենսդիրը վճարել բողոքի վերաբերյալ որոշումների ընդունման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորելիս առաջնորդվել է վճարել դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի օրենսդրական ապահովման և նրա հայեցողական լիազորությունների իրացման երաշխավորման անհրաժեշտությամբ, բ) օրենսդիրը հստակորեն սահմանել է այն պայմանը, այն է՝ որոշման պարճառաբանված լինելը, որի պարագայում վճարել դատարանը կարող է միայն վճարել բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացնել, գ) վիճարկվող դրույթի բովանդակությունից բխում է, որ պարճառաբանված որոշումը պարտավորեցնում է վճարել դատարանին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, ապահովելու վճարել բողոքը վերադարձնելու մասին որոշման ընդունման հայեցողական լիազորության իրավաչափ իրականացումը»:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի վիճարկվող դրույթին համարժեք և նույնաբովանդակ դրույթ էր ամրագրված նաև ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 2-րդ մասում: Ինչպես վիճարկվող դրույթում, այնպես էլ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նշված դրույթում օրենսդիրը վճարել բողոքը վերադարձնելու մասին վճարել դատարանի որոշման պարճառաբանման պահանջը չէր փարածում այն որոշումների վրա, որոնցում

վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքն այն է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը չի կարող էական նշանակություն ունենալ օրենքի միասրեսակ կիրառության համար:

ՆՏ սահմանադրական դատարանն իր՝ 2008թ. հոկտեմբերի 8-ի ՄԴՌ-765 որոշմամբ, քննության առնելով ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության հարցը՝ այն ճանաչել է Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 18 եւ 19 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր՝ «բացառությամբ սույն օրենսգրքի 234 հոդվածի 1 կետի 1-ին ենթակետի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքերի» բառակապակցության մասով:

Նշված որոշման պարճառաբանական մասում սահմանադրական դատարանը, մասնավորապես, արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումները. «Իր ՄԴՌ-690 որոշման մեջ սահմանադրական դատարանը պարճառաբանվածության պարտադիր պահանջը կապում է ոչ թե վճռաբեկ բողոքի ընդունելիության այս կամ այն կոնկրետ հիմքի հետ, այլ՝ բացառապես բոլոր հիմքերի հետ: Նման պահանջն ինքնանպատակ չէ, եւ դրա նպատակն է ապահովել վճռաբեկ բողոքը վերադարձնելիս դատարանի հայեցողական լիազորության իրավաչափ եւ օրինական իրականացումը, ինչպես նաեւ դատական ակտի նկատմամբ անձի վստահության ապահովումը:

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի նման որոշման առկայության պայմաններում ՆՏ Ազգային ժողովն օժտված չէ վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքերից որեւէ մեկը «արտոնյալ» վիճակում դնելու հայեցողությամբ, եւ չի կարող սահմանել, որ այդ հիմքի վկայակոչումն «ինքնաբավ է» ու դրա առկայության հիմնավորման կարիք չկա: Ուստի, անկախ նրանից, թե օրենսդիրը վճռաբեկ բողոքի ընդունելիության ինչ հիմքեր կսահմանի, դրանցից բոլորը եւ յուրաքանչյուրը ենթակա են պարճառաբանման»:

ՆՏ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 414.1 հոդվածի լրացումը 2.1-րդ մասով, որում միայն նախատեսում է, որ օրենսգրքի 414.2 հոդվածի առաջին մասի 2-րդ եւ 3-րդ կետերով նախատեսված հիմքերի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշումը պետք է լինի պարճառաբանված, չի ապահովել սահմանադրական դատարանի ՄԴՌ-691 որոշման ամբողջական կարարումը՝ գործնականում բացառություն անելով օրենսգրքի 414.2 հոդվածի առաջին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պարճառաբանման առնչությամբ:

Նաշվի առնելով ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթի եւ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթի բովանդակային համարժեքությունը՝ սահմանադրական դատարանը հենվում է ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի՝ 08.10.2008թ. ՄԴՌ-765 որոշմամբ արտահայտած իր իրավական դիրքորոշումների վրա եւ

գրնում է, որ այդ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները հավասարապես վերաբերում են նաև ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող հոդվածին:

6. Ինչ վերաբերում է դիմողի կողմից՝ վիճարկվող դրույթում առկա անորոշության հիմքով դրա սահմանադրականությունը փաստարկելու հանգամանքին, ապա սահմանադրական դատարանը գրնում է, որ վիճարկվող դրույթում որեւէ անորոշություն առկա չէ:

Վերահասարակելով 2008թ. նոյեմբերի 25-ի իր ՍԴՈ-780 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հարկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինասարեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է «էական նշանակություն», «ծանր հետեւանք» եւ «վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած դատական ակտ» հասկացությունների եւ դրանց բնորոշ հարկանիշների բովանդակության բացահայտմանը:

ՏՏ վճռաբեկ դատարանը, գործելով ՏՏ Սահմանադրության 92 հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված իր սահմանադրաիրավական գործառույթի, այն է՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառույթի եւ այդ գործառույթն իրականացնելիս՝ իրավունքի զարգացմանը նպաստելու իրավասության շրջանակներում, պարտավոր է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման մեջ մեկնաբանել խնդրո առարկա հասկացությունների օրենսդրական բովանդակությունը՝ հնարավորություն փայլով իրավունքի համապատասխան սուբյեկտներին կանխարեսել իրենց վարքագծի իրավական հետեւանքները: Վճռաբեկ դատարանի այս պարտավորությունը շեշտադրված է նաև սահմանադրական դատարանի ՍԴՈ-690 որոշման 10-րդ կետում:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը վերահասարակելով 2009թ. մարտի 17-ի իր ՍԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ հարկ է համարում ընդգծել, որ անձի իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ իրականացումը պայմանավորված է նաև ՏՏ քրեական դատավարության օրենսգրքով նախարեսված ընթացակարգային պահանջների հստակ եւ միակերպ կատարմամբ: Վիճարկվող դրույթում «պարճառաբանված» արտահայտությունն իրավակիրառական պրակտիկայում պետք է ընկալվի իր բառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի նորմատիվ պահանջները, եւ այնպես, որ չփոփոխվի այդ պահանջների իրավական իմաստը:

Ինչ վերաբերում է նրան, որ ըստ դիմողի՝ առանձին դեպքերում, մասնավորապես՝ դիմողի դեպքում, վճռաբեկ դատարանը ձեւական կամ փարբերակված մոտեցում է դրսեւորում վճռաբեկ բողոքը վերադարձնելու վերաբերյալ օրենքով ամրագրված պահանջին եւ ըստ էության չի բավարարում այդ պահանջը, ապա դա դատական ակտի իրավաչափության եւ ոչ թե փոխալ պահանջն ամրագրող դրույթի անորոշության եւ այդ հիմքով վերջինիս սահմանադրականության հարց է:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ սահմանադրական դատարանն իր՝ 2007թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ փարեկան հաղորդման մեջ ընդգծել է, որ անհատական դիմումների հիման վրա դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ դատարանների կողմից բողոքը վերադարձնելու մասին որոշման ոչ բավարար հիմնավորումը պատճառ է դառնում, որ քաղաքացիները չեն համոզվում իրենց բողոքի ոչ իրավաչափ լինելու հարցում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 101 հոդվածի 6-րդ կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՆՇ քրեական դատավարության օրենսգրքի 414.1 հոդվածի 2.1-րդ մասը՝ օրենսգրքի 414.2 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը պատճառաբանված որոշմամբ վերադարձնելու պահանջը բացառելու մասով, ճանաչել Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 18 եւ 19 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

28 հուլիսի 2009 թվականի
ՄԴՈ-818

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻ Խ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԻ 285 ՆՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

12 սեպտեմբերի 2009թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն ՆՏ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Խ. Սուքիասյանի դիմումի հիման վրա՝ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 285 հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղ. Խ. Սուքիասյանի՝ 23.04.2009թ. դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, կողմերի գրավոր բացատրությունները, հեղազոտելով ՆՏ քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. ՆՏ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է Նայասպանի Նանրապետության Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, ՆՏ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող 285 հոդվածը փոփոխվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի մայիսի 25-ին ընդունված՝ «Նայասպանի

Նանրապեղծության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքով:

ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 285 հոդվածը վերնագրված է «Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների քննումը», որի 2-րդ մասի երկրորդ պարբերությունը 2006 թվականի մայիսի 25-ի խմբագրությամբ սահմանում է.

«Ներախուզման մեջ գրնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը դատարանը քննում է միջնորդությունը ներկայացրած անձի եւ հերախուզման մեջ գրնվող մեղադրյալի պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապայմանությունը հանգում է հերելյալին: Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը 05.03.2008թ. որոշում է կայացրել ՆՏ հատուկ քննչական ծառայության վարույթում քրեական գործով մեղադրյալ Խ. Սուքիասյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանք կիրառելու մասին՝ նրան հայտնաբերելու պահից 2 ամիս ժամանակով:

Դիմողի ներկայացուցիչները 11.11.2008թ. միջնորդություն են հարուցել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ դիմողի նկատմամբ կալանք կիրառելու մասին նույն դատարանի վերը նշված որոշման բողոքարկման համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու եւ վերականգնելու մասին:

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 21.11.2008թ. որոշմամբ միջնորդությունը մերժվել է:

Դիմողի ներկայացուցիչները միջնորդությունը մերժելու վերաբերյալ վերը նշված որոշումը 08.12.2008թ. բողոքարկել են ՆՏ վերաքննիչ քրեական դատարան՝ միաժամանակ ներկայացնելով նաեւ դիմողի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին ընդհանուր իրավասության դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոք՝ այն ըստ էության քննության առնելու համար:

ՆՏ վերաքննիչ քրեական դատարանի կողմից 22.12.2008թ. կայացված երկու որոշումներով առաջին բողոքը մերժվել է, իսկ երկրորդը թողնվել է առանց քննության:

ՆՏ վճռաբեկ դատարանի 03.03.2009թ. որոշմամբ վերաքննիչ քրեական դատարանի վերը նշված որոշումների դեմ բերված վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

3. Ըստ դիմողի՝ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 285 հոդվածի վիճարկվող դրույթը հակասում է ՆՏ Սահմանադրության 3 հոդվածի, 16 հոդվածի 3-րդ մասի եւ 25 հոդվածի պահանջներին:

Ըստ դիմողի՝ ՆՏ Սահմանադրության 16 հոդվածի 3-րդ մասի բովանդակությունից բխում է, որ դատարանի որոշմամբ կալանավորվել կարող է միայն ձերբակալված անձը, ընդ որում՝ 72 ժամվա ընթացքում: «Այսինքն՝ անձին դատարանի որոշմամբ կալանա-

վորելու նախապայմանը նրա՝ ձերբակալված լինելն է: Այլ կերպ ասած, Սահմանադրության նշված նորմն արգելում է դադարանին կայացնել անձին կալանավորելու որոշում այն դեպքում, երբ վերջինս ձերբակալված չէ կամ, թեև ձերբակալված է եղել, սակայն մինչև դադարանի կողմից համապատասխան որոշում կայացնելը լրացել է նրան ձերբակալվածի կարգավիճակում պահելու առավելագույն 72 ժամը»: Ներքևաբար, ըստ դիմողի՝ վիճարկվող նորմը, հնարավորություն ընձեռելով դադարանին՝ անձին կալանավորելու որոշում կայացնել հեռակա կարգով՝ նրա բացակայության պայմաններում, առերևույթ հակասում է ՏՏ Սահմանադրության 16 հոդվածի 3-րդ մասի պահանջներին:

Դիմողը դիրքորոշում է հայտնում նաև առ այն, որ «... այն ընթացակարգը, որ նախատեսված է Սահմանադրության 16-րդ հոդվածի 3-րդ մասով, հեղափոխումն է մեզ գրավող անձին երաշխիք է փախի ոչ միայն մասնակցելու իր նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ չկիրառելու հարցի դատական քննությանը, այլև նշված դատական քննության ընթացքում այս առթիվ ներկայացնելու իր առարկությունները, ներառյալ՝ միջնորդելու իրեն գրավով ազատ արձակելու մասին»:

ՏՏ Սահմանադրության 25 հոդվածի ենթադրյալ խախտման առնչությամբ դիմողը փաստարկում է, որ «... այն իրավիճակը, երբ հեղափոխումն է գործընթացը երկարատև բնույթ է կրում, իսկ հեղափոխումն է մեզ գրավող մեղադրյալը, որի նկատմամբ որպես խափանման միջոց հեռակա կարգով ընտրված է կալանավորումը, այդ ողջ ժամկետում գրկված է Նայաստանի Նանրապետությունից դուրս գալու կամ Նայաստանի Նանրապետություն մուտք գործելու, իսկ Նայաստանի Նանրապետության փարածքում գտնվելու դեպքում՝ ազատ փեղաշարժվելու եւ բնակության վայր ընտրելու հնարավորություններից, անհամարեղելի է Սահմանադրության 25-րդ հոդվածի հետ»:

4. Պատասխանողը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ ՏՏ Սահմանադրության 16 հոդվածով սահմանված իրավանորմը վերաբերում է ձերբակալման ինստիտուտին, այլ ոչ թե կալանավորմանը: Ուստի պատահական չէ, որ նշված նորմում օգտագործվում է «ձերբակալված անձ» եւ «ձերբակալման պահից» բառակապակցությունները, ինչից ուղղակիորեն բխում է, որ փյալ նորմը վերաբերում է ոչ թե բոլոր այն անձանց եւ այն դեպքերին, երբ հնարավոր է կալանավորում կիրառել, այլ՝ միայն ձերբակալման ինստիտուտին:

Ինչ վերաբերում է 72 ժամվա ընթացքում որոշման ընդունման պահանջին եւ դատական նիստին անձի ներկայության ապահովմանը, ըստ պատասխանողի՝ դրանք սոսկ երաշխիքներ են, որպեսզի դադարանի կողմից համապատասխան գնահատական փոփոխության հետապնդում իրականացնող մարմնի գործողությունների եւ որոշման հիմնավորվածության վերաբերյալ:

Միաժամանակ, պատասխանողն անհրաժեշտ է համարում կարելու այն հանգամանքը, որ դադարանը լիովին իրավասու է կալանավորման մասին որոշում ընդունել նաև առանց քրեական հետապնդում իրականացնող մարմնի միջնորդության կամ քրեական հետապնդում իրականացնող մարմնին նման միջնորդություն կարող է անել նաև այն դեպքում, երբ անձի նկատմամբ ձերբակալում չի կիրառվել: Այսինքն՝ ձեր-

բակալման իրավական հետեւանքը ցանկացած դեպքում պետք է լինի կամ 72 ժամվա ընթացքում անձի ազատ արձակումը, կամ կալանավորման մասին որոշման ընդունումը, բայց կալանավորման համար նախապայման չէ անձի ձերբակալված լինելու փաստը:

Ներելաբար, ՏՏ Սահմանադրության 16 հոդվածի 3-րդ մասի մեկնաբանումից ամենեւին չի հետեւում, որ կալանավորման համար միակ նախապայմանը ձերբակալումն է, դրանք որոշակի դեպքերում հաջորդում են միմյանց:

Անդրադառնալով այն հարցին, թե անձի բացակայությամբ վերջինիս կալանավորման մասին որոշում ընդունելը հակասում է, արդյոք, ՏՏ Սահմանադրության 25 հոդվածով սահմանված՝ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքին, պարասխանողն անհրաժեշտ է համարում նշել, որ Սահմանադրության 43 հոդվածի պահանջներին համապատասխան՝ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պարվի եւ բարի համբավի պաշտպանության համար: Ներելաբար, մեղադրյալի նկատմամբ կալանավորման կիրառման միջոցով ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակումը չի հակասում Սահմանադրության 25 հոդվածին:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Նայասպանի Նանրապետությունը, հռչակելով իրեն որպես իրավական պետություն, ՏՏ Սահմանադրության 16 հոդվածով հստակ նախատեսում է երաշխավորում է յուրաքանչյուր անձի՝ անձնական ազատության եւ անձեռնմխելիության իրավունքը: Սահմանադրության այս հոդվածը, վերաբարդելով Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5 հոդվածի, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3 հոդվածի, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9 հոդվածի դրույթները, սպառիչ կերպով սահմանում է անձին ազատությունից զրկելու դեպքերը՝ կանխորոշելով յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անձի ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակներ:

ՏՏ Սահմանադրության 43 հոդվածն անձնական ազատության եւ անձեռնմխելիության իրավունքը չի դիպարկում որպես այդ հոդվածի հիմքերով սահմանափակվող իրավունք: Առկա է իրավունքների սահմանափակման այն առանձնահատուկ դեպքը, երբ Սահմանադրությունն է որոշում փոխաբերական իրավունքի սահմանափակման չափանիշը, սահմանները եւ դեպքերը՝ դա չվերապահելով նույնիսկ օրենսդրի իրավասությանը:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ, ՏՏ Սահմանադրության 16 հոդվածի 1-ին մասում ամրագրելով անձին ազատությունից զրկելու դեպքերը, սահմանադիրը միեւնույն ժամանակ դրանցում արտացոլված նպատակներով եւ հիմքերով անձին ազատությունից զրկելու ձեւերի ընտրությունը վերապահել է օրենսդրի հայեցողությանը՝ որեւէ կերպ չկանխորոշելով, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կամ կոնկրետ նպատակին հասնելու համար ինչ դատավարական ընթացակարգային միջոցառումներ կարող են կիրառվել: ՏՏ քրեական դատավարության օրենսգիրքը, ՏՏ Սահմանադրու-

թյան 16 հոդվածի 1-ին մասին համահունչ, որպես դրանցում ամրագրված՝ առանձին իրավաչափ նպատակներին հասնելու դադարավարական միջոցներ, նախապես էլ է ձեռքարկալումը եւ կալանավորումը, միաժամանակ որոշակիացնելով դրանցից յուրաքանչյուրի գործառոյթը, նպատակը եւ հիմքերը:

ՆՆ Սահմանադրոյթյան 16 հոդվածը՝ հեղապնդելով անձին կամայականորեն ազատրոյունից գրկելը բացառելու նպատակ, իր 2-րդ, 3-րդ եւ 4-րդ մասերում ամրագրում է այն իրավական երաշխիքները, որոնք կոչված են անձին պաշտպանելու ազատրոյունից անօրինական գրկելուց:

16 հոդվածի 3-րդ մասը բովանդակում է հետեյալ կարեւորագոյն երաշխիքները.

1. անձը չի կարող ձերբակալված վիճակում անազատրոյան մեջ պահվել 72 ժամից ավելի,

2. կալանավորումը կարող է րեղի ունենալ բացառապես դադարանի որոշմամբ: Այս երաշխիքը պայմանավորված է նրանով, որ դադարանը, լինելով անկախ եւ անկողմնակալ՝ կոչված լինելով ներկայացնելու բացառապես իրավունքի շահը, կարող է օբյեկտիվ եւ անաչառ գնահատական րալ անձին ազատրոյունից գրկելու հիմնավորվածութրոյանը,

3. նշված ժամկետում ձերբակալված անձի առնչութրամբ կալանավորման որոշում չկայացվելու դեպքում անձը ենթակա է անհապաղ ազատ արձակման:

Այսպիսով, 16 հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրոյթի նպատակն է բացառել արդեն իսկ ձերբակալված անձին կամայականորեն անազատրոյան մեջ պահելն այն դեպքում, եթե այդ դրոյթով սահմանված ժամկետում նրան կալանավորելու որոշում չի կայացվում: Նամապարասխանաբար՝ այդ նորմի իրավակարգավորման առարկան ձերբակալված անձի առնչութրամբ այդ նորմով սահմանված ժամկետում կալանավորման որոշում չկայացնելու իրավական հետեւանքներն են: 16 հոդվածի 3-րդ մասում ամրագրված նորմի իրավակարգավորման առարկայից եւ նպատակից բխում է, որ այն սահմանում է ձերբակալման ինստիտուտի կիրառման դեպքում Սահմանադրոյթյամբ սահմանված ժամկետում կալանավորման որոշում չկայացնելու իրավական հետեւանքները:

Նաշվի առնելով ՆՆ Սահմանադրոյթյան 16 հոդվածի սահմանադրաիրավական բովանդակութրոյունը, այդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման առարկան եւ նպատակը՝ սահմանադրական դադարանը գրնում է, որ ՆՆ Սահմանադրոյթյան 16 հոդվածը, այդ թվում՝ նաեւ դրա 3-րդ մասում ամրագրված դրոյթը, չի սահմանում «ձերբակալման» եւ «կալանավորման» ինստիտուտների կիրառման, ձերբակալման կամ կալանավորման մասին իրավասու մարմինների կողմից անհրաժեշտ որոշումներ կայացնելու հաշորդականութրոյունը, ձերբակալումը չի դիտարկում որպես կալանավորման պարտադիր նախապայման եւ, հետեւաբար, ձերբակալված լինելու րաստի բացակայութրոյունը՝ որպես կալանավորումը բացառող հանգամանք: Միաժամանակ, քրեական գործի մինչդատրական վարոյթի րուում վերահսկողական իր գործառոյթն իրականացնելու նպատակով դադարանի կողմից կալանավորման վերաբերյալ ընդունված որոշումը ոչ թե անձին դատրապարտող ակտ է, այլ արդոյունավեր ու անաչառ արդարադատրոյուն իրականացնելու, Սահմանադրոյթյան 16 հոդվածի, Մարդու իրավունքների եւ հիմնաբար ազատու-

թյունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5 հոդվածի պահանջների կատարումն ապահովող նախապայման:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «ձերբակալում» և «կալանավորում» ինստիտուտների կիրառման պարպադիր հաջորդականության հնարավորությունը բացառվում է նաև այդ ինստիտուտների էության, նպատակների և կիրառման հիմքերի համարեքստում:

«Ձերբակալման» ինստիտուտի էությունն ու նպատակները բացահայտված են ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 128 հոդվածի 1-ին մասում: Ձերբակալումը դատավարական հարկադրանքի միջոց է, որի պարպադիր հատկանիշ է կարճաժամկետ լինելը, և նպատակաուղղված է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելուն: Ձերբակալմամբ հետապնդվող նպատակները համահունչ են ՆՏ Սահմանադրության 16 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում մատնանշված նպատակներին: Այսինքն՝ օրենսդիրը որպես նշված սահմանադրական նորմում ամրագրված նպատակներին հասնելու դատավարական միջոց նախատեսել է ձերբակալումը: ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ 17-ը, ձերբակալման նպատակներից ելնելով, սահմանում է ձերբակալման հիմքերը և կարգը:

«Կալանավորման» ինստիտուտի՝ որպես խափանման միջոցի պեսակի, էությունը բացահայտված է ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 134 հոդվածում: Վերջինիս համաձայն՝ կալանավորումը միայն մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոց է, որի նպատակն է քրեական գործով վարույթի ընթացքում անձի ոչ պարզաճ վարքագծի կանխումը: Ի տարբերություն ձերբակալման, կալանավորումը, լինելով խափանման միջոցներից մեկը, ունի այլընտրանք և խափանման բոլոր միջոցների շարքից ընտրվում է այն ժամանակ, երբ խափանման միջոցների կիրառմամբ հետապնդվող նպատակներին հասնելուն առավելապես կարող է նպաստել խափանման միջոցի հենց այդ պեսակը՝ հաշվի առնելով ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 135 հոդվածի 3-րդ մասով սահմանված բոլոր հանգամանքները: Օրենսգրքի 135 հոդվածը, ամրագրելով կալանավորման հիմքերը, ըստ էության մատնանշում է ոչ պարզաճ վարքագծի այն հնարավոր դրսևորումները, որոնք կանխելու նպատակով որպես խափանման միջոց կիրառվում է կալանավորումը: Կալանավորման նպատակի և հիմքերի ուսումնասիրությունը վկայում է, որ կալանավորմամբ հետապնդվող նպատակներն ըստ էության համահունչ են ՆՏ - Սահմանադրության 16 հոդվածի 1-ին մասի, մասնավորապես 3-րդ կետում մատնանշված նպատակին, այն է՝ օրենքով սահմանված որոշակի պարպականությունների կատարումն ապահովելու նպատակին, ինչպես նաև 4-րդ կետում մատնանշված՝ հանցագործությունը կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակին: Այսինքն, օրենսդիրը՝ որպես նշված սահմանադրական նորմում ամրագրված նպատակներին հասնելու դատավարական միջոց նախատեսել է կալանավորումը:

«Ձերբակալում» և «կալանավորում» ինստիտուտների՝ օրենսդրությամբ սահմանված նպատակների և հիմքերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ այդ ինստիտուտներն ունեն ինքնուրույն բովանդակություն, հետապնդում են միմյանցից

ըստ էության փարբերվող նպատակներ, ունեն կիրառման միմյանցից էապես փարբերվող հիմքեր: Դրանցից յուրաքանչյուրն օրենսդիրն ընտրել է որպես ՆՏ Սահմանադրության 16 հոդվածի 1-ին մասում մատնանշված առանձին նպատակների հասնելու ինքնուրույն դատարարական միջոց, եւ կիրառվում է փարբեր հիմքերի առկայությամբ: Ներկայացրած դրանցից յուրաքանչյուրը, առանց որեւէ փոխադասմանավորվածության, փոխկապակցվածության եւ հաջորդականության, ինքնուրույնաբար կարող է կիրառվել, երբ առկա են դրանով հերպասվող նպատակները եւ դրա կիրառման համար անհրաժեշտ հիմքերը: Ներախուզման մեջ գտնվող մեղադրյալի պարագայում, երբ կալանավորման հիմքերն առավել ակնհայտ են եւ ոչ վիճահարույց, կալանավորումն ըստ էության այն համարժեք իրավաչափ միջոցն է, որն անհրաժեշտ է կալանավորմամբ հերպասվող նպատակի համար:

7. Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի՝ անձի ազատության եւ անձնական անձեռնմխելիության իրավունքն ամրագրող 5 հոդվածի 3-րդ կետը, որպես անձին ազատությունից զրկելու գործընթացում օրինականության ապահովման կարեւոր երաշխիք, պահանջում է, որ ազատությունից զրկված անձն անհապաղ փարվի դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, ով օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն: Կոնվենցիայի այս դրույթի վերաբերյալ ձեւավորված՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքն անձին ազատությունից զրկելու օրինականության նկատմամբ դատական վերահսկողության նշված պահանջի բաղադրատարր է համարում, ի թիվս այլոց, անձին ազատությունից զրկելու օրինականության հարցի քննության ընթացքում տվյալ անձի լավելու իրավունքի ապահովումը (մասնավորապես, *Կեն, Եվրոպական դատարանի՝ Կամպանիսի* ընդդեմ Նոնասպանի գործով 1995թ. հուլիսի 13-ի վճիռը, կետ 47, *Kampanis v. Greece*, Աքվիլինա ընդդեմ Մալթայի գործով 1999թ. ապրիլի 29-ի վճիռը, 47-50-րդ կետեր, *Aquilina v. Malta*): Այս իրավունքի իրացումը հնարավոր է դառնում տվյալ անձին ազատությունից զրկելու պահից անհապաղ դատավորի մոտ փանելու միջոցով:

ՆՏ քրեական դատարարության օրենսգրքի համաձայն՝ կալանքի ձեռով անձին ազատությունից զրկելու հարցի քննարկումը տեղի է ունենում վարույթն իրականացնող մարմնի կողմից կալանքը՝ որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության դատական քննության շրջանակներում: ՆՏ քրեական դատարարության օրենսգրքի 285 հոդվածի 2-րդ մասը, սահմանելով կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդության քննարկմանը ներկա գտնվող սուբյեկտների շրջանակը, Կոնվենցիայի 5 հոդվածի 3-րդ կետի պահանջներին համահունչ՝ ապահովում է ազատությունից զրկված անձի՝ դատարանի առջեւ լավելու իրավունքի իրացումը:

Նաշվի առնելով այն հանգամանքը, որ դատավորի մոտ փարվելու եւ լավելու իրավունքի իրացումն անմիջականորեն եւ անխզելիորեն կապված է անձին փաստացիորեն անազատության մեջ պահելու, այն է՝ անձին հասարակությունից ֆիզիկապես մեկուսացնելու փաստի հետ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ իրավունքի իրաց-

ման երաշխավորման պարտականությունը պետության համար ծագում է անձին ազատությունից փաստացիորեն զրկելու, այն է՝ անձին հասարակությունից ֆիզիկապես մեկուսացնելու պահից: Այսինքն՝ ինչպես ՆՏ Սահմանադրության 16 հոդվածով, այնպես էլ Կոնվենցիայի 5 հոդվածով նախատեսված բոլոր երաշխիքները, այդ թվում՝ նաև դատարանի առջև լավելու իրավունքը, սկսում են գործել միայն այն պահից սկսած, երբ անձը պետության կողմից փաստացիորեն զրկվում է ազատությունից: Նպտեաբար, նկատի ունենալով, որ հեղափոխության մեջ գլխավոր անձը փաստացիորեն ազատությունից զրկված չէ, նրա բացակայության պայմաններում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդության քննարկման ժամանակ այդ անձը չի օգտվում վերոհիշյալ երաշխիքներից, այդ թվում՝ դատարանում լավելու իրավունքից: Ուստի նման իրավիճակում մեղադրյալի բացակայությամբ նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշման կայացումը չի կարող հանգեցնել ՆՏ Սահմանադրության 16 հոդվածով եւ Կոնվենցիայի 5 հոդվածով երաշխավորված իրավունքների խախտման: Ընդ որում, քրեական հեղափոխության մարմինների պարտականությունն ազատությունից զրկված անձի ներկայության ապահովումն է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննարկման նպատակով հրավիրված դատական նիստին:

8. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև նշել, որ հեղափոխության մեջ գլխավոր անձի վերաբերյալ կալանքի որոշում կայացնելու ընթացակարգը կիրառվում է նաև քրեական գործերով իրավական օգնության եւ հանձնման մասին միջազգային փաստաթղթերում՝ ԱՊՏ շրջանակներում 1993թ. հունվարի 22-ին Մինսկում եւ 2002թ. հոկտեմբերի 7-ին Քիշնևում կնքված՝ «Քաղաքացիական, ընդհանրական եւ քրեական գործերով իրավական օգնության եւ իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիաներում, Եվրոպայի խորհրդի շրջանակներում կնքված՝ «Նանձնման մասին» կոնվենցիայում եւ այլն: Վերոհիշյալ կոնվենցիաների ուսումնասիրությունը վկայում է՝ հաշվի առնելով, որ հանձնման գործընթացը, որպես կանոն, երկարատև պրոցես է, նշված միջազգային պայմանագրերը մինչև հայցող պետության իշխանություններին հանձնման ենթակա անձին հանձնելը, որպես կանոն, թույլ են տալիս նրան ազատությունից զրկել մինչև 30-40 օր ժամկետով: Ըստ այդմ, նշված միջազգային փաստաթղթերը հայցող պետությունից պահանջում են որպես ազատությունից զրկելու իրավական հիմք ներկայացնել այնպիսի դատավարական ակտ, որը հնարավորություն կտա փոխյալ անձին անազատության մեջ պահել որոշակի երկարատև ժամանակահատվածի ընթացքում: Մասնավորապես, Մինսկի կոնվենցիայի 58 եւ Քիշնևի կոնվենցիայի 67 հոդվածների 2-րդ մասերը սահմանում են, որ քրեական հեղափոխում իրականացնելու կամ պատասխանավորության ենթարկելու համար հանձնելու վերաբերյալ հարցմանը պետք է կցված լինեն կալանքի վերցնելու եւ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումների հաստատված պարճենները, համապատասխանաբար 60 եւ 68 հոդվածները նախատեսում են հանձնման մասին հաղորդում սրանալուց հետո անձին կալանքի վերցնելու հնարավորություն, իսկ 61 եւ 70 հոդվածները նախատեսում են նաև հանձնվող անձին կալանքի վերցնելը կամ ձերբակալելը նաև միջնորդության հիման վրա, այսինքն՝ եթե հանձնման մասին հա-

ղորդում դեռ չկա, սակայն առկա է հայցող կողմի միջնորդությունը, որը պարունակում է հղում այն դատական որոշմանը, որով անձի նկատմամբ հայցող պետությունում կալանք է կիրառվել, և որը պետք է ներկայացվի հանձնման մասին հաղորդման հետ, ապա հայցվող պետությունը կարող է առանց դատարանի որոշման կալանավորել անձին:

Նաշվի առնելով, որ ձերբակալումը հարկադրանքի կարճաժամկետ միջոց է, իսկ հանձնման գործընթացը պահանջում է շար ավելի երկար ժամանակ, հանձնման ենթակա անձին ավելի երկար ժամկետով անազատության մեջ պահելու օրինական հիմք, հետևաբար, հետախուզվող անձի հանձնումը Նայասպանի Նանրապետությանը հնարավոր է դառնում միայն փոխադրված անձի վերաբերյալ կալանքի որոշման առկայության դեպքում: Բացի դրանից, 1977 թ. Ստրասբուրգի կայացած Ինտերպոլի 46-րդ Գլխավոր ասամբլեայի նախաշրջանում ընդունված թիվ 15 որոշման, 2008թ. Սանկտ Պետերբուրգում կայացած 77-րդ նախաշրջանում ընդունված թիվ AG -2008-RAP-06 որոշման և այս կազմակերպության կողմից ընդունված մի շարք այլ ակտերի համաձայն Ինտերպոլի խողովակներով հետախուզվող անձանց նկատմամբ միջազգային հետախուզում հնարավոր չէ հայտարարել՝ առանց հետախուզվողի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընդունելու մասին որոշման առկայության:

9. Անձին ազատությունից գրկելը նրա մեկուսացումն է հասարակությունից, ընդհանրապես, ինչը ենթադրում է, ի թիվս այլոց, ծառայողական պարտականությունների կատարման, իր հայեցողությամբ փեղաշարժվելու և անսահմանափակ թվով անձանց հետ շփվելու անհնարինություն: Այսինքն՝ ձերբակալման կամ կալանավորման միջոցով ազատությունից գրկումը, որպես պարտադիր հատկանիշ, ի թիվս այլոց, ներառում է ազատ փեղաշարժվելու իրավունքի սահմանափակում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ եթե որեւէ իրավական ինստիտուտի կիրառում անհրաժեշտաբար և անխուսափելիորեն ենթադրում է այս կամ այն իրավունքի իրավազատի սահմանափակում, ապա նման ինստիտուտի կիրառումը չի կարող ենթադրել նաև փոխադրված իրավունքի խախտում: Այս հիմքով սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 16 հոդվածի հիման վրա ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման շրջանակներում Սահմանադրության 25 հոդվածով սահմանված՝ ազատ փեղաշարժվելու իրավունքի ենթադրյալ խախտումը չի կարող սահմանադրական դատարանում դառնալ քննության առարկա:

Այն դիրքորոշումը, որ Կոնվենցիայի 5 հոդվածի հիման վրա ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի շրջանակներում չի կարող վիճարկվել նաև փեղաշարժի իրավունքի ենթադրյալ խախտումը, արտահայտված է նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում (մասնավորապես, Գուզարդին ընդդեմ Իտալիայի գործով 1980թ. նոյեմբերի 6-ի վճիռը, կետ 92, *Guzzardi v. Italy*):

Նաշվի առնելով վերոշարադրյալը՝ սահմանադրական դատարանն անհիմն է համարում դիմողի պնդումն առ այն, որ հետախուզման մեջ գրկվող անձի բացակայության պայմաններում նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընդգրկելու որոշումը խախտում է ազատ փեղաշարժվելու նրա սահմանադրական իրավունքը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 19, 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 285 հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունը համապատասխանում է Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ**

*12 սեպտեմբերի 2009 թվականի
ՍԳՈ- 827*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**«ՍԱԹԻ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ «ՆԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 15 ՆՈՒՎԱԾԻ «գ»
ԿԵՏԻ, ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 240 ՆՈՒՎԱԾԻ 1-ԻՆ
ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

22 սեպտեմբերի 2009թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դապարանը՝ կազմով.

Գ. Նարոթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի, Մ. Թոփոյանի, Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ դիմող՝ «Սաթի» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Տ. Աթանեսյանի, պա-
րասխանող կողմի՝ ՆՆ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՆ Ազգային
ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա.
Խաչատրյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի
1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դապարանի մասին» ՆՆ
օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Սաթի» ՓԲԸ-ի դիմումի
հիման վրա՝ «Նարկերի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 15 հոդվածի «գ»
կետի, Նայասարանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի
240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությա-
նը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործը:

Գործի քննության առիթը «Սաթի» ՓԲԸ-ի՝ 20.04.2009թ. ՆՆ սահմանադրական
դապարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պարաս-
խանող կողմերի գրավոր բացատրությունները, հեղազոտելով «Նարկերի մասին» ՆՆ

օրենքը, ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. «Նարկերի մասին» ՆՏ օրենքն ընդունել է Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովը՝ 1997 թվականի ապրիլի 14-ին, ՆՏ Նախագահն այն ստորագրել է 1997 թվականի մայիսի 12-ին: Օրենքն ուժի մեջ է մտել 1997 թվականի մայիսի 30-ին (ՆՕ-107):

ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունել է Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովը՝ 1998 թվականի հունիսի 17-ին, ՆՏ Նախագահն այն ստորագրել է 1998 թվականի օգոստոսի 7-ին: Օրենսգիրքն ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենքի 15 հոդվածի «գ» կետի համաձայն. «Նարկ վճարողը պարտավոր է՝ ... ներկայացնել հարկային արտոնությունների իր իրավունքը հաստատող փաստաթղթերը»:

Օրենսգրքի 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի համաձայն. «Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով վճարեկ դատարանը՝ ... մասնակիորեն բեկանում եւ փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, եւ եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից»:

2. Զննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ համաձայն ՆՏ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի՝ 31.08.2007թ. հանձնարարագրի՝ ՆՏ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Սպանդարյանի 1 հարկային տեսչության կողմից 04.10.2007 թվականից մինչև 07.11.2007 թվականը «Սաթի» ՓԲԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշգրտության եւ հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ստուգում: Ստուգման արդյունքներով 07.11.2007 թվականին կազմվել է թիվ 1032425 ակտը, որով արձանագրվել են ՆՏ օրենսդրության խախտումներ եւ ընկերությանն առաջադրվել են շահութահարկի, ավելացված արժեքի հարկի, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների եւ դրամարկղային գործառնությունների մասին ՆՏ օրենսդրության պահանջների գծով պարտավորություններ:

Նշված ակտի վերաբերյալ իր՝ 12.11.2007թ. թիվ 071112412/ՆՏ գրությամբ «Սաթի» ՓԲԸ-ն առարկություններ է ներկայացրել Գանգապարկման հանձնաժողով, որն իր՝ 30.11.2007թ. թիվ 186/1 որոշմամբ նշված ակտը թողել է անփոփոխ: Գանգապարկման հանձնաժողովն իր՝ 30.11.2007թ. թիվ 186/1 որոշմամբ, հղում կատարելով «Զբոսաշրջության եւ զբոսաշրջային գործունեության մասին» ՆՏ օրենքին եւ «Նարկերի մասին» ՆՏ օրենքի 15 հոդվածի «գ» կետին, արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «... Նշված գոր-

ծունեությունը կարգավորվում է «Զբոսաշրջության եւ զբոսաշրջային գործունեության մասին» ՆՏ օրենքի պահանջներով: Ընկերության կողմից իրականացրած օրական շրջագայությունների կազմակերպումը չի համապատասխանում զբոսաշրջության գործունեություն, զբոսաշրջային գործակալություն հասկացություններին: Ընկերությունը խախտել է նաև «Նարկերի մասին» ՆՏ օրենքի 15 հոդվածի գ) կետի պահանջները՝ չներկայացնելով ծառայությունները օպարերկրյա քաղաքացիներին մատուցելու վերաբերյալ հաստատող փաստաթղթեր (անձը հաստատող փաստաթղթի պատճեն, պայմանագրի առկայություն) ...»:

Մինչ Գանգապարկման հանձնաժողովի որոշման կայացումը, ՆՏ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի՝ 27.11.2007թ. թիվ ԱՏ 002097 հանձնարարագրով Սպանդարյանի 1 հարկային տեսչության իրավաբանական բաժնի աշխատակիցներին հանձնարարվել է «Սաթի» ՓԲԸ-ին պատկանող գույքի վրա չկատարված հարկային պարտավորությունների չափով արգելանք դնել, ինչն էլ իրականացվել է՝ նշված աշխատակիցների՝ նույն օրը՝ 27.11.2007 թվականին ընդունված թիվ ԱՏ 002097 որոշմամբ:

Ընկերությունը 17.12.2007թ. դիմել է ՆՏ տնտեսական դատարան ընդդեմ ՆՏ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության՝ ՆՏ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության՝ 07.11.2007թ. թիվ 1032425 ստուգման ակտը, ՆՏ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի՝ 27.11.2007թ. թիվ ԱՏ 002097 հանձնարարագիրը եւ ՆՏ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության գանգապարկման հանձնաժողովի՝ 30.11.2007թ. թիվ 186/1 որոշումն անվավեր ճանաչելու պահանջով: Գործը՝ ենթակայության եւ ընդդատության կանոնների պահպանմամբ, փոխանցվել է ՆՏ վարչական դատարան:

Վարչական դատարանի՝ 01.08.2008թ. թիվ ՎԴ/0041/05/08 վճռով ընկերության հայցը բավարարվել է մասնակիորեն՝ անվավեր է ճանաչվել ՆՏ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության՝ 07.11.2007թ. թիվ 1032425 ստուգման ակտի 1-ին (շահութահարկ) եւ 4-րդ (ավելացված արժեքի հարկ) կետերը, եւ ՆՏ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության գանգապարկման հանձնաժողովի՝ 30.11.2007թ. թիվ 186/1 որոշումը:

ՆՏ գլխավոր դատախազի տեղակալի ներկայացրած վճռաբեկ բողոքի հիման վրա ՆՏ վճռաբեկ դատարանի՝ 26.12.2008թ. թիվ ՎԴ/0041/05/08 որոշմամբ, հիմք ընդունելով ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, Վարչական դատարանի 01.08.2008թ. թիվ ՎԴ/0041/05/08 վճիռը՝ հայցը բավարարելու մասով բեկանվել է եւ փոփոխվել. «Սաթի» ՓԲԸ-ի հայցը մերժվել է:

3. Ըստ դիմողի՝ հարկ վճարողի համար հարկային արպոնությունների նրա իրավունքը հաստատող փաստաթղթերը ներկայացնելու պարտականության սահմանումն իրավաչափ չէ եւ նման պարտականություն սահմանող՝ «Նարկերի մասին» ՆՏ օրենքի 15 հոդվածի «գ» կետը հակասում է ՆՏ Սահմանադրության 21, 22 եւ 33.1. հոդվածներին: Դիմողը գտնում է, որ Սահմանադրության 21 եւ 22 հոդվածներով սահմանված՝ անմե-

ղության կանխավարկածի եւ «լռության» իրավունքի սկզբունքները կիրառելի են ոչ միայն քրեական դատավարության ոլորտում, այլ նաեւ այլ վարայթներում: Այսպիսի դիրքորոշման հիման վրա դիմողը գտնում է, որ հարկային իրավահարաբերություններում ապացուցման բեռը կրում է պերական մարմինը, եւ հարկատու պարտավոր չէ ներկայացնել հարկային արտոնություններից օգտվելու համար անհրաժեշտ փողեկությունները հաստատող փաստաթղթեր, քանի որ դրանք իր անմեղությունն ապացուցելու եւ իր դեմ ցուցմունք փալու դրսետորման եղանակներ են: Միաժամանակ, դիմողը գտնում է, որ «... ոչ մի օրենքով արգելված չէ գրաղվել ձեռնարկատիրական գործունեությանը՝ օգտվելով հարկային արտոնություններից, այն պայմաններում, երբ հարկային արտոնությունները հաստատող ապացույցներ չեն ներկայացվել վարչարարություն իրականացնող համապարասխան մարմին»:

ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կերի առնչությամբ դիմողը գտնում է, որ, պայմանավորված վճռաբեկ դատարանում դատավարության առանձնահատկություններով, վճռաբեկ դատարանում չեն գործում դատավարության կողմերի մի շարք իրավունքներ եւ ստորադաս դատարաններին հատուկ դատական մի շարք գործառայթներ, որոնք հիմք են դատական պաշտպանության արդյունավետության ապահովման համար: Նման պայմաններում վճռաբեկ դատարանին գործը նորովի լուծելու իրավասություն վերապահելը, դիմողի կարծիքով, չի հանդիսանում դատական պաշտպանության արդյունավետ միջոց՝ հակասելով ՆՃ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածների 1-ին մասերին:

Դիմողը բարձրացնում է նաեւ օրենսգրքի 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կերի իրավական անորոշության հարցը, գտնելով, որ անորոշ է օրենսգրքի 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կերում օգտագործված «արդարադատության արդյունավետության շահ» հասկացությունը:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ «Նարկերի մասին» ՆՃ օրենքի 15 հոդվածի «գ» կերի վիճարկվող դրույթը դիմողի կողմից ընկալվում եւ մեկնաբանվում է սխալ՝ հաշվի չառնելով հոդվածի բուն իմաստը: Այդ դրույթը որեւէ կերպ չի սահմանափակում անձի՝ օրենքով նախատեսված հարկային արտոնությունից օգտվելու իրավունքը եւ չի պահանջում լրացուցիչ թույլտվություն: Վիճարկվող դրույթում խոսքը վերաբերում է ոչ թե անձին՝ օրենքով նախատեսված արտոնությունից գրկելուն, այլ հարկային արտոնություն ստանալու մեխանիզմին:

ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կերի առնչությամբ պատասխանողը նշում է, որ դրանով սահմանված՝ ՆՃ վճռաբեկ դատարանի լիազորությունը նպատարում է իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացմանը, քանի որ հակառակ դեպքում դատաբնության ժամկետները կարող են ձգձգվել:

Բացի դրանից, նշված դրույթը որեւէ կերպ չի խոչընդոտում բողոքատուին ներկայացնել իր առարկություններն ու բացատրությունները: Ինչ վերաբերում է ապացույցներ ներկայացնելու արգելքին, ապա ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը

ՆՆ վճռաբեկ դատարանում ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը սահմանափակում է միանգամայն իրավազափորեն:

5. «Նարկերի մասին» ՆՆ օրենքի 15 հոդվածի «գ» կետի սահմանադրականության հարցի առնչությամբ ՆՆ սահմանադրական դատարանը հարկ է համարում նշված հարցը դիտարկել պետության գործառնությունների, անձ-պետություն փոխհարաբերությունների համապետքսպում:

Պետության ֆինանսական վերահսկողության գործառնությունը փոխկապակցված է պետության րնրեսական եւ սոցիալական գործառնությունների հետ եւ վերջիններիս հետ մեկտեղ ուղղված է պետության խնդիրների լուծմանն ու պետության առջեւ Սահմանադրությամբ առաջադրված նպատակներին հասնելուն: Վերջիններս ներառում են համընդհանուր բարօրությունը, անհատի բարոյական, նյութական, ֆիզիկական բարեկեցությունը, սոցիալական առավելագույն պաշտպանվածությունը: Նարկային իրավահարաբերությունների՝ որպես հանրային բնույթի իրավահարաբերությունների, նկատմամբ մասնավորապես պետական վերահսկողության գործառնության միջոցով է, որ պետությանը հնարավորություն է ընձեռնում առավել արդյունավետ կերպով հասնելու վերը նշված նպատակներին: Նարկային իրավահարաբերությունների նկատմամբ պետական վերահսկողության գործառնության միջոցով ապահովվում է հարկերի հավաքագրման եւ բյուջեի մուրքերի ապահովման արդյունավետությունը եւ թափանցիկությունը, պետության րնրեսական կայունությունը:

Նարկային իրավահարաբերությունների կանոնակարգումն իրականացվում է հարկային իրավահարաբերությունների մասնակիցների համար փոխադարձ իրավունքների եւ պարտականությունների սահմանմամբ, որոնք ուղղված են ոչ միայն անհատական, այլ նաեւ հանրային շահերի երաշխավորմանը: Վերջինս դրսետրվում է հարկային իրավահարաբերությունների նկատմամբ պետության ֆինանսական վերահսկողության գործառնության իրականացման արդյունավետության ապահովմամբ, որն էլ, իր հերթին, ի թիվս այլոց, կարող է դրսետրվել հարկատուների նկատմամբ որոշակի պարտականությունների սահմանմամբ: Տվյալ դեպքում ՆՆ սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե հարկատուի համար որոշակի պարտականություն սահմանելիս արդյո՞ք ապահովվել է րվյալ պարտականության իրավազափորությունը, ինչպես նաեւ ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների եւ հարկատուների պարտականությունների միջեւ հավասարակշռությունը՝ բացառելու հարկատուների համար անիրավազափ պարտականություններ սահմանելը:

6. Վերը նշված հարցադրումների կապակցությամբ անհրաժեշտ է «Նարկերի մասին» ՆՆ օրենքի 15 հոդվածի «գ» կետի սահմանադրականության հարցը դիտարկել ՆՆ - Սահմանադրության 45 հոդվածի, 83.5. հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի համապետքսպում:

ՆՆ Սահմանադրության 45 հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով եւ չափով մուծել հարկեր, րուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ»:

ՏՏ Սահմանադրության 83.5. հոդվածի 1-ին կետի համաձայն. «Բացառապես Նայասրանի Նանրապետության օրենքներով են սահմանվում՝ ... ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը»:

Ըստ ՏՏ Սահմանադրության 83.5. հոդվածի 2-րդ կետի. «Բացառապես Նայասրանի Նանրապետության օրենքներով են սահմանվում՝ ... ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի և վճարման կարգը»:

Սահմանադրության վերը նշված դրույթները համակարգային առումով փոխկապակցված և փոխլրացնող դրույթներ են: Սահմանադրության 45 հոդվածով սահմանված նորմը չի նախապետում և չի էլ կարող նախապեսել հարկային իրավահարաբերությունների կարգավորման մանրամասները, իսկ հարկեր վճարելու պարտականության բովանդակությունը որոշվում է օրենսդրի հայեցողությամբ:

Սահմանադրությամբ օրենսդիր իշխանությունն է օժտված հարկերի վճարման կարգը որոշելու իրավասությամբ: Ինչպես ցանկացած իրավունքի և պարտականության իրականացում, Կրկյալ դեպքում հարկային արտոնություններից օգտվելու իրավունքի և հարկեր վճարելու պարտականության իրականացումը ենթադրում է գործընթաց, որը ներառում է հիմնական իրավունքի կամ հիմնական պարտականության իրականացմանն ուղղված լրացուցիչ այլ իրավունքների և պարտականությունների առկայություն: Տիմբ ընդունելով այդ հանգամանքը՝ օրենսդիրն է սահմանում, թե ինչ գործողություններով է դրսևորվում հարկեր վճարելու սահմանադրական պարտականության կատարումը: Այս իրավասության շրջանակներում օրենսդիրն օժտված է նաև այդ պարտականության կատարումն ապահովող արդյունավետ մեխանիզմի սահմանման լիազորությամբ, որը կապահովի, մի կողմից, Կրկյալ իրավունքի կամ պարտականության արդյունավետ իրականացումը, մյուս կողմից՝ հարկային արտոնությունից օգտվելու նկատմամբ արդյունավետ

վերահսկողությունը, հարկերի վճարման սահմանադրական պարտականության կատարման բնագավառում հնարավոր չարաշահումների նկատմամբ հակազդումը, ինչպես նաև բյուջե հարկերի փոխանցման ու վճարման բազմափուլ գործընթացի մասնակից սուբյեկտների իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանությունը:

Տիմբ ընդունելով վերոգրյալը՝ ՏՏ սահմանադրական դատարանը գտնում է, որ հարկային արտոնությունից օգտվելու իրավունքի իրականացումն ըստ էության հարկեր վճարելու պարտականության կատարումն է և Սահմանադրության 45 հոդվածով սահմանված հարկեր վճարելու պարտականության կատարումն ապահովող արդյունավետ մեխանիզմի փառքը:

Սահմանադրության 45 հոդվածով սահմանված նորմին փոխլրացնում են Սահմանադրության 83.5. հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված նորմերը: Վերջիններիս վերլուծությունից բխում է, որ սուբյեկտիվ իրավունքների և հարկերի վճարման սուբյեկտիվ պարտականության իրականացումը չի կարող Կրկյալ ունենալ կամայական ձեռով: Նման մոտեցումն ինքնանպատակ չէ, քանի որ ցանկացած սուբյեկտիվ իրավունք, այդ թվում՝ հարկերի վճարման սուբյեկտիվ պարտականություն առնչվում է այլոց իրավունք-

ներին եւ պարտականություններին, ինչպես նաեւ սահմանադրորեն պահպանվող այլ արժեքներին եւ կարող է խոչընդոտել դրանց իրականացումը կամ խախտել դրանք: Այդ հիմնավորմամբ է, որ Սահմանադրությունը պարտավորեցնում է սուբյեկտիվ իրավունքները եւ պարտականություններն իրականացնել որոշակի պայմաններում եւ կարգով: Տվյալ դեպքում «կարգ» հասկացությունը ներառում է «Նարկերի մասին» ՆՏ օրենքի 15 հոդվածի «գ» կետով հարկատուի վրա դրված պարտականությունը, որն էլ ուղղված է անձի կողմից հարկային արպոնության իր սուբյեկտիվ իրավունքի, ինչպես նաեւ հարկերի վճարման պարտականության իրականացմանը:

Սահմանադրական դատարանը զգնում է, որ «Նարկերի մասին» ՆՏ օրենքի 15 հոդվածի «գ» կետով սահմանված պարտականությունը, որպես հարկային արպոնությունից օգտվելու սուբյեկտիվ իրավունք, հետեւաբար՝ հարկերի վճարման պարտականության իրականացման կարգի փոփոխում, ապահովելով պետության ֆինանսական վերահսկողության գործառնության արդյունավետ իրականացումը՝ հեղուկացնում է իրավաչափ նպատակ եւ չի կարող դիտարկվել որպես հարկատուի վրա դրված անիրավաչափ պարտականություն:

«Նարկերի մասին» ՆՏ օրենքի 15 հոդվածի «գ» կետը սահմանադրականության խնդիր չի առաջացնում, եւ հարկատուների համար սահմանված պարտականությունը համահունչ է ՆՏ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված՝ իրավական, սոցիալական պետության հիմնարար սկզբունքներին, 89 հոդվածի 2-րդ կետով սահմանված՝ բյուջեի կապարտումն ապահովելու՝ գործադիր իշխանության պարտականությանը: Նարկատուների համար սահմանված՝ քննարկվող պարտականության բացակայությունը, ընդհակառակն, անարդյունավետ կդարձնէր հարկային պարտավորությունների պարզանկ կապարտման նկատմամբ պետության վերահսկողական գործառնության իրականացումը:

7. «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՏ օրենքի 2 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժով օրենքի I բաժնի գործողությունը փարսածվում է վարչական մարմինների՝ հանրային իրավունքի բնագավառում իրականացվող ցանկացած գործունեության վրա: Օրենքի 1-ին բաժնի 10-րդ հոդվածը, որպես վարչարարության սկզբունք, սահմանում է «հավասարության կանխավարկածի» սկզբունքը: Վերջինիս նպատակը վարչական մարմինների եւ անձանց միջեւ փոխվստահության ձեւավորումն է, ինչպես նաեւ նրանց միջեւ իրավահավասարության ամրապնդումը: Ըստ 10 հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած փյուլները, փեղեկությունները համարվում են հավասարի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Նույն հոդվածի 2-րդ պարբերությունը միաժամանակ արգելում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած փյուլները, փեղեկությունները հավասարող փաստաթղթեր կամ լրացուցիչ փեղեկություններ, եթե այդ պահանջը **սահմանված չէ օրենքով**: Այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ օրենքներով սահմանվում է համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու պահանջ, անձը պարտավոր է դրանք ներկայացնել:

Տվյալ դեպքում «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՏՏ օրենքի 10 հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությանը համահունչ՝ «Նարկերի մասին» ՏՏ օրենքի 15 հոդվածի «գ» կետով սահմանվել է անձանց՝ վարչական մարմնին փաստաթղթեր ներկայացնելու պարտականությունը: Ընդ որում, այդ փաստաթղթերը ներկայացվում են ոչ թե վարչական մարմնի մոտ անձի ներկայացրած փյուլաների վերաբերյալ ծագած կասկածների առկայությամբ վարչական մարմնի եւ անձի միջեւ ծագած վեճը լուծելու նպատակով, այլ որպես արքունությունից օգտվող փնտրատվարող սուբյեկտի՝ հարկեր վճարելու սահմանադրական պարտականության բարեխիղճ կատարման բաղադրատարր, հեղուաբար՝ նաեւ իրավաչափ պարտավորության կատարման անհրաժեշտ պայման:

Վերոգրյալի հիման վրա ՏՏ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հարկատուի կողմից հարկերի վճարման իր սահմանադրական պարտականության բարեխիղճ կատարման նպատակով համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու փուլում գործում է հավաստիության կանխավարկածի սկզբունքը: Ներկայացված փաստաթղթերի կապակցությամբ վարչական մարմնի մոտ կասկած ծագելու դեպքում է միայն, որ ներկայացված փյուլաների ոչ հավաստի լինելու հանգամանքի ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը: Այսինքն՝ փյուլա դեպքում վարչական մարմնի կողմից ապացուցման բեռը կրելու պարտականություն կարող է ծագել միայն այն դեպքում, եթե հարկատուն փաստաթղթեր ներկայացնելու՝ օրենքով սահմանված իր պարտականությունը կատարել է:

Ինչ վերաբերում է վարչական վարույթի ընթացքում ապացուցման բեռի բաշխմանը, ապա «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՏՏ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով գործում է նույն օրենքի 43 հոդվածը: Վերջինս վարչական վարույթում ապացուցման պարտականության բաշխում է կատարում՝ ելնելով նրանից, թե վարույթի ընթացքում ընդունվող ակտը վերջինիս համար բարենպաստ, թե ոչ բարենպաստ փաստական հետեւանքներ է ունենալու: Ըստ այդմ, վարչական վարույթում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ վերջինիս համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում, եւ վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների դեպքում: Օրենսդրական նման կարգավորումը նկատի է առնում, որ անձի համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայությունը հնարավոր չէ վերապահել վարչական մարմնին, քանի որ, որպես կանոն, շահագրգիռ անձն է փեղյակ իր համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայությանը, եւ նա է փորձապետում այդ հանգամանքներն ապացուցող փյուլաների: Չնայած այն հանգամանքին, որ ստուգումը բարենպաստ ընթացակարգ չէ մասնավոր անձի համար, սակայն դրա շրջանակում իր հարկային

արքունությունները հիմնավորող փաստերը նրա դրությունը բարելավող, նրան արքունող փաստական հանգամանքներ են, որոնց ապացուցման պարտականությունը կրում է ինքը:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ համաձայն գործի նյութերի՝ իրավակիրառական պրակտիկայում հստակ չի փարանջատվում ապա-

ցուցման պարտականությունը վարչական վարույթում, եւ ապացուցման բեռը՝ վարչական դատավարությունում: Վարչական վարույթում ապացուցման պարտականությունը, թեև ընդհանուր աղերսներ ունի վարչական դատավարությունում ապացուցման բեռի հետ, այն նույնական չէ վերջինիս հետ: Նմանությունն այն է, որ երկուսն էլ ունեն օբյեկտիվ բնույթ, ի տարբերություն քաղաքացիական դատավարության, եւ երկուսն էլ վերաբերում են ապացուցման հարցի լուծմանը՝ ապացուցողական անորոշության առաջացման դեպքերում: Սակայն վարչական դատավարությունում օրենսդրական լուծումներն այլ են՝ այսպիսի խոսքը փաստական հանգամանքների բարենպաստ կամ ոչ բարենպաստ լինելու մասին չէ, այլ առավելապես վարչական մարմնի կարգավիճակ ունենալու մասին է, այն էլ ոչ բոլոր հայցարեւակների դեպքում (Վարչական դատավարության օրենսգրքի 26 հոդվածի 3-րդ մաս): Մասնավորապես, պարտավորեցման հայցի դեպքում, երբ խոսքն անձի համար բարենպաստ վարչական ակտի ընդունմանը պարտավորեցնելու մասին է, ապա ապացուցման բեռը կրում է հայցվորը (ՎՂՕ 26 հոդվածի 2-րդ մաս՝ զուգակցված ՎՂՕ 25 հոդվածի 1-ին մասի հետ): Սակայն փվյալ դեպքում վարչական դատարանը վճիռ է կայացրել վիճարկման հայցի հիման վրա:

8. «Նարկերի մասին» ՆՏ օրենքի 15 հոդվածի «գ» կետի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ դիմողի հիմնական փաստարկներն առնչվում են ՆՏ - Սահմանադրության 21 հոդվածին եւ 22 հոդվածի 1-ին մասին:

ՆՏ Սահմանադրության 21 հոդվածն ամրագրում է անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ սահմանելով ապացուցման պարտականության բաշխման հիմնական կանոնը, որի համաձայն՝ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքը սերտորեն առնչվում է Սահմանադրության 22 հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ ինքն իր դեմ ցուցմունք չբալու պարտականությունից ազատ լինելու սկզբունքին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի՝ անձի դատական պաշտպանության իրավական երաշխիքներն ամրագրող 6-րդ հոդվածը՝ ընդհանրապես, եւ դրա 2-րդ կետում ամրագրված՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը կիրառելի են ոչ միայն ներպետական օրենսդրությանը համապատասխան որպես քրեական հանցանք որակված արարքների առնչությամբ հարուցված վարույթների նկատմամբ, այլեւ, պայմանավորված փվյալ արարքի բնույթով եւ նախատեսված պարասխանավորության տեսակներով ու խստությամբ, կարող են կիրառվել նաեւ վարչական եւ կարգապահական պարասխանավորության վարույթների նկատմամբ: Սակայն վարչական կամ կարգապահական պարասխանավորության վարույթների առնչությամբ անմեղության կանխավարկածի եւ դրա հետ փոխկապակցված «լռելու իրավունքի» կիրառելիության հանգամանքը դեռեւս բավարար պայման չէ վիճարկվող նորմը նշված սկզբունքի եւ իրավունքի ենթադրյալ խախտման տեսանկյունից քննության առարկա դարձնելու համար: Այս առնչությամբ էական նշանակություն ունի «մեղադրանք», «մեղադրվող», «մեղադրվում է» հասկացությունների բո-

վանդակությունը: Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ «մեղադրանք» հասկացությունը կարող է սահմանվել որպես «իրավասու մարմինների կողմից շահագրգիռ անձին ուղղված պաշտոնական ծանուցում առ այն, որ քվյալ անձը ենթադրաբար կատարել է քվյալ իրավախախտումը»: Մեղադրանքը որոշ դեպքերում կարող է դրսևորվել նաև այլ ձևերով, սակայն էականն այն է, որ այն **պետք է վկայի իրավախախտում կատարած լինելու ենթադրության մասին** (տե՛ս, Օգթուրքն ընդդեմ Գերմանիայի գործով 1984թ. փետրվարի 21-ի վճիռը, *Ozturk v. Germany*):

Ըստ վերոգրյալի մեկնաբանելով ՆՏ Սահմանադրության 21 հոդվածում եւ 22 հոդվածի 1-ին մասում ամրագրված սահմանադրական սկզբունքների բովանդակությունը՝ ՆՏ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անձն այդ սկզբունքների պաշտպանությունից սկսում է օգտվել միայն այն պահից սկսած, երբ նա փեղեկացվում է, որ իրավասու մարմինները հիմք ունեն ենթադրելու, որ նա կատարել է դատապարտելի արարք: Ներեւաբար, անձը չի կարող օգտվել նշված սկզբունքների պաշտպանությունից, քանի դեռ իրավասու մարմինների մոտ չի ծագել ենթադրություն իր կողմից դատապարտելի արարք կատարած լինելու վերաբերյալ, եւ ինքը չի փեղեկացվել այդ ենթադրության առկայության մասին:

Ելնելով անմեղության կանխավարկածի սկզբունքի եւ «քրեական մեղադրանք» հասկացության նշված բովանդակությունից եւ հաշվի առնելով, որ իրավասու մարմինների կողմից րնդեսավարող սուբյեկտին՝ վիճարկվող նորմում ամրագրված պարտականության կատարման պահանջ ներկայացնելու դեպքում որեւէ իրավախախտում կատարած լինելու ենթադրություն դեռեւս առկա չէ՝ ՆՏ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՆՏ Սահմանադրության 21 հոդվածով սահմանված անմեղության կանխավարկածի սկզբունքը եւ դրա հետ փոխկապակցված՝ 22 հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ ինքն իր դեմ ցուցմունք չբալու պարտավորություն չկրելու սկզբունքը խնդրո առարկա իրավիճակում կիրառելի չեն:

ՆՏ սահմանադրական դատարանը գտնում է, որ հարկային արտոնությունների իրավունքը, ինչպես նաև առհասարակ հարկային պարտավորությունը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու պարտականությունն ամբողջությամբ բխում է հարկ մուծելու սահմանադրական պարտականությունից եւ ուղղված է այդ պարտականության բարեխիղճ կատարման նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացմանը:

Վիճարկվող իրավադրույթը որեւէ հակասության մեջ չի մտնում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի հետ, քանի որ այն որպես ընդհանուր օրենքի նորմ չի կարող կիրառվել ինքնուրույն՝ առանց առանձին հարկապետականերին վերաբերող օրենքների եւ հարկային արտոնություններից օգտվելու կարգը կոնկրետացնող ենթաօրենսդրական նորմերի: Իսկ այդ ակտերի համապեքսսում օրենքի այդ դրույթը համապարասխանում է իրավական որոշակիության սկզբունքին: Չի կարող ընդհանուր օրենքը բոլոր բնագավառների եւ բոլոր հարկապետակաների համար սահմանել այն փաստաթղթերի փեսակները եւ ցանկը, որոնք անհրաժեշտ է ներկայացնել՝ բավարար է, որ այն նախաբեսում է նման պարտականություն, որը պետք է կատարվի այլ օրենքներով եւ ենթաօրենսդրական ակտերով նախաբեսված կարգով: Իսկ հարուկ օրենքների դրույթներ սահմա-

նադրական դատարան ներկայացված դիմումում չեն վիճարկվում եւ սույն գործի շրջանակներում քննության առարկա չեն կարող դառնալ:

Ինչ վերաբերում է վիճարկվող դրույթի հակասությանը Սահմանադրության 33.1. հոդվածին, ապա հարկ է նշել, որ այն նպատակ ունի, ընդհակառակն, խթանելու ձեռնարկափրական գործունեության իրականացումը եւ ազատ մրցակցության համար հավասար մեկնարկային պայմաններ ապահովելուն՝ հարկային արտոնությունների կիրառման ընդհանուր կարգ սահմանելու միջոցով փնտրեսապես ավելի հզոր սուբյեկտներին հակալռելու միտումով: Իսկ որեւէ արտոնությունից օգտվելու համար իրավահավասարության սկզբունքի ուժով անհրաժեշտ է կատարել որոշակի ձեւական բնույթի պարտականություններ: Նարկերի մասին օրենքի վիճարկվող դրույթը մասնավոր անձանց չի ծանրաբեռնում այնպիսի պարտականություններով, որոնք համարժեք հարաբերակցության մեջ չեն հարկային արտոնություններից օգտվելու հետ:

9. ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի սահմանադրականության հարցի առնչությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում այդ կետով նախատեսված՝ ՆՃ վճարեկ դատարանի վիճարկվող լիազորության իրավաչափությունը դիտարկել ՆՃ դատական իշխանության համակարգում վճարեկ դատարանի՝ ՆՃ Սահմանադրությամբ նախատեսված գործառնական փեղի եւ դերի, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու՝ նրա սահմանադրական գործառույթի համապետքստում:

Այս հարցի առնչությամբ ՆՃ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-690 որոշման 11-րդ կետում արտահայտել է, մասնավորապես, հետեւյալ իրավական դիրքորոշումը. «... պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, այդ թվում՝ նաեւ ՆՃ վճարեկ դատարանին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված ՆՃ Սահմանադրության 5 հոդվածի երկրորդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ»: Այս դիրքորոշման համապետքստում պետական ցանկացած մարմնի կարող է փրվել այս կամ այն լիազորությունը, որն անհրաժեշտ է նրա առջեւ դրված խնդիրները լիարժեք լուծելու համար, եթե դրանք համապատասխանում են փրվյալ մարմնի սահմանադրափրավական կարգավիճակին եւ սահմանադրորեն ամրագրված ու երաշխավորված արժեքներին:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթին համարժեք դրույթ պարունակվում է նաեւ ՆՃ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում, որի վերաբերյալ ՆՃ սահմանադրական դատարանը որոշակի դիրքորոշում է արտահայտել նույն հոդվածի 6-րդ կետի սահմանադրականության հարցը որոշելու վերաբերյալ գործով իր՝ 2007 թվականի դեկտեմբերի 11-ի ՄԴՈ-720 որոշման 5-րդ կետի 3-րդ պարբերությունում: Նամաձայն սահմանադրական դատարանի հիշյալ իրավական դիրքորոշման. «ՆՃ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 3, 4 եւ 6 կետերով նախատեսված լիազորությունների համադրված վերլուծությունը վկայում է, որ ՆՃ վճարեկ դատարանին նման լիազորություններ վերապահելը նպատակ

է հեղափոխութիւնը կանխելու այն դատական շրջապատույրը, որը գոյություն է ունեցել մինչ այդ: Այդ լիազորությունների միջոցով դատական շրջապատույրի կանխումն իր հերթին հնարավորություն է ընձեռում երաշխավորել դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու սահմանադրաիրավական պահանջի իրացումը, ինչպես նաև ապահովել իրավական որոշակիության սկզբունքի իրացումը»:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, նախատեսելով ՏՏ վճռաբեկ դատարանի խնդրո առարկա լիազորությունը, միաժամանակ, որպես այդ լիազորության կիրառման իրավաչափությունն ապահովող երաշխիք ամրագրում է դրանից օգտվելու չափորոշիչները: Այն է՝ ՏՏ վճռաբեկ դատարանը ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված լիազորությունը կարող է կիրառել բոլոր այն դեպքերում, երբ ստորադաս դատարանի հաստատված փաստական հանգամանքները թույլ են տալիս վճռաբեկ դատարանին ստորադաս դատարանի ակտից փարբերվող ակտ կայացնելու, եւ եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Նաշվի առնելով նշված իրավակարգավորման առկայությունը՝ ՏՏ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՏՏ վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի ակտը փոփոխելը կարող է փեղի ունենալ բացառապես հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությամբ, որոնք, մի կողմից, վճռաբեկ դատարանին պահում են իր սահմանադրաիրավական կարգավիճակում, մյուս կողմից՝ երաշխավորում են արդար դատաքննության եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները: Դրանք են.

ա/ ՏՏ վճռաբեկ դատարանը հեղափոխության առարկա չի դարձնում որեւէ փաստական հանգամանք, այլ իր սահմանադրաիրավական կարգավիճակին համահունչ անդրադառնում է միայն իրավունքի հարցերին,

բ/ ստորադաս դատարանի հաստատված փաստական հանգամանքները պետք է հնարավորություն տան վճռաբեկ դատարանին կայացնելու ստորադաս դատարանի ակտից փարբերվող ակտ,

գ/ վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի ակտը փոփոխելը պետք է բխի արդարադատության արդյունավետության շահերից,

դ/ այդպիսի որոշման հիմք կարող է հանդիսանալ միայն ստորադաս դատարանի կողմից նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը:

Նման գործերի քննության ժամանակ պետք է հաշվի առնվեն նաև ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227 հոդվածով նախատեսված դատավարության սկզբունքները:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ վճռաբեկ դատարանի որոշման պարճառաբանված լինելու պահանջը, ի թիվս այլոց, ենթադրում է նաև խնդրո առարկա հայեցողական լիազորությունից օգտվելիս արդարադատության արդյունավետության շահի առկայության հիմնավորումը՝ որպես այդ լիազորության կիրառման իրավաչափության երաշխիք: Մինչդեռ իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ այդ պահանջին մի շարք դեպքերում ձե-

ւական մտքեցում է ցուցաբերվում: Վերջինս, սակայն, ոչ թե օրենքի դրույթի սահմանադրականության, այլ հիմնավորված կիրառելու խնդիր է:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վիճարկվող հայեցողական լիազորությունն իրականացնելիս դրա կիրառման իրավաչափությունը կարող է ապահովվել, եթե վճռաբեկ դատարանը հիմնավորում է արդարադատության արդյունավետության այն շահի առկայությունը, որը հիմք է հանդիսանում նշված լիազորությունից օգտվելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Նարկերի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 15 հոդվածի «գ» կետը համապատասխանում է Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասպանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը համապատասխանում է Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

3. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

22 սեպտեմբերի 2009 թվական
ՄԴՈ-832

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ Ա. ԶԵՅՆԱՅԱՆԻ ԵՎ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 426.7 ՆՈՂՎԱԾԻ, 426.2 ՆՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 426.4 ՆՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱ- ԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱԳԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

13 հոկտեմբերի 2009թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դափարանը՝ կազմով.

Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Նովիանինյանի, Ն. Նազարյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող Ա. Զեյնալյանի, պապասխանող կողմի՝ ՆՆ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՆ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դափարանի մասին» ՆՆ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Ա. Զեյնալյանի եւ Վ. Խաչատրյանի դիմումների հիման վրա՝ Նայասարանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.7 հոդվածի, 426.2 հոդվածի 2-րդ մասի եւ 426.4 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Ա. Զեյնալյանի եւ Վ. Խաչատրյանի՝ 26.03.2009թ. եւ Վ. Խաչատրյանի՝ 19.05.2009թ. ՆՆ սահմանադրական դափարան մուտքագրված դիմումներն են, որոնց հիման վրա, ղեկավարվելով «Սահմանադրական դափարանի մասին» ՆՆ օրենքի 39 հոդվածով, մինչեւ դատաքննությունն սկսվելը գործերը միավորվել են դատարանի նույն նիստում քննելու համար:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, պապասխանող կողմի գրավոր բացատրությունը, հեփազոտելով ՆՆ քրեական դատավարության օրենսգիր-

քը, օրենսդրության այլ ակտեր եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դափարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. ՏՏ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՏՏ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի 426.2 հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայելու բողոք ներկայացնելու իրավունք ունեն միայն այդ հանգամանքի հետ առնչվող գործին մասնակցած շահագրգիռ անձինք, բացառությամբ Նայասարանի Նանրապետության օրենքներով եւ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի»:

Օրենսգրքի 426.4 հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Նոր հանգամանքների հետեւանքով դատական ակտերը վերանայվում են հետեւյալ դեպքերում.

1) Նայասարանի Նանրապետության սահմանադրական դափարանը արվյալ քրեական գործով՝ դափարանի կիրառած օրենքը հակասահմանադրական է ճանաչել.

2) Նայասարանի Նանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից այդ դափարանի հիմնադրման կամ նրա իրավասությունը սահմանող այլ միջազգային պայմանագրին համապատասխան՝ այդ դափարանը դատավճիռ կամ որոշում է կայացրել, որով հիմնավորվում է, որ արվյալ քրեական գործի քննության ժամանակ Նայասարանի Նանրապետության դափարանը թույլ է արվել Նայասարանի Նանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով սահմանված՝ մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտում.

3) Նայասարանի Նանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված այլ նոր հանգամանքների դեպքերում»:

Օրենսգրքի վիճարկվող 426.7 հոդվածի 4-րդ մասը սահմանում է.

«Նոր հանգամանքների հիմքով շահագրգիռ անձի փոխարեն բողոք կարող է ներկայացնել նրա լիազորած անձը, որը բողոքի հետ միաժամանակ դափարան պետք է ներկայացնի նաեւ իր լիազորությունները հաստատող փաստաթուղթը: Շահագրգիռ անձի լիազորված անձ կարող է լինել միայն փաստաբանը»:

Քաղաքացի Վ. Խաչատրյանի դիմումը սահմանադրական դափարանի թիվ 2 դատական կազմի՝ 01.06.2009թ. որոշմամբ քննության է ընդունվել ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 426.4 հոդվածի 1-ին մասի միայն 2-րդ կետի առնչությամբ: Սահմանադրական դափարանը, «Սահմանադրական դափարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասին համապատասխան, հարկ է համարում անդրադառնալ նաեւ վիճարկվող նորմերի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՏՏ քրեական դատավարության

րության օրենսգրքի վերոնշյալ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սահմանադրաիրավական բովանդակության հարցին:

2. Ինչպես Ա. Զեյնալյանի եւ Վ. Խաչատրյանի միացյալ դիմումի, այնպես էլ Վ. Խաչատրյանի դիմումի հիման վրա քննության ընդունված եւ միավորված գործերի դատավարական նախապարմությունը հանգում է հետեյալին: Վ. Խաչատրյանը 2008թ. հուլիսի 23-ին դիմել է Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ Գալստյանն ընդդեմ Նայասպանի գործով՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի հիման վրա «ՆՏ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ապրանքի դատարանի 2003թ. ապրիլի 7-ի «Վարչական փույժ նշանակելու մասին» որոշումը» վերանայելու բողոքով: Դատարանը 2008թ. օգոստոսի 7-ին կայացրել է «Դատական ակտի վերանայման վարույթի հարուցումը մերժելու մասին» որոշում: Վերջինս բողոքարկվել է ՆՏ քրեական վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանը վկայակոչելով օրենսգրքի 426.7 հոդվածի 4-րդ մասի վերջին նախադասությամբ ամրագրված դրույթը՝ Ա. Զեյնալյանին չի ճանաչել որպես վերաքննիչ բողոք բերողի ներկայացուցիչ:

ՆՏ վերաքննիչ քրեական դատարանը 01.10.2008թ. կայացրել է որոշում, որով օրինական ուժի մեջ է թողել առաջին ապրանքի դատարանի որոշումը: ՆՏ վերաքննիչ դատարանի նշված որոշումը բողոքարկվել է ՆՏ վճռաբեկ դատարան: Վերջինս իր՝ 19.11.2008թ. որոշմամբ բողոքը թողել է առանց քննության: Ինչպես առաջին ապրանքի, այնպես էլ վերաքննիչ քրեական դատարանի որոշումները հիմնվել են այն պատճառաբանության վրա, որ դիմողը որպես իր վերաբերյալ դատական ակտի վերանայման հիմք է մատնանշել Եվրոպական դատարանի վճիռը, որով արձանագրվել է ոչ թե կոնկրետ դիմողի, այլ մեկ այլ անձի իրավունքի խախտման փաստը:

3. Օրենսգրքի 426.7 հոդվածի սահմանադրականության առնչությամբ դիմողները փաստարկում են, որ այդ հոդվածի 4-րդ մասի վերջին նախադասությամբ ամրագրված դրույթը՝ «Շահագրգիռ անձի լիազորված անձ կարող է լինել միայն փաստաբանը», հակասում է ՆՏ Սահմանադրության 14.1., 18 եւ 19 հոդվածների պահանջներին: Եթե նման պահանջի նպատակը դատարան ներկայացվող դիմումի մասնագիտական որակի ապահովումն է, ապա այդ նպատակը, ըստ դիմողների, «ի չիք է դառնում, եթե առկա է դիմողի՝ առանց երրորդ անձի (այդ թվում փաստաբանի) դիմելու անհրաժեշտության անմիջականորեն դատարան դիմելու իրավունքը»: Վիճարկվող դրույթում ամրագրված պահանջն այն պայմաններում, երբ շահագրգիռ անձանց համար երաշխավորված չէ անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու հնարավորությունը, սահմանափակում է դատարանի մարչելիության՝ անձի իրավունքը:

Դիմող Վ. Խաչատրյանի պնդմամբ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 426.2 հոդվածի 2-րդ մասում եւ 426.4 հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ մասերում ամրագրված դրույթները հակասում են ՆՏ Սահմանադրության 1-ին, 3, 6, 22, 18, 19 եւ 43 հոդվածներին: Այդ հակասությունը, ըստ դիմողի՝ դրսևորվում է նրանում, որ վիճարկվող նորմերը

թույլ չեն փալիս սահմանադրական դափարանի որոշման եւ Մարդու իրավունքների եվրոպական դափարանի վճռի հիման վրա վերանայել համանման իրավախախտման արդյունքում փոսժամ անձանց վերաբերյալ դատական ակտեր: Դիմողը գտնում է, որ ներպետական մակարդակում Եվրոպական դափարանի վճռի հիման վրա պետք է սպասեցվի ոչ միայն այն անձի վերաբերյալ դատական ակտի վերանայումը, որի գանգափի հիման վրա փվյալ վճիռը կայացվել է, այլ նաեւ այլ անձանց վերաբերյալ դատական ակտերը, որոնց առնչությամբ թույլ է փրվել իրավունքի նույն խախտումը: Ըստ դիմողի՝ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 426.2 հոդվածի 2-րդ մասում «**Ա** միայն այդ հանգամանքի հետ առնչվող գործին մասնակցած շահագրգիռ անձինք **Ա**» դրույթը՝ այնպես, ինչպես դա կիրառվում է ու իրավակիրառական պրակտիկայով իմաստ է ստացել, լուրջ խոչընդոտներ է հարուցում ՄԻԵԴ-ի վճիռների հիման վրա անձանց կոնվենցիոն իրավունքների վերականգնման եւ պաշտպանության, հետեւաբար՝ նաեւ ՄԻԵԴ-ի վճիռները կատարելու՝ Նայասփանի Նանրապետության ստանձնած պարտավորության բարեխիղճ կատարման համար»:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ դիմող կողմի դիրքորոշումն անընդունելի է, ինչը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2000 թվականի հունվարի 19-ի R(2000)2 հանձնարարականի 13-րդ կետում ամրագրված դրույթների պահանջներին համապատասխան պատասխանող պետությունը պարտավոր է Մարդու իրավունքների եվրոպական դափարանի կայացրած վճիռների հիման վրա վերանայել միայն այն գործերը, որոնցով արձանագրվել է Կոնվենցիայի խախտում, հետեւաբար, ինչպես կարծում է պատասխանող կողմը, սահմանադրական դափարանի ՍԴՈ-751 որոշման եզրահանգումները կիրառելի չեն սույն գործով, եւ դիմող կողմի մատնանշած՝ Մարդու իրավունքների եվրոպական դափարանի վճիռը՝ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 426.4 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով դիմող Վ. Խաչարյանի վերաբերյալ գործով չի կարող հանդիսանալ նոր հանգամանք հավաստող ապացույց: Այս հիմնավորմամբ պատասխանող կողմը գտնում է, որ «ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 426.2 հոդվածի 2-րդ մասն ու 426.4 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ Սահմանադրությանը համապատասխանության փեսանկյունից խնդիրներ չեն առաջացնում»:

ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 426.7 հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության վերաբերյալ պատասխանող կողմը գտնում է, որ «շահագրգիռ անձի լիազորված անձ կարող է լինել միայն փաստաբանը» դրույթում որեւէ խտրականության մասին խոսք չի գնում», եւ օրենքը սոսկ նպատակ է հետապնդում քաղաքացու իրավունքների ու շահերի պաշտպանությունն իրականացնել համապատասխան որակավորում ունեցող անձի միջոցով, «որը կբարձրացներ այդ նույն իրավունքների շահերի պաշտպանության արդյունավետությունը»:

Պատասխանող կողմը միաժամանակ արտահայտում է այն կարծիքը, թե «**Ա** այլ հարց է, թե որքանով է ներկա պայմաններում նման սահմանափակումը օգնում վերը նշված նպատակների իրականացմանը **Ա**»: Ըստ պատասխանողի՝ ՏՏ քրեական դատա-

վարության օրենսգրքում վերոհիշյալ նորմի նախադետումն արդարացված է եւ բխում է բողոք բերած անձի շահերից, իսկ կիրառված պոզիտիվ խտրականությունը համաչափ է եւ ողջամիտ, քանի որ Կրեմլի օրենսդրական ու պրակտիկ համապատասխան գիտելիքներ ունեցող փաստաբանը կարող է առավելագույնս արդյունավետ ձեռով ներկայացնել իր վստահորդի շահերը:

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել նոր հանգամանքների հիմքով քրեական գործերով դատական ակտերի վերանայման վարույթի բնորոշ առանձնահատկությունները՝ ելնելով դիմողների հարցադրումների բովանդակությունից, հաշվի առնելով նաեւ, որ սահմանադրական դատարանն իր ՍԴՌ-701, ՍԴՌ-751, ՍԴՌ-758, ՍԴՌ-765, ՍԴՌ-767 որոշումներով անդրադարձել է նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտի էությանն ու բովանդակությանը, դրա կիրառման եւ օրենսդրական կարգավորման արդյունավետության ու սահմանադրականության խնդիրներին:

Նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտն ըստ էության ՆՃ քրեական դատավարության օրենսգրքում իր ամրագրումն սրացավ «ՆՃ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 14.12.2004թ. ՎՕ-57-Ն ՆՃ օրենքով, համաձայն որի՝ այդ օրենսգիրքը լրացվեց 408.1, 410.1 հոդվածներով, որոնք համապատասխանաբար սահմանում էին նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայելու հիմքերը եւ վարույթ հարուցելու կարգը: 28.11.2007թ. ՎՕ-270-Ն ՆՃ օրենքով նշված հոդվածները ճանաչվեցին ուժը կորցրած եւ ՆՃ քրեական դատավարության օրենսգիրքը լրացվեց «Դատական ակտերի վերանայումը նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով» վերդատությամբ 12.1 բաժնով: Արդյունքում, նշված օրենքով լրացված օրենսգրքի 426.4 հոդվածը որպես նոր հանգամանք է դիտարկում ՆՃ սահմանադրական դատարանի՝ Կրեմլի քրեական գործով դատարանի կիրառած օրենքը Սահմանադրությանը հակասող ճանաչելու մասին որոշումը, ինչպես նաեւ, ՆՃ մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից այդ դատարանի հիմնադրման կամ նրա իրավասությունը սահմանող այլ միջազգային պայմանագրին համապատասխան՝ այդ դատարանի ակտը, որով հիմնավորվում է, որ Կրեմլի քրեական գործի քննության ժամանակ ՆՃ դատարանը թույլ է տվել Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով սահմանված՝ մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտում: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներին, քանի որ դրանք պարտադիր իրավաբանական ուժ ունեն Հայաստանի Հանրապետության փարածքում:

Անդրադառնալով նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի բովանդակությանը՝ ՆՃ սահմանադրական դատարանն իր ՍԴՌ-767 որոշմամբ արձանագրելով քաղաքացիական եւ քրեական գործերով այդ ինստիտուտի իրավակարգավորման ընդհանրությունները, կարեւորել է նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման լիարժեք եւ արդյունավետ համակարգի առկայությունը քրեական դատավարության շրջանակներում, ելնելով այն իրողությունից, որ «քրեական պատասխանատվություն նախադետող դատական ակտերն առանձնակի նշանակություն ու-

նեն՝ հաշվի առնելով անձի նկատմամբ հարկադրանքի միջոց կիրառելու եւ դրանից բխող հետեւանքների առկայության հանգամանքը»: Ներեւաբար, սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը հնարավոր ու անհրաժեշտ է համարում քրեական գործերով նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի իրավակարգավորման սահմանադրականությունը միաժամանակ գնահատել ինչպես այդ ակտերի վերանայման նախատեսված հիմքերի, այնպես էլ այդպիսի գործերով շահագրգիռ անձանց ներկայացուցչության ինստիտուտի իրավակարգավորման սահմանադրականությունը գնահատելու միջոցով: Սահմանադրական դատարանը միաժամանակ կարեւորում է քրեական եւ քաղաքացիական գործերով նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի իրավակարգավորման օբյեկտիվ առանձնահատկությունների օրենսդրական հստակ ամրագրումն այնքանով, որքանով այն անհրաժեշտ է անձանց խախտված իրավունքների ու ազատությունների (թե՛ սահմանադրական եւ թե՛ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների (այսուհետ՝ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքներ)) ներպետական արդարադատական (ընդհանուր դատական եւ սահմանադրական-արդարադատական) եղանակով արդյունավետ պաշտպանությունն ապահովելու համար:

6. Նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայելու հիմքերի, ինչպես նաեւ այդ հանգամանքների հիմքով վարույթ հարուցելու գործող օրենսդրական կարգի ուսումնասիրությունը վկայում է, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի նպատակը, ինչպես արձանագրվել է նաեւ սահմանադրական դատարանի վերոհիշյալ համապատասխան որոշումներում, հակասահմանադրական ճանաչված օրենքի կիրառման հետեւանքով անձանց խախտված սահմանադրական եւ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների վերականգնումն է: Այսինքն՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտն անձանց խախտված իրավունքների վերականգնման իրավական կարեւոր միջոց է: Վերջինիս իրավական բովանդակությունը, սույն գործի շրջանակներում, թույլ է տալիս հարկանշել քրեական եւ քաղաքացիական դատավարության շրջանակներում կարգավորման հետեւյալ սկզբունքային առանձնահատկությունները.

- նոր հանգամանքներով վարույթ հարուցելու նախաձեռնության դրսեւորման հարցում անձինք (շահագրգիռ անձը, վերջինիս ներկայացուցիչը) պետք է օժտված լինեն միեւնույն կարգավիճակով (համարժեք իրավունքներով եւ պարտականություններով), որպիսի հանգամանքը վիճարկվող նորմերում հաշվի է առնված,

- նոր հանգամանքներով վարույթի իրավակարգավորումը, գլխավորապես, թելադրված կամ պայմանավորված չպետք է լինի քրեական կամ քաղաքացիական դատավարության առանձնահատկություններով, մասնավորապես՝ այդ վարույթի իրավակարգավորման առանձին փորձեր չեն կարող բացառապես հիմնավորվել կամ արդարացվել դատավարության այս կամ այն փուլի էությունը եւ առանձնահատկություններով,

- պայմանավորված վերոհիշյալ հանգամանքներով՝ ՏՏ քաղաքացիական եւ քրեական դատավարության օրենսգրքերով սահմանված՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման կարգը, ըստ էության, պետք է երաշխավորի անձանց խախտված իրավունքների եւ ազատությունների արդյունավետ վերականգնման համարժեք հնարավորություն:

7. Քրեական գործով վարույթի իրավակարգավորման առանձնահատկությունների ուսումնասիրությունը վկայում է, որ փաստաբանի մասնակցության անհրաժեշտությունը պայմանավորված է հատկապես մրցակցային դատավարության շրջանակներում մեղադրանքը հերքող, ամբաստանյալի պատասխանավորությունը բացառող կամ պարիժը եւ դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքների բացահայտման եւ դատարանին ներկայացնելու անհրաժեշտությամբ: Մինչդեռ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի նպատակը անձանց խախտված իրավունքների (սահմանադրական կամ Կոնվենցիայով երաշխավորված) վերականգնման հնարավորության եւ ոչ թե քրեական մեղադրանքի հարցի լուծումն է:

Օրենսդրի փարբերակված մոտեցումը՝ քրեական վարույթում շահագրգիռ անձանց ներկայացուցչության ինստիտուտի իրավակարգավորման եւ բացառապես փաստաբանին որպես լիազորված անձ նախատեսելու հարցում, պայմանավորված է նաեւ սահմանադրական դատարանի կամ միջազգային դատարանի համապատասխան ակտի հիման վրա անձանց շահերը ներկայացնելու խնդրում մասնագիտական պատշաճ մակարդակ ապահովելու անհրաժեշտությամբ, որն անհրաժեշտ է իրավաչափ պայման է՝ այդ վարույթում անձանց իրավունքների արդարադատական արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 426.7 հոդվածի 4-րդ մասի վիճարկվող դրույթի սահմանադրականությունը գնահատել նաեւ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վերաբերյալ բողոք ներկայացնելու կապակցությամբ անվճար հիմունքներով իրավաբանական օգնության փրամադրման իրավական հնարավորության փեսանկյունից, որը սահմանադրական դատարանի ՄԳՌ-756 որոշման համաձայն կարելու էր չափանիշ է իրավաբանական օգնություն ստանալու՝ անձի սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացման գործող երաշխիքները գնահատելու փեսանկյունից:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Փաստաբանության մասին» ՏՏ օրենքը, ինչպես նաեւ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքը չեն երաշխավորում փաստաբանական անվճար ծառայություն այն անձանց համար, ովքեր ի վիճակի չեն անվճարունակության կամ այլ հիմքով ապահովելու իրենց շահերի պաշտպանությունը: Մասնավորապես, «Փաստաբանության մասին» ՏՏ օրենքի 6 հոդվածը՝ ի դեմս պետության, երաշխավորում է անվճար իրավաբանական օգնություն (հանրային պաշտպանություն) խիստ սահմանափակ դեպքերում. «... քրեական գործերով՝ Նայասպանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով եւ նախատեսված դեպքերում, ինչպես նաեւ Նայասպանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով եւ ... դեպքերում»:

Սահմանադրական դափարանն իր՝ 2008թ. հոկտեմբերի 8-ի ՄԴՈ-765 որոշմամբ բացահայտելով իրավաբանական օգնության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ ընդգծել է, որ «ՏՏ Սահմանադրության 20 հոդվածի 1-ին մասի ընկալմամբ՝ իրավաբանական օգնություն սրանալու իրավունքը ներառում է նախ, որակյալ իրավաբանական ծառայություն սրանալու հնարավորություն, եւ երկրորդ, պետության պարտականությունը՝ ապահովելու այդպիսի անվճար օգնություն՝ կարիք ունեցող անձանց համար: Պետության նշված պարտականությունը նաեւ ենթադրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ դափարության համապարասխան (այդ թվում՝ նոր հանգամանքներով դափարական ակտերի վերանայման) փուլում անհրաժեշտ է փաստաբանի պարտադիր ներկայացուցչություն կամ այն բխում է դափարության շահերից, ապա յուրաքանչյուր կարիքավոր անձ պետք է իրավունք եւ երաշխավորված հնարավորություն ունենա սրանալու այդպիսի օգնություն: Ընդ որում, որպես այդպիսի կարիքի գնահատման չափանիշ առաջին հերթին կարեւորվում է անձի վճարունակության մակարդակը:

Սահմանադրական դափարանը գտնում է, որ անհրաժեշտության դեպքում պետության հաշվին անձին անվճար իրավաբանական օգնություն փրամադրելու հնարավորության վերաբերյալ ՏՏ Սահմանադրության 20 հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթը չի կարող մեկնաբանվել որպես ընդհանուր կանոնից բացառություն՝ արդյունքում գործով շահագրգիռ կարիքավոր անձանց առնչությամբ անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու օրենքով խիստ մասնավոր դեպքեր նախատեսելու համար:

Ներուաբար, վիճարկվող նորմում փաստաբանի միջոցով ներկայացուցչության վերաբերյալ պարտադիր պահանջը, փաստաբանների կողմից՝ դափարական ակտերի վերանայման վերաբերյալ բողոք ներկայացնելու կապակցությամբ անվճար հիմունքներով իրավաբանական օգնության փրամադրման հնարավորություն չնախատեսելու պայմաններում, անհամաչափորեն սահմանափակում է անձի խախտված սահմանադրական եւ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները նոր հանգամանքներով դափարական ակտը վերանայելու միջոցով վերականգնման հնարավորությունը՝ վրանգելով անձի թե՛ սահմանադրական արդարադատության իրավունքի եւ թե՛ իր խախտված իրավունքները միջազգային ափսոսանքներում դափարական կարգով պաշտպանելու սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացումը:

Սահմանադրական դափարանը նաեւ արձանագրում է դափարության մասնակից ճանաչելու պահանջի իրավունքի եւ այն խախտվելիս վերականգնելու երաշխիքների (մասնավորապես՝ դափարական կարգով) վերաբերյալ ՏՏ քրեական դափարության օրենսգրքի 100 հոդվածում ամրագրված նորմերի ընդհանուր իրավակարգավորիչ նշանակությունն ու դրանց փրամաբանական զարգացման անհրաժեշտությունը քրեական դափարության բոլոր, այդ թվում նոր հանգամանքներով դափարական ակտերի վերանայման փուլում (ներառյալ այն դեպքերը, երբ համապարասխան միջնորդությունը մերժվել է միջանկյալ դափարական ակտով, հարկապես, երբ այդ ակտով ուղղակի շոշափվում են անձի սահմանադրական կամ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները):

Ներուաբար, անդրադառնալով ՏՏ քրեական դափարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 426.7 հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության խնդրին,

դափարանը դիմող կողմի փաստարկները համարում է հիմնավոր, միաժամանակ հասարակագրում, որ խնդրի լուծումը պահանջում է համալիր իրավակարգավորում՝ կապված նաև դատավարության մյուս փուլերում երաշխավորված անվճար իրավաբանական օգնության փրամադրման՝ օրենքով նախատեսված հիմքերի ընդարձակման հետ: Դատարանը վերահաստատում է իր ՄԴՌ-765 որոշմամբ արտահայտված այն դիրքորոշումը, համաձայն որի. «... փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պահանջը կարող է իրավաչափ համարվել, եթե բխում է ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերից՝ ներկայացուցչությունն իրականացնելով արհեստավարժ և փորձառու մասնագետների միջոցով ... միաժամանակ հարկ է համարում ընդգծել, որ փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու ինստիտուտը՝ որպես այլընտրանքային փարբերակ, իրավաչափ կարող է համարվել միայն այն դեպքում, երբ օրենսդրությունը փաստաբանի ծառայությունից օգտվելու հնարավորությունը երաշխավորի յուրաքանչյուրի համար՝ անկախ փյալ անձի ֆինանսական հնարավորություններից»: Սահմանադրական դատարանը գտնում է, որ անձանց փաստաբանական ծառայությամբ ապահովելու իրավակարգավորման համանման սկզբունքի կիրառումն անհրաժեշտ է քրեական վարույթի բոլոր՝ այդ թվում նոր հանգամանքների հիմքով դատական ակտերը վերանայելու փուլում: Այս համապետքություն էլ ՏՏ Ազգային ժողովի իրավասության խնդիրն է «Փաստաբանության մասին» ՏՏ օրենքում, ՏՏ դատավարական օրենսգրքերում և համապատասխան այլ օրենքներում նախատեսել գործով շահագրգիռ և կարիքավոր անձանց իրավաբանական (փաստաբանական) անվճար օգնություն փրամադրելու առավել լայն երաշխիքներ:

8. Անդրադառնալով ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 426.4 հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերում ամրագրված դրույթների սահմանադրականությանը՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում խնդիրը դիփարկել նախ՝ ՄԴՌ-751 որոշման պահանջների և իրավական դիրքորոշումների փեսանկյունից: Սահմանադրական դատարանն իր որոշումների իրավական հետեւանքների և դրանց հիման վրա դատական ակտերի վերանայման ինստիտուտի կիրառման պրակտիկական ուսումնասիրելով՝ արձանագրել է, որ դատարանների կողմից վերանայվում են միայն այն անձանց առնչությամբ կայացված դատական ակտերը, որոնց դիմումի հիման վրա սահմանադրական դատարանն ընդունել է օրենքի կիրառված դրույթի՝ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում և նշել, որ նման իրավակիրառական պրակտիկական «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասում ամրագրված՝ «դիմող» եզրույթի բովանդակությանը սահմանափակ մեկնաբանություն հաղորդելու արդյունք է: Սահմանադրական դատարանը վերոհիշյալ որոշմամբ շեշտել է, որ «փյալ դեպքում «դիմող» հասկացությունը պետք է մեկնաբանվի լայն իմաստով և անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրացումը պետք է օրենսդրորեն երաշխավորված լինի», և նշել է, որ սահմանադրական դատարանի միջոցով փրամադրվող իրավական պաշտպանությունից օրենքով սահմանված վեցամսյա ժամկետում օգտվելու հնարավորությունը լիարժեք կարող է ապահովվել միայն այն դեպքում, երբ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերանայվեն նաև այն անձանց

առնչությամբ կայացված դափական ակտերը, որոնց վերաբերյալ վերջնական դափական ակտի կայացման եւ փոխյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դափարանում գործի դափաքնություն սկսելու օրվա կամ այդ հարցով սահմանադրական դափարանի որոշման ընդունման օրվա միջեւ ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը (եկեղով «Սահմանադրական դափարանի մասին» ՏՃ օրենքի 69 հոդվածի 5-րդ մասի պահանջից): Ներելաբար, սահմանադրական դափարանն ընդգծել է օրենսդրի պարտականությունը՝ սահմանել նոր հանգամանքների հիման վրա դափական ակտերի վերանայման այնպիսի հստակ իրավակարգավորում, որը երաշխավորի անձի՝ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետով ամրագրված՝ սահմանադրական դափարան դիմելու իրավունքի, ինչպես նաեւ Սահմանադրության 19 հոդվածում ամրագրված իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը: Սահմանադրական դափարանը նշել է, որ «անհրաժեշտ է հստակ ամրագրել նաեւ այն անձանց վերաբերյալ դափական ակտերը վերանայելու օրենսդրական պահանջ, որոնք թեւեւ սահմանադրական դափարանում չեն հանդիսացել դափավարության կողմ, սակայն սահմանադրական դափարանում իրենց գործի քննության հնարավորությունից զրկված են եղել «Սահմանադրական դափարանի մասին» ՏՃ օրենքի 32 հոդվածի 3-րդ կամ 5-րդ մասերի ուժով»: Դրանով իսկ կարելու է սահմանադրական դափարանի որոշման հիման վրա դափական ակտերի վերանայման այնպիսի կարգի սահմանումը, որը լիարժեք հնարավորություն կընձեռի անձին սահմանադրական դափարանի որոշման հիման վրա վերականգնելու Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի կիրառման արդյունքում խախտված իր իրավունքը:

Նաշվի առնելով, որ սահմանադրական դափարանի որոշման հիման վրա նոր հանգամանքներով դափական ակտերի վերանայումը՝ որպես անձի սահմանադրական իրավունքների պաշտպանության միջոց, սահմանադրական դափարան դիմելու (ՏՃ Սահմ. 101 հոդվածի 6-րդ կետ) միջոցով անձի սահմանադրական իրավունքների պաշտպանության իրավունքի բաղադրարարն է, սահմանադրական դափարանը գտնում է, որ սահմանադրական դափարանի որոշման հիման վրա անձինք իրենց նկատմամբ կայացված դափական ակտերը նոր հանգամանքներով վերանայելու իրավունքից կարող են օգտվել, **եթե իրացրել են սահմանադրական դափարանի դիմելու իրենց իրավունքը (այսինքն՝ առկա է սահմանադրական դափարանի որոշումը՝ անձանց նկատմամբ կիրառված օրենքը Սահմանադրությանը հակասող ճանաչելու վերաբերյալ) կամ սահմանադրական դափարանի նոր հանգամանք հանդիսացող որոշման կայացման պահին (կամ նույն հարցով այլ դիմումների հիման վրա դափաքնությունն սկսելու օրվա դրությամբ) ունեցել են այդպիսի իրավունքն օրենքի պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու պոտենցիալ հնարավորություն:**

Վերահաստատելով իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դափարանը գտնում է, որ սահմանադրական դափարանի որոշումների հիման վրա համանման գործերով դափական ակտերի նոր հանգամանքներով վերանայման

հնարավորությունը պետք է քննարկվի, մի կողմից՝ սահմանադրական արդարադատության իրավունքի արդյունավետության ապահովման, մյուս կողմից՝ իրավական որոշակիության եւ իրավական անվտանգության սկզբունքների երաշխավորման անհրաժեշտության փաստակցումից, որոնք պահանջում են սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա դատական ակտերի վերանայման հնարավորության իրացման ժամկետային որոշակի սահմանափակում:

Ներուաբար, վերոհիշյալ վեցամսյա ժամկետի ավարտից հետո ընդունված դատական ակտով շահագրգիռ անձը չի կարող սահմանադրական դատարանի որոշման հիման վրա իրացնել նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման իր իրավունքը:

Այսպիսով, ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 426.4 հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված դրույթի սահմանադրականությունը սահմանադրական դատարանը գնահատում է ելնելով իր ՄԴՌ-751 որոշմամբ արտահայտված, ինչպես նաև վերոհիշյալ դիրքորոշումներից եւ գտնում, որ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա քրեական գործերով նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման գործող իրավակարգավորումը լիարժեք չի երաշխավորում շահագրգիռ անձանց սահմանադրական իրավունքների պաշտպանությունը:

9. Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ ՏՏ Ազգային ժողովն առայժմ չի անդրադարձել սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համապատասխան օրենսդրական վերակարգավորման խնդրին, որն էական խոչընդոտ է նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթում շահագրգիռ անձանց սահմանադրական իրավունքներն արդյունավետ պաշտպանելու համար:

Սահմանադրական դատարանը մատնանշում է նաև ՄԴՌ-751 որոշման պահանջների, դրանում արտահայտված իրավական դիրքորոշումների իրացման անհրաժեշտությունը դատական պրակտիկայում: Դատարանների իրավակիրառական համապատասխան պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա առավելապես վերանայվում են այն անձանց վերաբերյալ կայացված դատական ակտերը, որոնց դիմումի հիման վրա կայացվել է սահմանադրական դատարանի՝ նոր հանգամանք հանդիսացող որոշում:

Սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան միարժեք վկայում է, որ սահմանադրական արդարադատության մարմինների որոշումներում սահմանադրության կամ օրենքի նորմի իրավական բովանդակության բացահայտման (մեկնաբանման) միջոցով արտահայտված իրավական դիրքորոշումները պարտադիր բնույթ ունեն ինչպես իրավակիրառողների, այնպես էլ օրինասպեղծ մարմինների համար:

10. Միաժամանակ, ելնելով սույն գործով դիմող եւ պապասխանող կողմերի դիրքորոշումներից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության՝ սահմանադրական դատարանի որոշումները, որպես կանոն, չունեն հետադարձ ուժ եւ չեն փարածվում մինչ սահմանադրական դատարանի որոշման ընդունումը ծագած եւ

դափնական կամ վարչական ակտերով կարգավորված իրավահարաբերությունների վրա: Միաժամանակ, «Սահմանադրական դափնարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 12-րդ և 13-րդ մասերը նախատեսում են վերոհիշյալ ընդհանուր կանոնից բացառություններ՝ փարբերակված մոտեցում դրսևորելով քաղաքացիաիրավական և քրեաիրավական հարաբերությունների առնչությամբ: «Սահմանադրական դափնարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 13-րդ մասում նախատեսված բացառության համաձայն քրեական օրենսգրքի կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին սահմանադրական դափնարանի որոշման հիման վրա, առանց որեւէ ժամկետային սահմանափակման, վերանայման են ենթակա այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում ընդունված բոլոր դափնական և վարչական ակտերը:

Սահմանադրական դափնարանն արձանագրում է, որ ՆՏ քրեական դափնավարության օրենսգրքի վիճարկվող 426.2 հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթը՝ «բացառությամբ Նայաստանի Նանրապետության օրենքներով... նախատեսված դեպքերի» ձեւակերպմամբ նաեւ հաշվի է առել «Սահմանադրական դափնարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 13-րդ մասով նախատեսված բացառությունը՝ ապահովելով նշված նորմով նախատեսված՝ սահմանադրական դափնարանի որոշումների հիման վրա այն անձանց վերաբերյալ դափնական ակտերի վերանայումը, ովքեր փվյալ գործով սահմանադրական դափնարանում դափնավարության կողմ չեն հանդիսացել:

11. Ինչ վերաբերում է Մարդու իրավունքների եվրոպական դափնարանի վճռի հիման վրա ներպետական մակարդակում, ի լրումն փվյալ վճռի կոնկրետ հասցեատիրոջ, նաեւ համանման իրավախախտման արդյունքում փուժած այլ անձանց վերաբերյալ նոր հանգամանքներով դափնական ակտերի վերանայման վերաբերյալ՝ ՆՏ քրեական դափնավարության օրենսգրքի 426.4 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նախատեսված դրույթի սահմանադրականությանը, ապա սահմանադրական դափնարանն անհրաժեշտ է համարում այն դիփարկել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) նպատակի, Կոնվենցիայի առաջին հոդվածին համապատասխան մասնակից պետությունների սրանձնած ընդհանուր պարտավորության և Մարդու իրավունքների եվրոպական դափնարանի (այսուհետ՝ Եվրոպական դափնարան) առաքելության ու գործառույթների համարեքստում համադրելով այն ՆՏ Սահմանադրության 18 հոդվածի 4-րդ մասում և 19 հոդվածում ամրագրված իրավունքների սահմանադրաիրավական բովանդակության հետ:

ՆՏ Սահմանադրության 18 հոդվածի 4-րդ մասում ամրագրված է Նայաստանի Նանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային դիմելու անձի սուբյեկտիվ իրավունքը՝ որպես այդ իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջազգային-իրավական կարետր միջոց: ՆՏ քրեական դափնավարության վիճարկվող նորմի համարեքստում, անձի սահմանադրական այդ իրավունքն իրացվում է արդարադափնական

եղանակով, այսինքն՝ դադարան դիմելու միջոցով՝ հանդիսանալով ՏՏ Սահմանադրության 19 հոդվածով երաշխավորված անձի իրավունքի դրսևորման առանձնահատուկ ձեռք եւ իրականացվում է Կոնվենցիայում (կից համապատասխան արձանագրություններով) սահմանված ընթացակարգով:

Կոնվենցիայի նպատակն է մարդու իրավունքների պաշտպանությունը եւ ժողովրդավարական հասարակության գաղափարների եւ արժեքների պահպանումը: Կոնվենցիայում եւ դրան կից արձանագրություններում ամրագրված պարտավորությունների սահմանադրականությունը սահմանադրական դադարանը գնահատել է իր ՄԴՈ-350 որոշմամբ եւ նշել, որ Կոնվենցիայի նշված նպատակին համապատասխան մասնակից պետությունները, այդ թվում՝ նաեւ Նայասպանի Նանրապետությունը, պարտավոր են ապահովել Կոնվենցիայի I բաժնում սահմանված իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի համար: Կոնվենցիայի 19 հոդվածի համաձայն՝ Եվրոպական դադարանը հիմնվել է Կոնվենցիայով եւ կից արձանագրություններով անդամ պետությունների ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար: Այդ գործառնությունը Եվրոպական դադարանը կատարում է միջպետական գանգապների, անհատական գանգապների եւ Կոնվենցիայի մեկնաբանության հետ կապված խորհրդարարական եզրակացություններ փալու միջոցով:

Եվրոպական դադարանի՝ կոնկրետ անհատական գանգապի վերաբերյալ կայացրած յուրաքանչյուր վճիռ ուղղված է ոչ միայն փոխյալ անձի իրավունքների պաշտպանությանը, այլեւ՝ պատասխանող պետության կողմից Կոնվենցիայով ստանձնված այս կամ այն պարտավորության կատարումն ապահովելուն: Տվյալ պարտավորության կատարումը պարզաձե երաշխավորելու համար հաճախ բավարար չէ միայն անհատական գանգապ ներկայացրած անձի իրավունքների վերականգնումը, եթե խնդիրն առնչվում է ներպետական իրավական համակարգի այնպիսի բարեփոխումների իրականացման անհրաժեշտությանը, որոնք կոչված լինեն ապահովելու մարդու՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքների ու ազատությունների երաշխավորված պաշտպանություն: Ներառաբար, անհատական գանգապները եւ Եվրոպական դադարանի կողմից դրանք քննության ընդունելու արդյունքում կայացված որոշումները հաճախ իրավական այն միջոցներն են, որոնք մատնանշում են ներպետական համակարգում իրավակարգավորման, իրավակիրառական (այդ թվում՝ դատական) պրակտիկայի կատարելագործման կոնկրետ ուղիներ:

Սահմանադրական դադարանն իր ՄԴՈ-758 որոշմամբ արձանագրել է, որ «[] Եվրոպական դադարանի պրակտիկայում հետետողականորեն զարգանում է, այսպես կոչված՝ ուղենիշ (ղեկավար) վճիռների ինստիտուտը [] Նաշվի առնելով Եվրոպական դադարանի պրակտիկայում առկա այդ զարգացումները եւ ելնելով ուղենիշ վճիռների հիման վրա ներպետական մակարդակում Եվրոպական դադարան դիմած քաղաքացիների իրավունքների վերականգնման հնարավորությունն ապահովելու անհրաժեշտությունից, ներպետական օրենսդրությունը պետք է այս հանգամանքը նույնպես հստակ ամրագրի»:

Սահմանադրական դադարանն արձանագրում է, որ ՄԴՈ-758 որոշմամբ արտահայտված իրավական վերոհիշյալ դիրքորոշումները դեռեւս մնացել են անհետեւանք:

Վերահասարակելով ՄԴՈ-758 որոշմամբ արվարհայարած իր վերոհիշյալ դիրքորոշումները, հաշվի առնելով Եվրոպական դափարանի ուղենիշ վճիռների բովանդակությունը, դրանցով հեփապնդվող հանրային-իրավական նպարակն ու կարեւորությունը՝ կարարելագործելու մարդու իրավունքների պաշարանության ներպեփական իրավական համակարգը, նաեւ հաշվի առնելով Եվրոպական դափարանի վճիռների հիման վրա ներպեփական իրավահամակարգի կարարելագործման անհրաժեշտության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի (2004)3 հանձնարարականի դրույթները՝ սահմանադրական դափարանը գարնում է, որ ՏՏ Ագգային ժողովի խնդիրն է նախապեսել օրենսդրական կարգավորման այնպիսի միջոցներ, որոնց առկայությամբ կերաշխավորվի ոչ միայն Եվրոպական դափարանի ուղենիշ վճիռների հիման վրա Տայասարանի Տանրապեփությունում իրավահամակարգային բնույթի բարեփոխումների իրականացումը, այլեւ այն անձանց՝ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների դափական կարգով արդյունավեար պաշարանության ապահովումը, ովքեր **Եվրոպական դափարանի կողմից համապարասխան վճռի կայացման պահին (կամ նույն հարցով այլ դիմումների հիման վրա դափարանությունն սկսելու օրվա դրությամբ) ունեցել են այդ իրավունքը Կոնվենցիայով նախարեսված պահանջներին (ժամկեարներին) համապարասխան իրացնելու հնարավորություն:**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Տայասարանի Տանրապեփության Տահմանադրության 100 հողվածի 1-ին կեփով, 101 հողվածի 6-րդ կեփով, 102 հողվածով, «Տահմանադրական դափարանի մասին» Տայասարանի Տանրապեփության օրենքի 1, 63, 64 եւ 69 հողվածներով, Տայասարանի Տանրապեփության սահմանադրական դափարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՏՏ քրեսական դափարավարության օրենսգրքի 426.7 հողվածի 4-րդ մասի վերջին նախադասությամբ ամրագրված դրույթը՝ սույն որոշման մեջ արվարհայարած իրավական դիրքորոշումների մասով ճանաչել Տայասարանի Տանրապեփության Տահմանադրության 19 հողվածի պահանջներին հակասող եւ անվավեր:

2. ՏՏ քրեսական դափարավարության օրենսգրքի 426.2 հողվածի 2-րդ մասը եւ դրա հեփ համակարգային փոխկապակցվածության մեջ գարնվող՝ 426.4 հողվածի 1-ին մասի 1-ին կեփը ճանաչել Տայասարանի Տանրապեփության Տահմանադրության 19 հողվածի պահանջներին հակասող եւ անվավեր այն մասով, որով սահմանափակվում է նոր հանգամանքների հիմքով այն անձանց իրավունքների վերականգնման հնարավորությունը, ովքեր փվյալ անձի նկարմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դափարանում գործի դափարանություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ սահմանադրական դափարանի որոշման ընդունման օրվա դրությամբ ունեցել են այդ իրավունքը «Տահմանադրական դափարանի մասին» ՏՏ օրենքի պահանջներին (ժամկեարներին) համապարասխան իրացնելու պոփենցիալ հնարավորություն:

3. ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 426.4 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սույն որոշման մեջ ՆՏ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում համապատասխանում է Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը:

4. Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

13 հոկտեմբերի 2009 թվականի
ՄԴՈ- 833

ՆԱԼՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԼՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԼՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՐԱՄ ՔԱՐԱՄՅԱՆԻ ԵՎ ՆԱՅԿ ՆԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՓԱԽՍԱԿԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԼՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 25 ՆՈԴՎԱԾԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԼՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅՈՆ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

20 հոկտեմբերի 2009թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Նովիսնիսյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝ դիմողներ Ա. Քարամյանի, Ն. Նայրապետյանի, պապասխանող կողմի՝ ՆՆ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՆ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի, համաձայն Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Արամ Քարամյանի եւ Նայկ Նայրապետյանի դիմումների հիման վրա՝ «Փախստականների մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 25 հոդվածի՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Սահմանադրական դատարանը, նկատի ունենալով, որ Արամ Քարամյանի եւ Նայկ Նայրապետյանի դիմումների հիման վրա քննության ընդունված դիմումները վերաբերում են նույն հարցին, իր՝ 08.06.2009թ. աշխատակարգային որոշմամբ որոշել է դրանք միավորել եւ քննել դատարանի նույն նիստում:

Գործի քննության առիթն Արամ Քարամյանի եւ Նայկ Նայրապետյանի՝ 20.05.2009թ. ՆՆ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պապասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Փախստականների մասին»

ՏՏ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դափարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. «Փախստականների մասին» ՏՏ օրենքն ընդունվել է ՏՏ Ազգային ժողովի կողմից 1999 թվականի մարտի 3-ին, ՏՏ Նախագահի կողմից ստորագրվել 1999 թվականի մարտի 27-ին եւ ուժի մեջ մտել 1999 թվականի ապրիլի 11-ին (ՏՏ-288):

Օրենքի՝ «1988-1992 թվականներին Նայասպանի Նանրապետություն բռնագաղթված անձանց մասին» վերփառությամբ 25 հոդվածն իր սկզբնական խմբագրությամբ սահմանել է. «Սույն օրենքի այն նորմերը, որոնք սահմանափակում են փախստականի կարգավիճակ հայցողների իրավունքները, չեն փարածվում 1988-1992 թվականներին Նայասպանի Նանրապետություն բռնագաղթված անձանց վրա»: Ներագայում ՏՏ Ազգային ժողովի կողմից 2004 թվականի մարտի 3-ին ընդունված՝ ««Փախստականների մասին» Նայասպանի Նանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՏՏ-49-Ն ՏՏ օրենքի 11 հոդվածով «Փախստականների մասին» ՏՏ օրենքի 25 հոդվածը փոփոխվել է եւ շարադրվել հետեւյալ խմբագրությամբ. «1988-1992 թվականներին Ադրբեջանի Նանրապետությունից Նայասպանի Նանրապետություն բռնագաղթված եւ փախստականների հարցերով զբաղվող պետական մարմնում որպես փախստական հաշվառված անձինք հանդիսանում են փախստական՝ սույն օրենքի իմաստով»:

Ավելի ուշ՝ 2008 թվականի նոյեմբերի 27-ին, ՏՏ Ազգային ժողովն ընդունել է «Փախստականների եւ ապաստանի մասին» ՏՏ-211-Ն ՏՏ օրենքը, որի 65 հոդվածի երկրորդ մասի ուժով 2009 թվականի հունվարի 24-ից ուժը կորցրել է «Փախստականների մասին» 1999 թվականի մարտի 3-ի ՏՏ-288 ՏՏ օրենքը:

Դիմողները սահմանադրական դափարանում վիճարկում են «Փախստականների մասին» ՏՏ օրենքի՝ 2004 թվականի մարտի 3-ի ՏՏ-49-Ն օրենքի խմբագրությամբ 25 հոդվածը:

2. Արամ Քարամյանի դիմումի առնչությամբ քննության առարկա գործի դափավարական նախապարմությունը հանգում է նրան, որ Ա. Քարամյանը հայց է ներկայացրել ՏՏ վարչական դափարան ընդդեմ ՏՏ փարածքային կառավարման նախարարության եւ ՏՏ փարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության՝ իրեն որպես փախստական «Նամակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ում հաշվառելու եւ համապարասխան փրեդեկանք փրամադրելու պահանջների մասին:

Նայկ Նայրապետյանի դիմումի առնչությամբ քննության առարկա գործի դափավարական նախապարմությունը հանգում է նրան, որ Ն. Նայրապետյանը հայց է ներկայացրել ՏՏ վարչական դափարան ընդդեմ ՏՏ փարածքային կառավարման նախարարության եւ ՏՏ փարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության՝ իրեն որպես փախստական ճանաչելու եւ որպես փախստական «Նամակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ում հաշվառելու պահանջների մասին:

Վարչական դատարանի՝ 06.10.2008թ. թիվ ՎԴ /3334/05/08 եւ թիվ ՎԴ /2008/05/08 վճիռներով վերոնշյալ երկու հայցերն էլ բավարարվել են:

ՏՏ գլխավոր դատախազի Կեղակալի ներկայացրած վճռաբեկ բողոքների հիման վրա ՏՏ վճռաբեկ դատարանի՝ 13.03.2009թ. թիվ ՎԴ /3334/05/08 եւ թիվ ՎԴ /2008/05/08 որոշումներով վարչական դատարանի՝ 06.10.2008թ. թիվ ՎԴ /3334/05/08 եւ թիվ ՎԴ /2008/05/08 վճիռները բեկանվել են եւ փոփոխվել՝ Արամ Քարամյանի եւ Նայկ Նայրապետյանի հայցերը մերժվել են:

ՏՏ վճռաբեկ դատարանը՝ վկայակոչելով Կրկնապատկերման օրենքի 1-ին հոդվածի դրույթները, ինչպես նաեւ մեկնաբանելով նույն օրենքի 25 հոդվածի դրույթները, գտել է, որ փախստականի կարգավիճակ ձեռք բերելու համար հիմք են հետեւյալ պայմանների միաժամանակյա առկայությունը.

ա/ 1988-1992 թվականներին Ադրբեջանի Նանրապետությունից Նայասպանի Նանրապետություն բռնագաղթված լինելը,

բ/ փախստականների հարցերով զբաղվող պետական մարմնում որպես փախստական հաշվառված լինելը:

Միաժամանակ, վերոնշյալ իրավական դիրքորոշման շրջանակներում հիմք ընդունելով այն փաստը, որ Ադրբեջանի Նանրապետությունից Նայասպանի Նանրապետություն են բռնագաղթել դիմողների ծնողները, իսկ դիմողները ծնվել են Նայասպանի Նանրապետությունում, ՏՏ վճռաբեկ դատարանը գտել է, որ դիմողները 1988-1992 թվականներին Ադրբեջանի Նանրապետությունից Նայասպանի Նանրապետություն բռնագաղթված անձինք չեն, իսկ նրանց ծնողների բռնագաղթված լինելու հանգամանքը հիմք չէ «Փախստականների մասին» ՏՏ օրենքի 25 հոդվածի ուժով դիմողներին փախստական ճանաչելու մասին:

3. Դիմողներն օրենքի 25 հոդվածը վիճարկում են փախստականի կարգավիճակ ունեցող անձանցից Նայասպանի Նանրապետությունում ծնված երեխայի կարգավիճակի արեսանկյունից: Ըստ դիմողների՝ օրենքի վիճարկվող 25 հոդվածը չի համապատասխանում իրավական որոշակիության, համաչափության, իրավահավասարության սկզբունքներին, ինչի հետեւանքով հակասում է ՏՏ Սահմանադրության 3, 6, 14, 14.1., 19, 20, 30.1., 42, 43, 44 եւ 47 հոդվածների պահանջներին: Դիմողները գտնում են, որ իրավական անորոշության հետեւանքով վճռաբեկ դատարանն իր որոշմամբ օրենքի 25 հոդվածին Կրկնապատկերման մեկնաբանություն, որի պարագայում իրենց, որպես փախստականի կարգավիճակ ունեցող անձանցից ծնված երեխաների, մերժվել է փախստականի կարգավիճակի արամադրումը:

Բացի դրանից, դիմողները պնդում են, որ օրենքի 25 հոդվածի իրավական անորոշության վրա հիմնված՝ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման հետեւանքով իրենք հայտնվել են անորոշ կարգավիճակում. չունեն իրենց կարգավիճակը հաստատող որեւէ իրավական փաստաթուղթ, ինչի պատճառով խախտվում են միջազգային պայմանա-

նագրերով եւ ՏՏ Սահմանադրությամբ երաշխավորված իրենց իրավունքներն ու ազատությունները:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, «Փախստականների մասին» ՏՏ օրենքի 1-ին հոդվածի եւ 25 հոդվածի համադրված վերլուծության արդյունքներով գտնում է, որ Նայասարանի Նանրապետությունում ծնված եւ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված դիմողը չի կարող համարվել փախստական՝ անկախ նրա ծնողների բռնագաղթված լինելու հանգամանքից: Ըստ պատասխանողի՝ «Փախստականների մասին» ՏՏ օրենքի 25 հոդվածում ամրագրված դրույթները մեկնաբանելով «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի 86 հոդվածի պահանջներին համապատասխան՝ պարզ է դառնում, որ վիճարկվող նորմի ուժով դիմողը չի կարող փախստական ճանաչվել, քանի որ ծնվել է Նայկական ԽՍՀ-ում եւ ոչ թե Ադրբեջանական ԽՍՀ-ում: Փախստականների երեխաներին Նայասարանի Նանրապետության քաղաքացիություն ընդունել պարտավորեցնելու վերաբերյալ դիմողների պնդումները «Փախստականների մասին» ՏՏ օրենքի եւ «Նայասարանի Նանրապետության քաղաքացիության մասին» ՏՏ օրենքի սխալ մեկնաբանման արդյունք են:

5. «Փախստականների մասին» ՏՏ օրենքի 25 հոդվածի սահմանադրականության հարցի առնչությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում, նախ՝ պարզել «փախստական» եւ «1988-1992 թվականներին Ադրբեջանի Նանրապետությունից Նայասարանի Նանրապետություն բռնագաղթված անձ» հասկացությունների բովանդակությունը:

«Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի Ժնեւի կոնվենցիայի 1-ին հոդվածի Ա. բաժինը սահմանում է «փախստական» հասկացությունը: Նշված բաժնի 2-րդ պարբերության համաձայն՝ «փախստական» եզրույթը կիրառելի է այն անձի նկատմամբ, ով «... ցեղի, կրոնի, ազգության, որոշակի ընկերային խմբի պատկանելու կամ քաղաքական կարծիքի պատճառով հալածանքի հիմնավորված երկյուղ կրելու կապակցությամբ գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս եւ անկարող է կամ այդպիսի երկրյուղի պատճառով անհոժար է օգտվել այդ երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն եւ նման պատահարների հետեւանքով գտնվելով իր նախկին սովորական բնակության երկրից դուրս, անկարող է կամ այդպիսի երկրյուղի պատճառով անհոժար է այնպեղ վերադառնալ»:

2008թ. նոյեմբերի 27-ին ընդունված՝ «Փախստականների եւ ապաստանի մասին» ՏՏ օրենքի 6 հոդվածը գրեթե փառացիորեն վերարտադրել է Ժնեւի կոնվենցիայի վերոհիշյալ դրույթը՝ իր առաջին մասում սահմանելով, որ փախստական է համարվում «[] այն օտարերկրյա քաղաքացին, որը ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի հետեւանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս եւ չի կարող կամ նույն երկրյուղի պատճառով չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն եւ

գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, չի կարող կամ այդ նույն երկրի պատճառով չի ցանկանում վերադառնալ այնտեղ»:

Փախստականի հասկացության վերաբերյալ նմանապիպ դրույթներ էր բովանդակում նաև 1999թ. մարտի 3-ին ընդունված եւ արդեն ուժը կորցրած՝ «Փախստականների մասին» ՆՕ-288 ՆՏ օրենքի 1-ին հոդվածը:

Բերված սահմանումներից ակնհայտորեն բխում է, որ Նայաստանի Նանրապետությունում փախստականի կարգավիճակ ստանալուն կարող է հավակնել այն անձը.

ա) ով բացառապես օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող այնպիսի անձ, ում մշտական բնակության երկիրը Նայաստանի Նանրապետությունը չէ,

բ) ում համար առկա է հեղապահման ենթարկվելու հիմնավոր երկյուղ:

Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում մեկնաբանել նաև «Փախստականների մասին» ՆՕ-288 ՆՏ օրենքի 1-ին հոդվածում ամրագրված՝ «հեղապահման ենթարկվելու հիմնավոր երկյուղ» հասկացության բովանդակությունը: Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ հեղապահումն իրավական արժեքների վնաս պատճառելն է, որն **անձին դնում է անելանելի դրության մեջ:**

Անձի իրավունքների դեմ անթույլատրելի ոտնձգությունը դեռևս բավարար չէ հեղապահման մասին խոսելու համար: Ավելի շուտ պահանջվում է իրավունքների խախտման այնպիսի սպառնալիք, որն իր ձեռով ու ծանրությամբ կառաջացնի մարդու արժանապատվության ոտնահարում եւ փուժողին կղնի անելանելի դրության մեջ: Այն կարող է վնասել կյանքի բոլոր ոլորտները՝ կրոնական, մշակութային կամ Կրթասական: Նման իրավիճակն առկա է միշտ այն դեպքում, երբ վրանգված են, այսպես կոչված, հիմնարար արժեքները: Դրանց թվին են պատկանում կյանքի իրավունքը, ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը, անձնական ու կրոնական ազատությունը, ինչպես նաև կեցության Կրթասական հիմքը:

6. «Փախստականների մասին» ՆՏ օրենքի վիճարկվող 25 հոդվածի նպատակը 1988-1992 թվականներին Ադրբեջանի Նանրապետությունից Նայաստանի Նանրապետություն բռնագաղթված անձանց կարգավիճակի հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորումն էր: Այդ նպատակով օրենսդիրը վերը նշված անձանց կարգավիճակը հավասարեցրել է փախստականի կարգավիճակին: Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանը՝ հիմք ընդունելով նաև սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ օրենքի 25 հոդվածում ամրագրված՝ «1988-1992 թվականներին Ադրբեջանի Նանրապետությունից Նայաստանի Նանրապետություն բռնագաղթված» անձինք» հասկացությունը վերաբերում է այն անձանց, ովքեր բավարարում են հետևյալ բոլոր պայմանները միաժամանակ՝

ա) Նայաստանի Նանրապետության փարածք մուտք գործելիս եղել են օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող այնպիսի անձինք, որոնց մշտական բնակության երկիրը Նայաստանի Նանրապետությունը չէր,

բ) ունեցել են եւ փախստականի կարգավիճակ հայցելու պահին շարունակում են ունենալ Ադրբեջանի Նանրապետությունում հեղապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղ:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ օրենքի 25 հոդվածի նպատակը չէր սահմանել փախստականի կարգավիճակ ստացած անձանցից Նայաստանի Նանրապետությունում ծնված երեխաների իրավական կարգավիճակը: Օրենսդրական նման քաղաքականությունն իրավաչափ է, քանի որ փախստականի կարգավիճակ ստացած անձանցից սերված լինելը, Նայաստանի Նանրապետությունում ծնվելու պարագայում, ինքնին չի կարող առաջացնել փախստականի կարգավիճակ ստանալու պարտադիր պայման, քանի որ նման պայմանը չի փեղավորվում «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի Ժնևի կոնվենցիայի 1-ին հոդվածի Ա. բաժնով եւ «Փախստականների մասին» ՆՕ-288 ՆՏ օրենքով սահմանված՝ «փախստական» հասկացության շրջանակներում:

Ավելին, փախստականի կարգավիճակ ունեցող անձանցից ծնված երեխաների կարգավիճակին վերաբերող միջազգային իրավական փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ միջազգային իրավունքը խրախուսում է այդ կատեգորիայի անձանց ընդունող պետության քաղաքացիություն փրամադրելու գործընթացը: Մասնավորապես, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Փախստականների կողմից ընդունող պետության քաղաքացիության ձեռքբերման մասին անդամ պետություններին ուղղված R(84) 21 հանձնարարականում Նախարարների կոմիտեն հանձնարարում է ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու համար ընդունող պետությունում կամ այլուր ծնված՝ փախստականների երեխաների՝ ընդունող պետության քաղաքացիության ձեռքբերումը:

Նիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի 25 հոդվածը չի առաջացնում իրավական անորոշություն, այլ, ընդհակառակն, դրա բացակայությունն անարդյունավետ կղարձներ 1988-1992 թվականներին Ադրբեջանի Նանրապետությունից Նայաստանի Նանրապետություն բռնագաղթված անձանց կարգավիճակի հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորումը:

Անդրադառնալով փախստականի կարգավիճակ ստացած անձանցից Նայաստանի Նանրապետությունում ծնված երեխաների իրավական կարգավիճակին եւ հիմք ընդունելով ՆՏ օրենսդրության վերլուծության արդյունքները՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ փախստականի կարգավիճակ ստացած անձանցից Նայաստանի Նանրապետությունում ծնված երեխաներն ինքնաբերաբար չեն կարող ՆՏ-ում ստանալ փախստականի կարգավիճակ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 60, 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՆՆ Ազգային ժողովի կողմից 1999 թվականի մարտի 3-ին ընդունված՝ «Փախստականների մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 25 հոդվածը՝ ՆՆ Ազգային ժողովի կողմից 2004 թվականի մարտի 3-ին ընդունված ՆՕ-49-Ն օրենքի խմբագրությամբ, մինչև 2008 թվականի նոյեմբերի 27-ին ՆՆ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Փախստականների եւ ապաստանի մասին» ՆՕ-211-Ն ՆՆ օրենքի 65 հոդվածի երկրորդ մասի ուժով 2009 թվականի հունվարի 24-ից ուժը կորցնելը, համապատասխանել է Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ**Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ***20 հոկտեմբերի 2009 թվականի**ՍՂ-Ո- 834*

ՆԱԼՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԼՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԼՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՆՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ ՆՆ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 55 ՆՈՂՎԱԾԻ 4-ՐԴ
ՄԱՍԻ 5-ՐԴ ԿԵՏԻ, «ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԼՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՅԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՆՆ ՕՐԵՆՔԻ 1-ԻՆ ՆՈՂՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ, «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՆՆ
ՕՐԵՆՔԻ 2 ՆՈՂՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ
ՆԱԼՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

27 հոկտեմբերի 2009թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի (զեկուցող), Վ. Նովիանիսյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն ՆՆ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 25 եւ 71 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՆՆ վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ ՆՆ քրեական դատավարության օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, «Նայասարանի Նանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՆ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՆ օրենքի 2 հոդվածի 4-րդ մասի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՆՆ վարչական դատարանի՝ 30.07.2009թ. սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, դատական գործը, հեղափոխելով ՆՆ քրեական դատավարության օրենսգիրքը, «Նայասարանի Նանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՆ օրենքը, «Վարչարարության

հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՏՏ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. ՏՏ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՏՏ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, Նայասպանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից: «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՏՏ օրենքը ՏՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004թ. փետրվարի 18-ին, ՏՏ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2004թ. մարտի 16-ին եւ ուժի մեջ է մտել 2004թ. դեկտեմբերի 31-ից: «Նայասպանի Նանրապետությունում սպուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՏՏ օրենքը ՏՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2000թ. մայիսի 17-ին, ՏՏ - Նախագահի կողմից ստորագրվել՝ 2000թ. հունիսի 12-ին եւ ուժի մեջ է մտել 2000թ. հուլիսի 1-ից:

2. ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետում ամրագրված նորմը քննիչին լիազորում է «պահանջել կատարելու վերսպուգումներ, գույքագրումներ, այլ սպուգողական գործողություններ»:

«Նայասպանի Նանրապետությունում սպուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՏՏ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասում ամրագրված է. «Սույն օրենքը չի կարգավորում Նայասպանի Նանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերի, ինչպես նաեւ Նայասպանի Նանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզիա ստացած անձանց գործունեության նկատմամբ իրականացվող վերսպուգումների, Նայասպանի Նանրապետության վերահսկիչ պալատի կողմից իրականացվող վերահսկողության, Նայասպանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան իրականացվող սպուգումների նշանակման եւ անցկացման, Նայասպանի Նանրապետության մաքսային օրենսգրքով նախատեսված մաքսային հսկողության (բացառությամբ հեպրեսցթողումային հսկողության), հողերի օգտագործման ու պահպանման նկատմամբ վերահսկողության հետ կապված հարաբերությունները, փոխադարձորոշող սուբյեկտի գործադիր մարմնի նկատմամբ բաժնետերերի, փայտտերերի, հիմնադիրների կամ անդամների կողմից իրականացվող հսկողության հետ կապված հարաբերությունները, ինչպես նաեւ փոխադարձորոշող սուբյեկտի փարածքային ու կառուցվածքային ստորաբաժանումների նկատմամբ փոխադարձորոշող սուբյեկտի գործադիր մարմնի կողմից իրականացվող հսկողության հետ կապված հարաբերությունները»:

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՏՏ օրենքի 2 հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Սույն օրենքի գործողությունը չի փարածվում դատավարական իրավունքի նորմերով կարգավորվող հարաբերությունների վրա»:

3. Գործի դատավարական նախապարմությունը հետեյալն է: ՏՏ վարչական դատարանն իր՝ 2008թ. հոկտեմբերի 8-ի վճռով մերժել է ՏՏ գլխավոր դատախազության

հայրը՝ վիճելի իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելով «Նայասպանի Նանրապետությունում սպուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՆ օրենքը, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՆ օրենքը: ՆՆ վարչական դատարանի նշված վճիռը բողոքարկվել է ՆՆ վճռաբեկ դատարան: Վերջինս իր՝ 13.03.2009թ. ՎԴ/0216/05/08 որոշմամբ բեկանել է ՆՆ վարչական դատարանի բողոքարկված վճիռը եւ գործն ուղարկել նոր քննության: Վճռաբեկ դատարանը նշված որոշման մեջ իրավական դիրքորոշում է արքայապետել առ այն, որ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան իրականացվող սպուգումների նշանակման եւ անցկացման հետ կապված հարաբերությունները դուրս են «Նայասպանի Նանրապետությունում սպուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՆ օրենքի, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՆ օրենքի իրավակարգավորման շրջանակից: Վճռաբեկ դատարանը, մասնավորապես, նշել է, որ. ««Նայասպանի Նանրապետությունում սպուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՆ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի եւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՆ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով վերոնշյալ օրենքները սույն վեճի լուծման համար կիրառելի չեն»:

4. Դիմող կողմը սահմանադրական դատարանին ուղղված դիմումում խնդրում է քննության առնել ՆՆ քրեական դատավարության օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, «Նայասպանի Նանրապետությունում սպուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՆ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՆ օրենքի 2 հոդվածի 4-րդ մասի՝ «իրավակիրաւ պրակտիկայում փրված մեկնաբանման, այն է՝ քրեական դատավարության կարգով նշանակվող սպուգումները դուրս են «Նայասպանի Նանրապետությունում սպուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՆ օրենքի եւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՆ օրենքի կարգավորման առարկայից, Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանելու հարցը»:

Դիմողը՝ վկայակոչելով ՆՆ Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ մասը, գրնում է, որ իրավաբանական անձանց, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն (այդ թվում՝ սպուգումներ) իրականացնելու պայմանները եւ կարգը, այդ թվում ՆՆ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան իրականացվող սպուգումների իրականացման պայմաններն ու կարգը պետք է սահմանվեն օրենքով: Եթե ՆՆ քրեական դատավարության օրենսգրքով այդ պայմաններն ու կարգը սահմանված չեն, իսկ «Նայասպանի Նանրապետությունում սպուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՆ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասը բացառում է նշված օրենքի կանոնակարգումների կիրառելիությունը, ապա ակնհայտ է, որ պետք է լինի օրենք, որպեսզի նշված սպուգումներն իրականացվեն դրան համապատասխան: ՆՆ քրեական դատավարության օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը միայն սահմանում է իրավասու պաշտոնատար անձի լիազորությունը պահանջելու «սպուգողական գործողություններ», իսկ այդ

ստուգողական գործողությունների իրականացման պայմաններն ու կարգը ՆՃ քրեական դատավարության օրենսգրքով չի կանոնակարգվում: ՆՃ քրեական դատավարության շրջանակներում նշանակվող ստուգումները կանոնակարգող հատուկ օրենքի բացակայության պայմաններում, ըստ դիմողի՝ ՆՃ քրեական դատավարության օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի՝ իրավակիրառ պրակտիկայում փրված մեկնաբանությունն առաջացնում է վիճարկվող նորմերի սահմանադրականության հարց՝ կապված ՆՃ Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ մասի պահանջների հետ:

5. Պատասխանող կողմը նշում է, որ ՆՃ վարչական դատարանը դիմել է ՆՃ սահմանադրական դատարան ոչ թե վիճարկվող դրույթների, այլ իրավակիրառ պրակտիկայում դրանց փրված մեկնաբանության սահմանադրականության հարցով:

Պատասխանող կողմը միաժամանակ նշում է, որ քրեական դատավարության ընթացակարգով նշանակված ստուգումների դեպքում անձը գրկված չէ ինչպես իր իրավունքների եւ շահերի պաշտպանության հնարավորությունից, այնպես էլ ստուգում իրականացնող մարմինների կամայական գործողություններից: Օրենքով սահմանված են նաեւ այն անձանց իրավունքներն ու պարտականությունները, ում մոտ իրականացվում են ստուգումներ: ՆՃ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածը հնարավորություն է փախ բողոքարկել քննիչի համապատասխան որոշումը:

Այն օրենսդրական բացի առնչությամբ, որ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան իրականացվող ստուգումների անցկացման պայմաններն ու կարգը պետք է սահմանվեն օրենքով, պատասխանողը նշում է, որ ՆՃ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունվել է խնդրո առարկային վերաբերող «Նայաստանի Նանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՃ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՆՃ օրենքի նախագիծը:

6. ՆՃ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 71 հոդվածի համաձայն դատարանները հանդիսանում են կոնկրետ սահմանադրական վերահսկողության սուբյեկտ: Դատարանների դիմումների հիման վրա կոնկրետ վերահսկողության նպատակն է կանխել դատարանի կողմից կոնկրետ վեճի լուծումը ենթադրյալ հակասահմանադրական օրենքի հիման վրա: Ըստ այդմ, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 71 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանները կարող են սահմանադրական դատարանում վիճարկել ՆՃ - Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված այն իրավական ակտերի սահմանադրականությունը, որոնք **ենթակա են կիրառման իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով**: Այլապես, դատարանների դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ սահմանադրական վերահսկողությունը չի ծառայի իր հիմնական նպատակին:

Գործի քննությունը վկայում է, որ վարչական դատարանի կողմից վիճարկվող՝ «Նայաստանի Նանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՃ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի եւ «Վարչարարության հիմունքների եւ վարչա-

կան վարույթի մասին» ՏՏ օրենքի 2 հոդվածի 4-րդ մասի դրույթները վարչական դատարանի կողմից Կրկնապատկերով գործով նոր քննության վարույթում կիրառման ենթակա օրինադրույթներ չեն: Մասնավորապես, այս հանգամանքը հավասարվում է ՏՏ վճռաբեկ դատարանի՝ 13.03.2009թ. ՎԴ/0216/05/08 որոշմամբ, որով վճռաբեկ դատարանը ՏՏ վարչական դատարանի վճիռը բեկանել է եւ գործն ուղարկել նոր քննության այն հիմնական հիմնավորմամբ, որ վարչական դատարանի կողմից վիճարկվող վերոհիշյալ օրինադրույթները Կրկնապատկերով լուծման համար կիրառելի չեն:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՏՏ վարչական դատարանության օրենսգրքի 122 հոդվածը սահմանում է, որ վարչական դատարանում գործի նոր քննությունն իրականացվում է վճռաբեկ դատարանի որոշման հիման վրա՝ վճռաբեկ դատարանի սահմանած ծավալով: Վարչական դատարանության օրենսգրքի նշված դրույթը դիտարկելով վճռաբեկ դատարանի՝ օրենքի միապետակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառույթի համարեքսպում, ակնհայտ է դառնում, որ վարչական դատարանը գործի նոր քննության ընթացքում, ըստ էության, կաշկանդված է վճռաբեկ դատարանի՝ վերոհիշյալ վիճարկվող դրույթների կիրառելիության վերաբերյալ իրավական դիրքորոշմամբ:

Բացի դրանից, «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 71 հոդվածի 5-րդ մասին համապատասխան սահմանադրական դատարանին ուղղված դիմումում դատարանը, ի թիվս այլոց, պետք է հիմնավորի այն հանգամանքը, որ այդ գործի լուծումը կարող է իրականացվել միայն վիճարկվող դրույթի կիրառմամբ: Տվյալ դեպքում սահմանադրական դատարանին ուղղված դիմումում նշված պահանջը ոչ միայն բավարարված չէ, այլ նաեւ, ինչպես նշվեց, «Նայասարանի Նանրապետությունում սպորտումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՏՏ օրենքը եւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՏՏ օրենքը գործի նոր քննության համար կիրառելի չեն, իսկ դիմող կողմի հարցադրումները Կրկնապատկերով օրենքների առնչությամբ դուրս են գալիս նորմատիվ բնույթ ունեցող իրավական ակտի դրույթի/դրույթների սահմանադրականության գնահատման շրջանակներից:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը ՏՏ քրեական դատարանության օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետին անդրադառնում է ոչ թե վիճարկվող նորմերի բովանդակության սահմանադրականության տեսանկյունից, այլ բարձրացնում է օրենսդրական բացի խնդիր: Չնայած այն հանգամանքին, որ դիմումում անհրաժեշտ չափով հաշվի չեն առնվել «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 71 հոդվածի 5-րդ մասի պահանջները, այդուամենայնիվ, դիմողը գտնում է, որ ՏՏ քրեական դատարանության օրենսգրքը ՏՏ Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ - մասի պահանջներին համապատասխան բավարար հստակությամբ չի սահմանել քրեական գործի շրջանակներում սպորտումների իրականացման դեպքերը, պայմանները եւ կարգը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի փաստարկները չեն վկայում վիճարկվող դրույթի անորոշության կամ ոչ իրավաչափ լինելու մասին: Տվյալ դրույթը

կոչված է կարգավորելու քննիչի՝ որպես քրեական դատավարության մասնակցի եւ քրեական գործի նախաքննության շրջանակներում դրա բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ քննության համար լիազորված եւ պարասխասնարու պաշտոնատար անձի լիազորությունը՝ **վերստուգումներ, գույքագրումներ, այլ ստուգողական գործողությունների** կատարում պահանջելու վերաբերյալ, որպիսիք քննիչի գնահատմամբ կոնկրետ գործով կարող են անհրաժեշտ քննչական գործողություններ հանդիսանալ՝ քրեական գործով օբյեկտիվ ճշմարտության բացահայտմամբ պայմանավորված խնդիրներ լուծելու համար (ապացուցման ենթակա հանգամանքների պարզում, ապացույցների ձեռքբերում, դրանց գնահատում եւ այլն): Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննիչին օրենքով եւ վիճարկվող վերոհիշյալ նորմով այդպիսի լիազորություն վերապահելն իրավազատ է, համապարասխասնում է նրա գործառույթներին եւ ինքնին սահմանադրականության խնդիր չի հարուցում:

Արձանագրելով, որ քրեական գործի նախաքննության շրջանակներում ինչպես քննչական ցանկացած այլ գործողության, այնպես էլ վերստուգումների, գույքագրումների եւ այլ ստուգողական գործողությունների կատարումն օբյեկտիվորեն կարող է առնչվել անձանց իրավունքների եւ ազատությունների պահպանման խնդրին, սահմանադրական դատարանը գտնում է, որ լրացուցիչ օրենսդրական կարգավորման են ենթակա այդպիսի գործողությունների կատարման պայմանները (հիմքերը, համապարասխասն որոշման կայացման կարգն ու պայմանները) եւ կարգը (այդ թվում՝ արդյունքների արձանագրման), եւ այս առումով հիմնավոր են դիմողի հարցադրումները: Սակայն չի կարող ստուգումների՝ «Նայաստանի Նանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՏՏ օրենքով սահմանված ընդհանուր կարգը մեխանիկորեն փարածվել քրեադատավարական գործընթացների վրա՝ առանց հաշվի առնելու դրանց առանձնահատկությունները, անձանց իրավունքների իրացման ու պաշտպանության երաշխիքների ապահովումը, մյուս կողմից՝ խոչընդոտներ սրեղծել պետական իշխանության մարմինների գործառույթների լիարժեք իրականացման համար: Այս խնդիրը, ինչպես նշվեց, լրացուցիչ իրավակարգավորման առարկա է, այլ ոչ թե Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 71 հոդվածի հիմքով օրենքի փվյալ կոնկրետ վիճարկվող դրույթի սահմանադրականության խնդիր:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով ՏՏ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 60 հոդվածի 1-ին կետով, 63, 64 եւ 71 հոդվածներով, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՏՏ վարչական դատարանի դիմումի հիման վրա գործի վարույթը՝ «Նայաստանի Նանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՏՏ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույ-

թի մասին» ՆՆ օրենքի 2 հոդվածի 4-րդ մասի՝ իրավակիրառ պրակտիկայում փրված մեկնաբանմամբ, մասով, կարճել:

2. ՆՆ քրեական դատավարության օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը համապատասխանում է Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը:

3. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ**

*27 հոկտեմբերի 2009 թվականի
ՄԴՈ- 836*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱԳՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱԳՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱԿՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

««ԳԼՈՒՐ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱԳՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 63 ՆՈՂՎԱԾԻ ԵՐՐՈՐԴ ՄԱՍԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱԳՊԵ- ՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱԳՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երևան

24 նոյեմբերի 2009թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի,
Մ. Թոփուզյանի (զեկուցող), Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի,

համաձայն ՏՏ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 1-ին
մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 25, 38 եւ 69
հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց ««ԳԼՈՒՐ» ՍՊԸ-ի դիմումի հի-
ման վրա՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Նայասպանի
Նանրապետության օրենքի 63 հոդվածի երրորդ մասի՝ Նայասպանի Նանրապետության
Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «ԳԼՈՒՐ» ՍՊԸ-ի դիմումն է ՏՏ սահմանադրական
դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կող-
մերի գրավոր բացաբությունները, հեղափոխելով «Վարչարարության հիմունքների եւ
վարչական վարույթի մասին» ՏՏ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը,
Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. ՏՏ սահմանադրական դատարանն իր՝ 28.07.2009թ. ՍԴԱՈ-67 աշխատակար-
գային որոշմամբ «ԳԼՈՒՐ» ՍՊԸ-ի՝ ՏՏ սահմանադրական դատարան մուրաբարված
դիմումն ընդունել է քննության:

2. Դիմողը վիճարկում է «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՏ օրենքի 63 հոդվածի երրորդ մասի սահմանադրականությունը: Վիճարկվող դրույթը սահմանում է. «Ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել, եթե ակտի հասցեատերն իրավունք ունի վստահելու վարչական ակտի գոյությանը, եւ վերջինիս գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճառել որեւէ անձի իրավունքներին, Նայաստանի Նանրապետությանը կամ որեւէ համայնքի:

Վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք ունի, եթե վարչական ակտի հիման վրա ստացածն արդեն իսկ օգտագործել կամ փնտրվել է, ինչպես նաեւ, եթե ակտի հիման վրա ստացածի հետ վերադարձնելը վնաս կպատճառի վարչական ակտի հասցեատիրոջը»:

Ըստ դիմողի՝ օրենքի վիճարկվող դրույթն իրավական անորոշության պատճառաբանությամբ հակասում է ՆՏ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված՝ իրավական պետության սկզբունքին: Ըստ դիմողի՝ իրավական անորոշություն է առաջացնում վիճարկվող նորմում «վնաս պատճառել» արտահայտությունը, որը դատարաններին փախի է սուբյեկտիվ մեկնաբանության հնարավորություն: Դիմողը գտնում է, որ այդպիսի հնարավորությունն օգտագործելով՝ դատարանները կարող են ենթադրել, որ փոխյալ վարչական ակտը չի կարող վնաս պատճառել որեւէ անձի իրավունքներին, Նայաստանի Նանրապետությանը կամ որեւէ համայնքի, մինչդեռ այդ ակտն օբյեկտիվ փաստականից կարող է վնասել այլ անձանց գույքային շահերը, եւ, ըստ դիմողի, իրականում կոնկրետ դեպքում վնասում է «ԳԼՈՒԲ» ՍՊԸ-ի գույքային շահերը:

3. Պատասխանող կողմը՝ դիմողի մատնանշած՝ վիճարկվող դրույթի ենթադրյալ անորոշության առնչությամբ նշում է, որ իրավական որոշակիությունը չի նշանակում, որ օրենքները պետք է լինեն բացարձակ կողմնորոշիչ այս կամ այն վարքագիծը դրսևորելու համար: Ըստ պատասխանողի բացատրությունների՝ վիճարկվող դրույթը հստակ սահմանում է այն հիմքը, երբ ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունքին եւ որեւէ անձի իրավունքներին, Նայաստանի Նանրապետությանը կամ որեւէ համայնքին վնաս չպատճառելուն: Օրենքի 63 հոդվածի 1-ին մասի, 4-րդ մասի եւ վիճարկվող դրույթի համադրված վերլուծությունից բխում է, որ եւ՛ կառուցվածքային, եւ՛ բովանդակային առումով նշված հոդվածը հստակ կարգավորում է ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու հետ կապված հարաբերությունները:

Ըստ պատասխանողի՝ վիճարկվող դրույթը պաշտպանում է հենց քաղաքացիների ու իրավաբանական անձանց իրավունքները: Վիճարկվող դրույթը ոչ միայն չի հակասում ՆՏ Սահմանադրության 1-ին հոդվածի պահանջներին, այլ, ընդհակառակն, ընդունված է այդ պահանջներին համապատասխան, քանի որ իրավունքների պաշտպանությունն իրավական պետության կարեւորագույն սկզբունքներից է, եւ ձեւական առումով ոչ իրավաչափ վարչական ակտը չպետք է անվավեր ճանաչվի, եթե այն ուղղված է իրավունքների պաշտպանությանը եւ որեւէ անձի վնաս չի պատճառում:

4. Զննության առարկա գործի դատավարական նախապարմությունը հանգում է նրան, որ «Գ.Ու.Բ.» ՍՊԸ-ն հանդիսացել է Մարտունու «ՄԻԳՄԱ» ԲԲԸ-ի բաժնեպոմսերի մի մասի սեփականատեր: Նշված բաժնեպոմսերի պարկանելության կապակցությամբ առաջացած վեճի արդյունքում քաղաքացիներ Ֆիրդուս Զաքարյանը և Ժիրայր Գալստյանը Գեղարքունիքի մարզի առաջին ապյանի դատարանից հայց են ներկայացրել «Գ.Ու.Բ.» ՍՊԸ-ի փոփոխության Տեղաբնակիչների և Գուրգեն Դարբինյանի դեմ՝ «ՄԻԳՄԱ» ԲԲԸ-ի բաժնեպոմսերն իրենց անունով վերագրանցելը պարտավորեցնելու պահանջի մասին:

Գեղարքունիքի մարզի առաջին ապյանի դատարանի՝ 24.08.2006թ. վճռով հայցը մերժվել է:

Ֆ. Զաքարյանի և Ժ. Գալստյանի ներկայացրած վերաքննիչ բողոքի հիման վրա ՆՆ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 17.11.2006թ. վճռով վերաքննիչ բողոքը բավարարել է՝ պարտավորեցրել է Տ. Դարբինյանին և Գ. Դարբինյանին գրանցելու «ՄԻԳՄԱ» ԲԲԸ-ի բաժնեպոմսերի 40 փոկոսը Ֆ. Զաքարյանի և Ժ. Գալստյանի անունով՝ յուրաքանչյուրին 20 փոկոսի չափով, ինչն էլ որ կատարվել է ՆՆ ԱՆ ԴԱՆԿ ծառայության Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման Մարտունի-Վարդենիս փարածաշրջանի բաժանմունքի պետի ժամանակավոր պաշտոնակատար Վ. Արշակյանի՝ 26.12.2006թ. «ՆՆ կենտրոնական դեպոզիտարիա» ԻԿԿ-ի միջոցով բաժնեպոմսերը գրանցելու մասին» որոշմամբ:

17.06.2008թ. Գեղարքունիքի մարզի առաջին ապյանի դատարանը քննության առնելով «Գ.Ու.Բ.» ՍՊԸ-ի դիմումն ընդդեմ «Նայասարանի կենտրոնական դեպոզիտարիա» ԻԿԿ-ի, ՆՆ ԱՆ ԴԱՆԿ ծառայության Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման Մարտունի-Վարդենիս փարածաշրջանի բաժանմունքի, երրորդ անձինք՝ Տեղաբնակիչների, Գուրգեն Դարբինյանի, Ֆիրդուս Զաքարյանի և Ժիրայր Գալստյանի՝ պաշտոնատեր անձի՝ օրենքին հակասող ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վճռել է պահանջը բավարարել՝ վերացնել ՆՆ ԱՆ ԴԱՆԿ ծառայության Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման Մարտունի-Վարդենիս փարածաշրջանի բաժանմունքի պետի ժամանակավոր պաշտոնակատար Վ. Արշակյանի՝ 26.12.2006թ. «ՆՆ կենտրոնական դեպոզիտարիա» ԻԿԿ-ի միջոցով բաժնեպոմսերը գրանցելու մասին» որոշումը, կիրառել անվավերության հետեւանքներ՝ «ՄԻԳՄԱ» ԲԲԸ-ի 8991 հապ բաժնեպոմսերը վերագրանցել որպես «Գ.Ու.Բ.» ՍՊԸ-ի սեփականություն:

Ֆ. Զաքարյանի և Ժ. Գալստյանի ներկայացրած վերաքննիչ բողոքի հիման վրա ՆՆ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 10.10.2008թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Գեղարքունիքի մարզի առաջին ապյանի դատարանի վճիռը:

Ֆ. Զաքարյանի և Ժ. Գալստյանի ներկայացրած վճռաբեկ բողոքի հիման վրա ՆՆ վճռաբեկ դատարանն իր՝ 13.02.2009թ. որոշմամբ հաստատել է ՆՆ ԱՆ ԴԱՆԿ ծառայության Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման Մարտունի-Վարդենիս փարածաշրջանի բաժանմունքի պետի ժամանակավոր պաշտոնակատար Վ. Արշակյանի՝ 26.12.2006թ. «ՆՆ կենտրոնական դեպոզիտարիա» ԻԿԿ-ի միջոցով բաժնեպոմսերը

գրանցելու մասին» որոշման ոչ իրավաչափ լինելը, սակայն, հղում կատարելով «Վարչա-
րարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՏՏ օրենքի 63 հոդվածի երրորդ
մասի առաջին պարբերությանը, գրել է, որ վերը նշված ոչ իրավաչափ վարչական ակտը
չի կարող վնաս պատճառել որեւէ անձի իրավունքներին, Նայասարանի Նանրապետության-
նը կամ որեւէ համայնքի, եւ այդ ակտի հասցեատերեր Ֆիրդուս Զաքարյանը եւ Ժիրայր
Գալստյանն իրավունք ունեն վստահելու այդ ակտի գոյությանը: Նշված պատճառաբա-
նությամբ ՏՏ վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ բեկա-
նել է ՏՏ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 10.10.2008թ. որոշումը եւ այն փոփո-
խել՝ ամբողջությամբ մերժել է «ԳԼՈՒՐ» ՍՊԸ-ի դիմումը:

5. «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 69 հոդվածի 4-րդ մասն
ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ
ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի
դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68 հոդվա-
ծի 7-րդ մասում նշված որեւէ հատկանիշով: Անհատական դիմումին ներկայացված այս
պահանջը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն
հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել եւ ինչ անմիջա-
կան պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի եւ իր իրավունք-
ների խախտման փաստի միջև:

Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ ոչ իրավաչափ վարչական ակտը,
որն անվավեր ճանաչելու պահանջը մերժվել է պաշտպանության արժանի վստահության
իրավունքի առկայության հիմնավորմամբ, ընդունվել է ի կատարումն օրինական ուժի մեջ
մտած դատական ակտի: Կատարողական վարույթը, որի նպատակը դատական ակտի
կատարումն է, ըստ էության հանդիսանում է անձի խախտված իրավունքների դատական
պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ փուլ: Այս մտպետցումն է ամրագրված նաեւ
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում: Ներելա-
բար, կատարողական վարույթում ընդունված՝ կատարողական թերթի պահանջի իրաց-
մանն ուղղված վարչական ակտի իրավական հետեւանքներն ածանցյալ են օրինական
ուժի մեջ մտած դատական ակտի իրավական հետեւանքներից, նման վարչական ակտն
ինքնուրույն իրավական հետեւանքներ չի առաջացնում: Անկախ խնդրո առարկա վարչա-
կան ակտն օրենքի ձեւական պահանջների խախտմամբ կամ պահպանմամբ ընդունվելու
հանգամանքից՝ այն դիմողի համար առաջացնելու էր միեւնույն իրավական հետեւանքնե-
րը: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ
պաշտպանության արժանի վստահության իրավունքը արվյալ դեպքում կարող էր ծագել ոչ
թե վարչական ակտի, այլ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առնչությամբ:

Գործում առկա դատական ակտերի, ինչպես նաեւ դիմողի փաստարկների ու-
սումնասիրությունը վկայում է, որ խնդրո առարկա վարչական ակտի վերոհիշյալ առանձ-
նահատկությունը հաշվի չի առնվել ինչպես դատարանների, այնպես էլ դիմողի կողմից:
Վիճարկվող դրույթի հակասահմանադրականությունը դիմողը փորձում է հիմնավորել ոչ
թե խնդրո առարկա նորմի ենթադրյալ հակասահմանադրականության պատճառով իր

սահմանադրական իրավունքների խախտման փաստով, այլ խնդրո առարկա վարչական ակտով իր համար առաջացած բացասական հետեւանքներով, որոնք էլ իրենց հերթին արդյունք էին հետագայում օրինական ուժի մեջ մտնելու այն դատական ակտի, որի կատարմանն էր ուղղված վարչական ակտը: Փաստորեն դիմողը փորձ է անում դատական ակտի իրավական հետեւանքները վերագրել վիճարկվող դրույթին: Թերեւս, այս է պատճառը, որ դիմողը նաեւ փորձում է վիճարկել խնդրո առարկա դրույթի սահմանադրականությունը ՆՏ Սահմանադրության 8 հոդվածին հակասելու հիմքով:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտման եւ վիճարկվող դրույթի միջեւ որեւէ պատճառահետեւանքային կապ առկա չէ, դիմողը ձեւական առումով առաջադրելով օրենքի սահմանադրականության հարց՝ ըստ էության բարձրացնում է վարչական ակտով իրեն վնաս պատճառելու հանգամանքի գնահատման իրավաչափության խնդիրը:

Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69 հոդվածի 7-րդ մասի՝ անհատական դիմումների քննությունը կարող է մերժվել նաեւ այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:

«Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 60 հոդվածի 1-ին կետի համաձայն. «Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը ... գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»:

Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով ՆՏ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32 հոդվածի 6-րդ կետի, 60 հոդվածի 1-ին կետի, 69 հոդվածի 7-րդ մասի պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

««ԳԼՈՒԲ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 հոդվածի երրորդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ
Գ. ՀԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ**

*24 նոյեմբերի 2009 թվականի
ՍԳՈ- 839*

ՆԱԼՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻՆՆԵՐ Ա. ԶԵՅՆԱԼՅԱՆԻ, Ա. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ Կ. ՌՈՒԲԻՆՅԱՆԻ, Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԻՄԱՆ ՎՐԱՆՆ ԱՏՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 290 ՆՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 5-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

7 դեկտեմբերի 2009թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարոյթունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ դիմողներ Ա. Զեյնալյանի, Մ. Դանիելյանի, գործով որպես պարասխանող կողմ ներգրավված՝ ՆՆ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՆ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի եւ 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Ա. Զեյնալյանի, Ա. Սարգսյանի եւ Կ. Ռուբինյանի, Մ. Դանիելյանի դիմումների հիման վրա՝ ՆՆ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին եւ 5-րդ մասերի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ՝ Ա. Զեյնալյանի՝ 01.06.2009թ., Ա. Սարգսյանի եւ Կ. Ռուբինյանի՝ 09.11.2009թ., Մ. Դանիելյանի՝ 17.11.2009թ. ՆՆ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 39 հոդվածով՝ սահմանադրական դատարանի 17.11.2009թ. ՍԴԱՌ-101 եւ 24.11.2009թ. ՍԴԱՌ-106 աշխատակարգային որոշումներով վերոհիշյալ դիմումներով գործերը միավորվել են եւ քննվել դատարանի նույն նիստում:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմողների գրավոր փաստարկները, պատասխանող կողմի գրավոր բացատրությունները, հետագոյնով ՏՏ քրեական դատարանության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. ՏՏ քրեական դատարանության օրենսգիրքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ին:

ՏՏ քրեական դատարանության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող «Ներաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի եւ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական եւ անհիմն որոշումների եւ գործողությունների բողոքարկումը դատարան» վերաբառությամբ 290 հոդվածի 1-ին եւ 5-րդ մասերը սահմանում են.

«1. Ներաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների եւ գործողությունների օրինական եւ հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, պրոժողի, քրեական դատարանության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները եւ օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով եւ գործողություններով, եւ եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

...

5. Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների եւ ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, եւ անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: Դատավորի որոշման պատճենն ուղարկվում է դիմողին եւ վարույթն իրականացնող մարմնին»:

2. Վիճարկելով վերոնշյալ նորմերի սահմանադրականությունը՝ դիմողները գտնում են, որ ՏՏ քրեական դատարանության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասը ձեւակերպված է այնքան անորոշ, «ոչ միանշանակ, ոչ հստակ», որ դատարանները դրանք ընկալում եւ կիրառում են որպես հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի եւ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից **դրսեւորած անգործության դատական կարգով բողոքարկման կարգ**: Այդ անորոշությունը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին, «ուստի՝ վիճարկվող դրույթները հակասում են ՏՏ Սահմանադրության իրավական որոշակիության սկզբունքներն ամրագրող՝ 1-ին, 3-րդ, 6-րդ եւ 43-րդ հոդվածներին»: Ըստ դիմող Ա. Զեյնալյանի՝ «Դատարանների՝ դատական ակտերով վերոգրյալ նորմին փրված մեկնաբանությունից հետեւում է, որ անձը կարող է ոստիկանության ոչ իրավաչափ անգործությունից ՏՏ Սահմանադրու-

թյամբ եւ Կոնվենցիայով երաշխավորված «դատական պաշտպանություն» հայցել միայն այն պայմանով, եթե ոստիկանության ոչ իրավաչափ անգործությունից դատախազության (որպես դատարանից փարբերվող «պետական այլ մարմնի») առջեւ «իրավական պաշտպանության միջոցը» սպառել է, ու այդ միջոցը եղել է անարդյունավետ: Դատարանի կողմից օրենսգրքի դրույթին փոխված մեկնաբանությունը կամ, եթե խնդրոք առարկա դրույթը հենց այդպես ու այդ նպատակով էլ գրված է, հակասում է ը ՎՍ Սահմանադրության 18, 19-րդ, Կոնվենցիայի 6, 13-րդ հոդվածներին»: Դիմողի կարծիքով, հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի եւ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների դրսևորած **անգործության դեմ դատական պաշտպանության իրավունքն իրացնելու համար** «միջանկյալ օղակ նախատեսելը չի բավարարում իրավունքների արդյունավետ պաշտպանության իրավունքի չափանիշին, ինչը ՎՍ - Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի բաղադրիչն է»: Դիմողը եզրակացնում է, որ ՎՍ «Քրեական դատավարության» օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները հակասում են ՎՍ Սահմանադրության 1-ին, 3, 6, 43-րդ հոդվածներին կամ ՎՍ «Քրեական դատավարության» օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի՝ «, եւ եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, «**անգործության» մասով** հակասում է ՎՍ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներին»:

ՎՍ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի սահմանադրականության վերաբերյալ նույնաբովանդակ փաստարկներ են ներկայացրել նաև դիմողներ Ա. Սարգսյանը, Կ. Ռուբինյանը եւ Մ. Դանիելյանը: Բացի դրանից, դիմողներ Ա. Սարգսյանը եւ Կ. Ռուբինյանը գտնում են, որ «ՎՍ «Քրեական դատավարության» օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պաշտոնատար անձանց գործողություններից եւ որոշումներից դատական պաշտպանություն հայցելու «սուբսիդիար» սկզբունքի վերացնելու դեպքում ի հայտ կգա շահերի իրական բախում մրցակցություն, նախաքննության մարմին-դատախազություն-դատարան, որպես պաշտպանության միջոցի արդյունավետության փտակետից, ընտրությունը կկատարի դիմողը/բողոք բերողը, ինչը անխուսափելիորեն կխթանի էվոյուցիան ը կբարձրանա թե՛ նախաքննության մարմնի որոշումների, թե՛ դատարանների որոշումների որակը, եւ վերջապես՝ դատարանի անկախությունը»:

ՎՍ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ մասի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողներ Ա. Սարգսյանը եւ Կ. Ռուբինյանը գտնում են, որ վերջինիս «ը վարույթն իրականացնող մարմնի պարտականության» դրույթի պարզառով, թույլ չի փոխում ապահովել «անձի խախտված իրավունքների լիարժեք ու ամբողջական վերականգնում»: Ներկայացրած այդ դրույթը հակասում է ՎՍ Սահմանադրության Սահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրված իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության իրավունքը երաշխավորող 18 եւ 19-րդ հոդվածներին:

3. Պատասխանող կողմը գտնում է, որ ՎՍ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասում խոսք է գնում միայն գործողությունների եւ որոշումների բո-

ղոքարկման հնարավորության մասին, սակայն դիմումատուին չի ներկայացրել որևէ փաստաթուղթ առ այն, որ ԿՎԿ-ի նորմի իրավակիրառ պրակտիկայում դատարանները հրատարակում են քննել հեղափոխության մարմինների աշխատակիցների, քննիչների, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից դրսևորված անգործության դեմ բերված բողոքները: Պատասխանող կողմը գտնում է, որ այդ նորմում որոշակիության սկզբունքը չի խախտվել և միանշանակորեն բողոքները կարող են բերվել և պեք է քննության առնվեն ինչպես գործողության, այնպես էլ անգործության դեմ: Ներկայացրած, վիճարկվող նորմի և ՆՏ Սահմանադրության 1, 3, 6 և 43 հոդվածների միջև որևէ հակասության մասին խոսք չի կարող գնալ:

Պատասխանող կողմը գտնում է նաև, որ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասը սահմանում է հեղափոխության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ու պաշտոնատար անձանց գործողությունների և կայացրած որոշումների բողոքարկման հերթականությունը, և դատախազական հսկողության իրականացումն այդ գործընթացում «պաշտպանության իրավունքն իրականացնելու համար միջանկյալ օղակ» գնահատվել չի կարող, քանի որ «և դատախազական հսկողությունը, և դատական հսկողությունը միմյանց լրացնող ինստիտուտներ են», հետևաբար, ինչպես գտնում է պատասխանողը, ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ մասի սահմանադրականության առնչությամբ պատասխանող կողմը գտնում է, որ օրինական ուժի մեջ մտնող դատական ակտերը պարտադիր կատարման ենթակա են ցանկացած սուբյեկտի կողմից և դրանց չկատարման համար օրենքով սահմանված են պատասխանատվության համապատասխան միջոցներ: Այսինքն՝ այն դեպքում, երբ դատարանը որոշում է կայացնում պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնելու անձի իրավունքների և ազատությունների խախտումը, սակայն վարույթն իրականացնող մարմինը չի կարող չկատարել դատարանի որոշումը, հակառակ դեպքում ԿՎԿ-ի պաշտոնատար անձը ենթարկվելու է պատասխանատվության, այդ թվում՝ քրեաիրավական: Ներկայացրած, առաջարկում է ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ մասը ճանաչել ՆՏ Սահմանադրությանը համապատասխանող:

4. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ.

- մինչդեռ պատասխանող կողմը գտնում է, որ նախաքննություն, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, պաշտոնատար անձանց, դատախազի որոշումների և գործողությունների դատական բողոքարկման ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությանը, օրենսդրական կարգավորմանն ու նշանակությանը,

- մինչդեռ պատասխանող կողմը գտնում է, որ դատական վերահսկողության և դատախազական հսկողության գործառնությունների բովանդակությանը, դրանց փարանջատմանը և սահմա-

նադրորեն թույլատրելի շրջանակներին, հաշվի առնելով նաև դատական բողոքարկման ինստիտուտի կիրառման վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները,

- հեղափոխություն և նախաքննություն, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, պաշտոնատար անձանց, դատախազի որոշումների և գործողությունների դատական բողոքարկման ինստիտուտի կիրառման պրակտիկային՝ այնքանով, որքանով առնչվում է դիմումի առարկային:

5. Մինչդատական վարույթում հեղափոխություն և նախաքննություն, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, պաշտոնատար անձանց, դատախազի որոշումների և գործողությունների դատական բողոքարկման ինստիտուտը (ՏՏ քր. դատ. օրենսգրքի 278 հոդվածի 2-րդ մաս, 290 հոդված) որպես քրեական վարույթում անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջոց կոչված է երաշխավորելու ՏՏ Սահմանադրության ինչպես 18 և 19 հոդվածներում, այնպես էլ 3, 14, 14.1, 16, 17 և անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրաիրավական սկզբունքի գերակայությունն արտացոլող բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված նորմերի կենսագործումը: Այն կոչված է պաշտպանելու անձի ինչպես սահմանադրական, այնպես էլ օրենքով երաշխավորված այլ իրավունքները, ազատությունները՝ վերոհիշյալ պետական մարմինների ու պաշտոնատար անձանց անօրինական (անիրավաչափ) որոշումներից ու գործողություններից և իրացվում է արդարադատական առանձնահատուկ գործառույթի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության միջոցով: Վերջինս դրսևորվում է նաև քննչական, օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու և անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ հեղափոխության մարմնի, քննիչի կամ դատախազի միջնորդությունները քննելու միջոցով (ՏՏ քր. դատ. օրենսգրքի 278 հոդվածի 1-ին մաս, 282 հոդված):

ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի, վերջինիս՝ «Դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ» վերաբառությունը կրող 39-րդ գլխի նորմերի, համալիր վերլուծությունը վկայում է, որ հեղափոխության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքների քննությունը, որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործառույթ, ունի իր առանձնահատուկ խնդիրներն ու նպատակները, մասնավորապես՝ բողոքարկվող որոշումների և գործողությունների օրինականությունը (ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի և օրենսդրության այլ ակտերի պահանջներին համապատասխանությունը) սպուզելու արդյունքում **պարզել անձի** (կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, փոփոխի, քրեական դատավարության այլ մասնակցի կամ այլ անձի) **իրավունքների և ազատությունների խախտման փաստը** և կայացնել համապատասխան որոշում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության կամ բողոքը մերժելու վերաբերյալ:

Սույն գործով դիմող կողմի ներկայացրած փաստարկների փաստանկյունից, ՏՏ քրեական դատարանության օրենսգրքի վիճարկվող 290 հոդվածի 1-ին և 5-րդ մասերի սահմանադրականությունը գնահատելիս սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում կարեւորել այդ նորմերով կարգավորվող քրեադատավարական հարաբերությունների ինչպես սուբյեկտների շրջանակը, այնպես էլ՝ **օբյեկտը**, ելնելով վերոհիշյալ հոդվածի և օրենսգրքի այլ նորմերի համակարգային բովանդակությունից, ինչպես նաև քրեական գործերով արդարադատություն իրականացնելիս դատարանի ընդհանուր լիազորություններից (ՏՏ քր. դատ. օրենսգրքի 41 հոդված): Մասնավորապես, վիճարկվող 290 հոդվածի 1-ին մասի համաձայն հեղաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումները և գործողությունները բողոքարկող սուբյեկտներ են քրեական դատավարության մասնակիցները և այլ անձինք, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ **որոշումներով և գործողություններով**: Հիշյալ հոդվածի նույն մասի համաձայն քրեական գործերով մինչդատարանական վարույթում որպես դատական բողոքարկման անմիջական օբյեկտ (առարկա) են հեղաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ **ՏՏ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումները և գործողությունները**, այսինքն՝ այնպիսի **որոշումներ ու գործողություններ**, որպիսիք հատկապես մարմնանշված են օրենսգրքի համապատասխան նորմերում: Միաժամանակ, ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչդատարանական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությանը նվիրված 39-րդ գլխի 278 հոդվածը (որը վերաբերում է դատական վերահսկողության ոլորտին) սահմանում է (մաս 2), որ «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հեղաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների **որոշումների և գործողությունների** օրինականության վերաբերյալ բողոքները»:

Նշվածին զուգահեռ, օրենսգրքի 290 հոդվածի 2-րդ մասը նախատեսում է նաև հեղաքննության, նախաքննության մարմինների, դատախազի դատական բողոքարկման ենթակա լրացուցիչ այլ գործողություններ ու որոշումներ: ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ բաժնի («Քրեական գործով մինչդատարանական վարույթ») հոդվածների, 290 հոդվածի 1-ին, 2-րդ մասերի համեմատական վերլուծությունը վկայում է, որ օրենսգրքի վիճարկվող 290 հոդվածի 1-ին մասի իմաստով մինչդատարանական վարույթում դատական բողոքարկման ենթակա են իրավասու մարմինների ու պաշտոնատար անձանց այն **որոշումները և գործողությունները**, որպիսիք կայացվել են այդ սուբյեկտների՝ օրենսգրքի 53, 55 և 56 հոդվածներում նախատեսված իրենց ընդհանուր լիազորությունների շրջանակներում: Իսկ օրենսգրքի 290 հոդվածի 2-րդ մասը որպես առանձնահատուկ իրավակարգավորում սահմանում է, որ. «Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հեղաքննության մարմնի, քննիչի և դատախազի **հրաժարվելը**, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ

քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում»:

Այսուհանդերձ, ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 41 հոդվածի համաձայն դատարանը, ի թիվս քրեական գործերով ընդհանուր այլ լիազորությունների, իրավասու է «...քննել եւ լուծել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների եւ գործողությունների (**անգործության**) դեմ բողոքները»: Այսպիսով, մինչդասական վարույթում օրենսդիրը դատարանին լիազորել է քննելու ոչ միայն քրեական վարույթ իրականացնող իրավասու մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների եւ գործողությունների օրինականության, այլեւ՝ **անգործության** վերաբերյալ բողոքները, իսկ «...եւ եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» պայմանը բացառապես վերաբերում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի եւ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների **որոշումներին ու գործողություններին**, հետեւաբար՝ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման շրջանակներում չէր կարող վերագրվել նաեւ հիշյալ մարմինների **անգործությանը**:

6. Դիմողներն իրենց փաստարկներում առաջ են քաշում իրավակիրառական պրակտիկայում ձեւավորված այն մոտեցումը, համաձայն որի՝ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող 290 հոդվածի 1-ին մասի դրույթները դատարանների կողմից ընկալվում են որպես նաեւ քրեական վարույթ իրականացնող մարմինների **անգործության** դեմ դատական բողոքարկման կարգ, ի հաստատումն որի սահմանադրական դատարան են ներկայացրել ՏՏ ոստիկանության անգործության դեմ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում քննված բողոքի վերաբերյալ կայացված որոշումը եւ այն ՏՏ վերաքննիչ քրեական դատարանում, ՏՏ վճռաբեկ դատարանում բողոքարկվելու արդյունքում կայացված որոշումները:

Դատական այդ ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ ոստիկանության անգործության դեմ բողոքը քննության է առնվել ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի հիմքով եւ մերժվել այդ նորմում նախատեսված դատախազական բողոքարկման կարգը դիմողի կողմից չսպասիականվելու պատճառաբանությամբ: Գործում առկա դատական նման այլ ակտերի ուսումնասիրությունը նույնպես վկայում է, որ դատարանները ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ նորմի դրույթները մեկնաբանել են նույնակերպ՝ մերժելով անձանց բողոքներն այն դեպքերում, երբ չի պահպանվել քրեական վարույթ իրականացնող մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումները, գործողությունները **եւ անգործությունը** նախօրոք դատախազին բողոքարկելու պահանջը: Գործնականում դատական պրակտիկան ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի առնչությամբ «գործողություն» եզրույթը հավասարապես վերագրել է նաեւ անգործությանը:

7. Ելնելով ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի սահմանադրականության վերաբերյալ դիմող կողմի հարցադրումներից՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում այդ նորմի իրավական բովանդակությունը բացահայտել նաև ՏՏ Սահմանադրության 5 հոդվածի 1-ին մասում, 18 եւ 19 հոդվածներում, 91 հոդվածի 1-ին մասում եւ 103 հոդվածում ամրագրված նորմափիլ պահանջներին համապատասխանության ու դրանց կատարման համար բավարար երաշխիքներ պարունակելու փոստանկյունից՝ այնքանով, որքանով ըստ վիճարկվող նորմի փառացի բովանդակության՝ հեփաքնության, նախաքնության մարմինների, պաշտոնապար անձանց, դատախազի որոշումները եւ գործողությունները ենթակա են ինչպես դատախազական հսկողության, այնպես էլ դատական վերահսկողության: Այս առումով վիճարկվող նորմի իրավակարգավորումից դուրս է հեփաքնության, նախաքնության մարմինների, պաշտոնապար անձանց եւ դատախազի անգործության վերաբերյալ բողոքների քննությունը: Դատարանն իրավասու է այդպիսի բողոքները քննել ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 41 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հիմքով: Սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական գործերով մինչդատական վարույթում բողոքարկման (դատախազական եւ դատական) ինստիտուտի իրավակիրառման շրջանակներում «գործողություն» եւ «անգործություն» եզրույթները ՏՏ քրեական դատավարության օրենսգրքով մինչդատական վարույթի իրավակարգավորման շրջանակներում նույնաբովանդակ մեկնաբանվել չեն կարող: Պետական մարմիններն ու պաշտոնապար անձինք (այդ թվում՝ քրեական վարույթ իրականացնող մարմիններն ու պաշտոնապար անձինք) ՏՏ Սահմանադրության 5 հոդվածի երկրորդ մասի նորմափիլ պահանջի համաձայն իրավասու են կատարելու միայն գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Սահմանադրական դատարանը գտնում է, որ «անգործություն» եզրույթն իրավակիրառական պրակտիկայում, սույն գործի առարկայի շրջանակներում, պետք է ընկալվի որպես հեփաքնության, նախաքնության մարմինների, պաշտոնապար անձանց եւ դատախազի՝ Սահմանադրությամբ եւ օրենքներով նախատեսված լիազորությունների (որոշումների ընդունում, իրենց լիազորություններից բխող գործունեության իրականացում) չկատարում: Վերջինս նույնպես կարող է առաջացնել իրավական հետեւանքներ, պարճառ դատնալ մարդկանց սահմանադրական իրավունքների խախտման: Նպետաբար, նման անգործության դատական բողոքարկման նպատակը եւ ոչ իրավաչափ գործողության դատական բողոքարկման նպատակը նույնական են՝ հեփապնդում են իրավունքների պաշտպանության համանման խնդիր: Այլ բան է, որ օրենսդիրը կարող է սահմանել դրանց բողոքարկման փարբեր ընթացակարգեր, սակայն մեկը մյուսով կանելու եւ նման իրավակիրառական պրակտիկա ձեւավորելու հանգամանքը վկայությունն է այն բանի, որ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի առկա խմբագրությունն իր մեջ անորոշություն է պարունակում եւ կիրառվում է իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան փրված բովանդակության շրջանակներում:

8. Անդրադառնալով ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասում նախատեսված դատական բողոքարկման կարգին՝ սահմանադրական դատարանը

րանն արձանագրում է, որ հեղափոխության, նախաքննության մարմինների, պաշտոնապար անձանց, դատախազի որոշումները եւ գործողությունները դատարան բողոքարկելու՝ անձանց (քրեական դատավարության մասնակիցների եւ այլ անձանց) իրավունքը կարող է իրացվել հետեյալ նախապայմանների դեպքում.

- եթե խախտվել են այդ անձանց իրավունքները եւ օրինական շահերը,
- եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

Վերջինիս դեպքում հետևում է, որ անձը դատախազի որոշումը կամ գործողությունը բողոքարկելիս պետք է դիմի նաեւ վերադաս դատախազին: Իսկ իրավունքների եւ օրինական շահերի խախտման վերաբերյալ նախապայմանի առաջադրումը վիճարկվող նորմի իրավակարգավորման շրջանակներում խոչընդոտ չի կարող հանդիսանալ անձի բողոքն ըստ էության քննելու համար:

Այսպիսով, ինչպես վկայում է վիճարկվող նորմի իրավական բովանդակությունը, անձն իր իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության՝ ՏՏ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով նախատեսված իրավունքն իրացնելիս նախ պարտավոր է դատախազի առջեւ հայցել իր բողոքի բավարարում, այսինքն՝ արդարադատության մարզելիության իր իրավունքն իրականացնել իրավական պաշտպանության մեկ այլ միջոցի նախապես գործադրման պայմանով:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով, մասնավորապես՝ ՄԴՌ-652, ՄԴՌ-665 եւ ՄԴՌ-690, բազմիցս անդրադառնալով արդարադատության մարզելիության եւ արդյունավետության խնդիրներին, կարեւորելով անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմադիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ միաժամանակ կարեւորել է միջազգային պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մարզելիության եւ, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում: Այդ կարգը, ի թիվս դատարան դիմելու այլ պայմանների (այդ թվում՝ ձեւական), կարող է իրավազափորեն ներառել նաեւ օրենքով սահմանված՝ իրավունքների պաշտպանության արտադատարանական միջոցն սպառելու պայման:

Սահմանադրական դատարանը գրնում է, որ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմի դատական պրակտիկայի կողմից փրված մեկնաբանության շրջանակներում այդպիսի **պարտադիր** պայմանի առկայությունը, երբ քրեական վարույթ իրականացնող մարմնի, պաշտոնապար անձի **անգործությամբ** խախտվել են քրեական դատավարության մասնակիցների կամ շահագրգիռ այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, եւ նա չի կարող առանց նախապայմանների իրացնել դատական պաշտպանության իր իրավունքը, չի բխում ՏՏ Սահմանադրության 18 հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունից: Այդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»: ՏՏ Սահմանադրության եւ օրենքների հիման վրա այդպիսի համարժեք մի-

ջոցների նախապետունն ու մարչելիության ապահովումը պետության պարականությունն է:

Մասնաճարտության 5, 91 և 103 հոդվածների նորմերին համապատասխան Մ-ում դարական իշխանությունն ու դարախազությունը սահմանադրաիրավական ինստիտուցիոնալ անկախ համակարգեր են՝ բաժանված պետական իշխանության այլ (օրենսդիր, գործադիր) մարմիններից, և գործում են Մասնաճարտությամբ ու օրենքներով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

Պարական իշխանության սահմանադրաիրավական դերի և բովանդակության բացահայտման ու գնահատման խնդիրներին սահմանադրական դարարանն անդրադարձել է իր մի շարք որոշումներում:

Մասնաճարտության 103 հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ դարախազությունն օրենքով նախադրված դեպքերում և կարգով հսկողություն է իրականացնում հեղաքենության և նախաքնության օրինականության նկատմամբ: Քրեական գործերով մինչդարական վարություն դարախազի լիազորությունները սահմանված են Մ քրեական դարավարության օրենսգրքի 53 հոդվածում, ինչպես նաև «Դարախազության մասին» Մ օրենքի 25 հոդվածում, որոնցում պարունակվող դրույթների վերլուծությունը վկայում է, որ, ի ապահովումն սահմանադրական վերոհիշյալ պարականության կարարման, մինչդարական վարություն հսկողություն իրականացնելիս դարախազը պարասխանարու է հեղաքենության և նախաքնության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության համար («Դարախազության մասին» Մ օրենքի 25 հոդվածի 3-րդ մաս), օժտված է այնպիսի լիազորություններով, որոնք կոչված են դեկավարելու (ուղղորդելու) հեղաքենության մարմնի, քննիչի **դարավարական գործունեությունը**, ինչպես նաև լուծելու վերջիններիս որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքները, **«բացառությամբ այն բողոքների, որոնց լուծումն օրենքով վերապահված է դարարանին»** (օրենսգրքի 53 հոդվածի 9-րդ կետ): Վերոթվարկյալ գործառույթները դարախազն իրականացնում է հիշյալ հոդվածում նախադրված իր լիազորությունների շրջանակներում՝ բողոքում հիմնավորված օրինախախտումները վերացնելու նպատակով ղեկավար ցուցումներ և այլ հանձնարարություններ րալով հեղաքենության մարմնին, քննիչին կամ օպերատիվ-հեղախուզական գործունեություն իրականացնող մարմնին՝ անհրաժեշտության դեպքում **վերացնելով նաև վերջիններիս որոշումները**:

Մ քրեական դարավարության օրենսգրքի 41 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 290 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ինչպես դարախազը, այնպես էլ դարարանն իրավասու են քննելու վերոհիշյալ մարմինների, այդ թվում՝ նաև դարախազի Մ քրեական դարավարության օրենսգրքում նախադրված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր լինելու դեմ բերված բողոքները: Մակայն րարբեր են այդ բողոքների քննության արդյունքում խախտված իրավունքի վերականգնման եղանակները, ձեռքը և իրավական հեղաանքները, մասնավորապես, դարական վերահսկողությունն իրականացվում է **անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու իրավասու մարմնի (պաշտոնարար անձի) պարականության մասին որոշման**

կայացմամբ: Ներեաբար, դրանով է պայմանավորված նաև ՆՏ քրեական դատարանության օրենսգրքի 290 հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 5-րդ մասի նորմատիվ պահանջը, որին համապատասխան բողոք քննելու արդյունքում դատարանն անձի խախտված իրավունքը եւ ազատությունը վերականգնում է ոչ թե հեղափոխության մարմնին, քննիչին եւ օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմնին դատարանական որոշակի գործողություններ կատարելու ցուցում փոխելով կամ նրանց որոշումները վերացնելով, ինչպես փողի ունի դատախազական հսկողության դեպքում, այլ այդ մարմինների ու պաշտոնատար անձի կողմից թույլ տրված օրինախախտումը վերացնելը եւ անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելը **պարտավորեցնելով**, որը բխում է դատական իշխանության սահմանադրաիրավական բովանդակությունից եւ դրան համապատասխան՝ ՆՏ քրեական դատարանության օրենսգրքով նախատեսված դատարանի լիազորություններից: Սույն գործում առկա ԵԿԴ/007/11/09 գործով, վերոհիշյալ նորմի իրավական բովանդակությանն այդպիսի մեկնաբանում է փվել նաև ՆՏ վերաքննիչ քրեական դատարանն իր՝ 08.05.2009թ. որոշմամբ: Այսպիսով, սահմանադրական դատարանը ոչ թե ժխտում է հանրային իշխանության մարմինների, պաշտոնատար անձանց որոշումների ու գործողությունների օրինականությունը վիճարկելու արտադատարանական (փվյալ դեպքում՝ դատախազին բողոքարկելու) կարգը՝ որպես ՆՏ Սահմանադրության 18 հոդվածով երաշխավորված իրավունքի իրացման միջոց, այլ կարեւորում է վերջինիս եւ վիճարկման դատական միջոցի՝ իրավական բովանդակության, դրանց կիրառման հիմքերի (դեպքերի), օրենքով այնպիսի հստակեցումը, որը սույն գործի առարկայի շրջանակներում լինի միակերպ ընկալելի ինչպես դիմող, այնպես էլ իրավակիրառող սուբյեկտների համար, ընդգրկելով նաև սույն որոշմամբ կարեւորված այն առանձնահատկությունները, որոնք հատուկ են դատախազական հսկողությանն ու դատական վերահսկողությանը: Իրավակարգավորման այսպիսի եղանակը կկողմնորոշի քրեական դատարանության մասնակիցներին եւ շահագրգիռ այլ անձանց առավել արդյունավետ ձեռով իրականացնել Սահմանադրության 18 հոդվածում երաշխավորված իրենց իրավունքը:

Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև ՆՏ օրենսդրական զարգացումների ընդհանուր փրամաբանությունը (մասնավորապես՝ արտահայտված ՆՏ - սահմանադրական դատարանի 16 հունվարի 2007թ. ՄԴ-Ո-673 որոշման մեջ, ինչպես նաև ՆՏ վարչական դատարանության օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մասում), գտնում է, որ այն դեպքում, երբ պետական մարմինը (փվյալ դեպքում քրեական վարույթ իրականացնող) կամ պաշտոնատար անձն իրավասու է եղել գործել իր հայեցողությամբ, դատարանը ստուգում է, թե արդյո՞ք փվյալ մարմնի կողմից ակտիվ ընդունելը կամ այն ընդունելը մերժելը, գործողությունը կատարելը կամ անգործություն դրսևորելն իրականացվել են օրենսդրությանը համապատասխան:

Այսպիսով, քրեական գործերով մինչդատարանական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության եւ դատական վերահսկողության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող, այդ թվում՝ սույն գործով վիճարկվող, իրավանորմների համալիր վերլուծությունը միանշանակ վկայում է այդ գործառույթների **ընդհանուր նպա-**

տակի (որպես իրավապահ գործունեություն), սակայն փարբեր առանձնահատկությունների մասին, հեյտաբար, պատասխանող կողմի փաստարկն այն մասին, թե «...եւ դատախազական հսկողությունը, եւ դատական հսկողությունը միմյանց լրացնող ինստիտուտներ են», չի բխում սույն գործով վեճի առարկայից եւ այդ գործառույթների սահմանադրաիրավական բովանդակությունից: Սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական գործերով մինչդատական վարույթի շրջանակներում քրեական վարույթ իրականացնող մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների, գործողությունների ու անգործության դատական բողոքարկման ինստիտուտի կիրառման պրակտիկայում ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի՝ այդ բնագավառը կարգավորող նորմերի դրույթները պետք է ընկալվեն նաեւ որպես համակարգային ամբողջություն, որը պայմանավորված է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմանադրաիրավական բովանդակությամբ եւ երաշխիք է ՏՏ Սահմանադրության 18 հոդվածով նախատեսված անձանց իրավունքների արդյունավետ իրացումն ապահովելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Նայաստանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի «...եւ եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, դատական պրակտիկայում դրան փրված՝ **նաեւ «անգործությանը» վերագրվող բովանդակության մասով**, որով գործնականում նույն հոդվածի 2-րդ մասի վրա փարածելով 1-ին մասում նախատեսված պայմանն ու նման մեկնաբանությամբ դիմողների նկատմամբ կիրառելով հոդվածի 1-ին մասը՝ սահմանափակվել են մարդու՝ դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության սահմանադրական իրավունքները, ճանաչել Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր:

2. Նայաստանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը:

3. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

7 դեկտեմբերի 2009 թվականի

ՄԴՈ- 844

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻ ՆԱԲԻՆԵ ՍԱՆԱԿՅԱԿՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆՃ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՔԻ 48 ՆՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱԳԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

8 դեկտեմբերի 2009թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Նովիանիսյանի, Ն. Նազարյանի,
մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ Ա. Սահակյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՆՃ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՃ ԱԺ աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն ՆՃ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Նարինե Սահակյանի դիմումի հիման վրա՝ ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասի՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղ. Ն. Սահակյանի՝ 09.07.2009թ. դիմումն է ՆՃ սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, կողմերի գրավոր բացատրությունները, հեղափոխելով ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն (այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է Նայասարանի Նանրապետության Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի 17-ին, ՏՏ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

Օրենսգրքի վիճարկվող 48 հոդվածը փոփոխվել է ՏՏ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված՝ «Նայասարանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՏՏ օրենքով:

Օրենսգրքի 48 հոդվածը վերնագրված է «Ապացուցման պարպականությունը և սպացուցման առարկան», որի 2-րդ մասը 2007 թվականի նոյեմբերի 28-ի խմբագրությամբ սահմանում է.

«Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապարմությունը հանգում է հետևյալին: Դիմելով ՏՏ Լոռու մարզի առաջին ասյանի դատարան՝ դիմողը խնդրել է համապատասխանողներ Գ. Պապոյանից և Ա. Շահվերդյանից համապարտության կարգով բռնագանձել սեփականության իրավունքով իրեն պարկանող գույքը՝ հագուստը, անձնական օգտագործման իրերը և ոսկյա զարդերը: Լոռու մարզի առաջին ասյանի դատարանի՝ 25.04.2007թ. վճռով հայցը բավարարվել է մասնակի՝ մերժելով ոսկյա զարդերի մասով պահանջը:

ՏՏ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի կողմից 31.07.2007թ. կայացված վճռով հայցը բավարարվել է ամբողջությամբ:

ՏՏ վճռաբեկ դատարանի՝ 25.12.2007թ. որոշմամբ ՏՏ վերաքննիչ քաղաքացիական դատարանի վճիռը բեկանվել է և ուղարկվել նույն դատարան՝ գործն այլ կազմով նոր քննության համար:

Լոռու մարզի առաջին ասյանի դատարանի՝ 12.05.2008թ. վճռով հայցն ամբողջությամբ մերժվել է:

ՏՏ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի կողմից 29.09.2008թ. կայացված որոշմամբ հայցը բավարարվել է մասնակի՝ հագուստեղենի և անձնական օգտագործման իրերի պահանջի մասով բեկանվել է և գործն այդ մասերով քննության է ուղարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան:

ՏՏ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 05.02.2009թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

3. Դիմողը սահմանադրական դատարանում վիճարկում է օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը և գրնում է, որ այն հակասում է ՏՏ

Սահմանադրության 1, 3, 6, 14, 19, 42, 91 եւ 98 հոդվածներին, 18 հոդվածի 1-ին, 4-րդ մասերին, ուստի խնդրում է այն անվավեր ճանաչել:

Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթը հակասում է ՏՏ Սահմանադրության 19 հոդվածում ամրագրված մրցակցության սկզբունքին:

Շարունակելով հիմնավորել օրենսգրքի վերոնշյալ դրույթի հակասահմանադրականությունը՝ դիմողն այնուհետեւ ներկայացնում է վերջինիս անհամապարասխանության հիմնավորումները ՏՏ Սահմանադրության 42 հոդվածի 2-րդ մասին եւ 83.5 հոդվածին հակասելու փաստանկյունից: Վերոգրյալի կապակցությամբ դիմողը նշում է, որ ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապարասխան օրենսգրքի 48 հոդվածի 1-ին մասի ուժով կողմը կրում է այն փաստի ապացուցման պարտականությունը, որն իր կողմից է առանձնացվել, գիտակցվել, ընկալվել ու ներկայացվել որպես գործի ելքի համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստ: Նակառակ դեպքում, օրենսգրքի 48 հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կրելու է այդ փաստը չապացուցելու բացասական հետեւանքները:

Դրան հակառակ, ապացուցման գործընթացի առաջին փուլում օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասով դադարանն է որոշում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը: Ներելաբար, ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապարասխան ենթադրվում է, որ կամ դադարանն ինքն է սպանձնելու իր կողմից կարելորաձ փաստի ապացուցման պարտականությունը եւ այն չապացուցելու դեպքում կրելու դրա բացասական հետեւանքները, կամ էլ կամայականորեն դրա ապացուցման պարտականությունը դնելու է կողմերից որեւէ մեկի վրա, անկախ այն հանգամանքից, թե վերջինիս կողմից րվյալ փաստը կարելորվում է որպես գործի ելքի համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստ, եւ որ ավելի վաթ՝ չապացուցելու դեպքում կողմը կրելու է դրա բացասական հետեւանքները:

ՏՏ Սահմանադրության 91 եւ 98 հոդվածներին հակասելու փաստանկյունից դիմողը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող հոդվածը դադարանին իրավունք է րալիս միջամտել գործի ելքի համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելու հարցին, որով դադարանին վերագրվում է կողմերին վերապահված գործառույթ:

Դիմողը նաեւ գտնում է, որ դադարանը հենվելով օրենսդրական բարեփոխումների արդյունքում արդեն իսկ վերաշարադրված օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասով ապացուցման առարկայի նկատմամբ իրեն վերապահված իրավունքի վրա՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա այնպիսի փաստ է առաջ քաշել, որը կողմերը որպես այդպիսին չեն կարելորել:

4. Պարասխանողն՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ՝ գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող հոդվածը ՏՏ Սահմանադրությանը հակասող ճանաչելու հիմքեր չկան:

Պատասխանողն անհրաժեշտ է համարում նշել, որ մրցակցային իրավունքն արդար դադարեցնելու իրականացնելու միակ կամ բացարձակ նախապայմանը չէ եւ քարքեր ոլորտներում մրցակցային դադարվարությունն ունի իր ուրույն դրսեւորումը: Մրցակցային դադարեցնելու սկզբունքի իրացումն ամենեւին չի նշանակում, որ յուրաքանչյուր կողմ ինքը պետք է կրի իր վկայակոչած հանգամանքների ապացուցման պարտականությունը, իսկ դադարանք պետք է հանդես գա սույն դիտողի դերում: Ընդհակառակը, դադարանքի՝ ապացուցման հանգամանքների շրջանակը որոշելու իրավասությունը մեծացնում է հենց կողմի արդար դադարեցնելու իրավունքի իրացման հնարավորությունը:

Պատասխանողը գտնում է, որ դիմողի այն պնդումը, թե վիճարկվող դրույթով կարող են նախատեսվել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով, հիմնագուրկ է, քանի որ նույն փաստաթղթերով կարելի է պնդել, որ դադարվար բոլորակները նույնպես հակասում են Սահմանադրության 42 եւ 83.5 հոդվածներին: Այլապես կարող ենք, որ դադարանքի վճիռը ծնելով անձի համար որոշակի իրավունքներ ու պարտականություններ՝ պետք է ընդունվեր օրենքի ձևով: Բացի դրանից, ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակի որոշման իրավասությունը դադարանքի փաստաթղթով է օրենքով, հետեւաբար՝ որեւէ խախտման մասին խոսք չի կարող լինել:

Պատասխանողը նաեւ կարծում է, որ դիմողի այն պնդումը, թե վիճարկվող դրույթը ինքնաբերական է դադարանքի արդարադատական գործառնության բովանդակությունը, անընդունելի է, քանի որ վիճարկվող դրույթով դադարանքն ըստ էության սահմանված է ոչ թե փաստաթղթի կամ դադարվարության կողմի դեր, այլ իրեն վերապահված արդարադատություն իրականացնելու իրավասության շրջանակում պարզում գործի նշանակության համար կարեւորություն ունեցող էական հանգամանքները:

Պատասխանողը նաեւ գտնում է, որ դիմողի այն պնդումը, թե վիճարկվող դրույթն իր էությանը իմպլեմենտացիոն է կրում՝ ամրագրելով գործի ելքի համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշման հարցում դադարանքի բացառիկ մենաշնորհը, հիմնագուրկ է, քանի որ օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասի դրույթները ոչ միայն չեն հակասում, այլեւ լիովին համապատասխանում են Սահմանադրության 1-ին հոդվածի պահանջներին:

5. Սահմանադրական դադարանքն արձանագրում է, որ դիմողն ըստ էության վիճարկում է ոչ թե օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասի դրույթն ամբողջությամբ, այլ խնդրո առարկա դրույթում փոքր գրամ՝ «գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դադարանք» բառակապակցությունը:

Օրենսգրքն ապացուցման պարտականությանը եւ ապացուցման առարկային անդրադարձել է 48 հոդվածում, ըստ որի՝ գործի մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ինքն ապացուցի իր վկայակոչած փաստերը եւ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դադարանք՝ գործին մասնակցող անձանց պահանջների եւ առարկությունների հիման վրա:

Սակայն գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված ապացույցներն ինքնին չեն կազմում ապացուցման առարկա: Ապացուցման առարկա են կազմում միայն գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված այն ապացույցները, որոնք գործի լուծման համար էական նշանակություն ունեն:

Օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասով, ըստ էության, նախադրվում է ապացուցման առարկայի շրջանակներն ուրվագծելու՝ դատարանի իրավասությունը: Ապացուցման առարկան այն իրավաբանական (հիմնականում նյութաիրավական բնույթի) փաստերի համակցությունն է, որոնք էական նշանակություն ունեն գործն ըստ էության լուծելու համար, եւ ենթակա են պարզելու դատական քննության ընթացքում: Յուրաքանչյուր գործով ապացուցման առարկայի մեջ մտնող փաստերի կազմը փոփոխվում է, այն կախված է կողմերի ներկայացրած պահանջներից ու առարկություններից:

Ապացուցման առարկայի մեջ մտնող նյութաիրավական փաստերը հանգամանքներ են, որոնց առկայության կամ բացակայության հետ նյութական իրավունքի նորմերը կապում են քաղաքացիական իրավունքների եւ պարտականությունների ծագումը, փոփոխումը, դադարումը կամ որոնք արգելակում են իրավունքների եւ պարտականությունների առաջացմանը: Գործով այս փաստերը պարզելն անհրաժեշտ է փոխադրական իրավասությունը կարգավորող նյութական իրավունքի նորմի ճիշտ կիրառման եւ գործն ըստ էության ճիշտ լուծելու համար: Դա էլ հաշվի առնելով որոշվում է ապացուցման առարկան, որն ապացուցողական գործունեության առաջին եւ ամենակարեւոր դատավարական գործողությունն է: Դատարանի վճիռը չի բխի գործի փաստական հանգամանքներից, հետեւաբար՝ օրինական ու հիմնավորված լինել չի կարող, եթե գործին մասնակցող անձինք եւ դատարանը ճիշտ չորոշեն ապացուցման առարկան կազմող փաստական հանգամանքների շրջանակը եւ լրիվ չպարզեն դրանք:

Փաստական հանգամանքների այդ ամբողջությունը, որն անհրաժեշտ է նաեւ այլ իրավական հարցեր լուծելու համար, յուրաքանչյուր գործով ենթակա է պարփակվող պարզաբանման: Գործով ապացուցման ենթակա փաստական հանգամանքների այդ ամբողջությունը կազմում է ապացուցման առարկայի հիմնական բովանդակությունը: Բայց դա դեռ բավարար չէ ամեն մի գործով քննության բազմակողմանիությունը, լրիվությունն ու օբյեկտիվությունն ապահովելու համար: Ապացուցման առարկան ավելի լայն հասկացություն է, դրա մեջ մտնում են նաեւ այն փաստական հանգամանքները, որոնց պարզաբանումն անհրաժեշտ է գործին ճիշտ լուծում փոխելու համար:

Յուրաքանչյուր գործով ապացուցման առարկան կազմող փաստական հանգամանքների ճիշտ սահմանումն անհրաժեշտ պայման է դատաքննության սահմանները որոշելու համար: Ապացուցման առարկայի շրջանակների անհիմն ընդարձակումը կարող է գործը ծանրաբեռնել ավելորդ նյութերով, որը պարճատ կհանդիսանա գործին չվերաբեռող նյութերի կուրակմանը, դատավարության ձգձգմանը: Մյուս կողմից՝ ապացուցման առարկայի շրջանակների անհիմն սահմանափակումը կարող է պարճատ դառնալ գործի միակողմանի, ոչ լրիվ եւ ոչ օբյեկտիվ քննության համար:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ապացուցման ինստիտուտը կարգավորվում է ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-53 հոդվածներով: Այն ոչ միայն գործով օրինական (հիմնավոր) վճիռ (որոշում) կայացնելու նախապայման է, այլև դատաքննության մրցակցության սկզբունքի իրականացման կարևոր երաշխիք: Ապացույցները ներկայացնելու և պահանջելու կարգը նախատեսված է օրենսգրքի 49 հոդվածում, ըստ որի՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ինքը ներկայացնի ապացույցներ, որից հետևում է, որ կողմերից յուրաքանչյուրն իրավասու է հայցի առարկայի շրջանակներում դատարանին ներկայացնել իր դիրքորոշման ճշմարտացիությունը հիմնավորող փաստարկներ (ապացույցներ): Ընդ որում, եթե փվյալ անձը հնարավորություն չունի անհրաժեշտ ապացույցն ինքնուրույն ձեռք բերել գործին մասնակցող կամ չմասնակցող այլ անձից, որի մոտ այն գտնվում է, իրավունք ունի փվյալ ապացույցը պահանջելու միջնորդությամբ դիմել դատարան: Օրենսգրքի 51 հոդվածը վերաբերում է ապացույցների թույլատրելիությանը և վերաբերելիությանը, իսկ 52 հոդվածը սահմանում է ապացուցելուց ազատվելու հիմքերը:

Ըստ օրենսգրքի 53 հոդվածի՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Այն հարցը, թե ով պետք է դատարանին ներկայացնի որոնվող փաստերի առկայությունը կամ բացակայությունը հաստատող փաստական փվյալները, թե դատավարության մասնակիցներից ում վրա է ընկնում ապացուցման ծանրությունը և հաստատման պարտականությունը՝ կարևոր է ապացուցումը ճիշտ կազմակերպելու և ապացուցողական նյութի լրիվությունն ապահովելու համար: Օրենսգրքում դա լուծվել է դատավարության մրցակցային ձևի պայմաններում կողմերի իրավահավասարության, անմիջականության և դատավարության ընդհանուր սկզբունքներից ելնելով, հաշվի առնելով փվյալ փաստն ապացուցելու մեջ կողմերի շահագրգռության աստիճանը:

Միաժամանակ, անդրադառնալով վարչական վարույթում մրցակցության սկզբունքի դրսևորման առանձնահատկության վերաբերյալ դիմող և պատասխանող կողմերի դիրքորոշումներին՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ սկզբունքն իր միակերպ դրսևորումը չի կարող ունենալ արդարադատության փարբեր բնագավառներում (քաղաքացիական, քրեական, վարչական, սահմանադրական): Այդ առանձնահատկությունները մանրամասնված են օրենսդրության համապատասխան ակտերում և դրանց համեմատական վերլուծությունը դուրս է սույն գործի քննության առարկայից: Սահմանադրական դատարանը փաստում է, որ դատաքննության մրցակցության սկզբունքի այս կամ այն դրսևորումները պայմանավորված են վիճելի իրավահարաբերության բնույթով, սուբյեկտների կազմով, դատարանի առջև դրված կոնկրետ խնդիրների շրջանակով և այլն:

7. Օրենսգրքի վիճարկվող 48 հոդվածի համաձայն հայցային վարույթի գործով հայցվորը պետք է ապացուցի իր պահանջների հիմքում ընկած փաստերը, իսկ պատասխանողը, եթե չի ընդունում հայցը և հենվում է որոշակի փաստերի վրա, պարտավոր է ա-

պացուցել իր առարկությունների հիմքում ընկած փաստերը կամ եթե հայցվորն է առարկում պատասխանողի բերած փաստերի դեմ, ապա նա է պարտավոր պայացուցել իր առարկությունների հիմքում ընկած փաստերը: Նման իրավակարգավորումը հեփեսում է այն փորձաքննությանը, որ փվյալ փաստի վրա հիմնվող կողմն ավելի իրազեկ է և դատարանին կարող է ներկայացնել փվյալ փաստն ապացուցող հանգամանքները, եւ որ շահագրգռված կողմը կձեռնարկի բոլոր միջոցներն իր մատնանշած փաստն ապացուցելու համար:

Սահմանադրական դատարանը նաեւ փաստում է, որ գործին մասնակցող անձանց պահանջների եւ առարկությունների հիման վրա է դատարանի կողմից որոշվում ապացուցման ենթակա հանգամանքների ծավալը: Ընդ որում, նման որոշումը կայացվում է ապացուցման գործընթացի առաջին՝ ապացույցների հավաքման փուլում եւ նպատակ է հետապնդում ապահովելու դատավարության արդյունավետությունը:

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշումը դատարանի կողմից ամենեւին էլ չի նշանակում կողմերի իրավահավասարության կամ մրցակցության սկզբունքների խախտում, առավել ևս կողմերի միջեւ ապացուցման պարտականության անհավասար բաշխում: Ընդհակառակը, դրանով դատարանը կողմերին ուղղորդում է ապացույցներ ներկայացնել այն փաստերի վերաբերյալ, որոնք կհաստատեն իրենց պահանջներն ու առարկությունները, հեփեսաբար, փաստական հիմք կստեղծեն գործով օրինական (հիմնավոր) վճիռ (որոշում) կայացնելու համար:

Վերոշարադրյալից հեփեսում է, որ.

- դատարանն ապացույցներ չի հավաքում (ներկայացնում), այլ դատավարական պայմաններ (հնարավորություններ) է ստեղծում դրանք ժամանակին եւ անկաշկանդ ներկայացնելու համար,

- կողմերը (գործին մասնակցող անձինք) իրենք են ապացուցում այն, ինչ պնդում կամ առարկում են,

- ապացուցման գործընթացը, որպես քաղաքացիական գործով, ըստ էության, օրինական (հիմնավոր) վճիռ (որոշում) կայացնելու առանձնահատուկ երաշխիք, որպես կանոն, փեղի է ունենում առաջին սպյանի դատարանում,

- գործով ներկայացված ապացույցների գնահատման կամ գործով արդարացի, հիմնավոր վճիռ (որոշում) կայացնելու հիմքում այս կամ այն ապացույցի նշանակությունը գնահատելու բացառիկ լիազորությունը պարկանում է դատարանին,

- ապացուցման գործընթացը (այդ ինստիտուտի իրավակարգավորումը) առանձնահատուկ է հանրային-իրավական վեճերով, պայմանավորված՝ մասնավոր-իրավական շահերի նկատմամբ հանրային շահի գերակայությամբ, հեփեսաբար՝ մրցակցության սկզբունքի դրսեւորման առանձնահատկությամբ:

8. Ապացույցները ներկայացվելուց հետո է միայն դատարանն անցնում դրանց գնահատմանը, որտեղ որոշվում է ձեռք բերված ապացույցների վերաբերելիությունը եւ թույլատրելիությունը: Օրենսգրքի 51 հոդվածը վերաբերում է ապացույցների վերաբերե-

լիության եւ թույլատրելիության սկզբունքներին: Նշված երկու սկզբունքները բացառում են օրենքով սահմանված ապացույցներից դուրս այլ ապացույցներ դափարանին ներկայացնելու հնարավորությունը (թույլատրելիություն), ինչպես նաեւ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերին չվերաբերող անհարկի եւ ավելորդ ապացույցներով դափարանին ծանրաբեռնելու հնարավորությունը (վերաբերելիություն): Միաժամանակ, նշված սկզբունքները կոչված են ապահովելու արդար դափարանության իրավունքի, ինչպես նաեւ դրա բաղադրաբարրը հանդիսացող՝ ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքի իրացումը:

Ապացույցների վերաբերելիությունը ներկայացված փաստերում պարունակող այն պեղեկություններն են, որոնց հիման վրա հաստատվում կամ հերքվում է գործով ապացուցման ենթակա այս կամ այն հանգամանքը: Որոշել ապացույցների վերաբերելիությունը, նշանակում է պարզել ապացույցների բովանդակության եւ նրանցով հաստատվող փաստերի միջեւ եղած օբյեկտիվ կապը:

Ապացույցների թույլատրելիությունը՝ վերաբերելիության ընդհանուր կանոնի լրացումն է, ըստ որի գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվեն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Բոլոր այն դեպքերում, երբ դափարանն իր ներքին համոզմամբ գտնում է, որ կողմերի ներկայացրած ապացույցներն անհրաժեշտ չեն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար կամ դրանք ուղղված են այնպիսի փաստերի ապացուցմանը, որոնք շեղվում են գործից եւ առնչություն չունեն վերջինիս հետ կամ ներկայացված են փոխալ գործի քննության համար օրենքով չնախատեսված ապացույցներ, օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասի վիճարկվող բառակապակցության ուժով դափարանին հնարավորություն է ընձեռվում դուրս թողնել դրանք ապացուցման առարկայի շրջանակներից: **Դափարանին վերապահված՝ վերը նշված իրավասությունն իրավաչափ է եւ բխում է արդար դափարանության իրավունքի, ինչպես նաեւ դրա բաղադրաբարրը հանդիսացող՝ ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքի էությունից:**

9. Սահմանադրական դափարանը նշում է, որ այլ խնդիր է, թե որքանով է օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասը երաշխավորում մրցակցության սկզբունքի իրացումը եւ այս պեսանկյունից որքանով են գործին մասնակցող անձինք ապահովված դափարանի հնարավոր կամայականություններից: Այս հարցը պարզելու նպատակով հարկ է օրենսգրքի վիճարկվող բառակապակցությունը դիփարկել օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասի ողջ բովանդակության համարեքստում: Օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասի «գործին մասնակցող անձանց պահանջների եւ առարկությունների հիման վրա» բառակապակցության առկայության պայմաններում դափարանը չի կարող առաջ քաշել ապացուցման ենթակա այնպիսի նոր հանգամանք կամ փաստ, որն ընկած չէ գործին մասնակցող անձանց պահանջների եւ առարկությունների հիմքում: Օրենսգրքի վիճարկվող դրույթն իր վերոհիշյալ բառակապակցությամբ կաշկանդում է դափարանին գործին մասնակցող անձանց ներկա-

յացրած պահանջների եւ առարկությունների շրջանակով, ինչի արդյունքում երաշխավորվում է մրցակցության սկզբունքի պահպանումը եւ բացառվում այս փեսանկյունից դափարանի հնարավոր կամայականությունները:

Այդ է վկայում նաեւ դիմողի նկատմամբ կայացված դափարական սկզբերի ուսումնասիրությունը: Այս պայմաններում հիմնագուրկ է դիմողի այն պնդումը, թե նման դեպքերում ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան կամ դափարանն ինքն է սպանձնելու իր կողմից կարետրած փաստի ապացուցման պարտականությունը եւ այն չապացուցելու դեպքում կրելու դրա բացասական հետեւանքները, կամ էլ կամայականորեն դրա ապացուցման պարտականությունը դնելու է կողմերից որեւէ մեկի վրա եւ չապացուցելու դեպքում կողմը կրելու է դրա բացասական հետեւանքները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասփանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դափարանի մասին» Նայասփանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայասփանի Նանրապետության սահմանադրական դափարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՆՆ քաղաքացիական դափարվարության օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Նայասփանի Նանրապետության Սահմանադրությանը:
2. Նայասփանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ**

*8 դեկտեմբերի 2009 թվականի
ՄԴՈ- 845*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻ ԱԼԻԿ ՄԱԹ-ԵՎՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ ՆՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԻ 404 ՆՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱԳԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

22 դեկտեմբերի 2009թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարոթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի (զեկուցող),
Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի,
մասնակցությամբ՝ դիմողի ներկայացուցիչ Ն. Բաղդասարյանի, գործով որպես
պատասխանող ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՏ
Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Խաչատրյանի,
համաձայն ՆՏ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 1-ին
մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 25, 38 եւ 69 հոդ-
վածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Ալիկ Մաթեոս-
յանի դիմումի հիման վրա՝ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 2-րդ
մասի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության
հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղ. Ա. Մաթեոսյանի՝ 25.08.2009թ. դիմումն է սահ-
մանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, կողմերի գրավոր բացատրու-
թյունները, հեղափոխելով ՆՏ քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա
մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. ՆՏ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) ընդուն-
վել է Նայասարանի Նանրապետության Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի

1-ին, ՆՆ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի վիճարկվող 404 հոդվածի 2-րդ մասը փոփոխվել է ՆՆ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված՝ «Նայաստանի Նանրասպտության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՕ-270 -Ն օրենքով:

Օրենսգրքի 404 հոդվածը վերնագրված է. «Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք», որի 2-րդ մասը 2007 թվականի նոյեմբերի 28-ի խմբագրությամբ սահմանում է. «2. Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերն անձը չի կարող բողոքարկել վճռաբեկ դատարան, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում»:

Նույնաբնույթ նորմ է բովանդակում նաեւ ՆՆ դատական օրենսգրքի 58 հոդվածի 1-ին մասը, ըստ որի՝ «Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա գործն ըստ էության լուծող դատական ակտերը անձը չի կարող բողոքարկել վճռաբեկ դատարանում, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում: Բացառություն են կազմում այն ակտերը, որոնք վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չեն»:

2. Զննության առարկա գործի դատավարական նախապայմությունը հանգում է հետևյալին: Սյունիքի մարզի առաջին արյանի դատարանի՝ 29.08.2007թ. դատավճռով Ա. Մաթետոսյանը մեղավոր է ճանաչվել ՆՆ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 104 հոդվածի 1-ին մասով եւ դատապարտվել ազատազրկման 9 փարի 6 ամիս ժամկետով:

ՆՆ վերաքննիչ քրեական դատարանի՝ 03.12.2007թ. դատավճռով առաջին արյանի դատարանի դատավճիռը թողնվել է անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:

25.07.2008թ. ՆՆ վճռաբեկ դատարանը բավարարել է ՆՆ զինվորական դատախազի բողոքը եւ բեկանելով ՆՆ վերաքննիչ քրեական դատարանի՝ 03.12.2007թ. դատավճիռը՝ գործն ուղարկել է նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

12.11.2008թ. ՆՆ վերաքննիչ քրեական դատարանը բեկանելով եւ փոփոխելով Սյունիքի մարզի առաջին արյանի դատարանի՝ 29.08.2007թ. դատավճիռը՝ Ա. Մաթետոսյանին մեղավոր է ճանաչել ՆՆ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 104 հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով եւ պարիժները մասնակիորեն գումարելու միջոցով վերջնական պարիժ է նշանակել ազատազրկում 15 փարի ժամկետով:

25.02.2009թ. ՆՆ վճռաբեկ դատարանն Ա. Մաթետոսյանի պաշտպանի վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

30.04.2009թ. ՆՆ վճռաբեկ դատարանը վերադարձրել է նաեւ Ա. Մաթետոսյանի բողոքը:

3. Դիմողը սահմանադրական դատարանում վիճարկում է օրենսգրքի 404 հոդվածի 2-րդ մասը եւ գրնում է, որ դրա դրույթները հակասում են ՏՏ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներին, ուստի խնդրում է այն անվավեր ճանաչել:

Դիմողը գրնում է, որ նշված քրեադատարարական նորմն իր էությանմբ չի համապատասխանում ինչպես ՏՏ Սահմանադրության ոգուն, այնպես էլ առողջ փրամաբանությանը: Սահմանադրությունը մարդուն եւ քաղաքացուն իրավական հնարավորություն է փալխ արդյունավեր միջոցներով պաշտպանելու եւ վերականգնելու իր խախտված իրավունքները: Մինչդեռ ՏՏ քրեական դատարարության օրենսգրքի 404 հոդվածի 2-րդ մասն արգելում է անձին օգտվելու իր սահմանադրական իրավունքներից:

Դիմողը նշում է, որ վերոհիշյալ նորմի վերլուծությանմբ կարելի է հանգել հետեյալ եզրակացությանը.

- պաշտպանը, ով վարույթին մասնակցել է վերաքննության փուլում, վճռաբեկ բողոք բերելու իրավունք չունի, քանի որ ինքը վերաքննիչ բողոք չի բերել,

- եթե առաջին ապյանի դատարանի դատավճիռը կողմին բավարարում է, եւ նա բողոք չի բերել, այն վերաքննիչ դատարանում բեկանվելու դեպքում կողմը գրկվում է վճռաբեկ բողոք բերելու իրավունքից,

- ստացվում է, որ անկախ բավարարման աստիճանից, միեւնույն է, կողմը պեքը է բողոքարկի առաջին ապյանի դատարանի դատավճիռը, այլապես վճռաբեկ բողոք բերելու իրավունք չի ունենա,

- վերաքննիչ դատարանի կողմից թույլ փրված նյութական եւ դատարարական նորմերի խախտումների դեմ բողոքարկել չի թույլատրվում, քանի որ վերաքննիչ բողոքում դրա հիմքերը նշված չեն եղել:

Դիմողի կարծիքով, այս նորմի կիրառումը վճռաբեկ դատարանին հնարավորություն է փալխ խուսափելու արդարադատություն իրականացնելու իր սահմանադրական պարտականություններից, դրանք իրականացնել հայեցողական կարգով:

Դիմողը գրնում է, որ անընդունելի է այն մտայնությունը, թե Սահմանադրությանմբ վճռաբեկ դատարանին փրված կարգավիճակով «դասական իմաստով» այն դատարում է դատական ապյան լինելուց: Վճռաբեկ դատարանն ինքն իրեն գրկել է գործը վերանայող դատական երրորդ՝ բարձրագույն դատական ապյան լինելուց, այնինչ Սահմանադրությանմբ փրված բարձրագույն դատական ապյանի լիազորություններն օրենքով չեն կարող սահմանափակվել եւ դատարանին «թույլատրել» հայեցողական մոտեցում ցուցաբերել իր «սահմանադրական առաքելությունն իրականացնելու գործում»:

4. Պատասխանողն առարկելով դիմողի փաստարկների դեմ՝ գրնում է, որ օրենսգրքով սահմանված հիշյալ դրույթն իր բնույթով չի սահմանափակում անձի՝ վերադաս դատարան դիմելու իրավունքը, այլ հստակ սահմանում է ՏՏ վճռաբեկ դատարան դիմելու կարգն ու պայմանները:

Պատասխանողը միաժամանակ նշում է, որ վիճարկվող հոդվածում խոսքը վերաբերում է դատական ակտին, այլ ոչ թե անձին: Ներեւաբար, վիճարկվող հոդվածը չի

արգելում պաշտպանին վճռաբեկ բողոք բերել այն դեպքում, երբ վերաքննիչ բողոք բերել էր վերջինիս վստահորդը:

Պատասխանողի կարծիքով, դիմողի այն դիրքորոշումը, ըստ որի՝ եթե վերջինս վերաքննիչ բողոք չի բերել, ապա այն վերաքննիչ դատարանում բեկանվելու դեպքում գրկվում է վճռաբեկ բողոք բերելու իրավունքից, անընդունելի է այն հիմնավորմամբ, որ վերաքննիչ դատարանը ոչ թե գործն ըստ էության լուծող դատարան է, այլ գործը քննում է վերաքննիչ բողոքում նշված հիմքերով և ծավալով: Եթե վերաքննիչ դատարանը մյուս կողմի վերաքննիչ բողոքի հիման վրա բեկանել է ստորադաս դատարանի դատական ակտը, ապա դա արել է սուսկ մյուս կողմի վերաքննիչ բողոքի հիմքերով և ծավալում: Բայց, եթե վերաքննիչ դատարանը դատական ակտը բեկանել է մյուս կողմի վերաքննիչ բողոքում ամրագրված հիմքերով, ապա կողմը վճռաբեկ դատարանում բողոք ներկայացնելիս կմտարանաշերտ, թե մյուս կողմի վերաքննիչ բողոքում նշված հիմքերն ինչու չպետք է վերաքննիչ դատարանը հիմք ընդուներ և ակտը բեկաներ: Նակառակ դեպքում, եթե վերաքննիչ կամ վճռաբեկ դատարան դիմելիս կողմերն ազատ լինեին ցանկացած հիմնավորում նշելուց, ապա և վերաքննիչ, և վճռաբեկ դատարանները կհանդիսանային գործն ըստ էության քննող և լուծող դատարաններ:

Պատասխանողի կարծիքով, դիմողի այն պնդումը, ըստ որի՝ անկախ բավարարման աստիճանից, միեւնույն է, կողմը պետք է բողոքարկի առաջին արյանի դատարանի դատավճիռը, այլապես վճռաբեկ բողոք բերելու իրավունք չի ունենա, նույնպես անընդունելի է, քանի որ վերաքննիչ դատարանը գործն ըստ էության քննող դատարան չէ և այն քննում է վերաքննիչ բողոքում նշված հիմքերով և ծավալով, հետևաբար՝ առաջին արյանի դատարանի դատավճիռը բեկանել հնարավոր է միայն վերաքննիչ բողոքում բերված հիմքերի հիմնավորվածության դեպքում:

Ինչ վերաբերում է դիմողի այն դիրքորոշմանը, որ վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված նյութական և դատավարական նորմերի խախտումների դեմ բողոքարկել չի թույլատրվում, քանի որ վերաքննիչ բողոքում դրա հիմքերը նշված չեն եղել, ապա պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթում նման սահմանափակման մասին խոսք չի գնում:

Ելնելով վերոգրյալից՝ պատասխանողը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող դրույթը ՆՏ Սահմանադրությանը հակասող ճանաչելու հիմքեր չկան:

5. ՆՏ սահմանադրական դատարանն իր՝ 09.04.2007թ. ՍԴՈ-690 որոշման մեջ հստակ իրավական դիրքորոշումներ է արտահայտել նաև սույն գործին անմիջականորեն առնչվող այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են.

նախ՝ դատական իշխանության համակարգում վճռաբեկ դատարանի՝ ՆՏ Սահմանադրությամբ նախատեսված գործառնական փեղը և դերը,

երկրորդ, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու՝ վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթի բովանդակությունը և դրա իրացման երաշխավորումն օրենսգրքում և այլ իրավական ակտերում,

երրորդ, դափական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման օրենսդրական երաշխավորվածությունը դափական ակտերի բողոքարկման գործող կարգում,

չորրորդ, դափական բողոքարկման հարաբերությունների կարգավորման բնագավառում արդարադափության արդյունավետության եւ անձի իրավունքների դափական պաշտպանության երաշխավորումն օրենսդրական փոփոխություններում:

Սույն գործի շրջանակներում սահմանադրական դափարանը հենվում է նշված որոշմամբ արտահայտված իր իրավական դիրքորոշումների վրա եւ նշում, որ ՆՏ Սահմանադրությունը եւ օրենքները նախատեսում են դափական ակտերի օրինականությունը եւ հիմնավորվածությունն սպուգելու այնպիսի արդյունավետ միջոց, ինչպիսին է դրանց բողոքարկումը վերադաս դափական ապյան: Այսպես, վերաքննության կարգով բողոքարկման ենթակա ակտերի շրջանակը որոշված է ՆՏ դափական օրենսգրքի 58 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով եւ ՆՏ քր. դափ.օր.-ի 376.1 հոդվածով, իսկ վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա ակտերի շրջանակը որոշված է ՆՏ դափական օրենսգրքի 50 հոդվածի 2-րդ եւ 5-րդ մասերով եւ ՆՏ քր. դափ.օր.-ի 403 հոդվածով: ՆՏ քրեական դափավարության օրենսգրքի 24 հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ քրեական գործերով դափարանի դափավճիռը եւ որոշումները կարող են վերանայել միայն համապատասխան վերադաս դափարանները՝ օրենսգրքով սահմանված կարգով: Օրենսգրքի 377 հոդվածի համաձայն առաջին ապյանի դափարանների դափական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքներով գործերը քննում է քրեական վերաքննիչ դափարանը, իսկ 403 հոդվածի համաձայն վճռաբեկ դափարանը վերանայում է վերաքննիչ դափարանի դափական ակտերը:

Դափական ակտերի նման հաջորդականությամբ վերանայումն առաջին հերթին պայմանավորված է ՆՏ Սահմանադրության 92 հոդվածի 1-ին մասով սահմանված հիերարխիայով, համաձայն որի՝ «Նայասարանի Նանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ապյանի, վերաքննիչ դափարանները եւ վճռաբեկ դափարանը...»: Այս դրույթով Սահմանադրությունն ամրագրել է ընդհանուր իրավասության դափարանների եռաստիճան համակարգը:

Ըստ Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականների՝ փարբեր մոտեցում է ցուցաբերվում դափական փարբեր ապյանների իրավասությունների սահմանմանն ու դրանց իրականացման կարգերին, ընդ որում, երրորդ ապյանի դափարան բողոքներ պետք է բերվեն առաջին հերթին այնպիսի գործերով, որոնք կարող են նպաստել իրավունքի զարգացմանը կամ կարող են նպաստել օրենքի միանման մեկնաբանմանը:

Այս մոտեցումները բխում են նաեւ ՆՏ Սահմանադրության 92 հոդվածի դրույթներից, որի շրջանակներում է, որ օրենսդիրը հնարավորություն է փվել ՆՏ վճռաբեկ դափարանին ոչ բոլոր գործերը քննության ընդունել:

Այնուհանդերձ, վճռաբեկ դափարանի հայեցողական լիազորությունների շրջանակները չեն կարող անսահմանափակ լինել, եւ օրենքն այնպես պետք է կարգավորի հարցը, որպեսզի չխախտվեն անձի սահմանադրական իրավունքները: Այլապես դա ոչ

միայն չի նպաստի արդարադատության իրականացմանը, այլևս հնարավորինս կխոչընդոտի սահմանադրական նորմերի անմիջականորեն գործելուն եւ կխաթարի խախտված իրավունքները վերականգնելու ինստիտուտը՝ անձին գրկելով իր իրավունքները պաշտպանելու հնարավորությունից:

6. ՆՏ սահմանադրական դատարանն օրենսգրքի՝ վճռաբեկ բողոք բերելու իրավունքի հետ կապված առանձին հոդվածների սահմանադրականությունը որոշելու շրջանակներում արտահայտել է իր իրավական դիրքորոշումները 11.04.2007թ. ՄԴՈ-691 որոշման մեջ:

Սույն գործով վիճարկվող օրենքի նորմը ներառված է օրենսգրքի 11-րդ բաժնում, որը վերնագրված է՝ «Վարույթը վճռաբեկ դատարանում»: Դրանում նախատեսված են վճռաբեկության կարգով դատավճիռների ու որոշումների վերանայման դեպքերը, վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, սահմանված են վճռաբեկ բողոք բերելու հիմքերը, վճռաբեկ բողոքի բովանդակությունը եւ դատավարական բոլոր այն ընթացակարգերը, որոնք կազմում են վճռաբեկ դատարանի վարույթի բովանդակությունը: Նշված բաժնում փեղ գրած նորմերը եւ դրույթները փոխկապակցված են եւ լրացնում են միմյանց:

Նաշվի առնելով այն խնդրի առանձնահատկությունը, որի լուծման համար է կոչված վճռաբեկ դատարանը, օրենսդիրը սահմանել է ինչպես այդ մարմնին դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, այնպես էլ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը:

ՆՏ վճռաբեկ դատարանին բողոք ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը եւ նրանց իրավունքները նշված են օրենսգրքի 404 հոդվածում: Դրանք են՝

- 1) դատավարության մասնակիցները, բացառությամբ քրեական հետապնդման մարմինների, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաեւ դիմողները,
- 2) գլխավոր դատախազը եւ նրա փեղակալները՝ օրենքով նախատեսված դեպքերում:

Օրենսգրքի 404 հոդվածի 1-ին մասում, որը սահմանում է բողոքարկման ընդհանուր կանոնը, նախատեսված է, որ վճռաբեկ դատարան կարող են բողոքարկվել վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող եւ գործն ըստ էության չլուծող դատական ակտերը, ինչպես նաեւ վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները: Օրենսգրքի 404 հոդվածի 2-րդ մասը սահմանում է նաեւ բողոքարկման պարտադիր այլ պայմաններ: Մասնավորապես հոդվածի 2-րդ մասի քառագի մեկնաբանությունից բխում է, որ վճռաբեկության կարգով բողոքարկումը սահմանափակվում է այն դեպքերում, երբ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտը նույն հիմքերով չի բողոքարկվել վերաքննիչ դատարանում:

Նշված իրավակարգավորման իրավաչափությունը հարկ է գնահատել ՆՏ եռասփիճան դատական համակարգում դատական ակտերի բողոքարկման, վերաքննության եւ վճռաբեկության կարգով դատական ակտերի վերանայման վարույթների առանձնա-

հավելությունների, ինչպես նաև ՆՃ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված՝ «Նայասարանի Նանրապեպոթյան քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՕ-270-Ն օրենքով քրեադատավարական օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների համապեպստում: Վերջիններիս համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերը կարող են բողոքարկվել **միայն վերաքննության կարգով**, եւ վճռաբեկ դատարանը բողոքի հիման վրա օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով վերանայում է վերաքննիչ դատարանի դատական ակտը: Կատարված փոփոխությունների արդյունքում ՆՃ քրեական դատավարության օրենսգրքի 385 հոդվածի 1-ին մասում ամրագրվեց նաև դրույթ, որի համաձայն վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է **վերաքննիչ բողոքի հիմքերի եւ հիմնավորումների սահմաններում**:

Բացի դրանից, վերաքննիչ դատարանում եւ վճռաբեկ դատարանում գործի քննության սահմանները համապատասխանաբար նախատեսող 385 եւ 415 հոդվածների ուսումնասիրությունը վկայում է, որ, պայմանավորված այդ դատարանների գործառույթով, վերաքննիչ ու վճռաբեկ վարույթների սահմաններն էապես տարբեր են:

Վերոհիշյալ դրույթները դիտարկելով համակարգային փոխկապակցության մեջ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթը նպատակ է հետապնդում վերաքննության կարգով դատական ակտի բողոքարկումը՝ որպես վճռաբեկության կարգով դատական ակտը բողոքարկելու պարտադիր նախապայման, ապահովել ոչ միայն ձեւական, այլև բովանդակային առումով՝ հնարավորություն տալով վճռաբեկ դատարանին անդրադառնալու այն հանգամանքներին, որոնք վերաքննության կարգով հետազոտվել եւ գնահատվել են, որոնք վերաբերյալ վերաքննիչ դատարանն արտահայտել է իր դիրքորոշումը:

7. Օրենսգրքի վիճարկվող հոդվածի 2-րդ մասի իրավական բովանդակությունից բխում է, որ վճռաբեկ դատարանը գործն ըստ էության քննող դատարան չէ, այլ ստուգում է դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը, հետեւաբար՝ անձը չի կարող վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտը բողոքարկել վճռաբեկ դատարանում, եթե դատական ակտը նույն հիմքերով չի բողոքարկել վերաքննիչ դատարանում: Այսինքն՝ բողոքում նշված հիմքի (հիմքերի) վերաբերյալ ստորադաս դատական արյաններում քննություն չի կատարվել, ապացույցներ չեն հավաքվել, հետազոտվել ու գնահատվել, որը վճռաբեկ դատարանին հնարավորություն կտար ստուգելու արվյալ դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Որքան էլ ընդունելի է նման մոտեցումը, այնուամենայնիվ, օրենքով հստակ չի նախատեսվել իրավակարգավորումն այնպիսի դեպքում, երբ դատապարտյալը, համաձայն լինելով առաջին արյանի դատարանի դատավճռին՝ այն չի բողոքարկել վերաքննության կարգով, մինչդեռ մեղադրանքի կողմի (դատախազի, քրոջի) բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանը կայացրել է նոր դատական ակտ, որով բեկանել է առաջին արյանի դատարանի արդարացման դատավճիռը եւ կայացրել է մեղադրական դատավճիռ կամ առաջադրված մեղադրանքի սահմաններում կիրառել է ավելի ծանր հանցագոր-

ծության համար օրենք կամ նշանակել է ավելի խիստ պարփո՛: Օրենսգրքի 394, 395, 397-400 հոդվածներով նախատեսված վերոհիշյալ լիազորություններն իրականացնելով՝ վերաքննիչ դատարանը կայացնում է դատավճիռ, որն ըստ էության դառնում է նոր, առաջին անգամ ընդունված դատական ակտ եւ որն օրենսգրքի 404 հոդվածի 2-րդ մասի համաձայն չի կարող բողոքարկվել վճռաբեկ դատարանում:

Արդարացման դատավճիռը բեկանելու եւ մեղադրական դատավճիռ կայացնելու, առաջադրված մեղադրանքի սահմաններում ավելի ծանր հանցագործության համար դատապարտելու կամ առաջին աստիճանի դատարանի նշանակված պարփոց ավելի խիստ պարփոց նշանակելու, ինչպես նաեւ հանցագործության որակումը քրեական օրենքի այն հոդվածով փոխելու, որը պարասխանավորություն է նախատեսում ավելի թեթեւ հանցագործության համար, առաջին աստիճանի դատարանի դատավճիռը բեկանելու՝ գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաքննիչ դատարանի լիազորությունների պայմաններում օրենսգրքի 404 հոդվածի 2-րդ մասում նախատեսված պայմանի փառացի մեկնաբանությունը փաստորեն վճռաբեկ բողոք բերելու իրավունքից կարող է զրկել դատավարության բոլոր մասնակիցներին (դատապարտյալ, պաշտպան, մեղադրող, քուժող եւ այլն):

Վիճարկվող հոդվածի 2-րդ մասի նման կիրառումն ուղղակի հակասության մեջ կմտնի ՆՏ Սահմանադրության 20 հոդվածի 3-րդ մասի հետ, ըստ որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունք»:

Բացի դրանից, նման մեկնաբանումը չի նպաստի արդարադատության լիարժեք իրականացմանը, դատական սխալները շարկելու եւ միասնական դատական պրակտիկա ձեւավորելու գործին: **Վերաքննիչ դատարանի՝ ըստ էության նոր դատավճռի բողոքարկումը վճռաբեկ դատարան պետք է մատչելի լինի դատավարության մասնակիցների համար:** Նորմի առկա ձեւակերպումը ենթադրում է, որ դատավարության մասնակիցը չի կարող առանց վերաքննիչ բողոքի շրջանակներում առաջին աստիճանի դատարանի ակտը բողոքարկելու այն բողոքարկել վճռաբեկ դատարան:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ, հաշվի առնելով ՆՏ Սահմանադրության 20 հոդվածի 3-րդ մասի պահանջը, ինչպես նաեւ ՆՏ վճռաբեկ դատարանի գործառույթները, ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի վիճելի նորմի մեկնաբանությունը եւ կիրառումը պետք է ապահովի վճռաբեկ բողոքի պարտադիր ընդունումն ու քննությունը բոլոր այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքի շրջանակներում վերաքննիչ դատարանը շահագրգիռ կողմի բողոքի քննության արդյունքներով կայացրել է առաջին աստիճանի դատարանի դատական ակտից փարբերվող՝ ըստ էության նոր, դատական ակտ: Նման մոտեցումը ոչ միայն կնպաստի դատական փոխյալ աստիճանի կողմից առավել ամբողջական նախադեպի ձեւավորմանը, այլեւ էապես կբարձրացնի արդարադատության արդյունավետությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նպաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահ-

մանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

22 դեկտեմբերի 2009 թվականի
ՄԴՈ-849

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՆՏ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ ՆՏ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 343 ՆՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

14 հունվարի 2010թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Նովիաննիսյանի (զեկուցող), Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող՝ Նայասարանի Նանրապետության մարդու իրավունքների պաշտպան Ա. Նարությունյանի, գործով որպես պարասխանող կողմ ներգրավված ՆՏ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՆՏ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի եւ 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «ՆՏ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՆՏ քրեական օրենսգրքի 343 հոդվածի 1-ին մասի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Նայասարանի Նանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ սահմանադրական դատարանում 08.06.2009թ. մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանի 10 նոյեմբերի 2009թ. թիվ ՄԴԱՌ-98 աշխատակարգային որոշմամբ գործի դատաքննությունը հետաձգվել էր մինչեւ 2009թ. դեկտեմբերի 1-ը՝ նախապես ելով վերսկսված գործի դատաքննությունը շարունակել բանավոր ընթացակարգով:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմողի եւ պարասխանող կողմի ներկայացուցչի բացատրությունները, հերազոպելով ՆՏ քրեական օրենսգիրքը եւ գործում առ-

կա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Նայասպանի Նանրապետության քրեական օրենսգիրքն ընդունվել է ՏՏ Ազգային ժողովի կողմից 2003թ. ապրիլի 18-ին, ՏՏ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003թ. ապրիլի 29-ին և ուժի մեջ է մտել 2003թ. օգոստոսի 1-ից:

ՏՏ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որը դրսևորվել է վկայի կամ փոփոխի կամ պաշտպանի դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելով կամ դատավորի կարգադրությանը չենթարկվելով կամ դատական նիստի կարգը խախտելով կամ այլ գործողություն կատարելով ևս վկայում է դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի մասին՝

պարժվում է փուզանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով»:

2. Դիմող կողմը նշում է, որ վիճարկվող նորմը որպես դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորող սուբյեկտ է դիտարկում միայն վկային, փոփոխին և պաշտպանին: Քրեական դատավարության մյուս մասնակիցները և մասնակցող անձինք նշված հանցակազմի սուբյեկտներ չեն: Նման մոտեցման արդյունքում վիճարկվող նորմն անհավասար դրության մեջ է դնում, մասնավորապես, պաշտպանին՝ դատավարության մյուս մասնակիցների համեմատ, քանի որ նույնպիսի արարքի համար պաշտպանը կարող է ենթարկվել քրեական հետապնդման, իսկ մեղադրողը և մյուսները՝ ոչ: Ներելաբար, «վիճարկվող նորմը, օբյեկտիվ և պարճառաբանված արդարացման բացակայության պայմաններում, անհավասար դրության մեջ է դնում դատավարության կողմերին՝ մեղադրանքի և պաշտպանության, խորականություն սահմանելով նրանց նկատմամբ իրավական վերաբերմունքի մեջ, և այդ հիմքով, ի թիվս այլոց, հակասում է ՏՏ - Սահմանադրության 14.1, 18 (1-ին և 2-րդ մասեր), 19 (1-ին մաս), 20 (1-ին և 2-րդ մասեր) հոդվածներին»:

Դիմող կողմը փաստարկում է նաև, որ վիճարկվող նորմը չի բավարարում իրավական օրենքին ներկայացվող՝ որոշակիության, հստակության և կանխատեսելիության պահանջները: Վիճարկվող նորմի անորոշությունն ու անհստակությունը, ըստ դիմողի, դրսևորվում է նրանում, որ դրանում օգտագործված հասկացությունների անորոշությունը (շեշտվում են «դատավորի կարգադրությանը չենթարկվել», «այլ գործողություններ», «դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանք» բառակապակցությունները) պայմաններ է ստեղծել վիճարկվող նորմի կամայական մեկնաբանման և կիրառման համար, ինչպես նաև վիճարկվող նորմը հնարավորություն չի ընձեռում հստակորեն սահմանազգայել ՏՏ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքները ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ -

հողվածով, «Փաստաբանության մասին» ՆՏ օրենքի 39-րդ հոդվածով նախատեսված եւ իրավական այլ հետեւանքներ առաջացնող գործողություններից:

3. Պատասխանող կողմը նշում է, որ վիճարկվող նորմում չմատչանշված՝ դատարարության մասնակիցների նկատմամբ պատասխանատվության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորված են ՆՏ դատական օրենսգրքով եւ «Դատախազության մասին» ՆՏ օրենքով: Ըստ պատասխանողի՝ ՆՏ դատական օրենսգրքի համապատասխան նորմերի եւ «Դատախազության մասին» ՆՏ օրենքի 46 եւ 47-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից չի բխում, որ վիճարկվող հոդվածն անհավասար պայմաններ է ստեղծում դատարարության մասնակիցների համար: Դիմողի այն փաստարկների առնչությամբ, որ վիճարկվող նորմի առանձին արտահայտություններ առաջացնում են իրավական անորոշություն, պատասխանողը նշում է, որ իրավական որոշակիության սկզբունքը չի նշանակում, որ օրենքները պետք է լինեն բացարձակ կողմնորոշիչ այս կամ այն վարքագիծը դրսևորելու համար: Եթե որեւէ նորմ ձեւակերպված չէ բացարձակ որոշակիությամբ, դա չի կարող բավարար պայման հանդիսանալ ՆՏ Սահմանադրությամբ սահմանված իրավական պետության սկզբունքին հակասելու համար:

Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող նորմի «...իրավական անորոշությունը հնարավոր չէ օրենքով միանշանակ վերացնել, քանի որ չեն կարող նախատեսվել բոլոր այն իրավիճակները՝ գործողությունները եւ անգործությունները, որոնք կդիտարկվեն՝ որպես «դատարանի նկատմամբ ակնհայտ անհարգալից վերաբերմունք»»:

Միաժամանակ, պատասխանողը գտնում է, որ վիճարկվող նորմը կատարելագործման անհրաժեշտություն ունի:

4. Վիճարկվող նորմով օրենսդիրը որպես հանցագործություն է որակել դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը՝ դրանում նշված դրսևորումներով, նկատի ունենալով արդարադատության անկախ, անկողմնակալ (անկաշկանդ) իրականացման սահմանադրաիրավական պահանջն ու այն օրենքով (այդ թվում՝ քրեաիրավական) երաշխավորելու կարեւորությունը: Օրենսդիրը նշված արարքը՝ դրա հանրորեն վրանգավորության ուժով, դիտարկելով որպես հակաիրավական՝ քրեական օրենքով նախատեսվող եւ քրեորեն պատժելի արարք, ՆՏ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի շրջանակներում այդ հանցագործության սուբյեկտ է համարել միայն վկային, փութոդին եւ պաշտպանին, իսկ 2-րդ եւ 3-րդ մասերի շրջանակներում՝ ցանկացած անձի, որը դրսևորվել է դատաբանության մասնակիցներին կամ դատավորին վիրավորելով:

Նաշվի առնելով, որ վիճարկվող նորմի (ՆՏ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի) դիսպոզիցիայում նախատեսված արարքը կարող է կատարվել ոչ միայն դրանում նշված անձանց, այլ նաեւ քրեական դատարարության այլ մասնակիցների կողմից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործնականում հնարավոր է դառնում մի իրավիճակ, երբ վերջիններս կատարելով քրեական օրենսգրքով նախատեսված արարք՝ չեն ենթարկվում քրեաիրավական համարժեք ներգործության:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակարգավորմամբ ըստ էության ոչ համաչափ վերաբերմունք է դրսևորվում դատավարության մասնակիցների նկատմամբ:

Սահմանադրական դատարանն ընդունում է, որ, ինչպես նշվեց, օրենսդրի հայեցողության շրջանակներում է այս կամ այն արարքի քրեականացումը: Այդուամենայնիվ, եթե օրենսդիրն այս կամ այն արարքը՝ դրա հանրորեն վրանգավորության ուժով, նախապես է քրեական օրենսգրքում որպես քրեորեն դատապարտելի արարք, ապա այդ արարքը կատարելու արգելքը պետք է սահմանվի բոլոր այն հնարավոր սուբյեկտների համար, ովքեր գործնականում կարող են կատարել տվյալ հանցագործությունը: Նախապես, միեւնույն օբյեկտի նկատմամբ ուրնձգող, համեմատելի վիճակում գտնվող անձանց հանդեպ պետության կողմից կորսետորվի ոչ հիմնավոր փարբերակված վերաբերմունք՝ ի խախտումն օրենքի առջեւ բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի:

Սահմանադրական դատարանը գտնում է նաեւ, որ հանցագործության սուբյեկտների կազմի չհիմնավորված սահմանափակումը թույլ չի փախն նաեւ լուծել ՏՊ քրեական օրենսգրքի, մասնավորապես՝ վերջինիս 2-րդ հոդվածում ամրագրված, խնդիրները: Բացառելով վիճարկվող նորմում նշված արարքը թույլ տված առանձին անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը՝ չի ապահովվում այդ արարքով ուրնձգվող արժեքները լիարժեք պաշտպանելու եւ այդ արարքը կանխելու՝ քրեական օրենսգրքով սահմանված խնդրի լուծումը: Մյուս կողմից՝ խախտվում են դատավարության մասնակիցների, մասնավորապես՝ կողմերի, իրավահավասարության, դատավարության մրցակցության, հեղեւապես՝ նաեւ Սահմանադրության 19-րդ հոդվածով նախապեսված արդար դատաքննության սկզբունքները, քանի որ կողմերի համար դատավարական գործընթացին մասնակցելու հավասար պայմաններ ու հնարավորություններ չեն երաշխավորվում: Դրանից չի բխում, որ վիճարկվող դրույթում նշված սուբյեկտների առնչությամբ դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի դրսևորումը քրեորեն պատժելի արարք դիտելն ինքնին իրավաչափ ու սահմանադրական չէ: Խնդրահարույցը դատավարության այլ մասնակիցների համարժեք գործողություններն այդպիսին չդիտարկելն է:

5. ՏՊ սահմանադրական դատարանը հարկ է համարում վեճի առարկան դիտարկել նաեւ հանցագործության հատուկ սուբյեկտի հասկացության, հատուկ սուբյեկտի որոշման հիմքում ընկած չափանիշների փեսանկյունից: ՏՊ քրեական օրենսգրքի ուսումնասիրությունը վկայում է, որ հատուկ սուբյեկտի որոշումն արտահայտում է կոնկրետ փեսակի հանցագործությունների առանձնահատկությունները, դրանց հանրորեն վրանգավորության աստիճանը: Այս կամ այն անձին որպես տվյալ հանցագործության հատուկ սուբյեկտ ճանաչելը պայմանավորվում է երանով, որ իրենց պաշտոնական կամ այլ դրության հիմքով նրանք կարող են կատարել հանցագործություններ, որոնք այլ անձինք կատարել չեն կարող: Այսինքն՝ տվյալ հանցագործության բնույթը եւ այն կատարելու հնարավորությունն են այն չափանիշները, որոնք օբյեկտիվորեն, անկախ օրենսդրի կամքից, կանխորո-

շում են հատուկ սուբյեկտի շրջանակը: Այս չափանիշները ենթադրում են, որ ԿԿԿ հանցակազմի հատուկ սուբյեկտի շրջանակն անխուսափելիորեն պետք է համընկնի բոլոր այն անձանց շրջանակի հետ, ովքեր իրենց պաշտոնական կամ այլ դրության ուժով ունակ են կատարել ԿԿԿ արարքը: Մասնավորապես, առանձնացվում են հատուկ սուբյեկտի որոշման հետեյալ հատկանիշները. իրավական կարգավիճակը, ժողովրդագրական հատկանիշը, մասնագիտական պարտականությունները, կատարած աշխատանքի բնույթը, արդարադատության բնագավառում պետության եւ քաղաքացիների միջև հարաբերությունները եւ այլն: ՏՃ քրեական օրենսգրքի՝ վիճարկվող նորմը ներառող՝ «Արդարադատության դեմ ուղղված հանցագործությունները» վերաբերությամբ 31-րդ գլխում ներառված մյուս բոլոր հանցակազմերի ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսդիրն առաջնորդվել է հանցագործության հատուկ սուբյեկտի որոշման վերոհիշյալ օբյեկտիվ չափանիշներով՝ յուրաքանչյուր հանցակազմի դեպքում հատուկ սուբյեկտի կազմում ներառելով բոլոր այն անձանց, ովքեր հատուկ սուբյեկտին բնորոշ լրացուցիչ հատկանիշների ուժով կարող են կատարել ԿԿԿ հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող արարքը: Մինչդեռ վիճարկվող նորմում օրենսդիրը, ի տարբերություն արդարադատության դեմ ուղղված մյուս հանցագործությունների, շեղվել է նշված փրամաբանությունից՝ սահմանափակելով հատուկ սուբյեկտի շրջանակը, եւ այդ շրջանակից բացառելով նույն արարքը կատարելու ունակ ու միեւնույն գործընթացին մասնակից (դատավարական որոշակի կարգավիճակ ունեցող) այլ անձանց:

6. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմի սահմանադրականության հարցը քննարկել նաեւ ՏՃ քրեական օրենսգրքում եւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՏՃ օրենսգրքում կատարված փոփոխությունների համապետություն:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նախ ընդգծել, որ մինչեւ վիճարկվող նորմի գործող խմբագրությամբ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 16.12.2005թ. ՆՕ-33-Ն ՏՃ օրենքով կատարված փոփոխությունը, ՏՃ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի՝ 2003թ. ապրիլի 18-ի խմբագրությամբ փոփոխված սահմանում էր. «Նոդված 343. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը.

1. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որը դրսևտրվել է դատաքննության մասնակիցներին վիրավորելով՝

պատժվում է փոզանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

2. Նույն արարքը, որը դրսևտրվել է պաշտոնեական լիազորությունների իրականացման առնչությամբ դատավորին վիրավորելով՝

պատժվում է փոզանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով կամ ուղղիչ աշխատանքներով՝ մեկից երկու փարի ժամկետով կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով»:

«ՏՏ քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կապարելու մասին» 16.12.2005թ. ՆՕ-33-Ն ՏՏ օրենքի 5-րդ հոդվածով օրենսգրքի 343-րդ հոդվածը շարադրվեց գործող խմբագրությամբ: Նոդվածի նախորդ խմբագրությամբ Կրեմլի առաջին եւ երկրորդ մասերը վերաշարադրվեցին որպես 2-րդ եւ 3-րդ մասեր, իսկ վիճարկվող նորմն ամրագրվեց որպես հոդվածի 1-ին մաս: Օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ վիճարկվող նորմի եւ հոդվածի 2-րդ ու 3-րդ մասերի ուսումնասիրությունը վկայում է, որ, ի փարբերություն վիճարկվող նորմի, այդ մասերում ամրագրված հանցակազմերում որեւէ հապուկ սուբյեկտ չի շեշտադրվում՝ ապահովելով բոլոր այն անձանց քրեական պարասխանարվությունը, որոնց կողմից՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը դրսետրվում է դատավարության մասնակիցներին կամ դատավորին վիրավորելու ձեռով: Փաստորեն փարբերակված մոտեցում է ցուցաբերվել դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի փարբեր դրսետրումների առնչությամբ՝ մի դրսետրման դեպքում սահմանափակելով հապուկ սուբյեկտի շրջանակը, մյուսների դեպքում որեւէ կերպ չսահմանափակելով այն:

Սահմանադրական դատարանն այս առնչությամբ հարկ է համարում նաեւ արձանագրել, որ միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ որպես կանոն, այն երկրներում, որպէր դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքն առաջացնում է քրեաիրավական ներգործություն, քրեորեն դատապարտելի են համարվում դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի միայն այն դրսետրումները, որոնք համադրելի են ՏՏ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում նախատեսված արարքների հապկանիշների հետ: Ինչ վերաբերում է դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի այն դրսետրմանը, որը սահմանված է վիճարկվող նորմի դիսպոզիցիայում, ապա այն, որպես կանոն, միջազգային պրակտիկայում քրեականացված չէ:

Սինչեւ «ՏՏ քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կապարելու մասին» 16.12.2005թ. ՆՕ-33-Ն ՏՏ օրենքով ՏՏ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նկարագրված արարքի քրեականացումը, այդ արարքը, որպես վարչական իրավախախտում, նախատեսված էր Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՏՏ օրենսգրքի 206.1-րդ հոդվածում: Վերջինիս (02.09.93թ. խմբագրությամբ) դիսպոզիցիան նախատեսում էր. «Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որն արտահայտվել է **վկայի, փուժողի, հայցվորի, պատասխանողի** դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու մեջ, կամ էլ նախագահողի **կարգադրությանը նշված անձանց եւ այլ քաղաքացիների** չենթարկվելու կամ դատական նիստի կարգը խախտելու մեջ, հավասարապես նաեւ **որեւէ մեկի կողմից այնպիսի գործողություններ ձեռնարկելը**, որոնք վկայում են բացահայտ արհամարհանքը դատարանի, կամ էլ դատարանում սահմանված կանոնների նկատմամբ՝ առաջացնում են...»: ՏՏ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՏՏ օրենսգրքի 206.1-րդ հոդվածն ուժը կորցրել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՏՏ օրենսգրքում փոփոխություններ կապարելու մասին» 16.12.2005թ. ՆՕ-32-Ն ՏՏ օրենքով, ինչը պայմանավորված է եղել այն փաստով, որ նույն օրն ընդունված՝ «ՏՏ քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կապարելու մասին» 16.12.2005թ. վերոհիշյալ ՆՕ-33-Ն ՏՏ օրենքով նշված ա-

րարքը քրեականացվել է: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՏՏ օրենսգրքի 206.1-րդ հոդվածի եւ ՏՏ քրեական օրենսգրքի վիճարկվող դրույթի համեմատական վերլուծությունը վկայում է, որ, ի տարբերություն վիճարկվող նորմի, նույն արարքի համար նախկինում վարչական պատասխանատվություն սահմանած նորմը դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի այնպիսի դրսևորումների դեպքում, ինչպիսիք են դատավորի կարգադրությանը չենթարկվելը, դատական նիստի կարգը խախտելը կամ դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի մասին վկայող այլ գործողություն կատարելը, սուբյեկտների կազմի որեւէ սահմանափակում չէր նախատեսում: Ինչ վերաբերում է դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորմանը՝ դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու ձեռով, սպա այդ արարքի համար վարչական պատասխանատվություն սահմանվում էր **վկայի, փուժողի, հայցվորի, պատասխանողի** համար: Իսկ վիճարկվող նորմով էապես փոխվել է այդ կազմը եւ դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու համար պատասխանատվություն սահմանված է **վկայի, փուժողի, պաշտպանի** նկատմամբ:

Վերոհիշյալ համեմատական վերլուծությունը վկայում է, որ խնդրո առարկա վարչական իրավախախտումը քրեականացնելու գործընթացում չի սպառնովել համարժեք վերաբերմունք իրավախախտման բոլոր իրավահավասար սուբյեկտների նկատմամբ: Վարչական իրավախախտումը քրեականացվել է միայն այդ իրավախախտման սահմանափակ թվով սուբյեկտների նկատմամբ՝ փոփոխելով նրանց կազմը: Ավելին, հաշվի չի առնվել վարչական այդպիսի իրավախախտման կրկնակի (կամ բազմակի, առավել հանրավրանգ եղանակով) կատարումը՝ որպես արարքը քրեորեն պատժելի համարելու օբյեկտիվ անհրաժեշտություն:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար պատասխանատվություն սահմանող նախկին եւ գործող օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է նաեւ, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՏՏ օրենսգրքի 206.1-րդ հոդվածի ուժը կորցնելու եւ ՏՏ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասում վիճարկվող դրույթի ամրագրման արդյունքում վերջինում նշված սահմանափակ թվով սուբյեկտների շրջանակից դուրս գրվող սուբյեկտների նկատմամբ տեւական ժամանակ պատասխանատվության որեւէ միջոց ընդհանրապես նախատեսված չի եղել: Այսպես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՏՏ օրենսգրքի 206.1-րդ հոդվածն ուժը կորցրել է 2006թ. փետրվարի 4-ին, նույն օրն ընդունված քրեական օրենսգրքի հոդվածով՝ նախատեսված արարքի դեպքում կիրառելի է համարվել քրեական պատասխանատվություն միայն վկայի, փուժողի եւ պաշտպանի նկատմամբ: Սկսած 2007թ. մարտի 7-ից, ՏՏ քրեական դատավարության եւ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում (համապատասխանաբար՝ 314.1 եւ 115-րդ հոդվածներ) կատարված փոփոխությունների արդյունքում ամրագրվել է դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորող անձանց պատասխանատվության ենթարկելու դատարանի լիազորությունը: Իսկ ՏՏ դատական օրենսգիրքը, որի 63-րդ հոդվածով սահմանվեցին դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար դատական սանկցիաները՝ գրեթե բառացիորեն կրկնելով քրեական դատավա-

րության օրենսգրքի դրույթները, ուժի մեջ է մտել 2007թ. մայիսի 18-ին: Բացի դրանից, եթե ՆՃ քրեական դատավարության եւ ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում կատարված փոփոխությունների արդյունքում հեղափոխում նախատեսվեց պատասխանատվություն քաղաքացիական եւ քրեական դատավարության շրջանակներում դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար, ապա նույն արարքը, որը դրսևորվում է սահմանադրական դատավարության շրջանակներում, օրենքով պատասխանատվության որևէ միջոց նախատեսված չէ: «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝ դատական նիստում կարգը խախտելու դեպքում սահմանադրական դատարանն իրավունք ունի անհրաժեշտության դեպքում նշանակելու փոխարինող՝ օրենքով սահմանված կարգով եւ չափով, ինչը սակայն որևէ օրենքով նախատեսված չէ:

Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաեւ ՆՃ Ազգային ժողովի կողմից «ՆՃ քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 16.12.2005թ. ՆՕ-33-Ն ՆՃ օրենքի եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՃ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 16.12.2005թ. ՆՕ-32-Ն ՆՃ օրենքի ընդունման գործընթացին: «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներից ելնելով օրենսդրական փոփոխության ընթացակարգի ուսումնասիրությունը վկայում է, որ ՆՃ Ազգային ժողովում նման փոփոխության հիմնավորումն ու փաստացի փոփոխությունը համաչափելի չեն, չկա սուբյեկտների կազմի փոփոխության որևէ հիմնավորում, չի ապահովվել միեւնույն հոդվածի (343-րդ հոդված) փոփոխման մասերի համակարգային առումով փոխկապակցվածությունը: Այդ օրենքների նախագծերի քննարկումների եւ ընդունման անհրաժեշտության հիմնավորումների ուսումնասիրությունը վկայում է, որ այդ օրենքներով կատարված փոփոխությունները հիմնավորվել են բացառապես վարչական կալանքի ինստիտուտի վերացման անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով ՆՃ Սահմանադրության 16, 32-րդ հոդվածների պահանջները: Սակայն այդ եւ հեղափոխում կատարված փոփոխությունների համադրումից հետեւում է, որ վերոհիշյալ օրենսդրական լուծումները պարունակում են ներքին հակասություններ, քանի որ դրանց ընդունման արդյունքում՝ մի կողմից արարքը քրեականացվել է որոշակի սուբյեկտների նկատմամբ, մյուս կողմից՝ դադարել է, թեկուզ որոշ ժամանակահատվածում, հանրորեն վրանգավոր համարվել այլ սուբյեկտների առնչությամբ: Չի դրսևորվել նաեւ համակարգված մոտեցում, մասնավորապես՝ հաշվի առնելու, օրինակ, դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու դեպքում հարկադրանքի կիրառման հնարավորությունը, միեւնույն արարքը կրկնվելու դեպքում այլ սանկցիա կիրառելու անհրաժեշտությունը եւ այլն:

7. Ինչպես նշվեց, դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար պատասխանատվության միջոցներ են սահմանված նաեւ ՆՃ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածում, ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածում, ՆՃ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածում: Վերջիններիս համաձայն՝ դատարանն իրավասու է պատասխանատվության ենթարկելու դատավարության

մասնակիցներին, գործին մասնակցող անձանց եւ դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևտրելու, նիստի բնականոն ընթացքին խոչընդոտելու, իրենց դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում: Այդպիսիք են՝ նախագուշացումը, նիստերի դահլիճից հեռացնելը, դատական փուզանքը, դատախազին կամ փաստաբանին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար՝ գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատի դիմելը: «Փաստաբանության մասին» ՆՃ օրենքի 39-րդ հոդվածը, իր հերթին, որպես փաստաբանին կարգապահական պարտականությունների ենթարկելու հիմքեր է նախատեսում այդ օրենքի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի եւ Փաստաբանների պալատի կանոնադրության պահանջների խախտումը, մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը: «Դատախազության մասին» ՆՃ օրենքի 46-րդ հոդվածը որպես դատախազին կարգապահական պարտականությունների ենթարկելու հիմք է սահմանում ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելը, իր լիազորություններն իրականացնելիս օրենքը կոպիտ կամ պարբերաբար խախտելը, «Դատախազի վարքագծի կանոնագրքի» պահանջների էական խախտումները:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ինչպես ՆՃ դատական օրենսգրքի 63-րդ եւ ՆՃ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածներում նշված վերոհիշյալ գործողությունները, այնպես էլ ՆՃ քրեական օրենսգրքի վիճարկվող նորմում նշված գործողություններն ըստ էության համարժեք գործողություններ են, դրանք կարող են կատարվել ուղղակի դիտարկությամբ, եւ վիճարկվող նորմում բացակայում է հանցակազմի որեւէ հատկանիշ, որը հնարավորություն կտա դրանով նախատեսված հակաիրավական արարքը փարանշարել ՆՃ դատական օրենսգրքի 63-րդ եւ ՆՃ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածներում նշված համարժեք իրավախախտումներից:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՆՃ դատական օրենսգրքի 63-րդ եւ ՆՃ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածներում նշված իրավախախտումների եւ վիճարկվող նորմում նշված հանցակազմի միջեւ էական փարբերությունների բացակայության պայմաններում անձը գրկվում է իր վարքագծի իրավական հետեանքները կանխատեսելու հնարավորությունից, ինչը չի բխում օրենքի կանխատեսելիության եւ որոշակիության սկզբունքներից:

Ավելին, նման պայմաններում իրավակիրառողի կողմից դատական սանկցիաների եւ քրեաիրավական ներգործության միջոցի միջեւ ընտրության հարցում կամայական մտրեցման նախադրյալներ են սրելով: Վերլուծությունը վկայում է, որ, մի կողմից, ՆՃ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 եւ 153-րդ (բերման ենթարկելը), ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ (ինչպես նաեւ, օրինակ, 44-րդ հոդվածի 5-րդ մաս), ՆՃ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածների, սյուս կողմից՝ ՆՃ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի առկայությունն իրավական առումով

առնվազն խնդրահարույց են դարձնում ՏՏ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի ներկայիս ձեւակերպման գոյությունն ընդհանրապես:

Ընդհանրապես փվյալ հիմնախնդրի իրավակարգավորման հարցում չկա հստակ համակարգային մոտեցում ՏՏ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի, ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի, ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի, ՏՏ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի, ինչպես նաեւ փվյալ հարցով վարչական ու սահմանադրական դատավարության իրավակարգավորումների միջեւ:

Անդրադառնալով դիմողի կողմից մատնանշված՝ վիճարկվող նորմում «դատավորի կարգադրությանը չենթարկվելով» ձեւակերպման անորոշության վերաբերյալ փաստարկին՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ, նախ՝ անհրաժեշտ է պարզաբանել վիճարկվող նորմում նշված կարգադրության բնույթը՝ քրեադատավարական մյուս նորմների համադրությամբ:

ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը որպես պաշտպանի դատավարական պարտականություն է նախատեսում ոչ թե պարզապես դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի կարգադրություններին, այլ **օրինական կարգադրություններին** ենթարկվելը:

Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետը որպես անձին ազատությունից զրկելու հիմք է դիտարկում ոչ թե պարզապես դատարանի կարգադրությանը, այլ դատարանի **օրինական կարգադրությանը** չենթարկվելը կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակը:

Ներպետական եւ միջազգային իրավական վերոհիշյալ նորմների վերլուծությունից բխում է, որ վիճարկվող նորմում «դատավորի կարգադրությանը չենթարկվելով» ձեւակերպման մեջ «կարգադրություն» եզրույթի ներքո ընկալվում է դատավորի օրինական կարգադրությունը, այսինքն՝ դատավորի այնպիսի կարգադրություն, որն ուղղված է դատավարության մասնակցի կողմից՝ վերջինիս համար օրենքով սահմանված իր պարտականության կատարման ապահովմանը: Մահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառողը պետք է ելնի վիճարկվող նորմում «դատավորի կարգադրությանը չենթարկվելով» ձեւակերպման նշված ընկալումից: Այսինքն՝ դատավորի կարգադրությանը չենթարկվելու հիմքով վիճարկվող նորմում նշված սուբյեկտները կարող են պարասխանավորության ենթարկվել, եթե չեն կատարում դատավորի այն կարգադրությունը, որն օրինական է եւ ուղղված այդ սուբյեկտների կողմից՝ օրենքով սահմանված իրենց դատավարական պարտականությունները կատարելու ապահովմանը: Այսուհանդերձ, «օրինական կարգադրություն» եզրույթն առավել հստակ է եւ խնդիր չի առաջացնում նաեւ կարգադրության օրինականությունը սահմանված կարգով վիճարկելու հնարավորության առումով:

Անդրադառնալով դիմողի կողմից մատնանշված՝ վիճարկվող նորմում «այլ գործողություն կատարելով» ձեւակերպման անորոշությանը՝ սահմանադրական դատարանը կարեւորում է այդ գործողությունների բնույթի պարզաբանման հարցը: Այդ նպատակով սահմանադրական դատարանը հարկ է համարում խնդրո առարկա ձեւակերպումը դի-

տարկել վիճարկվող նորմում «վկայում է դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի մասին» ձեռնկերպման համարեքսություն: Նման մտրեցման պարագայում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

1) ՆՏ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի խնդիրը չէ «այլ գործողություն» հասկացության բովանդակության մեջ ներառվող բոլոր հնարավոր դեպքերի թվարկումը: Այդ հոդվածի առարկան է քրեական պատասխանատվություն սահմանելը բացառապես այնպիսի գործողությունների համար, որոնք վկայում են դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի մասին,

2) որպես իրավակիրառողի կամայական մտրեցումը բացառող երաշխիք է հանդիսանում այն, որ ՆՏ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի ուժով սահմանագրված են փարբեր բնույթի գործողություններն այն գործողություններից, որոնք պարունակում են բացահայտ արհամարհանք դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ,

3) «դատական նիստի կարգ» հասկացության բովանդակությունը բացահայտված է ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 314-րդ հոդվածում: Վիճարկվող նորմի կիրառման գործընթացում «դատական նիստի կարգ» հասկացության ներքո պետք է ընկալել բացառապես այն կարգը, որը սահմանված է ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 314-րդ հոդվածում: Ինչ վերաբերում է «արհամարհանք» հասկացության բովանդակությանը, ապա ինչպես քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում օգտագործված «վիրավորանք» հասկացությունը, այս հասկացությունը եւս յուրաքանչյուր դեպքում իրավակիրառողի կողմից գնահատման ենթակա հասկացություն է:

8. Գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ դատավարության կողմը փորձել է իր նկատմամբ կիրառման ենթակա՝ ՆՏ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության հարց բարձրացնել իր քրեական գործի դատական քննության ընթացքում՝ միջնորդելով դատարանին նշված նորմի սահմանադրականության հարցը որոշելու վերաբերյալ խնդրանքով դիմել սահմանադրական դատարան: Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանն իր՝ 09.12.2008թ. որոշմամբ մերժել է դիմողի՝ սահմանադրական դատարան դիմելու եւ գործի վարույթը կասեցնելու մասին միջնորդությունը՝ պարզառաբանելով, որ **«Նշված օրենքը չի հակասում ՆՏ Սահմանադրության դրույթներին**, քանի որ ինչպես դատավորի, այնպես էլ դատախազի կողմից կատարվող ոչ օրինաչափ գործողությունները եւ դրանց խախտման հետեւանքով առաջացող պատասխանատվության հիմքերը կարգավորվում են ՆՏ «Դատական օրենսգրքով» եւ «Դատախազության մասին» ՆՏ օրենքով»: Միջնորդության մերժումը կամ ընդունումն ընդհանուր իրավասության դատարանի խնդիրն է: Մակայն, ըստ էության, օրենքի նորմի սահմանադրականության հարց լուծելը, որոշման մեջ նման եզրահանգում ներկայացնելն անհամարելելի են ՆՏ Սահմանադրության 93-րդ հոդվածի պահանջների հետ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասփանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասփանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Նայասփանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՆՏ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասը՝ այնքանով, որքանով կիրառելի չէ նաեւ դատավարության այլ մասնակիցների նկատմամբ, ճանաչել Նայասփանի Նանրապետության Սահմանադրության 14.1-րդ հոդվածի 1-ին մասի եւ 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Նայասփանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ**

*14 հունվարի 2010 թվականի
ՄԴՈ-851*

ՆԱԼՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱԳԻԿ ՉԱՆԳԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 394-ՐԴ ՆՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԵԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դափարանը՝ կազմով.

Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Մ. Թովուզյանի, Վ. Նովիանիսյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի (գեկուցող), համաձայն ՆՏ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դափարանի մասին» ՆՏ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Գագիկ Չանգլյանի դիմումի հիման վրա՝ Նայասարանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը: Գործի քննության առիթը քաղաքացի Գ. Չանգլյանի՝ 04.09.2009թ. ՆՏ սահմանադրական դափարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի հաղորդումը, դիմող եւ պարասխանող կողմերի գրավոր բացաբությունները, հեղազոտելով օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դափարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Նայասարանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը ՆՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՆՏ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի՝ վերաքննիչ դափարանի լիազորությունները սահմանող 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն ամրագրում է վերաքննիչ դափարանի հետեյալ լիազորությունը. «1. Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում

վերաքննիչ դատարանը՝ ...2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով կայացվում է գործն ըստ էության լուծող դատական ակտ կամ գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մտնում է օրինական ուժի մեջ»:

2. Գործի դատավարական նախապարմությունը հանգում է հետեյալին: Դիմողը Տավուշի մարզի առաջին ասյանի դատարանի 28.11.2007թ. դատավճռով մեղավոր է ճանաչվել ՆՏ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին և 34-105 հոդվածի 1-ին մասերով՝ դատապարտվելով ազատազրկման՝ 7 փարի ժամկետով: Դատավճիռը բողոքարկվել է ինչպես դիմողի, այնպես էլ փուժողի իրավահաջորդի և դատախազի կողմից: ՆՏ վերաքննիչ քրեական դատարանն իր՝ 28.07.2008թ. դատավճռով դիմողի վերաքննիչ բողոքը մերժել է, միաժամանակ բավարարել դատախազի և փուժողի իրավահաջորդի վերաքննիչ բողոքները: Վերաքննիչ դատարանը, մասնակիորեն բեկանելով առաջին ասյանի դատարանի դատավճիռը, դիմողին մեղավոր է ճանաչել ՆՏ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով և 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով ու դատապարտել ազատազրկման 13 փարի ժամկետով:

Դիմողի կողմից վերաքննիչ դատարանի դատավճիռը բողոքարկվել է ՆՏ վճռաբեկ դատարան: Վերջինս իր՝ 2009թ. մարտի 6-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

3. Դիմողը գտնում է, որ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում ամրագրված դրույթը հակասում է ՆՏ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթին: Ըստ դիմողի՝ այդ հակասությունը դրսևորվում է նրանում, որ եթե վերաքննիչ դատարանը կիրառելով ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով իրեն վերապահված լիազորությունը՝ բեկանում է առաջին ասյանի դատարանի դատավճիռը և կայացնում առաջին ասյանի դատարանի դատավճռից էսպես փարբերվող նոր դատավճիռ, սպա նման իրավիճակում անձը զրկվում է իր նկատմամբ կայացված դատավճիռը բողոքարկելու՝ ՆՏ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավունքն իրացնելու հնարավորությունից: Ըստ դիմողի՝ նման իրավիճակի հակասահմանադրականությունն առավել ակնհայտ է, երբ անձն առաջին ասյանի դատարանի կողմից արդարացվել է, սակայն մեղավոր է ճանաչվել վերաքննիչ դատարանի դատավճռով:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ վերաքննիչ դատարանի՝ վիճարկվող լիազորությունն ամբողջովին բխում է ՆՏ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթի բովանդակությունից: Ավելին, այդ լիազորության իրականացումն ուղղված է Սահմանադրության 18 և 19-րդ - հոդվածներով սահմանված դատական պաշտպանության և արդար դատաքննության ի-

րավունքների արդյունավետ իրացման երաշխիքների, դատական գործընթացի լիարժեքության ու դատական իշխանության բնականոն գործունեության ապահովմանը:

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ՏՏ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ անձի՝ իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտել ՏՏ Սահմանադրության 6-րդ գլխում սահմանված՝ ՏՏ դատական համակարգի կառուցվածքի, այդ համակարգում յուրաքանչյուր դատական արյանի սահմանադրաիրավական կարգավիճակի եւ գործառույթների, ինչպես նաեւ նշված իրավունքի կապակցությամբ Նայաստանի Նանրապետության սպանձնած միջազգային պարտավորությունների համարեքստում:

Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության՝ քրեական գործերով բողոքարկման իրավունքն ամրագրող 2-րդ հոդվածով Կոնվենցիայի մասնակից պետությունները, այդ թվում՝ Նայաստանի Նանրապետությունը, պարտավորություն են սպանձնել հանցագործություն կատարելու համար դատարանի կողմից դատապարտված յուրաքանչյուր անձի համար երաշխավորել **դատապարտումը կամ նշանակված պարիժը** վերադաս դատական արյանի կողմից վերանայելու հնարավորություն: «Դատապարտումը կամ նշանակված պարիժը» ձեւակերպումը նշանակում է, որ նշված կոնվենցիոն դրույթը չի պարտավորեցնում երաշխավորել միաժամանակ եւ՝ դատապարտման, եւ՝ նշանակված պարիժի վերանայման հնարավորություն: Այսինքն՝ եթե անձը մեղավոր է ճանաչվել առաջադրված մեղադրանքով, ապա վերանայման իրավունքը կարող է սահմանափակվել միայն պարիժի կամ միայն դատապարտման վերանայման հնարավորությամբ: Քրեական գործերով բողոքարկման իրավունքը սահմանող կոնվենցիոն նշված դրույթը չի պահանջում նաեւ գործի ըստ էության վերանայում. վերանայումը կարող է լինել կամ իրավունքի հարցերով, կամ՝ եւ իրավունքի, եւ փաստի հարցերով միաժամանակ: Կոնվենցիան որեւէ կերպ մասնակից պետություններին չի պարտավորեցնում սրեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ արյաններ: Յուրաքանչյուր մասնակից պետություն ազատ է որոշելու, թե դատական ակտի վերանայման իրավունքը կապահովվի վերաքննության, թե վճռաբեկության կարգով բողոքարկման միջոցով, դատական ակտի վերանայումը կսահմանափակվի միայն իրավունքի հարցերով, թե կներառի նաեւ փաստի հարցեր: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Կրոմբախ ընդդեմ Ֆրանսիայի (Krombach v. France) գործով վճռում նշվում է, որ պայմանավորվող կողմերին լայն հայեցողություն է փոխված այն հարցը որոշելու առումով, թե ինչ միջոցներով պետք է ապահովվի Կոնվենցիայի 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածում նշված վերանայման իրավունքը: Նշված հոդվածի պահանջն այն է, որ վերանայման իրավունքը պետք է առկա լինի անմիջակաևորեն եւ անկախ իշխանությունների հայեցողությունից:

Միաժամանակ, նշված 2-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է այն բացառությունները, որոնց կարող է ենթակա լինել 1-ին մասում ամրագրված՝ բողոքարկման իրա-

վունքը: Ըստ այդ մասում ամրագրված դրույթի՝ բողոքարկման իրավունքից կարող են բացառություններ արվել օրենքով սահմանված աննշան հանցագործությունների առնչությամբ կամ երբ րվյալ անձը դատապարտվել է բարձրագույն ապյանի կողմից, որը հանդես է եկել որպես առաջին ապյանի դատարան կամ **դատապարտվել է այդ անձի արդարացման դեմ բողոքի քննարկման արդյունքում:**

Կունվենցիայի 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածում ամրագրված դրույթների վերլուծությունը եւ Եվրոպական դատարանի համապարասխան նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը թույլ են րալիս եզրակացնել, որ քրեական գործերով բողոքարկման իրավունքի բովանդակությունը հանգում է նրան, որ քրեական գործով անձի դատապարտման կամ նշանակված պարտի վերանայման հնարավորությունը պեպք է ապահովվի առնվազն մեկ վերադաս ապյանում:

6. ՏՏ Սահմանադրության 92-րդ հոդվածով ամրագրվել է ընդհանուր իրավասության եռասրիճան դատական համակարգ: Սահմանադրական այս իրավակարգավորմանը համապարասխան՝ ՏՏ դատական օրենսգիրքը եւ քրեադատավարական ու քաղաքացիադատավարական օրենսգրքերը սահմանել են դատական ակտերի՝ վերադաս դատարանի կողմից վերանայման սահմաններն ու հիմքերը, վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների լիազորությունները:

Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի եւ հիմնավորումների սահմաններում (ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդված): Վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանն սրուգում է գործի փաստական հանգամանքների բացահայտման եւ քրեական օրենքի կիրառման ճշտությունը, ինչպես նաեւ գործը քննելիս եւ լուծելիս քրեական դատավարական օրենքի նորմերի պահպանումը:

Վերաքննիչ դատարանում, որպես կանոն, բողոքի քննության ժամանակ առաջին ապյանի դատարանում հաստատված փաստական հանգամանքներն ընդունվում են որպես հիմք: Սակայն այս կանոնից նախատեսվում է նաեւ բացառություն. վերաքննիչ դատարանը կարող է ինքնուրույն գնահատել այս կամ այն փաստական հանգամանքը, երբ բողոքում վիճարկվում է որեւէ փաստական հանգամանք, եւ վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացությանը, որ րվյալ փաստական հանգամանքի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ապյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ րվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստական հանգամանք կամ հաստատված չհամարելու ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքը: Վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանն սրուգում է նաեւ գործի փաստական հանգամանքների բացահայտման եւ քրեական օրենքի կիրառման ճշտությունը, ինչպես նաեւ գործը քննելիս եւ լուծելիս քրեական դատավարական օրենքի նորմերի պահպանումը: ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը վերաքննիչ դատարանի կողմից բեկանվում կամ փոփոխվում է, եթե թույլ է րրվել դատական սխալ, այն է՝

1) գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված դատարանի հեղեղությունները չեն համապատասխանում վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին:

2) ճիշտ չի կիրառվել քրեական օրենքը կամ Նայաստանի Նանրապետության միջազգային պայմանագիրը:

3) առկա է քրեադատավարական օրենքի էական խախտում:

4) դատավճռով նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը եւ ամբաստանյալի անձին:

Վերաքննության կարգով վերանայման առարկայի, վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանների, վերաքննիչ դատարանի կողմից ստորադաս դատարանի ակտի բեկանման հիմքերի ուսումնասիրությունը վկայում է, որ առաջին ապյանի դատարանի դատավճիռը վերաքննիչ դատարան բողոքարկելու միջոցով ապահովվում է ինչպես դատապարտումը, այնպես էլ պատիժը բողոքարկելու իրավունքի իրացումը, վերաքննիչ դատարանը, որպես կանոն, վերանայում է իրավունքի հարցերը, նաեւ առանձին բացառություններով փաստի հարցեր: Ելնելով նշվածից, ինչպես նաեւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերաքննիչ դատարանում առաջին ապյանի դատարանի կայացրած դատավճռի բողոքարկման հնարավորությունը գործում է անմիջականորեն, եւ քրեադատավարական օրենսդրությամբ վերաքննիչ դատարանին վերաքննիչ բողոքի քննության ընդունման հարցում որեւէ հայեցողական լիազորություն տրամադրված չէ՝ ՄՍՍՍ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՄՍՍՍ օրենսդրությունը հիմնականում երաշխիքներ ստեղծել է ինչպես ՄՍՍՍ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մասով, այնպես էլ Եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածով երաշխավորված՝ դատավճիռների վերանայման իրավունքի իրացման համար:

ՄՍՍՍ եռաստիճան դատական համակարգում նախատեսված է նաեւ վերաքննիչ դատարանի ընդունած դատական ակտերի բողոքարկման հնարավորությունը: ՄՍՍՍ վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիման վրա վերանայում է վերաքննիչ դատարանի ակտերը՝ իր սահմանադրաիրավական կարգավիճակի ու դատական համակարգում ունեցած գործառնական դերի շրջանակներում եւ վերջիններիս համապատասխան ՄՍՍՍ քրեադատավարական օրենսգրքում սահմանված՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի առկայության պայմաններում:

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՄՍՍՍ Սահմանադրության 20-րդ - հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավունքի իրացման հնարավորությունները պայմանավորված են դատական համակարգի կառուցվածքի առանձնահատկություններով եւ այդ համակարգում յուրաքանչյուր դատական ապյանի գործառնական դերով:

ՄՍՍՍ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դատավճիռների վերանայման իրավունքը դիտարկելով ՄՍՍՍ եռաստիճան դատական համակարգի կառուցվածքի առանձնահատկությունների, ինչպես նաեւ ՄՍՍՍ սրանձնած վերոհիշյալ միջազգային պարտավորությունների հետ համադրության մեջ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է

նրան, որ **քրեական մեղադրանքի որոշումը չի կարող սահմանափակվել միայն մեկ ապյանի դատարանի կողմից քրեական գործի քննության շրջանակներով**: Ներկա դատարանը, հաշվի առնելով առաջին ապյանի դատարանի կայացրած դատավճիռները վերաքննիչ դատարան բողոքարկելու՝ օրենքով սահմանված կարգն ու վերաքննիչ դատարանի լիազորությունները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ առաջին ապյանի դատարանի կայացրած դատավճիռների՝ վերաքննիչ դատարան բողոքարկման միջոցով իրացվում է վերադաս դատարանի կողմից անձի նկատմամբ կայացված դատավճռի վերանայման իրավունքը :

Ինչ վերաբերում է վճռաբեկության կարգով վերաքննիչ դատական ակտերի վերանայմանը, ապա վերջինս հանդես է գալիս որպես վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալը շփոթելու դատավարական երաշխիք, որի միջոցով վճռաբեկ դատարանն իրացնում է օրենքի միարեսակ կիրառությունն ապահովելու իր սահմանադրական գործառնությունը, եւ վճռաբեկության կարգով դատական ակտերի բողոքարկման դեպքում վերանայման իրավունքի իրացման հնարավորությունն իրավաչափորեն սահմանափակվում է վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակով եւ գործառնական դերով:

Սահմանադրական դատարանը, վերահաստատելով 2009թ. սեպտեմբերի 22-ի ՄԴՌ-832 որոշման մեջ ամրագրված իր այն դիրքորոշումը, որ պեղական ցանկացած մարմնի կարող է տրվել այս կամ այն լիազորությունը, որն անհրաժեշտ է նրա առջև դրված խնդիրները լիարժեք լուծելու համար, եթե դրանք համապատասխանում են տրվյալ մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակին եւ սահմանադրորեն ամրագրված ու երաշխավորված արժեքներին, ինչպես նաեւ հաշվի առնելով վերաքննիչ բողոքի հիման վրա առաջին ապյանի դատարանի դատական ակտի վերանայման առարկան եւ վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանները, գտնում է, որ վերաքննիչ դատարանին սույն գործով վեճի առարկա լիազորության տրամադրումը վերաքննիչ վարույթի տրամաբանության շրջանակներում է եւ միտված է վերաքննիչ դատարանի կողմից արդյունավետ արդարադատության իրականացման ապահովմանը: Սահմանադրական դատարանը գտնում է նաեւ, որ վերաքննիչ դատարանին վիճարկվող լիազորությունը վերապահելը նպատակ է հետապնդել կանխելու դատական շրջապտույտը: Նման լիազորության միջոցով դատական շրջապտույտի կանխումն իր հերթին հնարավորություն է ընձեռում երաշխավորել դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու սահմանադրաիրավական պահանջի իրացումը:

Միաժամանակ, հաշվի առնելով ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 399-րդ հոդվածի 2-րդ մասի նորմատիվ դրույթները՝ կապված վերաքննիչ բողոքի հիման վրա առաջին ապյանի դատարանի դատավճռով նախատեսվածից ավելի խիստ պարիժ նշանակելու վերաքննիչ դատարանի լիազորության իրականացման առանձնահատկության հետ, ինչպես նաեւ փաստելով դատախազի, քրոժողի իրավահաջորդի, նրա ներկայացուցչի եւ սույն գործով դիմողի վերաքննիչ բողոքների միաժամանակյա առկայության իրողությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեւ դիմողը ձեւականորեն իրացրել է ՏՏ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ -

մասում նախատեսված բողոքարկման իր իրավունքը, սակայն վերջինիս նկատմամբ կիրառվել է ավելի խիստ պատիժ, հետևաբար՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նման դեպքերում կիրառելի է ՆՆ ՍԴ 22.12.2009թ. ՍԴՈ-849 որոշմամբ արվահայրված իրավական դիրքորոշումը՝ նկարի ունենալով նաև, որ հիմնախնդիրը հետագա համայն իրավակարգավորման անհրաժեշտություն ունի:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 6-րդ - կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Նայասպանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ սույն որոշման մեջ արվահայրված իրավական դիրքորոշումների շրջանակներում համապատասխանում է Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

19 հունվարի 2010 թվականի
ՍԴՈ-852

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ԻՆՖՈՐՄԱՅԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՆԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊԻՔԻ 151 ԵՎ 152-ՐԴ ՆՈՒՎԱԾՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱԳԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

5 փետրվարի 2010թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Մ. Թոփուզյանի, Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմողի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Կ. Մեժլումյանի, պատասխանող կողմի՝ ՆՆ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՆ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ Նայասարանի Նանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 151 եւ 152-րդ հոդվածների՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության՝ 09.09.2009թ. ՆՆ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հեղափոխելով ՆՆ վարչական դատավա-

րության օրենսգիրքը, օրենսդրության այլ ակտեր եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007թ. նոյեմբերի 28-ին, ՀՀ Նախագահի կողմից այն ստորագրվել է 2007 թվականի դեկտեմբերի 10-ին եւ ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ «Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի քննության կարգը» վերաբերող 151-րդ հոդվածը սահմանում է.

«Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են օրենքով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություն ունեցող մարմինների եւ պաշտոնատար անձանց (այսուհետ՝ իրավասու մարմիններ) հայցադիմումների հիման վրա»:

Օրենսգրքի վիճարկվող 152-րդ հոդվածը սահմանում է.

«1. Ֆիզիկական, պաշտոնատար կամ իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին հայցադիմումը, ի լրումն սույն օրենսգրքի 72-րդ հոդվածով ներկայացվող պահանջների, պետք է նաեւ ներառի՝

1) վարչական իրավախախտման մասին արձանագրության կազմման համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման վայրը եւ ժամանակը.

2) վարչական իրավախախտման մասին արձանագրությունը կազմած անձի պաշտոնը, անունը, ազգանունը.

3) փեղեկություններ այն անձի մասին, որի նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտումների մասին արձանագրությունը.

4) այն օրենքի դրույթները, որոնք վարչական պատասխանատվություն են նախատեսում վարչական իրավախախտման մասին արձանագրության կազմման համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման համար.

5) դիմողի պահանջը վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

2. Դիմումին կցվում են վարչական իրավախախտման մասին արձանագրությունը եւ արձանագրությանը կցվող փաստաթղթերը»:

2. Գործի դատավարական նախապարմությունը հանգում է հետեւյալին. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ դիմող) հայցով դիմել է ՀՀ վարչական դատարան ընդդեմ «Երեւանի կառուցապարման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի եւ վերջինիս փնօրենի՝ ՊՈԱԿ-ի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետեւանք փեղեկավարություն փրամադրել պարտադրելու եւ ՊՈԱԿ-ի փնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջներով:

ՏՏ վարչական դատարանը 14.04.2009թ. որոշմամբ հայցադիմումը վարչական դատարանին ընդդառյա մասով՝ վարույթ է ընդունել, իսկ ՊՈԱԿ-ի փնտրենին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով՝ հայցադիմումի ընդունումը մերժել: Դիմողը վարչական դատարանի այս որոշումը բողոքարկել է: ՏՏ վարչական դատարանի 11.05.2009թ. որոշմամբ վարչական դատարանը բողոքը մերժել է: Նշված որոշումը բողոքարկվել է ՏՏ վճռաբեկ դատարան: Վերջինս իր՝ 12.08.2009թ. որոշմամբ մերժել է դիմողի վճռաբեկ բողոքը: Ինչպես վարչական դատարանի, այնպես էլ վճռաբեկ դատարանի որոշումներում այն դիրքորոշումն է արտահայտվել, որ ՏՏ վարչական դատարության օրենսգրքի 151 և 152-րդ հոդվածների համաձայն վարչական դատարանում վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործեր կարող են հարուցվել միայն օրենքով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություն ունեցող մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների հիման վրա:

3. Վիճարկվող դրույթների՝ ՏՏ Սահմանադրությանը չհամապատասխանելու առնչությամբ դիմողը բերում է մի շարք փաստարկներ: Նախկապես կարետրվում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՏՏ օրենսգրքի 189.7-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում պաշտոնատար անձանց կողմից տեղեկություն տալու իրենց պարտականությունը չկատարելու համար: Նույն օրենսգրքի 223-րդ հոդվածի համաձայն՝ նշված իրավախախտման համար պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու իրավասու մարմինը դատարանն է: Վարչական դատարարության օրենսգրքի 151-րդ հոդվածը պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու հայցադիմումով վարչական դատարան դիմելու իրավունք վերապահում է միայն օրենքով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություն ունեցող մարմինների և պաշտոնատար անձանց՝ նման իրավունք չվերապահելով նաև անձանց, ում իրավունքները խախտվել են տվյալ վարչական իրավախախտմամբ: Ըստ դիմողի՝ Վարչական դատարարության օրենսգրքի 151-րդ հոդվածը, այնքանով, որքանով հնարավորություն չի տալիս տեղեկատվությունը տալու պարտականությունը չկատարած պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու գործ հարուցել նաև փուժողի հայցադիմումի հիման վրա, խախտում է ՏՏ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով երաշխավորված դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և խախտված իրավունքը վերականգնելու ու դատարանի կողմից իր գործը ողջամիտ ժամկետում քննելու իրավունքը:

Ինչ վերաբերում է ՏՏ վարչական դատարարության օրենսգրքի 152-րդ հոդվածի ենթադրյալ հակասահմանադրականությանը, ապա դիմողը փաստարկում է, որ այնպիսի պայմաններում, երբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի ինչպես 189.7-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման, այնպես էլ օրենսգրքի 223-րդ հոդվածում նշված մի շարք իրավախախտումների վերաբերյալ արձանագրություն կազմելու լիազորություն ունեցող իրավասու մարմին նախատեսված չէ, վիճարկվող հոդվածով սահմանված՝ հայցադիմումում իրավախախտման վերաբերյալ արձանագրության

մասին Կրեդիտություններ ներառելու եւ հայցադիմումին նշված արձանագրությունը կցելու պահանջով դադարան դիմող անձի համար սահմանվում է մի պարպականություն, որն առկա օրենսդրական դաշտում հնարավոր չէ կատարել: Որպես փաստարկ ներկայացվում է, որ 2005-2009թթ. ընթացքում ՆՏ դադարանները Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքի 189.7-րդ հոդվածով որեւէ պաշտոնադատ անձի պարասխանարվության չեն ենթարկել: Նշված պարզառաքանությամբ դիմողը գտնում է, որ օրենսգրքի 152-րդ հոդվածը եւս հակասում է ՆՏ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների պահանջներին:

4. Պարասխանողի պնդմամբ՝ դիմող կողմն իր հիմնավորումներում շփոթում է «խախտված իրավունքը վերականգնելու» եւ «պաշտոնադատ անձին վարչական պարասխանարվության ենթարկելու»՝ եությամբ միմյանցից տարբեր իրավական նշանակություն ունեցող հասկացությունները: Ըստ պարասխանողի՝ վիճարկվող հոդվածները չեն շոշափում դիմողի իրավունքների դադարական պաշտպանության իրավունքը, քանի որ ՆՏ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների, ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 14, 15 եւ 17-րդ հոդվածների, ՆՏ վարչական դատարարության օրենսգրքի 70-րդ հոդվածի համակարգային վերլուծությունը վկայում է, որ վարչական իրավախախտում կատարած պաշտոնադատ անձին վարչական պարասխանարվության ենթարկելը չի դիտարկվում որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակ:

Պարասխանողը գտնում է, որ պաշտոնադատ անձին վարչական պարասխանարվության ենթարկելու իրավական հնարավորությունը չի կարող համարվել անձի խախտված իրավունքների վերականգնման բաղադրադրար:

Միաժամանակ, պարասխանողը գտնում է, որ առկա է օրենքի բաց այն առումով, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքում բացակայում են պաշտոնադատ անձանց վարչական պարասխանարվության գործերի ենթակայության մասին համապարասխան դրույթներ»:

5. Սույն գործի քննության շրջանակներում հարկ է պարզել, թե արդյո՞ք անձի իրավունքները խախտած պետական կամ Կրեդիտական ինքնակառավարման մարմնի պաշտոնադատ անձին դադարական կարգով վարչական պարասխանարվության ենթարկելը հանդիսանում է անձի իրավունքի դադարական պաշտպանության բաղադրադրար: Այս կապակցությամբ հարկ է ՆՏ վարչական դատարարության օրենսգրքի վիճարկվող հոդվածները դիտարկել վարչական պարասխանարվության նպատակի, օրենսգրքով նախատեսված ողջ իրավակարգավորման հիմքում ընկած Կրեդիտականության, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՆՏ օրենսգրքի, ինչպես նաեւ «անձի խախտված իրավունքների վերականգնում» հասկացության բովանդակության համապետքստում:

Նման համադրումը վկայում է, որ վարչական պարասխանարվությունը՝ ընդհանրապես, եւ վարչական պարասխանարվության միջոց հանդիսացող վարչական Կրեդիտ՝ մասնավորապես, հետապետում են այլ նպատակ, քան անձի խախտված իրավունքի դադարական կարգով վերականգնումն է: Վարչական պարասխանարվության

նպատակն առավելապես կրում է հանրային բնույթ, իրավախախտ անձը պարասխանաբարություն է կրում հասարակության, այլ ոչ թե մասնավոր անձի առջև, վարչական պարասխանաբարությունն առնչվում է ոչ այնքան մասնավոր, որքան հանրային շահերին: Իսկ հանրային իրավահարաբերությունների ոլորտում մասնավոր շահերի պաշտպանության նպատակով սահմանված է այլ կարգ՝ հաշվի առնելով վարչադատարական իրավահարաբերությունների առանձնահատկությունները, վարչաիրավական հարաբերությունների հետեւանքով խախտված իրավունքների վերականգնման կարգի առանձնահատկությունները, խախտված իրավունքների փաստացի վերականգնելիության հնարավորությունն ու աստիճանը:

Վարչական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծությունը, մասնավորապես, օրենսգրքի 1-ին հոդվածով սահմանված՝ օրենսգրքի իրավակարգավորման առարկայի, օրենսգրքով սահմանված՝ ընդհանուր եւ հատուկ վարույթների վերաբերյալ դրույթների, հայցարեւակների, օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված՝ վարչական դատարանի միջոցով անձի իրավունքների դատական պաշտպանության շրջանակների ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսգրքով սահմանված ողջ իրավակարգավորումը հիմնվում է այն փրամաբանության վրա, որ հանրային իրավահարաբերությունների ոլորտում անձանց իրավունքների եւ օրինական շահերի դատական պաշտպանության ինստիտուտը փարանջարված է անձանց՝ դատական կարգով վարչական պարասխանաբարության ենթարկելու ինստիտուտից: Այսինքն՝ օրենսգրքով օրենսդիրը սահմանել է իրավակարգավորման երկու՝ միմյանցից փարբերվող ուղղություն, որոնք վերաբերում են համապարասխանաբար՝ հանրային իրավահարաբերությունների ոլորտում անձանց իրավունքների եւ օրինական շահերի դատական պաշտպանության ինստիտուտին եւ անձանց՝ դատական կարգով վարչական պարասխանաբարության ինստիտուտին: Իր հերթին, նշված փրամաբանությունը բխում է այն օբյեկտիվ իրողությունից, որ առաջին դեպքում իրավախախտման աղբյուրը պետությունն է, մյուս դեպքում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձը: Այս փրամաբանությանը համապարասխան՝ ՏՎ վարչական դատավարության օրենսգրքը սահմանում է այն հայցարեւակները, որոնց միջոցով անձը վարչական դատարանում իրացնում է վարչական մարմնի կողմից խախտված իր իրավունքների պաշտպանությունը: Այն է՝ վիճարկման հայց (65), պարբարվորեցման հայց (66), գործողության կարարման հայց (67) եւ ճանաչման հայց (68): Սահմանվում են նաեւ պետական եւ րեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնաբար անձանց նորմաբիվ իրավական ակբերի վիճարկման վերաբերյալ դրույթներ, որոնց միջոցով ապահովվում է վարչական մարմնի գործողությամբ (անգործությամբ) կամ վարչական ակբով, ինչպես նաեւ պետական եւ րեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնաբար անձանց նորմաբիվ իրավական ակբերի՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակբերին կամ Սահմանադրությանը հակասելու հետեւանքով խախտված իրավունքների դատական կարգով վերականգնումը:

Միաժամանակ, ՏՎ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածով սահմանված իրավակարգավորման փրամաբանությանը համահունչ, Վարչական դատավարության օրենսգրքով սահմանվում է այն հայցադիմումների քննության կարգը

(գլուխներ 26 եւ 27), որոնք վերաբերում են օրենսգրքով սահմանված իրավակարգավորման երկրորդ ուղղությանը, այն է՝ անձանց՝ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտին, որոնց միջոցով վարչական մարմինները դատարանի միջոցով հանրային շահը պաշտպանում են իրավախախտ անձանցից: Օրենսգրքի վիճարկվող 151-րդ հոդվածով, օրենսգրքի 1-ին հոդվածին եւ 3-րդ հոդվածի երկրորդ մասին համահունչ, որով որպես վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով դատարան դիմելու իրավասու սուբյեկտ են դիտարկվում միայն վարչական մարմինները կամ դրանց պաշտոնատար անձինք, վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի հարուցման հիմք են համարվում իրավասու մարմինների եւ պաշտոնատար անձանց հայցադիմումները:

Ինչ վերաբերում է «անձի խախտված իրավունքների վերականգնում» հասկացության բովանդակությանը, ապա անձի խախտված իրավունքը վերականգնված է համարվում այն դեպքում, երբ վերականգնվում է մինչեւ իրավախախտման պահը գոյություն ունեցող իրավիճակը կամ վերացվում է իրավունքի իրացմանը խոչընդոտող հանգամանքը: Տվյալ դեպքում պաշտոնատար անձի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու եւ նրան փեղեկավորություն փրամադրելու արդյունքում դիմողը հնարավորություն է ստացել իրացնել փեղեկավորություն ստանալու իր իրավունքը:

Ելնելով վերոշարադրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական կարգով անձանց, այդ թվում՝ անձի իրավունքը խախտած պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելը չի հանդիսանում անձի խախտված իրավունքների պարտադիր բաղադրատարր եւ հետեւաբար անձանց՝ վարչական պատասխանատվության ենթարկելու հայցադիմումով դատարան դիմելու իրավասություն չվերապահելը չի կարող խոչընդոտել այդ անձի՝ դատարանի մագիստրության եւ դատական պաշտպանության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների իրացմանը, եւ խնդրո առարկա հարցով դատարան դիմելու իրավասությունը բացառապես վարչական մարմիններին եւ դրանց պաշտոնատար անձանց վերապահելն իրավաչափ է ու օրենսգրքի իրավակարգավորման հիմքում ընկած փրամաբանության շրջանակներում է:

Նման դիրքորոշման մասին կարող է վկայել նաեւ այն փաստը, որ եվրոպական երկրներում կամ նախապեսված է վարչական պատասխանատվության միայն արտադատարանական կարգ կամ առկա է դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտից հրաժարվելու միպում:

6. Նկատի ունենալով դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի հարաբերակցությունը հանրային շահերի պաշտպանության խնդրի հետ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի դրույթները, սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում հարկ է համարում նաեւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները դիտարկել հանրային շահերի պաշտպանության եւ իրավական անվտանգության փեսանկյունից: Այս կապակցությամբ հարկ է վիճարկվող դրույթները դիտարկել օրենսգրքի

մյուս հոդվածների, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՏՏ օրենսգրքի հետք համակարգային փոխկապակցության մեջ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՏՏ օրենսգրքի ուսումնասիրությունից բխում է, որ նշված օրենսգրքով նախատեսված է անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու երկու կարգ՝ արտադարարանական, որն իրականացվում է նույն օրենսգրքով սահմանված՝ կոնկրետ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից, եւ դատական, որն իրականացվում է դատարանների կողմից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՏՏ օրենսգրքի 223-րդ հոդվածը մասնաճյուղ է նույն օրենսգրքի այն բոլոր հոդվածները, որոնցով նախատեսված իրավախախտումների համար նախատեսվում է դատական կարգով վարչական պատասխանատվություն:

Վարչական դատավարության օրենսգրքի՝ վիճարկվող հոդվածները ներառող 26-րդ գլխի եւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՏՏ օրենսգրքի դրույթների համակարգային վերլուծությունը վկայում է, որ անձին դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու՝ ՏՏ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի իրավակարգավորումը սահմանելիս չի դրսևորվել համակարգային մոտեցում: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՏՏ օրենսգրքով հստակ սահմանված չեն բոլոր այն կոնկրետ վարչական մարմիններն ու դրանց պաշտոնատար անձինք, որոնք իրավասու են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմել եւ այն ներկայացնել դատարան՝ անձանց դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՏՏ օրենսգրքի 223-րդ հոդվածում մասնաճյուղով հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումները կատարելու համար:

Նաշվի առնելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ **ՏՏ իրավական համակարգում առկա է իրավակարգավորման բաց**, ինչը թույլ չի տալիս պետությանն իրականացնել վարչական իրավահարաբերությունների ոլորտում օրինականության նկատմամբ վերահսկողության եւ հանրային շահերի պաշտպանության իր գործառնությունները, սպառնալից առանձին վարչական իրավախախտումների համար ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության անխուսափելիությունը, դրանով իսկ երաշխավորելու նաեւ իրավունքների պաշտպանության արդյունավետությունը: Դրա մասին է վկայում նաեւ այն փաստը, որ չնայած 1995-2007 թվականներին ավելի քան 10 անգամ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՏՏ օրենսգրքի 223-րդ հոդվածում փոփոխություններ են կատարվել, սակայն մինչ օրս շարունակում է տեղ գտնել «**ՏՏ գերագույն դատարանի դատավորները քննում են**» դրույթը:

Իրավակարգավորման նշված բացը, սակայն, պայմանավորված է ոչ թե ինքնին օրենսգրքի վիճարկվող դրույթներով, այլ դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտի ոչ ամբողջական իրավակարգավորմամբ, որի հաղթահարումը ՏՏ Ազգային ժողովի իրավասության հարցն է: Իրավունքի բացը հաղթահարելու հար-

ցում օրենսդիր մարմնի եւ սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների փարանջապման սկզբունքի համապեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գրավող կոնկրետ հանգամանքների առնչությամբ **նորմափոփ պատվիրանի բացակայությամբ**, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է փոխյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Ազգային ժողովի խնդիրն է լրացնել նշված իրավունքի բացը՝ ապահովելով օրենքի իրացման գործուն կառուցակարգ, վարչական իրավախախտումների համար պաշտոնապար եւ այլ անձանց վարչական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի գործադրման իրական երաշխիքներ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 6-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:
2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ**

*5 փետրվարի 2010 թվականի
ՄԴՈ-864*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻ ՍԱՄՎԵԼ ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱՎ «ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՆՈՎՈՒ- ԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 6 ԵՎ 8-ՐԴ ՆՈՂՎԱԾՆԵՐԻ, «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ ՆՈՂՎԱԾԻ ԵՐՐՈՐԴ ՄԱՍԻՆ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

10 փետրվարի 2010թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը կազմով. Գ. Նարոթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող Ս. Նովհաննիսյանի, գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՆՆ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՆ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Սամվել Նովհաննիսյանի դիմումի հիման վրա՝ «Զինձառայողների և նրանց ընդհանրությունների անդամների սոցիալական ապահովության մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 6 և 8-րդ հոդվածների, «Պետական կենսաթոշակների մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 9-րդ հոդվածի երրորդ մասի՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ս. Նովհաննիսյանի՝ 15.10.2009թ. ՆՆ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

ՆՆ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմի 2009 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ «Զինձառայողների և նրանց ընդհանրությունների անդամների սոցի-

ալական ապահովության մասին» ՆՃ օրենքի 6 եւ 8-րդ հոդվածների, «Պետական կենսաթոշակների մասին» ՆՃ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 52-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՆՃ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ Ս. Նովհաննիսյանի դիմումը քննության է ընդունվել մասնակի. «Պետական կենսաթոշակների մասին» ՆՃ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ դիմումի քննությունը մերժվել է՝ վիճարկվող դրույթը դիմողի նկատմամբ կիրառված չլինելու պարճառաբանությամբ:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հեղափոխելով «Զինճառայողների եւ նրանց ընդհանրիքների անդամների սոցիալական ապահովության մասին», «Պետական կենսաթոշակների մասին» ՆՃ օրենքները եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. «Զինճառայողների եւ նրանց ընդհանրիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՆՃ օրենքը ՆՃ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հոկտեմբերի 27-ին, Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի նոյեմբերի 25-ին եւ ուժի մեջ է մտել 1998 թվականի նոյեմբերի 30-ին:

«Պետական կենսաթոշակների մասին» ՆՃ օրենքը ՆՃ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002 թվականի նոյեմբերի 19-ին, Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003 թվականի մարտի 31-ին եւ ուժի մեջ է մտել 2003 թվականի ապրիլի 10-ին:

«Զինճառայողների եւ նրանց ընդհանրիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՆՃ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է.

«Նոդված 6. Զինճառայողներին եւ նրանց ընդհանրիքների անդամներին փրվող պետական կենսաթոշակների փեսակները

Զինճառայողներին նշանակվում են պետական կենսաթոշակներ՝

ա) երկարամյա ծառայության համար.

բ) հաշմանդամության համար:

Զոհված (մահացած) զինճառայողների ընդհանրիքների անդամներին նշանակվում է սոցիալական կենսաթոշակ՝ կերակրողին կորցնելու դեպքում»:

«Զինճառայողների եւ նրանց ընդհանրիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՆՃ օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է.

«Նոդված 8. Կենսաթոշակի ընթրության իրավունքը

Պետական փարբեր կենսաթոշակների իրավունք ունեցող անձին իր ընթրությամբ նշանակվում է մեկ կենսաթոշակ»:

«Պետական կենսաթոշակների մասին» ՆՃ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Պետական փարբեր կենսաթոշակների իրավունք ունեցող անձին իր ընթրությամբ նշանակվում է մեկ կենսաթոշակ»:

2. Զննության առարկա գործի դատավարական նախապարմությունը հանգում է նրան, որ դիմողը 1978 թվականի օգոստոսի 31-ից մինչև 1996 թվականի նոյեմբերի 2-ը ծառայել է ՆՏ ոստիկանության համակարգում: 1998 թվականի հունվարի 7-ից մինչև 2007 թվականի հուլիսի 23-ն աշխատել է ՆՏ դատախազության համակարգում եւ զբաղեցրել ՆՏ զինվորական դատախազության ՆԿԳ քննիչի պաշտոն: 2007 թվականի հուլիսի 23-ին սեփական դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից եւ նույն օրն էլ ծառայության է անցել ՆՏ ոստիկանության գլխավոր քննչական վարչությունում՝ որպես ՆԿԳ ավագ քննիչ:

2008 թվականի մարտի 18-ին ազատվել է աշխատանքից եւ անցել երկարամյա ծառայության կենսաթոշակի: 2008 թվականի ապրիլի 18-ին դիմել է ՆՏ գլխավոր դատախազին՝ ոստիկանության երկարամյա ծառայության կենսաթոշակից հրաժարվելու եւ դատախազության երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու խնդրանքով, ինչը մերժվել է այն հիմնավորմամբ, որ ինչպես ոստիկանության ծառայողների, այնպես էլ **դատախազության աշխատողների թոշակավորումը կատարվում է «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՆՏ օրենքով**, եւ հիմքեր չկան ՆՏ դատախազության համակարգից կենսաթոշակի անցնելու համար:

Դիմողը 2008 թվականի հունիսի 2-ին դիմել է ՆՏ վարչական դատարան՝ ի թիվս այլոց, ՆՏ դատախազության անգործությունը վիճարկելու եւ ՆՏ դատախազությանը ոստիկանության երկարամյա ծառայության կենսաթոշակը դատախազության երկարամյա ծառայության կենսաթոշակով փոխելուն պարտավորեցնելու պահանջով, ինչը ՆՏ վարչական դատարանի 02.06.2009թ. վճռով մերժվել է: Վարչական դատարանը ՆՏ դատախազությանը ոստիկանության երկարամյա ծառայության կենսաթոշակը դատախազության երկարամյա ծառայության կենսաթոշակով փոխելուն պարտավորեցնելու պահանջի մասով մերժումը պարճառաբանել է նրանով, որ կենսաթոշակների տեսակները սահմանված են «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» եւ «Պետական կենսաթոշակների մասին» ՆՏ օրենքներով, հայցվորի պահանջը վերաբերում է **ոչ թե կենսաթոշակի տեսակը փոխելուն**, այլ մեկ համակարգի փոխարեն մյուս համակարգից **նույն տեսակի** կենսաթոշակ նշանակելուն, եւ կենսաթոշակը մեկ համակարգից մյուս համակարգ տեղափոխելը **չի նշանակում կենսաթոշակի տեսակը փոխել**:

Վերը նշված վճռի դեմ դիմողը վճռաբեկ բողոք է ներկայացրել ՆՏ վճռաբեկ դատարան: Վերջինս, վերահաստատելով ՆՏ վարչական դատարանի եզրահանգումները, իր՝ 29.07.2009թ. որոշմամբ վերադարձրել է վճռաբեկ բողոքը:

3. Դիմողը գտնում է, որ Նայաստանի Նանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության, արտակարգ իրավիճակների հանրապետական գործադիր մարմինների համակարգի ծառայողների համար սահմանված երկարամյա ծառայության համար կենսաթոշակը **երկարամյա ծառայության համար կենսաթոշակի տարբեր տեսակներ են**: Միաժամանակ դիմողը ՆՏ եւ ՌԴ կենսաթոշակային

ապահովության բնագավառը կարգավորող օրենսդրական ակտերի համեմատական վերլուծության արդյունքում գտնում է, որ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՆՃ օրենքի 6 և 8-րդ հոդվածները, «Պետական կենսաթոշակների մասին» ՆՃ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին, ինչը հնարավորություն է ընձեռում, որպեսզի վարչական և դատական մարմիններն օրենքի մեկնաբանման և կիրառման հարցում ցուցաբերեն կամայական մոտեցում:

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՆՃ օրենքի 6-րդ հոդվածի առնչությամբ դիմողը գտնում է, որ նշված հոդվածը երկարամյա ծառայության համար կենսաթոշակ ստանալու իրավունքը վերապահել է բացառապես զինծառայողներին, ինչի կապակցությամբ այն ներքին հակասության մեջ է գտնվում նույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի հետ, որը երկարամյա ծառայության համար կենսաթոշակ ստանալու իրավունքը վերապահել է Նայաստանի Նանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության, արտակարգ իրավիճակների հանրապետական գործադիր մարմինների ծառայողներին: Դրա հետևանքով, ըստ դիմողի, առկա է օրենսդրական բաց, որը դրսևորվում է նրանում, որ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՆՃ օրենքի 6-րդ հոդվածը հնարավորություն չի ընձեռում Նայաստանի Նանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության, արտակարգ իրավիճակների հանրապետական գործադիր մարմինների համակարգի ծառայողների համար սահմանված երկարամյա ծառայության համար կենսաթոշակն առանձին-առանձին, ըստ համապատասխան համակարգերի, դիտարկել որպես երկարամյա ծառայության կենսաթոշակի փոքրեր փեսակներ:

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՆՃ օրենքի 8-րդ հոդվածի և «Պետական կենսաթոշակների մասին» ՆՃ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի առնչությամբ դիմողը գտնում է, որ նշված դրույթների իրավական անորոշության հետևանքով հնարավոր չէ կանխատեսել, թե պետական փոքրեր կենսաթոշակների իրավունք ունեցող անձին երբ է տրվում պետական փոքրեր կենսաթոշակների միջև ընտրություն կատարելու իրավունք՝ կենսաթոշակ նշանակելիս, թե՛ նաև կենսաթոշակ նշանակվելուց հետո, եթե կենսաթոշակի անցնելուց հետո անձը շարունակում է աշխատել և այդ ընթացքում ձեռք է բերում մեկ այլ փեսակի կենսաթոշակի իրավունք: Դիմողը գտնում է, որ փոքրեր կենսաթոշակի միջև ընտրություն կատարելու իրավունքը պետք է փորձով վերը նշված բոլոր դեպքերի վրա:

Որպես իրավակիրառական պրակտիկայում վիճարկվող նորմերի իրավական անորոշության հետևանքով դրանց կամայական մեկնաբանության առկայության ապացույց դիմողը վկայակոչում է իր գործով ՆՃ վարչական դատարանի 02.06.2009թ. կայացրած վճիռը և նույն գործով ՆՃ վճռաբեկ դատարանի 29.07.2009թ.՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը, որով ՆՃ վճռաբեկ դատարանը վերահաստատել է վարչական դատարանի եզրահանգումները:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ դիմողի բարձրացրած հարցերը հիմնականում վերաբերում են իրավական ակտերի մեկնաբանության հետ կապված խնդիրների, եւ պետք է դիտարկվեն այդ տեսանկյունից: «Պետական կենսաթոշակների մասին» ՏՏ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը հստակ է եւ դրանում՝ «պետական փարբեր կենսաթոշակների իրավունք ունեցող անձ» հասկացությունը վկայում է, որ խոսքը վերաբերում է այն դեպքին, երբ անձը դեռ չի իրացրել իր պետական կենսաթոշակ ստանալու իրավունքը:

Կենսաթոշակի իրավունքը հանդիսանում է կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերած անձի գույքային իրավունք: Այդ գույքային իրավունքի իրացման դեպքում անձը կորցնում է այդ՝ արդեն իրացրած իրավունքը, «...փոխարենը ձեռք բերում այլ իրավունք՝ գույք»: Դիմողը նշված գույքային իրավունքն իրացրել է կենսաթոշակ ստանալու համար ներկայացրած դիմումի բավարարմամբ:

Նիմբ ընդունելով «Պետական կենսաթոշակների մասին» ՏՏ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված՝ կենսաթոշակի տեսակները՝ պատասխանողը գտնում է, որ կենսաթոշակի տեսակի փոփոխումը ենթադրում է նշված հոդվածով սահմանված կենսաթոշակի մեկ տեսակի փոխարինումը նույն հոդվածով նախատեսված կենսաթոշակի այլ տեսակով: Մինչդեռ խնդրո առարկա դեպքում խոսքը վերաբերում է նույն տեսակի՝ երկարամյա ծառայության պետական կենսաթոշակի փոփոխման պահանջին, ինչն օրենքով չի սահմանվում:

Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթները սահմանում են պետական կենսաթոշակների տեսակները եւ պետական կենսաթոշակի տեսակը փոխելու քաղաքացու իրավունքը, հետեւաբար՝ այդ առումով այդ դրույթները չեն կարող հակասել ՏՏ Սահմանադրության 34-րդ հոդվածի պահանջներին:

5. Սույն գործի քննության շրջանակներում անհրաժեշտություն է առաջանում պարզել «պետական կենսաթոշակների տեսակներ» դրույթի իմաստը, «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՏՏ օրենքում օգտագործված՝ «զինվորական ծառայություն» հասկացության բովանդակությունը, «կենսաթոշակի ընտրության իրավունք» եւ «կենսաթոշակի տեսակը փոխելու իրավունք» հասկացությունների բովանդակությունը, «դատախազների թոշակավորում» եւ «զինծառայողների թոշակավորում» հասկացությունների բովանդակային ընդհանրություններն ու տարբերությունները: Այդ կապակցությամբ հարկ է վիճարկվող հոդվածները դիտարկել «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» եւ «Պետական կենսաթոշակների մասին» ՏՏ օրենքների փարբեր հոդվածների, ինչպես նաեւ կենսաթոշակային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի համապեքսքում:

6. «Պետական կենսաթոշակների մասին» ՏՏ օրենքի 11-րդ հոդվածը սահմանում է պետական կենսաթոշակների տեսակները: Նշված հոդվածի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը սահմանել է պետական կենսաթոշակների երկու տեսակ՝ ապահովագրա-

կան եւ սոցիալական: Այդ տեսակներից յուրաքանչյուրի համար նույն հողվածով սահմանվել են նաեւ պետական կենսաթոշակների ենթապետականեր: Մասնավորապես, ըստ դիտարկվող հողվածի՝ պետական կենսաթոշակի «ապահովագրական» անվանումը կրող տեսակը ստորաբաժանված է «տարիքային», «արտոնյալ պայմաններով», «երկարամյա ծառայության», «հաշմանդամության», «կերակրողին կորցնելու դեպքում» ու «մասնակի» ենթապետակաների: Պետական կենսաթոշակի՝ «սոցիալական» անվանումը կրող տեսակն ստորաբաժանված է «ծերության», «հաշմանդամության», «կերակրողին կորցնելու դեպքում» ենթապետակաների: Նույն օրենքի 52-րդ հողվածի ուսումնասիրությունից բխում է, որ պետական կենսաթոշակների վերը նշված ենթապետակները եւս հանդիսանում են պետական կենսաթոշակի տեսակներ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետական կենսաթոշակների նշված երկու տեսակների տարբերակման հիմքում դրված են աշխատանքային հարաբերությունները: Այսինքն՝ ապահովագրական կենսաթոշակի իրավունքը պայմանավորված է կան կենսաթոշակառուի աշխատանքային (ապահովագրական) ստաժով, կան, կախված ապահովագրական կենսաթոշակի տարատեսակների բնույթից, աշխատանքային խեղմամբ կամ մասնագիտական հիվանդությամբ կամ դրանց հետեւանքով կերակրողին կորցնելով: Իսկ սոցիալական կենսաթոշակի իրավունքը պայմանավորված է անձի՝ աշխատանքային հարաբերությունների հետեւանք չհանդիսացող հիվանդությամբ կամ դրա հետեւանքով կերակրողին կորցնելով, ինչպես նաեւ անձի տարիքով, ինչի հետեւանքով նա անկարող է դառնում իրեն ապահովել ինքնուրույն աշխատանքով եւ, միեւնույն ժամանակ, նրա աշխատանքային ստաժը չի բավարարում նրան նշանակել տարիքային ապահովագրական կենսաթոշակ:

«Պետական կենսաթոշակների մասին» ՏՏ օրենքի ուսումնասիրությունից բխում է նաեւ, որ երկարամյա ծառայության կենսաթոշակի վերաբերյալ նույն օրենքով սահմանված իրավակարգավորումը չի վերաբերում **«Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՏՏ օրենքում նշված սուբյեկտներին:**

«Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՏՏ օրենքի 2-րդ հողվածը զինծառայող է համարում Նայաստանի Նանրապետության պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության, «Նայաստանի փրկարար ծառայության»՝ «Նայաստանի փրկարար ծառայության մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 112-րդ հողվածով սահմանված դեպքերում՝ հանրապետական գործադիր մարմինների համակարգի հրամանատարական եւ շարքային անձնակազմի ծառայողներին:

«Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՏՏ օրենքի վիճարկվող 6-րդ հողվածը զինծառայողների, այն է՝ Նայաստանի Նանրապետության պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության, «Նայաստանի փրկարար ծառայության»՝ «Նայաստանի փրկարար ծառայության մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 112-րդ հողվածով սահմանված դեպքերում՝ հանրապետական գործադիր մարմինների համակարգի հրամանատարական եւ

շարքային անձնակազմի ծառայողների եւ դրանց հավասարեցված անձանց համար սահմանում է պետական կենսաթոշակների հետեյալ երկու տեսակները՝ **երկարամյա ծառայության համար եւ հաշմանդամության համար:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ զինծառայողների համար սահմանված պետական կենսաթոշակների նշված երկու տեսակները, ի տարբերություն «Պետական կենսաթոշակների մասին» ՏՃ օրենքով սահմանված պետական կենսաթոշակի «ապահովագրական» եւ «սոցիալական» անվանումը կրող տեսակների, ունեն նաեւ ընդհանրություններ: Բոլոր դեպքերում, նշված ընդհանրության հիմքում դրված են միայն աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները: Տվյալ դեպքում օրենսդիրը հաշվի է առել միայն ծառայողական պարտականությունների ոչ ստանդարտ, արտակարգ, կյանքի համար վտանգավոր պայմաններում կատարման հանգամանքը՝ այս առումով հավասար եւ միասնական մոտեցում ցուցաբերելով նմանաբան ծառայություններ իրականացնող Նայաստանի Նանրապետության պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության, Նայաստանի փրկարար ծառայության համակարգերին: Այսինքն՝ թե՛ երկարամյա ծառայության համար, թե՛ հաշմանդամության համար կենսաթոշակի իրավունքը պայմանավորված է միայն կենսաթոշակառուի աշխատանքային (ապահովագրական) ստատուսով, կամ, հաշմանդամության համար կենսաթոշակի դեպքում՝ ծառայության ընթացքում ձեռք բերված խեղմամբ կամ հիվանդությամբ կամ դրանց հետեւանքով կերակրողին կորցնելով:

Նկատի ունենալով տարբեր համակարգերում երկարամյա ծառայության համար կենսաթոշակի բնույթի, նշանակման ու վճարման կարգի համասեռությունը, օրենսդիրն առանձին-առանձին՝ ըստ Նայաստանի Նանրապետության պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության, Նայաստանի փրկարար ծառայության հանրապետական գործադիր մարմինների համակարգի, չի տարբերակել երկարամյա ծառայության համար կենսաթոշակի ենթատեսակներ:

7. Կենսաթոշակային ապահովության վերաբերյալ ՏՃ օրենսդրությունը քաղաքացիներին վերապահելով կենսաթոշակի ընտրության իրավունք, միաժամանակ վերջիններիս վերապահել է նաեւ կենսաթոշակի տեսակը փոխելու իրավունք: Այդ իրավունքը սահմանված է, մասնավորապես, «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» եւ «Պետական կենսաթոշակների մասին» ՏՃ օրենքներով: Օրենսդրության մեջ նշված երկու ինստիտուտների տարբերակումն ինքնապարակ չէ: «Կենսաթոշակի տեսակ փոխել» հասկացության մեջ «փոխել» բառի առկայությունից բխում է, որ կենսաթոշակի տեսակը փոխելու իրավունքն անձի մոտ ծագում է այն ժամանակ, երբ փվյալ անձի նկատմամբ արդեն իսկ նշանակվել է կենսաթոշակ:

Ի կատարումն «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՏՃ օրենքի 20 եւ 26-րդ հոդվածների, ՏՃ կառավարությունը 12.05.2005 թվականին ընդունել է «Կենսաթոշակ ստանալու համար դիմելու, կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակ փոխելու, կենսաթոշակ վճարելու եւ կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու կարգը հաստատելու մասին»

թիվ 930-Ն որոշումը, որը, ի թիվս այլոց, պետք է սահմաներ կենսաթոշակի տեսակը փոխելու կարգը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ կառավարության փվյալ որոշումը լիարժեք չի իրացրել օրենքի պահանջը, քանի որ գործնականում հսկայական չէ կենսաթոշակի տեսակը փոխելու կարգը: Նման վիճակը հետևանք է նաև այն բանի, որ օրենքով հսկայական սահմանված չեն «կենսաթոշակի ընդհանուր իրավունք», «կենսաթոշակի տեսակը փոխելու իրավունք», «կենսաթոշակի տեսակ», «կենսաթոշակի ենթատեսակ» հասկացությունները:

Առաջացել է լուրջ շփոթ նաև այն պարագայում, որ համակարգային մոտեցում չցուցաբերելով, «Դատախազության մասին» 22.02.2007թ. օրենքն ընդունելուց հետո պահպանվել է ՏՏ 1998թ. օրենքի 40-րդ հոդվածի այն դրույթի իրավաբանական ուժը, համաձայն որի՝ «Դատախազների և քննիչների թոշակավորում իրականացվում է ներքին գործերի մարմիններում ծառայություն անցնող ղեկավար կազմի անձանց համար կիրառվող պայմաններով, նորմերով և կարգով»: «Զինծառայողների և նրանց ընդհանրացված անդամների սոցիալական ապահովության մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» ՏՏ օրենքների՝ քննության առարկա նորմերի գործողության պայմաններում «Դատախազության մասին» ՏՏ օրենքի փվյալ նորմն իրավաչափ կարող էր լինել միայն սույն որոշման 6-րդ կետում հիշարակված համասեռության պայմաններում: Իրականում այդ պայմանը չի գործում: Գործնականում առկա են երկու տարբեր համակարգեր, որոնցում համադրելի չեն աշխատանքի ստացումը և կենսաթոշակի չափը, և որոնցից յուրաքանչյուրից դիմողը հավասար իրավունք ունի ստանալու երկարամյա ծառայության համար կենսաթոշակ:

ՏՏ սահմանադրական դատարանն իր՝ 4 հոկտեմբերի 2006թ. ՍԴՈ-649 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ «Կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը փոխանցելու միջոց է»: Նույն որոշման մեջ դատարանը միաժամանակ արձանագրել է, որ «Կենսաթոշակը սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության ձեռք է՝ նաև ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի»: Ներկայումս, պարասխանող կողմի, ինչպես նաև ՏՏ վարչական դատարանում պարասխանողի ներկայացուցիչների բոլոր դատողություններն առ այն, որ անձը միայն մեկ անգամ իրավունք ունի կենսաթոշակի տեսակ ընդհանուր և այն հետագայում փոփոխման ենթակա չէ, սահմանադրական դատարանը համարում է ոչ հիմնավոր՝ դիմումատիրոջ հայցապահանջը մերժելու տեսանկյունից: Դիմողի բարձրացրած հիմնախնդիրն ամենեիս չի առնչվում վեճի առարկա հոդվածների դրույթներին, որոնք իրենց իրավակարգավորման շրջանակներում սահմանադրականության խնդիր չեն առաջացնում: Այն վերաբերում է կենսաթոշակների նշանակման հիմնախնդրի կարգավորման տեսանկյունից երկու ոչ միասեռ համակարգերն արհեստական ձևով միմյանց կապակցելուն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի սահմանադրական իրավունքն է պահանջել ու ստանալ իր հասանելիք երկարամյա ծառայության կենսաթոշակը՝ իր իսկ կողմից ընտրված համակարգից՝ նաև իր որոշումը վերանայելու հիմքով: ՏՏ որեւէ

օրենքով ԿՎԿՄ հարցով անձի որոշումը փոխելու իրավունքը սահմանափակված չէ: ՄՄ - Սահմանադրությամբ եւ ՄՄ մի շարք միջազգային իրավական պարտավորություններով միանշանակ պահանջ է առաջադրված, որ իրավունքի սահմանափակումը պետք է նախատեսված լինի միայն օրենքով, լինի համաչափ, չաղավաղի իրավունքի էությունը:

Նաշվի առնելով, որ պարասխանող կողմը, ինչպես նաեւ վարչական դատարանը, վարչական դատարանում պարասխանողի ներկայացուցիչը եւ երրորդ անձինք դիմողի իրավունքի սահմանափակումը բխեցնում են «Զինձառայողների եւ նրանց ընդհանրների անդամների սոցիալական ապահովության մասին» ՄՄ օրենքի 8-րդ հոդվածի եւ «Պետական կենսաթոշակների մասին» ՄՄ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի մեկնաբանությունից, սահմանադրական դատարանը գտնում է, որ նման մեկնաբանությունը հիմնավոր չէ, չի բխում ՄՄ Սահմանադրության 1, 3, 31 եւ 83.5-րդ հոդվածների պահանջներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Զինձառայողների եւ նրանց ընդհանրների անդամների սոցիալական ապահովության մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 6-րդ հոդվածը համապարասխանում է Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. «Զինձառայողների եւ նրանց ընդհանրների անդամների սոցիալական ապահովության մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 8-րդ հոդվածը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան ԿՎԿՄ բովանդակության մասով, որով սահմանափակվում է անձի իրավունքը կենսաթոշակը նշանակելուց հետո կատարել վերընթրություն, ճանաչել Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 31 եւ 83.5-րդ - հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

3. «Պետական կենսաթոշակների մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 9-րդ հոդվածի երրորդ մասը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան ԿՎԿՄ բովանդակության մասով, որով սահմանափակվում է անձի իրավունքը կենսաթոշակը նշանակելուց հետո կատարել վերընթրություն, ճանաչել Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 31 եւ 83.5-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

4. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳ-ԱՏՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

*10 փետրվարի 2010 թվականի
ՄԴՈ-865*

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՄԵԼՏԵՔՍ» ՍՊԸ-Ի ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆՆԵՐ ՍԵՐԻՆԵ ՖԼՋՅԱՆԻ,
ԻՐԻՆԱ ՕԳԱՆԵԶՈՎԱՅԻ, ԱՆՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԵՎ
ԱԳՆԵՍԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ
ՆՏ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
204.28-ՐԴ ՆՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ
ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղ. Երևան

23 փետրվարի 2010թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դափարանը՝ կազմով.

Գ. Նարոյթունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝ դիմող կողմի ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի, Ա. Ղազարյանի եւ Կ. Մեժլումյանի, պապասխանող կողմի՝ ՆՏ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՏ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դափարանի մասին» ՆՏ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց ««Մելտեքս» ՍՊԸ-ի եւ քաղաքացիներ Սերինե Ֆլջյանի, Իրինա Օգանեզովայի, Աննա Բաղդասարյանի եւ Ազնեսա Բաղդասարյանի դիմումների հիման վրա՝ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.28-րդ հոդվածի 1-ին կետի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Մելտեքս» ՍՊԸ-ի եւ քաղաքացիներ Ս. Ֆլջյանի, Ի. Օգանեզովայի, Ա. Բաղդասարյանի եւ Ա. Բաղդասարյանի համապատասխանաբար՝ 19.08.2009թ., 31.08.2009թ. եւ 15.09.2009թ. ՆՏ սահմանադրական դափարան մուտքագրված դիմումներն են, որոնց հիման վրա, ղեկավարվելով «Սահմանադրական դափարանի

մասին» ՆՃ օրենքի 39-րդ հոդվածով, մինչև դադարեցնությունն սկսվելը գործերը միավորվել են դատարանի նույն նիստում քննելու համար:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պարասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հեղափոխելով ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, օրենսդրության այլ ակտեր, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև սույն գործի առարկայի վերաբերյալ սահմանադրական դատարանի կայացրած որոշումները, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՆՃ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Դիմողների կողմից վիճարկվող «204.28» հոդվածը ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ներառվել է «ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի նոյեմբերի 28-ին ՆՃ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքով (ՆՕ-277-Ն), որը ՆՃ Նախագահի կողմից ստորագրվել է 2007 թվականի դեկտեմբերի 20-ին եւ ուժի մեջ մտել 2008 թվականի հունվարի 1-ից: 204.28-րդ հոդվածը նախատեսված էր փոփոխությունների եւ լրացումների վերաբերյալ վերոհիշյալ օրենքի 72-րդ հոդվածով, որով ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը լրացվել էր «Վճիռների եւ որոշումների վերանայումը նոր հանգամանքներով» վերաբառությունը կրող 3.2-րդ բաժնով: ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.28-րդ հոդվածով սահմանված էր նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու արդյունքում դատարանի իրավասությունը, այդ թվում՝ դիմումն առանց բավարարման եւ նախորդ դատական ակտն ուժի մեջ թողնելու վերաբերյալ (հոդվածի 1-ին կետը):

Սույն գործով դիմող՝ քաղաքացի Սերինե Ֆլջյանի՝ 14.05.2008թ. սահմանադրական դատարանում մուրքագրված դիմումի հիման վրա՝ «ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՃ օրենքի 80 հոդվածի 1-ին, 4-րդ եւ 5-րդ մասերի՝ ՆՃ Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի քննության արդյունքում, սահմանադրական դատարանն իր՝ 09.09.2008 թվականի ՄԴ-Ո-758 որոշման եզրափակիչ մասի 5-րդ կետի համաձայն ՆՃ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր է ճանաչել վերոհիշյալ օրենքի նաև 72-րդ հոդվածը՝ ամբողջությամբ, այդ թվում՝ սույն գործով վիճարկվող 204.28-րդ հոդվածը: Այդ նորմի իրավաբանական ուժը կորցնելը սահմանադրական դատարանի կողմից «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 68-րդ հոդվածի 15-17-րդ մասերի հիմքով չի հեղափոխվել, հետևաբար՝ կիրառման մեջ պետք է դրվեր այդ որոշման իրապարակման պահից:

ՆՇ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.28-րդ հոդվածի սահմանադրականության հարցին անդրադառնալիս սահմանադրական դատարանն իր վերոհիշյալ որոշմամբ (13-րդ կետ) գտել էր, որ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման արդյունքում նախորդ դատական ակտն ուժի մեջ թողնելու դատարանի լիազորության օրենսդրական կարգավորման դեպքում պետք է հաշվի առնվի, որ օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին սահմանադրական դատարանի որոշման առկայության պարագայում նոր հանգամանքների հիմքով վերանայվող դատական ակտը բոլոր դեպքերում ուժի մեջ մնալ չի կարող, քանի որ այդ ակտով կիրառվել է հակասահմանադրական իրավանորմ, հետեւաբար, այդպիսի իրավակարգավորման բացակայությամբ էլ հիմնավորվել է ՆՇ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ հոդվածի հակասությունը ՆՇ Սահմանադրությանը: Իսկ Նայասարանի Նանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի ուժի մեջ մտնելու վճռի կամ որոշման հիմքով (մասնավորապես՝ ՄԻԵԴ-ի) դատական ակտերը նոր հանգամանքներով վերանայելու իրավակարգավորման սահմանադրականության խնդրում սահմանադրական դատարանը գտել էր, որ այդ ակտերն ուժի մեջ թողնելու հարցը լուծելիս ՆՇ համապատասխան դատարանը հիմք է ընդունում այդ դատարանի վճռով (որոշմամբ) մարդու իրավունքների խախտման փաստը հաստատված կամ չհաստատված համարվելու իրողությունը:

2. Ինչպես հետեւում է գործի նյութերից, ՆՇ վճռաբեկ դատարանը թիվ 3-10 (ՏԴ) 2009թ., 3-11(ՏԴ)2009թ., 3-7(ՎԴ)2009թ. եւ 3-123(ՎԴ)2009թ. քաղաքացիական գործերով, քննելով «Մելտեքս» ՍՊԸ-ի, քաղաքացիներ Ս.Ֆլեյսանի, Ի.Օզանեզովայի, Ա.Բադդասարյանի եւ Ա.Բադդասարյանի վճռաբեկ բողոքները՝ նոր հանգամանքների հիմքով ՆՇ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ փոխարկական գործերի պալատի 27.02.2004թ. թիվ 3-397(ՏԴ), 23.04.2004թ. թիվ 3-748(ՏԴ) որոշումները, ինչպես նաեւ ՆՇ վճռաբեկ դատարանի՝ 30.11.2007թ., 05.02.2007թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին», 18.06.2007թ. «Նոր հանգամանքների հիմքով որոշման վերանայման վարույթի հարուցումը մերժելու մասին» որոշումները վերանայելու մասին, 2009թ. փետրվարի 19-ին, 2009թ. մարտի 13-ին եւ 2009թ. հուլիսի 24-ին կայացրել է սույն գործով վերջնական դատական ակտեր համարվող որոշումներ՝ կիրառելով ՆՇ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ ՆՇ սահմանադրական դատարանի ՄԴՈ-758 որոշմամբ իրավաբանական ուժը կորցրած 204.28-րդ հոդվածի դրույթները:

Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշմանը հաջորդող ժամանակահատվածում ՆՇ Ազգային ժողովը 2008թ. դեկտեմբերի 26-ին ընդունված ՌՕ-233-Ն օրենքով փոփոխություններ եւ լրացումներ է կատարել ՆՇ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.2-րդ բաժնում՝ կապված նոր հանգամանքներով վերանայման ենթակա դատական ակտերի փաստակները, դատական ակտերը վերանայելու իրավասություն ունեցող դատարանների կազմն ընդլայնելու հետ, սակայն 204.28-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումը ՆՇ Սահմանադրությանը համապատասխանեցնելու խնդրին

չի անդրադարձել, ինչի արդյունքում դատական պրակտիկայում կիրառվել է հակասահմանադրական ճանաչված այդ նորմը:

3. ՆՏ Սահմանադրության 102-րդ հոդվածի համաձայն սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են: «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սահմանադրական դատարանի որոշումները դրանց ընդունման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, առաքվում են դատավարության կողմերին, պետական իշխանության համապատասխան մարմիններին, այդ թվում՝ ՆՏ Ազգային ժողով եւ ՆՏ վճռաբեկ դատարան, հրատարակվում են Նայաստանի Նանրապետության պաշտոնական տեղեկագրում եւ սահմանադրական դատարանի տեղեկագրում: Իսկ նույն օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի եւ 66-րդ հոդվածի համաձայն սահմանադրական դատարանի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց համար:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակներում վերոհիշյալ նորմերի իրավաբանական բովանդակությունից նաեւ բխում է, որ.

- սահմանադրական դատարանի որոշումը որեւէ կերպ մեկնաբանման, վիճարկման ենթակա չէ,

- սահմանադրական դատարանի ՄԴՈ-758 որոշմանն անմիջականորեն պետք է հաջորդեր ՆՏ Ազգային ժողովի օրինաստեղծ գործունեությունը՝ կապված ոչ միայն «ՆՏ - քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՆՏ օրենքի (ՆՕ-277-Ն) 80 եւ 76-րդ հոդվածների, ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.2-րդ բաժնի 204.20 եւ 204.26-րդ հոդվածների համապատասխան նորմերը, այլեւ «ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՆՏ վերոհիշյալ օրենքի 72-րդ հոդվածում ընդգրկված 204.28-րդ հոդվածը ՆՏ Սահմանադրությանը հակասող ճանաչելու հետքեւանքով ուժը կորցրած ճանաչելու եւ վերջինիս նախկին իրավակարգավորումը Սահմանադրությանը համապատասխանեցնելու հետ,

- սահմանադրական դատարանի ՄԴՈ-758 որոշմանը շահագրգիռ անձանց դիմումների հիման վրա պետք է հաջորդեին իրավական հետեւանքներ (նոր հանգամանքներ)՝ հանգեցնելով օրենքով սահմանված կարգով դատական այն ակտերը վերանայելուն, որոնցով կիրառվել են Սահմանադրությանը հակասող ճանաչված՝ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.28-րդ հոդվածի դրույթները, ընդ որում՝ պարտադիր հաշվի առնելով նաեւ ՆՏ սահմանադրական դատարանի 2008 թվականի ապրիլի 15-ի ՄԴՈ-751 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ կապված նոր հանգամանքներով այն անձանց խախտված իրավունքները վերականգնելու անհրաժեշտության հետ, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման եւ տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դա-

տրաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ», «Իրավական ակտերի մասին» ՆՃ օրենքներում դեռևս նախատեսված չէ ՆՃ սահմանադրական դատարանի կողմից ՆՃ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով օրենքը (վերջինիս դրույթը), ՆՃ Ազգային ժողովի որոշումը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու դեպքում ՆՃ Ազգային ժողովի կողմից սահմանադրական դատարանի այդպիսի որոշումից բխող անհրաժեշտ իրավակարգավորում, որպիսի հանգամանքը կարելու է նաև ՆՃ սահմանադրական դատարանի որոշումների կատարման վիճակի ամփոփման վերաբերյալ 2008 եւ 2009 թվականների տարեկան հաղորդումներով:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ ինչպես վկայում է դատական պրակտիկան, հաճախ օրենքի այս կամ այն դրույթը ՆՃ Սահմանադրությանը հակասող ճանաչելու վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներից կամ իրավակարգավորման ընդհանուր անհրաժեշտությունից բխող օրենսդրական փոփոխությունների եւ լրացումների հետ կապված իրավաբեկական խնդիրների (այդ փոփոխությունները, լրացումները օրենքում ներառելու (ինկորպորացնելու) ոչ լիարժեք լուծումը հանգեցնում է ոչ թե փոփոխված (լրացված) օրենքի, այլ դրանում կատարված փոփոխությունների եւ լրացումների վերաբերյալ օրենքի կիրառմանը, որը չի բխում «Իրավական ակտերի մասին» ՆՃ օրենքի պահանջներից եւ իրավակիրառական պրակտիկայում առաջացնում է անհստակություն:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի եւ 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն գործի քննության ցանկացած փուլում սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը, եթե «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 68-75-րդ (այդ թվում 69-րդ հոդվածում) եւ 77-րդ հոդվածներում նշված գործերով ներկայացված որեւէ դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի որոշումը: Սույն գործով ներկայացված դիմումներում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի նախկինում կայացված որոշումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով ՆՃ Սահմանադրության 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 19, 32 եւ 60-րդ հոդվածներով, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Մելպեք» ՄՊԸ-ի եւ քաղաքացիներ Սերինե Ֆլջյանի, Իրինա Օզանեզովայի, Աննա Բաղդասարյանի եւ Ազնեսա Բաղդասարյանի դիմումների հիման վրա՝ ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.28-րդ հոդվածի 1-ին կետի՝ Նայասարանի

Նանրապեղության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

Արձանագրել, որ, նախ՝ ՆՆ սահմանադրական դատարանի ՍԳՈ-758 որոշման 13-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշման եւ եզրափակիչ մասի 5-րդ կետի հիմքով ՆՆ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր է ճանաչվել նաեւ «ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՆՆ օրենքի (ՆՕ-277-Ն) 72-րդ հոդվածում ընդգրկված 204.28-րդ հոդվածը, որը ՆՆ Ազգային ժողովի կողմից 2008 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված՝ ինչպես ՆՕ-233-Ն, այնպես էլ դրան հաջորդող որեւէ այլ օրենքով դեռեւս ՆՆ Սահմանադրությանը չի համապատասխանեցվել, երկրորդ՝ ՆՆ սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի ապրիլի 15-ի ՍԳՈ-751 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջների հիմքով սպառված չպետք է համարվի սույն գործի առարկայի շրջանակներում նոր հանգամանքներով իրավասու դատարան դիմելու շահագրգիռ անձանց իրավունքը:

2. Նայաստանի Նանրապեղության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

23 փետրվարի 2010 թվականի
ՍԳՈ-866

ՆԱԼՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԼՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԼՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՌՈՔԵՐՏ ՄԵՂԵՐԴԻԶ-ՂԱՐԱՍՍԵՄՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝
ՆՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 221-ՐԴ
ՆՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 28-ՐԴ ՆՈԴՎԱԾԻ 4-ՐԴ
ՄԱՍԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱԼՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒ-
ԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԻԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղ. Երևան

23 մարտի 2010թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Նովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ գործով որպես պապասխանող կողմ ներգրավված՝ ՆՆ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՆ ԱԺ նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՆՆ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ռոքերտ Մեղերդիչ-Ղարասսեմյանի դիմումի հիման վրա՝ ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 28-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Ռ. Մեղերդիչ-Ղարասսեմյանի՝ 11.01.2010թ. ՆՆ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, կողմերի գրավոր բացաբությունները, հեղափոխելով ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի 17-ին, ՆՏ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի 221-րդ հոդվածը վերնագրված է «Վերաքննիչ դատարանի լիազորությունները», որի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է.

«1. Գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը՝

...

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ»:

Օրենսգրքի «Գործին մասնակցող անձանց իրավունքները և պարտականությունները» վերաբերողությամբ 28-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է.

«4. Գործին մասնակցող անձինք սուր բացառություն կամ սուր ցուցմունք տալու համար ենթակա են պապասխանաբարության՝ Նայաստանի Նանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապարմությունը հանգում է հետևյալին: Դիմելով Երեսան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ դիմողը խնդրել է պապասխանող «Միլվի Շաքար Կոնցեռն» ՓԲԸ-ից որպես վնաս բռնագանձել իր կողմից վճարված գումարները: Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 19.12.2007թ. վճռով հայցը բավարարվել է մասնակի: Նակընդդեմ հայցի մասով գործի վարույթը կարճվել է:

ՆՏ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 20.03.2008թ. որոշմամբ բեկանվել է քաղաքացիական գործը, հակընդդեմ հայցի մասով ստորադաս դատարանի վճիռը թողնվել է անփոփոխ:

Երեսանի քաղաքացիական դատարանի՝ 27.02.2009թ. վճռով հայցը մերժվել է:

ՆՏ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 23.04.2009թ. վճռով մերժել է վերաքննիչ բողոքը:

ՆՏ վճռաբեկ դատարանը 08.07.2009թ. որոշում է կայացրել վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին:

3. Դիմողը ՆՏ սահմանադրական դատարանում վիճարկելով օրենսգրքի 221-րդ - հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ գրնում է, որ այն չի համապատասխանում իրավական որոշակիության պահանջին այն առումով, որ դրանով չի սահմանվում բավարար հստակ

ձեւակերպված ընթացակարգ, այն գուրկ է որոշակիությունից, իրավակիրառական պրակտիկայում խառնաշփոթի եւ կամայական դրսեւորումների պարճառ է դառնում:

Օրենսգրքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի առումով դիմողը նշում է, որ վերոնշյալ դրույթը խիստ թերի է եւ չի ապահովում նշված հոդվածի կիրառման համար անհրաժեշտ որոշակիությունն այն առումով, որ չի պարունակում դրույթ այն չպահպանելու դեպքում ծագող հետեւանքների վերաբերյալ:

4. Պատասխանողը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ դիմողն օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի առնչությամբ առավելապես անդրադարձել է ընդհանուր իրավասության դատարանների կողմից կոնկրետ գործով կատարված դատավարական գործողություններին եւ կայացրած որոշումներին, իսկ վիճարկվող իրավադրույթի սահմանադրականության խնդրին անդրադարձել է խիստ հպանցիկ՝ ներկայացնելով ընդհանուր բնույթի դատողություններ, առանց կոնկրետ փաստարկներ ներկայացնելու: Ըստ պատասխանողի՝ օրենսգրքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի առնչությամբ դիմողն ըստ էության չի վիճարկում նշված հոդվածի սահմանադրականությունը, քանի որ դրա հակասահմանադրականության վերաբերյալ որեւէ փաստարկ չի ներկայացնում: Այս դրույթի վերաբերյալ դիմողի վերլուծություններն ու եզրահանգումները վերաբերում են դրա իրավական նպատակահարմարությանը, սակայն անգամ այս դեպքում ներկայացված փաստարկները դժվար է հիմնավոր համարել:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 28-րդ հոդվածի 4-րդ մասի հակասահմանադրականության առնչությամբ դիմողն իր դիմումը հիմնավորում է բացառապես դատարանների կողմից, իր գնահատմամբ, թույլ տրված սխալներով եւ օրենքի խախտումներով՝ որեւէ կերպ չհիմնավորելով վիճարկվող նորմի եւ ՏՏ Սահմանադրության միջեւ առկա որեւէ հակասություն:

Դիմողը՝ ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության եւ կիրառման արդյունքում ընդունված դատական ակտերի օրինականության հարց:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 28-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության հարցի նկատմամբ կիրառելի է ՏՏ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԴԱՌ-21 որոշմամբ արքայապարսի այն իրավական դիրքորոշումը, ըստ որի. «Բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես ՏՏ սահմանադրական դատարանի քննությանը ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

6. ՏՏ սահմանադրական դատարանն իր ՍԴՌ-839 որոշման մեջ դիրքորոշում է հայտնել առ այն, որ. ««Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 69 հոդվածի

4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68 հոդվածի 7-րդ մասում նշված դրեւ հարկանիշով»:

ՆՏ սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս արձանագրել է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը՝ գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»:

Աեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 101-րդ - հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին կետի, 69-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 7-րդ - մասերի պահանջներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Ռոբերտ Մեղերդիչ-Ղարաստեմյանի դիմումի հիման վրա՝ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 28-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ
Վ. ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆ**

*23 մարտի 2010 թվականի
ՄԴՈ-870*

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ ԿԱՐԱՊԵՏ
ՌՈՒԲԻՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ ՆԱՅԱՍԱԿՆԻ
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 35-ՐԴ ՆՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 67-ՐԴ
ՆՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԲՅՈՒՆ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

30 մարտի 2010թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարոյությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Նովիաննիսյանի (գեկուցող), Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող կողմի ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի, Ա. Ղազարյանի, պապասխանող կողմի ներկայացուցիչ՝ ՆՆ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՆՆ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Արամ Սարգսյանի եւ Կարապետ Ռուբինյանի դիմումի հիման վրա՝ Նայասպանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 67-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Ա. Սարգսյանի եւ Կ. Ռուբինյանի՝ 15.12.2009թ. ՆՆ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի հաղորդումը, դիմող եւ պապասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հեղափոխելով ՆՆ քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Նայասպահանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, Նայասպահանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածը, որը վերնագրված է «Քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները», վիճարկվող 2-րդ մասում սահմանում է. «Քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, իսկ գործի վարույթը ենթակա է կարճման՝ կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում, եթե սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները»:

Վիճարկվող դրույթը փոփոխության է ենթարկվել 25.05.06թ. «ՆՏ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՆՕ-91-Ն ՆՏ օրենքով:

Օրենսգրքի՝ արդարացվածին պատճառված վնասի հատուցման կարգը սահմանող 67-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ վիճարկվող դրույթով սահմանված է. «Արդարացվածին պատճառված վնասը հատուցվում է քաղաքացիական դատավարության կարգով»:

2. Գործի դատավարական նախապատրաստումը հանգում է հետևյալին: ՆՏ հատուկ քննչական ծառայության հատուկ կարելություն գործերով ավագ քննիչի՝ 12.12.2008թ. և 13.12.2008թ. «Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշումներով համապատասխանաբար՝ դիմողներ Ա. Սարգսյանի և Կ. Ռուբինյանի նկատմամբ դադարեցվել է քրեական հետապնդումը՝ հանցագործության կատարմանը նրանց մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով: Դիմողները քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքի առնչությամբ բողոքարկել են նշված որոշումները ՆՏ գլխավոր դատախազին: Դիմողների բողոքները մերժվել են: Դիմողների անունից 17.01.2009թ. և 18.01.2009թ. բողոքներ են ներկայացվել Երեւան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան: Վերջինս իր՝ 16.02.2009թ. և 09.03.2009թ. որոշումներով մերժել է համապատասխանաբար՝ դիմողներ Ա. Սարգսյանի և Կ. Ռուբինյանի անունից ներկայացված բողոքները: Առաջին արյանի դատարանի նշված որոշումները բողոքարկվել են ՆՏ քրեական վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանը 19.04.2009թ. և 11.05.2009թ. կայացրել է որոշումներ, որոնցով մերժել է վերաքննիչ բողոքները: Վերաքննիչ դատարանի որոշումների դեմ ներկայացվել են վճռաբեկ բողոքներ: Վճռաբեկ դատարանը բողոքները վերադարձրել է:

3. Ըստ դիմողների՝ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթը հակասում է ՆՏ Սահմանադրության 21-րդ հոդվածի պահանջներին: Դիմողների պնդմամբ՝ այդ հակասությունը դրսևորվում է նրանում, որ վիճարկվող դրույթով նախատեսված՝ քրեական գործը կարճելու և քրեական հետապն-

դումը դադարեցնելու հիմքի կիրառմամբ ընդունված ակտերն ընթերցողի մոտ չփարավարված կասկածների մասին համոզմունք են ձևավորում, ինչն անհամապետելի է անմեղության կանխավարկածի սկզբունքի հետ: Դիմողները գտնում են, որ վիճարկվող դրույթում նշված հիմքով գործի կարճատև դեպքում վարույթն իրականացնող մարմնի սուբյեկտիվ գիտակցության մեջ շարունակում է պահպանվել հանցագործությանը մեղադրյալի մասնակցության փաստի վերաբերյալ կասկածը, որը հիմնավորող ապացույցները բավարար չեն:

Օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականությունը դիմողները վիճարկում են հետևյալ տեսանկյունից.

ա/ վիճարկվող դրույթը հակասում է ՏՏ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների առաջին մասերի պահանջներին, քանի որ բացառում է միեւնույն դատաքննության շրջանակներում միմյանց հետ կապված փարբեր պահանջների քննության ու լուծման հնարավորությունը: Իրենց այս պնդումը դիմողները հիմնավորում են՝ հղում կատարելով, ի թիվս այլնի, նաեւ ՏՏ սահմանադրական դատարանի ՄԴՈ-787 որոշմանը,

բ/ ըստ դիմողների՝ վիճարկվող դրույթը հակասում է ՏՏ Սահմանադրության 18-րդ հոդվածի առաջին մասի պահանջներին, քանի որ չի նախատեսում արդարացվածին պատճառված վնասի հատուցման արտադատարանական կարգ: Իրենց այս պնդումը դիմողները հիմնավորում են նրանով, որ Սահմանադրության 18-րդ հոդվածը թույլ է տալիս իրավունքների եւ ազատությունների իրավական պաշտպանության նպատակով դիմել ոչ միայն դատական, այլեւ պետական այլ մարմինների՝ փվյալ պարագայում արդարացվածին պատճառված վնասի հատուցման հարցն արտադատարանական կարգով լուծելու համար,

գ/ դիմողները գտնում են նաեւ, որ վիճարկվող դրույթը հակասում է ՏՏ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների առաջին մասերի պահանջներին, քանի որ չի նախատեսում արդարացվածին պատճառված բարոյական վնասի նյութական եղանակով հատուցման ինստիտուտ:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողների փաստարկների դեմ, գտնում է, որ վիճարկման առարկա դրույթն ուղղակիորեն բխում է ՏՏ քրեական դատավարության մրցակցային բնույթից, երբ քրեական դատավարությունն իրականացվում է հստակ սահմանված դատավարական ընթացակարգով: Եթե փվյալ ընթացակարգի շրջանակներում օրենքով սահմանված կարգով անձի մեղավորությունը չի ապացուցվում, անձը պահպանում է անմեղի իր օբյեկտիվ կարգավիճակը: Դա է պատճառը, որ քրեական դատավարության օրենսգիրքը պարտավորեցնում է վարույթն իրականացնող մարմնին յուրաքանչյուր դեպքում դադարեցնել քրեական հետապնդումը, եթե անձի մեղավորությունը չի ապացուցվել:

Պատասխանողի կարծիքով, ինչպես քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով, այնպես էլ 2-րդ մասով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում գործի վարույթը կարճելը եւ քրեական հետապնդումը դադարեցնելը միշտ ենթադրում են մեղադրյալի լիովին արդարացում՝ դրանից բխող բոլոր իրավական

հեփեսանքներով: Ընդ որում, իրավական հեփեսանքների փեսանկյունից որևէ փարբերակում չի դրվում, թե քրեական հեփեսակնումը որ արդարացնող հիմքով է դադարեցվել, եւ անձն օգրվում է քր. դափ. օր-ի 66-րդ հողվածով երաշխավորված՝ արդարացվածի բոլոր իրավունքներից:

Պափասախանողը փաստում է, որ քրեական հեփեսակնումը դադարեցվում է ՏՏ քր. դափ. օր-ի 35-րդ հողվածի 2-րդ մասի հիմքերով, եթե պարզվում է, որ հանցագործության դեպքը փրեղի է ունեցել եւ բովանդակում է հանցակազմի հարկանիշներ, բայց կարարել է ոչ թե մեղադրյալը, այլ մեկ այլ անձ: Ըստ պափասախանողի՝ դրանով է պայմանավորված, որ քրեադարավարական օրենսդրությամբ հանցակազմի բացակայության հիմքերի հեփ նախափեսվեց եւս մեկ հիմք՝ հանցագործության կարարմանն անձի մասնակցությունն ապացուցված չլինելը:

ՏՏ քր. դափ. օր-ի 67-րդ հողվածի 3-րդ մասի առնչությամբ պափասախանողը գրնում է, որ դիմողի կողմից ՏՏ սահմանադրական դափարանի ՄԴՈ-787 որոշման վկայակոչումն արդարացված չէ, քանի որ այնփրեղ խոսքը վերաբերում է միմյանց հեփ փոխկապակցված հարաբերությունների ընդդափության կանոններին: Միաժամանակ կարծիք է արփահայտում, որ դիմողի առաջարկած իրավակարգավորումն անհնարին կլինի իրականացնել այն պարագայում, երբ մեղադրյալն արդարացվածի կարգավիճակ է ձեռք բերում մինչդափական վարույթի ընթացքում:

5. Սահմանադրական դափարանն արձանագրում է, որ ՏՏ Սահմանադրության 21-րդ հողվածում ամբագրված՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը պահանջում է հանցագործության կարարման մեջ մեղադրվողին համարել անմեղ այնքան ժամանակ, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել օրենքով սահմանված կարգով՝ դափարանի օրինական ուժի մեջ մփած դափավճռով: Այս սկզբունքի եությունն անձի մեղքը բացառապես դափական կարգով հաստատելու երաշխավորումն է, այսինքն՝ այս սկզբունքի ուժով անձի մեղքը կարող է հաստատվել բացառապես քրեական դափավարության արդյունքում եւ միայն դափական ակտով: Անմեղության կանխավարկածի սկզբունքը պահանջում է նաեւ, որ անձի նկարմամբ կիրառվող դափավարական միջոցները պափոժի փարրեր չպեփք է պարունակեն, իսկ մեղադրյալը պարփավոր չէ ապացուցել իր անմեղությունը:

Մարդու իրավունքների ելրուպական դափարանը Բարբերան, Մեսեգեն եւ Ջաբարդոն ընդդեմ Իսպանիայի գործով (Barbera, Messegue and Jabardo v. Spain 10590/83, կեփ 77) 1988թ. դեկտեմբերի 6-ի 10590/83 վճռում անմեղության կանխավարկածին հաղորդել է հեփեյալ բովանդակությունը. «...6-րդ հողվածի 2-րդ մասը սահմանում է անմեղության կանխավարկածի սկզբունքը: Այն պահանջում է, ի թիվս այրոց, որ իրենց պարփականությունները կարարելիս դափարանի անդամները չպեփք է ունենան կանխակալ կարծիք առ այն, որ մեղադրյալը կարարել է մեղսագրվող արարքը, ապացուցման պարփականությունը պեփք է կրի մեղադրանքի կողմը, եւ ցանկացած կասկած պեփք է մեկնարանվի հօգուտ մեղադրյալի»:

Ելնելով անմեղության կանխավարկածի սկզբունքի իրավաբանական բովանդակությունից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 21-րդ հոդվածում ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ նպատակ ունենալով պաշտպանել անձին հանիրավի մեղադրանքից, միաժամանակ չի կարող բացառել իրավասու մարմնի կողմից նրան քրեական հանցագործության մեջ կասկածելու հանգամանքը՝ մինչև այն պահը, երբ այդ կասկածներն այդ մարմնի իրավաչափ գործողությունների արդյունքում հնարավոր չի եղել հիմնավորվել:

6. Անմեղության կանխավարկածի առանձին դրսևորում է «չփարսաված կասկածները հոգուր մեղադրյալի մեկնաբանելու» պահանջը (ՏՏ Սահմանադրության 21-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասություն):

Սահմանադրական դատարանը՝ հաշվի առնելով նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները (մասնավորապես, տես Vassilios Stavropoulos v. Greece, 35522/04, 27.09.2007), գտնում է, որ որեւէ որակական փարբերություն չպետք է դրվի ապացույցների բացակայության եւ անձի անմեղությունը կասկածի փակ շղնող արդարացման դատավճռի հիմքով քրեական գործի ավարտման միջև:

Քրեական հետապնդումը դադարեցնելու վիճարկվող հիմքը նույնպես կոչված է իրացնելու անմեղության կանխավարկածի սկզբունքի բաղադրարարը հանդիսացող՝ «չփարսաված կասկածները հոգուր մեղադրյալի մեկնաբանելու» սկզբունքը: Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ նշված պետանկյունից խնդիր կարող է առաջանալ միայն այն դեպքում, եթե իրավական հետեւանքի առումով փարբերություն դրվի՝ ապացույցների բացակայության հիմքով, եւ անձի անմեղությունը հաստատված լինելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու միջև: Այս առնչությամբ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսդիրը նման փարբերակում չի կատարել: Ավելին, ի փարբերություն ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-13-րդ կետերում ամրագրված՝ ոչ արդարացնող հիմքերով քրեական գործի կարճման, երբ մեղադրյալի կողմից հանցանքի կատարումը, որպես կանոն, մինչդարական կամ դատական վարույթներում ապացուցված է, եւ ըստ այդմ, օրենսդիրը մեղադրյալին արդարացվածի կարգավիճակ չի փրամադրում, վիճարկվող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում անձին վերապահվում է արդարացվածի կարգավիճակ:

Նկատի ունենալով, որ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասում փեղ գրած՝ «...**կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում...**» դրույթը կարող է մեկնաբանվել երկու առումով, առաջին՝ «**չմասնակցությունը, դա չապացուցված մասնակցությունն է**» կամ «**հանցագործության կատարմանը անձի ապացուցված չմասնակցությունն է**», սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առնվող 35-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության հարցը պետք է գնահատվի հենց երկրորդ մեկնաբանման պետանկյունից, քանի որ, ի թիվս այլնի, ՏՏ քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի 42-րդ կետի համաձայն՝ արդարացվածն այն անձն է, որի

նկատմամբ կայացվել է արդարացման դափաճիչ կամ որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է անմեղության հիմքով:

7. Սահմանադրական դափարանը գտնում է, որ անմեղության կանխավարկաձև անձին պաշտպանում է ոչ թե քրեական հետապնդման այն հիմքից, որը կասկած է թողնում անձի՝ փվյալ հանցագործությանը մասնակցության առնչությամբ, այլ այնպիսի որոշումներից կամ դրանցում այնպիսի ձեւակերպումներից, որոնք կարող են կասկածի ենթարկել փվյալ անձի արդարացումը կամ անմեղությունը: Նշված հանգամանքը գործնականում կարող է ավելի մեծ չափով իրավաբանական նշանակություն ունենալ արդարացված անձին պաշտպանված վնասի հափուցման իրավունքի կապակցությամբ ընդունվող որոշումների համար: Այս առնչությամբ սահմանադրական դափարանն արձանագրում է, որ ՏՊ քրեադափարակաթ օրենսդրությունը վիճարկվող հիմքով արդարացվածին ոչ միայն պաշտպանում է նման հետագա ոչ իրավաչափ որոշումներից, այլ պաշտպանում է նաեւ հենց քրեական հետապնդումը դադարեցնելու որոշման մեջ այնպիսի ձեւակերպումներ նախարեսելուց, որոնք կարող են կասկածի ենթարկել անձի արդարացումը կամ անմեղությունը: Մասնավորապես, ՏՊ քրեական դափարակաթ օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կերերով եւ 2-րդ մասով նախարեսված հանգամանքների առկայությամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս չի թույլարքվում որոշման մեջ փալ ձեւակերպումներ, որոնք կասկածի փակ կղնեն այն անձի անմեղությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է:

Տաշվի առնելով, որ վիճարկվող հիմքով քրեական հետապնդման դադարեցման եւ քրեադափարակաթ օրենսդրությամբ սահմանված արդարացնող այլ հիմքերով քրեական հետապնդման դադարեցման միջեւ իրավունքի փեսանկյունից որեւէ որակական փարբերություն օրենսդրությունը չի նախարեսում, ինչպես նաեւ նկարի ունենալով, որ օրենսդրությունը նախարեսում է պաշտպանություն ընդղեն այն ակերբի, որոնք կարող են կասկածի ենթարկել վիճարկվող հիմքով անձի արդարացումը կամ նրա անմեղությունը՝ սահմանադրական դափարանը գտնում է, որ քրեական հետապնդումը դադարեցնելու մասով վիճարկվող հիմքն իրավակիրառական պրակփիկայում համարժեք իրացման դեպքում չի կարող վփանգել անձի անմեղության կանխավարկաձը:

8. Տայրնի է, որ քրեական իրավունքում «հանցակազմ» հասկացությունը բնորոշվում է որպես հանրորեն վփանգավոր արարքի՝ քրեական օրենսգրքով սահմանված հարկանիշների համակցություն: Այսինքն, որպեսզի անձը քրեական պարասխանարքվության ենթարկվի, նրա արարքը պեփք է որակվի հանրորեն վփանգավոր՝ որում առկա են քրեական օրենսգրքով նախարեսված կոնկրեփ արարքի բոլոր հարկանիշները: «Տանցակազմի բացակայություն» եգրոյթը նշանակում է արարքի առկայություն, սակայն այն չի բնորոշվում որպես քրեական օրենսգրքով նախարեսված հարկանիշներ պարունակող հանրորեն վփանգավոր արարք, այլ կերպ՝ հանցագործություն: Տերեւարար, հանցագործության յորաբանչյոր փեսակին համապարասխանում է իր կոնկրեփ հանցա-

կազմը, որի հիմնական փարրերն են օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտը եւ սուբյեկտիվ կողմը: Այս փարրերից թեկուզ մեկի բացակայությունը վկայում է հանցակազմի, հետեւաբար եւ՝ հանցագործության բացակայության մասին:

ՏՃ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե.

- ա) առկա է հանցագործությունը,
- բ) կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չէ,
- գ) սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:

Այսպեղ հիմնական հանգամանքն այն է, որ «առկա է հանցագործությունը» եզրույթն արդեն իսկ վկայում է հանցակազմի առկայության մասին, սակայն այն առարկայացված չէ կոնկրետ սուբյեկտի առնչությամբ: Ըստ էության հանցակազմը հանցագործության իրավաբանական բնորոշումն է: Եթե առկա է հանցագործությունը՝ հանցակազմի բոլոր փարրերի առկայությամբ, ապա չի կարող հանցակազմի բացակայության հիմքով գործի վարույթը կարճվել, որովհետեւ դա ուղղակիորեն կխախտի փոփոխ կողմի իրավունքները: Իսկ քրեական հետապնդումը կարող է դադարեցվել կասկածյալի կամ մեղադրյալի անձի առնչությամբ:

ՏՃ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ինստիտուտի գոյությունն առավելապես իմաստավորվում է մրցակցային դատավարության սկզբունքի կիրառման շրջանակներում՝ անձի իրավունքների պաշտպանության փեսանկյունից, քանի որ ապացուցման պարտականությունը կրողի կողմից հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցության չապացուցելը հավասարազոր է անձի անմեղության ճանաչմանը: Իսկ իրավակիրառական պրակտիկան հետեւողականորեն պետք է իրացնի ՏՃ քր. դատ. օր-ի 261-րդ հոդվածի վերոհիշյալ պահանջը:

Մեղավորությունը հիմնավորելու համար ապացույցների բավարար համակցության բացակայության դեպքում է միայն դադարեցվում քրեական հետապնդումը՝ 35-րդ հոդվածի երկրորդ մասի հիմքով: Մինչդեռ ՏՃ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «...իսկ գործի վարույթը ենթակա է կարճման» դրույթը կարող է հանգեցնել իրավական կարգավորման ներքին հակասականության ու իրավական անորոշության: Ըստ էության նույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերում հստակ չեն առանձնացված գործի վարույթի կարճման եւ քրեական հետապնդման դադարեցման կամ այդ երկու ինստիտուտների համարեղ կիրառման հիմքերը: Նոդվածի երկու մասերի համադրված վերլուծությունը, ինչպես նաեւ միջազգային պրակտիկան վկայում են, որ ՏՃ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 2-րդ մասն սկզբունքորեն վերաբերում է քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերին:

Միաժամանակ, ՏՃ քր. դատ. օր-ի 306-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ «Մեղադրանքից դատախազի հրաժարվելու դեպքում դատարանը կարճում է քրեական գործով վարույթը եւ դադարեցնում քրեական հետապնդումը, իսկ եթե դատախազը հրաժարվում է առանձին մեղադրյալի մասով՝ **դադարեցնում է քրեական հետապնդումն այդ մեղադրյալի նկատմամբ**»: Իսկ համաձայն նույն օրենսգրքի 366-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ մասերի՝ «2. Դատարանը պարտավոր է սույն օրենսգրքի 35 հոդվածի առա-

ջին մասի 1-3-րդ կետերով եւ երկրորդ մասով նախատեսված հիմքերից որեւէ մեկի առկայության դեպքում Կրկնապատկան նիստում կայացնել արդարացման դատավճիռ:

3. Եթե արդարացման դատավճիռ կայացնելիս անհայտ է մնում այդ հանցանքը կատարած անձը, դատարանը, դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, գործն ուղարկում է դատախազին՝ լուծելու նոր անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու հարցը: 4. Դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանը մեղադրանքի այդ մասով կայացնում է արդարացնող դատավճիռ»:

Վկայակոչված դրույթների եւ քրեական դատավարության օրենսգրքի ընդհանուր հասկացությունների (մասնավորապես՝ 6-րդ հոդվածի 42-րդ կետ) համադրված վերլուծությունը վկայում է, որ ՄՊ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով քրեական հետապնդումը կարող է դադարեցվել, ինչը հավասարազոր է անձի անմեղության փաստի հաստատման, իսկ դատաքննության փուլում ապացույցների անբավարարության հանգամանքը նաեւ արդարացման դատավճիռ կայացնելու հիմք է:

ՄՊ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «...իսկ գործի վարույթը ենթակա է կարճման» դրույթի գոյությունն ու կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով դրա գործադրումը նախաքննության եւ դատաքննության փուլերում կվերանայ Կրկնապատկան շահերի պաշտպանությունը եւ կարող է արգելք հանդիսանալ ՄՊ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքի պաշտպանության համար, ինչպես նաեւ կասկածի տակ է մնում կասկածյալի կամ մեղադրյալի անմեղությունը՝ հանցագործությանը նրանց մասնակցությունն ապացուցված չլինելու պարագայում:

9. Նաշվի առնելով ՄՊ քրեական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի հակասահմանադրականության վերաբերյալ դիմողների ներկայացրած վերոհիշյալ փաստարկները՝ սահմանադրական դատարանը սույն գործի քննության շրջանակներում հարկ է համարում պարզել.

ա/ որքանով է իրավաչափ արդարացվածի հատուցման պահանջի լուծումը միայն քաղաքացիական դատավարության կարգով,

բ/ ՄՊ Սահմանադրության տեսանկյունից որքանով է իրավաչափ արդարացվածին պարճառված վնասի հատուցման արտադարարական կարգ չնախատեսելը,

գ/ արդյո՞ք վիճարկվող դրույթի խնդիրն է նախատեսել արդարացվածին պարճառված բարոյական վնասի նյութական եղանակով հատուցման ինստիտուտ:

Արդարացվածն ըստ քր. դատ. օր-ի 66-րդ հոդվածի՝ ունի փոխհատուցում ստանալու իրավունք:

Մինչդարական վարույթում անձն արդարացվածի կարգավիճակ ձեռք է բերում քր. դատ. օր-ի՝ 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով եւ 2-րդ մասով նախատեսված հիմքերով քրեական հետապնդման դադարեցման դեպքում, իսկ դատական քննության փուլում՝ օրինական ուժի մեջ մտնող արդարացման դատավճիռի դեպքում (ՄՊ քրեական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մաս): Մինչ այդ, կասկածյալին կամ

մեղադրյալին պատճառված վնասի հատուցման պահանջի իրավունք գոյություն չունի, որովհետև դեռևս նա արդարացված չէ: Անձը կարող է ՆՆ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա հատուցման պահանջով դատարան դիմել միայն դրանում նշված հիմքերով արդարացվածի կարգավիճակ ձեռք բերելուց հետո:

Սահմանադրական դատարանը՝ վերահաստատելով իր՝ 2009թ. փետրվարի 3-ի ՍԴՈ-787 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ վերջիններս խնդրո առարկա դեպքի առնչությամբ կիրառելի չեն, չեն վերաբերում միմյանց հետ փոխկապակցված հարաբերություններով գործի քննության ընդդատությանը, չեն խոչընդոտում դատարանին գործի քննության շրջանակներում ճշմարտությունը բացահայտելուն, ինչպես նաև մինչդարական վարույթում արդարացվածի կողմից արդարացման հիմքերի վերաբերյալ ներկայացված բողոքը քննելիս արդար որոշում կայացնելուն:

Քննության առնվող գործով արդարացվածին պատճառված վնասի հատուցման պահանջն իրավունք է, այլ ոչ թե խախտված իրավունքի պաշտպանություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Տոմասին ընդդեմ Ֆրանսիայի գործով վճռում (Tomasi v. France, Judgement of 27 August 1992, Series A No. 241-A, parag. 121) նշել է, որ քրեական գործով հատուցում ստանալու իրավունքը՝ «չնայած գործը քրեական դատարանին ընդդատյալ լինելուն, ունի քաղաքացիական բնույթ»:

Իսկ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի քննության իրավահարաբերություններին վերաբերող առանձին հարցերի կարգավորումը նախատեսված է ՆՆ թր. դատ. օր-ի 20-րդ գլխում:

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանն իրավաչափ է համարում առանձին քաղաքացիական գործի վարույթի շրջանակներում արդարացվածի հատուցման պահանջի քննության վերաբերյալ ՆՆ օրենսդրությամբ նախատեսված գործող կարգը:

10. ՆՆ Սահմանադրության 3-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Միջազգային իրավունքի սկզբունքների եւ նորմերի իրավակարգավորման ուղղվածության ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ վերջիններս մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանության եղանակների առնչությամբ նախապատվությունը փայլա են իրավունքների եւ ազատությունների պաշտպանության դատական կարգին՝ որպես առավել արդյունավետ միջոցի, որոշ դեպքերում չբացառելով իրավունքների եւ ազատությունների պաշտպանության արտադատարանական կարգը:

Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի ուժով թե՛ դատական, թե՛ արտադատարանական կարգով իրավունքների եւ ազատությունների իրավական պաշտպանությունը պետք է լինի արդյունավետ:

Միաժամանակ, Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բացառապես Նայասպանի Նանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը:

Վերոնշյալ սահմանադրական դրույթների պահանջներից ելնելով՝ օրենսդրի հայեցողությունն է սահմանելու իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմաններն ու կարգը՝ ընտրություն կատարելով իրավունքների պաշտպանության դատական և արտադատարանական կարգերի իրացման ձեւերի միջեւ՝ այդ հայեցողությունն իրականացնելիս միաժամանակ պահպանելով վերոնշյալ սկզբունքները:

Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ արդարացվածին պատճառված վնասի հատուցման արտադատարանական կարգ չնախատեսելն այն դեպքում, երբ փվյալ իրավունքի իրացման և պաշտպանության համար նախատեսված է դատական կարգ, սահմանադրականության փեսանկյունից իրավաչափ է:

11. Տ քաղաքացիական օրենսգրքի, մասնավորապես, 14-րդ հոդվածի 10-րդ կետը, 17, 18, 19, 1058, 1063, 1064, 1075-րդ հոդվածները սահմանում են քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակները և այդ եղանակների դրսեւորման ձեւերը, ինչպես նաեւ պետության պատասխանատվությունը: Նշված հոդվածների ուսումնասիրությունից բխում է, որ Տ քաղաքացիական օրենսդրությունը, որի խնդիրն է, ի թիվս այլնի, սահմանել քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակները, ինչպես նաեւ պատճառված վնասի դիմաց հատուցման եղանակներն ու միջոցները, բարոյական վնասի նյութական փոխհատուցման ինստիտուտ չի նախատեսել: Քրեական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի վիճարկվող 3-րդ մասի խնդիրը չէ նախատեսել արդարացվածին պատճառված բարոյական վնասի նյութական եղանակով հատուցման ինստիտուտ: Այն Տ քաղաքացիական օրենսգրքի խնդիրն է, հետեւաբար՝ դուրս է փվյալ գործով քննության առարկայի շրջանակից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 6-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 19, 63, 64 և 69-րդ հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Նայասպանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «...**իսկ գործի վարույթը ենթակա է կարճման**» դրույթը՝ կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու առնչությամբ, ճանաչել Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի (1-ին մաս) և 21-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր:

2. Նայասփրանի Նանրապեղծության քրեական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Նայասփրանի Նանրապեղծության Սահմանադրությանը:

3. Նայասփրանի Նանրապեղծության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

30 մարտի 2010 թվականի
ՄԴՈ-871

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ
ՎՐԱ՝ ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 309.1-ՐԴ ՆՈՒՎԱԾԻ
ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՆԱՅԱՍԱՆԻ
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 ապրիլի 2010թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դափարանը՝ կազմով.

Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ն. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի, Մ. Թովուզյանի, Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի, Ա. Ղազարյանի,

գործով որպես պապասխանող ներգրավված՝ ՆՃ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՃ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դափարանի մասին» ՆՃ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Աշոտ Մանուկյանի դիմումի հիման վրա՝ Նայասարանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի առաջին եւ երկրորդ մասերի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ա. Մանուկյանի՝ 18.12.2009թ. ՆՃ սահմանադրական դափարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պապասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հեղափոխելով Նայասարանի Նանրապետության

ությունը քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Մ քրեական դատավարության օրենսգիրքը Մ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի՝ «Առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմանները» վերաբառությամբ 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը սահմանում են.

«1. Եթե առաջին աբյանի դատարանում դատական քննության ընթացքում մեղադրողը գտնում է, որ առաջադրված մեղադրանքը խտրացման կամ մեղմացման առումով ենթակա է լրացման կամ փոփոխման, քանի որ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել եւ չէին կարող հայտնի լինել մինչդատական վարության, եւ եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու առանց դատական քննությունը հետաձգելու, ապա դատարանին ներկայացնում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն: Մեղադրողը նման միջնորդությամբ կարող է հանդես գալ մինչեւ դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը:

2. Մույն հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում դատարանը դատախազի միջնորդությամբ հետաձգում է նիստը՝ անհրաժեշտ քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար: Նիստը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան մեկ ամսով, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու համար ողջամտորեն պահանջվում է ավելի երկար ժամկետ:

Առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու դեպքում մեղադրողը կազմում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու մասին որոշում, որը ձեռք բերված նյութերի հետ ներկայացնում է դատարան»:

Մ քրեական դատավարության օրենսգրքում 309.1-րդ հոդվածը լրացվել է Մ Ազգային ժողովի կողմից 2007թ. նոյեմբերի 28-ին ընդունված ՌՕ-270-Ն օրենքով: Նշված օրենքով 309.1-րդ հոդվածի լրացումը պայմանավորվել է Մ սահմանադրական դատարանի 2007թ. հուլիսի 24-ի ՄԴՆ-710 որոշմամբ, որով Մ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները ճանաչվեցին Մ Սահմանադրության 19-րդ հոդվածին (1-ին մաս) հակասող եւ անվավեր: Մույն որոշմամբ «Սահմանադրական դատարանի մասին» Մ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի հիմքերով Մ Սահմանադրության 19-րդ հոդվածին (1-ին մաս) հակասող եւ անվավեր ճանաչվեցին նաեւ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ

հողվածի 1-ին կետի, ինչպես նաև 292-րդ հողվածի 5-րդ կետի, 297-րդ հողվածի, 363-րդ հողվածի 2-րդ մասի, 394-րդ հողվածի 5-րդ մասի, 398-րդ հողվածի 6-րդ մասի, 421-րդ հողվածի 3-րդ մասի դրույթները եւ 419-րդ հողվածի 2-րդ կետի՝ լրացուցիչ նախաքննություն նախատեսող դրույթը:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ թիվ 62202608 քրեական գործով 2008 թվականի մարտի 4-ին դիմողին մեղադրանք է առաջադրվել ՆՏ քրեական օրենսգրքի 225.1-րդ հողվածի 1-ին մասով եւ 316-րդ հողվածի 2-րդ մասով: 2008 թվականի հունիսի 10-ին թիվ 62202608 քրեական գործից անջարկվել են դիմողի վերաբերյալ գործի նյութերը, եւ անջարկված մասով նախաքննությունը շարունակվել է թիվ 62212308 քրեական գործով: 2008 թվականի հունիսի 13-ի որոշմամբ դիմողը ներգրավվել է որպես մեղադրյալ, եւ նրան մեղադրանք է առաջադրվել ՆՏ քրեական օրենսգրքի 225.1-րդ հողվածի 1-ին մասով եւ 316-րդ հողվածի 1-ին մասով: 2008 թվականի հունիսի 16-ին քրեական գործը՝ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան:

2008 թվականի հուլիսի 29-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է մեղադրողի նույն օրվա միջնորդությունը՝ անհրաժեշտ քննչական եւ դատավարական գործողություններ կատարելու եւ դիմողի նկատմամբ նոր մեղադրանք առաջադրելու համար դատաքննությունը մեկ ամսով հետաձգելու վերաբերյալ:

2008 թվականի հուլիսի 30-ին դիմողին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, եւ նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՆՏ քրեական օրենսգրքի 225.1-րդ հողվածի 1-ին մասով եւ 316-րդ հողվածի 2-րդ մասով:

Երեւանի քրեական դատարանի, որտեղ գործն ուղարկվել է ըստ առարկայական ընդդատության, 2008 թվականի դեկտեմբերի 12-ի դատավճռով դիմողը ՆՏ քրեական օրենսգրքի 225.1-րդ հողվածի 1-ին մասով ճանաչվել է անպարպ եւ արդարացվել է: Դիմողը մեղավոր է ճանաչվել ՆՏ քրեական օրենսգրքի 316-րդ հողվածի 2-րդ մասով եւ դատապարտվել ազատազրկման հինգ տարի ժամկետով:

ՆՏ վերաքննիչ քրեական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 10-ի որոշմամբ օրինական ուժի մեջ է թողել ՆՏ քրեական օրենսգրքի 316-րդ հողվածի 2-րդ մասով դիմողի վերաբերյալ Երեւանի քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 12-ի դատավճիռը:

ՆՏ վճռաբեկ դատարանը՝ գտնելով, որ գործով ձեռք բերված ապացույցներով հիմնավորված է, որ դիմողը կատարել է ՆՏ քրեական օրենսգրքի 316-րդ հողվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքը, եւ վերաքննիչ դատարանը հանգել է ճիշտ եզրակացության, իր՝ 19.05.2009թ. որոշմամբ վերադարձրել է դիմողի պաշտպանի բերած վճռաբեկ բողոքը:

3. Դիմողը՝ որպես վիճարկվող օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի հակասահմանադրականության հիմնական փաստարկ, իր դիմումում վկայակոչում է ՆՏ սահմանադրական դատարանի 24.07.2007թ. ՍԴՈ-710 որոշումը, որով Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր են ճանաչվել դատարանի որոշմամբ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտը կարգավորող նորմերը:

Ըստ դիմողի՝ «ՆՏ «Քրեական դատավարության» օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը քողարկված կերպով հնարավորություն են տալիս կիրառել «լրացուցիչ նախաքննության ուղարկելու» ընթացակարգ, ինչը ՆՏ սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է հակասահմանադրական: Որպես փաստարկ դիմողը ներկայացնում է դատական պրակտիկայից այնպիսի օրինակ, երբ ԵԿԴ/0192/01/09 գործով ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածը կիրառվել է երեք անգամ, որից երկուսի դեպքում գրավոր ակտ չի կայացվել, «...որպեսզի բավարարի պարճառաբանված եւ հիմնավոր լինելու չափորոշիչին»:

Դիմողը գտնում է նաեւ, որ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ - հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի կիրառման դեպքում չի երաշխավորվում անձի՝ իրեն առաջադրված մեղադրանքին ծանոթանալու իրավունքը, քննչական գործողությունների արձանագրությունների պատճեններին ծանոթանալու իրավունքը, մինչեւ մեղադրանքը դատարան ուղարկելը՝ մեղադրանքի էության վերաբերյալ բացատրություն ստանալու եւ պաշտպան ունենալու իրավունքները, մեղադրանքի վերաբերյալ ցուցմունք տալու իրավունքը, առերեսման եւ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված այլ իրավունքներ: Դիմողը գտնում է, որ քրեական գործով ապացույցներ կարող են ստացվել միայն համապատասխան քննչական գործողություններ եւ դրանցից բխող դատավարական գործողություններ կատարելու միջոցով՝ պայմանով, որպեսզի մեղադրյալի համար ապահովվի ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի դատավարական երաշխիքները: Ըստ դիմողի՝ քրեական դատավարության սկզբունքների հետ անհամապետելի է նախաքննության մարմնի քննչական եւ դատավարական գործողությունների կատարումը՝ առանց գործը վարույթ ընդունելու:

Դիմողը վիճարկում է նաեւ օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով քննչական գործողությունների կատարմամբ ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունն այն պարճառաբանությամբ, որ տվյալ դեպքում վարույթն իրականացնող մարմինը դատարանն է, ուստի քննիչն իրավունք չունի կատարելու քննչական գործողություններ: Ըստ դիմողի՝ «դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատվելուց եւ դատարան ուղարկելուց հետո վարույթն իրականացնող մարմինը դատավարական օրենսգրքով, ըստ էության ոչ մի իրավասություն չունի դատարանի վարույթում գտնվող քրեական գործի շրջանակներում որեւէ քննչական գործողություն կատարելու»:

Դիմողը գտնում է նաեւ, որ «...սույն գործով խնդրահարույց իրավակարգավորման ինստիտուտի բաղկացուցիչ մաս է» նաեւ վիճահարույց հոդվածի 5-րդ մասը, եւ միջնորդում է համակարգային փոխկապակցության մեջ անդրադառնալ նաեւ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանադրականությանը:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված՝ քրեական գործերի քննության վարույթային կարգը երաշխավորում է դատավարության բոլոր փուլերում գործի բացահայտմանն ուղղված անհրաժեշտ գործունեության իրականացում՝ դատական քննության փուլերում ապացույցների ողջ ծավալի հեփազոտման արդյունքում: Դա է պարճառը, որ քր. դատ. օր-ը (հոդված 354) պահանջում է կողմերից դատական վիճաբանությունների փուլում իրենց ճառերում հիմնվել միայն այնպիսի ապացույցների վրա, որոնք հեփազոտվել են դատական քննության ընթացքում: Բացի այդ՝ քր. դատ. օր-ը ոչ միայն կողմերին օժտել է դատական քննության փուլում նոր ապացույցներ ներկայացնելու իրավունքով, այլև գործի հանգամանքները բացահայտելու իրավասությամբ օժտել է նաև դատարանին: Քր. դատ. օր-ի 23-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով և իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել քրեական գործով ճշմարտությունը բացահայտելու համար: Այս դրույթն ուղղակիորեն պայմանավորված է քրեական դատավարության մրցակցային բնույթով, որի համաձայն՝ դատարանը հանդես չգալով մեղադրանքի կամ պաշտպանության կողմում, այնուամենայնիվ, ներկայացնում է իրավունքի շահը: Ուստի դատական քննության ընթացքում դատավարության կողմերի և դատարանի ապացուցողական գործունեության արդյունքում կարող են ի հայտ գալ փաստական հանգամանքներ, որոնք հայտնի չէին և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում:

Ըստ պատասխանողի՝ քր. դատ. օր-ի 309.1-րդ հոդվածի կարգավորման պարագայում դատարանն այլևս իրավասու չէ քրեական գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության, այլ, հիմնվելով առկա ապացույցների վրա, պետք է գործը լուծի ըստ էության: Այս ամբողջ ընթացքում գործը շարունակում է մնալ դատարանի վարույթում, և դատարանն է սահմանում այն ժամանակահատվածը, որի ընթացքում պետք է կատարվեն համապատասխան գործողությունները (որպես կանոն՝ մեկ ամիս, իսկ բացառիկ դեպքերում դատարանի որոշմամբ՝ եւս մեկ ամիս):

Պատասխանողը գտնում է, որ հիմնավոր չէ նաև դիմողի այն պնդումը, որ վիճարկվող իրավակարգավորումը սահմանափակում է ամբաստանյալի պաշտպանության իրավունքը: Քր. դատ. օր-ի 309.1-րդ հոդվածում սահմանված իրավակարգավորումն սրեղծում է ամբաստանյալի իրավունքների պաշտպանության գործունեության երաշխիքներ: Այդ հոդվածը կարգավորում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմանները: Դա պայմանավորված է նրանով, որ անգամ մեղմացման առումով մեղադրանքը փոփոխելիս, եթե փոփոխվել են փաստական հանգամանքները, և արարքը որակվել է նվազ խիստ պարիստ նախարեսող հոդվածով, անգամ այս պարագայում մեղադրյալն օգտվում է իր պաշտպանությունը պարզաճ ձեով իրականացնելու հնարավորությունից:

Պատասխանողի կարծիքով, թեև ՏՏ քր. դատ. օր-ի 309.1-րդ հոդվածն ամբողջապես նվիրված է դատական քննության ընթացքում մեղադրանքի լրացմանը կամ փոփոխմանը, սակայն հոդվածի 1-ին և 2-րդ մասերը և նույն հոդվածի 5-րդ մասն ուղղված

են սկզբունքորեն միմյանցից փարբերվող իրավիճակների կարգավորմանը: Դրանից ելնելով՝ պարասխանողը գտնում է, որ ՏՏ քր. դատ. օր-ի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասը «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի իմաստով վիճարկվող իրավադրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված չէ, կարգավորում է սկզբունքորեն փարբերվող իրավիճակ եւ սույն գործով վիճարկման առարկա չի կարող լինել:

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարելի է գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու վերաբերյալ նախկինում գործող եւ օրենսգրքի 309.1-րդ հոդվածով սահմանված ներկա օրենսդրական կարգավորման ինստիտուտների համադրված վերլուծության արդյունքներով դատարանի մեղադրական թեքումից ձերբազատվելու երաշխիքների, դատարանի անկախության եւ անկողմնակալության, դատավարության կողմերի հավասարության ու մրցակցության սկզբունքների ու երաշխիքների ապահովման սահմանադրաիրավական գնահատումը:

Սահմանադրական դատարանը՝ իր ՄԴՌ-710 որոշմամբ ՏՏ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելով քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտը կարգավորող նորմերը, արտահայտել է մի շարք սկզբունքային իրավական դիրքորոշումներ, որոնք էական նշանակություն ունեն նաեւ սույն գործի առնչությամբ, եւ որոնք, մասնավորապես, հանգել են հետեւյալին.

նախ. երբ դատարանը հայտնաբերելով, որ գործով ապացույցները ձեռք են բերվել քրեադատավարական օրենքի էական խախտումներով, փոխանակ ՏՏ քր.դատ.օր-ի 105-րդ հոդվածի հիմքով, որը համահունչ է ՏՏ Սահմանադրության 22-րդ հոդվածին, որպես ապացույց չօգտագործի դրանք եւ մյուս ապացույցների գնահատմամբ լուծի գործի ելքը, գործը վերադարձնում է լրացուցիչ նախաքննության: Դրանով իսկ դատարանը նախաքննության մարմնին հնարավորություն է տալիս «վերակենդանացնել» ձախողված մեղադրանքը: Մյուս կողմից, խախտվում է քրեական դատավարության կարելի մի սկզբունք, ըստ որի՝ դատարանը չպետք է հանդես գա մեղադրանքի կամ պաշտպանության կողմում, այլ արտահայտի միայն իրավունքի շահերը (ՏՏ քր.դատ.օր-ի 23-րդ հոդված), սկզբունք, որը նպատակաուղղված է ՏՏ Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված՝ դատարանի անկախության եւ անկողմնակալության ապահովմանը:

Երկրորդ՝ ՏՏ Սահմանադրության 19-րդ հոդվածի պահանջն է, ի թիվս արդար դատաքննության այլ երաշխիքների, դատաքննության իրականացումը կողմերի հավասարության պայմաններում եւ անկողմնակալ դատարանի կողմից: ՏՏ քր.դատ.օր-ով նախատեսված կարգով գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով՝ դատարանը դուրս է գալիս դատավարությունում անկողմնակալության սկզբունքի շրջանակներից եւ ուղղորդում է լրացուցիչ նախաքննության ընթացքը՝ իրականացնելով արդարադատության գործառույթի հետ անհամարելի գործողություններ: Դատարանը խախտում է նաեւ կողմերի միջեւ հավասարության սկզբունքն ի շահ մեղադրանքի կողմի, դրանով իսկ խախտելով ՏՏ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ անձի դատական եւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

Երրորդ՝ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտի կիրառումը պարունակում էր նաև արդար դատաքննության փարքերից մեկի՝ դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու պահանջի խախտման վրանգ, որի պարագայում սահմանադրական դատարանն արձանագրեց, որ դատարանի որոշմամբ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու հետեւանքով անձն անազատության մեջ կարող է պահվել մեկ փարուց ավելի երկար ժամկետով:

Չորրորդ՝ ՏՏ Սահմանադրության 21-րդ հոդվածում ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքի կարեւոր բաղադրարարներից է չփարաված կասկածները հոգուր մեղադրյալի մեկնաբանելու պահանջը: Նշված պահանջի կատարումը եւ քրեական գործը դատարանի որոշմամբ լրացուցիչ նախաքննության ուղարկելը գործնականում անհամարեղելի էին միմյանց հետ: Քրեական գործը նախկինում նախապեսված կարգով լրացուցիչ նախաքննության ուղարկելու դեպքում ըստ էության շրջանցվում էր նշված հոդվածում ամրագրված՝ չփարաված կասկածները հոգուր մեղադրյալի մեկնաբանելու սահմանադրական պահանջը:

Տինգերորդ՝ սահմանադրական դատարանը գրել է նաև, որ դատարանի որոշմամբ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելն անհամարեղելի է Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի այնպիսի փարքերի հետ, ինչպիսիք են դատաքննությունն անկողմնակալ դատարանի կողմից եւ այն հավասարության ու մրցակցության սկզբունքների հիման վրա իրականացնելու պահանջները:

Վեցերորդ՝ գործը դատարանից լրացուցիչ նախաքննության վերադարձնելու՝ քրեադատավարական օրենսդրությամբ նախապեսված նախկին կարգն անհամարեղելի էր նաև երկրում սահմանադրական փոփոխությունների արդյունքում կատարվող դատաիրավական բարեփոխումների փրամաբանության հետ, որոնք ուղղված են դատարանի անկախության եւ անկողմնակալության ապահովմանը, մեղադրական թեքումից նրա վերջնական ձերբազատմանը:

Թվարկված իրավական դիրքորոշումների շրջանակներում սահմանադրական դատարանը նկատի էր ունեցել, որ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերափոխումները համահունչ կլինեն սահմանադրական բարեփոխումների ընդհանուր փրամաբանությանը եւ քրեական գործի դատաքննության հիմքում կողմի այն ելակետային սկզբունքի լիարժեք արմարավորումը, ըստ որի, երբ գործն ընդունվել է դատարանի վարույթ, ապա այն պետք է սկզբունքորեն լուծվի դատաքննության արդյունքում մեղադրանքի իրավական գնահատման վերաբերյալ դատարանի վերջնական որոշմամբ:

6. ՏՏ քրեական դատավարության օրենսգրքում լրացված 309.1-րդ հոդվածը, որի իրավակարգավորման առարկան առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմանների որոշումն է, նախապեսում է դատարանում մեղադրանքի փոփոխման երկու իրավական ռեժիմ՝ մեղադրանքը փոխելը. ա) քննչական եւ այլ դատավարական

գործողություններ կատարելու եւ բ) առանց լրացուցիչ քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու միջոցով:

Միաժամանակ, օրենսդիրը մեղադրողի՝ առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու իրավունքի իրացման համար սահմանել է մի շարք պարտադիր նախապայմաններ, որոնք կոչված են երաշխավորելու քրեական դատավարության մասնակիցների իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը եւ որոնք անվերապահորեն պետք է հաշվի առնվեն դատական պրակտիկայում: Դրանք են՝

ա) եթե ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել եւ չէին կարող հայտնի լինել մինչդրացական վարույթում,

բ) եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու առանց դատական քննությունը հետաձգելու,

գ) վերոհիշյալ հիմքերի առկայությունը պետք է գնահատի դատարանը,

դ) նիստը կարող է հետաձգվել բացառապես անհրաժեշտ քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար,

ե) նիստը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան մեկ ամսով, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու համար ողջամտորեն պահանջվում է ավելի երկար ժամկետ,

զ) հետաձգումը չի կարող նպատակ հետապնդել լրացնելու նախկինում կատարված թերի նախաքննությունը:

Առանց լրացուցիչ քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու մեղադրանքը փոխելու կարգը սահմանված է օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասերով, որոնք հոդվածի այլ մասերի հետ կազմում են համակարգային առումով փոխկապակցված ամբողջականություն՝ առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու հիմնախնդրի օրենսդրական կարգավորման շրջանակներում: Մասնավորապես, օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Մեղադրողը կարող է մինչեւ դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրանքը, այդ թվում նաեւ՝ խստացման առումով, եթե դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցները անհերքելիորեն վկայում են, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղաազրվում է»:

Օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «Եթե դատաքննության ընթացքում պարզվում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ, իսկ մեղադրողը խստացնելու առումով արարքը վերատրակելու որոշում չի կայացնում կամ վերատրակելու համար դատական նիստը հետաձգելու միջնորդություն չի ներկայացնում, ապա դատարանն իր նախաձեռնությամբ մինչեւ 10 օր ժամկետով հետաձգում է դատական նիստը՝ առաջարկելով գլխավոր դատախազին կամ փեդակալին վերահաստատելու մեղադրական եզրակացությունը:

Մեղադրական եզրակացությունը վերահաստատելուց հետո դատարանը, մեղադրական եզրակացությանը համապատասխան, կայացնում է դատական ակտ»:

Օրենսգրքի 309.1-րդ հոդվածի ամբողջական ուսումնասիրությունից բխում է, որ դատարանում մեղադրանքը փոփոխելը կատարվում է երեք կարգով՝

ա/ մեղադրողի նախաձեռնությամբ (օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ - մասեր), որի դեպքում մեղադրողի միջնորդությամբ նիսպը հեփաձգվում է անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու և նոր մեղադրանք առաջադրելու համար՝ առաջադրված մեղադրանքի **թե՛ խստացման, թե՛ մեղմացման առումներով**,

բ/ մեղադրողի նախաձեռնությամբ (օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մաս), որի դեպքում մեղադրողը կարող է մինչևի դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրանքը, **այդ թվում նաև՝ խստացման առումով՝** դատաքննության ընթացքում ի հայտ եկած հանգամանքների հիման վրա, առանց անհրաժեշտ քննչական և այլ լրացուցիչ դատավարական գործողություններ կատարելու և նոր մեղադրանք առաջադրելու համար նիսպը հեփաձգելու,

գ/ դատարանի նախաձեռնությամբ (օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մաս), որի դեպքում դատարանը նիսպը մինչև 10 օր ժամկետով հեփաձգում է՝ առաջարկելով մեղադրողին վերահաստատելու մեղադրական եզրակացությունը, եթե դատաքննության ընթացքում պարզվում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ, իսկ մեղադրողը **խստացնելու առումով** արարքը վերատրակելու որոշում չի կայացնում կամ վերատրակելու համար դատական նիսպը հեփաձգելու միջնորդություն չի ներկայացնում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քրեական գործի դատաքննության փուլում ի հայտ եկած նոր փաստերի հիմքով օբյեկտիվորեն կարող են փոփոխվել գործի հանգամանքների և ամբաստանյալին մեղսագրվող արարքի իրավաբանական որակումը կամ հանցակազմի հատկանիշների բովանդակությունը: Մակայն, բոլոր դեպքերում, էական հանգամանքն այն է, որ գործը շարունակում է գտնվել դատաքննության փուլում, չի փոխվում ամբաստանյալի իրավական կարգավիճակը, իսկ մրցակցային դատավարության սկզբունքի պահանջներին համապատասխան երաշխավորվում է ամբաստանյալի՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավունքների պաշտպանությունը:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, ի վարքերություն մեղադրողի միջնորդության երկու հնարավոր դեպքերի, որոնք անմիջականորեն ուղղված են դատարանում մեղադրանքը փոփոխելուն, այդպիսի նպատակով դատարանի նախաձեռնության հնարավոր դրսևորումն ուղղակիորեն կարող է վերաբերել մեղադրական եզրակացությունը վերահաստատելու վերաբերյալ մեղադրողին առաջարկություն անելուն: Ընդ որում, ի վարքերություն մեղադրողի միջնորդության երկու հնարավոր դեպքերի, որոնք վերաբերում են մեղադրանքի փոփոխմանը թե՛ խստացման, թե՛ մեղմացման առումներով, դատարանի նախաձեռնությունը կարող է վերաբերել մեղադրանքի փոփոխմանը միայն խստացման առումով, այսինքն՝ դատարանը «հուշում է» մեղադրողին կատարել մեղադրանքը **խստացման** առումով փոփոխելու համար անհրաժեշտ գործողությո-

յուններ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այս պարագայում լիարժեք հաշվի չի առնվել այն կարեւոր սկզբունքի պահպանումը, համաձայն որի՝ դատարանը չի կարող հանդես գալ մեղադրանքի կամ պաշտպանության կողմում եւ պետք է արտահայտի միայն իրավունքի շահերը (ՏՏ քր. դատ. օր-ի 23-րդ հոդված)՝ սկզբունք, որը նպաստակառուղված է ՏՏ Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված՝ դատարանի անկախության եւ անկողմնակալության, ինչպես նաեւ մրցակցային դատավարության եւ կողմերի հավասարության սկզբունքների ապահովմանը:

7. Օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի իրավակարգավորման ուղղվածության առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նոր մեղադրանք առաջադրելու հետ կապված հարաբերությունների կարգավորման շրջանակներում օրենսդիրն ազատ է ընտրելու իրավակարգավորման ցանկացած ուղղվածություն: Տվյալ պարագայում սահմանադրական դատարանի խնդիրն է գնահատել, թե արդյոք փվյալ իրավակարգավորման արդյունքում առկա են բավարար երաշխիքներ դատարանին՝ մեղադրական թեքումից ձերբազատվելու եւ դատական քննությունը հետաձգելուց հետո նոր մեղադրանք առաջադրելու փուլում կողմերի դատավարական իրավունքների լիարժեք պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ:

Վերլուծելով ՏՏ քր. դատ. օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ ՏՏ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատաքննության շրջանակներում լրացուցիչ ապացույցների ձեռքբերման եւ այլ դատավարական գործողությունների կատարմամբ մեղադրանքը փոխելու դեպքում օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերն իրավակարգավորման առումով դատարանին մեղադրական թեքումից ձերբազատվելու եւ անկողմնակալ արդարադատություն իրականացնելու բավարար երաշխիքներ պարունակում են՝ դրանց սահմանադրաիրավական իրենց բովանդակությանը համապատասխան ընկալման ու իրացման պարագաներում, համաձայն որի.

նախ՝ դատական նիստի հետաձգումը դատարանի հայեցողական լիազորությունն է, իսկ միջնորդությունը՝ մեղադրողի խնդրանքը, որը դատարանը **կարող է** բավարարել միայն օրենքով սահմանված պայմանների պահպանման, անհրաժեշտ հիմնավորումների ու **մյուս կողմի կարծիքը լսելու արդյունքում**: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ գործնականում ՏՏ քր. դատ. օր-ի 309.1-րդ հոդվածի վիճարկվող դրույթները խիստ հազվադեպ են կիրառվում դատական պրակտիկայում: Վերջին երկու փարիների դատական վիճակագրության ուսումնասիրությունը վկայում է, որ այն վերաբերում է քննված քրեական գործերի 0,6-0,7 փոկոսին:

Երկրորդ՝ յուրաքանչյուր այդպիսի կոնկրետ միջնորդություն քննելիս դատարանը՝ հիմք ընդունելով օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի պահանջները, պետք է գնահատի, թե **փվյալ կոնկրետ քրեական գործով՝**

ա/ մեղադրանքի ծավալի վրա ազդող՝ դատարանում ի հայտ եկած հանգամանքները մինչդատական վարությամբ հայտնի են եղել, թե՛ ոչ, եւ, միաժամանակ, դրանք կարող էին հայտնի լինել նախաքննության մարմնին, թե՛ ոչ,

բ/ գործի փաստական հանգամանքները հնարավորություն փալիս են, թե ոչ՝ մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու առանց դատական քննությունը հեղաձգելու եւ քննչական գործողություններ կատարելու:

Երրորդ՝ դատարանը պետք է հանգի այն համոզման, որ այդ գործողությունները կատարվում են դատաքննության շրջանակներում՝ առանց ամբաստանյալի կարգավիճակի փոփոխության, երաշխավորելով նաեւ պաշտպանական կողմի դատավարական իրավունքները:

Չորրորդ՝ նկատի առնվի, որ նման կարգով ձեռք բերված ապացույցները չեն կարող օգտագործվել նախկինում առաջադրված մեղադրանքը հաստատելու համար:

ՆՏ քր. դատ. օր-ի 125-րդ հոդվածը նախատեսում է, որ ապացույցները ձեռք են բերվում հեղաձգության, նախաքննության եւ **դատական քննության ընթացքում՝** սույն օրենսգրքով նախատեսված **քննչական եւ դատական գործողությունների կատարման ճանապարհով:** Միաժամանակ, օրենսգրքի 310-րդ հոդվածը քրեական գործի քննությունը հեղաձգելու հիմք է սահմանում նաեւ դատարանի նախաձեռնությամբ նոր ապացույցներ պահանջելու անհրաժեշտությունը: Իսկ օրենսգրքի 23-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «...Դատարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով եւ իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել քրեական գործով ճշմարտությունը բացահայտելու համար»: Չնայած ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերափոխումների արդյունքում այս մոտեցումները նույնպես կարող են վերանայվել՝ մրցակցային դատավարության սկզբունքի առավել ամբողջական ու լիարժեք արմատավորման փեսանկյունից, այսուամենայնիվ, գործող իրավակարգավորման շրջանակներում ակնհայտ է, որ դատարանը կարող է իրականացնել ցանկացած դատավարական գործողություն ապացույցների ձեռքբերման նպատակով՝ առանց որեւէ սահմանափակման:

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաեւ օրենսգրքի 23-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջն այն մասին, որ՝ «...Դատարանը դատավճիռը հիմնավորում է միայն այն ապացույցներով, որոնց հեղաձգումն ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ»: Ներելաբար, եթե քրեական գործի դատաքննության ընթացքում ի հայտ են եկել նոր հանգամանքներ, ապա դրանց գնահատումը դատարանի պարտականությունն է:

8. Սահմանադրական դատարանը կարելի է նաեւ առկա իրավակարգավորման դիրքարկումը Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի հիմնադրույթների փեսանկյունից: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի համաձայն՝ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք պետք է ունենա «բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապարաստելու համար»: Այս նկատառումներով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան՝ նաեւ դատարանում արարքի վերադրակման եւ ամբաստանյալի իրավունքների պաշտպանության առումով, այն է, որ պետք է երաշխավորվի ամբաստանյալին ներկայացված

մեղադրանքի բնույթի եւ հիմքերի վերաբերյալ մանրամասն տեղեկացված լինելու եւ պաշտպանությունը նախապարաստելու համար բավարար ժամանակ ու հնարավորություն ունենալու իրավունքը (մասնավորապես՝ Մարտին ընդդեմ Ֆրանսիայի գործով 19.12.2006թ. վճիռը, *Mattei v. France*, 34034/02):

ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով քննության առարկա նորմերի իրավակարգավորման շրջանակներում, մեղադրողի կողմից մեղադրանքը փոխելուց անմիջապես հետո, դատարանը հետաձգում է դատական նիստը եւ վիճարկվող հողվածի 4-րդ մասի համաձայն. «Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին դատարանը նոր մեղադրանքին ծանոթանալու համար ժամանակ է պրամադրում նրանց միջնորդության դեպքում, իսկ ամբաստանյալին եւ նրա պաշտպանին՝ անկախ միջնորդությունից»: ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ հոդվածների պրամաբանությունից բխում է նաեւ, որ դատաքննության բոլոր փուլերում պետք է երաշխավորված լինեն կողմերի իրավունքների լիարժեք պաշտպանությունն ու դատաքննության մրցակցային սկզբունքի ամբողջական իրացումը:

9. Ի՞նչն է խանգարել իրավակիրառական պրակտիկան այս պահանջների շրջանակներում իրականացնելուն, եւ ինչու՞ է տեղ գտել ընդհուպ այնպիսի փաստ, երբ նույն գործով, առանց մեղադրողի հիմնավորված գրավոր միջնորդության, դատարանի կողմից վեց ամսվա ընթացքում երեք անգամ մեկական ամսով հետաձգվում է քրեական գործով դատաքննությունը՝ վերջում ամբաստանյալին ճանաչելով անմեղ եւ դատարանով արդարացված (քր. գործ ԵԿԴ/0192/01/09):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դրա պարճառները հիմնականում հանգում են հետեւյալներին.

նախ՝ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային անկարգությունը, դրա շարունակական փոփոխությունների ընթացքում իրավակարգավորման նախկին սկզբունքները մասամբ պահպանելու հանգամանքը: Վերջինս իր դրսևորումն է գտել նաեւ քննության առարկային առնչվող օրենսդրական լրացումն իրականացնելիս: Մասնավորապես, ՏՏ Ազգային ժողովի 02 նոյեմբերի 2007թ. նիստի թիվ 23 սղագրության ուսումնասիրությունը վկայում է, որ ՏՏ քրեական դատավարության օրենսգրքում 309.1-րդ հոդվածի լրացումը կատարվել է որպես համակարգային մի ամբողջականություն, որի շրջանակներում է հիմնավորվել նաեւ հողվածի 5-րդ մասի անհրաժեշտությունը: Սակայն ներկայացված հիմնավորումների վերլուծությունը վկայում է, որ լիարժեք չի ապահովվել հիմնախնդրի համակարգային կարգավորումը, մասնավորապես՝ հաշվի չեն առնվել սահմանադրական դատարանի ՄԴՆ-710 որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումները: Ընդ որում, «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը եւ չպետք է հակասեն Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին»: Վերջիններս իմաստ ու բովանդակություն են ստանում, դառնում են իրավունքի աղբյուր իրենց ամբողջականության մեջ՝ հիմքում ունենալով դատարանի ի-

րավական դիրքորոշումները: Այս մտքեցումը պետք է հաշվի առնվի ոչ միայն իրավաստեղծ գործունեության ընթացքում, այլև իրավակիրառական պրակտիկայում:

Երկրորդ՝ այդ մասով օրենսդրական լրացման ընդհանուր փրամաբանության մեջ նկատելի է դադարանի՝ մեղադրական գործառնության ձեռքազարկված չլինելու հանգամանքը: Վերջինս չի բխում մրցակցային դադարվարության եվրոպական արդի զարգացումների հիմնական միտումներից: Մասնավորապես, Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովն իր՝ 2010թ. մարտի 12-13-ի 82-րդ լիազումար նիստում հաստատեց «Դադարական համակարգի անկախության մասին» չափորոշիչները, որում հատուկ շեշտվում է, որ դադարական իշխանության անկախությունը չի կարող դիտարկվել միայն զուտ իշխանությունների փարանջապման փեսանկյունից: Այդ անկախությունն առաջին հերթին միջոց ու հնարավորություն է մարդու իրավունքների ու ազատությունների երաշխավորման համար, որը եւ հանդիսանում է դադարական իշխանության հիմնական առաքելությունը: Այս փրամաբանությանն ամենեւին համահունչ չէ օրենսդրական այն դրույթը, համաձայն որի՝ դադարվորը մեղադրողի վերադասի կարծիքը լրացուցիչ ճշտելուց հետո միայն կարող է իրավունքի պաշտպանություն երաշխավորել: Այն չի բխում նաեւ 1985թ. ՄԱԿ-ի կողմից ընդունված՝ Դադարական մարմինների անկախության հիմնական սկզբունքների պահանջներից:

Երրորդ՝ Մ քրեական դադարվարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ - մասով ամրագրված նորմի համաձայն. «Մեղադրողը կարող է մինչեւ դադարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրանքը, այդ թվում նաեւ՝ խստացման առումով, եթե դադարական քննության ընթացքում հետազոտված ապացույցները անհերքելիորեն վկայում են, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղսագրվում է»: Նիշյալ դրույթը գրեթե նույնությամբ ամրագրված է մի շարք այլ երկրների քրեական դադարվարության օրենսգրքերում (Էստոնիա՝ հոդվ. 215, Լեհաստան՝ 398, Լատվիա՝ 461-462, Սերբիա՝ 341, Ուկրաինա՝ 277, Ղազախստան՝ 320, Մոլդովա՝ 326, Բուլղարիա՝ 287 եւ այլն): Սակայն որն է էական փարբերությունը Նայաստանի համեմատությամբ: Դա առաջին հերթին վերաբերում է դադարվարության կողմերի, մասնավորապես՝ դադարխազության սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկությանը: Այս երկրներում դադարխազությունը ոչ միայն հարուցում, այլև իրականացնում է քրեական հետապնդում: Նայաստանի Նանրապետության դադարխազությանը, որը ՄՄ - Սահմանադրության վեցերորդ գլխում ներկայացված է որպես դադարական իշխանության մարմին, քրեական գործի նախաքննության փուլում վերապահելով միայն վերահսկողական գործառնութ գործադիր իշխանության ինստիտուտների քննություն իրականացնելու գործառնութի նկատմամբ, նույն կարգավիճակի մեջ է դրվել նաեւ դադարքնության փուլում: Դրանից բխեցվում է, որ եթե նոր ի հայտ եկած հանգամանքների հիմքով պետք է քննչական եւ այլ բնույթի գործողություններ իրականացվեն, ապա ամբաստանյալը կրկին պետք է հայտնվի մեղադրյալի կարգավիճակում, որպեսզի համարժեք գործողությունների դեպքում ի վիճակի լինի պաշտպանել իր իրավունքները: Սակայն օրենսդրությունը կարգավիճակի նման փոփոխության ինստիտուտ չի նախատեսել, եւ դա նաեւ կհակասեր սահմանադրական դադարանի վերոհիշյալ որոշմանը: Արդյունքում՝ քողարկված ձեռով

գործադրվում է գործը լրացուցիչ քննության վերադարձնելու պրակտիկան, որը չի բխում նաև ՏՏ քր. դապ. օր-ի վիճարկվող նորմերի դրույթներից, սակայն հարուցել է դիմողի ներկայացուցիչների արդարացի դժգոհությունը: Ուստի սահմանադրական դատարանը վիճարկվող հոդվածի սահմանադրականությունը գնահատում է դրանում բովանդակվող բոլոր մասերի համակարգային ամբողջականության մեջ՝ նաև դրանից բխող իրավական հետևանքների առումով:

Սահմանադրական դատարանը գրնում է, որ խնդրի լուծումը պայմանավորված է առկա նորմերի ճիշտ կիրառմամբ եւ առաջադրված մեղադրանքը դատաքննության փուլում փոփոխելու ինստիտուտի համակարգային ամբողջականության ապահովմամբ: Մասնավորապես, մեղադրողն իր սահմանադրական իրավասությամբ դատարանում մեղադրանքի պաշտպանության գործառույթը պետք է իրականացնի ամբողջական ու արդյունավետ՝ երաշխավորելով դատական քննության շրջանակներում գործի վերջնական հանգուցալուծումը:

Չորրորդ՝ դիմողն իր իրավունքների խախտումը դիտարկում է իրավակիրառական պրակտիկայի համարեքսում: Մասնավորապես ընդգծում է, որ դատախազի միջնորդության հիման վրա դատարանը գործի դատաքննությունը հետաձգել է 29.07.2008 թվականին՝ մեկ ամսով, մինչդեռ մեկ օր հետո՝ 30.07.2008 թվականին դատախազը որոշում է կայացրել մեղադրանքը փոխելու մասին: Նույն օրը փոփոխված մեղադրական եզրակացությունն ուղարկվել է դատարան: **Այդ ընթացքում ոչ մի քննչական գործողություն չի կատարվել:** Այն քննչական գործողությունները, որոնց հիման վրա ստացվել են ապացույցներ եւ որոնց վրա է հիմնվել նոր մեղադրանքը, այն է՝ զեկուցագիր, հարցաքննություն, լուսանկարով ճանաչման գործողություն, արդեն իսկ կատարվել էին մի քանի օր առաջ՝ 26.07.2008 թվականին:

Սահմանադրական դատարանի իրավասության հարցը չէ օրենքի նորմի կիրառման հետ կապված վեճի քննությունը: ՏՏ Սահմանադրության 92-րդ հոդվածով ՏՏ վճռաբեկ դատարանին է վերապահված ապահովել օրենքի միապեսակ կիրառությունը: ՏՏ վճռաբեկ դատարանը 2009թ. դեկտեմբերի 18-ի՝ Սուրեն Նալբանդյանի վերաբերյալ ՏՅԲՐԴ-2/0144/01/09 գործով նախադեպային իր որոշմամբ փորձել է քննության առարկայի շրջանակներում ապահովել օրենքի միապեսակ կիրառությունը եւ բացառել դատական պրակտիկայում քողարկված ձեռով գործը լրացուցիչ քննության ուղարկելու ինստիտուտի կիրառումը: Մասնավորապես, վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արքահայտել այն մասին, որ «ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերով նախատեսված իրավական ռեժիմներով մեղադրանքը փոփոխելու համար հիմք է մեղադրանքի փաստական հանգամանքների այնպիսի փոփոխությունը, որի հետևանքով փոխվում է արարքի իրավաբանական որակումը կամ երբ նման փոփոխման դեպքում արարքի որակումը թեեւ մնում է նույնը, սակայն փոխվում է հանցակազմի հարկանիշների բովանդակությունը, օրինակ՝ փոփոխվում է միեւնույն հանցակազմի դիսպոզիցիայում նկարագրված այլընտրանքային արարքը»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, իր կարեւորությամբ հանդերձ, հիշյալ նախադեպային որոշումն իրավակիրառական պրակտիկան լիարժեք չի կա-

րող ուղղորդել այնպես, որ մեղադրողը, ՏՏ Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ - մասի 3-րդ կետի հիմքերով՝ դատարանում մեղադրանքը պաշտպանելու իրավասության շրջանակներում, առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հեղափոխելու վերաբերյալ հիմնավոր միջնորդությունը դատարանի կողմից բավարարվելու դեպքում, անհրաժեշտ գործողություններ կատարի այն պայմանով, որ բացառվի ամբաստանյալի դատավարական կարգավիճակի որեւէ փոփոխություն եւ նրա շահերի ու իրավունքների ցանկացած ոտնահարում, որի գնահատողն ու երաշխավորողը փվյալ գործը քննող դատարանն է: Ներկաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոնշյալ իրավապայմանների ապահովման դեպքում է հնարավոր դատաքննության փուլում երաշխավորել անձանց սահմանադրական իրավունքները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Հանրապետության օրենքի 19, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Նայասպանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Նայասպանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի դրույթները սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում համապատասխանում են Նայասպանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի հիմքերով Նայասպանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածին (1-ին մաս) հակասող եւ անվավեր ճանաչել Նայասպանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները:

3. Նայասպանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

2 ապրիլի 2010 թվականի
ՍԳ-Ո- 872

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՏՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ
ՎՐԱ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 118 ԵՎ 118.6-ՐԴ
ՆՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՏՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

13 ապրիլի 2010թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարոթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի (զեկուցող), Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող Ա. Նիկողոսյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՏՏ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՏՏ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՏՏ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Անուշավան Նիկողոսյանի դիմումի հիման վրա՝ Նայասպանի Նանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 118 եւ 118.6-րդ հոդվածների՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ա. Նիկողոսյանի՝ 26.01.2010թ. ՏՏ սահմանադրական դատարան մուրաբազրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հեղափոխելով օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. ՆՏ վարչական դատավարության օրենսգիրքը ՆՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ին, ՆՏ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 10-ին և ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի վիճարկվող 118 և 118.6-րդ հոդվածներն ամրագրված են օրենսգրքի՝ «Վարչական գործերի վարույթը վճռաբեկ դատարանում» վերաբերող 20-րդ գլխում:

Օրենսգրքի 118-րդ հոդվածը՝ «Վարչական գործերի վարույթը վճռաբեկ դատարանում» վերաբերող 20-րդ գլխում, սահմանում է. «Վարչական դատարանի դատական ակտերի վճռաբեկ դատարան բողոքարկման կարգի և գործերի վարույթի վրա (mutatis mutandis) փարադիում են Նայասարանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը»:

Օրենսգրքի վիճարկվող 118.6-րդ հոդվածը՝ «Վճռաբեկ բողոքը քննության ընդունելը» վերաբերող 20-րդ գլխում, սահմանում է.

«1. Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է եսկան նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ

2) վերանայվող դատական ակտն առերևույթ (prima facie) հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին, կամ

3) առկա է նյութական կամ դատավարական իրավունքի խախտում, որը հանգեցրել է գործի սխալ լուծմանը, կամ

4) առկա է նոր երեսան եկած կամ նոր հանգամանք:

2. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելուց հետո վճռաբեկ դատարանը որոշմամբ կարող է կասեցնել դատական ակտի կատարումը:

3. Վճռաբեկ դատարանի որոշումները պարզաձև ձևով ուղարկվում են բողոք բերող անձին և գործին մասնակցող անձանց»:

Օրենսգրքի՝ «Վարչական գործերի վարույթը վճռաբեկ դատարանում» վերաբերող 20-րդ գլխի փոփոխության է ենթարկվել 2009թ. ապրիլի 7-ին ընդունված՝ «ՆՏ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՆՏ-99-Ն ՆՏ օրենքով: Նշված օրենքով օրենսգրքի 20-րդ գլխում կատարված փոփոխություններն ու լրացումները պայմանավորվել են ՆՏ սահմանադրական դատարանի 2008թ. նոյեմբերի 25-ի ՄԴՌ-780 որոշմամբ, որով ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասը և 118-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչվեցին ՆՏ Սահմանադրության 1-ին հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող և անվավեր: Սահմանադրական դատարանը միաժամանակ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ էր սահմանել 2009թ. մարտի 31-ը՝ ՆՏ Ազգային ժողովին հնարավորություն փառվ օրենսդրական կարգավորումները համալիր ձևով համապատասխանեցնելու դատարանի որոշման պահանջներին:

2009թ. ապրիլի 7-ին ընդունված՝ «ՆՎ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՆՕ-99-Ն ՆՎ օրենքով ՆՎ Ազգային ժողովն օրենսգրքի 20-րդ գլխում 118-րդ հոդվածը շարադրեց նոր խմբագրությամբ և օրենսգիրքը լրացրեց 118.1-118.6-րդ հոդվածներով:

2. Գործի դատավարական նախապարմությունը հանգում է հետևյալին: ՆՎ վարչական դատարանն իր՝ 04.09.2009թ. վճռով մերժել է դիմողի հայցն ընդդեմ Լոռու մարզպետարանի՝ «Ակտը մասնակի առոչինչ ճանաչելու պահանջի մասին»: Նշված վճիռը դիմողի կողմից բողոքարկվել է ՆՎ վճռաբեկ դատարան: ՆՎ վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ-6/0334/05/08 վարչական գործով ըստ հայցի Անուշավան Նիկողոսյանի ընդդեմ ՆՎ Լոռու մարզպետարանի՝ «Ակտը մասնակի առոչինչ ճանաչելու պահանջի մասին», իր՝ 02.12.2009թ. որոշմամբ վերադարձրել է ՆՎ վարչական դատարանի՝ թիվ ՎԴ-6/0334/05/08 վարչական գործով 04.09.2009թ. վճռի դեմ դիմողի կողմից նյութական իրավունքի նորմերի խախտման հիմքով բերված վճռաբեկ բողոքը:

3. Դիմողը՝ վկայակոչելով ՆՎ սահմանադրական դատարանի ՄԴՆ-780 որոշման մեջ Կեղ գրած իրավական դիրքորոշումները, գտնում է, որ ՆՎ վարչական դատավարության օրենսգրքում 2009թ. ապրիլի 7-ին ընդունված՝ «ՆՎ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՆՕ-99-Ն ՆՎ օրենքով կատարված փոփոխություններից ու լրացումներից հետո էլ ապահովված չէ վարչական արդարադատության երկաստիճան համակարգում վճռաբեկ դատարանի մարզելիությունն ու արդյունավետությունը: Մասնավորապես, օրենսգրքի 118-րդ հոդվածը շարունակում է հնարավորություն փակ վարչական գործերով վճռաբեկ վարույթի նկատմամբ կիրառել քաղաքացիական դատավարության նորմերը, իսկ 118.6-րդ հոդվածով սահմանված՝ վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանները որեւէ կերպ չեն ապահովում վճռաբեկ դատարանի մարզելիությունը: Դիմողը խնդրում է ՆՎ վարչական դատավարության օրենսգրքի 118 և 118.6-րդ հոդվածները ճանաչել ՆՎ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող ու անվավեր:

4. Պատասխանողը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, նշում է, որ ՆՎ - սահմանադրական դատարանի ՄԴՆ-780 որոշումից հետո ՆՎ վարչական դատավարության օրենսգիրքը լրացվեց վճռաբեկության կարգով դատական ակտերի վերանայումը, վճռաբեկ բողոք բերելու իրավունքը և հիմքերը, վճռաբեկ բողոք բերելու ժամկետները և կարգը, վճռաբեկ բողոքը քննության ընդունելու պայմանները սահմանող՝ 118.1-118.6-րդ հոդվածներով: Արդյունքում, թեև սահմանվեց, որ վարչական դատարանի դատական ակտերի վճռաբեկ դատարան բողոքարկման կարգի և գործերի վարույթի վրա (mutatis mutandis) փարաձվում են ՆՎ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը, այնուամենայնիվ, վճռաբեկության ինստիտուտի իրավակարգավորման հիմնական փարրերը, այդ թվում՝ նաև վճռաբեկ բողոքի հիմքերն ու ընդունելիության

պայմանները, հաշվի առնելով վարչական արդարադատության առանձնահատկությունները, սահմանվեցին վարչական դատավարության օրենսգրքով:

Օրենսդիրը վճռաբեկության կարգով վարչական դատարանի դատական ակտերի բողոքարկման կարգի եւ գործերի վարույթի վրա քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը տարածել է այնքանով, որքանով դրանք բխում են երկաստիճան դատական համակարգում վճռաբեկության առանձնահատկություններից եւ երաշխավորում են վարչական արդարադատության համակարգում վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը:

Պատասխանողի կարծիքով՝ ՆՏ քրեական օրենսգիրքը, սահմանելով չհանված կամ չմարված դատվածության քրեաիրավական հետեւանքները, դրա փարբերակման հիմքում դնում է այն, թե ինչպես դա կանդրադառնա առանձին հանցագործությունների հասարակական վրանգավորության վրա: Ընդ որում, եթե հանցագործությանը բնութագրական է հատուկ ռեցիդիվի բարձր մակարդակ, դատվածությունը դիվորում է որպես փոխադրված հանցագործությունը որակյալ դարձնող հանգամանք, որի հանրային վրանգավորության հիմքում ընկած է փոխադրված անձի սխտեմատիկ վարքագիծը:

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող հոդվածների սահմանադրականությունը գնահատելիս պետք է ելնել ՆՏ Սահմանադրությունից բխող իրավական պատասխանարվության ընդհանուր սկզբունքներից, որոնք սահմանելով ինչպես օրենսդրի հայեցողության սահմանները քրեաիրավական կարգավորման

ընթացքում, այնպես էլ քրեական պատժի ենթարկվող քաղաքացու սահմանադրաիրավական կարգավիճակը, իրենց բնույթով համապատասխան ոլորտում կազմում են պետության և անձի փոխհարաբերության հիմքը:

Ինչպես շար պետություններ, այնպես էլ Նայասպանի Նանրապետությունն իրեն հռչակելով որպես իրավական պետություն, իր Սահմանադրությունում հստակ սահմանել է հետևյալ դրույթը. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են» (3-րդ հոդվածի 1-ին մաս): Սրանից էլ բխում են Սահմանադրության նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով ամրագրված նորմերը. «Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան»: «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Քրեական պատասխանատվության միջոցների կիրառումն արդարացված է Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության անհրաժեշտությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքներից է նաև Սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասում ամրագրված դրույթը, համաձայն որի՝ ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար, և որն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ ենթակա չէ սահմանափակման (անգամ արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում):

ՆՏ Սահմանադրության պահանջներին համահունչ են նաև մի շարք միջազգային պայմանագրերի դրույթները, մասնավորապես՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ կետը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 1-ին մասը և այլն, որոնցով Նայասպանի Նանրապետությունն ստանձնել է պարտավորություններ՝ երաշխավորելու անձանց՝ նույն արարքի համար կրկին անգամ չդատվելու իրավունքը:

6. ՆՏ Սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասում ամրագրված վերոհիշյալ նորմն իր արտացոլումն է գտել ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածում, որի 2-րդ մասը սահմանում է. «Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պատիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրերի անձի վիճակի վաթաթաքացում»:

Նույն արարքի համար կրկին անգամ չդատվելու սահմանադրական սկզբունքն օրենսդիրն իրավացիորեն փարածել է ոչ միայն դատական, այլև քրեական հետապնդման մարմինների գործունեության նկատմամբ: Քր.դատ.օր.-ի 21-րդ հոդվածի 3-րդ մասի հա-

մաճայն՝ քրեական հեղափոխման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հեղափոխումը դադարեցնելու կամ քրեական հեղափոխում չիրականացնելու մասին որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը, եթե այն կարող է հանգեցնել անձի վիճակի վարթարացման:

Դիմողների հարցադրման կապակցությամբ՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում պարզել «նույն արարք» եզրույթի բովանդակությունը: «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի եւ արտահայտությունների փառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: «Նույն արարք»-ի փառացի մեկնաբանությունից բխում է, որ խոսքը վերաբերում է մեկ արարքի, միեւնույն արարքին, իսկ օրենսգրքի ձեւակերպմամբ՝ «նույն դեպքին» եւ ոչ թե նույնանման, նույնատեսակ, նույնաբնույթ արարքին: Նակառակ մեկնաբանության դեպքում կտրացվեր, որ եթե անձը մեկ անգամ դատվել է, օրինակ՝ գողության համար եւ նորից է կատարել գողություն, ապա նա չի կարող կրկին դատվել գողության համար՝ դատադրություն, որը գուրկ է փրամաբանությունից:

Անդրադառնալով դիմողների այն հարցադրմանը, համաձայն որի՝ կրկին անգամ կամ երկու եւ ավելի դատվածություն ունեցող անձի կողմից նոր նույնանման հանցանք կատարելը որպես արարքը որակյալ դարձնող հատկանիշ դիտելը եւ դրա համար ավելի խիստ պարփոժ սահմանելը ենթադրում է, որ անձը կրկին անգամ դատապարտվում է նախկինում կատարած եւ պարփոժ կրած արարքի համար, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում այն դիտարկել ՏՏ Սահմանադրությանը, ՏՏ քրեական օրենսդրության խնդիրներին, սկզբունքներին դրանց համապատասխանության փաստակցությունից:

Օրենսգրքի՝ «ՏՏ քրեական օրենսգրքի խնդիրները» վերաբառությամբ 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ՏՏ քրեական օրենսգրքի խնդիրներն են՝ հանցավոր ոտնձգություններից պաշտպանել մարդու եւ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, իրավաբանական անձանց իրավունքները, սեփականությունը, շրջակա միջավայրը, հասարակական կարգը եւ անվտանգությունը, սահմանադրական կարգը, խաղաղությունը եւ մարդկության անվտանգությունը, ինչպես նաեւ կանխել հանցագործությունները: Այլ սկզբունքների թվում օրենսգրքը սահմանում է նաեւ արդարության եւ պարասխանավության անհատականացման սկզբունքը (օրենսգրքի 10-րդ հոդված): Ըստ այդ սկզբունքի՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պարփոժ եւ քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հաշվի առնեն հանցավորի անձնավորությունը, անհրաժեշտ ու բավարար լինեն նրան ուղղելու եւ նոր հանցագործությունները կանխելու համար:

Օրենսգրքի՝ «Դատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները» վերաբառությամբ 61-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պարփոժ փրեսակը եւ չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով եւ բնույթով,

հանցավորի անձը բնութագրող փոփոխություններով, այդ թվում՝ պատասխանատվությունը եւ պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

Օրենսգրքի Ընդհանուր մասի վերոհիշյալ հոդվածներում պատժի տեսակն ու չափը որոշելիս, ի թիվս այլ հանգամանքների, կարեւորվում է հանցավորի անձը բնութագրող փոփոխությունների (այդ թվում՝ պատասխանատվությունը եւ պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների), ինչպես նաեւ հանցավորին ուղղելու եւ նոր հանցագործությունները կանխելու համար պատժի անհրաժեշտ ու բավարար լինելու գնահատումը: Միայն նման գնահատման պայմաններում է հնարավոր ապահովել պատասխանատվության եւ պատժի անհատականացման օրենսդրական սկզբունքը: Այդ առումով էլ՝ ինչպես օրենսդիրն օրենսգրքի Նախուկ մասում, այնպես էլ դատարանը կոնկրետ գործով պատժատեսակ ու պատժաչափ որոշելիս հանցակազմի մյուս բաղադրատարրերի հետ մեկտեղ պետք է պատշաճ ուշադրություն դարձնեն հանցավորի՝ հանցակազմի սուբյեկտի անձնավորությանը:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգիրքը հանցակազմի ընդհանուր սուբյեկտներից առանձնացնում է **հատուկ սուբյեկտներին**: Սուբյեկտի այս տեսակը, բացի երեք պարտադիր հատկանիշներից (ֆիզիկական անձ, մեղսունակություն եւ քրեական պատասխանատվության ենթարկելու փարիք), բնութագրվում է նաեւ ոչ պարտադիր հատկանիշներով, որոնք նախատեսված են օրենսգրքի Նախուկ մասի նորմերով: Սուբյեկտի ոչ պարտադիր հատկանիշները կամ ուղղակի նախատեսված են համապատասխան հանցակազմի դիսպոզիցիայում, կամ սահմանվում են մեկնաբանության միջոցով (օր.՝ պաշտոնատար անձի հասկացությունը՝ 308-րդ հոդվածի 3-րդ մասում): Նախուկ սուբյեկտն իր պաշտոնական, ծառայողական կամ մասնագիտական գործունեության բերումով հանրորեն վրանգավոր այնպիսի գործողություն (անգործություն) կատարող անձն է (օր.՝ պաշտոնատար անձը, զինծառայողը, բժիշկը, դատավորը, դատախազը եւ այլն), որպիսին չեն կարող կատարել այլ անձինք: Այդպիսի անձանց հատուկ սուբյեկտներ ճանաչելը բխում է ոչ թե նրանց սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, ծննդից, գույքային կամ այլ դրությունից, որը կհակասեր օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքին (ՆՏ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի 1-ին մաս եւ օրենսգրքի 6-րդ հոդված), այլ, որովհետեւ հանրորեն վրանգավոր նման արարքները կարող են կատարվել միայն այդ անձանց կողմից:

Քրեական իրավունքի տեսությունը հատուկ սուբյեկտների շարքին է դասում նաեւ կրկնահանցագործներին եւ ռեցիդիվիստներին, քանի որ նրանք իրենց իրավական կարգավիճակով առանձնանում են առաջին անգամ հանցանք կատարած անձանցից: Նման տեսական հետազոտությունից բխեցվում է օրենսդրական համարժեք կարգավորում: Նանցագործությունների կրկնակիության եւ ռեցիդիվի հասկացությունները փորված են օրենսգրքի 21 եւ 22-րդ հոդվածներում: Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործությունների կրկնակիություն է համարվում օրենսգրքի Նախուկ մասի միեւնույն հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատար-

րելը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի փոփոխությունները հաստատված են Երևանի կամ ավելի հանցանք կատարելը կրկնակի է համարվում միայն օրենսգրքի Նախույն մասով նախատեսված դեպքերում:

Նախագործությունների ռեցիդիվի հասկացությունն իր օրենսդրական ձևակերպումն է ստացել օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասում, ըստ որի՝ ռեցիդիվ է համարվում դիտարկությանը հանցանք կատարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում դիտարկությանը կատարված հանցանքի համար: Նոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում փոփոխված են վրանգավոր եւ առանձնապես վրանգավոր ռեցիդիվի բնորոշումները: Նոդվածի 4-րդ մասը **բացառում է ռեցիդիվի առկայությունն այն դեպքերում, երբ նախկինում կատարած հանցանքների համար դատվածությունը հանվել կամ մարվել է օրենքով սահմանված կարգով**, ինչպես նաեւ, երբ անձը հանցանքներ է կատարել մինչեւ 18 փոքրիկ լրանալը: Նույն կերպ **կրկնակիությունը բացակայում է, եթե նախկինում կատարած հանցանքի համար անձը քրեական պատասխանատվությունից ազատվել է օրենքով սահմանված հիմքերով կամ այդ հանցանքի համար դատվածությունը մարվել կամ հանվել է** (օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մաս):

8. Օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ անձը դատվածություն ունեցող է համարվում մեղադրական դատվածին օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ դատվածությունը մարվելու կամ հանվելու պահը: Դատվածությունն օրենսգրքի 84-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն հանդիսանում է պարտադիր պայման հանցագործության ռեցիդիվը ճանաչելու եւ պարտիժ նշանակելիս դա հաշվի առնելու համար: Դատվածությունը փաստորեն անձի յուրահատուկ իրավական դրությունն է, որն առաջանում է մեղադրական դատվածով պարտի նշանակման արդյունքում: Դրա առանձնահատկությունն այն է, որ դատվածություն ունեցող անձի համար կարող են ծագել օրենսգրքով նախատեսված քրեաիրավական բնույթի բացասական հետեւանքներ: Սակայն քրեաիրավական հետեւանքները ծագում են միայն այդ անձի կողմից **նոր հանցանք** կատարելու դեպքում: Օրենսգրքի 84-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատվածության քրեաիրավական հետեւանքներն են. դատվածությունը որպես քրեական պատասխանատվությունն ու պարտիժը ծանրացնող հանգամանք հաշվի առնելը, որը հանցակազմերում այն որակյալ դարձնող հատկանիշ նախատեսելը (օր.՝ հափշտակությունների դեպքում), ուղղիչ հիմնարկի փոխակի ընտրությունը, դատվածությունը ռեցիդիվի այս կամ այն փոխակի առկայությունը որոշելիս հաշվի առնելը: Ընդ որում, դատվածությունը հանելը կամ մարելը վերացնում է դատվածության հետ կապված իրավական բոլոր հետեւանքները (օրենսգրքի 84-րդ հոդվածի 8-րդ մաս): Դատվածություն չունեցող են համարվում նաեւ այն անձինք, ովքեր դատարանի դատվածով դատապարտվել են առանց պարտիժ նշանակելու կամ դատարանի դատվածով ազատվել են պարտիժը կրելուց կամ պարտիժը կրել են այնպիսի արարքի համար, որի հանցավորությունն ու պարտիժությունը վերացված են օրենքով (օրենսգրքի 84-րդ հոդվածի 3-րդ մաս):

Ինչպես նշվեց, ռեցիդիվը պատասխանատվությունը եւ պարտիժը ծանրացնող հանգամանք է, որը հանցավորի անձը բնութագրում է որպես հանրորեն վրանգավոր եւ

հանցավոր հակումներ ունեցող: Մակայն, եթե որեւէ ծանրացնող հանգամանք օրենսգրքի Նապուկ մասի համապատասխան հոդվածում նախատեսված է որպես հանցակազմի հատկանիշ, ապա դա չի կարող կրկին հաշվի առնվել որպես պատասխանատվությունը եւ պարիժը ծանրացնող հանգամանք:

Օրենսդիրը՝ սահմանելով չմարված կամ չհանված դատվածության քրեախրավական հետեւանքները, փարբերակում է դրանք կախված այն բանից, թե ինչպես է դատվածությունն անդրադառնում այս կամ այն բնույթի հանցագործությունների հասարակական վրանգավորության աստիճանի վրա: Եթե նախկինում դատվածություն ունեցող անձի կողմից կատարված հանցագործությունը, անկախ դրա բնույթից, մեծացնում է այդ հանցագործության հասարակական վրանգավորության աստիճանը, ապա դա նախատեսվում է օրենսգրքի Ընդհանուր մասի նորմերում որպես պարիժը ծանրացնող հանգամանք: Իսկ եթե նախկին դատվածության ազդեցությունը նոր հանցագործության հասարակական վրանգավորության աստիճանի վրա օրենսդրի կողմից գնահատվում է որպես սովորականի շրջանակներից դուրս եկող, ապա դատվածությունը գնահատվում է որպես որակյալ հանցակազմի սուբյեկտին բնորոշ հատկանիշ, որի հակասոցիալական բնույթը մեծամասամբ որոշվում է անձի հանցավոր վարքագծի պարբերականությամբ:

Դատվածության ինստիտուտը՝ եւ՛ որպես որակյալ հանցակազմի փարբ, եւ՛ որպես պարժի նշանակման ժամանակ հաշվի առնվող հանգամանք, իրավաչափ նպատակ է հետապնդում, եւ դրա փարբեր ձեւերի կիրառումն օրենսդրի հայեցողության շրջանակներում է:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նույն արարքի համար կրկին անգամ դատվելը բացառելու սկզբունքն այն ձեւով, ինչպես սահմանված է ՆՏ Սահմանադրությամբ եւ կարգավորված է ՆՏ քրեական օրենսգրքով, բացառում է անձին կրկնակի դատապարտելն ու պարժելը միեւնույն հանցագործության համար, ինչպես նաեւ միեւնույն հանցավոր արարքի որակումն օրենսգրքի մի քանի հոդվածով, եթե դրանցում պարունակվող նորմերը հարաբերակցվում են որպես Ընդհանուր եւ Նապուկ մասերի նորմեր կամ մաս եւ ամբողջություն:

9. Նույն արարքի համար անձին կրկին անգամ դատելու սահմանադրական արգելքին եւ նույն արգելքն ամրագրած՝ ՆՏ ներպետական իրավական համակարգի բաղկացուցիչ մասը կազմող համապատասխան միջազգային պայմանագրերին համահունչ է օրենսգրքում ամրագրված այն սկզբունքը, ըստ որի՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պարիժը եւ քրեախրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ ու բավարար լինեն նրան ուղղելու եւ նոր հանցագործությունները կանխելու համար (հոդված 10):

Դա նշանակում է, որ հիշյալ սկզբունքը չի արգելում ինչպես օրենսդրին՝ ՆՏ քրեական օրենսդրությունում ամրագրել դատվածության եւ դրա հետ կապված կրկնակիության ու ռեցիդիվի ինստիտուտները՝ քրեական օրենսդրությամբ նախատեսված իրավական հետեւանքներով հանդերձ, այնպես էլ դատարանին՝ հանցանք կատարած անձի

պարփի փրեսակն ու չափը սահմանված ձեով որոշելու գործընթացում հաշվի առնել հանցագործության բնույթը, դրա հասարակական վրանգավորությունը, հաճախականությունը, դրդապարճառները եւ այլ հանգամանքները, ինչպես նաեւ հանցավորի անձը բնութագրող փոփոխությունները:

Այսպիսով, **չհանված կամ չմարված դատվածություն ունեցող անձի կողմից** նոր նույնաբնույթ հանցագործություն կատարելը որպես արարքը որակյալ դարձնող կամ պարասխանավորությունը եւ պարփի ծանրացնող հանգամանք դիտելը չի կարող համարվել նախկինում կատարած արարքի համար «կրկին անգամ դատվել», ինչպես նաեւ օրենքի առջեւ բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի խախտում: Առավել եւս, կրկնակիության առնչվող բոլոր այն դեպքերը, որոնք կապված չեն դատվածության հետ, սահմանադրականության խնդիր չեն առաջացնում:

Ինչ վերաբերում է դիմումում վկայակոչված՝ «Ս. Ջոլոտուխինն ընդդեմ Ռուսաստանի» (CASE OF SERGEY ZOLOTUKHIN v. RUSSIA, *Application no. 14939/03*) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի 10 փետրվարի 2009թ. վճռին, ապա դատարանն իրավացիորեն գտել է, որ փոփոխ դեպքում խախտվել է նույն արարքի համար կրկին չդատվելու սկզբունքը, քանի որ դիմողը նույն արարքի համար սկզբից ենթարկվել է վարչական, ապա քրեական պարասխանավորության: Ինչպես նշված, այնպես էլ մի շարք այլ վճիռներում Եվրոպական դատարանն ընդգծում է այն միտքը, որ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված կամ արդարացված անձը չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար, բացառությամբ նոր երեւան եկած հանգամանքների դեպքերի:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է նաեւ, որ մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների հետագա ամրապնդման փրեսանկյունից հանրապետությունում օրենսդրական զարգացումները պետք է ընթանան այն ուղղությամբ, որ շեշտը դնելով ոչ թե հանցանքի որակման, այլ պարփի փրարքերի վրա՝ կատարելագործվեն ռեցիդիվի ինստիտուտը կանոնակարգող իրավանորմերը՝ իրենցում ներառելով նաեւ նախկին դատվածությանն առնչվող քրեաիրավական հետեւանքները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 71-րդ հոդվածներով, Նայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. ՏՃ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը եւ 268-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը համապարասխանում են Նայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասրանի Նանրապեղծության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

11 մայիսի 2010 թվականի
ՍԴՈ- 882

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ԱՐԱՐԱՏ ԾՈՎՅԱՆԻ ԵՎ ՍՎԵՏԼԱՆԱ
ՆԱԿՈՔՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ
ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ
ՆՈՂՎԱԾԻ 8-ՐԴ ԿԵՏԻ «Ա» ԵՎ «Բ» ԵՆԹԱԿԵՏԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

25 մայիսի 2010թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի (զեկուցող), Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի,

մասնակցությամբ՝

դիմող Ա. Ծովյանի, դիմողների ներկայացուցիչ Կ. Մեժլումյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՆՆ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՆ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՆՆ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Արարապ Ծովյանի եւ Սվետլանա Նակոբյանի դիմումի հիման վրա՝ «Պետական փոքրի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետերի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Ա. Ծովյանի եւ Ս. Նակոբյանի՝ 25.02.2010թ. ՆՆ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հեղափոխելով օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. «Պեպրական փուրքի մասին» ՆՏ օրենքն ընդունվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից 1997 թվականի դեկտեմբերի 27-ին, ՆՏ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հունվարի 10-ին և ուժի մեջ է մտել 1998 թվականի հունվարի 11-ին:

ՆՏ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմի 2010 թվականի մարտի 10-ի որոշմամբ «Պեպրական փուրքի մասին» ՆՏ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի, Նայասփանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, 213-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 210-րդ հոդվածի 4-րդ մասի, 226-րդ հոդվածի 1-ին կետի, 233-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 231-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ ՆՏ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ Ա. Ծովյանի և Ս. Նակոբյանի դիմումը քննության է ընդունվել մասնակի՝ միայն «Պեպրական փուրքի մասին» ՆՏ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի մասով:

«Պեպրական փուրքի մասին» ՆՏ օրենքի՝ «Դատարան փրվող հայցադիմումների, դիմումների ու գանձաբանների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից փրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) փախու համար պեպրական փուրքի դրույթաչափերը» վերաբերյալ 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» և «բ» ենթակետերը սահմանում են. «Առաջին ապրանի դատարաններ փրվող հայցադիմումների, դիմումների ու գանձաբանների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից փրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) փախու համար պեպրական փուրքը գանձվում է հետևյալ դրույթաչափերով.

...

8. դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար՝

ա) գույքային պահանջի գործերով

վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի 3 փոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ապրանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ կամ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա առաջին ապրանի դատարանի հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի 3 փոկոսի չափով,

բ) ոչ գույքային բնույթի պահանջի գործերով

բազային փուրքի փաստապարհիկի չափով»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապայմությունը հանգում է նրան, որ դիմողներն իրենց իրավունքների դատական պաշտպանության նպատակով դիմել են Երեւանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ապրանի դատարան՝ խնդրելով քանդել շինությունը և վերականգնել մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակը կամ փոխհատուցել կրած վնասը: Երեւանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ապրանի դատարանի 15.08.2006թ. թիվ 02-2409 վճռով հայցը մերժվել է:

Դիմողների վերաքննիչ բողոքի հիման վրա ՆՃ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 28.02.2007թ. վճռով բողոքը բավարարվել է:

Նշված քաղաքացիական գործով պատասխանող կողմի վճռաբեկ բողոքի հիման վրա ՆՃ վճռաբեկ դատարանի 09.11.2007թ. թիվ 3-1400 (ՎԴ) որոշմամբ բեկանվել է ՆՃ - քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 28.02.2007թ. վճիռը եւ գործն ուղարկվել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության: ՆՃ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.01.2008թ. որոշմամբ գործն ուղարկվել է Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան քննության համար՝ որոշման մեջ փալով հետեւյալ հիմնավորումը. «ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՃ օրենքի համաձայն՝ փոխվել է ՆՃ վերաքննիչ քաղաքացիական դատարանում գործերի քննության կարգը եւ ներկայումս ՆՃ վերաքննիչ քաղաքացիական դատարանում գործի քննությունն իրականացվելու է ՆՃ վճռաբեկ դատարանում գործի քննության կանոններով: Նաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով չկա այն դատական ակտը, որի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննությունը հնարավոր կլինի իրականացնել վճռաբեկ դատարանում գործի քննության կանոններով, վերաքննիչ դատարանը գրավ, որ սույն քաղաքացիական գործը պետք է ուղարկել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան քննության համար»:

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 19.06.2009թ. թիվ ԵԿԴ/1036/02/08 վճռով հայցը մերժվել է:

Դիմողները նշված վճռի դեմ բերել են վերաքննիչ բողոք՝ պետական փութը վճարելով միայն ոչ գույքային բնույթի պահանջի համար:

Դիմողների վերաքննիչ բողոքի հիման վրա ՆՃ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.08.2009թ. թիվ ԵԿԴ-1036/02/08 որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձվել է երկու պահանջներից մեկի՝ գույքային բնույթի պահանջի համար պետական փութը վճարված չլինելու պարճառաբանությամբ:

Դիմողների վճռաբեկ բողոքի հիման վրա ՆՃ վճռաբեկ դատարանը՝ վերահասարակելով ՆՃ վերաքննիչ քաղաքացիական դատարանի իրավական դիրքորոշումները, իր՝ 30.09.2009թ. թիվ ԵԿԴ/1036/02/08 որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

3. Դիմողները՝ հղում կատարելով Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին, գտնում են, որ «Պետական փութի մասին» ՆՃ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետերով սահմանված դրույթները՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց փրված մեկնաբանությամբ, խախտում են դատարանի մատչելիության իրավունքը եւ հակասում են ՆՃ Մահմանադրության 3 եւ 18-րդ հոդվածներին:

«Պետական փութի մասին» ՆՃ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետերով սահմանված դրույթների առնչությամբ դիմողները կատարում են երեք հարցադրում.

ա/ որքանո՞վ է իրավազատի բեկանված գործով նույն անձի կողմից նոր վերաքննիչ բողոք բերելու համար կրկին անգամ պետական փուլը վճարելու պարտականություն սահմանելը,

բ/ որքանո՞վ է իրավազատի վերաքննիչ բողոք բերելիս երկու հայցապահանջներից մեկի՝ հիմնական հայցապահանջի համար պետական փուլը վճարած լինելու պարագայում երկրորդ հայցապահանջի՝ այլընտրանքային հայցապահանջի համար եւս պետական փուլը վճարելու պարտականություն սահմանելը,

գ/ որքանո՞վ է իրավազատի վերաքննիչ բողոք բերելիս երկու հայցապահանջներից մեկի՝ հիմնական հայցապահանջի համար պետական փուլը վճարած լինելու պարագայում երկրորդ հայցապահանջի՝ այլընտրանքային հայցապահանջի համար պետական փուլը չվճարելու պարտառաքանությամբ վերաքննիչ բողոքն ամբողջությամբ՝ եւ՝ առաջին, եւ՝ երկրորդ հայցապահանջների մասով վերադարձնելը:

Վերը նշված հարցադրումների առնչությամբ դիմողներն իրավազատի չեն համարում վերաքննիչ բողոք բերելիս հիմնական հայցապահանջին զուգահեռ այլընտրանքային հայցապահանջի եւ բեկանված գործով նույն անձի կողմից կրկին անգամ վերաքննիչ բողոք բերելու համար պետական փուլը վճարելու պարտականություն սահմանելը, ինչպես նաեւ վերաքննիչ բողոք բերելիս երկու հայցապահանջներից մեկի համար պետական փուլը վճարած լինելու պարագայում երկրորդ հայցապահանջի համար պետական փուլը չվճարելու պարտառաքանությամբ վերաքննիչ բողոքն ամբողջությամբ վերադարձնելը:

4. Ըստ պատասխանողի՝ դիմողներն իրենց դիմումում բարձրացնում են առանձին դեպքերում վերաքննիչ բողոք բերելու համար պետական փուլքից ազատելու, ինչպես նաեւ դատավարական բնույթի հարցեր, որոնք վիճարկվող դրույթի իրավակարգավորման շրջանակից դուրս են, քանզի վիճարկվող դրույթը բացառապես սահմանում է վերաքննիչ բողոք բերելու համար պետական փուլքի դրույթաչափերը: Պատասխանողը գտնում է, որ սահմանադրական դատարան ներկայացված դիմումն ակնհայտ անհիմն է, քանի որ վիճարկվող դրույթները դիմումում բարձրացված պահանջներին չեն առնչվում: Պատասխանողը միջնորդել է սահմանադրական դատարանին գործի վարույթը կարճել:

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող դրույթների սահմանադրականության առնչությամբ դիմողների բարձրացրած հարցադրումները դիտարկել ՆՏ Սահմանադրության 45-րդ հոդվածում ամրագրված՝ պետական փուլքեր մուծելու պարտականության, նշված սահմանադրական պարտականության եւ դատարանի մատչելիության իրավունքի հարաբերակցության, պետական փուլքի բովանդակության, դերի ու նշանակության, ինչպես նաեւ դատարանների՝ որպես պետական մարմինների գործառույթների համարեքստում:

«Պետական փուլքի մասին» ՆՏ օրենքը, ՆՏ Սահմանադրության 45 եւ 83.5-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, ի թիվս պետական փուլքի այլ տեսակների, սահմանում է դատարան փրվող հայցադիմումների, դատարանի դատական

ակտերի դեմ վերաքննիչ եւ վճռաբեկ բողոքների համար գանձվող պետական փութի դրույքաչափերը, փութ վճարողներին, պետական փութը գանձելու, վերադարձնելու, արտոնություններ փրամադրելու կարգն ու պայմանները:

«Պետական փութի մասին» ՏՏ օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է պետական փութի հասկացությունը: Ըստ այդ հոդվածի՝ «Նայասփանի Նանրապետությունում պետական փութը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ **սույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար** ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից Նայասփանի Նանրապետության պետական եւ (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված **պարտադիր վճար է**»:

«Պետական փութի մասին» ՏՏ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է պետական փութ վճարողների շրջանակը: Ըստ այդ հոդվածի՝ Նայասփանի Նանրապետությունում պետական փութ վճարողներ են համարվում «Պետական փութի մասին» ՏՏ օրենքի **7 հոդվածով նախատեսված ծառայություններից կամ գործողություններից** օգտվող ֆիզիկական եւ իրավաբանական անձինք:

«Պետական փութի մասին» ՏՏ օրենքի 7-րդ հոդվածը պետական փութի գանձման օբյեկտ, այսինքն՝ պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված **գործողություն է** դիտարկում, մասնավորապես, դատարան փրվող հայցադիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ եւ վճռաբեկ բողոքների **քննությունը**:

Դատարաններում պետական փութ վճարելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում փոխհատուցել պետության՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, կանխարգելել ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը, դատարան դիմելու իրավունքի չարաշահումը:

«Պետական փութի մասին» ՏՏ օրենքն առանձնացնում է գույքային պահանջի եւ ոչ գույքային պահանջի առնչությամբ գանձվող պետական փութերը՝ դրանց համար սահմանելով հաշվարկման միմյանցից էապես փարբերվող կարգ, ինչն օբյեկտիվորեն պայմանավորված է այդ պահանջների բնույթով եւ առանձնահատկություններով: Գույքային պահանջի առնչությամբ գանձվող պետական փութը համասնասական փութ է, եւ հաշվարկվում է հայցագնի նկատմամբ փոկոսային հարաբերակցությամբ, իսկ ոչ գույքային պահանջի առնչությամբ գանձվող փութը պարզ փութ է, եւ գանձվում է հաստատարագրված գումարի չափով: Եթե հայցադիմումը ներառում է գույքային եւ ոչ գույքային պահանջներ, ապա օրենքը՝ այդ պահանջներից յուրաքանչյուրի քննությունը դիտարկելով որպես օրենքի իմաստով ինքնուրույն եւ առանձին գործողություն, պահանջում է, որ պետական փութ վճարվի միաժամանակ եւ՝ գույքային, եւ՝ ոչ գույքային պահանջների առնչությամբ (հոդվ. 32, մաս 4)՝ այդպիսով հետապնդելով իրավաբանորեն հիմնավոր փաստարկված նպատակ:

6. Տիմբ ընդունելով այն հանգամանքը, որ դատարաններում պետական փութ վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն առնչվում է ան-

ձի՝ դադարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ՝ սահմանադրական դադարանը հարկ է համարում ընդգծել, որ դադարաններում պետական փուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դադարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ: Օրենսդիրը կարգավորելով դադարաններում պետական փուրքի գանձման հետ կապված իրավահարաբերությունները՝ կաշկանդված է քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական սկզբունքներով, մասնավորապես, դադարանի մարչելիության սկզբունքի երաշխավորման պարտականությամբ: Ուստի օրենսդրի պարտականությունն է երաշխավորել պարզաճ հավասարակշռություն, մի կողմից, դադարաններում պետական փուրք գանձելու՝ պետության օրինավոր շահի, դադարաններում պետական փուրք վճարելու՝ անձի սահմանադրական պարտականության եւ, մյուս կողմից՝ դադարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի օրինավոր շահի միջև: Նպետաբար, այդպիսի հավասարակշռության ապահովումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակ:

«Պետական փուրքի մասին» ՏՃ օրենքի ուսումնասիրությունը վկայում է, որ օրենքը սահմանել է որոշակի իրավական երաշխիքներ, որոնք միավորված են նշված հավասարակշռությունն ապահովելու նպատակին: Մասնավորապես, «Պետական փուրքի մասին» ՏՃ օրենքի 31-րդ հոդվածի առաջին պարբերության «գ» կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական փուրքի գծով արժույթություններ կարող են սահմանել դադարանները կամ դադարավորները՝ «Պետական փուրքի մասին» ՏՃ օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով՝ **Ելնելով կողմերի գույքային դրությունից:** Այս դրությամբ դադարանի մարչելիության իրավունքի իրացման հնարավորություն է երաշխավորում ոչ բավարար ֆինանսական միջոցներ ունեցող անձանց համար: Ընդ որում, վերոհիշյալ արժույթությունները, ի թիվս այլոց, ներառում են նաև պետական փուրքից ընդհանրապես ազատելու հնարավորությունը: Միաժամանակ, «Պետական փուրքի մասին» ՏՃ օրենքի 22-րդ հոդվածը սահմանում է այն դեպքերը, երբ դադարաններում պետական փուրք վճարելու պարտականությունից անձն ազատվում է օրենքի ուժով, որով բացառվում է այդ պարտականությունից անձին ազատելու հայեցողական մոտեցումը: Բացի դրանից, ՏՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասը ելնելով այն սկզբունքից, որ դատական ծախսերը վճարում է դատավարության պարտվող կողմը՝ սահմանում է, որ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Նպետաբար, սահմանադրական դադարանը գտնում է, որ արդարադատության բնագավառում պետական փուրքի գանձման սույն գործով վիճարկվող կարգի նախադեման խնդրում օրենսդրությամբ սպեղծված են բավարար իրավական երաշխիքներ, որոնց միջոցով ապահովվում է պարզաճ սահմանադրաիրավական հավասարակշռություն պետության եւ անձի օրինավոր վերոհիշյալ շահերի միջև:

Միաժամանակ սահմանադրական դադարանն արձանագրում է, որ դիմողների կողմից մարմաննշված իրավիճակներում գործում են վերոհիշյալ օրենսդրական բոլոր ե-

րաշխիքները, ինչը հնարավորություն է տալիս նշված դեպքերում ես դափարանի մասփջելիության իրավունքի իրացումն անիրավազափորեն չպայմանավորել դափարաններում պեփրական փուրք վճարելու պարփրականությանը:

Սահմանադրական դափարանը հարկ է համարում նշել նաեւ, որ «Պեփրական փուրքի մասին» ՄՍ օրենքի կիրառման դափրական պրակփրիկան ամփուփված է ՄՍ դափարանների նախագահների խորհրդի 1999թ. մարփի 27-ի թիվ 8 որոշմամբ, որում, մասնավորապես, նշվում է, որ ՄՍ վճռաբեկ դափարանի որոշմամբ գործը վերաքննիչ դափարանին նոր քննության ուղարկելու դեպքում, ՄՍ քաղաքացիական դափրավարության օրենսգրքի 68-73-րդ հողվածների եւ «Պեփրական փուրքի մասին» ՄՍ օրենքի համաձայն՝ կողմերից պեփրական փուրքի գանձում չի նախափրեվում: Մամաձայն «Պեփրական փուրքի մասին» ՄՍ օրենքի 22-րդ հողվածի 1-ին մասի «թ» կեփրի՝ դիմողներն օրենքի ուժով ագափում են պեփրական փուրք վճարելու պարփրականությունից նաեւ նոր երեւան եկած հանգամանքների հեփրեւանքով դափարանի վճիռը կամ որոշումը վերանայելու վերաբերյալ բողը ներկայացնելիս: Մշված դեպքերում պեփրական փուրք վճարելու պարփրականության բացակայությունը պայմանավորված է այն փրամաբանությամբ, համաձայն որի՝ դափարանի կողմից կափարվող գործողությունը, որպես պեփրական փուրքի գանձման օբյեկփ, թելադրված է օբյեկփիվորեն փաստված իրավական անիրաձեշփությանը, հեփրեւաբար՝ չի պայմանավորվում պեփրական փուրքի վճարման սահմանադրական պարփրականության կափարմամբ:

7. Սահմանադրական դափարանն իր՝ 2008թ. սեպտեմբերի 9-ի ՄԴՌ-758 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արփահայփել այն մասին, որ յուրաքանչյուր դափրական ափյանի գորձառության իրացման արդյունքում անձի իրավունքների դափրական պաշփրականությունը նոր որակ է սփանում, յուրաքանչյուր դափրական ափյանի կողմից իր գորձառության իրականացման արդյունքում ընդունված դափրական ակփրն իր ինքնություն դերակափարությունն ունի դափրական պաշփրականության իրավունքի իրացման ողջ գործընթացում: Սույն գորձի շրջանակներում գարգացնելով նշված իրավական դիրքորոշումը՝ սահմանադրական դափարանը գփնում է, որ վերադաս դափարանի ակփրի հիման վրա նոր քննության արդյունքում սփորադաս դափարանի կողմից ընդունված ակփրը ես հեփրապնդում է ինքնություն նպափրակ՝ փվյալ գորձի քննության գործընթացում կողմերի համար առաջացնելով իրավական նոր հեփրեւանքներ: Մեփրեւաբար, դափրական նման ակփրի արդյունքում առաջանում են նաեւ փվյալ ակփրի բողըքարկման հեփր կապված նոր իրավահարաբերություններ, որոնց պայմաններում դափրաքննության արդյունքում կայացված դափրական ակփրը հանդիսանում է վերադաս դափարանի կողմից վերահսկողության նոր օբյեկփ: Դրանով պայմանավորված՝ վերադաս դափարանը, վերահսկողություն իրականացնելով դափրական ենթադրյալ սիսալ պարունակող՝ սփորադաս ափյանի ինքնություն դափրական ակփրի նկափմամբ, կափարում է գործողություն, որն օրենքի իմաստով հանդիսանում է պեփրական փուրքի գանձման ինքնություն օբյեկփ: Ընդ որում, խնդրո առարկա իրավիճակում գանձվող պեփրական փուրքը ձառայում է այն նույն նպափրակներին, ինչն այդ ինսփրիփուփրն ունի ընդհանրապես, այն է՝ փոխհափուցել վերադաս դափար-

րանի կողմից գործի քննության ծախսերը եւ ապահովել կողմերի դատավարական կարգապահությունը:

Բացի դրանից, հաշվի առնելով նաեւ, որ դիմողների մատնանշած իրավիճակում բողոք բերող կողմը շարունակում է օգտվել օրենսդրական այն երաշխիքներից, որոնք միավրված են բացառելու դատարանի մատչելիության իրավունքի իրացմանը պետական փութը վճարելու պարտականությամբ խոչընդոտելու հնարավորությունը, սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան փրված այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ պետական փութը գանձվում է նաեւ նոր քննության արդյունքում ընդունված դատական ակտի դեմ վերաքննիչ բողոքներ կայացնելիս, դատարանի մատչելիության իրավունքի ենթադրյալ խախտման առումով սահմանադրականության խնդիր չի առաջացնում: Այլ է ՆՏ վճռաբեկ դատարանի՝ 09.11.2007թ. թիվ 3-1400(ՎԴ) որոշման առկայության դեպքում ՆՏ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 21.01.2008թ. ընդունված թիվ 07-4326 քաղաքացիական գործով վերոնշյալ որոշման հիմնավորվածության ու իրավաչափության հարցը, որը, սակայն, առնչվում է օրենքի կիրառման ոլորտին եւ դուրս է օրենքի նորմի սահմանադրականության հարցով վեճի առարկայի, ինչպես նաեւ ՆՏ սահմանադրական դատարանի կողմից այն քննության առնելու իրավասության շրջանակներից:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ ՆՏ վճռաբեկ դատարանը 2009թ. սեպտեմբերի 30-ի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումն ընդունելիս ընդհանրապես չի անդրադարձել 03.09.2009թ. ներկայացված վճռաբեկ բողոքում պետական փութի չվճարված մատով վճարումը հետաձգելու եւ հարցը վեճն ըստ էության լուծող դատական ակտով լուծելու միջնորդությանը:

8. Դիմողների այն հարցադրման առնչությամբ, համաձայն որի՝ վիճարկվող դրույթը՝ դատարանների կողմից դրան փրված մեկնաբանությամբ, պարտավորեցնում է պետական փութը վճարել միաժամանակ երկու «այլընտրանքային» պահանջների համար, սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանով դիմողները բարձրացնում են վերաքննիչ դատարանի որոշման իրավաչափության հարց, որի պարագայում առկա չէ պարճառահետեւանքային կապ վիճարկվող նորմի եւ դիմողների իրավունքների ենթադրյալ խախտման միջուկ: Ինչ վերաբերում է վիճարկվող դրույթների բուն բովանդակությանը, ապա այն ոչ միայն չի պարտավորեցնում դատարաններում պետական փութը վճարել, այսպես կոչված, **այլընտրանքային** գույքային պահանջներից յուրաքանչյուրի համար, այլ նաեւ **գործնականում բացառում է վերաքննիչ դատարան այլընտրանքային գույքային պահանջներ ներկայացնելու որեւէ հնարավորություն**: Վիճարկվող դրույթի պահանջը ոչ թե այլընտրանքային գույքային պահանջներից յուրաքանչյուրի համար պետական փութի միաժամանակյա վճարումն է, այլ այն վերաբերում է գույքային եւ ոչ գույքային պահանջներին: Իսկ գույքային եւ ոչ գույքային պահանջները, միմյանցից էապես փարբերվելով իրենց բնույթով եւ բովանդակությամբ, չեն կարող գործնականում հարաբերակցվել որպես այլընտրանքային հայցապահանջներ: Գույքային եւ ոչ գույքային պահանջները, որոնց հիմքում դրված են նյութական եւ ոչ նյութական կարիքների

բավարարման, հեպտաբար՝ նաև բովանդակությամբ փարբեր խնդիրներ, չեն կարող միմյանց փոխարինել՝ միմյանց նկատմամբ հանդես գալով որպես այլընտրանքային պահանջներ: Այլընտրանքային պահանջները կարող են ներկայացվել բովանդակությամբ համասեռ խնդրի կամ՝ փոխյալ դեպքում գույքային պահանջի շրջանակներում, որպեսզի այդ պահանջները հանդես են գալիս որպես գույքային բնույթի եւ գործնականում միմյանց փոխարինող պահանջներ կամ ոչ գույքային պահանջի շրջանակներում հանդես գալով որպես ոչ գույքային բնույթի եւ գործնականում միմյանց փոխարինող պահանջներ:

9. ՆՃ դատական օրենսգրքի 39-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իր իրավասության շրջանակներում առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանների դատական ակտերը վերանայող դատարան է, հեպտաբար՝ ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի համաձայն վերաքննիչ դատարանում բողոքարկման օբյեկտն առաջին աստիճանի դատարանի դատական ակտն է: Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի հիման վրա վերահսկողություն է իրականացնում առաջին աստիճանի դատարանի դատական ակտի օրինականության նկատմամբ՝ դրանում փեղ գրած հնարավոր դատական սխալը վերացնելու նպատակով: Ուստի, եթե առաջին աստիճանի դատարանում քննության առարկան մեկ կամ մի քանի պահանջ ներառող հայցապահանջն է, ապա վերաքննիչ դատարանում քննության առարկան ոչ թե առաջին աստիճանի դատարան ներկայացված հայցապահանջում ներառված առանձին պահանջներն են, այլ առաջին աստիճանի դատարանի կողմից թույլ տրված ենթադրյալ դատական սխալը: Նեպտաբար, գույքային եւ ոչ գույքային պահանջների առնչությամբ կայացված՝ առաջին աստիճանի դատական ակտը կարող է քննության առարկա դառնալ միաժամանակ գույքային եւ ոչ գույքային պահանջների առնչությամբ՝ իր ամբողջությամբ մեջ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողների այն հարցադրումը, համաձայն որի՝ մի պահանջի առնչությամբ պետական փողերի վճարումը պետք է հիմք հանդիսանա վերաքննիչ բողոքն ամբողջությամբ քննության ընդունելու համար, անհիմն է, պայմանավորված չէ վերաքննիչ դատարանի գործառնությունով ու անիրագործելի է:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Նայաստի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Պետական փողերի մասին» ՆՃ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետերը՝ սույն որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում, համապատասխանում են Նայաստի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայաստանի Նանրապեղության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

25 մայիսի 2010 թվականի
ՍԴՈ- 890

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ԱՆԱՍԱՍ ԳԻՇՅԱՆԻ, ՆՈՐԱՅՐ ԵՂԻԿՅԱՆԻ,
ԱՐՏԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ, ՍՈՒՐԵՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ, ՍՐԲՈՒՏԻ
ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՎ ՆՈՎՆԱՆՆԵՍ ԴԵՐՉԱԿՅԱՆԻ
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 113-ՐԴ ՆՈՂՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ
ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 113-ՐԴ ՆՈՂՎԱԾԻ ԵՐՐՈՐԴ ՄԱՍԻ՝
ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

1 հունիսի 2010թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դափարանը՝ կազմով. Վ. Նովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝

դիմողներ Ա. Գիշյանի, Ն. Եղիկյանի,

գործով որպես պապասխանող ներգրավված՝ ՆՃ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՃ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի, համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դափարանի մասին» ՆՃ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Անասարա Գիշյանի, Նորայր Եղիկյանի, Արթակ Մուրադյանի, Սուրեն Թադևոսյանի, Սրբուհի Նարոթյունյանի եւ Նովհաննես Դերձակյանի դիմումների հիման վրա՝ Նայասարանի Նանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի եւ 113-րդ հոդվածի երրորդ մասի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Սահմանադրական դափարանը՝ նկատի ունենալով, որ քաղաքացիներ Անասարա Գիշյանի, Նորայր Եղիկյանի, Արթակ Մուրադյանի, Սուրեն Թադևոսյանի, Սրբուհի

Նարությունյանի եւ Նովիաննես Դերձակյանի դիմումների հիման վրա քննության ընդունված դիմումները վերաբերում են նույն հարցին, իր՝ 08.04.2010թ. աշխատակարգային որոշմամբ որոշել է դրանք միավորել եւ քննել դատարանի նույն նիստում:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Ա. Գիշյանի եւ Ն. Եղիկյանի՝ 24.02.2010թ. եւ Ա. Մուրադյանի, Ս. Թադեոսյանի, Ս. Նարությունյանի եւ Ն. Դերձակյանի՝ 22.03.2010թ. ՏՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հեփազոտելով Նայասարանի Նանրապետության աշխատանքային օրենսգիրքը եւ գործում առկա նյութ փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Յ.

1. ՏՏ աշխատանքային օրենսգիրքը ՏՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2004 թվականի դեկտեմբերի 14-ին եւ ուժի մեջ է մտել 2005 թվականի հունիսի 21-ին:

ՏՏ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող՝ «Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ» վերաբառությամբ 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետը սահմանում է. «Գործատուն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաեւ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը Ը արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական եւ աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման, ինչպես նաեւ արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում»:

Նույն հոդվածի երրորդ մասը սահմանում է. «Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ եւ 4-րդ կետերով նախատեսված հիմքերով գործատուն աշխատանքային պայմանագիրը կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից:

Գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում պայմանագիրը լուծվում է առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու»:

2. Դիմողներից Ա. Գիշյանի եւ Ն. Եղիկյանի առնչությամբ քննության առարկա գործի դատավարական նախապարմությունը հանգում է նրան, որ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի 14.01.2008 թվականի համապատասխանաբար՝ թիվ 052-Կ եւ 050-Կ հրամաններով, հիմք ընդունելով ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետը եւ 115-րդ հոդվածի երկրորդ մասը, դիմողներն ազատվել են աշխատանքից:

Դիմողները դիմել են Երևանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դափարան՝ նախկին աշխարանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի դիմաց վճարելու, նյութական եւ բարոյական վնասի փոխհարուցման պահանջներով: Երևանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դափարանի 16.04.2008 թվականի թիվ 2-605 վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ հայցը մերժվել է միայն նյութական վնասի փոխհարուցման պահանջի մասով: Նայցը մասնակիորեն բավարարելիս դափարանը հիմք է ընդունել, ի թիվս այլոց, ՆՆ վճռաբեկ դափարանի 26.10.2006թ. թիվ 3-1775 (ՎԴ) եւ 26.01.2007թ. թիվ 3-34 (ՎԴ) նախադեպային որոշումները:

Վերը նշված վճռի դեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն վերաքննիչ բողոք է ներկայացրել ՆՆ վերաքննիչ քաղաքացիական դափարան: Վերջինս իր՝ 19.09.2008թ. թիվ ԵԱԲԴ/0605/02/08 որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ բեկանել է Երևանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դափարանի 16.04.2008 թվականի թիվ 2-605 վճիռը եւ գործն ուղարկել նույն դափարան՝ նոր քննության:

Երևանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դափարանի 10.12.2008 թվականի թիվ ԵԱԲԴ/0605/02/08 վճռով նախկին աշխարանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի դիմաց վճարելու պահանջի մասին հայցը բավարարվել է:

Վերը նշված վճռի դեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն վերաքննիչ բողոք է ներկայացրել ՆՆ վերաքննիչ քաղաքացիական դափարան: Վերջինս իր՝ 30.04.2009թ. թիվ ԵԱԲԴ/0605/02/08 որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը՝ անփոփոխ եւ օրինական ուժի մեջ թողնելով Երևանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դափարանի 16.04.2008 թվականի թիվ 2-605 վճիռը:

Վերը նշված որոշման դեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն վճռաբեկ բողոք է ներկայացրել ՆՆ վճռաբեկ դափարան: Վերջինս իր՝ 06.11.2009թ. թիվ ԵԱԲԴ/0605/02/08 որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարել է՝ բեկանել է ՆՆ վերաքննիչ քաղաքացիական դափարանի 30.04.2009թ. թիվ ԵԱԲԴ/0605/02/08 որոշումը եւ այն փոփոխել՝ մերժել է դիմողի հայցը:

Դիմողներից Ա. Մուրադյանի, Ս. Թադեոսյանի, Ս. Նարոյթյունյանի եւ Ն. Դերձակյանի առնչությամբ քննության առարկա գործի դափավարական նախապարմությունը հանգում է նրան, որ «Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամի համապարասխանաբար՝ թիվ 07.11.2008.-Ա5, 07.11.2008.-Ա2, 07.11.2008.-Ա3, 07.11.2008.-Ա4 հրամաններով, հիմք ընդունելով ՆՆ աշխարանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ - կետը եւ 115-րդ հոդվածի երկրորդ մասը, դիմողներն ազատվել են աշխարանքից:

Դիմողները դիմել են Երևանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դափարան՝ աշխարանքից ազատելու մասին հրամաններն անվավեր ճանաչելու, աշխարանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու պահանջներով: Երևանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դափարանի 27.02.2009 թվականի թիվ ԵԿԴ-3613/02/08 վճռով հայցը մերժվել է:

Վերը նշված վճռի դեմ դիմողները վերաքննիչ բողոք են ներկայացրել ՏՏ վերաքննիչ քաղաքացիական դատարան: Վերջինս իր՝ 25.05.2009թ. թիվ ԵԿԴ-3613/02/08 որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ բեկանել է Երեսանի Կենտրոնն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 27.02.2009 թվականի թիվ ԵԿԴ-3613/02/08 վճիռը եւ գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Վերաքննիչ բողոքը մասնակիորեն բավարարելիս դատարանը հիմք է ընդունել, ի թիվս այլոց, այն հանգամանքը, որ ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետում նշված՝ **աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման հիմքով աշխատողների թվաքանակը չի կարող կրճատվել**՝ ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետում նման հիմքերի բացակայության պատճառով:

Վերը նշված որոշման դեմ «Գաֆեւճեան թանգարան» հիմնադրամը վճռաբեկ բողոք է ներկայացրել ՏՏ վճռաբեկ դատարան: Վերջինս իր՝ 04.12.2009թ. թիվ ԵԿԴ-3613/02/08 որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ բեկանել է ՏՏ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.05.2009թ. թիվ ԵԿԴ-3613/02/08 որոշումը եւ այն փոփոխել՝ մերժել է դիմողների հայցը: Վճռաբեկ բողոքը մասնակիորեն բավարարելիս դատարանը հիմք է ընդունել, ի թիվս այլոց, այն հանգամանքը, որ ՏՏ վերաքննիչ դատարանը, անտեսելով ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի կարգավորումը, հանգել է անհիմն եզրակացության այն մասին, որ օրենքը **աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման հիմքով աշխատողների թվաքանակի կրճատման հնարավորություն չի նախատեսում**:

3. ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի առնչությամբ դիմողներից Ա. Գիշյանը եւ Ն. Եղիկյանը գտնուում են, որ նշված կետով օրենսդիրը խախտում է, նախ՝ ՏՏ Սահմանադրության 1-ին (սոցիալական պետության սկզբունք), 14-րդ (մարդու արժանապատվության հարգում) եւ 14.1-րդ (խորականության արգելք) հոդվածների պահանջները, քանի որ վիճարկվող օրինադրույթը նման ձեւակերպմամբ գործարուներին այդ դրույթի սուբյեկտիվ մեկնաբանման եւ ոչ իրավաչափ կիրառման լայն հնարավորություն է տալիս:

Ա. Գիշյանը եւ Ն. Եղիկյանը պնդում են նաեւ, որ դատական ակտերի հիման վրա ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վիճարկվող դրույթը հնարավորություն է տալիս գործարուներին փվյալ դրույթի հիման վրա աշխատողներին աշխատանքից ազատել հիմնավոր պատճառների բացակայության դեպքում՝ սխալ մեկնաբանելով այն: Ըստ դիմողների՝ վիճարկվող օրինադրույթում ամրագրված նախապայմանների առկայությունը հնարավոր է պարզել միայն գործարուից, իսկ աշխատողները, որպես կանոն, դրանք պարզելու հնարավորություն չունեն, եւ արդյունքում ՏՏ Սահմանադրության 18-րդ հոդվածին համապատասխան իրավունքների դատական պաշտպանության իրավունքը դառնում է ընդամենը փաստաթղթային ձեւակերպում:

Ա. Գիշյանի եւ Ն. Եղիկյանի պնդմամբ՝ օրենսգրքի վիճարկվող դրույթը հակասում է նաեւ ՏՏ Սահմանադրության 32-րդ հոդվածին եւ 48-րդ հոդվածի 2-րդ կէտի պահանջներին, քանի որ դիմողներին փոխառնալից հիմքով աշխատանքից ազատելիս գործատուն նրանց չի փոխարինել աշխատողների կրճարման ընթացակարգերի մասին, ընդհակառակը, գործատուն չի պատասխանել դիմողների դիմումներին եւ նրանց աշխատանքից ազատել է ոչ հիմնավոր պատճառներով:

ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի երրորդ մասի առնչությամբ դիմողներ Ա. Գիշյանը եւ Ն. Եղիկյանը գտնում են, որ նշված մասով օրենսդիրը խախտում է աշխատողների՝ ՏՏ Սահմանադրության 1-ին, 3, 14, 14.1., 32 եւ 48-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները, քանի որ՝ «եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում» եւ «գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում» ձեւակերպումներով գործատուի համար սուբյեկտիվ գործողությունների լայն դաշտ է ստեղծում: Այսպէս չի դիմողները եզրակացնում են, որ իրավակիրառողի (այդ թվում՝ վճռաբեկ դատարանի) կողմից օրենսգրքի վիճարկվող դրույթի փարընթեցման եւ փարքնույթ մեկնաբանման արդյունքում անհամապատասխանություն է առաջանում ՏՏ Սահմանադրության հիշատակված նորմերի եւ վիճարկվող օրինադրույթի միջեւ:

Դիմողներից Ա. Մուրադյանի, Ս. Թադեոսյանի, Ս. Նարությունյանի եւ Ն. Դերձակյանի կարծիքով՝ ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կէտը հակասում է ՏՏ Սահմանադրության 1-ին, 3, 14, 14.1., 32 եւ 48-րդ հոդվածներին, քանի որ վիճարկվող դրույթի իրավակիրառական պրակտիկան ցույց է տալիս, որ գործատուների կողմից նշված հոդվածը կիրառվում է հիմնականում այն դեպքերում, երբ որեւէ հիմնավորված պատճառ չկա աշխատողներին աշխատանքից ազատելու համար: Ներկայացրած դիմողների կարծիքով, ՏՏ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող դրույթի կապակցությամբ ձեւավորված իրավակիրառական պրակտիկան ուղղակիորեն հակասում է ՏՏ Սահմանադրությանը:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողների փաստարկների դեմ, գտնում է, որ դիմողներ Ա. Մուրադյանը, Ս. Թադեոսյանը, Ս. Նարությունյանը, Ն. Դերձակյանը ձեւակառուցելով վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում են վիճարկվող դրույթի կիրառման իրավաչափության հարց: Ըստ պատասխանողի՝ դիմողներն ըստ էության գտնում են, որ ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կէտը սահմանում է գործատուի կողմից այդ հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման կոնկրետ հիմքեր, որոնք, սակայն, դիմողների պարագայում չեն պահպանվել: Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասով, 32-րդ հոդվածով եւ ՍԴԱՌ-21, ՍԴՌ-870, ՍԴՌ-839, ՍԴՌ-817 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներով՝ պատասխանող կողմն առաջարկել է դիմողներ Ա. Մուրադյանի, Ս. Թադեոսյանի, Ս. Նարությունյանի, Ն. Դերձակյանի դիմումի մասով գործի վարույթը կարճել:

Ինչ վերաբերում է դիմողներ Ա. Գիշյանի և Ն. Եղիկյանի դիմումին, պատասխանողն այս առնչությամբ նշում է, որ ՏՏ սահմանադրական դատարանի՝ 24.02.2009թ. ՄԴՈ-792 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը կարող է օգտագործվել որպես ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի սահմանադրականության հիմնավորման փաստարկ: Նույն որոշմամբ ՏՏ սահմանադրական դատարանն անդրադարձել է ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ որպես գործարտի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման ինքնուրույն հիմքի նպատակահարմարությանը և այն դիպել է որպես աշխատանքային պայմանագրի լուծման օբյեկտիվ պատճառ:

ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի առնչությամբ պատասխանող կողմը գտնում է, որ օրենսդիրը սահմանել է աշխատողների իրավունքների պաշտպանության եւս մեկ երաշխիք, այն է՝ որոշակի հիմքերի առկայության դեպքում գործարտուն իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում պարտավոր է աշխատողին առաջարկել նրա մասնագիտական պարտաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ նման հնարավորությունների բացակայության դեպքում լուծել աշխատանքային պայմանագիրը աշխատողի հետ՝ առանց այլ աշխատանք առաջարկելու: Վերոգրյալի հիման վրա պատասխանող կողմը գտնում է, որ ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 113-րդ հոդվածի 3-րդ մասը չեն հակասում ՏՏ Սահմանադրությանը և առաջարկում է օրենսգրքի նշված դրույթները ճանաչել ՏՏ Սահմանադրությանը համապատասխանող:

5. Ամփոփելով դիմողների փաստարկները՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողներն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումը հիմնականում պայմանավորում են վիճարկվող դրույթների իրավակիրառական պրակտիկայով, այն է՝ գործարտունների և դատարանների կողմից դրանց սխալ մեկնաբանմամբ և սխալ կիրառմամբ՝ նման իրավակիրառական պրակտիկայի հիմքը համարելով վիճարկվող դրույթների իրավական անորոշությունը:

Նաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողներն իրենց իրավունքների խախտումը հիմնականում պայմանավորում են ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի ձեւակերպումների և 113-րդ հոդվածի երրորդ մասում օգտագործված՝ «եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում» և «գործարտի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում» բառակապակցությունների իրավական անորոշությամբ և դրա հետեւանքով իրավակիրառ պրակտիկայում այդ դրույթներին տրված, իրենց կարծիքով, սխալ մեկնաբանությամբ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի և 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները՝ սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը կարեւորում է վիճարկվող դրույթների կիրառման պրակտիկայում դրանց նկատմամբ դրսեւորված մոտեցումների գնահատման անհրաժեշտությունը:

6. Սահմանադրական դատարանը՝ վերահաստատելով իր ՄԴՈ-747 և ՄԴՈ-780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, սույն գործով կրկին անգամ ընդգծում է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի ձեւակերպումների և 113-րդ հոդվածի երրորդ մասում օգտագործված՝ «եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում» և «գործարտի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում» բառակապակցությունների և դրանց բնորոշ հատկանիշների բովանդակության բացահայտմանը: Ընդ որում, նշված ձեւակերպումները և բառակապակցությունները գնահատման ենթակա ձեւակերպումներ և բառակապակցություններ են: Դրանք ենթակա են գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով փյալ գործի բոլոր կոնկրետ փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից: Գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս իրավիճակը և պարզելու, թե արդյո՞ք փյալ անձը, կոնկրետ դեպքում՝ գործարտն, ցուցաբերել է կամայականություն:

Գործի նյութերի ուսումնասիրության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ փյալ գործերով ՏՏ վճռաբեկ դատարանը՝ ելնելով իր սահմանադրաիրավական կարգավիճակից, հստակեցրել է ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի և նույն հոդվածի երրորդ մասի բովանդակությունը՝ ապահովելով սպորտդաս դատարանների և մյուս իրավակիրառողների կողմից վիճարկվող դրույթների միատեսակ ընկալումը և կիրառումը:

Բացի դրանից, ՏՏ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող դրույթների վերաբերյալ ՏՏ վճռաբեկ դատարանի նախադեպային նշանակության որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա են ՏՏ վճռաբեկ դատարանի մի շարք իրավական դիրքորոշումներ, որոնք հանդես են գալիս որպես սպորտդաս դատարանների և մյուս իրավակիրառողների կողմից ՏՏ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող դրույթների միատեսակ ընկալման և միատեսակ կիրառման երաշխիք: Նշված որոշումների մի մասով վճռաբեկ դատարանը բեկանել է սպորտդաս դատարանների դատական ակտերը՝ ապահովելով ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի հիմքով աշխատանքից ազատված անձանց իրավունքների վերականգնումը: Մասնավորապես, ՏՏ վճռաբեկ դատարանն իր՝ 26.10.2006թ. թիվ 3-1775 (ՎԴ), 26.10.2006թ. թիվ 3-1880 (ՎԴ) և 26.01.2007թ. թիվ 3-34 (ՎԴ) քաղաքացիական գործերով բացահայտել է ՏՏ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող դրույթների կիրառման ոլորտում սպորտդաս ապյանների հետեյալ դատական սխալները.

- գործարտի մոտ աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը և որակավորմանը համապատասխան այլ աշխատանքի բացակայության վերաբերյալ գործարտի բացառությունները և գրությունները չեն հանդիսանում թույլատրելի ապացույցներ,

- գործափուլի մոտ աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը եւ ուրակավորմանը համապատասխան այլ աշխատանքի բացակայության վերաբերյալ թույլատրելի ապացույցներ են հանդիսանում, օրինակ, կազմակերպության աշխատողների թվաքանակը եւ պաշտոնների անվանումները սահմանող փաստաթղթերն այն մասին, որ գործափուլի մոտ առկա չէ աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը եւ որակավորմանը համապատասխան այլ աշխատանք,

- գործափուլն կրում է անուղղակի ապացուցման պարզականություն աշխատողի հանդեպ նրան արտադրության ծավալների, փնտրեական, փեխնուլոգիական եւ աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման, ինչպես նաեւ արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում աշխատանքից ազատելիս ապացուցելու, որ իր մոտ բացակայում է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք:

Ընդ որում, նշված որոշումներից երկուսով (ՏՏ վճռաբեկ դատարանի 26.10.2006թ. թիվ 3-1775 (ՎԴ) եւ 26.01.2007թ. թիվ 3-34 (ՎԴ) որոշումներ) արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառվել են Երեւանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 16.04.2008թ. թիվ 2-605 վճռով՝ դիմողներից Ա. Գիշյանի եւ Ն. Եղիկյանի վերաբերյալ քաղաքացիական գործով:

7. Նիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողների իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված չէ ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի եւ 113-րդ հոդվածի երրորդ մասի դրույթների իրավական անորոշությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասարանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Նայասարանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Նայասարանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետը համապատասխանում է Նայասարանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասարանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի երրորդ մասը համապատասխանում է Նայասարանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ
Վ. ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆ**

*1 հունիսի 2010 թվականի
ՍԴՈ- 891*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐՈՒՍՅԱԿ ԱԹԱՆԵՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ
ՎՐԱ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 221-ՐԴ ՆՈՂՎԱԾԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ
ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 221-ՐԴ ՆՈՂՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ
ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

15 հունիսի 2010թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Նարոթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (զեկու-
ցող), Մ. Թովուզյանի, Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի,
մասնակցությամբ՝

դիմող Ա. Աթանեսյանի,

գործով որպես պարասխանող ներգրավված՝ ՆՃ Ազգային ժողովի պաշտոնական
ներկայացուցիչ՝ ՆՃ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի
1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մա-
սին» ՆՃ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

ընթաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արուսյակ Աթա-
նեսյանի դիմումի հիման վրա՝ Նայասարանի Նանրապետության աշխատանքային օրենս-
գրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետի եւ Նայասարանի Նանրապետության քա-
ղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի՝
Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը
որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ա. Աթանեսյանի՝ 16.02.2010թ. ՆՃ սահմա-
նադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պարասխա-
նող կողմերի գրավոր բացատրությունները, հեփազոտելով Նայասարանի Նանրապետու-

յան աշխատանքային և Նայաստանի Նանրապետության քաղաքացիական դատարանության օրենսգրքերը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Ն աշխատանքային օրենսգիրքը Ն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, Նայաստանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2004 թվականի դեկտեմբերի 14-ին և ուժի մեջ է մտել 2005 թվականի հունիսի 21-ին:

Ն քաղաքացիական դատարանության օրենսգիրքը Ն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, Նայաստանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Ն աշխատանքային օրենսգրքի վիճարկվող՝ «Աշխատանքային կարգապահության կոպիտ խախտումը» վերաբերյալ 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետը, մասնավորապես, սահմանում է. «Աշխատանքային կարգապահության կոպիտ խախտում կարող է համարվել ... իր և այլոց համար անօրինական եկամուտներ ստանալու կամ այլ անձնական դրոշմապարձառներով պաշտոնեական դիրքը օգտագործելը, ինչպես նաև **կամայականություն դրսևորելը**»:

Ն քաղաքացիական դատարանության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետը սահմանում է. «Գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը ... մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պարճառաբանված, սխալ է պարճառաբանված կամ պարճառաբանված չէ, ապա վերաքննիչ դատարանը պարճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը»:

2. Քննության առարկա գործի դատարանական նախապարմությունը հանգում է նրան, որ դիմողը 2000 թվականի հունվարին արդարադատության նախարարի հրամանով նշանակվել է Ն արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության Թ-ալինի փարաճքային բաժնի պետ: Ն արդարադատության նախարարության ստուգումների և մեթոդաբանության վարչությունը 2009 թվականի փետրվարի 24-26-ն ընկած ժամանակահատվածում ստուգումներ է իրականացրել ՔԿԱԳ գործակալության Թ-ալինի փարաճքային ստորաբաժանումում, որի արդյունքներով Ն արդարադատության նախարարը Ն փոխվարչապետին և Թ-ալինի քաղաքապետին գրություն է ներկայացրել այն մասին, որ 2007-2008 թվականներն ընկած ժամանակահատվածում ՔԿԱԳ գործակալության Թ-ալինի փարաճքային ստորաբաժանման աշխատանքներում առկա են որոշակի թերություններ և բացթողումներ, և առաջարկվել է քննարկել աշխատողներին կարգապահական պարասխանավության ենթարկելու հարցը:

2009 թվականի մարտի 16-ին Թալինի քաղաքապետի հրամանով, հիմք ընդունելով ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածը եւ սպուգումների արդյունքների վերաբերյալ 27.02.2009թ. փեդեկանքը, դիմողն ազարվել է զբաղեցրած պաշտոնից:

Դիմողը դիմել է ՏՏ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դարարան՝ Թալինի քաղաքապետի 16.03.2009թ. թիվ 2 հրամանն անվավեր ճանաչելու եւ աշխատանքային խախտված իրավունքը վերականգնելու՝ իր զբաղեցրած պաշտոնում վերականգնելու պահանջներով, ինչը ՏՏ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դարարանի 29.05.2009 թվականի վճռով մերժվել է: Դարարանը հիմք է ընդունել 27.02.2009թ. սպուգման վերաբերյալ փեդեկանքում արձանագրված փաստերը՝ ընդգծելով, որ սպուգման վերաբերյալ փեդեկանքը չի վիճարկվել դիմողի կողմից:

Վերը նշված վճռի դեմ դիմողը վերաքննիչ բողոք է ներկայացրել ՏՏ վերաքննիչ քաղաքացիական դարարան: Վերջինս, հիմք ընդունելով 27.02.2009թ. սպուգման վերաբերյալ փեդեկանքում արձանագրված փաստերը, **մեկնաբանելով** ՏՏ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետում նշված «կամայականություն» եզրույթը, հասարակված համարելով, որ 27.02.2009թ. սպուգման վերաբերյալ փեդեկանքում արձանագրված փաստերը հանդիսանում են կամայականության դրսետրումներ, իր՝ 31.07.2009թ. որոշմամբ մերժել է դիմողի վերաքննիչ բողոքը՝ անփոփոխ թողնելով ՏՏ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դարարանի 29.05.2009թ. վճիռը: Միաժամանակ, հիմք ընդունելով ՏՏ քաղաքացիական դարավարության օրենսգրքի 221-րդ - հոդվածի առաջին մասին 1-ին կետի պահանջները՝ վերաքննիչ քաղաքացիական դարարանը պարճառաբանել է ՏՏ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դարարանի՝ անփոփոխ թողնված վճիռը:

Վերը նշված որոշման դեմ դիմողը վճռաբեկ բողոք է ներկայացրել ՏՏ վճռաբեկ դարարան: Վերջինս, վերահասարակելով ՏՏ վերաքննիչ քաղաքացիական դարարանի եզրահանգումները, իր՝ 23.09.2009թ. որոշմամբ վերադարձրել է վճռաբեկ բողոքը:

3. Դիմողը գրնում է, որ ՏՏ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող դրույթում օգրագործված «կամայականություն դրսետրելը» բառակապակցությունը հակասում է ՏՏ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված իրավական պեպության սկզբունքին, որովհետեւ այն ձեւակերպված է ոչ հսրակ, անորոշ, ինչը րարընկալումների եւ րարակերպ մեկնաբանությունների րեղիք է րալիս, որի արդյունքում խախտվում են օրենքի առջեւ բողորի հավասարության սկզբունքը՝ ամրագրված ՏՏ Սահմանադրության 14.1-րդ հոդվածում, եւ 32-րդ հոդվածի առաջին մասով երաշխավորված իրավունքը:

ՏՏ քաղաքացիական դարավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի դրույթների առնչությամբ դիմողը գրնում է, որ դրանք հակասում են ՏՏ - Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով սահմանված՝ համապարասխանաբար դարական պաշրպանության արդյունավետ միջոցի եւ արդար դարաքննության իրավունքներին:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, ՏՏ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետի առնչությամբ գտնում է, որ ներկայացված դիմումում դիմողն առավելապես անդրադարձել է ընդհանուր իրավասության դատարանների, մասնավորապես՝ վերաքննիչ դատարանի կողմից կոնկրետ գործով վիճարկվող դրույթի կիրառմանը: Ըստ պատասխանողի՝ դիմումի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիմողը ձեռնամուխ է վիճարկելով ՏՏ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետի սահմանադրականությունը՝ ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց: Ուստի պատասխանողը գտնում է, որ գործի վարույթը ՏՏ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետի մասով ենթակա է կարճման:

Ինչ վերաբերում է վիճարկվող՝ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, ապա պատասխանողը գտնում է, որ այս դրույթում ամրագրված՝ վերաքննիչ դատարանի լիազորությունն ուղղակիորեն պայմանավորված է ողջամիտ ժամկետում գործը քննելու պահանջով և ուղղված է գործի շրջապատյալի կանխմանը: Այսինքն՝ վիճարկվող դրույթը վերաքննիչ դատարանին լիազորում է իր իրավասության սահմաններում, եթե դա հնարավոր է դատական ակտի վերաքննության արդյունքում, վերացնել գործն ըստ էության լուծող դատական ակտի թերությունները՝ դրանով իսկ կանխելով գործի քննության անհարկի ձգձգումներն ու շրջապատյալը:

5. ՏՏ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետի առնչությամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողն իր իրավունքների խախտումը հիմնականում պայմանավորում է ՏՏ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետում օգտագործված «կամայականություն դրսեւորելը» բառակապակցության իրավական անորոշությամբ և դրա հետեւանքով իրավակիրառ պրակտիկայում այդ դրույթներին տրված, իր կարծիքով, սխալ մեկնաբանությամբ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի և 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը կարեւորում է ՏՏ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետում օգտագործված՝ «կամայականություն դրսեւորելը» բառակապակցության սահմանադրաիրավական իմաստի բացահայտման անհրաժեշտությունը:

6. Սահմանադրական դատարանը՝ վերահաստատելով իր ՍԴՌ-747 և ՍԴՌ-780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, սույն գործով կրկին անգամ ընդգծում է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել: Դրանք բովանդակությունը, բնորոշ հասկանիչների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ՏՏ աշխատանքային օրենսգրքի 221-րդ - հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետում օգտագործված՝ «կամայականություն դրսեւորելը»

բառակապակցության եւ դրան բնորոշ հատկանիշների բովանդակության բացահայտմանը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Կոնստիտուցիոնալ դատարանը չի կարող հանդիսանալ «կամայականություն» հարկադրող մարմին, որը կարող է սահմանադրական դատարանի օգտին արձանագրել որպէս «կամայականություն» հարկադրող մարմին: Այսինքն՝ վերաբնիչ դատարանը «կամայականություն» եզրույթի նման մեկնաբանությամբ կամայական գործողության բովանդակությունն ըստ էության նույնացրել է ապօրինի գործողության բովանդակության հետ:

«Կամայականություն» եզրույթը ՄԱԿ-ի օրենսդրության մեջ հարակ բնորոշված չէ, այն սահմանափակ կիրառում ունի եւ գործող օրենսդրության, մասնավորապէս, «Երեւանի իրավունքների մասին» ՄԱԿ-ի 22-րդ հոդվածի երկրորդ պարբերության, «Շահութահարկի մասին» ՄԱԿ-ի 60-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպէս նաեւ դատարանի պրակտիկայի՝ ՄԱԿ-ի վճռաբեկ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 3-2497 (ՎԴ), 2006 թ. դեկտեմբերի 22-ի թիվ ՎԴ-341/06, 2007 թվականի հունվարի 26-ի թիվ 3-1 (ՏԴ), 2007 թվականի մարտի 2-ի թիվ 3-295 (ՎԴ), 2007 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 3-1832 (ՎԴ), 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԼԴ/0162/06/08 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ ՄԱԿ-ի օրենսդրության մեջ եւ դատարանի պրակտիկայում «կամայականություն» եզրույթը մեկնաբանվում է որպէս ապօրինություն, օրինականության սկզբունքի խախտում:

ՄԱԿ-ի օրենսդրության 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետում առկա է նաեւ «իր եւ այլոց համար անօրինական եկամուտներ ստանալը կամ այլ անձնական դրոշմաբանութեամբ պաշտօնական դիրքը օգտագործելը» բառակապակցությունը, որպէս ապօրինի վարքագծի դրսեւորման առանձնահատուկ ձեւ, որն առավել որոշակի է, քան «կամայականություն դրսեւորելը» բառակապակցությունը:

Նաշվի առնելով «կամայականություն» եզրույթի վերաբերյալ ՄԱԿ-ի օրենսդրության մեջ եւ դատարանի պրակտիկայում, ըստ էության, միասնական նման բնորոշման առկայությունը, ինչպէս նաեւ այն հանգամանքը, որ ՄԱԿ-ի օրենսդրության 221-րդ հոդվածի բոլոր դրույթները, ինչպէս նաեւ երկրորդ մասի 3-րդ կետի դիսպոզիցիան որպէս ապօրինի վարքագծի դրսեւորման ձեւ են մատնանշում անօրինականության տարբեր տեսակներ, սահմանադրական դատարանը գտնում է, որ նման պայմաններում ՄԱԿ-ի օրենսդրության 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետում «կամայականություն դրսեւորելը» բառակապակցությունն ինքնին ավելորդ է եւ կարող է «ապօրինի» եզրույթի կամայական եւ հակասական մեկնաբանության տեղիք վրայ:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպէս նաեւ այն հանգամանքը, որ ՄԱԿ-ի օրենսդրության օրենսգիրքը կամայականություն դրսեւորելը համարում է աշխարհային կարգապահության կոպիտ խախտում, որը հիմք է հանդիսանում աշխարհային առանց կարգապահական առավել մեղմ փոյժերի ենթարկելու աշխարհային անհատապաշտպանության:

տելու համար, սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող՝ ՏՏ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետում օգտագործված՝ «կամայականություն դրսեւորելը» բառակապակցությունն ապօրինի վարքագծի սուբյեկտիվ ընկալման ու փարածական մեկնաբանության եւ դրա արդյունքում՝ աշխատողին անհապաղ աշխատանքից ազատելու իրավականորեն չհիմնավորված հնարավորություն է ստեղծում:

7. ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի առնչությամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողն իր իրավունքների խախտումը հիմնականում պայմանավորում է ՏՏ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով սահմանված՝ համապատասխանաբար դատական պաշտպանության արդյունավետ միջոցի եւ արդար դատաբանության իրավունքների, իր կարծիքով՝ խախտմամբ, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը կարեւորում է ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի դրույթների սահմանադրականության գնահատումը ՏՏ Սահմանադրության 19-րդ հոդվածի առաջին մասում ամրագրված՝ գործի քննության ողջամիտ ժամկետների եւ դատական ակտի պարճառաբանվածության երաշխիքների միաժամանակյա ապահովման համարեքստում:

ՏՏ Սահմանադրության 19-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությանը ՏՏ սահմանադրական դատարանն անդրադարձել է բազմաթիվ որոշումներում (ՍԴՈ-664, ՍԴՈ-665, ՍԴՈ-690, ՍԴՈ-691, ՍԴՈ-773, ՍԴՈ-751, ՍԴՈ-758, ՍԴՈ-765, ՍԴՈ-767, ՍԴՈ-780, ՍԴՈ-787, ՍԴՈ-818, ՍԴՈ-833, ՍԴՈ-851): Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարեւորում է հարցին անդրադարձը բողոքարկման ինստիտուտի արդյունավետության ապահովման փեսանկյունից:

Վերաքննիչ ապյանի դատարանների՝ դատական համակարգում ունեցած դերով են պայմանավորված դատական բողոքարկման հարաբերությունների կարգավորման բնագավառում կատարված օրենսդրական փոփոխությունները, որոնց արդյունքում համապատասխանաբար ՏՏ վերաքննիչ քրեական եւ ՏՏ վերաքննիչ քաղաքացիական դատարաններին, ի լրումն այլ լիազորությունների, իրավունք է վերապահվում վերաքննիչ բողոքը մերժելիս պարճառաբանել անփոփոխ թողնված դատական ակտը, եթե դատարանի կայացրած՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պարճառաբանված, սխալ է պարճառաբանված կամ պարճառաբանված չէ՝ դրանով իսկ երաշխավորելով առաջին ապյանի դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծած դատական ակտի ինչպես հիմնավորվածությունը, այնպես էլ հնարավորինս լիարժեք ընկալումն ու մարչելիությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քննարկվող լիազորությունը վերապահված է նաեւ ՏՏ վճռաբեկ դատարանին՝ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 6-րդ կետերով: Բացի դրանից, համանման նորմեր փեղ են գրել նաեւ ՏՏ դատական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում, 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 6-րդ կետերում:

ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով եւ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով նախատեսված լիազորության համադրված վերլուծությունը վկայում է, որ վերաքննիչ ապյանի դատարաններին նման լիազորություն վերապահելը նպատակ է հետապնդել անհրաժեշտության դեպքում երաշխավորել առաջին ապյանի դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծած դատական ակտի պարճառաբանվածությունը եւ դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու սահմանադրաիրավական պահանջի իրացումը, ինչպես նաեւ ապահովել իրավական որոշակիության սկզբունքի իրացումը:

Սահմանադրական դատարանը միաժամանակ ընդգծում է, որ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետը, նախատեսելով ՆՏ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ խնդր առարկա լիազորությունը, միաժամանակ, որպես այդ լիազորության կիրառման իրավաչափությունն ապահովող երաշխիք, ամրագրում է դրանից օգտվելու չափորոշիչներ: Այն է՝ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով նախատեսված լիազորությունը ՆՏ վերաքննիչ քաղաքացիական դատարանը կարող է կիրառել բոլոր այն դեպքերում, երբ առաջին ապյանի դատարանը կայացրել է գործն **ըստ էության ճիշտ լուծող** դատական ակտ, սակայն այն «...թերի է պարճառաբանված, սխալ է պարճառաբանված կամ պարճառաբանված չէ»: Նման գործը վերաքննության կարգով վերանայելիս ՆՏ վերաքննիչ քաղաքացիական դատարանը **պարտավոր է** առաջին ապյանի դատական ակտի պարճառաբանությունները լրացնել նոր պարճառաբանություններով, եթե այդ ակտը թերի է պարճառաբանված, ճիշտ պարճառաբանել, եթե այդ ակտը սխալ է պարճառաբանված, կամ պարճառաբանել, եթե այդ ակտն ընդհանրապես պարճառաբանված չէ:

ՆՏ վերաքննիչ քաղաքացիական դատարանին նշված լիազորությունը վերապահելիս օրենսդիրը նկատի է ունեցել նաեւ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ ըստ էության ճիշտ վճռի՝ ձեւական նկատարումներով բեկանման արգելքի հանգամանքը:

ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի՝ «...թերի է պարճառաբանված, սխալ է պարճառաբանված» բառակապակցությունը սահմանադրականության խնդիր չի առաջացնում եւ ՆՏ վերաքննիչ քաղաքացիական դատարանին վերապահված՝ քննարկվող լիազորությունը համահունչ է ՆՏ - Սահմանադրությամբ, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով երաշխավորված՝ արդար դատաքննության եւ ողջամիտ ժամկետներում դատական քննության իրավունքներին: Նիշյալ լիազորության բացակայությունը, ընդհակառակը, կարող է վրանգել արդար դատաքննության, ինչպես նաեւ ողջամիտ ժամկետներում դատաքննության իրավունքները:

Այլ է վիճակը «...կամ պարճառաբանված չէ» բառակապակցության առնչությամբ: Նման ձեւակերպման առկայությունն ինքնաբերաբար ենթադրում է չպարճառաբանված դատական ակտի գոյություն: ՆՏ սահմանադրական դատարանն իր՝ 9 ապրիլի

2007թ. ՄԴՌ-690 որոշման մեջ հստակ իրավական դիրքորոշումներ է արտահայտել դատական ակտի պարճառաբանված լինելու սահմանադրաիրավական անհրաժեշտության վերաբերյալ, եւ այդ դիրքորոշումներն ամբողջությամբ վերաբերելի են նաեւ քննության առարկա գործին: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրությունն ընդհանրապես պետք է բացառի չպարճառաբանված դատական ակտի գոյությունը, որովհետեւ նման ակտը չի կարող համապարասխանել իրավական պետության հիմնարար սկզբունքներին, չի կարող երաշխավորել մարդկանց իրավունքների արդյունավետ դատական պաշտպանություն, ինչպես նաեւ ապահովել խախտված իրավունքների արդյունավետ վերականգնում:

Այդ նկատառումներից ելնելով է, որ, մասնավորապես, ՏՃ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (հոդված 132) պարտադիր նորմատիվ պահանջ է սահմանում դատական վճռի բովանդակության վերաբերյալ, նախատեսելով, որ «դատարանի վճիռը կազմված է ներածական, նկարագրական, **պարճառաբանական** եւ եզրափակիչ մասերից»: Միաժամանակ, նույն հոդվածի 1-ին մասում սահմանվում է, որ «Վճռի պարճառաբանական մասում պետք է նշվեն դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետետությունները, այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները, ինչպես նաեւ այն օրենքները, Նայասրանի Նանրապետության միջազգային պայմանագրերը եւ այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս»:

Դատարանի վճռի պարճառաբանման անհրաժեշտությանն անդրադարձել է նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ մասնավորապես շեշտելով, որ արդար դատաքննության պահանջը ներառում է նաեւ դատարանի պարճառաբանված որոշում ընդունելու պարտավորությունը (տե՛ս Van de Hunk v. the Netherlands, Judgment of 19 April 1994):

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Նայասրանի Նանրապետության աշխարանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետը՝ «...ինչպես նաեւ կամայականություն դրսեւորելը» բառակապակցության մասով ճանաչել Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 1, 3, 14.1-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Նայասրանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետը՝ «...կամ պարճառաբանված չէ» բառակապակցության մասով ճանաչել Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 1-ին, 18-րդ (1-ին մաս), 19-րդ (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի հիմքով ՆՃ Սահմանադրության 1-ին, 18-րդ (1-ին մաս), 19-րդ (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր ճանաչել նաեւ ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ «...կամ չպատճառաբանված է» եւ 6-րդ կետը՝ «...պատճառաբանված չէ» բառակապակցությունների մասով:

4. Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ**

*15 հունիսի 2010 թվականի
ՍԳՈ- 896*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ԴԻԴԻ ԳՐՈՒՊ» ՍԱՆՄԱՆԱՓԱԿ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՐԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 210-ՐԴ ՆՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ 216-ՐԴ ՆՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

29 հունիսի 2010թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարոյությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝

«Դիդի Գրուպ» ՍՊԸ-ի փնօրեն Գ. Խալաթյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՆՃ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՃ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի, համաձայն Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Դիդի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումի հիման վրա՝ Նայաստանի Նանրապետության քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասի եւ 216-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Դիդի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ 15.03.2010թ. ՆՃ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հեղադրելով ՆՃ քաղաքացիական օրենսգրքը եւ փվյալ իրավահարաբերություններին առնչվող այլ իրավական ակտերը,

ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դափարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Նայասարանի Նանրապետության քաղաքացիական օրենսգիրքը ՆՆ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, ՆՆ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՆՆ քաղաքացիական օրենսգրքի՝ «Ուրիշի հողամասից սահմանափակ օգտվելու իրավունք (սերվիտուտ)» վերաբառությամբ 210-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հողամասի սեփականատերերը կամ օգտագործողներն իրավունք ունեն հարեւան հողամասի սեփականատիրոջից, իսկ անհրաժեշտության դեպքում նաև այլ հողամասի սեփականատիրոջից պահանջել իրենց փրամադրելու այդ հողամասի սահմանափակ օգտագործման իրավունք (սերվիտուտ)»:

Նույն օրենսգրքի՝ «Սերվիտուտի դադարելը» վերաբառությամբ 216-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«Այն դեպքերում, երբ քաղաքացուն կամ իրավաբանական անձին պարկանող հողամասը սերվիտուտով ծանրաբեռնված լինելու հետևանքով չի կարող օգտագործվել իր նշանակությանը համապատասխան, սեփականատերն իրավունք ունի դափարակ կարգով պահանջել դադարեցնելու սերվիտուտը»:

2. Ըստ գործում առկա նյութերի՝ «Թիվ 12 ԲԱՏՁ» ԲԲԸ-ն 2002թ. մայիսի 31-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով «Դիդի Գրուպ» ՍՊԸ-ին է վաճառել Արշակունյաց 119 հասցեում գտնվող շինությունից 48,2 քմ փարածք, իսկ ենթավարձակալության պայմանագրով ՍՊԸ-ի օգտագործմանն է հանձնել 4350 քմ փարածք: Շինության նկարմամբ սեփականության իրավունքը եւ հողամասի նկարմամբ օգտագործման իրավունքն ստացել են պետական գրանցում 2002թ. հունիսի 11-ին: Երեսնի քաղաքապետի՝ 20.02.2003թ. թիվ 296-Ա որոշմամբ փրամադրված թույլտվության հիման վրա «Դիդի Գրուպ» ՍՊԸ-ն նշված 4350 քմ հողամասի վրա կառուցել է հեղուկ գազի լիցքավորման կայան եւ սկսել զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

ՆՆ վերաքննիչ քաղաքացիական դափարանի 23.11.2007թ. թիվ 07-3610 վճռով ճանաչվել է «Դիդի Գրուպ» ՍՊԸ-ի սեփականության իրավունքը նաև 48.2 քմ մակերեսով շինությամբ ծանրաբեռնված հողի նկարմամբ:

Ներազայում, 12.04.2004թ. քաղաքացիներ Արշակ Արահամյանն ու Աստղիկ Սիմոնյանը «Թիվ 12 ԲԱՏՁ» ԲԲԸ-ից ձեռք են բերել Արշակունյաց 119 հասցեում գտնվող մնացած անշարժ գույքը՝ 3044.3 քմ շինությունը, իսկ 2006 թվականից նաև՝ այդ շինությանը կից 16799 քմ հողամասը, որը ներառում է ենթավարձակալության պայմանագրի հիման վրա «Դիդի Գրուպ» ՍՊԸ-ին օգտագործման հանձնված հողամասը: Հողամասի նկարմամբ սեփականության իրավունք ձեռք բերելուց հետո, քաղաքացիներ Արշակ Ար-

րահամյանն ու Ասպրդիկ Միմոնյանն իրենց սեփականության իրավունքի պաշտպանության նպատակով հայց են ներկայացրել դատարան՝ ընդդեմ «Դիդի Գրուպ» ՍՊԸ-ի՝ փարածքից վարարելու և սեփականության իրավունքը խախտող գործողությունները կանխելու պահանջով, որը Երեւանի Շենգավիթ համայնքի առաջին ապրիլի դատարանի 18.12.2006 թվականի վճռով բավարարվել է:

Իր սեփականության իրավունքի պաշտպանության նպատակով «Դիդի Գրուպ» ՍՊԸ-ն դիմել է դատարան՝ 4350 քմ հողամասի նկատմամբ հարկադիր սերվիտուտ սահմանելու պահանջով: Երեւանի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 23.04.2009 թվականի վճռով հայցը մերժվել է: ՆՃ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.07.2009 թվականի որոշմամբ «Դիդի Գրուպ» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Երեւանի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ: ՆՃ վճռաբեկ դատարանի 07.11.2009 թվականի որոշմամբ «Դիդի Գրուպ» ՍՊԸ-ի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

3. ՆՃ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող դրույթների սահմանադրականության վերաբերյալ դիմող կողմը պնդում է, որ դրանք չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջին, քանի որ դրանցում բացահայտված չեն «սահմանափակ օգտագործման» եւ «իր նշանակությանը համապատասխան» հասկացությունները: Ըստ դիմողի՝ օրենսդիրը պարտավոր էր փոխ ՆՃ քաղաքացիական օրենսգրքի 216-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «իր նշանակությանը համապատասխան» հասկացության այն նվազագույն չափորոշիչները, որոնք կերաշխավորեին փոխյալ հողամասի սեփականատիրոջ եւ հարակից հողամասի սեփականատիրոջ կողմից իրենց հողամասերի նկատմամբ սեփականության սուբյեկտիվ իրավունքի միաժամանակյա ազատ իրականացումը, ինչպես նաեւ ՆՃ քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ «սահմանափակ օգտագործման» հասկացության այն նվազագույն չափորոշիչները, որոնց պայմաններում ուրիշի հողամասից օգտվելը վնաս չի հասցնի մյուս սեփականատիրոջ՝ իր հողամասը դրա նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու իրավունքին: Ըստ դիմողի՝ ՆՃ դատարանները եւ, մասնավորապես, ՆՃ վերաքննիչ դատարանը ՆՃ քաղաքացիական օրենսգրքի 216-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «իր նշանակությանը համապատասխան» հասկացությունը մեկնաբանել է այնպես, որ փոխյալ հողամասի սեփականատիրոջ չի կարող այդ հողամասի վրա «շինարարություն իրականացնել, շենք-շինություններ կառուցել, օգտագործել ցանկացած այլ նպատակով»: Դիմողը գտնում է, որ սերվիտուտի դեպքում հողամասի սեփականատիրոջ պեղք է գրկվի հողամասի՝ սերվիտուտով ծանրաբեռնված մասի վրա շինություններ կառուցելու, հողամասի այդ մասը ցանկացած այլ նպատակով օգտագործելու իրավունքից, քանի որ «...դա բխում է սերվիտուտի, այսինքն՝ երկու հարակից հողամասերի սեփականատերերից մեկի սեփականության իրավունքի ազատ իրացման հնարավորությունից»:

Դիմողը նշում է նաեւ, որ ՆՃ քաղաքացիական օրենսգրքի 210-րդ եւ 216-րդ հոդվածներում առկա է օրենքի բաց, որը դրսեւորվում է նրանում, որ նշված հոդվածները վերաբերում են **միայն հողամասերին**, եւ ոչ՝ շինություններին: Բացի դրանից, դիմողը

գտնում է, որ ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 216-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «իր նշանակությանը համապատասխան» հասկացությունն ինքնին «ավելորդ» հասկացություն է եւ անկախ իր իրավական որոշակիությունից, խոչընդոտում է սերվիտուտի պահանջող սեփականատիրոջ սեփականության իրավունքի անարգել իրականացմանը: Ինչպես նշում է դիմողը, օրենսդրության մեջ արվյալ հասկացության առկայությունը բոլոր դեպքերում բացառում է սերվիտուտի իրավունքի իրականացումը, Կեղիք է արվիս կամայականությունների եւ արդարադատության բնագավառում չարաշահումների, հեպեաբար, այս հիմնավորումներով է նշված հասկացությունը խախտում նաեւ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների 1-ին մասերով սահմանված՝ համապատասխանաբար դատական պաշտպանության արդյունավետ միջոցի եւ արդար դատաբանության իրավունքները: Ըստ դիմող կողմի՝ այդ իրավունքներն իրենց հիմքում ունեն ոչ միայն արվյալ դատարարական իրավունքների համար անհրաժեշտ իրավական մեխանիզմներ եւ կառուցակարգեր, այլեւ նյութական իրավունքի՝ դատական կարգով իրացվելիության հանգամանքը: Այսինքն՝ եթե արվյալ նյութական իրավունքի վերաբերյալ նորմը չի համապատասխանում իրավական որոշակիության եւ կանխարեսելիության պահանջներին կամ թեկուզեւ համապատասխանում է այդ պահանջներին, սակայն օրենսդրությամբ այդ նյութական իրավունքի իրացման համար սահմանվում են այնպիսի պայմաններ, որոնք արգելափակում են նյութական այդ իրավունքի՝ դատական կարգով իրացվելու հնարավորությունը, ապա այդ պայմանը «չի կարող համարվել դատական պաշտպանության արդյունավետ միջոց կամ արդար դատաբանության փարթ»:

Դիմող կողմը, իր դիմումում հղում կատարելով իրավական ակտերի որոշակիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եւ ՏՏ սահմանադրական դատարանի դիրքորոշումներին, գտնում է, որ օրենքի անհստակության պատճառով չի կարողացել կանխարեսել իր վարքագիծը, օգտագործման իրավունքով ՄՊԸ-ին հատկացված հողամասի վրա կատարվել են մեծ ներդրումներ, կառուցվել է հեղուկ գազի լիցքավորման սպացիոնար կայան՝ այն մտադրությամբ, որ հնարավոր վեճերի դեպքում ՄՊԸ-ին կտրվի սերվիտուտի իրավունք, մինչդեռ այդպիսի իրավունք ՄՊԸ-ին չտրամադրելով վերջինիս հասցվում է հսկայական նյութական վնաս:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ վիճարկվող դրույթներն անգամ ձեւական առումով չեն կարող հակասել ՏՏ Սահմանադրությանը, եւ դիմումը պետք է դիտարկվի բացառապես վիճարկվող իրավադրույթների՝ իրավական որոշակիության սկզբունքին հակասության փեսանկյունից:

Ըստ պատասխանողի՝ ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասը չի հակասում ՏՏ Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված իրավական պետության սկզբունքին, մասնավորապես, սերվիտուտն ուրիշի գույքի սահմանափակ օգտագործման իրավունք է եւ իր իրավաբանական էությանը եւ նշանակությանը համապատասխան բազմաթիվ իրավական համակարգերում ամրագրվել է որպես ուրիշի գույքի սահմանափակ օգտագործման իրավունք, հեպեաբար՝ «սերվիտուտ» հասկացության սահմանման համար «սահմանափակ օգտագործման իրավունք» հասկացության օգտա-

գործումը չի կարող հակասել իրավական որոշակիության պահանջին: Ավելին, այդ երկու հասկացությունները կարող են դիֆարկվել որպես հոմանիշներ: Բացի դրանից, ՄՔ քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասը սահմանելով սերվիտուտի հասկացությունը՝ այն բնորոշում է որպես ուրիշի գույքի սահմանափակ օգտագործման իրավունք: Եվ ինչպես գտնում է պատասխանող կողմը՝ օրենսդիրը կարող էր սահմանափակվել միայն հանրաճանաչ «սերվիտուտ» հասկացության կիրառմամբ, մինչդեռ օրենսդիրը սահմանել է նաև դրա բովանդակությունը, այսինքն՝ սահմանվել են այն դեպքերը, երբ անձի սեփականությունը կարող է ծանրաբեռնվել սերվիտուտով: Բացի դրանից, պատասխանող կողմը փարբեր երկրների օրինակներով մատնանշում է, որ սերվիտուտը, որպես ուրիշի գույքի սահմանափակ օգտագործման իրավունք, լայնորեն կիրառվում է միջազգային իրավական պրակտիկայում:

ՄՔ քաղաքացիական օրենսգրքի 216-րդ հոդվածի 2-րդ մասի առնչությամբ պատասխանող կողմը գտնում է, որ ՄՔ քաղաքացիական օրենսգիրքը թույլ է տալիս սերվիտուտով ծանրաբեռնել նաև շենքերն ու շինությունները: Քաղաքացիական իրավունքի օբյեկտի համարվող յուրաքանչյուր գույք ունի իր նպատակային նշանակությունը, եւ սեփականատերն ազատ է իրեն սեփականության իրավունքով պարկանող գույքն օգտագործել դրա նպատակային նշանակությանը համապատասխան, եւ որ «գույքի նշանակություն» հասկացությունը չի կարող դիֆարկվել որպես իրավական որոշակիության սկզբունքին հակասող, քանի որ դա հանրահայտ հասկացություն է եւ ուղղակիորեն բխում է գույքի անհատական հատկանիշներից, դրա սոցիալական նշանակությունից, պիտանելիությունից, դրա հատկանիշներով պայմանավորված այն օգտագործելու հնարավորությունից, արժեքային նշանակությունից:

Պատասխանող կողմը փաստարկում է նաև գործը լուծող վերջնական դատական ակտով դիմողի նկատմամբ ՄՔ քաղաքացիական օրենսգրքի 216-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառելիության հարցը, պնդելով, որ այդ նորմը դատական եւ ոչ մի ակտով դիմողի նկատմամբ չի կիրառվել եւ գործի վարույթն այդ մասով ենթակա է կարճման:

5. Ուսումնասիրելով գործում առկա Երեսան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵՇԴ/1586/02/08 քաղ. գործով 23.04.2009թ. վճիռը եւ նույն գործով՝ ՄՔ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.07.2009թ., ՄՔ վճռաբեկ դատարանի 07.10.2009թ. որոշումները, սահմանադրական դատարանը գտնում է, որ ՄՔ քաղաքացիական օրենսգրքի սույն գործով վիճարկվող 216-րդ հոդվածի 2-րդ մասի նորմերը դիմողի նկատմամբ չեն կիրառվել, հետեւաբար, «Սահմանադրական դատարանի մասին» ՄՔ օրենքի 32-րդ եւ 60-րդ հոդվածների հիմքերով, գործի վարույթն այդ մասով ենթակա է կարճման:

6. Դիմումի առարկայի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ՄՔ քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածի վիճարկվող մասի սահմանադրականությունը որոշելիս:

- բացահայտել սերվիտուտի ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունը, դրա դերն ու նշանակությունը ՏՏ իրավական համակարգում,

- գնահատել սերվիտուտի հետ կապված քաղաքացիական հարաբերությունների իրավակարգավորման սկզբունքների, ձեւերի ու միջոցների, դրանց որոշակիության սահմանադրական իրավաչափությունը, նաեւ որպես սեփականության իրավունքի իրացման անխախտելիության եւ օրենքով նախատեսված հիմքերով այդ իրավունքի որոշակի սահմանափակման իրավական երաշխիք,

- գնահատել ՏՏ իրավահամակարգում սերվիտուտի միջազգային իրավակիրառական պրակտիկայի հնարավոր ներդրման (գարգացման) սահմանադրաիրավական համապետելիությունը:

Նկատի ունենալով նաեւ այն հանգամանքը, որ սույն գործով վիճարկվող նորմի կարգավորման առարկան անմիջականորեն առնչվում է սեփականության իրավունքի իրացման եւ դրա հնարավոր սահմանափակման իրավաչափության խնդրին, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում այդ նորմի սահմանադրականությունը գնահատել նաեւ սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության եւ այդ իրավունքի պաշտպանության վերաբերյալ արտահայտած իր իրավական դիրքորոշումների, ինչպես նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի փաստանյութից:

ՏՏ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով (ՄԴՈ-92, ՄԴՈ-630, ՄԴՈ-649, ՄԴՈ-650, ՄԴՈ-667, ՄԴՈ-669, ՄԴՈ-735, ՄԴՈ-815) անդրադառնալով սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման, այդ իրավունքի պաշտպանության, հնարավոր սահմանափակման խնդիրներին՝ իրավական դիրքորոշումներ է արտահայտել հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման, սեփականությունից հրաժարվելու հետ կապված հարաբերությունների իրավակարգավորման սահմանադրականության վերաբերյալ՝ կարեւորելով այդ բնագավառում սահմանադրական կարգի սկզբունքներից բխող իրավական միջոցների գործադրման անհրաժեշտությունը: Վերահաստատելով այդ դիրքորոշումները եւ ելնելով սույն գործով դիմումում բարձրացված հարցերի բովանդակությունից՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում գնահատել նաեւ **սեփականության իրավունքի հնարավոր սահմանափակման սահմանադրական իրավաչափության շրջանակները**, նկատի ունենալով այն հանգամանքը, որ սերվիտուտն ուրիշի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի կամավոր կամ հարկադիր սկզբունքով օգտագործման իրավունք է:

7. Սեփականության իրավունքը ՏՏ-ում, որպես անձի հիմնական իրավունք, ճանաչվում եւ պաշտպանվում է պետության կողմից (ՏՏ Մասիմ. 8 հոդված): Այդ իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է անձի կողմից սեփականությունն իր հայեցողությամբ փիրապետելուն, օգտագործելուն, փոխանցելուն եւ կրակելուն, որը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց,

հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը (ՏՏ Սահմ. 31 հոդվածի 1-ին մաս):

Սեփականության իրավունքը, որպես գույքային իրավունք, կարող է ունենալ նաև սեփականատեր չհանդիսացող անձը: ՏՏ քաղաքացիական օրենսգրքի մի շարք նորմերով կարգավորվում են ինչպես սեփականատիրոջ, այնպես էլ սեփականատեր չհանդիսացող անձանց գույքային իրավունքները (դրանց ծագման, փոփոխման և դադարման հիմքերն ու կարգը, ինչպես նաև այդ իրավունքների պաշտպանության միջոցները): ՏՏ Սահմանադրության 3-րդ, 18-րդ, 19-րդ և մի շարք այլ հոդվածներով երաշխավորված է անձի իրավունքների, այդ թվում՝ նաև գույքային իրավունքների պաշտպանությունը: Վերջինիս իրացմանն է կոչված ՏՏ քաղաքացիական օրենսդրությունը, մասնավորապես՝ ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 1-ին, 170-րդ, 278-րդ և այլ հոդվածների համաձայն անձանց գույքային իրավունքները, այդ թվում՝ սեփականատեր չհանդիսացող, ՏՏ քաղաքացիական օրենսգրքում նախատեսված կարգով ենթակա են պաշտպանության:

Անձի գույքային իրավունքների (այդ թվում՝ սեփականության իրավունքի) իրացման շրջանակներում ծագող հարաբերությունների կարգավորման միջոց է հանդիսանում սերվիտուտը, որը ՏՏ իրավահամակարգում ներդրվել է նորանկախ Նայաստանի Նանրապետության Սահմանադրության ընդունմամբ պայմանավորված՝ «Անշարժ գույքի մասին» ՏՏ օրենքով (ՏՕ-29, ընդունված՝ 27.12.1995թ., ուժը կորցրել է 01.01.1999թ.), համաձայն որի սահմանվում էր, որ սերվիտուտը (օգտակարությունը) ուրիշի սեփականության սահմանափակ օգտագործման իրավունքն է, որով կողմերից մեկը՝ սերվիտուտի (օգտակարության) տերը, իրավունք է ստանում այլ անձի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը ՏՏ օրենսդրությամբ սահմանված պայմաններին համապատասխան հատուկ նպատակով օգտագործել կամ նրա իրավունքների նկատմամբ որոշակի սահմանափակումներ սահմանել (2-րդ հոդված): Նիշյալ օրենքի 16-րդ հոդվածում նախատեսված էին սերվիտուտի (օգտակարության) բովանդակությունը, սերվիտուտով ծանրաբեռնված անշարժ գույքի (հողամաս, շենքեր, շինություններ և այլ ամրակալված գույք) սեփականատիրոջ իրավունքները, պայմանագրային ձևով սերվիտուտ սահմանելու, դրա շուրջ ծագած վեճերը լուծելու, սերվիտուտով ծանրաբեռնված գույքից օգտվելու դիմաց վճարելու կարգը:

Սերվիտուտի ինստիտուտը գործող իրավակարգավորման շրջանակներում համակարգված ձևով զարգացվել է ՏՏ օրենսդրական մի շարք ակտերով, մասնավորապես՝ ՏՏ քաղաքացիական օրենսգրքով (135, 170, 188, 210-217, 238, 615 և 692-րդ հոդվածներ), «Քաղաքաշինության մասին» ՏՏ օրենքով (14.1, 18.1, 20 և 23-րդ հոդվածներ), «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՏՏ օրենքով (2, 11, 16, 21, 23, 25, 37, 41 և 44-րդ հոդվածներ), ՏՏ հողային օրենսգրքով (13, 14, 19, 22, 33, 50, 53, 54, 58, 62, 65, 68, 77, 100 և 118-րդ հոդվածներ) և ենթաօրենսդրական ակտերով: Սերվիտուտի նորմատիվ իրավակարգավորման այդպիսի ընդգրկուն շրջանակը պայմանավորված է ինչպես այդ ինստիտուտի հետ կապված իրավահարաբերությունների բովանդակությամբ, այնպես էլ սերվիտուտով ծանրաբեռնման ենթակա գույքի ընդարձակ

կազմով: Մասնավորապես, ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 210-217-րդ հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է, որ սերվիտուտը ուրիշի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքից անհրաժեշտաբար սահմանափակ **օգտվելու իրավունք է** (ինչպես **հաբուցման (վճարի)**, այնպես էլ **առանց հաբուցման պայմանի**), որը կարող է իրացվել ինչպես հողամասերի, **այնպես էլ շենքերի, շինությունների եւ այլ անշարժ գույքի նկատմամբ** (օրենսգրքի 217-րդ հոդված): Այդպիսով, չնայած սույն գործով վիճարկվող եւ դրա հետք համակարգային առումով փոխկապակցված վերոհիշյալ նորմերով կարգավորվում է հողային հարաբերություններից բխող սերվիտուտը, սակայն օրենսդիրը հնարավոր է համարել սերվիտուտով ծանրաբեռնել ոչ միայն հողամասերը, **այլև ցանկացած անշարժ գույք**, որից սահմանափակ օգտվելն անհրաժեշտ է: Այս առումով դիմողի հարցադրումները՝ սերվիտուտը միայն հողամասերին վերաբերելու առումով, անհիմն են:

ՏՏ քաղաքացիական օրենսգրքի վերոհիշյալ նորմերի համաձայն սերվիտուտ կարող է սահմանվել հետեւյալ սկզբունքներով. **կամավոր՝** կողմերի միջև նույնպիսի կարգով վավերացված գրավոր համաձայնությամբ, եւ **հարկադրաբար՝** դատական կարգով: Միաժամանակ, հասարակական կարիքների համար, անկախ սեփականության իրավունքի սուբյեկտից, սահմանվում է անվճար, հարկադիր եւ **մշտական սերվիտուտ**: ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ եւ 213-րդ հոդվածների համաձայն սերվիտուտը, որպես գույքային իրավունք, ենթակա է **պետական գրանցման**, որի կարգն ու պայմանները մանրամասնված են «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՏՏ օրենքի վերոհիշյալ հոդվածներով, ՏՏ հողային օրենսգրքի 50-54-րդ հոդվածներով: ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 215-րդ եւ 217-րդ հոդվածների համաձայն գույքային իրավունքն այլ անձի փոխանցելիս պահպանվում է նաեւ սերվիտուտը: Օրենսգրքի 210-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերի համաձայն սերվիտուտը **չի կարող լինել առումաճառքի, գրավի եւ վարձակալության ինքնուրույն առարկա**, իսկ սերվիտուտով ծանրաբեռնելը **սեփականատիրոջը չի գրկում րվյալ գույքի փրապետման, օգտագործման եւ փնտրման իրավունքներից**: Սերվիտուտը համապատասխան իրավակարգավորման է ենթարկվել գրավի, գույքի վարձակալության եւ անհատույց օգտագործման հետ կապված հարաբերություններում (օրենսգրքի 238, 615 եւ 692-րդ հոդվածներ): Օրենսգրքի 216-րդ հոդվածի համաձայն նախատեսված են սերվիտուտի դադարման (այդ թվում՝ դատական կարգով) հետեւյալ հիմքերը, երբ.

- վերացել են դրա սահմանման հիմքերը,
- սերվիտուտով ծանրաբեռնված լինելու հետեւանքով անշարժ գույքը չի կարող օգտագործվել իր նշանակությանը համապատասխան:

Այսպիսով, վերլուծելով ՏՏ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի եւ վերջինիս իրացումը սերվիտուտի միջոցով կարգավորող քաղաքացիաիրավական նորմերի բովանդակությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սերվիտուտը որպես գույքային իրավունք.

- պայմանավորված է ուրիշի սեփականությունը հանդիսացող գույքի օգտագործման թելադրված (անխուսափելի) անհրաժեշտությամբ, առանց որի սերվիտուտ

պահանջող անձն անկարող է իրացնել (կամ լիարժեք իրացնել) սեփականության իր իրավունքը,

- նպատակատուղված չէ անձին, որպես սերվիտուտով ծանրաբեռնված գույքի սեփականատիրոջ, իր իրավունքներից զրկելուն,

- ուրիշի սեփականությունը հանդիսացող գույքի սահմանափակ օգտագործման իրավունք է, որի իրացմամբ սերվիտուտով ծանրաբեռնված գույքի սեփականատերը չի զրկվում այդ գույքը փիրապետելու, օգտագործելու եւ փոփոխելու իր սահմանադրական իրավունքներից,

- կոչված է ուրիշի սեփականությունը հանդիսացող գույքի ոչ լիարժեք, սահմանափակ եւ թելադրված անհրաժեշտության նպատակով օգտագործմանը,

- չի կարող ինքնուրույն քաղաքացիաիրավական գործարքների առարկա լինել,

- որպես կանոն, իրականացվում է սերվիտուտ սահմանելու անհրաժեշտության հանգամանքների գոյության ժամկետով, եւ կարող է պահպանվել (փոխանցվել) իրավահաջորդության սկզբունքով,

- հասարակական կարիքների համար անվճար, հարկադիր եւ մշտական սերվիտուտ կարող է սահմանվել միայն օրենքով,

- ճանաչվում, երաշխավորվում եւ պաշտպանվում է պետության կողմից՝ ենթարկվելով պետական գրանցման՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով սահմանված կարգով,

- օրենքով նախատեսված հիմքերով ենթակա է դադարման, այդ թվում՝ դատական կարգով, քաղաքացիական այլ իրավունքներին համարժեք ենթակա է հավասար իրավական պաշտպանության:

8. Անդրադառնալով սերվիտուտի իրավակարգավորման անորոշության վերաբերյալ դիմումում բարձրացված հարցադրումներին, վերահաստատելով իր մի շարք որոշումներում (ՄԴՈ-630, ՄԴՈ-652, ՄԴՈ-705, ՄԴՈ-720, ՄԴՈ-723, ՄԴՈ-731, ՄԴՈ-753, ՄԴՈ-833) իրավական որոշակիության սկզբունքի եւ դրա բովանդակության վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորման մեջ որոշ հասկացությունների, մասնավորապես՝ «սահմանափակ օգտագործում» (ՏՏ քաղ. օր.-ի 210-րդ հոդվածի 1-ին մաս), «իր նշանակությանը համապատասխան» (ՏՏ քաղ. օր.-ի 216-րդ հոդվածի 2-րդ մաս) անորոշության վերաբերյալ պնդումները հիմնավոր չեն: Ուրիշի գույքից **սահմանափակ օգտվելու իրավունքը, որը եւ հանդիսանում է սերվիտուտի բուն իմաստը, պարզորոշ ենթադրում է սերվիտուտ պահանջող անձի իրավունքը ոչ թե լիարժեք օգտագործելու իր սեփականությունը չհանդիսացող գույքը, այլ այնքանով, **որքանով դա անհրաժեշտ է իր սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի փիրապետման, օգտագործման եւ փոփոխման իրավունքը լիարժեք իրականացնելու համար:** Վերջինս ուղղակիորեն բխում է ՏՏ Սահմանադրության 31-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունից, այսինքն՝ անձի սեփականության իրավունքը, ինչպես եւ ցանկացած այլ իրավունք, պետք է իրականացվի այլ անձանց նույնպիսի իրավունքների, հասարակության եւ**

պեւոյթյան օրինական շահերի հետ ներդաշնակման սկզբունքով: Ներեւաբար, օրենսդրի խնդիրն է իրավակարգավորման համապարասխան միջոցների, ձեւերի եւ մեթոդների գործադրմամբ ապահովել իրավահարաբերությունների սուբյեկտների միջեւ այդպիսի ներդաշնակ վարքագիծ, նախատեսելով նաեւ հնարավոր վեճերի լուծման հսկայական ընթացակարգեր (այդ թվում՝ դատական): Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումը նախատեսում է այդպիսի հնարավորություն:

Գույքն իր **նպատակային նշանակությանը համապարասխան օգտագործելը**, որպէս գույքային իրավունքի իրականացման միջոց, իրավակարգավորման է ենթարկված ոչ թե սերվիտուտի հետ կապված իրավահարաբերությունների, այլ քաղաքացիական իրավունքների կարգավորման շրջանակներում, որպէս քաղաքացիական հարաբերությունների սուբյեկտների իրավազատի վարքագիծ: Դա է վկայում մասնավորապէս ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 134, 202, 209, 884 եւ 889-րդ հոդվածների վերլուծությունը՝ հողային եւ փոխառության հետ կապված իրավակարգավորման առնչությամբ, որից հետեւում է, որ քաղաքացիաիրավական հարաբերության օբյեկտ հանդիսացող ցանկացած գույք ենթակա է օգտագործման իր նպատակային նշանակությանը համապարասխան, ելնելով րվյալ գույքի սպառողական եւ այլ հսկայանիշներից, որոնք յուրաքանչյուր դեպքում ենթակա են գնահատման ինչպէս օրենքով սահմանված կարգով, այնպէս էլ իրավակիրառական պրակտիկայում: Տվյալ դեպքում հողամասերի նպատակային նշանակության, դրանց կարեգործիաների որոշման հետ կապված հարաբերությունները կարգավորված են ՆՏ հողային օրենսգրքով (օրենսգրքի 2, 5-8, 20, 22-23, 27, 29, 31, 34-36, 39, 41-43, 45, 49-50, 57, 62, 64-66-րդ եւ բազմաթիվ այլ հոդվածներ):

Վերոշարադրյալից հետեւում է, որ սերվիտուտին առնչվող իրավահարաբերություններն անհրաժեշտ է դիտարկել իրավակարգավորման համակարգային ամբողջականության մեջ, ինչը չի արվել դիմողի կողմից:

9. Անդրադառնալով սեփականության իրավունքը սերվիտուտով սահմանափակելու իրավազատության միջազգային իրավական գնահատման խնդրին՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դիտարկել այն եվրոպական պեւոյթյուններում այդ իրավունքի նորմարիվ կարգավորման պրակտիկայի, ինչպէս նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի շրջանակներում:

Եվրոպական պեւոյթյունների իրավակիրառական պրակտիկան վկայում է, որ սերվիտուտի հասկացության վերաբերյալ առկա են իրավակարգավորման երկու հիմնական մոտեցումներ. մի դեպքում՝ իրավական ակտերով մանրամասն ամրագրվում են սերվիտուտի՝ որպէս ուրիշի սեփականությունը հանդիսացող հողամասից կամ այլ անշարժ գույքից սահմանափակ օգտվելու իրավունքի բովանդակային առանձնահատկությունները (ինչպէս, օրինակ, Լիպվայում, Գերմանիայի Դաշնությունում), մյուս դեպքում խնդիրը հանգում է սերվիտուտի իրավունքի ամրագրմանը եւ այն նպատակների սահմանմանը, որոնց դեպքում կարող է փրամադրվել սերվիտուտ (Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա, Բելառուս եւ այլն):

Մարդու իրավունքների եվրոպական դափարանն իր մի շարք վճիռներով սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափությունը գնահատելիս հիմնվել է հետևյալ հիմնական սկզբունքների ու չափորոշիչների վրա.

- սեփականության իրավունքի սահմանափակումը համապետելի է Կոնվենցիային կից առաջին արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետի առաջին նախադասությունում ամրագրված ընդհանուր նորմի հետ, եթե ապահովված է «արդարացի հավասարակշռություն» հանրության ընդհանուր շահի եւ անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջեւ,

- սեփականության իրավունքի սահմանափակման միջոցները պետք է բավարարեն «օրինականության պահանջը» եւ չլինեն «կամայական»,

- սեփականության իրավունքի սահմանափակմանն ուղղված վիճարկվող միջոցները պետք է նախատեսված լինեն օրենքով կամ միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով,

- սեփականության իրավունքի սահմանափակմանն ուղղված միջոցներ նախատեսող օրենքը պետք է բավարարի մի շարք պահանջներ, որոնք ներկայացվում են ինչպես օրենքի որակին ու բովանդակությանը, այնպես էլ այն ընդունած մարմիններին ու նրանց լիազորությունների իրականացման օրինականությանը,

- սեփականության իրավունքի սահմանափակման միջոցները պետք է հեփապնդեն հասարակական շահից բխող իրավաչափ նպատակ,

- սեփականության իրավունքի սահմանափակման դեպքում պետությունը պարտավոր է պահպանել համամասնության ողջամիտ հարաբերակցությունը սեփականատիրոջ իրավունքների պաշտպանության եւ ընդհանուր շահի պաշտպանության պահանջների միջեւ, այսինքն՝ սահմանափակման միջոցը պետք է լինի «ողջամիտ եւ պաշտած՝ իր նպատակին հասնելու համար, եւ համարժեք՝ այդ նպատակին»:

Նամադրելով ՆՏ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող նորմը եւ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ օրենսգրքի մյուս նորմերը Եվրոպական դափարանի նախադեպային նշանակության իրավական մոտեցումների հետ՝ սահմանադրական դափարանը գտնում է, որ սույն գործով վեճի առարկա իրավակարգավորումը նախատեսելիս օրենսդիրն առաջնորդվել է անհատի եւ հասարակության շահերի արդարացի հավասարակշռման սկզբունքով, մասնավորապես, սերվիտուտը դիփարկելով որպես անձանց սեփականատիրական իրավունքների եւ դրանցից բխող օրինական շահերի հնարավոր բխման կանխարգելման միջոց, միաժամանակ նախատեսելով սերվիտուտ սահմանելու հիմքերը եւ կարգը (այդ թվում՝ պետական գրանցման), դրա դափարական պաշտպանության միջոցները, բացառել է ուրիշի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքը վերոհիշյալ հիմքով կամայական օգտագործելու իրավական հնարավորությունը: Այս առումով վիճարկվող նորմում նախատեսված իրավակարգավորումը, որպես սեփականության իրավունքի հնարավոր սահմանափակման միջոց, հեփապնդում է սահմանադրաիրավական, հետեւաբար՝ նաեւ արդարացի նպատակ:

Սահմանադրական դափարանը գտնում է, որ սերվիտուտի նման իրավակարգավորումն ապահովում է ՆՏ Սահմանադրության 8 եւ 31-րդ հոդվածներով նախատեսված՝

անձի սեփականության իրավունքն ազատ է հայեցողաբար իրացնելու սահմանադրաիրավական սկզբունքի իրականացումը՝ այն սահմանափակումներով, որոնք իրավաչափ են ու պայմանավորված են այլ անձանց, հանրության եւ պետության իրավունքների ու օրինական շահերի հաշվառման անհրաժեշտությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Նայասպանի Նանրապետության քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 216-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը որոշելու մասով գործի վարույթը կարճել:

3. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

29 հունիսի 2010 թվականի

ՍԳ-Ո- 901

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻ ԿԱՐԻՆԵ ՊԱՌԱՎՅԱԿՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԻ 265-ՐԴ ՆՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

7 հուլիսի 2010թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Ս. Թովուզյանի (զեկուցող), Վ. Նովիանիսյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝

դիմող Կ. Պառավյանի եւ դիմողի ներկայացուցիչ Գ. Մուղնեցյանի,

գործով որպես պարասխանող կողմ ներգրավված՝ ՆՃ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՃ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՆՃ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Կարինե Պառավյանի դիմումի հիման վրա՝ Նայասարանի Նանրապետության աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Կ. Պառավյանի՝ 25.03.2010թ. ՆՃ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պարասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Նայասպանի Նանրապետության աշխարանքային օրենսգիրքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, Նայասպանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2004 թվականի դեկտեմբերի 14-ին եւ ուժի մեջ է մտել 2005 թվականի հունիսի 21-ից:

Աշխարանքային օրենսգրքի՝ «Աշխարանքային պայմանագրի վերաբերյալ վեճերը» վերաբառությամբ վիճարկվող 265-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«Տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական կամ այլ պարճառներով կամ գործարտի եւ աշխարողի հետագա աշխարանքային հարաբերությունների վերականգնման անհնարիւնության դեպքում դատարանը կարող է աշխարողին չվերականգնել իր նախկին աշխարանքում՝ պարտավորեցնելով գործարտին հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար աշխարողին վճարելու հարուցում՝ միջին աշխարավարձի չափով, մինչեւ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Այս դեպքում դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից աշխարանքային պայմանագիրը համարվում է լուծված»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապարմությունը հանգում է նրան, որ դիմողը դիմելով Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ վիճարկել է իր հետ կնքված աշխարանքային պայմանագրի լուծման օրինականությունը եւ պահանջել է իրեն վերականգնել նախկին աշխարանքում ու պարասխանող կազմակերպությունից բռնագանձել հարկադիր պարապորդի գումարը: Դատարանը՝ գտնելով, որ դիմողի աշխարանքային պայմանագրի լուծումը եղել է օրինական, իր՝ 09.07.2009թ. վճռով հայցն ամբողջությամբ մերժել է: Մ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 02.10.2009թ. որոշմամբ եզրահանգելով, որ գործարտի կողմից դիմողի հետ աշխարանքային հարաբերությունները դադարեցվել են **առանց օրինական հիմքերի, դիմողի վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակի**, այն է՝ դիմողին նախկին աշխարանքում վերականգնելու մասին պահանջը մերժվել է՝ հիմք ընդունելով Մ աշխարանքային օրենսգրքի վիճարկվող նորմը: Վերաքննիչ քաղաքացիական դատարանը՝ նկատի ունենալով, որ պարասխանող կազմակերպության բոլոր 16 հասարիքները փաստացի թափուր չեն, գրել է, որ դիմողին աշխարանքում վերականգնելու իրական հնարավորությունը բացակայում է, եւ ուստի առկա է գործարտի ու աշխարողի հետագա աշխարանքային հարաբերությունների վերականգնման օբյեկտիվ անհնարիւնություն:

Վճռաբեկ դատարանը դիմողի վճռաբեկ բողոքը վերադարձրել է իր՝ 02.12.2009թ. որոշմամբ:

3. Ըստ դիմողի՝ Մ աշխարանքային օրենսգրքի վիճարկվող նորմը հակասում է Մ Սահմանադրության 3-րդ հոդվածով, 18-րդ հոդվածի 1-ին մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմերին:

Դիմողի պնդմամբ՝ վիճարկվող նորմը չի բավարարում օրենքի որոշակիության եւ կանխարեսելիության պահանջները: Նորմի իրավական ամրագրման, ձեւակերպման

համար կիրառված հասկացությունները, մասնավորապես, «գործապուրի եւ աշխատողի հեղափոխական աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինություն» եւ «տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական կամ այլ պարճառներով աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինություն» ձեռակերպումները բավականին անորոշ են եւ իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում են փարսաբանութեան մեկնաբանությունների:

ՆՏ Սահմանադրության 3-րդ հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ի մասի, ինչպես նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համադրված վերլուծությամբ դիմողը նշում է, որ մարդու եւ նրա հիմնական իրավունքների եւ ազատությունների, որպես գերագույն արժեքների, պաշտպանությանն ուղղված իրավական պաշտպանության ցանկացած միջոց, այդ թվում՝ դատական պաշտպանության միջոցը, պետք է լինի արդյունավետ, իրավական պաշտպանության միջոցն (այդ թվում՝ դատական պաշտպանության միջոցը) իրավունքի ցանկացած սուբյեկտի համար պետք է լինի օգտակար եւ դրանով իսկ նպաստի իրավունքի սուբյեկտի խախտված իրավունքի, ազատության պաշտպանության ու դրանց վերականգնման նպատակի իրացմանը: Ըստ այդմ, դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթի հակասահմանադրականությունը դրսեւորվում է նաեւ նրանում, որ հնարավորություն չգտնվում վերականգնել անձի խախտված իրավունքը՝ խախտված իրավունքի դատական պաշտպանության միջոցը դարձնում է անարդյունավետ:

4. Ըստ պատասխանողի՝ ինչպես առանձին միջազգային իրավական փաստաթղթերի, մասնավորապես «Գործապուրի նախաձեռնությամբ աշխատանքային հարաբերությունների դադարեցման մասին» թիվ 158 կոնվենցիայի 10-րդ հոդվածի, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ բոլոր այն դեպքերում, երբ օբյեկտիվորեն հնարավոր չէ խախտված իրավունքի պաշտպանության արդյունքում վերականգնել մինչեւ իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակը, իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոց է հանդիսանում համարժեք փոխհատուցումը:

Պատասխանողի պնդմամբ՝ վիճարկվող նորմը, նշված մոտեցումներին համապատասխան, նախատեսում է անօրինականորեն ազատված աշխատողին աշխատանքում վերականգնելու անհնարինության դեպքում հատուցում վճարելու պահանջ: Միաժամանակ պատասխանողը հայտնում է, որ ՆՏ Ազգային ժողովի կողմից 2010թ. հունիսի 24-ին ընդունված՝ «Նայաստանի Նանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՆՏ օրենքով վիճարկվող նորմը փոփոխվել է, ինչի արդյունքում առավել գործուն մեխանիզմներ են ստեղծվել աշխատանքային օրենսդրության խախտման արդյունքում աշխատողին պարճառված վնասը հատուցելու համար:

Վիճարկվող նորմի անորոշության վերաբերյալ դիմողի փաստարկների առնչությամբ պատասխանողը, վկայակոչելով ՆՏ սահմանադրական դատարանի 2010թ. հունի-

սի 1-ի ՄԴՈ-891 որոշման մեջ արքայազարկված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ նորմը զերծ է անորոշությունից եւ անհստակությունից:

5. Վիճարկվող դրույթի սահմանադրականությունը սահմանադրական դատարանը նախ եւ առաջ անհրաժեշտ է համարում գնահատել, մի կողմից, ՆՏ Սահմանադրության 32-րդ հոդվածով երաշխավորված՝ անձի աշխատանքի ընտրության ազատության, մյուս կողմից՝ Սահմանադրության 8-րդ հոդվածով երաշխավորված՝ փոփոխական գործունեության ազատության հարաբերակցության համապետքաբար, հաշվի առնելով նաեւ սահմանադրական դատարանի այն իրավական դիրքորոշումները, որոնք ամրագրված են իր՝ 2009թ. փետրվարի 24-ի ՄԴՈ-792 որոշման եւ 2010թ. հունիսի 1-ի ՄԴՈ-891 որոշման մեջ, որով ՆՏ Սահմանադրության պահանջներին համապատասխանող է ճանաչվել վիճարկվող նորմի հետ համակարգային փոխկապակցության մեջ գտնվող՝ ՆՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:

Աշխատանքի ընտրության ազատությունը, որը ՆՏ Սահմանադրության 32-րդ - հոդվածում ամրագրված է որպես սոցիալական ազատություն, ներառում է, ի թիվս այլոց, աշխատանք փնտրելու իրավունքը, որի մեկնաբանությունից բխում է նաեւ արդեն **ձեռք բերած աշխատանքից կամայականորեն չզրկվելու իրավունքը**:

ՆՏ Սահմանադրության 8-րդ հոդվածով որպես սահմանադրական կարգի հիմունք հռչակված՝ փոփոխական գործունեության ազատությունը, ի թիվս այլոց, ենթադրում է գործապուրին այնպիսի իրավագործությունների փորձադրում, որոնք նրան թույլ կտան փոփոխական գործունեության արդյունավետության եւ իր գույքի ռացիոնալ օգտագործման նպատակներից ելնելով ինքնուրույնաբար եւ իր ռիսկով ընդունել կազմակերպչական եւ կադրային քաղաքականությանն ուղղված որոշումներ:

Սահմանադրական դատարանն իր՝ 2009թ. փետրվարի 24-ի ՄԴՈ-792 որոշման մեջ անդրադառնալով Սահմանադրության պաշտպանության ներքո գտնվող վերոհիշյալ սահմանադրական ազատությունների փոխհարաբերակցությանը՝ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ աշխատանքի ընտրության ազատությունը պայմանավորված է, նախ՝ աշխատանքային հարաբերությունների հաստատման ու դադարման երկկողմ ազատ կամահայրության սպառնվման օրենսդրական հստակ երաշխիքների առկայությամբ, որոնք նաեւ անհրաժեշտ են ՆՏ Սահմանադրության ինչպես 32-րդ հոդվածում (1-ին մաս) նախատեսված անձի իրավունքի իրացման, այնպես էլ 8-րդ հոդվածում (2-րդ մաս) ամրագրված սկզբունքին համապատասխան փոփոխական շուկայական հարաբերությունների ազատ ու բազմակողմ զարգացման համար:

Վկայակոչելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումը եւ ընդգծելով աշխատանքային հարաբերություններում գործապուրի եւ աշխատողի իրավունքների ու օրինական շահերի միջեւ արդարացի հավասարակշռության սպառնվման անհրաժեշտությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ փոփոխական, կազմակերպչական եւ փոխնյութիական պատճառների առկայության դեպքում անձին աշխատանքում չվերականգնելն իրավաչափ է նաեւ անձի իրավունքների պաշտպանության փոփոխությունից, քանի որ

անձին աշխատանքում վերականգնելու օբյեկտիվ անհնարինության պայմաններում լուծվում է համարժեք փոխհատուցման խնդիրը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման իրավակարգավորումն ընդունված է նաև ինչպես Աշխատանքի միջազգային կազմակերպության միջազգային իրավական փաստաթղթերում, այնպես էլ մի շարք պետությունների օրենսդրություններում: Մասնավորապես, Աշխատանքի միջազգային կազմակերպության շրջանակներում ընդունված՝ Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային հարաբերությունների դադարեցման մասին թիվ 158 կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե սույն Կոնվենցիայի 8-րդ հոդվածում նշված մարմինները փաստում են աշխատանքից ազատվելու անհիմն լինելը, եւ եթե նրանք ազգային օրենսդրությանը եւ պրակտիկային համապատասխան իրավասու չեն կամ գործնականում անհնար են համարում վերացնել աշխատանքից ազատելու մասին հրամանը եւ(կամ) աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու կարգադրություն կամ առաջարկ անելը, նրանք օժտվում են **համապատասխան փոխհատուցում** կամ նպատակահարմար համարվող այլ նպաստ վճարելու մասին կարգադրություն արձակելու իրավասությամբ»:

Նաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճարկվող իրավակարգավորումը բխում է այն իրողությունից, որ օբյեկտիվ իրականության մեջ կարող են առաջանալ իրավիճակներ, երբ աշխատանքում վերականգնումը գործնականում կլինի անհնարին, ինչպես նաև բխում է Կոնվենցիայի սուբյեկտների Կոնվենցիայի գործունեության ազատությունը երաշխավորելու իրավաչափ նպատակից, եւ նկատի ունենալով խնդրո առարկայի վերաբերյալ միջազգային իրավակարգավորումն ու միջազգային փորձը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ **Կոնվենցիայի, Կոնվենցիայի եւ կազմակերպչական պարզաբաններով աշխատանքում վերականգնելու անհնարինության դեպքերում աշխատողին աշխատանքում չվերականգնելու ինստիտուտն իրավաչափ է:**

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմի խնդիրն է արդարացի հավասարակշռություն ապահովել գործատուի շահերի եւ անօրինական կարգով աշխատանքից ազատված աշխատողի իրավունքների եւ օրինական շահերի միջև: Նշված հավասարակշռությունը կարող է ապահովվել միայն այն դեպքում, երբ աշխատանքում վերականգնելու **օբյեկտիվ անհնարինության դեպքերում** երաշխավորվի աշխատողի իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության պարզաբան եւ արդյունավետ մեխանիզմ: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ որպես առավել արդյունավետ եւ օպտիմալ պաշտպանության մեխանիզմ ընտրվել է աշխատողին չվերականգնելու դիմաց փոխհատուցում վճարելու ինստիտուտը:

6. Աշխատանքի իրավունքի իրացման հիմնական նպատակը վարձատրություն ստանալն է: Այդ նպատակն է շեշտադրված Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին 1966թ. միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետում, ըստ որի՝ աշխատանքի իրավունքը ներառում է յուրաքանչյուրի՝ իր ապրուստն այնպիսի աշխատանքով վաստակելու հնարավորության իրավունքը, որը նա ազատորեն ընտրում

է կամ որին նա ազապորեն համաձայնում է: Ասվածը նշանակում է, որ աշխատանքում վերականգնվելու հարցում անձի ունեցած անհատական շահն ունի փոխարինում, ֆինանսական արժեք, ինչը բավարար հիմք է, որ Կոլյալ դեպքում աշխատանքի իրավունքը պաշտպանվի Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով: Ավելին, համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի (Կրեն, մասնավորապես, Տրգոն ընդդեմ Խորվաթիայի գործով, *Trgo v. Croatia*, 2009թ. հունիսի 11-ի վճիռը, կետ 44)՝ նշված կոնվենցիոն նորմի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաեւ նյութական միջոցը ձեռք բերելու լեզիվի ակնկալիքը: Տվյալ դեպքում այն անձը, ով աշխատանքից ազատվել է անօրինական կարգով, ունի լեզիվի ակնկալիք շարունակելու սրանալ վարձատրություն իր աշխատանքի դիմաց: Ներկայացված, աշխատողին գործատուի կողմից անօրինականորեն աշխատանքից ազատելը հանդիսանում է նրա **գույքային իրավունքների խախտում:**

Խախտված իրավունքների արդյունավետ դատարանական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրարարն է հանդիսանում անձի խախտված իրավունքի վերականգնումը: Վերջինս ենթադրում է այն բացասական հետեւանքների վերացում, որոնք անձի համար առաջացել են իրավունքի խախտման արդյունքում: Որպես կանոն, այդ բացասական հետեւանքների վերացումը փոխի է ունենում մինչեւ իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնմամբ: Սակայն, առանձին դեպքերում, մինչեւ իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը կարող է օբյեկտիվորեն անհնարին լինել: Այս դեպքում որպես խախտման բացասական հետեւանքները վերացնելու իրավական միջոց է ծառայում, ինչպես նշվեց, անձի կրած վնասի դիմաց փոխհատուցումը: Այս մոտեցումն է արքայազգային իրավունքի խախտման դատարանի նախադեպային իրավունքում (Կրեն, մասնավորապես, Վասիլեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով, *Vasilescu v. Romania*, 1998թ. մայիսի 22-ի վճիռը, կետ 61): Տվյալ դեպքում անօրինականորեն ազատված անձին աշխատանքում չվերականգնելու, այն է՝ մինչեւ իրավախախտման փաստը գոյություն ունեցած վիճակը վերականգնելու անհնարինության դեպքում անձի խախտված իրավունքի արդյունավետ իրավական պաշտպանությունը կարող է փոխի ունենալ նրան փոխհատուցում վճարելու միջոցով: Այս գաղափարն է ամրագրված նաեւ վերոհիշյալ ԱՄԿ թիվ 158 կոնվենցիայի 10-րդ հոդվածում:

Նա աշխատանքային օրենսգրքի վիճարկվող նորմի վերլուծությունը վկայում է, որ այն չի նախատեսում անօրինականորեն ազատված անձի իրավունքի պաշտպանության արդյունավետությունը փոխհատուցման վճարմամբ ապահովելու հնարավորություն: Վիճարկվող դրույթը գործատուին միայն պարտավորեցնում է հարկադիր պարատուրդի ամբողջ ժամանակահատվածի համար աշխատողին վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչեւ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, ինչը, սակայն, չի կարող որակվել որպես իրավունքի վերականգնմանն ուղղված փոխհատուցում, քանի որ հիշյալ գումարն անձն ստանում է այն պարճառով, որ նրա աշխատանքային պայմանագիրը լուծված է համարվում դատարանի ակտի ուժի մեջ մտնելու օրը, եւ, հետեւաբար, այդ գումարն ըստ էության հանդիսանում է աշխատանքային պայմանագրի գործողու-

թյան ժամկետում վճարվող աշխատավարձ: Ավելին, հիշյալ գումարը չի կարող դիտարկվել որպես փոխհատուցում նաև այն պարագայում, որ անօրինականորեն աշխատանքից ազատված անձն այդ գումարն ստանում է նաև աշխատանքում վերականգնվելու դեպքում:

Ելնելով նրանից, որ վիճարկվող նորմը, աշխատանքում վերականգնելու անհնարինության պայմաններում, չի նախատեսում աշխատանքի իրավունքի խախտման բացասական իրավական հետևանքները վերացնելու որեւէ միջոց, այդ թվում խախտված իրավունքի դիմաց փոխհատուցման փրամադրում, սահմանադրական դատարանը գտնում է, որ անձի համար չի ապահովվում իրավական պաշտպանության արդյունավետ միջոց:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ ՏՏ Ազգային ժողովի կողմից 2010թ. հունիսի 24-ին ընդունվել է «Նայասարանի Նանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՏՏ օրենքը, որով փոփոխություններ են կատարվել նաև վիճարկվող 265-րդ հոդվածում: Մասնավորապես, հոդվածի 2-րդ մասում հանվել են «կամ այլ» բառերը եւ «աշխատավարձի» բառից հետո լրացվել է «ոչ պակաս քան կրկնապատիկի, բայց ոչ ավելի քան փաստերկուապատիկի» բառերով: Այս փոփոխության միջոցով, ըստ էության, փորձ է արվում հաղթահարել հնարավոր անորոշությունը եւ լուծել խախտված իրավունքի՝ փոխհատուցման միջոցով արդյունավետ իրավական պաշտպանության հարցը:

7. Վիճարկվող դրույթի՝ իրավական օրենքին ներկայացվող պահանջներին, այն է՝ կանխատեսելիության, որոշակիության եւ հստակության պահանջներին համապատասխանությունը սահմանադրական դատարանը հարկ է համարում գնահատել նաև իրավակիրառական պրակտիկայի համապետքություն՝ հաշվի առնելով, մասնավորապես, այն բովանդակությունը, որն իրավակիրառական պրակտիկայում փրվել է «կամ այլ պարճառներով կամ գործարտի եւ աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում» ձեւակերպմանը:

Վիճարկվող նորմի առնչությամբ ՏՏ վճռաբեկ դատարանի կողմից ձեւավորված իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ որպես գործարտի եւ աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինություն է դիտարկվում.

- աշխատողի զբաղեցրած հասարիքի կրճատումը. ընդ որում, որպես աշխատանքում վերականգնելու անհնարինության պարճառ հասարիքի կրճատման փաստը հիմք է ընդունվում ոչ միայն այն դեպքում, երբ անձն ազատվել է հասարիքի կրճատման արդյունքում, այլ նաև այն դեպքում, երբ հասարիքի կրճատումը հաջորդել է փվյալ աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունների անօրինական դադարեցմանը,

- աշխատանքից ազատված աշխատողի փոխարեն նոր աշխատողի կողմից նրա հասարիքի զբաղեցումը. ընդ որում, այս առնչությամբ իրավակիրառական պրակտիկան հակասական է, քանզի մի դեպքում իրավակիրառողն այդ հանգամանքը գնահատում է որպես աշխատանքի վերականգնման անհնարինությունը պայմանավորող պարճառ,

մեկ այլ դեպքում այդ հանգամանքը չի դիտարկում որպես աշխատանքի վերականգնմանը խոչընդոտող հանգամանք,

- գործատուի եւ աշխատողի միջեւ լարված հարաբերությունների առկայությունը:

Իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ որպես գործատուի եւ աշխատողի հեղափոխական աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության պատճառ դիտարկվում են այնպիսի հանգամանքներ, որոնք որեւէ առնչակցություն չունեն րնտեսական, կազմակերպչական եւ տեխնոլոգիական պատճառների հետ: Մինչդեռ «կամ այլ պատճառներ» հասկացությունը ենթադրում է այնպիսի հանգամանքներ, որոնք իրենց բնույթով պետք է սերտորեն առնչվեն րնտեսական, կազմակերպչական կամ տեխնոլոգիական պատճառներին բնորոշ օբյեկտիվ հիմքերին: Դա է նաեւ թիվ 158 կոնվենցիայի պահանջը, որի 13-րդ հոդվածը թույլատրում է անօրինակաւորեն աշխատանքից ազատված անձանց չվերականգնել աշխատանքում, եթե աշխատանքում վերականգնելն անհնարին է րնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական կամ այլ նույնաբնույթ պատճառներով:

Վիճարկվող դրույթի կիրառման պրակտիկայի առնչությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել նաեւ, որ այդ դրույթի իրավաչափ կիրառումը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավակիրառողից պահանջում է քննության առարկա դարձնել եւ ուսումնասիրել ազատման հիմքում ընկած րնտեսական, տեխնոլոգիական եւ կազմակերպչական պատճառները: Այս պահանջն է ներկայացնում իրավասու մարմիններին նաեւ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 25-րդ հոդվածին համապատասխան հիմնադրված Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն, ինչպես նաեւ ԱՄԿ թիվ 158 կոնվենցիայի 9-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված նորմը: Նարկ է ընդգծել նաեւ, որ որպես վիճարկվող դրույթի իրավաչափ կիրառման նախապայման նշված Կոնվենցիայի 9-րդ հոդվածն ամրագրում է նաեւ ազատման րնտեսական, տեխնոլոգիական եւ կազմակերպչական պատճառների առկայության ապացուցման բեռը գործատուին վերապահելը:

Նաշվի առնելով իրավակիրառական պրակտիկայի վերոհիշյալ այն առանձնահատկությունը, որ որպես աշխատանքի վերականգնման անհնարինության հիմնավորում են դիտարկվում անձին անօրինականորեն ազատելուց **հետո առաջացած** րնտեսական, տեխնոլոգիական կամ կազմակերպչական պատճառները, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ վիճարկվող դրույթը կիրառելիս յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավակիրառողը պետք է գնահատի նաեւ, թե արդյո՞ք րվյալ պատճառը գործատուի կողմից արհեստականորեն չի ստեղծվում՝ կանխելու համար անօրինական ազատված աշխատողի՝ դատարանի վճռի հիման վրա հնարավոր վերականգնումը:

Ելնելով իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրության վերոհիշյալ արդյունքներից, ինչպես նաեւ հաշվի առնելով Եվրոպական դատարանի այն իրավական դիրքորոշումը, որ օրենքի կանխարեսելիության, որոշակիության եւ հստակության սկզբունքի երաշխավորումը, ի թիվս այլոց, կոչված է նաեւ կանխելու, բացառելու «կամայականության վրանգը» (րենս, մասնավորապես, Նիդա Նաֆստեյնստոփիրն ընդդեմ Իսլանդիայի

գործով, Hilda Hafsteinsdottir v. Iceland, վճիռը, կեպ 56)՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ աշխատանքում վերականգնելու անհնարինության պատճառներն օրենքով սպառիչ կերպով չսահմանելը եւ վիճարկվող դրույթում՝ «այլ պատճառներ» ձեւակերպման առկայությունն ու դրան արված լայն մեկնաբանությունը գործնականում սպեղծում են միեւնույն իրավիճակներում իրավունքի սուբյեկտների նկատմամբ փարբեր վերաբերմունքի դրսևորման եւ կամայական մոտեցման վրանգ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՆՆ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի երկրորդ մասը՝ առաջին նախադասության «կամ այլ» բառակապակցության մասով, ճանաչել ՆՆ Սահմանադրության 1-ին հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի եւ 32-րդ հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

7 հուլիսի 2010 թվականի
ՄԴՈ-902

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ՌՈՒԲԵՆ ԱՎԱԳՅԱՆԻ, ՆՐԱԶԻԿ
ՆԱԿՈՔՁԱՆՅԱՆԻ, ՆՐԱԶՅԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ, ԱՐԱՅԻԿ
ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ «ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍԱԿՆԻ
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 56, 57 ԵՎ 58-ՐԴ ՆՈՂՎԱԾՆԵՐԻ՝
ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

13 հունիսի 2010թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարոթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Մ. Թովուզյանի, Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝

դիմողների ներկայացուցիչ Դ. Թումասյանի,

գործով որպես պարասխանող կողմ ներգրավված՝ ՆՆ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՆ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՆՆ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Ռուբեն Ավագյանի, Նրաչիկ Նակոբջանյանի, Նրաչյա Ավերիսյանի, Արայիկ Ավերիսյանի դիմումի հիման վրա՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 56, 57 եւ 58-րդ հոդվածների՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Ռ. Ավագյանի, Ն. Նակոբջանյանի, Ն. Ավերիսյանի, Ա. Ավերիսյանի՝ 04.03.2010թ. ՆՆ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հեղափոխելով օրենքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. «Բաժնեպիրական ընկերությունների մասին» ՏՏ օրենքն ընդունվել է ՏՏ Ազգային ժողովի կողմից 2001 թվականի սեպտեմբերի 25-ին, Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2001 թվականի հոկտեմբերի 27-ին և ուժի մեջ է մտել 2001 թվականի դեկտեմբերի 6-ից:

Օրենքի վիճարկվող՝ «Ընկերության բաժնեպատման համախմբումը (կոնսոլիդացիա) և բաժանումը» վերաբառությամբ 56-րդ հոդվածը սահմանում է.

«1. Ընկերությունն իրավունք ունի ժողովի որոշմամբ համախմբել (կոնսոլիդացնել) տեղաբաշխված բաժնեպատման, որի արդյունքում Ընկերության երկու կամ ավելի բաժնեպատմանը փոխարկվում են նույն տեսակի (դասի) մեկ նոր բաժնեպատման: Այդ դեպքում կանոնադրության մեջ կատարվում են Ընկերության տեղաբաշխված և հայտարարված բաժնեպատման քանակի և անվանական արժեքի համապատասխան փոփոխություններ:

Նամախմբման (կոնսոլիդացման) հետևանքով կոպորակային բաժնեպատման առաջանալու դեպքում վերջիններս ենթակա են հեղափոխման Ընկերության կողմից դրանց՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքով:

2. Ընկերությունն իրավունք ունի ժողովի որոշմամբ բաժանել տեղաբաշխված բաժնեպատմանը, որի արդյունքում Ընկերության տեղաբաշխված մեկ բաժնեպատմանը փոխարկվում է նույն տեսակի (դասի) երկու կամ ավելի բաժնեպատման: Այդ դեպքում կանոնադրության մեջ կատարվում են Ընկերության տեղաբաշխված և հայտարարված բաժնեպատման քանակի և անվանական արժեքի համապատասխան փոփոխություններ»:

Օրենքի 57 և 58-րդ հոդվածները սահմանում են բաժնեպետերի պահանջով բաժնեպատման հեղափոխման և պահանջի իրավունքի իրականացման կարգը:

2. Գործի դատավարական նախապայմանությունը հանգում է հետևյալին: Դիմողները հանդիսանում են «Երեւանի Արարապ կոնյակի-գինու-օղու կոմբինատ» ԲԲԸ-ի բաժնեպետեր: Ընկերության բաժնեպետերի արպահերթ ընդհանուր ժողովում 12.10.2008թ. ընդունված որոշումով համախմբվել են ընկերության 8000 ՏՏ դրամ անվանական արժեքով հասարակ անվանական ոչ փաստաթղթային բաժնեպատմանը, հաստատվել է համախմբման, բաժնեպատման փոխարկման և հեղափոխման կարգը, ինչպես նաև հաստատվել են ընկերության կանոնադրության փոփոխությունները:

Դիմողներն ընկերության ընդհանուր ժողովի 12.10.2008թ. վերոհիշյալ որոշումը բողոքարկել են Երեւանի Կենտրոն և Նորբ-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան: Վերջինիս 06.05.2009թ. վճռով նշված որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցը մերժվել է: Նշված վճիռը դիմողների կողմից բողոքարկվել է ՏՏ վե-

րաքննիչ բաղաբաղիական դափարան, որի՝ 02.09.2009թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը եւս մերժվել է: ՆՆ վճռաբեկ դափարանն իր՝ 04.11.2009թ. որոշմամբ դիմողների վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

3. Ըստ դիմողների՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՆՆ օրենքի 56, 57 եւ 58-րդ հոդվածները հակասում են ՆՆ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 6-րդ, 8-րդ հոդվածներին, 31-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի եւ 43-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

Դիմողների պնդմամբ՝ ընկերության բաժնետոմսերի համախմբման արդյունքում առաջացող կոփորակային բաժնետոմսերի՝ ընկերության կողմից պարտադիր հեղափոխման արդյունքում իրենք «...առանց դափարական կարգի գրկվել են բաժնետոմսերի նկատմամբ իրենց սեփականության իրավունքից», մինչդեռ ըստ ՆՆ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասի՝ անձը սեփականությունից կարող է գրկվել միայն դափարական կարգով: Դիմողները պնդում են, որ վիճարկվող հոդվածները «նախատեսում են այնպիսի ընթացակարգեր, որոնց կիրառմամբ բաժնետիրական ընկերությունում առավել մեծ մաս ունեցող բաժնետերերը ընկերության բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացման), բաժնետոմսերի փոխարկման եւ հեղափոխման միջոցով՝ իրենց հայեցողությամբ միակողմանի, առանց դափարան դիմելու, կարող են գրկել փոքր բաժնեմաս ունեցող բաժնետերերին իրենց բաժնետոմսերից»:

4. Պատասխանողն առարկելով դիմողի փաստարկների դեմ՝ առաջին հերթին մատնանշում է բաժնետոմսերի համախմբմամբ հեղափոխվող նպատակները: Ըստ պատասխանողի՝ խնդրո առարկա գործընթացը համարվում է հսկիչ փաթեթների ձեւավորման մեխանիզմներից մեկը, ինչն իր հերթին իրականացվում է բաժնետիրական ընկերության կառավարման եւ գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Բացի դրանից, ցածր անվանական արժեք ունեցող մեծ քանակությամբ բաժնետոմսերն զգալիորեն դժվարացնում են ռեսպորի վարման աշխատանքները:

Ըստ պատասխանողի, քանի որ բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող ձեռնարկարկարական գործունեության ընթացքում բախվում են փարաբնույթ շահեր, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՆՆ օրենքի հիմնական նպատակներից մեկը բախվող օրինական շահերի հավասարակշռումն է: Օրենքի վերլուծության արդյունքում պատասխանողը գտնում է, որ բաժնետոմսերի համախմբման մասին որոշումն ընդունվում է բոլոր բաժնետերերի մասնակցությամբ՝ ընդհանուր ժողովում, եւ միվրված է ընկերության՝ իր առջեւ դրված խնդիրների արդյունավետ իրագործմանը: Վիճակվող իրավակարգավորումը սահմանելիս օրենսդիրն առաջնորդվել է անհարի եւ հասարակության շահերի հավասարակշռման սկզբունքով, մասնավորապես՝ փղաբաշխված բաժնետոմսերը համախմբելու հնարավորությունը դիփարկելով որպես առանձին դեպքերում արդյունավետ փոփոխական գործունեության իրականացումն ապահովող կենսական պայման, միաժամանակ նախատեսելով համախմբման հեղափոխվող կոփորակային բաժնետոմսեր առաջանալու դեպքում դրանք հեղա ցնելու ընկերության պարտականությունը, բաժնետոմս-

սերի սեփականատերերի նախապատվության իրավունքը, վերջիններիս կողմից բաժնեփոխանների հեղափոխման գնի որոշման հնարավորությունը:

5. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ, նախ՝ **դիմումը որևէ հիմնավորում չի բովանդակում «Բաժնեպիրական ընկերությունների մասին» ՏՏ օրենքի 57 եւ 58-րդ հոդվածներում ամրագրված որևէ նորմի սահմանադրականության վերաբերյալ**: Երկրորդ՝ այդ հոդվածների նորմերը չեն կիրառվել եւ չէին կարող կիրառվել դիմողների նկատմամբ, քանի որ կանոնակարգում են կոպորակային բաժնեփոխանների հեղափոխման հետ կապված իրավահարաբերություններից էապես փարբերվող իրավահարաբերություններ՝ երբ բաժնեփոխանների հեղափոխման նախաձեռնությունը հենց հեղափոխող բաժնեփոխանների սեփականատիրոջն է: Ուստի «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 32 եւ 60-րդ հոդվածների հիմքերով՝ գործի վարույթն այդ հոդվածների մասով ենթակա է կարճման:

6. Նայապահանի Նանրապետության Սահմանադրության 8 եւ 33.1-րդ հոդվածներին համապատասխան՝ փնտեսական հարաբերությունների կանոնակարգման հիմքում, ի թիվս այլոց, ընկած են փնտեսական գործունեության ազատության եւ ազատ փնտեսական մրցակցության սահմանադրական սկզբունքները: Տնտեսական գործունեության ազատությունը նշանակում է իրավաբանորեն երաշխավորված հնարավորություն՝ ազատորեն օգտագործելու սեփական ընդունակություններն ու գույքն օրենքով չարգելված փնտեսական գործունեության համար, այն է՝ իրականացնել ձեռնարկափրական գործունեություն: Վերջինս հանդես է գալիս որպես փնտեսավարող սուբյեկտի ինքնուրույն, իր ռիսկով ու օրենքով սահմանված կարգով իրականացվող գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Ձեռնարկափրական գործունեություն կարող է իրականացվել օրենքով սահմանված՝ փարբեր կազմակերպարավական ձևերի շրջանակներում: Ազատ շուկայական փնտեսական հարաբերությունների պայմաններում բաժնեպիրական ընկերության կազմակերպարավական ձևը խոշոր ձեռնարկափրական գործունեություն իրականացնելու առավել բարդ, բայց արդյունավետ եղանակն է:

Բաժնեպիրական ընկերությունը որպես ձեռնարկափրական գործունեության արդյունքում հավելյալ գույքային միջոցներ (շահութաբաժիններ) ստանալու մտադրությամբ միավորված անձանց կազմակերպություն ունի ոչ միայն առանձին բաժնեպիրերի մասնավոր շահերի հավասարակշռման, այլև **ընդհանուր կորպորատիվ շահերի ապահովման խնդիր**: Նակառակ դեպքում ընկերության կառավարումը կդառնա անարդյունավետ, իսկ դա հետագա անդրադարձ կունենա հենց նույն բաժնեպիրերի սեփականության իրավունքի իրականացման արդյունավետության վրա:

Բաժնեպիրական ընկերության ձեռնարկափրական գործունեության ազատությունը, ի թիվս այլոց, ներառում է իր հայեցողությամբ բաժնեփոխաններ թողարկելու եւ փեղաբաշխելու, այդ բաժնեփոխանների անվանական արժեքը որոշելու, իր կանոնադրական կա-

պիտարը նվազեցնելու կամ ավելացնելու, բաժնեպատկերի անվանական արժեքը նվազեցնելու կամ մեծացնելու ազատությունը: Բաժնեպատկերի անվանական արժեքի փոփոխությունը կարող է կատարվել ինչպես կանոնադրական կապիտալի ավելացմամբ, այնպես էլ առանց կանոնադրական կապիտալի չափի փոփոխության:

7. Բաժնեպատկերի համախմբումը երկու եւ ավելի բաժնեպատկերի փոխարկումն է ավելի մեծ անվանական արժեք ունեցող նույն տեսակի բաժնեպատկերի՝ առանց բաժնեփրական ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոփոխության: Որպես կանոն, բաժնեպատկերի համախմբում իրականացվում է, ի թիվս այլոց, մանր բաժնեպատկերի թվաքանակի կրճատման, հավանական ներդրողին հնարավորինս փոքր քանակով արժեթղթերի փաթեթ առաջարկելու նպատակով: Բաժնեպատկերի համախմբումը փոփոխության առաջարկված գործընթաց է, որը կազմում է բաժնեփրական ընկերության՝ որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտի, փոփոխական ազատության դրսևորումներից մեկը:

Ձեռնարկատիրական գործունեության ոլորտում ընդունված նշված գործընթացի օբյեկտիվ եւ անխուսափելի արդյունքն է կոպորակային բաժնեպատկերի առաջացումը: Սակայն նման բաժնեպատկերի առկայությունը նպատակահարմար չէ ինչպես արժեթղթերի շուկայի կայունության ապահովման նկատառումներից ելնելով, այնպես էլ բաժնեփրական ընկերության արդյունավետ կառավարման տեսանկյունից:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ գործնականում որպես կոպորակային բաժնեպատկերի գոյությունը բացառելու միջոց է ընդունված կոպորակային բաժնեպատկերի պարտադիր հեղափոխման ինստիտուտը: Այդ ինստիտուտն ամրագրված է մի շարք եվրոպական պետությունների օրենսդրություններում (Լեհաստան, Չեխիայի Նանրապետություն, Գերմանիայի Դաշնային Նանրապետություն եւ այլն): Փորձ է արվում՝ որպես կոպորակային բաժնեպատկերի գոյության վիճակը հաղթահարող միջոց կիրառել նաեւ կամավոր հեղափոխման ինստիտուտը, որը, սակայն, փակուղային վիճակ ստեղծելու վտանգ է պարունակում եւ լայն տարածում չունի:

Նաշվի առնելով, որ կոպորակային բաժնեպատկերի պարտադիր հեղափոխման ինստիտուտը հանդիսանում է փոփոխական արդարացված գործընթաց, ինչպես նաեւ նկարի ունենալով խնդրո առարկայի վերաբերյալ միջազգային փորձը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ բաժնեպատկերի մեծամասնության որոշմամբ կոպորակային բաժնեպատկերի օրենքով նախատեսված պարտադիր հեղափոխման ինստիտուտն իրավաչափ է: Սակայն հիմնական խնդիրն այն է, թե փոփոխական նման ինստիտուտի առկայության պայմաններում ինչպես են երաշխավորվում ու պաշտպանվում փոքրամասնության իրավունքներն ու օրինական շահերը:

8. «Բաժնեփրական ընկերությունների մասին» ՏՏ օրենքի վիճարկվող 56-րդ - հոդվածն ամրագրում է ընկերության՝ տեղաբաշխված բաժնեպատկերը համախմբելու իրավունքը, եւ նախատեսելով այդ գործընթացի արդյունքում կոպորակային բաժնեպատկերի առաջացման հնարավորությունը, որպես այդ բաժնեպատկերի առկայությունը բացա-

ռող միջոց՝ ամրագրում է դրանց պարտադիր հեղափոխման՝ միջազգային պրակտիկայում կիրառելի ինստիտուտները:

Կոպորակային բաժնեկցիների հեղափոխման բովանդակությունը հանգում է նրան, որ այդ գործընթացում մարվում են բաժնեկցիների մոտ առաջացած կոպորակային բաժնեկցիները և բաժնեկցիական ընկերության մոտ ծագում է այդ բաժնեկցիների դիմաց համապատասխան փոխհատուցում վճարելու պարտականություն:

Նաշվի առնելով, որ դիմողներն, ըստ էության, վիճարկվող ինստիտուտը դիտարկում են որպես սեփականությունից զրկում՝ առանց սեփականությունից դատարկ կարգով զրկելու սահմանադրական պահանջի ապահովման, սահմանադրական դատարանը անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմի սահմանադրականության հարցի որոշման նպատակով նախ բացահայտել «սեփականությունից զրկում» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունն ու հիմնական բաղադրարարները և այդ համարեքսում պարզել, թե արդյո՞ք բաժնեկցիների համախմբման արդյունքում օբյեկտիվորեն ձեռավորվող կոպորակային բաժնեկցիների պարտադիր հեղափոխումը հավասարազոր է համարժեք է սեփականությունից զրկելուն:

ՆՏ Սահմանադրության 31-րդ հոդվածը նախատեսում է **սեփականության իրավունքի իրականացման սահմանափակման** միմյանցից փարանջարվող չորս հանգամանք.

ա) սեփականության իրավունքի իրականացման սահմանափակում՝ շրջակա միջավայրին վնաս պարճառելու, այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը խախտելու արգելքով (31-րդ հոդվ. 1-ին մասի երկրորդ նախադասություն),

բ) սեփականազրկում (31-րդ հոդվ. 2-րդ մաս),

գ) սեփականության հարկադիր օտարում հասարակության և պետության կարիքների համար (31-րդ հոդվ. 3-րդ մաս),

դ) հողի սեփականության իրավունքի սահմանափակում՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար:

Ինչպես հետևում է նշված ա) ենթակետի բովանդակությունից, սեփականության իրավունքի իրականացումը սահմանադիրը կաշկանդում է որոշակի հանրային արժեքներ պահպանելու պահանջով: Դրանք են. շրջակա միջավայրը, **այլ անձանց**, հանրության և պետության իրավունքները և օրինական շահերը: Նման մոտեցումը կոչված է ապահովելու սեփականատիրոջ և այլոց իրավունքների ու հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռություն՝ գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի իրականացումը ճանաչելով երաշխավորված, սակայն ոչ բացարձակ: Վերջինս առավել ևս վերաբերում է այն դեպքերին, երբ խոսքը ձեռնարկարիական (փնտրեսական) գործունեությամբ համախմբված անձանց մասին է: Դա, ինչպես շեշտել է ՆՏ սահմանադրական դատարանն իր 2006թ. ապրիլի 18-ի ՄԴՌ-630 որոշման մեջ, ոչ միայն իր բնույթով իրավունքի սահմանափակման առանձնահատուկ ինստիտուտ է, այլև անխուսափելիորեն նշանակում է, որ առկա է իրավաչափ նպատակի և սեփականության իրավունքի համադրման անհրաժեշտություն:

Միաժամանակ, Սահմանադրությամբ նախատեսված այդ նույն իրավաչափ նպատակի համար կոնկրետ օբյեկտի նկատմամբ **սեփականության իրավունքի սահմանափակում կարող է իրականացվել միայն անհրաժեշտ փոխհատուցման դեպքում, որը կերաշխավորի սեփականության իրավունքի ապահովման շարունակականությունը:** Իրավակարգավորման գլխավոր խնդիրը, ինչպես վկայում է նաև միջազգային փորձը, համարժեք փոխհատուցման ապահովումն ու այդ շարունակականության երաշխավորումն է:

ՆՏ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է սեփականության անձեռնմխելիության դատական երաշխիքը: Այդ դրույթում օգտագործված՝ «սեփականությունից զրկում» հասկացությունը սահմանադրաիրավական հարաբերությունների ոլորտում ունի ինքնավար բովանդակություն: «Սեփականությունից զրկում» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությանը սահմանադրական դատարանն անդրադարձել է նշված ՄԳՈ-630 որոշման մեջ, որում առանձնացնելով սեփականության իրավունքը սահմանափակելու՝ Սահմանադրությամբ թույլատրվող դեպքերը, սեփականությունից զրկումը բնութագրել է որպես պարասխանավորությունից բխող հարկադիր գործողություն: Նշվյալ առնելով նաև այդ բնութագրումը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սեփականությունից զրկելու ինստիտուտին բնորոշ են հետևյալ հիմնական պարպադիր փարբերը.

- սեփականությունից զրկելու դեպքում փեղի է ունենում սեփականափրոջ կամքին եւ համաձայնությանը հակառակ փվյալ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի **անհատույց դադարեցում,**

- սեփականությունից զրկումը կիրառվում է որպես պարասխանավորության միջոց,

- սեփականությունից զրկելու դեպքում փեղի է ունենում փվյալ գույքի նկատմամբ սեփականափրոջ ունեցած՝ փիրապեփման, փնօրիսնան եւ օգտագործման իրավագորությունների միաժամանակյա եւ լիակատար դադարում՝ **առանց շարունակականության երաշխավորման:**

Նիմք ընդունելով «սեփականությունից զրկում» հասկացության վերոհիշյալ սահմանադրաիրավական բովանդակությունը եւ հաշվի առնելով, որ կոփորակային բաժնեփոմսերի **պարփադիր հեփզնման պարագայում** դրանց սեփականափրոջն օրենքով սահմանված կարգով վճարվում է բաժնեփոմսի շուկայական արժեքը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ կոփորակային բաժնեփոմսի հեփզնմամբ սեփականությունից զրկում փեղի չի ունենում, եւ, հետեւաբար, փվյալ իրավահարաբերությունների նկատմամբ ՆՏ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ սեփականության անձեռնմխելիության դատական երաշխիքը նույնաբովանդակ ձեով կիրառելի չէ:

9. Բաժնեփիրական ընկերությունների բնույթն այնպիսին է, որ ընկերության գործունեության շրջանակներում բախվում են բաժնեփերերի եւ ընկերության կառավարման մարմինների շահերը, բաժնեփերերի փարբեր խմբերի շահերը: Վերջինս առավել ցայփուն դրսետրվում է խոշոր եւ մանր բաժնեփերերի հարաբերություններում: Խոշոր բաժնե-

տրերը հանդիսանում են ընկերության ռազմավարական ներդրողները, որոնք հնարավորություն ունեն կանխորոշելու ընկերության որոշումները: Նրանց հիմնական շահը կայանում է նրանում, որ նրանք ձգտում են ընկերության գործունեությունից ձեռք բերել որոշակի արդյունքներ՝ անհրաժեշտ կառավարչական որոշումներ ընդունելու միջոցով: Մանր բաժնեպետերը ներդրող է, ով չունի ընկերության որոշումները կանխորոշելու, ընկերության գործունեության վրա ազդելու հնարավորություն: Մանր բաժնեպիտոջ հիմնական շահը կայանում է նրանում, որ ձգտում է հասնել բաժնեպոմսերում իր ներդրած միջոցների որոշակի շահույթաբերության:

Իրավական պետության կողմից ազատ փոխանակման գործունեության կարգավորումը, ի թիվս այլոց, պետք է նպաստի հեղափոխական արդարացի հավասարակշռություն փոխանակման գործունեության մասնակիցների, փոխադրված՝ բաժնեպիտոյական ընկերության խոշոր և մանր բաժնեպետերի շահերի միջև: Այս նպատակն օրենսդրից պահանջում է նախատեսել պաշտպանության այնպիսի մեխանիզմ, որը կպահովի իրավական երաշխիքներ՝ բաժնեպոմսերի համախմբման գործընթացում խոշոր բաժնեպետերի կողմից կամայականության դրսևորումների դեմ:

«Բաժնեպիտոյական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը վկայում է, որ այս առնչությամբ օրենսդրական կարգավորումը հիմնականում նպատակաուղղվել է ստեղծելու համապատասխան իրավական երաշխիքներ՝ ինչպես համախմբման որոշման կայացման գործընթացում, այնպես էլ վերջինիս նկատմամբ դատական վերահսկողության առումով:

Մասնավորապես, օրենքի 68-րդ հոդվածի համաձայն՝ ընդհանուր ժողովը բաժնեպոմսերի համախմբման վերաբերյալ որոշումն ընդունում է միայն ընկերության խորհրդի ներկայացմամբ: Նարկ է նկատել, որ բացի նշված որոշումից, խորհրդի ներկայացմամբ կայացվում են սահմանափակ թվով այնպիսի կարևոր որոշումներ, ինչպիսին է, օրինակ, ընկերության վերակազմակերպման մասին որոշումը:

Օրենքի 71-րդ հոդվածը մանրամասն կանոնակարգում է ընդհանուր ժողովի գումարման և օրակարգի մասին բաժնեպետերին ծանուցելու կարգը՝ ըստ էության երաշխավորելով ժողովին բոլոր բաժնեպետերի մասնակցության հնարավորությունը: Ընդ որում, ժողովի օրակարգը սահմանում է ընկերության խորհուրդը, և ժողովն իրավունք չունի փոփոխել օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

Համաձայն օրենքի 77-րդ հոդվածի՝ ընդհանուր ժողովը կարող է բաժնեպոմսերի համախմբման հարցը քննարկել, եթե ժողովին ներկա են ընկերության փողաբաշխված քվեարկող բաժնեպոմսերի 50-ից ավելի փոկոսից ավելին համապետ փոխապետող բաժնեպետերը: Թեև բաժնեպոմսերի համախմբման մասին որոշման կայացման համար ընդհանուր ժողովից պահանջվում է միայն ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնեպոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությունը, ինչը նշանակում է, որ բաժնեպոմսերի համախմբման գործընթացը կարող է փոփոխ ունենալ ընկերության բաժնեպետերի փոքրամասնության կամքով, այնուամենայնիվ, ընդհանուր ժողովի գումարման և օրակարգի մասին բաժնեպետերին ծանուցելու օրենքով սահմանված կարգը պոտենցիալ հնա-

րավորություն է ստեղծում բոլոր բաժնետերերի համար իրենց մասնակցությունն ունենալ բաժնետոմսերի համախմբման որոշման կայացման գործընթացին, այդ գործընթացում ներկայացնել իրենց շահերը, արտահայտել իրենց կամքը:

Օրենքի 68-րդ հոդվածի 11-րդ մասով պահանջվում է ժողովի ընդունած որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները ներկայացնել բոլոր բաժնետերերին օրենքով եւ ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով եւ ժամկետներում՝ այդ որոշումներն ընդունելու պահից՝ 45 օրվա ընթացքում: Նույն հոդվածի 13-րդ մասն ամրագրում է յուրաքանչյուր բաժնետիրոջ՝ ժողովի որոշումը դադարական կարգով բողոքարկելու իրավունքը:

Օրենքի 59-րդ հոդվածը մանրամասն կանոնակարգում է հեղափոխական բաժնետոմսի շուկայական արժեքի հաշվարկման գործընթացը, սահմանում է շուկայական արժեքի որոշման չափանիշները: Ընդհանուր կանոնի համաձայն՝ շուկայական արժեքը որոշվում է ընկերության խորհրդի որոշմամբ. խորհուրդը կարող է այդ նպատակով օգտվել նաև անկախ գնահատողի ծառայություններից:

Վերոթվարկյալ նորմերը հիմնականում թույլ են տալիս կոպորակային բաժնետոմսերի համախմբման գործընթացում հաշվի առնել կոպորակային բաժնետոմսեր ունեցող սեփականատերերի իրավունքներն ու օրինական շահերը՝ պարզաճ իրավաբանական ընթացակարգերի եւ որոշումների նկատմամբ դատական վերահսկողության կիրառմամբ:

10. Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի՝ «Ժողովի քվորումը» վերաբառությամբ 77-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համարել տիրապետում են ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքի 68-րդ հոդվածի համաձայն՝ ժողովի կողմից բաժնետոմսերի համախմբման վերաբերյալ որոշման կայացման համար պահանջվում է ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործնականում հնարավոր է դառնում խնդրո առարկա որոշման կայացումն ընկերության բաժնետերերի գրեթե մեկ քառորդի կողմից: Ավելին, հաշվի առնելով նաև, որ օրենքի 77-րդ - հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ժողովը չկայանալու դեպքում գումարվող նոր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համարել տիրապետում են ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին, ապա գործնականում հնարավոր է դառնում խնդրո առարկա որոշման կայացումը նույնիսկ ընկերության բաժնետերերի 15%-ից քիչ ավելիի կողմից, որն էապես թուլացնում է նման որոշման լեգիտիմությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման ընթացակարգը ոչ միայն չի ապահովում ընկերության բաժնեպատկերի սեփականության իրավունքին առնչվող որոշումների կայացումը ձայների այնպիսի հարաբերակցությամբ, որը հնարավորություն կտա ապահովել նման որոշումների լեգիտիմության ավելի մեծ աստիճան, այլ նաև նման որոշման կայացումը բաժնեպատկերի փոքրամասնության կողմից ներդաշնակ չէ բաժնեպատկերի համախմբման՝ որպես բաժնեպատկերի մեծամասնության շահերից բխող գործընթացի էությանն ու փրամաբանությանը: Նաշվի առնելով բաժնեպատկերի համախմբման գործընթացի էությունը, առանձնահատկություններն ու փոփոխական նշանակությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Բաժնեպատկերական ընկերությունների մասին» ՏՃ օրենքի 68-րդ և 77-րդ հոդվածներն ունեն բարեփոխման անհրաժեշտություն՝ այն առումով, որպեսզի հատկապես սեփականության իրավունքին առնչվող հարցերում ապահովվի որոշման կայացումը բաժնեպատկերի մեծամասնության կողմից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Բաժնեպատկերական ընկերությունների մասին» ՏՃ օրենքի 56-րդ հոդվածը սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում համապատասխանում է Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. «Բաժնեպատկերական ընկերությունների մասին» ՏՃ օրենքի 57 և 58-րդ հոդվածների սահմանադրականությունը որոշելու մասով գործի վարույթը կարճել:

3. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ**

*13 հուլիսի 2010 թվականի
ՄԴՈ-903*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԴԵՏՈՒԹՅԱՆ

**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԴԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՆԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԶՈՐԻ
ԳՐԱՄԵՆՅԱԿ» ՆԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԴԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 3-ՐԴ ՆՈՂՎԱԾԻ
ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՏԻ՝ «ԽԱԽԱՐՎԵԼ» ԲԱՌԻՅ ՆԵՏՈ
«ՆՐԱ» ԱՐՏԱՆԱՅՏՈՒԹՅԱՆ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԴԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱԴԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

սեպտեմբերի 2010թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Նովիանինիսյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող), մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ Կ. Թումանյանի,

գործով որպես պապասխանող ներգրավված՝ ՆՃ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՃ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի, համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիսպում գրավոր ընթացակարգով քննեց «Նելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ Նայասարանի Նանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի՝ «խախտվել» բառից հետո «նրա» արտահայտության՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Նելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության՝ 19.03.2010թ.ՆՃ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետագոյնելով Նայասպանի Նանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. ՆՎ վարչական դատավարության օրենսգիրքը ՆՎ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ին, Նայասպանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 10-ին եւ ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից:

ՆՎ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Վարչական դատարան դիմելու իրավունքը» վերաբառւթյամբ 3-րդ հոդվածի առաջին մասի առաջին կէտը սահմանում է. «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթէ համարում է, որ պետական կամ փողական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազատությունները, այդ թվում, եթէ՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների եւ ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվելին Նայասպանի Նանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով»:

2. Զննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ Նայասպանի Նանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքի ավագանին իր՝ 23.04.2009թ. թիվ 29 որոշմամբ որոշել է փալ համաձայնություն Վանաձորի համայնքի սեփականություն հանդիսացող Տարոն-3, ՔՇՆ-11 հասցեում գտնվող կիսակառույց ենթակայանը, համաձայն հավելվածի, անհատույց սեփականության իրավունքով փրամադրել Նայասպանի էլեկտրական ցանցերին այն ավարտին հասցնելու, կահավորելու եւ նորաստեղծ թաղամասի անխափան էլեկտրամատակարարումն ապահովելու նպատակով: Նույն որոշմամբ Վանաձորի համայնքի ավագանին որոշել է առաջարկել Վանաձորի համայնքի ղեկավարին կնքել համապատասխան նվիրատվության պայմանագիր:

Գտնելով, որ Վանաձորի համայնքի ավագանին իրավասու չէր կայացնելու նման որոշում, «Նելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարա-

կական կազմակերպությունը դիմել է դափարան՝ Վանաձորի համայնքի ավագանու 2009 թվականի ապրիլի 23-ի թիվ 29 որոշումն առաջին ճանաչելու պահանջով:

ՆՏ վարչական դափարանի՝ 30.06.2009 թվականի թիվ Վ.Դ 6/0250/05/09 որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է: Մերժելով հայցադիմումի ընդունումը՝ ՆՏ վարչական դափարանը հղում կատարելով ՆՏ վարչական դափարության օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասին, գրել է, որ «ներկայացված հայցադիմումում վեճի առարկա՝ Վանաձոր համայնքի ավագանու՝ 23.04.2009թ. թիվ 29 որոշումը որեւէ ձևով չի առնչվում Կազմակերպության իրավունքներին կամ պարտականություններին, հետևաբար վերջինս, Օրենսգրքի 3-րդ հոդվածի կարգով պատշաճ հայցվոր չի հանդիսանում եւ Վարչական դափարանին նման հայց ներկայացնելու իրավունք չունի»:

ՆՏ վարչական դափարանի՝ 30.06.2009 թվականի թիվ Վ.Դ 6/0250/05/09 որոշման դեմ «Նելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը բողոք է ներկայացրել ՆՏ վարչական դափարան: ՆՏ վարչական դափարանի՝ 20.07.2009 թվականի թիվ Վ.Դ 6-0250/05/09 որոշմամբ «Նելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության բողոքը մերժվել է, իսկ ՆՏ վարչական դափարանի՝ 30.06.2009 թվականի թիվ Վ.Դ 6/0250/05/09 որոշումը թողնվել է ուժի մեջ: ՆՏ վարչական դափարանը մերժելով բողոքը՝ ըստ էության արտահայտել է այն նույն իրավական դիրքորոշումը, ինչն արտահայտված էր ՆՏ վարչական դափարանի 30.06.2009 թվականի թիվ Վ.Դ 6/0250/05/09 որոշման մեջ:

ՆՏ վճարել է դափարանը, վերահաստատելով ՆՏ վարչական դափարանի՝ 20.07.2009 թվականի թիվ Վ.Դ 6-0250/05/09 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումը, իր՝ 23.09.2009 թվականի որոշմամբ «Նելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության վճարել բողոքը վերադարձրել է:

3. Դիմողը գտնում է, որ Նայասպանի Նանրապետության վարչական դափարության օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի՝ «խախտվել» բառից հետո «նրա» արտահայտությունը հակասում է ՆՏ Սահմանադրության 19-րդ հոդվածին: Իր պեսակետը հիմնավորելու համար դիմողը ներկայացնում է հետևյալ հիմնական փաստարկները.

- ՆՏ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ «իր խախտված իրավունքները» արտահայտությունը ենթադրում է դափարան դիմելու համար ավելի լայն հնարավորություն յուրաքանչյուր անձի համար, որի դրսեւորման օրինակ է հանդիսանում այն, որ ՆՏ քաղաքացիական դափարության օրենսգրքի 2-րդ հոդվածը դափարան դիմելու իրավունք է վերապահում շահագրգիռ անձանց,

- ի փորճերություն քաղաքացիական գործեր քննող դափարանների, որպէս գործում է դափարության կողմերի մրցակցության սկզբունքը, վարչական դափարանը գործը քննում է ի պաշտոնէ, ինչը ենթադրում է, որ վարչական դափարան դիմելու իրավունքը պէտք է վերապահված լինի անձանց ավելի լայն շրջանակի՝ ապահովելու

համար վարչական մարմնի գործողությունների նկատմամբ դատական վերահսկողության արդյունավետությունը,

- «Նեխինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության կանոնադրության 2.1 կետի ուժով կազմակերպության նպատակներից են մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը: Իսկ մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելը միջազգային փաստաթղթերով ընդունված լավագույն իրավական մեխանիզմներից է,

- տեղական ինքնակառավարման մարմնի կողմից ընդունված որոշումների վիճարկումը պետք է վերապահված լինի Կոմիտեի Բնակիչների եւ իրավաբանական անձանց՝ Կոմիտեի համայնքում բնակվող բնակիչների շահերից ելնելով:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողների փաստարկների դեմ, գտնում է, որ ՆՏ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածները երաշխավորում են անձի իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության իրավունքը: Որպես սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության երաշխիք՝ այն իրավական նախադրյալ է ստեղծում սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ինստիտուցիոնալ եւ դատավարական կառուցակարգերի ստեղծման համար: Այն, որպես դատական պաշտպանության մեխանիզմների ձեւավորման եւ գործունեության անկյունաքար, երաշխավորում է իրական, խախտված սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությունը՝ յուրաքանչյուրին իրավունք վերապահելով դատարանում հայցելու իր եւ ոչ թե այլ անձանց կամ իր համոզմամբ խախտված իրական, այլ ոչ թե «վերացական» իրավունքի պաշտպանություն:

Քանի որ ՆՏ վարչական դատավարության օրենսգրքն առաջին հերթին հնարավորություն է ընձեռում հայց ներկայացնելու միայն այն ֆիզիկական եւ իրավաբանական անձանց, որոնց իրավունքները եւ շահերը խախտվել են, եւ նման հնարավորություն չի ընձեռում յուրաքանչյուր անձի՝ հանրության շահերը պաշտպանելու համար, այսինքն՝ չի թույլատրում իրականացնել իրավազաւիության լոկ օբյեկտիվ վերահսկողություն, ապա ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայց ներկայացնելու համար պետք է առկա լինի ոչ միայն վարչական մարմինների ոչ իրավազաւի որոշում, գործողություն կամ անգործություն, այլ նաեւ անձանց իրավունքների խախտում:

Պատասխանողը, հղում կատարելով «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) դիրքորոշումներին, նշել է, որ վերջինս խնդրո առարկայի վերաբերյալ ունի հետեւյալ դիրքորոշումը. «Առաջնային է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունենա վիճարկելու որոշումն այն հիմքով, որ այն խախտում է իր իրավունքները: Սակայն, եթե որոշումն անմիջականորեն չի խախտել անձի իրավունքները, ապա վիճարկման հնարավորության ընձեռումը ներպետական օրենսդրության կարգավորման խնդիր է»:

5. Դիմումի ուսումնասիրության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը բարձրացնում է համայնքի բնակչի կողմից համայնքին պարկանող սեփականության իրավունքի պաշտպանության, ինչպես նաև ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատմամբ դատարանի մատչելիության իրավունքի հարցերը: Այս առումով հարկ է օրենսգրքի վիճարկվող արտահայտության սահմանադրականության հարցը դիտարկել օրենսգրքի 3-րդ հոդվածի դրույթների համարեքսպում՝ դատական պաշտպանության արդյունավետության տեսանկյունից:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են **նրա** քաղաքացիական իրավունքներն ու պարկանությունները կամ **նրան** ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա սրեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքնության իրավունք»:

ՆՏ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի **իր** իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի **իր** իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի **իր** իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը:

Յուրաքանչյուր ոք, Նայաստանի Նանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի **իր** իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին»:

ՆՏ Սահմանադրության 19-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի **իր** խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև **իրեն** ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի սահմանադրականության հարցի վերաբերյալ ՆՏ սահմանադրական դատարանն իր՝ 04.04.2008 թվականի ՄԴՌ-747 որոշման 7-րդ կետում անդրադառնալով ՆՏ Սահմանադրության 19-րդ հոդվածի առաջին պարբերության դրույթների մեկնաբանությանը՝ ամրագրել է հետևյալը. «Նամաձայն ՆՏ Սահմանադրության 19 հոդվածի՝ անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման անհրաժեշտություն ծագում է այն դեպքում, երբ նա խնդիր ունի վերականգնելու **իր** ենթադրյալ խախտված իրավունքները: Սահմանադրական այս դրույթի հիմքում ընկած է այն փրամաբանությունը, որ յուրաքանչյուր դեպքում անձն իր՝ դատարան դիմելու իրավունքը կարող է իրացնել միայն այն դեպքում, երբ փվյալ գործի

առնչությամբ ունի իրավական շահագրգռվածություն: Սահմանադրական այս դրույթին համահունչ՝ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 2-րդ հոդվածի 1-ին մասը դատարան դիմելու իրավունքը վերապահել է շահագրգիռ անձին, **այն է՝ անձին, ում իրավունքները ենթադրաբար խախտվել են»:**

Հիմք ընդունելով ՏՏ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածները, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, ՏՏ Սահմանադրության 19-րդ հոդվածի առաջին մասով ամրագրված դրույթների վերաբերյալ ՏՏ սահմանադրական դատարանի՝ 04.04.2008 թվականի ՄԴՆ-747 որոշման 7-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՏՏ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներին, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին համահունչ ՏՏ օրենսդրությունը հիմնված է այն պրամաբանության վրա, որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, ի թիվս այլոց, ներառում է անմիջականորեն դատարան դիմելու իրավունքն այն անձանց կողմից, **որոնց իրավունքները խախտվել են:** Այս առումով սահմանադրական դատարանն անհիմն է համարում դիմողի դիրքորոշումն այն մասին, որ ՏՏ Սահմանադրության 19-րդ հոդվածը նախատեսում է դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների ավելի լայն շրջանակ:

6. Միեւնույն ժամանակ, ՏՏ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածները, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը չեն բացառում այլ անձանց կողմից ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով դատարան դիմելու հնարավորությունը: Ընդ որում, ՏՏ օրենսդրությունը սահմանում է այդ հնարավորության դրսևորման փարբեր ձևեր: Մասնավորապես, ՏՏ Սահմանադրության 103-րդ հոդվածի չորրորդ մասի 3-րդ կետի համաձայն՝ դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով դատարանում պաշտպանում է մեղադրանքը: Տվյալ դեպքում վկայակոչված գործառույթի միջոցով դատախազը ոչ միայն հանդես է գալիս հանրային շահերի, այլ նաև հանցագործության հետևանքով փոժամ անձանց շահերի պաշտպանության նկատառումներով:

Նմանապիպ մոտեցում է ցուցաբերված նաև սահմանադրական արդարադատության բնագավառում, որպեղ, կոնկրետ վերահսկողությունից զատ, նախատեսված է նաև վերացական վերահսկողության ինստիտուտը, որի շրջանակներում ՏՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի առաջին մասի 1-ին, 3-րդ, առավել եւս՝ առաջին մասի 8-րդ կետերում նշված սուբյեկտները, իրավական նորմերի սահմանադրականության հարցով սահմանադրական դատարան դիմելիս հանդես են գալիս ոչ միայն հանրային շահերի, այլ նաև փյյալ իրավանորմի կիրառման արդյունքում փոժամ անձանց շահերի պաշտպանության նկատառումներով: Մասնավորապես, ՏՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը սահմանում է, որ սահմանադրական դատարան կարող է դիմել մարդու իրավունքների պաշտպանը՝ «Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կե-

տում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով»։ Միաժամանակ, սահմանադրական արդարադատության բնագավառում գործում է նաև կոնկրետ անձի իրավունքների պաշտպանության նկատառումներով այլ սուբյեկտների կողմից սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, որն իրացվում է ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ եւ 8-րդ կետերին համապատասխան։

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածը դատարան դիմելու իրավունք է վերապահում շահագրգիռ անձանց։ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերլուծությունը ցույց է տալիս, որ շահագրգիռ անձանց ներքո հանդես են գալիս նախ եւ առաջ այն անձինք, որոնց իրավունքները խախտվել են կամ կարող են խախտվել։ Միեւնույն ժամանակ, մի շարք դեպքերում ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքը սահմանել է նաև ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով դատարան դիմելու իրավունքը՝ որպես շահագրգիռ անձի իրավունք։ Մասնավորապես, վերջինս վերաբերում է օրինական ներկայացուցչին։

Վերը նշված դեպքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ուրիշի փոխարեն դատարան դիմելու իրավունքը գործում է սահմանափակ դեպքերում, նախապեսված է այն իրավիճակների համար, երբ այն անձը, որի իրավունքները խախտվել են կամ կարող են խախտվել, օբյեկտիվ պարճառներով չի կարող անմիջականորեն դիմել դատարան (օրինակ՝ անգործունակ կամ սահմանափակ գործունակ լինելը), կամ **օրենսդիրը, հեղափոխության իրավաչափ նպատակ, այլ անձի կամ անձանց, հանրության խախտված իրավունքների պաշտպանությունը կանոնակարգում է հանրային գործառույթի եւ հանրային շահերի համարաբարձրում (օրինակ՝ հանցագործությունների կամ համայնքի սեփականության իրավունքի խախտման դեպքում)**։ Բոլոր դեպքերում, ընդհանուր կանոնն այն է, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են կամ առկա է նրա իրավունքների խախտման վրանգ։ Բացառիկ կանոն է ուրիշի խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքը, **որի իրացման դեպքերի եւ կարգի սահմանումը բացառապես օրենսդիր մարմնի իրավասության հարց է**։

ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջինս եւ, մասնավորապես, դրա 3-րդ հոդվածը շահագրգիռ հասարակական կազմակերպությունների առնչությամբ չի սահմանել ուրիշի խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը եւ կարգը։

7. Նիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 19-րդ հոդվածը, չսահմանափակվելով դիմողի դիրքորոշումներով՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում օրենսգրքի վիճարկվող դրույթը դիտարկել նաև ՆՏ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված ժողովրդավարական եւ իրավական պետության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կայացման համարաբարձրում՝ հաշվի

առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության եւ հասարակության կյանքում:

Քաղաքացիական հասարակությունն ինքնուրույն եւ պետությունից անկախ հասարակական մեխանիզմների եւ հարաբերությունների համակարգ է, որը պայմաններ է ապահովում կոլեկտիվների եւ անհատների մասնավոր շահերի եւ պահանջմունքների բավարարման համար: Քաղաքացիական հասարակության բաղադրապարտ հանդիսացող սոցիալական կառուցակարգերի շրջանակում ուրույն փեղ են զբաղեցնում հասարակական կազմակերպությունները: Վերջիններիս դերն ինքնանպատակ չէ, քանի որ, **նախ**՝ միավորումների գործունեությունը նախատեսված է Սահմանադրությամբ եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով, **երկրորդ**՝ հասարակական կազմակերպություններն ունեն կոլեկտիվների եւ անհատների մասնավոր շահերի եւ պահանջմունքների իրացմանը, այդ թվում՝ հանրային կառավարմանը մասնակցելու գործառույթ, **երրորդ**՝ հասարակական կազմակերպությունների միջոցով է, որ հասարակությունը հնարավորություն է ստանում հասարակական հսկողություն եւ վերահսկողություն սահմանել պետական կառավարման եւ փեղական ինքնակառավարման նկատմամբ: Այս հանգամանքը հատկապես կարեւորվում է այն պարագայում, երբ առկա է ոչ թե անհատի, այլ իրավունքի կոլեկտիվ սուբյեկտի սուբյեկտիվ իրավունքների կամ օրինական շահերի խախտում:

Նաշվի առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության եւ քաղաքացիական հասարակության կյանքում, առաջնորդվելով վերջիններիս գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՏՏ վարչական դատավարության օրենսգիրքը շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպությունների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել փյույս ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը եւ կարգը՝ հաշվի առնելով *actio popularis* բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական ներկա զարգացումների միտումները: Նման իրավակարգավորումը կնպաստեր ոչ միայն խախտված իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության, այդ թվում դատական պաշտպանության արդյունավետությանը, այլեւ կբարձրացներ քաղաքացիական հասարակության բաղադրապարտ հանդիսացող՝ հասարակական կազմակերպությունների դերը: Ընդ որում, ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման դեպքերը եւ կարգը սահմանելիս հարկ կլինի հաշվի առնել միայն այն հասարակական կազմակերպություններին, որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը: Այս դիրքորոշումը համահունչ է նաեւ «Նասարակական կազմակերպությունների մասին» ՏՏ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, որի համաձայն՝ կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր եւ իր անդամների իրավունքները եւ օրինական շահերն այլ կազմակեր-

պություններում, **դափարանում**, պեղական կառավարման եւ փեղական ինքնակառավարման մարմիններում:

8. Վարչական դափարվարությունում այլոց իրավունքների պաշտպանությամբ դափարան դիմելու իրավունքի (Actio popularis) առնչությամբ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ, որպես կանոն, եվրոպական երկրներում այս ինստիտուտն իր դասական իմաստով եւ լրիվ ծավալով կիրառում չունի: Միաժամանակ, սահմանադրական դափարանը նման ուսումնասիրության արդյունքներով արձանագրում է, որ մի շարք երկրներում վարչական գործերով հայց ներկայացնելու իրավասության հիմնական չափանիշ է հանդիսանում «իրավական շահագրգռվածությունը»: Վերջինս դափարիավական պրակտիկայում սփայտել է այնքան լայն մեկնաբանություն, որ հասարակական կազմակերպություններին կամ քաղաքացիական նախաձեռնությամբ հանդես եկող եւ օրենքով սահմանված կարգով գործունեություն իրականացնող այլ միավորումների հնարավորություն է ընձեռվում **հանդես գալ որոշակի խմբի կողմնակալ իրավունքի պաշտպանությամբ, եթե այդ պաշտպանությունը փվյալ միավորման կոնկրետ նպատակների շրջանակում է:** Այսպիսի դիրքորոշում է ըստ էության արտահայտված նաեւ Նայասփանի Նանրապետության դափարական պրակտիկայում: Մասնավորապես, ՆՆ վճռաբեկ դափարանն իր՝ 30.10.2009թ. թիվ ՎԴ/3275/05/08 որոշմամբ արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «Մույն գործով «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպությունն Օրիուսի կոնվենցիայի իմաստով «շահագրգիռ» կազմակերպություն է, հետեւաբար, օգտվում է այդ կազմակերպության կանոնադրական նպատակներից բխող, շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող հարցով դափարական պաշտպանության իրավունքից»:

Հասարակական կազմակերպությունների կամ այլ միավորումների կողմից կոնկրետ իրավունքների եւ օրինական շահերի դափարական պաշտպանության հարցերին է անդրադարձել նաեւ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն: Ըստ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի՝ «Վարչական ակտերի նկատմամբ դափարական վերահսկողության մասին» (2004)20 հանձնարարականի՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները խրախուսում են քննության առնել այն հարցը, թե արդյո՞ք դափարական վերահսկողության մատչելիությունը պետք է երաշխավորվի նաեւ այն միավորումների կամ այլ անձանց կամ մարմինների համար, որոնք իրավասու են պաշտպանել կոնկրետ կամ համայնքային շահեր:

Բոլոր դեպքերում հիմնական մոտեցումն այն է, որ առանց իրավական շահի actio popularis-ը պետք է բացառվի:

Սահմանադրական դափարանն արձանագրում է, որ քաղաքացիական հասարակությունում հասարակական կազմակերպությունների գործառույթների իրականացման, ինչպես նաեւ հասարակական կազմակերպությունների միջոցով պեղական կառավարման եւ փեղական ինքնակառավարման նկատմամբ հասարակական վերահսկողության արդյունավետության բարձրացման նկատառումներով հետագա օրենսդրական զարգացումները պետք է ընթանան վերոհիշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Նայասպանի Նանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի՝ «խախտվել» բառից հետո «ներա» արտահայտությունը համապատասխանում է Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ**

*7 սեպտեմբերի 2010 թվականի
ՄԴՈ-906*

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՏՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՆՏ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ
ՎՐԱ «ՄԱՐԴՈՒՆ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՆՅՈՒՄՎԱԾՔՆԵՐ
ՓՈԽՊԱՏՎԱՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆՏ ՕՐԵՆՔԻ 7-ՐԴ
ՆՈԴՎԱԾԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՏՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

14 սեպտեմբերի 2010թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարությունյանի (նախագահող), Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,
մասնակցությամբ՝

ՆՏ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչ Ա. Խաչատրյանի,

գործով որպես պապասխանող ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՏ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՆՏ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպարվասպելու մասին» ՆՏ օրենքի՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՆՏ մարդու իրավունքների պաշտպանի՝ 01.03.2010թ. ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պապասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ՆՏ Նանրային խորհրդի Առողջապահության եւ սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը, հեղափոխելով «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպարվասպելու մասին» ՆՏ օրենքը եւ գործում առ-

կա մյուս փաստաթղթերը, Նայասփանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխապարվասպելու մասին» ՆՆ օրենքը ՆՆ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002 թվականի ապրիլի 16-ին, Նայասփանի Նանրապետության Նախագահի կողմից սպորազրվել՝ 2002 թվականի մայիսի 11-ին եւ ուժի մեջ է մտել 2002 թվականի նոյեմբերի 25-ից:

Օրենքի՝ սույն գործով վիճարկվող 7-րդ հոդվածը 2009 թվականի ապրիլի 6-ի ՆՕ-66-Ն օրենքով փոփոխվել է եւ լրացվել թվով 6 մասերով: «Դիակային դոնորից օրգաններ եւ հյուսվածքներ վերցնելու համաձայնության նախապայմանը» վերաբերող մասեր ներկայումս գործող այդ հոդվածը սահմանում է.

«Փոխապարվասպման նպատակով դիակից օրգաններ եւ հյուսվածքներ չեն կարող վերցվել միայն այն դեպքում, երբ փյույվ անձն իր կենդանության օրոք, Նայասփանի Նանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, հրաժարվել է մահից հետո հանդես գալ որպես օրգանների եւ հյուսվածքների դոնոր:

Օրգանների եւ հյուսվածքների դոնորների եւ ռեցիպիենտների ռեեսպրում նրա՝ որպես դիակային դոնոր հանդես գալու որոշման բացակայության դեպքում փոխապարվասպման նպատակով դիակից օրգաններ եւ հյուսվածքներ կարող են վերցվել նրա հարազատների (ազգականների) համաձայնությամբ հետեւյալ առաջնահերթությամբ.

- ա) ամուսինը,
- բ) չափահաս երեխան,
- գ) ծնողներից մեկը,
- դ) հարազատ եղբայրը կամ քույրը,
- ե) հայրական կամ մայրական կողմի պապը կամ փայրը:

Միեւնոյն առաջնահերթությամբ մի քանի հարազատների առկայության դեպքում բավարար են նրանցից մեկի փեղեկացվածությունը եւ համաձայնությունը:

Յուրաքանչյուր ոք մահից հետո դոնոր հանդես գալու իր գրավոր անհամաձայնությունը լիազոր մարմնի հաստատված կարգով ներկայացնում է իր ընտանեկան բժշկին կամ փեղամասային թերապեւտին, որը գրանցվում է նրա բժշկական փաստաթղթերում:

Անձի դիակային դոնոր հանդես գալու որոշման վերաբերյալ փեղեկությունը ընտանեկան բժիշկը կամ փեղամասային թերապեւտը լիազոր մարմնի հաստատված կարգով փոխանցում է օրգանների ու հյուսվածքների դոնորների եւ ռեցիպիենտների ռեեսպր:

Փոխապարվասպման նպատակով մինչեւ 18 տարեկան երեխաների կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձի դիակից օրգաններ եւ հյուսվածքներ կարող են վերցվել միայն նրա ծնողի կամ օրինական ներկայացուցչի համաձայնությամբ:

Լիազոր մարմնի սահմանած կարգով բնակչության շրջանում իրականացվում է փեղեկափոխության փրամադրում օրգանների եւ հյուսվածքների փոխապարվասպման նշանակության, դոնորության նախապայմանների եւ փոխապարվասպմանն առնչվող այլ հարցերի շուրջ»:

Վերոհիշյալ օրենքի 3-րդ, 5-րդ և 10-րդ հոդվածների դրույթների կարարումն ապահովելու նպատակով ՏՏ կառավարությունն իր՝ 26.04.2007թ. թիվ 502-Ն, 26.04.2007թ. թիվ 551-Ն, 07.02.2008թ. թիվ 131-Ն և 07.02.2008թ. թիվ 132-Ն որոշումներով սահմանել է փոխապարվասպման ենթակա օրգանների և (կամ) հյուսվածքների ցանկը, դրանց ներմուծման կարգը, ինչպես նաև փոխապարվասպման, դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու հնարավորության և անհրաժեշտության վերաբերյալ եզրակացություն փալու հետ կապված հարաբերությունների կարգավորման կարգը:

2. Դիմող կողմը գտնում է, որ մարդու արժանապարվության պաշտպանության կարևոր նախադրյալներից է նրա իրավունքների ազապ և անարգել իրագործումը: Մարդու կամքի ազապ արտահայտումը՝ որպես նրա արժանապարվության իրավունքի անբաժանելի մաս, պետք է պաշտպանվի և հարգվի ինչպես մարդու կենդանության օրոք, այնպես էլ նրա մահից հետո: Վերոնշյալը հավասարապես վերաբերում է նաև անձնական անձեռնմխելիության իրավունքին, որն անհրաժեշտ նախապայմաններ է ստեղծում մարդու մահից հետո նրա մարմնի նկարմամբ արժանապարվի վերաբերմունքի և մահացածի մարմնի իրավական պաշտպանության համար: Մարդն ինքն է որոշում և փնտրելու իր մարմնի ճակատագիրը, այդ թվում՝ որոշում վերջինիս ճակատագիրը մահից հետո: Մինչդեռ, ինչպես գտնում է դիմող կողմը, վիճարկվող նորմը ելնում է այն փրամաբանությունից, համաձայն որի մարդն իր մահից հետո հանդիսանում է դիակային դոնոր, եթե չիրաժարվի որպես այդպիսին հանդես գալուց, այսինքն՝ մարդու մահից հետո նրա մարմնի ճակատագիրն արդեն որոշված է:

Ըստ դիմող կողմի՝ վիճարկվող նորմում նախատեսված են դիակային դոնորից օրգաններ և հյուսվածքներ վերցնելու հետ կապված հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման երկու իրարամերժ «համաձայնության» և «անհամաձայնության» նախապայմանի սկզբունքներ, որի պարագայում «ակներե է իրավական անորոշությունը և խառնաշփոթը»՝ պայմաններ ստեղծելով իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող նորմի «կամայական մեկնաբանման, կիրառման և չարաշահման համար»:

3. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխապարվասպելու մասին» ՏՏ օրենքի 7-րդ հոդվածը համապարասխանում է ՏՏ Սահմանադրությանը՝ հետեյալ հիմնավորումներով:

Օրգանների և (կամ) հյուսվածքների փոխապարվասպման համար անհրաժեշտ համաձայնությունը կամ թույլտվությունը կանոնակարգող՝ արտասահմանյան երկրների օրենսդրության, միջազգային իրավական փաստաթղթերի ուսումնասիրությունը հնարավորություն է փալիս առանձնացնել իրավակարգավորման երկու հիմնական մոդել: Պետությունների գերակշիռ մասը նախքան օրգանների փոխապարվասպումը պարադիք է համարում դոնորի համաձայնությունը, սակայն փարքեր են համաձայնության արտահայտման եղանակները:

ա) ենթադրյալ համաձայնություն (անձի համաձայնությունն առկա է այնքան ժամանակ, քանի դեռ հստակ չի հրաժարվել իր մահից հետո իր օրգաններն օգտագործելուց),
 բ) պոզիտիվ համաձայնություն, երբ անձը կենդանության օրոք իր մահից հետո իր օրգաններն օգտագործելու հստակ համաձայնություն է փոխել:

Ըստ պարասխանող կողմի եզրահանգման՝ մահացածի օրգանների եւ (կամ) հյուսվածքների փոխպարվաստումը մահացածի ենթադրյալ կամ նեգատիվ համաձայնության դեպքում եվրոպական եւ միջազգային չափանիշների փոխանկյունից չի դիվորում որպես նրա արժանապարվության եւ անձեռնմխելիության խախտում: «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպարվաստելու մասին» ՆՆ օրենքը, ըստ պարասխանողի, հիմնված է ենթադրյալ համաձայնության համակարգի կամ, այլ կերպ ասած՝ «համաձայնության կանխավարկածի» վրա, եւ նման կարգավորումը երաշխավորում է նաեւ կենդանության ժամանակ անձի անվտանգությունը: Ներեւաբար, այդ օրենքը համապարասխանում է ինչպես միջազգային իրավական փաստաթղթերով առաջադրվող պահանջներին եւ սկզբունքներին, այնպես էլ իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ հստակ սահմանում է այն պայմանները, որոնք անհրաժեշտ եւ բավարար են դիակային դոնորի օրգանների եւ հյուսվածքների փոխպարվաստման համար:

4. Մույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմի սահմանադրականությունը գնահատել:

ա) նախ՝ մարդու, նրա արժանապարվության, հիմնական իրավունքների եւ ազատությունների՝ որպես բարձրագույն արժեքների, պաշտպանության եւ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապարասխան դրանց օրենսդրական երաշխավորման ապահովման համապետքստում՝ այնքանով, որքանով առնչվում են վիճարկվող նորմով կարգավորվող հարաբերություններին,

բ) երկրորդ՝ բժշկական օգնության եւ սպասարկման՝ անձի սահմանադրական իրավունքի (ՆՆ Սահմ. 38-րդ հոդված) իրացման մատչելիության ապահովման փոխանկյունից, հաշվի առնելով նաեւ բնակչության առողջության պահպանման նպատակային ծրագրեր իրականացնելու եւ արդյունավետ ու մատչելի բժշկական սպասարկման պայմաններ ապահովելու վերաբերյալ պետության սահմանադրական պարտականության (ՆՆ Սահմ. 48-րդ հոդված եւ 89-րդ հոդվածի 5-րդ կետ) երաշխավորված կատարումն ապահովելու անհրաժեշտությունը:

Մարդու եւ քաղաքացու իրավական կարգավիճակի կարեւորագույն բաղադրիչը նրա արժանապարվությունն է, որն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ առաջնային նշանակություն ունի մարդու եւ քաղաքացու հիմնական բոլոր իրավունքների ու ազատությունների ազատ, անարգել ու երաշխավորված իրականացման համար: Այն նաեւ ենթադրում է ինչպես սահմանադրորեն թույլատրելի շրջանակներում անձի կողմից որոշակի գործողությունների կատարում եւ կամահայրության դրսեւորում, այնպես էլ դրանք պաշտպանելու պետության համարժեք պարտականություն:

ՆՆ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ մարդը, նրա արժանապարվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պեպրությունը սահմանափակված է մարդու և բաղաբացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, որը ենթադրում է պեպրական և փեդական ինքնակառավարման մարմինների, պաշտոնավար անձանց գործունեություն միայն այդ իրավունքի և դրա անխախտելիության ապահովման շրջանակներում: ՆՏ Սահմանադրության 14-րդ հոդվածի համաձայն՝ մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անբակտեի հիմք, հարգվում է պաշտպանվում է պեպրության կողմից: Յուրաքանչյուր ոք ունի կյանքի, օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք (ՆՏ - Սահմ. 15, 38-րդ հոդվածներ): Սահմանադրորեն երաշխավորված է նաև մարդու անձնական անձեռնմխելիության իրավունքը (ՆՏ Սահմ. 16-րդ հոդված), որի իրավական բովանդակությունից է բխում անձի նկատմամբ անօրինական ամեն փեսակ ֆիզիկական և հոգեբանական ներգործության արգելքը՝ ինչպես մարդու կենդանության օրոք, այնպես էլ մահից հետո՝ նրա դիակի նկատմամբ, այդ արգելքին համարժեք իրավական պաշտպանություն ապահովելու առումով, որպես նաև մարդու արժանապատվության իրավունքի առանձնահատուկ դրսետրում: Այդ իրավունքն օրենքով ենթակա է երաշխավորված պաշտպանության նաև ՆՏ Սահմանադրության 17-րդ հոդվածի իրավակարգավորման շրջանակներում, համաձայն որի՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի, մարդուն չի կարելի առանց իր համաձայնության ենթարկել գիպական, բժշկական և այլ փորձերի:

5. «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՆՏ օրենքը սահմանելով փոխպատվաստման իրավական հիմքերը, դոնորի, ռեցիպիենտի (բուժական նպատակներով փոխպատվաստման կարիք ունեցող ֆիզիկական անձի) և բժշկական հաստատությունների հիմնական իրավունքներն ու պարտականությունները, կոչված է նաև երաշխավորելու ՆՏ Սահմանադրության վերոհիշյալ 3, 14, 15, 16, 17 և 38-րդ հոդվածներով նախատեսված իրավակարգավորման սկզբունքների և մարդու իրավունքների ու ազատությունների անմիջական գործադրման անխախտելիությունը, որոնց սահմանադրաիրավական բովանդակությունից ուղղակիորեն հետևում է, որ հիշյալ օրենքի և վերջինիս սույն գործով վիճարկվող հոդվածի իրավակարգավորման հիմքում պետք է դրվեն.

- մի կողմից՝ մարդու արժանապատվության հարգման և պաշտպանության, մյուս կողմից՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նրա սահմանադրական իրավունքների ներդաշնակումը,

- անձի անձեռնմխելիության, ազատության և որպես վերջինիս դրսետրում՝ ազատ կամաստրախայության երաշխավորված պաշտպանությունը,

- անհատի, նրա արժանապատվության, հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես բարձրագույն արժեքների, գերակայությունը հասարակական շահի նկատմամբ,

- արդյունավետ, մարչելի, պետության սահմանադրաիրավական պարավորությունների շրջանակներում բժշկական սպասարկման, այդ թվում՝ մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպարվաստելու պայմանների ստեղծումը,

- փոխպարվաստման բնագավառում կոռուպցիոն հնարավոր դրսևորումների բացառումը:

«Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպարվաստելու մասին» ՏՏ օրենքի (այսուհետ՝ օրենք) եւ վիճարկվող նորմի համադրված վերլուծությունը վկայում է, որ սույն գործով քննության առարկա հարաբերություններն օրենսդիրը կարգավորել է հետեւյալ հիմնական սկզբունքներով ու միջոցներով.

- կենդանի դոնորից կամ դիակից փոխպարվաստում կարող է կատարվել դրա անհրաժեշտության մասին բժշկական եզրակացության հիման վրա, համապատասխան լիցենզավորված բժշկական հաստատություններում, եւ միայն այն դեպքում, երբ բժշկական այլ միջոցառումները չեն կարող երաշխավորել հիվանդի կյանքի փրկությունը եւ առողջության վերականգնումը (օրենքի 2, 4 եւ 5-րդ հոդվածներ),

- փոխպարվաստումն իրականացվում է ռեցիպիենտի կամ վերջինիս ծնողների կամ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ (18 փարին չլրանալու դեպքում), եւ նախագոշացվում է սպասվելիք վիրահատական միջամտության հետ կապված հնարավոր բարդությունների մասին, առանց այդպիսի համաձայնության փոխպարվաստում կարող է կատարվել այն դեպքում, երբ դրա հետաձգումն սպառնում է ռեցիպիենտի կյանքին եւ համաձայնության ստացումն անհնար է (օրենքի 6-րդ հոդված),

- փոխպարվաստման նպատակով դիակից օրգաններ եւ հյուսվածքներ չեն կարող վերցվել այն դեպքում, երբ տվյալ անձն իր կենդանության օրոք, ՏՏ օրենսդրությամբ սահմանված կարգով, հրաժարվել է մահից հետո հանդես գալ որպես օրգանների եւ հյուսվածքների դոնոր (օրենքի 7-րդ հոդվածի առաջին մաս),

- յուրաքանչյուր ոք մահից հետո դոնոր հանդես գալու իր գրավոր անհամաձայնությունը լիազոր մարմնի հաստատված կարգով ներկայացնում է իր ընդհանրական բժշկին կամ փեդամասային թերապեւտին, որը գրանցվում է նրա բժշկական փաստաթղթերում (օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մաս),

- դիակային դոնոր հանդես գալու որոշման բացակայության դեպքում փոխպարվաստման նպատակով դիակից օրգաններ եւ հյուսվածքներ կարող են վերցվել նրա հարազատների (ազգականների) համաձայնությամբ՝ սահմանված առաջնահերթությամբ (օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մաս),

- արգելվում է կենդանի կամ դիակային դոնորից վերցված օրգանների եւ հյուսվածքների առուվաճառքը եւ Տայաստանի Տանրապետությունից դրանց արտահանումը (օրենքի 2 եւ 10-րդ հոդվածներ):

Փոխպարվաստման հետ կապված հարաբերությունների կարգավորման վերոհիշյալ սկզբունքների ու միջոցների իրավական բովանդակությունից հետեւում է, որ փոխպարվաստումն անձի կյանքի, բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքների երաշխավորման բացառիկ միջոց է: Այն կոչված է ոչ թե մարդուն ենթարկելու գիտական, բժշկական եւ այլ փորձերի, այլ վերականգնելու ռեցիպիեն-

տի առողջությունը, փրկել կյանքը՝ նրա (կամ նրա օրինական ներկայացուցչի) կամքի հիման վրա, միաժամանակ ապահովելով այդ անձի անձեռնմխելիությունը, ազատ կամասարքահայտության նրա իրավունքը: Ներելաբար, փոխապարվաստման հարաբերությունները կարգավորող վերոնշյալ օրենքի նշված նորմերով սահմանված միջոցներն իրավակարգավորման նպատակի առումով համաչափ են եւ հեփապնդում են սոցիալապես արդարացի, հեփաբար՝ սահմանադրաիրավական նպատակ: Տիմնական խնդիրն այն է, թե ինչպիսի իրավական երաշխիքներ են ստեղծվում այդ սկզբունքային մոտեցումները կյանքի կոչելու համար:

Դիակային դոնորից օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ վերցնելու հեփ կապված հարաբերությունները վիճարկվող նորմում կարգավորվում են օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ վերցնելու վերաբերյալ դոնորի՝ իր կենդանության օրոք արտահայտած կամահայրնության գրավոր արտահայտած անհամաձայնության, սկզբունքով: Մասնավորապես, օրենքի վիճարկվող 7-րդ հոդվածի առաջին մասում օրենսդիրն ամրագրել է, այսպես կոչված՝ «ենթադրյալ համաձայնության» սկզբունքը, համաձայն որի անձի օրգաններն ու հյուսվածքները նրա մահից հեփո կարող են վերցվել փոխապարվաստման նպատակով, քանի դեռ կենդանության օրոք նա չի հայտնել իր անհամաձայնությունը: Իսկ նույն հոդվածի երկրորդ մասում, որոշակի սահմանափակմամբ, ամրագրված է, այսպես կոչված՝ «պոզիտիվ համաձայնության» սկզբունքը, համաձայն որի դիակի՝ որպես դոնոր հանդես գալը պայմանավորված է նրա հարազատների կամահայրնությամբ, եթե անձը կենդանության օրոք չի հսփակեցրել մահից հեփո դոնոր հանդես գալու իր որոշումը:

Այսպիսով, եթե մինչեւ օրենսդրական փոփոխությունը փոխապարվաստման նպատակով դիակային դոնորից օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ կարող էին վերցվել բացառապես նրա նախապես րված գրավոր համաձայնության պայմաններում, ապա օրենսդրական փոփոխություններից հեփո նախատեսվում են երկու պայմաններ. դիակային դոնորից օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ կարող են վերցվել՝

1) եթե անձն իր կենդանության օրոք գրավոր անհամաձայնություն չի հայտնել,

2) եւ եթե րվյալ անձի հարազատները (ազգականները) փոխապարվաստման վերաբերյալ որոշման բացակայության պայմաններում այդ անձի մահից հեփո համաձայնություն են հայտնել:

Սահմանադրական դափարանը գրնում է, որ նոր կարգը մինչեւ օրենսդրական փոփոխությունը գործող կարգի համեմատությամբ ավելի ռիսկային է եւ հնարավոր բացասական դրսետրումների կանխարգելման լրացուցիչ երաշխիքներ է պահանջում: Այդ նպատակով է, որ օրենսդիրը, ի փոփոխումն օրենքի երկրորդ հոդվածի նախկին շարադրանքի, հսփակ նորմ է սահմանել, որ «Արգելվում է կենդանի կամ դիակային դոնորից վերցված օրգանների եւ հյուսվածքների առուվաճառքը»:

Սակայն խնդիրն այն է, թե արդյո՞ք միայն առկա փոփոխությունները բավարար են փոփոխված սկզբունքի հիման վրա օրենքի գործողությունը ՏՏ Սահմանադրության արժեքանական մոտեցումներին համապատասխան երաշխավորելու համար:

6. Մույն գործով վիճարկվող իրավանորմի սահմանադրականության հարցը լուծելիս սահմանադրական դատարանը կարևորում է նաև միջազգային իրավակիրառական պրակտիկայում առկա սկզբունքային մոտեցումները:

Այսպես, ԵՖ Մարդու իրավունքների և բիրտժշկության վերաբերյալ կոնվենցիային կից Մարդու օրգանների և հյուսվածքների փոխապարվաստման վերաբերյալ Լրացուցիչ արձանագրությունում առանձին կարգավորման են ենթարկված դիակային դոնորից փոխապարվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու հետ կապված հարաբերությունները (15-19-րդ հոդվածներ): Նշված դրույթների ուսումնասիրությունը վկայում է, որ դիակային դոնորից փոխապարվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելը կարող է Կեղի ունենալ միայն հետևյալ պայմանների առկայության դեպքում.

1) եթե առկա է համաձայնություն (լիազորում), ըստ որի՝ «Մահացած անձի մարմնից օրգաններն ու հյուսվածքները չեն կարող հեռացվել, եթե օրենքով պահանջվող համաձայնությունն ու լիազորությունը չեն ստացվել: Օրգանների և հյուսվածքների հեռացումը չի կարող Կեղի ունենալ, եթե մահացած անձն առարկել է դրա դեմ»: Եվ ինչպես նշված է վերոհիշյալ արձանագրության բացատրական զեկույցում՝ եթե անձն իր կենդանության օրոք հայտնել է իր ցանկությունը, իր համաձայնությունը փոխապարվաստման նպատակով իր օրգանը (հյուսվածքը) Կալու կամ չԿալու վերաբերյալ, ապա այդ կամքը պետք է հարգվի,

2) եթե մահացած անձի համաձայնությունը կամ անհամաձայնությունը՝ իր մահից հետո իր մարմնից փոխապարվաստման նպատակով օրգաններ և հյուսվածքներ հեռացնելու վերաբերյալ պարզ չէ, ապա պետությունները պետք է հնարավոր դարձնեն ներպետական օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի հիման վրա այդ հարցի լուծումը: Եթե մահացած անձի կամքը բավարար չստիով հստակ չէ, ապա օրգանների և հյուսվածքների փոխապարվաստման համար պարականություն կրողները պետք է փորձեն ստանալ մահացած անձի հարազատների համաձայնությունը: Եթե ազգային օրենսդրությունն այլ բան չի նախատեսում, ապա մահացած անձի հարազատների կողմից Կրվող համաձայնությունը պետք է հիմնվի ոչ թե նրանց անձնական նախընտրության, այլ մահացած անձի արտահայտած կամ ենթադրյալ ցանկության վրա:

ԵՄ Պառլամենտի և Խորհրդի կողմից 2004թ. մարտի 31-ին ընդունված՝ Մարդու օրգանների և հյուսվածքների նվիրաբերման, Կրամադրման, թեստավորման, պահպանման և փոխապարվաստման իրականացման որակի և անվտանգության չափանիշների վերաբերյալ թիվ 2004/23/ԵՄ դեկավար որոշման 13-րդ հոդվածի համաձայն մարդու օրգանների և հյուսվածքների Կրամադրումը պետք է թույլատրվի միայն այն բանից հետո, երբ բավարարվել են ԵՄ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պահանջները համաձայնության և լիազորման վերաբերյալ: Եվ ինչպես նշված է այդ որոշման մեկնաբանություններում՝ մահացած անձի մարմնից օրգաններ հեռացնելու հետ կապված հարաբերությունների կարգավորման բնագավառում առաջադրվում է երկու սկզբունք.

1) «ակնհայտ համաձայնություն» («պոզիտիվ համաձայնություն»), որի դեպքում անձը մահից առաջ հստակ արտահայտել է իր համաձայնությունը նման հեռացման

վերաբերյալ կամ մահացած անձի ընդհանրիկ համապատասխան անդամը համաձայնություն է հայտնել, եթե մահացած անձը չի հստակեցրել իր որոշումը,

2) «ենթադրյալ համաձայնություն», համաձայն որի ենթադրվում է, որ մահացած անձի մարմնից փոխապարվասպման նպատակով օրգաններ (հյուսվածքներ) կարող են հեռացվել, եթե րվյալ անձն իր կենդանության օրոք չի հայտնել իր առարկությունը կամ անհամաձայնությունը, կամ նրա հարազատները չեն հայտնել, որ անձն առարկել է իր մարմնից օրգաններ հեռացնելու դեմ:

Փոխապարվասպման նպատակով դիակային դոնորից օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ վերցնելու վերաբերյալ օտարերկրյա պետությունների օրենսդրության ուսումնասիրությունը նույնպես վկայում է, որ մահացած անձի մարմնից օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ հեռացնելու հետ կապված համաձայնության եւ լիազորման վերաբերյալ ընդհանուր առմամբ առկա են վերոհիշյալ մոտեցումները:

Իրավակարգավորման այդ սկզբունքներին համապատասխան է ձեւավորվել նաեւ օտարերկրյա դատական պրակտիկան, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում, Շվեյցարիայում, համաձայն որոնց.

- մարդու օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխապարվասպելը հանդիսանում է քաղաքացու կյանքը փրկելու եւ առողջությունը վերականգնելու միջոց եւ կարող է իրականացվել հումանիզմի այն սկզբունքներով, որպիսիք հռչակված են միջազգային հանրության կողմից, պայմանավորված չեն գիտության եւ հանրության շահերով (ՌԴ սահմանադրական դատարանի 2003թ. դեկտեմբերի 4-ի թիվ 459-0 որոշումից),

- եթե մահացած անձը չի հստակեցրել իր ցանկությունն օրգանների եւ հյուսվածքների հեռացման դեմ, ապա նրա մերձավոր ազգականը կարող է առարկել նման գործընթացի դեմ, հետեւաբար՝ այդպիսի օրենքը ծառայում է հասարակության շահերին, խրախուսում է օրգանների նվիրաբերումը եւ կանխում ցանկացած չարաշահում, հաշվի առնելով այս բոլորը՝ օրենքը կարող է կիրառվել սահմանադրությանը համապատասխան ձեւով (ՌուՖ Նիմերբերգերն ընդդեմ Ժնեւի կանտոնի խորհրդի գործով Շվեյցարիայի դաշնային դատարանի 16.04.1997թ. IP.354/1996 գործով):

Միջազգային պրակտիկան ակնհայտ վկայում է, որ երկու նշված մոտեցումներն էլ կյանքի իրավունք ունեն, խնդիրն այն է, թե ինչպես են դրանք իրացվում եւ օրենսդրորեն երաշխավորվում՝ րվյալ իրավահարաբերություններում հնարավոր բացասական դրսեւորումները կանխելու անհրաժեշտությունը նկատի ունենալով:

Նաշվի առնելով միջազգային առկա փորձը՝ ՄՍ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխապարվասպելու մասին» ՄՍ օրենքի ներկա իրավակարգավորման պայմաններում Նայաստանում նույնպես անձը երաշխավորված հնարավորություն ունի անարգել արտահայտել իր կամքը՝ կապված իր մահից հետո դիակային դոնոր հանդես գալու խնդրի վերաբերյալ, որով երաշխավորվում է ՄՍ Սահմանադրության 3, 14, 16 եւ 17-րդ հոդվածներով նախատեսված նրա իրավունքների ու ազատությունների իրացվելիությունը, իսկ եթե այդպիսի որոշումը որեւէ պարճառով առկա (հստակ) չէ, ապա օրենքի վիճարկվող նորմերն արգելում են դիակի օրգանների, հյուսվածքների փոխապարվասպում՝ առանց նրա հարազատների (ազգա-

կանների) համաձայնության, որը նույնպես հեղափոխում է սոցիալապես արդարացի նպատակ:

Միաժամանակ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ մեր երկրում օրենքով նախատեսված առկա լուծումները եւ ենթաօրենսդրական իրավակարգավորումները, որպես մեկ միասնական համակարգ, թերի են ու ոչ լիարժեք:

7. Անդրադառնալով վիճարկվող նորմի եւ վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված այլ նորմերի իրավակարգավորման շրջանակներում բժշկական օգնության եւ սպասարկման՝ անձի սահմանադրական իրավունքի (ՏՄ Սահմ. 38-րդ հոդված) իրացման ապահովման, ինչպես նաեւ բնակչության առողջության պահպանման ծրագրեր եւ արդյունավետ ու **մատչելի բժշկական սպասարկման պայմաններ** ապահովելու պետության պարտականության՝ որպես սահմանադրաիրավական նպատակի իրացվելիության խնդրին եւ գնահատելով այդ նորմերի կիրառման պրակտիկան՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում առկա են հետեւյալ հիմնախնդիրները.

ա) չի ձեւավորվել այդ հարաբերությունների իրավակարգավորման այնպիսի ամբողջական համակարգ (օրենքի եւ ենթաօրենսդրական ակտերի միջոցով), որը կերաշխավորի՝ առաջադրված նպատակի անթերի իրացումը եւ մարդու արժանապատվության եւ հիմնական իրավունքների հարգումն ու պաշտպանությունը, կբացառի կոռուպցիոն ռիսկը,

բ) օրենքն ուժի մեջ է մտել առանց դրա գործողության անհրաժեշտ ու բավարար իրավական երաշխիքների ապահովման,

գ) առողջապահական պետական նպատակային ծրագրերում մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ պարվասպելը չներառելու պարագայում շարունակում է առկա մնալ կոռուպցիոն մեծ ռիսկի գործոնը,

դ) դիակալային դոնորներից փոխապարվասպումն ենթակա օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ վերցնելու հստակ կանոնների բացակայությունը, այդ գործողությունների թափանցիկ ու վերահսկելի կազմակերպման կառուցակարգերի բացակայությունը հասարակական անվտանգության ու արդարացված մրահոգությունների պարտա են դառնում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ ՏՄ կառավարությունը չկատարելով ՏՄ Սահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ մասի, «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխապարվասպելու մասին» ՏՄ օրենքի, ինչպես նաեւ ՏՄ կառավարության 2004թ. ապրիլի 8-ի՝ «Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշման, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 541-Ն որոշման պահանջները, 2002 թվականի ապրիլի 16-ից մինչ օրս չի ընդունել քննության առարկա օրենքով իրեն պարվիրակված բոլոր որոշումները՝ օրենքի կիրարկումն ապահովելու համար: Անցած ութ փարիների ընթացքում փոխվել օրենքի գործողության համար անհրա-

ժեշտ է Բավարար ենթաօրենսդրական երաշխիքներ չեն ստեղծվել, մասնավորապես, ՏՏ կառավարության կողմից դեռևս չեն սահմանվել.

- օրգանների և հյուսվածքների դոնորների և ռեցիպիենտների ռեեստրի գործունեության, տեղեկությունների գրանցման և օգտագործման կարգը (օրենքի 2.1-րդ հոդված), այդ թվում՝ ՏՏ վարչապետի 2009թ. մայիսի 18-ի թիվ 397-Ն որոշումից բխող,

- արհեստական և կենդանիներից վերցված օրգանների ու հյուսվածքների փոխապարվաստման կարգը, պայմանները և սահմանափակումները (**օրենքի 3-րդ հոդված**),

- փոխապարվաստման օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու, մշակելու կանոնները, ինչպես նաև փոխապարվաստումն իրականացնելու կարգը (**օրենքի 4-րդ հոդված**),

- դիակից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու թույլտվության կարգը և պայմանները:

Օրենքով հստակեցված չեն նաև փոխապարվաստման օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնող, մշակող, փոխապարվաստում թույլատրող և իրականացնող բժշկական հաստատությունների **լիցենզավորման իրավական սկզբունքները**, ինչպես նաև փոխապարվաստման՝ որպես բժշկական սպասարկման, **մաքսիմալության ապահովման պրեսանկյունից** այդ գործընթացը ֆինանսավորելու (փոխապարվաստման դիմաց հատուցելու, պետական առողջապահական ծրագրերի շրջանակներում ֆինանսավորելու) հիմնական պայմանները, բացառությամբ այն դեպքերի, որոնք առնչվում են վիրահատության հետ կապված բարդություններին (օրենքի 12-րդ հոդվածի «բ» կետ),

«Մարդու օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխապարվաստելու մասին» ՏՏ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2009թ. մարտի 19-ին ընդունված օրենքով նախատեսվեցին լրացուցիչ իրավապայմաններ՝ արգելելու կենդանի կամ դիակային դոնորից վերցված օրգանների և հյուսվածքների առուվաճառքը, ապահովելու փոխապարվաստման ոլորտում տեղեկատվական միասնական համակարգի ու դրա օգտագործման սկզբունքների ներդրումը, սակայն դրան համապատասխան իրավական և կառուցակարգային համակարգեր չստեղծվեցին ապահովելու անհրաժեշտ է երաշխավորված վերահսկողություն փոխապարվաստման որպես բժշկական սպասարկման ոլորտում պետության սահմանադրական խնդիրների կատարման ապահովման նկատմամբ, որոնց լուծումն օրենքի վերոհիշյալ փոփոխությունների ընդունման կապակցությամբ չի արտացոլվել նաև առողջապահական պետական նպատակային ծրագրերում:

ՏՏ-ում փոխապարվաստման պրակտիկայի ուսումնասիրությունը նաև վկայում է, որ այդ բնագավառի իրավակարգավորումը, մասնավորապես՝ ՏՏ կառավարության 2007թ. ապրիլի 26-ի թիվ 502-Ն որոշմամբ հաստատված ցանկը, անհրաժեշտ է համապատասխանեցնել բժշկական կոնկրետ հաստատություններում փոխապարվաստման իրական գիտատեխնոլոգիական հնարավորություններին՝ ապահովելով այդ բնագավառում բնակչության բժշկական երաշխավորված սպասարկման կազմակերպումն այն ընդհանուր սկզբունքներով, որպիսիք, ի կատարումն ՏՏ Սահմանադրության 38-րդ, 48-րդ (4-րդ կետ) հոդվածների դրույթների, ամրագրված են «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՏՏ օրենքում: Կառավարության հիշյալ որոշումը համահունչ չէ

քննության առարկա օրենքի պահանջին: Այն դեպքում, երբ օրենքով արգելվում է Նայասպահանից դոնորական օրգանների ու հյուսվածքների արտահանումը, կառավարությունն իր այդ որոշմամբ սահմանել է թվով փասնչորս օրգանների ցանկ, երբ դրանցից միայն երկուսի գծով է Նայասպահանում փոխպարվասպրում իրականացվում: Այս առումով ՆՆ կառավարության 2007թ. ապրիլի 26-ի թիվ 502-Ն որոշմամբ հաստատված ցանկն օրենքի իրավակարգավորման սկզբունքներից չի բխում:

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա օրենքի եւ դրա կիրարկումն ապահովող իրավակարգավորման վերոհիշյալ պարպադիր պայմանների բացակայությամբ լիարժեք չեն կարող երաշխավորվել մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպարվասպրելու եւ դրա հետ կապված բժշկական օգնության ու սպասարկման անձի սահմանադրական իրավունքի (ՆՆ Սահմ. 38-րդ հոդված) իրացման **մարզելիությունը**, հետեւաբար՝ բնակչության առողջության պահպանման պետական ծրագրերի արդյունավետությունը:

Բացի դրանից, նկատի ունենալով, որ «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպարվասպրելու մասին» ՆՆ օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված՝ օրենքն հրապարակումից հարյուր ութսուն օր հետո այն պաշտոնական ուժի մեջ մտնելու մասին դրույթը գործնականում որեւէ իրավական հետեւանք չի ունեցել եւ չի երաշխավորել օրենքի գործողության համար անհրաժեշտ իրավակարգավորում, ՆՆ սահմանադրական դատարանը, ՆՆ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության հիմնարար սկզբունքներից ելնելով, գտնում է, որ սույն օրենքը չի կարող կիրարկվել առանց դրանով իսկ նախատեսված ենթաօրենսդրական ակտերի ամբողջ փաթեթը «Իրավական ակտերի մասին» ՆՆ օրենքի պահանջներին ու սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտված իրավական դիրքորոշումներին համապատասխան մշակելու, նախկինում ընդունված որոշումները վերանայելու եւ գործողության մեջ դնելու:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպահանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպահանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 68 հոդվածներով, Նայասպահանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպարվասպրելու մասին» ՆՆ օրենքի 7-րդ հոդվածն այն մասով, որով առնչվում է Նայասպահանում չիրականացվող փոխպարվասպրման հանգամանքներում դիակային դոնորից օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ վերցնելուն, ճանաչել Նայասպահանի Նանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասին եւ 14-րդ հոդվածին հակասող եւ անվավեր:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի հիման վրա՝ վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպարվասպրելու մասին» ՆՆ օրենքի 3-

րդ հողվածի 1-ին մասը, 4-րդ և 9-րդ հողվածները համապարասխանում են Նայասարանի Նանրապեղության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

3. Նայասարանի Նանրապեղության Սահմանադրության 102-րդ հողվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

14 սեպտեմբերի 2010 թվականի
ՄԴՈ-913

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՆՏ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 228-ՐԴ ՆՈԴՎԱԾԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒ- ԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԻԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երևան

14 սեպտեմբերի 2010թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Նովհաննիսյանի (զեկուցող), Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝

ՆՏ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչ Ա. Խաչատրյանի,

գործով որպես պապասխանող ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՏ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

ընթաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՆՏ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Նայասպանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի երկրորդ մասի՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՆՏ մարդու իրավունքների պաշտպանի՝ 02.04.2010թ. ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պապասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Նայասպանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՆՃ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի 17-ին, ՆՃ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

«Նայասարանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 28.11.2007թ. ՆՕ-277-Ն ՆՃ օրենքի 75-րդ հոդվածով օրենսգրքի՝ «Վարույթը վճռաբեկ դատարանում» վերաբառությամբ հինգերորդ բաժինը շարադրվել է նոր խմբագրությամբ:

Օրենսգրքի՝ «Դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը» վերաբառությամբ 228-րդ հոդվածի երկրորդ մասը, որը զեպտեղված է օրենսգրքի հինգերորդ բաժնում, սահմանում է. «Վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

- 1) դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով.
- 2) դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որեւէ մեկի բացակայությամբ, որը պարզաձև ձևով չի փեղեկացվել նիստի ժամանակի և վայրի մասին.
- 3) վճիռը ստորագրել է ոչ այն դատավորը, որը կայացրել է այն.
- 4) վճիռը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ.
- 5) գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը»:

2. Դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ դիմողը բարձրացնում է իրավակարգավորման բացի խնդիր: Մասնավորապես, դիմողի կարծիքով, օրենսգրքի վիճարկվող դրույթներով սահմանված՝ վճռի բեկանման հիմքերի շարքում նախատեսված չէ այն հիմքը, երբ դատարանը վճիռ է կայացրել գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ: Վերը նշված փաստարկի հիման վրա դիմողը գտնում է, որ վճռի բեկանման հիմքերի շարքում վերոնշյալ հիմքը չնախատեսելը չի ապահովում գործին մասնակից չդարձած անձանց՝ ՆՃ Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտպանության իրավունքի իրականացումը: Ըստ այդմ էլ, դիմողը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող դրույթները հակասում են ՆՃ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին և 19-րդ հոդվածի 1-ին մասին:

3. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ վիճարկվող օրինադրույթն անհրաժեշտ է դիպարկել «ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2007թ. նոյեմբերի 28-ի ՆՕ-277 ՆՃ օրենքով կատարված փոփոխությունների և քաղաքացիական դատավարությունում վճռաբեկությունը կարգավորող իրավանորմերի համադրությամբ՝ հաշվի առնելով վճռաբեկ դատարանի՝ ՆՃ Սահմանադրությամբ նախատեսված գործառնական փեղը և դերը: ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 228-րդ հոդվածի 1-ին մասը բավարար իրավական հիմք են ստեղծում երաշխավորելու համար վճռաբեկ դատարանի կողմից՝ գործին մասնակից չդարձած անձի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ դատական ակտի

դեմ վճռաբեկ բողոքի ընդունումը եւ բողոքարկվող դատական ակտի բեկանումը: Դատական պրակտիկան եւս ընթանում է այս ճանապարհով:

Ըստ պատասխանողի՝ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ վճռաբեկ դատարանի՝ գործող սահմանադրական կարգավիճակի պայմաններում երաշխավորված է գործին մասնակից չդարձած անձանց դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունը:

4. Սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները դիտարկել օրենսգրքի մյուս դրույթների համապետքսբարձր՝ հաշվի առնելով օրենսգրքի նախկին իրավակարգավորումը:

Մինչեւ «Նայաստրանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 28.11.2007թ. ՆՕ-277-Ն ՏՏ օրենքով օրենսգրքում կատարված փոփոխությունները վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակը եւ ստորադաս դատարանի վճռի բեկանման հիմքերը սահմանված էին ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխանաբար՝ 223 եւ 227-րդ հոդվածներով: 223-րդ հոդվածը սահմանելով վճռաբեկ բողոք բերելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակը՝ դրանում ներառել էր նաեւ գործին մասնակից չդարձած անձանց, որոնց իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ վճիռ է կայացվել: 227-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկ դատարան բողոքարկվող դատական ակտի պարտադիր բեկանման հիմք, ի թիվս այլնի, հանդիսանում էր **գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ դատարանի կողմից վճռի կայացման փաստը:**

Վերոհիշյալ դրույթների համեմատական վերլուծությունը վկայում է, որ մինչեւ «Նայաստրանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 28.11.2007թ. ՆՕ-277-Ն ՏՏ օրենքի ընդունումը գործող իրավակարգավորումը՝ գործին մասնակից չդարձած անձանց վերաբերյալ, ի թիվս այլնի, ամրագրել էր միմյանց հետ փոխկապակցված երկու դրույթ. դրույթներից մեկով վճռաբեկ բողոք բերելու իրավունք էր վերապահվում գործին մասնակից չդարձած անձանց, մյուս դրույթով նախատեսվում էր, որ վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե դատարանը վճիռ է կայացրել գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ:

«Նայաստրանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 28.11.2007թ. ՆՕ-277-Ն ՏՏ օրենքի հիման վրա կատարված փոփոխություններից հետո օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք» վերաբերող 223-րդ հոդվածը գործին մասնակից չդարձած անձանց վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակում չի ներառել: Նույն օրենքով փոփոխության ենթարկվեցին նաեւ վճռաբեկ բողոքի հիման վրա բողոքարկվող դատական ակտի պարտադիր բեկանման հիմքերը՝ չներառելով այն դեպ-

քը, երբ դատարանը վճիռ է կայացրել գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

Չնայած նրան, որ օրենսգրքի վերոհիշյալ 223-րդ հոդվածում գործին մասնակից չդարձած անձինք մատնանշված չեն որպես վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք, այնուամենայնիվ, նշված անձանց վճռաբեկ բողոք բերելու իրավունքն ամրագրված է օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոք բերելու ժամկետները» վերտառությամբ 229-րդ հոդվածի 3-րդ կետում, որի համաձայն՝ գործին մասնակից չդարձած այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, իրավունք ունեն վճռաբեկ բողոք բերելու սկսած այն օրվանից՝ երեք ամսվա ընթացքում, երբ իմացել են կամ կարող էին իմանալ նման դատական ակտի կայացման մասին:

Օրենսգրքի 223, 228-րդ հոդվածների և 229-րդ հոդվածի 3-րդ կետի ուսումնասիրությունից բխում է, որ գործին մասնակից չդարձած անձանց՝ դատարանի մատչելիության իրավունքն ամրագրված է ոչ թե օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք» վերտառությամբ 223-րդ հոդվածում, այլ «Վճռաբեկ բողոք բերելու ժամկետները» վերտառությամբ 229-րդ հոդվածի 3-րդ կետում, իսկ օրենսգրքի վիճարկվող դրույթներով սահմանված՝ վճռի բեկանման հիմքերի շարքում նախատեսված չէ այն հիմքը, երբ դատարանը վճիռ է կայացրել գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

5. Սահմանադրական դատարանն իր՝ 2010թ. ապրիլի 20-ի աշխատակարգային որոշմամբ ՆՆ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա սույն գործը քննության է ընդունել՝ ելնելով ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի կիրառման առնչությամբ ձեւավորված դատական պրակտիկայի վրա՝ «Նայաստարանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 28.11.2007թ. ՆՕ-277-Ն ՆՆ օրենքի հիման վրա ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարված վերոհիշյալ փոփոխությունների ազդեցությունն ուսումնասիրելու անհրաժեշտության նկատառումներից: Նման ուսումնասիրությունը խնդիր ունի պարզելու, թե արդյո՞ք վերոհիշյալ օրենսդրական փոփոխությունները, մասնավորապես, խնդրո առարկա հիմքը դատական ակտի պարտադիր բեկանման հիմքերի շարքից բացառելը հանգեցրել է այնպիսի իրավակիրառ պրակտիկայի ձեւավորմանը, որի պայմաններում խախտվում է գործին մասնակից չդարձած անձի դատական պաշտպանության իրավունքը, և արդյո՞ք օրենսդրական նշված փոփոխության արդյունքում առաջացել է օրենսդրական բաց, որն սրելոծում է անձի դատական պաշտպանության իրավունքի խախտման վրանգ կամ վերացում է անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունը:

6. Գործը քննության նախապարաստելու ընթացքում սահմանադրական դատարանի պահանջով Նայաստարանի Նանրապետության դատական դեպարտամենտի՝ 29.07.2010թ. թիվ ԴԴ-1-Ե-5271 գրությամբ սահմանադրական դատարան են ներկայացվել

սույն գործով քննության առարկայի վերաբերյալ դատական պրակտիկան ամփոփող տեղեկավարություն եւ ՆՃ վճռաբեկ դատարանի համապատասխան դատական ակտերը:

«ՆՃ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2007թ. նոյեմբերի 28-ի ՆՕ-227-Ն ՆՃ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ գործին մասնակից չդարձած անձանց կողմից ՆՃ վճռաբեկ դատարան ներկայացված վճռաբեկ բողոքների քննության արդյունքում կայացված՝ ՆՃ վճռաբեկ դատարանի ըստ էության որոշումների եւ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումների ուսումնասիրության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրական փոփոխություններից հետո թեկուզեւ գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ վճիռ կայացնելն այլեւս վճռի պարտադիր բեկանման նորմափոփոխում հիմք չէ, այնուամենայնիվ, դատական պրակտիկայի արդյունքները վկայում են այն մասին, որ բոլոր այն դեպքերում, երբ ՆՃ վճռաբեկ դատարանը պարզել է, որ բողոքարկվող վճիռը շոշափում է վճռաբեկ բողոք ներկայացրած՝ գործին մասնակից չդարձած անձի իրավունքները կամ պարտականությունները, բեկանել է Կրկյալ վճիռը՝ դատարանի կողմից գործին մասնակից չդարձած անձանց իրավունքները կամ պարտականությունները շոշափող վճիռ կայացնելը դիտարկելով որպես **վճռի պարտադիր բեկանման հիմք**: Ընդ որում, նման դիրքորոշման համար իրավական հիմք են հանդիսացել ՆՃ Սահմանադրության 19-րդ հոդվածը եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ - հոդվածը, որոնք **անմիջականորեն կիրառվել են** ՆՃ վճռաբեկ դատարանի կողմից, եւ որոնց հիման վրա ՆՃ վճռաբեկ դատարանն արձանագրել է արդար դատաքննության, կողմերի իրավահավասարության եւ մրցակցության դատավարական սկզբունքների խախտումը: Նման իրավակիրառական պրակտիկան վկայում է, որ օրենսդրական փոփոխությունների արդյունքում օրենսգրքի՝ վճռի բեկանման պարտադիր հիմքերի ցանկից գործին մասնակից չդարձած անձանց առնչվող դրույթը բացառելը չի խոչընդոտում գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանությանը:

7. Օրենսդրական բացի սահմանադրականության հարց քննելիս սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե Կրկյալ օրենսդրական բացը հանդիսանում է իրավակարգավորման թերությունը, թե՛ իրավաստեղծ մարմինը նման իրավակարգավորում սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը եւ ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձեւավորումը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2010թ. փետրվարի 5-ի ՄԴՌ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի եւ օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է «Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի եւ սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների փոխանցարման սկզբունքի համարեքսպում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր

ղեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գործող կոնկրետ հանգամանքների առնչությամբ **նորմափիվ պատվիրանի բացակայությամբ**, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Մահմանադրական դափարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է փվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

Չարգացնելով իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դափարանը գրնում է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դափարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձեւավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Նակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դափարանի քննությանը:

8. «Մահմանադրական դափարանի մասին» ՆՆ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սահմանադրական դափարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին որոշում է ընդունում, եթե դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն սահմանադրական դափարանին: «Մահմանադրական դափարանի մասին» ՆՆ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Մահմանադրական դափարանը կարճում է գործի վարույթը ... գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»:

Դափական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքներով սահմանադրական դափարանն արձանագրում է, որ կոնկրետ դեպքում օրենսդրական փոփոխությունների արդյունքում իրավակարգավորման ենթադրյալ բացի առկայությունը պայմանավորված չէ օրենքի նորմի անորոշությամբ, առկա է իրավակարգավորման հսկողություն՝ մասնավորապես նկատի ունենալով նաեւ ՆՆ Մահմանադրության 19-րդ հոդվածի եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջները եւ Նայաստանում ձեւավորված իրավակիրառական պրակտիկան: Ընդ որում, ՆՆ վճռաբեկ դափարանն օրենսդրության միապետակ կիրառությունն ապահովելու նպատակով քննության առարկա հարցի վերաբերյալ արտահայտել է միասնական եւ ստորադաս դափարանների կողմից պարտադիր կատարման ենթակա իրավական դիրքորոշում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստանի Նանրապետության Մահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Մահմանադրական դափարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-

ին կերի, 60-րդ հոդվածի 1-ին կերի պահանջներով, Նայասփանի Նանրապեփության սահմանադրական դափարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «ՆՆ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Նայասփանի Նանրապեփության քաղաքացիական դափարափարության օրենսգրքի 228-րդ հոդվածի երկրորդ մասի՝ Նայասփանի Նանրապեփության Սահմանադրությանը համապափասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Նայասփանի Նանրապեփության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մփնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

14 սեպտեմբերի 2010 թվականի

ՄԴՈ-914

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻ ՍՎԵՏԱ ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆՏ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1217-ՐԴ ՆՈԴՎԱԾԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

18 սեպտեմբերի 2010թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դապարանը՝ կազմով.

Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Նովիաննիսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող Ս. Նարությունյանի, գործով որպես պապասխանող կողմ ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՏ ԱԺ նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՆՏ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դապարանի մասին» ՆՏ օրենքի 19, 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Սվետլա Նարությունյանի դիմումի հիման վրա՝ ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղ. Ս. Նարությունյանի՝ 23.02.2010թ. ՆՏ սահմանադրական դապարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, կողմերի գրավոր բացարարությունները, որպես փորձագետ ներգրավված՝ իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Տ. Բարսեղյանի փորձագիտական եզրակացությունը, հետազոտելով ՆՏ քաղաքացիական օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դապարանը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. ՆՏ քաղաքացիական օրենսգիրքն ընդունվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին, Նայասարանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին և ՆՏ Ազգային ժողովի կողմից 17.06.1998թ. ընդունված՝ «Նայասարանի Նանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՆՏ օրենքի համաձայն, ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի վիճարկվող հոդվածը՝ «Երկրորդ հերթի ժառանգներ» վերաբառությամբ, սահմանում է.

«Երկրորդ հերթի ժառանգներն են ժառանգատուի հարազատ եղբայրները և քույրերը: Ժառանգատուի եղբայրների և քույրերի երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին: Դիմողը հանդիսանում է ժառանգատու Ա. Սողոմոնյանի չորրորդ հերթի ժառանգ: Նաշվի առնելով այն հանգամանքը, որ ժառանգատուն առաջին հերթի ժառանգներ չունի՝ Երեսանի Կենտրոն նոտարական գրասենյակը որպես ժառանգատուի երկրորդ հերթի ժառանգ է ճանաչել նրա համամայր քրոջը: Դիմող Ս. Նարությունյանը դիմել է ՆՏ վարչական դատարան՝ նոտարական գրասենյակի կողմից արված ժառանգության իրավունքի վկայագրերի առոչինչ լինելը ճանաչելու և ժառանգության իրավունքի վկայագրեր փախուստ պարտավորեցնելու վերաբերյալ հայցապահանջներով՝ այն հիմնավորմամբ, որ ժառանգատուի համամայր քույրը չի կարող հանդես գալ որպես երկրորդ հերթի ժառանգ՝ ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածի իմաստով: ՆՏ վարչական դատարանն իր՝ 23.04.2009թ. վճռով հայցը մերժել է: Վարչական դատարանն իր վճռի պարճառաբանական մասում վկայակոչել է ՆՏ վճռաբեկ դատարանի 13.02.2009թ. նախադեպային նշանակության որոշման մեջ առկա՝ ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածի մեկնաբանությունը, ըստ որի՝ այդ նորմով սահմանված՝ երկրորդ հերթի ժառանգների մեջ մտնում են նաև ոչ հարազատ (համամայր և համահայր) եղբայրներն ու քույրերը:

3. Դիմողը, որպես օրենսգրքի վիճարկվող՝ 1217-րդ հոդվածի հակասահմանադրականության հիմնական փաստարկ, մատնանշում է այդ նորմի անհամապատասխանությունն իրավական որոշակիության սկզբունքին: Դիմողը գտնում է՝ սահմանելով միայն, որ «Երկրորդ հերթի ժառանգներն են ժառանգատուի հարազատ եղբայրները և քույրերը»՝ ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածով սահմանված դրույթը չի հստակեցնում նշված հարաբերությունների կիրառելիության սահմանները և իր ոչ բավարար ճշգրտության պարճառով իրավակիրառողին հնարավորություն չի ընձեռում առաջնորդվել այդ նորմի կիրառելիության իրավաչափության միանշանակ և անվիճելի չափանիշներով, ինչն էլ հիմք է ծառայել, որպեսզի դատարանը նորմի բովանդակությունը բացահայտելու համար հղում կատարի մեկ այլ իրավական ակտի՝ ՆՏ ընդհանրական օրենսգրքին՝ գույքային հարաբերությունները մեկնաբանելով ամուսնաընդհանրական հա-

րաբերությունների սկզբունքների եւ անձանց ազգակցական կապի ընկալման Կեսանկյունից: Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթի անորոշությունը թույլ է տրվել ՆՏ վճռաբեկ դատարանին Կրակ նշված նորմի այնպիսի մեկնաբանություն, որը հանգեցրել է իր՝ ժառանգություն սրանալու իրավունքի, հետեւաբար՝ նաեւ ՆՏ Սահմանադրության 8 եւ 31-րդ հոդվածներով սահմանված սեփականության իրավունքի խախտմանը:

4. Պատասխանողը գտնում է, որ ըստ օրենքի ժառանգների հերթականությունը, ինչպես նաեւ կոնկրետ հերթի ժառանգների սահմանումը (այդ թվում ժառանգների շրջանակի ավելացումը կամ սահմանափակումը) որեւէ պարագայում չի կարող դիտվել որպես ՆՏ Սահմանադրության 8-րդ հոդվածով նախատեսված սեփականության կամ 31-րդ հոդվածով երաշխավորված՝ իր սեփականությունը կրակելու իրավունքի խախտում, քանի որ օրենսդրությամբ երաշխավորված է կենդանության օրոք կրակի միջոցով իր սեփականության ճակատագիրը որոշելու քաղաքացու իրավունքը: Ներկայացված դիմումում դիմողն ըստ էության վիճարկվող դրույթի հակասահմանադրականության որեւէ հիմնավորում չի ներկայացրել: Դիմողը ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց՝ ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության եւ կիրառման արդյունքում ընդունված դատական ակտերի օրինականության հարց: Դիմողն ըստ էության ներկայացրել է վիճարկվող իրավադրույթի սեփական, կամայական, պաշտոնական (դատական) մեկնաբանությունից փարբերվող մեկնաբանություն, չի ներկայացրել ՆՏ Սահմանադրության 8-րդ եւ 31-րդ հոդվածներին դրա հակասության որեւէ հիմնավորում:

Պատասխանողը նաեւ եզրակացնում է, որ եղբայրների ու քույրերի հարազատ կամ համահայր կամ համամայր լինելը ժառանգական իրավահարաբերություններում իրավաբանական նշանակություն չպետք է ունենա:

Պատասխանող կողմ ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովն իր բացառություններում սահմանադրական դատարանին Կրեղեկացրել է նաեւ, որ Ազգային ժողովում շրջանառության մեջ է դրվել «Նայասարանի Նանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՆՏ օրենքի նախագիծը, որի համաձայն՝ երկրորդ հերթի ժառանգներ են նախատեսվում ճանաչել «...ժառանգատուի հարազատ, համահայր կամ համամայր եղբայրները եւ քույրերը»:

5. Սահմանադրական դատարանի 22.06.2010թ. ՍԴԱՌ-69 աշխարակարգային որոշմամբ որպես փորձագետ ներգրավված՝ ԵՊՆ իրավաբանական ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.դ., պրոֆեսոր Տարիել Բարսեղյանի ներկայացրած փորձագիտական եզրակացության համաձայն՝ ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածը չի բխում ժառանգման իրավունքի էությունից եւ դոկտրինայում ընդունված մոտեցումներից, ինչպես նաեւ հաշվի չի առնում հայ ժառանգման իրավունքի պարամությունը: Փորձագետը եզրահանգում է, որ համամայր եւ համահայր քույրերին ու եղբայրներին ըստ օրենքի ժառանգների շրջանակից բացառելիս միեւնույն կարեգորիային

պարկանող անձանց իրավունքների նկատմամբ ցուցաբերվում է փարբերակված մոլե-
ցում:

6. ՄՍ սահմանադրական դատարանը կարելի է համարում վեճի առարկա օրի-
նադրույթի սահմանադրականության հարցի լուծման շրջանակներում պարզել «հարա-
զար քույր եւ եղբայր» եւ «ոչ հարազար (համահայր կամ համամայր) քույր եւ եղբայր»
եզրույթների սահմանադրաիրավական ընդհանրություններն ու փարբերությունները:

ՄՍ գործող օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ ազգակցական
հարաբերությունների համարեքսպում այդ հասկացությունները ներառվում են միեւնույն
խմբում եւ դիտարկվում են որպէս մերձավոր հարազարներ: Օրինակ, ՄՍ ընտանեկան օ-
րենսգրքի 11-րդ հոդվածի բ) կէտով սահմանվում է, որ արգելվում է ամուսնություն կնքել
«**մերձավոր ազգականների** (ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականների՝ ծնողնե-
րի ու զավակների, պապի, փափի ու թոռների, ինչպէս նաեւ **հարազար եւ համահայր
կամ համամայր եղբայրների ու քույրերի**, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր եւ մորեղ-
բոր զավակների) միջեւ»:

Բացի դրանից, ՄՍ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 39 եւ
40-րդ կէտերում փրվում են հասկացութային հետեւյալ կոնկրետ ձեւակերպումները. «39)
ազգականներ՝ ազգակցական կապի մեջ գտնվող եւ մինչեւ նախապապը կամ նախա-
փապն ընդհանուր նախնիներ ունեցող անձինք:

40) **մերձավոր ազգականներ՝** ծնողները, զավակները, որդեգրողները, որդեգր-
վածները, **հարազար եւ ոչ հարազար (համահայր կամ համամայր)** եղբայրները եւ
քույրերը, պապը, փապը, թոռները, ինչպէս նաեւ ամուսինը եւ ամուսնու ծնողները, վեր-
ջիններիս համար՝ փեսան եւ հարսը»:

ՄՍ օրենսդրության համալիր ուսումնասիրությունը վկայում է նաեւ, որ ՄՍ գործող
փարբեր իրավական ակտերում փեղ են գտնվել հետեւյալ երեք փարբեր հասկացություննե-
րը. «**քույրեր եւ եղբայրներ**», «**հարազար քույրեր եւ եղբայրներ**» եւ «**ոչ հարա-
զար (համամայր կամ համահայր) քույրեր եւ եղբայրներ**»:

Այսպէս, «**քույրեր եւ եղբայրներ**» ընդհանրական հասկացությունը (որն ըստ
էության ներառում է ինչպէս հարազար, այնպէս էլ ոչ հարազար (համամայր կամ հա-
մահայր) քույրերին եւ եղբայրներին) փեղ է գտնվել ՄՍ քաղաքացիական օրենսգրքում
(հոդվ. 1219), «Քաղաքացիական ծառայության մասին» (հոդվ. 24), «Օրարերկրացիների
մասին» (հոդվածներ 8, 15), «Քաղաքացիական կացության ակտերի մասին» (հոդվ.
74.1), «Նայասպանի փրկարար ծառայության մասին» (հոդվածներ 39, 94), «Զինծառա-
յողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին»
(հոդվ. 16), «Զինապարտության մասին» (հոդվ. 11), «Վարչարարության հիմունքների եւ
վարչական վարույթի մասին» (հոդվ. 24) եւ ՄՍ այլ օրենքներում:

«**Նարազար քույրեր եւ եղբայրներ**» հասկացությունը փեղ է գտնվել ՄՍ քրեա-
կան դատավարության օրենսգրքում (հոդվ. 6), ՄՍ քաղաքացիական օրենսգրքում (հոդվ.
1217), ՄՍ ընտանեկան օրենսգրքում (հոդվ. 11), «Մարդուն օրգաններ եւ(կամ) հյուսվածք-
ներ փոխպարվաստելու մասին» (հոդվ. 7), «Սահմանված կարգի խախտմամբ պարտա-

դիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» (հոդվ. 2), «Քաղաքացիական կացության ակտերի մասին» (հոդվ. 6), «Փախստականների և ապաստանի մասին» (հոդվ. 7), «Զինվորական ծառայություն անցնելու մասին» (հոդվածներ 16, 51), «Զինապարտության մասին» (հոդվ. 12) և ՆՏ այլ օրենքներում:

«Ոչ հարազատ (համամայր կամ համահայր) քույրեր և եղբայրներ» հասկացությունը փեղ է գրել ՆՏ քրեական դատավարության օրենսգրքում (հոդվ. 6), ՆՏ ընդհանրական օրենսգրքում (հոդվ. 11), ինչպես նաև «ՆՏ կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայության համակարգում գործող ձերբակալված անձանց պահելու վայրի ներքին կանոնակարգը հաստատելու մասին» (կետ 38), «ՆՏ ոստիկանության համակարգում գործող ձերբակալված անձանց պահելու վայրի ներքին կանոնակարգը հաստատելու մասին» (կետ 58) ՆՏ կառավարության որոշումներում:

Ընդ որում, հիշյալ իրավական ակտերի մեծ մասում կիրառվում են նշված հասկացություններից առնվազն երկուսը: Օրինակ՝ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածում կիրառվում է «հարազատ» և «ոչ հարազատ (համամայր կամ համահայր) եղբայրները և քույրերը» հասկացությունները: Նույնը վերաբերում է նաև ՆՏ վարչական և վճռաբեկ դատարանների կողմից մատչանշված ՆՏ ընդհանրական օրենսգրքի 11-րդ հոդվածին: Կամ՝ «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՆՏ օրենքի 74.1-րդ հոդվածում կիրառվում է «եղբայրներ և քույրեր» ընդհանրական հասկացությունը, իսկ 6-րդ հոդվածում՝ «հարազատ եղբայր և քույր» հասկացությունը:

Նույնը կարելի է արձանագրել ՆՏ քաղաքացիական օրենսգրքում ըստ օրենքի ժառանգության ինստիտուտը կարգավորող՝ վիճարկվող 1217-րդ հոդվածի և 1219-րդ - հոդվածի առնչությամբ: Այս դեպքում օրենսդիրը երկրորդ հերթի ժառանգներին սահմանելիս օգտագործում է «հարազատ եղբայրները և քույրերը» հասկացությունը, իսկ չորրորդ հերթի ժառանգներին նշելիս՝ «եղբայրները և քույրերը» հասկացությունը:

Գործող օրենսդրության վերլուծությունը վկայում է նաև, որ այն իրավահարաբերություններում, որում կարեորվում է գենետիկական ներդաշնակության առաջնայնությունը՝ օրենսդիրը փարանջատել է հարազատ եղբայրներ ու քույրեր և համահայր կամ համամայր եղբայրներ ու քույրեր հասկացությունները՝ դրանց հավասար իրավունքների ու պարտականությունների շեշտադրման նկատառումներով, իսկ ժառանգական իրավահարաբերություններում ընդհանրապես առանձին անդրադարձ չի եղել համահայր կամ համամայր եղբայրներին ու քույրերին:

Շիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՆՏ քաղաքացիական օրենսգրքում ըստ օրենքի ժառանգության ինստիտուտին առնչվող փարբեր դեպքերի համար օրենսդիրն օգտագործում է փարբեր հասկացություններ. մի դեպքում՝ «հարազատ եղբայրներ և քույրեր» հասկացությունը, մյուս դեպքում՝ «եղբայրներ և քույրեր» հասկացությունը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ **օրենսգրքի 1217-րդ հոդվածում օրենսդիրը նկատի է ունեցել բացառապես հարազատ քույրերին և եղբայրներին:** Ընդ որում, այդպիսի փարանջատումն սկզբունքորեն վերապահված է օրենսդրի հայեցողությանը, եթե այն իրականացվում է **բավարար առարկայական հիմնավորվածությամբ**

Եւ հեփելուողականությամբ՝ հիմնվելով համակարգային ընդհանուր սկզբունքների վրա:

7. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ժառանգության ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, ինչպես նաև այն հարցի պարզաբանմանը, թե օրենսդրի կողմից հարազատ է համահայր կամ համամայր քույրերի եւ եղբայրների միջեւ փառանջատում կատարելու հայեցողությունն արդյո՞ք իրականացվել է բավարար առարկայական հիմնավորվածությամբ եւ հեփելուողականությամբ՝ հիմնվելով համակարգային ընդհանուր սկզբունքների վրա:

Այս նպատակով «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջները հաշվի առնելով՝ սահմանադրական դատարանը քննության առարկա հարցի վերաբերյալ հստակ իրավական դիրքորոշում կարող է արտահայտել վիճարկվող նորմը դրա հեփ համակարգային փոխկապակցվածության մեջ գտնվող՝ ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ գլխի՝ փարբեր հերթի ժառանգների շրջանակը ուղղող դրույթների հեփ համադրության մեջ դիփարկելով միայն:

Ժառանգության բովանդակությունը եւ, հեփելաբար, ժառանգման իրավունքը սահմանված են օրենսգրքի 1184-րդ հոդվածով: Ըստ այդ հոդվածի 1-ին կետի՝ ժառանգության դեպքում մահացածի գույքը (ժառանգությունը) անփոփոխ վիճակում, որպես միասնական ամբողջություն, **անցնում է այլ անձանց** (համապարփակ իրավահաջորդություն):

Ժառանգման իրավունքն ուղղակիորեն ամրագրված էր նաև ՏՏ Սահմանադրության նախորդ խմբագրությամբ փեքսփի 28-րդ հոդվածում: Միեւնույն ժամանակ, ՏՏ - Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ՝ «Սահմանադրությամբ ամրագրված մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները չեն բացառում օրենքներով եւ միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ եւ ազատություններ»: Այսինքն՝ ՏՏ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի ուժով պեփությունը ճանաչում է նաև ժառանգման իրավունքը, որը ներառում է ոչ միայն ժառանգություն փալու, այլ նաև ժառանգություն սփանալու իրավունքները:

Ժառանգական իրավունքն ապահովում է սեփականափրոջ իրավունքների պաշտպանությունը նաև նրա մահից հեփո՝ հնարավոր դարձնելով նրա սեփականափրական իրավագորությունների հաջորդայնությունը: Միեւնույն ժամանակ, այն ժառանգի համար առաջանում է ժառանգափուի սեփականության հանդեպ իրավահաջորդության սահմանադրորեն պաշտպանված հնարավորություն: Ժառանգական սուբյեկտիվ իրավունքը, այսպիսով, պաշտպանում է թե ժառանգություն փալու, թե ժառանգություն ընդունելու (սփանալու) իրավունքները: Ըստ օրենքի՝ ժառանգումը հիմնված է այն ենթադրության վրա, որ ժառանգորդների շրջանակը, դրանց ժառանգության հրավիրելու հերթերը, ժառանգական գույքի չափը սահմանող օրենքը **համապարասխանում են ժառանգափուի կամքին**, որը չի ցանկացել կամ չի կարողացել արտահայտել իր կամքը այլ կերպ, օրինակ՝ կփակի միջոցով:

Սեփականությունն ըստ օրենքի ժառանգություն ընդունելու իրավունքը խարսխվում է, որպես կանոն, ժառանգատուի եւ ժառանգի միջեւ **ազգակցական կապի** կանխավարկածի վրա, չնայած որ ժառանգատուն ազատ է իր գույքը կտրակելու ցանկացած անձի, այլ ոչ միայն իր ազգականներին: Մակայն ժառանգական իրավունքի գործառույթը կայանում է նաեւ նրանում, որ ապահովվի ժառանգատուի ընտանիքի անդամների տնտեսական զարգացման հնարավորությունը՝ առնվազն գոնե նրա հետ առավել սերտորեն փոխկապակցված ազգականների հարադրությամբ: Այս իմաստով ժառանգատուի ընտանիքը կազմում են ոչ միայն այն անձինք, որոնց նա իր կենդանության ժամանակ տրամադրել է ապրուստի միջոցներ, **այլեւ այն տնտեսական միավորումը, որն ունեցել է եւ ունի ժառանգական գույքով պայմանավորված տնտեսական եւ սոցիալական համարելի շահեր:** Դրանով է կանխորոշվում ժառանգության ինստիտուտի բովանդակությունը:

Ժառանգատուի եւ ժառանգների միջեւ ազգակցական հարաբերություններում, իր հերթին, առաջանում է գեներտիկ գործոններով պայմանավորված ասփիճանակարգություն, որը ենթադրում է ժառանգման հարցում ժառանգատուի ուղղակի ժառանգների նախապատվությունն այլ ժառանգների համեմատ: Որքան ավելի մերձ է ժառանգատուի եւ ժառանգի ազգակցական կապը, այնքան ավելի մեծ է ըստ օրենքի ժառանգման առաջնահերթությունը տվյալ ժառանգի համար:

8. Օրենսգրքի վիճարկվող՝ 1217-րդ հոդվածով ժառանգատուի երկրորդ հերթի ժառանգներ են համարվում ժառանգատուի հարազատ քույրերը եւ եղբայրները: Այսինքն՝ օրենսդիրը երկրորդ հերթի ժառանգների թվին է դասում երկրորդ ասփիճանի կողային ազգականներին: Ընդ որում, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կողային ազգակցություն է համարվում ընդհանուր նախնիից անձանց սերված լինելու արյունակցական կապը: Այս տեսակետից եւ՝ հարազատ, եւ՝ համահայր կամ համամայր քույրերն ու եղբայրները ժառանգատուի հանդեպ կարող են դիմել միեւնույն՝ երկրորդ ասփիճանի ազգակցական կապի մեջ, **հետեւաբար՝ նաեւ միեւնույն կատեգորիայի մեջ**, քանի որ նրանք ունեն ընդհանուր նախնի՝ հայր եւ/կամ մայր:

Միեւնույն ժամանակ, սահմանադրական դատարանը գրնում է, որ ժառանգատուի համահայր կամ համամայր քույրերը եւ եղբայրները ժառանգատուի հարազատ քույրերի եւ եղբայրների համեմատությամբ ժառանգատուի նկատմամբ գրնվում են միայն մասնակի մերձավոր ազգակցական կապի մեջ, ինչը թույլ է տրվի արձանագրել, որ **վերջիններս նույն կատեգորիայի շրջանակներում գրնվում են տարբեր ենթակատեգորիաների մեջ, ինչը, իր հերթին, համակարգային ընդհանուր սկզբունքների վրա հիմնված որոշակի առարկայական տարբերակման հիմք կարող է հանդիսանալ**, եւ այդ առումով կարող է նաեւ ներգործել ժառանգման հերթականության վրա: Մակայն համամայր եւ համահայր քույրերին եւ եղբայրներին ժառանգման հերթից ընդհանրապես դուրս թողնելը չի կարող բավարար չափով հիմնավորվել հիշյալ օբյեկտիվ տարբերությամբ, եւ անհրաժեշտ ու իրավաչափ չէ ժառանգման նպատակին հասնելու համար:

Այս առումով, սահմանադրական դափարանն արձանագրում է, որ օրենսգրքի 72-րդ գլխում առկա է այնպիսի օրենսդրական բաց, որը չի կարող լրացվել այլ իրավական երաշխիքներով եւ որի պայմաններում չի ապահովվում անձի ժառանգման իրավունքի իրացման հնարավորությունը: Նման օրենսդրական բացը հանգեցնում է արյունակցական ավելի թույլ կապի պատկանող անձանց մի մասի իրավունքների արգելափակման, ինչը չի կարող օբյեկտիվորեն արդարացված նպատակ հետապնդել:

Միեւնույն ժամանակ, սահմանադրական դափարանն արձանագրում է, որ օրենսդիրն իրավասու է հաշվի առնելով հարազատ եւ համահայր կամ համամայր քույրերի եւ եղբայրների միջեւ առկա օբյեկտիվ փոքրբերությունը՝ համահայր կամ համամայր քույրերին եւ եղբայրներին դասել մեկ այլ՝ հաջորդ հերթի ժառանգների թվին /ինչն ընդունված է մի շարք երկրների ժառանգական իրավունքում/: Սակայն օրենսդիրն իրավասու չէ այդ փոքրբերությունն օգտագործել համահայր կամ համամայր քույրերին եւ եղբայրներին ժառանգությունից օրենքի ուժով ընդհանրապես բացառելու համար: Այդչափ լայն սահմանափակումն օրենսգրքի՝ ըստ օրենքի ժառանգությանը վերաբերող գլխում **բավարար չափով** հիմնավորված չէ առարկայական չափանիշներով: Այն ժառանգություն ստանալու սահմանադրական իրավունքի **ոչ համաչափ** սահմանափակում է՝ Սահմանադրության 1-ին հոդվածից (իրավական պետության սկզբունք) բխող համաչափության սկզբունքի եւ իրավահավասարության սկզբունքի (Սահմանադրության 14.1-րդ հոդվ.) փեսանկյունից:

9. Տարբեր երկրների (Ռուսաստանի Դաշնություն, Ֆրանսիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա, Շվեյցարիա, Վրաստան, Մոլդովա եւ այլն) քաղաքացիական իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ ժառանգական իրավահարաբերություններում, որում իրավահաջորդության եւ անձի սեփականության իրավունքի հարցեր են շոշափվում, խարականություն չի դրվում հարազատ եւ համահայր կամ համամայր քույրերի ու եղբայրների միջեւ կամ առնվազն համահայր կամ համամայր եղբայրներն ու քույրերը դուրս չեն թողնվում այդ իրավահարաբերություններից:

Նայ իրավունքում եւս, այդ թվում խորհրդային փոփոխության, ժառանգման իրավահարաբերություններում երբեւէ փոքրբերակում չի դրվել հարազատ եւ համահայր ու համամայր քույրերի ու եղբայրների միջեւ: Դափարակն պրակտիկան նույնպես ընթացել է այս ճանապարհով: Նույնիսկ այն բանից հետո, երբ 1999թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածով ամրագրվեց «հարազատ եղբայրները եւ քույրերը» արտահայտությունը, դափարակն պրակտիկան շարունակեց ընթանալ ավանդաբար ձեւավորված կարգով: Այդ մասին է վկայում նաեւ ՆՏ դափարակն դեպարտամենտի կողմից 2010թ. հուլիսի 6-ին ՆՏ սահմանադրական դափարան ներկայացված փեդեկանքը:

ՆՏ վճռաբեկ դափարանի եզրահանգումն այն է, որ «... ժառանգական իրավահարաբերություններում ժառանգատուի հարազատ եղբայրներին եւ քույրերին հավասարեցված են նաեւ ժառանգատուի հետ համահայր կամ համամայր քույրերը եւ եղբայրները»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՏՏ վճռաբեկ դատարանը վերոնշյալ որոշման մեջ հեփեսողականություն չի դրսևորել «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների ապահովման առումով: Վերջինս, մասնավորապես, սահմանում է, որ «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի եւ արփահայփությունների փառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները»:

Մյուս կողմից՝ ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ գլխի նորմերի համադրված վերլուծությունը վկայում է, որ ժառանգարուի համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի իրավունքների պաշտպանությունը փվյալ հարաբերություններում կարող է ապահովվել միայն ժառանգման իրավունքի իրացման հնարավորության օրենսդրական երաշխավորմամբ, եւ նման դիրքորոշումը բխում է իրավունքի գերակայության ապահովման անհրաժեշտությունից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասփանի Նանրապեփության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կեփով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասփանի Նանրապեփության օրենքի 19, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Նայասփանի Նանրապեփության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ գլուխն այն մասով, որով բացառում է համամայր եւ համահայր քույրերի եւ եղբայրների՝ ժառանգարուի հեփ իրենց ազգակցական փոխկապակցվածության ասփիճանին համարժեք ժառանգման իրավունքը, ճանաչել Նայասփանի Նանրապեփության Սահմանադրության 1-ին, 3-րդ հոդվածներին եւ 14.1-րդ հոդվածի երկրորդ մասին հակասող եւ անվավեր:

2. Նայասփանի Նանրապեփության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաճայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մփնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*18 սեփտեմբերի 2010 թվականի
ՄԴՈ-917*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻ
ՆԱՐԻՆԵ ՍԱՆՎԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 21, 22 ԵՎ 23-ՐԴ
ՆՈՒՎԱԾՆԵՐԻ՝ ԻՆՔՆԱԲԱՅԱՐԿ ՆԱՅՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍՈՎ, ԵՎ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
91-ՐԴ ՆՈՒՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

28 սեպտեմբերի 2010թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Նովիանիսյանի, Ն. Նազարյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝

թիվ 6-172 դիմումը ներկայացրած դիմող՝ քաղաքացի Ն. Սահակյանի եւ թիվ 7-31 դիմումով դիմողի ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի եւ Ա. Ղազարյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՆՃ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՃ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Նանրապետություն» կուսակցության եւ քաղաքացի Նարինե Սահակյանի դիմումների հիման վրա՝ Նայաստանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21, 22 եւ 23-րդ հոդվածների՝ ինքնաբացարկ հայտնելու մասին միջնորդություն ներկայացնելու մասով, եւ ՆՃ դա-

տական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Նանրապետություն» կուսակցության և քաղաքացի Ն. Սահակյանի համապատասխանաբար՝ 2010 թվականի ապրիլի 1-ի և մայիսի 18-ի՝ ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

«Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 39-րդ հոդվածի հիմքով սահմանադրական դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 18-ի ՍԴԱՌ-94 որոշմամբ վերոհիշյալ դիմումներով գործերը միավորվել են՝ դատարանի նույն նիստում քննելու համար:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հեղափոխելով ՆՏ քաղաքացիական դատավարության և ՆՏ դատական օրենսգրքերը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Նայաստանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի 17-ին, Նայաստանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Նայաստանի Նանրապետության դատական օրենսգիրքն ընդունվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի փետրվարի 21-ին, Նայաստանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի ապրիլի 7-ին և ուժի մեջ է մտել 2007 թվականի մայիսի 18-ին:

Սույն գործով քննության առարկա իրավահարաբերությունները ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում նախկինում կարգավորվել են 4-րդ գլխում ամփոփված 21-րդ, 22-րդ, ինչպես նաև 25-րդ և 26-րդ հոդվածներում ամրագրված նորմերով (1998թ. հունիսի 17-ի խմբագրությամբ), մասնավորապես՝ նախադեսելով ոչ միայն դատավորի **ինքնաբացարկի**, այլև՝ նրան **բացարկ հայրնելու** և դրանց լուծման կարգի հետ կապված հարաբերությունները: Այդ նորմերը «ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՆՏ օրենքի (28.11.2007թ. ՆՕ-277-Ն) 9-րդ հոդվածի համաձայն շարադրվել են այլ խմբագրությամբ, ինչպես նաև օրենսգրքի նախկին 25-րդ և 26-րդ հոդվածները ճանաչվել են ուժը կորցրած: Արդյունքում՝ գործող իրավակարգավորումը վերաբերում է **ինքնաբացարկի** հետ կապված հարաբերություններին:

ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Դատավորի ինքնաբացարկը» վերառությունը կրող 21-րդ հոդվածը (2007թ. նոյեմբերի 28-ի խմբագրությամբ) սահմանում է.

«1. Դատավորի ինքնաբացարկի հիմքերը սահմանվում են Նայաստանի Նանրապետության դատական օրենսգրքի 91 հոդվածով:

2. Դատավորն ինքնաբացարկ է հայտնում իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ: Գործին մասնակցող անձը նման միջնորդություն կարող է ներկայացնել, իսկ դատավորը ինքնաբացարկ կարող է հայտնել միայն մինչև դատաքննությունն սկսվելը, բացառությամբ այն դեպքերի, երբ անձը կապացուցի, իսկ դատավորը կհիմնավորի, որ ինքնաբացարկի հիմքն իրեն հայտնի է դարձել դատաքննությունն սկսվելուց հետո եւ մինչ այդ չէր կարող հայտնի լինել: Ամեն դեպքում միջնորդությունը կարող է ներկայացվել կամ ինքնաբացարկը կարող է հայտնվել միայն մինչև դատաքննության ավարտը»:

Նույն օրենսգրքի 22-րդ հոդվածը (2007թ. նոյեմբերի 28-ի խմբագրությամբ) սահմանում է ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու հետևյալ կարգը.

«1. Սույն օրենսգրքի 21 հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել: Ինքնաբացարկը պետք է լինի պարզառարանված:

2. Դատավորի ինքնաբացարկի մասին միջնորդությունը ներկայացվում է գրավոր, որում շարադրվում են դրա հիմքերը:

3. Նույն հիմքով դատավորի ինքնաբացարկի մասին միջնորդություն կրկին ներկայացնել չի թույլատրվում»:

Օրենսգրքի 23-րդ հոդվածը (2007թ. նոյեմբերի 28-ի խմբագրությամբ) կրում է «Ինքնաբացարկի միջնորդության լուծման կարգը» վերաբերությունը եւ սահմանում է.

«1. Ինքնաբացարկի միջնորդություն հայտնելու դեպքում գործի քննությունը ընդհատվում է մինչև այդ հարցի լուծումը: Նիստը կարող է ընդհատվել ոչ ավելի, քան երեք օրով:

2. Նույն հիմքով հայտնված ինքնաբացարկի միջնորդությունը չի քննարկվում:

3. Նայտնված ինքնաբացարկի միջնորդության քննության արդյունքներով դատավորը կամ ինքնաբացարկ է հայտնում, կամ կայացնում է որոշում միջնորդությունը մերժելու մասին»:

ՆՏ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 4-րդ մասը սահմանում է.

«4. Ինքնաբացարկի մասին որոշումը կարող է բողոքարկվել»:

2. Քննության առարկա միավորված գործով դատավարական նախապարամությունը հանգում է հետևյալին:

Դիմող «Նանրապետություն» կուսակցությունը 11.09.2008թ. «Խաղաղ հավաքների իրավունքի եւ արտահայտվելու ազատության իրավունքների խախտման փաստը ճանաչելու եւ Երևանի քաղաքապետարանի լիազոր ներկայացուցչի 08.09.2008թ. թիվ 128, 129, 130, 132 որոշումները վերացնելու պահանջի մասին» հայցով դիմել է ՆՏ վարչական դատարան: Այդ գործով դատաքննությունն սկսվել է 01.10.2009թ.: Դատաքննության սկզբում դիմողը գործը քննող դատավորին՝ նրա անկողմնակալության մեջ ողջամիտ կասկածի հիմքով ներկայացրել է ինքնաբացարկ հայտնելու միջնորդություն, որը մերժվել է 02.10.2009թ. կայացված որոշմամբ: Գործով դատաքննությունն ավարտվել է

23.10.2009թ. եւ վճռի հրապարակման օր է հայտարարվել 03.11.2009թ.: Նշված օրը վարչական դատարանը կայացրել է գործի քննությունը վերսկսելու մասին որոշում, որից անմիջապես հետո դատավորը հայտնել է ինքնաբացարկ՝ հրապարակելով իր՝ 03.11.2009թ. «Ինքնաբացարկ հայտնելու մասին» որոշումը:

Քաղաքացի Ն. Սահակյանի դիմումի եւ դրան կից փաստաթղթերի համաձայն՝ 2009 թվականի հուլիսի 10-ին ՏՏ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դռնբաց դատական նիստում քննվել է Նարինե Սահակյանի հայցն ընդդեմ Գեորգի Պապոյանի եւ Անահիտ Շահվերդյանի՝ գույքի, հագուստի եւ անձնական իրերի պահանջի մասին: Դատական նիստի ընթացքում հայցվոր կողմը ՏՏ դատական օրենսգրքի 91-րդ - հոդվածի 1-ին կետի հիմքերով եւ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ գլխում սահմանված կարգի համաձայն նախագահող դատավորին ներկայացրել է ինքնաբացարկի միջնորդություն, ինչը մերժվել է 18.07.2009թ. կայացված որոշմամբ: 21.07.2009թ. այդ որոշումը դիմողը բողոքարկել է ՏՏ վերաքննիչ քաղաքացիական դատարան: Վերջինս վերաքննիչ բողոքը վերադարձրել է: ՏՏ վճռաբեկ դատարանը նույնպես վերադարձրել է վճռաբեկ բողոքը՝ 07.10.2009թ. կայացնելով համապատասխան որոշում:

3. Դիմող «Նանրապեություն» կուսակցությունը գրնում է, որ Նայասպանի Նանրապեության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21, 22 եւ 23-րդ հոդվածների դրույթները՝ ինքնաբացարկ հայտնելու մասին միջնորդություն ներկայացնելու մասով, հակասում են Նայասպանի Նանրապեության Սահմանադրության 18 եւ 19-րդ - հոդվածներին: Մասնավորապես կարծիք է հայտնվում, որ անկողմնակալության եւ անաչառության հարցի քննությունը դատավորի հայեցողությանը թողնելը կասկածի փակ է դնում այդ ինստիտուտի, որպես իրավական պաշտպանության միջոցի, արդյունավետությունը: Դատավորը չի կարող անկողմնակալ կերպով լուծել իր անկողմնակալության հարցը, եթե նա իրոք շահագրգռված է գործի ելքով կամ կան նրա օբյեկտիվության, արդարության եւ օրենքի հիման վրա գործը լուծելու վերաբերյալ կասկած հարուցող այլ հանգամանքներ: Միաժամանակ, սեփական անկողմնակալության հարցը քննելիս անկողմնակալ չլինելուն նպաստում է այն հանգամանքը, որ միջնորդության կապակցությամբ կայացված որոշումն առանձին բողոքարկման ենթակա չէ, այլ կարող է ներառվել միայն վերաքննիչ եւ վճռաբեկ բողոքներում: Եթե առաջին արյանի դատարանում գործը քննելիս դատավորի անկողմնակալությունը կարող է ապահովվել հետագա դատական արյանների կայացրած որոշումներով, ապա գործին մասնակցող անձանց՝ դատավորին ինքնաբացարկ հայտնելու միջնորդություն ներկայացնելու լիազորությամբ օժտելը կորցնում է իր իմաստը:

Նշում կատարելով դատարանի «անկողմնակալ ու անաչառ» լինելու վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական մոտեցումներին՝ դիմողը նշում է, որ որոշակի դեպքերում, երբ ոչ օբյեկտիվ, կողմնակալ դատավորի կայացրած դատական ակտը ենթակա է անհապաղ կատարման կամ վարչական արդարադատությունում, երբ առկա է երկաստիճան դատական համակարգ, կամ՝ վճռաբեկ դատարանի

կողմից առաջին ապրյանի դափարանի կայացրած դափական ակտերի դեմ բերված բողոքները վարույթ ընդունելու հարցի լուծումը հայեցողության սկզբունքով, ապա դրանք կասկածի փակ են դնում դափավորի անկախության եւ անկողմնակալության կարեւորագույն երաշխիքներից մեկի արդյունավետությունը: Խնդրո առարկա դրույթներն ինքնաբացարկի «օբյեկտիվ» հիմքով միջնորդության մասին հարցը քննելիս սկզբունքորեն այլ լուծում չեն ենթադրում, քան միջնորդության մերժումը: Տվյալ դրույթները չեն երաշխավորում մարդու արդար դափաքննության իրավունքի բաղադրապարրերից մեկի՝ դափավորի անկախության եւ անկողմնակալության սկզբունքի պահպանումը: Նմանափայ կարգավորումը խախտում է դիմողի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի սահմանադրական իրավունքը:

Դիմող՝ քաղաքացի Ն. Սահակյանը գտնում է, որ ՏՏ դափական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասը հակասում է ՏՏ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներին այն պարճառաբանությամբ, որ ՏՏ դափական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասի համաճայն ինքնաբացարկի որոշումը ենթակա է բողոքարկման: ՏՏ քաղաքացիական դափավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի վերլուծությունից բխում է, որ կարող են բողոքարկվել ինչպես ինքնաբացարկի մերժման, այնպես էլ բավարարման մասին որոշումները: Սակայն, ըստ դիմողի, ՏՏ վերաքննիչ քաղաքացիական դափարանը եւ ՏՏ վճռաբեկ դափարանն իրենց որոշումներով վիճարկվող նորմին փվել են այլ մեկնաբանություն՝ նշելով, որ այն կիրառելի է միայն ինքնաբացարկի միջնորդությունը բավարարելու որոշման դեպքում: Այսպիսի մոփեցումը նեղացնում է նորմի կիրառման դաշտը՝ միաժամանակ փոխելով դրա իմաստը: Արդյունքում՝ սփեղծվում է այնպիսի իրավակիրառական պրակտիկա, որը հակասում է Սահմանադրությամբ սահմանված դափական պաշտպանության իրավունքին: Վիճարկվող դրույթը, այսպիսով, առաջ է բերում իրավական անհարակություն, ինչն էլ, ըստ դիմողի, հնարավորություն է փալիս վերադաս դափարանների կողմից նորմին փալ կամայական մեկնաբանություն՝ սփեղծելով հակասահմանադրական իրավակիրառական պրակտիկա, սահմանափակելով ՏՏ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով սահմանված իրավունքները: Վերջիններիս իրացման համար, ըստ դիմողի, նախափեսված է նաեւ ինքնաբացարկի ինսփիփուփը, որի իրականացման երաշխիքներից է ինքնաբացարկի միջնորդության վերաբերյալ որոշումը դափական վերադասության կարգով բողոքարկելու այնպիսի հնարավորության սահմանումը, որը կերաշխավորի այդ միջնորդության քննության արդյունքում առաջին ապրյանի դափարանում կայացված՝ այն մերժելու մասին որոշման օրինականության եւ հիմնավորվածության սփուգումը:

4. Պափասախանող կողմը գտնում է, որ որպես դափավորի անկողմնակալությունն սպահովող մեխանիզմներ օրենսդրությամբ նախափեսվել են գործով քննությանը դափավորի մասնակցությունը բացառող ընթացակարգեր, որոնց նափափակը գործի ելքով շահագրգռված դափավորի՝ գործի քննությանը մասնակցության բացառումն է՝ դրանով իսկ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի եւ Սահմանադրության 19-րդ հոդվածի հիմքում ընկած

«անաչառ դատարանի» կողմից իր գործի քննության՝ յուրաքանչյուրի իրավունքի պապահովումը:

Ըստ պատասխանողի՝ դատավորի անաչառությունն ու անկողմնակալությունը սուբյեկտիվ կարեգործիաներ են եւ յուրաքանչյուրի դեպքում դատավորն ինքն է ունակ ու պարզավոր գնահատելու՝ արդյո՞ք փվյալ գործով նա կարող է հանդես գալ որպէս արդարադատություն իրականացնող սուբյեկտ:

Պատասխանողը գտնում է նաեւ, որ դատարանի նախագահը կամ մեկ այլ դատավոր չեն կարող միանշանակորեն անկողմնակալ կերպով լուծել բացարկի միջնորդությունը, ինչն առկա էր նախկին իրավակարգավորման դեպքում, նշելով, որ դատարանների նախագահները չպեպք է միջամտեն այլ դատավորների կողմից որոշումների կայացման գործընթացին՝ վկայում է նաեւ միջազգային պրակտիկան: Ներեւաբար, պատասխանողը գտնում է, որ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21, 22 եւ 23-րդ հոդվածները չեն հակասում ՏՏ Սահմանադրությանը:

Պատասխանողը վիճարկելով դիմողի փաստարկները միջազգային իրավական լուծումների առնչությամբ՝ գտնում է, որ դիմողի կողմից վիճարկվող իրավակարգավորումը խորթ չէ նաեւ Եվրոպայի խորհրդի անդամ մի շարք երկրների քաղաքացիական դատավարության օրենսգրքերին եւ ՏՏ Սահմանադրության համարեքսպում սահմանադրականության խնդիր չեն առաջացնում:

ՏՏ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության վերաբերյալ պատասխանող կողմը գտնում է, որ այն համապատասխանում է ՄԻԵԴ-ի կողմից իր նախադեպային իրավունքով սահմանված իրավական որոշակիության սկզբունքի չափանիշներին: Իրավական որոշակիության սկզբունքի շահարկումն այս պարագայում Կեդիկն չէ, քանի որ վիճարկվող իրավանորմը հստակ սահմանում է օրենսդրի կամքը, պարզ, հասկանալի եւ միանշանակ է իրավակիրառողի եւ փվյալ նորմի հեղազա ենթադրյալ հասցեատերերի համար: ՏՏ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է իրավական որոշակիության սկզբունքին եւ դիմողի համար ինքնաբացարկ հայտնելու միջնորդություն ներկայացնելիս եւ դրանից հետո հստակ է եղել միջնորդությունը մերժելու որոշման բողոքարկման օրենսդրական արգելքը: Վիճարկվող նորմի եւ ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերի, ինչպէս նաեւ ձեւավորված իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունը, ըստ պատասխանողի, ցույց է տալիս, որ ՏՏ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ ինքնաբացարկի միջնորդությունը բողոքարկելու հնարավորություն ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում:

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատել.

- ինքնաբացարկի, որպէս սահմանադրաիրավական սկզբունքներին համապատասխան արդարադատության անկախությունը եւ անկողմնակալությունը, ինչպէս նաեւ

իրավունքի գերակայությունն ապահովող ինստիտուտի, օրենսդրական երաշխավորման փեսանկյունից,

- արդար եւ արդյունավետ դատաքննության իրավունքի, ինչպես նաեւ գործին մասնակցող անձանց դատավարական այլ իրավունքների երաշխավորված գործադրումը եւ պաշտպանությունն ապահովելու փեսանկյունից,

- ինքնաբացարկի ինստիտուտի՝ միջազգային իրավակիրառական պրակտիկայում հաստատված սկզբունքներին համապատասխանության փեսանկյունից:

Ինքնաբացարկը ՆՆ իրավահամակարգում հանդիսանում է այնպիսի ինստիտուտ, որը կոչված է արդարադատության բնագավառում երաշխավորելու օբյեկտիվ եւ անաչառ որոշումների կայացումը՝ ինչպես ընթացակարգային (դատավարական), այնպես էլ նյութական իրավահարաբերություններ կարգավորելիս, եւ կոչված է երաշխավորելու դատական իշխանության անկախությունը, արդարադատության արդյունավետությունը, անկողմնակալությունը:

Քաղաքացիադատավարական հարաբերությունների կարգավորման բնագավառում ինքնաբացարկի ինստիտուտը նախատեսված է ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 21, 22 եւ 23-րդ, ինչպես նաեւ 24-րդ հոդվածներում: Այդ հարաբերությունները նյութաիրավական առումով կարգավորվում են նաեւ ՆՆ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածով, որով սահմանված են դատավորի կողմից՝ որպես նորմարիվ պարտավորություն, ինքնաբացարկ հայտնելու հիմքերը եւ կարգը: Այդ հոդվածների նորմերի համակարգված վերլուծությունը վկայում է, որ.

- դատավորի ինքնաբացարկի հիմք կարող են լինել այնպիսի փաստերը եւ հանգամանքները, որոնք ողջամիտ կասկած կարող են հարուցել փոխյալ գործով դատավորի անկողմնակալության հարցում (ՆՆ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերություն),

- նման հիմքերի առկայության դեպքում դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել,

- ի թիվս այլոց, դատավորի ինքնաբացարկ հայտնելու կոնկրետ հիմքերը հստակեցված են ՆՆ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերում,

- ինքնաբացարկ հայտնելիս դատավորը պարտավոր է կողմերին բացահայտել ինքնաբացարկի հիմքերը, կարող է կողմերին առաջարկել իր բացակայությամբ քննել ինքնաբացարկի անփեսաման հարցը (ՆՆ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 3-րդ մաս),

- դատավորի ինքնաբացարկը պետք է լինի պարճառաբանված,

- ՆՆ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի հիմքերով դատավորի ինքնաբացարկի մասին որոշումը կարող է բողոքարկվել (ՆՆ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մաս):

Սույն գործով վիճարկվող նորմերի եւ դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված այլ նորմերի, ինչպես նաեւ ինքնաբացարկի ինստիտուտի իրավակարգավորմանն առնչվող այլ իրավական ակտերի համապատասխան դրույթների համա-

կարգային վերլուծությունը վկայում է, որ, մասնավորապես, քաղաքացիադարավարական հարաբերություններում դարավորի ինքնաբացարկի ինստիտուտի իրավակարգավորման շրջանակներում օրենսդրորեն ամրագրվել են հետևյալ մոտեցումները.

- ինքնաբացարկի վերաբերյալ որոշումը դիտարկվում է որպես գործն ըստ էության չլուծող, միջանկյալ դարական ակտ,

- դարավորի ինքնաբացարկի մասին որոշման կայացումը ոչ թե դարավորի հանցողական լիազորությունն է, այլ պարտականությունը,

- դարավորի՝ իր անմիջական պարտականության կարարումից հնարավոր խուսափելը բացառելու իրավական միջոց է հանդիսանում նրա կողմից կայացված ինքնաբացարկի մասին որոշման բողոքարկման հնարավորությունը,

- ինքնաբացարկի հանգամանքների օբյեկտիվ բացահայտման եւ դարարանի իրավազորության երաշխավորման կարելու նախադրյալ է դարավորի ինքնաբացարկի վերաբերյալ գործին մասնակցող անձանց կողմից միջնորդություն ներկայացնելու ինստիտուտը,

- դարավորի ինքնաբացարկի վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշման անմիջական դարական բողոքարկման կարգ ու պայմաններ (ժամկետներ) ՏՏ - քաղաքացիական դարավարության օրենսգիրքը չի նախատեսել՝ չբացառելով նման բողոքի քննությունը գործով կայացրած դարական ակտի բողոքարկման շրջանակներում:

Այդպիսով, վիճարկվող նորմերում ամրագրված է ինքնաբացարկի ինստիտուտի իրավակարգավորման այն սկզբունքը, համաձայն որի փվյալ գործով քննություն իրականացնող դարավորի բացառիկ լիազորությունն ու պարտականությունն է դարաքննության շրջանակներում լուծել գործի հետ կապված ցանկացած, այդ թվում՝ նաեւ իր անաչառության վերաբերյալ կասկած հարուցող փաստերի եւ հանգամանքների առկայության հարցը:

Սահմանադրական դարարանն արձանագրում է այն սկզբունքային փարբերությունները, որպիսիք առկա են այդ ինստիտուտի նախկին (1998թ. հունիսի 17-ի խմբագրությամբ) եւ ներկա իրավակարգավորումների միջեւ: Մասնավորապես, բացարկի հարցն ըստ նախկին իրավակարգավորման ենթակա էր լուծման ոչ թե գործը քննող դարավորի, այլ՝ համապարասխան դարարանի նախագահի կողմից, իսկ գործը վերջինիս վարույթում գտնվելու դեպքում՝ մեկ այլ դարավորի կողմից: Բացի այդ, բացարկի (այն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ) եւ ինքնաբացարկի հարցի արդյունքներով կայացված որոշումը ենթակա չէր բողոքարկման (ՏՏ քաղ. դար. օր-ի 1998թ. հունիսի 17-ի խմբագրությամբ 25-րդ հոդվածի 2-րդ եւ 7-րդ կետեր): Ներկա իրավակարգավորմամբ գործը քննող դարավորին պարտավորեցնելով համապարասխան հիմքերի առկայության դեպքում կայացնելու ինքնաբացարկի վերաբերյալ որոշում՝ օրենսդիրը միաժամանակ սահմանել է դարավորի նախաձեռնությամբ կայացված այդպիսի որոշման բողոքարկման հնարավորություն (ՏՏ դարական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մաս), նախատեսելով լրացուցիչ իրավական երաշխիք՝ անաչառ որոշում կայացնելու եւ ինքնաբացարկի ինստիտուտը սահմանադրաիրավական նպատակներին ծառայեցնելու համար:

6. Գնահատելով սույն գործով վիճարկվող իրավակարգավորման ազդեցությունն արդար եւ անկողմնակալ դատաքննության իրավունքի, ինչպես նաեւ դրա արդյունավետ իրականացման երաշխիքների վրա, նկատի ունենալով նաեւ ինքնաբացարկ հայտնելու միջնորդություն ներկայացնելու վերաբերյալ սահմանադրական դատարան ներկայացված դիմումներում առկա հարցադրումները՝ ՏՏ սահմանադրական դատարանը գտնում է, որ թե՛ դատավորն իր անաչառության վրա ազդող հանգամանքներն իրավաչափորեն գնահատում է այն դեպքում, երբ ինքնաբացարկի նախաձեռնությունն իրենն է, ապա նույն տրամաբանությամբ նա կարող է եւ պարտավոր է իրավաչափորեն գնահատել նույն հանգամանքները, երբ դատավարության կողմն է հանդես եկել ինքնաբացարկի միջնորդությամբ: Ներուաբար, չկա որեւէ փարբերություն՝ պայմանավորված այն հանգամանքով, թե ով է հանդես գալիս ինքնաբացարկի նախաձեռնությամբ՝ կողմը, թե՛ դատավորը: Ավելին, ինքնաբացարկի հիմքերի առկայության հարցի վերաբերյալ դատավորի ոչ անաչառ մտպեցումը ՏՏ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է ընդհուպ հանգեցնել այդ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման (մասնավորապես՝ ՏՏ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի հիման վրա), քանի որ դատավորն է պարտավոր ապահովել դատարանի անաչառությունն ու այդ սկզբունքով արդարադատության իրականացումը: Կողմնակալ դատավորն անկախ չէ եւ ՏՏ Սահմանադրության 97-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ արդարադատություն իրականացնել չի կարող, իսկ այդպիսի պայմաններում կայացված դատական ակտը (որպես իրավական ակտ) ՏՏ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով՝ գործադրվել չի կարող:

Խնդիրը սակայն այն է, թե՛ դատավորի ինքնաբացարկի վերաբերյալ միջնորդության քննության եւ լուծման գործող կարգը որքանով է իրավաչափ: ՏՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հայտնված ինքնաբացարկի միջնորդության քննության արդյունքներով դատավորը **կամ ինքնաբացարկ է հայտնում, կամ կայացնում է որոշում միջնորդությունը մերժելու մասին**: Նկատի ունենալով, որ խոսքը վերաբերում է դատավորի ինքնաբացարկին, որը նա պարտավոր է իրականացնել օբյեկտիվ հիմքերի առկայության դեպքում, ինքնաբացարկի միջնորդության մերժումը չի կարող բողոքարկման առարկա չդառնալ: Նախառակ դեպքում հիմնավոր կլինի դիմող կողմի պնդումն այն մասին, որ վերջին հաշվով դատավորի անկողմնակալության մասին հանգամանքներն օբյեկտիվ գնահատման առարկա չեն դառնում:

Միջազգային փորձի եւ փարբեր երկրների սահմանադրական արդարադատության պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ այս հարցում գոյություն ունի հստակ դիրքորոշում՝ **ինքնաբացարկի որոշումը պարտադիր ենթակա է բողոքարկման, սակայն դրա կարգի եւ ժամկետների որոշումն օրենսդրի հայեցողության հարցն է**: Որպես կանոն, օրենսդրական կարգավորման պրակտիկայում գերապատվությունը տրվում է ոչ թե՛ ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշման անմիջական բողոքարկմանը, որը լուրջ վտանգ կարող է ներկայացնել գործը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքի իրացման հարցում, այլ, այսպես կոչված, «հետաձգված բողոքարկմանը»՝ գործով կայացրած որոշման բողոքարկման շրջանակներում դրա քննությանը, որը

նույնպես ապահովում է դատարանի իրավագործության երաշխավորման հարցում կողմերի իրավունքների իրացումը:

ՆՏ սահմանադրական դատարանը գտնում է, որ նման ընտրությունն օրենսդրի իրավասության խնդիրն է, **սակայն պարտադիր պետք է երաշխավորված լինի դատական ակտի բողոքարկման շրջանակներում դատավորի ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշման հետ կապված հանգամանքների համակողմանի քննությունը:** ՆՏ գործող օրենսդրությունն այս հարցում որեւէ արգելանք չի նախատեսում, եւ այս ուղղությամբ պետք է ընթանա նաեւ իրավակիրառական պրակտիկան: ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ինքնաբացարկի վերաբերյալ կայացված որոշման բողոքարկման հնարավորության բացակայությունը եւ, միաժամանակ՝ ՆՏ դատական օրենսգրքում դատավորի ինքնաբացարկի որոշման բողոքարկման իրավունքի առկայությունն իրավակիրառական պրակտիկայում չեն կարող մեկնաբանվել այնպես, որ բացառվի այդպիսի որոշումների վիճարկման իրավունքը՝ **ինքնաբացարկի դեպքում՝ անմիջականորեն, ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու դեպքում՝ ըստ էության գործով կայացված դատական ակտի բողոքարկման շրջանակներում:** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դա բխում է նաեւ «Քաղաքացիական եւ փնտեսական գործերով բողոքարկման համակարգերի եւ ընթացակարգերի ու դրանց գործառնության կատարելագործման մասին» ԵՖՏ նախարարների կոմիտեի թիվ R 95 (5) հանձնարարականի դրույթներից (հոդված 3):

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի պահանջը՝ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21, 22 եւ 23-րդ հոդվածների դրույթները՝ ինքնաբացարկ հայտնելու միջնորդություն ներկայացնելու մասով ՆՏ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ, չի երաշխավորում կողմերի իրավունքը հասնելու այն բանին, որ արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկողմնակալ ու իրավագոր դատարանի կողմից իրականացվի գործի քննություն:

7. ՆՏ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության խնդրի առնչությամբ ՆՏ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ նորմի իրավակարգավորման առարկան դատավորի՝ ինքնաբացարկի վերաբերյալ կայացված որոշման բողոքարկումն է: Միաժամանակ, ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՆՏ դատական օրենսգրքի վերոհիշյալ հոդվածում ամրագրված են նաեւ ինքնաբացարկի ինստիտուտի իրավակարգավորման շրջանակներում ընդհանուր նշանակության նորմեր (հոդվածի 1-ին եւ 2-րդ մասեր): Վիճարկվող նորմը կոչված է երաշխավորելու անկախ, արդար դատաքննության իրավունքի (ՆՏ Սահմ. 19-րդ հոդված) իրացումն այն դեպքերում, երբ դատավարության կողմն ունի ողջամիտ կասկածներ գործը քննող դատավորի՝ իր ինքնաբացարկի հարցի լուծման իրավաչափության հարցում, նախատեսելով դատավորի ինքնաբացարկի մասին որոշման բողոքարկման հնարավորություն:

ՆՏ սահմանադրական դատարանը նաեւ արձանագրում է, որ դատավորի բացարկի եւ ինքնաբացարկի ինստիտուտների իրավակարգավորման գործում անհրաժեշտ է

միասնական ու համակարգային մոտեցում: Նարկ է նկատել, որ այս խնդիրն առավել հստակ է կարգավորված ՆՏ քրեական դատավարության օրենսգրքում (հոդվածներ 88, 89, 90, 299, 322 եւ այլն), քան ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքում, որտեղ ընդհուպ անհամաձայնություն գոյություն ունի 21-26-րդ հոդվածների եւ 28-րդ հոդվածի միջեւ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Նայաստանի Նանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21, 22 եւ 23-րդ հոդվածները՝ ինքնաբացարկ հայտնելու մասին միջնորդություն ներկայացնելու մասով, ինչպես նաեւ Նայաստանի Նանրապետության դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում են Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ**

*28 սեպտեմբերի 2010 թվականի
ՄԴՈ-918*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ԻԳՈՐ ՆԱԿՈՒՋԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
53-ՐԴ ՆՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

5 հոկտեմբերի 2010թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Նարոթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի,
Մ. Թովուզյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),
մասնակցությամբ՝

դիմող Ի. Նակոբջանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՆՃ ազգային ժողովի պաշ-
տոնական ներկայացուցիչ՝ ՆՃ ԱԺ նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,
համաձայն ՆՃ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի
1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 25, 38 եւ 69-
րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Իգոր Նակոբ-
ջանյանի դիմումի հիման վրա՝ Նայաստանի Նանրապետության ընտանեկան օրենսգրքի
53-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը հա-
մապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Ի. Նակոբջանյանի՝ 07.04.2010թ. ՆՃ սահմանադրա-
կան դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, կողմերի գրավոր բա-
ցաբարությունները, հեղադրելով ՆՃ ընտանեկան օրենսգիրքը եւ գործում առկա մյուս
փաստաթղթերը, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. ՆՃ ընտանեկան օրենսգիրքը ՆՃ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004
թվականի նոյեմբերի 9-ին, Նայաստանի Նանրապետության Նախագահի կողմից սպո-

րագրվել՝ 2004 թվականի դեկտեմբերի 8-ին եւ ուժի մեջ է մտել 2005 թվականի ապրիլի 19-ին:

ՏՏ ընդհանրական օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ: Նամաձայնության բացակայության դեպքում ծնողների միջև վեճը լուծում է դատարանը՝ ելնելով երեխաների շահերից եւ հաշվի առնելով փաստը փարին լրացած երեխայի կարծիքը: Ընդ որում, դատարանը հաշվի է առնում երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի փարիքը, ծնողների բարոյական եւ անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի եւ երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընդհանրական դրությունը եւ այլն)»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապարմությունը հանգում է նրան, որ ըստ հայցի Կարինե Նակոբջանյանի ընդդեմ Իգոր Նակոբջանյանի եւ երրորդ անձ՝ Երեւանի Նոր Նորք վարչական շրջանի խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովի՝ երեխաների բնակության վայրը որոշելու պահանջի մասին եւ ըստ հայցի Իգոր Նակոբջանյանի ընդդեմ Կարինե Նակոբջանյանի եւ երրորդ անձ՝ Երեւանի Նոր Նորք վարչական շրջանի խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովի՝ երեխաների խնամքն ու դաստիարակությունը հորը հանձնելու, հոր հետ համապեղ բնակության իրավունք ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԱՆԴ-0589/02/09 քաղաքացիական գործով Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանը 2009 թվականի հոկտեմբերի 14-ին վճռել է երկու հայցերն էլ բավարարել մասնակիորեն. երեք երեխաներից մեկի խնամքն ու դաստիարակությունը հանձնել մորը, իսկ մյուս երկուսի խնամքն ու դաստիարակությունը հանձնել հորը:

ՏՏ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 24.12.2009թ. որոշմամբ մասնակիորեն բեկանել եւ փոփոխել է Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ ԵԱՆԴ-0589/02/09 վճիռը: Նշված որոշմամբ դատարանը վերահաստատել է ստորադաս դատարանի եզրահանգումները՝ կապված ստորադաս դատարանի կողմից ՏՏ ընդհանրական օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի նորմերի կիրառման, նաեւ 12 փարեկան Վիկտորյա Նակոբջանյանի կարծիքը եւ 4 փարեկան Մարիա Նակոբջանյանի փարիքը հաշվի առնելու իրավաչափության հետ: Ինչ վերաբերում է Կամո Նակոբջանյանի խնամքի եւ դաստիարակության հարցին, ապա վերաքննիչ դատարանը, ի փարբերություն առաջին արյանի դատարանի, Կամո Նակոբջանյանի խնամքն ու դաստիարակությունը հանձնել է մորը՝ հղում կատարելով ՏՏ ընդհանրական օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի նորմերին եւ երեխայի «լավագույն շահերից ելնելով»:

ՆՏ վճռաբեկ դատարանն իր՝ 24.02.2010 թվականի որոշմամբ Իգոր Նակոբջանյանի ներկայացուցչի վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ վերահաստատելով վերաքննիչ դատարանի եզրահանգումները:

3. Դիմողը գտնում է, որ ՆՏ ընդհանրական օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ «երեխաների շահերից» բառակապակցությունն առանձին վերցրած, ինչպես նաև ՆՏ ընդհանրական օրենսգրքի 53-րդ հոդվածի ամբողջ 3-րդ մասը՝ նման ձեակերպմամբ հակասում են ՆՏ Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված իրավական պետության սկզբունքին, 14.1-րդ հոդվածին, 18 և 19-րդ հոդվածների 1-ին մասերին, 35 և 36-րդ հոդվածների 1-ին մասերին:

Ըստ դիմողի՝ օրենսդիրը, հաշվի առնելով ընդհանրական հարաբերությունների առանձնահատկությունները, պետք է օրենսդրությամբ հստակ կանոնակարգեր երեխայի խնամքի ու դաստիարակության հարցի լուծման հետ կապված հարաբերությունները: Մինչդեռ, ըստ դիմողի, վիճարկվող նորմերը չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջին, քանի որ դրանցում բացահայտված չէ «երեխաների շահերից» հասկացությունը, որը միայն փոխաբերական կարող է ընկած լինել ծնողական իրավունքների սահմանափակման հիմքում:

Դիմողը գտնում է նաև, որ վիճարկվող նորմերը նման ձեակերպմամբ չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջին, քանի որ, ըստ նրա, պարզ չէ, թե վիճարկվող նորմերում «ընդ որում» բառակապակցությունից հետո ամրագրված դրույթները որքանով են փորձաքանորեն փոխկապակցված նույն բառակապակցությունից առաջ ընկած նախադասության դրույթների հետ: Վիճարկվող նորմերի նման ձեակերպման դեպքում, ըստ դիմողի՝ «երեխաների շահերից» բառակապակցության առկայությունը խոչընդոտում է իրավահարաբերության արդյունավետ կանոնակարգմանը:

ՆՏ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածների 1-ին մասերի առնչությամբ դիմողը կարծիք է հայտնում, որ ՆՏ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածների 1-ին մասերով սահմանված՝ համապատասխանաբար՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդար դատաքննության դատավարական իրավունքներն իրենց հիմքում ունեն ոչ միայն փոխաբերական իրավունքների համար անհրաժեշտ իրավական կառուցակարգեր, այլև կարելի է նյութական իրավունքի դատական կարգով իրացվելիության հանգամանքը: Ըստ այդմ էլ՝ դիմողը գտնում է, որ եթե փոխաբերական իրավունքի վերաբերյալ նորմը չի համապատասխանում իրավական որոշակիության և կանխատեսելիության պահանջներին, կամ թեկուզև համապատասխանում է այդ պահանջներին, սակայն օրենսդրությամբ փոխաբերական իրավունքի իրացման համար սահմանված են այնպիսի պայմաններ, որոնք արգելափակում են այդ նյութական իրավունքի՝ դատական կարգով իրացվելու հնարավորությունը, ապա այդ պայմանը չի կարող համարվել դատական պաշտպանության արդյունավետ միջոց կամ արդար դատաքննության փորձ:

ՆՏ Սահմանադրության 35 և 36-րդ հոդվածների 1-ին մասերի առնչությամբ ներկայացնելով նշված հոդվածների վերաբերյալ իր մեկնաբանությունները՝ դիմողը կարծիք

Է հայտնում, որ սահմանադրական պարտականության չկատարման կամ ոչ պարզաճան կատարման համար անձին պատասխանատվության չենթարկելու համար պետությունը, իր հերթին, պարտավոր է վերացնել բոլոր այն խոչընդոտները, որոնք կոժվարացնեն կամ անհնարին կդարձնեն անձի կողմից իր սահմանադրական պարտականության կատարումը: Ըստ այդմ էլ՝ դիմողը գտնում է, որ փյվյալ դեպքում այդ միջոցներից մեկն էլ այն է, որ պետությունը պարտավոր է այնպես կարգավորել ընդանեկան հարաբերությունները, որ դրանք իսկապես բխեն երեխաների լավագույն շահերից, քանի որ, ըստ դիմողի, միայն այդ պայմաններում է, որ ծնողը կկարողանա կատարել իր երեխայի լիարժեք ու ներդաշնակ զարգացմանը հոգ փանելու իր սահմանադրական պարտականությունը:

4. Պատասխանողը գտնում է, որ դիմողը ձեւականորեն վիճարկելով ՏՏ ընդանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականության հարցը՝ իրականում առաջ է քաշում միայն այդ հոդվածի՝ իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանության հարցը:

Պատասխանողը, հղում կատարելով, մասնավորապես, Երեխայի իրավունք- ների մասին կոնվենցիայի 9-րդ հոդվածի 3-րդ մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, Երեխայի իրավունքների կոմիտեի իրավական փաստաթղթերին, գտնում է, որ դիմողի կողմից վիճարկվող դրույթները համապատասխանում են ՏՏ Սահմանադրությանը, քանի որ երեխայի շահերին վերաբերող միջազգային իրավական փաստաթղթերում «երեխայի լավագույն շահերի պաշտպանությունը» բարձրացվել է համընդհանուր ճանաչում ստացած իրավական սկզբունքի աստիճանի:

Իր վերոհիշյալ դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանողը նաեւ վկայակոչում է արտասահմանյան մի շարք երկրների օրենսդրությունները եւ ձեւավորված իրավաբանական դոկտրինան՝ փաստելով, որ վերջիններս եւս «երեխայի լավագույն շահերի պաշտպանություն» սկզբունքը դիտում են որպես ընդանեկան օրենսդրության հիմքում ընկած ինքնուրույն սկզբունք: Շեշտվում է, որ երեխայի շահերի պաշտպանությունը նախ եւ առաջ ենթադրում է երեխայի սուբյեկտիվ իրավունքների եւ ծնողների պարտականությունների օրենսդրական ամրագրում: Նման կարգավորում է ընկած նաեւ ՏՏ ընդանեկան օրենսգրքի հիմքում: Վկայակոչելով, որ «երեխայի շահերի պաշտպանության» սկզբունքը ոչ թե կարգավորվում է առանձին իրավանորմով, այլ «...կարմիր թելի պես անցնում է ողջ օրենսգրքով», պատասխանող կողմը գտնում է, որ վիճարկվող դրույթը չի հակասում ՏՏ Սահմանադրությանը:

5. Նաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողն իր իրավունքների խախտումը պայմանավորում է ՏՏ ընդանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործված՝ «երեխաների շահերից» հասկացության, ինչպես նաեւ ՏՏ ընդանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի ողջ իրավակարգավորման իրավական անորոշությամբ եւ դրա հետեւանքով, իր կարծիքով, հակասական իրավակիրառ պրակտիկայի առկայությամբ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի եւ 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները՝ սույն գործի բնության շրջանակնե-

րում սահմանադրական դատարանը կարելու է ՆՆ ընդհանրական օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործված՝ «երեխաների շահեր» հասկացության, «հաշվի առնելով փաստը փարին լրացած երեխայի կարծիքը» բառակապակցության, ՆՆ ընդհանրական օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման սահմանադրաիրավական իմաստի բացահայտման, ինչպես նաև կիրառման պրակտիկայում դրսևորված մոտեցումների գնահատման անհրաժեշտությունը:

6. ՆՆ Սահմանադրության 36-րդ հոդվածի համաձայն երեխաների դատարարականության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման համար հոգ փանելը ծնողների իրավունքն ու պարտականությունն է: Սահմանադրաիրավական այս պահանջի իրացմանն է ուղղված ՆՆ ընդհանրական օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող նորմը: ՆՆ ընդհանրական օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների վերլուծությունից ելնելով, մասնավորապես, հիմք ընդունելով վիճարկվող դրույթներում «ընդ որում» եւ «եւ այլն» բառակապակցությունների առկայությունը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթներում «ընդ որում» բառակապակցությունից հետո ամրագրված պայմանները, այն է՝ «երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի փարիքը, ծնողների բարոյական եւ անձնական այլ հատկանիշները, ծնողներից յուրաքանչյուրի եւ երեխայի միջեւ գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դատարարականության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընդհանրական դրույթունն)» այն նվազագույն պայմաններն են, որոնք ճշգրտում եւ բացահայտում են վիճարկվող դրույթներում «երեխաների շահերից» հասկացության բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը: Ընդ որում, վերը նշված պայմանները սպառիչ չեն, եւ երեխայի շահը գնահատելիս օրենսդիրը դատարանների հայեցողությանն է վերապահում նաեւ այլ պայմաններ հաշվի առնելը:

Սահմանադրական դատարանը, վերահաստատելով իր ՍԴՌ-747 եւ ՍԴՌ-780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, սույն գործով եւս ընդգծում է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաեւ դատական պրակտիկայում: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ՆՆ ընդհանրական օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործված՝ «երեխաների շահեր» հասկացությանը եւ դրա բնորոշ հատկանիշների բովանդակության բացահայտմանը: Ընդ որում, նշված հասկացությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով փվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՆՆ ընդհանրական օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում «ընդ որում» բառակապակցությունից հետո թվարկված պայմանները պարտավորեցնում են դատարաններին երեխայի շահը գնահատելիս հիմք ընդունել այդ պայմանները, ինչպես նաեւ, առաջնորդվելով իրենց հայեցողական լիազորությամբ, հիմք ընդունել նաեւ այլ պայմաններ, եթե դատարանի գնահատմամբ այդպիսիք կան: Դատարանների այդպիսի պարտականության մասին իրա-

վական դիրքորոշում է արտահայտել նաև ՄՆ վճռաբեկ դատարանն իր՝ 30.03.2007թ. թիվ 3-432 (ՏՆ) որոշման մեջ: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման պարտականությունը միաժամանակ ապահովում է դատական ակտի պարճառաբանվածությունը, որի վերաբերյալ սահմանադրական դատարանն իր, մասնավորապես, 2007 թվականի ապրիլի 9-ի ՄԴՈ-690, 2007 թվականի ապրիլի 11-ի ՄԴՈ-691 եւ մի շարք այլ որոշումներում բազմիցս արտահայտել է համապատասխան իրավական դիրքորոշումներ:

Անդրադառնալով ՄՆ ընդհանրական օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործված՝ «հաշվի առնելով փաստը փարին լրացած երեխայի կարծիքը» բառակապակցության սահմանադրաիրավական բովանդակության պարզաբանմանը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված բառակապակցությունը վերաբերում է փաստը փարին լրացած երեխայի՝ դատարանում լսվելու իրավունքին եւ դատարանի համապատասխան պարտականությանը՝ լսելու երեխայի կարծիքը: Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, այնուամենայնիվ, փոխյալ իրավակարգավորման համարեքսպում երեխայի կարծիքը դատարանի համար պարտադիր չէ: Նման եզրահանգման համար հիմք է երեխայի շահը, որն առաջնային է ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխայի բնակության վայրը որոշելիս: Բացի դրանից, ՄՆ ընդհանրական օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում երեխայի շահը գնահատելիս օրենսդիրն օգտագործում է «ելնելով» բառը, մինչդեռ փաստը փարին լրացած երեխայի կարծիքի կապակցությամբ օրենսդիրն օգտագործում է «հաշվի առնելով» բառակապակցությունը: Այսինքն՝ ՄՆ ընդհանրական օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում «ընդ որում» բառակապակցությունից հետո շարադրված դրույթները փոխկապակցված են նշված բառակապակցությունից առաջ շարադրված դրույթների հետ, բացահայտում են «երեխայի շահեր» հասկացության բովանդակությունը, իսկ եթե դատարանի գնահատմամբ երեխայի կարծիքը չի համընկնում երեխայի շահերի հետ, ապա դատարանը պարտավոր է առաջնորդվել երեխայի շահերով, այն է՝ երեխայի կարծիքը գնահատել ՄՆ ընդհանրական օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում «ընդ որում» բառակապակցությունից հետո շարադրված պայմանների համարեքսպում:

7. Արտասահմանյան մի շարք երկրների օրենսդրական փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխայի բնակության վայրի, ինամքն ու դաստիարակությունը ծնողներից որեւէ մեկին հանձնելու հետ կապված վեճի լուծման իրավասությունը բոլոր դեպքերում վերապահվում է դատարանին՝ վերջինիս վերապահելով հայեցողական ազատություն: Ընդ որում, հիմնականում օրենսդիրը չի օգտագործում «երեխաների շահեր» հասկացությունը, իսկ այդ հասկացությունն օգտագործելու դեպքում, այնուամենայնիվ, չի սահմանում նշված հասկացության նվազագույն չափորոշիչները, եւ երեխաների շահերի գնահատման իրավասությունը վերապահում է դատարանների հայեցողությանը:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի ուսումնասիրությունը եւս ցույց է տալիս, որ վերջինս նույնպես օգտագործում է «երեխայի լավագույն շահ» հասկացությունը՝ առանց սահմանելու նշված հասկացության նվազագույն չափորոշիչները:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի փեսանկյունից քննարկվող հարցին է բազմիցս անդրադարձել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ երեխայի խնամքի և դաստիարակության վերաբերյալ վեճը լուծելիս դատարանները պետք է առաջնորդվեն երեխայի լավագույն շահերով (C. v. Finland գործով 2006թ. մայիսի 9-ի վճիռը, Olsson v. Sweden գործով 1988թ. մարտի 24-ի վճիռը):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այս փեսանկյունից Նայասսարանի Նանրապետության օրենսդրությունն առավել մանրակրկիտ է կարգավորում ծնողների՝ միմյանցից առանձին սպրելու դեպքում երեխայի խնամքն ու դաստիարակությունը ծնողներից որեւէ մեկին հանձնելու հետ կապված հարաբերությունները՝ օգտագործելով «երեխաների շահեր» հասկացությունը և սահմանելով նշված հասկացության նվազագույն չափորոշիչները:

Վերոգրյալի, ինչպես նաև ՆՆ ընդհանրական օրենսգրքով սահմանված իրավակարգավորումների փրամաբանության հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընդհանրական իրավահարաբերություններում «երեխայի շահ» հասկացությունը բարձրացվել է համընդհանուր ճանաչում ստացած իրավական սկզբունքի աստիճանի և հանդիսանում է ընդհանրական օրենսդրության հիմքում ընկած ինքնուրույն սկզբունք:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված չէ ՆՆ ընդհանրական օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների՝ դիմողի կարծիքով իրավական անորոշությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Նայասսարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասսարանի Նանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Նայասսարանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՆՆ ընդհանրական օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները համապատասխանում են Նայասսարանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասսարանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ**

*5 հոկտեմբերի 2010 թվականի
ՄԴՈ-919*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐՏԱՇԵՍ ԱՆՏՈՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆՏ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 203-ՐԴ ՆՈՂՎԱԾԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱԳԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

12 հոկտեմբերի 2010թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դափարանը՝ կազմով.

Գ. Նարոյթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեկուցող), Ն. Դանիելյանի,
Ֆ. Թոփյանի, Վ. Նովիաննիսյանի, Մ. Թովուզյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի,
մասնակցությամբ՝

դիմող Ա. Անպոնյանի,

գործով որպես պապասխանող կողմ ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի
պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՏ ԱԺ նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,
համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ
հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական
դափարանի մասին» ՆՏ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արտաշես Ան-
պոնյանի դիմումի հիման վրա՝ ՆՏ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի՝ Նայասարանի
Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու
վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Ա. Անպոնյանի՝ 03.05.2010թ. ՆՏ սահմանադրական
դափարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, կողմերի գրավոր բա-
ցափայրությունները, հեղափոխելով ՆՏ մաքսային օրենսգրքը եւ գործում առկա մյուս
փաստաթղթերը, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դափարանը

Պ Ա Ր Զ Ե Ց.

Մասնավորապես, օրենսգրքի՝ «Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը» վերաբերությամբ 14-րդ հոդվածի համաձայն. «1. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության

նիության իրավունք: Քրեական դատավարության ընթացքում արգելվում է անձին նշված իրավունքներից ապօրինի գրկելը կամ այդ իրավունքները սահմանափակելը:

2. Քրեական դատավարության ընթացքում նամակագրության, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումները վերահսկելը, հեռախոսային խոսակցությունները լսելը կարող են իրականացվել **միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով**»:

Դիտարկվող հոդվածում հիշատակված գործողությունների կատարման կարգը սահմանված է օրենսգրքի՝ «Նամակագրության, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումները վերահսկելը, հեռախոսային խոսակցությունները լսելը» վերաբառյալ 33-րդ գլխի նորմերով: Մասնավորապես, նշված գլխի՝ «Նամակագրության, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումները վերահսկելը» վերաբառյալ 239-րդ հոդվածը սահմանում է. «1. Երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ կասկածյալի կամ մեղադրյալի ուղարկված կամ նրանց կողմից ստացվող նամակագրության, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումներում (այսուհետ՝ նամակագրություն) կարող են պարունակվել գործով ապացուցողական նշանակություն ունեցող տեղեկություններ, քննիչը կարող է պարճառաբանված որոշում կայացնել, որում պարունակվում է միջնորդություն **դատարանին՝** նշված անձանց նամակագրությունը վերահսկելու համար:

2. Որոշման մեջ պետք է նշվեն կապի այն հաստատության անվանումը, որի վրա դրվում է նամակագրությունը պահելու պարտականությունը, այն անձի (անձանց) սզգանունը, անունը, որի նամակագրությունը պահվելու է, այդ անձի (անձանց) ճշգրիտ հասցեն, թղթակցության տեսակը, որի վրա կալանք է դրվում, եւ կալանքի ժամկետը:

3. Նամակագրությանը, որի վրա կարող է կալանք դրվել, մասնավորապես, վերաբերում են հետեւյալ օբյեկտները՝ նամակները, հեռագրերը, ռադիոգրերը, փոստա-ծանրոցները (բանդերոլները), ծանրոցները, փոստային բեռնամփոփները (կոնտեյներները), փոխանցումները, Փաքտով եւ էլեկտրոնային փոստով հաղորդումները:

4. Նամակագրությունը վերահսկելու մասին **դատարանի որոշումն** ուղարկվում է կապի համապատասխան հաստատության պետին, որի համար որոշումը պարտադիր է:

5. Կապի հաստատության պետը պահում է անհրաժեշտ նամակագրությունը եւ դրա մասին անհապաղ տեղեկացնում է քննիչին:

6. Նամակագրության վերահսկումը վերացվում է համապատասխան որոշումը կայացրած քննիչի, դատախազի կամ դատարանի կողմից»:

Օրենսգրքի 33-րդ գլխի՝ «Նամակագրության գնումը եւ առգրավումը» վերաբառյալ 240-րդ հոդվածը սահմանում է. «1. Քննիչն ստորագրությամբ կապի հաստատության պետին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տվյալ հաստատության այլ ծառայողներին, ծանոթացնում է գնում եւ առգրավում կատարելու մասին որոշմանը եւ տվյալ հաստատության աշխատողների թվից առանձնացված ընթերակաների մասնակցությամբ բացում եւ գնում է նամակագրությունը:

2. Այնպիսի փաստաթղթեր, առարկաներ հայտնաբերելիս, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար, քննիչը կատարում է համապատասխան առա-

քումների առգրավում կամ սահմանափակվում է դրանցից պարճեններ հանելով: Այն փվյալների բացակայության դեպքում, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար, քննիչը ցուցում է փալիս գնված նամակագրությունը հասցեափրոջը հանձնելու կամ այն իր կողմից սահմանած ժամկետում պահելու մասին:

3. Նամակագրությունը գնելու կամ պահելու յուրաքանչյուր դեպքի մասին կազմվում է արձանագրություն, որում նշվում է ում կողմից, որպեղ, երբ եւ կոնկրետ որ նամակագրությունն է պահվել կամ ենթարկվել գնման, ինչ է վերցվել, ինչը պետք է հանձնվի հասցեափրոջը կամ ժամանակավորապես պահվի, որ նամակագրությունից են հանված պարճենները, ինչպիսի փեխնիկական միջոցներ են օգրագործվել եւ ինչ է հայրնաբերվել: Քննչական գործողությանը մասնակցած բոլոր անձինք պետք է ծանոթացվեն արձանագրությանը, որը նրանք հաստատում են իրենց ստորագրություններով, իսկ անհրաժեշտության դեպքում կարող են պահանջել դրա մեջ մրցնել իրենց դիտողությունները»:

Օրենսգրքի 33-րդ գլխի՝ «Նեռախոսային խոսակցությունները լսելը» վերաբառությամբ 241-րդ հոդվածը սահմանում է. «1. Եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ կասկածյալի, մեղադրյալի եւ հանցագործությունների մասին փեղեկություններ ունեցող այլ անձանց, հեռախոսային կամ կապի այլ միջոցներով փարվող խոսակցություններում կարող են գործի համար նշանակություն ունեցող փեղեկություններ պարունակվել, **դատարանի որոշմամբ** թույլատրվում է փվյալ խոսակցությունների լսում եւ ձայնագրառում:

2. Խոսակցությունների լսման եւ ձայնագրառման անհրաժեշտության մասին քննիչը կայացնում է՝ **դատարանին** միջնորդություն հարուցելու մասին պարճառաբանված որոշում, որում նշվում են՝ քրեական գործը եւ հիմքերը, որոնցով պետք է կատարվի համապարասխան քննչական գործողությունը, այն անձանց ազգանունը, անունը, որոնց խոսակցությունները ենթակա են լսման, լսման ժամկետը, հիմնարկը, որին հանձնարարվում է խոսակցությունների լսման եւ ձայնագրառման փեխնիկական իրականացումը: Որոշումը ուղարկվում է դատարան:

3. Խոսակցությունների լսման եւ ձայնագրառման համար դատավորի համաձայնության դեպքում **որոշումը** կատարման համար քննիչի կողմից ուղարկվում է համապարասխան հիմնարկ:

4. Խոսակցությունների լսումը եւ ձայնագրառումը կարող են սահմանվել վեց ամսից ոչ ավելի ժամանակով: Դրանք վերացվում են, երբ վերանում է դրանց անհրաժեշտությունը, բայց բոլոր դեպքերում՝ նախնական քննության ավարտից ոչ ուշ:

5. Քննիչը սահմանված ժամկետի ընթացքում իրավունք ունի ցանկացած պահին պահանջել ձայնագրությունը՝ գնելու եւ լսելու համար: Այն քննիչին փոխանցվում է կնքված վիճակում, ուղեկցող նամակի հետ միասին, որում պետք է նշված լինեն խոսակցությունների ձայնագրառումն սկսելու եւ ավարտելու ժամանակն ու կիրառված միջոցների անհրաժեշտ փեխնիկական բնութագրերը:

6. Քննիչի կողմից ձայնագրության գնումը եւ լսումը կատարվում են ընթերականների, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մասնագետի մասնակցությամբ, ինչի մասին

կազմվում է արձանագրություն, որում պետք է բառացիորեն վերաբարդրվի ձայնագրության՝ գործին վերաբերող մասը: Ձայնագրությունը կցվում է արձանագրությանը, ընդ որում, գործին չվերաբերող մասը, դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց կամ գործը կարճվելուց հետո, ոչնչացվում է»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՆՆ օրենքով սահմանվում են օպերատիվ-հետախուզական միջոցառումների սպառիչ ցանկը և դրանց նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության կարգը: Մասնավորապես, օրենքի՝ «Օպերատիվ-հետախուզական միջոցառումների փեսակները» վերաբառությամբ 14-րդ - հոդվածի 1-ին մասի 11-րդ և 12-րդ կետերի համաձայն.

«1. Օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում կարող են անցկացվել օպերատիվ-հետախուզական հետեյալ միջոցառումները.

...

11) նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում.

12) հեռախոսային խոսակցությունների վերահսկում»:

Նույն օրենքի՝ «Դատական վերահսկողությունը օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ» վերաբառությամբ 34-րդ հոդվածը սահմանում է. «1. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ, 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները, ինչպես նաև արտաքին դիպուկ օպերատիվ հետախուզական միջոցառումը, եթե արտաքին դիպուկ արդյունքների ամրագրումն առանց փեխնիկական միջոցների օգտագործման հնարավոր չէ, և անձը (անձինք), որի (որոնց) նկատմամբ իրականացվում է արտաքին դիպուկը, ողջամտորեն չէր (չէին) կարող ենթադրել դրա անցկացման հնարավորության մասին, ապա կարող են անցկացվել **միայն դատարանի թույլտվությամբ**:

2. Սույն հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման համար **դատարանի** թույլտվությունը սպանալու համար օպերատիվ ստորաբաժանման ղեկավարը օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարին ներկայացնում է օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշումը և միջնորդությունը՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու համար դատարան դիմելու վերաբերյալ: Որոշումը և դրան կցվող նյութերը դատարան է ներկայացնում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարը՝ Նյայասարանի Նանրապետության քրեական դատարանի օրենսգրքով սահմանված կարգով:

3. Եթե օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման հապաղումը կարող է հանգեցնել ահաբեկչության կատարման կամ Նյայասարանի Նանրապետության պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգությանն սպառնացող իրադարձությունների կամ գործողությունների, որոնց անցկացման համար սույն օրենքով պարտադիր է համարվում **դատարանի** թույլտվությունը, ապա օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի որոշման հիման վրա թույլտվություն է նման միջոցառումների անցկացումը 48 ժամվա ընթացքում՝ այդ մասին Նա-

յասարանի Նանրապեպրության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ծանուցելով **դատարանին**: Եթե դատարանը բավարար չի համարում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման հիմքերը, ապա դրա անցկացումն անմիջապես դադարեցվում է, իսկ դրա արդյունքում ձեռք բերված փորձարկումները եւ նյութերը անհապաղ ոչնչացվում են: Նակատակ դեպքում դատարանը որոշում է կայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումը թույլատրելու մասին: Սույն մասի դրույթները չեն փարսավում սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ - կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ 32-րդ հոդվածով նախատեսված հարաբերությունների նկատմամբ»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի, ի թիվս այլ-նի, 32 եւ 34-րդ հոդվածների ուսումնասիրությունից բխում է, որ վերջիններս եւս դիտարկվող միջոցառումների իրականացման համար նախատեսում են **դատարանի համապատասխան որոշման առկայություն**:

Օրենսգրքի, մասնավորապես, 98, 98.1 - 98.6-րդ հոդվածների վերլուծությունը վկայում է, որ մասնավոր անձի դիմումի հիման վրա նրա հեռախոսային եւ այլ հաղորդումների գաղտնալուծումներն իրականացվում են միայն պաշտպանվող անձ համարվող անձի դիմումի հիման վրա: Մասնավորապես օրենսգրքի 98.1-րդ հոդվածով, որպես պաշտպանվող անձի պաշտպանության համար կիրառվող միջոցառում, ի թիվս այլնի, նախատեսվում է վերահսկողության փոխնիկական միջոցների օգտագործումը եւ հեռախոսային ու այլ հաղորդումների գաղտնալուծումը: Իսկ օրենսգրքի 98.6-րդ հոդվածը սահմանում է, որ. «Քրեական վարույթն իրականացնող մարմինը պաշտպանվող անձի գրավոր դիմումի հիման վրա կամ նրա գրավոր համաձայնությամբ եւ **սույն օրենսգրքով սահմանված կարգով** իրականացնում է նրա հեռախոսային կամ այլ խոսակցությունների գաղտնալուծում: Խոսակցությունների գաղտնալուծման ընթացքում կարող է կիրառվել ձայնագրառում»:

5. Դատարանի որոշման առկայության՝ որպես ՀՀ Սահմանադրության 23-րդ - հոդվածի 5-րդ մասով երաշխավորված իրավունքի սահմանափակման համար նախատեսված նախապայմանի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերջինս հետապնդում է հետեւյալ իրավաչափ նպատակները.

նախ, այն նպատակ ունի պաշտպանել անձին պետական իշխանության մարմինների կողմից նրա անձնական եւ ընտանեկան կյանքին անհարկի միջամտությունից,

երկրորդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսգրքի 121-րդ հոդվածի համաձայն՝ նամակագրության, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումները վերահսկելու եւ հեռախոսային խոսակցությունները լսելու արդյունքում կազմված արձանագրությունները քրեական դատավարության ընթացքում օգտագործվում են որպես ապացույց եւ արդյունքում կարող են կիրառվել հաղորդակցվող անձի կամ նրա ընդդիմախոսի դեմ, սահմանադիրն առանձնակի կարեւորություն է փոխում հիշյալ միջոցառումների իրականացման օրինականության նկատմամբ դատական վերահսկողությանը,

Երրորդ, որպես կանոն, նշված միջոցառումները կրում են գաղտնի բնույթ, ինչը /ինչպես դա շեշտում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը/ որոշ դեպքերում կարող է հանգեցնել դրանց չարաշահումների, որոնց կանխման արդյունավետ միջոցներից է նաև դրանց օրինականության նկատմամբ իրականացվող դատական վերահսկողությունը:

6. Անդրադառնալով օրենսգրքի 284-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքին, այն է՝ խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկի համաձայնությամբ նամակագրությունը, հեռախոսային խոսակցությունները, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումներն առանց դատարանի որոշման լսելու կամ վերահսկելու հնարավորությանը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ փվյալ դեպքում օրենսդիրը ղեկավարվել է այն փրամաբանությամբ, որ անձը կամովին է հրաժարվում իր՝ ՏՏ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքից: Միեւնույն ժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերը նշված դեպքը նախատեսելիս օրենսդիրը հաշվի չի առել մի շարք հանգամանքներ:

Նախ, նկատի ունենալով, որ ՏՏ օրենսդրությամբ անձի համաձայնությամբ նրա հեռախոսային եւ այլ հաղորդումները լսելն իրականացվում է միայն պաշտպանվող անձի պարագայում, չի բացառվում, որ հիշյալ միջոցառումների արդյունքում ձեռք բերված փեղեկագրությունն օգտագործվելու է համաձայնություն փված անձի ընդդիմախոսի դեմ, որի՝ ՏՏ Սահմանադրության 23-րդ հոդվածով սահմանված իրավունքներն այս պարագայում կարող են խախտվել: Արդյունքում, միեւնույն իրավական գործիքը կարող է մի դեպքում օգտագործվել որպես իրավական պաշտպանության միջոց, մեկ այլ դեպքում հանդես գալ որպես մարդու իրավունքների խախտման կամ ոչ իրավաչափ սահմանափակման միջոց:

Երկրորդ, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՏՏ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «...4. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ եւ 15-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր եւ առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, եւ եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից սույն օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ փեղեկագրության ձեռքբերումն անհնարին է»: Այս նորմը ենթադրում է, որ հիշյալ միջոցառումները պետք է կիրառվեն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում եւ միայն այն պարագայում, երբ պետական իշխանության մարմինների համար անհրաժեշտ փեղեկագրություն ձեռք բերելու այլընտրանքային փորձերակը բացակայում է: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՏՏ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասում նշված երկու նախապայմանների առկայության կամ բացակայության հարցը ենթակա է գնահատման, ինչը կարող է կատարվել միայն դատական վերահսկողության շրջանակներում:

Երրորդ, ՏՏ Սահմանադրության 23-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների սահմանափակման համար անհրաժեշտ երեք նախապայմաններից, այն է՝ «օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով, դատարանի որոշմամբ», ՏՏ Սահմանադրությամբ որեւէ բացառություն չի նախատեսվում:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաեւ արձանագրել, որ վիճարկվող 284-րդ հոդվածի 1-ին մասը՝ խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկի համաձայնությամբ նամակագրությունը, հեռախոսային խոսակցությունները, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումներն առանց դատարանի որոշման լսելու կամ վերահսկելու իրավական հնարավորություն վերապահելու մասով, ներքին հակասության մեջ է գտնվում նույն օրենսգրքի 14, 241 եւ 281-րդ հոդվածների դրույթների հետ:

Չորրորդ, վիճարկվող նորմը դուրս է արվյալ հոդվածի իրավակարգավորման շրջանակներից: ՏՏ քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածը սահմանում է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննարկման կարգը: Խոսքը վերաբերում է ներկայացված միջնորդության քննարկմանը, եւ արվյալ հոդվածի 2-7-րդ մասերով նախատեսվում է դատարանում դրա քննության կարգը, իսկ 8-րդ մասը սահմանում է հարուկ իրավիճակներում հրապարակ գործողությունների կատարման եւ դրանց հետ կապված դատական վերահսկողության առանձնահատկությունները: Վոդվածի 1-ին մասը բացարձակապես չի առնչվում միջնորդության քննարկման կարգին եւ չի բխում «Իրավական ակտերի մասին» ՏՏ օրենքի 45-րդ հոդվածի պահանջներից:

7. Նաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված իրավունքը ենթակա է սահմանափակման ոչ միայն Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով, այլ նաեւ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով, ինչը փաստարկում է պարասխանողը, սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ սահմանափակում նախատեսող սահմանադրական այս երկու նորմերի հարաբերակցության հարցին:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասը հղում է կատարում օրենքին եւ չի բացառում, որ օրենքով նախատեսվի ոչ միայն կոնկրետ իրավունքի սահմանափակման թույլատրելիությունը, այլ նաեւ՝ սահմանափակման դեպքերը եւ կարգը: Ընդ որում, չի բացառվում, որ օրենքը կոնկրետ իրավունքի սահմանափակման համար որպես պարտադիր նախապայման սահմանի դատարանի որոշման առկայությունը: Այս վերջին պայմանի սահմանումը, քարքեր հնարավոր սահմանափակումների առնչությամբ, սահմանադիրը թողել է օրենսդրի հայեցողությանը: Սակայն ՏՏ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավունքի սահմանափակման պարագայում դատարանի որոշման առկայության պարտադիր նախապայմանը չի թողնվել օրենսդրի հայեցողությանը, այլ նախատեսվել է հենց Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասով: Ներկայացված, Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված՝ իրավունքի սահմանափակ-

մանը վերաբերող նորմն օրենսդրի կողմից պեպք է ելակեր ընդունվի Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա իրականացվող հնարավոր իրավակարգավորման շրջանակներում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Նայասպանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 23-րդ հոդվածի 1-ին եւ 5-րդ մասերին հակասող եւ անվավեր:

2. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՆՈՂ
Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*23 նոյեմբերի 2010 թվականի
ՍԳ-Ո-926*

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱԿՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱԿՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ ՆՃ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 73-ՐԴ ՆՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 6-ՐԴ ԿԵՏԻ՝ ՆԱՅԱՍԱՆՆԻ ՆԱՆՐԱԿՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱԳԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երևան

30 նոյեմբերի 2010թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Նովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի (զեկուցող), Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող Ա. Զեյնալյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՆՃ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՃ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՃ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արտակ Զեյնալյանի դիմումի հիման վրա՝ ՆՃ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Ա. Զեյնալյանի՝ 08.06.2010թ. ՆՃ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՆՃ վարչական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. ՆՏ վարչական դատավարության օրենսգիրքը ՆՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ին, ՆՏ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 10-ին և ուժի մեջ մտել 2008 թվականի հունվարի 1-ից:

Դիմողի կողմից սկզբնապես վիճարկվել են ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերը: ՆՏ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմի՝ 25.06.2010թ. ՍԴԴԿՈ/1-17 որոշմամբ դիմումը քննության է ընդունվել մասնակի՝ ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի մասով, իսկ 7-րդ կետի մասով դիմումի ընդունումը մերժվել է՝ դիմողի նկատմամբ կիրառված չլինելու պարճառաբանությամբ:

Վարչական դատավարության օրենսգրքի՝ «Նայցադիմումին կցվող փաստաթղթերը» վերաբառությամբ 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է.

«1. Նայցադիմումին կցվում են՝

...

6) հայցադիմումը և կից փաստաթղթերի պատճենները (եթե դրանք հնարավոր է պատճենահանել) պատասխանողին և գործին մասնակցող այլ անձանց, սույն օրենսգրքի 62-րդ հոդվածով սահմանված կարգին համապատասխան, ստանալը հավաստող փաստաթղթերը...»:

2. Գործի դատավարական նախապարմությունը հանգում է հետևյալին: Դիմողը 08.09.2009թ. թիվ 61, 62, 63, 64, 65, 66 գրություններով Երևանի քաղաքապետին է իրազեկել համապատասխանաբար՝ 2009 թվականի սեպտեմբերի 19-ից 24-ը Երևան քաղաքի՝ Մարենադարանին հարող փարածքում ժամը 18:00-22:30 զանգվածային հրապարակային միջոցառումներ կազմակերպելու մասին: 12.09.2009թ. նրա կողմից հայցադիմում է ներկայացվել ՆՏ վարչական դատարան՝ «2009 թվականի սեպտեմբերի 19-24-ի հանրահավաքներ և երթեր անցկացնելու իրավունքը ճանաչելու պահանջի մասին»:

ՆՏ վարչական դատարանը 12.09.2009թ. կայացրել է «Նայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշում՝ ելնելով այն հանգամանքից, որ ներկայացված հայցադիմումը և կից փաստաթղթերը չեն համապատասխանում ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի պահանջներին: ՆՏ վարչական դատարանի հիշյալ որոշումը դիմողը 17.09.2009թ. բողոքարկել է ՆՏ վարչական դատարան: ՆՏ վարչական դատարանի՝ 28.09.2009թ. «Բողոքը մերժելու մասին» կոլեգիալ կազմով կայացված որոշմամբ ներկայացված բողոքը մերժվել է:

ՆՏ վարչական դատարանի հիշյալ որոշումը 20.10.2009թ. դիմողի կողմից բողոքարկվել է ՆՏ վճռաբեկ դատարան: ՆՏ վճռաբեկ դատարանի՝ 18.11.2009թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ ներկայացված վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

3. Վիճարկվող նորմի հակասահմանադրականության վերաբերյալ դիմողի փաստարկներն ընդհանուր առմամբ հանգում են նրան, որ ՆՏ դատավարական օրենսդրության համակարգում միայն ՆՏ վարչական դատավարության օրենսգիրքն է հայցվորի համար նախապես առաջին աստիճանի դատարան հայցադիմում ներկայացնելիս այն ել կից փաստաթղթերը հնարավոր պատասխանողի կողմից սպանալը հավասարող ապացույցի ներկայացման պարտականություն: Ընդ որում, դիմողը նշում է, որ նշված պարտականությունը կրում են միայն վարչական մարմնի կամ պաշտոնատար անձի դեմ հայց ներկայացնող անձինք: Իսկ վարչական մարմնի կողմից անձի դեմ հայց ներկայացվելու դեպքում վարչական դատարանը լիազորված է հայցադիմումն ընդունել վարույթ, եթե բացակայում է անձի կողմից հայցն սպանալը հավասարող ապացույցը, սակայն առկա է միջնորդություն՝ դատարանի կողմից պատասխանողի վերջին հայտնի բնակության կամ գրանցման վայրի համայնքի ղեկավարին այն ուղարկելու մասին:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթով ներկայացվող ձեռական պահանջները ծանրաբեռնում են անձին այն աստիճան, որ սահմանափակում են մարդու եւ քաղաքացու՝ ՆՏ Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտպանության իրավունքի բաղադրարարները հանդիսացող՝ դատարանի մատչելիության եւ հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ իր գործի քննության իրավունքը:

4. Ըստ պատասխանողի՝ պետությունը կարող է կանոնակարգել դատական պաշտպանության իրավունքի իրականացման ընթացակարգը՝ այդ իրավունքը կրողին ներկայացնելով օրենսդրական ամրագրում սրացած հստակ պայմաններ: Ավելին, այդ պայմաններն ուղղված են դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացմանը, քանի որ ձեւավորում են այն նվազագույն պարտադիր նախադրյալները, որոնք անհրաժեշտ են դատարանի համար արդարադատության իր գործառնություն արդյունավետ իրացնելու համար: Վիճարկվող դրույթում ներկայացվող պահանջն ուղղակիորեն կոչված է վարչական դատավարությունում իրավահավասարության սկզբունքի կենսագործմանը, յուրաքանչյուր կողմի համար քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորության երաշխավորմանը: Նայցվորին ներկայացվող խնդրո առարկա պահանջը պատասխանողին եւ երրորդ անձանց հնարավորություն է տալիս ծանոթանալ հայցվորի ներկայացրած փաստարկներին ու ապացույցներին եւ դրանց վերաբերյալ օրենքով սահմանված ժամկետում ներկայացնել իրենց նկատառումները:

Ինչ վերաբերում է դիմողի այն փաստարկին, որ խնդրո առարկա պահանջը հարուկ է միայն վարչական դատավարությանը, պատասխանողը փաստարկում է, որ նման մոտեցումը պայմանավորված է վարչական դատավարության առանձնահատկություններով, մասնավորապես դրա սուբյեկտներով, ինչպես նաև այդ իրավահարաբերությունների այլ առանձնահատկություններով:

5. ՆՏ սահմանադրական դափարանն իր՝ 17.03.2009թ. ՄԴԱՌ-21 աշխարակարգային որոշման 6-րդ կետում արքահայրել է հետեյալ իրավական դիրքորոշումը. «ՆՏ Սահմանադրության 101 հոդվածն օրենքին է վերապահել սահմանադրական դափարանն ղիմելու կարգի սահմանումը: Այդ հոդվածի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դափարանի մասին» ՆՏ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում, որը, նշված սահմանադրական դրույթին եւ դրա հիմքում ընկած՝ կոնկրետ սահմանադրական վերահսկողության արամաբանությանը համահունչ, սահմանել է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց ղիմումների ընդունելիության պայմանները: Ինչպես նշվեց, ղիմումը կարող է ներկայացնել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը.

- որը հանդիսացել է ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դափարաններում դափավարության մասնակից,

- որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դափարանի կողմից **կիրառվել է վիճարկվող օրենքի դրույթը,**

- որի նկատմամբ վիճարկվող օրենքի դրույթը **կիրառվել է գործը լուծող վերջնական դափական ակտով,**

- որն սպառել է դափական պաշտպանության բոլոր միջոցները»: Նիշյալ կետում սահմանադրական դափարանն արձանագրել է նաեւ, որ «Սահմանադրական դափարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որեւէ պայմանի բացակայության դեպքում անհափական ղիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը **սահմանադրական դափարանն ղիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:**

ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի եւ «Սահմանադրական դափարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով **«օրենքի դրույթի կիրառում»** հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը սահմանադրական դափարանը բացահայրել է իր՝ 04.04.2008թ. ՄԴՌ-747 որոշման մեջ: Վերջինիս 5-րդ կետում մասնավորապես արքահայրված է հետեյալ իրավական դիրքորոշումը. «... ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «...իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի...», ինչպես նաեւ «Սահմանադրական դափարանի մասին» ՆՏ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասում պարունակվող «...եւ չի կիրառվել» բառակապակցություններում «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դափական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է ղիպարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետեւանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դափավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման րեսանկյունից չի կարող ղիպարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»:

Վարչական դափարանն ներկայացվող հայցաղիմումի ձեւին եւ բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանված են ՆՏ վարչական դափավարության օրենսգրքի 72 եւ 73-րդ հոդվածներով: Օրենսգրքի 78-րդ հոդվածը սահմանում է հայցաղիմումը վերադարձնելու հիմքերը, իսկ 79-րդ հոդվածը՝ հայցաղիմումի ընդունումը մերժելու հիմքերը: Օրենսգրքի 72, 73 եւ 78-րդ հոդվածների համադրված վերլուծությունը վկայում

է, որ 72 եւ 73-րդ հոդվածների պահանջները, այդ թվում՝ վիճարկվող նորմով սահմանված պահանջը, չպահպանելու իրավական հետեւանքը վարչական դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելն է: Իսկ 79-րդ հոդվածի 1-ին մասում նշված հիմքերի առկայության դեպքում առաջանում է այլ իրավական հետեւանք, այն է՝ հայցադիմումի ընդունումը մերժվում է:

Դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ վարչական դատարանը, կիրառելով ՏՏ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 4-րդ կետերը, 12.09.2009թ. կայացրել է «**Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին**» որոշում՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գործով հայցվոր Արփակ Զեյնալյանն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների փաստակցունից չի հանդիսանում ՏՏ վարչական դատարանի դիմելու իրավունք ունեցող սուբյեկտ՝ իր իրավունքների խախտման փաստի բացակայության պարճառաբանությամբ: Նույն դատարանը կոլեգիալ կազմով 28.09.2009թ. կայացված՝ «Բողոքը մերժելու մասին» որոշմամբ հիմնավոր է համարել վերոնշյալ որոշման պարճառաբանությունները: Իսկ ՏՏ վճռաբեկ դատարանի՝ 18.11.2009թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերահասարակվել է ՏՏ վարչական դատարանի՝ կոլեգիալ կազմով 28.09.2009թ. կայացված՝ «Բողոքը մերժելու մասին» որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը:

Հիմք ընդունելով իր՝ 04.04.2008թ. ՄԴՈ-747 որոշման 5-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումը եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՏՏ վարչական դատարանի կողմից դիմողի հայցադիմումի առնչությամբ կայացվել է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշում, իսկ վիճարկվող նորմով սահմանված պահանջի չկատարումը հանգեցնում է ոչ թե հայցադիմումի ընդունումը մերժելուն, այլ հայցադիմումը վերադարձնելուն՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի նկատմամբ կիրառվել եւ նրա համար կոնկրետ իրավական հետեւանքներ առաջացրել են 79-րդ հոդվածի համապատասխան դրույթները:

6. Սահմանադրական դատարանն իր՝ 2008թ. ապրիլի 15-ի ՄԴՈ-751 որոշման մեջ անդրադառնալով սահմանադրական կոնկրետ վերահսկողության առանձնահատկություններին՝ նշել է. «Եթե նախնական եւ հետագա վերացական սահմանադրական վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում Սահմանադրության գերակայության երաշխավորումը՝ իրավական համակարգում օրենքների եւ այլ նորմատիվ ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունն ապահովելու ճանապարհով, ապա անհատական դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ վերահսկողության նպատակը Սահմանադրության դրույթների անմիջական գործողության երաշխավորումն է, **մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների ապահովումն ու պաշտպանությունը: ... Կոնկրետ վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում նաեւ **անհատական շահերի պաշտպանության խնդիրը**»:**

Միաժամանակ, 2010թ. հոկտեմբերի 19-ի ՄԴՈ-921 որոշման մեջ սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ կոնկրետ վե-

րահսկողության շրջանակներում նորմի սահմանադրականության գնահատումն իմաստ ու նշանակություն է ստանում փվյալ կոնկրետ գործով սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության առումով:

Դիմումին կից ներկայացված դատական ակտերի վերլուծությունը վկայում է նաև, որ խնդրո առարկա հանրային-իրավական վեճը, ըստ էության, սպառված է, եւ այդ պարագայում դիմողի կողմից վիճարկվող իրավանորմի սահմանադրականության հարցի բարձրացումը, ըստ էության, չի հեղափոխում սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության նպատակ: Ուստի հիմք ընդունելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի շրջանակներում վիճարկվող իրավանորմի սահմանադրականության հարցի քննարկումը խնդրո առարկա գործի լուծման փասանկյունից որեւէ գործնական իրավական հետեւանքի հանգեցնել չի կարող:

7. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը ... գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով դիմող ֆիզիկական անձը **սահմանադրական դատարան դիմելու իրավասու սուբյեկտ չէ**, քանի որ օրենքի վիճարկվող դրույթը դիմողի նկատմամբ չի կիրառվել ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանների ընդունած դատական ակտով:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը եւ ղեկավարվելով Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ եւ 6-րդ կետերի, 60-րդ հոդվածի 1-ին կետի, 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Քաղաքացի Արտակ Զեյնալյանի դիմումի հիման վրա՝ ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ
Վ. ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆ**

*30 նոյեմբերի 2010 թվականի
ՄԴՈ-927*

ՆԱԼՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՆՏ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 22-ՐԴ ՆՈՂՎԱԾԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱԳԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

14 դեկտեմբերի 2010թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դափարանը՝ կազմով. Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն ՆՏ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դափարանի մասին» ՆՏ օրենքի 25 եւ 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՆՏ վճռաբեկ դափարանի դիմումի հիման վրա՝ «Պետական փուրքի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 22-րդ հոդվածի՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՆՏ վճռաբեկ դափարանի՝ 30.06.2010թ. ՆՏ սահմանադրական դափարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացաբությունները, հեփազոբելով «Պետական փուրքի մասին» ՆՏ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դափարանը

Պ Ա Ր Ձ Ե Յ .

1. «Պետական փուրքի մասին» ՆՏ օրենքն ընդունվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից 1997 թվականի դեկտեմբերի 27-ին, ՆՏ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հունվարի 10-ին եւ ուժի մեջ է մտել 1998 թվականի հունվարի 11-ից:

«Պետական փուրքի մասին» ՆՏ օրենքի՝ «Դափարաններում պետական փուրքի գծով արփոնությունները» վերփառությամբ 22-րդ հոդվածը (որը 1998-2009թթ. ընթաց-

քում 9 անգամ փոփոխվել և լրացվել է) սահմանում է այն իրավասուբյեկտներին, ինչպես նաև նրանց կողմից դատարան ներկայացվող այն պահանջները, որոնց համար նշված իրավասուբյեկտներն ազատվում են պետական փութքի վճարումից:

2. Գործի փաստական հանգամանքները հանգում են հետևյալին.

1) ՆՆ Սյունիքի մարզի դատախազության՝ 21.02.2001 թվականի որոշմամբ ՆՆ - նախկին քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 2-րդ մասով և 89-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով քաղաքացի Արամ Դավթյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառով:

2) ՆՆ Վայոց ձորի մարզի առաջին ապրյանի դատարանի՝ 18.05.2006 թվականի որոշմամբ ՆՆ նախկին քրեական օրենսգրքի 191⁴-րդ հոդվածով, որը համապատասխանեցվել է ՆՆ գործող քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածին, նախատեսված հանցանքում քաղաքացի Արամ Դավթյանը ճանաչվել է անպարտ և արդարացվել է:

3) ՆՆ վերաքննիչ քրեական դատարանի՝ 20.08.2007 թվականի որոշմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին մեղադրողի հայտարարության հիման վրա քաղաքացի Արամ Դավթյանի վերաբերյալ քրեական գործի վարույթը՝ ՆՆ նախկին քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի 3-րդ մասով, որը համապատասխանեցվել է ՆՆ գործող քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասին, կարճվել է, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցվել:

4) Դիմելով դատարան և պարճառաբանելով, որ ապօրինի քրեական հետապնդման ենթարկվելու, որպես խափանման միջոց կալանք կիրառելու, չեռանալու մասին սպորազրություն վերցնելու, իր նկատմամբ ոչ ողջամիտ ժամկետներում դատաքննություն իրականացնելու հետևանքով վնասներ է կրել՝ քաղաքացի Արամ Դավթյանը պահանջել է Նայասարանի Նանրապետությունից հոգուր իրեն բռնագանձել 226.443.431 ՆՆ դրամ:

ՆՆ հարավային քաղաքացիական դատարանի՝ 23.05.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Նայասարանի Նանրապետությունից հոգուր Արամ Դավթյանի 7.000.000 ՆՆ դրամ՝ որպես փաստաբանին վճարվելիք գումար, բռնագանձելու մասով, իսկ մնացած մասով հայցը մերժվել է: Միաժամանակ վճռվել է Արամ Դավթյանից բռնագանձել 4.388.869 ՆՆ դրամ որպես չվճարված պետական փութք:

ՆՆ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 19.11.2009 թվականի որոշմամբ Արամ Դավթյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, ՆՆ հարավային քաղաքացիական դատարանի՝ 23.05.2008 թվականի վճիռը թողնվել է ուժի մեջ: Միաժամանակ որոշվել է Արամ Դավթյանից, որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական փութք, բռնագանձել 6.583.484 ՆՆ դրամ:

ՆՆ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի՝ 10.02.2010 թվականի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

ՏՏ վճռաբեկ դատարանը՝ գտնելով, որ վեճը լուծելու համար կիրառման ենթակա օրենքի դրույթի՝ «Պետական փուրքի մասին» ՏՏ օրենքի 22-րդ հոդվածի սահմանադրականության խնդիր կարող է առաջանալ, կասեցրել է գործի վարույթը եւ դիմել ՏՏ սահմանադրական դատարան:

3. Դիմողը՝ հղում կատարելով Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին, վկայակոչելով պետական փուրքի վերաբերյալ փորձեր երկրների օրենսդրական փորձը, ինչպես նաեւ նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Պետական փուրքի մասին» ՏՏ օրենքի 22-րդ հոդվածի «ե» կետով նախատեսված է պետական փուրքի վճարումից ազատել հայցվորներին՝ հանցագործության հետեւանքով իրենց պարճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով, գտնում է, որ «Պետական փուրքի մասին» ՏՏ օրենքի 22-րդ հոդվածում առկա է օրենքի բաց, որը դրսեւորվում է նրանում, որ վերջինս չի նախատեսում պետական փուրքի վճարումից ազատել քրեական գործով արդարացվածներին՝ անօրինական ձեռքակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու եւ դատապարտման հետեւանքով նրանց պարճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով: Ըստ դիմողի՝ անօրինական ձեռքակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու եւ դատապարտման հետեւանքով պարճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով արդարացվածին պետական փուրքից չազատելը սահմանափակում է արդարացվածի՝ դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության իրավունքները: Տիմք ընդունելով իր՝ վերը նշված դիրքորոշումները, դիմողը գտնում է, որ «Պետական փուրքի մասին» ՏՏ օրենքի 22-րդ հոդվածը հակասում է ՏՏ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներին:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ ինքնին քաղաքացիական գործերով դատարան դիմելու համար փուրքեր վճարելու պահանջը չի կարող դիմվել որպես Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ եւ ՏՏ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներով երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի խախտում: Այօրինի ձեռքակալման, կալանավորման կամ որպես մեղադրյալ ներգրավելու արդյունքում ենթադրաբար պարճառված վնասի հատուցման հայց ներկայացնելու համար պետական փուրքի սահմանումը որեւէ կերպ չի սահմանափակում արդարացվածի՝ դատական պաշտպանության իրավունքը:

Արդարացվածի կարգավիճակ ձեռք բերած անձը պետք է ապացուցի, որ իրեն ազատությունից զրկելն ապօրինի է եւ դրա արդյունքում ինքը նյութական վնաս է կրել: Այօրինի ձեռքակալման կամ կալանավորման համար քրեական պատասխանատվություն է սահմանված ՏՏ քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածով: Ներուաբար, եթե դատարանի օրինական ուժի մեջ մտնում դատավճռով հաստատված նշված հոդվածով նա-

խափեցված հասարակական կյանքը, դրա արդյունքում վնաս կրած անձը վիճարկվող 22-րդ հոդվածի «ե» կետի հիման վրա կազարկվի պետական փութքի վճարումից:

Արդարացվածի ենթադրյալ խախտված իրավունքները վերականգնելու և պարճառված վնասը հատուցելու համար օրենքով երաշխավորված է դատական պաշտպանության իրավունքը:

Վերոհիշյալ հիմնավորումներով պատասխանողը գտնում է, որ վիճարկվող հոդվածը չի հակասում ՏՏ Սահմանադրությանը:

5. Սույն գործի քննության շրջանակներում ՏՏ սահմանադրական դատարանը հարկ է համարում «Պետական փութքի մասին» ՏՏ օրենքի վիճարկվող դրույթը դիտարկել հարկապես ՏՏ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասի և 20-րդ հոդվածի 5-րդ մասի համարեքստում՝ հաշվի առնելով «Պետական փութքի մասին» ՏՏ օրենքի 22-րդ հոդվածում թվարկված՝ պետական փութքի վճարումից ազատելու դեպքերի և պետական փութքի վճարումից ազատվող սուբյեկտների վերաբերյալ առկա իրավակարգավորման հիմքում ընկած ընդհանուր պրամաբանությունը:

Միաժամանակ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմողի՝ իր վարույթում գտնվող կոնկրետ գործով մատչանալից փաստական հանգամանքն առնչվում է վնաս կրած անձի՝ **փոխհատուցման** պահանջին, սահմանադրական դատարանը հարկ է համարում «Պետական փութքի մասին» ՏՏ օրենքի 22-րդ հոդվածի դրույթներից առանձնացնել այնպիսիք, որպիսիք առնչվում են վնաս կրած անձի՝ **փոխհատուցման** պահանջին:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Պետական փութքի մասին» ՏՏ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասում թվարկված դեպքերից միայն երեքն են առնչվում վնաս կրած անձի՝ **փոխհատուցման** պահանջին: Այդպիսիք են.

- խեղման կամ առողջության այլ վնասման, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պարճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով (օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետ).

- հանցագործության հետևանքով իրենց պարճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով (օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետ).

- պետական նպաստների, այդ թվում՝ նախկին ԽՍՀՄ խնայքանկի ՂԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման, գումարների բռնագանձման վերաբերյալ հայցերով (օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «իդ» կետ):

«Պետական փութքի մասին» ՏՏ օրենքի 22-րդ հոդվածի՝ վերը նշված դրույթների համադրված վերլուծությունից բխում է, որ վերոհիշյալ դեպքերում հայցվորին պետական փութքի վճարումից ազատելու արտոնություն փրամադրելու հիմքում ընկած է այն ընդհանուր օրինաչափությունը, համաձայն որի՝ հարկապես հաշվի են առնվում նման արտոնություն փրամադրելու անհրաժեշտությունը պայմանավորող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են վնաս կրելու հետևանքով արդարացի փոխհատուցում պահան-

ջող անձանց՝ սոցիալապես առավել անապահով վիճակում գտնվելը, կրած վնասի հնարավոր չափերը, հետեւաբար՝ նաեւ գույքային բնույթի հայցապահանջներով պայմանավորված պետական փութքի չափը:

6. Նիմք ընդունելով այն հանգամանքը, որ թե՛ «Պետական փութքի մասին» ՆՏ օրենքի 22-րդ հոդվածի վերոնշյալ առաջին մասի հարկապես «ե» կետի դրույթը եւ թե՛ սույն գործով դիմող կողմի վարույթում գտնվող կոնկրետ գործի փաստական հանգամանքներն առնչվում են նյութական վնաս կրած անձին, կամ որ նույնն է՝ փութողին, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ ՆՏ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է անձի իրավունքը՝ ազատությունից ապօրինի գրկման դեպքում օրենքով սահմանված հիմքերով եւ կարգով ստանալու պարճառված վնասի հատուցում: Դատարանը, միաժամանակ, հարկ է համարում պարզել Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ «փութող» հասկացության եւ «օրենքով սահմանված կարգով» բառակապակցության սահմանադրաիրավական բովանդակությունը:

ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29-ին ընդունված՝ «Նանգագործությունների եւ իշխանության չարաշահման գոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագիր» վերաբառությամբ թիվ 40/34 բանաձեռի «Ա» բաժնի 2-րդ կետում բացահայտված է «փութող»-ի, որպես հանցագործության գոհի, հասկացության միջազգային իրավական բովանդակությունը, համաձայն որի՝ հանցագործության գոհ է (են) համարվում այն անձը (անձինք), ում (որոնց) հանցագործությամբ կամ իշխանության չարաշահմամբ պարճառվել է վնաս, ներառյալ մարմնական կամ բարոյական վնասը, հուզական ապրումները, նյութական վնասը կամ հիմնական իրավունքների էական խախտումները, որոնք օժտված են հատուցման հավասար իրավունքով: Այդպիսով, անօրինական գործողությունների հանցագործության եւ իշխանության չարաշահման արդյունքում վնաս կրած անձինք իրենց կարգավիճակով նույնացվում են եւ նրանց նկատմամբ պահանջվում է համարժեք վերաբերմունք:

Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաեւ միջազգային իրավունքում առկա նման մոտեցումը, գտնում է, որ ՆՏ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված «փութող» հասկացությունն ունի ընդգրկում բովանդակություն եւ ներառում է ոչ միայն քրեական, այլեւ քրեադատավարական, վարչական, քաղաքացիաիրավական ու այլ հարաբերություններից եւ իրենց կամքից անկախ փութած ֆիզիկական եւ իրավաբանական անձանց: Ուստի ՆՏ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված «փութող» հասկացությունը նշանակում է նաեւ **հանրային իշխանության մարմինների ու պաշտոնապար անձանց գործողություններից (անգործությունից) վնաս կրած անձ:**

Ընդ որում, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ անձը փութողի դատավարական կարգավիճակ է ձեռք բերում որպես այդպիսին ճանաչվելու փաստով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության նշված դրույթի իմաստով փութողին հասցված վնասի

հապուցման իրավունքը ենթադրում է նաև արդարացված անձի կրած վնասի հապուցման հարցով քրեական դատավարությունից դուրս քաղաքացիական դատավարության կարգով համապատասխան հայց հարուցելու իրավունք:

7. Ինչ վերաբերում է ՏՏ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասում եւ 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ «օրենքով սահմանված կարգով» բառակապակցության բովանդակությանը, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրությունը հղում կատարելով օրենքին՝ միաժամանակ առաջադրում է փոժողին փոխհատուցելու այնպիսի կարգ սահմանելու պահանջ, որը պետք է երաշխավորի գործուն մեխանիզմ խնդրո առարկա իրավունքի արդյունավետ իրացման համար: Նման մեխանիզմի գոյությունը կարող է ապահովվել նաև այն դեպքում, երբ հապուցման իրավունքի իրացման՝ օրենքով սահմանված դատական կարգը պետական փորքի վճարումից ազատելու արտոնության ձեռով արդարացի պայմաններ ստեղծի այդ իրավունքի իրացման համար, եւ այնպիսի դեպքերում, երբ փոխհատուցման իրավունքն անվիճելի է, այսինքն՝ օրենքով սահմանված կարգով նախօրոք հաստատված է պետական իրավասու մարմնի, պաշտոնատար անձի այն գործողության (անգործության) փաստը, որի արդյունքում անձին պատճառվել է վնաս: Նպետաբար, օրենսդիրը պետք է ՏՏ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասում եւ 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված իրավունքների արդյունավետ ու անարգել իրացման նպատակով **սահմանի արտադատական կամ դատական կարգով փոխհատուցման պահանջ ներկայացնելու արդյունավետ եւ գործուն համակարգ:**

«Պետական փորքի մասին» ՏՏ օրենքի համակարգային վերլուծության արդյունքում՝ սահմանադրական դատարանը, չբացատրելով պետական փորքի գծով արտոնություններ փրամադրելու՝ օրենսդրի հայեցողական ազատությունը, արձանագրում է, որ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները վերաբերում են ինչպես իրավապայմանագրային պարտավորություններով պայմանավորված, այնպես էլ՝ չպայմանավորված դեպքերին:

Տիմբ ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողի՝ վարույթում գրավող կոնկրետ գործի փաստական հանգամանքները եւս վերաբերում են իրավապայմանագրային պարտավորություններով չպայմանավորված վնասի փոխհատուցմանը, սահմանադրական դատարանն իրավական պետության սկզբունքի փրեսանկյունից իրավաչափ չի համարում այն իրողությունը, երբ հետետողականություն չի դրսեւորվում փյալ իրավակարգավորման հարցում եւ պետական փորքի վճարումից ազատելու արտոնություն չի նախատեսվում արդարացված անձի համար, որը դատարան է դիմում իրեն պատճառված վնասի հապուցման պահանջով: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման պարագայում «Պետական փորքի մասին» ՏՏ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասն առկա իրավակարգավորման շրջանակներում լիարժեք չի երաշխավորում ՏՏ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասի նորմատիվ կիրառումը՝ խոչընդոտելով փոժող հանդիսացող անձի հապուցում ստանալու իրավունքի իրավաչափ ու արդյունավետ իրացումը:

Գործող իրավակարգավորումը վկայում է, որ կիրառված միջոցի եւ հեղուկացման նպատակի միջեւ չկա ողջամիտ համաչափություն՝ սրեղծվել է ոչ իրավաչափ հավասարակշռություն անձի խախտված իրավունքների վերականգնման եւ պետության շահերի պաշտպանության միջեւ, որն աղավաղում է պարզառված վնասի հատուցման սահմանադրական իրավունքի էությունը:

